ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

891.99
Պ-34

ZUUR Акад.СССР



891.99
Պ-34
06 NOV 2011

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

ԳԻՐՔ

1

ԿԱԶՄԵՑ ԷԴ. ԽՈՋԻԿ

Հայպետհրատ

Երևան 1954

18.07.2013

50023

Ճաշտագրությունները, աննշանությունների բառարանը և բառարան կազմել
ԱԼԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Նկարները՝ ԱՐԱ. ԲԵՔԱՐՅԱՆԻ

Տպագր. անվանաթերթը և չմուցախուղները՝
Ե. ԲԵԿԲՈՒԼՈՎԻ

ЗООП Арм.ССР
Гос. ун-т им. В. Брюсова
3569-55

А. ПАРОНЯН

ИЗБРАННЫЕ СОЧИНЕНИЯ

Том I

(На армянском языке)

Армянское государственное издательство (Айпетрат)
Ереван, 1954

Ապագա սերունդնե՛ր, դուք ալ խոնարհեցուցեք ձեր ականջը և երկյուղածութեամբ լարուիք ինձ, ինչ որ ձեր նախահայրերուն մին լրացու պատիժն ունիմ, որ ձեր բարօրութեան համար աշխատողներուն մին եմ։

Համբ լրացու բան մը չ. լեզու ունենալ և ժողովրդյան իրաւանց պաշտպանութեանը համար չխոսիլը՝ համբ և վատա՛կ լրալ է. կուգը լրացու բան մը չ. այր ունենալ և իրաւանց հավատարութեան չտեսնելը՝ կուգը և միանգամայն գերի՛ լրալ բանլ է։

Թող կարվի՛ այդպիսի լեզու մը, մեզ փուչի չ՛... Թող հանե՛ն այդպիսի այր մը, ուրախ կըլլանք. որովհետև լավ է համբը և կուգը լրացու, բան թե համբ վատակ և կուգը գերի՛։

Թերութեյունները վրա լալն թերութեյուններու մեծագույնն է. խեղճութեյան վրա արտասուք թափելն՝ ապացուցել է, թե արյուն չունինք թափելու։

Պիտի հալածվիմ, պիտի ծեծվիմ։ Վնաս չունի, Սոկրատ ալ հալածվեցավ. ապագա սերունդը պիտի անմահացնե իմ անունը։

Հակոբ Պարոնյան

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ

(1842—1891)

Հայ խոշորագույն երգիծաբան Հակոբ Պարոնյանը մեր նոր գրականության ամենաականավոր ներկայացուցիչներից մեկն է, ռեալիստական արձակի և գրաքննադատության սկզբնավորողը արևմտահայ իրականության մեջ։

Հ. Պարոնյանը իր գրականագիտական ըմբռնումներով հիմնականում շարունակել է Մ. Նալբանդյանի տրադիցիաները։ Պաշտպանելով գրականության ժողովրդայնության, գրականությունը աշխատավոր ժողովրդի շահերին ծառայեցնելու գաղափարը, նա իր խորապես սոցիալական ու քաղաքական սատիրայով անխնա պայքար է մղել շահագործող դասակարգերի դեմ, կանգ չառնելով ո՛չ նյութական դժվարությունների, ո՛չ քաղաքական հալածանքների առաջ։

Սահմանագործելով հանդերձ՝ ընդամենը երկու տասնամյակ, Պարոնյանը հայ նոր գրականությունը հարստացրել է տարբեր ժանրերի մի շարք մնայուն երկերով, որոնք հայ գրականության ամենափայլուն էջերից են։

Պարոնյանի գրական ժառանգությունը, շնորհիվ իր գեղարվեստական խոշոր արժանիքների և առաջավոր, դեմոկրատական բովանդակության, պահել է իր թարմությունն ու հետաքրքրությունը և այսօր, սովետական կարգերում, ոչ միայն հայ աշխատավորության ամենասիրած ընթերցանության նյութերից մեկն է, այլև թարգմանվելով ռուսերեն՝ դարձել է Սովետական Միության բազմազգ ժողովուրդների սեփականությունը։ Պարոնյանի կերտած բազմաթիվ կերպարներ, որոնք պատկերում են 19-րդ դարի 70—80-ական թվականների հայ հասարակական հոսանքների ներկայացուցիչներին, մտել են հայ գրականության տիպերի պատկերասրահը և վառ կերպով ներկայացնում են անցյալ դարի արևմտահայ հասարակական կյանքի հարազատ պատկերը, օգնում այդ կյանքի ճշգրիտ ճանաչմանը։

Պարոնյանի սրամիտ, դիպուկ ու բազմաբովանդակ աֆորիզմները, թևավոր խոսքերը մտել են ժողովրդական բառ ու բանի հարուստ գանձարանը և լայնորեն օգտագործվում են գրականության մեջ ու առօրյա կյանքում։

I

Հ. Պարոնյանը ծնվել է 1842 թվականին, Թյուրքիայի Ադրիանուպոլիս քաղաքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Արշակունյաց դպրոցում։

Ակնարկելով իր սովորած տարիների դպրոցները, Պարոնյանը գրում է. «Այն առեները վարժարաններու մեջ ամեն բան կգտնվեր, բացի ուսումեն»։

Երեխաներին ու պատանիներին ժամանակի սոցիալական-քաղաքական հարցերից հեռու

պահելու նպատակով, նրանց ուղղեր բթացնում էին կրոնական հավատալիքներով, սրբերի շինծու վարքագրություններով, «առաքյալների գործերով»։

Ուսուցիչները ոչ այնքան մատնացույց էին երեխաներին որևէ օգտակար դիտելիք տալով, որքան դպրոցների հազարաթիու ազանների, ամիրաների ցանկությունները կատարելով, նրանց հաճոյանալով։ «Այն ատենները,— գրում է Հ. Պարոնյանը,— անիրավություններ ճշմարտության ներկայացուցիչն էր, բռնություններ դավադրի ի ձևին կնախագահեր, արդարության աթոռին վրա ամիրաներուն կամքը բազմած էր»։

«Ամիրայի մը թաշկինակին դեմ խոսիլը երկնքի դեմ ապստամբիլ էր»։

Արշակունյաց վարժարանն ավարտելուց հետո, 1857 թ. նա ընդունվում է Ափրիանուպոլսի Հռոնական դպրոցը, որտեղ մի տարի «հույն լեզվին դժվարություններ սովորելով» թողնում-հեռանում է, երբեք այլևս փորձ չանելով որևէ դպրոցում սովորելու։

Այն, ինչ որ չեն կարողանում տալ ժամանակի հետամնաց այդ երկու դպրոցները, Պարոնյանը փորձում է ձևով բերել ինքնազարգացմամբ։ Ինքնուրույն կերպով սովորում է հռոմաբեն, ֆրանսերեն, իտալերեն, մասամբ էլ բուլղարերեն, որոնց իմացությունը հնարավորության է տալիս նրան ուսումնասիրելու համաշխարհային գրականության և հատկապես անտիկ գրականության խոշոր ներկայացուցիչների ստեղծագործությունները։

1864 թ. Հ. Պարոնյանը տեղափոխվում է Կ. Պոլիս։

Հ. Պարոնյանի դեմոկրատական աշխարհայացքի ձևավորմանը խոշոր չափով նպաստում է այն փաստը, որ նա Կ. Պոլիս գալու առաջին օրերից կապվում է Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցության տակ գտնվող դեմոկրատական ինտելիգենցիայի հետ և այդ միջավայրում է, որ ուսումնասիրում է հայ հասարակական կյանքը, փորձում այն արտացոլել իր առաջին աշխատություններում։

1865 թ. նա գրում է «երկու տերով ծառա մը» կոմեդիան, որը խստապահանջ հեղինակը համարել է գեղարվեստական տեսակետից անհաջող գործ և չի հրատարակել իր կենդանության օրով։

Պարոնյանը 1867 թ. գրում, 1868 թ. լույս է ընծայում «Աստամնաբույժն արևելյան» կոմեդիան, իսկ 1872 թ. գրում է «Շողոքորթը»։

Ինչ խոսք, որ նրա այս առաջին ստեղծագործությունները իրենց վրա կրում են սկսնակ հեղինակի անփորձության կնիքը, սակայն դրանք իր ժամանակի համար նորություն էին և կոչված էին վերջ դնելու ազգայնական ռոմանտիկական, գերազանցապես պատմական անցյալը պատկերող մի դրամատուրգիայի, որը նոր զարգացող արևմտահայ դրականությանը տալիս էր սխալ ուղղություն, հետապնդելով մի նպատակ՝ փախուստ իրականությունից, սոցիալական հուզող հարցերից, փախուստ դեպի պատմական անցյալը, որ ներկայացվում էր իդեալականացված ու ազավաղված ձևով։

Պարոնյանի կոմեդիաներում պատմական անցյալի փոխարեն մեծ ազանդով արտացոլվում էին պոլսահայ բուրժուազիայի բնատանական բարքերը, ցուցադրվում էր ժամանակակից կյանքը իր բարդ հակասություններով։

Դժբախտաբար, այդ առաջին կոմեդիաները հեղինակի կենդանության օրով չեն բեմադրվել։

Այդ թվականներին Պարոնյանը մի քանի տարի պաշտոնավարում է Կ. Պոլսի Սկյուտար քաղի դպրոցում, որտեղ սովորել է երիտասարդ բանաստեղծ Պետրոս Դուրյանը։ Պարոնյանը առաջինը գնահատում է Դուրյանի բանաստեղծական տաղանդը, թաջալերում նրան՝ հրատարակելով նրա առաջին բանաստեղծությունները։

1870 թ. սկզբներին Պարոնյանը ձեռնարկում է «Փող առավոտյան» պարբերականի հրատարակությանը, սակայն նյութական դժվարությունները հարկադրում են նրան դադարեցնել այն՝ հասցնելով 28 համար հրատարակած, որից հետո ժամանակի լիբերալ հրապարակախոսներից

Մ. Ֆելեկյանի «Եփրատ» թերթում լույս է ընծայում երգիծական մի քանի գործ, հենց առաջին օրվանից իր վրա հրավիրելով հասարակության ուշադրությունը։

Նատ չափավոր ուժերի տեր Ֆելեկյանը, որը չարունակ իր լրկան պոեզիայում «Հայաստանը կողբար, թեպետ ինքն ալ Հայաստանեն աղեկ վիճակ մը չուներ», նկատելով, որ Պարոնյանի ծավալած պայքարի հետևանքով իր համար կարող են անախորժ անակնկալներ առնեծվել, թերթի խմբագրությունը հանձնում է Պարոնյանին, ինքը մնալով որպես արտոնատեր-հրատարակող։

Պարոնյանը «Եփրատ» խմբագրում է 1871 թ. հոկտեմբերից մինչև 1872 թ. հուլիս ամիսը։ Վերհիշելով այդ շրջանը, մեծ երգիծաբանը «Ազգային ջոջերի» մեջ գրում է. «Եփրատը ուրիշներուն, ինչպես նաև այս տողերը գրողին խմբագրության ներքև ալ հրատարակվեցավ, բայց վերջապես օր մը, առանց հրամանի հրատարակած ըլլալուն համար, իսպառ խափանեցավ։ Այս խափանման վրա Ֆելեկյան էֆենտի առանձավոր գրելով շատացավ»։

Այս վկայություններից երևում է, որ Պարոնյանի խմբագրած հենց առաջին թերթը՝ «Եփրատը», խափանվել է օրինազանցության համար։

«Եփրատի» դադարումից հետո նա առանձին թերթ ունենալու մտքից մի ու ժամանակ հրաժարվում է և աշխատակցում Հ. Սվաճյանի «Մեղու» պարբերականին, որը, ինչպես Մ. Նալբանդյանն էր ասում, հանդիսանում էր «ժողովրդի մարտը բերանը, ազգի ցավերի և ուրախության ճշմարտացնա հայտարարը»։

Իր գրական կյանքը հենց առաջին տարիներից ժամանակի ամենաազդեցիկ պարբերականի հետ կապելը բախտորոշ և վճռական նշանակություն է ունեցել Հ. Պարոնյանի աշխարհայացքի ձևավորման, գրական-հրապարակախոսական հետագա ողջ գործունեության համար, գործունեություն, որտեղ որոշակի նկատելի է Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը։

«Մեղուում» Պարոնյանը տպագրում է քաղաքական սրությամբ հագեցված իր երգիծական տեղեծագործությունները։ Ազգային իշխանությունները, լիբերալ մամուլը և ամբողջ ունակցիան հոտանը կատաղի թշնամանքի ալիք են բարձրացնում խիստ հրապարակախոսի դեմ՝ նրան մեղադրելով հասարակական կյանքում միայն վատը տեսնելու, մարդու միայն քննադատելի կողմերը նկատելու մեջ։

Հ. Պարոնյանը նման մեղադրանքների պատասխանելով է, որ հետագայում գրել է. «Մարդկերու թերությունները տեսնելուս համար է, որ չեմ սիրեր գանոնք և ոչ թե գանոնք չտեսնելուս համար՝ անոնց թերությունները միայն կտեսնեմ»։

Հակառակ ունակցիոն հոսանքի այդ վերելքին, կարճ ժամանակամիջոցում Պարոնյանը ճանաչված ու սիրված հեղինակություն է գառնում ոչ միայն մայրաքաղաքում, այլև գավառում։

Հ. Սվաճյանը, հանձին Պարոնյանի տեսնելով իր քաղաքական ծրագրերի լավագույն պաշտպանողին ու մի եղակի տաղանդի, 1872 թ. նոյեմբեր ամսին «Մեղվի» խմբագրությունը հանձնում է նրան, մի հայտարարությամբ, որտեղ նկարագրելով պարբերականի հրատարակման գործում իր կրած դժվարությունները՝ գրում էր.

«Շատերը կըսեին մեզի որ օգնական մը գտնենք։ Բայց ինչ՝ գրելու կարող և ինչ՝ «Մեղուին» արդյունքովը անոթի մնալ հանձն առնող անձ մը գտնել որչա՞փ դժվար էր։

«Մեղուին» ինչ անոր բնթերցողներուն, չգիտենք որին բախտն էր, որ այս օրերս ձեռք անցուցինք այնպիսի բարեկամ մը, որ վերոհիշյալ երկու հատկություններուն վրա ազգին անկատի ծառայելու հատկությունն ալ ավելցուցած է. ասի արդեն ծանոթ է ժողովրդին երբեմն «Եփրատի» խմբագրությամբ ու կարճ միջոց մ'ալ «Մեղուի» խմբագրական օգնականությամբը։

«Մեղուի» անօրինություն, խմբագրությունը, գործակալությունը, վերջապես ամեն մի նե-

դուբյուն Պ. Հ. Պարոնյանի հանձնված է, մեղի վերապահելով երրմն անոր խմբագրության օգնականությունը»:

Ստանձնելով Մ. Նալբանդյանի տրադիցիաների պաշտպանությամբ մեծ ժողովրդականություն վայելող այնպիսի մի պարբերականի խմբագրությունը, ինչպիսին էր «Մեղուն», Հ. Պարոնյանը շեշտակի պայքար է ծավալում բոլոր տեսակի ցեցերի դեմ: Նրա խարանող մտրակի տակ են ընկնում լիբերալ թերթերի խմբագիրները, ղևկավար հոգևորականները՝ պատրիարքը, թեմական առաջնորդ եպիսկոպոսները, կրոնական ժողովի անդամները: «Մեղվի» էջերում Պարոնյանը բարձրացնում է բուրժուական ընտանիքների ներքին վիճակը քաքցնող ճավշյա վարագույրները և ցույց տալիս այդ ընտանիքների այլանդակությունները, բարոյական այլասերումը, մոլությունները:

Պարոնյանը պղտահայ կյանքը արտացոլում է դեղարվեստական մեծ ընդհանրացումներով: Նրա երկերում երևում է հեղինակի լավ իրազեկությունը ոչ միայն շրջապատի քաղքենիական կյանքի, ազգային ու կրոնական գործերի մանրամասներին, այլև Թյուրքիայի արտաքին ու ներքին քաղաքականությանը, միջազգային դիվանագիտության մանևրներին, երևում է նրա խոր հմտությունը համաշխարհային գրականության ու պատմագրության կյանքի ներկայացուցիչներին, որոնց մտքերը, արտահայտությունները օգտագործել է իր բարձրացրած հարցերը առավել համոզիչ ու հնչականալի դարձնելու համար:

Պայքարի լայն ճակատ բռնելով, Պարոնյանը իր վրա է հրավիրում ամբողջ ռեակցիոն հոսանքի թշնամությունը, այնպիսի մարդկանց ու հասարակական կազմակերպությունների, որոնց թիկունքում կանգնած էին Պոլսի Հայերի կրոնական կենտրոնը՝ պատրիարքարանը, սուլթանական կառավարությունը, անգամ եվրոպական որոշ պետություններ՝ իրենց դեսպանատներով:

Եթե հրապարակով մղված մարտերում նա հաղթանակով էր դուրս գալիս պայքարից՝ շնորհիվ իր երգիծական արտակարգ մեծ տաղանդի, բազմակողմանի զարգացման, որոնց մոտ հակառակորդներն իրենց մտավոր կարողությամբ գաճաճներ էին, ապա նա չէր կարող հաղթել իր թշնամիներին՝ կանխելով նրանց նենգ պայքարի միջոցները՝ դրպարտությունը, լրտեսագրերը, որոնց մեջ մեծ երգիծարանը ներկայացվում էր որպես հակակառավարական, հակակրոնական գաղափարներ տարածող մի հրապարակախոս:

Սկսվում է ուժեղ հալածանք Պարոնյանի դեմ: Հազիվ մի քանի ամիս խմբագրած՝ թշնամիներին հաջողվում է երկու ամսով փակել «Մեղուն»՝ պատրիարքի դեմ հրատարակած մի ծաղրանկարի համար:

Հ. Պարոնյանը, հրատարակելով տպագրական տեսչության հրամանը, որով երկու ամսով դադարեցվում էր թերթը, գրում է մի սուր պամֆլետ՝ տպագրական տեսչության և նրա տգետ պաշտոնյաների դեմ: Պայմանաժամի լրանալուց անմիջապես հետո նա վերահրատարակում է «Մեղուն» խիստ լեզվով գրված մի առաջնորդող հոդվածով, որտեղ հարձակումներ գործելով տպագրական տեսչության վրա՝ ընթերցողներին մատնանիշ է անում նաև հայ լրտեսներին, որոնց ջանքերով խափանվել էր «Մեղուն»:

«Մեղվի» վերջնական խափանումից հետո 1874—77 թթ., Հ. Պարոնյանը հրատարակում է «Թատրոն» պարբերականը:

«Թատրոնը» լույս է տեսել ռուս-թյուրքական պատերազմի նախօրյակին և պատերազմի ընթացքում: Ռուսական զորքի հաղթական առաջխաղացումը մինչև Կ. Պոլսի դռները՝ կարճ ժամանակով հնարավորություն և համարձակություն է տալիս հայ մամուլին, համեմատաբար ավելի ազատ գրելու քաղաքական հարցերի մասին: Մի ամբողջ տասնամյակ արգելվելուց հետո հնարավոր է դառնում հիշատակել Մ. Նալբանդյանի անունը, խոսել նրա երկերի մասին, նրանցից կատարել մեջբերումներ և առհասարակ Նալբանդյանի գաղափարներն օգտագործել

ռեակցիայի դեմ մղվող պայքարում, մի բան, որից առաջին հերթին օգտվում է Պարոնյանը: «Թատրոնի» 1876 թ. № 216-ում գրելով մի քաղաքական սուր հոդված ներքին և արտաքին հարստահարիչների դեմ, որպես նշանաբան ընտրելով Մ. Նալբանդյանի «Վերկրագործությունից» «Կեցցե կատուն, որ իր փորի համար մուկ է բռնում» արտահայտությունը:

Պարոնյանը «Թատրոնում» հրատարակում է մի շարք նշանավոր աշխատություններ, որոնք հանդիսանում են նրա գլուխ-գործոց ստեղծագործություններ:

«Թատրոնի» էջերում է, որ նա իր քաղաքական սատիրայի ամբողջ ուժով մերկացնում է Թյուրքական բռնապետական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը, երկրում տիրող միջնադարյան խավարամոլությունը, պետական կամայականությունները, եվրոպական դիվանագիտության ոռնձգությունները Մերձավոր Արևելքում, այդ ոռնձգությունների աղետաբեր հետևանքները հայ ժողովրդի համար և այլն:

«Թատրոնում» Պարոնյանը սկսում է մաս-մաս հրատարակել իր «Ազգային ջոջեր» պատմությունը:

«Ազգային ջոջերը» Պարոնյանի քաղաքական սատիրայի գագաթն է: Այնտեղ նա խտացրել է իր երգիծական տաղանդի ամբողջ ուժը, գաղափարական նպատակասլացությունը:

Եթե «Թատրոնում» տպագրված այլ ժանրերի ստեղծագործություններում նա գերազանցապես մերկացրել է սուլթանական Թյուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը, եվրոպական պետությունների ոռնձգությունները Մերձավոր Արևելքում, ապա «Ազգային ջոջերում» նրա գրչի կիզակետը հիմնականում ներքին շահագործողներն են: «Ազգային ջոջերում» Հ. Պարոնյանի քաղաքական սատիրան հանդես է գալիս սերտ կերպով միացած նրա սոցիալական սատիրայի հետ:

«Ազգային ջոջերը», անհատ հասարակական գործիչների երգիծական պորտրետները լինելով, հանդիսանում են Պարոնյանի ապրած և ստեղծագործած էպոխայի լավագույն արտացոլումը: Տարբեր մարդկանց կենսագրական մանրամասների մեջ հանճարեղ երգիծաբանը խտացրել է էպոխայի տիպական հատկանիշները: Այդ կենսագրություններում սուր, անխնա քննադատության են ենթարկվում հոգևորական իշխանությունները, բուրժուական ծախու մամուլը, շահամոլ ու խարեբա «ազգայինները», տգիտության ու խավարի մեջ խարխափող Թյուրքիայի ներքին վիճակը:

Հ. Պարոնյանը «Ազգային ջոջերում» մեկ առ մեկ հրապարակի վրա է դնում տգետ, փառամոլ, երկերեսանի, թծնող ու շողոքորթող այն հոգևորականներին, որոնց համար ոսկյա պատվանդաններ, փառքի կոթողներ էին տեղեծել լիբերալ մամուլն ու գրողները:

Պարոնյանը անխնա մերկացրել է ոչ միայն ժամանակի պահպանողական վերնախավին պատկանող ազգային «ջոջերի» հակաժողովրդական էությունը (Ա. Նարբեյ, Տերոյենց և ուրիշներ), այլև լիբերալ ինտելիգենցիայի ականավոր ներկայացուցիչների գաղափարների ու պրակտիկ գործունեության հակասությունը (Կ. Ալթունյան, Ստ. Փափազյան և ուրիշներ):

1876—78 թթ. Պարոնյանը միաժամանակ հրատարակում է «Թատրոն մանկանց» պատկերազարդ պարբերականը, օգտակար գիտելիքներով ու մաքուր տպված նկարներով: Ըստ էության, դա առաջին հրատարակությունն էր արևմտահայ իրականության մեջ, որը տպագրում էր մանկական ընթերցանության նյութեր:

Ներքին և արտաքին շահագործողների դեմ ծավալվող այս խիզախ մարտնչումները Պարոնյանը կատարում է քաղաքական խստագույն հալածանքների, մատնությունների պայմաններում, որոնց հետևանքով «Թատրոնը» հաճախ փակվում է ու մեծ դժվարություններով նորից հրատարակվում:

Պարոնյանի «Թատրոն» պարբերականը ենթարկվում է նույն հալածանքին, ինչ որ «Մե-

դուն»։ Իր ծագրած «ազգային ջոջերի» մատենությունների հետևանքով չորս տարվա ընթացքում այն փակվում է ութ անգամ՝ խմբագրին պատճառելով նյութական ծանր վնասներ։

«Թատրոնիս մեջ ոչ քիչ նախատրաբի մը, այլ օտաճիի մը դեմ ելեր երկու խոսք լսեր,— գրում է Պարոնյանը,— իսկույն ամիս մը կդադարեցնեին թատրոնը, իսկ ևեթ քիչ մը ծանր կոխեի, կխափանեին գայն»։

1875 թ. նոյեմբեր ամսին լիրերալ «Մասիսը» տպագրում է լուրեր Հայաստանում իշխող բարբարոսների կատարած ոճրագործությունների և թալանի մասին, սակայն տպագրում է միշտ զիջումներ, ուներանոներ անելով սուլթանին, փորձելով ամեն կերպ սիրաշահել «բարեխոնամ» կառավարությանը։

Պարոնյանը, ցանկանալով իրեն հատուկ խիզախությամբ և ակդրունդայնությամբ բարձրացնել այդ հարցը, դավադից առացված նման մի արատաճիկ լուր հրատարակում է սև շրջանակի մեջ, որպես մահագդ դավադում գտնված այդ հազարավոր հայերի համար։ Նա այդ լուրին կցած հոդվածում գրում է. «Ամերյոր Տպագրական տեսչություններ կներե՞ մեզ այս անլուր վայրենության, բարբարոսության ու դազանության տակ հեծեծող մեր եղբարց կականարձակ հառաչանաց արձագանգը տալ»։ Նա միաժամանակ գրում է, որ հայերի վրա ծանրացած բարբարոսական լուծը «Հպատակության բլլալն դադրած, գերության լուծ եղած է», «և որ Հայ ժողովուրդը իր անձի և ինչքի ազատության, կյանքի ապահովության» Թյուրքական կառավարությունից պահանջում է ոչ թե «իրրև շնորհք, այլ իրրև իրեն (Թյուրքական կառավարության) պարտքը»։

Ինչ խոսք, որ Պարոնյանը այս համարձակ տողերը գրելիս արդեն նկատի է ունեցել, որ «Թատրոնը» անպայման խափանվելու է։ Հենց հաջորդ օրը նա առանում է տպագրական տեսչության պաշտոնական ծանուցագիր-կարգադրություններ թերթի խափանման մասին։

Պաշմանաժամը լրանալուց հետո Պարոնյանը անցնում է հարձակման։ Նույց տալու համար, թե Թյուրքիայում ինչպես արգելված է ամեն մի ազատ խոսք, նա հրատարակում է իր բարեկամներից մեկի ցավակցական նամակը՝ «Թատրոնի» խափանման առթիվ գրված, կսխանան կետեր գնելով այն բոլոր նախադասություններն, բառերի փոխարեն, որոնք կարող էին արգելվել գրաքննության կողմից։ Ստացվում է մի նամակ, որտեղ բացի «թեպետև», «բայց», «ինչու համար», «որովհետև» և այլ նման մի քանի կցկտուր բառերից ուրիշ ոչինչ չկա։ Նամակի այդպես աղճատված, ջնջված ձևով հրատարակվելը շատ ավելի ազդու էր, դիպուկ, ոչնչացնող, քան հակակառավարական մի ամբողջ հոդված։

Նման մի քանի այլ նյութերի պատճառով «Թատրոնը» փակվում է ընդմիշտ։

Մեծ երդիծարանի հակառակորդները հասնում են իրենց նպատակին։ Պարոնյանը մի քանի տարի զրկվում է սեփական թերթ ունենալու հնարավորությունից։

«Թատրոնը» փակվելուց 6 ամիս հետո, 1878 թ. փետրվարի կեսերին, Պարոնյանը «Մասիս» թերթում սկսում է հրատարակել իր «Կամքիների» շարքը։ Մի կծու առաջաբանով նա բնթերցողներին հայտնում է, որ իր 6 ամսվա լռության պատճառը ցենզուրական արգելքներն են, այն, որ կառավարության կողմից «խնդալը» ճանաչված է «հատարակաց բարոյականության համար վնասակար»։

«Մասիսում» Պարոնյանը շարունակում է մերկացնել եվրոպական դիվանագիտություն, եվրոպական մեծ պետությունների դեսպանների ինտրիգները, փորր ժողովուրդներին, այդ Թվում հայերին, ստրկացնելու նրանց ծրագիրը։

Նա սուր քննադատության է ենթարկում նաև սուլթանական կառավարության բարբարոսական քաղաքականությունը, հանգելով այն արդար դատավճռին, թե բանտարկվելու արժանի ոճրագործներն ու մարդասպաններն են, որ տիրապետում են աշխատավոր հայ ժողովրդի վրա։

«Մասիս» թերթի լիրերալ խմբագիր Կ. Ալթունյանի նպատակը եղել է իր տաղտկալի թերթում Պարոնյանի երկերը տպագրելով՝ հետաքրքիր դարձնել այն, ընթերցողներ վաստակել։ Սակայն Պարոնյանի երդիծական հոդվածների բերկրիր անախորժ անակնկալները, թերթի փակվելու վտանգը ավելի ծանր համարելով, քան նյութական օգուտը, Ալթունյանը փակում է «Մասիսը» դռները այդ «վտանգավոր» մարդու առաջ։

Մինչև 1878 թ. մարտի 5-ը «Մասիսին» աշխատակցելուց հետո Պարոնյանը զարձյալ դուրս է մնում լրագրական տպարիզից և հարկադրված է լինում աշխատակցել մի շարք թերթերի՝ «Մանզումեի էֆկյար», «Ճերիտեի շարքին», «Լույս», «Հայրենիք» և այլն։ Վերջում այդ թերթերը, որոնք նախորդ տարիներին սուր ծաղրի էին ենթարկվել «Մեղումում» և «Թատրոնում», չէին կարող թույլ տալ, որ Պարոնյանը ազատ գրեր, ինչ որ ցանկանար։ Այդ թերթերի ուղղությունը հարազատ չէր Պարոնյանի դեմոկրատական աշխարհայացքին։ Նա այդ պարբերականների մեջ հարկադրված էր տպագրել այնպիսի նյութեր, որոնք ուղղված չէին ազգային իշխանությունների կամ կառավարական պաշտոնյաների դեմ և զերազանցապես շոշափում էին հենցադային հարցեր, «առանին սեռարաններ»։ Բացի այդ, կան վկայություններ, որ նրա գործերը լույս էին տեսնում խմբագրական մեծ կրճատումներով և ուղղումներով, որոնք հարկադրում են իր սկզբունքներին հավատարիմ գրողին՝ թողնել և հետևանք այդ պարբերականներից, որտեղ տպագրվելու այլ հնարավորություններ։

1879 թ. Պարոնյանը ծրագրում է ժամանակի դեկավար մարդկանց մասին «Թատրոնում» և «Լույսում» տպած իր երդիծական պորտրետները հրատարակել առանձին գրքով։ Նա լույս է ընծայում այդ ժողովածուի առաջին հատորը՝ վերնագրելով «Ազգային ջոջեր»։ Հատորում տեղ են գտնում 10 պորտրե, այդ թվում՝ հեղինակի գլուխ-գործոցներից «Տարեն Գալֆայանը», «Հովհաննես Տերոյենցը», «Անտոն Հատունյանը» և ուրիշներ։

Հաջորդ տարում նա հրատարակում է «Ազգային ջոջերի» Բ. մասը, որտեղ նույնպես զետեղում է 10 երդիծական պորտրե։

Նույն 1880 թ. Պարոնյանը ձեռնարկում է «Ազգային ջոջերի» Գ. հատորի տպագրությանը, սակայն հոգով է կարոզանում լույս ընծայել 3 «ջոջ» (ընդամենը 48 էջանոց մի պրակ) և ընդհատում է, ամենայն հավանականությամբ, ոչ այնքան նյութական, որքան բարոյական պատճառների հետևանքով։

Թյուրքիայի բազարական կյանքում այդ երկու տարիներին տեղի են ունենում խոշոր փոփոխություններ։

Թյուրքական կառավարությունը խստացնում է հալածանքները հայերի ղեկամամբ։ Սուլթան Համիդի անմիջական հրահանգներով գավառներում սկսում են կոտորել հայ խաղաղ բնակչությանը։ Մայրաքաղաքում սկսվում է ուժեղ հալածանք անգամ սուլթանիզմի հետ լեզու գտնելու ձգտող լիրերալ մամուլի ու հրատարակությունների դեմ։ Արգելվում է պատմական ողբերգությունների բեմադրությունը, փակվում է առհասարակ հայ թատրոնը։ Կ. Պոլսի ակտիվ հայ պատիանները Պ. Ագամյանի գլխավորությամբ գալիս են կռվկատ՝ անհամեմատ ազատ պայմաններում շարունակելու իրենց թատերական գործը։

Հասկանալի է, որ քաղաքական նման պայմաններում դժվար էր, այնպիսի մի դեմոկրատ մտածողի գրական գործունեությունը, ինչպիսին էր Հ. Պարոնյանը։ Նա ոչ միայն հնարավորություն չի ունենում շարունակելու և ամբողջացնելու «Ազգային ջոջերը», այլև ազատ կերպով տպագրելու իր թեկուզ կենցադային բնույթի գործերը։

Պարոնյանը գրել է. «Երբ գիրքերն երկար տարիներ ի վեր մեկ-մեկ պարահանդեսներ դարձած են. հոն գիմակով ալ կընդունվին, առանց գիմակի ալ, իսկ ես կզարմանամ, թե ճշմարտությունը խոսելու համար ինչու ամչնա մարդ և երեսը գիմակ ձգելու հարկադրվի»։

Չնայած այս համոզման, Հ. Պարոնյանը հայ գրողների մեջ այն բացառիկ դեմքն է, որ

ամենից շատ է հանդես եկել դիմակով, այսինքն՝ ծածկանուններով, որոնց թիվը մի քանի տասնյակի կարող է հասնել։

Ինչպես Պոլսի առաջավոր հայ ինտելիգենցիայի ճնշող մեծամասնությունը, Պարոնյանը նույնպես իր ակնարկը հառում է դեպի Կովկաս։ Նա բնականաբար չէր կարող աշխատակցել «Մշակին», որի խմբագրին այնքան սուր քննադատության էր ենթարկել «Ազգային ջոջերում»։ Նախընտրում է գրել «Փարոսում», որի խմբագիր Ա. Հովհաննիսյանը ձգտում էր իր շուրջը հավաքել ժամանակի պրոգրեսիվ գրողներին, տպագրում էր Պ. Պռոշյանի, Հ. Պատկանյանի, Րաֆֆու և ուրիշների երկերը։

Պարոնյանը Ա. Հովհաննիսյանի «Փարոսում» 1880 թ. մաս-մաս հրատարակում է իր «Իմ ձեռատետրը» նշանավոր աշխատությունը Հոս-հոս տառրագրությամբ, որը հետագայում քանիցս վերահրատարակվել է «Հոս-հոսի ձեռատետրը» վերնագրով։ Այդ աշխատության մեջ քան էության փորձում է շարունակել այն պայքարը, որ սկսել էր «Մասիսում» «Կոմիքներ» ընդհանուր վերնագրով։ Թե՛ ժանրային տեսակետից և թե՛ իրենց արծարծած հարցերով, երդիծական պրիոմներով «Ձեռատետրի» նյութերը կազմում են «Կոմիքների» շարունակությունը։ «Ձեռատետրը» Պարոնյանի ապրած ժամանակաշրջանի տարեգրությունն է, որտեղ արձանագրված են ոչ միայն պոլսահայ իրականության հուզող հարցերը, այլև միջազգային քաղաքական կյանքին վերաբերող շատ խնդիրներ։ Օրը-օրին գրված այդ խրոնիկաների մեջ անշուշտ կան սովորական լրագրային հաղորդումներ, զուրկ երդիծական արժանիքից, սակայն դրանց թիվը շատ քիչ է։

Սուլթանական Թյուրքիայից դուրս, ծածկանունով տպագրվելու հանգամանքը հնարավորություն է տվել Պարոնյանին արևմտաեվրոպական պետությունների, Թյուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության մասին հանած իր եզրակացությունների մեջ լինել ավելի որոշակի, հստակ և անողոք։

Կ. Պոլսում տպագրած իր ոչ մի աշխատության մեջ Պարոնյանը սուլթանական կարգերի նկատմամբ այնպիսի համարձակ եզրակացությունների չի հանգել, որքան «Հոս-հոսի ձեռատետրում»։

Կարճ ժամանակ միայն աշխատակցելով «Փորձին», Պարոնյանը ընդհատում է իր այնքան արժեքավոր թղթակցությունները։

Ինչպես ասվեց, Թյուրքական բռնապետությունը անցել էր սանձարձակ հալածանքի։ Պարոնյանը Կ. Պոլսի թերթերում հնարավորություն չուներ ազատ գրելու։ Նա, իմանալով հանդերձ Զարմայր Մսերյանցի ռեակցիոն գաղափարների մասին, առաջարկում է աշխատակցել նրա խմբագրությամբ Մոսկվայում լույս տեսնող «Փարոս Հայաստանին» պարբերականին։

Պարոնյանը ցանկանում էր ամբիոն ձեռք բերել և փորձել գրելու իր ցանկացած նյութերի մասին. դա երևում է այն մի քանի թղթակցություններից, որ նա հրատարակել է «Փարոս Հայաստանի» պարբերականում «Լուսարար» տառրագրությամբ։ Դրանք Պարոնյանի երդիծական ժառանգության, նրա քաղաքական տատիրայի լավագույն էջերից են։ Միաժամանակ այդտեղ է, որ Հ. Պարոնյանը, անդրադառնալով աշխարհաբարի և գրաբարի պայքարին նախնդյանական դիրքերից, դիակ է հռչակում գրաբարը և աշխարհաբարի մեջ է տեսնում նոր լեզվի զարգացման հեռանկարը։

«Լուսարարի նամակներից» հաղիվ չորս թղթակցություն հրատարակած՝ Մսերյանցը ընդհատում է Պարոնյանի երկերի տպագրությունը, երդիծաբանից ստացված վերջին թղթակցությունը գցելով արխիվ։ Տարիներ անց միայն այդ աշխատությունը լույս է տեսնում «Հանդես գրականական և պատմական» պարբերականի 5-րդ գրքում, խմբագրի՝ Մ. Բարխուդարյանի, մեծանոթագրությամբ, որտեղ ասվում է, թե այդ նյութը ստացվել է Մսերյանցից։

1881—1885 թթ., այսինքն՝ ուղիղ 4 տարի, Հ. Պարոնյանը եղել է ազգային ժողովի երեսփոխան, ընտրվելով իր ծննդավայրից՝ Ադրիանուպոլսից։

Ազգային ժողովը մի վայր էր, որը, ինչպես Պարոնյանն էր նույն օրերին գրում, կազում էր երկու ուռվ և որևէ հարց լուծելու կարողություն չուներ։ Պարոնյանը չէր կարող մանակցել այդ ժողովի այն չաղակրատանդներին, որոնց այնքան սրամիտ կերպով ծաղրել էր բազմաթիվ առիթներով։

Այդ շրջանում է, որ մամուլում լույս է տեսնում Հ. Պարոնյանի անմահ ստեղծագործություններից «Մեծապատիվ մուրացկանները»։

«Մեծապատիվ մուրացկանները» բան Լության ընդհանրացումն ու գեղարվեստական ամբողջացումն էր հասարակական կյանքի այն բնութագրումների, որոնց ընթերցողը կարող է հանդիպել Պարոնյանի նախորդ տարիների շատ ստեղծագործություններում։

«Մեծապատիվ մուրացկանները» աչքի է ընկնում որպես հայ քննադատական ռեալիզմի ամենանշանավոր նմուշներից մեկը, որտեղ հանդես է եկել բնավորություններ, տիպեր կերտելու, միջավայր ներկայացնելու հեղինակի խոշոր տաղանդը։ «Մեծապատիվ մուրացկանների» գլխավոր հերոս Արիստոդեմ աղան, Մանուկ աղան, անմուսա բանաստեղծը, խմբագիրը և շատ այլ գործող անձեր ամենամատչելի կերպարներ են հայ գրականության պատկերասրահում։

Վիպակի գրական խոշոր արժանիքներով պետք է բացատրել այն փաստը, որ «Մեծապատիվ մուրացկաններն» ունեցել է ավելի քան 10 հրատարակություն և թարգմանվել է մի շարք լեզուներով, բեմադրվել է հայ թատրոնում երկար ժամանակ։

* * *

Հ. Պարոնյանը ծրագրում է Կ. Պոլսում մի նոր երդիծաթերթ հրատարակել, սակայն մամուլի վրա դրված կաշկանդումներն այնպիսի արտաոոց խստություններ էին հասել, որ բացարձակապես անհնար է դառնում քննադատել ոչ միայն պետական պաշտոնյաներին, այլև ազգային իշխանություններին։

Նման պայմաններում նա չէր կարող իր սուր քաղաքական երդիծանքը հասցնել ուղղել վերոհիշյալ մարդկանց դեմ։ Նա մտածում է պայքարի նոր միջոցներ գտնելու մասին։ Որոշում է հասարակական կյանքի արատավոր կողմերը քննադատել եզոպոսյան լեզվով։

Այս պայմաններում է, որ 1883 թ. սկզբից հանդես է գալիս նրա «Միծաղը», որը լույս է տեսնել առանձին պրակներով, ամեն շաբաթ՝ որպես բրոշյուր։

Հ. Պարոնյանը իր «Միծաղի» առաջին տետրակի առաջաբանում անդրադառնելով քաղաքական աննպատակ պայմաններին՝ գրում է.

«Ներկա գործս պիտի խոսի կենդանիներուն վրա, ի բաց առնելով միայն այն կենդանին, որուն մարդ կըսեն տասնևինևներորդ դարուս մեջ։

Ինքնին կհասկըվի, ուրեմն, թե դյուցազներուս խումբը պիտի կազմվի կատվե, գորտե, կապիկե, աղվեսե, գայլե, էշե, սագե, բադե և վերջապես այն ամեն կենդանիներեն, որոնց մարդ չեն ըսեր»։

Եվ ապա, հասկացնելով, որ այդ կենդանիների անվան տակ ընթերցողները դարձյալ պիտի տեսնեն Կ. Պոլսի հայ հասարակական կյանքում իշխող դեր կատարող ազգային ջոջերին, Պարոնյանը շարունակում է.

«Փիլոն հագած կապիկներ, առաջնորդության թեկնածու ագռավներ, իրենց անձն ուղղության օրինակ հռչակող ուղտեր, ներդաշնակության ճաշակ տարածող ավանակներ, պանիրի պահպանության համար իրենք զիրենք ընտրելի ներկայող կատուներ և այլն ի տես պիտի գան և իրենց դերերն պիտի կատարեն «Միծաղի» ասպարեզին մեջ»։

Այսօր, 70 տարի անց, Պարոնյանի այդ նոր ժանրի ստեղծագործությունը անհնար է հասկանալ առանց ամենամանրամասն ծանոթագրությունների ու կոմենտարների։ Ժամանակաշրջանի հասարակական-բարոյական կյանքին քիչ թե շատ ծանոթ ընթերցողը, սակայն, կնկատի թեմատիկայի այն բազմազանությունը, տարբեր բնագավառների ընդգրկումը, որը ինչպես Պարոնյանի նախորդ շրջանի բոլոր աշխատություններում, այնպես էլ «Մխիթարում» առկա է։ Ամենաանբովանդակ բննադատության ու մերկացումների են ենթարկվում հայ ժողովրդի բախտի հետ խաղացող հայ բուրժուական գործիչները, լիբերալ մամուլը իր խմբագիրներով, պատրիարքարանը իր բարձրաստիճան հոգևորականներով, սուլթանական կառավարությունը իր պաշտոնյաներով, եվրոպական գաղութարարներն իրենց դիպլոմատիկական խաղերով։ Այս բոլորը ներկայացվում են ոչ թե իրենց կոնկրետ պաշտոններով ու անուններով, այլ առակի ժանրին հատուկ կենդանական աշխարհի օգտագործմամբ։ Բազմազան և բազմաթիվ կենդանիների միջոցով Պարոնյանը ներկայացրել է իր ժամանակաշրջանի բոլոր նշանավոր մարդկանց և գործիչներին։ «Մխիթար» հրատարակված տարիներին օրը-օրին հետևել է ակնարկում հեղինակը այս կամ այն կենդանու արարքները բննադատելիս։

Նույնիսկ այդպիսի միջոցներով չկարողանալով շարունակել «Մխիթար», Պարոնյանը հարկադրված է լինում այն պատրեցնել բնդամենը մի քանի ամիս հրատարակելուց հետո, 1883 թ. գարնանը։

Ավելի քան 6 ամիս լրագրական աշխատանքից հետո մնալուց հետո Պարոնյանին մեծ դժվարությամբ հաջողվում է մի նոր երկիծաթերթ հրատարակելու թույլտվություն ձեռք բերել։ Նա 1884 թ. հունվարի 30-ից լույս է բնծայում «Խիկարը»։

«Խիկարը» հետագա հրատարակություններ ներկայացնող «Երկու ապ» աշխատությունում Պարոնյանը գրել է.

«Առաջին անգամն չէ, որ պատիվ կունենամ երևալու խմբագրական աշխարհին վրա, որուն բառասուն անգամ աղջուն և նայնքան հրաժեշտ ալած եմ, ուստի ավելորդ կհամարիմ դիտողին հայտնել ասա այն ուղղությունն է ընթացքը, որուն հետևած եմ ցարդ և զոր լրանելու զորավոր պատճառ մը չունիմ, որովհետև աղջամուղջությունն, անկեղծությունն և անաչառ դատաստանն տակավին չեմ դաներ ես այնքան դժվելի և այնքան զգուշելի, որքան կկարծվի խմբագրաց և գրագիրաց ամանց»։

Չնայած այս պերճախոս դեկլարացիային, Պարոնյանը «Խիկարում» հարկադրված է լինում շատ ավելի բնութագրական, կենցաղային հարցեր շոշափել, քան քաղաքական։ «Խիկարի» էջերը լցնում է Պարոնյանը անձամբ, գերազանցապես «առանին տեսարաններ» ցուցադրելով։ Այդ նյութերի զգալի մասը լրագրական սովորական հոդվածներ են, զուրկ երգիծական այն հղոր շնչից, որով հագեցված էին «Մեղվում», մանավանդ «Թատրոնում» տպագրված նյութերի մեծ մասը։

Ինքը՝ Հ. Պարոնյանը ուշագրավ խոստովանություն ունի այս մասին։ Պատասխանելով իր այն ընթերցողներին, որոնք դժգոհություն են հայտնել «Խիկարի» բովանդակությունից, նա գրում է.

«Սակայն պահանջել իրմե (այսինքն՝ «Խիկարից»), որ խոսի այն լեզվով, որով կխոսեր երբեմն «Մեղուի», «Թատրոնի», «Լույսի» և ազգային ուրիշ լրագրաց մեջ, անկարելին պահանջել է, որովհետև «Խիկարին» ձեռագրերն գրաքննական բովեն անցնելեն հետո կհանձնվին մամլու։ Այսքան բացատրություն բավ կհամարիմ պատասխանելու համար այն դիտողությանց, որ ուղղվեցան մեզ «Խիկարին» անցյալ շրջանի պարունակությանց մասին»։

1886 թ. «Խիկարում» սկսվում է տպագրվել Պարոնյանի «Պաղտասար աղբար» անմահ կոմեդիան։

«Խիկարում» Հ. Պարոնյանը տպագրում է նաև իր կարևոր աշխատություններից «Քաղաքավարության վնասները» և այլ գործեր։

Բուն Լուիյան այս բոլորի մեջ արծարծվում էր նույն հիմնական հարցը, այն, որ քաղաքակրթության, քաղաքավարության քողի տակ հայ իրականության մեջ մուտք գործում այնպիսի բարքեր, որոնք ապականում էին կյանքը, այլասերում մարդկանց։

Չնայած այն հանգամանքին, որ «Խիկարը» չէր շոշափում քաղաքական խնդիրներ, պահպանում էր անգամ պատրիարքարանի հետ կապված հարցեր բարձրացնելուց, այնուամենայնիվ այն ենթարկվում է բազմաթիվ խափանումների և 1888 թ. վերջնականապես փակվում է։

«Խիկարից» հետո Հ. Պարոնյանը այլևս հնարավորություն չի ունենում զբաղվելու խմբագրական աշխատանքով։

* * *

Խմբագրական աշխատանքին զուգընթաց, Հ. Պարոնյանը կատարել է դանազան աշխատանքներ՝ իր բազմանդամ ընտանիքի ապրուստն ապահովելու համար։ Նա միշտ ապրել է նյութական ծանր պայմաններում։ Իր ստեղծագործություններով ընթերցողներին լիաթոք ծիծաղ պատճառող մեծ երգիծարանը կյանքում եղել է լուսկյաց, քաղծոտ ու մռայլոտ մի մարդ։

Պարոնյանը իր ամբողջ կյանքի ընթացքում ատել է հարուստներին։ Միակ զրոյն է ամբողջ արևմտահայ գրականության մեջ, որ երբեք խունկ չի ծխել հարուստների առաջ, միշտ հեռու է եղել այդ միջավայրից։ Նա խուսափել է «մեծատուններից», երբեք իր արամաբույնները շաղ չի ածել հարուստների հոխ սեղանների վրա։ Նրա միջավայրը, տարերքը եղել է արհեստավորների, պանդուխտ դասի շրջապատը, եղել է նրանց այցելած սրճարաններում, որոնց ամբողջ կահավորումն էր՝ գինու շշեր, «օղիի սրվակներ, մեկ կողմ ձգի սեղաններ, որոնց վրա շարված էին ձեթով կերակուրներ»։

«Մխախոտի մուխը, ուտելիքներուն տրատակարգ բուրումը, բմպելիքներուն հոտը կհորինեին մթնոլորտ մը, ուր շնչելը շատ դժվարին էր անվարժներուն։ Հոն կհանդիպեինք Պարոնյանին, որ ընդհանրապես տարտամ, տխուր, հուսահատական կերպարանք մը ուներ,— գրում է իր հուշերում Ա. Արփիարյանը,— ամեն անգամ, որ դինքը կտեսնեի, կկարծեի թե այն օրը մեծ վիշտ մը ունի, կամ անհաջողություն մը։ Բայց ոչ, իր բնավորությունն էր, ներքին ցավոտություն մը ուներ»։

Հոգեկան այդպիսի ծանր վիճակում նա իր կյանքի վերջին տարիներին շարունակում էր զբաղվել հաշվապահական տաղտկալի ու հոգնեցուցիչ գործով, որպեսզի կարողանա ապահովել իր ընտանիքի ապրուստը։ Ո՛չ Բյուրքիայում և ո՛չ էլ արևելահայ իրականության մեջ 80-ական թվականների վերջերին չկար որևէ դեմոկրատական մամուլ, որտեղ նա կարողանար գրել գեթ խմբագրական կաշկանդումներից ազատ։ Այդ է պատճառը, որ երբ նրան խորհուրդ են տալիս աշխատակցելու Տ. Նազարյանցի «Տարազին», նրան ամենից առաջ հետաքրքրում է 1890 թ. հրատարակվելիք այդ պարբերականի գաղափարական ուղղությունը և հետո այն, թե ամա-

Կան բանի՝ չէ պետք է դրի, որպեսզի նվազագույն մի վարձատրությամբ կարողանա ինքնագնել իր նյութական ծանր վիճակը։ Նա Տ. Նազարյանցին հասցեագրած նամակում գրում է.

«Ես պատրաստ եմ Ձեր ինքնին աշխատակցելու, միայն թե կխնդրեմ ինձի հաղորդեք նախ ինքնը ինչ ուղղության կպատկանի և երկրորդ որչափ ինքնի հարկ է գրել, որպեսզի ամսական քան ռուբլի առանալ կարելի լլլա»։

«Տարազում» մենք Պարոնյանի գործերին չենք հանդիպում։ Ամենայն հավանականությամբ այդ թվականից ծանրացող ծորտատար հնարավորություն չի տվել նրան նյութեր ուղարկելու Տ. Նազարյանցին։ Բանն այն է, որ հենց 1890 թ. սկզբից նա ընկնում է անկողին ու օրեցօր հյուծվում, բարքայվում անտեսական ամենածանր պայմաններում։

Ժամանակակիցները ամենատխուր ու ցնցող տողերով են նկարագրել նրա կյանքի վերջին տարին։ «Ինքնարին» չվաճառված համարները՝ միակ հարստությունը, ինչ տակ, նա դռնե դուռ ման է ընկել, որպեսզի դրանք գնի կես գնով վաճառի և ստացած գումարը հատկացնի բուժման։

Թիֆլիսի «Արձագանք» ինքնի թղթակիցը Պարոնյանի մահվան օրերին գրում է. «Մի երկու ամիս առաջ տեսա նրան. անճանաչելի էր դառել։ Բժշկի մոտից էր վերադառնում, դեղագիրը ձեռքին, առանց դեղի...»։

Պարոնյանի հակառակորդները՝ այդ բոլոր ազգային ջոջերը, ազգային երեսփոխանական ժողովի «գեղատառանները», պատրիարքարանի պաշտոնյաները, որոնք ամբողջ քառորդ դար անխնա ծաղրվել էին նրա երկերում, ոչ միայն հետու էին հիվանդ երգիծարանին օգնելու մտքից, այլև դիվային անտարբերությամբ էին դիտում այդպիսի խոշոր մի տաղանդի օրեցօր հյուծվելն ու խամրելը։

Մի առ ժամանակ հիվանդանոցում ամենածանր պայմաններում տառապելուց հետո, 1891 թ. մայիսի 27-ին մեռնում է հայ մեծագույն երգիծարան, «Ազգային ջոջերի» անմահ հեղինակ Հակոբ Պարոնյանը։

II

Հ. Պարոնյանը գրական ասպարեզ էր մտնում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ արևմտահայ հասարակական կյանքում տեղի էին ունենում զգալի տեղաշարժներ։ Հետամնաց ռազմա-ֆեոդալական Թյուրքիայում սկսում էին զարգանալ կապիտալիստական հարաբերությունները։

Ֆեոդալական-ամիրայական շահագործումը փոխարինվում էր բուրժուական-առևտրա-վաշխառուական կեղեքումով։

Այդ մի ժամանակաշրջան էր, երբ մարդկային վհռ ու աղնիվ ձգտումները տեղի էին տվել փողի բացարձակ գերիշխանությանը։ «Այն դարուն մեջ,— գրում է Պարոնյանը,— ուր մենք փողի բացարձակ գերիշխանությանը։ «Այն դարուն մեջ

կատարվում են եվրոպական բաղաքակրթության անունից. «դարուս ոդին այսպես կպահանջե» ասում են հերոսները։

Բուրժուական մամուլը, հրապարակախոսները և գործիչները, որոնք այնքան սիրում էին աղմկել բարոյականության մասին, իրենց դատապարտելի պարբերները ներկայացնում են որպես լուսավորություն, ազգասիրություն։ Օրինակ, փաստարան Օգսենի համար շատ կարևոր հարց է պարզել, թե Կիպարը Անուշին «բարի՞ նպատակով սիրած է թե չար», եթե սիրել է «ի նպաստ ազգային հառաջադիմության և լուսավորության», ապա «լրագրաց մեջ կանցնի, դովեստներ, դափնյա պսակներ կընդունի»։

Հայ երգիծական դրականության ամենափայլուն էջերից մեկը կարող է համարվել դատաստանական խորհրդի նիստերի այն նկարագրությունը, որ թողել է Պարոնյանը «Պաղտասար աղբար» կոմեդիայում։ Ռեալիստական վառ գույներով նկարագրելով այդ նիստերը, նա ցույց է տվել, որ արդարությունից խոսող, արդարության պահպանման պաշտոն ունեցող մարդիկ արդարության ամենամեծ թշնամիներն են։ Նրանք արդարություն անհնում են այնտեղ, որտեղ կաշառք կա։

Պաղտասարի տրագեդիան, կործանումը, արդյունք են ոչ թե այն բանի որ նա իր տգիտությամբ ու մեծամտությամբ, իր մասին մեծ համարում ունենալով («ինձի Պաղտիկ կրսեն»), պայքարի է դուրս գալիս առավել զարգացած մարդկանց դեմ, այլ այն բանի, որ չթափանցելով մայրաքաղաքային «եվրոպականացող» խավի բարքերի մեջ՝ այդ խավի ներկայացուցիչների հետ չափվում է իր նահապետական ըմբռնումներով։ Կիպարն ու Պաղտասարը նույն դասակարգի մարդիկ են։ Պաղտասարին թվում է, որ գնի իր դասակարգի ներսում կան օրենքներ, որոնց միջոցով նա կարող է պաշտպանել իր իրավունքները։ Նա սովոր չէ հասարակական նոր բարքերին, նրան թվում է, որ եթե ապացուցվի, թե իր կինը «անհավատարիմ դանված է յուր պաշտանին մեջ», ապա արդարությունը կհաղթանակի։

Հակառակ Պաղտասարի, Կիպարը յուրացրել է բուրժուական արդարադատության կանոնները, լավ գիտե, որ «փաստաբաններու մեծ մասն արդարությունն ու իրավունքը հոն կգտնեն, ուր շատ ոսկի կտեսնեն», և ըստ այնմ էլ կարգավորում է իր գործերը, կաշառում մարդկանց և հաղթանակով դուրս գալիս, հռչակվում է պատվավոր, օրինավոր մարդ։

Բուրժուական բարքերի ցուցադրման համար բնորոշ են Պարոնյանի «Պառույտ մը Պոլսո թաղերուն մեջ» և «Քաղաքավարության վնասները» աշխատությունները, որոնց մեջ երևում է հասարակական կյանքը խորը դիտող, նրա էության մեջ թափանցող, մանրուքների միջից տիպականը ընտրող և այդ տիպականի միջոցով ամբողջ կյանքը ռեալիստական փայլուն վրձինով ներկայացնող մեծ երգիծաբանը։

«Քաղաքավարության վնասները» շարքի գլխավոր դեմքերը մեծ մասամբ արհեստավորներ են՝ կոշկակարներ, վարսավիրներ, մանր առևտրականներ։ Այնտեղ տակա է նաև խոշոր վաճառականի առևտրական գործարքի ցուցադրումը։

Պարոնյանը նրանց բնութագրում է հարուստ վաճառականի գիշատիչ էությամբ, ապա արհեստավորների բնականական բարոյական հարաբերությունների երգիծական նկարագրության մեջ դիմում է հումորին։ Նրա նպատակն է արհեստավորական այդ խավերին ցույց տալ, որ նրանք իրենց պարզ սովորությունների մեջ շատ ավելի ազատ են, հանդիստ, բարոյական, քան թե բաղաքավարական այն նորմանների մեջ, որոնց ձգտում են՝ հետևելով ֆրանսիական կենցաղին։

Այնպիսի մի լուսավոր, բազմակողմանի զարգացում ունեցող գրող, ինչպիսին էր Հ. Պարոնյանը, հասկանալի է, որ հրապարակի վրա դնելով «Քաղաքավարության վնասները»՝ նրանք նպատակ չուներ իդեալականացնելու նահապետական բարքերը, պապենական սովորությունները, նիստ ու կացը։ Նրա հերոսներից մի քանիսը փաստարկում են բնության ձայնին

հետևելով ցանկացած ժամին ճաշելու, քնելու, իրենց «գոտին արձակելու» մասին, չպետք է ենթադրել, որ Պարոնյանը դեմ է կենցաղային սովորական կանոններին։ Էականն այստեղ բուրժուական ընտանիքներին հատուկ մի շարք սովորությունների քամահրումն է նաև արհեստավորական խավերի շրջանը (քեֆխաղ, պարահանդես և այլն)։ Պարոնյանը պայքարում է, որպեսզի եվրոպական կեղծ բաղաքակրթությունը, ֆրանսիական այլասերված վարք ու բարքը չաղարտեն աշխատավորական այն խավի կենցաղը, որի նկատմամբ նա զիջող է, և որի նկատմամբ նրա երգիծանքը ուղղող հումորից այն կողմ չի անցնում։

Պարոնյանի այդ վերաբերմունքը առավել որոշակի երևում է, երբ նա նկարագրում է համեստ ապրուստի տեր մարդկանց հակումը դեպի սալոնային կյանքը։

Չափավոր ապրուստի տեր արհեստավորների կանայք, որոնց նյութական հնարավորությունը շատ սահմանափակ է, նա չմնալու համար «դարաշրջանի ոգուց»՝ փորձում են մրցել հարուստ ու պճնասեր կանանց հետ, լինել նրանց միջավայրում, պարահանդեսներում և քեֆսեղանի առաջ, հաշվի չառնելով, մի կողմից, իրենց ամուսինների ուրույն համոզմունքները, մյուս կողմից՝ նրանց նյութական հնարավորությունները։

Այս բոլորի նկատմամբ Պարոնյանը բանեցնում է հումորը, նրա կամքին գավազնող չկան, մտերմական են, օգնող։ Պարոնյանի այն հայտարարությունը, թե իր «գարեղեղի մեջ ղինջ» է բուսնում, սրանց համար չէ։ Նա ղինջը վերապահում է իր դասակարգային հակառակորդներին։ Նույն «Քաղաքավարության վնասները» շարքում կան հատվածներ, որտեղ Պարոնյանի երգիծական ղինջը դադրել է, սպանիչ է։

Այստեղ արդեն երևում է մեծ երգիծաբանի սոցիալական սատիրան։

Այդպիսի սուր սատիրայով են գծված մեծ վաճառականները իրենց ամբողջ խարդախություններով ու խարերայություններով։

«Վաճառական մ'ես... կվարվիմ հետդ այնպես, որպես պիտի վարվի բսակահատի մը հետ... Մեծ վաճառական մ'ես, ավելորդ է ըսել, թե մեծ խարեբա մ'ես»։

Պարոնյանի սոցիալական սատիրան փայլուն կերպով դրսևորված է նրա «Պառույտ մը Պոլսո թաղերուն մեջ» նշանավոր աշխատությունում, որը կարծես ամբողջացնում է պալատական կյանքի վառ ցուցադրումը։

Այդ երկում առավել հստակությամբ բացահայտված է հեղինակի դասակարգային վերաբերմունքը դեպի հասարակական տարբեր խավերը։ Դրանց մեջ նա սոսկ նկարագրող, պատճենահանող չէ, ոչ էլ էմպիրիկ պատմող։ Նա մեծ կրքով միջամտում է ամեն քայլափոխում և կայացնում իր դատավճիռը։ Արտաբին աշխարհագրական ու կենցաղային նկարագրությունների ընթացքում նա շոշափում է հասարակական հուզող հարցեր, հրապարակի վրա դնում ազգային իշխանությունների, թաղական խորհուրդների, զանազան ընկերությունների իրական պատկերը իր բոլոր մանրամասներով։ Պատահական չէ, որ իր ժամանակին, նկարագրական այս ակնարկները լույս տեսնելու օրերին, Պարոնյանը հայ լիբերալ մամուլի և հրապարակախոսների կողմից ենթարկվել է սուր հարձակումների, հատկապես այն մարդկանց կողմից, որոնց զեղծումներն ու չարաշահումները արձանագրվում էին Պարոնյանի «Պառույտի» մեջ։

Ինչպես մյուս աշխատություններում, այստեղ էլ Պարոնյանը մերթ հումորիստ է, մերթ սատիրիկ, նայած թե հասարակական որ խավերի կյանքն ու կենցաղն է նկարագրում։

Տարբեր դասակարգերի նկատմամբ նրա վերաբերմունքը առավել հստակությամբ երևում է Կ. Պոլսի հարուստ դասի կենտրոն հանդիսացող Պերա թաղամասի և աշխատավորական Սամաթիա թաղամասի նկարագրության մեջ։ «Պերայի սահմանն է՝ արևելքեն թաղամասի, արևմուտքեն պճնասիրություն, հարավեն շռայլություն և հյուսիսեն խարդախություն»։

Այդ թաղամասում մարդիկ, փոխանակ հանրօգուտ աշխատանքով զբաղվելու, ապրում են զեխ ու անբարոյական կյանքով։ Ամուսնական անհավատարմություն, փոխադարձ անվստա-

հութիւն, արհամարհանք, բամբասանք, վրեժխնդրութիւն՝ ահա Պերայի հատկանշական կողմերը։

Պերայում բնակվող հայերը, հետևելով ֆրանսիական կենցաղին, կորցրել են իրենց տոհմական, ազգային հատկանիշները, չեն խոսում մայրենի լեզվով։ Նրանք ոչինչ չունեն բուն հայ ժողովրդի հետ։ «Ընդհանրապես կամչևան ազգային դպացում կրելու, ինչպես որ դու կամչևաս տունդ ջուր կրելու»։ «Մարուր ձեռքերով ու կեղտոտ խղճով» այդ մարդիկ խորշում են անգամ իրենց ազգային անուններից. «Կարապետը Քառլո, Մկրտիչը Բատիստ կըլլա հոն»։

Հակառակ լիբերալների ամբողջ աղմուկ-աղաղակին հայ ազգության «միաստնության» մասին, Պարոնյանը հայ չի համարում Պերա թաղամասում բնակվող այդ այլասերված, օտարացած մարդկանց։

«Ոմանք կկարծեն, թե Պերայի մեջ 2500 տուն կա. բողներ ալ կան 1500 է Պերայի տուներուն թիվը... Չափազանցություն, չափազանցություն, չափազանցություն, իմ կարծիքով հազիվ երեք տուն հայ կա Պերայի մեջ»։

Երդիծաբանը Պերային հակադրում է Սամաթիա թաղամասը, որտեղ ապրում էին գերազանցապես արհեստավորական խավերը՝ կոշկակարներ, ատաղձագործներ, ձկնորսներ, երկաթագործներ և այլն։ Այս թաղի նկարագրության մեջ երևում է Պարոնյանի խոր դեմոկրատիզմը, համակրանքը գնալի աշխատավորների, որոնց անմիջական փոխհարաբերությունը միմյանց հետ, պարզ ու համեստ կյանքը, աշխատասիրությունը, ինտրիգաներից ու խարդախություններից հեռու մնալը, մի խոսքով՝ մարդկային ամենաազնիվ գծերը գրավում են հեղինակի համակրությունը։

Պարոնյանի այս վերաբերմունքը երևում է հենց Սամաթիա թաղամասի սահմանների ճշտումից։

«Բաժնվին մեղմե նաև անոնք, որք սրված են ծառա եմ-ի. հոս ամեն մարդ տեր է. վանգի ամենքն ալ իրենց աշխատությամբ և արհեստով կապրին և, հետևաբար, պիտիրու, էֆենտիներու ոտները լզելու պարտավոր չեն»։

Պերայի հարուստ հայերի դեմքին արհամարհանքով նայող երդիծաբանը հպարտանում է Սամաթիայի «հաստաբազուկ ձկնորս ազգայիններով», նրանց է համարում ազգի ճշմարիտ նեյուկը, մարդիկ, որոնք իրենց դրոշները խնայելով՝ պահում են իրենց դպրոցն ու աղքատախնամ ընկերությունը, առանց հարուստներին դիմելու։

Հ. Պարոնյանի մոտեցումը հասարակական տարբեր խավերի նկատմամբ ցայտուն կերպով դրսևորված է «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում։

Վիպակում առկա է խոշոր առևտրական Աբխազում աղան, մի ամբողջ խումբ հասարակական-գրական գործիչներ ցուցադրում են մանրբուրժուական ինտելիգենցիային։ Այնտեղ ներկայացված են նաև իրենց չարքաշ աշխատանքով ապրող բեռնակիրները։

Հասարակական այս տարբեր խավերի նկատմամբ Պարոնյանը տարբեր մոտեցում ունի։ Խոշոր բուրժուազիայի, վաճառականության նկատմամբ նրա վերաբերմունքը ժխտողական է։ Այստեղ նա կիրառում է սատիրան։

Աբխազումը ծունող առևտրության ունի աշխատավորների նկատմամբ։ Եթե աղքատների անուններն էլ տալիս են թերթերում, ապա ինքը չի ցանկանում նրանց անվան մոտ իր անունը տեսնել, եթե լուսանկարվելու սովորությունը հատուկ է նաև աղքատներին, ինքը չի ցանկանում լուսանկարվել։ Նրա համար գերագույն հաճույք է ծառաներին ծեծելը, նրանց իր առջև գլխիկոր կանգնած տեսնելը։

«Մեծապատիվ մուրացկանների» մյուս հերոսներին կերտելիս Պարոնյանի նպատակն է ևղել ցույց տալ նրանց աննախանձելի, ողբալի վիճակը Աբխազում աղաների իշխած դարաշրջանում։ Ինչպես ինքը՝ հեղինակն է խոստովանում, նրա նպատակն է քննադատել նրանց ոչ թե

ամեղադրելու նպատակով ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլն», այլ ևներկայացնել ապագա սերնդյան ժամանակին գրական մարդոց ողբալի կացությունը»։

Այդ բոլոր «մուրացկանները» բուրժուական հասարակարգում խեղված, իրենց մարդկային ազնիվ գծերը կորցրած մարդիկ են, կամազուրկ, շողոքորթ, հաճոյակատար։ Նրանք մի քանի գրոշի համար հրաժարվում են իրենց սեփական համոզմունքներից, իրենց վարձատուների սխալ տեսակետները համարում ճշմարիտ։

Այս հատկանիշները «մուրացկաններից» մեծ մասի համար ընդհանուր լինելով հանդերձ, նրանցից յուրաքանչյուրը գծագրված է իր անհատականության բնորոշ կողմերով, որով տիպականացվում ու տարբերվում է մյուսներից։ Այսպես, խմբագրի մոտ Պարոնյանը ընդգծել է նրա արտակարգ շատախոսությունը, շողոքորթելու, խարելու ձգտումը, համառությունը, հետևողականությունը՝ նպատակագրած բանը իրագործելու խնդրում։

Բանաստեղծը աչքի է ընկնում որպես բնթնալիկ, անտաղանդ, անմեջ ճառերի սիրահար մի շաղակրատ, սենտիմենտալ որոշ հակումներով։ Հանձին «անմուսա» այդ բանաստեղծի, Պարոնյանը մեծ տաղանդով գծագրել է իր ապրած ժամանակաշրջանի համար այնքան տիպական լիբերալ ճոռոմաբանությունը, որի նմանը նա ամեն օր լսում էր ազգային ժողովի նիստերում։

Անհատականացված են նաև մյուս հերոսները, մասնավորապես Մանուկ աղան, որը ինտելիգենցիայի շարքերի մեջ չընկնելով հանդերձ, վերջիվերջո նույն «մուրացկաններից» է։ Նորապես ռեալիստական Մանուկի կերպարի մեջ Պարոնյանը պատկերել է այն մարդկանց, որոնք, զուրկ որևէ հիմնական գրաղմունքից և ապրուստի միջոցներից, ապրում էին ժողովրդի հաշվին, ազգային, քաղաքական գործերին միջամտելով, պաշտոնի վրա գտնվող մարդկանց համար կարիերա հարթելով, նրանց օժանդակությամբ յուրացնում էին քաղաքական սնդուկի պարունակությունը, ազգային գործերը գարձրած սպեկուլյացիայի առարկա՝ շրջում էին տեղ-տուն, մտքեր նախապատրաստում, կարծիքներ փոխանակում։

«Մեծապատիվ մուրացկանների» մեջ միայն բեռնակիրներն են, որ բոլորովին չեն քննադատված. նրանք հանդես են բերված որպես վեհ ու ազնիվ հատկանիշներով օժտված մարդիկ։

Հայաստանցի այդ աշխատասեր և ազնիվ մարդկանց մասին է, որ մեծ երդիծաբանը դեռևս իր առաջին ստեղծագործության մեջ, «Աստամնաբույժն արևելյան» կոմեդիայում, գրել է.

«Անոնց համար կխոսիմ, վասզի Հայաստանի զավակունք են և հայրենիքը իր աղատության հույսը անոնց բազուկներուն վրա դրած է, այն բազուկներուն, որոնք այսօր տիարանալու վրա են»։

Ինչպե՞ս էր պատկերացնում ապագա հասարակարգը մեծ երդիծաբանը։ Ինչպես 18—19-րդ դարի շատ պրոգրեսիվ մտածողներ, նա իր իդեալ հասարակարգը ներկայացրել է ուտոպիական ձևով։ Դա միանգամայն տարբեր է այն հասարակարգից, որի մեջ ապրել է մեծ երդիծաբանը, և որը դժոխային պայմաններ էր ստեղծել աշխատավոր մարդու համար, որտեղ տիրապետում էր բռնությունը, մեկի քմահաճույքը որոշում էր միլիոնավոր մարդկանց բախտը։

Պարոնյանի երազած ապագա ուտոպիական հասարակարգում մարդիկ ապրում են դեմոկրատական կարգերում, «ամբողջ մարդիկ հասարակապետության» մեջ են. այնտեղ չկա շահագործում, չկա հարուստ դասակարգի տիրապետությունը աղքատների վրա։

Այդ հասարակարգում չկան նաև մարդկանց բնաջնջող պատերազմներ, մտավոր աշխատողները գիտությունը չեն ծառայեցնում մարդկանց ոչնչացման համար, այլ այն ի սպաս են դնում մարդկանց կարիքների բավարարմանը, այնտեղ, փոխանակ իրար փարատելու համար նորանոր հնարներ մտածելու, «ամբողջ միտքերնին, բոլոր հոգիերնին ա՛լ ավելի առաջ երթալու» համար են օգտագործում։

Պարոնյանի պատկերացրած ապագա հասարակարգում «տասակ խոված բանը պիտի վերանա»։

Պարոնյանը լավատես է հայ ժողովրդի ապագայի նկատմամբ և կոչ է անում տոկունության, համբերության ու պայքարի։ Նրան հատուկ չեն լալկանությունը, հոռետեսությունը։

«Թերություններու վրա լալն թերություններու մեծագույնն է, խեղճության վրա արտասուք թափելն՝ ապացուցանել է, թե արյուն չունինք թափելու», գրում է նա։

III

Հ. Պարոնյանի գրական ժառանգության նշանակալից մասն է կազմում նրա քաղաքական սատիրան, որով նա մերկացրել է սուլթանական Թյուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը, եվրոպական գաղութարարների ոտնձգությունները Մերձավոր Արևելքում և հայ կղերա-պահպանողական գաղափարախոսների հակաժողովրդական գործունեությունը։

Անհնար է Հ. Պարոնյանի քաղաքական սատիրան ճիշտ գնահատել, առանց գոնե ընդհանուր գծերով ծանոթանալու քաղաքական այն կարևոր իրադարձություններին, որոնք արտացոլված են Պարոնյանի այդ սատիրների երկերում։

1875 թ. առավել մեծ սրությամբ հրապարակ է գալիս այսպես կոչված «Արևելյան հարցը», 1871 թ. Թյուրքիայի դեմ ապստամբում են Բոսնիան և Հերցեգովինան։ Նրանց հետևում են բուլղարները։ Անգլիան ցանկանում է Թյուրքիայի գերիշխանության տակ գտնվող բրիստոնյա ժողովուրդների ազատագրական ձգտումները օգտագործել իր քաղաքական նպատակների համար և իր էքսպանսիան տարածել Մերձավոր Արևելքում։ Ռուսաստանը, հանդես է գալիս սլավոն ժողովուրդների պաշտպանությամբ, ժողովուրդներ, որոնք դարեր շարունակ իրենց հույսը դրել էին ռուսական հաղթական զենքի վրա։

Հայ իրականության մեջ նույնպես սկսվում են խմորումներ։ Հայ բուրժուազիայի աջ թևը ուժեղացնում է կապը եվրոպական մեծ պետությունների հետ, իր հույսը դնելով նրանց միջամտության վրա։ Թյուրքիայի լծի տակ տառապող բուն աշխատավոր ժողովուրդը և նրա իղձերն արտահայտող դեմոկրատական ինտելիգենցիան պայքարում են իրենց ազատությունը Ռուսաստանի, ռուս ժողովրդի միջոցով ձեռք բերելու և իրենց արևելահայ եղբայրակիցների հետ վերամիավորվելու համար։

Սկսվում են դիվանագիտական դաշտնի բանակցությունները Թյուրքիայի և նրա եվրոպական տերերի միջև, որոնք նրան թելադրում են Թյուրքիայում հաստատել սահմանադրական կարգեր և թղթի վրա հայտարարել բոլոր ազգերի հավասարություն, եղբայրություն, խոսքի, մտքի, խղճի, ինչքի ազատություն և այլն և դրանով էլ կանխել ազատագրական շարժումները։ Եվրոպացվող այդ կոնստիտուցիայի բուն նպատակն էր, մի կողմից, սահմանադրական խոստումներով խաբել օրեցօր զարգացող և քաղաքական ուժ դարձող Թյուրք բուրժուազիային և դրանով էլ կանխել հնարավոր պետական հեղաշրջումը, մյուս կողմից՝ խաբելով հպատակ ժողովուրդներին, մասնավորապես՝ պայքարի դուրս եկած հայ ժողովրդին, ավելորդ համարել Ռուսաստանի միջամտությունը հայկական հարցում։

Այս պայմաններում, դեռևս նոր գահ բարձրացած սուլթան Համիդը 1876 թ. դեկտեմբեր ամսին ձեռնարկներն ընդունում է երիտասարդ Թյուրքերի պարագլուխ Միդհատ փաշայի մշակած «սահմանադրությունը» և երկրում հռչակում կոնստիտուցիոն կարգեր։

Հայ բուրժուազիայի աջ թևը, որը մոտիկ մասնակցություն է ունենում սահմանադրության ստեղծմանը, սկսում է թմբկահարել այն, «հայկական հարցը» լուծված համարելու հեռանկարով։

Ամուլը բորբոքում է հակառուս քաղաքականությունը, ավելորդ համարում Ռուսաստանի միջամտությունը հայկական հարցում։

Անգլիայի դրդումով Թյուրքերն սկսում են իրենց պրովոկացիաները Ռուսաստանի դեմ, մի բան, որը հանգեցնում է ռուս-Թյուրքական պատերազմին։ 1877 թ. գարնանը Ռուսաստանը պատերազմ է հայտարարում Թյուրքիային։ Ռուսական բանակները առաջանում են մինչև Կարին, մյուս կողմից՝ մինչև Պոլսի դռները և կանգ առնում Սան-Ստեֆանո ավանում՝ անահման ոգևորության և խանդավառության պատճառելով ամբողջ հայ ժողովրդին։ Սան-Ստեֆանոյում կնքվում է դաշնագիր, որտեղ հատուկ հոդված է նվիրվում Հայաստանին։

Ռուսական զենքի փայլուն հաղթանակը լրջորեն անհանգստացնում է Անգլիային, որն սկսում է իր դիվանագիտական խարդախ կոմբինացիաները։ Նա գաղտնի դաշնագիր է կնքում Թյուրքիայի հետ, որի համաձայն, Կիպրոս կղզին կաշառք ստանալով, խոստանում է պաշտպանել Թյուրքիայի շահերը։ Թյուրքերը Կիպրոսը զիջում են անգլիացիներին։ Անգլիան, իր կողմը գրավելով Ավստրո-Հունգարիային, պահանջում է վերանայել Սան-Ստեֆանոյի դաշնագիրը։ 1878 թ. հրավիրվում է Բեռլինի կոնգրեսը, որտեղ Անգլիան, Գերմանիայի և մյուս եվրոպական պետությունների աջակցությամբ, իր ցանկությունները բևեռում է Ռուսաստանին։ Ռուսական բանակները նահ են քաշվում Հայաստանից և Սան-Ստեֆանոյից։

Քաղաքական այս բոլոր իրադարձությունները օրը-օրին իր էջերում արտացոլում է Հ. Պարոնյանի «Թատրոնը», մնալով 19-րդ դարի 70-ական թվականների ամենաարդիական բերիը ամբողջ հայ իրականության մեջ։

Հ. Պարոնյանը արտահայտում էր դեմոկրատական այն խավերի տրամադրությունները, որոնք ոչ մի հույս չէին դնում օսմանյան սահմանադրության վրա։

Տնտեսապես և ռազմականապես նույլ Թյուրքիան գտնվում էր եվրոպական պետությունների բացարձակ իշխանության տակ, չուներ որևէ ինքնուրույնություն. Թյուրքիայի ոչ միայն քաղաքական-տնտեսական, այլև անգամ ներքին զեկավարման հարցերը լուծվում էին եվրոպական պետությունների պառլամենտներում, այդ պետությունների կ. Պոլսի դեսպանատներում։

Մյուս կողմից, այդ սահմանադրությունը հռչակվում էր հենց այն շահագործող դասակարգի կողմից, որն ամենից առավել շահագրգռված էր նրա չգործադրվելով։

Այսպիսի պայմաններում, ըստ Պարոնյանի, Թյուրքիայում չէր կարող լինել ո՛չ խոսքի, ո՛չ ինչքի, ո՛չ կյանքի և ո՛չ էլ խղճի ազատություն, դրանք ցնորք էին, նպատակ ունեին մոլորեցնելու աշխատավոր ժողովրդին և համոզելու, որ ժողովուրդը հեռու մնա քաղաքական պայքարից։

Սուլթանական Թյուրքիայի ներքին քաղաքականության քննադատությունը առավել հատկությամբ դրսևորված է Պարոնյանի այն երկերում, որոնք մերկացնում են այսպես կոչված օսմանյան առաջին սահմանադրությունը և ցույց են տալիս նրա խաբեբայական էությունը։

Պարոնյանը հոդված առ հոդված հերքել է այդ սահմանադրությունը։

Այն ժամանակ, երբ ռեակցիան մամուլը, հենվելով սահմանադրության 11-րդ հոդվածի վրա, պղմկում էր խղճի, դավանական ազատության մասին, Պարոնյանը բերում էր հետևյալ փաստը, որը խղճի ազատության կատարյալ բռնադատում էր։

Սերաստիայում Թյուրքերը «թմբուկով եկեղեցի կմտնեն ու պատարագիչ քահանային մոբուքը ածիլելով եկեղեցվույն մեջ տեղը կխաղցունեն։ Ահա դեպք մը, որուն հարստահարություն անունը չենք կրնար տալ, որովհետև գործին մեջ ո՛չ գանակոծություն կա, ո՛չ ալ սպանություն, այլ խնդություն և ցնծություն»։

Չնայած օսմանյան այսպես կոչված սահմանադրության 17-րդ հոդվածով Թյուրքիայում ապրող բոլոր ժողովուրդները հռչակվում էին հավասար, միևնույն իրավունքներն ունեցող, իսկ 21-րդ հոդվածով Թյուրքիայի հպատակների սեփականությունը հայտարարվում էր անձեռնմխե-

լի, սակայն առավել մոլեգնությամբ շարունակվում է հալածանքը հայերի նկատմամբ, իսկ գավառներում հայ անզեն աշխատավորության նկատմամբ կիրառվում են բարբարոսական մեթոդներ՝ թալան, խոշտանգում, սպանություն։ Սահմանադրության հռչակումից ընդամենը մի քանի ամիս անց՝ թյուրքերը բարբարոսաբար հարձակվում են Վանի հայերի վրա, թալանում բոլոր խանութները, խոշտանգում մարդկանց։ Թյուրքական թերթերը, որոնք թարողում էին, որ այլևս կյանքի և ինչքի ապահովություն է լինելու, գրում են, թե հրդեհն է ոչնչացրել այդ հարստությունը։

Պարոնյանը նույն լուրը այսպես է ներկայացնում իր ընթերցողներին, բան էության մերկացնելով սահմանադրության այդ հռդվածը ևս.

«Իմացա՞ք սա բարբարոս կրակին Վանա մեջ գործած անիրավությունները, ամբողջ շուկան մոխիր դարձնելն ետը շատ մը ապրանքներ առևր ծախելը է։

... Բայց, ինչ որ ալ ըլլա, վստահ եմ, որ Վանա բարեխնամ կառավարությունը սասանկ չարաբարո կրակները պիտի ձերբակալե... Զեռով ալ չդնվիր, որ ձերբակալե... սասանկ չարաբարո կրակները պիտի... պիտի բանտարկե...»։

Թյուրքիայում տիրում էր ծայր աստիճան անարխիա։ Թյուրքական բաշիբոզուկները Հայաստանի միլիոնավոր հայ գյուղացիներին և աշխատավորներին տնտեսական այնպիսի ծանր վիճակի էին հասցրել, որ «հայաբնակ գյուղերուն մեջ գողնալու բան չի մնացեր»։ Գետնափոր ոչ միայն չէր պատժում գողերին ու ավազակներին, այլև թաքելերում էր, մասնակից դառնում թալանին։ Ամենամեծ գողերը Հայաստան ուղարկված թյուրք պաշտոնյաներն էին, նահանգապետները։ Այդ բանը Պարոնյանը տվել է սրամիտ կերպով։ Ավազակները ձերբակալել են մի նահանգապետի։ «Ավազակները,— շարունակում է Պարոնյանը,— իրենց պաշտոնակիցը մերկացնելով՝ ըսած են անոր. մեզի դեմ միշտ դանդատներ կղրվին կ. Պոլիս, իսկ քեզի համար շնորհակալության նամակներ, մինչդեռ դու և մենք միևնույն արհեստը կգործենք տարբեր եղանակներով»։

Յուշ տալով պարբերական համաճարակների ու սովի մատնված հայ գյուղացիության նկատմամբ սուլթանական կառավարության ջնջամական վերաբերմունքը, Պարոնյանը դառն իրոնիայով գրում էր.

«Փառք տալու ենք, որ թյուրքական բարեխնամ կառավարությունը շատ տարիներն հետև նախատեսած լինելով այս սովը, ազդու միջոցներ ձեռք առած է յուր հավատարիմ հպատակները անոթության վարժեցնելու»։

Տնտեսական ու քաղաքական նույնպիսի դրություն էր տիրում մայրաքաղաքում, որտեղ այդ ժամանակաշրջանում ապրում էին մոտ 250 հազար հայեր։ Այստեղ էլ տիրապետում էր նույն կամայականությունը, անարխիան, աշխատավորական հոծ մասսաների ծայր աստիճան աղքատությունն ու ընչաքաղցությունը։ Պաշտոնական և անպաշտոն գողերի ոհմակները օրը ցերեկով կողոպտում, թալանում էին ժողովրդին։ Գողերն ու մարդասպանները գործում էին ազատ, իսկ նրանց փոխարեն ձերբակալվում էին անմեղ մարդիկ։ «Այսօր,— գրում է Պարոնյանը,— տասը գողություն տեղի ունեցավ և մեկ ձերբակալություն տեղի չունեցավ, մինչդեռ ուրիշ օրերը քառասուն ձերբակալություն կլինի, և մեկ գողություն չի լինիր։ ...Ընդհանրապես անոնք միայն կպատժվին, որ գողություն չեն ըներ, վասն զի, մայրաքաղաքիս մեջ մեծամասնությունը գողերու քով է, և սահմանադրական կառավարությունները, ինչպես հայտնի է, մեծամասնությամբ կորոշեն ամեն բան»։

Հ. Պարոնյանը սուր քննադատության է ենթարկել թյուրքական կառավարության ստորաքարշ և լակեյական քաղաքականությունը եվրոպական պետությունների նկատմամբ, այն փաստը, որ սուլթանական կառավարությունը երկիրը ստրկական կախման մեջ էր դրել այդ պետությունների հետևից։ Քննադատելով թյուրք կառավարողների անճարակությունը, տգիտությունը, որի

հետևանքով նրանք ամեն ինչի համար դիմում էին Գերմանիայի կամ Անգլիայի օգնությանը, Պարոնյանը գրում էր...

«Փոխանակ այսպես պաշտոնյաներ բերելու Գերմանիայեն, ավելի լավ չի՞ լիներ, որ մեր բոլոր գործերը Բիզմարք իշխանին հանձներեք»։

Թյուրքական պետությունը այն աստիճան էր կորցրել իր տնտեսական և քաղաքական ինքնուրույնությունը, երկիրը այնպիսի աղքատության էր հասցրել, որ անգամ իր պետական ապարատում աշխատող մարդկանց և զինվորականներին չէր կարողանում ռոճիկ տալ։ Իր ընթերցողներին հայտնելով այն լուրը, թե գոնե տան օրերին պաշտոնյաներին ռոճիկ տալու համար կառավարությունը որոշել է փոխառություն կատարել բանկերից, դրա դիմաց որպես երաշխավորություն ներկայացնելով Կիպրոս կղզուց ստացվելիք եկամուտները, Պարոնյանը գրում է. «Ների վաճառական մը յուր գրագիրներուն և գործակատարներուն ամսականները վճարելու համար յուր կալվածները երաշխավորություն ցույց տար, անմիջապես յուր վարկը կորսուներ և անանկացյալներու քով կերթար կը նստեր»։

Թյուրքիայի տնտեսական ու քաղաքական այդ կատաստրոֆիկ վիճակը Պարոնյանը առավել պատկերավոր ձևով է տվել հետևյալ տողերով. «Մեր երկրին շորս կողմը դռումներ կապելու է, որ կարողանա ջուրին երեսը մնալ»։

Ահնարիելով թյուրքական բռնապետական ռեժիմի ահավորությունը, մի ռեժիմ, որտեղ մարդ արարածը ապրում է որպես վանգակի մեջ բանտարկված անբան անասուն, Պարոնյանը այդ երկիրը բնութագրում էր որպես մեծ բանտ։ Ընթերցողներին հայտնելով այն լուրը, թե Սեբաստիայում մի շարք հայերի բանտարկել են, գրում է. «Ծանկաստանի մեջ բա՜նտ... բանտի մեջ բանտ»։

Այս է սուլթանական բռնապետության ընդհանուր բնութագիրը ըստ Հակոբ Պարոնյանի։ Ո՞րն է նրա առաջարկը, ի՞նչ ելք է տեսնում այս բոլորից։

Երկրի այդ դժբախտ վիճակի միակ ելքը նա համարում է սուլթանական կարգերի լիկվիդացիան։ Խոսելով սնանկացող վաճառականների թվի օրեցօր մեծանալու, մայրաքաղաքում ամենուրեք խանութների վրա լիկվիդացիա բառը երևալու մասին, Պարոնյանը գրում էր. «Կարող եմ ըսել, թե միայն Բ. Դռան վրա լիֆիտասիոն չէ գրված։ Հավատացեր չէ՞ր լիներ, եթե քաղաքապետությունը այդ լաթերը ժողվել տար և մի մեծ լաթ կարել տալով նրա վրա ոսկեզօծ տառերով լիֆիտասիոն դներ և այդ լաթը իբրև դրոշակ մայրաքաղաքիս դռներուն վրա պարզեր»։

Պարոնյանի վճիռը որոշակի է ու անողոք՝ սուլթանական բռնապետական կարգերի լիկվիդացիա։ Բայց ի՞նչ ճանապարհով։ Այստեղ է, որ նա կանգ է առնում։ Նրա ապրած էպոխայի հասարակական-քաղաքական կյանքի բարդ պայմանները, սուլթանական բռնապետական ռեժիմի ահավոր խաղությունը նրան հնարավորություն չեն տվել կոչ անելու պայքարի ընդդեմ բռնապետական կարգերի։ Բայց այն, ինչ ասել է Պարոնյանը, արտահայտություն էր Թյուրքիայում ապրող ամբողջ աշխատավոր ժողովուրդների ճշմարիտ իղձերի ու ցանկությունների։

* * *

Հակոբ Պարոնյանի քաղաքական ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ է բռնում տևական այն պայքարը, որ մեծ երգիծաբանը նալբանդյանական դիրքերից մղել է եվրոպական դաղութարարների դեմ՝ բացահայտելով քաղաքակրթության անունից հանդես եկող, խաղաղությունից խոսող այդ պետությունների թալանչիական նպատակները, փորը ժողովուրդների նկատմամբ նրանց ցուցաբերած գաղանային ատելությունը։

70-ական թվականների վերջերին Հ. Պարոնյանի կողմից եվրոպական գաղութարարների դեմ մղված պայքարը թևլադրված էր հայ հասարակական կյանքը հուզող անտեսական և քաղաքական կարևոր հարցերով։ Հայ ռեակցիոն մամուլը, մասնաների ուշադրությունը ամեն կերպ հեռացնելով սոցիալական պայքարից, արդելակելով բռնապետական ուժի դեմ խմորվող մասսայական քաղաքական շարժումները, ձգտում էր հայ ժողովրդի փրկությունը կապել բացառապես եվրոպական գաղութարարների հետ, ակտիվ քաղաքական պայքարի փոխարեն որդեգրելով դիվանագիտական կոմբինացիաների ճանապարհը։

Դեմոկրատական հոսանքը, արտահայտելով աշխատավոր ժողովրդի ցանկությունները, Հ. Պարոնյանի և այլ առաջավոր մտածողների գլխավորությամբ ցույց էր տալիս այդ քաղաքականության վնասակար էությունը և կոչ էր անում թույլ չտալ, որ ռեակցիոն տարրերը ժողովրդի արդար իրավունքները վաճառեն եվրոպացիներին՝ երևելով իրենց անտեսական, առևտրական շահերից։

Սուր քննադատության ենթարկելով հայ էֆենդիների լակեյական թծնաները եվրոպական մեծ պետությունների նկատմամբ, Պարոնյանը ցույց էր տալիս, որ եվրոպական պետություններից ոչ մեկին չի հետաքրքրում հայ ժողովրդի ո՛չ անցյալը և ո՛չ էլ ներկան։ Նրանք այդ բոլորի մասին շաղակրատում են միայն իրենց անտեսական և քաղաքական էքսպանսիան մեծացնելու համար։

Պարոնյանը հետևողական կրքոտությամբ ցած էր առնում գաղութարարների դիմակը, ցույց էր տալիս, որ այդ բոլոր լորդերն ու մարկիզներն ունեն մի ընդհանուր նպատակ՝ թալանել փոքր ժողովուրդներին։

Այն օրերին, երբ Կ. Պոլսի եվրոպական դեսպանները դումարում էին իրենց դեսպանաժողովները, որոնք, իբր թե, ինչպես ազդարարում էր բուրժուական մամուլը, պիտի զբաղվեին նաև հայկական հարցով, Պարոնյանը գրում էր.

«Կըսեի, ըսի, կըսամ, և պիտի ըսամ,— ամեն մարդ իր շահը կը նայի»։ «Անցյալ օր մայրաքաղաքին դեսպանները դարձյալ ժողով ըրին։ Ինչ խոսեցան դեսպանները հայտնի է, յուրաքանչյուրը յուր շահուն վրա խոսեցավ»։

Իսկ մի այլ տեղ նա գրում է. «Սերը ձեռքս գրպանս կխոթեմ և ունայն դուրս կը քաշեմ, կըսեմ՝ քրիստոնեից վիճակը շատ գնշ է»։

Արևմտաեվրոպական պետությունների առանձին դիվանագետներին, պետական գործիչներին քննադատելով, Պարոնյանը երևան էր հանում կապիտալիստական տվյալ երկրի քաղաքական նկատառումները՝ կապված Արևելյան հարցի լուծման հետ։ Այսպես, Գերմանիայի ոտնձգությունները նա ցույց է տվել այսպիսի տողերով. «Թայմզ քանի մը ատենե ի վեր Բիզմարկ իշխանին ոտքն ընկեր, կաղաչե, որ միջամտություն մը ընե։ Դուք գործին մեջ մտնաք նե, կըսե Թայմզ, խաղաղություն կըլլա, խըյսանեթ։— Ի՞նչ կուտաք ինձի գործին միջամտելու համար, կը հարցնե իշխանը։ Այս խոսքեն կը հայտնվի,— շարունակում է Պարոնյանը,— որ եթե Բիզմարկ իշխանին հարյուրին տասը քսմիսիոն մը տանք, պիտի բարեհաճի գործին մեջ մտնալու»։

Նույնպիսի դիպուկ տողերով նա մերկացրել է Անգլիայի քաղաքական ու տնտեսական նկատառումները։ Այդ միտքը Պարոնյանը հատակ կերպով արտահայտել է Լորդ Բիկոնսֆիլդի ձայնի ու նրա արձագանքի դիալոգում։ Բիկոնսֆիլդը ասում է.

— Մինչև վերջը իմ դաշս պիտի պաշտպանեմ։

— Պաշտպանեմ,— լսվում է արձագանքը։

— Եթե հարկ ըլլա, պիտի պատերազմիմ։

— Եթե հարկ ըլլա պիտի պատերազմիմ։

— Արդարության համար։

— Շահուդ համար, պատասխանեց արձագանքը»։

Արևելքի ժողովուրդների բախտը իրենց քաղաքական էքսպանսիայի տարածմանը ծառայեցնող եվրոպական պետությունների մեջ 19-րդ դարի երկրորդ կեսին առավել մեծ ակտիվություն հանդես էր բերում Անգլիան, որը ստրկացնելով և թալանելով բազմաթիվ ժողովուրդների՝ միջազգային կյանքում ուներ որոշակի ազդեցություն։

Անգլիան իր գաղութարարական ամբողջ ձեռնարկումները կատարում էր քրիստոնյա ժողովուրդներին փրկելու, նրանց լուսավորելու կեղծ մարդասիրական ձաևերով, որոնք արձագանք էին գտնում նաև հայ բուրժուական մամուլում։

Ահա թե ինչու Պարոնյանը առավել մեծ կրքոտությամբ մերկացրել է անգլիական դիվանագիտության խաղերը, որոնց առաջին զոհերից մեկը լինում էր հայ ժողովուրդը։ Նա Անգլիայի այդ կեղծ գնկարագրիանները, «մարդասիրական» ձաևերը և նրա գործնական նկատառումները համեմատում էր առասպելական երկգլխանի Ցանոսի հետ, որը մի երեսով ծիծաղում էր, մյուսով լաց լինում։

Անգլիայի այդ երկգլխանի քաղաքականությունը հանդես էր գալիս առավել որոշակիությամբ անգլիական պառլամենտում և լիբերալ մամուլում դիվանագիտական այս կամ այն խնդրին տրված մեկնաբանությունների ժամանակ, որոնք շարունակ փոխվում էին՝ նայած թե Անգլիայի տնտեսական և քաղաքական շահը ինչ էր պահանջում։

Մերկացնելով հայ ռեակցիոն մամուլի աղմուկ-աղաղակը, որ նեե Եվրոպայում, հատկապես Անգլիայում հասարակական կարծիք ստեղծվի հայ ժողովրդի մասին, ապա այդ երկրները կյուրքական կառավարությանը կհարկադրեն բարելավելու հայերի վիճակը, Պարոնյանը գրում էր, որ Անգլիայի դիվանագիտական շրջանակներում ստեղծված հասարակական կարծիքը առաջին հերթին արտահայտում է անգլիական կառավարության շահերը, եթե սեփական շահ կա, ապա այդ կարծիքը ամեն օր կարող է փոխվել։ «Անգլիո հասարակական կարծիքը իմ հովանոցիս կը նմանի,— գրում էր Պարոնյանը,— հովը քիչ մը սաստիկ փչելուն պես մյուս կողմը կդառնա կոր», «որդին որ շահ տեսնա, ան կողմը կը դառնա»։

Այն ժամանակ, երբ հայ լիբերալ մամուլը ներքողներ էր հյուսում եվրոպական պետությունների հասցեին, մեծ հույսեր էր կապում Բեռլին մեկնած հայ պատգամավորների հետ, Պարոնյանը, ցույց տալով հայ ժողովրդի համար դրա բերած արդյունքը, գրում էր. «Եթե այս օգուտներուն երևակայականը մեկդի նետելով, իրականին դառնանք, սա օգուտը կը գտնենք, որ առաջ գավառներուն մեջ եթե տարին հարյուր հոգի կսպաննեին, այսօր հազար կսպաննեին և այս ալ մեծ օգուտ է անշուշտ անոնց, որք բազմութենեն չեն ախորժիր»։

Եվրոպական գաղութարարների արհամարհանքը փոքր ժողովուրդների նկատմամբ, հատկապես հայ ժողովրդի շահերի ոտնահարումը Պարոնյանը աքանչելի ձևով նկարագրել է «Մըրկայեան հայ ժողովրդի շահերի» վերնագրով ֆելյետոնում, որը այլաբանորեն պատկերում է վերջյուններուն բողոքագիրքը» վերնագրով ֆելյետոնում, որը այլաբանորեն պատկերում է վերհիշյալ Բեռլինի կոնգրեսը։ Մրջյունների կողմից ուղարկված պատգամավորները, այսինքն՝ հայ պատգամավորները, Եվրոպայում արժանանում են բացարձակ արհամարհանքի։ Նրանց նույնիսկ չեն թողնում ներկա լինելու կոնգրեսի նիստերին։ «Անոնուն կը տրվի գոնեն դուրս նիստ աթոռի մը վրա և վիճաբանության վրա իրենց դիտողությունները, եթե ունին, ներկայացնել գեսպանին»։

Ժողովի մասնակիցներից մեկը, փիղը, որի միջոցով Պարոնյանը ակնարկում է Անգլիային, հայկական հարցի մասին ասում է.

— Կարևորությունն զուրկ ասանկ խնդրո մը վրա, որ կատակերգության նյութ միայն կրնա ըլլալ, կարծիք հայտնելը իմ արժանապատվությանս կդիպչի»։

Նույնպիսի ծաղրա ատելությամբ և արհամարհանքով են խոսում հայերի մասին Գերմանիան, որը հանդես է բերված եզան դիմակով, և եվրոպական մյուս գաղութարարները։

Այդ պետությունների որոշումը այսպես կոչված «Հայկական հարցի» մասին, որը ձևակերպվեց Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածում, սուլթանական կառավարության բարեհաճ ցանկությանն էր հանձնում հայերի կյանքի ապահովությունը Թյուրքիայում, առաջարկելով եվրոպական պետությունների դեսպաններին՝ հետևել դրա կենսագործմանը։

Հայ ժողովրդի հասցեին կատարյալ ծաղր հանդիսացող այդ չարաբաստիկ հոդվածը ահա թե ինչպես էր հասկանում մեծ երդիծարանը.

«Նկատի ունենալով, որ մրջյունները (այսինքն՝ հայերը) առանց զգալու իրենց տկարությունը և ուրիշներուն հասնելու բարի նախանձով ստանկ պահանջումներ կրնան և ծաղր շարժելեն ուրիշ բանի չեն ծառայեր, ժողովս կորոշև մրջյուններուն սույն առաջարկությանը վրա երկու շաբաթ խնդալ»։

Պարոնյանը նույնպիսի խստությամբ քննադատել է այդ դաղտնաբար պետությունների դեսպանների նիստերը Կ. Պոլսում, որոնք հայանի են վեց տերությունների դեսպանաժողովներ անունով։ Նա գտնում էր, որ այդ դեսպանաժողովները, բացի ճաշկերույթից ու դիվանագիտական կոմբինացիաներից, որևէ կոնկրետ խնդիր չեն կարող լուծել։ Այնպիսի մի ժամանակ, երբ գավառներում հարյուր հազարավոր հայեր էին կոտորվում, թալանվում, բռնաբարվում, դեսպանները զբաղված էին իրենց պետությունների դիվանագիտական սակարկություններով, այն հարցով, թե նրանցից որը պետք է ամբողջությամբ կուլ տար Թյուրքիային։ Դրա համար էլ այդ դեսպանաժողովների առաջին նիստում մի առաջարկություն է լինում, երկրորդ նիստում այդ «առաջարկությունը կը մերժվի։ Երրորդին մեջ այդ մերժումը կը մերժվի։ Չորրորդին մեջ ինչու համար մերժվելուն պատճառները կը բացատրվին։ Հինգերորդին մեջ այդ բացատրությունները կրան մուք կետերը կը լուսավորվին։ Վեցերորդին մեջ լուսավորյալ կետերը կը մթնան։ Ահա քեզ վեց նիստ, որ մեկ նիստ չարժեր»։

Իր ժամանակին փոքր ժողովուրդների վիճակը բարվոքելը սպեկուլյացիայի առարկա դարձնող անձնավորություններից մեկն էլ եղել է Անգլիայի դիվանագետներից Գլադստոնը, որը մերթ հանդես էր գալիս բուլղար ժողովրդի քաղաքական շահերի պատասպանությամբ, նրանց մասին արտասանում էր ճառեր, հրապարակում բրոշյուրներ, մերթ հանդես էր գալիս հայերի պաշտպանությամբ՝ հետագայում դեմագոգիկ կերպով հայտարարելով, թե օգնել հայերին, նշանակում է օգնել քաղաքակրթությանը։ Նրա այսպիսի դեմագոգիաները, կեղծ «հայասիրական» ելույթները օգտագործելով՝ հայ բուրժուազիան նրան ներկայացնում էր որպես հայերի բարեկամ, «հայասեր»։ Հայ բուրժուական մամուլը տասնյակ հոդվածներ է նվիրել նրան, անգամ նրա մասին գրվել են առանձին բրոշյուրներ, որոնց մեջ ստորաքարշ քծնանքով գովերգվել է Գլադստոնը։

Հակոբ Պարոնյանը միանգամայն այլ կերպ է գնահատել այդ մարդու դիվանագիտական գործունեությունը, ցույց տալով, որ նրան ոչ թե հետաքրքրել է հայ, հույն և բուլղար ժողովուրդների ծանր վիճակը, այլ անգլիական կառավարության ու իր սեփական շահը։

«Ասոմածդ սիրես,— գրում է Պարոնյանը,— շիտակ գրուցն, պարոն Կլադսթըն, սա բուլղարաց վրա հրատարակած տետրակնդ քանի՞ հազար ոսկի վաստկեցար։ Մի՛ պահեր ինձմե, համոզված եմ, որ աղեկ ստակ կարեցիր, որովհետև եթե վնաս ըրած ըլլայիր, հիմա ալ հունաց խնդրույն վրա բան մը գրելու չէիր պատրաստվիր։ ... Պարոն Կլադսթըն, հունաց վրա գրելիդ գրե ըմնցուր, ու հայոց վրա ալ բան մը գրե։ Ասկից տեղեկություններ կուտամ քեզի, բայց բաժին մ'ալ ինձի տալու ես»։

Պարոնյանը անողոք կերպով մերկացրել է ամերիկյան միսիոներների կատարած տխուր դերը հայ իրականության մեջ։ Արևելքի ժողովուրդների մեջ քրիստոնեության պրոպագանդա անելու արտաքին շղարշի տակ ըստ էության լրտեսական-քաղաքական աշխատանք կատարող

միսիոներների գործունեությունը ազատելով կրոնական շղարշից, ցույց է տվել միսիոներների թալանչիական էությունը։

Մերկացնելով Պոլսում գործող ամերիկյան միսիոներներին, Պարոնյանը գրում էր. «Զպիտի մտնեն արթայության նաև անոնք, որ քանի փարայի կարագը հանուն տիրոջ կրկին գնով վաճառել կուզեն», և իր բառոյականի մեջ խորհուրդ էր տալիս զգուշանալ «այն անձերեն, որ իրենց խանվին սուրբ գիրքով կծախեն»։

* * *

«Ազգային ջոջերում» Պարոնյանը իր սատիրայի ամբողջ ուժով մերկացրել է շահագործող դասակարգերի ներկայացուցիչներին։

Այդ բանը ցայտուն կերպով երևում է ամիրաների, հարուստ վաճառականների և բարձրաստիճան հոգևորականների քննադատությունից։

Պարոնյանը ամիրաներին, հարուստ էֆենդիներին ներկայացնում է որպես իրենց ժողովրդի հետ ոչ մի առնչություն չունեցող կեղեքիչներ։

Ամիրաները, որոնք ավելի շատ մտածում էին «իրենց ձիերուն համար բարեկարգ ախոռներ» կառուցելու, քան «իրենց հրեխաներուն համար դպրոցներ» ստեղծելու մասին, ունեին միայն մի ձգտում՝ Բ. Դռան աստիճաններով բարձրանալ դեպի պետական պաշտոնները, բարձրանալ՝ հայ ժողովրդին գավաճանելով և գաժանորեն շահագործելով։ Դրանք այն մարդիկ են, որոնք «երբ աստիճան մը բարձրանան, հայերեն չխոսելու ուխտ կրնեն, երբ պատվանշան մ'ալ առնեն, հայերեն խոսողը ականջն պատի մը վրա գամելու չափ հառաչ կերթան, և երբ քիչ մ'ալ բարձրանան, ազգային իրավունքները աճուրդի կհանեն, կարծելով, թե այս ընթացքով ավելի բարձր աստիճաններու կհասնին»։

Բնութագրական է Պարոնյանի «Ազգային ջոջերի» այն հատվածը, որը վերաբերում է Կարապետ Երամյան ամիրային։ Պարոնյանը իր ժխտողական վերաբերմունքը դեպի այդ ամիրան արտահայտել է ոչ միայն պորտրեի դաղափարական բովանդակությամբ, այլև ձևի մեջ։ Այն դեպքում, երբ մյուս ջոջերին նա հատկացնում է երեքից չորս էջ, Երամյանին հատկացնում է ընդամենը 3 տող, որից մեկը նվիրված է նրա «հասարակական գործունեության» բնութագրմանը և հետևյալն է. «Մզկիթ մը շինած է»։

Այդ մի տողի մեջ երևում է այլասերված, օտարացած ամիրայի սերտ կապը թյուրքական ռեակցիայի հետ։

Մինչդեռ ռեակցիոն մամուլը, շողոքորթելով ամիրաներին, փորձում էր սթողել նրանց շահագործողական էությունը, համոզել միամիտ ընթերցողին, որ նրանք նյութական միջոցներ են ձեռք բերել իրենց խելքի և կազմակերպչական ընդունակությունների շնորհիվ, Պարոնյանը ամիրաներին ներկայացնում է որպես աշխատավոր ժողովրդին կողոպտող ավազակների։

Խոսելով մի ամիրայի մասին, որն իր ամբողջ կյանքում որևէ օգտակար աշխատանք չի կատարել, բայց Բոսֆորի երկու ափերին կառուցել է հոյակապ շենքեր, Պարոնյանը հարցնում է. «Ի՞նչպես կառուցած է զանոնք, մի՛ հարցներ՝ հաշիշտակությամբ կառուցած է»։ Եվ ապա շարունակում է. «Եվ այս դողերը մեծ հարգ ու պատիվ կվայելեն հասարակության մեջ, որ կըսե անոնց համար, շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են, կանխավ պատրաստած են իրենց ապագան»։

Հարուստների դասակարգային ատելությունը աշխատավորների նկատմամբ Պարոնյանը բացահայտել է հետևյալ տողերով. նրանց սովորությունն է «արհեստավորի մը հետ այնպես վարվիլ, ինչպես կվարվի կառն երկաթին հետ»։ Նրանց համար «դասատիարակի մը հետ խոսիլը

ավանակի մը վրա հեծնելով երուսաղեմ մտնել է», «խմբագրի մը բարև տալը անոր պատվա-
նշան տալու չափ արժեք ունի իրենց քով»։

«Ազգային ջոջերում» Պարոնյանը ժխտողական վերաբերմունք է հանդես բերել հայ եկե-
ղեցու և հայ կղերի նկատմամբ, որը «միայն որովայնի կծառայե և աղգասիրությունը միշա-
յուր կոկորդի մեջ կփնտռե»։

Պարոնյանը այն կարծիքն է արտահայտում, որ հոգևորականությունը, որևէ հանրօգուտ
գործ չկատարելով, ապրում է ժողովրդի հաշվին ինչպես մակաբույծ, և որ այդ բոլոր վար-
դապետները, եպիսկոպոսները, օգտագործելով ժողովրդի նախապաշարումներն ու տգիտությու-
նը, իրենց ներկայացնելով որպես հոգու փրկիչներ, «կհլնեն իրենց ժողովրդյան վրա կը նստին
և անոնց անտանելի բեռ մը կըլլան»։

Անդրադառնալով Հայաստանում ծայր առած սովին, որի վերացման համար սուլթանական
կառավարությունը ոչինչ չէր անում, իսկ հարուստները իրենց ամբարները ավելի ուժեղ էին
փակում (որպեսզի հետագայում ավելի բանկ ծախեն իրենց ցորենը), Պարոնյանը շատ կոնկրետ
առաջարկ էր անում.

«Սովյալներուն օգնելու համար համբա մ'ալ ես կառաջարկեմ, այն է սովյալ գավառներեն
հեռացնել այն մարդերը, որ շատ կուտեն, հետևապես կառաջարկեմ, որ վանահայրերը Պոլիս
կանչվին, մանավանդ Մամբրեն եպիսկոպոսը, որ Մշո վանքը ամրողջ կերավ»։

Պարոնյանը, ինչպես իր ժամանակին Մ. Նալբանդյանը, հայ հոգևորականներին քննադա-
տում է այն բանի համար, որ նրանք կատարում են շահագործող դասակարգերի հասարակա-
կան պատվերը, օգտագործելով մամուլը, եկեղեցական ամբիոնները՝ փորձում են օբյեկտա-
նացնել աշխատավոր մասսաների կեղեքումը։

* * *

Կղերա-ֆեոդալական գաղափարախոսության դեմ Պարոնյանի մղած պայքարը սերտ կեր-
պով կապվում է այն պայքարի հետ, որ 60-ական թվականներին մղում էր Մ. Նալբանդյանը
ռեակցիոն այդ գաղափարախոսության դեմ։

Ուշագրավ է, որ Մ. Նալբանդյանի գաղափարական հակառակորդները նաև Հ. Պարոնյանի
հակառակորդներն են։

«Ազգային ջոջերի» այն գլուխները, որոնց մեջ առավել մեծ տաղանդով քննադատված է
քրիստոնեական ռեակցիոն կրոնը, բացահայտված է հայ հոգևորականների հակաժողովրդական
էությունը, նվիրված են հատկապես Նարեկացուն և Տերոյենցին։ Սրանցից առաջինին սուր քննադա-
տության է ենթարկել Նալբանդյանը իր «Հիշատակարանում» և «Ազգմիթում», երկրորդին՝
«Հրաշափառ խայտառակություն» հրապարակախոսական փայլուն երկում։

Այս երկու գործիչների մասին գրելիս Նալբանդյանին և Պարոնյանին զբաղեցրել են նույն
հարցերը՝ այդ մարդկանց գաղափարախոսության հետադիմական վնասակար էության բացա-
հայտումը և նրանց սերտ կապը շահագործող դասակարգերի, թյուրքական կառավարության
կամ օտարերկրյա գաղութարարների հետ։

Տերոյենցը Պարոնյանի մոտ ներկայացված է որպես միջնադարյան խավարամոլության
ներկայացուցիչ, քրիստոնեական ամենառեակցիոն գաղափարներ կրող մի անձնավորություն, որ-
պես «օգնական Պետրոս առաքյալի... փառաբան դևերու», որը «ամեն ճիգ կը թափեր դևե-
րու գոյությունն հաստատել յուր գոյությամբ»։

Պարոնյանը ամբողջովին ժխտել և հասարակության համար վտանգավոր է համարել Տե-
րոյենցի գրական ժառանգությունը, որտեղ հեղինակը ձգտում էր ապացուցել դևերի գոյությու-

նը, պաշտպանում էր Հոմի պապի իրավունքները, իսկ լեզվաբանական, քերականական
գործերում ազավաղում, աղճատում էր հայոց լեզուն։

Հասարակության արշամարհանքը դեպի Տերոյենցի նման աշխատությունները՝ Պարոնյա-
նը նշել է նրա քերականական ձեռնարկի մասին գրած հետևյալ սրամիտ նախադասությամբ.

«Այս քերականության վերջին երկու մասերը արժանի չեղան լույս տեսնելու, բայց առաջինը
մնձ, խիստ մեծ ընդունելություն գտավ... նպաթավաճառներեն, որոնք հիշյալ քերականությամբ
սովորեցան, քե ինչպես պանիրը կը փաթթվի թուղթերու մեջ»։

Նարեկացուն ևս չահագործող դասակարգերին ծառայող, նրանց բծնող, աշխատավոր
ժողովրդի նկատմամբ ատելությամբ լցված մի հոգևորական է, որի բնավորության տիպական
գծերն են շահամոլությունը, կեղծավորությունը, երկերեսանիությունը, անկզբունքայնությու-
նը, խարեությունը, անբարոյականությունը, հատկանիշներ, որոնց մեծ մասը իր ժամանակին
սուր ծաղրի էր ենթարկել Մ. Նալբանդյանը իր «Ազգմիթ» աշխատության մեջ։ Նարեկացին նույն-
պես, ինչպես Տերոյենցը, սերտ կերպով կապված է հարուստների հետ, սողում է նրանց
առաջ՝ մի քանի ոսկի ստանալու համար։ Նրա արտասանած դամբանականներում, գրում է
Պարոնյանը, «մեկ ոսկի ավոզ մեռյալը բարեսիրտ կըլլար. երկու դրկտը բարեսիրտ և քիչ
մ'ալ ազգասեր կհռչակվիր. երեք նվիրողը ազնիվ սրտով և վսեմ զգացումներով կգարդար-
վիր. չորս համրողը հանրածանոթ ազգասեր կը ծանուցանվիր. հինգ ոսկոն կենդանության
ժամանակ այնքան գաղտնի ողորմության տված կըլլար աղքատներուն, որ մարդ տեսած չէր
ըլլար, հայրենյաց բարերարը կը հորջորջվիր»։ Եվ դրանք այն մարդիկ են, «որոնք իրենց կեն-
դանության ժամանակ ազգը մատնած են իրենց շահուն համար, կամ եկեղեցվույն գանձանա-
կեն ստակ գողցած են»։

Նարեկացի երկերեսանիությունը, կեղծավորությունը, հասարակությանը որպես ազնիվ, բա-
րոյական, վեհանձն մի հոգևորական ներկայանալով՝ գաղտնի ճանապարհներով այլանդակ
և անբարոյական կյանք վարելը Պարոնյանը տվել է հետևյալ բնորոշ տողերով. նա «օր մը աչ-
քեն վեր առնելով կնկան մը երես չէր նայեր... բազմության մեջ։ Փութանք ավելցնել, քե մե-
կն մը տեսնվելու կասկած կամ երկյուղ չունեցած ատենն ալ չէր նայեր կիներու... եթե ծեր
ըլլային»։

Այս հոգևորականի բարոյական կերպարն ամբողջացնում է Պարոնյանը՝ ընդգծելով նրա
ծայրահեղ անկզբունքայնությունը, սկզբունքները որպես ապրանք ծախելու նրա սովորու-
թյունը։

Իր ժամանակին Մ. Նալբանդյանը, խիստ քննադատության ենթարկելով Նարեկի ինքնու-
րույն և թարգմանական գրականությունը, «որի յուրաքանչյուր տողից փչում է միստիկակա-
նություն», դրանք համարել է «շատ վնասակար» հայ երիտասարդության համար, իսկ դրանց
գրաբար խրթին լեզուն՝ «մի հին, մեռած լեզու, որ կորուսել էր յուր իրավունքը ընկերական
կյանքում»։

Հ. Պարոնյանը գտնում է, որ Նարեկի ստեղծագործությունները առհասարակ «արժանիք
ունեին... մոխիր դառնալու»։

Մ. Նալբանդյանից հետո հայ լիբերալիզմի ջահակիր քննադատությունը ավելի է Հակոբ
Պարոնյանը՝ բացահայտելով լիբերալների կեղծ հայրենասիրական ճառերի ողջ անմեղությունը։

Հայ բուրժուազիայի իսկույթները, սովորելով եվրոպական երկրներում, մասնավորա-
պես Ֆրանսիայում կամ Գերմանիայում, վերագառնում էին հայ իրականություն, ձեռնարկում
ռեֆորմների, որոնց նպատակն էր եվրոպական ավյալ երկրի քաղաքականության ու կուլտուրա-
յի մեխանիկական ընդօրինակումով «փրկել» Հայաստանը։ Նրանք Հայաստանի, հայ ժողովրդի
բախտով դրաղվում էին առանց ճանաչելու այդ իրականությունը, առանց հետաքրքրվելու աշ-
խատավորության տնտեսական վիճակով։

Լիբերալների նման գործունեությունը ծաղրել է Պարոնյանը «Ազգային ջոջեր» շարքում Գր. Արծրունու և Ն. Ռուսինյանի մասին գրած պորտրեներում։

Առաջադիմությունից, լուսավորությունից խոսող որոշ լիբերալ գործիչներ գործնականում վարում էին ռեակցիոն քաղաքականություն։

«Առաջդիմություն կը պոռանք և ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք։ Ապագա կըսենք և դեպի անցյալը կը վազենք», գրում է Պարոնյանը՝ ակնարկելով բուրժուական մամուլի հաղմուկ-աղաղակին։

Պարոնյանը դիպուկ տողերով բնութագրել է պոլսահայ էֆենդիների սերտ կապը սուլթանական կառավարության հետ։ Նա անխնա մերկացրել, ազնչացնող ծաղրի է ենթարկել լիբերալ այն խմբագիրներին, որոնք, նրի փող ստանան, հաճույքով «երկու անգամ երկուքը հինգ կը ներկայացնեն, վսեմախոյլ, բարձրապատիվ ածականներով կը կոչեն՝ երբ մեկը հաճի կես կանգուն թաղմիր նվիրել իրենց»։

Ռեակցիոն խմբագիրներից մեկի անսկզբունքայնությունը Պարոնյանը ծաղրել է հետևյալ բնորոշ տողերով. «Այսօրվան պաշտպանած սկզբունքը հետևյալ օրը կը հարվածեր և վաղվան պաշտպանելիք սկզբունքը օր մը առաջ կը հարվածեր... Իր նպատակին հասնելու համար մեկ նույն խնդրույն մեջ այնքան կարծիք կը փոխեր, որչափ որ կայարան կը փոխե էսիրների շոգեկառքը Պոլիս հասնելու համար... Օգսեն այնքան շուտ սկսավ փոխել յուր կարծիքները, որ բնակիչները ալ հասկն չկրցավ հասնիլ։ Անոնի ըլլար նե՝ ժողովրդական էր, պատառ մը հաց ուտելուն պես՝ միապետական կդառնար»։

Այսպիսի սընչացնող և ժխտողական դիրք գրավելով հայ ռեակցիան մամուլի և մամուլի գործիչների նկատմամբ, Պարոնյանը, բնականաբար, չէր կարող հանդուրժել, որ հայ ժողովրդի հոգևոր սնունդը կազմին ռեակցիոն գաղափարախոսությամբ տոգորված, անկումայնություն, հուսահատություն բերող գրվածքները։ Նա դիպուկ կերպով այդպիսի մարդկանցից մեկի մասին գրում էր. «Իրրև մատենագիր շատ ծառայած է ազգին, չհրատարակելով յուր երկասիրությունները»։

IV

Հ. Պարոնյանի գեղարվեստական ստեղծագործությունների խոր դեմոկրատիզմը, ժողովրդայնությունը չէ միայն, որ ապահովել են դրանց մնայուն տեղը հայ կլասիկ գրականության մեջ։

Նրա երկերում գաղափարական այդ առողջ նպատակասլացությունը սերտորեն զուգորդվում է գեղարվեստական այնպիսի բացառիկ արժանիքների հետ, որոնք Պարոնյանին իրավամբ դարձնում են համաշխարհային երգիծական գրականության ականավոր ներկայացուցիչներից մեկը։

Հ. Պարոնյանի գրականագիտական-գեղարվեստական հայացքները օրգանապես կապվում են Մ. Նալբանդյանի էսթետիկական ըմբռնումների հետ։ Թե՛ Նալբանդյանի և թե՛ Պարոնյանի մոտ արվեստը ամենից առաջ ծառայում է մարդուն, նպատակ ունի նպաստել նրա կյանքի բարվոքմանը։ Այն գրականությունը, արվեստը, որոնք չեն նպաստում աշխատավոր ժողովրդի մտավոր զարգացմանը, չեն համապատասխանում նրա դասակարգային պահանջներին, դատապարտելի են ու մերժելի։

Որպեսզի գրականությունը ծառայի ժողովրդին, պետք է հարազատորեն և մեծ տաղանդով արտացոլի հասարակական կյանքը, իրական հարաբերությունները և իր վճիռը կայացնի նրանց նկատմամբ։ Այս է և՛ Նալբանդյանի, և՛ Պարոնյանի պահանջը։

Պարոնյանի գրականագիտական ըմբռնումները, գրականության զարգացման նրա տեսությունը հատակ կերպով շարադրված են հայ ռոմանտիկ վիպասանության Սրբուհի Տյուսաբի «Մայասա» վեպի քննադատությանը նվիրված ընդարձակ աշխատության և վիպասան Մերենցի երկերի քննադատության մեջ։

Պարոնյանը ամենից շատ քննադատում է ռոմանտիկ հեղինակների կողմից կեղծ սիտուացիաներ, մարդկային փոխհարաբերություններ և հոգեվիճակներ ստեղծելը։ Նա քանիցս ընդգծում է, թե այն գրականությունը, որը չի համապատասխանում ընթերցողին, չի հուզում նրան, մասնակից չի դարձնում իր հերոսների վշտին և ուրախությանը, այդպիսի գրականությունը որևէ չափով չի կարող ազդել ընթերցողի վրա։ Հեղինակի առաջին պարտականությունն է իր նկարագրած նյութը ներկայացնել այնպես, որ ընթերցողը հավատա նրա իսկությանը, հավատա, որ այդպիսի դեպք կատարվել է կամ կարող է կատարվել, որից հետո արդեն նա կլանված կարող է հետևել վեպին։ «Մարդս կը հուզվի այն տեսարաններեն,— գրում է Պարոնյանը,— որոնց կը հավատա, և հեղինակը նրի կուզե, որ յուր գործը ազդեցություն ունենա, սիրտերն ու միտքերը հուզե, նախ և առաջ պարտավոր է ամեն հնարավոր և նույնիսկ անհնար միջոցներ ձեռ առնել հավատացնելու համար, թե ժողովրդական կյանքեն քաղված դեպքի մը նկարագիրն է այդ երկասիրությունը»։

Իսկ որպեսզի հեղինակը կարողանա այդ անել, հավատացնել իր ընթերցողներին, համոզել նրան, պետք է ունենա կյանքի հանաչողության, այդ կյանքի տիպական կողմը իր մանրուքների մեջ անգամ տեսնելու կարողություն և տաղանդ։

Հ. Պարոնյանին գրաղեցնող գրականագիտական հարցերից մեկն էլ եղել է գրականության մեջ ազգային հատկանիշների բացահայտման անհրաժեշտությունը։ Նա որքան անողոքությամբ քննադատել է Պերա թաղամասի այլասերված, օտարացած հայերին և նրանց չի հաշվել հայ ժողովրդի մեջ, նույնքան խստորեն քննադատել է այն գրողներին, որոնք, օգտագործելով հանդերձ հայերեն լեզուն, գրական հրապարակը ողողում էին այնպիսի գրականությամբ, որը կապված չէր հայ իրականության հետ։ Այդպիսի գրողներից էին Ե. Տեմիրճիբաշյանը, Խ. Միսաբյանը և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները ֆրանսիական կյանքի ու կենցաղի պատճենահանումներն էին հայերեն լեզվով և հայկական անուններով։

Հայ իրականությանը, տնտեսական ու կուլտուրական կյանքին անտեղյակ այդ մարդիկ իրենց մտքի անակնկալությունը փորձում էին ծածկել օտար հեղինակներից կատարված անտեղի միջերումներով։ Դրանցից, օրինակ, միստիկ բանաստեղծ Ե. Տեմիրճիբաշյանի մասին Հ. Պարոնյանը գրում է.

«Երբեմն ինքը խոսած առնն Լիթռնեն ալ խոսքի մեջ կը նետվի։ Սա խոսքը լմնցուցած, Վիկտոր Հյուգո, Վոլտեր, Լամարտին և ուրիշ հարյուրավոր հեղինակներ կուգան խոսքի մեջ կը խառնվին, այնպես որ ընթերցողը կտիպվի ըսել. «կամ ամենքդ ալ լռեցեք, կամ մեկիկ մեկիկ խոսեցեք, որ հասկնանք։ Ինչո՞ւ համար մտքին ուղղությանը դեմ ապստամբիլ և ընթերցողները չարչարել, օ՜ Աստմս, շիտակ ճամբադ գնա, ինչ կա ամեն քայլափոխի մեկ հեղինակի դուռը ալի առնելուս»։

Ռեալիզմի առաջին նախապայմաններից մեկը Պարոնյանը համարել է գեղարվեստական գրականության արտահայտչական միջոցների ու պատկերների բնականությունը, համոզչությունը և իրական լինելը։ Վերամբարձ, ճոռոմ ոճը, գրական սեթևեթանքը, որոնք տիպական չեն հասարակական կյանքում, բայց առատորեն օգտագործվում են ռոմանտիկ հեղինակների կողմից, ընթերցողի մեջ ոչ մի զգացում, վերաբերմունք չեն առաջացնում դեպի նկարագրվող կյանքը։

Նույն կարգի թերություններ նշելով Տյուսաբի, Մերենցի և այլ վիպասանների մոտ, Պարոնյանը արդարացի ցասումով հարցնում է այդ մարդկանց, թե ով է ասել նրանց, որ իրական կյանքը իր իսկության մեջ ներկայացնելը, մարդկանց բնական խոսակցությունը վերարտա-

դրելը ավելի դժվար է, քան կեղծ ու շինծու ճոռում ոճը, ով է ասել, դրում է նա, որ «ավելի դժվար է մեկու մը պատկերը ճշտությամբ նկարելը, քան թե երևակայությամբ անբնական պատկեր մը դծելը»:

Պաշտպանելով լեզվական ռեալիզմը, այն, որ հեղինակը իր ընթերցողների հետ պետք է խոսի ամենապարզ, հասկանալի ու մատչելի լեզվով, Պարոնյանը սուր քննադատության է ենթարկել այն գրողներին, որոնք իրենց անկարողությունը փորձել են ծածկել հայոց լեզվի բառապաշարը չարաշահելով, իրենց ստեղծագործություններում «գեղեցիկ» բառեր շաղ տալով, հաճախ իրենց տաղաչափությունը տեղը բերելու համար աղավաղելով ու աղճատելով այդ բառերը, փոխելով նրանց իմաստը: «Փափիկ, լուսին, սրինգ, մարգագետին, սոխակ, մանավանդ կուսիկ իրարու ձեռքն կը հափշտակվին և կերթան մանել ամեն առանձավորներու մեջ»:

Մեծ երգիծաբանը անտաղանդ այդ բանաստեղծներին համարել է «խոսքի վարպետներ», «խահարարություն ուսած, գրականությամբ զբաղվող» մարդիկ. այդպիսի գրողը «ասդիեն, անդիեն խոսքեր հավաքելով, զանոնք կը սանտրե, կիսկե, անուշարույր յուղերով կօծե և հրապարակ կհանե և երկու տողով հասկնալի բան մը յուր գրչին տակ երկու էջի մեջ անհասկնալի կըլլա»:

Հ. Պարոնյանի կարծիքով, գրական նման խոտանի դեմ պայքարելու առաջին նախապայմանը նման երկերի սուր, ոչնչացնող քննադատությունն է, այնպիսի անողոք քննադատություն, որը իսպառ հրապարակից սրբի ժողովրդի համար անօգտակար, նրան ապակողմնորոշող և գեղարվեստական հաճույք չպատճառող ստեղծագործությունները:

«Ձեմ տեսած քննադատ մը,— գրել է Պարոնյանը,— որ տգեղ հրատարակության մը կոկորդեն բռնե, սգմե և սպաննե զայն... Ո՛չ, պարոն քննադատներ, ո՛չ, իրավունք չունիք, սպաննեցե՛ք տգեղ գործերը և վատահ եղեք, որ այնի գեղեցկանան անոնք»:

* * *

Պարոնյանը իր բազմաժանր ստեղծագործությամբ տվել է գրական ռեալիզմի ամենավայլուն օրինակը: Ռեալիզմը նրա ստեղծագործության հիմնական հատկանիշն է: Նրա ամենափոքր, անգամ երկտողանի արտահայտության կամ դիալոգի մեջ դրսևորվում է հասարակական կյանքի և հարաբերությունների ճանաչման, ընկալման արտասովոր մեծ կարողություն: Նրա գրչին անհարազատ է ռեալիզմից կատարվող ամենաանշան շեղումը, անհարազատ է ոչ միայն կեղծ, անբնական, մտացածին, երևակայական որևէ նկարագրություն, այլև որևէ ավելորդ շաղակրատում, գրական սեթևեթանք ու պճնանք:

Առողջ ու անմիջական ծիծաղը, որը Պարոնյանի ստեղծագործության ամենահիմնական հատկանիշներից մեկն է, պայմանավորված է խորապես իրական, ռեալ փոխհարաբերությունների ամենաբնորոշ հատկանիշների վարպետ ընկալումով ու երգիծական բազմազան հնարներով մատուցմամբ: Այդպիսի բազմազան հնարների նա դիմում է ամեն քայլափոխում, միշտ գտնելով միմյանցից ուժեղ, տպավորիչ, իրենց հիմքում դարձյալ ռեալիստական սրամիտ համեմատություններ, աֆորիզմներ, պատկերներ:

Սեղմությունը, խոսքի հակիրճությունը և իմաստի մեծությունը, ընդհանրացնող էությունը պարոնյանական աֆորիզմների ամենամեծ արժանիքներն են, որոնք միաժամանակ դարձնում են դրանք ինքնատիպ ու մնայուն ամբողջություններ:

«Տաճկաստանի մեջ բա՜նա... բանտի մեջ բանտ»...

Անհնար է ավելի դիպուկ, միաժամանակ տիպական մի բնութագրում ժողովուրդների բանտ հանդիսացող բարբարոսական Թյուրքիայի համար, քան այս սեղմ տողը:

Պարոնյանի արտահայտչական միջոցների հիմնական զինարանը ժողովուրդն է: Նա ժողովրդին է դիմում յուրաքանչյուր թայլում, նրա ստեղծած սրամիտ, սեղմ առածներով հիմնավորում իր միտքը:

Հիսկերրոյան, որ ժողովրդական ստեղծագործության էական հատկանիշներից մեկն է, և որը առավել տպավորիչ է դարձնում նկարագրվող երևույթը, իր ուրույն տեղն ունի Պարոնյանի ստեղծագործության մեջ: Իրական կյանքում գոյություն ունեցող երևույթը առավել ևս բնդգծելու, ընթերցողին հասցնելու նպատակով, Պարոնյանը չափազանցում է նրա այն հատկանիշները, որոնք, չխոխելով տվյալ երևույթի համար բնորոշը, նպաստում են դրա բնդգծմանը: Օրինակ, ցանկանալով այն միտքը շեշտել, որ Պերա թաղամասի մեչշանական ընտանիքներում կանայք օրվա մեծ մասը անց են կացնում արդուզարդի սեղանի մոտ, նա գրում է. «Իգական սեռը ինքզինքը բոլորովին հայելիներուն տված է. ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսներով, տարիներով և դարերով հայելիներու առջև կը կանգնի և ինքզինքը կը գեղեցկացունե»:

Պարոնյանի ռեալիզմի բնորոշ կողմերից մեկն է ներկայացվող, մատուցվող օբյեկտի տիպական կողմերի նկարագրությունը, առանց նատուրալիզմին տուրք տալու: Այդ բանը նկատելի է Պարոնյանի ոչ միայն գլուխ-գործոց աշխատություններում, օրինակ՝ «Ազգային ջոջերում», «Մեծապատիվ մուրացկաններում» կամ «Պաղտասար աղբար» կոմեդիայում, որտեղ հերոսները ներկայացված են նկարչական թանձր ու վառ գույներով, այլև Պարոնյանի սիրած հիմնական ժանրը հանդիսացող մանր նովելներում, ակնարկներում:

Հ. Պարոնյանը մեծ տաղանդով, երգիծական բնորոշ պատկերներով է տվել իր ներկայացրած հերոսների ներքին, հոգեկան հատկանիշները, բնավորության տիպական կողմերը:

Այդ բանը առավել մեծ վարպետությամբ տրված է «Ազգային ջոջերում», որտեղ ամեն մի ջոջի կյանքի հիմնական գծերի շարադրումից հետո Պարոնյանը իր երգիծական պարտքն վերջացնում է տվյալ ջոջի բնավորության համար հատկանշական դիմագծային կամ այլ բնութագրումներով:

Բերենք դրանցից մի քանիսը: Ստ. Ասլանյանի մասին՝ «Ամեն անգամ որ տեսած եմ զինքը երեսփոխանական ժողովո առանձասեսական աթոռի վրա, կարծած եմ, թե լուծողական դեղ խմած է, որ մատ է յուր արդյունքը ցցունելու»: Հ. Շիշմանյանի մասին՝ «Այնպիսի դեմք մը ունի, որ կարծես փունգատալ կուզե և չկրնար»: Հ. Մերեմգուլիի մասին՝ «Իսկ երբ դեմքը վեր առնե, կը ներկայացնե այն մարդուն դեմքը, որ կզղիի շոգենավուն հասնելու համար վազելեն ետքը երբ մեկ ուսն շոգենավին մեջ պիտի դնե, շոգենավը սուլելով կը մեկնի»: Վատիկանի գրծակալ Անտոն Հասունյանի մասին՝ «Հոս կը վերջանա կենսագրությունն այն մարդուն, որուն դեմքը օր մը պզտիկ տղա մը տեսնելով վախցած է և մինչև այսօր կուլա»:

Պարոնյանի մոտ փակագծային ռեպլիկաներն անգամ հետապնդում են մի նպատակ՝ վեր հանել տվյալ անձնավորության կամ դեպքի համար տիպական որևէ կողմ: Օրինակ, բնութագրելով մի բուրժուական երեսփոխանի բնավորության գծերը, Պարոնյանը գրում է, որ նրա սովորությունն է «խոսած ժամանակ երբեմն քանի մը քայլ առնել դեպի ձախ, երբեմն դեպի աջ», ապա շարունակում է. «վերջերս կարծիքներն ալ ոտքերուն օրինակին հետևեցան երեսփոխանական ժողովո մեջ»:

Երբ խոսվում է Հ. Պարոնյանի ստեղծագործությունների գեղարվեստական արժանիքների մասին, պետք է նկատի ունենալ գերազանցապես նրա այն երկերը, որոնք հեղինակի կողմից համեմատաբար լավ մշակվել են: Ինչ խոսք, որ մեծ երգիծաբանը, գտնվելով ամեն շաբաթ մի ամբողջ պարբերական լցնելու, ազգային-կրոնական վեճերին օրը-օրին արձագանքելու հարկադրանքի տակ, գրել է բազմաթիվ ֆելյետոններ, ակնարկներ, որոնց վրա նկատելի է հապճեպության կնիքը, որոնք հաճախ հեռանում են երգիծական ժանրից, դառնում սոսկ բանավեճեր, անշուշտ միշտ մնալով խոշոր դեմոկրատ գրողի քաղաքական դավա-

նաներին հարազատ գործեր։ Այդպիսի մակերեսայնությամբ են գրված մասնավորապես աղգային ժողովի նիստերի նկարագրությունները, որոնք, հաճախ առկայծելով հանդերձ հեղինակի խոշոր տաղանդի ցոլքերը, պարունակելով հանդերձ սրամիտ, դիպուկ բնութագրումներ, աֆորիզմներ, ամբողջությամբ վերցրած զիջում են Պարոնյանի ծանոթ երկերին և պարունակում են բաղմաթիվ կրկնություններ։

* * *

Հ. Պարոնյանը մնաւ իր ստեղծագործական հասունության ամենաբեղմնավոր շրջանում։ Ըստ էության դարաշրջանի հասարակական-բաղաքական դաժան պայմաններն էին, որ ժամանակից շուտ նրան իջեցրին գերեզման։

Պարոնյանի ծաղրած ջոջերը դամբանականներ խոսեցին նրա գագաղի վրա, թափեցին կոկորդիլոսի արցունքներ, բայց ներքնապես ուրախացան, որ ազատվեցին այդպիսի մի վտանգավոր հակառակորդից։ Ու այդպես մոռացվեց մեծ երգիծաբանը երկար ժամանակ։ Սուլթանական Թյուրքիայում, 1880 թվականից, այսինքն՝ «Ազգային ջոջերի» տպագրության ընդհատվելուց հետո ամբողջ 30 տարի, Պարոնյանից լույս չի տեսնել ինկուզ մի փորրիկ հատոր։ Դրանից հետո եղել են մի քանի անխնամ հրատարակություններ։

Պարոնյանի երկերի հրատարակության գործը համեմատաբար ավելի բարվոք վիճակում է եղել Կովկասում, որտեղ նրա «Ազգային ջոջերը» 90-ական թվականներին արժանացել է երկու տարբեր հրատարակության, ձեռնարկվել է Պարոնյանի երկերի ժողովածուի լույս ընծայմանը, հրատարակվել են մի շարք երկեր և այլն։ Սակայն, ինչպես արեւմտահայ իրականության մեջ, Կովկասում էլ այդ բոլորը կատարվել է պատահական կերպով, թմահաճ կրճատումներով։

Միայն Սովետական իշխանության տարիներին է, որ Պարոնյանը գնահատվեց ըստ արժանվույն, ծրագրված ու տևական աշխատանք կատարվեց Հ. Պարոնյանի ստեղծագործության հրատարակության ուղղությամբ. նրա մի շարք երկերի մեծ տիրաժով լույս ընծայումից բացի, Պարոնյանի թողած գրական ժառանգության զգալի մասը լույս է ընծայվել 11 հատորով։

Սովետական տարիներին Հ. Պարոնյանի երկերը թարգմանվել և մեծ տիրաժով լույս են տեսել նաև ռուսերեն և սովետական այլ լեզուներով։ Պարոնյանի մասին գրվել են աշխատություններ, այդ թվում պրոֆ. Ա. Տերտերյանի «Հ. Պարոնյանի գեղարվեստական հայացքները» արժեքավոր աշխատությունը։

Հ. Պարոնյանի ստեղծագործությունները, իրենց գեղարվեստական խոշոր արժանիքներով և առաջավոր գաղափարական բովանդակությամբ, ոչ միայն իրենց արժանի տեղն ունեն հայ կլասիկ գրականության հարուստ դանձարանում, այլև նրանցից առավել նշանավորները իրավամբ կարող են դասվել համաշխարհային երգիծական գրականության լավագույն նմուշների շարքում։

Գ. Սահինյան

ՄԵՂՈՒ



ՄԱՆԻ ԵՐԿԵՐ

ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Անցյալ կիրակի վարժապետական ժողովը գումարվեր է. բայց այս անգամ անոր անդամներեն մին խնդրոց կարգը փոխելով գրաբարի ու աշխարհաբարի խնդրույն վրա վիճաբանելու տեղ պիրքերը այրելու խնդրույն վրա խոսեր է։

Քարաքաշյան էֆենտիի հրատարակած դասագրքերը անկրոնություն կը սորվեցնեն եղեր, ուստի զանոնք այրելու է եղեր։

Մեղի մնա նե՝ Քարաքաշյանն ալ այրելու է, որովհետև ոդջ մնա նե՝ դարձյալ անանկ գրքեր կը հրատարակե։

Եվ արդարև քերականության որչափ դասագրքեր կան նե՝ ամենն ալ կրոնքի դեմ են, որովհետև ուղիղ խոսողը՝ կրոնքի դեմ կը խոսի։ Այս հաշվով Փափազյան Ստեփան էֆենտին ալ տապկելու է, վրան ալ քիչ մը լիմոն սխմելով Քարաքաշյանի քովը նետելու է։

Ասկից զատ թվաբանության դասագրքերն ալ անկրոնություն կը սորվեցնեն։ Երկու անգամ երկուքդ չորս կընե եղեր։ Ի՞նչ փաստ ունինք ձեռքերնիս, որով կարենանք հաստատել, թե երկու անգամ երկուքդ չորս կընե։ Հայտնի է, որ ասիկա դիվայ մեկ դյուտն է, և Ավետարանը[1] չըսեր մեզ թե՝ երկու անգամ երկուքդ չորս կընե։

Թվաբաննե՛րն ալ այրելու է։

Հապա աշխարհագրության դասագրքերը ո՞ւր թողունք։

Արևը սանկ կը քալե եղեր, երկիրը նանկ կը դառնա եղեր, աշխարհս կլոր է եղեր, ասոր պես խեղ մը սուտ բաներ գրված են մեջը։ Աշակերտը անգամ մը զանոնք կարդա նե՝ ալ անոր քովը կրո՞նք կմնա։

Կրակը քիչ մը շատկեկ դնելու է տե, աշխարհագրության դասագրքերն ալ այրելու է, տղաքները քիչ մը տաքնան։

Այս ամենը այրելեն ետքը կարգը կուգա դպրոցներուն։ Մեկ կողմեն ալ սոռնք իսկսինք այրել, մեյ մ'ալ կը նայիս, որ ազգը անզգալապես լուսավորված կըլլա։

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տասնի չափ հետագիմական երեսփոխաններ շուկան դերձակի մը խանութը նստած՝ ազգային կենսական խնդրոց վրա վիճաբանած ատեննին՝ պանդուխտ ազգային մը դիմացի խանութեն երեքական դուրուշի ատասըչորս կանգուն պատմա առած ըլլալով և հաշիվն ալ չկրնալով բնել, այս երեսփոխանաց դտնված խանութը կը մտնե ու կը հարցնե.

— Երեք անգամ ատասըչորս քանի՞ կընե։

Քսանըութը, ըսավ մեկը։— Ո՛չ, երեսունըմեկ կընե, ըսավ ուրիշ մը։— Սխալ է, քսանըինըուկես դուրուշ կընե, ըսավ երրորդ մը. իննսունըինը դուրուշ կընե, պոռաց չորրորդ մը։— Կարծեմ քսան դուրուշ ատսը վարա կընե, որուսց անդինն ուրիշ մը։ Վերջապես ամենն ալ մեկմեկ բան ըսելով, երբ տեսան թե հակակարծիք են իրարու, մեջերնին մեկը առաջարկեց, որ բերէ դնեն ու մեծամասնությամբ հասկնան քանի դուրուշ ընելը։ Այս առաջարկությունը ընդունվելով մեջերնին մեկը ատենագիր եղավ և ըսավ.

— Խնդիր մը կա լուծվելու, կսպասեմ որ կիրրը մեկդի բնեք և խղճիվ ձեր կարծիքը հայտնեք։ Խնդիրը այն է, որ երեք անգամ ատսնըչորսը քանի՞ կընե։ Իմ կարծիքս այն է, թե ութսունըմեկ կընե, ուստի ով որ իմ կարծիքս կընդունի, թող ձեռքը վեր վերցնե։

Ինը երեսփոխանք ձեռքերնին վեր վերցնելով միաձայն հավանությամբ որոշեցին, որ ասկեց վերջը երեք անգամ ատսնըչորսը ութսունըմեկ պիտի ընե։

Այս որոշումը ատենագրության մեջ կարձանագրվի։ Պանդուխտ ազգայինը այս որոշումը առնելուն պես շուտով կերթա ութսունըմեկ դուրուշը կուտա խանութպանին։

Խանութպանը շնորհակալություն կը հայտնե։

Պանդուխտը խանը դարձած ատեն իր բարեկամներեն մեկուն կը հանդիպի, որն իր ձեռքի պատմայի կանդունը քանիի առած ըլլալը և քանի դուրուշ տված ըլլալը հարցնելով տեղեկանալեն ետքը խաբված ըլլալը կիմացուցանե, բայց մեր պանդուխտը չուզելով համոզվիլ, երկուքը մեկեն հետագիմականաց դտնված խանութը կերթան։

— Աղաներ, երեք անգամ ատսնըչորս քանի՞ կընե եղեր։

— Մեր կարծիքը ըսինք ա իրեն։

— Ինձի ալ ըսեք, քանի՞ կընե։

— Ջանըմ, իրեն ըսինք ա, մենք օրը հազարումեկ որոշում կուտանք, ամենն ալ մոքերնիս կմնա՞ մի, մեր որոշումը իրեն հաղորդված է։

— Ինձի ալ չըսե՞ք։

— Կարապետ, սա ատենագրությունը բաց ան կարդա նայինք, երեք անդամ ատսնըչորսին վրայոր ի՞նչ որոշում աված է ժողովը։

— Ութսունըմեկ դրված է։

— Է՛հ, անանկ է նե՝ ութսունըմեկ է։

— Ի՞նչպես ութսունըմեկ կրնե. իմ հաշվովս բառասունըերկու դուրուշ կրնե կոր։

— Երկար բրիր ա, հիմա ատսը հոգի ստ՛ուտ պիտի բսեն բեզի։

— Սուտ չէ, բայց սխալած եր։

— Կորավեցե՛ք սրկե, ձեր միտքը ազգին մեջ երկպառակություն ձգել է— Սահմանադրությունը[1] վտանգել է, մենք գիտենք, ատոնց ամենը Խրիմյանին գլխուն տակն է։

Պանդուխտը կը շվարի կը մնա, բայց յոտ բնկերը համոզելով՝ մեկտեղ պատման ծախողին կերթան ու երեսունըինը դուրուշը նա կառնեն։

Հետագիմականք դեռ իրենց որոշումը նա առած չեն։

ԹԱՏՐՈՆ ԱԶԳԻՑ[1]

Բարով ձեզ, Վարդովյան էֆենտի, դերասանք ու դերասանուհիք, բարև ձեզ, հուշարարք, բարձև ձեզ, դռնապանք և պահապանք, և վերջապես բարև ձեզ, այն ամեն գոյական անուններ, որ թատրոնի մեջ կը գտնվիք։

Դերասանք և դերասանուհիր, արդյոք մտքերնեդ անցա՞ծ է երբեք, որ ես ալ ձեզի արվեստակից եմ։

Դուք ձեր անձին վրա ուրիշ անձեր կը ներկայացնեք, ես ալ Մեղուին[2] մեջ անձեր կը ներկայացնեմ. դուք երբեմն կը խնդացնեք և երբեմն ալ կը լացնեք, ես միշտ կը խնդացնեմ և երբեմն ալ կը լացնեմ. դուք մաս գոց կընեք և դեր կը կատարեք, ես ալ մաս գոց կընեմ, և երբեք ականջս հուշարարի չեմ ծախեր, ինչպես որ ձենն ոմանք կը ծախեն երբեմն. ուրիշները խնդացուցած ատենս ես չեմ խնդար, ինչպես որ կը խնդան ձենն ոմանք. և եթե երբեմն մեղսի մեջ իմ կողմես քահքահ մը տեսնեք, գիտցեք, որ խնդացնելու կանոնները պահած ըլլալու համար ստիպված եմ խնդալու. և եթե երբեմն լա՛մ — չհասկնաք, որ սիրտս եղած է և անոր համար կուլամ, ոչինչ ատատկությո՛ւն տալու համար է, որ կուլամ, ճարտասանական կանոններու համեմատ վարվելու համար միայն կուլամ։

Դեր կատարելու կարգը ինձի գալուն պես վայրկյան մը չկորանցուցած տեսարան կուգամ. գործս լմնցնելուս պես տեսարանեն կը քաշվիմ։ Դուք*

** Ձեզի պես։*

շարաթը երեք, չորս անգամ կը ներկայանաք, ես երկու անգամ կը ներկայանամ, դուք ձեր շրջանը լմնցնելնուդ պես երկու երեք ամիս Թատրոներ կը գոցեք և հանգիստ կրնեք, ես շրջանս չլրացուցած՝ անդիտութեամբ տպագրական օրինաց դեմ հոդված մը կը հրատարակեմ, ես ալ իմ Թատրոնս* կը գոցեմ։

Վարդովյա՛ն էֆենտի, ալ այսչափ իրարու նմանելնես վերջը չեմ կարծեր ձեզի հարցնելու՝ Թե շատ հանդիսականներ ունի՞ք. իմ ընթերցողացս Թիվն Թատրոն եկողներուն Թիվը կը գուշակեմ, ձեր վիճակը լավ մը հասկնալու համար պետք չունիմ ձեր գրպանները նայելու։ Բշվառականնե՛ր, ձեռս գրպանս* խոթելուս պես՝ ձեր վիճակը կը գուշակեմ և կը ցավիմ։

Գրպաններնիս ալ երկվորյակներու պես ասանկ իրարու նմանելն ալ, ի՞նչ պետք ունիմ ձեզի դալ հարցնելու Թե՝ վհատա՞ծ եք։ Ինքզինքի՞ս կը հարցնեմ և կը հասկնամ, որ վհատած չե՛մ. այն ատեն ցավս ուրախությա՛ն կփոխվի, գրիչս կը նետեմ և մաքես կըսեմ.

Ես չե՛մ վհատած, անո՛նք ալ չեն վհատած։

ՄԵՂՈՒ Ա.Ո ՎՍԵՄ. ՀԱԿՈՐ ԷՖԵՆՏԻ ԿՅՈԶԵՅԱՆ

Էֆենտի՛։

Ձեր վսեմությունը Մեղուե բնավ խայթվածք ընդունած չունի կարծեմ. որովհետև ձեր սենյակը մեղու մը մտնելուն պես՝ սպասավորը, խոհարարը, մատակարարը և սպասուհիք շուտով իրենց Թաշկինակովը կը պինվին և հայածական կը վանեն խեղճ կենդանին, որպեսզի ձեր վսեմությունը չխայթե։

Բայց այս անգամ այդ Թաշկինակները սակ չե՛ն ըներ, խայթելո՛ւ համար եկած եմ, պիտի խայթե՛մ, ճար չկա. և ավելի ցավալին այն է, որ լեզունի՛դ պիտի խայթեմ. խայթվածքս ակամջդ պիտի անցնի և լեզվիդ վրա պիտի մնա։

Էֆենտի՛, դուք սորված ըլլալով անոր ասոր ոսկիներ տալով բարեգործություններ ընել, կարծեր եք, որ ուզածնուդ իրավունք տալով՝ բարեգործություն մը ըրած կըլլաք։

Ձեր վսեմությունը սխալա՛ծ է հոս, ուստի սորվեցեք, որ մեծ տարբերություն կա ոսկիի և իրավունքի մեջտեղը. ոսկին՝ ոսկի չունեցողին կրնա տրվիլ, բայց իրավունքը՝ իրավունք ունեցողին միայն տրվելու է։

Էֆենտի, մարդարեական հոգի՞ ունիք դուք, որ առանց երկու կողմը լսելու և դատելու կը վճռեք Թե՝ Մամուլ՝ իրավունք ունի։

---

* Ձեր գրպաններուն ներողությունը կը խնդրեմ։

Ձեզի շնորհ մը ընելու համար պահ մը կրնդունիմ, որ մարգարե մ՛եք, բայց դուք ալ բնդունեցեք, որ մարգարեներու մեջ բացառություն մ՛եք. որովհետև ծառադ առանց մարգարե ըլլալու կրնամ դուշակել, որ Մամուլ հանցավոր է այս խնդրույն մեջ։ Մամուլին խիղճն ալ այսպես կը վկայե. դուք ձեր վկայությամբ երիցս հանցավոր եք, որովհետև Թե՝ Օրագիրը[2] անպատվել կուզեք և Թե՛ Մամուլին խղճին հակառակը կը խոսիք։

Կզրոսնո՛ւք կոր, էֆենտի. անոր ասոր պատիվը ձեր զվարճությա՛ն կը զոհեք. ըսեք, էֆենտի, շատ խնդացի՛ք, երբ Մամուլին մեջ կարդացիք, որ Օրագիր դիշերները շուներուն հետ կը պառկի, շուները Օրագրին ձեռքեն հացերը հափշտակեր Են, Օրագրին ոտաները աուներ անոթի մնացեր են։ Այո, խնդացիք և հիմա ալ կըսեք, Թե Մամուլ իրավունք ունի։

Գիտցե՛ք, էֆենտի, Եթե ես ըլլայի Օրագրին տեղ, կերդնում, որ հանուն արդարության, գրչիս ճարա՛կ կրնեի ձեր անունը լրագրական աշխարհի առջև։

Էֆենտի, տեղվույս անձկությունը կստիպե զիս հաջորդ Թիվերու Թողուլ այս մասին մյուս ըսելիքներս. ուստի հաճեցեք հիմակուհիմա ընդունիլ իմ խոնարհ խայթվածքս։

Ասանկ փափուկ պարագաներու մեջ ձեր բերանը ավելի լավ կրնե, Եթե համադամ կերակուրներ ուտելո՛ւ գրադի, քան Թե խոսելու։

Շո՛ւտ ըրեք, սպասավորք, փիչ մը կա՛վ բերեք և էֆենտիին լեզվին վրա դրեք, որ խայթվածքին ուռուցքը անցնի...

Ա.Ո ՎՍԵՄԱՓԱՅԼ ԱՆՎԱՆԱԿԻՑ ԻՄ ԿՅՈԶԵՅԱՆ ԷՖԵՆՏԻ

Որչափ բարեկամներ ունիք եղեր դուք, էֆենտի։ Շատերեն մեղադրվեցա՝ ձեր վսեմության երկու վսեմության խոսք ընելուս համար. նույնիսկ ինձ բարեկամ կարծածներս վրաս հարձակեցան և պնդեցին, որ գրածս հետս կոչեմ, ապա Թե ոչ, ըսին, նորին վսեմությունը կարող է Թերթդ գոցել, զքեզ բանտը դնել և այլն։ Սովորական ժպիտովս համբերցի պիրենք. ըսելով Թե՝ կամ դուք նորին վսեմությունը ադեկ չեք ճանչնար կոր, կամ իմ նվաստությունս։ Ավելցուցի նաև Թե՝ նորին վսեմությունը մեղի պես մարդոց պետք ունի, մեզմե սորվելիք ունի. մինչդեռ մեղի պես մարդիկ նորին վսեմության պետք չունին։ Այս ճշմարտություններն ըսի իրենց, բայց անոնք զարձյալ չհամոզվեցան։

Ես միայն համոզվեցա, որ դուք շատ բարեկամներ ունիք։

Արդ, ինչո՞ւ ես բարեկամ չունենամ և դուք ունենաք, էֆենտի։ Ի՞նչ է ասոր պատճառը։

Ասոր պատճառը դու և ես միայն դիտենք, և ես կուզեմ, որ բոլոր աշխարհը դիտնա, ուստի պետք է ասոր վրա երկարօրեն խոսիլ հաջորդ թվով:

Մնամ վսեմափայլ անվանակից

վսեմափայլ անվանակիցդ

ԹԵ ԻՆՉՈՒ ԿՅՈՉԵՑԱՆ ԷՖԵՆՏԻ ՄԵՂՈՒԻՆ ԱՎԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ ՈՒՆԻ

Վսեմափայլ էֆենտի:

Մոլութիւններ հարվածելու պաշտօնը վարող թերթ մը առավել խղճի ատյանին ապավինելով գրելու է՝ քան թե քաղաքական ատյանին:

Քաղաքականութեան և բարոյականութեան մէջ անհուն տարբերութիւն կայ: Ան երկուքը հաշտ չեն և չպիտի կրնան ըլլալ: Քաղաքականութեան մէջ միշտ բարոյականութիւն չկայ. ինչպես որ բարոյականութեան մէջ ալ բնավ քաղաքականութիւն չկայ. և ասոր համար է, որ ինչ որ շատ անգամ կը դատապարտուի քաղաքականութեանը՝ զայն կարդարացնէ բարոյականութեանը: Քաղաքական ատյանի մը առջև շատ անգամ լավ փաստաբանող մը դիմացինին տկարութեամբը գործը կը վատնէ. իսկ բարոյական ատյանի մը առջև հանցավոր մը միշտ կը պատժվի՝ որչափ ալ տկար, որչափ ալ անզոր ըլլայ իր դիմացինը:

Իմ նպատակիս հասնելու համար անպատճառ խղճի ատյանը ընդունելու եմ, և երբ հոս կարդարանամ, փույթ չէ ինձ քաղաքական ատեանի մը առջև դատապարտվիլս: Ես կուզեմ որ ըսեն՝ «անմեղ էր և պատժվեցավ», և չեմ ուզեր որ ըսեն՝ «պատժապարտ էր և արդարացավ»:

Այս տողերով ինքզինքս ճանչցնելն եմքը բուն խնդրույն դառնամ:

Էֆենտի:

Ինչո՞ւ ինձմե ավելի բարեկամներ ունիք դուք: Ո՞վ եր դուք: Ի՞նչ եմ ես: Ի՞նչ ունիք ինձմե ավելի: Ի՞նչ ունիմ ձեզմե պակաս:

Շնորհիվն ու անհասանելի կամոքն աստուծո երկուքնիս ալ ասուն արարածներ ենք, որ կը խորհինք, կը խոսինք, կուտենք, կը քնանանք, կարթննանք, կը ծնանինք և կը մեռնինք: Արդ, ինչ որ ունիս դուն՝ իբրև մարդկութեան նշան, ես ալ ունիմ. և թե որ ասկե դուրս բան մը ունիս՝ որուն շնորհիվը շատ բարեկամներ ունիս, ասպա ուրեմն այն բարեկամներն քունդ չեն, այլ անոր՝ որ քո դուն ունիս և ես՝ չունիմ (որովհետև բարեկամ չունիմ):

Ի՞նչ է ուրեմն այն որ ունիս՝ ես չունիմ:

Երկու տարեկան տղա մ'իսկ պիտե ասիկա ու կըսե.

— Ոսկի՛ն:

Բայց ոսկին մարդկութեան նշան չէ:

Այն որ հողի ունի՝ մա՛րդ է կրնանը ըսել. բայց չենք կրնար ըսել թէ՝ այն որ ոսկի ունի՝ մարդ է: Եթե այս ըսելու կարող ըլլայինք. բանկիերն ու բաանկերն ալ մեչմեկ մարդ պիտի ըլլային:

Ուստի երբ ոսկին դուրս հանեն այս խնդրույն մէջեն, բոլոր բարեկամներդ ալ դուրս կելլեն և անոր կերթան, հետևապես ես ու դուն միայն կը մնանք իրրև մարդ՝ իրարու համապատասխ և համագոր:

Մեր խնդիրն ալ մարդկությա՛ն խնդիր է և ո՛չ ոսկիի, ուստի հրամայեցեք խել մը խնդճերուն և տգեաներուն, որ չհայհոյեն ինձի և մտիկ ընեն:

Էֆենտի, դուք զմամուլ պաշտպանելով, ըսիք Արեևլյան Մամուլին՝.

— Անօթութենե՛ մեռիր:

Ահա ա՛յս է իմ ցավս:

Դուք զմամուլ պաշտպանելով Մասիսին՞ ըսիք.

— Եե՛ղջ պիտի ապրիս:

Ահա ա՛յս է իմ վիշտս:

Դուք զմամուլ պաշտպանելով Օրագրս ըսիք.

— Հակառակ քու աշխատությանցդ պետք է որ խայտառակվի՛ս:

Ահա ա՛յս է իմ վախս:

Դուք զմամուլ պաշտպանելով, գրական ասպարեզին վրա անունդ հայթայթելու համար անոթի փորանց ձեռագիր գրելով, իրիկունը չոր հաց ուտելով աշխատող խմբագրաց ըսիք.

— Սատկեցե՛ք դուք:

Ահա ա՛յս է իմ մահս:

— Թող հայ լրագրությունը մեռնի՛, թող ան ու ասա հանիրավի խայտառակվի՛, ես պիտի ղրոսնո՛մ, ըսիք:

Ահա այս է ձե՛ր մահը:

Ահա ա՛յս է ճշմարտությունը:

Ալ ի՛նչ կուզեք ըրեք Մեղուին, բայց սա գիտցե՛ք, որ Մեղուն անանկ վիճակ մ'ունի, ուսկից ո՛ր վիճակին որ ենթարկվելու ըլլա նե՝ առաջինեն ավելի աղեկ պիտի ըլլա:

Զգուշացե՛ք, չարություն ըրած ատեննիդ բարությո՛ւն կրնեք և ես ձեննե քարիք տեսնել չե՛մ ուզեր. միայն թե ասանկ խնդրոց մեջ մեյ մ'ալ խառնվելու հըլլաք նե՝ լրագրության մեծ քարիք մը ըրած կըլլաք:

Խնդրելով որ ընդունիք իմ հարգանքս,

Մնամ ձեր վսեմության ինչպես որ արժան է մնալ:

Ազնվականութիւնը ժառանգական չէ։ Այն մարդը, որ առանց առաքինի ըլլալու կըսէ, թէ Հայրս ազնվական էր և ես ալ անոր համար ազնվական եմ, կը նմանի այն մարդուն, որ առանց բժշկութեան արհեստը սորվելու, կըսէ, թէ ես բժիշկ եմ, որովհետև Հայրս բժիշկ էր։

Մի՛ զարմանաք, երբ տեսնէք, որ ագեռները մարիկ չեն ըներ։ Երատը դեղ է, որ ականջով կուտվի, կա՛ տղա մը, որ դյուրութեամբ դեղ առնէ։

Շատ անգամ դատաղութիւնը կրնա Ճշմարտութիւն մը պտնելու օգնել, բայց չկրնար Ճշմարտութիւն ըլլալ, ինչքան որ լապտեր մը կրնա կորսված ոսկի մը գտնելու օգնել, բայց չի կրնար ոսկի ըլլալ։

Աւելի կուզեմ սատանայից օգնութիւնքը իրավո՛ւնքս վայելել, քան թէ հրեշտակա՛յ դատուն մէջ իրավունքիս զրկվիլ։

Աւելի կը վախնամ, որ իմ ուրիշներուն վրա ունեցած կարծիքս չիսխալի, քան թէ ուրիշներուն իմ վրա ունեցած կարծիքը։

Շատերը կը զարմանան թէ՝ ինչո՞ւ մեր երեսփոխանութեան մէջ տգիտութիւնը մեծագույն մաս կազմած է։

Այս զարմանքը խնդալս կը բերէ, մի՞թէ աղքատները միշտ մեծագույն մաս չեն կազմեր։

Օրագրի գրամագլուխը սուտն է, ինչպես որ մուրացկանի մը գրամագլուխն ալ բարեմաղթութիւնն է։

Սատանկները գրամագլուխին լմնցած օրը կսկսին միայն հարստանալ։

Ընթերցո՛ղ, ես ալ երազ կը տեսնեմ, և շիտակը հաստկնալ կուզես նե՝ երկու անգամ կը տեսնեմ, մեկը արթնութեանս մէջ և մեկալը քունս մէջ. միայն սա պայմանաւ, որ արթնութեանս մէջ ուզած երազներս կը տեսնեմ, այսինքն գեղարիւ և մարգս երջանիկ ընող երազներ։

Երեկ իրիկուն անկողին մտնալուս պես՝ դեռ չքնացած՝ սկսա երազել։ Բախտս անանկ բերաւ, որ այս երազիս մէջ, չիյտեմ ինչպես եղավ՝ միլիոնավոր լիրաներ վաստկեցա։

Նախ հացագործ Զարար աղային ապրանքին առնելիքը վճարեցի։ Վերջը Ներսեսեանը կանչեցի, հազար ոսկի ալ անոր տվի. ա՛ռ սա ոսկիները, և Իճատիեի՝ դպրոցին վրայէն չնչէ բռնէ անունդ և իմինս փորել տուր։

Այս գործն ալ լմնցունելէն ետքը, շիտակ Պերա² երթ։ Փողոցները ցեխոտ ըլլալուն՝ չկրնալով մեկ կոպմեն դիմացի կոպմը անցնել, թամիսիոնին սատակ տվի, որ Մեծ փողոցին մէջ բանի մը կամուրջ շինե, որպեսզի մեկը կարող ըլլա մեկ խանութեն անոր դիմացի խանութը անցնել։

Այս մեծագործութիւնն ընելեն ետքը, շիտակ պերնմանատունը վազեցի, անոր շուրջը իսկույն անասիկ բերդերուս պես բարձր պատ մը քաշեցի։ Մեջը մատ, եկեղեցին ի հիմանե նորոգելով՝ գմբեթավոր և ընդարձակ եկեղեցի մը շինել տվի, եկեղեցիին դուռն վրան ալ այսպես փորագրել տվի. «Շինեցավ արդյամբ Մեղուի ի թվականին տեսլյանն Մեղուի»։

Հայերը աս տեսնելնուն պես՝ ինձի վազեցին. աշխարհիս մինչև վերջը ինձի երախտապարտ մնալու երդում ըրին։ Մեկը ձեռքս կը համբուրեր, անդինն ուրիշ մը ի ծունր իջած կը խնկարկեր զիս. ուրիշ մը ոտվըներս պլլըված՝ չէր թողուր որ քալեմ, ամենքը կուգային բալթոյիս բեղերը համբուրելու, անանկ որ, ճարս հատավ, բալթոս հանեցի և ծառե մը կախեցի, որ հոն երթան համբուրեն, ապասպրեցի ալ, որ համբուրելեն վերջը վրայի տիզմերն ֆրչայով մը սրբեն։

Հասարակութեան կողմե տրված այս երախտապիտական ցույցերով արբշիռ՝ սկսա թռչիլ ու վեր բարձրանալ, այնչափ բարձրացա, որ վերջապես գետնին տակը մտա։

Քնացեր էի, և գեշ երազները՝ պանդուխտ հայու երազներն իսկ շատ տեսնելով՝ գիս մեռելոց մէջ տարած էին։

Ոսկրներու առնավաճառին մէջ կը գտնվեի. չէի խոսիր, չէի տեսներ, մեռած էի։

Կմախքները գիս մեռյալ տեսնելնուն վրա սրամտած՝ ամենը մեկեն վրաս վազեցին և ըսին, զարթի՛ր, և ըսե՛ մեզ, մեր հանգստութիւնը խռովելո՞ւ եկար

հոս, ըսե՛, չէ նե՝ հիմա դրեղ կը բզբա... ըսկիռուն չմնաց, շուտով նոր հոգի դդեցա, չէ նե՝ իրավ պիտի բղբաեին։

Ո՜հ, ըսին ամենքը միաբերան, հայրենիքեն աքսորյալ, լեռներու, ձորերու մեջ թափառյալ, անողոք բախտեն հալածյալ՝ ինչո՞ւ կյանք մը անցնելենս հետո դերեզմանե՞ն ալ պիտի աքսորվինք։ Ուրեմն դերեզմանին մեջ ալ չիք հանգստություն հայոց համար. բայց ո՜չ, ո՜չ, եթե կենդանի հայերը մեռյալ են, մեռյալ հայերը դեռ կենդանի են . . . . . .

. . . . . .

Մեռելոց համար լրագրական անաչառության չըլլալուն՝ ուրիշ շատ խոսքեր ալ ըրին, բայց մեր... մեր... մեր միաբը չմնաց։

Մեր միաբը չմնացած խոսքերը ըսկսին հետո՝ երբ բաժնվելու վրա էին, մեկը եկավ ատոնց մեջ կայնեցավ։ Գրպանեն յոթը օսիր քսակ ոսկի հանեց. չգիտեմ, որ իմ ոսկինե՞րս դողցած էր, չէ նե՝ ան ալ ինձի պես երազ տեսած էր։

Ոսկիները ցույց տալով՝ ըսավ իրենց, թե որ ատոնք տալու ըլլամ նե՝ դուրս կելնե՞ք։ Մեկ մասը այո՛ ըսավ, մյուս մասը՝ ոչ, և ինչպես որ ամեն կռիվ այոեն և ոչեն կելնե՝ մեծ պատերազմ ծագեցավ իրենց մեջ։

Վախես կը դողայի։

Պատերազմի միջոցին պատկառելի մարդ մը եկավ դրոշ ի ձեռին. դրոշին վրա գրված էր՝ կրոնքը ստծո նե. ատոր վրա կռիվը դադրեցավ և ամենքը միաբանեցան։

Մեռյալ հայոց միաբանությանը վրա զղացած ուրախությենես արթնցա և տեսա, որ՝ ոչ Զաքար աղան սուակը սուեր է, ոչ ալ Պերայի մեջ կամուրջ շինվեր է. ինչ դերեզմանին շուրջը քաշած պատս և շինած եկեղեցիս չիյտեմ ինչպես եղեր՝ անհայտ եղած են։

Թո՛ղ ըլլան, հարկավ մոտ օրերս երազ մ'ալ կը տեսնեմ և առջի շինածես ավելի հաստատ կը շինեմ։

Մի՛ խնդաք, հարուստներ, եթե իմ երազներս ձեզի համար իրողություններ չեն, ձեր իրողություններն ինձի համար երազներ են. և ժամանակը եթե իրողությունները երազի կը դարձնե՝ հարկավ օր մ'ալ երազները իրականության կը դարձնե։

ԽԱՅՎԱԾՔ

Մեզու այս օրերս ապահովության սենյակ մը բացած է, և կապահովե այն ամեն բաները, որք կորսվելու ենթակա են։

Ուզողը կրնա մեզ գտնել և ուզածը սիկուրթա ընել։

Ահա այժմ սիկուրթայի դրվածները հետևյալներն են.

1. Պեկյան էֆենտիի փաստի կողովները։

2. Տերոյենց պատվելիին համբավը։

3. Մաճգումեին[1] ականջները։

4. Ասիայինե[2] սկզբունքը։

5. Պատիլ շատ սիրող կնիկները։

6. Բաղնիք գացողներուն ծխախոտի տուփը։

7. Պատրիարքարան[3] գացող և դռնապանին պախշիշ չտվողներուն ոտքի ամանները։

8. Շոգենավ մտնելով քնացողներուն պիլեթները։

9. Իզմիրցոց՝ Խորեն եպիսկոպոսին[4] վրա ունեցած համարումը։

10. ... տին առաջնորդությանը տակ ապրող ժողովրդյան կրոնքը։

11. Մատամազել Մարթային փոքրիկ գլխարկը։

12. Մեղուին զվարթությունը։

Սիկուրթա բռնել ուզողները չհոգնեցնելու համար մենք իրենց ոտքը պիտի երթանք. բայց որովհետև չենք կրնար մեր գրասենյակեն բաժնվիլ, որշեցինք աղաչել Խրիստաքի էֆենտիին, որ մեզի օմնիպյուս մը տա՝ որպեսզի գրասենյակնիս օմնիպյուսի մեջ դնենք և այնպես պտտինք։

Այս առթիվ պարտք կը համարիմք Մեղուեն առնելիք ունեցող էֆենտիներուն՝ հայտնել, որ պարապ տեղը չբարեհաճին մեր սենյակը գալ, որովհետև հոն չպիտի կրնան դտնել մեղի։

Գատապարտյալ մը առջի օրը կրսեր ինձ թե՝ եթե ղույդ մը ոտքի աման տայի իմ դատավորիս, դատը կը վաստկեի։

Ահա ոտք մը՝ որ կաշառ կուտան, ահա ոտք մը՝ որ իրեն կոշիկ ավողին իրավունք կուտա։

Սթափեցե՛ք, ազգայինք։

Ով որ կարդվելու նպատակավ աղջիկ մը տեսնել կուզե, պետք է որ աղջիկը տունը տեսնե և ոչ թե փողոցը։

Որովհետև,

Աղջիկ մը՝ տան մեջ նիհար՝ իսկ փողոցը գեր է.

Տան մեջ ամբարտավան՝ փողոցը հեզ ու խոնարհ է.

Տան մեջ թուխ՝ փողոցը ճերմակ է.

Տան մեջ տարիքն առած՝ փողոցը մատղաշ է.

Տան մեջ աղքատ՝ փողոցը հարուստ է.

Տան մեջ սատանա՝ փողոցը հրեշտակ է.

Տան մեջ ծույլ՝ փողոցը ժիր է.

Տան մեջ թևթև՝ փողոցը ծանր է.

Տան մեջ վանողական՝ փողոցը քաշողական է.

Տան մեջ (մոտեն) տգեղ՝ փողոցը (հեռվանց) գեղեցիկ է։

Անոնք կրնան միայն փողոցին մեջ աղջկան մը հավնիլ և հետ ամուսնանալ՝ որոնք որ իրենց կնիկը միշտ հեռուեն տեսնել կուզեն։

Մի՛ բարկանաք, օրիո՛րդ, ձեզի այսպես հարվածելուս համար։

Եթե ձեր ընթացքը այսպես շարունակեք՝ պիտի սկսիմ ակնարկություններ ալ ընել։

Պուալո երգիծաբանի մը համար կըսե թե՝ ոչ թե միայն ծաղրած անձին անունը կուտար, այլ արվեստը, տեղն ու թաղն ալ կըսեր, որ չըլլա թե սխալմամբ ուրիշ մը հասկցվի։

Ինչպես որ հարուստ մը սիրտը նեղանալուն պես սա նարտը բերե՛ք, կըսե, ինչպես որ տղա մը ձանձրանալուն պես խաղալիքը կուզե՝ ես ալ քիչ մը ձանձրանալուս պես կըսեմ.

— Ցրվի՛չ։

— Ի՞նչ կուզեք։

— Սա Ասիան բեր։

***

Անցյալ շաբաթ օր էտիրնե երթալու համար Ճամբա կենտ շոգեկառքը Ճամբուն գծեն դուրս ելեր և ավազին վրա կայներ է։

Մեր քաղ. ժողովն ալ գծեն դուրս ելեր է, բայց առանց վհատելու գարձյալ կը քալե. ինչո՞ւն է, որ այս շոգեկառքը կեցեր է։

— Որովհետև շոգեկառքը գծին վրայեն քալելու համար չինված է։

— Անանկ է նե՝ քաղ. ժողովն ալ գծեն դուրս քալելու համար չինված է։

— Զարմանալի չէ՞, որ Միսաքյան էֆենտին քառնահինդ տարի Բարիզ կեցած ըլլա ու պարապ դարձած ըլլա։

— Զարմանալի չէ, որովհետև քաղաքը չէ, որ գմարդ կը լուսավորե, այլ մարդն է, որ գրաղար կը լուսավորե։

— Ասիան լրագրաց արժանիքը քննադատելով ի՞նչ սկզբունք քարոզած կըլլա։

— Սա սկզբունքը քարոզած կըլլա՝ թե մարդ իր չսիրացած բանին վրա կրնա քննադատություն ընել։

— Ասիային այդ հոդվածը կարդացած տեսնեղ ի՞նչ կուզա միտքդ։

— Միտքս կուգա այն առակը՝ որուն բարոյականն է թե՝ առյուծ, մի՛ մատնեը գմեզ ի ձեռս հիմար դատողաց...

Օրագիր այս օրվան թերթին մեջ կինն էրկընեն զատելու սկզբունքը դատապարտող անզուգական խմբագականերուն վրա գրած հոդվածը այսպես կը վերջացնե.

«Առյուծ մարդուս խելքի պակասություն չուտա»։

Ահա մարդ մը, որ միշտ իրեն համար կաղոթե...

Խոսիլ մի՛ տար ղիս, ընթերցող, որովհետև բնության մեջ ալ այլանդակ բաներ տեսնել սկսա։

Ի՞նչ հարկ կա ականջ տալ այն մարդուն՝ որուն խոսելու պաշտոն տվեր է բնությունը. ի՞նչ հարկ կա լեզու տալ այն մարդուն՝ որուն լսելու պաշտոն տվեր է բնությունը։

Գլուխը մարդուս ջրամբարն է, որուն ծորակն է լեզուն։ Ո՛վ բնություն, ինչո՞ւ ծորակ դրեր ես այդ ջրամբարին՝ որուն մեջ ջուր լեցուցած չես։

Այդ տեսակ մարդիկ կը նմանին աղբյուրի մը, որ ծորակ ունին և ջուր չունին։ Այդ տեսակ մարդիկ ըստ իս զարդի համար ստեղծված են, և կը նմանին հայկական այն բառերուն՝ որք զարդի համար միմիայն կը գործածվին պերճախոսության մեջ։

Ո՛վ Մանգումե, եկո՛ւր իմ զվարճական պերճախոսությունս բիչ մը զարդարելու...

— Բարեկա՛մ, հոգված մը գրած եմ, և կուզեմ Օրագրո խմբագրին տալ։
— Գնա՛ տուր։
— Ես չեմ ճանչնար զինքը, հետևապես իմ հոգվածս չընդունիր, անոր մեկ բարեկամին հետ երթալու եմ, որ ընդունի։ Կը ճանչնա՞ս անոր բարեկամներեն մեկը, որ կարենա հոգվածս հրատարակել տալ։
— Այո, կը ճանչնամ։
— Ո՞վ է։
— Մտակը։

— Մանչուկ, սա լիսրան բեր, նայինք ի՞նչ կերակուր եփեր եք այսօր։
— Հրամմեցեք։
— (Կարդալեն եառբը)։ Աս լիսթան ալ մեր լրագիրներուն կը նմանի. ամեն օր միևնույն բաները կը գրվին մեջը։

Երեսփոխանական ժողովին[6] մեջ երբ ժողովրդյան կողմե ձայն մը ելնե՝ ատենապետը իսկույն զանգակը հնչեցնելով կը հայտարարե՝ թե ժողովը պիտի դոցեմ երբ ժողովուրդը հանդարտ չկենա։

Ասիկա բարի սովորություն մ'է, բայց ինչո՞ւ համար մեծկակ զանգակ մ'ալ ժողովրդյան ձեռքը չեն տար, որ ան ալ միևնույն հայտարարությունը ընե, երբ ժողովին մեջ երեսփոխանաց մեկուն կողմե անկարգություն մը պատահի...

Գաղղիացիք ալ տղա են, գործերնին թողած՝ դրոշակի խնդրով կզբաղին։

Ամենն ալ գրեթե համաձայն են դրոշակ մը ունենալու մասին, բայց տարաձայն են այդ դրոշակի գույնին մասին։ Ոմանք կարմիր կուզեն եղեր, ոմանք ալ դեղին։

Ինչպես որ կերևի, խնդիրը ճաշակի վրա է. մեկուն ճաշակին ձերմակը կուգա, մյուսին ալ դեղինը։ Իմին ալ ճաշակս հարցունես նե՝ ես ալ կըսեմ՝ թե սևին վրա ձերմակը աղեկ կը վայլե, և կառաջարկեմ, որ դրոշակին մեկ կողմն ալ իմ բսածիս պես ըլլա։

Ո՛վ դաղղիացիք, այնչափ գույներու ներկեցիք Գաղղիան, որ դույն չմնաց, և հիմա դույն մը չեք կրնար գտնել ձեր դրոշակը ներկելու...

— Հարուստները ինչո՞ւ համար դեռ վաստկիլ կուզեն։
— Օր մը Ռոչիլտին հետ մրցելու համար։
— Ռոչիլտ որո՞ւ հետ մրցիլ կուզե։
— Տիեզերքին հետ։
— Չըսե՞ս, որ խենդ է։
— Դուն ըսիր։

— Ստեփան էֆենտի Փափազյանը ազգասե՞ր է։
— Էջմիածին տպված օրացույցը բեր, մեջը նայինք, ազգասեր է նե՝ հարկավ մեջը գրված է։
— Ի՞նչ կրսես, օրացույցին մեջ անանկ բան կը գրվի՞։
— Գրես նե՝ չը՞գրվիր։ Մինչև հիմա մեկու մը ազգասեր ըլլալը անոր գործերեն կը հասկցվեր, ասկից վերջը օրացույցեն պիտի հասկցվի։
— Աա ի՞նչ ըսել է։
— Ահավասիկ էջմիածնա օրացույցին գրածը. ինգերորդ տարեդարձ օծման վեհ. Գեորգ ազգասեր կարողիկոսին։
Ո՞ւր ես, տեր Երեմիա[7], ո՞ւր է սթալացույդ։

— Ի՞նչ են ազգային երեսփոխանները։
— Մեկմեկ դերասան։
— Ի՞նչ կը ներկայացնեն։
— Ազգը։
— Փափազյան էֆենտին ի՞նչ դեր կը կատարե այս ներկայացման մեջ։
— Չարագործի դերը։

Քննիչ Հանձնաժողովի տեղեկագիրը անցյալ շարաթ դնդի խնդրոց կարգը ուղևորվեցավ։

— Խնդրոց կարգը ի՞նչ է։

— Լարյուրինթոս՝ ուսկից ներս մտնողը դուրս չկրնար ելնել։

Ազատութեամբ մեծցյալ և լրագիր անվան անարժան եղող Մամուլը յուր վերջին թիվերուն մեկուն մեջ Մեղուին համար անանկ խոսք մը կընե՝ զոր հոս բառ առ բառ դնելու կամենայինք՝ նին հիշյալ դարշահոտ թուղթին արժեքը անգամ մ'ալ հասարակութեան ճանչցունել չուզեինք։ Ահավասիկ իր խոսքը.

— Ծո՛, սա Մեղուն արտաքնոցին ծակը նետեցեք։

Ոմանք սա կարդացած ըլլալով՝ կըսեն.

— Ի՞նչ մեծ անպատուութիւն Մեղուին համար...

Իսկ մենք կըսենք.

— Ասիկա մեծ անպատուութիւն չէ Մեղուին համար, այլ մեծ պատիվ է արտաքնոցին համար։

Արժանիքն ավելի անձի մը կամ բանի մը տրված պատիվն շողոքորթութիւն ըլլալով՝ Մամուլ այդ խոսքովը արտաքնոցը շողոքորթած կըլլա։ Կը հորդորենք Մամուլը, որ մեյ մ'ալ ասանկ բան չընէ, որովհետև կրնա ըլլալ, որ հիշյալ արտաքնոցը վաղը ելնե դռռոզանա և ինքզինքը բանի մը տեղ դնե։

Մամլո արդի վիճակը մեր ըսածը լիովին կը հաստատե։

Հինգշաբթի օրը ըստ լատինացվոց Հիսուս ծնած ըլլալով՝ պօրսան չբացվեցավ։

Ո՛ւր էր թե Հիսուս ամեն օր ծնաներ՝ ի գոհութիւն բյուրավոր ընտանյաց։

Ավստրիո մեջ պատերազմի պատրաստութիւն ըլլալ կը կարծվի, որովհետև ընկերութիւն մը կազմվեր է հոն տատրակներուն նամակ բերել տանել սորվեցունելու համար։

Ըսել է թե ամեն պատրաստութիւն տեսնվեր և գործը միայն տատրակներու մնացեր է, և թե տատրակները այս արվեստը սորվելնուն պես՝ կռիվը պիտի սկսի։

Լրագրի մը մեջ կարդացի, որ այս օրերս Եվրոպայի չգիտեմ ո՞ր կողմը չորս օտքով տղա մը ծներ է։

Ահավասիկ տղա մը՝ որ Պոլսո մեջ անվախ կրնա քալել ուզած տեղեն, որովհետև եթե դիպվածով բրամվկյը անոր մեկ ոտքը կտրե նե՝ անդին երեք հատ ալ ունի և անոնցմով կրնա քալել։

— Հայրի՛կ, ի՞նչ են հարուստները։

— Մեծ գողեր են, տղաս, որ պզտիկները կը կողոպտեն։

— Էյ, ասոնք գողցածնին որո՞ւ կուտան, որ պահե։

— Ծնանկութեան։

Վապը բոլոր դպրոցներուն մեջ Վարդանանց զորավարաց[8] առթիվ ճառեր կը կարդացվին։ Այս ճառերը Վարդանանց քաջութեամբը կսկսին ու ազգային դպրոցներուն խեղճ վիճակին վրա ցավելով կը վերջանան։ Քանի մը տարիե ի վեր կարդացված ճառերուն վերջաբանը գրեթե միշտ դպրոց է՝ ինչ որ ալ ըլլա այդ ճառին վերջաբանը։

Ճառերը կարդացվելեն ետքը քաջն Վարդանա ողբերգութիւն մը կը ներկայացվի։ Ամեն դպրոց իրեն համար զատ ողբերգութիւն մը ունի, մեկուն մեջ կը նայիս, որ Վարդանը պատերազմին մեջ կը մեռնի, մյուսին մեջ Տղմուտ գետին մեջ կը խեղդվի, մեկալին մեջ պատերազմե դառնալեն ետքը կը մեռնի, վերջապես ամեն մարդ ուզածին պես կը մեռցունե քաջն Վարդանը. եկու տես, որ քաջն Վարդան այս ողբերգութեանց մեջ ալ կը ցցունե յուր քաջութիւնը. դինքը մեռցնող ողբերգակներուն մեծագույն մասն ալ ինքը կը մեռցունե...

Արդ, վաղը քաջն Վարդան կը պատերազմի ոչ թե պարսկաց դեմ, այլ մեր ողբերգուներու դեմ, և ես ապահով եմ, որ քաջն Վարդան հաղթանակը պիտի տանի։

— Բարեկենդանը ի՞նչպես կանցունեք կոր։

— Այնչափ կը խմենք կոր, որ ինչպես անցնիլը չենք կրնար կոր իմանալ։

— Շատ խմելը վնասակար չէ՞։

— Վնասակար է, բայց հաճույքն ալ ժժբախտաբար միշտ շատին մեջն է... չափավորութեան մեջ հաճո՞յք կա։

— Բայց ատով ապագան կը վնասվի, պետք է որ ապագան ալ մտքե չհանենք։

— Այնչափ նեղ վիճակի մեջ եմ, որ ներկային վրա խորհելեն ապագային վրա մտմտալու ժամանակ չեմ ունենար կոր։ Այսօրվա հացը ճարելու կը նայիմ կոր և վաղվան համար հոգ ընելու ատեն չեմ ունենար կոր։

Ահավասիկ ակամա աշակերտ ավետարանի՝ որ կըսե. «վաղվանը մի հոգար»։

— Եղբա՛յր, դուն դրագրուհյո՞ւն կրնես կոր եղեր։

— Այո՛։

— Դուն առաջ խոհարար էիր նե։

— Այո՛, խոհարար էի, բայց օր մը աղեկ կերակուր եփեր էի, տեսա հավնեցավ, խոհարարութենեն հանեց՝ սենյակը տարավ, ամսականս ավելցուց՝ գրագիր ըրավ։

— Կրնա՞ս կոր ընել։

— Չեմ կրնար կոր, առջի օրը սխալմունք մը ըրի և կարծեմ ճամբա պիտի տան...

Հանդյանքը խեղճին չէ, այլ տիրոջը. կերակուրին հավնեցավ նե՝ ի՛ղ խոհանոցի պետ ըներ և ամսական ավելցներ ու հիմա ալ չճամբեր...

Աստանկ անհարմար պաշտոնաբաշխութհյունները նոր չեն, հիներուն մեջ ալ կը տեսնենք։

Նաբուգոդոնոսոր երազ մը կը տեսնե. Դանիել[9] այս երազը կը մեկնե. Նաբուգոդոնոսոր գինքը իրեն երկրորդը կը կարգե։

Նաբուգոդոնոսորին տեղը ես ըլլայի նե՝ Դանիելը երազդետ կանվաննի։

Հայրենիքին մեջ կը կարդանք, որ Պաթումի ազգայինք եկեղեցի մը շինութհյան ձեռնարկած ըլլալով՝ տեղվույն կառավարութհյունը եկեղեցին կոխեր է[10]։

Կը կոխե յա՛, տեղվույն կառավարութհենեն հրաման չառած՝ ատաուծո աղոթել ի՞նչ ըսել պիտի ըլլա...

— Հայրի՛կ, թատրոնի մը մեջ կատակերգութհյուն մը ներկայացված ժամանակը հանդիսականք խնդան նե՝ ի՞նչ ըսել է։

— Դերասանները ծափահարել ըսել է։

— Էյ, ողբերգութհյուն մը ներկայացված ժամանակը դերասանները խնդան նե՝ ա՞ն ինչ ըսել է։

— Մարդ աստուծո, ամեն գիշեր գինո՞վ պիտի գաս ատանկ։

— Դուն ալ ամեն գիշեր սա խոսքը պիտի ընե՞ս։

— Գինով մի՛ գար, որ չըսեմ։

— Մի՛ ըսեր, որ գինով չգամ։

Տեսա՞ր, ընթերցո՛ղ, մարդը հանցանք չունի եղեր, բոլոր հանցանքը կնկանն է, որ կը բարկացնե կոր իր էրիկը և գինով ըլլալուն պատճառ կըլլա կոր։

Ասոր սկզբնավորութհյունը ի՞նչպես է արդյոք։ Նախ էրիկը գինով գացեր է տե՝ կնիկն ալ գինո՞վ ըսեր է, չէ նե՝ նախ կնիկը կեցած տեղը գինով ըսեր է տե՝ էրիկն ալ բարկացեր ու խմել սկսեր է։

Կար կարելոս մեքենա տեսած ու լսած էինք, բայց ազոթելու մեքենա ո՛չ տեսած, ո՛չ ալ լսած ունեինք. այս անդամ Ավետարերիճ[11] մեջ ատ ալ տեսանք։

Չեմ հիշեր, ո՛ր ժողովուրդը ընելիք ազոթքը մեքենային ընել կուտա եղեր։ Թեև ասիկա հնարավոր է, ի՞նչ հարկ կա եկեղեցի երթալու, ամենքնիս ալ այն մեքենաներեն մեկ մեկ հատ բերել տանք, եկեղեցիին մեջը դնենք, դռները գոցենք, թո՛ղ մեր տեղը անոնք ազոթեն՝ լմննա երթա։

Ակիից զատ՝ մեզի համար շարունակ ազոթողներ ըլլան նե՝ մենք ալ հանգարտ սրտով ուզածնուս չափ կրնանք մեղք գործել, միայն թե ձեթը մեքենաներեն պակաս ընելու չէ, որ աղեկ և շուտ բանին։

Ամեն թատերասեր ազգայինք գիտեն, որ մեր հայերեն ողբերգութհյանց մեջ հրեշտակ մը և ոգի մը կա։

Աս լմնցավ։

Երեկ գիշեր երազիս մեջ կը տեսնեի, որ աստված մեկուն հոգին առնելու համար հրեշտակ մը կուղեր։ Հրեշտակ չունինք, պատասխանեց հրեշտակապետը, ամենն ալ հայոց ողբերգութհյանց մեջն են։

Արթնցա և ըսի.

«Անշուշտ հայ ողբերգութհյանց հոգին առնելու համար...»։

Մեր ողբերգակները՝ որպեսզի ըսվի թե այս խաղին մեջ ոգի կա, ոգի մը կը դնեն կոր իրենց ողբերգութհյանց մեջ։ Ինչ օգուտ, որ հրեշտակ մ'ալ կը դնեն կոր և հրեշտակը խաղին ոգին կառնե կերթա կոր...

ԽԻԿԱՐԻ ՀԵՏ

ՄԵՐ ԽԻԿԱՐՆ ԱՀ ԱՂԱՖՐԱՆԿԱ Է ԵՂԵՐ

— *Պոնժուր, պոնժուր, մոնսիո, քոմա՞ն թալե վու, քոմա՞ն վա լա սանթե[1]։*

— *Աստծու բարին։ Ատ ի՞նչ կերպարանք է, Խիկար[2], ակնոց, պասթոն, ալաֆրանկա ես եղեր։*

— *Էյե լոնեոր տը բարլե ան ֆրանսե, մոնսիո, ան ֆրանսե, ան ֆրանսե, քոմբրընե՞ վու, օ՜հ, լը ֆրանսե, օ՜հ, լա ֆրանսեզ[3]։*

— *Խենդեցա՞ր, ի՞նչ եղար, Խիկար։*

— *Ժը նը վու քոմբրան, մուշու, մը քոմբրընե՞ վու[4]։*

— *Բայց հայերեն խոսե, որ հասկնամ։*

— *Ես ա՛լ ալաֆրանկա եղա, հա՛, հասկցա՞ր, և ալաֆրանկա ըլլողի մը համար հայերեն լեզուն քիչ կուգա։ Իլ ֆո բարլե ան ֆրանսե, մոն շեր, ահ, մոն շեր, թիեն, մոն շեր, տոնե մուա տեո մեճիտիե, մոն շեր[5]։ Նայե, ի՛նչ անուշություն կա արտասանության մեջ։*

— *Հայերենին մեջ չկա՞ այդ անուշությունը։*

— *Չկա, հապա, օրինակի համար, ինձի երկու մեճիտիե տուր։*

— *Վրաս չունիմ։*

— *Չէ՛, այսինքն՝ օրինակի համար, ինձի երկու մեճիտիե տուր ըսես նե՝ հայերենին մեջ պաղ կուգա կոր, թանտիս քան ֆրանսե տոնե մուա տեո մեճիտիե[6], կարծես որ անուշություն մը կա։*

— *Միարդ ի՞նչ է, երկու մեճիտիե՞ կուզես։*

— *Չէ։*

— *Ի՞նչ գիտնամ հապա. մոն շեր, թիեն մոն շեր, ահ, մոն շեր, տոնե մուա տեո մեճիտիե, մոն շեր կըսես նե...*

— *Ալաֆրանկա եղողները այդ խոսքերը շատ կը գործածեն տե, ես ալ իրրև օրինակ գործածեցի։*

— *Ըսել է որ այս ալաֆրանկա երիտասարդները դեմերնուն ելնողեն ստակ կուզեն կոր։*

— *Կուզեն կոր, հապա, ալաֆրանկա ըլլալեն ետքը ինչո՞ւ չուզեն, ալաֆրանկայի մեջ ստակ առնելն ու չտալն ամոթ չեն սեպեր կոր. բայց հայերեն լեզվով ուզես նե՝ չեն տար կոր, որովհետև հայերեն խոսիլը մեծ ամոթ կը սեպեն կոր։ Անցյալ օր ազնվական ըսված ընտանիքներուն մեկուն մեջ կը գտնվեի։ Տասնի չափ երիտասարդներ և երիտասարդուհիներ նստած իրարու հետ ֆրանսերեն կը խոսեին կոր, ես ալ խոսակցության խառնվելու համար երկու խոսք բրի հայերեն, ասոր վրա ամենքն իրարու բսել սկսան. ահ, մոն շեր, ահ, մա շեր, սեթ էոն սուաժ, սեթ էոն կրանթ անիմալ[7]։ Հարցուցի որ ի՞նչ կը խոսիք կոր ինձի համար, օրիորդներեն մեկը կարմրելով ըսավ՝ թե կըսեն կոր որ դուն չատ քաղաքավար և ազնիվ մարդ մ'ես։ Այս խոսքին վրա կրակոտ երիտասարդին մեկը ոտք ելլալով ըսավ. մոն շեր, պեն էֆքյար սերպանթիլիթին սնվերիմ, պիր ինսան սերպանթ տյուշինմելի վե սեյլեմելի, շու ճիհենթլե խիկար էշեք ատամ տրր, սիվիլիզասիոնատան պև խապար, բրոկրետեն պիպեհրե էորյուզ միսալի պիր մախլուզ տրր քի արտպայա գոշմադան պաշգա պիր շեյն չարամազ։*

Ճեսարեթիմե աֆվ էտինիզ, Խիկա՛ր, պեն տոզրույու սեոյլեր պիր ատամըմ, պունտան մատե, պիր խոսթալըղը կիզլի ֆութարսաք իլաճները պուլամայրզ, պունուն իչին սենին հալին սննտեն սագլարսաք օ հալտե գալըրսըն, էվվելթ. սեն պիր ավանակ սրն, լաթին րիճա իտերիմ, կյուճենմեյին, էվիմիզե կելմիշտին սանա բայեթ իթմեք պորճումուզ տուր, նասըլ քի բայեթտե գուսուր էթմեյտուզ զաններմ, պիզ մխսաֆիր սեվեր ատամլարըզ, շու հալտե սեն թերպիչեսիզ, ահմագ, յապանի, տյունյատան պե խապար պիր մախլուբսուն, լաթին բարտոն, կյուճենմեյին, ատրտ սեյլենմետիքճե տերման պուլունմազ. պեն սենի սեվմիյիմտեն սեյլեյորում, պու ճյումլե բայեթտե էլտեն պրագմայորում, էվեթ, ատամ սըրատսընա կելմեք իսթերսեն, պու քըյաֆեթինի տեյիշիպ, սեթրի բանճալտն կիլիպ, կյոզլյուք, պասթոն քուլլանմալըսըն, էրմենիճե լաքըրտը ատա էֆեմենթիսին, իշտե օ վագըթ ֆամիլյալար իչինե կիրերսին, մատմազելերիյեն քոնուշուպ կյուլեր օչնարսըն, կեղերսին, կիտերսին, կելիրսին[8]։

Ատոր պես խել մը խոսքեր ալ ըսավ, բայց ողջ ըլլա, միշտ ներումն խնդրելով ըսավ և պետք եղած հարգանքներն ալ ըրավ։ Ես ալ հետևյալ առտուն շիտակ պիթ բազար գացի, մյուս հագուստներս ծախեցի և ատոնք առի։ Դուն իմին տեղս ըլլայիր նե՝ ալաֆրանկա չէ՞իր ըլլար, մոն շեր, թիեն, մոն շեր, ահ, մոն շեր, տոնե մուա տեո մեճիտիե, մոն շեր։

— *Այնչափ անվայել խոսքեր ըրին նե՝ չբարկացա՞ր։*

— *Բարկանալու ժամանակ չեն տար կոր որ, ավանակ ըսելնուն պես՝ հետևն ներումն կը խնդրենք, կըսեն կոր, ե՞րբ բարկանամ։ Ալաֆրանկան սա ազնվությունն ալ ունի, որ դիմացինիդ ուզածիդ չափ կը հայհոյես կոր ու նե-*

բնչեք ըսելուդ պես՝ դիմացինիդ ալ հոշը կուգա կոր, բերանը չը բանար կոր։ Մեր մեջ ըլլա նե՝ ան անոր կը զարնեն, ան անոր կոկորդը կը սեմն ու կոխլ կելլա. ալ այսչափ առավելություն տեսնելեն ետքը ինչո՞ւ ալաֆրանկա ըլլալու չը բռնեմ երթամ։

— Ալաֆրանկա ըլլալու համար նախ ի՞նչ պետք է։

— Նախ պետք է հայերեն չխոսիլ, հայերեն խոսողներեն հեռու փախչիլ։

— Ի՞նչ լեզու գործածելու է։

— Ֆրանսերեն, տաճկերեն, հունարեն, հրեաերեն, չինկյաներեն. հայերեն չըլլա տե՝ ինչ ըլլա նե՝ ըլլա։ Երկրորդ՝ պետք է քիչ մը թեթև ըլլալ, իգական սեռեն հեռու չփախչիլ, կարելի եղածին չափ տիկիններն ու օրիորդները հարդել. անոնց առջև կապիկի պես ցատկռտել, կոտրել, կոտրբռվիլ։ Երրորդ՝ ծանր չըլլալ։ Չորրորդ՝ ասկից անկից ստակ ուղել, մաճիխեր առնել, ափնոց առնել։

— Դուն մեկե մը ստակ ուղեցի՞ր։

— Ալաֆրանկա ըլլալես ի վեր տասը մեճիտիե ավի անոր ասոր։

— Դուն ալ չուզե՞ս։

— Ես աղեկ մը չկրցի վարժվիլ տե, դժվար կուգա կոր։ Հինգերորդ՝ պետք է որ ամեն առտու բուտրա բանս երեսդ, ասոնք չընես ալ նե՝ կըլլա, բայց թեթևությունը անպատճառ բնելու ես։ Մոռցա ըսելու, որ անունդ ալ ֆրանսերեն պիտի դնես. Գեորդ ես նե՝ Ժորժ պիտի ըլլաս, Կարապետ ես նե՝ Շարլ կամ Քարլո։ Ահավասիկ այսչափ է։ Վասլա, մոն շեր[9], ահ, մոն շեր, թիեն, մոն շեր, թիեն, մոն շեր, տոնե մուա տեո մեճիտիե, մոն շեր։ Ինչպես, ասկե կրնե՞մ կոր։

— Գեշ չէ։

— Ընկուր քիչ մ'ալ բոլքա խաղանք քեզի հետ։

— Գրասենյակին մեջ բոլքա կը խաղցվի՞, բա՛նդ պնա, ձեռագիր գրեմ պիտի։

— Ընկուր խաղանք, եկո՛ւր, չէ նե՝ օտապաշին կամ ուրիշ մեկը գտիր, որ խաղամ, որովհետև այս գիշեր սուարե տանսանթ մը կա, ես ալ հրավիրված եմ, բոլքա պիտի խաղամ, քիչ մը վարժություն պետք է։

— Ի՞նչ վարժություն պիտի ընես։

— Սա վարժությունը պիտի ընեմ, որ տամային ձեռքը ի՞նչպես սրխամելու է, որ ուրիշները չտեսնան։

— Խիկա՛ր, դուն ալաֆրանկային վնասակար կողմերը սորվեր ես։

— Հինգերորդ գործածվածը սորվեցա։ Ահ, մոն շեր, թիեն, մոն շեր, տոնե մուա տեո մեճիտիե, մոն շեր։ Աթիեո, մոն շեր, ժը վու սալյու, մոն շեր, ժե լոներ տը վու սալյուե, մոն շեր, վու զավե լոներ տը վու դեիրը սալյուե,

մոն շեր, ահ, մոն շեր, տոնե մուա տեո մեճիտիե, մոն շեր[10], ասոնք են ահա հինգերորդ գործածված ալաֆրանկա խոսքերը։

— Աստված շնորհք տա։

— Մեր երիտասարդներուն։

ԱՋԳ. ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

— Խիկա՛ր, ուրբաթ օրը ընդհ. ժողովին[1] պիտի երթա՞ս։

— Չէ՛, պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Ինչո՞ւ պարապ ըլլան, կը բողոքեն, կառաջարկեն, բեմը կելնեն, առևնարարություն կրնեն, դուն ձախակողմյան[2] ես, ես աջակողմյան[3] եմ, խոսքս սխալ աբձանագրված է, շակեցեք, ավրեցեք ըսելով...

— Ազգին ծառայություն կրնեն, այնպես չէ՞, արդյոք երեսփոխան էֆենտիները գոնե հիմա սկսա՞ն ամչնալ՝ համոզվելով, որ տասնըյոթը տարին ի վեր խեղճ ազգի մը գլխուն անցած՝ չնչին և տղայական խնդիրներով զբաղելով՝ ազգին մեջ դաստիարակության ծավալման արգելք եղան. համոզվեցա՞ն արդյոք, որ տասնըյոթը տարվան մեջ ազգին ամենափոքր ծառայություն մը բրած չենն։

— Անոնց հոգն անգամ չէ, աշխարհ կործանի, աշխարհ վերականգնի նե՝ հարյուր տասնըյոթը տարի ալ այսպես պիտի շարունակեն։

ԿԱՆՈՆԱՎՈՐՆԵՐՈՒՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆԸ

— Բարի՛ եկար, Խիկա՛ր, Վանե՞ն կուգաս։

— Չէ, Վանեն չեմ գար, բայց ինչո՞ւ հարցուցիր։

— Գլուխդ ֆես և ոտքդ ոտքի ման չտեսա ու կարծեցի, որ Վանեն կուգաս։

— Վանեցիները ֆես ու ոտքի ման չե՞ն հագնիր։

— Չէ։

— Գլուխ չունի՞ն, ոտք չունի՞ն։

— Ինչո՞ւ պիտի չունենան. Վանեցիները մեր ազգային իշխանությո՞ւնը կարծեցիր. գլուխ ալ ունին, ոտք ալ ունին, բայց գլուխնին բաց պտտիլ սկսան...

— Ալաֆրանկա՞ ըլլալու համար...

— Ոտքի ման ալ չգործածել սկսան...

— Ոաքի ամանները վրա ալ տո՛ւրք դրվնցավ, թե կառավարությունը հարուստներու ձիերը առած ըլլալով՝ ապրատներն ալ ոաքի ամանները տալու որոշում տվին։

— Ոչ մին և ոչ մյուսը։

— Ինչո՞ւ ուրեմն առանց ֆեսի և ոաքի ամանի կը պատին։

— Որովհետև Վանա մեջ գանված կանոնավոր զորքերը գեմերնին եկնողներուն ոաքի ամաններն ու ֆեսերը կը հավշտակեն և իրենք կը գործածեն եղեր։ Գյուղերը մտնալով գատծնին կառնեն եղեր. գասատուներուն փայտ կրել կուտան եղեր։

— Կանոնավո՞ր զորքերը...

— Արանց և կանանց, ծերոց և տղայոց ամեն տեսակ չարիք կբնեն եղեր։

— Կանոնավո՞ր զորքերը...

— Վանեն գրված նամակի մը նայելով, մարդ չհամարձակիր եղեր գուրս ելնելու։

— Կանոնավո՞ր զորքերը։

— Այո՛, կանոնավոր զորքերը։

— Կանոնին այսչափ վնասները տեսնվելեն ետքը, ինչո՞ւ կանոնը չեն վերցներ այդ զորաց մեջեն։

— Ո՛վ գիտե։ Բայց ի՞նչպես կըլլա, որ տեղական կառավարությունը թող կուտա որ...

— Տեղական կառավարությունը հո՞ն է մի։

— Հոն է յա՛...

— Ի՞նչ գիտնամ, այդ ըսածներդ լսեցի նե՝ կարծեցի, որ տեղական կառավարությունը այդ զորաց ձեռքն է։

— Չէ, բայց կը զարմանամ, թե կուսակալը ի՞նչպես ձայն չհաներ։

— Ինչե՞ն գիտես, որ այդ խեղճին ալ ոաքի ամաններն ու ֆեսը չեն առած։

— Բայց ինչո՞ւ ձայն չհաներ։

— Ինչե՞ն գիտես, որ զորքերը անոր ձայնն ալ չեն առած, քանի որ կըսեն՝ թե ամեն գատծնին կառնեն ու կը տանին։

— Ներեցե՛ք, հիկար, ձեղի բան մը պիտի հիշեցունեմ, որովհետև քու հիշողությունդ տկար է։

— Պարտքի մասին տկար, իսկ առնելիքի մասին խիստ զորավոր է, կըսեր ատենոք Սոկրատը ծաղրող կատակերգուն։ Հիշեցուցեք։

— Կը խոստովանի՞ք ուրեմն, թե պարտքի մասին տկար է հիշողությունդ...

— Այո՛, ըստ սիրող սովորության։

— Ուստի ես ալ ձեր մեկ պարտքը պիտի հիշեցունեմ ձեղի, այն է, թե լեզուիդ քիչ մը չափավորեցնեք և այնպես խոսեցեք։

— Ես ամիս մը խորհեցա և գործածելիք լեզուս որոշեցի, և ի՞նչ ըսի որ։ Վանեն Մանզումեին գրված նամակի մը բսածները պատմեցիր ինձի, ես ալ անոնց վրայոր հարցումներ ըրի։

— Այո՛, բայց և այնպես...

— Մանավանդ որ Հայաստանի մեջ գործված անիրավությունները օսմանյան երեսփոխանական ժողովին մեջ ալ վավերացվեցան միաձայն հավանությամբ։

— Այո՛, բայց և այնպես...

— Ցավերնիս հայտնելու ենք, որ բարեխնամ կառավարությունը իմանա և հարցունե Վանա կուսակալին, թե ի՞նչ կբնե ան տեղը։ Երե ասկից առաջ ունենայինք խոսելու հիմակվան ազատությունը, զոր Սահմանադրությունը շնորհեց մեզի, այս հարստահարությունները շատոնց կը վերնային։

— Այո՛, բայց և այնպես... ի՞նչ հարկ կա... ըսե՛ ինձի, երե Վանեն չեպար՝ ի՞նչ եղան ուրեմն ֆեսդ ու ոաքի ամաններդ։

— Երեկ իրիկուն մեծ ընկերության մը մեջ վիսք² խաղացի, բարեկա՛մ։

— Հասկցա, ազնվական չերքեզներու հանդիպեր ես։

— Այո՛, մնաք բարով։

— Երթաք բարով, չորեքշաբթի կսպասեմ։

— Կուգամ։

ԽԻԿԱՐԻՆ ԵՐԱԶԸ

— Բարի՛ եկար, հայր հիկար։

— Բարո՛վ տեսանք, ինձի աթոռ մը տուր, գեշություն եկավ վրաս... պիտի մարիմ...

— Պիտի մարի՞ս... մարելու ի՞նչ կա, խելքդ գլուխդ բեր, բաղնիքի մեջ չենք...

— Հիմա մարելու համար ելնելու ջուրերը երթալու չէ ա՛, հոս ալ կրնամ մարիլ... լիմոն բերե՛ք։

— Բայց ինչո՞ւ պիտի մարիք...

— Խաղաղության հաստատ մնալուն համար պիտի մարիմ, որովհետև քառասուն օր է ծոմ կը բռնեմ կոր և խաղաղություն չունիմ, շո՛ւտ բրեք, լիմոնը։

— Վարդապե՞տ պիտի ըլլայիր, որ քառասուն օր ծոմ բռներ ես։

— Ստակ մը չմնաց վրաս։

— Պաշի պոզուխներո՞ւն հանդիպեցար։

— Այո՛, առանց գործի մնացի. անգործութիւնը անանկ պաշի պոզուխ մ'է, որ մարդուս վրա բան չթողուր. լմնոնը առ՛ր։

— Ինչո՞ւ անգործ մնացիր։

— Անոր համար, որ շիտակ լուր բերողներուն ստակ տվող չկա. օրը հարյուր սուտ կելլա կոր։

— Կերակուր բերեք Խիկարին։

— Շնորհակալ եմ, ասաված զիս Թատրոնեն չզատաւ։

— Խոսե՛ տեսնենք, երեք ամիս ի՞նչ ըրիր։

— Հիսուն օր քնացա, քառասուն օր ալ ասդին անդին պտտեցա։

— Քունդ պարա՞պ անցուցիր։

— Չէ, քունիս մեջ բավական բաներ տեսա, շատ անգամ ալ քեզի հետ տեսնվեցա, քուկին միտդդ չգա՞ր կոր աշտարակին վրա խոսելնիս։

— Չէ։

— Կեցի՛ր, համառոտիվ պատմեմ ուրեմն։

Գիշեր մը ժամը երեք ու կեսին միջոցները Թուխհանեին՝ առջև ձի մը հեծա և սկսա վազել դեպի երկինք. ասաված բարին կատարե։

— Այուրիճին ալ եահեն կվազե՞ր կոր։

— Մինչև որ ստակը չառնեն նե՝ անոնք ձիուն պոչեն կը բաժնվի՞ն։

Բարձրանալով բարձրացա և երկնքին երեսը գտնվող գիսավոր աստղի մը պոչեն բռնեցի. ասաված բարին կատարե։ Այս միջոցին հյուսիսը սկսավ աստակաշունչ փչել. ես ալ գիսավորին պոչին փաթթված սկսա օդին մեջ տարուբերիլ հյուսիսեն դեպի արևմուտք, արևմուտքեն դեպի հյուսիս։ Հյուսիսային կողմը նվագածուին մեկը առջևը եորա մը առած, վրան նայելով խաղ մը կը կանչեր. արևմտյան կողմն ալ երկու երեք հոգի նստած՝ օբերա կերգնեին։ Էհ, կըսեի մարթովս, դուք խաղ կանչեցեք, ես ասանկ օդի մեջ պարեմ։ Այս խոսքս լմնցնելու չմնաց, այդ երեք հոգիներեն մեկը ձեռքը լուսրոճկի վրձին մը բռնած՝ եկավ ասդիի մարդուն առջևի եորային վրա քսելով՝ ավրեց զայն։ Ես ավրվելուն պես՝ գիսավորին պոչը բրթալ և ես ալ ինքզինքս աշտարակ իմը վրա տեսա. ասաված բարին կատարե։ Բնական է, որ աշտարակի վրա մնալն ավելի քիչ վախ կուտա մարդուս՝ քան օդի մեջ տարուբերիլը. ուստի սիրտս քիչ մը հանգստացավ։ Աշտարակեն վար նայեցա, որ ամեն տղեն շատ մը գործավորներ իրարու հետ կը խոսեին, առանց իրարու խոսք հասկնալու. այս տեսածիս պես՝ ըսի մարթովս, ընդհանուր ժողով գումարվեր է հոս, սահմանադրության վերաքննության վրա վիճաբանելու համար. սակայն, կըսեի, օտարականներն ի՞նչ գործ ունին այս ժողովին մեջ։

— Այդ օտարականներն ի՞նչ գործ ունին եղեր հոն։

— Այդ կետը հասկնալու վրա էի, երբ զքեզ տեսա և ուրախութենես արթնցա։

— Քու արթննալեդ ետքը, օտարականներն հոն մնացի՞ն, կըսես։

— Չեմ կարծեր, իմ արթննալես ետքը ամենն ալ ցրված ըլլալու են։

— Ինչե՞ն գիտես։

— Անկից գիտեմ, որ հրեային մեկը խոսք կուզեմ, խոսք կուզեմ ըսելով՝ արյուն քրտինքի մեջ մտավ և իրեն ոչ թե միայն խոսք չտրվեցավ, այլ ի կարգ հրավիրվեցավ սա հայտարարությամբ, որ եթե անգամ մ'ալ խոսք ուզե՝ պաշտոնեն կիյնա։

— Ակռաներդ սեմելով չէի՞ր կրնար քիչ մ'ալ քնանալ և սա բազմության ինչ ըրածն աղեկ մը հասկնալ։

— Թող կուտա՞ն մարդուս, որ ուզածին չափ երազե։

— Հիսուն օրվան մեջ ուրիշ երազ չտեսա՞ր։

— Շատ երազ տեսա. ամենն ալ մեկ օրվան մեջ պատմել կըլլա՞. մնացածներն ալ մեկիկ մեկիկ կը պատմեմ։

— Գալ շաբթու կսպասեմ։

— Շատ աղեկ։

ԽԻԿԱՐՆ ԿՐՈՆԱՎՈՐ

— Վերջապես, հայր Խիկար, ըսածդ կատարեցիր ու կրոնավոր եղար։

— Ի՞նչ ընեի, ուրիշ ճամբա չկար. ինձի սրկե սուրճ մը ապսպրե՛։

— Շատ աղեկ, ի՞նչպես եք, նայինք։

— Փառք աստուծո, սա ծխախոտդ տուր։

— Հրամմեցե՛ք, ազգային ի՞նչ լուր ունիս նայինք։

— Ի՞նչուս պետք իմին ազգային լուր, սա կրակը տո՛ւր։

— Հրամմեցե՛ք, հա՛յր, ի՞նչպես ժամանակ կանցունեք կոր, նայինք։

— Ի՞նչպես պիտի ըլլա, վարդապետ մը ի՞նչպես կյանք կրնա անցունել, ծանոթներուս տունը կերթամ, կերակուրս բարեկամներուս տունը կուտեմ, ցերեկները կը քնանամ, գիշերները կը քնանամ... սա տեղ ճաշարան կա նե՝ ինձի կերակուր ապսպրեիք։

— Գլխուս վրա. տղա՛, դնա՛ վարպետին ըսե, որ վարդապետին կերակուր բերե։ Թաղին վարժարանը ի՞նչպես կերթա կոր։

— Իրավ որ հարցուցած չունիմ, հարցունելու ժամանակ ալ չունիմ։ Սա ծխախոտդ տալիր... սա անցնողները ո՞վ են։

— Չեմ ճանչնար։

— Շնորհալի ընտանիքի մը կը նմանին կոր, տղան ալ ի՛նչ սիրուն է։

— Հրամմեցե՛ք, հա՛յր, կերակուրը բերի։

— Ծո տղա՛, աս խորովածին քանի՞. դուրուշ կառնեք։

— Չորս դուրուշ, հա՛յր։

— Գնա՛, թշվառական, վարդապետներուն համար չէ ա՛, ես ստակ մը չեմ ուզեր, վաղը հայրդ մեռնելու ըլլա նե՝ կը թաղեմ, ես ալ ան ատեն ստակ չեմ ուզեր։

— Ի՞նչ կըսեք, վարդապե՛տ։

— Գործդ գնա՛, ես գիտեմ ըսածս, սըկե շիշ մը գինի բեր։

— Շատ աղեկ, կը բերեմ։

— Հայր Խիկար, չըսե՞ք, աղգային գործերուն վրայոք ի՞նչ կարծիք ունիք։

— Մոռցանք ըսելու տղուն, որ քիչ մը բիլավ բերե։

— Կըսենք. ազգային գործերն ի՞նչպես կերթան կոր։

— Բիլավն ալ ցերեկ ատեն ծանր չնստիր մի յա՞. մաքարոնին ավելի աղեկ է կարծեմ. բժիշկներն ալ խրատ կուտան, որ մաքարոնի ուտենք։

— Ուզածդ բերել կուտանք։ Երեսփոխանական ժողովին կերթա՞ք երբեմն։

— Ծո տղա՛, լաքերթայով գինին ի՛նչ աղվոր կերթա կոր, գիտե՞ս, անցյալ գիշեր Հայիմեն առի կես օխա, սակայն պատվական բան էր։

— Ա՛յո՛, աղեկ կուտվի. Կրոն. ժողովն՝ ի՞նչ ջուրի վրա է։

— Սակայն հեռը քիչ մ՛ալ սոխ ըլլալու է։

— Եկա, հա՛յր, ուրիշ բան մ՛ալ կուզե՞ք,

— Է՛հ, քիչ մը էքմեք քատայիֆի ըլլա նե՝ դեշ չըլլար։

— Հիմա կը բերեմ, վարդապետ։

— Իզմիրի խնդիրը ի՞նչ եղավ, հայր Խիկար։

— Նոր վերարկու մը կուզեմ կոր շինել տալ, սա խանը բարեկամներ ունիմ, երթամ նայիմ խումաշը ձրի կրնա՞մ փրցունել։

— Հայաստանի մեջ հարստահարութիւններ կըլլան կոր եղեր։

— Խումաշը ձրի առնեմ նե՝ կարողչեքը մեծ բան մը չէ։

— Լսեցի, որ վարդապետները Պոլիսեն պիտի հանեն ու վանքերը պիտի ղրկեն եղեր։

— Ի՞նչ ըսիր, վարդապետները Պոլիսեն պիտի հանեն վանքերը մի պիտի ղրկեն, ըլլալո՞ւ բան է աս, մեր ազգին մեջ տակավին վարդապետներու արժեքը ճանչցված չէ և ասոր համար է, որ ազգերնիս ետ ետ կերթա կոր...

խեղճ վարդապետները վանքերը երթան ի՞նչ ընեն... ո՞վ է աս որոշումը տվողը... ո՞ր ժողովրին մեջ խոսքը անցեր է։

— Իրավ որ չգիտեմ։

— Անանկ է նե՝ սա կերակուրս ուտեմ ու վաղելով պատրիարքարան իջնամ սա լուրը ստուգեմ, ասանկ բան մը իրավ կա նե՝ վարդապետությունը լմնցավ։ Մնաք բարով, մնաք բարո՛վ, կուգամ, տեր ընդ ձեզ։

— Ե՞րբ կուգաք նորեն, հայր։

— Գալ շաբթու։

ՆԱՄԱԿԱՆ

Օրիորդ։

Երեկ առաու գրասենյակս բացած չբացած տեղական թղթարերով նամակ մը առի ձեր կողմեն։

Նամակնիդ կարդացի։ Վիճակնիդ ցավալի է։

Կը հայտնեք, թե հայերեն, ֆրանսերեն և անգղիերեն լեզվաց հմուտ եք, թե պարկեշտ և աշխատասեր եք, թե աղվոր եք և թե դեմքի, մարի և սրտի այս-չափ գեղեցկութիւններով հանդերձ տունը մնացեր եք աղքատութեան պատ-ճառով։ Ասոնք հայտնելեն ետքը ինձմե խորհուրդ կը հարցնեք մտերմաբար, աղաչելով միանգամայն, որ այս գաղտնիքդ ուրիշի մը չբսեմ։

Գաղտնիք մը ուրիշի մը կըսվի՞, որ ինձի աղաչելու ելեր եք։ Ասկից պատ-իմ գաղտնապահութիւնս գրեթե առած դարձեր է. ինձի հաղորդված գաղտնիքը ոչ ոք գիտե. ես անդամ չեմ գիտեր, որովհետև կը մոռնամ։ Եթե երբեմն երբեմն գաղտնիքս գրիչիս կը հաղորդեմ, ան ալ մխիթարական հիշողութիւնս սրե-լու համար է։

Սրտերնիդ հանգիստ բռնեցեք. հայերեն, ֆրանսերեն և անգղիերեն դիտ-նալնիդ, պարկեշտ, աշխատասեր և աղվոր ըլլանիդ մեկու մը չեմ ըսեր։

Բայց, օրիորդ, դուք ինձի գաղտնիք մը հաղորդած չեք արդեն. դուք այդ նամակովնիդ նախ լեզվագիտութիւննիդ և բարի հատկութիւններնիդ հայտներ եք։ Եթե ասոնց համար խորհուրդ կը հարցնեք՝ կը հայտնեմ ձեզի, որ այդ լեզուները սորվելնուդ շատ աղեկ եք ըրեր։ Երկրորդ՝ պարկեշտ և աշխատասեր ըլլալնիդ հայտներ եք։ Եթե ասոր համար խորհուրդ կը հարցնեք՝ կը հայտ-նեմ, որ այդ ընթացքնիդ չփոխեք։ Երրորդ՝ աղվոր ըլլալնիդ հայտներ եք. և աս ալ գաղտնիք մը չէ, որովհետև աղվորութիւննիդ ամեն մարդ կը տեսնե։ Չորրորդ՝ տունը մնալնիդ կհայտնեք։ Եթե ասոր համար խորհուրդ կը հարց-նեք՝ խորհուրդ կուտամ ձեզի, որ երբեմն երբեմն կրնաք ազգականներնուդ տունը երթալ, և աս ալ գաղտնիք մը չէ, որովհետև ամեն մարդ ազատ է իր ազգականին տունը երթալ դալ։ Չգիտեմ, օրիորդ, թե ինչո՞ւ ձեր միտքը բացե-

ի բաց չեք հայտներ և կուզեք որ մարդարեութեան պաշտոնով ժամերս վատ-նեմ։ Կարծեմ, օրիորդ, դուք ըսել կուզեք ինչ որ չեք կրնար ըսել. և ավելի ճիշտը, լսել կուզեք ինչ որ չեք կրնար ըսել։

Կարծեմ ըսի, և կարծելու իրավունք ունիմ, վասնզի երբ պարոն մը ներկայանա ինձ և իր բարի վարք ունենալը, գործունյա և լեզվագետ ըլլալը հայտնելեն ետքը ինձմե խորհուրդ հարցունե՝ կը հասկնամ, որ գործ մը կը փնտռե, բայց երբ այս պարոնը օրիորդ մը ըլլա՝ կը հասկնամ որ ամուսին մը կը փնտռե։ Արդյոք ձեր չգտածն ալ ա՞ս է, օրիորդ։

Առանց ձեր այսչին սպասելու կը պատասխանեմ, որ այդ հանձնարարու-թյունը ամուսնութեան միջնորդուհյաց ընեիք նե՝ ավելի աղեկ կըլլար. բայց կարծեմ անոնց դիմած ըլլալու եք և ձեռնունայն դառնալեն ետքը վերջին փորձ մ'ալ ընելու համար լրագրի կը դիմեք։

Ի՞նչ խորհուրդ տամ ձեզի, օրիորդ, մանավանդ թե դուք խորհուրդ ալ չեք ուզեր, ամուսին կուզեք։

Ծանր է ձեր պահանջը, օրիորդ. դարուս երիտասարդները, ֆրանսերեն և անգղիերեն դիտնալնուն համար, ֆրանսերենի և անգղիերենի պետք չունին։ Դուք, օրիորդ, անոնց ունեցածը ունիք, ի՞նչ կելլեն ատկից։ Հիմակվան երի-տասարդները ամեն բան ունին, միայն սա՛կ չունին. եկու տես որ անոնց չունեցածը դուք ալ չունիք։ Առանց ստակ ունենալու ամուսին մը առնելու ելնելը՝ առանց ստակի շուկաներու մեջ պատելով լաթ առնելու ելնել կը նմանի։ Ամուսնութիւնը ասա՞նկ ըլլալու էր, պիտի ըսեք հարկավ. բայց ո՞վ կըսե թե ասանկ ըլլալու էր. ասանկ եղա՛ծ է կըսենք կոր մենք։

Եվ ո՞վ է ասոր պատճառը, օրիորդ. գիտե՞ք, ասոր պատճառը դուք եք։ Ինքզինքնիդ այնչափ պճնասիրութեան տվիք, որ բոլոր երիտասարդները վա-խերնուն ետ քաշվեր են, ամուսնութիւն բառը լսելնուն պես դող կելլեն ու կը հիվընդնան կոր։ Միայն կարգվելու վախով կը հիվընդնան կոր նե՝ ըսել է որ կարգվելնուն պես պիտի մեռնին։ Ինքզինքնիդ անչափ նորաձևութեան տվիք, որ նոր բան մը տեսնելնուդ պես հինը կը ձգեք ու նորը առնել կուզեք կոր և թե որ ձեր ուզածը չառնվի՝ հիվանդ կըլլաք կոր։ Չկարծեք որ սուտ կըսեմ կոր։ Առջի դիշեր բարեկամներես մեկուն հետ տուն մը այցելութեան գացի։ Տարիքը քսանի և քառասունի մեջ կորսված տիկին մը վերմակը գլուխը քաշեր բազմոցին վրա երկնցեր էր։ Հիվանդութիւնը հարցուցի նե՝ պատաս-խան տվին և ըսին, որ մազերը կը ցավին։ Էհ, ըսի, անոր դեղը բան մը չէ։ Ի՞նչ է, ըսին։ Մազերը կարելու է, ըսի։ Դեռ այս խոսքը բերանս էր, բժիշկը ներս մտավ, հիվանդին քովը դնաց, երակները քննեց, և քանի մը վայրկյան խոր-հելեն ետքը ապսպրեց, որ նոր ելած **խափելոնեւրեն** *հատ մը առնեն տաքցու-նեն և հիվանդին գլուխը դնեն։*

Այս դեղը լսելուս պես զարմացա մնացի, բայց զարմանքս շուտ մը խընդալու փոխվեցավ, երբ լսեցի որ հիվանդ տիկինը քանի մը շարաթե ի վեր նոր ծափելո կուզե եղեր։

Քաշվելու բա՞ն է աս. դիտցեք, օրիորդ, ասկից վերջը կարգվելու ելնող երիտասարդները ոչ թե միայն ստակ պիտի ուզեն, այլ ամուսնութենեն վերջը հիվընդցող տիկնանց բժշկին ծախսը ալ նշանառուքի օրը պիտի որոշեն. որովհետև առանց այս միջոցի, կարգվելնեղ հարը ամեն օր հիվանդ պիտի ըլլար։

Ներեցեք, օրիորդ, այսչափ համարձակորեն խոսելուս համար, դուք դիտցածնիդ չեք խոսիր նե՝ ես խոսածս դիտեմ։ Այս խոսքերը քեզի համար չեմ ըներ կոր, այլ բոլոր աղջիկներուն համար, որոնց մեջ հարկավ բացառութիյուններ կան և դուք ալ այդ բացառութիյանց առաջինն ըլլալու պատիվն ունիր արդեն ձեր պարզասիրութիյամբը։

Նամակս կը վերջացնեմ, օրիորդ, և կսպասեմ, որ քիչ ժամանակեն քեզի պես դեշ բնավորութիյուն, մոլութիյուն և ստակ չունեցող երիտասարդի մը հետ ամուսնանալով համեստ ամուսնո մը տիկին ըլլալնեդ եարը, պարկեշտ զավակաց ալ մայր ըլլալու երջանկութիյունը ունենաք։

Հաճեցեք, օրիորդ, իմ սիրտ ողջույններս մատուցանել ձեր ապառնի զավակաց, որով մնամ անոնց բարեկեցութիյանը ազոթող

Մեղու

Պարոն։

Իրավցընե թեթև ես եղեր դուն։ Ուրիշները կըսեին նե՝ ես չէի հավատար. Հիմա ես կըսեմ նե՝ թերևս ուրիշները չհավատան. բայց դուն հավատա, որ թեթև ես։

Նամակդ կարդացի նե՝ զարմացա մնացի. ես քեզ ազա կը կարծեի և դուն հայր ես եղեր։

Եթետ կանոնե կարգված ըլլալուդ վրա զղջացեր՝ որոշեր ես ինքզինդդ ծովը նետել և ինձի ալ կաղաչես, որ դամբանական ճառ մը կարդամ։

Ինքզինդդ ծովը նետելու ըլլաս նե՝ ո՞ւր կարգված կըլլաս։ Ո՞վ ավավ քեզի այս խրատը։

Կաղաչես որ դամբանական մը կարդամ. ես դամբանական կրնա՞մ կարդալ, և ո՞ւր պիտի կարդամ այդ դամբանականը, քանի որ ծովը նետվիլ որոշել ես, ծովի՞ն վրա դամ կարդամ։

Բայց ի՞նչ հարկ կա դամբանականի. ի՞նչ հարկ կա մեռնելու։

Անձնական ծախսդ անչափ շատ է եղեր, որ ոչ թե միայն ընտանյացդ՝ այլ

նաև քու պետքդ հոգալու անկարող ես եղեր։ Քաղաքավարութիյունը կպահանջե եղեր, որ երկու զույգ ձեռնոց ունենաս ամեն օրվա համար և զույգ մալ հատկապես կիրակի օրերուն համար, և դուն կիրակի օրվանը չունիս եղեր և աս մեծ ցավ է եղեր քեզի համար։

Ինչ եղեր է. կիրակի օրը տուներնուդ մարդ եկավ ձեռքդ նայեցավ տե այսօր կիրակի չէ՞ ըսավ, ամեն մարդ իր կիրակին քուկին ձեռնոցե՞դ պիտի հասկնա։ Կիրակի օրվան ձեռնոց չունիս նե՝ կիրակի մի՛ բաներ։

Բայց բոլոր ցավդ աս չէ եղեր, կիրակի օրվան համար պորիճ կալոշ ալ չունիս եղեր. կոշկակարիդ պարտք ունենալուդ համար կոշկակարդ չընշիներ եղեր, ուրիշին ալ շինել տալու համար ստակ չունենալուդ անցյալ կիրակի կանուխ եկեղեցին ես գացեր, որ զույգ մը պորիճ կալոշ գողնաս, բայց ժամկոչը հոն ըլլալուն չես կրցեր եղեր գողնալ։

Նայե, ասոր ըսելիք չունիմ. ես ալ բեզի հետ եմ, կիրակի օրվան հատուկ պորիճ կալոշ չունենալը մեծ դժբախտութիյուն մ'է, դիմանալու բան չէ. եթե ուրիշ մը ըլլար քու տեղդ՝ այդ ցավեն կը մեռներ։ Դուն աղեկ որ կրցեր ես դիմանալ։ Ինչ ընենք, բարեկամ, դժբախտութիյուն, վիշտ, ցավ ամենը մեզի համար է, համբերե, քիչ ժամանակեն ցավերդ կանցնին, ուրիշ օր մը եկեղեցի կերթաս և զույգ մը պորիճ կալոշ կը գողնաս։ Ժամկոչը հոն չգտնվի նե՝ զույգ մ'ալ ինձի համար գողցիր. բայց օր մը առաջ եկուր ոտքիս չափը առ։

Բացի ասկից կիրակի օրվան համար փողպատ ալ չունիս եղեր, և այս ամենը կսպասեն եղեր զբեղ երթալ ծովը նետվիլ։

Պարոն, հրամանքդ կիրակի օրվան համար ալ պատ երես մը ունի՞ս, չէ նե կիրակի օրերն ալ այս երեսդ կը դործածես։

Չե՞ս ամչնար դուն, պարոն, չե՞ս խպնիր դուն, որ ասանկ ոչինչ բաներու համար աունը տակնուվրա կընես, խեղճ տիկինդ կը չարչարես, չե՞ս ամըչնար դուն, երբ զավկիդ տալիք ապրուստդ ոտքիդ կուտաս, զավկիդ դաստիարակութիյանը համար տալիք ստակդ ոտքերուդ և ձեռքերուդ կուտաս։

Ատոնք ամենը մեկդի ընենք, ամեն դիշեր ուրիշեն փոխ առնելով թատրոն երթալու ես եղեր, թատրոն չերթաս նե՝ ստակ չունի կըսեն եղեր, օթյակ չնստիս նե՝ քիչ ստակ ունի կըսեն եղեր, Թող ըսե՛ն, դուն քու վիճակդ բարվոքելու չնայի՞ս. անոր ատոր ըսելուն կամ ըսելիքին ականջ կախելու ըլլաս նե՝ վերջը ո՞ւր կերթաս։

Եթե ամենուն ըսածին ականջ կախել հարկ ըլլա, կիրակի օրվան համար ալ զատ անուն մը դործածել պետք պիտի ըլլա։

Ընդունեցեք իմ անկեղծ հարգանքներս։

Որով մնամ իմ ամենօրվան անունովս

Մեղու

Պարոն։

Նամակդ հիմա առի, կարդացի։

Հավատա որ կյանքիս մեջ բնավ երբեք չլալու համար ուխտ բրած էի, քու պատճառավդ ուխտազանց դառնվեցա։ Քաշածներդ կարդալով ու քաշելիքներդ դուշակելով արտասվաց հեղեղներ թափեցի։

Քանի մը ամիսն ի վեր կինդ ուրիշի մը հետ սիրահարություն ընել սկսեր է եղեր, քանի մը ամիսն ի վեր ոչ կուտես, ոչ կը խմես, ոչ կը պառկիս, ոչ կելնես, ոչ քուն, ոչ ալ արթուն ես եղեր, ինչ ըլլալդ դուն ալ չես գիտեր եղեր. այս վիճակեն խալսելու համար ինձի խրատ կը հարցունես։

Ի՞նչ խրատ տամ քեզի, ի՞նչ դեղ տամ քեզի, դեշ հիվանդութենեն բռնված ես, աղա՛։

Բայց որովհետև ինձի դիմեր ես, բոլորովին պարապ չդարձնելու համար կը խրատեմ քեզի, որ դուն ալ ուրիշ մը սիրես. այսինքն կնկանդ վարքը ուղղելու համար ուրիշի մը վարքն ավրես, և կարծեմ քու մտքեդ անցածն ալ աս է։

Ինձի համար բարի մարդու մը կը նմանիս ըսեր ես, այս խոսքը չեմ ընդունիր. որովհետև արդեն բարի մարդ մ'եմ և նմանելու հարկ չունիմ, ձեր ինձի ըրած խոսքը կը նմանի ըսել. այս բարի մարդը բարի մարդու կը նմանի կամ այս թուղթը թուղթի կը նմանի։ Արդ, քանի որ ես ազեկ գիտեմ բարի մարդ ըլլալս, կը փափաքիմ, որ ընելիքներուս չը բարկանաս։

Պարոն, կուզե՞ս որ կինդ ուրիշ մեկը չսիրե, սիրե՛ կինդ։ Կրնա՞ս ըսել, որ ուրիշ կնկան մը ծուռ աչքով նայած չունիս, կրնա՞ս ըսել, որ ընկերության մը մեջ աչքերդ ժամերով օրիորդի մը վրա տնկած չես։ Եթե ասանկ չես կրնար ըսել, ի՞նչ իրար կանցնիս։ Ի՞նչ կը ծեծկվիս. ի՞նչ կը փեթռըվիս։ Ի՞նչ կը հառաչես, ի՞նչ կուլաս, կողբաս...

Միտքս սխալ չհասկցվի, այս խոսքերն ընելով ըսել չեմ ուզեր, թե կինդ ուրիշ մը սիրելու իրավունք ունի, քավ լիցի, չըլլա որ կինդ այս խոսքերս լսելով, քաջալերվի ու քանի մը հոգի ավելի սիրե, և ես ալ, վիշտերդ թեթևցնել ուզած առենս՝ զանոնք ավելցնելու պատճառ ըլլամ. ըսել չեմ ուզեր թե կինդ քեզի պատիժ մը տալու համար ոճիր մը գործե և իր ոճիրն քեզի պատիժ անօրինե, բայց, ըսե՛ ինձի, ամուսնության պայմանագրության մեջ կա՞ հոդված մը, որ տրամադրե, թե դուն ուրիշ կնկան մը վրա աչք տնկած ժամանակդ կինդ ուրիշ մը չսիրե։

Թերևս ըսես ինձի, թե դուն ուրիշին աչք չունիս, թե կնկանդ համար կը խեղճանաս կոր, բայց ինքն ալ ուրիշի մը համար կը խեղճանա կոր։

Ազեկ, կնկանդ ուրիշի մը համար խեղճանալուն համար պետք է որ դո՞ւն ալ խեղճանաս. խելքդ պլուխդ ժողվե, ամուսնությունը հիմարանոց չէ։ Ամուսնանալը հիմարանոցի դռնեն իմաստության սենյակը մտնել ըսել է. մտած ժամանակդ հիմարություն մը ըրեր ես, ներս եղած ժամանակդ պետք է որ խոհեմություն ընես։ Երբեք չվայլեր քեզի, որ մտած ելած տունդ, նստած ելած տեղդ, փողոցի մեջ, սրճարաններու մեջ կինդ բամբասես։ Եթե իր անհավատարմությունը ստուգած ես՝ կը խրատեմ քեզ, որ բերանդ ժողվես և բաժնվելու համար պետք եղած ատյանը դիմես։ Աս է իմ խրատս։

Թերևս ըսես թե՝ ես բաժնվիլ չեմ ուզեր, բայց կը ցավիմ, որ ինքը բուռն սիրով սիրելես ետքը ինքը ինչո՞ւ դիս չսիրեր կոր։

Ես ալ կը հարցնեմ, որ անիկա քեզի չսիրելեն ետքը, դուն ինչո՞ւ զինքը կը սիրես կոր։ Ի՞նչ պիտի պատասխանես ասոր։ Ոչինչ։ Անանկ է նե՝ ի՞նչ կուզես որ պատասխանեմ քեզի։ Եթե մեր ամեն սիրածը մեզի սիրելու ըլլար, այսօր ամենքնիս ալ մեյ մեկ թագավոր, մեյմեկ սուլթաններ կըլլայինք։

Մեյմեկ սուլթաններ կըլլայինք, բայց երջանիկ չէինք կրնար ըլլալ անոնց պես, որովհետև սիրո անուշությունը մեզի սիրածը մեր չսիրելուն և մեզի սիրողը մեր չսիրելուն մեջն է։ Եթե մարդս ուզածը կարենար սիրել ու անկե սիրվիլ, եթե կնիկ մը ուզածը սիրեր և ուզածեն կարենար սիրվիլ, մեկ մարդ մը բյուրավոր կնիկներ պիտի սիրեր, ինչպես նաև կնիկ մը բյուրավոր մարդիկ պիտի սիրեր. այն ատեն նախանձը պիտի հեռանար, սերը պիտի մարեր և անհամ բան մը պիտի ըլլար։

Ահավասիկ, բարեկամ, պարապ տեղը մի՛ կոծեր, ըսելով, թե իմ սիրածս դիս ինչո՞ւ չի սիրեր. ասանկ խոսք մը պարզապես խեղճություն է, և ես խեղճություն մտիկ ընելու ժամանակ չունիմ։ Իմ ըսելիքս վերը ըսի։ Դուք այնպես կարծեր եք, որ իրարու հետ ամուսնանալով երջանիկ պիտի ըլլաք, ես ալ այնպես կը կարծեմ, որ իրարմե բաժնվելով երջանիկ պիտի ըլլաք։ Չեմ ուզեր ավելի խոսիլ. չեմ ուզեր ավելի մտիկ ընել զքեզ, ուզածդ ազատ ես ընելու։

Հաճեցեք ընդունիլ իմ խրատներս,

Որով մնամ

Մեղու

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՔ ՄԵՂՈՒԻ

Առանկ պլուխս ծռած առջևս նայելով քալելուս մի նայիր, ես մարդը օձի պես կը խայթեմ, հերիք խոսեցար, հերիք լռեցի։

Չե՞ս խպնիր դուն, կնիկ. տուն չունի՞ս դուն, որ ամեն օր առտվընե մինչև

իրիկուն փողոցներուն մեջ կը պատիս, մեկ տունեն կելնես մյուսը կը մտնես. մտած տունիդ մեջ տեսածներդ ելած տունիդ մեջ կը բամբասես ու ելած տունիդ մեջ լսածներդ մտնելիք տունիդ մեջ կը բամբասես։ Տունդ գործ չունի՞ս դուն, քու գործդ աս ու ան բամբասե՞լ է։

Ինչո՞ւդ պետք քուկին, տիկին, թե այսինչ տիկինը երեսը ճերմակ կը քսե եղեր, թե այնինչ օրիորդը կարմիր կը քսե եղեր, թե այնինչ երիտասարդը մազախիլ կը գործածե եղեր, թե այնինչ օրիորդը պատուհանը նստած դիմացի երիտասարդին հետ սիրահարություն կունե եղեր, թե այնինչ մարդը թագական չեղած ատակ մը չունի և հիմա ունի եղեր, ինչո՞ւդ պետք քուկին ասոնք, տիկին։ Մեղո՞ւ ես դուն։

Լսածիս նայելով, տիկին, դուն անցյալները ընտանիքի մը մեջ դիս ալ բամբասեր ես, պաղ զավկին մեկն ալ ան է ըսեր ես։

Կրնա՞ս, տիկին, ապացուցանել իմ պաղ զավակ ըլլալս։ Եթե չես կրնար, ե՛ս առ այդ խոսքդ. դիս ուր բամբասեցիր նե՝ հոն գնա, և դիս բամբասած տանդ քանի հոգի կային նե՝ ամենն ալ հոն բերել տուր և անոնց առջեր ըսե, որ տաք զավկին մեկն ալ ան է։ Պատիվ կը պահանջեմ, ինձի պաղ զավակ ըսողը պարտավոր է վարձատրություն մը ընել ինձ, որովհետև Օրագիր անգամ չընդունիր ատանկ խոսք մը առանց վարձատրության։

Ուրիշ շատ խոսքեր ալ ըրեր ես իմ վրայոքս։ Երեսս նայելու ըլլալս նե՛ եղեր՝ գործդ հարյուր տարի չհաջողիր եղեր։ Հարյուր տարիեն վե՛րջը նայե՛ երեսս, տիկին. կուզես նե՝ ամենեի՛ն մի նայիր, որ գործերդ ձախող չերթան։ Չեմ ուզեր, տիկին, որ իմ երեսս ուրիշի ձախորդության պատճառ ըլլա, չեմ ուզեր, որ իմ երեսես ուրիշները չարիք տեսնեն. թող իմ երեսս իմ պատիժս ըլլա։

Հիմակվան երիտասարդներուն շատերուն պես ազնիվ հագված չեմ եղեր, հարգական ձևերուն ու շարժումներուն տեղյակ չեմ եղեր, փայտի պես կը բալեմ, կոզովի պես կը նստիմ եղեր։ Ո՜ւհ...

Ինչ նմանություններ են ասոնք, տիկին, ճարտասանություն ո՞ւր սորվեցար, տիկին։

Ինչ ընելու էի քեզի, տիկին, որ աչքիդ տաք երեսամ, դեռևեն բարեկրթո՞ւ էի, առջեդ ծունկ չտրելով հարգա՞նք մատուցանելու էի՝ տաք զավակներուն կարգը անցնելու համար։

Կուզե՞ս որ բերանս բանամ... Կուզե՞ս որ բերանդ գոցեմ... բայց ոչ, կը ցավիմ վրադ և այս անգամ կը ներեմ ըրածներուդ, բայց եթե անգամ մ'ալ լսեմ, որ ան ու աս բամբասելե ետ չես կեցեր, ան ատեն բերանս կը բանամ և իմ տաք զավակ ըլլալս կապացուցանեմ։

Առայժմ ընդունե, տիկին, պաղ զավակին պաղ հարգանքները։

Մեղու

ՄԵՂՈՒԻ ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիկին։

Երդում ըրած էի, որ կանանց հետ չխոսիմ. բարով խերով չընեի, որովհետև կնիկները համբերն իսկ խոսիլ կուտան։

Պատճառ եղար, որ ըրած երդումս մոռնամ, մեղքը ձիտդ ըլլա։

Ի՞նչ էր ինձի ըրած նամակդ, տիկի՛ն, ի՞նչ անեծքներ էին, որ թափեր էիր գլխուս, գետնին տակը անցնիմ եղեր, լեզուս չորնա եղեր, պապանձիմ եղեր, ձեռքերս կոտրտին եղեր. վիճաւոս վերնա եղեր, Բրամվեյի հչմին օդրամիշ ըլլամ եղեր, աչքդ չտեսնան եղեր (գիս), խուլ ըլլամ եղեր, մեռնելես ետքը՝ ոտքս քար մը կապած ծովը նետելու է եղեր, ապրած տեղես ուտելու հաց չգտնամ եղեր, ատրին անդին թափառական պտտիմ եղեր, կամուրջին վրա մուրամ եղեր, քունին դռնեդ հաց մուրալու եմ եղեր, ինչո՞ւ համար, տիկին, ինչո՞ւ, ի՞նչ ըրի ես քեզի, ինչո՞ւ գետնին տակը անցնիմ։

Բամբասեցի՞ քեզի, բնավ տուն չնստիլդ և առտվնե մինչև իրիկուն անոր ասոր տունը երթալդ էրկա՞նդ իմաց տվի. պոմին մը առնելու համար էրկանդ հորմեն մնացած քեհրիպարը ծախե՞լդ իմացուցի. դրացիդ տունեն պոչայի խոլիին գողնա՞լդ իմացուցի։

Ըսե՛, տիկին, ի՞նչ ըրի ես քեզի և ինչո՞ւ լեզուս չորնա. մյուս լրագիրներուն լեզուն չորնա, ինե՞ ի՞նչ կուզես։

Տիկին, այսչափ անեծք թափելեդ վերջը՝ կը հանդգնիս նաև ըսելու, որ եթե քաղվածքները՝ մեյ մ'ալ հրատարակելու ըլլամ, տանդ առջեեն անցած ատենս գլխուս վրա տաք ջուր պիտի թափես եղեր. թափե՛, տիկին, կուզես նե՝ կաղր մ'ալ սպասե նետեե, որ գլուխս լվացվի։

Ի՞նչ է հանցանքս, տիկին, որ բերանդ բացիր, ականջներդ գոցեցիր. պատվույս դպչելիք խել մը խոսքեր ըրեր ես. խրմպրլ եմ եղեր, բաշաներս չեմ կրնար կապել եղեր, գլուխս կախած կերթամ եղեր, ֆեսը գլխես դողնալու ըլլան նե՝ չեմ իմանար եղեր, բնավ կուսթո չունիմ եղեր, բանթալոնս լայն է եղեր, բալթոս երկար է եղեր, քրավաթ չվայլեր եղեր, քրավաթս մեջքս կապելու եմ եղեր, շապիկիս յախաները բովե բով չեն դար եղեր, մոտիսթրայի խանո՞ւթ կարծեցիր գիս, տիկին, ալ բավ է, բերանդ ժողվե. ամեն մարդ քունին մասխարադ չէ, և թե որ ընդհ. ժողովո մեջ ընեիր այս խոսքերը՝ կը տեսնեիր թե ինչպես կը բողոքեի։

Եվ որովհետև այսպես կը նախատես գիս, քաղվածքները ամեն թերթի մեջ պիտի դնեմ, ուզածիդ չափ պոռա։

Տիկին, ինձի պես երիտասարդի մը ասանկ անարդական խոսքեր ուղղելը

դիտե՞ս ինչ ըսել է, ամբողջ երիտասարդութիւնը վիրավորել ըսել է, ասկից ավելի չեմ խոսիր և կը խնդրեմ, որ ուրիշ անգամ չսիրեք դիս խոսելու։

Հաճեցեք, տիկի՛ն, ընդունիլ խորին զզվանացս հավաստիքը։

ՄԵՂՈՒ ԱՌ ՏԻԿԻՆ

Տիկին։

Ի՞նչ է աս... ի՞նչ պիտի ըլլա ասոր վերջը, ի՞նչ էր ասոր սկիզբը... Ամեն օր նամակներ կը դրկես ինձ իրարու վրա. ես կարդալեն ձանձրացա և դուն դրելե չձանձրացա՞ր տակավին...

Ի՞նչ ընեմ ես, էրիկդ նախանձոտ է եղեր, դուն շատ աղվոր ես եղեր և այս պատճառով ուսուներնուդ մեջ կոխիվը պակաս չէ եղեր։

Ի՞նչ կրնամ ընել ես, ի՞նչ կուզա ձեռքես, թող էրիկդ նախանձոտ չըլլար, դուն ալ շատ աղվոր չըլլայիր և ամեն դիշեր կոխիվ չընեիք...

Էրկանդ նախանձո՞տ ըլլալուն համար աղվոր ես, չէ նե աղվո՞ր ըլլալուդ համար էրիկդ նախանձոտ է։ Վերցուր պատճառը, կը վերնա նաև կոխիվը։

Լրագրույս մեջ էրկանդ վրայոք քանի մը խոսք ընելու եմ եղեր։ Անանկ է յա, ճիշտ ժամանակն է, ազգային կենսական խնդիրները մեկդի ձգենք և քու աղվորութիւնդ ու էրկանդ նախանձոտութեան վրա դրենք...

Ենթադրենք թե գրել հանձն առնեմ, բայց ի՞նչ գրեմ։

Ես քու պարկեշտութիւնդ վրա կասկած չունիմ, ինչպես նաև էրկանդ նախանձոտ բնավորութիւնը վրա. ի՞նչ ըսեմ էրկանդ, նախանձոտ մ'ըլլա՞ր ըսեմ. անոր նախանձոտ մ'ըլլար ըսելուս՝ քեզի աղվոր մ'ըլլար կըսեմ։ Աղվոր չըլլալդ քու ձե՞ռքդ է. նախանձոտ չըլլալը էրկանդ ձե՞ռքն է։

Լավ՞ բան է, տիկին, որ ամուսնութեան մեջ նախանձ չըլլա... կինը աղվոր ըլլա նե էրիկը նախանձոտ կըլլա, էրիկը աղվոր ըլլա նե՝ կնիկը նախանձոտ կըլլա, և դուն փառք տալու ես, որ նախանձոտ չես, աղվոր ես։

Մեկ ուրիշ մը երեսդ նայելուն պես էրիկդ կը բարկանա եղեր և այս պատճառավ թող չի տար եղեր, որ մեկուն տունը այցելութեան երթաս։ Անցյալ շաբթու դիշեր մը տուն մը հյուր գացեր եք եղեր, հոն շատ մը երիտասարդներ կան եղեր, քեզի ալ հրավիրեր են եղեր, որ բոլքա մը խաղաս հետերնին. էրիկդ թող չէ տվեր եղեր, դուն ալ տունը գացեր մինչև առաու լացեր ես եղեր, աչքերդ կաս-կարմիր են եղեր. նույն օրը կերակուր չես կերեր եղեր։

Կաղաչեմ, տիկին, դիս ալ մի՛ լացուներ, անանկ սրտաճմլիկ խոսքեր մ'ըներ, դյուրագրգռոց սիրտ մը ունիմ, ես ալ կսկսիմ հիմա լալ։

Հետևյալ օրը հայելին նայեր ես եղեր, և դեմքիդ գույնը բոլորովին փոխվեր է եղեր, աղվորութիւնդ գացեր է եղեր...

Աղեկ ա՛, էրիկդ նախանձոտ չըլլար ասկե վերջը։

Ուրիշ անգամներ քորսեդ նեղ կուգա եղեր. նույն օրը դրեր ես նե՝ լայն ակեր է եղեր և ասկից հասկցեր ես եղեր, որ նիհարցեր ես. նիհարնալդ հասկնալուդ պես դարձյալ լացեր ես եղեր, մազերդ փետտեր ես եղեր։

Աղեկ ա՛, մարդ չնայիր երեսդ, էրիկդ ալ չնախանձիր։

Ես քարե սիրտ մ'ունիմ եղեր և քու ցավերուդ դարման մ'ը ընել չեմ ուզեր եղեր։

Ա՛լ հիմա կը բարկանամ։ Տիկին, ի՞նչ կուզես որ ըսեմ անանկ կնկանը՝ որ բոլքա մը խաղալ չկրնալուն համար տուն երթա մինչև առաու լա, մազերը փետտե ու քորսեն լայն դա։ Տիկին, այդ խոսքերովդ ինքզինքդ մատնեցիր դուն. բոլքա չխաղալովդ ի՞նչ կորսնցուցիր, որ անչափ վնաս տվեր ես անձիդ։ Դուն խենթ մ'ես եղեր, տիկին, ներեցեք համարձակութեանս, էրիկդ իրավունք ունի եղեր նախանձոտ ըլլալու, և ես պիտի խրատեմ զինքը, որ ավելի նախանձոտ ըլլա։ Սրվոր նայե մեկ մը, բոլքա մը խաղալ չկրնալուն համար մազերը փետտեր է և առանց ամնչնալու ինձի ալ նամակ կը գրե, որ էրիկը հարվածեմ։

Փառք տուր աստուծո, որ էրիկդ բարի մարդ մ'է եղեր, համբերող մ'է եղեր, եթե ես ըլլայի էրկանդ տեղը, տիկին, շաբաթ մը հաց չէի տար քեզի, սենյակի մը մեջ կը բանտարկեի զքեզ, աղվոր մը կը ծեծեի և դուրս կը վռնտեի։ Սրվոր նայե մեկ մը, բոլքա մը չխաղալուն համար երթա մազերը փետտե։ Դուք, տիկին, ուրիշներուն բարի օրինակ ըլլալու տեղ, չար օրինակ կըլլաք, միշտ ձեզպեսներն են, որ տան մը խաղաղութիւնը կը խռովեն, ընտանիք մը ավերումբրա կընեն։ Սրվոր նայե մեկ մը, բոլքա մը չխաղալուն համար երթա մազերը փետտե։ Ըսե նայիմ, տիկին, ի՞նչ պիտի վաստկեիր բոլքա խաղալով, քանի մը անգամ պիտի պառնայիր. շատ աղեկ, տուն գացիր նե՝ առանձին չէի՞ր կրնար պառնալ, թող ինքնիրմեդ պառնայիր, ի՞նչ հարկ կար մազերդ փետտելու։ Սրվոր նայե մեկ մը, բոլքա մը չխաղալուն համար երթա մազերը փետտե...

Խելքդ գլուխդ ժողվե, տիկին, վարքդ ուղղե, էրկանդ ձեռքը պադ և մեկ մ'ալ աս նյութին վրայոք նամակ մի՛ գրեր ինձի։ Սրվոր նայե մեկ մը, բոլքա մը չխաղալուն համար երթա մազերը փետտե...

Բարեհաճեցեք ընդունիլ իմ խորին հարգանաց հավաստիքը։ Որով մնամ

Իմ բոլոր մազերովս

Մեղու

ՍԸԿԵ ՆԸԿԵ

— Ինչո՞ւ համար, կըսեր երեկ դասատու մը, մարդիկ ավելի իրենց տղայոց հագուստին համար ստակ կուտան, քան թե անոնց դաստիարակութեանը համար, քանի որ ուսմունքն հագուստեն ավելի պետք է։

— Վասնզի, պատասխանեց մեկը, չըպլագ Մըսթաֆայի պես պատիլն ամոթ է, բայց տգետ պատիլը ամոթ չե։

———

— Ի՞նչպես եք, Կարապետ աղա։

— Վիճակս գիտես... փառք աստուծո։

— Վիճակդ գիտեմ նե՝ աղեկ չես, ինչո՞ւ փառք աստուծո կըսես և զատված կը շողոքորթես։

———

— Քանի մը շաբաթե ի վեր ո՞ւր էիր, Կիրակոս աղա։

— Հիվանդ էի։

— Ի՞նչ ունեիր։

— Սրտիս վրա նեղութիւն մը, ստամոքսիս վրա ծանրութիւն մը, գլխուս վրա տաքութիւն մը կար։

— Բժիշկն եկավ ի՞նչ ըսավ։

— Բան մը չէ, փսխեցուցիչ դեղ մը տամ, ա՛ռ, բան մ՚ալ չմնար, ըսավ։

— Ջառի՞ր։

— Առի, բայց չփսխեցուց։

— Միմոսի մը առնեիր նե՝ իսկույն կը փսխեիր ու կը ննտնայիր։

— Ի՞նչ գիտնամ, անոր համար ալ ըսին, թե քոն կը բերե։

———

— Ղալաթիո[2] քահանաներեն մին, անցյալ շաբթու, դերձակի մը բանթալոն մը ապսպրած ըլլալով՝ առնելու կերթա։ Դերձակը անուշադրութեամբ մոռցած էր բանթալոնին գրպան շինել։

— Ասոր գրպանը ո՞ւր է, կը հարցունե քահանատը։

— Չշինեցի, կը պատասխանե դերձակը։

— Ինչո՞ւ։

— Պետք չունիս, ատոր համար։

— Ի՞նչպես պետք չունիմ։

— Որովհետև դուն ուրիշին գրպանները կը գործածես միշտ։

———

— Եղբայր, այս գրած աղերսագիրդ ալ չէ եղեր։

— Ինչո՞ւ։

— Ես քեզի ըսի, որ մարդը շողոքորթես, որովհետև իրմե մեծ ակնկալութիւն ունիմ, ան ալ շողոքորթվի նե՝ ուզածս կը կատարե։

— Շողոքորթեցիր ա՛։

— Ավելի շողոքորթելու է, անիկա շատ շողոքորթվիլ կուզե։

— Անանկ է նե՝ տղաս, գնա, Մասիսին խմբագրին դրել տուր այդ աղերսագիրդ։

———

— Աս ի՞նչ է, այսպես հագվեր սգվեր ես այսօր. փեսա՞ կըլլաս կոր։

— Չէ, ապրար, մարդուն մեկուն հայհոյեցի սրճարանի մը մեջ, ան ալ հիմա ինձի դեմ դատ է բացեր, զապթիե կերթամ կոր, հագվեցա, որ պատվավոր մարդ երևնամ։

— Աղեկ ա՛, մարդը քուկին հագուստներուդ դեմ դատ չէ բացեր ա՛։ Ավելի ադեկ չէ՞ր ըլլար, որ վրադ դլուխդ շտկելու տեղ, բերանդ շտկեիր։

———

Օրվան քաղաքավարութիւնը...

— Քուզում Մարտիրոս աղա։

— Ի՞նչ կա...

— Ճանըմ Մարտիրոս աղա...

— Ըսե՛։

— Ոտքդ պագնեմ, Մարտիրոս աղա...

— Ի՞նչ կուզես։

— Ականջդ մեռնիմ, Մարտիրոս աղա...

— Ըսե՞ս։

— Ի սեր աստուծո, Մարտիրոս աղա։

— Խենդեցա՞ր, ի՞նչ եղար, ի՞նչ կուզես։

— Ուզելիքս դուն հասկցիր, կամչնամ կոր ըսելու, թուզում Մարտիրոս աղա։

— Մի՛ քաշվիր, Համբարձում աղա, ըսե՛։

— Շատ պետք ունիմ, ինձի ոսկի մը տայիր։

— Քուզում Համբարձում աղա, ճանըմ Համբարձում աղա, ոտքդ պագնեմ, Համբարձում աղա, արևուդ մեռնիմ, Համբարձում աղա, ի սեր աստուծո, Համբարձում աղա, ըսելիքս դո՛ւն հասկցիր, կամչնամ կոր ըսելու, թուզում Համբարձում աղա, սաակ մը չունիմ։

— Քուզում Մարտիրոս աղա, աֆ կընես, գլխու ցավ տվինք։

— Քուզում Համբարձում աղա, բան մը չէ, դուք ալ աֆ կընեք։

Ջաֆ, չաֆ, չաֆ...

— Գրիգոր աղա, աս ի՞նչ է...

— Ի՞նչ կա։

— Ջնայի՞ս, չորս հինգ հատ պչուրո մը, թավլի մը, աթոռներ ու հայելիներ բերեր են մեղի։

— Տեր ողորմյա, դիշեր ատեն աս ի՞նչ պիտի ըլլա...; կեցիր նայինք, հարցուենք. (պատուհանեն) որի՞ն տունը կուզեք կոր։

— Գրիգոր աղային տունը աս չէ՞ մի։

— Աս է։

— Թորոս աղան այս գիշեր հոս միսաֆիրության դա պիտի տե՝ էշյաները կրել կուտա կոր։

— Էշյանե՞րը ինչու հոս կը ղրկե կոր...

— Ի՞նչ ընե հապա, դուն միսաֆիրության գացած ունիս տե՝ վերջեն տունդ էշյա գտած ունի՞ս մի, գողերը քեզի բա՞ն կը ձգեն, աղա։

— Աղջի՛կ, ինչո՞ւ համար նստեր, երկու ժամե ի վեր կուլաս։

— Ես չլամ, ո՞վ լա։

— Ի՞նչ եղավ։

— Ի՞նչ պիտի ըլլա, նոր ելած գլխարկներեն հատ մը առ բսի հորս, չառներ կոր։

— Նոր ելած գլխարկ ըսածդ ի՞նչպես բան է։

— Վրան թռչուն կա։

— Ադեկ ա՛, ֆանարիա մը ունինք, բանե, գլխարկիդ վրան դիր, լմնա երթա, բայց նայե՛, որ չփախցունես, կուզես նե՝ վանդակն ալ մեկտեղ դիր գլխուդ, որ չփախչի։

— Սիրելի էրիկս, այս գիշեր թատրոն երթա՞նք։

— Ի՞նչ ներկայացում կա եղեր։

— Որբեոսի դժոխք իջնալը[3]։

— Ըլլար։

— Ինչո՞ւ։

— Դժոխքին աստանաներն ընկերներս հոս է եղեր ըսելով՝ քեզ կառնեն կը տանին, ատոր համար։

ՀՅՈՒՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԶԳԵՍՏ

Նորություններու պես կարճատև բան չկա աշխարհիս վրա։

Մենք մահկանացուիս բավական տարիներ կապրինք, այս խեղճերը հապիվ կրնան ամիս մը ապրիլ։

Այս օրերս նորություն մ'ալ ծնած է, այն է՝ հյուր մը ընդունելու համար անմիջապես շրջազգեստը հանել, գիշերազգեստ հագնիլ և այնպես դիմավորել հյուրը։

Առենոք հյուրն երթալեն ետքը շրջազգեստը կը հանեին, գիշերազգեստը կը հագնեին։ Այսօր ատոր հակառակն է։ Վազը կրնա ըլլալ, որ տիկինները կամ օրիորդները հյուր մը տեսած ատեննին վազեն անկողին մտնեն, քանի մ'օր ետքն ալ թերևս հյուրերը գիշերազգեստով այցելություն ընելու սոխվին. ատոնց ամենն ալ հավանական են, բայց մենք թողունք ատոնք և ծնած նորության առթիվ պատահած քանի մը դեպքերը պատմենք։

Առջի օրը բարեկամներես մեկը բարեկամներեն մեկուն տունը այցելություն մը կընե։ Կես ժամ կանցնի, տան տերը կը տեսնե, որ հյուրին սուրճ չեն բերեր, բարկությամբ դուրս կելնե և յուր տասը տարեկան աղջկան կը հարցունե.

— Աղջի՛կ, սուրճ ինչո՞ւ չես եփեր կոր։

— Նփեցի՛, հայրիկ։

— Ինչո՞ւ չես բերեր կոր

— Գիշերազգեստ չունիմ։

Աղջկան հայրը, որ քանի մը օր առաջ խաչ առնելու համար հարսնիքի

պացած միջոցին դիշերապզեստով դիմավորված էր, աղջկան այս պատասխանին վրա քմծիծաղելով սենյակ կը մտնե ու հյուրին կըսե.

— Ներեցե՛ք, պարոն Նշան, սուրճ չպիտի կրնամ հրամցնել ձեզի այսօր։

— Ինչո՞ւ։

— Որովհետև դիշերապզեստ չունինք։

— Սուրճին մեջ դիշերապզե՞ստ ալ կը դնեն կոր հիմա։

— Ո՛չ, բայց աղջիկս առանց դիշերապզեստի սուրճ բերելու կամչնա կոր, որովհետև շարթուա նորութիւնը կը պահանջե, որ հյուրերը դիշերապզեստով ընդունվին։ Սուրճը պատրաստ է դուրսը, կրնանք երթալ, առնել ու խմել։

Երեկ չէ առջի օրը Կիրակոս ազան յուր վաղեմի բարեկամներեն մին դիշնեատուն մը առնելով յուր տունը կը տանի։

Դուռը կը զարնե, չբացվիր. նորեն կը զարնե, նորեն չբացվիր։ Պատճա՞ռ։ Պատճառը հայտնի է. կինը պատուհանեն տեսնելով, որ էրիկը հետը հյուր բերած է և նույն օրն ալ դիշերապզեստը լվացած ըլլալուն չկրնալով հագնիլ, իսկույն կրակ կը շինե ու դիշերապզեստը չորցնելու կաշխատի, որ հագնի, դուռը բանա ու հյուրն ընդունի։

Էրիկը, որ հյուրին հետ մեկտեղ դրան առջին անձրևեն պլխեն մինչև ոտքը թրջեր էր ու կը թրջեր, բարկութեամբ դուռը կը զարնե ու երեք քառորդեն ետքը կը հաջողի բանալ տալու։

— Երկու ժամ է ո՞ւր էիք, սիրկին, դուռը ինչո՞ւ չբացիք։

— Դիշերապզեստս թաց էր, ներեցե՛ք։

— Շրջապզեստդ հագնեիր...

— Տեր ողորմյա, Հովսեփ ազան, որ քառասուն տարին անգամ մը բարեհաճեր է մեզի հրամմել, կը վայլե՞ որ առանց դիշերապզեստի ընդունիմ զինքը, լսողը ի՞նչ կըսե։

Երեկ առաու Մարդար ազային առունը կերթա իր ծանոթներեն մին, որն որ սենյակեն ներս մտնելուն պես Մարդար ազան անդրավարտիքով կը դիմավորե զինք, բսելով.

— Հրամմեցե՛ք, ազա։

— Աս ի՞նչ է, Մարդար ազա, դիշերապզեստդ ո՞ւր է։

— Կնկանս տվի, որ հագնի ու դուրը բանա ձեզի, չտայի նե՝ մինչև իրիկուն դռան առջև կսպասեիր։

— Ինչո՞ւ։

— Որովհետև շարթուա նորութիւնը կը պահանջե, որ իգական սեռը դիշերապզեստ հագնի ու այնպես հյուրի առջև ելնե։

Այս առաու փերեզակ մը հայու մը տան առջև կեցած՝ պատուհանին առջև նստող կնկան հետ այսպես կը խոսակցեր.

— Կաղաչե՛մ, Մարիամ առաու, սա առած մետաքսիդ առակը տայիր։

— Սառկդ պատրաստ է, տղաս, կուտամ։

— Ինչո՞ւ դուռը չես բանար, չես տար ուրեմն։

— Դուռը չեմ կրնար բանալ, տղաս, դիշերապզեստ չունիմ, խե՞նդ եմ, որ առանց դիշերապզեստի ուրիշին դիմացը ելնեմ։

— Պատուհանեն նետե՛։

— Դիշերապզեստ չունիմ, ըսինք ա՛, երկար չեն ըներ։

— Առած ժամանակդ դիշերապզե՞ստ ունեիր, առաո՛ւ։

— Ան առեն աս սովորութիւնը չկար։

— Ե՞րբ պիտի տաս մեր առակը։

— Երբ որ դիշերապզեստս կարվի լմննա։

— Ե՞րբ կը լմննա։

— Երբ որ առակդ տամ։

Դիշերապզեստին վրայոք կրնայինք դեռ ուրիշ դեպքեր ալ պատմել, բայց իգական սեռին դեշ չերևնալու համար այսչափը հերիք կը համարինք։

Տեսնենք այս նորութիւնը քանի օր պիտի ապրի և ասոր ի՞նչ պիտի հաջորդե։

Երեկ հուշարկավորութեան հանդես մը կատարվեցավ մեր գրասենյակը։ Մեր մահց գավակները խստատ բաժնվեցան մենե։

Մեր կորուստին որչափ դառն, որչափ ծանր ըլլալը անոնք միայն կրնան զգալ, որք գրական ասպարեզին մեջ կը դանվին, մանավանդ անոնք, որ խմբագիր են։

Մեղուին չծախված թերթերը երեկ պախալին ծախեցինք օխայով, որպեսզի մեջը պանիր, խավիար, սարտելա և այլն փաթաե։

Մենք որ առոնցմով լո՛ւյս տարածել կուզեինք, բաբե՛, արտասվալից աչքով պիտի տեսնենք անոնց վրա պանի՛ր տարածվիլը։

Լալո՛ւ օր մ՚էր երեկ։

Պահապը, անագորույն դահճի մը պես, գերեզմանը (շուկան) կը բանար, աճապարե՛, կը պոռար անդուրեկան. երեք դուրուշի չես տար նե՝ կերթամ Օրադրեն 100 փարայի կառնեմ, կըսեր անխղճաբար։

Ը՜ղ իմ զավկրներս, կը պոռայի՝ մազերս փետտելով. առնեմ պիտի տանիմ, կը պատռտեմ պահապը. վերջապես հակառակ իմ ողբոցս և աշխատանացս, կորուսի զավկրներս։ Անդամ պահապը զավկրներս գերեզմանի մեջ դրավ, կոնակը շալկեց, իմ այնքան երկանցս փոխարեն հարյուր դուրուշ տալով՝ առավ քալեց։

Ո՞ւր կերթաք, զավկրներս, կը պոռայի կականաբարձ։ Ինչո՞ւ կը թողուս զմեզ, հա՛յր, կը պոռային իղուր։ Բաժանման ժամը հնչած էր. միության ժամը երբեք չհնչեց։

Երթայք բարյավ, զավկրներս, երթայք բարյավ. գիտե՞ք, թե ինչ ցավեր քաշեցի ձեզի համար։ Կին մը ամենեն շատը տարին անգամ մը կերկնե, բայց ես ամեն գիշեր, ամեն ցերեկ երկնեցի, զձեզ հղացա և ի լույս ընծայեցի. դուք իմ զավկրներս եք։ Զձեզ շատ բամբասեցին, ավրեցին ու զրպարտեցին, բայց ինչ ուզեն թող ըսեն, դուք իմ զավկրներս եք, կը սիրեմ զձեզ... հայր մ'եմ...

Խեղճ զավկրներս, ձեզի համար չարաճճի կըսեին, բայց դուք ձեր խայթելու պաշտոնն ամենայն զգուշությամբ կը կատարեիք, և եթե խայթեիք ալ, չէիք թունավորեր. մինչդեռ ձեր մյուս լուրջ բարեկամները, առանց մեկը մյուսին վիրավորելու, երկու տող չեն կրնար գրել. և ասոր համար է, որ դատարանները կդեգերին։

Խեղճ զավկրներս, եթե դուք առողջ էիք ու չապրեցաք, եթե սնունդ կուզեիք ու չտնաք, ատի ցավ է ինձ. բայց թե որ տկար էիք, թե որ խակ էիք ու չթողուցին որ հասուննայիք՝ իմ կորուստս ավելի անդարմանելի է։

Ո՜հ, որդյակք իմ Մեղուք, Մեղուք որդյակք իմ, առ իս դարձեք, մխիթարեցեք զիս։

Սիրուն զավկրներս, մեռաք դուք, անմխիթար թողուցիք զիս։ Գացեք ուրեմն ուր որ գրկե զձեզ պախալ Նիքոլին. գացեք, եթե ազգին մեջ օգտակար չեղաք, գոնե պահալի խանութին մեջ օգտակար եղեք, եթե ազգին մեջ մեղք գործեցիք, պահալի խանութին մեջ քավեցեք ձեր այդ մեղքը։

Մեղավոր լրագրաց քավարանը պահալի խանութներն են։

Անմեղ եք դուք, և ի՞նչ մեղք գործեցիք դուք, սիրուն զավկրներս. եթե դուք մեղավոր եք, առավել ևս ես մեղավոր եմ՝ ձեզի ծնունդ տալուս համար. ինչո՞ւ ուրեմն իմ մեղքերս դուք քավեք, ե՛ս մեռնելու էի ձեր տեղը, եթե ես մեռնեի՝ այսչափ չպիտի լայի։

Մեռաք դուք...

Սիրուն զավկրներս, ըսեք ինձ, եթե ապրած առեննիդ կույսի մը այտեն ժպի՛տ մը քաղեցիք, եթե աղզատյաց ճիվաղի մը թմրած խղճմտանքին դպչելով արթնցուցի՛ք, ո՜հ, ըսե՛ք ինձ, ըսե՛ք, այն առեն մեռած չեք դուք, այլ կապրիք։

Եթե մեռա՛ծ եք, իմ բաժինս լալ է, իսկ եթե մեռած չե՛ք, ըսեք, որ խընդալու պատրաստվիմ։

Արդ, ըսեք ինձ, որդյակք, լա՞մ թե խնդամ...

ԹԱՏՐՈՆ

ՄԱՆՐ ԵՐԿԵՐ

«ԱՊՐԻ՛ ԿԱՏՈՒՆ, ՈՐ ԻՐ ՓՈՐԻՆ ՀԱՄԱՐ ՄՈՒԿ Է ԲՌՆՈՒՄ»

Երբ շրջահայաց ակնարկ նետե մարդ աշխարհի գործոց ընթացից վերա-
Մեծ Նալբանդյանցի՝ սա խոսքն հիշե՝ ապրի՛ կատուն, որ իր փորին համար-
մուկ է բռնում[1]։

Ուստի երբ տեսնես, ազնիվ ընթերցող, որ փիլիսոփա քու մեկ բարեկամե-
փոխ ստակի տեղ տա քեզ, խղճալով, մի պաթալ սենեթ, որ գործդ տեսնես,-
ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ քանը բանեն է արդեն անցած, ազգին մարտիրոսն հոգին ավանդած,-
ու մեր պատրիարքն[2] խաստիվ կը խոսի դեմ՝ մահվան առթիվ խեղճ Այվազյանի,-
ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ անարժաններ Թաղական[3] ըլլան և անճոռնիներն ալ հոգաբարձու,-
ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ դու հարուստ ես և շողոքորթներ կառաքեն քեզի շատ թեմեննաներ,-
ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ աղքատ ես դու և հորդ մահվան չորս հոգի հազիվ գան ներկա ըլլան,-
ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ դու հարուստ ես և անվան տոնիդ խումբ-խումբ բարեկամք գան
տոնել օղիդ, ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ-
է բռնում։

Երբ էշդ կամ ձիդ իրիկվան դարձին առտվընե շատ շուտ շուտ տուն քալե,-
ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ տան երեցդ պատարագվոր է և քեզի առատ նշխարք, մաս ղրկե,-
ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ մեր ամուճայն Մեծն Ռուսիո քրիստոնեից օգուտին համար այսպես-
մեծամեծ զոհողություններ ընել ցըցնե, ըրածը չի կա՛, ըսե՛ անոր պես, թե-
ապրի՛ կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում։

Երբ ամերիկյան մեծ դեսպանն ու կին մեր դպրոցներուն այցելու եկին, ըսե՛ անոր պես, թե ապրի՛ կառուն, որ իր փորին համար մակ է բռնում:

ՈՒՂԵՐՁ ԱՌ ՔԱՅՍԵՐԼԻ ԱՀՄԵՏ ԲԱՇԱ ԿՈՒՍԱԿԱՒԱԼ՝ ՉՄՅՈՒՌՆԻՈ

Լրագիրը պատմեցին Իզմիրի դեպքը, արդո Հասարակութիւնն ալ կարդաց ու իմացավ եղածն. մեզ կը մնա ուղերձ մը հրատարակելով շնորհակալութիւննիս հայտնել առ Քայսերլի Ահմետ բաշա, որ Հովհաննես վեմյանն ու ընտանիքն սրտը և սուսերը ծեծել տալով հանել ավավ յուր հորմե ժառանգած տունեն, որ յուր եղբարցը մեկուն կողմեն պարարի փոխարեն ավանդ տրված է եղեր վաճառականի մը:

Ո՛վ Քայսերլի Ահմետ բաշա, ձեր այս բարեսրտութիւնը բոլոր աշխարհ հիացուց. կանանց վրա հարձակելու և զանոնք նվաճելու համար շատ ուժ և քաջութիւն ունենալու է մեկը, և դուք ձեր քաջութիւնմբը շատ դյուրութիւնմբ հաջողեցաք կնիկները սրով նվաճելու: Ապահով եղի՛ր, որ եթե կանանց դեմ պատերազմ մը հրատարակվի, բանակին հրամանատարը դուք պիտի ըլլար: Հասարակութիւնը շատ շնորհակալ է ձեզմե, որ առանց Պոլիսեն զորք ուղելու կրցաք քանի մը կնիկներ ու պզտի տղաքներ զսպել, անոնց թևը, գլուխը կտրելով և արյան մեջ թաթխելով: Հասարակութիւնը դարձյալ շնորհակալ է ձեզմե, որ այդ կնիկները ու պզտի տղաքները կախել չտվիր, որովհետև քաջութիւն ցցունելու փափաքը կրնար զձեզ դեպի հոն մղել:

Ընդունեցե՛ք, տեր, մեր հարգանաց ո՛չ այնչափ խորին հավատիքը և աշխատեցեք ուրիշ զավառաց կնիկներն ու տղաքներն ալ սրոք և բրոք զանակոծել տալով՝ ձեր քաջասրտութիւնն ապացույցներեն զմեզ չզրկել:

ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանեն հասած լուրերն վերջապես կը հայտնեն թե՝ հարստահարութիւնը Մշո կուսակալ կարգված է, թե՝ հարստահարութիւնն է Մուշը կառավարողը:

Չկա հոն ո՛չ սատցվածքի ապահովութիւն, ո՛չ կենաց և ո՛չ ալ պատվո երաշխավորութիւն, այլ կա հոն հափշտակութիւն, մարդասպանութիւն, պատվո բռնաբարում և վերջապես այն ամեն չարիքներն, որ կառավարութիւն չունեցող քաղաքի մը մեջ միայն կրնան գործվիլ:

Կարինեն Մասիսի ղրկված նամակ մը հետևյալ տեղեկութիւններն կուտա:

«Քաղաս հասած լուրերն և մասնավոր տեղեկութիւններն զմուշ մեծ հուզման և վտանգի մեջ կը նկարագրեն. անխուսափելի և ծանրակշիռ վտանգի ենթարկված է հոն տեղի ազգայնոց վիճակը: Եկած գիրերն անսահոագիր են, ու միայն կը ծանուցանեն թե՝ հետագիրն ու փոսբաճն մեզ համար արգիլված են, թե՝ այգիները կը կարեն, կը ճմլեն, կոչնչացունեն, և երբ հոն անձ մը դիմացնին ելլեն՝ դանակով կը զարնեն, թե՝ ննձաձներ, դեզերն ու մարագներ կայրվին, թե՝ ուր որ հայ մը տեսավ, խաչ և հավատ կը հայհոյեն, թե՝ մանուկ տղաքներեն մինչև ծեր, այր և կին, առ հասարակ կը գանակոծվին տանիկներեն, թե՝ հայ տղաները կառավարության ժողովրդեր երթալե դադրած են և այլն. կարծես կառավարություն չկա Մշո մեջ... Մուշեն և գեղերեն 300—400 տնվոր հաճարագություն կազմեր են տանկրնալու համար... և այլն և այլն և այլն»:

Արդյոր Տպագրական տեսչութիւնը կը ներե՛ մեզ այս անլուր վայրենութիւնց, բարբարոսութիւնց ու գազանութիւնց տակ հեծեծող մեր եղբարց կանանարարձ հառաչանաց արձագանք տալ, անոնց հետ արտասվել, քուրձ զգենուլով և մեր սրտեն արյուն հոսեցնելով մեր տխուր ճակատագիրն ողբալ: Արդյոր, կըսենք, Տպագրական տեսչութիւնն զոնե այս շնորհն կընե՛ մեզ, թե մեր սրտին, զգացմանց ու արտասվաց վրա ալ տիրելու իշխանութիւն ունենալով՝ մեր դժբախտութիւնն ողբալն ալ կարդիլե...

Հայերն ամեն վիշտ ու տառապանք, աքսոր ու հալածանք կրելեն ետքը, այսօր ամենայն հոժարութիւնմբ և հավատարմութիւնմբ կը տանին հպատակութեան լուծը, և ասոր փոխարեն կը բռնաբարվին թե՛ սատցվածքի, թե՛ կրոնի և թե՛ պատվո կողմանե: Այս լուծն հպատակութեան ըլլալե դադրած՝ գերութեան լուծ եղած է, ու այնքան ծանրացած՝ որ անբերելի ըլլալով՝ Մշո հայերն ա՛լ անկարող կըլլան զայն կրելու և հարստահարութենե խալսելու հույսով կրոնափոխութեան դիմել կորոշեն:

Հպատակ ազգ մը, երբ առ կառավարութիւնն ունեցած պարտավորութիւնները կը կատարե, լիուլի իրավունք կունենա կառավարութենեն ինչքի, կենաց և պատվո ապահովութիւն խնդրել. և կառավարութիւնն պարտավոր է անոր այս խնդիրքն կատարել ո՛չ իբրև շնորհ, այլ իբրև իրեն պարտքը: Գավառաց հայերը դարերե ի վեր կը հարստահարվին, դարերե ի վեր բարիւրներ կը զրվին ու հարստահարութիւնները դարերե ի վեր կը շարունակվին. արդ, կամ այն է, որ գավառաց հայերը միայն տուրք վճարելու և հարստահարվելու դատապարտված են, կամ այն է, որ բարեխնամ կառավարութեան գավառաց մեջ գտնված չարախնամ կուսակալներն անկարող ըլլալով հարստահարիչները զսպելու, ոճրագործութեանց տեսարանին առջև ճարկիլե քաշելով կը զվարճանան:

Աստնց ո՛րն ալ հավանական ըլլա՝ սա ճշմարիտ է, որ գավառաց հայերն զրկված են այն ամեն իրավունքներեն, զորս հլու և հավատարիմ հպատակ ազգերն կը վայելեն ամեն տեղ և ամեն ատեն։

Լսածնուս նայելով՝ ս. պատրիարք հայրն Մեծ Եպարքոսին՝ ներկայացեր ու Մշո այս վիճակն նկարագրելով ետ դարձեր է գոհացուցիչ խոստումներով։

Աղոթենք աստուծո, որ այս խոստումներն իր նախորդաց պես ապարդյուն չմնան ու բարձր. Մահմուտ Նեսիմ բաշային օրով իսպառ վերնան գավառներեն այս հարստահարություններն, որ հակառակ բարեխնամ կառավարության կամացը տեղի կունենան։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Նոյեմբեր քսանըշորսին Տպագրական տեսչության կողմե հետևյալն ընդունեցինք.

«Թատրոն նամ էրմենիճե զազեթա աղրազե մյուպթենի մուհարիրաթ
«ճյումլեսինաեն օլմաք յուզրե Մուշտան ալարագ կեչեն ճումաա էրթեսի
«կյունքի նյուսխեսինեն հյուլասաթեն տերճ իթթիկի մեքթուպուն էթրա-
«ֆընա հյուզն ու մաթեմ ալամեթի վազ էթմիշ վե մեքթուպը մեզքյուրտե
«մյունտերիճ արաճիֆ վե մյուպալաղաթե պինա իտերեք զիյրինե թեճա-
«վուզի պազի մյութալաաթ տախի իլավե էթմիշ օլտուղունտան Թարիխի
«իլանաեն իթթիպարեն պիր մահ մյուտաեթլե Թաթիլ իտիլմիշտիր»։

91 Թշրինի սանի 24 վե 92 զիլքատե 7[1]

Թատրոնի դադարումը, ինչպես որ կը հասկցվի վերոդրյալ ծանուցումեն, Մուշեն առնված նամակն սև դիծերով շրջապատելնես ու անոր վրա չափազանց լեզու գործածելնես հառաջ եկած է։

Եթե դիտնայինք, որ սև շրջանակը մեր հասկցածեն տարբեր կերպով պիտի նկատվի, եթե դիտնայինք, որ մեր լեզուն չափազանց պիտի կարծվի, ո՛չ այդ սև դիծերը կը դնեինք, ո՛չ ալ այդ լեզուն կը գործածեինք։ Մենք այնպես համոզված էինք, որ Մուշի նամակն սև շրջանակի մը մեջ դնելով՝ հետևած էինք տպագրության այն ամենապարզ կանոնին, որով խմբագիրներն սև շրջանակի մեջ կառնեն տխուր լուրերն. մենք այդ լեզուն գործածելով՝ վստահ էինք, որ մեղմ, օրինավոր, աղերսալի և գթություն հայցող շշվառի մը լեզուն կը խոսեինք. սխալած ենք եղեր, և մեր սխալանաց պատիժը կրեցինք։

Սակայն այս հարվածն մեզի այնքան դառն երևցավ, որ մինչև այսօր ո՛ւր որ սև դիծ մը կը տեսնանք կոր նե՝ հազար մղոն հեռուեն կը քալենք կոր. և

ատ ալ բնական է, կնոզ կնորայիճաեն գորզար[2] կըսե տաճկական առածը. և որովհետև մարդս պետք է որ վնասված բանեն մը խրատվի և անկե հեռու փախչի, մենք ալ հրաման զրկեցինք տպարան, որ թերթերնուս մեջ որչափ դիծ կա նե՝ ամենն ալ դուրս վանեն. թող դիծեն գալիք բարիքն աստուծմեն գա։ Ասոր ի պատասխան՝ տպարանապետը հարցուցած էր՝ թե դիծն հանեն, տեղը ի՛նչ դնեն։ Դիծերն հանե՛ն, տեղը ինչ կուզես նե՝ ան դիր, ըսինք իրեն։ Ուրախ ենք, որ տպարանապետն անմիջապես կատարեր է մեր խնդիրքը, որով Թատրոնն այսօր առանց դիծերու ներկայանալով՝ զադարման առիթ տվող բաներեն մին իր մեջեն պակասեցուցած կըլլա։

Աստված մեյ մ՛ալ ասանկ ցավ չցցունե...

ՑԱՎԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Մեր բարեկամներեն մին Թատրոնի դադարման վրա ցավակցություն հայտնող և զգացմամբ լի նամակ մը ղրկած ըլլալով մեզ ի հրատարակություն, սիրով կը հրատարակենք զայն չափազանց լեզվով գրված տողերն կետադրությամբ անցնելով։

... էֆենտի

Թատրոնիդ դադարման վրա մեծ ցավ զգացի։ Նախ անոր համար որ_____, _____։ Երկրորդ՝ անոր համար, որ _____՝ _____։ Երրորդ՝ անոր համար, որ _____, _____ (.) _____։ Զորրորդ՝ անոր համար, որ _____՝ _____։ Բայց որովհետև Թատրոնը_____, _____՝ _____։ Թեպետև _____ (_____) բայց ինչո՞ւ համար _____, _____ որովհետև_____, որո՞ւ կըսես _____ «_____» _____ անհրաժեշտ պետք է _____ ճշմարտություններ _____, այն ինչ _____, դուն ուրեք _____ իրավ կայծ _____ (_____) «_____» _____ ծանր է ծանրը _____՝ _____ հառաջդիմություն, հառաջդիմություն _____, _____ _____ ո՞ւր ես, ով _____, _____՝ _____ ըստ որում_____

..., ... իրր այն, թե մարդս ...
... ... թանի որ մարդս ...
..., ..., պետք է որ մարդս ... : Աթիկա հայանի ճշմարտություն մ է ..., չեմ գտնր թե բոլորովին ..., որովհետև ես ալ ... ո՞չ ապաքեն դուն ալ ... հայտնի է որ, սա ալ ... դժբախտությունը հոն է, որ ..., սրտի զգայուններն : ..., մխիթարն ... սոքերը ... շղթայազերծ ալիքներու նման ... նավուն առագաստները ... : ..., ... սոխիա կր հերքեմ ... : ... կը մաղթեմ ... թարմ ... բարեբախտս ... : ... ափսոս ..., որչափ ալ ջնասակար ...

...Յնր. հանձնեցեք սայն նամակս ձեր պիտույքներով մեկտեղ հրատարակել ձեր ազատախոս թերթին մեջ, որով ինամ ցավակից բարեկամդ՝

Գ. Թ.

Մեծ. Գ. Թ.

Շնորհակալ եմ ձեր սրտին զգայունակերևն: Այո՛, իրավունք ունիք, որովհետև ... ո՞վ կը հաւատար, որ ..., ... բայց դուք պիտի բանք մե՝ ... ամենևին, ... վաղը ... բայց ինչպես ... : Մինչդեռ ... քան օրում ... և այլն ... քույդ

Թատրոն

Թատրոնի դադարման միջոցին աղջային քանի մի թերթեր ալ գտրած՝ բայց վերջին իրենց ներվելով՝ նորեն հրատարակվիլ սկսած ըլլալնուն համար մեր ցավակցությունն ու խնդակցությունը միանգամայն կը հայտնենք:

ՀԱՆԳԻՍՏ ՄՇԵՑԻ ՊԱՐՈՆ ՄԿԸՐԻՉ

Աշխարհի մեջ կարի սակավաթիվ եղած են այն մարդիկը, որ մասնավորի մը կամ ընդհանրության մը բարիք կրնեն՝ միայն բարի՛ք ընելու նպատակով. այս անձանց է պահված ճշմարիտ փառաց ժառանգորդ ըլլալու իրավունքը, այս անձանց է աստծո արքայության մեջ բարձր աստիճան:

Հայ ազգը այս օրերս սակավաթիվ անձերուն մեկը կորուցս. հայ ազգը չճանաչեց զանի, բայց այն անձը ո՛չ միայն լավ ճանաչեց իր ազգը, այլև անոր համար մաշեցավ, անոր համար հյուծեցավ և իր բոլոր հարստությունը անոր սիրույեցը ծախսեց. պա՛րզ ապրեցավ, աղքատության մե՛ջ ապրեցավ, անձանոթի և անհնար ապրեցավ, վատնդի փառաց և պատվո համար չապրեցավ. ազգին համար միայն ապրեցավ և ազգին տանը մեջ, Ազգային Հիվանդանոցին՝ մեջ կնքեց իր թանկագին կյանքը:

Մշեցի պարոն Մկրըն էր ատե, Մշեցի Մկրը կը կոչեին ամեն զինքը ճանչցողները և այս անունով գոհ կըլլար ինքը. վատնդի իր մեծ երջանկությունը իր հայրենյաց անվան հաճախ հեղհեղվիլն ու անկորուստ մնալն էր, իր հայրենյաց՝ որուն համար նյութապես և բարոյապես կարի՛ շատ աշխատեցավ: Տակավին աչքներնուս առջեն է Մշեցի Մկրըը ազգային վարչության ժողովներուն մեջ, որ իր հայրենակցաց վիճակին բարվոքության համար երեսանկյալ կաղաչեր ատրի վրա կանգնած այն էֆենտի, պեյ, եպիսկոպոս, պատրիարք և այլ ատաիճանավոր անձանց առջև, որոնցմե շատ մեծ էր ինքը, թեև Մշեցի Մկրը անունն ու կապույտ վարտիք մը կրելով՝ շատ մեծ էր անոնցմե, վատնդի ոչ որ անոնցմե իրեն չափ սիրտ, միտք, սառակ և կյանք մաշեցուցած էին հայրենյաց համար:

Արևելյան պատերազմի[2] ատեն շահու համար խրիմ գացած ու հոն իր աշխրջությամբ 4 հազար լիրայեն ավելի սառակ շահած էր. այս գումարն ամբողջ Մշո գավառին մեջ ցանեց՝ սառակին տեղ մարդ բուսցնելու փափաքով և իր այս հարստութենեն իր որդվոցը միայն այնչափ բաժին հանելով, որով միայն Մշո մեջ կրնան ապրիլ, թևրևս այն գիտավորությամբ ըրավ ատե, որ իր տղայքը սոխվվին իրենց հայրենիքեն չհեռանալու:

Ինքն գրել կարդալ չէր գիտեր, բայց բնական հանճար ուներ և անով հասկցած էր թե, իր հայրենակցաց թշվառության մեկ գլխավոր պատճառն ալ տգիտությունն էր. ուստի ամեն ջանք ըրավ, որ իր հայրենյաց ապագա զավակներուն թշվառությունը հնար եղածին չափ թեթևցնե:

Ատեն մը Տոլմապահճեի կապհանեն[3] պաշտոն մը ուներ, որով ամիսը 3 հազար գուրուշ չափ սառակ կը վաստակեր: Արդի վեհափառ Գևորգ կաթողիկոս ձանձրացած ըլլալով այս անձին սառեպ երթալ դինըը անհանգիստ ընելուն՝ Տարնս ժողովրդին այլ և այլ խնդիրներովը, աղաչեր էր զՏատյան Պողոս պեյ, որ երթա կաղհանեին տնօրենեն խնդրե, որպեսզի չվողու զՄշեցի Մկրը սառեպ պատրիարքարան երթալուն: Բաշան դինըը կանչեր և հրամայեր էր, որ չերթա հոն, թե ոչ դինըը կը վռնտե: «Քառասունըհինգ տարի է որ կապրիմ, հինգ տարի է, որ քու հացդ կուտեմ; անկե առջի քառասուն տարիներուն մեջ իմ հացս ավղ աստվածս այսուհետև ալ կուտա. ես իմ ազգիս համար աշ-

Հատելին չեմ կրնար ես կենալ», պատասխաներ էր Մշեցի Մկըր և անմիջապես առեր բալեր է հանեն՝ այն ամսական 3000 դուրուշ շահը իր ազգին սիրուն զոհելով։

Քսաներհինգ տարին ի վեր յուր բոլոր հարստությունը և իր վաստակը յուր հայրենյաց նվիրեց. ինք ալ հոս հյուրասիրությամբ, աղքատասիրությամբ և ամենայն պարկեշտությամբ ու ողջախոհությամբ ապրեցավ։

Ա՛հ, քանի անգամ որ կը տեսնեի այս մեծ մարդը, կը պիտեի անոր բարձր հասակը, միայն աչացավով վիրավորված վեհ դեմքը և կը լսեի անոր համեղ այլ ազդու ձայնը, մեծ մխիթարություն կզգար սիրտս, դի անտեսունչ ազգիս տերություն և պաշտպանություն ընելու անշահադետ կամք, սիրտ և հոգի մը կը տեսնեի։

Ավա՜ղ, այս անհոգդոգդ կամքը, այս բարի սիրտը, այս վեհ հոգին ալ վերացավ։

Երանի՜ թե հանգուցյալ Մշեցի պարոն Մկրտին ցանած սերմերեն այլ մշեցիներ հառնեին անոր հոգվովն ու սրտովը ուռճացած։

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

— Ի՞նչ է լուսանկար պատկերը.

— Շողոքորթ մը՝ որ ամենեն ոգեղին իսկ գեղեցիկ ես, կըսես։

— Ի՞նչ է հուսահատությունը.

— Ունեցածը հիմարաբար նետել։

— Ի՞նչ է արդի քաղաքականությունը.

— Քոնսոլիտի բիացան՝ որուն ժամ մը առքը ինչ ըլլալիքը խաղացողներն այլ չգիտեն։

— Ի՞նչ է հիվանդությունը.

— Պարտատերներուն ձեռքեն խալսելու միակ միջոց։

— Ի՞նչ է պատմությունը.

— Ետիդ նայիլ, առջևդ տեսնել։

— Ի՞նչ է տղու մը աշխարհ գալը.

— Միևնույն գրքի նոր տպագրությունը։

— Ի՞նչ է գերեզմանը.

— Անդիի աշխարհին անշարժ թրամվեյը։

— Ի՞նչ է ծերությունը.

— Մահվան հետ ճիլվե ընող։

— Ի՞նչ է Այվազը[1].

— Մարդկային քերականության կանոններու մեջ բացառություն մը։

ԵՐԿՈՒ ԱՄՍՎԱՆ ՀԱՐՍԸ

Աշխարհիս վրան ամեն արվեստ իրեն հատուկ գործիքներ ունի. նկարիչն՝ իր վրձինը, վարպետաստը՝ իր կացինը են։

Կարգվիլն ալ արվեստ մ'է։ Սիրելու արվեստը այս օրվան օրս մեծ տեղ մը կը բռնե, էսնաֆներուն ամենեն բարձրն է, և անոնք միայն կրնան հարիլ այս արվեստին, որոնք որ սիրելու գործիքն ունին, հատկցար հարկավ, որ սիրտ ըսել կուզեմ։

Շատերն այս արվեստը իբր տղու խաղալիք կը նկատեն, դյուրին բան մը կը կարծեն, և առանց գործիքի անոր մեջը կը մտնեն։

Պատմենք։

Բոլոր կենացը մեջ Աստղիկին երեսը բնավ չտեսած, հիշողության տկարությանը պատճառավ, երիտասարդությանը ժամանակը կարգվելու մոռցած՝ յոթանասուն տարու ակռաները թափած ծերուկ մը զաշխարհ. ճաշակել կը փափաքի, և իր բարեկամներեն մեկուն հետ խորհրդակցելե վերջը՝ ասկե իբր երկու ամիս առաջ՝ աղվոր, սիրուն, տասնըչորս տարու աղջկան մը հետ կը կարգվի։

Ջեմ հիշեր, ո՞ւր կարդացեր եմ, թե ամուսնությունը արոր մ'է, որուն լծված են այրն ու կինը։

Քեզի կը հարցնեմ հիմա, ընթերցող, ի՞նչպես կերթա այն արորը՝ որուն լծված են յոթանասուն տարու ծերուկ մը և տասնըչորս տարու աղջիկ մը։

Աղջիկը քալել կուզե, ծերուկը չկրնար քալել, բոլոր բեռը աղջկան վրա կը մնա։

Ի՞նչ ըսեմ ան ծերերուն, որ արորի վրա նստելու տարիքնուն մեջ, հոն կը լծվին, և արորն ալ, իրենց ընկերն ալ կես ճամբան կը թողուն։

Վայրկյաններ, ժամեր, օրեր կանցնին, երկու ամիս կըլլա, հարսը իր սրտին համապատասխանող սիրտ մը չգտնելով ամուսնույն վրա՝ մորը իմաց կուտա։

Մայրը կերթա, իր աղջիկը կը լուծե արորեն, կառնե կը տանի։

Ծերուկը լծված կեցած է դեռ։ Ծերուկին համար կըսեն թե՝ Հասունիսթ[2] է եղեր։

Իրավ է, շատ հասուն է, ուսվելու արժանի պատուղ մըն է։ Որկրամոլ գերեզմանը չսե։

ՓՈՒՆՋԻՆ ԱՆԿՈՂԻՆԸ

Փունջին[1] ուրբաթ ավուր թերթին մեջ կը կարդանք՝ որ մարդուն մեկը անկողին մ'է հնարեր։ Այս անկողինը իրիկվընե կը հարդարես եղեր և արթննալ

ուզած ժամուդ՝ քեզի վեր վեր նետելով՝ կաթիլներ եղեր. և մինչև որ չիլնես նե՝ հանդիստ չկենար եղեր։

Ասիկա նոր գյուտ մը չէ, ասանկ անկողիններ մայրաքաղաքիս մեջ և այլուր շատ կը գտնվին, և որոնք ոչ թե միայն ուզած ժամանակդ՝ այլ չուզած ժամանակդ ալ քեզ կը ցաւակիցնեն և քոզ չեն տար, որ քնանաս։

Ասոնց մեկ աղեկ տեսակն ալ կա, որ ամենևին չքնացներ, այս տեսակ անկողիններուն մեջ պառկողները հետևյալներն են.

Միրուհիներեն վռնտված սիրահարներ։

Լրագիրներին դաղրած և չդաղրած խմբագիրներ։

Ամսականնին չառնող վարժապետներ։

Խոսքերնին չքալեցնող երեսփոխաններ[2]։

Իրենց վիճակին հետու գտնվող առաջնորդներ[3]։

Ի նպաստ իրենց տրված ներկայացումներեն վնասվող դերասաններ։

Թրախոմաչյուղ աղջիկ առնողներ։

Սնտուկին տակեն ծակած թաղականներ։

Թրամվեյ բանող փողոցները գտնվող տուներուն մեջ նստողներ։

ԵՐԱՋԻ ՄԵՋ ԳՐՎԱԾ ՀՈԳՎԱԾ ՄԸ

Ասկե քանի մը շաբաթ առաջ՝ Մեղու հոգվածի մը մեջ երազ մը գրած էր այս գիշեր ալ երազին մեջ հոգվածմը գրեց։

Երազնուս մեջ տեսածնիս և լսածնիս գրելու ազատ ըլլալով՝ հիշյալ հոգվածը հոս ալ կը դնենք։

Լրագրական օրենք

Հոդ. Ա. Բոլոր լրագիրները դադրեցնել։

Հոդ. Բ. Խմբագիրներն անոթության վարժեցնել։

Հոդ. Գ. Աչքերու համար տեսչություն մը դնել, որպեսզի անիրավության մը տեսնելնուն պես՝ դանոնք տեսնելե դադրեցնե։

Հոդ. Դ. Լրագիր մը իր ուզածը ամենայն ազատությամբ կրնա խորհիլ, բայց չկրնար խոսիլ։

Հոդ. Ե. Լրագիր մը իր խմբագրին վրա կրնա հարձակիլ։

Մնացած հոդվածները լրագրական տեսչության դեմ ըլլալուն համար՝ ավրած ենք։

ԱՐԳՈՍԻ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐԸ

ԼՈՒՍԻՆԻՆ ՄՈՏԵՐԸ ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Անցյալ գիշեր, չեմ հիշեր ո՛ր գիշերը, պատուհանիս առաջը նստած էի։ Լուսին կար, երկինքը թեպետև անամպ էր, բայց քանի մը ամպի կտորներ ծանր ծանր կը քալեին դեպի արևելք, երբեմն երբեմն գիշերվան թագուհույն կերպարանքն աքղել ջանալով։ Այդ ամպերն ալ անբմբռնելի ակզբունքներ ունին. չեն թողուր որ մարդ գոնե քանի մը ժամ անընդհատ լուսնին աղվորությունը վայելե։

Մերձակա տուներեն մեկուն մեջ դաշնակ կը զարնեին. ա՛յնքան անուշ կուգար ինձ դաշնակին երգը, որ պահ մը կարծեցի, թե ես էի բոլոր այդ դաշնակության հեղինակը։ Առանց իմ գիտնալուս՝ մատներս սկսան կատարի եվեչքներ ընել բարձին եզերքին վերա՝ ուր թևս կռթնած էր, և շատ գոհ կզգայի ինքզինքս ինքնիրմես։

Բայց, ո՜վ ունայնություն աշխարհային զվարճության, մինչ ես այսպես աչքերս լուսաշող ընդարձակության մեջ ընկղմած և ականջս երգերու հոսանքին տված՝ կը հրճվեի անփույթ և անկասկած, հանկարծ ասեղ մը, զոր բարձին վրա մոռցած էին, ո՜վ անագորույն ճակատագիր, ո՜վ անխոհեմություն կանանց, որ ասեղնին բարձերու վրա կը մոռնան, հանկարծ ասեղ մը մտավ մատներս մեկուն մեջ և պատժեց անոր ունայնապարծ նվագածությունը։

Սրդողելով բոլոր աշխարհի դեմ՝ որուն մեջ առանց փուշի վարդ չկա, ինչպես որ առանց ասեղի բարձ չկա, ուզեցի մոռնալ աշխարհը, աչքերս երկինք՝ դեպի լուսին բարձրացուցի. պզտիկ ամպ մը մոտեցեր էր լուսնույն և մոտ էր անոր երեսը ծածկելու. այս ամպին ալ բարկացա, և որովհետև վերեն ճիշտ այնքան մարդասիրություն կը ցուցնեին ինձ ամպերը, որքան վարեն՝ ասեղները, աչքերս գոցեցի, ձեռքերս ալ վերարկուիս գրպանները դրի, որպեսզի հոն գոնե ապահովեմ զանոնք ասեղներու դեմ, և սկսա մրափել։

Սակայն քունիս մեջ տարօրինակ բան մը անցավ։

Այն ամպի կտորը, որուն համար կըսեի, թե լուսինին մոտեցեր էր, սկսավ կամաց կամաց վար իջնալ։

կը տեսնեի զայն, որ դեպի մեր կողմերը կը հառաջանար. քիչ քիչ մոտեցավ այն քաղքին՝ ուր կը բնակինք, վերջը մեր դեղին, քիչ մը վերջը բնակած տունս, մեկ խոսքով՝ կը նշմարեի, որ այդ ամպը դեպի ինձ կիջներ։

Շիտակը առջի բերան, չըսեմ զարհուրեցա, ապշեցա ամպի մը նորանշանակութեանը վրա, որ այսպես դիշերային այցելութեան մը ինձ ընելու նեղութեյունը կառներ։

Երբ պատուհանիս առաջ հասավ, զաղրեցուց յուր ծանր ընթացքը. կանգ առավ...

Թեպետև քուներնուդ մեջ եղած ըլլա, ո՛վ մարդիկ, դուք որ այդքան բաներու խելք հասցուցեր եք, ի՞նչ կրնեիք, եթե իմ տեղս ըլլայիք, ի՞նչպես կը վարվեիք ամպի մը հետ, որ կուգա ձեր պատուհաններուն առաջ, ուր գուք նստած եք։

Կարծես թե հասկցա ինչ ըսել ուզելը, վասնզի ելա պատուհանես և այդ ամպին մեկ ծայրին վրա հեծա, ճիշտ ինչպես որ մեկը պիտի նստեր յուր կառքին մեջ, կամ յուր ձիուն վրա, սա տարբերութեյամբ, որ ամեն մարդ պիտի յուր կառքին կամ ձիուն գինքը ո՛ւր տանելիքը և ես անտեղյակ էի իմ ամպիս դիտավորութեյանցը և անոր երթալիք տեղին, եթե երբեք տեղ մը պիտի երթար։

Էրկան չընենք (ինչպես որ կրսեր ողորմած Հոդի պապս), էրկան չընենք, մեր անօրինակ մեռեորան սկսավ դեպի վեր բարձրանալ նույն ընթացքով, որով իջած էր։ Այս բանը, շիտակ խոսելու համար, փոքրիկ անհանգստութեյուններ կը պատճառեր ինձ. բայց ի՞նչ կրնես. մեկ մը դանվեցանք։ Ուստի սկսանք վեր երթալ։ Կամաց կամաց կը տեսնեի ամբողջ մեր Վոսփորը, ի՞նչ աղվոր, ի՞նչ բանաստեղծական տեղ է եղեր մեր Վոսփորը, երբ որ վերեն նայի մարդ։

Միջոցին մեջ բարձրանալով, կարծես թե պարծենկոտութեյուն մը կուգար իմ վերս, վար կը նայեի մեր երկրագնդին մեջ, կսկսեի չհավնիլ մարդոց շինած բաներուն. ամենեն երեւելի և քաղաքակիրթ ազգաց բնակած քաղաքները տեղ կերևնային ինձ, չեմ գիտեր ինչ բան կրսեր ինձ, թե մեծ պակասութեյուններ կային երկրին վրա և մարդոց խելքին չէր հավնիր։

Ինչևիցե, երկիրը սկսավ անհետ ըլլալ աչքերես, իմ ամպս սկսավ մթնոլորտեն դուրս ելլել, հակառակ մեր բնաբաններուն դիտցածին, որոնք սակայն չեն կրնար ըմբռնել, թե մեր պատուհաններուն առաջը իջնելով կանգ առնող ամպ մը ինչեր ընելու կարող չէ։

Անգամ մը մթնոլորտեն դուրս, իմ ամպս սկսավ դեպի լուսին երթալ, աչքերս սկսան շլանալ լուսինին նշույլներեն, բայց քիչ քիչ վարժվեցան. դեռ ինչե՞ր տեսնելու վարժված չէին մեր աշխարհին մեջ։

Երեք կամ չորս մեռ մնացած էր լուսինին հասնելու, մեր անհասկնալի պահավորակը կանգ առավ։

Այս միջոցին մարդկային էակի նման բան մը լուսինին մեջեն նշան կըներ ինձ, որ իրեն ուշադրութեյուն ընեմ։ Երկու կամ երեք կանգուն բարձրութեյամբ կարմրագույն արարած մ'էր այս։ Գլուխը բաց էր, որուն մազերը կապույտ էին, առանց մուճակի էր, միայն լայն և երկայն վերարկու մը կը ծածկեր յուր ամբողջ մարմինը։

Այս լուսնարնակը, որ ինձ կարեորութեյուն տալով կը զարմացներ զիս, սկսավ խոսիլ ինձ։ Պարզ և ներդաշնակ լեզու մ'էր խոսածը. բայց ինչ օգուտ, որ չէի հասկնար։ Ուստի սկսավ սորվեցնել ինձ յուր լեզուն. հինգ վայրկենի մեջ հաջողեցավ սորվեցնել. ասոր հետ մեկտեղ բաջութեյուն պետք էր ամպի մը վերա՝ երբեք չի լսված լեզվի մը քերականութեյունը հինգ վայրկենի մեջ սորվելու։

— Ինչպես եկաք հոս, հարցուց ինձ։

— Ես ալ ադեկ մը չեմ գիտեր, բսի իրեն նոր սորված լեզվովս, և պատմեցի իրեն իմ եղական ամպիս ըրած գործերը։

— Ես արդեն մեկ քանի ընկերներովս դիտակով կը դիտեի զձեզ, երբ դուք պատուհանեն ելնելով, ամպին վրա հեծաք և հոս եկաք։

— Ի՞նչ կրսեք, բսի իրեն նոր սորված լեզվովս, բայց այս անգամ կերևա թե ինչ կրսեմ բսելու տեղ, ինչ կրսեմ կոր բսի, վասնզի մարդը քիչ մը խնդաց բերին տակեն։ Բայց և այնպես, զարմանալով թե իրենց դիտակները մեր երկրագնդի դիտակներեն շատ ավելի կատարելագործված էին, իրենց բնակած գունտին վրա հարցումներ ընելու համարձակեցա։

Այն ատեն մարդը սկսավ ինձ պատմել իրենց աշխարհին, իրենց կենաց, իրենց բարուց եղանակը։ Բսավ ինձ, թե ամբողջ լուսնույն մեջ քսան կամ քսանըհինգ կոր ցամաք կային իրարմե զատված, թե ամբողջ մարդիկ հասարակապետութեյուն էին, թե հարյուր հիսուն կամ երկու հարյուր տարի կապրեին, թե երբեք մեզի պես պատերազմ չէին ըներ։ Այս պատերազմին կորին ա՛լ չդիմացա և գոչեցի. «Այդ ի՞նչ աղվոր բան»։

— Մենք կը տեսնենք, բսավ ծանրութեյամբ, մենք կը տեսնենք, որ ձեր աշխարհին մեջ հաճախ զիրար կը ջարդեն. ի՞նչ հարկ կա, չէ՞ որ խաղաղութեյամբ ապրիլը հազար անգամ ավելի աղեկ է։

— Բերաննիդ սիրեմ։

— Մե՞ղք, որ բավական ալ հառաջ գացած են մտաց և ճաշակի զարգացմամբ։

— Աղեկ ալ կրսեք։

— Չե՞ն կրնար միթե, փոխանակ ավելորդ բաներու միտք հոգնեցնելու,

փոխանակ զիրար փարատելու համար նորանոր հնարքներ հոգալու, ամբողջ միաբերնին, բոլոր հոգերնին ա՛լ ավելի հառաջ երթալու տալ։

— Եկո՛ւր այդ բանները անոնց հասկցո՛ւր, չեն հասկնար կոր, ըսի իրեն և՛ մեր անողորմ և անթափանցելի ամպը սկսավ հեռանալ լուսինեն։

— Մնաք բարով, նորեն տեսնվինք, պառաց մարդուն։

— Երթաք բարով, պատասխանեց և տրտմութեամբ իջանք մեր ամպին հետ, որ դիս բերավ նորեն մինչև պատուհանս ձգեց (սկզբունքի տեր ամպ մը, արդարև) և գաժվեցավ։

Ա.ՐԶՈՍ[1]

ԵՐԿՆՔԵՆ Ա.ՋԴԱ.ՐԱ.ՐՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Երկու օր առաջ դաշտին մեջ կերթայի։

Ընդարձակ էր դաշտը։ Ասդին անդին, իրարմե բավական հեռու, տասնի չափ ծառեր կը բարձրանային և կարծես երկինքը համբուրել կուզեին, ինչպես որ կըսեն երբեմն բանաստեղծները։

Ձեռքերս կռնակիս վերա կապած, աչքերս գետինը խոնարհած կը քալեի։ Տեսակ մը հաճույք կզգայի՝ աշնան ցուրտ հովերուն երկրին երեսը սրսկած դեղին և կես մը դեղին տերևները համբելով։ Կարդ մը մարդիկ կան, որ միշտ կը համբեն։ Փողոցները քալած ատեննին՝ սալահատակին քարերը կը համբեն. մեկուն հետ խոսած ատեննին՝ եթե բեխ ունի, բեխին թելերը, եթե չունի՝ արտևանունքներուն կամ հոնքերուն թելերը, եթե ատոնք ալ չունի իրենց հետ խոսողը՝ ականջին ծալքերը կամ ճակտին խորշոմները կը համբեն. շոգենավ նստին նե՝ մեջի մարդիկները, նավակով երթան նե՝ երկինքին ամպերը, եկեղեցի երթան նե՝ հոն եղած մոմերը կը համբեն ու կը համբեն, վերջապես ոչինչ կրնա աղատիլ անոնց համբելու կատաղութենեն։

Շիտակը ըրուցելով, ես այդ մանիին չունիմ, սակայն չեմ գիտեր, ի՛նչ բան դիս կը դրդեր, որ այն օրը այդ տերևները համբեմ։

Մինչդեռ այսպես ծանր ծանր հառաջ կերթայի, գլխուս վերա թեթև դղրդյուն մը լսեցի, և նույն միջոցին գլորած թուղթ մը ընկավ ոտքերուս առաջ։

Թուղթը բռնելե՛ առաջ, ինչպես որ բնական է, չորս կողմս նայեցա, հետո վեր նայեցա, հասկնալու համար, թե ո՞րկե կուգար թուղթը, չորս կողմս մարդ չկար, վերն ալ չէր կրնար ըլլար, որովհետև դաշտի մը մեջ էի։ Զարմացած, ինձ ամենեն մոտ եղող ծառի մը ոտքը գացի, տեսնելու համար, թե արդյոք մեկը ծառի մը վրա պահված՝ խաղա՞լ ուզած էր իմ անմեղ և գլխիկոր շրջա-

գայության հետ, հոն ալ մեկը չկար, որով համոզվեցա, թե այդ թուղթը երկինքեն կուգար։

Աճապարանոք բացի թուղթը և հետևյալ տողերը կարդացի.

«Որովհետև այնպիսի մարդիկներ կան աշխարհի վերա, որոնք շատ հանդուգն, շատ հանճնապաստան և շատ լիրբ կը թվին մեր աչաց.

«Նկատելով, որ այդ մարդիկը իրավունք չունին այդքան հանդուգն և այդքան լիրբ ըլլալու.

«Նկատելով, որ ատոնք կրնան չար օրինակ ըլլալ ուրիշներուն.

«Նկատելով, որ այդ մարդիկ իրենց այդ ձևերովը ավելի ուղտերու կամ անգեղջյուրներու կը նմանին՝ քան թե բնական ստեղծված մարդերու.

«Նկատելով, որ ատոնց բռնած ընթացքը կրնա գայթակղություն պատճառել ամեն տեսակ արարածներու, վասնզի այդ մարդիկը շատ ամբարտավանական կերպարանքով կը պտտին աշխարհի վերա.

«Նկատելով վերջապես, որ այդ անձանց քալվածքը շատ ամբարիշտ է, իրենց գլուխը շատ ամուր է, իրենց աչքերը կովու աչքերու կը նմանին, և իրենց դեմքն ալ ապուշի դեմք է.

«Որոշեցինք ազդարարել աշխարհի, որ եթե այդ տեսակ անձինք շարունակեն իրենց այդ տեսակ ընթացքին մեջ, ահագին փոթորիկներ պիտի հրուցանենք իրենց գլխուն և շանթահար պիտի խորտակենք անոնց ամբարտավանության եղջյուրը։

(ստորագրություն)

ԵՐԿԻՆՔ

Այս գրությունը, որ իրեն դատակնիք ձևովը, իրեն նկատելովներովը և մանավանդ իրեն շանթերովը դիս սարսափեցուց, այս գրությունը աշխարհի ուշադրության կը հանձնեմ։

Շիտակը ըրուցելու համար, երկինք իրավունք ունին։

Տիարք, ես քիչ մը անկողմնակալությունը կը սիրեմ։ Մեր մեջ այնպիսիները կան, որոնք մեզի պատիվ չեն բերեր։

Այդ մարդիկը երբ որ երեսդ կը նային, կարծես թե ութ օր պիրենք անոթի պահողի մը երեսը կը նային։

Երբ որ քեզի կը պատահին, այնպիսի անհամ և բարկացոտ նայվածք մը կարձակեն քո վերա, որ կը կարծես, թե զքեզ գողի մը կամ մարդասպանի մը կը նմանցնեն։

Երբ մարդոց մեջեն անցնին, ա՛յնպես կը նային անոնց վերա, եթե երբեք բարեհաճին նայիլ, ինչպես պիտի նայեիր դուն խոզերու երամակի մը վերա, որ կը գա քու ճամբուդ վերա շրջապատել և նեղել զքեզ։

Այդ տեսակ մարդիկ բարերախտաբար շատ քիչ կը գտնվին։ Սակայն ինչ-որ տղի մը աչքին առաջ ա՛յնքան պժգալի կերևան այդ մարդատյաց անձերը, որ անոնց կոկորդն բռնելով խեղդելդ կուզա։

Անոնցմե մեկ հատը բավական է ամբողջ քաղաքի մը արհամարհանքը և նախատինքը գրգռելու, այնքան ցուրտ է անոնց ցուցուցած կերպարանքը։

Քալելու ատեննին, կարծես թե սալաքարերը խորտակել կուզեն։

Նստելու ատեննին, պիտի ըսեի, որ ձգտել կուզեն իրենց տակ այն աթոռը կամ բազմոցը, որուն վրա պիտի նստին։

Երբ բարև տան մեկուն, որն որ շատ քիչ անգամ կը պատահի, կը կարծես, թե մեծ հանցանք մը կը գործեն կոր, ա՛յնքան գոռոզ և հպարտ է ձևերնին և ա՛յնքան անարժան կը դասեն իրենց նմանները իրենց բարևին։

Այդ մարդոց բոլորն ալ երբեք խելք չունին, և աշխարհիս վրա ամենեն ապուշ մարդիկը անոնց մեջ կրնաս գտնել։

Անոնք կը կարծեն, ա՛յնքան ակարամիտ և անձնասեր են, անոնք կը կարծեն, որ աշխարհ միայն իրենց համար ստեղծված է, կամ թե իրենք միայն աշխարհի համար ստեղծված են։

Անոնք իրենց անձին ա՛յնքան հավնած են, որ չես կրնար զանոնք համոզել, որ կը խաբվին կարծելով, թե ուրիշները իրենցմե անպիտան են։

Մարդուս խելքը չկրնար հասնիլ, թե ո՛րքան կարևորություն ունած են անոնք իրենք իրենց։

Ես կը հավատամ, որ անոնք եթե քիչ մը խելք ունենային, շատ չարիքներ պիտի հասցունեին մարդոց։

Բայց, ինչպես որ ըսի, խելք չունին, հավի մը չափ կը մտածեն և իրրև միակ խորամանկություն իրենց վատությունը ունին։

Այո՛, չմոռնամ ըսելու, որ անոնք ծայր աստիճան վատ են։ Հակառակ իրենց լիրբ և ժպիրհ կերպարանաց, անոնք ամեն վայրկյան կը դողան ուրիշներեն։ Վասնզի կը կարծեն, որ իրենց նմանները միշտ պատրաստ են դիրենք ծեծելու, փետուելու։

Անոնք կը կարծեն, թե բոլոր մարդիկ կը նախանձին իրենց վերա և թե ամենքը կը ջանան զանոնք օր մը չէ նե օր մը սպաննելու։

Սեր, գթություն, կարեկցություն, ատոնք երբեք չկան իրենց սրտին մեջ։ Անընդունակ են որևէ անկեղծության, և ա՛յնքան կոպիտ են, որ եթե երբեք կարենաս տեսնել զանոնք, որ մեկու մը քաղաքավարություն կընեն, խնդալեդ կը մարիս անոնց ձևերուն և ձախորդ կերպարանքին վերա։

Անոնք ավելի դյուրությամբ կը սիրահարին կատուի մը կամ շան մը՝ քան թե որևէ ուրիշ մեկու մը։

Ա՛րդ, ես որ ամեն բանե առաջ կը սիրեմ մարդկությունը, կը փութամ վերոգրյալ ազդարարություններ աշխարհի առաջ դնել և ազաչել այդ մարդիկը, ո՛ւր որ ալ ըլլան, որ զգրին այդ իրենց ապօրինավոր կենցաղավորություններեն։

Ապա թե ոչ, թող հիշեն այն չանթերը, այն նկատելովները, որոնք, կը կրկնեմ, գիս մասնավոր կերպով անհանգիստ կընեն։

Երկինքեն գատ որևէ ուրիշ տեղ եկած թուղթերը կրնան այնքան կասկածելի չթլլալ, բայց մտածեցե՛ք անգամ մը, երկինքեն իջած թուղթ մը ի՛նչ փորձանքներ չկրնար բերել մարդուս գլխուն։

Ա՜հ, այն չանթե՛րը, ա՜հ, այն նկատելովնե՛րը...

Արգոս

ԻՄ ՓԱՓԱՔՆԵՐՍ

Ի՛նչ որ ալ ըլլան ուրիշներուն կարծիքները իմ վերա, ի՛նչ որ ալ ըսուցեն ամենքը ինձ համար, կուզեմ այսօր գաղափար մը տալ քեզ, սիրելի ընթերցո՛ղս, իմ բանի մը փափաքներուս վերա։

Կարելի է, որ գիս մանիկ ընելեդ հետո բարկանաս ինձ դեմ, ծուռ-ծուռ նայիս իմ գրած տողերուս վերա, ընդվիներդ ա՛յնքան պռասես, որ աչքերդ աներևույթ ըլլան մրահոն ճակտիդ տակ, և մինչև անգամ այնքան մեծ ըլլա քու գայրույթդ, որ, ո՜վ սրբապիղծ ձեռք, պատռես և ճմռթկես այն Թատրոնը, որուն մեջ պիտի կարդաս գիս։ Բայց առաջուց ըսի արդեն. ինչ որ կըլլաս՝ եղի՛ր, պետք է, որ խոսիմ քեզի։

Հիրավի, պետք եղածեն ավելի անկեղծ և ճշմարտախոս պիտի գտնես գիս, և այնպիսի բաներ պիտի լսես ինձմե, որ քեզի հետ մինակ գտնված ատեննիս անգամ հազիվ պիտի համարձակեի քեզի ըսելու, այլ երբեմն այնպիսի պարագաներ կը հանդիպին աշխարհիս վերա, որ մարդ չկրնար ինքզինքը զսպել, ա՛լ առանց չորս կողմը նայելու՝ կսկսի պոռալ և այն անհոգ և թեթև դիրքը կը բռնե աշխարհին դեմ, ինչ դիրք որ բռնած են Խասպյուռի[1] շոգենավերն Ոսկեղջյուրի իսկելեներուն դեմ, որոնց հետ ա՛յնքան սաև-ֆասոն կը վարվին այդ շոգենավերը։

Նախ և առաջ կուզեի, որ բոլոր մարդոց գանգը բյուրեղյա ըլլար, որպեսզի երբեմն երբեմն մեջը նայելով՝ տեսնեի թե ամենեն շատ ուղեղ ունեցողները այն մարդիկը չե՞ն, որոնք գիրար պատռտելու համար պատերազմի չեն երթար երբեք։

Կուզեի, որ ամեն օր անձրև գար, որպեսզի կիները թեթևցրե հագուածՙ չի կարենային երբեք դուրս ելնել։

Կը փափաքեի, որ մեծկակ օդապարիկ մը ըլլար, և անոր մեջ դրվելով՝ ամ մեր աշխարհեն ուրիշ աշխարհ մը աքսորեին ամեն անոնք, որոնք կը կարծեն թե՝ միմիայն մորուք ունենալուն համար իրավունք ունին դպրոցներու տնօրեն ըլլալու[2]։

Կուզեի, որ քանի մը տարիեն աշխարհ կործաններ, որպեսզի սեյր ընեի, թե ի՛նչ զարմանալի կերպարանքներու պիտի մտնեին ամեն անոնք՝ որ կերևակայեն, թե հավիտյան պիտի ապրին և աղեկ օրեր պիտի տեսնեն։

Ամիսի մը չափ առաջ մեկը տեսա, որ անիրավ տեղը ուրիշի մը ապտակ մը զարկավ. կը փափաքեի, որ այդ մարդուն այն ձեռքը, որով ապտակը իջեցուց, հինգ օր, գիշեր ցերեկ, Բուզնամեն[3] օրհնակեր։

Կը փափաքեի, որ գինվորական կրթությունները Պոլսո մեջ հրապարակավ չըլլային, որպեսզի կրթությունը ավող տասնապետները հանդիսատես ժողովըրդյան իրենց ամենակարողությունը ցույց տալու համար ողորմելի գինվորներուն գլխուն պարապ տեղը իիտե պիտե բռնցի հարվածներ չտային։

Շատ կը փափաքեի, որ տեր Սալիզպրի մեծ դումարներ շնորհեր մեկ քանի անձերու, որոնք իրենց անունը առանց սխալի չեն կրնար գրել և որոնք այլևայլ քերականություններու վերա ժամերով կը խոսին ձեղի։

Քանի մը օր առաջ, երկու աղջիկներ կը խնդային մեկու մը վերա, որ մոռցած էր իր ֆռավաթը կապելու, այնպես որ ֆռավաթին երկու ծայրերը անոր ուսերուն վերա կը ծփային. կուզեի, որ այդ երկու աղջիկները երկու օր ջուր չգտնային խմելու։

Կուզեի, որ ամեն անոնք, որ երբեք լրագիր չեն կարդար, բռնի պատերազմի դրկվելին տերության կողմեն։

Քառամանլը պահալ մը անցյալ օր առաջին անգամ իրեն դեմը ելնող երիտասարդին օձիքեն կը բռներ և ֆալպ հարյուրնոց թուղթ մը ցցունելով՝ «պունու պանա սեն սին վերեն»[4] կըսեր, վասնզի առջի իրիկունը երիտասարդի մը ձեռքեն ընդունած էր. կը փափաքեի, որ աստված շնորհք տար այդ պահալին։

Բոլոր ունեցածներս, բոլոր չունեցածներս կուտայի՝ սա մեծաշուք տեր Սալիզպրին չէ թե հազար, երկու հազար ոսկի շահեր օրվան մեջ, այլ հինգ, վեց, յոթը միլիոն ոսկի վաստակեր, որ բոլոր մնացած մարդիկները տեսնեի, թե ի՛նչ պիտի ընեին։

Շատ կուզեի, որ բոլոր մարդիկները օր մը մեկենիմեկ խենթենային, որպեսզի տեսնեի՝ թե այն ատենն ալ ամենքը մեկ խոսք ընելով՝ պիտի երթայի՞ն պատերազմի դաշտը իրարու կոկորդ պատռելու։

Կը փափաքեի, որ դպրոցներեն տարին 100 տղա բան մը չի սորված դուրս ելնեին և քիչ շատ կյանքերնին հոգային, քան թե հազար տղա շատ բան սորված ելնեին և անոթի մնային։

Կուզեի, որ մարդիկ երեք հարյուր տարի ապրեին, և առաջին հարյուր տարվան մեջ ատակ վաստակելով՝ մնացած այդ երկու հարյուրին մեջ այդ վաստակածնին ուտեին, կամ, թե որ երեք հարյուր տարի չեն կրնար ապրիլ մարդիկ, այնպես կարգադրվեին աշխարհիս գործերը, որ անոթի մնալով այլևայլ միջոցներու դիմողներ չգտնվեին երրեք աշխարհիս վերա։

Շատ անգամ կը պատահիմ մարդոց, որոնք միշտ իրենց վերա միայն կը խոսին թեզի, կուզեի, որ այդ մարդիկները համր ըլլային, և ա՛լ չկարենային խոսիլ։

Կուզեի, որ աշխարհիս մեջ եղած աղքատները մեկեն ի մեկ հարստանային և հարուստները ծեծեին, մանավանդ այն հարուստները, որ ատակնին չեն ուտեր, վախնալով, որ չի հատնի։

Կը փափաքեի, որ աստված իր հոգվույն սրբո շնորհքը զրկեր Փունջին, որպեսզի Փունջը այնպիսի բաներ չգրե՝ որոնց վերա նայելով՝ սիրտերնիս փոթորկնիս կը հատնի կոր։

Եթե տակավին կան աղջիկներ, որ Աբգոսին խրատները բանի տեղ չեն դներ, կուզեի, որ այդ աղջիկները ստիպված ըլլային օրը հինգ անգամ յոթը դլուխ Նարեկ[5] քաղելու։

Կը փափաքեի, որ մարդիկ պատերազմի սկսած ատեննին աշխարհիս բոլոր լեռներեն և անտառներեն վայրենի գազանները գային և թող չտային մարդոց, որ պատերազմ ընեն։

Աբգոս

ՄԵՆ ՄԱՐԴԻԿ

Աշխարհիս վերա աննշան ապրելեն ավելի սոսկալի բան չկա։

Ես կը հավատամ, որ մեր Ադամ[1] նախահայրեն սկսելով մինչև մեր օրերը, երբեք մահկանացու մը չէ ապրած առանց իր կենաց մեջ գոնե անգամ մը փափաքելու, որ մեծ անուն ունենա։

Շատ հավանական է, որ Կայեն[2] իր եղբայրը այս բանին համար սպաննեց, Ենովք[3] այս բանին համար երկինք բարձրանալու որոշում տվավ, Հովաբ[4] այս բանին համար Աբիսողոմը[5] սպաննեց, Սարդանապաղ այս բանին համար բան մը չըրավ, Տանթե այս բանին համար իր Պեատրիչեն[6] երևակայեց, Նաբոլեոն Գ. այս բանին համար թագավոր ըլլալ ուզեց և ամեն կայեց, Նաբոլեոն Գ. այս բանին համար թագավոր ըլլալ ուզեց և ամեն հնարք բանեցուց, որ անմեղությամբ թագը հափշտակե, պարոն Հ. Կ.[7] այս բանին համար անցյալ օր թերթի մը մեջ նամակ մը գրեց[8], պ. Հ. Վարդովյան այս բանին համար կամավոր գրվեցավ և այս բանին համար աշխարհիս

ամենեն խելոք և պարկեշտ մարդն եղած է իր բոլոր կենացը մեջ, ո՛ր մեկը ըսեմ. ամենքն ալ մեկ մեկ բան ըրին իրենց անունը սիեզերական ընելու և զայն անմահացնելու համար և հաջողեցան, այո՛, հաջողեցան, վասնզի ասկե հազարավոր տարիներ հետո, ինչպես որ իր Օթելլոյովը կամ Համլետովը անմահ պիտի ըլլա Շեյքսբիր, նմանապես և պ. Հ. Կ. և պարոն Հ. Վարդովյան անմահ են և պիտի մնան, մեկը յուր նամակովը և մյուսը յուր Թատրոնի ադեմբորությամբ:

Բայց որո՛ւն հոգը. ես ինքզինքս մտածեմ. ատոնք արդեն իրենց ապագա անունը շիներ և լմնցուցեր են. հիմա ե՛ս մտածեմ, թե ի՛նչ ընեմ, որ անունս հռչակավոր ըլլա արդի ժամանակներուն և ապագա դարերուն մեջ:

Շիտակը զրուցելու համար, շատ միտք կը հոգնեցնեմ կոր այս բանին: Գիշեր ցերեկ կը մտածեմ կոր, թե ի՛նչպես ընեմ, որ ես ալ անմահ ըլլամ:

Երբեմն կը մտածեմ կոր, թե Թատրոն մը բանամ և դերասաններուն սատկ չտամ, ինձմե առնելիք ունեցողները վռնտեմ, սատկ ուզեն նե՝ ծեծեմ և գապ-բիխին տամ:

Կամ թե դպրոց մը բանամ, դասատուներուն սատկները չտամ, երկուքուկես ամսվան պարտս ա՛յնպիսի կերպով մը վճարեմ դասատուներես մեկուն, որ երկուքուկես տարի այդ դասատուն բան չունի նե՝ երթա գա, ինձմե սատկ ուզե. գինը խարեմ, մորուքին խնդամ, և այնպես ընեմ, որ այդ դասատուն ա՛լ երթալ գալու ծախք ընելե և սատկ ուզելե ձանձրացած՝ իր առնելիքեն վազ գա:

Կամ թե Ռուզնամեին մեջ նամակ մը գրեմ, որմե բառ մը անգամ չհասկընամ ես, և թողում, որ հասարակությունը իր ուզեղը ճաթեցունե իմ նամակես բառ մը հասկնալու համար:

Կամ թե երեսփոխան ըլլամ և ազգ. ժողովին[9] մեջ անանկ բաներ ըսեմ, որ միայն ես հասկնամ, և ազմուկով խոսիմ, պոռամ, կանչեմ, հաճախ պեխերս ոլորեմ, որ մյուս երեսփոխաններն ինձմե, այսինքն պեխերես վախնան:

Կամ թե տունս շուն մը պահեմ և զայն անոթի ձղեմ օրերով, որպեսզի այդ իմ անոթի շունս դիշեր ցերեկ հաչե ու ոռնա և դրացիներս ալ անհանգիստ ըլլալով ըսեն, թե «ի՞նչ մարդ է սա մարդը, շուն մը ունի, որ միշտ կը հաչե»:

Ուրիշ բան մ՛ալ կը մտածեմ կոր, հաջողի նե՝ գեշ չէ, գործս գործ է: Կը մտածեմ կարգվիլ և երեք զավակ ունենալ և զանոնք դպրոց չղրկել, որպեսզի անոնց համար տունս դասատու մը բերել տամ, և այնքան սատկ տամ իմ դասատուիս, որ անոթութենե չմեռնի և կարենա իր դասերը շարունակել. ասով հասկցուցած ալ կըլլամ, թե ես տունս դասատու կրնամ կոր բերել և տարիներով կը հաջողիմ կոր զայն հույսերով անուցանել:

Բան մ՛ալ կը մտածեմ, թե որ ասոր մեջ հաջողիմ, ա՛լ անմահացած է իմ

անունս: Կը մտածեմ հրեաներու մոտ տուն մ՛երթալ բնակիլ և երբեմն անոնց կիները և հինդ տարեկան տղաքները ծեծել, միմիայն վասնզի ես անոնցմե ուժով եմ և թե ասկե 2000 տարի առաջ անոնց նախահայրերը իմ Քրիստոսս ծեծեցին:

Կը մտածեմ նաև դերասան մ՛ըլլալ, որպեսզի իրիկուն մը իմ նպաստիս ներկայացում մը տամ, և հեղինակի մը նոր Թատերգություն մը շինել տալով, սակարկություն ընեմ և ստակ մը շտալև նոթը. իմ հեղինակիս հոգին հանեմ, որպեսզի իմ հեղինակս հասկնա, թե դերասանի մը հետ գործ ունենալը ի՛նչ զվարճալի բան է եղեր, և թե հեղինակները ի՛նչպես պետք է որ դերասաններուն դերին ըլլան և անոնց համար այնչափ բան քաշեն՝ որչափ բան չքաշեցին երբեք իսրայելացիները փարավոններու[10] ձեռքին:

Կը մտածեմ նաև դպրոցներու տնօրեն ըլլալ, երբեք բան մը չգիտնալ, և երբեմն երբեմն իմ երաժշտության դասատուիս այնպիսի աշխարհաբար նամակներ գրել, որոնց մեջ Սաղմոսեն[11], Ժամագիրքեն[12], Նարեկեն, Շարականեն[13] գրաբար պարբերություններ դնեմ, որպեսզի իմ երաժշտության դասատուս և ամբողջ մարդկությունը իմանան, թե ես գրաբարն կը հասկնամ:

Միտքս դրած եմ նաև պարել սորվիլ և իմ տամաներուս մեջը այնչափ սխմել, որ իմ տամաներս ութ օր հիվանդ պառկին և կենացնուն մեջ չմոռնան երբեք, թե իրիկուն մը ինձ հետ պարեր են:

Այո՛, այս բաներուն մեկը կամ մեկ քանին մտադիր եմ ի գործ դնել: Ուրիշ միջոց չեմ գտներ մեծ մարդոց կարգը դասվելու:

Ի՛նչ ըրին մինե Ազեքսանդր, Սոկրատ, Կիկերոն, Վոլտեռ, Տանթե, Պոնապարթ և այնքան ուրիշներ:

Ո՛չ, ո՛չ, այս ճամբան չելներ, պետք է որ ես ալ մեծ մարդ մը ըլլամ և անունս անմահացունեմ:

Պետք է անպատճառ, որ ինձ համար ալ բանն, թե երևելի Թատրոնապետ մ՛էր, և ամենեին ճշմարտությունը և անկեղծությունը չէր սիրեր. կամ խելացի մարդ մ՛էր և ամենեին բան չգիտնալով, մեկեն ավելի դպրոցներու տնօրեն էր, կամ անվեհեր և քաջ դյուցազն մ՛էր և հրեաներուն տղաքները կրնար ծեծել:

Այո՛, անկարելի է, որ այս բաները չըսեն ինձ համար: Եվ դարերն վերջը ես, դերեզմանես մեջ յան եկած և աշխարհին վերա ունեցած մեծ, երևելի համբավուս վերա հպարտանալով՝ պիտի ըսեմ ինքնիրենս. «դուն չկրցար ինձ հաղթել և մեռցունել ղես, ո՛վ մահ: Ահա իմ անունս անմահ մնացած է երկրի վերա: Ահա ինձ համար գեռ կըսեն և կը պատմեն այն մեծագործություններդ, զորս կատարեցի կենացս մեջ. այն դասատուները, զորս առանց ստակի գործածեցի, այն հրեա տղաքները, զորս անխնա զարկի և լեզապատառ ըրի, այն նամակները, զորս Ռուզնամեի մեջ գրեցի, այն հեղինակները, զորս

պարտքս չտալե զատ, այնքան հոգինին հանեցի. ատոնք բոլորը մեյ մեկ հիշատակարան են իմ մեծութեանս և իմ փառացս»։

Ջէ՛, ինձ համար երբեք չպիտի կրնան ըսել, թե աննշան ապրեցավ։

Արգու

ԻՄ ՈՐՈՇՈՒՄԸ

Մինչև ցարդ կը կարծեի, թե իմ ապրելու եղանակս աղեկ էր, և թե պետք էր, որ մինչև կենացս վերջը, այսինքն մինչև այն օրը, ուր Գաբրիել կամ Միքայել հրեշտակը իմ հոգիս իր լուսացնցուղ թևերուն վրա բեռցունելով՝ սիտի տանի զայն իր ուղած տեղը, շարունակեի այս կերպով ապրելու մեջ։

Եվ արդարև տեսակ մը արդարութեամբ և սրբութեամբ լեցուն կը գտնեի իմ կենացս պայմանը։ Երբեք մեկուն չարիք չհասցունելով, ամբարտավանութենեն բոլորովին հեռի, ուրիշներուն ըրած ազմուկին վերա այնպես նայելով՝ որպես կը նայի ոչխար մը թրամվեյի մը ժխորին վերա, երջանիկ կերևակայեի ինքզինքս և չէի ուզեր թողուլ իմ խոնարհ և դիտող կենցաղավարութեանս. բայց դործերը փոխվեցան։

Ա՛լ դժնդակ դարձավ ինձ այս կերպով մնալը։ Ա՛լ ընթացքս պիտի փոխեմ։ Քանի ինքզինքս կը խոնարհեցունեմ կոր, կարծես թե բոլոր ձախորդութիւնները, խոսք մեկ ընելով՝ կուզեն կոր գլխուս վրա թափելու և հոգիս ու մարմինս այրելու։ Խոնարհութիւն, բարեսրտութիւն, պարզասիրութիւն, ատոնք բոլորը վտանգավոր բառեր են, և ես այլևս չեմ կրնար զանոնք իմ վրա կրել։

Ո՜վ բարկութիւնս, դեռ անցյալ օր, երբ բլուրի մը մոտ, փշեղեն ցանկի մը մոտերը կեցած, լռիկ մնջիկ երկինքը ու երկիրը կը դիտեի, վասնզի երկինքն ու երկիրը միակ բաներն են, որոնց վրա նայելով՝ մխիթարութիւն մը կզգամ մարդոց բնութեան համար զգացած ցավերես, հանկարծ այծ մը, մորուսավոր և հանդուգն այծ մը, որ իր ընկերները կորուսած և լեռները իննկած էր զանոնք գտնելու համար, եկավ իմ մոտերը կանգ առավ, և ո՛վ ցասումն, ո՛վ անարգանք, սկսավ իմ երեսիս մայել և հարցումներ ընել ինձ իր ընկերներուն վրա։ Այսչափ խոնարհի՞մ պիտի ես. անասունները մինչև իսկ հանդգնին ինձ հարցումներ ուղղելու։

Ո՛չ, ո՛չ, ա՛լ չափը անցավ, ա՛լ չեմ կարող դիմանալ այս աշխարհին մեջ գտնված մարդոց և այծերուն ձեռքեն քաշածներուս։

Որոշած եմ ընթացքս փոխել։ Խոնարհութիւնը մեկդի պիտի թողում։ Ես

ալ ուրիշներուն պես պիտի ընեմ և պիտի ըլլամ։ Երբեմն երբեմն ճանճեր պիտի սպանեմ, կամ անոնց թևերը պիտի փրցունեմ, որպեսզի անոնք ալ քիչ մը խոնարհութիւն սորվին և հասկնան, թե ազե՞կ բան է եղեր միթե խոնարհ ըլլալը։

Աշնվականներուն պես պիտի քալեմ փողոցներուն մեջ. և այնքան աղմուկներ պիտի ընեմ, որ ամեն մարդ բաճիզ ըլլա։ Մինչև հիմա չբրածներուս աճիւն պիտի հանեմ։ Ուստի, թե որ ամենքը մեկ աստիճան ազմուկ կընեն, ես, հինգ, վեց, մինչև իսկ յոթ աստիճան ազմուկ պիտի հարուցանեմ։

Թող ամեն մարդ իմ վերա խոսին, պիտանան, թե ես ալ կամ այս աշխարհին մեջ։

Ճամբան գացած ատենս, ո՛ւր որ ալ ըլլամ, տուներուն մեջ, փողոցներուն մեջ, շուկան, ապառնացայտ աչքերով պիտի նայիմ ամենուն երեսը, և կայծակներ պիտի սփռեմ չորս կողմս։

Ուրիշի մը հետ խոսած ատենս, պոռալով պիտի խոսիմ, որպեսզի ամեն մարդ հասկնա, թե ես մեծ մարդ եմ, թե ամենքը կը սարսափին ինե, և թե ինձմե զատ ամեն մարդ աշխարհիս մեջ փոքր են և նվաստ։

Դիմացինիս հետ խոսած ատենս, թե որ անունը Գրիգոր է, Թումաս պիտի կոչեմ, որպեսզի ամեն մարդ գիտնա, թե ես ազնվական եմ, և թե ազնվականները պարտավոր չեն դիմացինին անունը միտքերնին պահելու։

Շատ մը մարդիկներ իմ դուռս պիտի բերել տամ, խոստանալով անոնց որ իրենց պաշտոններ պիտի գտնեմ. բայց իմ միտքս անոնց պաշտոններ գտնել չպիտի ըլլա, այլ երկու բան. առաջին, զանոնք հոգնեցունել և անոնց ոտքի ամաններըը հինցունել. երկրորդ, զանոնք հաճախ իմ տունս, ոտքս բերել տալ, որպեսզի աշխարհ իմանա, թե ամեն մարդ իմ մեծապատվութեանս պետք ունի, և թե ես աշխարհիս վրա գտնվող նախախնամութեան մըն եմ։

Պարտեզս պիտի ելնեմ շատ անգամ և դրացի կիներուն և աղջիկներուն հետ բարձրաձայն պիտի խոսիմ։ Ասով ամեն մարդ սա կարծիքը կունենա իմ վրա՝ թե ես աշխարհիս բոլոր կիներուն հետ կրնամ խոսիլ, և թե անոնք պետք ունին ինձ պես մեկու մը հետ տեսնվելու։

Տունս խոհարար պիտի բերեմ, հոգ չէ թե ստակ ունիմ թե ոչ. և ամեն քսան կամ քսաննհինգ օրն անգամ մը իմ խոհարարներս պիտի փոխեմ և անոնց ստակ չպիտի տամ. որով թե՛ իմ խոհարարներս իմ կերակուրի ծախքս հոգացած կըլլան և թե ես հասկցուցած կըլլամ աստուծո ստեղծած բոլոր խոհարարներուն, թե ես ազնվական եմ, և թե ստիպված չեմ խոհարարներուս ստակ տալու։

Արգու

ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Մեկը կար, մեկը չկար, մեկ աղվոր աղջիկ մը կար։

Այս աղջիկը առտուները կանուխ չէր ելներ, ամեն մարդ թե որ ժամը մեկին կելներ, ինք երկուքուկեսին կամ երեքին կելներ։

Ելնելուն պես իր աղվոր աչքերը շորս դին կը պտացուներ, խնձոր մը կը փնտռեր, որ ուտե, եթե խնձոր մը չի գտներ, ջուր մը կը խմեր, ակռաները աղվոր մը կը մաքրեր, մազերը կը ժողվեր և կարմիր ժապավենով մը կը կապեր ու ուսերուն վրա կը ձգեր։

Տեսնելու բան էր անիկա, երբ կերթար Հայելիին առաջ քիչ մը բուտրա քսվելու։ Ինքը բուտրայի պետք չուներ, աղվոր, վարդագույն երեսներ, առյուծի աչքերուն պես փայլուն աչքեր, չարաճճի աղվորիկ քիթ մը, կաս-կարմիր շրթունքներ, կլոր դեմք մը ուներ. բայց այս ամենը բավական չէր. պետք էր որ ամեն առտու անկողինեն ելնելուն պես, իր խնձորը ուտեր, կամ իր ջուրը խմեր, և անմիջապես բուտրա քսվելու համար Հայելիին վազեր։

Անդամ մը որ Հայելիին առաջ կը կենար, բուտրան ձեռքը կառներ, այն փափուկ և ճերմակ ձեռքերուն մեջ, Հայելիին մեջ իր պատկերին երեսը կը նայեր, քիչ մը կը խնդար, գլուխը ուսերուն վրա կես բոլորակ մը մեկդի կը դարձուներ, միշտ աչքերը Հայելիին մեջ եղած աչքերեն չդատելով. կերևա թե պակասություն մը կը գտներ, վասնզի այս անդամ ա՛լ չէր խնդար, և անմիջապես կսկսեր ճակատը, երեսները, թուշը պարանոցը բուտրայով մալակոնել, այնպես որ վայրկյան մը տեյիրմեննեն նոր դուրս ելած տեյիրմեննի մը կը դառնար, բայց վերջը կամաց կամաց իր մատներուն ծայրովը կսկսեր վար առնել այն բուտրաները, որ շատակեր փախած էին։

Երբ որ այս մանեվրը կը լմնար՝ կարմիր մուշտակ մը կամ կարմիր ճաճեր մը կը հագներ և կերթար պատուհանին առաջ կը նստեր։ Կսկսեր պզտիկ ձայնով երգ մը մրմռալ. երբեմն երբեմն փողոցներուն մեջ կը նայեր, վերջը մեկենիմեկ կը ցատկեր, տեղեն կելլեր, տանը մեջ եղողներուն հետ պռռալով, կանչելով կը խոսեր, կը խնդար, կը չախեր, կը բարկանար։ Ջրմոռնանք ըսելու, որ միշտ բարկությամբ կը վերջացուներ, որպեսզի իրավունք ունենա վերջեն ըսելու. «Աս ի՞նչ է, ամեն օր բարկանալ, աս ամեն օր պիս կը բարկացունեք. ես դուրս պիտի ելնեմ, քիչ մը բարկություն իջնե»։

Այս հաշվով, որովհետև ամեն օր կը բարկանար, ամեն օր վախիրլի վախիրգիս դուրս կելներ։ Ճամբան գացած առենը պիտի ըսեիր, թե պատերազմեն նոր ետ դարձող թագուհի մը կամ ամազոն[1] մ'է, այնքան կոտրըտվելով, գլուխը երերցունելով, աչքերը ծանր ծանր գոցելով բանալով կը քալեր։

Այս աղջկան անունը ինչ էր, չեմ գիտեր, սակայն ես Դելիլա՛հ պիտի ան-

վաննի դինքն, ա՛յնբան ինձ կը թվի, որ Սամփսոնին[2] մազերը կտրող կնոջը հանգամանքները ունենար։

Ամեն մարդու երևան ի վեր կը խնդար, իր ճերմակ և գեղեցիկ ակռաները ամեն մարդու կը ցուցուներ, որպեսզի ամենքը գիտնան, թե ինչ աղեկ խնձոր կուտվի այդ ակռաներով։

Ամենեին հոգ չէր ըներ ուրիշներուն կարծիքները։

Երբեք չէր մտածեր, թե ուրիշները ի՛նչ կրնան խորհիլ իր վրա։ Բավական էր, որ առտուները խնձոր մը գտներ ուտելու, բավական էր, որ առիթ մը գտներ բարկանալու, որպեսզի դուրս ելնելու իրավունք կարենար ունենալ։

Դուրս ելնել կըսեր, կը խենթանար, չես գիտեր, թե ի՛նչ հասկցեր էր դուրս ելնելով։

Տանը մեջի օդը կերևա թե զինքը կը խեղդեր, վասնզի օրվան մեջ երեք կամ չորս ժամ հազիվ հազ իր տանը մեջ կանցուներ։

Ահա այսպես աղջիկ մ'էր մեր Դելիլահը։

Արդ, օր մ'եղավ, որ այս աղջիկը ուզեցին։ Ելքը գլուխը մեկը կար, որ Դելիլահը տեսեր և հավներ էր։ Բայց Դելիլահ չուզեց ամուսնանալ։ Դելիլահ գիտեր, որ աշխարհիս մեջ կամ երկու, կամ երեք հոգի կար զինքը առնելու արժանի, անոնք ալ ո՛ւրկե պիտի գտներ։

Ասկեց զատ Դելիլահ կը մտածեր, թե երբ ամուսնանար, պիտի կրնա՞ր իր էրկանը բարկանալ առտուները և դուրս ելնելու իրավունքը վաստկիլ։

Շատերը կըսեին Դելիլահին.

«Դելիլա՛հ, ըրածդ վայրո՞ւմ բան է, չելնե՞ս սա մարդը առնես։ Ասկե աղեկ մարդ ո՞ւր, ե՞րբ պիտի գտնես»։

Բայց Դելիլահ պատասխան կուտար.

«Դուք իմ գործիս մի՛ խառնվիք։ Դո՞ւք եղաք ինձի խրատ տվողը։ Ես իմ ընելիքս չե՞մ գիտեր կոր։ Ալլա՛հ, ալլա՛հ»։

Ա՛յսպես կը խոսեր Դելիլահ, և ամենքը սարսափելով կը լռեին։ Վասնզի ամենքը կը վախնային Դելիլահեն։ Աչքերը անգամ մը ասանկ դարձնելուն պես, ահ ու սարսափ կը սփռեր իր չորսդին, և անոր ֆիսրաձին փեշերը երկյուղ և արհավիրք կը տարածեին աշխարհիս բնակիչներուն վերա։

Շատ երիտասարդներ մինչև անգամ կը զարհուրեին Դելիլահեն։ Անոր աչքերը կը սիրեին, անոր շրթունքները, անոր հասակը, անոր մազերը համակրություն կազդեին երիտասարդներուն, բայց անոր պռռալ կանչելները, անոր ծուռ նայվածքները, անոր քալվածքը երբ միտքերնին կը բերեին, մղոն մը հեռու կը փախչեին, որպեսզի չըլլա թե Դելիլահ դիմացնին ելնե։

Ահա այսպես էր Դելիլահ։ Համեստությունը երբեք չէր սիրեր։ Կուզեր որ բոլոր աշխարհ զինքը սիրե և ինքը մեկը չսիրե։ Զգացում չուներ սիրելու։ Իրավ

է, որ երբեմն երբեմն իր ակռաները ուրիշին կը ցուցուներ, բայց ասիկա ուրիշ բանի համար չէր, բայց եթե ցույց տալու համար, թե ինքը աղվոր ակռաներ ուներ, և թե պատրաստ էր խնձորներ ուտելու, եթե պետք ըլլար։

Բայց միթե աղե՞կ բան մ'ըրավ։

Ամեն մարդ վախցունելովը ի՞նչ շահեցավ։

Միթե ավելի աղեկ չէ՞ր ըլլար, եթե շենք շնորհք, խելքը գլուխը ըլլար, չպոռար, չկանչեր, կարգվեր, տուն տեղ ըլլար, զավակներ ունենար, զավակներուն տանտիկնություն սորվեցներ և մենք ալ տեսնեինք, թե Դելիլահի պես կին մը կա աշխարհիս վերա, որ խնձորեն, ծառտուները բարկանալեն, ամեն օր դուրս ելնելեն, ամառ ձմեռ կարմիր բաներ հագնելեն զատ ուրիշ բան ալ գիտե եղեր։

Արզաս

ՆԱՄԱԿԻՑ ԹԱՏՐՈՆԻ

... Էֆենտի։

Ինչ որ ըսեմ քեզի, իրավունք ունիմ, ինչ որ ընես ուրիշին, իրավունք չունիս։

Եթե դուն իրավունք ճանչցող մեկն ըլլայիր՝ նախ և առաջ լեզուդ առաջ երթալու չէր հանդիմանելու այդ ազնիվ աղիկինը՝ որուն դուն ժամանակավ ոտքի ամաններդ կը տաներիր իր եահեն, որուն հիշատակաց արժանի ամուսնույն բարիքները վայլած ես ժամանակավ, բարիքներ՝ որք բարեբախտաբար պատճառ եղան, որ այսչափ բարձրանաս և դժբախտաբար ուրիշներու չարիք գործես։

Ի՞նչ կուզես, մարդ աստուծո, բարձրանալու համար անպատճառ ուրիշներուն չարի՞ք ընել պետք է, և ընելեն ետքը ինքզինքդ սրբոց կա՞րգը դասել պետք է։

Ինքզինքդ բարի ցույց տալու համար բռնած ընթացքիդ բսելիք չկա։ Առավոտները անկողինդեդ ելնելուդ պես ջերմեռանդությամբ «Տեր, եթե զշրխուես իմ բանաս» կը կարդաս բարձր ձայնով, որպեսզի փողոցեն անցնողները՝ աս ինչ բարեպաշտոն մարդ է ըսեն. երեսդ լվալեդ ետքը ճարկիլե խմելով գլուխ մը Նարեկ կը կարդաս և այնքան կը պոռաս, որ Նարեկացին ողջ ըլլար նե՝ պիտի վախնար մարդը ու գիրքը ձեռքեդ հափշտակելով գլխուդ պիտի իջեցուներ։ Այս աղոթքն ալ լմնցնելեդ ետքը սատանան հետդ առած՝ եկեղեցի կերթաս աղոթելու համար աստուծո, որ սիրտդ կարծրացնե, որպեսզի խեղճ մարդոց և աղնիվ ընտանյաց դյուրությամբ կարենաս վնաս հասցնել։ Հավատ՝ որ եկեղեցիին դռնեն ներս մտած ժամանակդ սիրտս թունդ կելլա, որ չելլաս աստուծո ալ չարիք մը հասցունես, բայց մեկ կողմեն սիրտս կը հանդարտի խորհելով՝ որ աստված շինել տալիք տուն մը չունի, որ իրեն և ուրիշներուն վնասես. տուն մը շինել տալու համար քանի՛ տուներ կը կործանես, զավակդ հառաջ տանելու համար ո՛րչափ տղաքներ ետ ձգելու կաշխատիս։

Մտի՛կ ըրե պիս, ե՛տ քաշվե այդ ընթացքեդ, քիչ մը չարություն մի՛ ըներ,

բարութիւն ալ մի՛ ըներ — որովհետև ըրե՛ ըսեմ նե՝ ալ չես ըներ — և մարդոց հետ վարվելու, ապրելու կերպը սորվե։

Գիտեմ, այս նամակս քեզի ծանր պիտի գա, ի՞նչ ընեմ, ես պարտավոր եմ ձեռքես եկածին չափ աշխատիլ, որ չար չըլլաս — չեմ ըսեր թե բարի ըլլաս։

Զբաղմանցս պատճառավ, այս նամակս կարճ կապեցի, մյուս ըսելիքներս հաջորդ նամակներուս մեջ կը դրեմ։

Մնամ

Պարծիդ սպասող՝

Թաւրոն։

Ա.ո Տ. Էֆենտի է.[1]

Մարդս որչափ որ պարտաւոր է ինքզինքը ճանչնալ՝ նույնչափ և թերևս ավելի պարտաւոր է դիմացինը ճանչնալ, որովհետև դիմացինը ճանչնալը իր չափը ճանչնալու մեծ դյուրութիւն կուտա մարդուս։

Եվ որովհետև դուք ալ մարդ ճանչցված եք, կարծեմ պարտավոր եք այս երկու պարտականութեանց գոնե մին կատարել։ Բայց ցավ ի սիրտ կը տեսնեմ, որ այս երկու պարտականութիւններեն և ո՛չ մին կատարելով՝ ձեր հասակեն բարձր բաներու կերկննաք և ամենուն ծաղու նշավակ կըլլաք։

Ձեր ազնվութիւնը (՞) կը հիշե անշուշտ, որ անցյալ շաբթու դիս կանչել տված էր... ահա դիմացինդ չճանչնալուդ անհերքելի ապացույց մը։

Ձեր ազնվականութիւնը (՞) կը հիշե անշուշտ, որ հրավերնիդ քաղաքավարութեամբ ընդունելով գալուս պես ինձի բարեկամաբար խրատ տալ սկսաք... ահա ինքզինդ չճանչնալուդ անժխտելի փաստ մը։

Էֆենտի, իմ բարեկամներուս խրատներն ու կարծիքներն սիրով կընդունիմ, բայց երբ դաճաճ մը, որ ինքզինքը քաջ կերևակայե, երբ հասարակ մարդ մը ինքզինքը լուրսի մը կամ ֆոնթի մը պես ազնվական կը կարծե և չղիջանիր յուր հավասարներուն և շատ անգամ թե՛ արժանյոք և թե՛ ազնիվ սրտով իրմե բարձր եղողներուն բարև տալ, երբ բթամիտ մեկը բժժանորդ դրված լրագրին խմբագրին վրա ազդեցութիւն ունենալ կը կարծե, և երբ այսպիսի մեկը առանց իր արժեքը գիտնալու հանուն բարեկամութեան խրատ տալ կելնե, իր ենթադրական ազնվականութեամբ ինձի հրահանդ տալու իշխանութիւն ունենալ կը կարծե և իմ անկախութեանս վնասել կուզե, այնպիսվույն խրատը ավազին հետ կը մերժեմ։

Ըսեք, էֆենտի, Թաւրոնին պարունակութեանը մասին մեզի խրատ տալու իրավունքն ուակի՞ց ունենալ կարծեցիք։ Բարեկամութենե՞։— Քանի՞ անգամ

տեսնված եք հետս, ի՞նչ բարեկամութիւն ըրած եք ինձի, ե՞րբ Թաւրոնին բարիք ուզած եք։ Ձեր տաղանդն՝ ո՛ւր է այդ ըսածնիդ. հասցնե՞ն ավելք, երթամ գտնամ։ Ձեր իշխանութենե՞ն—Տպագրական ազատութեան անդամ չեք։ Թաւրոնն... վաճառականութեան վերաբերյալ լրագիր չէ։ Ուակի՞ց ասիք ուրեմն այդ իրավունքը. կարծեմ դուք ալ չիյտեք ուակից առած ըլլալնիդ և արդեն չունիք, որ տեղն մը առած ըլլաք. ուստի այն մարդը, որ յուր չունեցածն ունենալ կը կարծե, ամենեն ծաղրվելու արժանի է։

Էֆենտի՛ս, պետք է սորվիլ թե՝ խմբագիր կա, խմբագիր ալ կա։ Խմբագիր կա, որ իր լրագրույն միջոցավ ապրելու համար հարուստներուն տուներուն մեջ շողոքորթութիւն կընե, ձեզի պես էֆենտիներուն դեռևն բարև կուտա, խրատ տաս նե՝ կընդունի, չխես նե՝ չրարկանար. խմբագիր ալ կա, որ իր լրագրույն միջոցավ միմիայն քեզի պես մարդիկը ծաղրելով հաճույք կզգա, որ ժողովրդական է, որ հարուստ, էսնաֆ, ազգատ, ամենը հավասար բռնելով՝ բարին կը սիրե, կը գովե, որ ձեզի՞ պես ազնվականներն շողոքորթվիլ կուզե, որ ձեզի պես էֆենտիներուն շատ բարձրեն թռչտիլը տեսած ժամանակը խնդալեն կը ճաթի, և դուք ալ դժբախտաբար ասանկ խմբագրի մը խրատ տալու եկաք-մե՞ղք, որ դիմացիննիդ ճանչնալու մասին այսքան տկար եք եղեր։

Էֆենտի՛ս, դուք որովհետև ազնվականութեան սուրը կը քաշեք առանց ազնվական ըլլալու, թո՛ղ կուտաք, որ ազնվական անվանյալ մը խմբագիր մը գետնե գետին զարնե ու սպաննե, դուք ալ հանդիսատես կըլլաք, և երբ խմբագիրն գլուխը քիչ մը վեր առնե ու ազնվական անվանյալին քար մը նետե, խուչն կը փրփրիք։ Ո՛ւր՞ը, եղե՞ռն... կը պոռաք։ Ըստ ձեզ, խմբագիր մը ոչ այս աշխարհին և ոչ ալ հանդերձելոյն մեջ ձեզի պես ազնվական անվանյալներուն վրա բան մը գրելու չէ։

Էֆենտի՛, ձեր այդ կարծիքը սխալ է և ես արդեն ձեզմե ուղիղ կարծիր մը չեմ սպասեր, որովհետև ձեր խելքը, տաղանդն ու արժանիքը, ինչպես նաև ձեր ազնվականութիւնը ձեր հասակին վրա չափված են դժբախտաբար։

Ափսո՜ս, որ ինքզինքնիդ միշտ ձեր բթին վրա կը չափե՛ք, և դիմացիննիդ՝ ձեր հասակին վրա։

Առ այժմ երթաս բարով։

Թաւրոն

ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԳԱՐՁ ԹԱՏՐՈՆԻ ԾՆՆԴՅԱՆ

Այսօր Թաւրոն յուր երեք տարին լրացունելով չորրորդին կը թևակոխե։
Այսօր Թաւրոն ճիշտ երեք տարեկան կըլլա ըստ էրիկ մարդոց և մեկ ու

կես տաբեկան՝ ըստ կանանց, որ սովորություն ունին տարիքնին կես աւ կես դեղչելու մեր թղթերուն տակոսներուն պես։

Թատրոն երեք տարու մանուկ մ'է, բայց այն մանուկներեն, որոնք համբուրելու համար են դիրկդ առնես՝ երեսնին թթվեցունելով լալ և պոռալ կսկսին։ Թատրոն այն մանուկներեն է, որք անոր ասոր բաֆիտն ընելով՝ այսինքն անոր ասոր նկարագիրն ներկայացունելով իրենց վրա, և երբեմն ալ մեկուն մորուքը քաշելով, մյուսին ակռները փրցունելով՝ ամբողջ ընկերություն մը կը ղվարճացնեն։

Թեպետև Թատրոնը ասանկ սիրուն տղա մ'է, բայց և այնպես քանի մը անձերե բավական ապտակված է։

Ինչո՞ւ այդ մարդոցմե ապտակվեցավ Թատրոն, ի՞նչ էր հանցանքը։

Պատճառը պարզ է։

Այդ քանի մը անձերը Թատրոնը որպես թե շոյելու համար դիրկերնին առած ըլլալով՝ Թատրոն ալ, որովհետև տղա մ'է, չկրնալով ինքզինքը բռնել՝ անոնց ակռները քաշեց։ Ասոր վրա անոնք ալ սրդողելով՝ ապտակեցին խեղճը։

Եվ սակայն չվհատեցավ, իր սկզբանցը մեջ անսասան, ընթացիցը մեջ հաստատ, խղճին առջև համարձակ, արհամարհեց այդ ապտակները և ըսավ այդ քանի մը անձանց.

«Քանի որ ես տղա եմ, իմ խաղալիքս ըլլալե չպիտի դադրիք զամենայն ավուրս կենաց իմոց»։

Այս ըսելով կամքեց, ապտակեց ինչ որ չար էր, տգեղ էր, անօգուտ էր. ինկ շոյեց և համբուրեց ինչ որ գեղեցիկ էր, բարի էր և օգտակար էր։

Ահա այս անփոփոխելի նշանաբանով է, որ Թատրոն կը մտնե այսօր ալ չորրորդ շրջանին, հրապարակավ շնորհակալություն հայտնելով այն ամեն անձանց, որ իրեն մեծնալուն համար ամեն ճիգ թափած են և դեռ կը թափեն, ինչպես նաև հրապարակավ ցավ հայտնելով այն բաժանորդաց, որոնցմե Թատրոն ստակ ուզած ատենը կամ իբրև ողորմություն կուտան և կամ մուրացկան մը վռնտելու պես կը վռնտեն։

ԴԱՊԱԴԱԿԱՆ

Ոսկեղեն դարն ալ անցավ և անոր հաջորդեց թղթադրամի դարը։

Ոսկեղեն դարուն մեջ մարդիկ երջանիկ կապրեին, թղթադրամի դարուն մեջ ավելի հանգիստ պիտի ապրին։

Ի՞նչ է բոլոր շփոթությանց, կռիվներու, պատերազմներու պատճառը.— Ոսկին։ Ի՞նչ է այսչափ մարդոց բանտերու մեջ մնալնուն պատճառը.— Ոսկին։ Ի՞նչ է մարդս գող, ավազակ ու անբարոյական ընողն.— Ոսկին։ Ի՞նչ է մեր վարժարաններուն առաջ չերթալուն պատճառը.— Ոսկին։ Վերցո՛ւր ուրեմն ոսկին, տես ինչպես կը վերնան մոլությունները։

Անոնք, որ ոսկիին մեջտեղեն վերնալուն կը դանգատին, չեն խորհիր, որ հրապարակի վրա ոսկի չգտնվելուն համար է, որ Դալաթիա առաջվան պես դողություններ տեղի չեն ունենար։

Ըստ իմ տկար կարծյաց, քշե՛ ոսկիները Եվրոպա, թո՛ղ եվրոպացիք իրարու գլուխ պատռեն և մենք խաղաղ կյանք վարելով ըսենք.

— Խե՛ղճ մարդիկ, ստակի համար կը կռվին կոր։

Եվ սակայն բոլոր աշխարհ փափաքներով լեցված են։ Այս փափաքները ո՞ւր դնենք։

Օրինակի համար, լորտ Բըսըլ Թուրքիո բարեկարգվելուն կը փափաքի եղեր և ոչ թե Ռուսիո Պոլսո տիրապետելուն։

Լորտ Կլատըսթընը Պուլղարիո անկախության կը փափաքի եղեր։

Լորտ Տերպին ընդհանուր բարեկարգության կը փափաքի եղեր։

Պիզմարքն ալ սա անցած դարձած բաներեն օգուտ մը քաղել կը փափաքի եղեր։

Պ. Քոմունտուրոսը Եպիրոսի, Թեսալիո բարեկարգության կը փափաքի եղեր։

Բրենս Կորչաքովը, իբրև արտաքին գործոց պաշտոնյա Հիսուսի, քրիստոններից աղեկ վիճակ ունենալուն կը փափաքի եղեր, առանց Հայաստանի քրիստոնյաներուն նայելու։

Մեր Բրենս Խիկարն ալ անշուշտ Հայաստանի հայոց բարեկարգության կսպասե անհամբեր։

Ինչպես հայտնի է, ամեն մարդ իր կարապետը կուլա կոր... և միթե այսչափ փափաքներ կրնայի՞ն քիչ միջոցի մեջ կատարվիլ, անշուշտ ո՛չ, ուստի լայնածավալ զինադադար մը կրնա այս գործերը կարգադրել։

Իրաց այս վիճակին մեջ հրեաները չելա՞ն Երուսաղեմին ծախու առնելու։

Ի՞նչ կըսեք։

Ի՞նչ պիտի ըսեմ։ Տես Փունջը ինչ կըսե.

«Եվրոպա գտնվող Հրեական ընկերության մը կողմանե մեկը մայրաքաղաքս պիտի ղրկվի եղեր Սիրիո կուսակալության վիճակը ծախու առնելու և Իսրայելյան թագավորությունն անդանոր վերահաստատելու համար»։

Ծախողը ո՞վ է, որ ասոնք այդ վիճակը ծախու առնելու ելեր են։ Եվ երթե ծախվի, թեպետև մարթե անցունելը հիմարություն է, քրիստոնյայը կը թողո՞ւն, որ հրեայք առնեն այդ կողմերը։

— Բայց հրեայք այդ տեղերը առնեն ի՞նչ պիտի ընեն, թագավորությո՞ւն պիտի հաստատեն։

Այդպես կըսեն. բայց ես չեմ հավատար։ Շատ հավանական է, որ աժան ծախու առնեն ու բարձր գնով վերջեն ուրիշի մը ծախեն։

Իրաց այս վիճակին մեջ, ինչպես կրսե Մասիս, սբեէյուլասիոնի ելեր են թշվառականները, ինչպես կըսեր Լրագիր[1]։

Մենք գիտեինք, որ սուտ խոսող լրագիր մինակ մեր Մեճմուան[2] է։ Ամերիկայի մեջ ալ կը գտնվին եղեր ատանկ լրագիրներ, որոնց քով Մեճմուա քանի մը տարի աշակերտություն ընելու է, սուտ խոսիլ սորվելու համար։

Այս լրագիրներեն մին կըսե՝ թե բարձր. Աբրահամ բաշա Երամյան Պեյքողեն[3] մինչև Րիվա ճամբա մը բանալ տվեր է եղեր գետնին տակեն, ուսկից միտք ունի եղեր անցունել... Հիշյալ լրագրին թղթակիցը... չէ՛, չէ՛, սխալեցա, ուսկից շա՛տ օտար զորքեր պիտի գան եղեր, մայրաքաղաքիս մեջ պիտի լեցվին եղեր և այլն։

Ըստ մեզ, ավելի աղեկ կըլլար՝ երթե արդո թղթակիցը ատանկ սուտ մը Ամերիկայի արվեստահանդեսին ղրկեր իբր հազվագյուտ սուտ մը...

Վերջապես զինադադարը այս օրերս պիտի կնքվի։

Շատ կը փափաքեի սա վեց շաբաթվան զինադադարի մկրտության հանդեսին ներկա գտնվիլ։ Ի՞նչպես պիտի կնքեն արդյոք այս երախան. երախան

ի՞նչ պիտի պահանջե. տղան պաղ ջուրի մեջ պիտի ընկղմե՞ն, թե տաք։ Ահավասիկ ասոնք կուզեի գիտնալ։

Բայց ամենեն հավանականը սա կերևի ինձի, որ Ռուսիան երախան գիրկը պիտի առնե և երբ կնքող քահանան հարցունե իրեն, թե՝

— Երախան ի՞նչ կուզե։

— Հերսեք, Պոսնա և Պուլղարիա, պիտի պատասխանե կնքահայրը։

— Ատ ի՞նչ ըսել է. երախա ըսածդ հավատք, հույս և սեր ուզելու է։

— Մեր երախան ատանկ բաներ չուզեր։

— Զարմանալի բան... երախային անունը ի՞նչ է։

— Զինադադար։

Այս պատասխանին վրա մկրտիչ քահանան երախան կնքահորը գրկեն պիտի առնե, տաք ջուրին մեջ պիտի խոթե ու տղան պիտի խաշե։ Այս գործողությունն ընելեն ետքը, կնքահոր պիտի դառնա ու ըսե.

— Այս երախան խաշեցավ. հիմա պետք է, որ ուրիշ երախա մը կնքենք։

Ատոր ի՞նչ պիտի պատասխանե կնքահայրը։

Ատ չգիտեմ, բայց սա գիտեմ, թե մինչև որ կնքահայրը չփոխվի, շենք շնորհք կնունք մը տեսնալիք չունինք։

Ոտվրնիդ պատնեմ, պատերազմի խոսք մի՛ ընեք. ծայրը ամենուս ալ պիտի դպչի։

— Ի՞նչ եղեր է։

— Ինչ պիտի ըլլա. Նյու Յորքեն եկած հեռագիրը չկարդացի՞ք. տես ի՛նչ կըսե կոր.

«Եվրոպացին եկած այն լուրերը, որք մոտալուտ պատերազմ մը կը ծանուցանեին, հոս մեծ հուզում պատճառեցին. Նյու Յորքի մեջ շատ վաճառականներ սնանկացան»։

Հասկցա՞ք հիմա, մարդոց գործը կարդին է եղեր, բայց պատերազմի լուրի մը վրա վախցեր ու սնանկացեր են։

Տեր ասոված, ի՛նչ օրերու հասանք, վախեն պիտեինք, որ մարդուս արյունը կավրվի, լեզին կը բրդի, կամ սբռաճա կըլլա. բայց բնավ լսած չունեինք, որ վախեն մարդ սնանկանա։

Իրավ կը զարմանամ, որ ինչպես խասդեղի շոդենավերը մանողները մինչև այսօր չեն սնանկացեր։

Թայմրզ[4] քանի ատենե ի վեր Պիզմարք իշխանին ոտքն է հնկեր, կադաչե, որ միջամտություն մը ընե։

— Դուք գործին մեջ մտնաք նե՝ կըսե Թայմըը, խաղաղություն կըլլա, խըյաներ:

— Ի՞նչ կուտաք ինձի գործին միջամտելու համար, կը հարցունե իշխանը:

Այս խոսքեն կը հայտնվի, որ եթե Պիզմարք իշխանին հարյուրին տասը ֆոմիսիոն մը տանք, պիտի բարեհաճի գործին մեջ մտնալու:

Մեր վաստակն ի՞նչ է, որ ելնենք ֆոմիսիոն ալ տանք:

Իրավունք չունի՞մ այսպես խոսելու, այս մասին ձեր կարծիքը ի՞նչ է, ո՞վ բրենս Շարլը Հոհենցոլերն:

Դուք ալ ուրիշին խոսքերուն հավատալով՝ միաք ունիք եղեր չեզոքությունն այս օրերս ճամբելու: Ի՞նչ չարիք տեսաք չեզոքութենեն, ի՞նչ բարիք պիտի տեսնաք ներգործութենեն:

Իմացա, որ շատ մը ղենքեր դնած եք. սակայն չկրցի պատճառ մը հասկնալ, թե պզտիկ շահով մը զանոնք ծախելո՞ւ համար առիք, թե որսորդության համար, չեզոքությունը պահելո՞ւ, թե վռնտելու համար:

Իմ փափաքս այն է, որ ինչպես որ Տյուք Տըգաղն ալ կըսե, չեզոքությունը աղվոր մը պահեք, ինչու որ, Հոհենցոլերնիկս, դուք օժանդակ բայ մ'եք և օժանդակ բայերը միշտ մյուս բայերուն օգնության կերթան, անոնց եղանակները և ժամանակները կը շինեն, անոնց գործը կը լմնցունեն և իրենք բան մը չեն շահիր:

Այս օրերս ամեն տեղ դեսպանաժողովի մը խոսք կըլլա:

Մին դեսպանաժողովին համար հարմար քաղաք մը կը փնտռե ճիշտ այնպես, ինչպես որ դուն տուն մը կը փնտռես ու կը նայիս, որ թե՛ աժան ըլլա, թե՛ հարմար, թե՛ օդասուն և թե՛ ծովահայաց:

Ուրիշ մը դեսպանաժողովին անունը լսելուն պես, Քալքասի[5] պես ցաւակել կսկսի. այդ անունը իր չիղերուն կը դպչի:

Երրորդ մը կընդունի դեսպանաժողովը՝ բայց թեությամբ մը:

Չորրորդ մը ո՛չ կընդունի, ո՛չ չընդունիր:

Իսկ մնացածները թուղթեր կը մրոտեն, կը գրեն, կավրեն ու ծրագիր կը պատրաստեն այս դեսպանաժողովին՝ որուն ըլլալիքը, կամ ուր ըլլալիքը դեռ հայտնված չէ:

Ահա այս ըլլալիք դեսպանաժողովին մեջ համաձայնություն մը պիտի գոյանա ու խաղաղությունը պիտի թագավորե եղեր:

Նախ և առաջ խաղաղությունը պիտի վախնա այդ դեսպանաժողովին մեջ մտնելու...

Ինչպես որ խավարին լույսը կը հաջորդե, փոթորիկին հանդարտություն, ոսկիին դրամաթուղթ, այնպես ալ կովին դեսպանաժողով մը հաջորդեց:

Ամեն մարդ օժիտը պատրաստված աղջկան մը պես ձեռք ձեռքի վրա դրած՝ գալիք հյուրերուն կսպասե, որոնց մեկ մասը արդեն ճամբա ելած է, մյուս մասն ալ ելլելու վրա է:

Բարի եկան, հազար բարի...

Գիտե՞ք, այս հյուրերը ի՛նչ ընելու համար պիտի գան հոս. մեր վիճակին բարվոքմանը վրա պիտի խորհրդակցին... ի՛նչ բարի մարդիկ...

Եթե դեսպանաժողովը կարող էր քրիստոնեից վիճակը բարվոքելու՝ ինչո՞ւ այսչափ տաեներ ի վեր չդումարեցին, կամ չըռամապատակեցին զայն ու զմեզ հոտորակի վերածեցին, մանավանդ տասնորդական հոտորակի...

Ինչ որ է, առայժմ մեր պարտքն է այս հյուրերը սիրով ընդունիլ և աղոթել,— ինչպես որ Ասլանյան Ստեփան բաշային կարծիքն ալ է,— որ մեջերնին համաձայնություն մը գոյանա, ձարին իզձերը եթե չպսակվին՝ գոնե նշանվին,— վերջեն նշանը ետ ընելը դյուրին է,— որպեսզի սա պատերազմի կրկյուղը փարատի:

Աղոթենք, աղոթելով աղոթենք՝ որ հայոց ալ քրիստոնյա ըլլալը ձարին հականջը դրվի և գործադրվի հոն արդարությունը, որ իր բացակայությամբը անշուշտ պիտի փայլի հոն...

Հրամմեցե՛ք ուրեմն, լորտեր, մարքիզներ, կոմսեր, վերկոմսեր, դուքսեր, արհիդուքսեր, եթե Պոլիս չեք տեսեր, եկե՛ք դուք ալ տեսեք... ամեն տաեն քրիստոնեից վիճակը ասանկ չըլլար...

Հունաստանի կառավարությունն ալ ուզեց քիրիս մը ղրկել այս դեսպանաժողովին, բայց չհաջողեցավ խեղճ տղան:

— Ես ալ պիտի երթամ, ես ալ պիտի երթամ ըսավ՝ ոտքերը գետին զարնելով:

— Չէ՛, տղաս, դուն նստե՛, ըսավ Անգղիան:

— Ինչո՞ւ պիտի նստիմ եղեր:

— Հոն երթաս ի՞նչ պիտի ընես, տղաս, պիտի ձանձրանաս ու քնանաս:

— Ինչո՞ւ քնանամ պիտի:

— Հոն գացողները մեծ մարդիկ են, քեզի հարմար մարդ չկա, որ հետը նստիս, խոսիս ու ժամանակ անցունես։

— Ես ալ մեկ կողմ կը քաշվիմ, մտիկ կընեմ։

— Անոնք չպիտի խոսին որ... Թուղթն պիտի խաղան... Թուղթեն ալ չես հասկնար, որ քովերնին նստիս ու նայիս։

— Ի՞նչ պիտի խաղան։

— Ձիրար կթելու խաղը պիտի խաղան։

— Դուն կթես նե՝ ինձի ալ բան մը կուտա՞ս։

— Դուն ալ էրկան ըրիր ա՛...

— Ինչո՞ւ էրկան ընեմ պիտի, ամենն ալ սա խաղեն բան մը փրցունել կը նային կոր, ինձի ծնկակապ մը տվին, ոտքս կապեցին։

— Է՛, է՛, խելոք նստիս նե՝ ծնկակապ մ'ալ առնել կուտամ ես քեզի...

— Ի՞նչ գժբախտութիւն է, որ մեր բաղաքականութիւնը մեր ծունկեն վեր չելավ գնաց։

— Դուն իմ խոսքս մտիկ ըրե ու...

— Կը խնդրեմ ծունկե վեր մի՛ ելլար, կըսե անշուշտ մտքեն թագուհվույն հակառակորդը։

Աստվածդ սիրես, շիտակ դրուցե՛, Պ. Կլատբսթըն, սա պուլղարաց վրա հրատարակած տետրակեդ քանի՞ հազար ոսկի վաստկեցար։ Մի՛ պահեր ինձմե, համոզված եմ ես, որ ադեկ ստակ կոտրեցիր. որովհետև, եթե վնաս ըրած ըլլայիր՝ հիմա ալ հունաց խնդրույն վրա բան մը դրելու չէիր պատրաստվիր։

Աբենքի համալսարանի տնօրեն Պ. Քոքինոսին ղրկած նամակիդ մեջ հետևյալ տողերը կարդացի.

«Կապահովեմ զձեզ, թե ձեր խնդիրը հույժ կվբաղեցունե իմ միտքս։ Միտք ունիմ այս նկատմամբ բան մը գրել և կը հուսամ՝ թե պարապ տեղը աշխատած չպիտի ըլլամ», ու միտքես ըսի.

— Նըբայր Կլատբսթընը քանի մը հազար ոսկի ալ մեկդի պիտի նետե։

Պ. Կլատբսթըն, հունաց վրա գրելիքդ գրե՛ լմնցուր, ու հայոց վրա ալ բան մը գրե՛։ Ասկից տեղեկութիւններ կուտամ ես քեզի, բայց բաժին մ'ալ ինձի տալու ես։ Ետքը գործերնուս դա նե՝ հրեից վրայոք ալ տետրակ մը կը հանենք, քիչ մ'ալ անկից կը շահինք, բարի եկար, հազար բարի։

Եթե գործերնիս հաջողի՝ մեկ ադգին վրա երկերկու տետրակ կը հրատարակենք, ամեն օր կը հրատարակենք։

Այս մասին խորհե՛, Պ. Կլատբսթըն, և կարծիքդ ինձի հաղորդե՛, որ սա խնդիրները չվերջացած քիչ մը դործ տեսնենք։

Սա պաշտոնական դրութեանց մեջ անանկ ձևեր կը գործածվին, որ մարդս տարի մը շարունակ կը խնդացունեն։

Այս դիվանագետ բսվածները երբեմն իրարու անանկ նամակներ կը ղրկեն, որոնց մեջի պահանջումներով անուղղակի ձիրար կը նախատեն և վերջը կատորագրեն.

«Կը խնդրեմ, բարեհաճեցեք ընդունիլ իմ խորին հարգանաց անկեղծ հավաստիքը»։

Այնպես մը ըսել, որ եթե աստված մի՛ արասցե անկեղծ հավաստիքը չընդունի՝ խաբբրը պիտի մնա։

Շիտակը, ադեկ երես... եթե ես դիվանագետ մ'ըլլայի, պարզապես կըսեի. ընդունե՛ իմ խորին նախատանաց անկեղծ հավաստիքը. ան ալ կուզես նե ընդունե, ինչպես որ ասկե առաջ մի քանիներու գրած եմ։

Մարդու գլուխը կտրել և վերջեն դիակին առջև ծունկ չոքելով ըսել.

— Ընդունե՛, կաղաչեմ, չըլլա որ չընդունես, ընդունե՛ իմ բարեկամական անկեղծ զգացումներս, մեր վաղեմի բարեկամութիւնը միշտ հաստատ պիտի մնա։

Իմ ընելու բանս չէ... Աստված իրենց շնորհք տա։

Սա Անգլիո հասարակաց կարծիքը իմ հովանոցիս կը նմանի կոր, հովը քիչ մը սաստիկ փչելուն պես՝ մյուս կողմը կը դառնա կոր...

Ներեցե՛ք այս նմանութեանս, ազնիվ անգլիացիք, բայց զրուցեցեք ձեր հասարակաց կարծյաց, որ քիչ մը հաստատամիտ ըլլա և ո՛ր դերե որ շահ տեսնա՝ այն կողմը չդառնա... օրը հազար անգամ։

Հազիվ կարդացած լմնցուցած էի այն հետագիրը, որ կը ծանուցաներ, թե ձեր հասարակաց կարծիքը մեր կողմը դարձած է, ձեռքս տվին ուրիշ հետագիր մը, որ կը հայտներ, թե ձեր հասարակաց կարծիքը նորեն բարեհաճեր է Ռուսիո կողմը դառնալու։ Հիմա կիմանամ, որ ձեր հասարակաց կարծիքը երեսը մեզի, կռնակը Ռուսիո դարձուցեր է. պատվիրեցե՛ք իրեն, որ միշտ աստանկ մնա, ինչու որ մեզմե չարիք մը տեսած չէ, և մենք ալ սիրով կուզենք տեսնել յուր երեսը։

Բայց շատ անգամ ձեր կարծիքը այնպիսի դիրքով մը կը նայի, որ իր երեսը թե՛ մեզի դարձած կըլլա և թե՛ Ռուսիո։ Արդ, կաղաչե՛մ ըսեք ինձի, ձեր հասարակաց կարծիքը Յանուսի[6] ազո՞ն է և եթե է՛, ո՞րչափ կը նմանի յուր հորը։

Ասոնց ամենն ալ պարապ խոսքեր են, ընթերցող, մենք նայինք, որ սա քրիստոնեից վիճակը ժամ առաջ բարվոքի և դրպաննուս մեջ քանի մը ոսկի տեսնանք։

Երբ ձեռքս դրպանս կը խոթեմ և ունայն դուրս կը քաշեմ, կըսեմ. քրիստոնեից վիճակը շատ դեշ է, հայր Կորշաքոֆ։

Ոչ ոք կը խորհի մեր դրպաններուն վիճակը բարվոքելու, որ քրիստոնեից վիճակեն ավելի պետք ունի բարեկարգության։

Եվ մեզի կըսեն. սպասեցե՛ք և հուսացե՛ք։ Ինչ օգուտ, որ հայցադործ Մարգարը տգետ ըլլալով՝ դրպիտական լեզվեն չհասկնար կոր...

Խաղաղության երկյուղները կամաց կամաց փարատիլ կսկսին։

Խաղաղության հրեշտակները ամիսի մը չափ մայրաքաղաքիս մեջ ուտելեն, խմելեն և զվարճանալեն ետքը, քիչ օրեն պիտի մեկնին։

Մարքի տը Սալիսպրին հրաման ընդունած ըլլալով, որ քանի մը օրեն անպատճառ Լոնտրա գտնվի, շուտ երթալու համար հատկապես երկու շոգենավ բերել տվավ։

Ինկնաթիճի զորապետն ալ յուր ճամբորդությանը համար բերել տված շոգենավերուն մեջ մտնելով՝ քանի մը օրեն պիտի երթա. եթե դեսպանաժողովն քիչ մ'ալ երկննար՝ Ռուսիո բոլոր պատերազմական նավերը մայրաքաղաքս բերել պիտի տար։

Գերմանիո կողմեն եկած — բարով խերով չգար — Տոքթոր Պոշն ալ, որ եփվելու վրա եղող սակարկությունը ավրեց՝ մեկ երկու օրեն պիտի երթա։

Երթան բարյա՜վ, մեծապես շնորհակալ ենք, որ աղվորիկ մը պատեցան Պոլիսը, Մեծ Կղզին[7] երթալով՝ Պորտոյի գինիով[8] սարիտյա կերան. իրարու խնճույք ավին և դեսպանաժողովին մեջ վիճաբանեցան կերակուրներու վրա։

Երթան բարյա՜վ, շնորհակալ ենք, որ իրենց լուսանկար պատկերը քաշելտալով՝ մեզի թողուցին, որպեսզի հիշենք զիրենք.— որչափ աղեկ կըլլար, եթե իրենք բնավ չգային ու լուսանկար պատկերնին կամ այցետոմսնին ղրկեին դեսպանաժողովին։

Երթա՜ն բարյավ...

Այս Հավաս և Պորտեանո[9] ըսված մարդերը իրարու հետ մրցելու համար, այսինքն լուրերը շուտ տալու համար, շատ անգամ մեզի սուտ լուրեր կուտանկոր, և մեր մեծ. խմբագիրներն ալ ապուշի պես կը հավատան ու կը հրատարակեն կոր։

Հեռագիրը անցյալ օր լուր բերավ, թե ս. պապը վերջնական կերպով մեռավ — որովհետև այս պապին մահը մեր դեսպանաժողովո վերջին նիստերուն կը նմանի, մինչև այսօր հարյուր անգամ մեռավ — օր մը ետքը լուր եկավ, թե ս. պապը չմեռավ։

Ասոր պատճառն այն է, որ ս. պապը քիչ մը հիվանդացած ըլլալով՝ Հավաս Պորտեանոյին առաջ լուր տված ըլլալու համար զայն մեռած հրատարակեց, առանց մարեն անցունելու՝ թե ս. պապը կրնա դինքը պզտիկ ձգել։

Հավասին մեկ ուրիշ գործն ալ պատմեմ, որպեսզի հասկնաք, թե այս մարդը լուրերը շուտ տալու համար ի՛նչ հանգդնություններ կընե։

Սերվիո մեջ գտնվող այս Հավասին գործակատարը, Հերսեքի ապստամբության տաք ժամանակները, իմանալով, որ Միլան իշխանին տիկինը հղի է, կելլա օր մը իրեն կերթա։

— Իշխանուհի՛, կըսե, ձեզի բան մը պիտի աղաչեմ։

— Կրնաք աղաչել։

— Ներեցե՛ք ընելիք հանդգնությանս, բայց մեր գործը կը պահանջե, որ քիչ մը հանդուգն ըլլամ։

— Ի՞նչ կուզեք։

— Ձեզի բան մը պիտի հարցունեմ։

— Հարցուցե՛ք։

— Իշխանուհին ե՞րբ պիտի հաճի աշխարհ բերել յուր զավակը։

— Կը կարմրցնեք զիս։

— Կաղաչեմ, ըսե՛ք... կը վախնամ, որ Պորտեանոն ինձմե առաջ կուտա այդ լուրը և ես հացես կը կրկվիմ։

— Զարմանալի հարցում մը կընեք։

— Շատ երախտագետ պիտի ըլլայի ձեզի, եթե ըսեիք՝ թե բերելիք զավակիդ մա՞նչ է, թե աղջիկ. թեպետև ձեզի համար մեծ նշանակություն չունի, բայց քաղաքականի կերպարանք ունի ձեր զավկին գալիք օրը առաջուց գիտնալը։

— Քանի որ քաղաքականի կերպարանք ունի, Միլան իշխանին հարցուցեք, քաղաքական խնդիրները ան աղեկ գիտե։

— Շատ լավ, կըսե ու Միլանին քովը կառնե շունչը։

— Կը խնդրեմ, իշխան, բարեհաճեցեք ինձ ըսել ձեր զավկին գալիք օրը, որովհետև բոլոր աշխարհի հեռագիր պիտի քաշեմ։

— Շնորհակալ եմ, կը հուսամ, որ ամիսե մը կուգա։

(Ի՞նչպես եղեր է, որ Միլան Կորշաքոֆին չհարցուցած՝ վճռողական կերպով պատասխան մը տվեր է, որովհետև Կորշաքոֆին չհարցուցած՝ բան մը չխոսիր)


— Կրնա՞մ վստահ ըլլալ ձեր խոսքին և իբրև ստույգ ապրյուրե քաղված լուր մը ըմբռնել ձեր ըսածը, չըլլա՛ որ խաբեք զիս, իշխան։

— Վստահ եղիր։

Ամիս մը վերջը Հավաս հետևյալ հեռագիրը կուտար. «Միլան իշխանը զավակ մը ունեցավ»։ Եվ այս հեռագրեն չորս օր ետքը Միլանը զավակ մը կունենար։

Հասկցա՞ք հիմա այս մարդոց հանդգնությունները։

ԿԱՄԻԹՆԵՐ



Ոսկին ըսես նե՝ հետը խոսք չըլլար. գլուխը առեր կերթա։

Այսօր հարյուք ութսուն, վաղը երկու հարյուր, հետևյալ օրը երեք հարյուր, օր մ՚ալ եթե յուր կամքին թողվի, մինչև հինգ հարյուր պիտի երթա բարեխնամ կառավարության կամացը հակառակ։

Տեսա՞ք ժողվելու և պահելու բանը, ոսկի պահելու է եղեր. բայց ո՞վ դիտեր, թե այսչափ պիտի բարձրանար։ Մենք ալ շատ անխոհեմություն ըրինք. ոսկի պահելու տեղ հին Թատրոնները ժողվեցինք պահեցինք։ Ապո՛ւշ, ըսեր մեկը, սա Թատրոնները ոսկի չընե՞ս, ինչո՞ւ պահեր ես։

Ըսող չեղավ ալ չէ, բայց մենք չհամոզվեցանք. մեր համառության պատիժը քաշենք հիմա, որ սորվինք։

Դեսպանաժողովին վերջին նիստին վրայոք Եվրոպայեն դեռ յուր մը չ՚ունինք, որ հոն տեղի ունեցած բանակցություններն իմանայինք ու մեր ընթերցողաց հաղորդեինք. բայց կրնանք այժմեն վստահ ըլլալ, որ խաղաղությունը չպիտի խանգարի, ինչպես որ մեր ապնվականաց կամավոր զրվիլը ըսածնուս մեկ անժխտելի ապացույցն է։

Ասկից զատ Իկնաթիեֆի սնտուկներուն խելոք նստիլն ալ կը հաստատե, որ խաղաղությունը չպիտի վրդովի. եթե պատերազմի ամենափոքր նշան մը երևնար՝ սնտուկները իսկույն դեպի Վոսփոր պտտելու կերթային։

Ռուսիան մեծ զոհողություններ ըրած է և կրնե եղեր (եթե հարկը պահանջե) խաղաղության պահպանվելուն համար։ Անգղիո թագուհվույն սպառնալիքներն ալ կը հիշեցնեն մեզ այն առակը, ուր մայր մը յուր տղուն կըսեր. «Եթե այսպես շարունակ լաս՝ արջուն կուտամ զքեզ, խելքդ գլուխդ ժողվե՛»։

Արջը կը լսե այս խոսքը և մինչև իրիկուն դռան առջև անոթի կսպասե, որ տղան լա ու մայրը զայն յուր առջև նետե։

Տղան կուլա, արջը կուրախանա, բայց վերջապես իր խարված ըլլալը իմանալով, ձայնը կը քաշե և մեծ տրամութեամբ ետ կը քաշվի։

Չգիտենք վազը ի՛նչ պիտի ծնի, հիմակվան ծնածը պզտիկ մուկ մ՚է։

Ատույգ աղբյուրները ցամքած են...

Ո՞վ սպասեր, ատույգ աղբյուր մը ցույց տվեր ինձ, որ դեսպանաժողովո հինգշաբթի առաւր նիստին վրայոր բանի մը կարիլ լուր առնեմ ու ընթերցողաց ծարավն անցունեմ։

Հետաքրքրութիւնը որկրամոլութիւն է, ըսավ դրիչ մը, ուտելը կամ իմաստալը կշտանալ է։

Մենք քանի մը ատենե ի վեր որկրամոլութեան վերջին ծայրը հասած ենք։

Դեսպանաժողովո անդամները խոստովանահայր ըլլալու մարդիկ են. քահ մը շարաթե ի վեր Ռուսիան ու Թուրքիան խոստովանանք կընեն, անոնց մեղքերը կիմանան, բայց դաղտնիքը դուրս չեն հաներ։ Այս մարդիկ ավելի դաղտնապահ ըլլալու հարմարութիւն ունին՝ քան թե հաշտարար։

Պատող դրուցներուն նայելով՝ մեր կառավարութիւնը մերժեր է իրեն եղած առաջարկութիւնը, բայց իր մերժման մերժումով պատասխանավեր է։ Նատող դրուցներուն նայելով՝ մեր կառավարութիւնն ալ զոհողութիւն ընելով՝ պատերազմի երկյուղները պիտի փարատե եղեր։ Պատողներո՞ւն հավատանք թե նստողներուն։

Ցատկող լուրերուն նայելով՝ դեսպանաժողովը Վիեննա պիտի մեկնի և հոն պիտի ընե եղեր յուր նիստերը... մինչև հիմա եղած նիստերը ասկից վերջը ուր նստելիքին որոշելու համար էին։ Դեսպանաժողովին տեղը փոխելու տեղ ավելի լավ չէ՞ր ըլլար՝ եթե անոր անդամները փոխեին։

Պառկող լուրերուն նայելով՝ ուլթիմաթումը Վիեննայեն պիտի դրկեն եղեր... Վիեննայի մեջեն աղեկ ուլթիմաթում ալ կելլե եղեր, մենք դիտեինք, որ միայն գարեջուրն աղեկ է։ Եթե ուլթիմաթումնին ալ իրենց գարեջուրին պես է՝ ուշադրութեամբ խմելու է, որովհետև մեջը ափիոն կը դտնվի և կրնա մեզի չափեն ավելի քնացունել։

Մեր Բշնամին իր խելքովն այնպես համոզված է, որ իրաց այս վիճակը որչափ ավելի երկարի՝ այնչափ ավելի կը վնասե մեզի։ Այս համոզմամբ է, որ գործերը մինչև այսօր երկնցուց և ասկից ետքն ալ պիտի երկնցնե։

Ա՛լ ասկից ետքը ուղածին չափ Թող երկնցնե, իրաց այս վիճակը որչափ

երկարի՝ մենք ալ այնչափ Բղխաղրամ պիտի կոխենք ու դրամական տագնապին մեջ չպիտի իյնանք։

Ասոր ալ բան մը չկրնար ըսել ա՛, Թուղթերը քրիստոնյա չեն, նամանավանդ սլավ չեն, որ անոնց ալ ճնշվիլը տեսնելով՝ վիճակնին բարվոքել ուզե։

Իրաց այս վիճակը որչափ ուզե՝ Թող երկնցնեն, մեզի բան մ՚ալ չկրնար ընել, միայն Բղխաղրամ կոխել կուտա։

Դեսպանաժողովն ա՛լ համբ փախցունել սկսավ։

Մինչև հիմա վեց նիստ ըրավ։

Ահա բոլոր ըրածը։

Ամեն մարդ հետաքրքրութենեն հաթելու վիճակին հասավ. դեսպանաժողովին հողն անդամ չէ. գործելու մասին իրեն օրինակ բռնած է կրիան։

Մեկ նիստին մեջ առաջարկութիւն մը կըլլա։

Երկրորդին մեջ այդ առաջարկութիւնը կը մերժվի։

Երրորդին մեջ այդ մերժումը կը մերժվի։

Չորրորդին մեջ ինչո՛ւ համար մերժվելուն պատճառները կը բացատրվին։

Հինգերորդին մեջ այդ բացատրութիւններուն մութ կետերը կը լուսավորվին։

Վեցերորդին մեջ լուսավորյալ կետերը կը մթնանան։

Ահա քեզի վեց նիստ, որ մեկ նիստ չարժեր։

Մենք ալ կսպասենք, որ քիչ օրեն ամեն բան լմննա, որպեսզի առևտուրը կանոնավորվի և ամեն մարդ ինչ ընելիքը գիտնա։

Ես ալ շատ սակարկութիւն ըրած եմ, բայց այսչափ չեմ երկնցուցած։

Պատվավոր մարդ մը կըսե.

— Այսչափ կրնա՞ս տալ։

— Չեմ կրնար տալ։

— Խաբեդ համար մեկ երկու բառա ալ կը ձգեմ։

— Գործիս չդար։

— Բարի եկար, հազար բարի։

Լմնցավ, գնաց։

Նկուր հիմա ասոնց ըրածին.

— Ինչո՞ւ չես կրնար տալ։

— Տալու ըլլաս նե՝ դեշ չըլլար։

— Ջոաս նե՝ վախճանդ գեշ կըլլա։

— Մենք կը փափաքինք, որ տաս։

Թո՛ղ ներեն մեզի վեց տերութեանց ներկայացուցիչները, իրենց ըրածը ասկից առաջ շուկայի բեզկյանտարևները կընեին. անցնողներուն փեշեն կը քաշեին, խանութնուն մեջը կը նստեցնեին ու համոզելով ստակնին կառնեին։

Թո՛ղ դարձյալ ներեն մեզի այդ այլևայլ պատվանուններով ներկայացուցիչները, անընդունելի առաջարկութիւններ կընեն ու կըսեն թե՝ մեր աղեկութեանը համար կաշխատին կոր։

Մեկը յուր սառցվածքեն կապտել և վերջը ըսել, թե քու աղեկութեանդ համար անանկ ըրի, կարծեմ քիչ մը սրամտարանական չէ. դուն ի՞նչ կըսես, Օգսեն էֆենտի։

Տեսեք ուզածնին ալ ինչ է։

Ա. Գարատաղին քիչ մը տեղ տալ։

Բ. Սերվիո սահմանը ընդարձակել (քիչ մը տեղ ալ Սերվիո տալ, ըսե լմնցուր, ճարտասանութիւնը չվիրավորվիր)։

Գ. Պուլղարիո մեջ երկու առանձնաշնորհյալ դավառ կազմել (ինքնօրինութիւն ըսե, մի՛ վախենար)։

Դ. Ամեն նահանգի ժողովրդյան մեծագույն մասին լեզուն գործածել իրև պաշտոնական լեզու (տաճկերեն լեզուն վերցնել)։

Ե. Հիշյալ դավառաց տուրքերը քիչցնել (հապա լրագրաց փո՞ւլը... հա, իրավ, լրագիրները դավառ չեն)։

Զ. Քաղաքական ոստիկանութիւն կազմել (Հավիտյանս հավիտենից, ամեն)։

Եթե ասոնք տալու ըլլանք՝ մեզի համար ասկից աղեկ բան չկրնար ըլլալ եղեր. սըվռնք տալու մեջ ի՛նչ աղեկութիւն կա մեզի համար, չկրցի հասկնալ։ Ի՛նչ բարերար մարդոց ձեռքը ինկանք։ Աստված իմ, եթե աստված չընե, վազը ելնենք իրենց ըսենք, թե մեզի քիչ մը բարութիւն ըրեք՝ Պոլիսը տվեք, պիտի ըսեն։

Ասոնց խոսքին նայելով՝ մեզի համար աղեկութիւնը ունեցածնիս չունեցածնիս ասոնց հանձնել է։

Կան ըսելիքներ, բայց չեն ըսվիր։

Կարծեմ ամենքդ ալ գիտեք, որ դեսպանաժողովին առաջարկութիւնները մերժեցինք.— մերժեցինք կըսեմ նե՝ ես չմերժեցի, այսինքն մերժեցին — եթե մեջերնիդ չգիտցող կա՝ թող գիտնա, որ դեսպանաժողովին առաջարկութիւնները մերժեցին(ք)։

Եվ արդարև ընդունվելու բաներ ալ չէին։

Մեծ ժողովին մեջ երբ կարդը եկեր է մեր փոխանորդին կարծիքն առնելու՝

փոխանորդ Հայրը՝ որ նույն միջոցին խորին մտածմանց մեջ ընկղմած է եղեր, ատրի վրա ելեր ատպես պատասխաններ է.

— Էֆենտիմ, այս մարդը չենք կրնար կնիկին բաժնել, իրարու հետ միշտ կապված պիտի մնան։

— Ի՞նչ կընեք կոր, կըսե՝ մշտելով իրեն քով նստող մին, պատատանական խորհրդո՞ մեջ չենք։

— Այո՛, էֆենտիմ, մենք ձեզի հետ միշտ կապված պիտի մնանք, պատասխաններ է սթափելով։

Կա՞ մարդ մը, որ նախ իր շահը չխորհի։

Էնֆիեձյան Հայրն ալ իրեն եղած հարցման պատասխանելու տեղ չերքեզներու Ասիա փոխադրվելուն դեմ[2] բողոքեր է. ի՞նչպես եղեր է, որ Հասունի դեմ չէ բողոքեր...

(Սա չերքեզներուն ալ տեղ մը չգտնվեցավ, որ այս հոգեն խալսեինք. եթե ինձ հարցվի, կառաջարկեմ, որ Սալխապրիի տունը փոխադրվին չերքեզները։)

Շատ հավանական է, որ այս երկու փոխանորդներն, ի վարձատրություն իրենց ցույց տված պերճախոսության, ծերակույտի անդամ ընտրվին։

Խոսքը ձերն է, Մասիս։

«Կըսվի թե Գարատաղի ժողովրդյան մեջ ավանդություն կա, թե աստված աշխարհս ստեղծած ժամանակ՝ լեռները պարկի մը մեջ լեցուցած՝ աշխարհի ամեն կողմը կը ցանե եղեր, հանկարծ պարկին հատակը պատռելով՝ մեջը մնացած լեռներուն ամենն ալ Գարատաղի երկրին վրա թափեր են։ Մենք ալ կըսենք թե՝ արդյո՞ք նախախնամությունն Ադամ նախահոր մեղացն ի պատիժ աշխարհի վրա ցավերն ու վիշտերը ցանած ժամանակ պարկին հատակը պատռելով՝ մեծ մասն Հայաստանի վրա թափեր է»։

Շատ իրավունք ունի Մասիս այսպես խոսելու, եթե նախախնամությունը իր կարել տված պարկին խումաշին քիչ մը ուշադրություն ըներ՝ ո՛չ պարկը կը պատռեր, ո՛չ ալ այսչափ դժբախտություն կը թափեր Հայաստանի վրա։

Նախախնամությունը հրեաներեն ծախու առած ըլլալու է ամերիկացի, որովհետև ասոնք մինչև այսօր աղեկ ապրանք ծախելու սովորությունը չունին։

Նախախնամությունը պարկին պատռիլը տեսնելով՝ կերևի որ զայն նորեն կարել տվեր ու թափածները ժողվելու համար Հայաստան իջեր է, բայց թափած դժբախտությունները ժողվելու տեղ՝ սխալմամբ խաղաղություն, երջանկություն, պատիվ և կյանք ժողվեր, պարկին մեջ լեցուցեր, առեր քալեր է։

Ջմեղադրենք նախախնամությունը, որովհետև այն ատենները Սահմանադրություն չկար և խումաշներու կարևորություն չէր տրվեր. ինքզինքնիս մե-

զգրեներ, որ Սահմանադրություն ունինք և դարձյալ չկրցինք քյուրտերու բարբարոսութենեն խալսիլ։

Թող քյուրտերը շարունակեն իրենց ավարառություններն ու սպանություննները մինչև մարտ մեկ. անկե ետքը կը տեսնվինք հետևրնին։

Կըսվի թե Սալիսպրին կամ ըստ Լևվընթի[3] սալիսպուրում մայրաքաղաքես մեկնած առենը Բ. Դուան[4] մասնավորապես հանձնարարեր է հույն ժողովուրդը։

Հիմա շատերը կը հարցունեն, թե արդյոք ի՞նչ ըսավ հունաց համար։

Եթե մեր լսածը ստույգ է՝ Սալիսպրին արտաքին գործոց պաշտոնեին ըրուցեր է, որ Հունաստանեն պիտի անցնիմ, վրաս ալ քիչ մը ստակ կա, կը խնդրեմ, որ ինձի քանի մը մարդ տաս, որ հետս գան։

Կըսվի թե արտաքին գործոց պաշտոնյան սիրով ընդուներ է Սալիսպրիի այս առաջարկությունը։

Ա՜հ, արդար առաջարկություններ ե՞րբ մերժած է Բ. Դուրը։

Միլան իշխանին հաշտություն կնքել ուզելը կարզացած առենս, ժամանակավ դպրոցին մեջ ֆալախաճ ուտելս, կամ ս. պատրիարքին ականջես քաշելը միտքս կուգա կոր։

— Մեղա, մեղա։
— Ինչո՞ւ ըրիր, Միլանիկ, ես չըսի՞ քեզի, որ խելոք նստիս։
— Մեյ մ'ալ չեմ ըներ, մեղա։
— Ինչո՞ւ ըրիր։
— Ես չըրի, Կորչաքոֆը ըրավ։
— Ինչո՞ւ անոր խոսքերուն ականջ կախեցիր։
— Քեզի թագավոր պիտի ընեմ, ըսավ։
— Ասկից վերջը խելոք պիտի նստի՞ս։
— Այո՛։
— Վարժապետիդ դեմ չպիտի խոսիս ա՛։
— Բնավ։
— Մինչև անգամ քեզի անոթի ալ պահե նե՝ բերանդ չպիտի բանաս ա՞։
— Չէ։
— Ապրիս, տղաս, տեսա՞ր հավատարիմ աշակերտը, ես ալ ասանկ աշակերտը կը սիրեմ ահա. ելի՛ր տեղդ գնա ու դործդ նայե։
— Այսչափ ծեծի փոխարեն նվեր մը չպիտի՞ տաք ինձի։
— Ի՞նչ նվեր։

— Չվորնի՞կ է, ի՞նչ է, բան մը կըսեն կոր։
— Տե՛ղդ գնա, քեզի Չվորնիկ մը կուտամ որ...
— Բայց տալու ըլլաս նե՝ գիտցիր որ շատ ձեավոր պիտի ըլլա տունս։
— Չըլլա՛ր, հիմա քեզի՛ տամ նե՝ Նիքոլան ալ կուզե։
— Ի՞նչ կըլլա, անոր ալ տուր, ան ալ օտարական մեկը չէ՞ յա։
— Դուն անոր գործին մի՛ խառնվիր։
Ես՞գ Միլան... սլավությունը յուր ածելին քու մորուքիդ վրա փորձեց։

Բարլամենթեն քանի մը օրեն պիտի բացվի։

Հիմակվընե ամեն մարդ հետաքրքրությամբ կսպասե իմանալ, թե ինչ պիտի խոսի արդյոք օրը հազար ոսկի եկամուտ ունեցող Մարքի տը Սալիսպրին արևելյան խնդրույն վրա։

Միայն ես հետաքրքիր չեմ, որովհետև գիտեմ ի՛նչ ըսելիքը—լրագիր գուշակած էր, ինձի ալ ըսավ։

Եթե ժամանակ ունիք մտիկ ընելու՝ ձեզի ալ կըսեմ։

Մարքի տը Սալիսպրին բնավ պիտի ելնե ու քիթը բերանը սրբելեն ետքը՝ սապես պիտի խոսի.

Տյարք և սիկնայք.

Ձեր հրամանացը համեմատ Պոլիս գացի։ Տեսա հոն կղզի մը, որ յուր դրից տեսարանի, օդի և գեղեցկության, վերջապես ամեն կողմե մեր լորտ եղբայրներուն ուշադրությանը արժանի է։

Տյարք իմ, այն կղզիին մեջ կերանք մենք ատրիայաներ, որք շատ համով են, և մանավանդ Պորտոյի գինիով շատ ախեկ կուտվին կոր։ Եթե ժողովդ կը բարեհաճի, քվեի դնե, օր մը որոշե մեկտեղ ուտենք այդ ատրիայաներեն։

Ձայն մը.— Ժողովս վստահություն ունի ձեր վրա։

Կաղաչեմ բարլամենթոյին նախագահը, որ բարեհաճի այդ ատրիայաները թադուհվույն հանձնարարել։ Իրաց այս վիճակին մեջ Պոլսո փողոցներն ալ կը պատեինք, ժողովուրդը առջի բերան շատ սիրով ընդունեց զիս, բայց վերջն սալաշպուր, սալաթ պորու դրավ իմ անունս։

Այն տեղի ժողովուրդը գլուխը կարմիր բան մը կը դնե կոր, վրայեն ալ սև դերձաններ կը կախե կոր, օդին ալ շատակեկ կը խմեն կոր։

Խոսքս եզրակացնելով կըսեմ թե՝ ըստ ձեր հրամանաց քոնֆերանսը ըրինք, և ըստ ձեր հրամանաց քոնֆերանսին մեջ բան մը չըրինք։

Մափահարություններ։

Օրը հազար ոսկի եկամուտ ունեցող Մարքի տը Սալիսպրին առենաբա-

նութիւնը լմնցնելուն պես երթա յուր աթոռը պիտի նստի և ժողովը միաձայն հավանութեամբ շնորհակալութեան քվե պիտի տա Սալիսպըրիին։

Եվ իրոք, Սալիսպըրին՝ եթե ճշմարտախոս մարդ է՝ ուրիշ կերպ չպիտի կրնա խոսիլ։

Սպասենք ու տեսնենք։

Սա Կորշաքոֆը ուրիշներուն գործին մեջ մտնելը շատ կը սիրե կոչ, մեր Քրիստոսասուր էֆենտիին պես, որ ազգին ծառայութիւն պիտի ընեմ ըսելով՝ ամեն պաշտոններու մեջ կը մտնե։

Կորշաքոֆը հիմա սկսեր է մյուս տերութեանց հարցունել, թե ի՞նչ ընթացք պիտի բռնեն։

Իրեն ի՞նչ պետք է ուրիշներուն բռնելիք ընթացքը. ինքը թո՛ղ ուզած ընթացքը բռնե. ուրիշներու գործին ինչո՞ւ կը խառնվի։

Եթե ես ըլլայի մյուս տերութեանց տեղը՝ բռնելիք ընթացքս կը պահեի և չբռնելիք ընթացքս կը հայտնեի սա ծերունիին, որ հացին օթան երեք ու կեսի սկսավ մեղի կերցունել, որ երբ ատակ չդտնանք հաց առնելու և անոթութենե մեռնինք՝ ուրախութեամբ պիտի պոռա.

— Ահա հիմա բարվոքեցավ քրիստոնեից վիճակը։

Աս ի՛նչ ձախող բարերարի հանդիպեցանք, ասսված իմ։

Բարեկենդանի մեջ ենք...

Իմաստութեան դուրսն ենք...

Նախնիքներե մնացած սովորութիւն մ՚է, որ մարդիկ տարին անգամ մը կը խեղճենան, տարին անգամ մը խելքերնին կիրակի կը բռնե ու խեղճութիւններին կաշխատի։

Արդ, տարին անգամ մը ամեն մարդ, այր ու կին, ծեր և տղա, հարուստ և աղքատ, երեսին դիմակ մը կանցունե, փողոցներուն մեջ, տուներուն մեջ կը պարե ու կը ցատկե։

Այսօր Եղոբոսն ալ չկրնար բարկանալ, ինչու որ ամառը երդեցինք, ձմեռը կը պարենք կոր։

Միայն մենք չենք, աշխարհիս սանձերը բռնող քաղաքագետներն ալ երեսնուն դիմակ կանցունեն (ամեն օր)։ Բայց անոնք մեզմե որոշվելու համար մարդու պատկեր չեն դներ, այլ կենդանիի պատկեր կը դնեն երեսնուն վրա. օրինակի համար մին՝ արջու պատկեր, ուրիշ մը՝ աղվեսի պատկեր, ուրիշ մը՝

գայլի պատկեր և այլն, և այս պատկերներով իրարու ներկայանալով՝ Ֆաբիլ[5] կը խաղան ու մեր բախտը կորոշեն...

Այս տարվան Ֆաբրիլին մեջ հավանական է, որ Թուսիան Անգլիո հետ վիգավի ըլլա։ Իսկ ժողովուրդը ամենուն հետ կուզե վիգավի ըլլալ, միայն մեկ քանիներու հետ չուզեր։

— Որո՞նց հետ։

— Որո՞նց հետ։

Իր պարտատերերուն հետ։

Խավարը դեռ չբարեհաճեցավ յուր թևերը վերցնել արևելյան խնդրույն վրայեն, հետևապես արևելյան խնդրույն ապագան իմ ապագայիս պես մութ է։

Սըր Սթաֆորթ Նորթքըթ, Մարքի սը Հարթինկթըն, Մըսթըր Տիզրայելի, Գոնթ Տերպի, Մարքի սը Սալիսպըրի, ասոնցմե համար խոսելով, բավական կը խոսին կոր մեր խնդրույն համար առանց լույս մը տալու... ի՛նչ օգուտ, որ մեր խնդիրն խոսքեն ավելի գործքի պետք ունի։ Եթե խոսքով կարդադրվեին մեր գործերը, մինչև հիմա ինչո՞ւ կարգի դրված պիտի չըլլային։

Ինչևէ, որովհետև իշխանութիւն չունինք ուրիշին խոսելու ազատութիւնը բռնաբարելու, թողունք իրենց խոսիլ և մեր խնդիրներովը զբոսնուլ — այո՛, զբոսնուլ, որովհետև չդիտեմ թե բարլամենթոյին մեջ ի՛նչ պիտի խոսեին մեր անգղիացի եղբայրները՝ եթե արևելյան խնդիրը չըլլար։

Իսկ մենք քանի օր ալ սպասենք, որպեսզի խավարը յուր թևերը վեր առնե ու մեր խնդիրը յուր ապագայովը մեկտեղ ինքզինքը ցցունե։

Սպասելեն ուրիշ ճար չունինք։

Լա վերիթե (ճշմարտություն) անուն լրագիր մը կը հրատարակվի կոր, կարդացած ունի՞ք այդ լրագիրը։

Առջի օրը իմ ձեռքս անցավ հատ մը այդ ճշմարտություն անուն լրագրեն և փիչ մը խնդացի, որովհետև իրեն լրագրին նյութ ընելիք բանը իր լրագրին անուն դրեր է, և եթե երբեք իր տողերուն մեջ ճշմարտություն չդտնանք, պատճառն այն է, որ փնտռածնիս իր լրագրին ճակատը փախեր ապաստաներ է։

Հիշյալ թերթին մեջ մեր դտած ճշմարտությունն այս է ահա։

Ակամբնուդ օդ ըլլա, որ չմոռնաք, և ձեր զավակները տեսանելի և անտեսանելի փորձանքներեն զգուշացնելու առեննիդ իրենց ըսեք.

— Զավա՛կս, երբ մեծնաս և սիրվիս գավառները երթալ, և երբ լսես օր մը, որ նոր կուսակալ մը գալու վրա է այն քաղաքին, ուրու մեջ կը գտնվիս՝ չըլլա որ տղայություն ընես և կուսակալը դիմավորելու երթաս, որովհետև կուսակալ մը դիմավորելը մեծ հանցանք է, և այս հանցանքիդ համար հրացան կը պարպեն վրադ։

Թևրևս ձեր գավակները առջի բերան չհավատան ձեր քարոզին և ձեր վրա խնդան, զանոնք հավատացնելու և ձեր վրա չխնդացնելու համար առջի օրվան Մասիսն առեք ու կարդացե՛ք։

«Վանեն Տեր Երեմիա եպիսկոպոս լուր կուտա հեռագրով ի պատրիարքարան՝ թե նորընտիր կուսակալն ազգին կողմեն դիմավորելու ղրկված Թերզիպաշյան Հարությունի վրա հրացան պարպեր է Տերվիշ անուն քյուրա մը և վիրավորեր է։ Ոճրագործը բռնվեր է»։

Եթե ձեր գավակները հարցունեն թե՝ ոճրագործին ի՞նչ պատիժ անօրինեն, պատասխանեցե՛ք իրենց թե՝ հայ մը սպանող քյուրաները ձերբակալության կը դատապարտվին և ս. պատրիարքն ալ մեկ շաբաթեն մինչև վեց ամիս բարիր դրելու կը դատապարտվի։

Թևրևս ձեր գավակները թերահավատ դանվին և չհավատան. թերահավատության մի՛ վարժեցունեք զիրենք, տարվան մը մեջ տեղի ունեցած սպանությանց հեղինակները թվե թվե շարեցե՛ք, և անոնց անպատիժ մնալը ցցուցե՛ք իրենց. սակայն այդ սպանությանց առեններն սահմանադրության հրատարակված չըլլալն ու իտարեյի Բեյֆիյեի տակ դանված ըլլալնիս ալ իմացուցեք իրենց...

Ականջնուդ օդ ըլլա... քթիերնուդ ակնոց ըլլա... գլուխնուդ շիճեռն ըլլա— ի՛նչ ըսեմ — որ չմոռնաք և այս բաներս ձեր գավակներուն, թոռներուն, թոռներու թոռներուն և անոնց ալ թոռներուն ականջը հասցնեք, որպեսզի դարուց ի դարս մեր ականջներն ի վար հնչվի այն խոսքը թե՝ կուսակալ մը դիմավորելը հանցանք է։

— Վարպե՛տ, Կիրակո՛ս, Մարգա՛ր... ջուր բերե՛ք, ջուր...

— Ի՞նչ կա, կրա՞կ կա։

— Չէ՛, չէ՛, հանըմը մարեցավ, շուտ ըրե՛ք, վարպետ, դուն ջուրը բեր, Կիրակո՛ս, դուն բժիշկին վազե, Մարգա՛ր, դուն ալ դեղագործին գնա... դետնին տակը անցնի սա Նիկոմիդիայի աղբատներուն վիճակը...

— Ա՜հ, ո՜հ, ո՜ւհ...

— Աբթնցա՛ր, անուշիկս... ես կատակ ըսի, խե՞նթ եմ, որ շրջազգեստիդ տակը Նիկոմիդիայի աղբատներուն տամ...

— Չիլտես որշափ դիշ եղա, երբ ըսիր թե շրջազգեստ չպիտի շինեմ և անոր տակը Նիկոմիդիայի աղբատներուն պիտի ղրկեմ, կարծես թե գլուխս ի վար պաղ ջուր լեցուցին. Նիկոմիդիացիները, ըսի մտքես, ինձմե ավելի կը սիրեն կոր, ահ, օֆ... անոթութենեն կը մեռնին կոր տեյի այս տարվան պալոներուն անցյալ տարվա շրջազգեստո՞վ երթամ ես։

— Չէ՛, չէ՛, հանըմ, սիրտդ մի՛ հատցուներ, այս տարվան տեֆոլբեդ ալ կը շինվի։

Դուք ալ, Նիկոմիդիացի եղբարք, քիչ մը ակռանիդ սեղմեցեք, որ Պոլսո հանըմները ձեր պատճառով չմարին։

Ինքզինքին ազգասեր ծախելով ազգային պաշտոններն ստակ վաստկողներուն անունները թերթերնուս մեջ անկողմնակալությամբ հրատարակել որոշած ըլլալով՝ կը խնդրենք այդ ազգասերներեն, որ հաճին անուններին իմացունել մեզ, որպեսզի սխալմունք մը ընելով ճշմարտությունը չվիրավորենք։

Անդղիո ժողովներուն մեջ գրուցված խոսքերեն եթե բան մը հասկցաք՝ կաղաչեմ, ընթերցողք, ինձի ալ հասկցուցե՛ք, որ ես ալ ընթերցողացս հաղորդեմ։

Թուրքիո համար չպիտի պատերազմին եղեր։

Թուրքիո ամբողջությունը պիտի պահեն եղեր։

Թուրքիան և Ռուսիան դեմ առ դեմ պիտի ձգեն եղեր։

Աղնիվ լորտեր, մարքիներ, ըսել կուզեք, որ Գարատաղին բան մը չտանք, և եթե տալու ըլլանք, Թուրքիո ամբողջությունը պահելու համար մեր տվածը Գարատաղեն ետ պիտի առնեք։

Ողջ ըլլաք, մեր ալ ուղածն այս է. մենք տանք, դուք առնեք։

Կարծեմ ձեր ուղածն ալ այս է։

Կուզե՞ք մեկու մը բարի կամ չար ըլլալը հասկնալ, ձեռքնիդ անոր գըրպանը խոթեցեք և եթե որ բան մը չգտնաք հոն, մի՛ վախնաք այն մարդեն, որովհետև աշխարհիս ամենեն բարի մարդն է այն. իսկ երբ տեսնեք, որ մարդ մը առանց գրպանի բանթալոն մ՚է հագեր, մոտեցե՛ք, և երկրպագություն ըրեք իրեն, որովհետև անիկա սուրբ մ՚է. և անանկ սուրբ մը հիմա սրբոց մեջ ալ հազվագյուտ է։ Ընդհակառակն, երբ տեսնեք մարդ մը, որուն գրպաններուն մեջ ստակ կը գտնվի, հեռացե՛ք իրմե, փախե՛ք իրմե, որովհետև այդ մարդը բարի չէ, և կրնա ձեզի վնաս հասցնել։

Ինչպես որ բժիշկները մեկու մը հիվանդ կամ առողջ ըլլալը հասկնալու համար անոր լեզուն կամ բազկերակները կը քննեն՝ ես ալ մեկու մը բարի կամ շար ըլլալը իմանալու համար՝ անոր քսակը կը քննեմ, և չեմ սխալիր։

Ինչ որ ուզեն, թո՛ղ ըսեն, ես կըսեմ, որ բարի մարդը ստակ չիրնար վաստըկիլ, և պետք չէ որ վաստկի։ Ստակ վաստկելու համար ստախոսություն պետք է, սուտ երդում պետք է, երբեմն ուրիշին կոկորդն բռնել, սղմել պետք է, ով որ այս բաժծներուս չհավատար, կապշեմ, կը խնդրեմ, շնորհ ընեն, թո՛ղ ցցունե մեկը ինձի, որ Ավետարանի հետևելով սպասավորներու, կառքերու, վարժապետներու, ձիերու և աղվոր պեսեմմենեռու տեր եղած ըլլա։ Բայց, չկա մեկը, որ այս մասին վիճաբանության մտնա հետս, հարուստները իսկ կընդունին այս քարոզս, ճշմարտություններս, բայց ինքզինքին արդարացնելու համար կըսեն թե՝ առևտուրի մեջ սուտ խոսիլը, մարդ խաբելը բնավ չարություն չնշանակեր, և որպեսզի ընդհանրացնեն այս սուտ ճշմարտությունը կամ այս ճշմարիտ սուտյունը, մեջերնին առած մ՚ալ հնարեր են ու կըսեն, տոսթլուխ բանքարլան, ալըշվերիշ մըսմալլան։ Այս առածը կրկնելեն ետքը աչքդ անգամ կը գողնան եթե հաջողին։

Բայց ինչո՞ւ տարակուսինք այս ճշմարտության վրա, մինթե այսօր չե՞նք տեսնար կոր մարդիկ, որ իմ շահս այսպես կը պահանջե ըսելով ուրիշներու դժբախտությանը պատճառ կըլլան կոր և առանց ամչնալու կարդարանան կոր։

Հարուստ մարդու մը ձին ինձի կից մը կուտա և մարմինս ջարդ ու բուրդ ընելով՝ գետինը կը պառկեցնե կոր զիս. ներկա եղողներեն մեկը չհամարձակիր կոր քովս մոտենալու, թևես բռնելու և զիս վերցնելու, որպեսզի ձիուն արժանապատվությունը չվիրավորվի, որպեսզի ձիուն տերը չելնե վազը իրեն ըսե թե՝ իմ ձիուս հարվածած անձին դուք պաշտպանություն ըրած եք եղեր, և ասիկա իմ ձիուս անպատվություն կը բերե։

Մարդկության համար քրտինք թափող չմնաց աշխարհիս վրա. առաքինությունն իր նշանակությունը կորուս. անբարոյականությունը բարոյականության դիմակով արձակ համարձակ կը պտտի կոր և Թատրոնը կարող չըլլար կոր այս գեղծումները բառնալու. ոչ միայն կարող չըլլար կոր, այլ զանոնք բառնալ աշխատելուն համար ծաղուս նշավակ կըլլա կոր... Մեկուն իբրև ճգնավոր կը բամբասվի կոր, ուրիշուն իբրև կրոնավոր կը ղրպարտվի կոր, մեկալուն իբրև անզգա կը հարվածվի կոր, ուրիշուն իբրև թշնամի հառաջադիմության կը նախատվի կոր, ապտակ կըսեն կոր, խրմպըլ կըսեն կոր։ Հարուստ մը իրեն դիմողին բարութիւն չըրած առեն՝ քթին տակեն Թատրոնին ֆեֆը փախավ ըսելով կը ծաղրե կոր զիս, ֆավալիե մը իր տամային մեջքը սխմած առեն՝ Թատրոնը չկրցավ սա մարդկությունը

օրինավորության մեջ դնել ըսելով իր տամային հետ խնդալեն կը մարի կոր անառակը։ Ավելին կա. երեկույթներու, պարահանդեսներու երթալու կը քաշվիմ կոր, որովհետև երթալուս պես՝ մանչ, աղջիկ, այր և կին, հոն գտնվողները շուրջս կը պատեն կոր և կսկսին կոր զիս քաշել։

— Էֆենտի՛, սա ընտանեկան զեղծումները չիրցիր տակավին շտկել։

— Շատակը, էֆենտիին ձեռնարկությունը դժվար է, օրվան մը մեջ չկըրնար գլուխ հանել։

— Բայց մի՛ վհատիք. էֆենտի, ապագան ձեզի պիտի օրհնե։

— Էֆենտի, ուրիշ միջոց մը գտա՞ք սա մարդիկը ճամբա բերելու, սա պարը վերցնելու է... պարը շատ անբարոյական բան է, ինչ ըսեք նե՝ իրավունք ունիք, էֆենտի, չըլլա որ դուք խաղաք։

Իմ ալ համբերությունս կը հատնի կոր, լապտերը վառելուս պես ինքզինքս պատուհանեն վար կը նետեմ կոր. տուն երթալուս պես սենյակիս վարագույրները կը ձգեմ կոր, անկողինս կը մտնամ և գլուխս վերմակիս մեջ կը քաշեմ կոր, որպեսզի չտեսնամ իրենց երեսը, որոնք ամենայն համարձակությամբ զարմանալով թե՝ Թատրոնին պես մեկը կրնա եղեր տակավին գտնվիլ այս գարուս մեջ, ապուշ մը գտեր ենք, թո՛ղ խոսի, մենք ալ հետը էյլենմիշ ըլլանք, կըսեն կոր։ Թո՛ղ որ անդին հազարավոր պարկեշտ երիտասարդներ կան, որ զիս կը հարգեն կոր. ինչպես որ միլիոնավոր աղջիկներ կան, որ ինձի համար հոգի կուտան կոր. բայց ի՛նչ օգուտ, որ ատոնք բացառություններ են, և բացառություն մը որչափ ալ ստվար ըլլա, չիրնար ընդհանուր կանոն ըլլալ։

(Բնաբանն շեղած չըլլալս իմացնելու համար պետք է հոս հիշել, որ այս բացառիկ երիտասարդներն, աղջիկները գրպանը ծակ եղող կուսակցության կը վերաբերին)։

Եվ ես ի՞նչ կընեմ կոր ինձի եղած նախատանաց և անարգանաց դեմ, կը համբերեմ կոր, դիտնալով՝ որ իմ խոսքերուս արժեքը ասկից հարյուր տարի ետքը պիտի ճանչվի, իմ խոսքերուս արդյունքը իմ թոռներս (աստված պահե զիրենք արևելյան խնդիրեն) պիտի վայլեն։ Մինթե Սոկրատ ալ չհալածվեցա՞վ, ես ալ Սոկրատեն պզտի՞կ մարդ եմ... Տեմիրճիպաշյան, Կյուրճյան, չօգնե՞ք քիչ մը ինձի, եղբայրնե՛ր... ինչո՞ւ կայներ երեսս կը նայիք կոր...

Կարծեմ, ընթերցող, այսօր քիչ մ՚ավելի շատախոսություն կընեմ կոր, բայց ի՞նչ ընեմ, կարծիքներ կան, որոնք լակոնականով անհասկանալի կը մնան։ Օ՛ն, խնդրույն դառնանք, բայց գարձած առեննիս չմոռնանք ըսելու, որ դուռը տունեն մեծ եղավ, եթե ուզեք՝ տունը դռան տեղ գործածեցե՛ք... Հրեից կիները արդեն դուռը կը նատին։

Ըսի թե՝ գրպանը ծակ եղողները բարի կըլլան. տեսե՛ք հիմա, թե ինչո՞ւ ըսի։

Հայտնի է ձեզ, որ Գարաատաղի հետ ալ պիտի հաշվինք այս օրերս:

Անդղիոյ կառավարութիւնը հարիւր հազար ոսկի տալ խոստացեր է Գարաատաղին՝ եթէ ասիկա ետ կենայ Թուրքիային հող ուղել:

Անդղիա ի՞նչ բարիք տեսաւ Գարաատաղեն, որ անոր այսչափ ոսկի կուտա կոր, Թուրքիա ի՞նչ բարեկամութիւն տեսաւ Գարաատաղեն, որ անոր երկիր տա:

Անդղիա այդ դումարը գարաատաղցոց տալու տեղ հայերուն տալու ըլլա՞ նե՝ ավելի քրիստոնեավայել և մարդասիրական գործ մը տեսած չըլլա՞ր, այդ դումարը գարաատաղցոց տալով, գիրենք չը՞ թաջալերեր. և ի՞նչ հարկ կա տեղերնին հանգիստ չնստող մարդիկը վարձատրելու:

Աստված իմ, մինչև ե՞րբ աստանկ մարդիկ պիտի փառավորվին:

— Սը՛սթ... իրավունք Հզորագունին...

Ինչո՞ւ սը՛սթ, ինչո՞ւ ղորութիւնը իրավագունին պիտի չըլլա եղեր:

— Մեյ մ'ալ աստանկ խոսք մի' ըներ. կը խնդան վրադ:

Ինչո՞ւ պիտի չընեմ եղեր: Դիցուք Թե Բ. Դուրը անառակ որդվո մը հետ վարվելու պես վարվի և քիչ մը բան զոհելով իր զարաատաղցիին, մեղի ըսե. «որդի իմ կորուսյալ էր և գտավ»8, բայց Անդղիա ինչո՞ւ խնդրույն մեջ կը մտնա կոր և հարյուր հազար ոսկի կուտա կոր անոնց, մինչդեռ ասդին հայերը դավառաց մեջ անոթութենե կը մեռնին կոր...

Կաղաչեմ, կը խնդրեմ, չերկնցնենք այս խոսքը և բարիներուն համար չէ այս աշխարհը ըսելով՝ գոցենք այս խոսքը, որովհետև գայրույթ կղզամ կոր: Քիչ մ'ալ ուրիշ բանի վրայոք խոսինք:

Քանի մը ժամանակե ի վեր, շաբաթ մը չանցնիր, ուր Թուրքիա նոր դարագլուխ մը չունենա:

Օրինակի համար, երբ ըսվեցավ, թե սահմանադրութիւն պիտի հրատարակվի՝ բոլոր թերթերը միաբերան ըսին.

— Թուրքիան նոր դարագլո՛ւխ մը ունեցավ:

Երբ սահմանադրութիւնը հրատարակվեցավ՝ ամենքը պոռացին.

— Թուրքիան այսօր նոր դարագլուխ մը ունեցավ:

Երբ քվեարկութիւնը կատարվիլ սկսավ, նորեն աղաղակեցին.

— Նոր դարագլուխ մ'ալ այսօր ունեցանք:

Երբ երեսփոխանական ժողովը բացվեցավ՝ դարձյալ գոչեցին.

— Պերեֆյար վեբսին, նոր դարագլուխ մ'ալ այսօր ունեցանք:

Թողունք այն անթիվ դարագլուխները, զորս ունեցանք դեսպանաժողովին առաջարկութիւնները մերժած օրերնիս, և ուրիշ այլևայլ պարագաներու մեջ:

Լրագիրները ամեն օր նոր դարագլուխ բերելու տեղ ավելի աղեկ կընեն՝ եթե երկրիս մեջ գործված գեղծումներուն բարձման համար ամեն օր կառավարության ուշադրութիւնը հրավիրեն:

Օրինակի համար. անցյալ կիրակի, խանի մը մեջ պառկող բեռնակիր մը եկեղեցի երթալու համար՝ խանեն դուրս ելնելուն պես՝ ահկարհայի կը բռնվի և նույն օրը մինչև իրիկուն անոթի փորով զարի կը կրե:

Տեղ բեռնակիրը ի՞նչ հասկնա հիմա այն նոր դարագլուխեն, և ասկից վերջ ո՞ր բեռնակիրն է, որ հանդգնի կիրակի առաու մը եկեղեցի երթալ:

Նայյալ անուն զավեշտական թերթին խմբագիրը երեք տարի բանտարկութեան դատապարտվեցավ ծաղրանկար մը հրատարակած ըլլալուն համար:

Այս լուրը կարծեմ հաճո չվնեցավ մեր գրիչին, որովհետև, կը տեսնեմ, որ սովորականեն ավելի անհամ դրել սկսավ:

Երեք տարի բանտարկութիւն...

Ով ես տեղ մը կես ժամեն ավելի նստիմ նե՝ կը ճաթիմ:

Աղեկ որ ես ծաղրանկարը վերցուցեր եմ եղեր...

— Հոգվածներուդ մեջ բան մը չե՞ն կրնար գտնալ:

— Հոգվածներն ալ կը վերցունեմ, այնպես կը հրատարակեմ. ի՞նչ ընեմ, երեք տարի ո՛վ պիտի երթա հոն նստի:

Գաղղիացի տիկնոջ ըրած կատակին ի՞նչ կըսեք:

85000 (ութսունհինգ հազար) ֆրանք Թողուցեր է, որ անկար և խեղճ շուներուն համար հիվանդանոց մը շինվի:

Երանի այն կենդանյաց, որ Գաղղիո հպատակ են...

Անշուշտ այս հիվանդանոցը պիտի ունենա յուր անկողինները, կերակուրը, բժիշկները, դեղերը ևն. հարկավ հիվանդութենե ելնող շուներուն օգափոխութեան համար գեղ մ'ալ պիտի հատկացվի:

Բժիշկներուն աչքը լույս... ճյուղ մ'ալ ավելցավ իրենց... ո՛վ գիտե, ինչ փափաքով պիտի երթան իրենց հիվանդ շուներուն քով. անոնց բազկերակները պիտի քննեն, կուրծքերնուն, կռնակնուն մատով զարնելեն վերջը՝ ականջնին պիտի դնեն. «այս ջուրեն դդալ մը առաու, դդալ մը կես օրին, դդալ մ'ալ իրիկունը պիտի խմեք, ծանր բաներ մի' ուտեք, քանի մը օր բրինձի ապուրով անցուցե՛ք: Նայեցե՛ք, որ չմսիք ևն. պիտի ըսեն»:

Շուներն ալ պոչերնին խաղցունելով պիտի հարցունեն.

—Մեյ մ'ալ ե՞րբ պիտի գաք ղիս տեսնելու։

— Վաղը։

— Վաղը դուրս ելնել կուզեի։

— Քանի մը օր մի՛ ելնեք։

— Գործեր ունիմ, չեմ կրնար տունը նստիլ։

Թող տեսնեն մեր հոստեղի աներես շուները, որ փողոցը մեկու մը ձեռքը հաց, պանիր և կամ ձուկ, միս տեսնելնուն պես՝ վրան կը ցատկեն և կը հափշտակեն. մսավաճառներու խանութեն չեն զատվիր. թող տեսնեն և սորվին՝ թե պարկեշտ շուները ինչպես կը հոգացվին։

Ո՛րչափ երախտապարտ կրներ զմեզ հիշյալ տիկինը, եթե շինելիք հիվանդանոցին քով բանտ մ'ալ շինել տար մեր շուներուն համար, որոնց ձեռքեն խլելու համար տուններնիս միս տանելու, փողոցը հաց ուտելու մեծ դժվարություններ կը քաշենք։

— Տիկի՛ր, ինչո՞ւ վերցուցիր կսմիքներն։

— Անոր համար, որ չեզոքություն պահել սոխսվեցա։

— Ինչո՞ւ չեզոքություն պիտի պահես։

— Որովհետև շահերս այդպես կը պահանջեն։ Բայց երբ տեսնեմ, որ չեզոքությունն շահերուս դպչիլ կսկսի, այնատեն չեզոքությունս պիտի կորսընցնեմ։

— Փառք աստուծո, դրելու բա՞ն կը պակսի. դիվանագետներու վրայոք դրելու տեղ՝ աղջիկներու վրա կը գրեմ, բոթոմոլներու, մանիֆեսթներու վրայոք խոսելու տեղ՝ մոտաներու վրա կը գրեմ, դիվանագետները կսմթելու տեղ՝ աղջիկները կը կսմթեմ։

— Թող կուտա՞ն։

— Ինչո՞ւ թող չպիտի տան, աս ալ քաղաքականության վերաբերյալ բան մը չէ ա՛, աս խնդրույն վրա մի՛ գրեր, ան խնդրույն վրա զգուշությամբ գրե՛, մյուս խնդրույն հետ զգուշությամբ վարվե՛, ասոր վե՞րջը։

— Եթե կուզես՝ խոհեմությամբ մի՛ վարվիր, Տպագրական տեսչության նոր պաղպարությունը կարդացիր ա՛։ Օր մը կը նայիս, որ առավանդ գրաւենյակդ երթալուդ պես՝ դրասեղանիդ վրա թուղթ մը կը դնեես. կառնես և կը կարդաս.

«Նկատելով, որ Թատրոնը այսինչ թվույն մեջ այսինչ հոդվածը հրատարակած է, թվականես մինչև երեք ամիս դադարյալ պիտի մնա»։

Այս թուղթին վրա կսկսիս երեք ամիս պատիլ Պոլսո փողոցները։

— Գոնե փողոցները մաքուր և կանոնավոր ըլլային... մարդս այնչափ հոգնություն չէր կրեր։ Բայց ինչո՞ւ պատիմ. երեք ամսվան համար գործ մը կը գտնամ։

— Ի՞նչ գործ։

— Նիկողոս մարզարեին պես գուշակություններ կընեմ. պատերազմի դաշտեն լուր կը գուշակեմ, Պասիրեթի[9] կը տանիմ կը ծախեմ։

— Ստակ կուտա՞ մի։

— Ինչո՞ւ չպիտի տա... շատ նեղը մնամ նե՝ Բոթի կերթամ բոբիլ կը հանեմ, հատը մեկ ոսկիի կը ծախեմ։

— Հանողը հանեց զանոնք, ալ չմնաց, որ հանես։

— Եղբայր, դուն ալ բոլոր դռները կը գոցես կոր. քու հաշվովդ մարդս անոթութենեն մեռնելո՞ւ է։

— Ի՞նչ կարծեցիր հապա, աս ժամանակի մեջ գործ գտնելը դյուրի՞ն բան է։

— Վիպասանություն մը կը գրեմ ու կը հրատարակեմ։

— Անոթի մնալու համար աղեկ գործ է։

— Վաճառականի մը քով դանձապետ կըլլամ, օրին մեկն ալ անուռիկը կառնեմ, կը փախչիմ։

— Ձեռքդ չգար։

— Ասոր վե՞րջը։

— Ասոր վերջը խելքդ ժողվելով անանկ հոդվածներ կը գրես, որ մեկուն չեն դպչիր։

— Կաղաչեմ, խնդրո մը վրա երգիծական հոդված մը գրած ունի՞ս, որ մեկու մը չդպչի, գրած ունիս եթե անանկ բան մը՝ ցցուր ինձի, որ իբրև օրինակ առջես դնեմ ու անոր հետևիմ։

— Գրած չունիմ, դուն գրել աշխատելու ես, որ չգոցվիս։

— Օրինակի համար, մի՛ ըսեր, թե օրիորդ Մարգարիտը ամեն օր առտվընե մինչև իրիկուն կը պատի և առնը չնստիր բնավ, այլ ըսե՝ թե շատ պատիլ պատիլ չըներ աղջիկներուն, մի՞ ըսեր՝ թե Պասիրեթը, Լեվրեթը, Վաֆրեթը[10], Լա Թյուրինն[11], Լոգիրը սուտ լուրեր կուտան կոր, այլ ըսե՝ թե լրագիրներուն չվայլեր սուտ լուրեր տալը. մի՛ ըսեր՝ թե այսինչ էֆենտին քանի մը տարիե ի վեր ազգային գործերու շնորհիվ կապրի. այլ ըսե՝ թե ով որ իր խանութը, գործը կը ձգե և ազգային գործերեն դուրս չելներ, չի կրնար պատիվ և համարում գտնել. այսպես ըսելով մարդ վիրավորած չես ըլլար։

— Շատ աղեկ, այնպես կընեմ...

— Սկսե՛, նայիմ։

— Նավ. պաշտոնի գլուխ գտնվողներուն չվայլեր օրը երկու անգամ հրաժարական տալ։

— Տեսա՞ր, մեկու մը չդպավ։

— Պողոս[12] առաքյալը ասկից տասնևինը դար առաջ Տիմոթեոսին և Հռովմեացվոց շրջաբերական մը գրեց և այս շրջաբերականը պատրիարք մը ստորագրեց։

— Տեսա՞ր, ինչ անուշիկ կըլլա կոր։

— Քաղաքական ժողովի անդամ ըլլալով՝ դատ վարող մեկու մը պոռնո ղրկելը աղեկ բան չէ։

— Աս ալ աղեկ։

— Պարապ բան է մեկուն ըսելը՝ թե ես քունին ատակիդ պետք չունիմ, քանի որ անիկա քեզի ատակ տալու խոսք մը ըրած չէ և մանավանդ թե անուշակի կերպով քեզի ատակ չտալիքն ալ հայտներ է։

— Տեսա՞ր, այս եղանակով ոչ ոք կը վիրավորվի։

— Լուր մը չեղած առենը հավելված հաննելը պարզապես ավազակություն ընել ըսել է։

— Այո՛, այնպես է։

— Միշտ երկու կողմը կոտրավելով քալող և ինքզինքը բուալեթի տվող կրոնավորներեն զգուշանալու է։

— Ճիշտ է։

— Ըսել է, որ այս եղանակով հարյուր տարի ալ գրելու ըլլամ՝ բնավ չեմ գոցվիր։

— Այո՛։

— Տեսնենք։

— Տեսնելու հարկ չկա, աշխատե՛, որ այս ընթացքեն չշեղիս։

— Բայց թե որ այս ընթացքին մեջ խղդվելու ըլլամ՝ այն ատեն ի՞նչ պիտի ըսես։

— Այն ատեն պիտի ըսեմ, թե ով որ լրագրին չգոցվելուն կը փափաքի, պետք է որ իր ձեռքովը դադրեցունէ զայն։ Մնաք բարով։

— Երթաք բարով։

---

28 հունվար 1878

Ժամանակավ իմաստասերին մեկը ըսած է. «Քի՛չ խոսե ու շա՛տ մտիկ ըրե»։

Թեպետ և որոշ չգիտցվիր, թե իմաստասերն ո՛ր պարագայի մեջ ըսած

է այդ խոսքը, բայց կը կարծվի, թե տասը կանգուն երկայնությամբ հոգված-ներ գրող խմբագիրներեն մեկուն ըսած ըլլա. հավանական է նաև, որ պարտատերն իրմե ստակ ուզելու գացած ըլլա և անոր ըսած ըլլա. կրնա ըլլալ, որ... բայց ի՞նչ փույթ մեզ, որու ուզե, թող անոր ըսած ըլլա, բավական է, որ այդ խոսքը շատ իրավացի խոսք մըն է, որովհետև շատ խոսողները բան մ'ալ չեն խոսիր, ամենեն շատ խոսողներն ամենեն քիչ խոսողներն են, ասիկա այնչափ հայտնի ճշմարտություն մ'է, որ դեպատ մ'անգամ չիրնար ուրանալ։

Ուրիշ իմաստասեր մը մեր իմաստասերին այս խոսքին շատ հավնելով՝ քայլ մ'ալ ինք առավ և ըսավ.

«Բնավ մի՛ խոսիր ու շարունակ մտիկ ըրե»։

Եվ թատրոնին վարագույրը գոցվեցավ[1]։

Վեցամսյա լռությամբ ազգին և կառավարության մեծ ծառայություններ մատուցանելե ետև՝ եթե այսօր ընթերցողաց կը ներկայանամ՝ չկարծվի թե խնդալու դիտավորությամբ է, որովհետև խնդալն արգիլված է՝ իբրև վնասակար հատարակաց բարոյականության. այլ կամքելու ու միմիայն տեսածներս պատմելու նպատակավ Մասիսի ստորոտը կիջնամ այսօր[2], ազաչելով մեր ընթերցողները, որ խնդալե զգուշանան և զավեշտ բառը բնավ չարտասանեն։

Այս հայտարարությունն ընելե ետև պզտիկ դեպք մը պատմելով կը կնքենք մեր հառաջաբանն, որ կնքված գինադադարին[3] պես անհասկնալի բան մ'եղավ։

Երկու բարեկամ ճաշարանի մը մեջ կը ճաշեին անցյալ շաբթու։

— Մանչուկ, հոշապ մը բեր, ըսավ մին։

— Հոշապը հայերեն չունի՞, հարցուց մյուսը։

— Ջավեշտաջուր, պատասխանեց ընկերը։

— Անանկ է նե՝ մի՛ խմեր, հատարակաց բարոյականության վնասակար է եղեր, ըսավ բարեկամը։

Ահա այսպես վնասակար ճանչցված են այն ամեն բաները, որ քիչ մը զավեշտով խառնված են։

Ընթերցող, դիպվածը անանկ բերավ, որ ես ալ, շատ մը վառվռուն հայ երիտասարդաց պես, քրիստոնյաներեն գինվոր առնվելու[4] խոսքին վրա հիվանդանամ և երկու ամիսի չափ տունես դուրս չելլամ. բայց երբ անցյալ շաբթու իմացա, որ Բ. Դռնեն պատրիարքարան գրվեր է այդ գինվորագրության առայժմ ետ մնացած ըլլալը, դիպվածը անանկ բերավ, որ վրաս քաջություն մը գա և քիչ մը դուրս ելլեմ։

Աստվա՛ծ իմ, մայրաքաղաքս որչափ փոփոխություն կրած է։

Ոչ թե բան մը ծախելու, այլ բարեկամներես մին տեսնելու համար, առջի օր ոսկերիչներուն շուկային անցնիլ հարկ եղավ։

Բարեկամս փնտռելու միջոցին՝ երկայնահասակ մարդուն մեկը երկայնահասակ խաչ մ'ի ձեռին առջես ելավ. իսկույն դլուխս բացի և ինչպես որ օրեն է, երեսս խաչակնքեցի։ Հազիվ թե երկու քայլ ատի, երկու կարճահասակ մարդ ձեռվընին մեյ մեկ բուրվառ բռնած դիմավորեցին դիս. խաչ մ'ալ հանելով երկրպագություն ըրի և ճամբաս շարունակելու չմնաց, քշոցներով երկու երիր հոդի դեմս ելան։ Մեկ կողմ քաշվելով Հայր մեր մը կարդացի, վրան ալ աղվոր մը «Տեր, եթե ղշրիտնս իմ բանաս»[5] մը ավելցուցի և սկսա ինքնիրմես մտածել, թե ոսկերչաց շուկային մեջ ե՛րբ և որո՛ւ արդյամբ շինվեր են շարժական մատուռները։ Ժամ մը ետքը հարցունելով տեղեկացա, որ այս մատուռները սլավության հակառակ ըլլալով[6] Թշնամվույն մոտենալը տեսնելնուն պես՝ Պոլիս գաղթեր են։

Ճամբաս շարունակեցի դեպի Սիրքեճի[7]։ Աստվա՛ծ իմ, այս որչա՛փ ավանակ, որչա՛փ կով, որչա՛փ ձի... մարդս ինքզինքն ախորի մեջ կը կարծե... գաղթականեն ավելի անասուն... և որչա՛փ աժան... քսաննոց Թուղթի[8] պղտիկ էշ մը, մինչդեռ ֆինո մը կամ վանա կատու մը դնել ուզես՝ վեց հարյուրնոց Թուղթեն պակաս չես կրնար առնել։

Շիտակը խոսելով, աժանությանը չկրցի դիմանալ, կատվի տեղ պղտիկ էշ մը առի և տուն տանելով, սենյակս դրի։ Հետևյալ օրը մեծ զարմանոք տեսա, որ մուկ մը և կատու մը բոներ է. ուստի և տուներու մեջ պահվելու արժանի խոնարհ անասուն մ'է։ Միայն մեկ հանցանք մ'ունի, բազմոցներու և բարձերու մեջ խոտ չձդեր, կուտե կոր... այնչափ անոթի է խեղճը։ Իր ընթացքեն չկրցի դուշակել, թե՝ սլավության հակառա՛կ է, թե՛ համամիտ։ Ուստի որոշեցի որ Նիկողոս մարդարեին[9] դիմեմ օր մը և սանկ պղտիկ դուշակություն մ'ընել տամ։

Ընթե՛րցող, առիթեն օգուտ քաղե. ասանկ աժանություն քսան տարին անգամ մը կը պատահի[10]։ Ես օգուտ քաղեցի և պարծանոք կրնամ ըսել, թե Արևելյան խնդիրեն ուրիշները ինքնօրինություն, անկախություն[11] և... թյուն վերջավորությամբ ուրիշ բաներ վաստկեցան, ես ալ գոնե իշու մը տեր եղա, և կարծեմ թե պատմությունն ալ քիչ մը կարևորություն կուտա այս բանին։

Խաղաղության հրեշտակը վերջապես եկավ Ջորլուեն[12]... շոգեկառքով։

Ամեն մարդ կուրախանա, բայց ես չեմ ուրախանար, որովհետև հրեշտակներու վրա համակրություն չունիմ. որովհետև անոնք անոր ասոր հոդին առնելու համար կուգան, կերթան։

— Այս անգամվան հրեշտակը հոդի չպիտի առնե, դրամ պիտի առնե ըսեր։

— Գոնե սա հրեշտակը համոզենք ու թղթադրամ քշենք։

Թայմզ կըսե.

«Ռուսիա իր հաշտությունները մեծ սխալ կը գործե»։

Ես կըսեմ.

«Անդրիո՝ հաշտությամբ գործած սխալին հետ մրցելու համար է»։

Թադուհին սոնակապի պատվանշանը տալ ուզեր է Լորտ Պիքոնսֆիլտի, բայց նա չէ ընդուներ։

Երբ ես ըլլայի Լորտ Պիքոնսֆիլտի տեղ՝ կառնեի սոնակապն ու բաշաներս կը կապեի։

Ջեղի բան մը ըսե՞մ. հրապարակի վրա պիլեքներեն ավելի սուտ կը պատի կոր, բայց բարեբախտաբար այս սուտերեն մեկ քանին Թերսհանեի[13] պիլեքներուն պես մարդ չընդունիր կոր։

Կը հիշե՞ք, անցյալները երկերկու քսաննոց Թուղթ տվինք Ջեքմեճեի մոտերը շինված ամրությանց համար. արդ, հիմա կըսեն թե՝ Ռուսիա առաջարկած է եղեր, որ այդ ամրությունները ավրվին, և մենք ալ նորեն երկերկու քսաննոց Թուղթ պիտի տանք եղեր անոնց ավրվելու ծախուցը համար։

Ես այս զրույցին չհավատացի, մանավանդ անոր համար չհավատացի, որ Ռուսիա այս առաջարկությունը չըրած՝ անձրևները զանոնք ավրեցին։

Ըսելիքս սա է, որ ամեն խոսքի հավատք ընծայելու չէ։

31 հունվար 1878

Աչվընիս լո՛ւյս... ինչպես որ սովորություն եղած է, կումին հաշտություն պիտի հաջորդե, ինչպես որ հաշտության ալ նորեն կռիվ պիտի հաջորդե։

Երկու հոդի մեր կողմեն, երկու հոդի ալ մեր բարեկամ Ռուսիո կողմեն քիչ օրեն Ադրիանուպոլսո մեջ հաշտության նախնական սկզբունքը պիտի պատրաստեն եղեր։

Նախնական սկզբո՛ւնք... դեռ ինչե՞ր պիտի լսենք, աստվա՛ծ իմ... բնա-

դիտութեան, քիմիաբանութեան նախնական սկզբունքը լսած էինք, բայց հաշտութիւնը լսած չէինք։

Դասագի՞րք պիտի շինեն այս մարդիկը, ի՞նչ պիտի ընեն. արդյոք դերեզմանոցին եպիսկոպոսի հրատարակած քրիստոնեականներուն պես նախ Նախնական հաշտութիւն ու վերջն ալ Կրթական հաշտութի՞ւն մը պիտի հրատարակեն[14]։

Իմ խելքս չհասնիր, միայն սա կը տեսնամ, թե համառոտ հաշտութիւն մը պիտի հրատարակենք առայժմ, և եթե ժողովրդյան կողմեն լավ ընդունելութիւն գտնե, այն ատեն ընդարձակ հաշտութիւն մը պիտի հրատարակվի։

Սպասենք։

Վայրկյանե վայրկյան հյուրերու կը սպասենք, թե՛ ցամաքեն ու թե՛ ծովեն... պալոնով գալիք հյուր չունինք։

Մեկ երկու օրե ի վեր զրույց կը պատի, թե՝ Անգղիո նավատորմիղը նեղուցեն մտեր է, թե նորեն ելեր է, թե հոքը դարձյալ մտեր է, թե վերջը նորեն ելեր է։ Եթե այս զրույցներուն ամենն ալ իրավ են, ըսել կըլլա, թե Անգղիո նավատորմիղին հրամանատարը հրահանգ ընդունած է իր կառավարութենեն, որ պարապ չնստի ու նեղուցեն մեյ մը մտնե, մեյ մը ելնե։

Տար ատովծ, որ սա նավատորմիղին սպասելու տեղ մը որոշվեր ու մենք ալ գլխու ցավեն խալսեինք։

Ընթե՛րցող, տարին մը ի վեր է այս նավատորմիղին խնդիրը գլուխնիս ուռեցուց։

Նավատորմիղը նախ և առաջ Պեշիքա եկավ։ Իր գալուն հետևյալ օրը խորհրդարանին մեջ հարցում մ'եղավ.— նավատորմիղը ինչո՞ւ Պեշիքա գնաց։

Լորտ Տերպի կարծելով, թե նավատորմիղին Պեշիքա սպասելը աղեկ տպավորություն չըրավ ժողովրդյան, հրաման ըրավ, որ Մալթա երթա, և գնաց։

Հետևյալ օրը ա՛ռ քեզի հարցապնդում մ'ալ.

— Նավատորմիղը ինչո՞ւ Մալթա գնաց։

Լորտ Տերպին այս հարցապնդումին վրա նորեն Պեշիքա ղրկել ուվավ նավատորմիղը։

Նորեն հարցում մը.

— Ինչո՞ւ նավատորմիղը Պեշիքա գնաց։

Ա՛լ մարդուս համբերությունը կը հատնի, մարդի՛կ, ըսես իրենց, սա նավատորմիղը ձերն է, նավատորմիղ ըսածդ ալ մարգագետնի մեջ չպահվիր, այլ

ծովու վրա. տեղ մը որոշեցեք ու հոն մնա։ Այս չըրին, այլ միայն հարցապնդումով մարդը շվարեցուցին մինչև հիմա։

Շատ հավանական է, որ այս անգամ ալ հարցապնդումներ եղած ըլլան, թե ինչո՛ւ նեղուցեն մտեր է, թե ինչո՛ւ նեղուցեն ելեր է. Լորտ Տերպիի ալ ճարը հատնելով, իրեն ուղղված հարցապնդումին համեմատ՝ նավատորմիղին մեյ մը նեղուցեն ելնելու, մեյ մը մտնելու հրաման ղրկած ըլլա, և այս է պատճառը, որ նավատորմիղը մեյ մը ներս կը մտնե, մեյ մը դուրս կելնե կոր։

Տեսնենք, սա կատակերգության վերջը ո՛ւր պիտի երթա։

Ջմռռնանք ըսելու, որ Անգղիո նավատորմիղին պես մենք ալ չերքեզներն[15] ունինք, որոնց համար չենք կրնար կոր բնակելու տեղ մը գտնել։

Եվրոպայի կողմեն դուրս ելնեն անոնք, կըսեն։ Կառավարությունը Եվրոպայի կողմեն բերել կուտա և Ասիո կողմը կը ղրկե։

Ասիո կողմն ալ չենք ուզեր, կըսեն։

Ո՛ւր ղրկենք։

— Եվրոպայի և Ասիայի կողմերը մի՛ ղրկեք տե, ուրիշ ո՛ր կողմ կուզեր նե՝ ղրկեցեք։ Փառը աստուծո, տեղ չկա չէ՛ յա։

Ջարմանալին հոն է, որ օսմ. երեսփոխանական ժողովն[16] ալ չկրցավ յուր վերջին նիստերեն մեկուն մեջ որոշում մը տալ այս մասին։

Լսածնուս նայելով՝ մեր աղդեն ալ քանի մը կրոնավոր ամեն. ս. պատրիարքին երթալով, աղաչեր են աղաչել Բ. Դուռը, որ հայաբնակ գյուղերն ալ չղրկվին։

Ըստ մեզ՝ այս առաջարկությունը պարապ բան է։

Կառավարությունն իսկ եթե ղրկել ուզե՝ չերքեզները չեն երթար, ինչու որ հայաբնակ գյուղերուն մեջ դողնալու բան չմնաց։ Իսկ եթե կա՝ այն ատեն ալ քյուրտերը չեն թողուր, որ չերքեզները մոտենան, որովհետև իրենց շահուն կը դպչի...

Դիվանագետներ, թագավորներ, կայսրեր, ամենքը միաբերան «Քրիստոնեից վիճակին բարվոքում» կըսեն, ի վերա այսր ամենայնի ես իմ վիճակիս մեջ բարվոքում մը չեմ կրնար կոր տեսնել։ Արդյոք ինձի՞ այնպես կուգա կոր, որովհետև կըսեն՝ թե մարդս որչափ ալ երջանիկ ըլլա, դարձյալ իր վիճակեն դժգոհ կըլլա. արդյոք նախանձելի վիճա՞կ մ'ունիմ, կըսեմ կոր երբեմն ինքնիրմես, սա մտածությամբ՝ թե դիվանագետները իմաստուն մարդիկ են, և հարկավ, իմ վիճակս ինձմե աղեկ գիտեն։

Բայց ոչ, սկեպտիկութիւնը մեկդի, իմ վիճակս պուլղարի մը վիճակեն աղեկ չէ։

— Եթե այդպես է, քրիստոնյա չես։ Քանի որ քրիստոնեից վիճակի բարվոքում կըսեն և քու վիճակդ չեն բարվոքեր, ըսել կըլլա թե՝ կա՛մ վիճակդ բարվոքելու պետք չունի, կա՛մ քրիստոնյա չես։

Իմ վախս ալ ան է. վիճակիս բարվոքումը իրենց ըլլա, քրիստոնեութիւն մը ունեի՝ դոնե ան մեջ չխաղա. թերևս ապագային պետք կըլլա... Ռուսիո։

— Տոքթոր Ա...ը կը տեսնե՞ք կոր։
— Բնավ տեսած չունիմ, կերևա որ պահվտած է։
— Ինչո՞ւ։
— Վախեն։
— Չերքե՞զ է, որ վախեն պահվտի։
— Չերքեզ չէ, բայց չերքեզներեն ավելի մարդ մեռուց այս ձմեռ։

Մեծ. Համբարձում էֆ. Ալաճաճյան.

Տիրասեր բառը, որ հայոց համար հաճախ կը գործածես, սահմանադրութեան և ազատութեան դարուս մեջ խիստ անախորժ կը հնչէ կոր ականջիս, որովհետև գերիներու, սորուկներու և շուներու համար կը գործածվի ընդհանրապես այդ քու սիրած բառդ։

Ներեցեք համարձակութեանս, բայց կը խնդրեմ, որ եթե կարելի է, պզտիկ զոհողություն մը ընելով՝ այդ բառը չգործածեք այսուհետև հայոց աղդին համար։

Որով մնամ առաջվան պես

Հ. Հ. Պարոնյան

— Ի՞նչ է, ի՞նչ կա, ի՞նչ կըլլանք կոր, ի՞նչ է եղեր։
— Բան մը չէ, պուլղար աղջիկ մը։
— Ո՞ւսկից առիք։
— Աճի Չեշմեի մահալլեպիճիին խանութեն։
— Մահալլեպիճին աղջի՞կ ալ կը ծախե կոր։
— Ոչ, չերքեզ մը հափշտակեր է եղեր ու...
— Անկարելի է։
— Տանիմ ըսելնի...

— Սուտ է։
— Ըսելնիքեն քա...
— Սխալ է։
— Քանի մը պուլղարներ տես...
— Զրպարտություն է։
— Տեսեր ու առեր են։
— Չեմ հավատար։
— Ինչո՞ւ։
— Մեզա ըսե, իսլամ մը անանկ բան կրնե՞, տղա՞ ես։
— Ինչո՞ւ։
— Քասթանպոլուի երեսփոխան Մուսթաֆա էֆենտին անցյալ նիստին մեջ ըսեր է, թե չերքեզները իսլամ ըլլալով, սճրագործություններ չեն կրնար ըրած ըլլալ, հետևաբար իրենց վրայոք պատած զրույցները զրպարտություն են։
— Եթե այդպես է, չեմ պնդեր, թերևս աղջիկը գողցած է ղչերքեզեն։

Միտքս բան մը կա, չմոռցած հարցունեմ։

— Ո՛վ դուք, որ դրամանիշ կառնեք, վերջը ի՞նչ կրնեք այդ դրամանիշները. ես առածներս կը պահեմ կոր, որովհետև մարդ չառներ կոր։

Երեկ Թերսհանեի դրամանիշը[17] չէր անցներ.— Ինչո՞ւ.— Որովհետև կեղծն է հրատարակվեր եղեր։ Այսօր ալ Թաթավլայինը[18] չեն ընդուներ.— Պատճա՞ռ.— Որովհետև կեղծն է տպվեր։ Վաղն ալ Շիրքեթի[19] և կամ ուրիշ տեղի մը դրամանիշը չպիտի քալե.— Ինչո՞ւ.— Որովհետև կեղծը պիտի ելնե։

Ճաթելու կետը այն է, որ կեղծը ելած ըլլալուն համար իսկն ալ չեն ընդունիր, չընդունելեն զատ կեղծն իսկեն կամ իսկը կեղծեն դանազանելու համար դյուրություն մ'ալ չեն ցցուներ, որ ես ալ քովս գտնվածներուն կեղծ ըլլալը կամ չըլլալը հասկնամ։ Սատանան առնե մեղքերնին, բայց ինձ այնպես կը թվի, թե՝ դիտմամբ չեն ցցուներ կեղծին ու իսկին մեջի տարբերությունը, որ իրենց հանածներն ալ չընդունին։

Եթե այս ընթացքը հաջողի, վաղը ես ալ հանուն Մասիսի տպարանի 50.000 դուրուշի դրամանիշ պիտի հանեմ շրջաբերության. և ամենքը քշելեն ետքը՝ «էֆենտիմ, ատոնց կեղծն են շիներ» ըսելով, մեկն ալ չպիտի ընդունիմ։

Եվ մինչև հիմա չընելս կարծեմ քիչ մը անխոհեմություն է։

Հիմա հարցուր ինձի թե՝ մինչև հիմա ի՛նչ ըրեր և ի՛նչ կընես։

Առաքյալին[20] ըսածը կընեմ կոր. «Լալ ընդ լացողս, խնդալ ընդ խնդացողս»։

Ըսենք թե՝ Մուտաֆա Էֆենտին կը տեսնեմ, որ տխուր նստեր ու կը մտմտա, ես ալ դիմացը կը նստիմ տրտում տխուր ու կսկսիմ մտմտալ։ Անդին կերթամ, կը տեսնեմ, որ Յանչո աղան Բեթքոյին հետ ձեռք ձեռքի տված կը պարեն[21] կամացուկ մը Բեթքոյին քովը կերթամ ու «ձեռդ ինձի տուր» կըսեմ, ձեռքեն կը բռնեմ ու կսկսեմ պարել։

Իսկ եթե մեկը տեսնե՛ղիս՝ և հարցունե, թե ինչո՞ւ կուրախանաս, կը պատասխանեմ.— ուրախանալու բան մը չունիմ, խնդացողներու հետ խընդացած ըլլալու համար է, որ կուրախանամ։

Տեսնե՛նք, առաքյալը ի՛նչ վարձատրություն պիտի ընե ինձ՝ յուր խոսքը կետ առ կետ գործադրած ըլլալուս համար։

Հրապրաց մեջ նավատորմիղի վերաբերյալ ծանուցում մը կարդացի՞ր, ընթերցող. Պեշիքթայի ու Կ. Պոլսո մեջտեղ նավատորմիղ մը կորսված է, դանողին մեծ պարգև պիտի տան եղեր։

Մինչև այսօր այդ նավատորմիղին ո՛ւր ըլլալը չգիտնալնուն վրա կը զարմանամ կոր. ես ծանուցումը կարդալուս պես ո՛ւր ըլլալը իսկույն գտա։

Ըսե՞մ ձեղի, թե ո՛ւր է այդ կորսված նավատորմիղը, պարգևը առնել կուտա՞ք ինձի։

— Այո՛, ըսե՛, և շո՛ւտ ըսե։

— Չերքեզներուն քովն է։

5 Փետրվար 1878

Անգղիական նավատորմիղը վերջապես դանվեցավ։

Կղզիներուն[22] առջևը եկեր նստեր է... առաջ գալու կամչնա կոր։

Ինչո՞ւ եկավ այս նավատորմիղը։

Հանգիստ եղիք, չարություն ընելու համար եկած չէ, բարություն ընելու համար ալ եկած չէ, միմիայն Արևելքի մեջ յուր պատիվը կոտրել չտալու համար եկած է եղեր։

Անգղիո կառավարության ըսեր են եղեր թե՝ եթե քու նավատորմիղդ Պոլիս չկարենաս մտցնել, մեծ պզտիկություն կը հրավիրես վրադ։

Է՜հ, ընթերցո՛ղ, մեկը քեզի ասանկ խոսք մը ըսեր նե՝ հարկավ դուն ալ պզտիկ մնալ չէիր ուզեր ա՛։

Կըսվի թե Գաղղիո և Իտալիո կառավարությանց ալ նավատորմիղները քիչ օրեն պիտի դան, որպեսզի անոնք ալ պզտիկ չմնան...

Ի՞նչ հարկ կա աս ու ան պզտիկ ձգելու... Թույլ տալու է որ մեծնան։

Գոնե Ռումանիան, Սերվիան ու Սև Լեռն ալ՝ պզտիկ չմնալու համար՝ նավատորմիղի տեղ տասնական կտոր կտոր ղրկեն։

Ռուսիան ալ ըսած է եղեր, թե՝ ի՛նչ նպատակով որ Անգղիո նավատորմիղը ներս մտավ, նույն նպատակով ես ալ պիտի մտնամ։

Դո՛ւն ալ հրամմե։

Ով դուք, որ ուրիշի քով երբեմն պզտիկ մնացած եր, և որ կյանքերնուդ մեջ բնավ մեկու մը քով պզտիկ իյնալ չեք ուզեր, ելե՛ք ամենքնիդ ալ հոս եկեք։

Ըսելիք մնա՞ց։

Օսմ. երեսփոխանական ժողովս առժամանակյա կերպով դադրելուն վրա ի՞նչ կարծիք ունիք։

Ես շատոնց ի վեր, ատոր բացված օրեն ի վեր, կը դուշակեի, որ այս ժողովն օր մը կա՛մ երեք ամսվան համար պիտի գոցվի և կա՛մ բոլորովին պիտի խափանի։

Հարցուր հիմա ինձի թե՝ ի՞նչպես կը դուշակեիր։

— Ի՞նչպես կը դուշակեիր։

— Որովհետև, կըսեի ինքնիրմես, Թատրոնիս մեջ ոչ թե նախարարի մը՝ այլ օտանիի մը դեմ եթե երկու խոսք ընեի՝ իսկույն ամիս մը կը դադրեցնեին Թատրոնը. իսկ եթե քիչ մը ծանր նյոխեի՝ կը խափանեին գայն։ Ատոնք ինքնիրենս ըսելես ետքը սա եղրակացությունը կը հանեի, թե՝ քանի որ այս երեսփոխաններեն ոմանք չերքեզներուն դեմ, նախարարներուն դեմ ծանր ու երկար ճառեր կը խոսին, անպատճառ լրագիրնին պիտի գոցվի օր մը։ Մինչև անգամ կըսեի մտոքս, թե ասոնց տարեկան երկու հարյուր թուղթ ալ տրվելու չէ, որպեսզի հաջորդ երեսփոխաններն ազատախոսության եռանդնին քիչ մը չափավորեն՝ մեղնե օրինակ առնելով։

Մինչդեռ կառավարությունք զորք, նավատորմիղ և այլն կը ղրկեն հոս իրենց շահն ու պատիվը պաշտպանելու համար, Ջամուրճյան մեծիմաստ պատվելին ալ բառատորմիղ մը կը ղրկե Փունջին դեր. Նար-Պեյի Նախնական և Կրթական Քրիստոնեականները որպես թե պաշտպանելու համար։

Ջամուրճյան պատվելին ո՛րչափ ալ կեղծե թե՝ դեր. Նար-Պեյի Քրիստոնեականներուն պաշտպան հանդիսացած է, դինք ճանչցողները չեն խաբվիր. և դիտեն թե՝ այդ Քրիստոնեականներուն վնասելու նպատակով է, որ մեծ-

մատա Պատվելին զանոնք կը պաշտպանեն բատ առածին թե՝ Պատվելիեն պաշտպանված գրքերը գպրոցներեն կը մերժվին։

Կըսեն թե՝ Պատվելին շատոնց ի վեր առիթի կսպասեր եղեր դեր. Նար-Պեյին չարիք հասցնելու համար. սատանան ներկայացուց առիթը, Պատվելին ալ չփախցուց զայն։

Կըսվի նաև թե դեր. Նար-Պեյ միտք ունի զատ բանալ և իր Քրիստոնեականներուն տպագրության ծախքը Պատվելիեն պահանջել։

Երկու տող ալ բժշկական։

Ավետիս անունց, որունց որովայնը խիստ պինդ ըլլալով, զորավոր լուծողական դեղերու կարոտություն ունին։

Այս օրերս անանկ զորավոր լուծողական դեղ մը գտնվեր է, որ ծայրահեղ որովայնապինդ մարդոց անգամ աղեկցություն կընե կոր։ Այս դեղը հակառակ իր զորության, շատ ալ աժան է, այնքան աժան, որ պետք չունեցողն ալ կրնա առնել։

Արդ, այս դեղը ուրիշ բան չէ, եթե ոչ կովու միս, որ այս օրերս օխան ի դին 100 փարայի կը ծախվի գրավաճառներու քով... մսավաճառներու քով պիտի ըսեի։

100 փարա տալով, մարդ կրնա տասը քսան հոգիի լուծում տալ, մինչդեռ եթե դեղագործի երթաս՝ 8—10 ղրուշ պիտի տաս մեկ հոգվո համար, և այն դեղն ալ շատ անգամ օգուտ չըներ։ Իմ ըսածդ դեղս անանկ երկու երեք անգամ լուծում ավողներեն չէ, այլ շաբաթներով, ամիսներով և եթե առաջքը չառնես՝ տարիներով կը քշե...

Աղքատաց համար աղվոր առիթ... ձեռքն փախցունելու չգար։

Տեսարանն է էմին-էոնյու[23]։

Հույնին մեկը բազմության մեջ յուր ձեռքը սխալմամբ քովինին բաճկոնին գրպանը տանելով՝ ժամացույց մը առնելու միջոցին կը բռնվի։

Իսկույն ոստիկան մը կը հասնի։

— *Ինչո՞ւ կը բռնեք կոր, ի՞նչ ըրի ես, կը պոռա հույնը։*

— *Առանց ամչնալու կը պոռա՞ս կոր ա՛ր։*

— *Ինչո՞ւ չպիտի պոռամ, թող տվեք օձիքս, ի՞նչ ըրի ես...*

— *Ի՞նչ պիտի ընես, սա մարդուն ժամացույցը կը գողնայիր կոր, անոր համար բռնեցինք։*

— *Անանկ է նե՝ ատոնք ինչո՞ւ չեք բռներ կոր, ըսավ գողը, շուրջը պատված չերքեզներն ու պաշըպոզուքները ցուցընելով։*

— *Լռե՛։*

— *Թո՛ղ տվեք օձիքս, ճանը՛մ, ես ալ կամավոր եմ։*

— *Քալե՛։*

— *Աս ի՞նչ անիրավություն է... հավասարություն կըսեն և խորությունը չեն վերցըներ։*

Ոչ ոք կարե երկուց աեռանց ծառայել։

Մենք շատ ժիր մարդիկ ըլլալու ենք, որ այսօրվան օրս երկու տերերու կը ծառայենք, և անանկ տերերու, որոնց բնավորությունն իրարու ա՛յնքան ներհակ են, որքան որ ջուրը կրակին կամ որքան որ Աբեղյան Մամուլը Զամուրճյան պատվելիին։ Օրինակի համար, եթե մին հոս եկուր ըսե՝ մյուսը՝ անդին գնա կըսե, եթե անդինը եկ ըսե, ասդինը նատե կըսե։ Ատոնց որի՛ն հրամանը կատարել, որի՛նը չկատարել, ո՛րն ընդունիլ, ո՛րը մերժել...

Ծառայել կըսեմ նե՝ անոնց սպասավորություն կընենք ըսել չեմ ուզեր, սխալ չհասկցվի.— ըսել կուզեմ թե՝ և ոչ մեկուն սիրտը կոտրելու համար՝ հետերնին անուշությամբ կը վարվինք, ինչպես որ քաղաքավարությունն ալ այսպես կը պահանջե։

Մին ինձի կըսե.

— *Գնա սա մարդուն ըսե, որ հոս գա։*

Հազիվ թե կերթամ ըսելու՝ մյուսը եաևես կը կանչե ու կը հրամայե.

— *Գնա՛, ըսե սա մարդուն, որ հոս չգա։*

Հիմա դուն իմ տեղս եղիր ու գործ տես նայիմ։

Ի՞նչ ընեմ, ես ալ երկուքին ալ խոսքը հավատարմությամբ տեղը տանելու համար կերթամ այդ մարդուն կըսեմ.

— *Էֆենտիմ, նախ եկուր, հետո մի՛ գար, ու նոր հրահանգի սպասե։*

— *Ես ալ քու տեղը ըլլամ նե՝ ո՛րը քեզի ավելի շահավոր է՝ ան կընդունիմ, մյուսը կը մերժեմ։*

— *Ահա դժվարությունն ալ հոս է։ Եթե երկուքեն որին ավելի շահավոր ըլլալը գիտնայի, ըսածդ մինչև հիմա կընեի. առայժմ երկուքեն ալ վնասե ուրիշ բան մը տեսած չունինք։*

Ի վերա այսր ամենայնի, ինձի այնպես կը թվի, թե քանի մը տեր ալ ավելի ըլլա նե՝ պիտի կարենամ ծառայել։

Ձեզի ի՞նչպես կը թվի։

Պարոն Կլատբրնին պէս ես ալ ամեն օր մէյ մէկ հարցում պիտի ընեմ։ Պատասխան տվեք...

Մայրաքաղաքիս բոլոր կառավարները ազդային քաղաքապահ զինվո՞ր գրված են, թե քաղաքապահ զինվորները կառավար եղած են։

Քանի մը օր առաջ հիսունի չափ կառք տեսա իրարու ետևե, որոնց վարիչներն էին քաղաքապահ զինվորները։

Մեկեն ի մեկ ապշեցա մնացի, քանդի, թեպետ և ձիավոր զորք տեսած էի, բայց կառավար զորք տեսած չունեի։ Թերևս, կըսեի ինքնիրենս, այս խոմբերը նոր կազմված ըլլան։

Ի՞նչ ընելու համար։

Պատերազմական հմտութիւն չունենալովս հանդերձ՝ վերջապես որոշում տվի, թե կառքով պատերազմի չերթիմ, անպատճառ ուրիշ բան մը ըլլալու է, և կառքին ետևեն գացող մեկու մը հարցուցի.

— Ո՞ւր կերթան այս կառքերը։

— Չգիտեմ։

— Ինչո՞ւ չգիտես։

— Անդին գնա, պե մա՛րդ։

— Ինչո՞ւ անդին երթամ։

— Ես ցավ չունիմ ան, երկու սահաթ կայնիմ քեզի խո՞սք հասկցնեմ։

— Ինչո՞ւ ցավ ունիս։

— Երկար ըրիր։

— Ինչո՞ւ երկար ըրի... ըսեք կաղաչեմ, այս կառքերը ո՞ւր կերթան կոր։

— Էֆենամ, մուհաճիր կը կրեն կոր։

Մուհաճիր կուգա, մեր կառքերը կառնեն, մուհաճիր կերթա, մեր կառքերը կը գործածվին, վիրավոր կուգա, մեր կառքերը կուզեն, վիրավոր կերթա, մեր կառքերը կը տանին. հաց կուգա, մեր կառքերը կուգան կառնեն, հաց կերթա դարձյալ մենք կը տանինք. հասկցա՞ր հիմա։

— Հասկցա, շնորհակալ եմ. աղեկ ա՛, առուտուր բացված է ձեղի... ձրի չեք աշխատիր կոր ա՛... ձրի ալ ըլլա նե՝ ի՞նչ վնաս ունի եղեր... նեղ օրերու մեջ ամենքնիս ալ հայրենյաց օգնելու ենք։

— Անանկ է յա՛...

— Դուն ո՞ւր կը նստիս կոր. կառքը ո՞ւր պիտի տանիս վերջը։

— Պեյօղլու[24]։

— Կառքը անանկ ալ պարապ պիտի երթա անանկ ալ, ես ալ նստիմ մեջը ու Բերա ելլամ նե՝ վնաս մը ունի՞ քեզի։

— Աս ո՞րչափ չաղլը մյուշտերիներու հանդիպեցանք այսօր։

— Հայրենյաց օգնելու է, տղա՛ս։

Ըսելու չմնաց, մարդը ծուռ ծուռ երեսս նայելով գնաց։

Վերջապես անձնվիրություն ու զոհողություն չկա սա արապաճիճեփուն քով։

13 Փետրվար 1878

Բարև։

— Բարի եկար, պարոն Խիկար, այսօր գործի չգացի՞ր։

— Չգացի, երթալիք ալ չունիմ։

— Ինչո՞ւ։

— Գործ չմնաց որ երթամ, վարպետս ճամբա տվավ։

— Ի՞նչ պատճառի համար։

— Աղեկ ծառայած ըլլալուս համար, ինչու որ ճամբա տված օրն ըսավ, թե քու մատուցած ծառայություններդ մեծապես շնորհակալ եմ։ Ուստի փափաքելով, որ քեզի մեծ վարձատրություն մը ընեմ, որոշեցի որ քովես հեռանաս և այլևս չտեսնամ քեզի։

— Հիմա ինչո՞վ կզբաղիս։

— Օրվան խնդիրներով։

— Խոսե՛։

— Եթե քիչ մը համարձակ խոսելու ըլլամ՝ չես վռնտեր ա՛։

— Մի՛ վախնար։

— Ըստ իմ խոնարհ կարծյաց՝ օրվան կարևորագույն խնդիրներեն մեկն ալ աս է, թե քանի որ առանց պարտքեր դնելու ապրիլը անկարելի է մեզ, պետք է իմաստությամբ վարվելով պարտք չի վճարելու դիտությունը սորվեցնենք մեր զավակաց։

— Աս ալ դիտությո՞ւն է, պարտքդ չես տար, կը լմնա կերթա։

— Այնպե՛ս չէ, վարժարանի հոդարարձություններն ալ ձեղի պես կարևորություն չեն տված այս գիտության և շատ սխալած են։

— Ինչո՞ւ։

— Անոր համար որ, եթե ֆրանսերենի կամ անգղիերենի տեղ այս գիտությունը սորվեին մեր երիտասարդները՝ իրենց պարտատերերը տեսնալնուն պես չէին շվարեր մնար, չէին սկսեր թոթովել, այլ համոզիչ խոսքերով գոհ կընեին իրենց պարտատերերը։

— Բայց պարտք չվճարելու դիտությունը սորվեցնելու տեղ, եթե պարտք չդիզելու արհեստը սորվեցնենք՝ ավելի աղեկ ըրած չե՞նք ըլլար։

— Ոչ, պարտք չվճարելը ավելի շահավոր է... այս պարտք չվճարելը նոր բան մը չէ, Քրիստոսե իբր չորս հարյուր տարի առաջ է. քրիստոնեությունն

շատ հին է... բայց ինչ օգուտ, որ քրիստոնեությունն այսօր կը պաշտպանվի և պարտքերնին չվճարողները երեսի վրա կը ձգվին... Ով որ ամպերուն[25] վրայեն անցած է, տեսած է հարիւալ Սթրեսթիատը[26], որ կաղաչե Սոկրատես, որ պարտքը չհատուցանելու արհեստը իրեն ուսուցանե։

— Թող այդ Սթրեսթիատը ախոռն հաներ։

— Լսել է թե՝ շատ հին ատեններու մեջ ալ պարտք չվճարել կա եղեր, մինչդեռ մեր խմբագիրներեն ոմանք կը պնդեն, թե իրենց միջոցավը տարածվեցավ այդ գիտությունը։

— Աստանկ ալ գիտություն լսած չունեի։

— Սոկրատես պես մարդու մը դիմելով՝ անկե խորհուրդ հարցունելը կը հաստատե, թե այդ գիտությունը կարծվածին չափ դյուրին բան մը չէ։

— Իմ խելքս չի հասնիր դրամական գործերու, Մալիլեն[27] դնա՛, անկեց կատարյալ տեղեկություն կառնես։

— Ուրիշ ի՞նչ ունիս։

— Սա ցավալի լուրն ունիմ, որ էրզրումի մեջ քանի մ՚ամիսեն մարդ չպիտի մնա։

— Ո՞ւր կերթան կոր։

— Լեվենթի թղթակցին նայելու որ ըլլաս, ամիսը բնակիչներեն տասը հազար հոգի թիֆոյեն կը մեռնին եղեր։ Քաղքին մեջ ութսուն հազար հաշվելով, ըսել կըլլա թե՝ ութ ամսվան մեջ կարինը բոլորովին պիտի պարպվի։

— Լեվենթի գրածին մեջ սուտ չկա՞։

— Կարելի՞ է որ ըլլա, բայց ո՞րչափ կա, խնդիրը հոն է։

— Երկու ղերս ղեղչենք։

— Գեշ ըլլար, որովհետև Լեվենթին ըրածը փիչ մը անպիտություն է կարծեմ. գրիչը ձեռքը առնել և ամիսը տասը հազար հոգի ջարդել։

— Մեզի վերաբերյալ ի՞նչ լուր ունիս։

— Զեզի վերաբերյա՞լ մի... գարիին գինը բարձրանալու վրա է։

— Գարին ի՞նչ վերաբերություն ունի մեզի, թո՛ղ ավատրիացիները մրատմրատան, որ գարեջուր կը խմեն. թո՛ղ ձիերը մամատան...

— Մենք ալ մամատանք, որովհետև խահվեի տեղ գարի կը գործածեինք, հիմա ի՞նչ պիտի ընենք։

— Աստված ողորմած է։

— Ուրիշ ի՞նչ ունիս։

— Քսակ մը լեցուն Թերսխանեի կեղծ պիլեթ ունիմ։

— Քաղաքական...

— Քաղաքակա՞ն... քաղաքական սա ունիմ, որ սա կռիվը լմննալեն վերջը պիվանագետներուն յուրաքանչյուրին մեկ մեկ մեհյան պիտի կառուցանեմ,

ամենուն արձաններն այդ մեհյաններուն մեջ պիտի կանգնեմ, և գլուխս բացած, անոնց երկրպագություն պիտի ընեմ։ Ասոնք մեր գիտցած ու ճանչցած չաստվածներեն շատ վեր են։ Աստվածներուն կենդանիներ կը զոհեին. ասոնց մարդ կը զոհենք ու հարյուր հազարներով կը զոհենք։ Ես ասոնցմե վախցա։ Մնաք բարով։

— Ի տեսության։

15 Փետրվար 1878

Դեսպանախորհուրդն[28] ո՞ւր պիտի գումարի։

Լորտերու ժողովին մեջ Լորտ Տերպի ըսեր է, թե այս խնդիրը քայլ մ՚առաջ գնացած չէ։

— Թուրքիո պես, կըսեն հիմա մեր թշնամիները։

Բայց ինչո՞ւ այս խնդիրը քայլ մ՚առաջ գնացած չէ մինչև այսօր, կամ եթե գնացած չէ, գոնե քայլ մը ետ ալ գնացած չէ. ուր որ էր՝ հոն կեցած է, խնդիրը ի՛նչ հանցանք ունի. անդամալուծնցին խեղճը. ի՞նչպես կրնա շարժիլ։

Ըստ մեզ՝ խնդիրը ուր որ է, դեսպանախորհուրդը հոն գումարելու է։

— Ո՛չ, Ռուսիան կառաջարկե եղեր գումարել այնպիսի երկրի մը մեջ, որ Արևելյան խնդիրեն բնավ շահ չունենա։

— Եվ չե՞ն կրցած մինչև հիմա անանկ երկիր մը գտնել։

— Ո՛չ։

— Հայաստանի մեջ գումարեն թող, որ առայժմ բնավ շահ մը չունենալեն գատ բավական վնաս ալ տեսավ։

Շաբաթս աքսորանաց շաբաթ է։

Արտահանա հրամանատար Հյուսեին Սապրի փաշան մշտնջենավոր բերդարգելության դատապարտվեր է։

Որչափ աղեկ կըլլար եթե սա մարդը Արտահանա հրամանատար չըրած բերդարգելության ղրկվեր... իր երեսեն այսչափ վնաս չէինք տեսներ։

Անգամ մը խաբվեցանք, և վնասվեցանք, երկրորդ անգամ չվնասվելու համար հիմակվընե խոհեմություն ձեռք առնելով, ապսպրելու ենք բանտապահներուն, որ աղեկ հսկողություն ընեն վրան, որպեսզի միգուցե Արտահանա պես այս բերդն ալ պարպելով մեկնի...

Բերդերու մեջ պահվելու որչափ մարդիկ բերդեր պաշտպանելու ղրկեցինք...

Անգղիական նավատորմիղին կղզիներուն առջևեն երևելուն ու Իզմիտի ծովածոցը երթալուն պատճառը իմացա՞ք։

— Անցյալ օր դրած էինք ա՛, Ռուսիո բանակը քիչ մը ետ քաշել տալու համար չհեռացա՞վ։

— Առջի օրը անանկ էր, բայց այսօր անանկ չէ։ Իզմիտի ծովածոցը կղզիներեն ավելի հարմարություն ունի եղեր նավատորմիղը պահելու...

Ով Անգղիա, հպատակներդ պաշտպանելո՞ւ համար ճամբա հանեցիր նավատորմիղդ, թե նավատորմիղիդ հարմար տեղ մը փնտռելու համար։

Եթե այս վերջինեն համար է, Անգղիո հպատակներն այսօրվընեն Իզմիտ երթալու են, որովհետև հոն ավելի հարմարություն ունին պաշտպանվելու։ Ա՛լ նավատորմիղն իրենց ետևեն չպիտի գա, այլ իրենք նավատորմիղին ետևեն պիտի երթան։

«Նախ և առաջ պետք է դիտնալ, թե Դարդանելն որո՛ւ ձեռք պիտի մնա»։

Այսպես կը խոսի Պիսմարք իշխանը. այսինքն որո՞ւ ձեռքը Դարդանելի վրա պիտի մնա։

Այս խնդիրն ալ նոր երևան ելավ։

Մենք՝ ներկա պատերազմը քրիստոնեից վիճակին բարելավությանը համար կարծելով, ինչպես որ դարձյալ այնպես կը կարծենք, և Դարդանելին ալ քրիստոնյա ըլլալը մեր մտքեն անցած չըլլալով, ասանկ հարցումի մը բնավ չէինք սպասեր, և այնպես համոզված էինք, թե անո՛ր ձեռքը պիտի մնա՝ որու ձեռք որ մնացած էր մինչև այսօր։

Մեր կարծիքը ծուռ, մեր համոզումը սխալ է եղեր։ Պիսմարք իշխանին խոսքեն աս կը հասկցվի, որ Դարդանելն ալ այս օրերս կնքվեր ու քրիստոնյա է եղեր...

Զրույց կը պտտի, թե մեր նավատորմիղն ալ կը համոզեն եղեր, որ քրիստոնյա ըլլա։

Թեպետև այս զրույցն անհավատալի է, բայց այնպիսի դարու մը մեջ, ուր ամեն մարդ կրոնի ազատություն կը վայելե, անհուսալի բան մ՚ալ չէ։

— Մարդ աստուծո, բերանդ բաց ու երկու խոսք ալ ինձի հետ ըրե։

— Քեզի հետ ի՞նչ խոսիմ, կնի՛կ։

— Ի՞նչ պիտի խոսիս. Թագուհի տատուին էրիկը ամեն օր իր կնկանը նոր լոփեր կը բերե, կը նստի հետը կը խոսի բոլիթիքայի վրա, դուն բան մը չես

ըսեր, հազար ու մեկ խոսքեր կը պտտին կոր... Մոսկոֆը եկեր է եղեր, նորեն գացեր է եղեր, ինկիլիզին տոնանման ատաններուն առջին է եղեր...

— Էմինգճին այսօր ալ հաց չբերավ։

— Վերջեն Իզմիտ գացեր է եղեր...

— Էմինգճի՞ն...

— Չէ, ճանըմ, տոնանման, հիմա ալ Պուրսայի ջուրերը պիտի երթա եղեր։

— Միսն ալ քսաներկուքի ելեր է...

— Մոսկոֆն ալ նորեն պիտի մտնա եղեր...

— Ինչո՞ւդ պետք քոմիին, կնի՛կ, դուն տանդ գործերը նայե։

— Ինչո՞ւ չպիտի խառնվիմ եղեր... Ինկիլիզը մեզի խաբեր է եղեր... կըսեք թե՝ կնիկները խաբող կըլլան. տե՛ս...

— Դարձյալ անանկ է յա...

— Ճանըմ, ի՞նչ կուզեն կոր ատոնք։

— Ճանըմ, սեպե քի տուներնիս միսաֆիր մը եկավ տե, խահվե մը հրամցուցինք, խահվեն խմելեն ետքը՝ գինի ալ բերեք կըսե։ Գինին կուտանք, խնձոր ալ բերեք կըսե։ Խնձոր կուտանք, կերակուր հանեցեք կըսե։ Կերակուր կը հանենք, կը նստի կուտե, ատկե վերջը՝ սոֆրային թախտը ինձի տվեք կըսե։

— Քա տեր ողորմյա, աս ի՞նչ տեսակ միսաֆիր է. ես ըլլամ նե՝ չեմ տար, թող ելնե երթա։

— Ո՛չ կելնե, ո՛չ ալ կերթա, քիչ մը ատեն ձեր տանը մեջ պիտի մնամ կըսե։

— Չեմ ընդունիր, մեյ մ՚ալ տունս մի՛ գար կըսեմ ու հետը չեմ տեսնվիր։ Աս ի՞նչ է, ամեն մարդ միսաֆիրության կերթա։

— Ամեն միսաֆիր մեկ չըլլար ա։

— Հիմա աս մոսկոֆը սոֆրայի թախտի՞ չունի՞ եղեր։

— Ունի ամա, կուզե կոր. ես մինչև որ ձեր տունը միսաֆիրության եկա նե՝ շատ ծախս ըրի կըսե կոր։

— Թող չի գար, մե՞նք տավեթ ըրինք։

— Կնիկ, խելքդ չհասնիր ըսի յա՛, կարճ կը կապեն։

— Սա ֆիստանդուա վաղը չմոռնաս, նայե՛ որ խոմաշը աղեկ ըլլա։

— Մյուս ֆիստանդ ի՞նչ եղավ։

— Մյուս ֆիստանիս պատառ պատառ եղած է, բռնվելու տեղ չունի, շատ դեշ վիճակի մեջ է... ֆիստանիս վիճակը քիչ մը բարվոքելու է որ...

— Պարապ տեղը ծախս մի՛ ըներ հիմա, անոր ալ վիճակը կը բարվոքի... գոմարվելիք քոնկրեին մեջ։

Սրամիտ տղայք միշտ կը սիրվին։

Հայր մը առջի գիշեր իր վեց տարու տղան դեմն առնելով, Քրիստոնեականե[29] մը սկսավ հարցումներ ընել անոր։

Շատ մը բաներ հարցնելե ու պատասխաններն առնելե ետքը՝ հայրը հարցուց.

— Ըսե նայիմ, տղաս, Քրիստոսը սպաննողները որո՞նք էին։

— Քրիստոսը սպաննողնե՞րը մի։

— Այո՛։

— Քրիստոնեականիս մեջ անանկ բան չկա, հայրիկ։

— Թող չըլլա, քրիստոնյա մը այսչափ բանը չգիտնա՝ կըլլա՞ մի։

— Քյուրդերն սպաննած ըլլալու են, հայրիկ, չերքեզներն ալ անոր հագուստները կողոպտած ըլլալու են։

— Ապրիս, տղաս, սըկսե օղի մը բե՛ր, ըսավ հայրը, և Քրիստոնեականը գոցեց։

17 Փետրվար 1878

Ի՞նչ մեղքս պահեմ, ես այս հաշտության պայմաններեն ալ բան մը չեմ հասկնար կոր։

Հաշտության պայմանները՝ որք նախ Քըչանլըք պիտի որոշվեին, քիչ մը ետքը Ադրիանուպոլիս պիտի ստորագրվեին, քիչ մ'ալ ետքը Այ-Ստեֆանո[30] պիտի կնքվեին, մինչև այսօր ո՛չ կնքված են, ո՛չ ալ մկրտված։

Արդյոք Քըչանլըքի, Ադրիանուպոլսո ու Այ-Ստեֆանոյի օդը կավրե՞ կոր հաշտության պայմանները, արդյոք հիմա քաղաք մ'ալ հաշտության պայմաններուն համա՞ր փնտռելու պիտի ստիպվինք։

Ի՞նչ դժվար սակարկություն է այս, ասոված իմ։ Իմ պիտցածս ու տեսածս՝ սակարկություն մը երկու խոսքով լմննալու է։

Օրինակի համար.

Տուր ձեռքդ ինձի։

— Առ։

— Գարաստաղի անկախություն։

— Շատ աղեկ։

— Սերվիո ալ անկախություն։

— Ատոր ալ բան մը չեմ ըսեր։

— Ռումանիո ալ անկախություն։

— Ձեր ըսածը ըլլա։

— Պուլղարներու ինքնօրինություն։

— Դեմ կեցած ունի՞նք։

— Չերքեզներու և քյուրդերու ալ հայութիւն։

— Ատոր ալ բան չենք ըսեր։

— Մնաք բարով։

— Երթաք բարով։

Լմնցավ, գնաց։

Քըչանլըքեն մինչև Այ-Ստեֆանո հաշտության պայմաններ...

Իմ կարծյոքս, հաշտության պայմաններուն վրա հաշտութենեն ետքը պէտք բանակցին, և այս բանակցությունը մեր կարծածեն ավելի երկար պիտի տևե, և այն ատեն միայն պիտի վերջանա՝ երբ մեկ հացը հարյուրնոց թուղթի մը առնուլ սկսինք։

Քանի մ'օրև ի վեր պտտած դրույցները։

— Կնիկ, ստրագթույթե։

— Ի՞նչ ըսիր։

— Ստրագթույթե, ստրագթույթե։

— Ատ ի՞նչ է, ատ ալ նո՞ր հանեցիր։

— Բարի եկար ըսել է... քաք բաժիվայեթի... քաք բաժիվայեթի...

— Ա՛ս ինչ ըսել է...

— Քեյֆդ աղե՞կ է. քաք բաժիվայեթի, քեյֆդ աղե՞կ է, քաք բաժիվայեթի...

— Բաչա պիտի անեիր երեկ։

— Տենկի եեսթի, տենկի եեսթի, տենկի եեսթի...

— Ինչո՞ւ չատիր բաչան։

— Քաղտա բահոթ, քաղտա բահոթ...

— Ճանըմ խենթեցա՞ր, ի՞նչ եղար։

— Ստրագթույթե, ստրագթույթե։

— Այս դիշեր ուտելիք չունինք։

— Թող չունենանք, բավական է որ... տենկի եեսթի, քաղտա բահոթ... ստրագթույթե։

— Տա տենկի եեսթին ձգե՛ ու գնա՛ բան մը առ ուտենք։

— Կնի՛կ, կեցի սըվոնք սորվիմ, որ վաղը մյուս օր բարեկամները հոս գալու ըլլան նե՝ քանի մը փարա վաստակինք։ Քաք բաժիվայեթի, բարի եկաք, քաք բաժիվայեթի, բարի եկաք։

— Մինչև հիմա խելքդ ո՞ւր էր...

— Աճելեի եկավ, կնի՛կ, այսչափ շուտ գալիքը մտքես չէր անցներ։
— Ասկից վերջը սորվիս ու ստակ պիտի վաստակիս հնե՞... վայ դլխուդ...
— Մի՛ վախնար դուն, անոնք շուտ չեն երթար։

Պիտաբք բարեկամնիս կը պնդե, որ Դարդանելի խնդիրը խիստ մեծ ու ծանրակշիռ է...

Գերմանիո դործին չդար եղեր, որ Դարդանելի բանալին Ռուսիո ձեռքը անցնի և ուղածին պես բանա ու գոցե անոր դռները։

Աղեկ ա՛, ասոր դյուրին ճամբան կա, բանալին Թող դարձյալ մեր ձեռքը մնա, և առաջվան պես, ձեր ուղածին պես բանանք գոցենք, կամ ո՛չ բանանք, ո չ ալ գոցենք։

Ամուսնության թիվն օր քան օր նվազելու վրա ըլլալով, քարթալցիներն[31] ասոր առաջքն առնելու համար դյուրին ճամբա մը գտեր են. երիտասարդները ծեծելով կամուսնացնեն կոր։

Երիտասարդին մեկը Քարթալ տան մը մեջ սենյակ մը վարձեր կը բնակի եղեր։ Այս տանը տիրուհին կուզե եղեր աղջիկը այս երիտասարդին տալ։ Երկու շաբաթ առաջ կիրակի գիշեր մը հիշյալ տունը հյուրերով կը լեցվի։

— Ճանըմ, Թագավոր աղան ո՞ւր է, ինչո՞ւ չի դար, փեսա ըլլալիք մարդը այսչափ ուշ մնալո՞ւ է մի։

— Ուր է նե՝ հարկավ հիմա կուդա։

Ժամը երկու կըլլա, երիտասարդը տուն կուդա պառկելու։

— Օ՜օ՜, հրամմեցեք, Թագավոր աղա, սանկ նստեցե՛ք, ո՞ւր մնացիք, եղբայր։

— Քիչ մը գործ ունեի այսօր, ներեցե՛ք. հիմա ալ սենյակս պիտի քաշվիմ, որովհետև մինչև ժամը յոթը դիր ունիմ։

— Ի՞նչ կըսեք, Թագավոր աղա՛, մեզի կը ծաղրե՞ք կոր։

— Ծաղրելու ի՞նչ կա։

— Բազմութենե չես ախորժիր նե՝ մենք կերթանք։

— Բազմությունը ի՞նչ վնաս ունի իմ դիր դրելուս։

— Քահանան հիմա պիտի դա։

— Քահանան ի՞նչ գործ ունի...

— Տեր ողորմյա՛, պսակը ո՞վ պիտի ընե։

— Ի՞նչպես պսակ... հարանի՞ք ունիք։

— Ճանըմ, ինչո՞ւ սասանկ կը խոսիք, դուք չե՞ք կարդվիր կոր։

— Ե՞ս մի... խապար չունիմ։
— Խապար չունի՞ս մի։
— Ամենևին։
Ջաթ... բաթ...
— Խապար չունի՞ս մի...
— Ինչո՞ւ կը զարնեք կոր...
Ջաթ... բաթ...
— Այ, այ, այ...
— Խապար չունի՞ս հե...
— Ծո՛ Կարապետ, ինչո՞ւ կնցեր ես, դուն ալ չդարնե՞ս... Մարկոս, Թորոս, զարկե՛ք...
— Այ, այ, այ, այ... Թող տվեք, պիտի մեռցնե՞ք զիս... խապար ունիմ, ունիմ, փեսա պիտի ըլլամ, մոռցեր էի...
— Հարսին ձեռքեն բռնե՛ նայիմ։
— Բռնեցի։
— Սանկ եկուր նայիմ։
— Նկա։
— Առջևդ նայե։
— Նայեցա... օֆ... օֆ... ոսկորներս ջարդվեցան...
— Մինչև ցմահ տե՞ր ես, կը հարցնե քահանան։
— Չեմ, չեմ, կը պոռա փեսան։
— Չե՞ս մի...
Բաթ... քյութ... բաթ...
— Համան կը տեսնա՞ս կոր...
— Ես եմ, տեր եմ, մինչև ցմահ տեր եմ... մահվընես ետքն ալ տեր եմ, դեռ ըսելիք ունի՞ք։
— Ապրիս, աղաս... Ճանըմ, փեսանիս հում աղա չէ ամա, գինքը գլխե հանողներ կան։

Պսակի արարողությունը կամ լավ ևս ծեծի արարողությունը կը լմննա։ Սքանարել[32] ա՛լ կայնելու կարողություն չունենալով, բազմոցի մը վրա կիյնա, կը պառկի։ Հետևյալ օրը կանուխ կելնե բողոք մը կը գրե ու կրոն. ժողովո կը ներկայացունե խնդրելով, որ սա ծեծի պսակը լուծեն։

Քարթալի քահանան պատվավոր կրոնական մ՚է, և մինչև հիմա ալ ապօրինավոր գործի մը մեջ գտնված չըլլալով, կը հուսացվի, որ այս պսակի պատասխանատվությունը ուրիշի մը վրա ծանրանա։

Տեսնենք, կրոն. ժողովնիս քանի տարի պիտի զբաղվի այս խնդրով։

18 Փետրվար 1878

Արևելյան խնդիրը կարծես յուր քաղաքական կերպարանքը մերկացավ ու Ճաշակի վերաբերյալ խնդիր մը դարձավ. յուրաքանչյուր կառավարություն յուր Ճաշակին համեմատ կուզե ձևել, կտրել զայն. միայն մեր Ճաշակը ձայն չունի...

Առակով խոսինք:

Ինչպես որ ես իմ բալթոս լայն կուզեմ, դուն քուվինդ նեղ կուզես, ուրիշ մը երկար կուզե, ուրիշ մը կարճ, այնպես ալ կառավարությունը կուզեն, որ այս Արևելյան բալթոն լայն, նեղ, կարճ և միանգամայն երկար ըլլա:

Որո՞ւ Ճաշակը պիտի գոհացնենք:

Ամենուն ալ:

Եվ դիտե՞ք հազար հոգիի Ճաշակը կրող բալթո մը ձևելը որչա՛փ դժվար է...

Գիտեմ որ դիտեք, հաշտության պայմանները կնքելու չափ դժվար է:

Եվ դարձյալ դիտե՞ք, հազար հոգիի Ճաշակով ձևված բալթո մը ի՞նչ այլանդակ և խելքե մարթ չանցած հագուստ մը կըլլա:

Մենք հոս հաշտության պայմանները կնքելու պրպտած ատեններս, մեր պաշտպան Անգղիան ալ քար մը կը գլտորե:

Կը փափաքի՞ք, կըսե, որ սա Արևելյան խնդիրը միանգամ ընդմիշտ լուծվի:

Այո, կը փափաքինք:

Եթե կը փափաքիք՝ Կիրիան ու Միխլլին ինձի տվեք. Մակեդոնիան, Թեսալիան ու Եպիրոսն ալ Հունաստանի տվեք. Եդիպտոսն ու Թունուզը անկախ հրատարակեցեք, լմննա երթա:

Ահա Անգղիո Ճաշակը:

Մյուս կառավարությանց Ճաշակներուն վրա երկար բարակ խոսելու հարկ չկա:

Վերջապես, ընթերցո՛ղ, սեպե թե սա Արևելյան խնդիրն այսօր բաշասի է: Հիմա սա բաշան անանկ վարպետությամբ եփելու է, որ, թեպիեով սիրողն ալ ուտե, թեպիեսիզ սիրողն ալ ուտե, քացախով սխտորով ուզողն ալ ուտե, քացախով սխտորով չուզողն ալ ուտե, լիմոնով սիրողն ալ ուտե, լիմոնով չսիրողն ալ ուտե:

Սա ըլլալո՞ւ բան է:

Եթե այսպես է, հաշտության պայմաններն ալ կնքվելու բան չէ, ա՛յլ է. թե մեկ մարդու քմացը համեմատ եփվի բաշան:

Իրավ է, որ խղճմտանքը վերցած է աշխարհես...

Սա Սերվիո ու Գարատաղին երթալ՝ պատերազմական ծախք ուզելնուն ի՞նչ կըսեք:

Շիտակը խոսելով, եթե ես ըլլայի՝ երեսս չէր բռներ:

Սերվիան ու Գարատաղը գրեթե մեր կառավարության զավակներն էին. մենք իրենց հետ այնպես վարվեցանք՝ ինչպես որ կը վարվի հայր մը իր զավակաց հետ: Մեզի դեմ ոտք ելնելնին ու ձեռք վերցնելնին հերիք չէր, հիմա ալ ելեր ատակ կուզեն, մտքերնեն ըսելով.

— Հայր, մենք քու խոսքդ մտիկ չըրինք, քեզի դեմ ապստամբեցանք, սուտ ըսինք, խոսքերնիս չբռնեցինք, ծեծեցինք, ծեծվեցանք, վերջապես քու կոկորդդ սեմնցինք, ուստի քու պարտքդ է հիմա մեզի ատակ տալ:

Ատոնք պարզապես ատակ վաստկելու ելեր են, եղբայր:

Իսկ մենք չենք կարծեր, որ կառավարությունն ատակ տա ատոնց. որովհետև եթե ունենար, ավելի իր հնազանդ հպատակացը կուտար, քան թե անհնազանդ զավակացը:

Մենք հոս անոթութենե մեռնինք, անդին Սերվիան ու Գարատաղն ոսկիներով խաղան:

Պարտ անձին կը համարիմ ընթերցողաց ծանուցանել, որ հանդիստ ըլլան, և մտքերնեն բան մը չանցունեն Ռուսիո բանակին ու Անգղիո տորմիղին Պոլսո առջև գտնվելուն վրա. պատնք բարեկամաբար եկած են:

Կրնամ ըսել, որ մեր մտքեն չարություն կանցնի, անոնց մտքեն չանցնիր:

Այս տողերը գրելու հարկ ալ չկա, որովհետև եթե Դարդանելի նեղուցը վեց անգղիական զրահավոր չիլներ, Ռուսիա մայրաքաղաքիս այսչափ չէր մոտենար, ինչպես որ Անգղիան ալ իր վեց զրահավորները Դարդանելեն չէր անցուներ՝ եթե Ռուսիան մեզի այսչափ չմոտենար: Եվ որովհետև մին բարեկամությամբ մոտեցավ մեզի, մյուսը չէր կրնար իր բարեկամությունը չհայտնել ու մեզմե հեռու մնալ: Ի՞նչ կուզեք, այսօրվան օրս բարեկամներու մեջ մնացինք:

Ատոված զմեզ իրարմե չբաժնե, բարեկամությունիս հաստատ և անսասան պահե, մեր բարեկամաց երկար օրեր պարգևե, անոնց մեկ օրը հազար ընե. մեկտեղ աղեկ օրեր անցունենք... Ատոված Ավստրիայի ալ ասանկ բարեկամներ շնորհե...

Աղեքսանդրիայեն կը գրեն թե՝ եգիպտական արժեթուղթ ունեցողները ժողով մ՚ընելով, պատվիրակներ ընտրեցին, որպեսզի Եգիպտոսի ելմտական վիճակը դեսպանախորհրդին ներկայեն։

Նախ և առաջ՝ Եգիպտոսի ելմտական վիճակը դեսպանական խորհրդին ներկայանալու բան չէ... որովհետև Եգիպտոսի ելմտական վիճակը քրիստոնյա չէ, որ բարվոքմանը աշխատավ։

Երկրորդ՝ դեսպանախորհուրդը գլխավորաբար Փարիզի դաշնադրության[33] վերաբերյալ խնդրոց զբաղելու պաշտոն ունենալով՝ և Եգիպտոսի ելմտական վիճակը Փարիզի դաշնադրության մեջ նշանակված չըլլալով, Եգիպտոսի ելմտական վիճակը դեսպանախորհրդին ներկայանալու իրավունք չունի։

Երրորդ՝ Եգիպտոսի ելմտական վիճակը եթե աղեկ չէ, իբրև հաղվագյուտ մեկ վիճակ մը՝ ավելի Փարիզի արվեստահանդեսին ներկայանալու է, քան թե Պատենի դեսպանախորհրդին։

Չորրորդ՝ եթե օր մը դեսպանախորհրդո մ՚առջև ելմտական վիճակ մը ներկայանալ հարկ ըլլա, Եգիպտոսի ելմտական վիճակը թո՛ղ տեղը հանդիստ նստի. մեր ելմտական վիճակը նախ և առաջ պիտի ներկայանա հոն՝ իբրև մեծ եղբայր Եգիպտոսի ելմտական վիճակին...

Աղեկ միտքս ինկավ։

Վարդովյան էֆենտիի և Օրթագյուղի[34] Թատրոնի խմբին ելմտական վիճակները չեմ կարծեր, որ Եգիպտոսի ելմտական վիճակեն աղեկ ըլլան։

Պատիվ ունեցա դիշեր մը Օրթագյուղի Թատրոնը երթալու։

Ներկայացումը Քաթերին Հովարտ էր[35]։ Դերասանաց թիվը հանդիսականաց թիվեն ավելի էր. հետևաբար դերասանները կը քաջալերեին զհանդիսականս, մինչդեռ ասոնց պարտքն էր զանոնք քաջալերել։

Դերասանաց ընթացքեն կռահեցի, որ դժգոհ էին, և սակայն հաստատամըտությամբ կը շարունակեն իրենց ներկայացումներն ու վնասները։

Կերևա, որ ներկայացված խաղերը գյուղացվոց ճաշակին չեն համապատասխաններ. եթե վիսքի կամ բրեֆայի[36] վերաբերյալ ներկայացումներ տրվին, թե՛ դերասանները կը վաստակին, թե՛ հանդիսականները և թե՛ դպրոցը։

Վերջեն իմացանք, որ Օրթագյուղի Բաղ. Խորհուրդն[37] առաջարկեր է թուղթ խաղացողներուն, որ գոնե շաբաթը անդամ մ՚ալ ի նպաստ գյուղի վարժարանին վիսք խաղան։

Եթե այս առաջարկությունն ընդունվի, Թատրոնին դռները կը գոցվին և գեղացիք ալ հակամայս Թատրոն երթալե կը խլսին։

ՊՏՈՒՅՏ ՄԸ ՊՈԼՍՈ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԵՋ



ԲԵՐԱ.

Բերայի սահմանն է արևելքեն խաղամոլություն, արևմուտքեն պճնասիրություն, հարավեն շռայլություն և հյուսիսեն խարդախություն։

Ա՛լ ասանկ սահմանակիցներ ունենալեդ ետքը հանդարտ սրտով կյանք անցուր։

Այս թաղը Պոլսո Բարիզն է—եթե Բարիզն իրեն նվաստություն չհամարիր յուր անունն Բերայի վրա տեսնելը։

Անվանի են հասարակաց պարտեզներն, որք դրախտ ալ կը կոչվին և ուր կը գտնվի ծառ գիտության բարվո և չարի[1], բարվո ծառը դեռ պտուղներով բեռնավորված է, իսկ չարի ծառին վրա ոչ թե պտուղ, այլ տերև անգամ չես կարող գտնել։

Փողոցները բավական լայն են, միայն թե առավոտներն այդ փողոցներե անցնելու չգար, վասն զի ամեն առավոտ կավլվին և փոշեղեն մառախուղ մը չորս կողմը կը պատե։

Ունի գեղեցիկ խոսարաններ, որոնց մեջ երգեցիկ աղջիկներ մինչև առավոտ եղանակով կը խոսին այլևայլ նյութերու վրա։ Ունի նաև համալսարաններ, որոնց մեջ աղեկ թուղթ խաղալու, վարպետությամբ դիմացինդ կողոպտելու գիտությունը կավանդվի դյուրաստույց եղանակավ։

Տուներուն գրեթե երեք մասը քարուկիր է։ Այս տուները շատ քաջ են. կրակն բնավ չեն վախնար, բայց կայրին։

Ջեռագործներն մեծ կատարելության հասած են. գեղեցիկ սեռեն անոնք, որ գոհ կըլլային, եթե արական սեռին վերաբերեին, հոս խանութներ բացած՝ մեր աղգային աղջիկներուն և տիկիններուն զրպաններեն ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան, ամեն րոպե բաղում դրամ կը քաշեն։

Փոքրիկ գլխարկի մը համար երկու ոսկի կուզեն, իսկ զայն շտկելու համար, այսինքն վրան ծաղիկ մը կապելու համար՝ մեկ ոսկի կը պահանջեն։

Բարիզեն եկած կաղապարին համեմատ շապիկները կը կարեն, զոր առաջին անգամ կոճկելուդ կոճակները կը բզդին, եթե փիչ մը երկար շունչ առնես՝ կարերը կը քակվին. այսպես հասկցիր բոլոր հագուստներուն համար: Այս տեղեն շապիկ կամ զգեստ ծախու առնողն ուշադրությամբ և որոշյալ չափով շունչ առնելու է:

Նշանավոր է յուր լիճն, որ ձմեռ ատեն կը դոյանա Բագսիմեն[2] մինչև Զալաթիո Սերայը[3]: Ընկերություն մը այդ լճին վրա նավակներ բանեցնելու արտոնություն խնդրեց, բայց չկրցավ ստանալ:

Եթե արտոնություն տրված ըլլար՝ այդ մարդը մեծ դումարներ կը շահեր. սակայն այս արտոնության հակառակեցան կիներեն ոմանք, որք բարեպատեհ առիթ կը համարեին սույն լիճն՝ իրենց խոշոր սրունքներն արդո հասարակության ցույց տալու համար, վասնզի երբ այդ լճակեն անցնեին՝ մինչև ծունկերը վեր կառնեին իրենց շրջազգեստն: Գալով այն կիներուն, որք նիհար սրունքներ ունեին՝ ասոնք բավական աշխատեցան, որ շնորհվի այդ արտոնությունն, որպեսզի իրենք ալ ձմեռվան եղանակին մեջ կարողանային դուրս ելնելու ազատությունը վայելել, վասնզի ասոնք կղզուշանային իրենց տիար արուններն ուրիշներու ցցունելն, մինչդեռ ընդմիշտ հաստատելու համար այն ճշմարտությունն, թե կիներն իրենց տղոց կողմերն ծածկելու համար միշտ մեծ զոհողություններ կրնեն:

Այս թաղին ազգայիններուն վրա կատարյալ տեղեկություն տալու համար՝ պարտավոր ենք շատ մասերու բաժնել զանոնք:

Մաս մը կա, որ բնիկ բերացի չէ, այլ կա՛մ հասպյուղցի, կա՛մ Ենի գաբուցի[4] է, որ ժամանակավ շատ հարուստ ըլլալուն պատճառավ այս թաղն եկած է և սնանկացած է, որպես թե Հասպյուղի կամ Ենի Գարբուի մեջ սնանկանալն մեծ դժվարություններ ունենար: Արդ, սնանկացած բոլոր ամիրաներն[5] գրեթե այս թաղին մեջ կը բնակին: Եվ արդարև, այս թաղն շատ դյուրություններ կընծայե այն անձերուն, որք հաստատապես որոշած են դադրեցնել իրենց վճարումներն, և ասոր համար է, որ շատ վաճառականներ հոն կերթան՝ երբ սնանկանալ փափաքին: Շատերն ալ սնանկանալե վերջը հոն կերթան՝ իրենց ծանոթներե հեռու մնալու համար. վասնզի սնանկությունն ժամանակավ այնքան անպատիվ բան մը նկատված էր, որ սնանկացող մը նորընծա քահանայի մը պես քառասուն օր ապաշխարանք կը քաշեր և տունեն դուրս չէր ելներ: Հիմա, փա՜ռք լուսավորության, սնանկությունը թեպետև սովորական բան մը դարձած է, բայց դարձյալ կը դանվին խավարյալ մարդեր, որոնք իրենց փոքրություն և ամոթ կը համարին ուրիշին իրավունքը կյնելը: Ահա այս խավարյալներն են, որ Բերա կը գաղթեն. լույս մաղթենք իրենց համար, որպեսզի նախապաշարումն մեկդի թողլով՝ հանդարտ խղճով սնանկանան և

իրենց մեծ պատիվ համարին ուրիշներու ստակներն ուտելը: Արդեն հարստանալու համար ամենեն կարճ ճամբան է աս, և այն բոլոր հարուստներն, զորս այսօր կը տեսնենք, բայց տեսնել չենք ուզեր՝ այդ ճամբով հասած են իրենց նավահանգիստը: Ահա մարդ մը, որ յուր կյանքին մեջ բնավ վաճառականությամբ չէ զբաղած և այսօր Վոսփորի երկու ափերուն վրա բարձրացած հոյակապ շենքերու տեր է: Ի՞նչպես կառուցած է զանոնք, մի՛ հարցուներ, հապճղտակությամբ կառուցած է: Ասդին դարձիր և կը տեսնես այնպիսի անձեր, որք իրենց կյանքին մեջ հազիվ ապրելու համար զրամ վաստակած են. բայց այդ անձերն այսօր, չգիտեմ ո՛ր կղզվուն մեջ, տեր են այնչափ գետիններու՝ որոնցմե Նոյ[6] նահապետին օրեն ի վեր մաս-մաս կը ծախեն, և այդ գետինները չեն սպառիր. ո՛չ թե միայն չեն սպառիր, այլ որքան ծախվին՝ այնքան կընդարձակվին: Ի՞նչպես. մի հարցուներ, վասնզի պատասխանը գողություն է, և այս գողերն մեծ հարգ ու պատիվ կը վայելեն հասարակության մեջ՝ որ կըսե անոնց համար.

— Շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են. կանխավ պատրաստած են իրենց ապագան:

Եթե ասոնք ուրիշ հողի մը վրա գտնվեին, ցմահ բանտարկության կը դատապարտվեին:

Դաս մ'ալ կա, որ ո՛չ գործ ունի և ո՛չ եկամուտ և ո՛չ ալ հոգ ապրելու համար: Այս մասին վրա երե ակնարկ մը ընես՝ կը զարմանաս, թե ի՛նչպես կապրի և ինչո՛ւ անոթութենե չմեռնիր. բայց երբ իր ընթացքը քիչ մը քննես՝ կը զարմանաս, թե ինչո՛ւ միլիոնի տեր չըլլար: Այս մասին բոլոր դրամագլուխն է յուր կրած հագուստն, զոր կը շինե՝ բարեկամներե նախ փոխ առնելով և հետո չվճարելով: Բոլոր հարստությունն յուր վրա կը կրե, Պիասի աշակերտներեն է: Այդ հագուստին տեր ըլլալուն պես՝ բարեկամե մը քանի մը դահեկան կը գտնե և կերթա թաղին ամենեն նշանավոր սրճարանին մեջ կը նստի: Աչերը կը հառե սրճարանին դրանը, ուսկից անծանոթի մը մտնելուն կսպասե, ճիշտ այն ձկնորսին պես, որ կարթը կը ձգե ջուրին մեջ և ձուկի մը գալուն կսպասե: Օտարական մը մտա՜վ՝ անոր հետ իսկույն բարեկամ կըլլա, քովը կերթա և կսկսի խոսակցության.

— Ե՞րբ եկաք, կը հարցունե անոր:

— Երեկ գիշեր եկա:

— Ես զձեզ տեղ մը տեսած եմ, զձեզ պիտի ճանաչեմ... բայց հիշողությունս քիչ մը տկար է ու...

— Կարելի է:

— Մարտիրոս աղային քեռորդի՞ն եք դուք:

— Ո՛ր Մարտիրոս աղային:

— Մարտիրոս աղա մը կար... սա ինքը... սա Մարտիրոս աղան, որ վերջը... վերջը բան մը եղավ։

— Վերջաբա՞ն մի եղավ...

— Վերջաբան մը եղավ, ըսին այն ատեններդ։

— Մարտիրոս անունով մորեղբայր չունիմ ես։

— Չունի՞ք մի։

— Չունիմ։

— Ո՞վ է ան ուրեմն, որ Մարտիրոս անունով մորեղբայր մը ունի, որ վերջը բան մը եղավ... ներեցե՛ք, ներեցե՛ք, հիմա հիշեցի... դուք չեք. ես ձեզի ուրիշի մը նմանցուցի... Կարապետան էր այն, որ ձեզմե աղեկ չըլլար, բարեկամս էր և որ Մարտիրոս աղային քեռորդին էր. պատվական երիտասարդ մ'էր, բայց վեց տարի կա, որ դինքը տեսած չունիմ։ Մարտիրոս աղան ալ բարի մարդ մ'էր, որ վերջը... վերջը... տեր ողորմյա, ի՞նչ եղավ այս մարդը վերջը... հա՛, վերջը շատ աղքատ եղավ. վաճառի իր բոլոր հարստությունը Ֆոնսոլիտի մեջ թաղեց... խե՜ղճ Մարտիրոս աղան։ Բայց ես զձեզ ալ անպատճառ տեղ մը տեսած եմ, և ձեր դեմքն ինձի ծանոթ է։

— Հավանական է, որ Ենի Գաբու տեսած ըլլաք։

— Ճիշտ Ենի Գաբու, ճիշտ, ահ, եղբայր, կաղաչեմ որ Ֆոնսոլիտ չխաբեք, Ֆոնսոլիտը կը սնանկացնե մարդս, ինչպես նաև երբեմն մարդս կը սնանկացնե Ֆոնսոլիտը։

— Ես չեմ խաղար։

— Կեցցես. հիմա սիրեցի զքեզ... ներեցե՛ք, խոսքի բռնվեցանք և մոռցա հարցնելու, թե ի՞նչ պիտի հրամմեք... խահվե՞ թե օղի։

— Բերանս չեմ դներ օղի։

— Դարձյալ կեցցես, դարձյալ սիրեցի զքեզ. քանիներու խրատ տված եմ, որ սա անիծյալ ըմպելիքեն ետ կենան, և խրատս լսելի չէ եղած։ Խահվե մը բեր։ Տունը ի՞նչպես են, աղե՞կ են. մայրդ ի՞նչպես է։

Մայր չունիմ։

— Դուք ողջ եղեք։ Ներելի՞ է հարցունել, թե ինչով կզբաղիք։

— Պզտիկ վաճառականությամբ մը... կտավի գործ։

— Շատ լավ. կտավի գործը ամենեն աղեկն է։ Հորեղբորորդի մը ունիմ, զոր միշտ հորդորած եմ կտավի գործ ընել, բայց մտիկ չէ ըրած իմ խոսքերս։

— Հրամանքնի՞դ ինչով կզբաղիք։

— Շիտակ խոսելով՝ ես հիմակուհիմա գործ մը չունիմ. մեր հորեն մնացած քանի մը տուներ կան, անոնց եկամուտովը կապրինք, կուզեմ գործի մը ձեռն զարնել, բայց չգիտեմ, թե ինչ գործ բռնեմ...

Այս պահուն տան սպասավորի կերպարանքով մեկը կը մտնե և տեննաբանին խոսքը կընդմիջե՝ անոր ականջին բան մը փսփսալով։

— Առաջ ինչո՞ւ իմաց չտվիք։

— Ինքն քսան ոսկի ուզած էր, մենք ալ ձեր մեծապատվութենեն այնքան ուզեցինք։

— Տեր ողորմյա... հիմա ի՞նչ ընելու է... Գալաթիա՛ գնա, սենյակը բաց...

— Մարդը հիմա կուզե, վասնզի վար չպիտի իջնա և հոս մեկու մը պիտի տա եղեր։

— Ճաշեցո՛ւ բան...

— Ի՞նչ կա, կը հարցունե օտարականը։

— Ոչինչ, քսան ոսկինոց հայելի մը ապսպրած էի, մարդն երեսուն ոսկիանոցեն բերած է և հիմա տասն ոսկի ալ կուզե, չսպասեր ալ, որ սպասավորը Գալաթիայեն երթա բերե... սա եվրոպացիները զարմանալի մարդեր են...

— Եթե կընդունիք՝ ես տամ և ժամեմ մը ինձի կուտաք։

— Չէ, չէ, ի՞նչ ըսել է, ամոթ բան է. մանավանդ թե ես չեմ սիրեր փոխառություն ընել։

— Ի՞նչ վնաս ունի. ժամվան մը փոխառության խոսքը կըլլա՞... եկուր, պարոն, ա՛ռ...

— Աս մեծ ամոթ եղավ շիտակը։

— Վնաս չունի։

— Մինաս, շո՛ւտ ըրե, Գալաթիայեն տասը ոսկին բեր։

— Շատ աղեկ։

Սպասավորը կը թռի։

— Ներումն կը խնդրեմ, բարեկամ։

— Չարժեր։

— Ի՞նչ բանի վրա կը խոսեինք։

— Գործ մը բռնելու վրա։

— Այո՛, կուզեմ գործի մը սկսիլ. բայց կը վախնամ, որ դրամագլուխս կը կորսնցնեմ, վասնզի հիմակվան գործերն շատ աղեկ չեն, իմ բռնած ընթացքս ավելի շահավոր է։

— Իրավունք ունիք... գործ բռնելու ժամանակը չէ։

Ժամ մը կը խոսակցին գործի վրա. սպասավորն, որ տասը ոսկին բերելու գնացած էր՝ վազելով զբոսարանին առջևեն անցած ատենը ներս կը կանչվի յուր տերեն։

— Ո՞ւր է, կը հարցունե իրեն, տասակը։

— Բանալին սխալ առած եմ. փոխելու կերթամ։

— Ա՜յ ապուշ, շո՛ւտ ըրե... Ապուշ սպասավորներն ալ քաշվելու բաներ չեն շիտակը. քառասուն սպասավոր փոխեցի. սա քառասունըմեկերորդը պիտի ըլլա։ Տելքը գլուխը սպասավոր մը կը ճանաչե՞ր։

— Չեմ դիտեր անանկ մեկը։

Այս խոսակցության միջոցին մեր բարեկամը մեկեն ի մեկ զբոսարանեն դուրս կը ցատկե և երեսուն տարու մեկու մը վիզը կը փաթթվի և կսկսի անոր հետ պագավիլ։ Համբույրի արարողությունն լմննալուն պես՝ յուր համբույրակիցին հետ զբոսարանին դռան առջև կուգա և յուր բարեկամին կըսե.

— Նզբայրս է, որ Մարսիլիայեն եկած է... հետը տուն երթամ և քառորդե մը դառնամ. ներեցեք, հազար ներումն, միլիոն ներողություն...

Մարդն մինչև այսօր կսպասե այդ սրճարանին մեջ սպասավորին՝ որ մինչև այսօր բանալին չէ կրցած գտնել, բարեկամին՝ որ եղբորը հետ դեռ կը պագավի, և տասը ոսկիին՝ որ ետ դառնալու միտք չունի։ Ահա այս դասին մեկ գործն, որու ականատես ըլլալու պատիվն ունիմ։ Տարակույս չկա, թե այս տեսակ գործերն այսօր վաճառականութենեն ավելի շահ կը բերեն՝ եթե ամեն օր պատահին։

Ուրիշ մաս մը յուր բոլոր ժամերը խաղամոլությամբ կանցունե. նարտ, թուղթ և կամ ուրիշ տեսակ խաղ մը յուր արհեստն է. ատով յուր ընտանիքը կը կերակրե կամ անոթութենեն կը մեռցունե։ Այս խաղամոլներն ալ երկու կարգի կը բաժնվին, հարուստներն ոսկիով կը խաղան, աղքատներն արծաթով։

Մաս մ'ալ կա հոս, որ միշնորդ է կա՛մ տան, կա՛մ սիրո և կա՛մ երբեմն երկուքին մեկեն։

Չմոռնանք հիշել, որ ընդհանուր կանոն մ'է հոս՝ շաբաթ մը անոթի մնալ և գարձյալ հին հագուստներով չպատիլ. քանի փարա չունեցողն Ռոչիլտի՞ տղուն պես կը հագվի, և ասկից է, որ Բերան ուրիշ թաղերեն ավելի հարուստ կը կարծվի։

Այս թաղին մեջ կը բնակին ազգին ամենեն նշանավոր հարուստ ազգայիններն, որք վերջին տարիներս իրենց քսակը բացած են բարենպատակ գործերու համար... միայն այն տեսակ բարենպատակ գործերու համար կուտան, որոնց շնորհիվ իրենց անուննները լրագիրներուն մեջ կը հրատարակվին և իրենք ալ կը փառավորվին. իսկ լումա մը չեն տար այն բարենպատակ գործերու համար, որք ազգին պատիվն ու փառքը կը կազմեն. վասն զի այդ լուման լրագիրներու մեջ պիտի չհրատարակվի, և մեծ անխելքություն է, որ մեկն ազգին երկու դահեկան տա և անունը լրագիրներու մեջ չհրատարակվի։ Բացառությունները մոռնալու չէ։



ՀՍՍՀ ԳԱ
ԶՈՒՐ ԱրմՍՍՀ

Կա երիտասարդություն մը, որ հինգ տարին անդամ մը կսթափի և մրտքեն կանցունե կազմել ընկերություն մը՝ եթե չկա, իսկ կործանել՝ եթե կա։ Ատենոք Համակամ ընկերություն մը կար, այժմ չիք։ Կազմված էր նաև Օժանդակ ընկերություն մը, որու նպատակն էր աղքատ հիվանդներու ձրիաբար բժիշկ դրկել և դեղ տալ։ Այս ընկերությունն բավական դրամ հավաքեց. բայց ետքը անոր քանի մը անդամներն, որ աղքատ էին, հիվանդացան, և իրենց հիվանդությունն ալ ծանր ըլլալով՝ ընկերության դրամով ինքզինքնին դարմանեցին, որով ընկերությունն ալ յուր նպատակին հասած համարվեցավ։

Հոս կը բնակին ազգին ամենեն երևելի բժիշկներն։ Հոս կը գտնվին ընդհանրապես ազգին ամենեն նշանավոր հիվանդություններն, ինչպես են կալվածոց հոգաբարձության խնդիրը, Հասունյան խնդիրը[8] և այլն։

Քարակյողյան եղբայրներուն շինելիք վարժարանը այս թաղին գերեզմանատան մեջ պիտի բարձրանա, եթե... ռճնսոլիտները բարեհաճին բարձրանալ։

Հոս ալ թաղեցին յուր թաղականեն գոհ չըլլար երբեք և այս պատճառավ թաղականի կռիվները պակաս չեն։

Թաղային վարժարանը, Նարեկյան անուն, ուրիշ թաղային վարժարաններու հետ բաղդատելով՝ շատ խեղճ է, հարբուխն բռնված է աս, մինչդեռ մյուսները տենդե կը տանջվին։

Թաղիս մեջ չորս եկեղեցի կա. Ս. Երրորդություն, Խոր վիրապ, Ոսկեբերան և Ս. Հարություն, և այս չորս եկեղեցիներու մեջ չորս բարեպաշտ քրիստոնյա չկա։

Թաղեցին շատ զբոսասեր է. ամառվա եղանակին մեջ հասարակաց պարտեզը կամ մասնավորաց պարտեզները կերթան և ձմեռն ալ թատրոններ, պարահանդեսներ և ուրիշ զբոսարաններ կը հաճախեն։

Իգական սեռն ինքզինքը բոլորովին հայելիներուն տված է. ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսներով, տարիներով և դարերով հայելիներու առջև կը կանգնի և ինքզինքը կը գեղեցկացունե։ Բացառությունը խիստ քիչ է այս մասին։ Կիներեն շատերն այն ատեն միայն կը հագվին, երբ դուրս ելնել կամ հյուր ընդունիլ հարկ ըլլա. իսկ եթե այս հարկը չներկայանա՝ տան մեջ գիշերազգեստով կը պտտին. արդյոք ցերեկազգեստո՞վ կը մտնեն անկողին։

Կիներուն բամբասանքը հոս քիչ է. եթե երբեմն բամբասանք մը ընել պետք ըլլա՝ խիստ քաղաքավարությամբ կը վարվին։

— Տիկին Ք... իմացա, որ Փ...-ին կինը Զ...-ին էրիկը կը սիրե եղեր. բայց կը խնդրեմ, որ այս խոսքս գաղտնի մնա քովդ։

— Վստահ եղիր, որ մեկու մը չեմ ըսեր։

Լուր տվող տիկինը կը մեկնի, և Տիկին Ք... յուր դրացվույն տունը կը զարնե։ Սպասավորը դուռը կը բանա։

— Տիկինդ վար կանչե, Մինա՛ս։

— Տիկինը շորս ժամ է, որ հագվելու համար սենյակը մտավ և տակավին չելավ։

— Շուտ գնա՛, ըսե իրեն, որ Տիկին Ք... եկած է և կարևոր խոսք մը ունի ըսելու։

Սպասավորը վեր կը վազե, իմաց կուտա տիկնոջն, որ հագված ըլլալով՝ վար կիջնա։

— Վեր հրամմեցեք, տիկին Ք...

— Չեմ կրնար, տիկին Շ... խոսք մը ընեմ և երթամ պիտի. վասնզի գործ ունիմ տունը։

— Ես՞ր է։

— Ի՞նչպես խեր... Փ...-ին կինը Զ...-ին էրիկը կը սիրե եղեր. բայց ոտքդ պագնեմ, ուրիշի մի՛ ըսեր, գաղտնի պահե. մնաք բարով։

— Աստ՛ղիկ բան ուրիշին կըսվի՞... անհոգ եղիր։

Տիկին Ք... կը մեկնի, և տիկին Շ... սպասավորին կըսե.

— Սա հովանոցս ինձի բեր։

Հովանոցը կը բերվի, և տիկին Շ... ձախ թևի փողոցը կը մտնե և տան մը դուռը կը զարնե։ Դուռը կը բացվի, վեր կելնե և կը դիմավորվի խաշոր կնիկ մը։

— Հրամմեցեք, տիկին Շ... կըսե տան տիկինը, հրամանքնիդ ալ հոս կուգա՞ք եղեր, ո՞ր հովը փչեց ասանկ։

— Սանկ... ի՞նչպես եք, աղե՞կ եք. ի՞նչպես է ձեր ամուսինը... Փ...-ին կինը Զ...-ին էրիկը կը սիրե եղեր. հիմա իմացա և շատ ցավեցա։ Ոտքդ պագնեմ, չըլլա որ ուրիշի ըրուցես, վասնզի ինձի ըսողն պատվիրեց, որ մեկու մը չըսեմ։

— Անհոգ եղիր, կըսե, և տիկին Շ...-ին մեկնելեն անմիջապես եառը փողոց կը վազե՝ յուր ծանոթներուն ավետիս տալու։

Բայց իրա՞վ է, որ Փ...-ին կինը Զ...-ին էրիկը կը սիրե. քավ լիցի... մեծ սուտ մ'է... արդեն Փ...-ին կինն յուր էրիկն անգամ չսիրեր։ Փ...-ին կինն օր մը այս լուրը ստեղծող տիկինին շրջազգեստն դիպվածով կոխած էր եկեղեցվույն մեջ և զայն քիչ մը պատռած էր. այդ տիկինն ալ Փ...-ին կինեն վրեժ լուծելու համար ասանկ արատ մը քսելու ելած էր անոր վրա։

Բերայի գեղեցիկ սեռին վրա ավելի խոսիլն ավելորդ կը համարինք. քանի որ ըսինք, թե հայելիին առջև միայն կյանք կանցունե. այսչափը բավական է, այսչափը շատ իսկ է։

Ամառվան եղանակին մեջ այս թաղին մեջ ջուր չգտնվիր, և թաղեցին կստիպվի առանց ջուրի անցունել... յուր օղին՞։

Օդն աղեկ է, բայց կերևի որ ամառն օդ ալ չգտնվիր. վասն զի հարուստները գեղերը կերթան օդ առնելու։

Բերայի մեջ հայու ո՞րչափ տուն կա, այս հարցման այն ատեն կրնանք գոհացուցիչ պատասխան տալ՝ երբ օրինավոր վիճակագրություն մը ըլլա։ Առանց այս վիճակագրության սպասելու ինչ որ ըսենք՝ վավերական չափի համարվի, մանավանդ թե այս մասին կարծիքները համաձայն չեն։ Ոմանք կը կարծեն, թե Բերայի մեջ երկու հազար հինգ հարյուր տուն կա. ըսողներ ալ կան՝ հազար հինգ հարյուր է Բերայի տուներուն թիվը... Չափազանցություն, չափազանցություն... չափազանցություն... իմ կարծիքով հազիվ երեք տուն հայ կա Բերայի մեջ։

ՍԱՄԱԹԻԱ

Օղի չմտողները զատվին... անոնք իրավունք չունին այս թաղը մտնելու։

Բաժնվին մեզմե նաև անոնք, որք սորված են ծառա եմ-ի. հոս ամեն մարդ տեր է, վասն զի ամենքն ալ իրենց աշխատությամբն և արհեստովը կապրին և, հետևաբար, պեյ-երու, էֆենտի-ներու ոտները լղելու պարտավոր չեն։

Մեղի հետ չդան նաև այն անձերն, որք արձակ հայհոյել գիտեն. անոնք հոս կը ծաղրվին, վասն զի սամաթիացիներուն հայհոյությունն գրեթե միշտ ոտանավոր է։

Բնավ հոս պատելու չեն այն օրիորդներն կամ տիկիններն, որոնց երեսներուն վրա կարմիրը պնպակաս է. սամաթիացին կարմիրն միշտ հավկիթներու վրա տեսնել կուզե։

Ամենևին գործ չունին հոս այն կիներն, որք ամեն քայլափոխին կես մեջքեն կը կոտրտվին թղթյա կիներուն պես, զորս ճեյալը կը ներկայացնե. վասն զի սամաթիացին այնպիսիներու վրա կը խնդա։

Այս թաղին մոտենալու չեն նաև այն երիտասարդները, որք կա՛մ շատ թեթև են և կա՛մ շատ ծանր։

— Մարդ երթալու չէ ուրեմն հոս։

— Ինչո՞ւ, ամեն մարդ ստիպվա՞ծ է այդ թերություններն ունենալու։ Եկո՛ւր քեզի հետ երթանք. բայց այնպիսի փողոցե մը մտնենք, որ մեկե մը չտեսնվինք. վասն զի տեսնվելնուս պես մեր օձիքեն կը քաշեն ու գինետուն

կը տանին։ Տեսնվեցանք... ահա քանի մը երիտասարդներ սա փողոցին ելան և խնդալով մեղի կը մոտենան... մոտեցան։

— Օ՜ օ՜ օ՜, բարի եք եկեր։

— Շնորհակալ ենք։

— Եկեք նայինք, եկեք, Հայկական ընկերությունը երթանք և քանի մը հատ տնկենք։

— Հայկական ընկերությունը օղի խմելու համա՞ր հաստատված ընկերություն մ'է։

— Նպատակն այն չէ... բայց ո՞ր ընկերությունն է, որ նպատակին ծառայած ըլլա։

— Գոնե անունը փոխեն։

— Ինչո՞ւ... աղե՞կ դիտես, որ Հայկ[1] օղի չէր խմեր։

— Պետրե, Հայկական ընկերության օղին թե՛ աղեկ չէ և թե՛ սուղ է։ Օրմանոզին տանինք մեր բարեկամները։

— Օրմանոզին ալ երեսուն աստիճան է, եղբայր. անցյալ շաբթու օխա մը տյուզ[2] խմեցի հոն և դպավ ինձի։

— Եթե ինձ հարցվեր՝ ես Կյումիշ հալֆալը-ին կը տանեի բարեկամներս։

— Եղբա՛յր, ան ալ օղիի հետ կտոր մը պանիր միայն կուտա։

— Ալթըն օլուֆ-ին երթանք։

— Եղբայրնե՛ր, մենք թաղին մեջ քիչ մը պիտի պտտինք։

— Թաղին մեջ մարդ չկա. ամենն ալ դինետուններու մեջ են այսօր։

— Մահտեսիին երթանք. մարդը հայ է և պատվական օղի ալ ունի։

— Շատ աղեկ, Մահտեսիին երթանք։

— Լա՛վ... երթանք...

Քանի մը փողոց դառնալով՝ մտանք Մահտեսիին դինետունն, որու գինվոր սեղանին առջև կայնած կը խմեին տասնի չափ հաստաբազուկ ձկնորս աղդայիններ։

— Տամ ամաճ, ամաճ էֆենտիմ, ամաճ։

— Թարալալա թարիլալա, թիրալալա թարիլլալալա։

— Պինի վար[3]...

— Թարալալա, թարիլլալամ...


— Թիրալալա թարիլլալամ...

— Սենին կիպի մանիճիլեր տեֆթերիմտե... պինի վար[4]։

— Այս բարեկ...

— Թարալալա թարիլալիլալիա... թիրալալլիլալամլամ... օ օ օ՜ հ։

— Այս բար...



— Տամ աման, աման չեր պենի[5]...

— *Ա՛ռ նայինք, առա՛յը, և տանկե՛,—ըսավ առնց մին իր քովինին՝ անոր կուրծքին հարված մը տալով չուր ափով։*

Այս հարվածն, որ անոնց քով մտերմության նշան կը համարվի, եթե մեզ տրվի՝ գերեզմանի նշան կը...

— Պիր կյուզելե մայիլ օլտում չեր պենի[6]...

— *Թարալալա Թարիլալալամ...*

— Յեր պենի... իշերիմե պիր Ռուսա այուշմյուշ կենե կյուճայուզ[7]...

— *Ա՜ա՜ա՜ա՜հ... Թարալալալալիլալամ։*

— *Հոս նայեցեք, տայի-ներ մանին ձգեցեք ու ցնծացեք... վարժարանին գանձանակն է։*

— *Ծո տղաք, դպրոցին բապախն է. տվեք նայինք... խմենք, բայց դպրոցնիս ալ չմոռնանք։*

— *Ա՛ռ, վարպետ։*

— *Բռնե՛, վարպետ։*

— *Ա՛ռ։*

— *Շեն կեցեք։*

— Տամ աման... ամա՞ն։

— Պիզ վերելիմ բարալարը, յեսին բաղական[8]։

— *Ծո տղա՛, ինչո՞ւ անանկ բաներ կը խառնես։*

— Քեզի ի՞նչ պե, վայ կեշմիշի Ըրնալը[9]։

— *Հիմա մեռելներուդ պառկած տեղեն կսկսիմ հա՛։*

— *Երթանք... աչի կընանք, աղաներ. ձեզի ձանձրություն տվինք։*

— Չէ, չէ։

— *Զրուցեցեք նայինք, բարեկամներ. քիչ մը ձեր բաղին վրա խոսինք։*

— *Բարեկամ, մեր բաղին ժողովրդյան մեկ մասին պատգամավորությունը տեսաք ահա. ասոնք ձկնորսներն են, որ իրենց օրականը հանելուն պես գինետուն կուգան և կը խմեն. այսու ամենայնիվ, ինչպես տեսաք՝ դպրոցին համար միշտ ստակ կուտան. մասնավոր սեր ունին բաղին վարժարաններուն համար։ Մյուս մասին ալ ներկայացուցիչները կրնանք համարվիլ մենք, արհեստավորներս։ Հոս աղնվապետություն չկա. մեր դրոշակն է—ազատություն, հավասարություն, եղբայրություն։ Եթե դրաշակին վրա պարապ տեղ մնացած ըլլար՝ ոյուզ բառն ալ պիտի ավելցնեինք հոն։ Հոս բնիկ էֆենտի չկա, իբրև արտաքին բերք՝ քանի մը էֆենտիներ կը գտնվին երբեմն։*

— *Բաղական խորհուրդ ունի՞ք կանոնավոր։*

— *Բաղական ըլլալն շատ դժվար է հոս, իսկ ըլլալեն վերջն եթե առաջին շրջանն առանց կռվո անցունե՝ արվեստահանդես ըրկվելու չափ հազվագյուտ*

ՀԱՍՌ ԱՌՄ.ՍՍՀ

քան մը եղած կըլլա. իսկ եթե երկրորդ շրջանին դարձյալ թաղական ընտրվի՝ անպատճառ կարտաքսվի: Հոս ամեն թաղն ալ ելնի շարժում կա: Ասկե երկու-երեք ամիս առաջ քսան-երեսուն երիտասարդներ թաղական խորհրդարանը մտան և թաղական խորհրդին ձևեն բռնելով դուրս հրամցուցին զայն:

— Ինչո՞ւ:

— Վասն զի դպրոցն աղեկ չէին նայեր: Պատրիարքարանն ալ առժամանակյա թաղական մը տվավ մեզի:

— Նոր թաղականն ե՞րբ պիտի ընտրվի:

— Երբ որ հին թաղականը դուրս հրամցնող երիտասարդներն մեզա ըսեն:

— Եթե չըսե՞ն:

— Քվեարկության չպիտի մասնակցին:

— Վարժարաններն ի՞նչպես են:

— Երկու տարի է, որ շտկելու կաշխատին. ընդհանուր կարծիքն այն է, թե տասը տարիեն կարելի պիտի ըլլա զանոնք բարեկարգել: Հոս ծնած է Միհնեճի Անդրանիկն, որ ժամանակավ շատ աշխատած է այդ վարժարաններուն համար. անդղիերեն խոսող հայն առաջին անգամ Սամաթիայեն ելած է. շրհանկիրներու մեջ ալ այսօր անդղիերեն կարդացողներ կը գտնվին:

— Հիմա ո՞վ կը հսկե դպրոցներուն վրա:

— Այսինքն ո՞վ չհսկեր, ըսել կուզես:

— Հիմա ո՞վ է, որ չհսկեր դպրոցներուն վրա:

— Երբեմն հոգաբարձուներու և հոգաբարձուհիներու մեջ կարծիքներու անհամաձայնություն ծագած ըլլալով՝ հիմա որոշված է, որ ամուսնացած թաղականներն իրենց կիներովը չհսկեն վարժարաններու վրա: Հիմակվան թաղականներն այնչափ օրինապահ են, Ընդհանուր Դատախազի դրությունն կառավարութենե ընդունվելեն ի վեր՝ թաղական խորհրդո մեջ ալ ամեն օր հայրյուրեն ավելի մասնավոր դատախազներ կը գտնվին:

— Հայկականեն զատ ընկերություն չկա՞ հոս:

— Շատ մը ընկերություններ կային առենք, բայց հիմա չկա: Պարզասիրաց ընկերություն[10] մը կա միայն, որ կիներուն պարզ հագնիլ պիտի սորվեցնե. կարծեմ ասոր ալ անունը կա միայն:

— Ներեցասիրություն կա՞ հոս:

— Այո՛, բոլոր թաղերեն ավելի. թաղեցին հավասարապես կը սիրե ազգն և ներեցին. բայց ասկե հետևցնելու չէ, թե նվաղ կը սիրե օղին, զոր կը խմե երեկոյան ժամը մինչև մեկ ու կեսին: Գինետան մեջ մեկ ու կեսեն ավելի նըստողներն կը բամբասվին, իսկ մինչև մեկ ու կես նստելով ճաթելու չափ օղի խմողներն մեծ համակրություն կը վայելեն՝ իբրև օրինավոր մարդեր: Եկեղեցվուն գործերն այնչափ շատ կը համբուրվին որ ամիսն անգամ մը կը պատռվին. թաղականը այս կետը նկատողության առնելով տեսավ, որ այս համբույրներուն գործ չպիտի դիմանա, ուստի որոշեց գործերը վերցնել: Ժողովուրդը հիմա հողի վրա կը կայնի և հողը կը համբուրե, թո՛ղ որ եկեղեցվո հողն ալ հինցած է այդ համբույրներեն:

Սամաթիացին ցած ձայնով խոսիլ չգիտեր. թեպետև երբեմն գաղտնիք մը հաղորդելու համար ականջդ ի վայր կը խոսի, բայց դարձյալ այդ խոսքը ենի Գարուեն կը լսվի:

Ինչպես վերը հիշեցինք՝ քծնիլ չսիրեր, շողոքորթութենե կը փախչի, բայց երբ ազգային կռիվ մը ելնե՝ հոգվով մարմնով կը նետվի. իսկ եթե ազգային վեճ մը չըլլա՝ կաշխատի վեճ մը հանելու: Առանց վեճի կարելի չէ իրեն ապրիլ:

Սամաթիացիներուն մեկ մասն ոսկերիչ է, և այս հերիք է հասկցնելու համար, թե կերակուրի մասին ո՛րքան բծախնդիր է: Ամենեն լավ միսն, ձուկն, կարագն, պանիրն, ապուխտն և պտուղն սամաթիացիին կերթան: Մեծ կարևորություն կը տրվի հոս փորին, զոր գոհացնելու համար բան մը չխնայվիր: Հոս փորը պճնասեր է:

Սամաթիացին թաղին մեջ հայերեն, իսկ շուկան տաճկերեն կը խոսի:

Դառնանք գեղեցիկ սեռին, որ իրոք գեղեցիկ է, պարզասեր և աշխատասեր: Սամաթիո տիկինները դաստիարակության պետքը զգացած են և կաշխատին, որ իրենց աղջիկներն ալ ուսում և կրթություն առնեն, մինչդեռ ուրիշ թաղի մը տիկիններն կը փափաքին, որ իրենց աղջիկները բրնձի փոշի և կարմիր ներկ առնեն: Թաղիս տիկիններն շատ մը թաղերու այրերեն ավելի ազդասեր են: Առաջին անգամ Սահմանադրության տարեդարձը պատվող կինը սամաթիացի էր:

Եթե Պոլսո մյուս թաղերն Սամաթիո հետևող ըլլան՝ Պոլսո ժողովուրդն քիչ տաենի մեջ զգալի փոփոխություն կը կրե, բայց օղիին գինն ալ շատ կը բարձրանա:

Թաղիս օդը շատ աղեկ չէ. ուստի զայն բարեխառնելու համար է, որ թաղեցին օղին շատ կը խմե:

ԱԶԳԱՅԻՆ ՋՈՋԵՐ

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Որչափ ալ բժիշկները վկայած ըլլան, թե ծիծաղն շատ օգտակար է մարսողության, Լիկուրգոս ծաղրու առասվածներու արձաններ դնել տված ըլլա սեղանատուններու մեջ և վերջապես Պղուտարքոս կերակուրներու առաջին համեմն կոչած ըլլա զայն, մենք, այս հրատարակությունն ընելով, երբեք նպատակ ունեցած չենք ո՛չ փափուկ ստամոքսի տեր ընթերցողներուն մարսողությանը ծառայել և ո՛չ ալ քիչ կերակուր ուտողներուն ախորժակը բանալ, եթե երբեք գործս պիտի հաջողի քանի մը ժպիտ քաղել յուր ընթերցողներեն։

Մենք այս հրատարակությամբ աշխատած ենք մեր ազգին մեջ գտնված երևելի անձերուն կենսագրություններն ընելով՝ անոնց թերություններն ցույց տալ այն անաչառությամբ, որ կենսագրե մը կը պահանջվի՝ առանց սակայն դուրս ելնելու հեղնաբանության սահմանեն։

Կը համարձակինք ըսելու, որ ոչ զոք վիրավորել ուզած ենք և ներկայացուցած ենք անձերն այնպես, ինչպես որ են և ոչ թե ինչպես որ կուզեն իրենք և եթե ընթերցողն տեղ տեղ ծանր կետերու հանդիպի՝ անոնց պատասխանատուն մենք չենք. ո՞ր հայելին գաճաճն Աքիլլես[1] կանդրադարձնե, ո՞ր լեռն սուրբը սատանա կը կրկնե։

Կը խոստովանինք, որ ծննդյան թվականներուն մասին պետք եղած ճշտությունը չկրցինք պահել, վասն զի օրինավոր տոմարներու պակասության պատճառավ քառասուն տարիքն անցած մարդ չգտանք և ստիպվեցանք անոնց յուրաքանչյուրին տալ այն տարիքն, զոր ունենալ կը թվին։

Հուսալով, որ ընթերցողն ներողամիտ ոգով պիտի նայի գործույս թերություններուն՝ մենք ինքզինքնիս վարձատրված պիտի համարինք, երբ տեսնենք, որ մեր աշխատությունն յուր նպատակին հասած է։

Հ. Հ. Պ.

ԽՈՐԵՆ ԳԱԼՖԱՅԱՆ

Խորեն եպիսկոպոս, աստվածաբան, կատակերգակ, ազգային երեսփոխան, բանաստեղծ, 1861-ին Գալֆայան, 1870-ին Նար-Պեյ, 1879-ին Լուսինյան—մինչև նոր տնօրենություն—ծնավ Կ. Պոլիս Սամաթիո[1] թաղին մեջ 1841 թվականին։ Ծնած գիշերը երեք տեղ հրդեհ պատահեցավ. Արնավուտ-դեղ, Ախրգաբու և Գասըմբաշա[2]։

Խորեն չուշացավ հայտնել, թե յուր ծնունդովն բանաստեղծ մ'ալ ավելցավ ազգին և ոչ թե փորձանք, ինչպես կը դուշակեին քանի մը հեռատես մարդեր. վասն զի երբ մանկաբարձն անոր ոտներուն վրա դիտողություն կը ներ, տանևվեցոյան ոտանավորներն միշտ այսպես կը վերջանան, պատասխանեց երախա բանաստեղծն, որ ազգային քերթող պիտի հորջորջվեր օր մը մեր ազգային համբակ... սակրիչներեն։ Ուր օր վերջը կատարվեցավ յուր մկրտության հանդեսը։ Կնքահայրն Ամբակում դրավ անոր անունը, սակայն երախան տուն երթալուն պես փոխեց զայն ու Խորեն դրավ։

Նախազգացմամբ դուշակեց կարծես, թե ձեռք պիտի քաշեր օր մը այս աշխարհիս վաղանցուկ հաճույքներեն, թե յուր կյանքն աստուծո ծառայության նվիրելով մեծ քաղցրություն պիտի զգար։ Ուստի, օր մը աչերն վեր առնելով կնկան մը երես չէր նայեր... բազմության մեջ, փութանք ավելցնել, թե մեկն մը տեսնվելու կասկած կամ երկյուղ չունեցած աեեն ալ չէր նայեր կիներու... եթե ծեր ըլլային. և հետևապես, կուսակրոն ըլլալու համար ամեն տրամադրություն ուներ։ Հազիվ չորս տարեկան կար, դրացվույն տղաներն յուր տունը կը հրավիրեր և անոնց հետ կրոնական խաղեր կը խաղար, նման այն խաղերուն, զորս երբեմն խաղալու չմոռնար։ Աթոռի մը վրա բազմելով քարոզ խոսելու համար մեծ փափաք ուներ, իսկ երբ այդ աթոռը պատրիարքական ըլլար՝ հոգին կուտար[3]։

Հայրը տեսնելով, որ տղան վարդապետ ըլլալու սիրով կը տոչորի, ինչպես որ նույն սիրով կը տոչորին միշտ յոթը տարու տղաներեն ոմանք, որոշեց

Վենետիկի վանքը[4] ղրկել զինք. և քիչ ատենեն այս որոշումը գործադրեց առաջատավոր նավու մը հանձնելով յուր զավակն 1847-ին։

Երբ Վենետիկ հասավ Խորեն ու վանահոր ներկայացավ, վանահայրն, անոր շարժումները դիտելով, հայտնեց թե անկարելի էր զայն դպրոցի մեջ առնելը. որովհետև, ավելցուց, վանքին տրամադրած օրենքներուն հակառակ էր իպական սեռեն աշակերտ ընդունելը։ Մեծ դժվարություն կրեցին համոզելու համար վանահայրն թե աղջիկ չէր իրեն ներկայացվողը։ Երկրորդ օրը վանքին դպրոցը ղրկվեցավ Խորեն, ուր քիչ ժամանակի մեջ հակայաքայլ հառաջդնաց այն ամեն գիտություններու մեջ, որոնց շնորհիվ մարդս կը հաջողի սիրելի ընել զինք ռամիկներու։ Մեր պաշտոնին հավատարիմ մնալու համար պարտավոր ենք հոս հիշել, որ այն ատեն որչափ սրամիտ, նույնչափ ալ խառնակիչ էր Խորեն։ Վանահոր ականջներն ա՛լ խուլցած ըլլալով այն տրտունջներեն, զորս Խորենի դեմ կընեին յուր դասընկերները, որոշվեցավ որ ի պատիժ յուր անվայել վարքին, վարդապետ ձեռնադրվի։ Այս ըլլալու էր խելոք չկեցող աշակերտներուն համար վանքին սահմանած պատիժը։

Վանքին մեջ քանի մը տարիներ վարդապետություն ընելեն ետքը, սենյակ մը քաշվելով քարոզ տալու վարժություն ընելեն ետքը—զգաց թե վանքը խիստ անձուկ ասպարեզ մ'էր համեմատորեն յուր ընդարձակ հմտություններուն՝ որովք օր մը փայլ պիտի առներ յուր անունն պճնասիրության աշխարհին մեջ։ Փափաքեցավ անանկ ընդարձակ ասպարեզ մ'ընտրել, որուն մեջ կարող ըլլար ընդարձակորեն ծառայել աստուծո։ Այս փափաքն դոհացնելու համար երկու ոտքով ցատկեց, մեր ազգային պատրիարքարանն ինկավ։ Հիշելու բարեբախտությունը չունինք այն թվականն՝ ուր Խորեն էջմիածնա հպատակեցավ[5], սակայն լավ հիշելու դժբախտությունն ունինք, թե այն թվականեն ի վեր է, որ մեր կուսակրոնները ամեն պարզություն մեկդի դնելով՝ կիներու պես հագվիլ, պզվիլ և կոտրավիլ սկսան... աղեկ ծառայություն ընելու համար։

Այն ժամանակները մայրաքաղաքիս հարուստներեն ոմանք իրենց ձիերուն ապագա պատրաստելու նպատակավ. անոնց համար հոյակապ ախոռներ կառուցանելեն ետքը՝ իրենց զավակներուն համար ալ դպրոց մը շինելու դադափարն հղացան. բայց որովհետև Կ. Պոլսո մեջ դպրոցի հարմար տեղ մը գտնելն անկարելի էր, որոշեցին որ Բարիզի մեջ բանան այս դպրոցն՝ որուն մեջ պիտի դաստիարակվեին իրենց զավակներն, և թերևս, իրենց ձիերն ալ, եթե հոս գործ չունենային։ Իրենց այս որոշումին ծնունդ տվին Բարիզի մեջ դպրոց մը շինելով...ավազի վրա։ Այս դպրոցին, որու անուն Հայկազյան, տնօրեններն եղան 1856-ին հռոմեականութենեն հայոց եկեղեցին դարձած , կամ լավ ևս, դերութենե ազատություն դարձած երեք վարդապետներն[6], որոնց հարեցավ նաև վերջեն Խորեն եպիսկոպոս։ Հիշյալ տնօրեններն եթե բան մը

չսորվեցուցին աշակերտներուն, որոնք երբ մայրաքաղաքս դարձան բան մը չսորվելեն զատ, հայերեն լեզուն ալ կորուսած էին, դոնե սա սորվեցուցին ազգին թե՝ շատ լավ բան է իրավունք և պարաք ճանաչելն։ Այս սկզբունքը մեղի սորվեցնելեն ետքը մաքուր սրտով, հանդարտ խղճով հարյուր հազար ֆրանկի պարտ թողլով, դպրոցին դռները գոցեցին։ Ետրեն եպիսկոպոս ամենեն ավելի օգուտ քաղեց այդ դպրոցեն. մեծ քայլեր առավ հոն դեպի Պառնասա[7] դադաթ. հոն կատարելագործեց մուսաներու[8] արվեստը։ Սա ինքն է որ, յուր վկայութեանը նայելով, երկու՝ ամիս աշխատելեն ետքը հետևյալ գյուտն ըրավ.

Ձյուր անվան կոչ
Գիտե՞ս—ո՛հ, ոչ։

Թեպետև պատմաբաններեն ոմանք Հոմերոսի կընծայեն այս երեվելի գյուտն, որ ժամանակագրությամբ երեվելի անցիցին[9] կարգը դնվելու մոտցված է գժբախտաբար, սակայն մենք պնդելով կը պնդենք, որ այս գյուտին փառքը Ետրենի միայն կը պատկանի։ Քաջ գիտենք, որ Ետրեն եպիսկոպոս այս գյուտն ընելեն անմիջապես ետքը հետևյով կը վազե եղբորը և անոր նիմացնե։ Եղբայրն նախ չուզեր հավատալ. ասանկ գյուտի մը գյուտն անհնար կը թվի իրեն, բայց վերջապես կը համոզվի և եղբորը փաթաթվելով, Ետրեն, կըսե, մեծ ծառայություն ըրիր ազգին այդ գյուտովդ. ազգը պարտավոր է երախտագետ մնալ քեզ համենայն ավուրս կենաց յուրոց։ Արդարև այդ գյուտը մեր ազգին համար ավելի մեծ նշանակություն ունի քան գյուտ ճշխարացը, և կը զարմանանք թե ինչու այդ գյուտին օրը կիրակի չեն բռներ... բանաստեղծները։

Հայկազյան դպրոցին փակումեն ետքը Կ. Պոլիս դարձավ Ետրեն։ Քանի մը տաեն հոն մնալեն ետքը դասախոսության պաշտոնով Թեոդոսիո Խալիպյան ուսումնարանը[10] մտավ, ուր առավոտե մինչև երեկո դասախոսություն կըներ խմբագրության, պարապելով թերթի մը՝ որուն անունը կա՛մ Մասյաց աղավնի[11], կա՛մ Պոլսո աղավնի[12]։ Աշակերտներն ալ իրենց վարժապետին հանգ կրելով կզբաղեին, որպեսզի հայրենասիրական եռանդուն քերթվածներ շինե ազգին։ Չհասկցվեցավ թե ո՛ր դիտության կամ ուսման մեջ հառաջ գացին հիշյալ վարժարանի աշակերտները, միայն սա հայտնվեցավ, որ երբ այդ աշակերտներն իրենց քաղաքները վերադարձան, պատուհաններուն առջևեն չէին հեռանար, փողոցեն անցնող աղջիկներն դիտելու համար։ Կը հրաժարինք մանրամասնորեն պատմելե այն կյանքն, զոր վարեց Ետրեն Թեոդոսիո մեջ. այո՛, կը հրաժարինք, որովհետև գժբախտությունն այն եղանակավ հալածեց զինք Թեոդոսիո մեջ, ինչ եղանակավ որ կը հալածե մեկն յուր ապաստա-

վորն, որ տան տիկնոջ աչք կը տնկե։ Կրոնավոր մը այսչափ հալածվելու չէր. կրոնավորե մը։ Եվ միթե հալածումը հաջողեցա՞վ անոր սկզբունքն փոխելու բնավ երբեք. այլ, ընդհակառակն, ավելի ևս քաջալերեց զայն յուր սկզբունքին մեջ։ Սկզբունքը, կըսե Աղեքսանդր Տյումայի որդին, բևեռներու կը նմանին, որչափ զարնես անոնց գլխուն՝ նույնչափ ավելի կը հաստատվին»։

1864-ին զարձյալ ստիպվեցավ Պոլիս դառնալ, ուր քանի մը ամիսե ետքը Բերայի քարոզչության պաշտոնը ձեռք անցուց։ Իրեն համար կրնանք ըսել թե որ կըսեն Պղատոնի համար, թե մեղուները մեղր քսած էին անոր շրթունքն—թեպետև ուրիշներն ալ փիչ մը կարմիր քսած էին—այնչափ պերճախոսէր։ Ժողովուրդը մինչև այսօր սիրով մտիկ կընե անոր քարոզները մինչև վերջը, և առանց քրտինք թափելու։ Յուր քարոզներն ավելի կը փայլին քան յուր մաղերը։ Ի՛նչ հարկ կա երկարելու. կետեր կան, որոնց մեջ Ետրեն սեհսականի մարդ է և գործնականի չգար. կետեր ալ կան, որոնց մեջ միայն գործնական է։ Դժբախտությունն հոն ալ վազեց քանի մը տարիեն, հոն ալ հալածելը պինդը. և Ետրեն հոժար կամքով հրաժեշտ տավ յուր պաշտոնին... երբ թագեցիները վար առին զինքը։

1867-ին եկեղեցական պատգամավոր ընտրվելով՝ Վեհափառ Գևորգ կաթողիկոսին հուղարկավորությանը գնաց[13] մինչև Էջմիածին, ուր եպիսկոպոսության աստիճան բարձրանալին ետքը Պոլիս վերադարձավ և Պեշիկթաշի[14] քարոզիչ անվանվեցավ։ Հիշյալ թաղին վարժարաններու վերատեսչությունն ստանձնելով բարեկարգության ձեռք զարկավ։ Աշակերտներուն սիրան ու միտքն մշակելու համար անոնց հագուստները հանել տավ և համաձև դգեստ շինել տալով հագցուց անոնց։ Ահավասիկ ըրած միակ բարենորոգումն, որ կրնա ըսվիլ թե ավելի դերձակներու համար եղավ քան աշակերտներու համար։

Քանի մը ամիս այս պաշտոնը վարելեն ետքը հրավիրվեցավ հրաժարի, անկե. բնավ դեմ չկեցավ. հրաժարեցավ և «Մասիսի»[15] խմբագրապետին տանն ապակիները խորտակել տավ։ Քանի մը քաղաքներե առաջնորդ ընտրվեցավ, բայց ինքն իբրև նախանձ նկատելով այն ամեն առաջարկություն, որ կատիպեր զինք հեռանալ Պոլսեն՝ մերժեց դավառներու մեջ առաջնորդություն ընելը։ Ժմյուռնիան ոչ միայն ընտրեց, այլ հրավիրակներ ալ ղրկեց։ Ընտրությունն ալ, հրավիրակներն ալ քաղաքավարությամբ վռնտեց։ Տիգրանակերտ ալ ունեցավ Ժմյուռնիո հիմարությունը, և անոր պես յուր պատիժը կրեց։ Ամենեն վերջը Ռոտոսթոյեն հրավիրվեցավ, որ իբրև հովիվ հոգևոր, արածե զինքն. Ետրեն եպիսկոպոս ընդունեց Ռոտոսթոն, բայց ծանր պայմաններ առաջարկեց, որ Ռոտոսթոն չուզե զինքը, օրինակի համար, այնպիսի ճամբու ծախք մը առաջարկեց, որով Ռոտոսթոյի բոլոր ազգայինները կրնային հո-

փոխադրվիլ։ Հարկ չէ ըսել թե Ռոտոսթոն ալ ստիպվեցավ, Զմյուռնիո և Տիգրանակերտին պես, ուրիշ առաջնորդ ընտրել իրեն։ Հիշյալ երեք քաղաքներն կը պարծին այսօր Խորենն իրենց առաջնորդ չունենալուն վրա։

Տեղեկանալու համար այն վավերական աղբյուրներուն, որովք անժխտելի կերպով հաստատված է այսօր թե Խորեն Նար-Պեյ Լուսինյանն սերած է[16], պետք է ներկա գտնվիլ այն գեղեցիկ արքայական երազին, որ պատիվ ունեցած է տեսնել Խորեն եպիսկոպոս 1870-ին։ Այդ երազին մեջ Նար-Պեյ Լուսինյան կը ներկայանա. Խորեն եպիսկոպոսին և անոր կըսե. «Ես եմ Նար-Պեյ Լուսինյան, որ 1798-ին Կիպրոսի տաճիկներու հարստահարություններեն փախչելով՝ եգիպտոս գացի և Նաբոլեոնեն մեծ պատվով ընդունվեցա։ Դու ինե սերած ես, շո՛ւտ ըրե ե՛լ, հագվե՛ և մականունդ փոխե»։Մենք բնավ կասկած չունինք ասոր ստուգությանը վրա։ Շատերը արդեն այս երազին ներկա գտնված ըլլալով՝ իբրև ականատես վկա կը պատմեն, մինչև իսկ կը նկարագրեն Նար-Պեյ Լուսինյանի կերպարանքն, որով երևցած է, երազի մեջ, Խորենին։ Իբրև զորավոր փաստ ուրիշ ի՞նչ պահանջելու իրավունք ունինք, միթե Մասիս, Թերճիմանը-էֆիար[17] և Լրագիր օրագիրներն չհրատարակեցի՞ն զայն արժանահավատ աղբյուրներե քաղելով։ Բայց ի՞նչ օգուտ, մարդիկ որչափ ալ բարձրանան, նորեն բարձրանալ կը փափաքին. Խորենն եպիսկոպոս ալ, իբրև մարդ, քանի մը տարիներ Նար-Պեյով շատանալե վերջը ուզեց, որ Լուսինյան ալ հորջորջվի, նման այն ավազակին, որ ուրիշի մը գույքը հափշտակելեն ետքը կը փափաքի անոր հայրերն ալ կողոպտելու։ Այս չափազանց փափաքե մղվելով է անշուշտ, որ Խորեն եպիսկոպոս ելավ օր մը հետևյալը հրատարակեց.

«Նկատելով, որ Ռուսաստանի մեջ Լուսինյան մը կա, որ նամակով ինձի կիմացունե, թե ես իրեն եղբոր որդին եմ.

«Նկատելով, որ բոլոր եղբայրներս Լուսինյան մականունը կը գործածեն.

«Նկատելով, որ հարազատ եղբայրներու մեջ տարբեր մականուններ գործածելն անտեղի է.

«Ես ալ որոշեցի, որ այսուհետև Լուսինյան գործածեմ»։

Փառք տանք աստուծո, որ միտքը չէ ինկած հետևյալն ալ գրելու.

«Նկատելով, որ եղբայրներս ամուսնացած են...»։

Ինչպես հայտնի կերևա, Խորեն եպիսկոպոս վերոհիշյալ նկատելովներով բոլոր պատասխանատվությունն հորեղբորն ու եղբայրներուն վրա կը ձգե։ Եթե հորեղբայրն բան մը գրած ըլլար իրեն, եթե ներելի ըլլար հարազատ եղբայրներու մեջ տարբեր մականուններ գործածել՝ անշուշտ ինքն ալ չպիտի ստիպվեր փոխել յուր մականունը, օրինավորություն է, որ կատիպե խեղճը Լուսինյան հորջորջվելու։ Հարկ կը համարինք հոս հիշել, թե Խորեն եպիսկոպոս

պես յուր կարծիքներուն հետ ալ այնպես կը վարվի, ինչպես յուր մականուններուն հետ, միայն սա տարբերությամբ, որ կարծիքներն ինն օրը անգամ մը կը փոխե, մինչդեռ մականունները ինը տարին անգամ մը։ Թո՛ղ ազոթք ընեն նորին գերապատվությունը, որ վաճառական չէ, եթե վաճառական ըլլար և այսպես հաճախ մականուն փոխե՝ քիչ ատենվան մեջ վաճառատունը կը գոցեր։

1876-ին Կրոնական ժողովո ատենապետ ընտրվեցավ շնորհիվ այն կուսակցության, որ իրեն հետ աշխատած էր Խրիմյանը պատրիարքական աթոռեն վար առնելու դյուցազնական գործին մեջ։ Ատենապետ ընտրվելուն հետևյալ օրը բանադրեց մեկն, որ բանավոր պատճառներով առաջին կինն թողած ըլլալով՝ ուրիշ կնիկի մը հետ ամուսնացած էր։ Այս բանադրանքը շատերը բավական խնդացուց։ Քանի մը օր ետքն ալ Հայաստանյայց եկեղեցվո համաձայն հրատարակեց ճիշտ առջինին նման ամուսնություն մը՝ որով ուրիշ մեկն յուր կինը թողած՝ ուրիշ կնիկ մը առած էր։ Աս ճամաձայնը շատ խնդացուց ժողովուրդն։ Այս հակասական վճիռներն մինչև այսօր իրարու դեմ հրացան կը քաշեն Կրոն. ժողովո արձանագրություններու մեջ։

1878-ին իբրև ազգային նվիրակ Խրիմյանի հետ Պերլինի Ավագաժողովը[18] ղրկվեցավ։ Թեպետ և չգիտցվեցավ թե ինչո՛ւ չկրցին Ավագաժողովին ներկայանալ, սակայն շատերը պնդեցին այն ատեն, թե ազգը մեծ օգուտ քաղեց անոնց ուղևորությենեն, թե ձայն հանելու չէ, այդ օգուտին ինչ ըլլալը վերջեն պիտի հասկցվի։ Ասոր համար է, որ շատերն իրենց բերանը բացած՝ գործերուն վերջը դիտելու կը պատրաստվին։ Եթե այս օգուտներուն երևակայականն մեկդի նետելով իրականին դառնանք՝ սա օգուտը կը գտնենք, որ առաջ գավառներու մեջ եթե տարին հարյուր հոգի կսպանվեին՝ այսօր հազար կսպանվին և այս ալ մեծ օգուտ է անշուշտ անո՛նց որք բազմությենեն չեն ախորժիր։

Պետք չէ մոռնալ այն մեծ ծառայություններն, զորս մատուցած է ազգին երեսփոխանական ժողովո մեջ։ Յուր ատենաբանություններն շատ ներդաշնակ էին, երաժշտական խումբ մը կը պակսեր զանոնք ավելի ազդու գործելու համար։ Յուր ճառերն նույն ազդեցությունը կընեին երեսփոխաններու վրա, ինչ ազդեցություն որ կընեն հատընտիր բաղվածք դպրոցական աշակերտներու վրա։

Չափազանցություն ըրած չենք ըլլար եթե ըսենք թե՝ իբրև մատենագիր ավելի ծառայած է ազգին քան իբրև կուսակրոն։ Յուր աշխատասիրություններուն մեկ մասը 1879-ին Բերայի հրդեհին հրո ճարակ եղան, ինչպես որ կըլլան դժբախտաբար այն ամեն երկասիրություններն, որք տպված չեն... գրված չեն։ Այդ գործերու մոխիր դառնալն մեծ կորուստ մ'է անշուշտ ազգին

համար, բայց կրնանք մխիթարվիլ յուր հրատարակած գործերով, որոնք քիչ բացառութեամբ, արժանիք ունեին...մոխիր դառնալու: Խորեն եպիսկոպոս ունի մյաօր տասներկու գործեր: Ասոնց մէջն է Ալաֆրանկա[19] կատակերգութիւնն, որ կապիկի պես ամեն բանի մէջ ուրիշի նմանելի հառաջ եկած վնասները կը հարվածէ: Վարդենիի[20], անմեղ սիրեն ներշնչված գողտրիկ ոտանավորներ: Խաշնակի լամարթինի[21], անմահ բանաստեղծին ոտանավորներուն դրարար Շարգմանութիւնը՝ զոր հասկնալու համար այն տեսնները չորս հոգիե բաղկացյալ մասնաժողով մը կազմվեցավ, որն որ անկարող ըլլալով զայն լուծել, Շարգմանիչին դիմեց, որ ներումն խնդրելով պատասխանեց թե՝ վրայեն բավական ժամանակ անցած ըլլալուն պատճառավ ինք ալ չէր կարող հասկնալ: Քրիստոնեական, որ կը պատվիրե էրիկներուն ներել իրենց կիներուն, որքան ալ անպարկեշտ ըլլան, որքան ալ մեծ ըլլա անոնց սիրականներուն թիվը: Նախակրթարան ֆրանսերեն լեզվի[22], ի պետս անոնց, որք փափաք չունին Հրանսերեն սորվելու: Սավերի հայկականի[23], որոնց մէջ առաջին տեղը կը գրավե գիայրենյաց ասա մեզ բան[24]: Օտար լրագիրներու մէջ անդրալեռնականներու[25] դեմ պաշտպանած է Հայաստանյայց եկեղեցին և ժողովրդյան համակրութիւնը գրաված է:

Խորեն եպիսկոպոս անուշ բնավորութիւն մ'ունի. ամենուն հետ այնպես կը վարվի, ինչպես որ խմբագիր մը կը վարվի այն մարդուն հետ, որ տարվան մը բաժանորդ կը գրվի և բաժանորդագինն ալ կանխիկ կը վճարե: Վարքեն կրնանք դուշակել թե յուր հարգած սկզբունքներն հետևյալներն ըլլալու են.

«Սիրե հայրդ ու մայրդ...եթե հարուստ են.

«Սիրե թշնամիներդ...երեսանց.

«Սուտ մի՛ խոսիր...եթե շահ չունիս.

«Թող մի՛ տար կիրքերդ դերի ըլլան անձիդ.

«Դրացիներդ անձիդ պես սիրե»:

Մեռյալներուն գալով՝ անոնց հետ ա՛լ ավելի քաղցրութիւնամբ կը վարվի: Այնպիսի սրտառուչ դամբանականներ կարձակէր, այնպիսի պերճախոսությամբ կը գովեր արքայութիւնն, որ ներկա գտնվողները մեռնելու փափաք կզգային: Չմոռնանք սակայն ըսել թե՝ երբեմն ալ մեռյալն արքայութենեն ավելի կը գովեր՝ որով ննջեցյալն նախապատիվ կը սեպեր դադարին մէջ մնալ քան թե արքայութեան մէջ: Ազգային հիվանդանոցին մոմերուն պես կարգերու կը բաժնվեին յուր դամբանականները, մեկ ոսկի տվող մեռյալն բարեսիրտ կըլլար, երկու զրկողը բարեսիրտ և քիչ մ'ալ ազդասեր կը հռչակվեր, երեք նվիրատր ապնիվ սրտով և վսեմ զգացումներով կը զարդարվեր, չորս համրողը հանրածանոթ ազդասեր կը ծանուցվեր, հինգ տվողն կենդանութեանը ժամանակ այնքան գաղտնի ողորմութիւն տված կըլլար աղքատներուն, որ մարդ

տեսած չէր ըլլար, հայրենյաց բարերար կը հորջորջվեր, և ասանկներուն դագաղը ութը հոգի կը կրեր, որովհետև չորս հոգի բավական չէին կրել այնչափ գովեստներով ծանրաբեռնյալ ննջեցյալն:

Դագաղն ալ երբեմն զգացման տեր և ազդասեր կըլլար, եթե զայն շինող ատաղձագործը գերապատիվին մենիտիե մը գրկեր: Իսկ անոնք, որ ժամանակ չունեին փրկանք վճարել դամբանախոսին՝ դամբանական լսելու իրավունքն կը գրկվեին, իրենց վերապահելով սակայն մեռնելու իրավունքը: Խորեն եպիսկոպոս յուր պաշտոնակիցներուն պես վարվելով՝ լռելյայն սա սկզբունքը կը քարոզեր թե՝ չար մեղք որչափ կուզեք, բայց հարուստ եղեք, որչափ կրնաք: Ժողովուրդն, որ շատ անգամ ազգասեր, ողորմած, բարեսիրտ ածականներուն արվիլը կը լսեր այնպիսի մարդերու՝ որոնք իրենց կենդանութեանը ժամանակ ազգը մատնած են իրենց շահուն համար, կամ եկեղեցվույն գանձանակին ստակ գողցած են, ինքնիրեն կըսեր. «փորանի վրա, բազմութեան մէջ, այսչափ սուտ ի՞նչպես կարելի է ըսել առանց կարմրելու»:

Խորեն եպիսկոպոս մեծ մարդ է. ավելի մեծ պիտի ըլլա անշուշտ, եթե հաջողի Կիպրոսի մէջ Լուսինյանե մնացած կալվածներն Անգղիո ձեռքեն առնել. և աս ալ անհավատալի բան մը չէ:

Խորեն եպիսկոպոս միջին հասակով, բարեձև կազմով գեղեցիկ մարդ մ'է: Երբ փողոցն ելնե՝ ընդհանրապես այն գեմքը կունենա երբ բազմութեան մէջ մեկն յուր սիրուհին գաղտնի նշան ընելեն ետքը ուրիշ մը զայն տեսնե և իրեն ըսե. «Ըրածիդ հավնեցա՞ր»:

ՏԻԳՐԱՆ ՅՈՒՍՈՒՓՅԱՆ

Պատմագիրները համաձայն չեն Տիգրան Յուսուֆյանի ծննդյան թվականին վրա: 1850 թվականին ծնունդ կուտան անոր այն պատմագիրներն, որ ամուսնացնելու աղջիկ ունին. ուրիշներն, որ անոր նախագահությանը տակ կորուսեր են իրենց դատը, 1820-ին կստեղծեն զայն: Իսկ մենք, որ հաճույք մը չենք զգար կիներու մէջ տարիքի խնդիր հուզելով, կըսենք թե այս երեսփոխանը Միջագյուղ ծնած է 1835-ին, 1854-ին և 1875-ին: 1835-ին՝ եթե դեմքին նայիս, 1854-ին՝ եթե պարահանդեսի մը մեջ գտնվի, իսկ 1875-ին՝ եթե հասակին նայիս:

Ծնած ժամանակն այնքան նիհար էր, որ եթե Լիկուրգոսի օրով ծնած ըլլար՝ անպատճառ ջուրը ձգված պիտի ըլլար[1]:

Մանկության օրերուն մեջ հանդարտ ու հեզաբարո ըլլալով՝ բնավ պատ-

ճառ չէր տար ստնտուին, որ գինքը կամքե։ Գիշերներն այնպես խոր քուն կը քաշեր ինչպես որ կը քաշե, երբ իրեն երթաս և բանաս իրեն այնպիսի խոսակցություն մը, որ բնավ վերաբերություն չունի գատի հետ։ Ջմեռնան այն երկար գիշերներուն մեջ անգամ մը միայն կարթննար և այն ալ ոչ թե լալու կամ կաթ ուտելու համար, այլ յուր թաթիկներովն ստնտուին ծիծերը բռնելով քնանալու համար։ Ամեն երախա, ինչպես հայտնի է, ունի այս սովորությունը, սակայն կերևի թե այս երախան բավական աաեն հեռուած է այս սովորությեան, վասն գի, կըսեն. ոմանք, չորս տարեկան եղած աաեն, տան սպասուհիները Տիգրանիկեն կը գանդատին եղեր։

Տղայական խաղերու բնավ չէր մասնակցեր. խելքն ու միտքը պարզևաբաշխության հանդեսին վրա էր։ Ամեն կիրակի իրեն հասակակից աղջիկներ ու մանչեր տուն հրավիրելով՝ աթոռներու վրա կը բազմեցուներ, ինքն ալ սեղանի մը վրա կելներ... ձերմակ ձեռնոցներով և կարճ, բայց ազդու աաենարանությամբ աղջիկներուն երեսը կը նայեր...դաստիարակության օգուտներն անոնց զգալ տալու համար։

Ամիրայության մեծ փափաք ուներ. յուր կարճ բայց ազդու հասակովն ամիրայության բարձրանալ կուզեր, վասն գի ամեն բարօրություն հոն կը փնտռեր. ուստի նախատինք կը համարեր տեսություն ընել այն ամեն մարդերու հետ, որ ամիրայական արգանդե մը ծնած չէին։ Օր մը նպարավաճառի մը ղրկվեցավ, որ քիչ մը պանիր առնե, բայց ինքն երբ տեսավ, որ նպարավաճառն ամիրա չէր, առանց պանիր առնելու ետ դարձավ։

Երբ յոթը տարեկան եղավ, թաղին վարժարանը ղրկեցավ, որ ուսում առնե։ Այն աաենները վարժարաններու մեջ ամեն բան կը գոնվեր բացի ուսումե. որով Տիգրանիկն ալ ուսումեն զատ ուրիշ ինչ որ գտավ առավ թաղային վարժարանեն։

1850-ին Բարիզ գնաց և վաճառականության դպրոցը մտավ հոն։ Մեծ հաջողակություն ցույց տվավ այն ուսման՝ զոր մենք վաճառականություն կանվանենք և որուն խաբեություն անունը կը կարդա Վովընարկ։ Քիչ աաենի մեջ կատարյալ սորվեցավ մարդ խաբելու սկզբունքներն, զորք պիտի գործադրեր վաճառականության մեջ։ Սակայն բախտը, որ եթե չժպտիր ապուշներու, երբեմն անոնց պաշտպան կը հանդիսանա, ըսավ Տիգրանին.

«Պարոն, եթե զբեղ վաճառական ընեմ՝ մահկանացուներուն գլխուն փորձանք մ'ալ պիտի ավելցնեմ։ Արդեն վաճառականները պատժել կուզեի, բայց անանկ պատիժ մը կուզեի, որ խիստ ըլլար։ Ուրախ եմ այսօր զբեղ գտնելուս վրա. գնա ուրեմն գատավոր անունով պատիժ եղիր այդ վաճառականներուն վրա»։

Բախտին[2] պատգամը կատարվեցավ, Յուսուֆյան առևտրական ժողովներեն մեկուն նախ անդամ և հետո ամբողջությունն (նախագահ) եղավ։

Նախնիք Արդարությունը տեսած պիտի ըլլան, որ զայն կշիռ ի ձեռին կը ներկայացնեն. անոր բարի ըլլալն ալ ճանչցած են անշուշտ, որ այնչափ հարգ ու պատիվ կընծայեն անոր. մենք դժբախտաբար ժողովներու մեջ ալ իրեն հանդիպած չունինք, որ տեսնեինք, ճանչնայինք և կարենայինք այսօր ըսել, թե Յուսուֆյան շատ լավ կամ գեշ կը վարվի Արդարության հետ։ Շատերը, որ մոտեն կը ճանաչեն Յուսուֆյան էֆենտին, կըսեն թե Արդարության ներկայացուցիչն է ան և թե Արդարության պես կշիռ մը ունի ձեռքը, սակայն պնդողներ ալ կը գտնվին թե՝ այդ կշիռը ծախու առնված է նպարավաճառե մը, որ պակաս կշռելուն համար ամեն օր տուգանք կը վճարեր։ Աս անհավատալի է։

— Կը տեսնե՞ք փաստաբանները ի՛նչպես ուշի ուշով մտիկ կընեն, որպեսզի կետ մը բռնեն և ինձի դեմ գատ բանալ տալով քառասուն-հիսուն ոսկի վաստկին... Պարոն փաստաբաններ, մի՛ պարծենաք կենսագրություններուս մեջ ձիս գատի հրավիրելու բնություն ունեցող կետեր գտնելուդ վրա, որովհետև կենսագրություններս կազմող բոլոր կետերն նույն բնությունն ունին։ Այս պարագայիս մեջ կը նմանցնեմ զձեզ այն ձկնորսին, որ այս օրերս տասը բալամուտ որսալուն վրա կը պարծենա, քանի որ շաբաթե մը ի վեր ծովը բալամուտով լեցված է։ Բայց քանի որ ձեզմե շատերը հոդվածի մը մեջ ավելի իրենց գործ կը փնտռեն քան թե արդարություն, ես ալ խոհեմություն կը բանեցնեմ և խոսքս կը փոխեմ։—

Առանց ատոնց կամ անոնց ըսածներուն ականջ կախելու՝ ես կըսեմ թե Տիգրան էֆենտի Յուսուֆյան միշտ արդարությամբ վարված է, որովհետև ուրիշ կերպով վարվիլը անկարելի է։ Մեր բոլոր ժողովներուն մեջ արդարությունը միշտ կը փայլի յուր բացակայությամբը։ Տիգրան էֆենտի շատ ճշտություն կը պահե յուր պաշտոնին մեջ. օրինակի համար, եթե պատիվ ունենաս օր մը իրեն ներկայանալու...գատով, նախ և առաջ քեզի պիտի ըսե.

Նախ՝ աս կողմը անցիր։

Երկրորդ՝ շիտակ կայնե։

Երրորդ՝ գլուխդ վեր բռնե։

Չորրորդ՝ ձեռքդ վար առ։

Եվ դուն այս հրամանները լսելով, անշուշտ պիտի կարծես թե, դերձակի մը առջև կը գտնվիս, որ չափդ պիտի առնե. բայց կը սխալիս, գատավորի մը առջևն ես. և ո՛ր ժողովին մեջ որ մտնես, այդ հրամանները պիտի կատարես։

Տիգրան էֆենտին այնչափ կը փափաքի ազգին ծառայություն ընել, որ հարյուր հոդվո գլուխ հանելիք գործը միայն կուզե կատարել։ Սուտ չեմ խոսիր։ Գնա օր մը իրեն ըսե՛.

— Էֆենտի՛, թաղիս մեջ կուզենք բարեգործական ընկերություն մը կազմել։

— Վսեմ դաղափար։

— Կը փափաքինք, որ հրամանքնիդ ալ ատենապետ ըլլաք։

— Սիրով կընդունիմ։

Այս պատասխանը առնելիդ հարը դուրս ելիր սենյակեն և դուան քովը կնցի՛ր։

Ահա ուրիշ մը կը մտնէ.

— Էֆենտի, որոշեցինք վարժարաններու նպաստելու համար ընկերություն մը հաստատել։

— Շատ ազգօգուտ ձեռնարկություն։

— Արդյոք կընդունի՞ք...

— Ատենապետությո՞ւնը... սիրով կընդունիմ...

— Կընդունի՞ք տասը բաժին...

— Ընկալագիրն ամսեամբ ղրկե՛ք։

Սենյակեն դուրս ելած ատենը ասոր ձեռքեն քաշե և քովդ կայնեցուր։ Երրորդ մը կը մտնե.

— Բարև, էֆենտի։

— Աստուծու բարին։

— Մսավաճառի խանութ մը բանալ կուզենք ընկերությամբ։

— Ազգային դաստիարակությունը զարգացնելու ամենեն կարճ ճամբան...

— Ի՞նչ կըսեք։

— Շատ աղեկ խորհեր եք. առողջ մարմին, առողջ միտք, կըսե առածը. հետևապես մարդս որչափ միս ուտե, այնչափ առողջ միտք կունենա. ուստի որչափ շատնա մսավաճառությունն՝ այնչափ կը շատնա բանաստեղծությունը, գրականությունը և այլն։

— Շնորհակալ ենք, ի՞նչ պետք է այս գործը պլուս հանելու համար։

— Ատենապետ մը, և այն ատենապետն ալ ես կըլլամ։

Դուան քովն ես կարծեմ, ասոր ալ օձիքեն քաշե և չորրորդին սպասե, որ ահա կուգա.

— Բարև, էֆենտի։

— Աստուծու բարին։

— Քանի մը երիտասարդներ մեկտեղ եկած ընկերություն մը հաստատած են. ասոնք ոչ իրենց ըրածը գիտեն և ոչ ալ ընելիքը. այսպիսի ընկերությունները ազգին չարիք հասցնելեն ուրիշ բանի մը չեն ծառայեր, ուստի մենք որոշեցինք ընկերություն մը կազմել...այդ ընկերությունը կործանելու համար։

— Բուն հայությունն ալ աս է։

— Մեզի կօգնե՞ք այս պարագային մեջ։

— Ինչո՞ւ չէ, քանի որ կըսեք թե ազգին վնասակար է, պետք է որ կործանվի։

Նստանար ատենապետը կանչել կուտամ և կը խոսիմ։

— Ատենապետը կանչել կուտա՞ք...

— Այո՛, պիտի վախնա՞մ իրմե։

— Բայց այդ ընկերության ատենապետը...դուք եք։

— Ե՛ս եմ...Տեր ողորմյա...ի՞նչ փույթ թե ես եմ. քանի որ նպատակին չի ծառայեր կըսեք, պետք է կործանել։

— Շնորհակալ եմ։

— Մեր պարտքն է կործանել այն բոլոր վնասակար ընկերությունները, ով որ ալ ըլլան անոնց ատենապետները։

Կը կարծեք թե կը կործանե՞. քավ լիցի.— կը կարծեք թե կը շինե՞, երիցս քավ լիցի. այնչափ ընկերություններու անդամ է, որ ժամանակ չունի ո՛չ կործանելու, ո՛չ ալ շինելու։ Մտույգը խոսելու համար Տիգրան էֆենտի Յուսուֆյան ազգին հատաջադիմությանը մեր ամենեն ավելի փափաքողներեն է, և այս չափազանց փափաքով է անշուշտ, որ ամենուն մեկեն հասնիլ կուզե և ոչ մեկուն կրնա հասնիլ։ Ո՛չ անցյալ և ոչ աս դարուս մեջ չկա ընկերություն մը, որուն կամ ատենապետն՝ կամ անդամ չըլլա, և ինչպես որ վարդն առանց փուշի չըլլար, ընկերությունն ալ առանց Յուսուֆյանի չկրնար ըլլալ—առաքանությունը միմիայն վարդին փուշեն անբաժանելի ըլլալուն վրա է, երեսս ի՞նչ կը նայիք, ո՞վ չարամիտներ։

1868-ին անդամ եղավ այն խնամակալության, որ հառաջ պիտի տաներ Շահ-Նազար և Նուպարյան վարժարանը[3], որ վերջն աշխարհածանոթ եղավ յուր...կործանմամբը։ Արդարությունը խոսելու համար յուր աշխատությունը չզլացավ հոն Յուսուֆյան էֆենտին, և ջանաց, որչափ որ կրնար, կանգուն պահել այդ շենքը, բայց որովհետև անհատի մը կամքն ու ջանքն միայն բավական չեն պայծառ պահել այնպիսի շենք մը, որ ժողովրդյան քաջալերությամբը միայն կրնար հարատևություն գտնել, ուստի և գոյլեցավ։ Հոն կը գտնվեին աշակերտներ, որ կես թոշակով ընդունված էին և քառորդն վճարել կը դժկամակեին, կային աշակերտներ, որ թոշակն բնավ չէին վճարեր և միայն կուտեին կը խմեին, կային որ դրամ մը չվճարելեն զատ կը փափաքեին, որ իրենց հագուստն ալ դպրոցեն շինվի։ Այսպես կը վարվին ահավասիկ մեր ազգայիններն, երբ իրենց զավակներն ազգային մասնավոր վարժարանի մը մեջ դնեն. իսկ ընդհակառակն՝ պահանջվածեն ավելի կուտան, երբ օտարի մը հանձնեն իրենց զավակները։

1870-ին երեսփոխան ընտրվելով՝ հրավիրվեցավ երեսփոխանական ժողովո

մեջ աթոռի վրա բազմելու։ Այս ժողովո մեջ բավականեն ավելի գործեց, որովհետև հոն գործելը լեզվով էր ոչ թե ձեռքով։ Ցուր ատենաբանություններն երբեմն տարապայման կերկննային՝ և ունկնդիր ժողովրդյան դլխուն ցավ կը պատճառեին. թեպետև շատերը կը հարգեն Յուսուֆյան էֆենտիին ատենախոսություններն իբրև...քրտնեցուցիչ դեղ. և այս է պատճառը, որ հարբուխ եղողները փոխանակ թեյ խմելով կամ ոտքերը տաք ջուրի մեջ դնելով քրտնել աշխատելու՝ Յուսուֆյան էֆենտիի երկարաձիգ ատենախոսությունները մտիկ կընեին և քրտնելով բժշկություն կը գտնեին։ Եթե սովորություն ըլլար, որ Թուլլ տրվեր կիներու մտնել երեսփոխանական ժողովին մեջ, շատ մը կիներ ուխտի կերթային անոր երկարապոչ ատենախոսություններուն։ Երբ կարճ կը խոսեր՝ լավ կը բացատրեր յուր միտքն և զորավոր փաստերով կըմբերաններ յուր հակառակորդները։ Ճշմարտությունը կը հարկադրե զմեզ խոստովանիլ, որ լակոնական ոճին մեջ շատ հառաջ գացած է յուր... հասակը, և երբ վինըը տեսնեմ՝ մտքես կըսեմ.

— Ո՜վ մարդ լակոնական, այդ հասակիդ ոճը ինչո՞ւ չես գործածեր ատենախոսություններուդ մեջ։

Ոչ միայն երեսփոխանական ժողովո մեջ, այլ վարժարաններու և թատրոններու մեջ ալ ըրած է ատենաբանություններ, որոնց թիվն այսօր վեց հազար ութը հարյուր իննսունը վեցի կը հասնի։ Յուր ատենաբանություններուն մեկ մասը կսկսի «Խնամակալուհի տիկնայք»ով, մեկ մասը «Տյարք և տիկնայք»ով, մեկ մասն ալ «Տյարք»ով։

Ամեն պարզևաբաշխության հանդեսներն ինք կը բանա. եթե երկու կամ երեք հանդես մեկ օրվան հանդիպին՝ երկուքին ալ կամ երեքին ալ կը հասնի, և դաստիարակությունը բնաբան դնելով կը համոզե հանդիսականներն, որ ստակ տան։ Յուր համոզողական խոսքերուն շնորհիվն է, որ այսօր Միջադյուղի Ս. Թարգմանչաց վարժարանը գոցվելու վիճակի մեջ ինկած է։

1872-ին անդամ ընտրվեցավ քաղաքական ժողովին, որուն ատենապետն էր Ապրո էֆենտի, որուն հասակը լակոնական ոճի բնավ չէր համապատասխաներ։ Յուսուֆյան էֆենտին ատենադպիր էր և երբ ատենապետին քովն նստեր՝ մարդս ինքնիրեն կըսեր.

«Եթե այս երկու մարդերու կարծիքներն այնպես են, ինչպես իրենց հասակները, ժողովը շատ դժվարություն պիտի քաշե որոշում մը տալու համար»։

Որոշ չգիտցվիր թե այն ատեն ի՛նչ գործ տեսավ Քաղաքական ժողովին։ Միայն սա հայտնի է, որ Պրուսիայի առաջնորդ գեր. Բարթուղիմեոս եպիսկոպոս հոս կանչվեցավ. վերջը նորեն տեղը ղրկվեցավ, դարձյալ հոս բերվեցավ, վերստին տեղը ղրկվեցավ, նորեն ետ պիտի կանչվեր, եթե Քաղաքական ժողո-

վին պայմանաժամը լրացած ըլլալով՝ չհրաժարեր պաշտոնեն։ Եվ որովհետև օրենք չէ Քաղաքական ժողովո ատենագրություններն ի լույս ընծայել—անշուշտ աջ ձեռքին գործած բարիքները ձախին ցույց չտալու համար — բնական է, որ անոր մեզի ըրած աղեկություններն չկարենանք հիշել։ Եթե պաշտոնյաներուն վկայությանը դիմենք, մինչև այսօր ասոնցմե և ոչ մին քաջություն ունեցած է խոստովանելու թե ձեռքես եկածին չափ աշխատեցա ազգիս շարիք հասցնելու և խիղճս հանդիստ է։ Քաղաքական ժողովո անդամ մը երբ յուր պաշտոնեն հրաժարի, կըսե.

«Աշխատեցա որչափ որ կարողությունս կը ներեր մեր ժողովին գործերուն մեջ կանոնավորություն մուծանել. շատ բարիք ըրինք ազգին, բայց նա չճանչցավ. եթե մեր տեղը ուրիշ Քաղաքական ժողով մը ըլլար՝ ազգին վիճակը գեշ էր»։

Հիմա շատ աղեկ է... խոստովանիմ և հավատամ։

Տնտեսական խորհրդո[4] անդամ մը կըսե.

«Մեր պաշտոնի գլուխ անցած ժամանակ սնտուկը շատ պարտք ուներ, իսկ հիմա քիչ պարտք ունի, զոր վճարելու անկարող է»։

Ա՛լ այնչափ մեր հույսը կտրած ենք ազգային սնտուկն պարտքե խլասելե, որ անոր քիչ պարտք ունենալն մեզի երջանկություն կը համարինք։

Վերջապես ամեն պաշտոնյա յուր անձնանվիրությունը կը համարե և շատ զարմանալի է, որ ազգն այսչափ բարերարներ ունենալով չկարենա լավագույն վիճակի մը մեջ գտնվիլ։ Մենք առանց գիտնալու թե Յուսուֆյան էֆենտին ի՛նչ ընթացք բռնած է յուր այս պաշտոնին մեջ, կրնանք վկայել, որ վարված չէ ոմանց պես, որոնք ազգային պաշտոնատեղին այնպես կերթան, ինչպես կերթաս դուն վաճառատունդ, մյուսն յուր խանութը և ես իմ դրասենյակս։ Շատ մը պաշտոնյաներ կան, որոնք ազգային պաշտոններու շնորհիվ իրենց Հնդկաստանի ճամբան ապահոված են։

Յուսուֆյան էֆենտին պատիվ ունեցած է քանի մը անդամներ Միջադյուղի Թաղական խորհրդո մեջ գտնվելու, բայց երբեք Թաղական խորհրդարանի մեջ։ Այսօր հաստատված ճշմարտություն մ'է, որ եթե զինվորական ասպարեզին մեջ գտնվելով՝ զորաբանակի մը հրամանատար անվանվեր պատերազմի ժամանակ, և եթե այդ զորաբանակն ալ Պաղտատ գտնվեր՝ ինքն յուր բինոցին մեջ փաթթված՝ յուր Միջադյուղի տունեն դուրս չպիտի ելներ և Պոլսո մեջ հրամանատարություն պիտի ըներ Պաղտատի մեջ գնտված զորքերուն։ Եթե իրեն դիտողություն ընեին՝ այն ատեն իրեն խոհարարը պիտի ղրկեր պատերազմի դաշտին վրա յուր հրահանգները զորաց հաղորդելու համար։ Բնավ կարևորություն չտար այն վնասներուն, որ հառաջ կուգան որևէ պաշտոն մը ստանձնելով զայն չկատարելե։ Եվ ահա այս սկզբունքով է, որ Թաղական

խորհրդարան երթալով՝ յուր պաշտոնին գլուխը անցած չէ։ Բայց յուր ընկերներեն մին սնուցուկը պարպած է, քահանաներուն իրավունքն յուր կոկորդն անցուցած է, աղքատին դրամը կլլեր է, ի՞նչ փույթ. բավական է, որ ինքն ատանկ բան մը ըրած չէ և հետևապես պատասխանատվությունը երբեք յուր վրան չառներ։ Անհոգութենեն ծագած վնասներն իրեն համար առաքինություն կը համարվին։ Ծով ինկած մարդ մը կերև ըսե իրեն.

— Կաղաչեմ, էֆենտի։

— Ատենապետությո՞ւն ընեմ։

— Կը խղդվիմ, ձեռքս բռնե որ ելնեմ...

— Կը խոստանամ ղբեղ խալսելու, կը պատասխանե, և դրպանեն Մասիս լրագիրը հանելով կարդալու կզբաղի։

Իրեն սկզբունքով՝ այդ մարդը ծովեն հանած եղավ, որովհետև խոստացավ։ Բայց մարդը խղդվեր է, հոգ չէ։ Յուսուֆյանի համար խալսած է։

Իրրև մատենադիր շատ ծառայած է ազգին, չհրատարակելով յուր երկասիրություններն... կերև Բերայի հրդեհին մեջ հրո ճարակ եղած չենե։ Եթե յուր բոլոր ատենախոսություններն լույս տեսած ըլլային՝ անպատճառ հազար հատոր պիտի կազմեին, և հետևապես, մեր կյանքն կարճ ըլլալով զանոնք ամբողջ կարդալու համար մեր թոռներուն պիտի պատվիրեինք շարունակել անոնց ընթերցումը, և կերև անոնք ալ չկարողանային լմնցնել՝ ատակություն չկա, որ անդին աշխարհին մեջ ալ Յուսուֆյանի երկարաբանությունները կարդալով՝ պիտի պատժվեինք... Ճշմարտությունը չվիրավորելու համար կը հարկադրվինք խոստովանիլ թե՝ որքան ալ հրատարակված ըլլան յուր ատենախոսություններն, անոնցմե մեծ մասը շատ ընդունելություն գտած է ժողովուրդեն, որ փութացեր է անոնց յուրաքանչյուրին մեյ մեկ արձան կանգնելու։

Ողիմպիական խաղերու[5] մեջ շատ հառաջ գացած է, կըսեն. մանավանդ ուիսքի մեջ։ Բոլոր մեծ մարդերու ողիմպիական խաղերեն մեկն է ատ, որուն մեջ ամենեն հաջողակը մրցանակ կառնե։ Այս խաղերուն մեջ արված մրցանակները հայտնի են։ Այս ասպարեզին մեջ բավական հրատարակություններ ունեցած է... սեղանի վրա, որոնք, չենք կարծեր, որ անմեղ ղրոսանքի սահմանեն անցած ըլլան։

Յուսուֆյան՝ եթե մաս մաս քննվի՝ Քյոսե Բեհյայինե[6] պես ձանձրացուցիչ կողմեր ունի. իսկ երբ ամբողջությունը քննադատենք՝ ամենքս կը միաբանինք ըսելու, թե չար սիրտ չունի. ազգին շահն յուր շահուն չզոհեր, և երեսփոխանական ժողովին մեջ ճնշման ներքև չիյնար... ուրիշ բան է, եթե վսեմափայլ Տատյան Հարություն պեյին մեկ կարծիքը հերքելու վրա է խնդիրը։

Յուր սկզբունքներն են.

Շա՛տ խոսե, քի՛չ մաիկ ըրե.

եթե քու չուզած մեկուն հետ տեսնվիլ չես ուզեր, բացե ի բաց մի՛ մերժեր զինքն, այլ այնպիսի ժամադրության տեղ մը ընտրե, ուր չկարենա գալ։

Երջանկությունը շատ անգամ պարզևաբաշխության հանդիսներուն մեջ կը գտնվի։

Խոստանալը կատարել է։

Յուսուֆյան էֆենտին կարճ հասակով, բարձր գաղափարով, վայելուչ երիտասարդ մ՚է։ Ամեն ոք այնչափ մեծ բիկնոց մը կը հագնի, որ մեջը կը կորսվի, այնպես որ զինքը տեսնողը չըսեր թե՝ «որքան մեծ բիկնոց հագեր է», այլ կըսե. «Եղբա՛յր, կարծես թե սա բիկնոցին մեջ բան մը կա»։ Յուր սովորական դեմքը կը հիշեցնե մեզ այն մարդուն դեմքը, որ երեսուն քայլ հեռավորության քոչունի մը ուշադրությամբ նշան կառնե և երբ հրացանը կը պարպե՝ կը տեսնե, որ քոչունը տեղեն անգամ երերած չէ։

ՍՏԵՓԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ

— Ըղա... ըղա... ըղա...

Եվ ահա կիները կսկսին իրենց դիտողությունները հայտնել, ինչպես Պ. Տիրայր չմոռնար յուր քննադատությունները հրատարակել նոր գիրքի մը... կազմին վրա։

Մանկության առաջին ձայնը նոր աշխատասիրության մը ծանուցումն է, զոր նախ զրացի կիները լսելով կը փութան գործը տեսնել և քննադատել։

Այն քննադատություններն, որ նորատիպ երախաներու վրա եղած են, շատ ավելի օգուտներ ընծայած են ազգին, քան անոնք, որ նորատիպ մատյաններու վրա գրված են։ Պատճառը պարզ է և հայտնի։ Երախայի հեղինակներն իրենց առաջին երկին պակասությունները տեսնելով՝ աշխատած են մյուս գործերն նվազ թերությամբ ի լույս ընծայել։ Մինչև կիներու քննադատության պատուղը չէ՞ տեսնել, որ անդրանիկ մը միշտ հոր մը և մոր մը գլուխ գործոցը չէ և միշտ կրտսերներն են, որ պատիվ կը բերեն իրենց հեղինակներուն՝ որը միայն իրավունք ունին այսօր պարծենալով իրենց մեկ կրտսեր զավակին ձեռքեն բռնել՝ ազգին ներկայացնել զայն և ճակատաբաց կրկնել այն խոսքը՝ զոր Մամուրյան ըսավ Պ. Նորայրի բառարանի նկատմամբ, թե «շատ ավելի դյուրին է բանագատել դործ մը քան հորինել, քանի որ բանագատությունը սովորաբար մի քանի էական սկզբունքի վրա լինելով՝ ընդհանուր տեսություններ կընե քննելի գործի մասին. մինչդեռ հեղինակություն մը աշխատություն և համաություն կենթադրե»։ Գիրքի հեղինակներն այսպես վարված չեն դժբախ-

տաբար։ Ասոնք ունէ բանադատութիւն իբրև հարձակում նկատելով՝ շարունակած են իրենց մյուս երկերն օժտել ճոխ... թերութիւններով։ Սուտ խոսած չենք ըլլար, եթե թող տրվի մեզ խոստովանիլ, որ մեր ազգն այսօր ունի ավելի հանճարեղ մարդեր, քան հանճարեղ երկեր։ Եթե մեր հարուստները հրատարակության ծախքը հոգային՝ ավելի հանճարի տեր մարդեր պիտի ունենայինք։ Բայց հարուստները չեն հոժարիր այս բարիքն ընելու։ Ինչո՞ւ, վասն զի իրենց ծախքով սնած, մեծցած ու դաստիարակված տղաներու ճակատը չպիտի կրնան դրել, տպագրյալ և հրատարակյալ արդյամբ և ծախյուք... աղայի, ինչպես դրել կուտան ճակատն այն գիրքերու՝ որոնց տպագրության ծախքն իրենց քսակեն կուտան։

Արդ, քանի որ կիներուն քննադատություններեն այսչափ օգուտ քաղած է ազգը, կը ներե՞ս, ընթերցող, որ անոնց ձայնը խզդեմ։ Հարկավ ո՛չ։

— Ըղա... ըղա... ըղա...

Խոսքը ձերն է, կինե՛ր. բայց կաղաչեմ շատ մի՛ երկնցնեք...

— Ոտքդ պագնեմ, ի՞նչ սիրուն տղա։

— Տիկին Մարթա, տես, ի՞նչպես աղվորիկ է։

Երախան կը ժպտի։

Ո՛վ շողոքորթություն... ամեն տարիք կը սիրե ղրեզ։

— Ադ ի՞նչ սև մազեր են, քուրո՛ւկ... ներկված են կարծես...

— Ըղա... ըղա... ըղաաաաաաաաաաա

Ի բաց գնա, ո՛վ ճշմարտություն... ի՞նչ գործ ունիս մեր մեջ...

— Արեւուն մեռնիմ, շատ խելացի զավակ է։

Երախան հավանության ցույցեր կընե։

— Մեծ մարդու պես աչքերը չորս դին կը պտտցունե։

— Ըղա... ըղա... ըղա...

— Ես չէի ըսողը, մեղա...

— Ի՞նչ բարկացող տղա...

— Ըղա... ըղա... ըղա...

— Երեսներուն վրա վարդ է բացվեր։

Միծաղը վերստին կը փայլի։

— Աստված թշնամիիս ասանկ զավակ տա։

— Ըղա... ըղա... ըղա... ըղա...

— Աս տղուն ի՞նչպես խոսելու է, դուվեստեն ալ չախորժիր։

— Կախորժի. բայց շատ սրամիտ ըլլալով՝ կարծեց թե թշնամիեդ վրեժ լուծելու համար՝ թշնամիիս ասանկ զավակ տա ըսիր։

— Ես ձեզի բան մը ըսե՛մ. այս տղան կատակե չախորժիր։

Ասոնք են ահա դիտողություններն, զորս դրացի կիներն ըրին սույն երկասիրության կազմին և դեղեցկությանը վրա, մեզի թողլով անշուշտ անոր պարունակությանը վրա մերիններն ընել։

Ստեփան Ասլանյան, աշակերտ Ճեմարանի[1], դարձյալ աշակերտ արքունի բժշկական դպրոցի, վարժապետ Ստեփան Փափազյանի, կառավարիչ ազգային երեսփոխանական ժողովո, ծնավ։ Մինչը հաստատապես գիտենք, բայց ծննդյան թվականին ճշտությանը վրա չենք կարող պնդել։ Եվ իրավունք ալ ունինք, վասն զի սուրբերու տոնախմբության օրերուն պես ամեն տարի կը փոխվի մեծ մարդերու ծննդյան... տարին։ Չենք պնդեր, բայց շատ հավանական է որ 1825-ին ծնած ըլլա. որովհետև երբ անգամ մը նկատողության առնենք այն վաղն, որով կը հալածեր Խրիմյանը՝ որ ծնած է 1823-ին, իսկույն կրնանք մակարերել, որ Խրիմյանի աշխարհ գալն իմանալեն անմիջապես ետքը ճամբա ելած ըլլա։

Ստեփան Ասլանյանի օրորանն ըլլալուն վրա իրավունք ունի պարծենալ այսօր Բերայի թաղն, որուն վարժարանին մեջ առավ առյուծորդին յուր առաջին... որսը։ Սրամտությանն ու ճարպկությանը շնորհիվ, սուղ ժամանակի մեջ յուր դասընկերները ճեղքելով առաջ անցավ։ Այնչափ կը վազեր դասերուն մեջ, ինչպես նաև փողոցներու մեջ, որ վարժապետը կը խորհեր զայն գտնված դասեն հանելով ուրիշ դասատու մը բերել տալ և անոր հանձնել. սակայն մեկ աշակերտին մեկ դասատու հատկացնելու դիմադրություն կըներ թաղական... սնտուկը։ Կզգար ինք, որ դասընկերներուն ծուլությանը կը զոհվեր, որով կստիպվեր յուր գործը քալեցնելու համար շատ անգամ անոնց օգնել։ Երբ ընկերները դասի կելնեին, ինքը հուշարարի պես անոնց եռևեն կըսեր այն օրվան դասն, ինչպես երեսփոխանական ժողովո մեջ կըսեր դասընկերներուն իրենց համարը։ Յուր անդուլ աշխատությամբն հաջողեցավ չորս ամսվա մեջ ուսանիլ Համաձայնությունը, զոր չէ կրցած սակայն գոյացնել օր մը ժողովո մեջ։ Տեր բային ո՛ւր ալ գտնվեր, անմիջապես կը ճանաչեր, կարծես պարտք ուներ անոր։ Վերջապես օր մը դասատուին քանի մը սխալները գտնելով, համոզվեցավ, թե այդ վարժարանն անկարող էր հագեցնել անոթությունն, զոր կը... սնուցաներ սրտին մեջ ուսման և գիտության համար։ Բախտավոր էր, վասն զի այն տեսնները ազգին զավակներուն դաստիարակությանը համար խորհող հարուստ գլուխներ և մարդեր կային։

1838-ին՝ բարեհիշատակ Կարապետ ամիրա Պալյան և անոր քեռայրը՝ Հովհաննես, արքունի ճարտարապետներ, որոշեցին, ազգային մանկավույն լույս տալու նպատակավ, Իսկյուտարի Երուսաղեմի վանքն հիմեն նորոգելով վարժարանի փոխարկել։ Այս որոշման վրա ուրախացավ Ստեփանիկն, ինչպես կուրախանա աղջիկ մը, երբ իրեն ըսեն. ել, պարահանդես տանիմ քեզի։ Այս ամիրաները Երուսաղեմի պատրիարքին իմացուցին իրենց որոշումը, խընդ-

րելով նորին սրբազնութենեն, որ այդ շենքն ազգին շնորհելու հաճելեն եաքը՝ բարեհաճի նաև տարին հարյուր քսան հազար դահեկան տալ աղքատ տղաներու կրթության համար: Նորին սրբազնությունն, որու անունն բարեբախտաբար Եսայի չէր, որ օր մը ելներ և ազգին ըսեր՝ վանքը խաւնիինգ հազար ոսկի պարտ ունի. օրհնյալ ժողովուրդը բարեհաճի զայն վճարել, ընդունեց իրեն ներկայացված առաջարկությունը: Հայկական հաստատուն եղբայրներ փլցուցին այդ մեծ վանքը... տասը վայրկյանի մեջ, ինչպես կործանեցին Արմաշու միաբանները հոմանուն վանքը, ինչպես պիտի կործանեն օր մը Մամբրե Մուշի վանքը, եթե դեռ կործանված չէ:— Այո՛, տասը վայրկյանի մեջ. իրարու երես նայելու հարկ չկա. եթե չեք հավատար՝ ցույց տվեք ազգային շենք մը և հիմնահատակ ընենք տասը վայրկյանի մեջ... հայու արյուն կը կրենք մենք:— Քանի մը շաբաթ եաքը վարժարանի մը շինության ձեռնարկեցին և քանի մը ամիսեն վանքին տեղ կանգնեցին վարժարան մը, զոր արիստոտելյան ճաշակով կոչեցին ճեմարան, ուր պիտի դասախոսեին դասատուները... պատկելով: 1838 դեկտեմբերի 9-ին ճեմարանի դռները բացվեցան: Ասլանյան դիրքերը ժողվելուն պես վազելով ճեմարան մտավ, և հաղիվ թե դասերու բաժանումը պիտի սկսեր՝ ամիրաներու դասուն բաժանումը սկսավ:

Քանի որ ճշմարտություն է, ինչո՞ւ վախնանք ըսելու թե մեր դաստիարակության շենքերը Յանոսի տաճարներ[2] էին մինչև մոտ ժամանակներս. եթե կուվո ժամանակ չէին բացվեր անոնց դռները՝ դռնե բացվելուն պես կռիվը կսկսեր և փակվելուն պես խաղաղությունը վերստին կը հաստատվեր: Ճեմարանի բացվելեն քանի մը ամիս եաքը, մեկ կողմեն աշակերտներու ոմանց ծնողքը մեծ զրկանք կը համարեին իրենց տղաները ճեմարան զրկելեն եաքը տարեկան թոշակ վճարելը: Մյուս կողմեն ամիրաներու մեծագույն մասը կը փափաքեր, որ ի փառս ազգին ճեմարանը... կործանվի, սպառնալով, որ եթե անոր դռները չփակվին՝ պիտի ստիպվեին ֆալախայի առնել... ճեմարանը: Ազգին պատիվը կը պահանջե, որ, կրաեին, ճեմարանը գոցվի: Այս լուտ տաճարն սկսավ օրըստօրե պարտքի տակ ճնշվիլ: Ամիրաները հաջողեցան երուսաղեմե առնվելիք հարյուր քսան հազար դահեկանի վճարումն ուշացնելով և իրենց ծանոթներուն զավակները ճեմարանեն քաշելով փակել տալ անոր դռները, հակառակ այն ջանքերու, զորս ժողովրդյան արհեստավոր մասը թափեց կանգուն պահելու համար այդ շենքը: Քանի մը տարի կուվո ասպարեզ ըլլալեն եաքը՝ 1841 հոկտ. 3-ին՝ դռնփակ նիստ ըրավ ճեմարանը... իբրև պատճառ խռովության... կեցցե ամիրայություն...

Ձեզ կը հարցունեմ հիմա. ասանկ վարժարանի մը մեջ ի՞նչ կրնար սորվիլ Ասլանյան. անշուշտ լավ կռիվ ընել. և եթե այսօր ազգային կռիվներու մեջ մեծ համբավ հանած է, այն ալ ճեմարանի պարտավոր է: Չմոռնանք սակայն

հոս հիշել, որ հոն համոզվեցավ Ասլանյան, թե անհրաժեշտ պետք է սահմանադրությունը հաստատել, որպեսզի ամիրայությունը կործանվի: Ամեն ազգերու մեջ այսպես եղած է, երբ միապետությունն սահմանեն անդին անցած է՝ ծնած է հասարակապետությունն՝ որ միապետության ծնունդ տված է, երբ օրենքը չարաչար գործածած է: Ես ժամանակ չունիմ հիմա պատմութենեն, ոչ ալ Ալֆիերիի բռնավորությունեն ապացույցներ մեջ բերել հոս. եթե իմ տեղս բժիշկ Շիշմանյանն ըլլար՝ երկար հոդվածով մը կը հասկցներ ձեզ թե միապետությո՞ւնը սահմանադրութենեն կելնե, թե սահմանադրությունը միապետութենեն:

Այնչափ զզվեցավ Ասլանյան ամիրաներու բռնած ընթացքեն, որ ամիրաներու հետ բոլոր մարդերն ալ սկսավ ատել. ահ, կրսեր օր մը, ջրհեղեղ ըլլայի և ամենը ջնջեի: Շատ ուշ հասկցավ անշուշտ, որ նախախնամությունը մարդերը ջնջելու համար ջրհեղեղեն եաքը բժիշկները ղրկեց աշխարհ, որք հին ժամանակներու մեջ ջրհեղեղեն ավելի գործ տեսան, շատ ուշ հասկցավ, բայց բնությունը շատ կանուխ զգացուց իրեն թե բժիշկ ըլլալու էր: Եվ արդարև քաչ բժիշկ ըլլալու համար նախ և առաջ ի՞նչ պետք է ունենալ: Ապառաժի ձևով սիրտ մը: Ե՞տքը: Ետքը՝ դանակ, ասեղ և դերձան: Ուրի՞շ: Մատիտ մը և կտոր մը թուղթ: Ասլանյան այս ամենն ունելով ուներ, մանավանդ առաջինը, որու շնորհիվ կրնար սառն արյունով ձեռք կտրել, աչք հանել, ոտք կտրել, և վերջը կարել: Եթե նոր աշխարհը բժիշկներու համար ալ կարի մեքենաներ հնարեր՝ բժիշկները այս ձանձրութենեն ալ կազատվեին, մանավանդ հիվանդներն ալ չարչարանքեն: Ասլանյան, ինչպես ըսինք, բժշկության կոչում ուներ, ներգործապես և կրավորապես, ուստի ճեմարանեն ելնելեն քանի մը ամիս եաքը, արքունի բժշկական վարժարանը գնաց: Դարձյալ յուր մեղվաջան աշխատությամբն սորվեցավ, թե ինչպես կապաննվին մարդեր... առանց զենքի... Երբ կը տեսնեմ մարդասպան մը, որ դատի ելած ժամանակը յուր հանցանքը պարապ տեղը ուրանալու կաշխատի, կը զարմանամ, թե ինչու դատավորներուն դառնալով ես բժիշկ եմ չըսեր՝ ինքզինքը արդարացնելու համար: Երբեք ամիրաներու կամ պատրիարքներու առջև ծունկ չոքելով հանձնարարական թուղթ չմուրաց, միայն յուր խելքեն, ջանքեն հանձնարարվելով աստիճանե աստիճան բարձրացավ: Տասնապետ, հիսնապետ, հարյուրապետ, հազարապետ ըլլալեն եաքը փաշայության բարձր աստիճանն ելավ, ուր կը վախնամ ես ելնելու: Ահա մարդ մը, որ կրնա ըսել հանդարտ խղճմտանքով և պարծանքով. իմ գործերուս զավակն եմ: Այսօր սուր մ'ալ կը կախե մեջքեն, որպեսզի դերերովը եթե չկարենա նպատակին հասնիլ՝ սուրը քաշե:—Կը փափաքեի, որ բոլոր բժիշկներն ալ մեկ մեկ սուր կրեին, իբրև նշան իրենց արվեստին:— Կրնանք վկայել իրեն համար, որ արհեստը չարաչար չգործածեր, երբեմն ազ-

քաներն ալ կայցելէ առանց դրամ ընդունելու—այսպես չվարվող բժիշկներն քամբասանքի կենթարկվին. լավ, բայց գնա հարուստ վաճառականի մը և աղքատի մը համար կտավ ուզե, կը ծաղրեն քեզի չեն ալ բամբասվիր:— Որ մը երկու ծեր և հիվանդ կիներ իրեն դուռն ափ առած էին: Սպասավորն դուռը բացավ և կարծելով, թե այս կիներու ներկայությունն ձանձրույթ կը պատճառե փաշային՝ վռնտեց զանոնք ըսելով, ինչպես որ սովորություն է.

— Հոս չէ, դուրս ելավ:

Փաշան վերեն իմանալով եղելությունը՝ պատուհանը բացավ և ըսավ.

— Ը՛ո՛ղ տվեք կիներուն ինձի գալ:

Եվ այդ ծերերը քովն առնելով անոնց բազկերակները քննեց, բայց ոչ ունելիով, ինչպես կընեն փափուկ բժիշկներեն ոմանք. ՚դեղագիրը գրեց և ճամբեց:

Մինչև հոս իբրև Ասկղեպիոսի աշակերտ ներկայացավ Ստեփան փաշան. ասկից ետքը պիտի տեսնենք զինք ազգային ասպարեզին մեջ Անաքարսիսի աշակերտ ատենախոսության մեջ. Մովսեսի[3] հետևող... օրենքերու գործադրության մասին, և կենդանի Պրոտեոս[4]... դույն փոխելու տեսակետով:

Սահմանադրության հաստատության օրերը կը մոտենային, և ինքը կուրախանար, որ ամիրաներեն վրեժ լուծելու ժամը պիտի հնչեր, այս պատճառով աշխատակից կըլլար այն ամեն անձերու, որ պատիվ ունին այսօր Սահմանադրության հաստատող անունը կրելու: Ժամը հնչեց. ֆալախան վերցվեցավ և Սահմանադրությունը հրատարակվեցավ: Ուրախությենեն նույն օրը քանի մը ամիրա ծաղրեց:

1862-ին անդամ եղավ Սահմանադրության Գործադիր ժողովին, որ չկրցավ գործադրել Սահմանադրությունն՝ անոր համար, որ մյուս անդամները Ստեփան փաշային պես խիստ չէին գործադրության մեջ:

1863-ին քաղաքական ժողովո անդամ եղավ, և առաջարկեց, որ ազգային լրագիրներուն բերանը սանձ դրվի: Սահմանադրության բարեկամե մը ասանկ առաջարկություն լսելը շատերուն զարմանք պատճառեց. բայց արդարացուց ինքզինք, առարկելով, թե՝ սանձ դրվի ըսի, բայց չըսի թե սանձ դրվելեն ետքը կառքերու լծվին: Այս առարկությունն այն ատեն իրրև դոհացուցիչ նկատվեցավ, բայց Ստեփան փաշա չկրցավ յուր վրայեն վանել ժողովրդյան այն համոզումը, թե՝ յուր կարծիքները դեռ հաստատ հիման վրա չեն, և թե այնքան փոխվելու ենթակա են, որքան մարդուս դիրքը:

1874-ին երեսփոխանական ժողովո ատենապետության աթոռին վրա ելավ նստեցավ: Գլուխ եղավ ձախակողմյան անվանված երեսփոխաններուն՝ որք կը պնդեին, թե ազգին շահերը պաշտպանելու վրա հիմնված է իրենց կուսակցությունը, թեպետև աջակողմյաններն ալ պռոալե չէին դադրեր՝ թե իրենք

են ազգային շահուն պաշտպանները: Ջախ կողման մեջ այնչափ խորը գնաց, որ աջ կողմեն եկած հիվանդները չէր բժշկեր, կամ, լավ ևս, չէր մեռցուներ: Ատեն եղավ, ուր հայտնեց թե Սահմանադրության վերաքննությունը ազգային շահերուն հակառակ էր. սակայն ժամանակ ալ եղավ, ուր ոչ միայն համաձայն դատեց, այլ վարչության կազմակերպության համար ծրագիր մ՚ալ պատրաստեց և Փունջ լրագրի մեջ հրատարակել տվավ: Յուր ատենապետության օրովն էր, որ հաջողեցավ Խրիմյանը վար առնել՝ Սահմանադրության կետերը, ստորակետները, բութերը չգործածելուն համար, որոնց անգործադրելի ըլլալն ինքն ալ հաստատեց վերջեն յուր պատրաստած ծրագրովը: Քանի մը անգամներ դռնփակ նիստ ընելով՝ ժողովուրդը դուրս հանեց. խորաններուն ետևը փնտռել տվավ և քիչ մնաց, որ անտվածածնա պատկերն ալ դուրս հանել պիտի տար, որպեսզի ճնշման ներքև չխոսին երեսփոխանները: Երբեմն ալ ատենապետությունը վարեց այն նավապետին պես, որ նավուն մրրիկի բռնված ժամանակը օթյակը կը քաշվի և հրաժարական կը գրե նավուն տերերուն: Ի վերա այսր ամենայնի խոստովանինք նաև, թե մեծ հարմարություն ունի ժողովը կառավարելու... երբ մրրիկ չկա: Այնչափ լավ համոզել գիտե, այնչափ քաջ ուսած է կիրքերը հուզելու, կամ, եթե ուզե, խաղաղելու արհեստն, որ կարող է դույզ մը աղավնիներու իրարմե պաղեցունել, կամ, եթե ուզե, կատվի և շան մեջ սեր և միություն հաստատել: Երբեմն երեսփոխաններն իրարու հետ զուգակշռելով կըսեի. Օտյան խորհելու է, Ասլանյան խոսելու է և Փափազյան գործելու է. և ամեն անգամ, որ ազգը տագնապալից ժամանակներ ունեցած է, ամենուն ըսած եմ. կերևի որ դարձյալ Ասլանյան կը խորհի, Փափազյան կը խոսի և Օտյան կը գործե: Այսպես վեց յոթը տարի ատենապետության պաշտոն վարած է: Թեպետև եթե այսօր օրակարգը աչքե անցունելու ըլլանք՝ կը տեսնենք, որ ուրիշ բան չէ, եթե ոչ բանտ մը՝ որուն մեջ յոթը տարիե ի վեր բանտարկված խնդիրներ կան, զորս հարցնող փնտռող չկա. մեռած խնդիրներ ալ պակաս չեն հոն: Օրակարգին մեջեն ելնող խնդիրները փախչելով բանտեն խաչսողներուն կարգեն են: Սակայն ատոնց պատասխանատվությունը ատենապետին վրա բեռցունելն անիրավություն է. վասն զի քանի որ երեսփոխանությունը միշտ շնորհակալություն հայտնած է իր ատենապետին, դյուրին է դուշակել թե ուրիշ ատենապետի մը օրով ոչ թե միայն խնդիր մը, այլ երեսփոխաններն ալ չպիտի կրնային ելնել օրակարգին մեջեն:

Գրական ասպարեզին մեջ մտած չէ, թեպետև կրնար հոն աթոռ մը ունենալ: Եթե քաջ խոսելու, մարդ համոզելու արհեստը պարունակող գիրք մը հրատարակեր՝ մեծ ծառայություն մը պիտի մատուցաներ ազգին: Վասն զի մեր երիտասարդներեն շատերն, որ ինքզինքնին պերճախոս կը կարծեն՝ մինչև այսօր օգուտ քաղած չեն մարդ համոզելու արհեստեն... երբ հացավաճառի մը

կամ մասվաճառի մը առջև դանվին։ Ստեփան փաշան եթե փափաքեր՝ դժվարություն չէր կրեր նաև հրատարակելու գիրք մը Առողջաբանություն անունով և որուն մեջ ընդարձակորեն խոսիլ դոներ մեկ հիվանդության վրա, որ բժշկվելու ենթակա է, ինչպես նաև այն տենդերուն վրա, որ առաջ կուգան խոսք ուղելեն և առենապետին խոսք չտալեն։ Վերջապես գրելու ձիրք և դյուրություն ունենալեն ետքը, չգիտենք թե ի՛նչ պատճառով այսչափ հեռի կապրի այդ ասպարեզեն։

Սկզբունքներուն դալով՝ կրնանք հետևյալները կարծել... այս տարվան համար։

Բարկությանդ մեջ լեզվիդ իշխե, ականջներուդ համբերություն մաղթե, իսկ կիրքերուդ հարատևություն։

Կարծիքները պետք է սպասավորներու պես դործածել, շոյելու է դանոնք, եթե քեզի շահ կը բերեն. իսկ վռնտելու է, երբ շահուդ կը դպչին։

Բամբասանքը հով մ'է, որ կուգա, կանցնի, վա՜յ անոնց, որ ամեն հովի կը շարժին։

Ստեփան փաշա վայելուչ հադուստով, միջին հասակով, միջին դերությամբ դեղեցիկ մարդ մ'է։ Վարդի պես կարմիր այտեր և ածուխի պես սև հոնքեր ու մազեր ուներ։

Ամեն անդամ որ տեսած եմ դինքը երեսփոխանական ժողովո ատենապետական աթոռի վրա՝ կարծած եմ, թե լուծողական դեղ խմած է որ մոտ է յուր արդյունքը ցուցնելու, և միշտ ասանկ պարագաներու մեջ է, որ ոտք ելնելով հայտարարած է «Ատյանը դոցված է, ատյարք երեսփոխանք»։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐՈՅԵՆՑ

Հովհաննես Տերոյենց կամ Հովհաննես պատվելի կամ Պրուսացի Հովհաննես կամ Հովհաննես Տեր Կարապետյան կամ Զամուրճյան Հովհաննես, օգնական Պետրոս Առաքյալին[1], աստվածաբան, մատենագիր, փաստաբան դևերու, լեզվագետ, մաթեմաթիկոս, խմբագիր, դասատու, կրիտիկոս, ծնած է անցյալ դարուն վերջերը, Պրուսիայի դյուղերեն մեկուն մեջ։ Յուր ծննդյան հետևյալ դիշերը ծնան դևերն, որոնց դոյությունն այն թվականեն ի վեր հաստատված ճշմարտություն մ'է։

Թվաբանական հաշվով պարտ էր իրեն կիրակի օր մը դալ աշխարհ, բայց ջերմեռանդ և բարեպաշտ ըլլալով ուզեց սուրբ պահել հանգստյան օրն և, այս պատճառով, քսանչորս ժամ երկարաձգելով յուր ծնունդն, հետևյալ օրը

բարեհաճեցավ ի լույս դալ։ Ականատես և հավատարիմ պատմագիրներ կավանդեն, թե երբ մայրն եկեղեցի կերթար յուր սովորական աղոթքն ընելու՝ ինքն ալ մորն արգանդին մեջ երկրպագու կըլլար Պետրոս առաքյալին պատկերին։ Ոմանք այս ավանդությունը կը հաստատեն պատմելով, թե՝ ամեն անդամ, որ դիպվածով այս առաքյալին խոսքը կը բացվեր, մորը ցավը կը բռներ և որ չէր անցներ մինչև որ եկեղեցին չերթար և այն պատկերեն կտոր մը...չուտար։ Դրացի կիներու այն դուշակություններն, որովք կը մարգարեանային հայտնելով յուր մորը, թե տղադ կամ ձկնորս պիտի ըլլա կամ ուրացող, լիովին կը վավերացունեն պատմագիրներուն խոսքերուն ստուդությունը։ Տերոյենցի բարեպաշտությունը այսօր առած դարձած է, վկայություններու կարոտություն չունի։ Մնած օրեն սկսավ պահեցողության. չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երբ մայրն ծիծն անոր բերանը կը դներ, Տերոյենց կը մերժեր, նեռավով յուր մորը վրա այնպիսի նայվածք մը՝ որ կը թարգմանվեր. ինչու կսկիպես զիս պաեիս ավրել, մայրիկ,—այս թարգմանության ճշտությանը կը վկայենք, որովհետև Տերոյենցինը չէ։—Ծոմապահությամբ ալ ոչ նվազ նշանավոր է Պատվելին. եթե այսօր դասատու մը կամ խմբագիր մը դրամ չունենա հաց առնելու և մինչև իրիկուն անոթի մնալ ստիպվի՝ Տերոյենցի պես բարեպաշտ է, կըսեն։

Զամուրճյան Պրուսա անցուց յուր մանկության և պատանեկության օրերը։ Ամեն առավոտ կանուխ եկեղեցի կերթար։ Յուր աղոթքին մեջ թեպետև երկնից արքայությունը կը խնդրեր, սակայն հարուստ ամիրաներ ալ խնդրելու չէր մոռնար։ Նեղության ժամանակները կսոխպվեր երբեմն մարդուս սխալական ըլլալը հաստատել, ըսելով, արհայուրյուն խնդրենք, բայց հացագործը դրամ կուզե, ամիրաներ տուր ինձի, ասսված, և ամեն բան ունեցած կըլլամ։ Աղոթքն ավարտելեն ետքը՝ շապիկ կը հագներ ու ձայնավորություն կըներ։ Ձայնն այնչափ բարձր էր, որչափ յուր ոճը, այնչափ անուշ, որչափ յուր հոդվածները և այնչափ բարակ, որչափ «Երևակին»[2] թուղթը։

1832-ին Պոլիս եկավ Տեր-Կարապետյան յուր ձեռքն ունենալով պայուսակ մը, որ կը պարունակեր չորս շապիկ, վեց վարտիք, քանի մը հայերեն դրքեր, քիչ մը դրպարտություն, ծրար մը կոխվ, չորս թաշկինակ, կտոր մը պանիր, և կտոր մ'ալ վեհանձնություն։ Ասոնցմով կրնամ, կըսեր, քիչ մը ժամանակ ապրիլ։ Արդարև երեք չորս ամսի չափ Պոլսո փողոցները քննելեն ետքը, ներկայացավ Հովհաննես Գալֆային, որ յուր զավակներուն և աղբատներուն համար մասնավոր վարժարան մը բացած էր Իճատիե, զոր քանի մը տարի առաջ Միսաքյան Խաչատուր, երևելի գրագետ, Հնարավանի[3] փոխեց դրականության փոքրիկ ծառայություն մը մատուցանելու նպատակով։ Այս վարժարանին դասատու—տնօրենությունը ստանձնեց Զամուրճյան։ Նախ

աշակերտներուն սկսավ սորվեցնել, թե ի՛նչ դիրք առնելու է մեկն աղոթելու ժամանակ, թե ինչ զգուշությամբ ծռելու և գետինը համբուրելու է մեկը գայթակղության տեղի չտալու համար, և այս ուսումն կամ դիտությունը լավ տպավորելու համար աշակերտներուն...ծունկերուն մեջ, առավոտ մինչև երեկո այնչափ երկրպագություն ընել կուտար, որ խեղճերուն բանբալոններուն ծունկերը երկու օրը անգամ մը կը բացվեին: Աշակերտներուն ծնողքը տեսնելով իրաց վիճակը, կաշիի կտոր մը կարեցին բանբալոններուն ծնկներուն վրա: Ասա ալ օգուտ չըրավ, և աշակերտներն սկսան իրենց բանբալոնը վեր առնելով աղոթք ընել: Ասա ալ չհաջողվեցավ և վերջապես որոշվեցավ, որ աշակերտներն իրենց բանբալոնը հանեն և այնպես աղոթեն: Այս եղանակավ բանի մը տարվան մեջ աղոթք ընելու դիտությունն անոնց սորվեցունելեն ետքը, սկսավ դասախոսել այն բաներու վրա, զորս չէր դիտեր:—Այո՛, չէր դիտեր, բայց սորվելու մեծ փափաք ուներ: Ինքը ժամանակին հարգը լավ դիտեր. ինքնիրմե կաշխատեր դիշեր ցերեկ և անշուշտ այս անդուլ աշխատության շնորհիվն է, որ այսօր բավական լեզուներ գիտե, կըսեն: Եթե այսօր լեզուները խառնելու պետքն զգացվի՝ կարծենք իրմե ավելի արժանավոր և հաջողակ մեկը չպիտի կրնան գտնել:—Երբ այդ աշակերտները եկեղեցի կերթային և դասուն ետևը շարվելով երկրպագություն կընեին՝ ժողովուրդը կսեր, ապրին, ապրին, ի՞նչ ուսումնական տղաներ, և Ջամուրճյան ինդինքը փառավորված կը կարծեր ազգին այսպիսի ծունկ չոքող աշակերտներ հասցնելուն վրա:

1838-ին աղաչվեցավ Եմմարան մտնել իբրև փորձառու և իբրև ուսումնապետ: Հոն մտնելուն հետևյալ օրը ծրագիր մը պատրաստեց և սկսավ գործադրել: Այս ծրագրով աշակերտ մը ինը տարվան մեջ պիտի սորվեր հայերեն լեզուն այսպես.

Երեք տարի քերականություն.
Երեք տարի Ճարտասանություն.
Երեք տարի տրամաբանություն.

Քերականությունն ալ երեք տարիի բաժնեց.
Մասն առաջին՝ բառագիտություն.
Մասն երկրորդ՝ դուգադրություն,
Մասն երրորդ՝ շարադրություն:

Այս քերականության վերջին երկու մասերը արժանի չեղան լույս տեսնելու. բայց առաջինը մեծ, խիստ մեծ ընդունելություն գտավ...նպարավաճառներեն, որոնք հիշյալ քերականությամբ սորվեցան, թե ինչպես պանիր կը փաթաթվի թուղթերու մեջ: Խոսքին ուժը մասերուն մեջ զգալի փոփոխություններ ըրավ. Անունին պաշտոնը Մակբային տավ, Մակբայինը Դերանունին,

Դերանվան պաշտոնը Շաղկապին, և այնպես վարվելով բարեկարգեց Հայաստանը... Քերականությունն ըսել պիտի ուզեի: Վարժարանին հառաջագեմ աշակերտները սկսած էին այն քերականությամբ սխալ խոսելու և սխալ գրելու վարժվիլ, երբ անոնցմե մին անոր սխալները Պատվելիին ցույց տավ: Այն օրեն ետքը հիշյալ Քերականությունն իրրև վարժություն տրվեցավ աշակերտներուն, որ մեջի սխալներն ուղղելով կանոններուն համեմատ գրեն: Պատվելին հոն ալ չկրցավ երկար տաեն մնալ, վասն զի ճեմարանը գոցվեցավ:

1846-ին լրագրական ասպարեզին դուռը բաց գտնելով ներս մտավ: Թուղթ մը գտավ, առավ և վրան Հայաստան[4] գրեց— Քյուրտստանը ըսե, Քյուրտստան, կը պռոա Սըր Լէյըրտ,—և սկսավ հրատարակել: Հայաստանով սկսավ Հռովմի գահը գովաբանել, որով քիչ ժամանակի մեջ այնպիսի ջարդ մը տավ ընթերցողներուն, որ իրմե զատ Հայաստան կարդացող չմնաց:

1848-ին տեսնվելու բարեբախտություն ունեցավ ֆերիերի կարգինալին հետ, որ Հռովմեն հոս ղրկված էր մոլորյալ և հերետիկոս քրիստոնյաները համոզել, որ ս. պապին հողաթափը համբուրեն: Սկսավ պատմել Տերոյենց, թե՝ ինչպես եղեր է, որ նատուրա բառը նաշերեեն ելած և, թե՝ բոշետերե բառը բրո և չեաերե բառերե ծնած է—բրո էրիկն, իսկ չեաերե կնիկն անշուշտ—թե՝ բուրկատորիում[5] բուրկա բառեն կելնե—բուրկատիվն ալ մոռանալու չէ—թե հայերը Քրիստոսի վրա երկու նատուրա չեն ճանչնար, թե՝ հոգվույն սրբո համար միայն ի հորե բոշետիդ կըսեն, թե ի հոգվո բոշետիդ ըսելը չեն ընդունիր հայերը, թե՝ Հայաստանյայց եկեղեցվո դավանանքը Հռովմայեցվոց պես է, և թե՝ հայերը Հռովմա նախագահությունը կընդունին և կը փափաքին, որ սեր և միություն հաստատեն Հռովմա աթոռին հետ: Ջամուրճյան՝ Հասունի պես ափ մը հայ չէր ուզեր արքայություն տանիլ, այլ կը փափաքեր, որ բոլոր հայերն մեկեն տանի արքայություն Հռովմի ճամբով: Սակայն չհաջողեցավ. և եթե այսօր հայերը դժոխք երթան՝ Պատվելին հանդիմանելու իրավունք չունին:

1857-ին սկսավ Երևակ անունով տխուր հանդես մը հրատարակել: Օր չէր անցներ, որ հավն երեք անգամ չխոսեր հոն: Դևերու գոյությունը ուրացողները հերետիկոս կը հռչակվեին, և ինք ամեն ճիգ կը թափեր դևերու գոյությունն հաստատել յուր գոյությամբը, և, որ զարմանալին է, դատը միշտ կը վաստկեր: Հռովմա եկեղեցվույն դեմ խոսողները ազգին մեջ բողոքականություն տարածելու դրպարտության կը մատնվեին: Այն տաեններն Մասիս, Մանզումե և Մեղու, որք բաժանորդ չէին Երևակին...կարծիքներուն, անդադար անոր դեմ կը խոսեին:

1864 մարտ 16-ին Ջամուրճյան ելավ Մասիսի խմբագրապետին դեմ դատ բացավ: Այս դատին համառոտ արձանագրությունը հոս կը հրատարակենք ի գվարճություն մեր ընթերցողներուն:

Սրբազան պատրիարք.—Դուք երկուրդ ալ Հայաստանյայց եկեղեցվո զավակ ըլլալով ի՞նչ է պատճառն, որ քանի մը տաեներ ի վեր ձեր մեջը անհամաձայնություն մը կը տիրե։

Տերոյենց.— *Ես անոր անձին հետ գործ չունիմ, սրբազա՛ն։*

Ուրուճյան.— *Ես ալ չունիմ։*

Տերոյենց.— *Ամեն թերթի մեջ ինձի կանպատվե։*

Ուրուճյան.— *Սուտ է, ես բնավ անպատված չեմ ընդը, ես ճշմարտությունը կը գրեմ, ինքն է, որ կանպատվե զիս դոնամիջյան հերետիկոս[6] անվանելով։*

Սրբազան պատրիարք.— *Ինչո՞ւ անանկ բաներ կը գրես, պատվելի։*

Տերոյենց.— *Որովհետև Նալբանդյանն ալ դոնամիջյան է և այս Նալբանդյանը համարձակեցավ օր մը դիվաց դոյությունը ուրանալ։*

Տ. Հ. Հյուսիսյարպեյենցյան.—Ասկե բոլոր դոնամիջյաններուն հերետիկոս ըլլալը կը հետևի՞։

Տերոյենց.—*Չհետևի՞ր մի յա։*

Ուրուճյան.— *Միշտ պապականությունը կը պաշտպանե, և երբ Հայաստանյայց եկեղեցվո դեմ հարձակում տեսնե՝ ձայն չհաններ։*

Տերոյենց.—*Հայաստանյայց եկեղեցին պաշտպանության պետք չունի։*

Սրբազան պատրիարք.—*Պատվելին ասկե վերջը Հայաստանյայց եկեղեցին պաշտպանելով այս արատն վրայեն կը ջնջե։*

Տերոյենց.—*Կը պաշտպանեմ. բայց նախ պատիվս տեղը բերեք։*

Հյուսիսյարպեյենցյան.— *Սակարկությո՞ւն կընեք. Պատվելի։*

Տերոյենց.—*Ի՞նչ իրավունքով ինձի յոթանասնամյա ըսած է Մասիսի մեջ։*

Ուրուճյան.— *Եթե յոթանասնամյա ըսած ըլլալուս համար հերետիկոս եղած կըլլամ, բուն տարիքդ գրուցե, շաբաթ ավուր Մասիսին մեջ հրատարակեմ։*

Տերոյենց.— *Միշտ կանպատվե զիս։*

Ուրուճյան.— *Քավ լիցի. ես խղճի ազատություն կը հարգեմ։ Եթե Պատվելին խոստովանի թե պապական է, այն ատեն բան մը չեմ ըսեր...*

Տերոյենց.—*Եկեղեցին չընդունիր խղճի ազատություն։*

Սրբազան պատրիարք.— *Հաշտվեցեք։*

Ուրուճյան.— *Ես անոր անձին հետ գործ չունիմ. առեք Մասիսը և հաշտեցուցեք, եթե կրնաք, Երևակի հետ։*

Սրբազան պատրիարք.—*Ի՞նչ կըսես, Պատվելի՛։*

Տերոյենց.—*Հերետիկոսություն չընեն, որ ես ալ չգրեմ։*

Տերոյենց պատվելին Ուրուճյանի ձակատեն համբուրելով կես հաշտու-

թյամբ տուն կը դառնա։ Քանի մը ամիս ետքը այնչափ ջերմ եռանդով կսկսի ջատագովել պապականությունն, որ Մոնտ անուն անդրալեռնական[7] լրագիրն 1864 դեկտեմբերի 12 թիվին մեջ հետևյալը կը հրատարակե.

«Կ. Պոլսո մեջ Երևակ շաբաթական թերթ մը, չմիացյալ Հայոց ամենեն ներհուն և ամենեն լուրջ անձեն խմբագրյալ, զանոնք իրենց հռոմեական եղբայրներեն բաժնող նախապաշարմանց և կանխակալ կարծյաց միջնորմը խրամատից... յուր ղեկքերը Հռոմա զինանշանները կը կրեն.....»։

Խոստովանիմ և հավատամ։

Խռովությո՛՛՛ւն ամենեցուն։

Երևակին երկրպագեցուք։

Այս է ահա Պատվելիին խմբագրական կյանքը։ Յուր շնորհիվ, ազգային լրագրական ասպարեզն տղայական և անօգուտ վիճաբանություններու թատրոն հանդիսացավ։ Երբ հայ թերթ մը փափաքեր քիչ մը լույս վառել, Պատվելին կուգար, կը փչեր զայն։ Մինչև այսօր երբ կրոնի խնդիր մը ծագի՝ Պատվելին առանց հրավերի սպասելու ասպարեզ կը նետվի և նկատելով, որ բողոքականությունը ազգին մեջ տարածելու ջանքեր կըլլան–ով սկիզբ կուտա յուր հոդվածներուն, որոնց վերջ կը մաղթենք մեր բոլոր սրտով։

Բայց պատվելիին աղոթքներն ընդունելի եղած էին, գրեթե միշտ Ամիրա մը գտնված էր իրեն ձեռնտու։ 1865-ին Կարապետ Ամիրա Նվիրեց Երուսաղեմին գումար մը, որուն տոկոսը, տասը ոսկի օսմանյան, Պատվելիին կը տրվի վարձատրություն եկեղեցական պատմության մը, զոր պիտի գրե Ջամուրճին։ Այս աշխատասիրությունը դեռ ի լույս չեկավ և գալու պատճառ մը չունի. վասն զի Պատմությունը գալուն պես Պատվելիին տասը ոսկին պիտի երթա։ Տարակույս չկա, թե կարելի եղածին չափ ընդարձակել պիտի ջանա պատվելին այս Պատմությունը։

Բացի Ջոնսլ[8] և Երևակ հանդեսներեն՝ քանի մը գիրքեր գրած ու թարգմանած է։ Բասգալա Խորհրդածությունքն երևելի տեղ մը բռնած է այսօր թարգմանություններու մեջ յուր... սխալներովը։ Այս գիրքն աշտարակաշինության ժամանակ թարգմանված ըլլալուն պատճառավ է, որ Բասգալին ըսածը սխալ հասկցած է Պատվելին, թեպետև ինքը կը պնդե, որ շատ հավատարիմ գտնված է թարգմանությանը մեջ, և եթե տեղ տեղ սխալ թարգմանված է՝ պատճառն այն է, որ բնագիրն սխալ գրված է։ Խորհուրդ Պաղտնի ընկերությանց[9], որ դարձյալ անդրալեռնականություն կը հոտի և գլխու ցավ կը պատճառե։ Քաղաքավարություն[10], ուսկից բնավ օգուտ քաղած չեն Երևակի և Ջոնսլի հոդվածները։

1871-ին երեսփոխանական ժողովո անդամ ընտրվեցավ, բայց ինքը մեր-

ժեց, առարկելով՝ թե մեղք կը համարեր կիրակի օրերը ազդին բարիք ընելը։ Ջմոռնանք ըսել թե՝ կիրակի օրը աղբատին ողորմություն ալ չտար։

Պատվելին յուր սուր հիշողության շնորհիվ կրոնի մասին ընդարձակ տեղեկություններ հավաքած է գլխուն մեջ։ Լավ հեգնել գիտե։ Օր մը Իսկյուտար ս. Կարապետ եկեղեցվույն մեջ տաղտկալի քարոզի մը ունկնդիր ըլլալեն ետքը դուրս ելավ եկեղեցիեն ըսելով.

«Գավազանը ասանկ մարդերու ձեռք տալու տեղ՝ կոնակը տալու է։»

Տրամաբանելու մեծ հաջողություն ունի. և եթե հաճի օր մը, գոնե օր մը, արդար դատի մը պաշտպան կանգնիլ, ակներև սխալ-ներևի, որ գինքը գերազանցող չկա այս ճյուղին մեջ։ Տիեզերական Պատմության ալ օտար չէ, և առանց ճակատը շփելու ծանոթություններ կուտա այն ամեն անձերու վրա՝ որոնց գործերը, քանի՛ երորդ դարուն մեջ եկած ըլլալը, ե՛րբ մեռնիլը, դժումը միասով թե ձեթով ուտելը, առավոտները կաթ թե խահվե խմելը, շաբաթը քանի՛ անգամ ածիլվիլը, կատու թե շուն սիրելը կուզես իմանալ։ Ամենեն նշանավոր հեղինակներուն գործերն ուշի ուշով կարդացած և ըղեղին մեկ անկյունը զետեղած է։

Այն համբավն, որ կը վայլե և որ այնքան կը վայլե իրեն՝ որքան յուր երկար վերարկուն, շատերու փափաք կը ներշնչե անգամ մը գոնե տեսնել այս մարդն, որ հրապարակի վրա անգամ գոռում գոչում կընե։ Ինչպես ժամանակով Աղեքսանդր Դիոգինեսն, այնպես ալ երբեմն ամիրաները պատվելին տեսնելու կերթային. և երբ առաջարկեին իրեն խնդրե մեզմե ինչ որ կուզես, Պատվելին կը պատասխաներ. կը խնդրեմ որ դրամ տամ ինձի։ Ամիրաներն այս ազատ և հանճարեղ պատասխանին վրա հիանալով, կը քաջալերեին զինքը ոսկիներով, զորս անձնվիրաբար կառներ Պատվելին... կիրակի օրերը, և այդ գումարներով Հայաստանյայց եկեղեցին կը պաշտպաներ։

Տեր-Կարապետյան սովորական կերպով չնսեմիր յուր սենյակին պատուհանին առջև։ Եթե փողոցը նայիլ հարկ ըլլա՝ մեզի պես գլուխը պատուհանեն դուրս չհաներ, այլ ոտները։ Շատ անգամ զարմացած եմ, թե ի՛նչպես կրնա տեսնիլ ոտներովը, մանավանդ թե անոնց վրա ակնոց ալ չէր դներ։ Ոտներեն մեկուն մատներեն անցած է յուր ծխափայտն, որ կարգելու իրեն դուրսպա հագնիլը։ Եթե հարկ ըլլա իրեն հոդված մը գրել կրոնի վրա, կերթա գրատեղանին առջև, որուն վրա միշտ անպակաս է գրիչ, մելան, ածուխ. վայրկյան մը կը խորհի և կակսի գրել։ Գրությունն ավարտելուն պես, կերթա բազմոցին վրա կերկննա և գիրք մը առնելով կը կարդա։ Բարեկամ չունի... բացի գիրքերեն՝ որոնց յուրաքանչյուրն յուր տեսակին համեմատ շարած է մատենադարաններու մեջ։

Պատվելիին վարդապետություններն հետևյալներն ըլլալու են.

Պետք է մարդերն իրենց խոսքերեն դատել և ոչ գործերեն, և երբ մեկն ըսե մեզ, թե ես վաճառական եմ և երթա լեռներն ավազակություն ընե, պարտավոր ենք զայն իբրև պատավավոր վաճառական հարգել. վասն զի բերանը սրտին թարգմանն է։

Ժամանակին հարմարիլը փոքր մարդերու գործ է, մեծ մարդն այն է, որ դիտե ժամանակն իրեն հարմարցնել. վասն զի հագուստը պարտավոր է մարդուս հարմարիլ և ոչ թե մարդս հագուստին։

Լավ է սրբազան պապին ոտները համբուրել, քան էջմիածնա եպիսկոպոսներուն ձեռները։

Ոչ թե ժամանակն, այլ դրամն է, որ կը փոխե ամեն բան։

Երբ ճամբա մը բռնեցիր՝ շարունակե զայն, եթե սխալ ալ ըլլա։

Պատվելին պարզասեր է... հագուստի մասին, սխալ չհասկցվի։ Օր մը երբեք մտքեն անցուցած չէ նեղ կոշիկներու մեջ շարշարել յուր ոտները. այնչափ մեծ և ընդարձակ են յուր ոտքի ամաններն՝ որոնց մեկ հատը միայն կրնա երկու հոգի միանգամայն հագնիլ և առանց նեղություն իմանալու քայլել։ Երկար վերարկու մը կառնե երբեմն յուր վրա, ինչպես երբեմն՝ վրան առավ Ճեմարանի ուսումնասիրության պաշտոնը... ուրիշ մը եթե վրայեն քաշե առնե վերարկուն՝ ինքը չիմանար։ Կյանքին մեջ երբեք փողպատ և ողջմտություն գործածած չունի. ոչ թե չունենալուն համար, այլ ինքզինք նեղության հպատակ չընելու համար. բանբալոնն շատ ընդարձակ է, հակառակ այն անհիմն զրույցներուն՝ որովք շատերը կուզեն հավատացնել թե՝ յուր եկեղեցական պատմությունն ավելի ընդարձակ է։

Ջամուրճյան հասակով և կղակով երկար, համբավով և քիթով մեծ, գույնով և մազերով ճերմակ, աչքով կապույտ, քաջառողջ մարդ մ'է։ Ճակատն այնքան խորշոմ ունի, որ արդուկն անգամ բավական չէ շտկել զայն։ Մատներն երկար են և աստվածաբանություն գրելու կոչում ունին։ Ուզած ժամանակը ձայնն այնքան հաստ կը հանե, որ որոտման կարծիքը կուտա լսողներուն։

Ջամուրճյան կը նկարագրվի գետինը պառկած կոնակի վրա և գիրք մը բռնած։ Ճակատին վրա մեծ տառերով վիմագրված է կրոնք։ Դևերու խումբ մը շրջապատած են զինք և զինյալ են զենքերով, որոց վրա զրպարտություն դրոշմված է։ Քթին վրա միշտ կը բզզա մեղու մը և երբեմն կը խայթե։ Մասիս Աբեվեյան մամուլ անոր վերարկուեն կը քաշեն։ Քարաքաշյան կը ներկայացնե իրեն տղու խաղալիք մը, որուն վրա գրված է կրոնական դրույթ։ Քովը գետնի վրա փռված է աքաղաղ մը, որ իրեն համար զոհված է երեք անգամեն ավելի խոսած չըլլալուն համար։ Քանի մը հոգիներ Պատվելիին գլխուն վերը կայնած փրցունել կաշխատին այն պսակը, զոր նվիրած էր իրեն երբեմն պատրիարքարանի հավատաքննության սուրբ ատյանը։ Եվ Պատվելին իրեն

շուրջը գտնվողներուն այս հեգնությունները տեսնելով կը դառնա անոնց կը նայի այնպիսի դեմքով մը, զոր մենք կունենանք երբ տասնչորս տրամ անգլիական աղ՝ ջուրի մեջ հալեցնելով խմենք։

ԿԱՐԱՊԵՏ Ս. ՒԻՓՈՒՃՅԱՆ

Կարապետ Ս. Ուիփուճյան, խմբագիր-տնօրեն Մասիս պատկավան լրագրոյ ազգային երեսփոխան Ընդհանուր ժողովո[1], ծնած է Պալատ[2] 1823 Հոկտեմբեր 18-ին։ Վիպագիրներուն ոմանք կը ջանան հաստատել, թե Ուիփուճյան ծնած ժամանակն այնպիսի հեգնական դեմք մը ուներ, որ կարծես դայակին ըսել կուզեր. ի՞նչ մեծ գործ տեսար։ Կան պատմագիրներ, որ, հակառակը պնդելով կը գրուցեն թե Ուիփուճյան աշխարհ փոխադրված ժամանակն այնչափ խոժոռադեմ էր, որ դայակը վախենալով ինքզինքը սենյակն դուրս նետեց և, գինիի մեջ քիչ մը մոխիր խառնելով խմելեն ետքը, դրացիներուն վազեց ազդարարել՝ թե առջի գիշերը տեսած մեկ երազն կատարված էր։ Դայակը երազին մեջ տեսած էր, որպես թե մեկն սագի փետուրով ահագին քարեր կը նետեր յուր վրա։ Երեխան այս բաներեն բնավ տեղեկություն չուներ. յուր սովորությանը համեմատ տասը տարի ետքը իմացավ, սակայն այն ատեն ալ լրագիր չուներ, որ Ներքին Լուրերու մեջ հրատարակեր։

Կարապետ մորն արդանդեն բաժնվելուն պես զգաց՝ թե մարդս պարտավոր է նախ յուր փորը գոհացնել և ապա բաժանորդները։ Ուստի մորը ծիծերեն կախվեցավ և այնչափ անհագաբար ծծել սկսավ, որ քանի մը ամիսեն մորը ծիծերը բոլորովին պարպեց, և ստիպվեցավ մնացած ամիսներն աղվեսի կաթով անցունել։

1831-ին ուսում և դիտություն առնելու համար Պալատու վարժարանը մտավ այն ձևով, որով կը մտնե այսօր մրգավաճառներու խանութը խնձոր առնելու համար։ Դասատուներու հետ շատ անգամ կը վիճաբաներ։ Ապուշ տղայի մը պես իրեն տրված ամեն դասն առնելով տուն չէր դառնար. շատ անգամ յուր դասատուին կըսեր.

— Այս տված դասը աղեկ չէ, ես աղեկ տեսակեն կուզեմ։

Դասատուն կը ջանար համոզել զինքը՝ թե տված դասը լավագույն է։ Իսկ Ուիփուճյան դասատուին խոսքերուն բնավ կարևորություն չէր տար և կը պնդեր, որ դասն առաջին տեսակեն ըլլա։ Դասատուին կառաջարկեր միշտ այս խոսքը. ներսես հաճե, զոր յուր հայրը կը գործածեր, երբ մսավաճառեն միս առնելու երթար։ Իրավունք ուներ Ուիփուճյան այս խոսքը կրկնելու, վասն զի այն ժամանակի դասատուներն հիմակվան մսավաճառներեն ավելի ճշմարտախոս չէին։ Այս ընթացքով և փափաքով յուր բոլոր ընկերները գերազանցեց հայկաբանության և սատանայության մեջ։ 1834-ին Պալատի վարժարանին հրաժեշտ տալով՝ Գանլը Քիլիսեի դպրոցը գնաց։ Քանի մը տարի հոն աշակերտելով՝ կատարելապես ձեռք բերավ Հայկաբանությունն և Ճարտասանությունը։ 1838-ին մտավ ճեմարան, ուր ճեմելեն զատ բան չսորվեցավ։

Հայրն՝ որ շատ հարուստ չէր, զավկին ճեմելը տեսնելով՝ գիրքերն առավ իրմե և արդուկ մը տվավ, որ անով հագուստներ արդուկե։ Այն ատեն ցափհարտի համոզվեցավ Կարապետ, որ աշխարհաբարն ուղղելն առաջ վերարկուներ և վարտիքներ ուղղել պետք էր։ Հնազանդեցավ հորը հրամանին և սկսավ խանութը երթալ։ Շատ չանցավ, հոն ալ փայլեցուց յուր հանճարը. մեկ ժամվան մեջ քառասուն վերարկու կարդուկեր, թեպետև շատ անգամ կը խանձեր, չանոնք, բայց տրամաբանության ուժով հանցանքը կամ երկաթին վրա կը բեռնավորեր կամ կրակին վրա։ Եվ այս եղանակով քանի համոզեր հաճախորդներն այնքան ավելի փափաք կուտար գիտություններու՝ զորս ուրիշները խաբելու համար ստեղծված կը կարծեր։ Երբեմն Հայր Աբսենի քերթվածները կարդալու կը զրաղեր և հաճախորդները ժամերով սպասել կուտար։ Պարապմունքներուն մեջ բնավ չէր մոռնար աշխարհաբար գրություն մը գրաբարի դարձունելեն ետքը նորեն աշխարհաբարի վերածել։ Օր մ'ալ տեսավ, որ թիկնոցին երեսը շատ հինցած էր, շրջեց զայն ու հագավ, և երբ հայրն պատճառն հարցուց՝ պատասխանեց, թե թիկնոցը գրաբարեն աշխարհաբարի դարձուց։ Բնական է, որ կարդալու համար սրտին մեջ այնքան փափաք սնուցանող մեկը լաթեղեն ասպարեզն խիստ անձուկ գտնար. ուստի թողուց հորն արվեստն և դասախոսության սկսավ։

1845-ին ազգային վարժարաններու և քանի մը տուներու մեջ այցելու դասատու ընդունվեցավ։ Երեք տարի այս պաշտոնն ամեն հաջողակությամբ վարելով քիչ մը դրամ պատրաստելեն ետքը միտքը դրավ Բարիզ երթալ ու վաճառականության դպրոց մտնել։

1848-ին Պոլիսեն մեկնեցավ Բարիզ երթալու համար, ուր երկու տարի ու կես վաճառականության վարժարանին մեջ առևտրական գործերու վրա կատարյալ հմտություն առնելեն ետքը, 1851-ին Պոլիս դարձավ և հետևյալ օրն ուղեց վաճառատուն մը բանալ։ Վաճառականության համար պետք եղած ամեն բաներն ուներ, միայն ստակ չուներ։ Իր դեմ ելնող բոլոր բարեկամներուն կառաջարկեր, որ դրամագլուխ դնեն և իրեն հետ ընկերությամբ վաճառականություն ընեն. իսկ անոնք կը մերժեին անոր առաջարկությունն։ Վհատություն եկավ վրան. և որովհետև վհատությունն մեր ազգին մեջ մարդս կամ

գերեզման կը տանի կամ խմբագրության ապարեզը կը նետե, այս վերջիններս մեջ ձգվելու դժբախտությունն ունեցավ։

1851-ին Մասիս անունով լրագիրն հրատարակելու ձեռնարկեց։ Այս լրագիրն բնավ նպատակ չուներ հասարակության լուրեր տալու. այլ պարզապես կը հրատարակվեր աշխարհաբար լեզուն կոկելու և զեղեցկացնելու համար։ Եթե մինչև մո՛տ ատեններս լուրերն ամենեն ուշ կը հաղորդեր՝ պատճառն այն էր, որ զանոնք սահուն և կոկիկ աշխարհաբարի կը վերածեր և այնպես ի լույս կը հաներ։ Եվ այն լուրերն, որոնց մեջ խորթ բառեր կը գտնվեին, բնավ չէին հրատարակվեր Մասիսի մեջ, որքան ալ օգտակար ըլլային յուր ընթերցողներուն. լավ է, կըսեր, որ ընթերցողներս վնասվին քան թե Մասիսի լեզուն։ Զարմանալի չափով թվի անշուշտ, եթե հայտնեմ, որ երբեմն սկզբունք ալ կը զոհեր լեզվին. և եթե ապակեդրոնացականություն[3] դեմ այնքան հարձակեցավ 1872-ին՝ պատճառն ապակեդրոնացականության ազգին վնասակար ըլլալը չէր, այլ յուր դժվարահնչելի և երկար ըլլալն էր։ Կեդրոնացումը, կը պնդեր, մեր ազգին համար ամենեն լավն է. վասն զի, կըսեր—մտքեն—կոկիկ բառ մ'է և ականջին անուշ կը հնչե. մինչդեռ, կըսեր—մտքեն—կործանում է մեր ազգին ապակեդրոնացականությունն որ ճաշակի տեր ականջներու խորթ կուգա։ Եթե այն ատեններն ապակեդրոնացականության տեղ ապակեդրոնում կամ տարակեդրոն բառը առաջարկվեր՝ շատ հավանական էր, որ ազգին շահն ազգին ականջներու չզոհվեր։ Ինչ ալ ըսեն յուր թշնամիները, դոնե կը միաբանին այս կետին վրա, թե բավական կոկած է աշխարհաբար լեզուն. և այս ճշմարտության համոզվելու համար 1850-ի աշխարհաբարները կարդալը հերիք է։ Զմոռնանք խոստովանիլ, թե Ութուճյան յուր քերականության[4] մեջ ներդաշնակության առաջին տեղ տված ըլլալով՝ բավական բառեր հարստահարած է, շատ բառեր սպաննած է, բայց այս դարուս մեջ ո՞ր բարեկարգությունն առանց արյան կարելի եղած է, որ աշխարհաբարի բարեկարգության համար զոհողություններ չըլլան։

Ուրիշ խմբագիրներու պես շաբաթն անգամ մը չփոխեր յուր կարծիքները։ Թերևս առարկվի, թե կարծիք ըսվածը լաթի պես է, մեկը շատ լաթ ունենալու է, որ շաբաթն անգամ մը կարենա փոխել։ Կարծիքներու մասին աղքատ չէ ինքը, մանավանդ թե դինքը աղքատ ամբաստանողներեն շատ ավելի հարուստ է, բայց զանոնք չփոխելը այն հիման վրա հաստատված է, թե մարդս այն ատեն փոխելու է կարծիքը, երբ կը հիննա և ա՛լ չգործածվիր։ Ամեն կարծիքներն իրարու ետևե գործածելը՝ ըստ մեզ, միտքը շռայլության վարժեցունել է, և ինքը շատ խոհեմությամբ կը վարվի յուր կարծիքներուն վրա հաստատ մնալով։ Արժեթուղթերու դիներուն հետ ալ իր կարծիքներուն պես կը վարվեր Մասիսի մեջ, բնավ չէր փոխեր զանոնք։ Երբ արժեթուղթերուն դիները երկու

ֆրանկ բարձրանային, պետք է, կըսեին, Մասիսի մեջ արժեթուղթ դնել և Զալիմիո հրապարակին վրա երկու ֆրանկ շահով ծախել։

Արդարության ջերմ և նախանձախնդիր պաշտպան է։ Ո՛ևէ խնդիր մը անաչառությամբ քննելու համար զայն կը պարզե, անոր մեջ ճշմարտությենն առաջ բաժանորդ կը փնտռե. վասն զի առանց բաժանորդի ճշմարտությունը չպաշտպանվիր։ Երբ կը տեսնե, որ ճշմարտությունը խոհեմությամբ կը վարվի՝ անոր կուսակից կըլլա. իսկ երբ կը նշմարե, որ կը հանդգնի իրեն շահուն դպչիլ՝ բոլոր ուժովը կը պնդվի անոր դեմ. և իրավունք ալ ունի, քանի որ անձնապաշտպանությունը օրենքն ալ կը ներե։

Շատերն իրեն մոռացկոտ բնավորությենն օգուտ քաղելով՝ երբեմն երբեմն հաջողած են յուր ազգօգուտ լրագրուն մեջ հակասական նամակներ հրատարակել տալ։ Բայց քանի մը տարի առաջ Շահ-Հյուսեինի խնդրուն նկատմամբ Փունջի դեմ բացած դատեն խրատվեցավ և հիմա առջի զրածները չմոռնալու համար մատը դերձան կը կապե։

Եվ որովհետև այս դատն 1875-ին՝ բոլոր փաստաբաններն և գրագետները հուզեց, հարկ կը համարինք անոր վրա համառոտ ծանոթություն մը տալ։ Գրիգորիս եպիսկոպոս Ալյամձյան, Երզնկայի առաջնորդ, յուր պաշտոնատեղին երթալեն անմիջապես ետքը հանրածանոթ շարագործ Շահ-Հյուսեինի դեմ նամակ մը կը գրե Մասիսին։ Սույն նամակին հրատարակությենն քանի մը ամիս ետքը նորին գերապատվությունը ի նպաստ Շահ-Հյուսեինի նամակ մ'ալ կը ղրկե Մասիսին, որ կը հրատարակե յուր էջերուն մեջ։ Ժողովրդյան ատելի շարագործի մը Մասիսի մեջ փառաբանվիլը տեսնելով Փունջ՝ յուր պաշտոնակիցին վրա կը հարձակի ապուշ, կենդանի, խու և վատ պատվանուններով։ Մասիս այս պատվանուններեն վիրավորված կենթադրե յուր անձնականությունն և ի դատ կը հրավիրե Փունջը։ Այս դատին պզտիկ պատկերը կրնա համարվիլ հետևյալը.

Դատավոր.— *Ինչո՞ւ համար այս մարդուն պատվույն դպար։*

Փունջ.— *Ես չհայհոյեցի։*

Մասիս.— *Ինձի վատ և կենդանի ըսելեն ետքը հիմա կը պնդե, որ կենդանի բառը մարդ կը նշանակե, և ասոնց նշանակությենն կեղրակացունե, թե ես ալ մարդ եմ։*

Դատավոր.— *Մարդ բառը չե՞ք ընդունիր, անո՞ր դեմ կը բողոքեք։*

Մասիս.— *Չէ, մարդ եմ, բայց կենդանի չեմ։*

Փունջ.— *Եթե կենդանի չես, ուրեմն մեռյալ ես։*

Մասիս.— *Մեռյալը դուն ես։*

Փունջ.— *Կենդանի բառն անասուն չնշանակեր... եթե ինձի չեք հավատար՝ Տերոյենցի, Լուսինյան Տորեն եպիսկոպոսի հարցուցեք։*

Մասիս.— Հարցնելու պետք չկա, կենդանի բառը հոս գեղ մաքով դրված է։

Փունջ.— Ես աղեկ մտքով դրի։

Մասիս.— Վատ բառին համար ի՞նչ պիտի ըսեք։

Փունջ.— Վատը ցած չնշանակեր։

Մասիս.— Բա՞րձր կը նշանակե։

Փունջ.— Բարձր ալ չնշանակեր։ Ես միայն այս գիտեմ, որ այդ բառը քու արարքդ նշանակող բառ մ'է։

Մասիս.—Հայհոյություն է։

Փունջ.—Ոչ. վատ բառը ծույլ, թույլ, հույլ կը նշանակե։

Մասիս.— Դուն ես ծույլ, թույլ, հույլ....նույնահանդ բառերը ժողվեր եկեր է...ոտանավոր շինելու չեկանք հոս։

Դատավոր.— Ծույլ ըլլալը կրնա՞ս հաստատել։

Մասիս.— Անկարելի է։

Փունջ.— Եթե ծույլ չէ՝ վախկոտ է, վասն զի վատը վախկոտ ալ կը նշանակե։

Դատավոր.— Ես այդ բառերը պատրիարքարան կը ղրկեմ, անոնց ինչ ըլլալը կը հասկնամ և հետո ձեզի կը կանչեմ։

Բառերը պատրիարքարան գացին և հոն մնացին։ Եթե օր մը ելնեն՝ հասարակությունը հարկավ պիտի լսե ու իմանա անոնց նշանակությունները։ Սակայն երկու խմբագիրներն պատվավոր կերպով հաշտվեցան և հաղթությունը մնաց...երկուքին ալ քովը։

Պաշտպան է ոչ միայն ճշմարտության, այլ նաև պատրիարքներու... որչափ աաեն որ աասնք մնան պատրիարքական գահուն վրա, երբ գահեն վար իջնան՝ ինք ալ կը դադրի անոնց համակարծիք ըլլալե։ Այս դարավոր սովորությանը շնորհիվ է, որ հիմակվան ամենապատիվ Ներսես պատրիարքի օրով պաշտպանեց Խաչատուր կաթողիկոսը, Վանցի Պողոս Վարդապետն և ի տանեն Մամիկոնենից Մամբրե եպիսկոպոսը, զորս կը հարվածեր Խրիմյանի օրով։ Որչափ ալ անհեթեթ ըլլա պատրիարքի մը որոշումը՝ զայն հարգելու սովորություն ունի, և տարակույս չունինք, որ եթե Կալիդողայի օրով խմբագրության պաշտոնին մեջ գտնված ըլլար՝ դուվարանելով պիտի դրվատեր Կալիդողայի այն որոշումն, որով ձին հյուպատոս անվանել կուզեր և անշուշտ խմբագրական հոդվածով մը ձին ալ պիտի շնորհավորեր ըսելով.

«Հռոմմայեցիներու համար նոր դարաշրջա մը բացվեցավ։

«Մինչև հիմա հյուպատոսները իրենց պաշտոնը շարաշար գործածելով ժողովրդյան դանդատներուն առիթ տված էին։

«Բարեխնամ Կալիդողա կայսրը ժողովրդյան դանդատներն ու բողոքները

նկատողության առած ժամանակը՝ փափաքելով միանգամ ընդմիշտ անոնց վերջ տալ՝ հյուպատոսն յուր պաշտոնեն հրաժարեցուց և անոր տեղ անվանեց յուր հավատարիմ վսեմափայլ ձին, որուն մատուցած ծառայություններն արդեն ծանոթ են մեր աղդայիններուն։

«Քաջահույս ենք, որ նորընտիր, հայրենասեր և արդարակորով ձին յուր խոհական և փորձյալ քաղաքագիտությամբը ամեն ճիգ պիտի թափե երկրին և ժամանակին պահանջումներուն համեմատ բարեկարգություններ ընելով ժողովրդյան հարգն ու համարումն իրեն գրավել։

«Անօգուտ չըլլար հիշել նաև, թե վսեմափայլ ձին գեղ տնօրենություն մը ըրած չհամարվիր, եթե իրեն օգնական կարգն մեծապատիվ (այս անուն) էշն, որ ծերակույտի[5] ժողովին մեջ մեծ ձայն ունեցած է ժամանակով, էշն որ սերելու պատիվն ունի այն ազնվական ավանակեն, որ մեծ տեղ մը գրաված է Հին Պատմության...ախոռին մեջ»։

Այս խմբագրական հոդվածը գրելեն քանի մը օր ետքը Ներքին Լուրերուն մեջ պիտի կարդայինք հետևյալները.

«Ժողովուրդը շնորհակալության ուղերձ մը գրեց Կալիդողա բարեխնամ կայսեր յուր ձին հյուպատոս անվանելուն համար։

«Այսինչ կառավարության դեսպանն երեկ հյուպատոս ձիին այցելություն մը տալով երկու ժամու չափ տեսակցեցավ հետը։

«Այսինչ կառավարությունն յուր խնդակցությունը հայտնելու նպատակով հյուպատոս ձիին պատվանշան մը ղրկեց։ Վսեմափայլ ձին հետագրով շնորհակալություն հայտնեց հիշյալ կառավարության։

«Երեկ գիշեր վսեմափայլ հյուպատոսին ախոռին մեջ կոչունք տրվեցավ դիվանագետներուն, բոլոր երևելի ջորիներն իրենց ազնվաշուք ընտանիքներովն և նշանավոր էշերն պարահանդեսի զգեստով մեծ փայլ մը կուտային սույն շքեղ հանդեսին։ Էշերուն կենացը գավաթներ պարպվեցան։»

Այսչափով չպիտի շատանար, այլ պիտի առաջարկեր ճանճերե զինվոր առնել, մեղուներու վրա տուրք դնել, ուղտերը թաղապետության անդամ անվանել և հասարակաց ապահովության համար մրջյուններե ոստիկանություն մը կազմել. և վերջապես պիտի առաջարկեր ինչ որ այս այլանդակ կայսրը կը խորհեր։

Մենք դինքը մեղադրելու նպատակավ չէ, որ Կալիդողայի ղրկեցինք Ութուճյանը, այլ ցույց տալու համար այն ընդունելությունն, զոր կրնե ամեն պատրիարքներու որոշումներուն և առիթ կուտա ըսել տալ ուրիշներուն, թե Մասիս պատրիարքարանի բեռանն է կամ ակաջջն է։

Մինչև մոտ ատեններս չափազանց խոհեմությամբ վարվելով՝ պահպանողական ընթացք մը բռնած էր. իսկ տարիե մը, այսինքն այն օրեն ի վեր, որ

Մասիս ամեն օր կը հրատարակվի բացի կիրակի օրերեն, տոնի օրերեն և պրաշարի հիվանդ եղած օրերեն, հարձակողական դիրք մը բռնած է։ Ամեն ազատությամբ կը խոսի այսօր ինչ որ մարդն անցունելու կը վախնար երկու տարի առաջ։ Անպատասխանատու խոսելով քաջությամբ պաշտպանեց և դեռ կը պաշտպանե հայկական խնդիրն յուր քաղաքական հոդվածներովն։ Երբեք տուիք չփախցուներ հալածել ամեն անոնք, որ ազգային իրավունքներուն դպչիլ կուզեն։ Այս ամենն ընելով դարձյալ չէ արժանացած այն քաջալերության, որով միայն կարող է բերթերը մեծցունելով ազգին հայախոս և մեծ լրագիր մը կարդացնելու փափաքն իրականացնել։

Բացի Մասիսեն ունի երկու ընտիր թարգմանություններ, որ մեր ժողովրդյան վիպասանության ճաշակ ավին։ Թափառական հրեան[6] և Գաղտնիք Հավատաքննության[7] մեր ժողովրդյան բավականեն ավելի ներկայացուցին անդրաշեռնականները։ Այս թարգմանություններու համար թարգմանիչն բավական դափնյա պսակներ ընդունեց, զորս քակելով տունը կը ղրկեր, որ օձաձուկ առնեն և դափնիներուն մեջ դնելով, կասկարայի վրա եփեն, նվիրեցին նաև բավական ձիթենիներ՝ զորս շնորհակալությամբ ընդունելով կը մրմռար.

— Ավելի ազնկ չէ՞ր ըլլար, երթ այսչափ ձիթենիի տեղ սափոր մը ձեթ ղրկեիք ինձի։

Ճիշտ Եղոբոսին աքաղաղին պես որ կըսեր.

— Մարդարիան ի՞նչ ընեմ. գարիի մը հատիկն ինձի համար ավելի կարժեր։

Թարգմանած է նաև Վեֆիլտի երեցն[8] և Քաղաքական Տնտեսագիտություն[9], որոնց, ինչպես նաև բոլոր թարգմանություններուն մեջ ցույց կուտա, որ մեր թարգմանիչներուն արժանավոր հաջորդն ըլլալու պատիվն կը վայելե։

Ութուճյան ոչ նվազ նշանավոր եղած է ազգային երեսփոխանական ժողովո մեջ։ Անհրավություն ըրած կը համարինք ինքզինքնիս, երթ չհիշենք հոս, որ ազգային պատմության մեջ Սահմանադրության հիմնողներուն մեջն անցած է նաև յուր անունը։ Քանի մը երեսփոխաններու պես խոսած ըլլալու համար խոսելու սովորությունը չունի. վասն զի ուրիշներու գլխու ցավ պատճառելն խղճին կը դպչի։ Եթե քիչ անգամ խոսք կառնե և քանի մը բառի մեջ յուր միտքը բացատրելու հատկություն ունի։ Իսկ անուրանալի է, որ երբ ոտք ելնե և առնապետեն խոսք ուզե, այնպիսի շարժումներ կընե, որ կարծես տղա մ'է և վարժապետին կըսե.

— Վարժապետ, դործ ունիմ։

Կարապետ էֆենտի Ութուճյան, յուր ամբողջությամբն առնելով, բարի և ազգին օգտակար մարդ մ'է։ Քանի՛ տարիներե ի վեր խմբագրությամբ ազգին ծառայելեն զատ շատ մը հանձնաժողովներու, ժողովներու և խորհուրդ-

ներու մեջ ազգին ծառայած է անձնվիրաբար և նույնչափ տարիներ ևս պիտի ծառայե, եթե յուր կազմին նայինք։ Երկչոտությունը բողով քաջությունը ձևոր առած է, բնական ասկե ալ ճշմարիտ է, որ ազգիս ձեռնհաս չհոնար երբ ոգուտ մը տեսնե։ Իրեն խմբագիր մեծ թերություններ կրնա ունենալ, բայց իրեն սխալական մարդ մեծ առավելություններ ունի։ Մեկու մը վնաս տալ չուզեր, սակայն ամենեն ալ օգուտ քաղել կը փափաքի։ Ուրիշներու բարիք ընելու չզլանար, եթե պարագաները թող տան։ Կը սիրե այն ամեն գործերն, որ բարի, գեղեցիկ և օգտակար են, իսկ կը պաշտե՝ երբ գեղեցիկ են։ Եթե դեմքեն դատես գինք, վեհու կարծակես թե անմատչելի մեկն է, իսկ երբ օր մը հետը տեսնվելու պատիվն ունենաս՝ տված վճիռդ հետս կը կոչես և կը խոստովանիս, որ այս մարդուն դեմքը սրտին հետ հակասության մեջ է։ Ցավ է մեզ սակայն խոստովանիլ, որ եթե գրիչով մեկու մը դեմ գրելու որոշում տա՝ չխայթեր, այլ կը վիրավորե։ Աքիլլես միայն կրնա դեմ դնել անոր հարվածներուն։ Վերջին օրերս հանձն առած է Ղալաթիա տպվող լրագիր մը կրթելու[10]։ Հիշյալ լրագրին մարդարե խմբագիրն, որ միշտ գուշակություններ կընե, բնավ չէր գուշակած Մասիսեն խրատվելու պետքը։

Ութուճյան էֆենտին երկար հասակով, թուխ դեմքով, սև ընթիններով և աչերով քաջառողջ մարդ մ'է։ Սովորություն ունի փողոցը քալած ժամանակ միշտ գետինը նայիլ. կարծես բաժանորդ կը փնտռե։ Իսկ երբ գլուխն վեր առնե՝ այն դեմքը կունենա, երբ Շիրքեթի շոգենավերեն մեկուն մեջ նստած ժամանակդ քովդեդ հարյուր քսան օխանոց մեկը անցնելով ուժով ոտիդ կոշտին վրա կոխե և անցնի երթա առանց ներողություն խնդրելու։

ՍԿՐՏԻՉ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Սուրբ Գիրքեն գիտենք, որ Փարավոն[1] երբ աստուծո առաջարկությունը մերժեց. աստված սկսավ եգիպտացիներուն իրարու ետևե պատիժներ ղրկել, որոնց թիվը տասնի հասնելավ, Փարավոն մինչև իններորդ պատիժը համառությամբ դեմ կեցավ. և տասներորդին առջև ալ կը վարաներ հնազանդություն հայտնել՝ երբ Մովսես և Ահարոն[2] իրեն հայտնեցին թե՝ եթե նորեն համառես՝ իբրև մեռասաներորդ պատիժ Մկրտիչ Տիգրանյանը պիտի ղրկե աստված։ Փարավոն այս հայտնությենեն սոսկալով՝ Մովսեսն և Ահարոնը անմիջապես կանչել տվավ, արտոնեց գիրենք որ երթան, իրենց ունեցածն ալ մեկտեղ տանելով։ Փարավոնին հնազանդությանը վրա աստված տիրապետավ քովը պահել Տիգրանյանը։ 1815 թվականին երբ տեսավ աստված, որ մեր կրած

տառապանքներին չխրատվելով՝ անարժաններեն վարդապետ, քահանա կը ձեռնադրենք և ազգին իրավունքներն անոնց ձեռքն կը հանձնենք, բարկացավ և Մկրտիչ Տիգրանյանը, պատիժներուն նախապահը, ղրկեց որ խրատվինք, թեպետև մենք այս պատիժն ալ առ ոչինչ դրելով շարունակեցինք և կը շարունակենք մեր ընթացքը։

Մկրտիչ եպիսկոպոսին աշխարհ գալուն բուն պատճառն մեր ընթերցողներուն հայտնելն ևաքը, պարաք կը սեպենք անոր քանի մը մականուններն ալ հոս հիշել, որպես զի ուրիշ Մկրտիչներու հետ չշփոթին յուր անունը։

Մկրտիչ եպիսկոպոս Տիգրանյան պոլսեցիներեն կանվանվի հրաշագործ. Հայաստանի մեջ քյուրտերեն կը հորջորջվի շամմաս նուրուպ, որ կը թարգմանվի ապուրի վարդապետ, լուսահոգի Հակոբ պատրիարքին կը կոչվեր յոթն փորձանք, զորս արդի վկհափառ Գևորգ կաթողիկոսն մեր ազգին համար բավական չհամարելով՝ փորձանք մ'ալ ինք ավելցուց եպիսկոպոսության աստիճան տալով անոր։

Արդ, Մկրտիչ եպիսկոպոսը ծնած է Տիգրանակերտ, 1815 թվականին։

Ի ծնե վառվռուն և բարեկարգության սիրահար գոլով՝ վայրկյան մը հանգիստ չէր մնար։ Շարաթին երեք անգամ տունը կը լվար, կը մաքրեր, կավիճ, պատին վրա բևեռ մը գամելու համար տանը հիմերուն բևեռները կը քակեր բարեկարգելու համար տունն, որ վանքերեն ավելի հաստատ հիման վրա շինված ըլլալուն պատճառավ չէր կործանվեր։ Մայրն զավակին ըրած բարեկարգություններեն ձանձրանալով՝ բռնեց ղինքը Կոնոնոսի վանքը ղրկեց։

1827-ին կը մտնե Կոնոնոսի վանքը։ Բավական տարիներ հոն կերակրվելեն ետև, ձեռք կը զարնե վանքը բարեկարգելու, իսկ երբ կը տեսնե, որ մեկ կողմեն վանքը հոժարություն ցույց չտար բարեկարգվելու, և մյուս կողմեն վանահայրն հարգը չճանաչեր յուր ծառայություններուն՝ որովք վանքն օրըստօրե ետ ետ կերթար, կը թողու այս ապարակն անիծելով մարդերու ապերախտությունը։ Չվհատիր սակայն, միտքը կը դնե վանք մը փնտռել, ինչպես որ ամեն մարդ գործ մը կը փնտռե ոչ այդ գործով ապրելու, այլ այդ գործը բարեկարգելու համար։

1837-ին Մշո ս. Կարապետի վանքը կերթա։ 1839-ին վարդապետ կը ձեռնադրվի և յուր ապաշխարանքը կը քաշե Կաղ Գրողին օճախին մեջ։— Ավանդություն մը կա թե սատանան տարին քանի մը անգամ այդ օճախը կուգա և անոր մոխիրը կը խառնե և թե այս է պատճառ, որ հիշյալ վանքին մեջ խռովությունն միշտ անպակաս է։ Ուրիշ ավանդության մը նայելով՝ Մկրտիչ եպիսկոպոս այդ օճախին մեջ ապաշխարանք քաշած ժամանակն երբ սատանան կուգա մոխիրը խառնելու՝ ապաշխարողեն վախնալով կը փախչի, և Մկրտիչ եպիսկոպոս կսկսի այս մոխիրը խառնելու։

1841-ին ձանձրանալով վանքին մեջ անգործ մնալե, ճամբա կելնե Քյուրատստանի բարեկարգության համար, ինչպես կը գրե ինք յուր Հայելի գործոցին[3] մեջ, հայելի մը, որ դժբախտաբար շատ լավ կը ցուցնե անոր պատկերը։ Քյուրատստանի բարեկարգության խնդիրն, ինչպես հայտնի կը տեսնվի, Տիգրանյանի օրով ծնած է։ Հայաստանի վանքերուն և Քյուրատստանի բարեկարգության վրա տասներեք հոդվածներե բաղկացյալ կանոնագիր մը կը խմբագրե, և երբ անոնց գործադրությանը պիտի ձեռնարկեր, յուր դեմը կը տեսնե Դոն Քիշոտի[4] օդային ախոյանները, որոնց դեմ թեպետև քաջությամբ կը կռվի, բայց հաղթվելով ետ կը դառնա։

Այս պարտությունն ղինք սորը Հովհաննեսի վանքը կը նետե։ Եվ որովհետև առանց պարտքի վանք չըլլար, այս վանքն ալ ուներ իրեն պարտքերն՝ որոնց վճարման համար վանահայրեն կաղաչվի Մկրտիչ եպիսկոպոս՝ երթալ Պաղդադ ու Պարսկաստան հանգանակություն ընել։ Տիգրանյան ո՛չ միայն Պաղդադ ու Պարսկաստան կերթա, այլ Կիլիկիո կողմերն ալ երթալով ցամաքեն Պոլիս կուգա 1844-ին՝ միշտ հանգանակելով։

Հանգանակությունը գոհ չըներ նորին գերապատվությունը, որ կը փափաքի Քյուրատստանի—Հայաստանի չհասկնաք—տղաներ դաստիարակել, Պատրիարքեն կոնդակ մը կառնե, ուրիշե մ'ալ ուիը հազար դահեկանի արժողությամբ դասագիրք նվիր առնելեն ետքը հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո կսկսի նորեն հանգանակության Նիկոմիդիայեն ցամաքեն մինչև Տիգրանակերտ, ուր կը հասնի 1845-ին։ Ինք ալ իբրև Քյուրատստանի տղա, դաստիարակության պետք ունենալով, բնական էր, որ անբաժ չմնար հանգանակած գումարեն։ Յուր խոստովանությանը նայելով՝ ամբողջ Քյուրատստանի մեջ վարժարաններ կը շինե... օդի մեջ։ Սիլվանա մեջ կը փափաքի վարժարան մը հաստատել... գետնի վրա. բայց այս գործը քիչ մը դժվար ըլլալով փափաքն չկրնար իրականացնել, մանավանդ թե Սիլվանաբնակ ազգայիններն հայերեն չէին գիտեր, անխնամ, անհովիվ և անտերունչ մնացած էին։ Այս Ժողովրդյան համար հասարակորեն կըսեն եղեր.

Պաղ ջուրը կուգա մեծ Սիլվանա
Գեշ քրթու տղան է սև սատանա.

Ա'ռ բուրդ բամբակը շուտով մկրտե։
Կուզե հայ մնա, կուզե թրքանա։

Այնպիսի գեղի մը մեջ, որուն վրա ասանկ ոտանավոր մը կը գրուցվի, վարժարան բանալը հայտնի է թե որչափ դժվար գործ մ'է, լավ չենք հիշեր

Սղերդի՛ մեջ թե երազին մեջ ալ վարժարան մը կը բանա. սակայն լավ կը հիշենք, որ Սղերդի մեջ են եզիդի աղանդավորները, որոնք սատանային դեշ չեն ըսեր եղեր։ Դիտողության արժանի է, որ հիշյալ աղանդավորները Մկրտիչ եպիսկոպոսին վրայոք ալ գովեստով կը խոսին։

Սակայն մարդը հանդիսատ չեն թողուր, որ ամեն բան կարդարե։ Մշո և Տիգրանակերտի առաջնորդներեն առնված տեղեկություններուն վրա Պատրիարքարանեն հրաման կերթա, որ կոնդակն Մկրտիչ եպիսկոպոսին ձեռքեն առնվի և ինքն ալ վանքի մեջ բանտարկվի։ Մկրտիչ եպիսկոպոս կիմանա այս լուրն, և փոխանակ ձերբակալվելով վանք տարվելու, հոժար կամքով անձնատուր ըլլալու համար ճամբա կելնե, սակայն ճամբան մոլորելով Մշո վանքը երթալու տեղ Կ. Պոլիս կուգա երկրորդ անգամ 1845-ին։ Ս. պատրիարքին կը ներկայանա և կը հարցնե թե ի՞նչ են իր հանցանքները։ Պատրիարքն՝ որ դիտեր թե յուր հարցման պատասխանելը անօգուտ էր, դուրս հանել կուտա գինքը։ Ամիրաներն, որ շատ անգամ գործերն անուշությամբ կարգադրելու սկզբունքին կը հետևին, Քյուրտասանի վեց վանքերու անկախ առաջնորդ կանվանեն Տիգրանյանն, որ կոնդակն առնելուն պես ճամբու պատրաստության կը սկսի։

1846-ին ճամբա կելնե...դժբախտությունն ալ նեռեն։ Խնուս Այրոզ դյուղն իջած էր, ուսկից Մուշ պիտի երթար, և ահա քանի մը անձեր կը ձերբակալեն գինքը, զրպարտելով թե մահաղին մեջը բողոքականի գիրքեր գտած են, և դանակոծելով կը բանտարկեն Ավագի Օվեի ախոռին մեջը։ Քսան օրեն եպրը ախոռեն կը հանեն և երբ Ս. Կարապետի վանքին մեջ բանտարկվելու համար ճամբա կը հանեն, բարեկամ քյուրտերն կազատեն գինքն ու կը հանձնեն կառավարության, որ Կարին կը ղրկե զայն՝ հոն գտավելու համար։ Ինքը կը փափաքի Ս. Հովհաննու վանքն պատվել յուր ներկայությամբը, իսկ երբ կը լսե, որ կապանքով Ս. Կարապետի վանքին մեջ պիտի պատվասիրվի, կը փախչի. բայց կը ձերբակալվի, Մուշ կը բերվի, Մուշեն ս. Կարապետ կը ղրկվի, ուր կը բանտարկվի ութսուն օր։ Յուր բանտարկության այս շրջանին մեջ կը թարգմանե Ավետարանն քրտերենի. որպեսզի քրտերեն դիտցող ազգայիններն ալ հասկնան Ավետարանի հոգին և իրեն օրինակին չհետևին։ Բարեկամները կերթան և կը հաջողին այս հալածյալ առաքյալն բանտեն հանելու։

1847-ին երրորդ անգամ Պոլիս կուգա։ Մայրաքաղաք հասնելուն պես պատրիարքարանն իրեն պատիվ ընելու նպատակով, երկու մարդ կը ղրկե, որոնք կընկերանան նորին գերապատվության մինչև Փրկիչ[5], ուր կը բանտարկվի տասնըհինգ օր և ուր խեղճին մախաղեն կը գողցվի հազար յոթը հարյուր դահեկան զոր չուներ։

Սակայն գործող մարդ մը բանտին մեջ չկրնար երկար տեն մնալ. ուստի այս անգամ ալ բանտեն ազատվելու համար կառաջարկե որ Հայաստան գա-

նա և Մարաբաս Կատինա Հայոց պատմությունը գտնե։ Ամիրային մեկն այս առաջարկությունն ընդունելով դրամ կուտա իրեն, որ երթա գտնե այս Ազգային Պատմությունը զոր՝ թեպետև գտած կը համարի Տիգրանյան զրամը զրպանը նետելուն պես, սակայն նորեն ճամբա կելնե։

1852-ին յուր ըրած ազգօգուտ գործերուն համար նորեն Պոլիս գալու համար հրավեր կընդունի, որուն վրա կելնե չորրորդ անգամ Պոլիս կուգա, բայց նորեն օձիքը կազատի և վարպետությամբն ինքզինքն Յոզղատի առաջնորդ ընտրել կուտա։ Հավիվ թե յուր պաշտոնատեղին կերթա, պատի խնդիր մը կը հարուցանե հոն և հինգերորդ անգամ Պոլիս կը բերվի։ Այս անգամ քիչ մը խիստ կը վարվի. ազգային վարչության դեմ բողոքող ազերսագիր մը կուտա Կայսեր։ Կառավարությենեն հրաման կերթա պատրիարքարան, որ սրբազան պատրիարքը Բ. Դուռն երթա և Տիգրանյանի հետ դատվի։ Ամիրաները գործին կը միջամտեն և մեծ նեղությամբ կը հաջողին ազգին իրավունքները պաշտպանել Տիգրանյանի դեմ, որ ազգին իրավունքներն պաշտպանելու նպատակով դատ բացած էր ազգին պատրիարքին դեմ։ Պատրիարքարանն այն ատեն կը համոզվի, որ անկարելի է այս փորձանքին հետ վարվիլը։ Քյուրտրատան կը ղրկեն զայն. բայց Հոն ալ նորեն մոխիր խառնելով կատիպ պատրիարքարանն, որ գինքը Պոլիս բերել տա. ուստի 1858-ին վեցերորդ անգամ մայրաքաղաք կը մտնե։

Այս թվականին Սամաթիո Ենի Մահալեի քարոզիչ կը կարգվի. բայց քարոզչությամբ չկրնալով ապրիլ, կսկսի հրաշագործության։ Կաղեր, կույրեր, խուլեր, համրեր, այսահարներ, անդամալույծներ կը բժշկեր։ Ամեն օր հիվանդներ կերթային իրեն։

— Հայր սուրբ, իմացանք որ դուք ամեն ցավերը կը փարատեք։

— Հրամեր եք, օրհնած։

— Քանի մը շաբաթե ի վեր գլխու ցավ ունիմ, կուզեմ որ փարատեք։

— Գլո՞վդ թե ցավդ։

— Գլուխս, հայր սուրբ, գլուխս։

— Շատ լավ, ինձի համար երկուքն ալ միևնույն բանն են։ Ձեկուր խաչահանդիսատ մը ընեմ։

Մարդը կը մեկնի և քանի մը ժամեն եպրը անդիի աշխարհը կերթա։

Երկրորդ մը կը ներկայանա.

— Հա՛յր սուրբ, սենյակին պատուհանը կոտրեցավ։

— Պատուհանը հոս բեր, վրան բժշկության ավետարան մը կարդամ։

Երրորդ մը.

— Հա՛յր սուրբ, մազերս կը թափվին։

— Այս ջուրով գլուխդ լվա՛։

Ջորրորդ մը կը մտնե.
— Հայր սուրբ, անձրև եկած օրը սենյակս կը վազե, ի՞նչ ընեմ։
— Այս ջուրեն քիչ մը դի՛ր սենյակիդ վրա։
Պատրիարքարանեն մեկը.
— Հա՛յր սուրբ...
— Այս ջուրեն ա՛ռ։
— Պատրիարքը ղրկեց զիս...
— Պատրիարքին ալ այս ջուրեն։
— Ձեզի ըսելու որ...
— Ձեզի ալ այս ջուրեն։
— Քիչ մը...
— Այս ջուրեն։
— Պատրիարքարան հրամմեք։
— Պատրիարքարանի ալ այս ջուրեն։
— Եթե չի գաք...
— Եթեին ալ այս ջուրեն։
— Նորեն բանտ պիտի երթաք։
— Բանտին ալ այս ջուրեն։
— Եթե ընդդիմանաք՝ ոստիկանության ձեռքով...
— Ոստիկանության ալ այս ջուրեն։
— Պիտի բերվիք Փրկիչ։
— Փրկիչին ալ այս ջուրեն։
— Կառավարությունը...
— Կառավարության ալ այս ջուրեն։

Վերջապես ամեն ցավերն այս ջուրով կը բժշկեր։ Միայն այսահարներուն փորեն դևերը կը հաներ, սակայն չկրնալով միշտ խոզեր գտնել, որ անոնց ղրկե, շատ անգամ յուր փորին մեջ կը հյուրընկալեր դևերը առժամանակյա կերպով։ Պատրիարքարանն թեպետև կաշխատեր անոր արգելուլ տուներու մեջ մտնելն, բայց այն ատեն ամեն տուն հետաքրքրության համար հիվանդ գտնվելով, չէր կրնար առաջքն առնել։

Մեկ կողմեն հրաշք կը գործեր, մյուս կողմեն միշտ հանգանակություն կըներ։ Ազգային և քրտերեն գրականությունը կը ծաղկեցներ։ Քրտերեն Քերական, Լապտեր, Լուսատու և Ընթերցարան տպել կուտար և տպագրության ծախքը ժողովրդեն կառներ։ Երբեմն տպարանին չէր վճարեր ծախքը, երբ տպարանապետեն երթար ոտք կոխեր և ստակ ուզեր այս ջուրեն ըսելով անոր ալ ջուր կուտար։

Բավական ժամանակ հրաշագործությամբ ապրելեն ետքը 1861-ին Բալուի

առաջնորդության կատանձնեն։ Պաշտոնատեղին երթալեն քանի մը ամիս ետքը յուր փորրավորը ճամբա կը դրվի Պոլիս գալու համար, և զարմանալի զուդադիպությամբ մը փորրավորին կինն ալ նույն օրը Պոլիսեն կը մեկնի Բալու երթալու համար։ Լրագիրներու մեջ գոռում գոչոմը կըսկսի։ Տիգրանյանը կզդա որ նորեն մոխիր խառնած է, գիրք ցրվելու համար Բալուեն...կը փախչի։ Բ. Դռնեն հրաման կը տրվի Բալուի կառավարության, որ Տիգրանյանը Պոլիս ղրկե։ Կը լսե այս լուրը, Կարին կը փախչի, Կարինեն էջմիածին, ուր կաթողիկոսն զինքը չընդուներ և կստիպվի վեցերորդ անգամ Պոլիս դառնալ 1863-ին։ Հանձնաժողով մը կը կազմվի, որ յուր հանցանքները քննելով տեղեկագիր մը պատրաստե։ Հանձնաժողովը նկատելով, որ տեղեկագիրն տասը հատորի բարձրացավ և հանցանքներուն վերջը գալիք չունի՝ հրաժարեցավ պաշտոնեն։

1866-ին Հալեպի առաջնորդ անվանվելով Զեյթուն կը ղրկվի՝ հոն ծագած խռովությունները հանդարտեցնելու համար։ Զեյթուն մտնելեն երկու ամիս ետքը հինգ տղա կառնե հոնկից և անոնց դաստիարակությանը համար կսկսի ժողովրդեն դրամ հավաքել։ Հիշյալ հինգ տղաները առջեր ձգած եգիպտոս կերթա, հոն ալ բավական հանդանակություն ընելեն ետքը Իզմիր կուգա, Իզմիրեն Պոլիս միշտ հանդանակելով—շոգենավի մեջ ալ։—Պոլիս Ալի փաշային կը ներկայացնե տղաները, որոնց երգ մը երգել կուտա և հիասն ոսկվո դրամար մ'ալ նորին բարձրությենեն ընդունելով, տղաներն իրրև աղքատ ձրիաբար Փրկիչ կը դնե, և Հալեպի ժողովուրդը հոգևորապես մխիթարելու համար նորեն ճամբա կելնե դրամ հավաքելու։

1868-ին եպիսկոպոսանալու համար հանրագրություններ պատրաստել կուտա և էջմիածին կը մեկնի, ուր եպիսկոպոսության աստիճան կընդունի։

Դարձյալ Պոլիս կը դառնա և Զեյթունի խնդիրը կարգադրելու համար պարագ ըրած կարծելով՝ ստակ ժողվելու համար կոնդակ մը կառնե և Ռումանիա կուղևորի։ Բավական դրամ մը կը հավաքե, սակայն երբ Պոլիս կուգա և համար կը պահանջվի իրմեն՝ հաշվո տետրակները Պատրիարքարանի մեջ հրաշքով կը կորսվին և ինքն ալ ազատ կը մնա հաշիվ տալե։

1872-ին Տիգրանակերտ կը քաշվի քիչ մը հանգստանալու համար, բայց որովհետև երկար ատեն չի կարող հանգիստ նստիլ, Մշո դաշտը կելնե և որչափ կույր, կաղ, խուլ, համր մարդեր որ կը տեսնե, ամենն ալ քահանա կը ձեռնադրե ի վառս Հայաստանյայց եկեղեցվո։ Այս ձեռնադրություններուն պատճառը հարցվելով կը պատասխանե թե՝ այս խեղճերն արդեն քառասուն օրե ի վեր բան մը կերած չըլլալով՝ իրենց ապաշխարանքն քաշած էին և հետևապես իրավունք ստացած էին քահանա ձեռնադրվելու։ Պատրիարքարանը կսպառնա. Տիգրանյան կը ծիծաղի, բայց վերջապես օր մը կը ձերբակալվի ծափ մը տակ եղ մը քահանա ձեռնադրած ժամանակը։ Սակայն անմիջապես

թողլով նորընծա եղն, որուն փիլոն ալ տված էր, կանոներնութիանա... անտառներուն մեջ։ Երբ Նեսթոս արքեպիսկոպոս պատրիարքական դահուն վրա կը բարձրանա՝ կը դրե վեհափառ կաթողիկոսին, որ շնորհ ընե և հրաշագործն յուր իշխանությանը տակ առնե։ Վեհափառ կաթողիկոսն՝ որուն ավելի արժանի էր յորն փորձանքն՝ չուզեր զայն յուր քովն պահել՝ հայտնելով թե ինք արդեն բավական ունի անոնցմե։ Տիրանյան տեսնելով, որ աղդն դժվարություն կը հարուցանե յուր վրա փորձանք հրավիրելու մասին՝ առանց հրավերի կելլե գարձյալ Կ. Պոլիս կուգա, ուր կը դանվի այժմ Սամաթիո սուրբ Կարապետ եկեղեցին քարոզչության պաշտոնով։

Այս է ահա հրաշագործին կյանքը՝ որուն մեկ քառորդն անցած է ճամբորդության մեջ, մեկ քառորդը բանտերու մեջ, մեկ քառորդը մոխիր խառնելու մեջ և մյուս քառորդն ալ ստակ հավաքելու մեջ։

Շատ բաներ գրված և գրուցված են այս անձին վրա։ Լրագիրները հրատարակած են երբեմն, որ իր փորրավորներեն մին, ընդհանուր սովորության համեմատ, շրջագդեստ հագնելու տեղ սխալմամբ բանբալոն կը հագներ։ Շատերը պոռացին այն ատեն՝ թե այդ փորրավորն իգական սեռն էր, բայց ինքը հերքեց այդ գրպարտությունն սա փաստերով, թե հագուստը հոդ մ'է. բանբալոնը արական գոյականներու վրա կը գրվի, իսկ շրջագդեստն իգականներու վրա. ուստի քանի որ յուր փորրավորն բանբալոն կը հագնի, քերականության կանոնին համեմատ արական է և ո՛չ իգական, սակայն խմբագիրներն, որ քերականությունը շատ չեն հարգեր, այս բացատրությունը գոհացուցիչ չգտան։

Հրաշագործն դիտնական մ'է, սակայն շատ խնդիրներու մեջ կը տարբերի դարուս մյուս դիտուններեն։ Օդը չէ որ, կըսե, շրջապատած է մեր բնակած երկրագունդն, այլ խարեությունն, որ՝

Անոսր է, վասն դի հաշիվներու ամենափոքր մասերու մեջ կրնա մնալ։

Տարածական է, վասն դի պարագաներու համեմատ յուր նախկին ծավալեն ավելի մեծ ծավալ կրնա ունենալ։

Թափանցիկ է, վասն դի շատ մը կրոնավորներ անոր մեջեն կանցնին։

Առանձական է, վասն դի կրնա ճնշվիլ պատրիարքարանեն, բայց նորեն յուր առաջին ծավալը կառնե։ Գիտնականության շնորհիվն է, որ մինչև այսօր այնչափ պաշտոն վարեց, և մոտերս Պաղդադու առաջնորդ պիտի անվանվի այնտեղի ազդայիններն առաջ տանելու համար։

Ոմանք կուզեն հավատացնել թե հրաշագործն, որուն ճակատեն վաթսունհինգ շնիկ ասող[6] անցած է, ազդն ա՛յնչափ տարիներ զբաղեցնելու վրա շատ զղջացած է և թե որոշած է փորձանք ըլլալ այն ամեն անձերու, որոնք ազդին շահն ոտնակոխ ընել կուզեն։

Մկրտիչ եպիսկոպոս Տիրանյան միջին հասակով, թուխ գեմքով և փոքր աչերով մարդ մ'է։ Փողոցը գնացած ժամանակն այնպիսի ուշադրությամբ կը նայի մարդու երես, որ կստիպվիս ձեռքդ բաճկոնիդ տանելու՝ նայելու համար թե ժամացույցդ քո՞վդ է։

Ենե յուր գեմքն կարելի ըլլա կննդանի գույներով նկարել՝ մեր առջև կունենանք պատկեր մը, որ կարծես մեզի կըսե. կը բարեհաճի՞ք ձեր քսակն անուշությամբ ինձ տալու, որպեսզի ձեզի քահանա ձեռնադրեմ։

Յուր ամենեն նշանավոր կարծիքներեն մին է բոլոր աշխահականները կրոնավոր ընել։ Այս եղանակով, կըսե, աշխարհականները հոգևորապես մխիթարվելու համար քահանաներու դիմելու հարկ չեն ունենար և իրենք գիրենք կը մխիթարեն։ Այս համոզմամբ է, որ չորս հազարեն ավելի քահանա ձեռնագրած է։

ՀՈՎՍԵՓ ՇԻՇՄԱՆՑԱՆ

1820 թվականին—Քրիստոսե ետքը, Հասունյանե առաջ—Աբբայան վարդապետները՝ Հայ եկեղեցին կուգային և իրարմե բաժնված եղբայրներու մեջ սեր և միություն քարոզելով հերետիկոսություն կը տարածեին։ Աբբայաններուն այս ընթացքն, որ թեպետև համաձայն էր Քրիստոսի տեսական ավետարանին, բայց տարաձայն ըլլալով սրբազան պատին գործնական ավետարանին՝ կատաղությունը հրավիրեց Քոլեճյաններուն[2], որոնք Վատիկանու ավետարանը կը գործածեն միշտ իբրև լավագույն դաստիրը... ժողովրդյան մեջ երկպառակություն ձգելու։ Ուստի Քոլեճյան կուսակիցներեն դաղատացի մը հայ կը ձևանա և կսկսի կեսարացի կոշկակարներուն խանութները պտտիլ՝ ծոցն ունենալով սրբազան պատին մեկ պատկերը։—Բայց ոչ այն ծիծաղաշարժ պատկերներեն, որոնք այսօր գրավաճառներու քով կը վաճառվին և պապերը կը ներկայացնեն կամ սեղանի մը առջև նստած օղի խմելով, կամ պատի մը ծակեն կին մը... խոստովանանք ընելով։—«Ինչո՞ւ անհոդ նստած եք, եղբայրներ, կը պոռա անոնց, պատրիարքը Լուսավորչին ուրացավ և պապն ընդունեց, տեսեք այս պատկերը, Լուսավորչին կը նմանի՞։ Ալ ասկե ետքը սրբալույս մյուռոն չկա, մեր զավակները կամ ձեռով պիտի օծվին կամ ձկան յուղով։ Լռելու ժամանակ չէ, ոտք ելեք, ո՛վ կոշկակարներ, և պաշտպանեցեք Լուսավորչին... կոշիկները»։ Այս բեմբասացության վրա կոշկակարներն ուրիշ ընկերներ ալ կը գտնեն, հետևյալ օրը պատրիարքարան կիջնեն և ազդը տակն ու վրա կընեն։ Խռովահույզ գաղատացին, որ ամեն տուներ կը մտներ՝ գիշեր մը

կը գտնվի տան մը մեջ, ուր ներկա էր նաև Շիշմանյանի մայրը։ Հոն երբ կսկսի պատմել յուր ըրած մեծագործությունները, և ահա ձայն մը կը լսվի, որ կ'ըսեր, դուրս վռնտեցեք այս մարդը։ Ամենքը շվարած իրարու երես կը նային։ Նորեն ձայն։ Նորեն շվարում։ Երրորդ անգամ լսելի կըլլա ձայնն։ Այս անգամ ուշադրություն ըրած ըլլալով՝ կը հասկնան, որ ձայնը Շիշմանյանի մորը նստած կողմեն կուգար և կը վճռեն թե այդ տիկինը որովայնախոս է։ Հարկ չէ կարծեմ հերքել այդ վճիռը, ամենքդ ալ գուշակեցիք արդեն, որ տիկինը որովայնախոս չէր, այլ Հովսեփ Շիշմանյանն էր, որ Քոլեճյաններուն ըրածները լսելով սաստիկ հուզված էր, և ահա այն պիշերն աշխարհ կուգա Հովսեփ յոթն ամիս մորն արգանդին մեջ մնալեն ետքը։ Եթե այս դեպքը չպատահեր՝ հավանական էր, որ տասնևութ ամիսեն ծներ, վասն զի ամեն պինդը ճանաչողները գիտեն արդեն, թե որչափ ծանր կը քաշվե... յուր հոդվածներուն մեջ, կամ բնավ չէր գար աշխարհ եթե Հասունյանի մը աշխարհ եկած ըլլալն առաջուց գիտնար, վասն զի շատ անգամ հայտարարած է թե՝ Հասունյանի գտնված տեղը ես գործ չունիմ[3]։

Կարծես Հռոմա եկեղեցին բարեկարգելու պաշտոնով ղրկված էր աշխարհ, ինչպես Պեյքըր փաշան Հայաստան ղրկվեցավ, Հայաստանի քյուրտերըն ի կարգ հրավիրելու համար. վասն զի լույս տեսնելուն պես սկսավ հարվածել յուր կրոնքը։ Մայրն երբ կը տեսներ, որ դավակն այնչափ հակակրություն կը սնուցաներ կյանքին դեմ, օրհնյալ ջուրով արարող կեներ և կը կերցուներ իրեն։ Ջո՜ւր ջանք։ Երբոր չորս տարեկան եղավ, թաղին բոլոր տղաները ժողվելով անոնցմե բանակ մը կազմեց Հռոմա գահը տապալելու համար։

1835-ին Վենետիկի վանքը ղրկվեցավ, որ վարդապետ ըլլա։ Հովսեփ ձայն չհանեց և պետք եղած ուսումն և գիտություննն առնելեն ետքը՝ հայտնեց թե վարդապետության հարմարություն չուներ, թե աշխարհական մնալ հարկ էր իրեն, որպեսզի դյուրավ կարենար յուր եղբայրներն աղատել Վատիկանու... Փարավոնեն։

1844-ին Կ. Պոլիս Միջագյուղի ս. Լուսավորչյան վարժարանին մեջ դասատու կարգվեցավ հայերեն և ֆրանսերեն լեզուներու։ Այս պաշտոնն առիթ տվավ իրեն, որ պապերն ամեն օր հարվածե... աշակերտներու առջև։ Վարժության համար ինք կը պատրաստեր օրինակներ, որոնց մեջ անպատահաճ պապ մը պիտի ապտակվեր։

1846-ին դեղագործություն սորվելու համար դեղագործի մը քով գնաց։ Յուր մտքին այն հատկությամբն, որով ամեն բան շուտ կըմբռնե, քիչ ժամանակի մեջ գործնականապես սորվեցավ դեղագործության արհեստը։ Եվ որովհետև մեղք կը համարեր գերապայծառ Հասունյանը հարվածելու համար առիթ փախցունելը, դրդռիչ դեղերու ամաններուն վրա Հասունյան կը գրեր՝ կը

պատմվի թե օր մը բժշկի մը մեկ դեղագիրը կը պատրաստե և հիվանդին կը հանձնե դեղն, որ զորավոր լուծողական էր։ Մարդը տուն կերթա, դեղը կը խմե և արդյունքին կսպասե։ Ջորս ժամ կանցնին. դեղն յուր զորությունը չցցուներ։ Վեց ժամ կը սահին, դեղն անզոր է, կարծես պատրիարքարանն Բ. Դուռը ղրկված թահրիր մ'է, բնավ ազդեցություն չըներ և վերջապես մարդը կստիպվի դեղարան երթալ և Շիշմանյանի հարցունել.

— Եղբայր, տված դեղդ ի՞նչ էր։

— Դեղագրին մեջ գրվածն էր։

— Բնավ ազդեցություն չըրավ։

— Անկարելի է։

— Բժիշկն ըսած էր թե այդ դեղը ուժով էր...

— Այո՛, լուծողական դեղերուն մեջ ամենեն զորավորն է։

— Ինչո՞ւ չազդեց ուրեմն։

— Ի՞նչ գիտնամ... Հասունյանի մատն ըլլալու է այս գործին մեջը։

Մարդը ծիծաղելով կը մեկնի։ Շիշմանյանը քանի մը ամիս ետքը կիմանա որ լուծողականի տեղ պնդեցուցիչ տված էր, որ Աննմանի[4] դրությամբ պետք էր լուծումն տալ։ Վասն զի բժշկական երկու դրություններու համեմատ միևնույն դեղը թե՛ քուն բերող է և թե՛ քուն փախցնող, քնացողին քունը կը փախցունե. օրինակի համար, եթե մեր Ընդհանուր ժողովին տրվի՝ իսկույն կարթննա, բնավ չքնացողին ալ քունը կը բերե, կարծես ավետաբեր մ'է, այս աստիճան զարմանալի հատկություններ ունին այս դեղերը։ Բայց մենք թողունք բժիշկներն իրարու գլուխ պատռել և դառնանք մեր պատմությանը։ Շիշմանյան քաջալերվելով այս գործած սխալեն՝ որուն համար պատիժ մը չկրեց, միտքը դրավ Բարիզ երթալ և բժիշկ ըլլալ։ Սակայն մարդս մտքին մեջ բան մը դնելով ամեն ուզածը չկրնար ընել, պետք է գրպանին մեջ ոսկի դնել։ Շիշմանյան գրպան ուներ, բայց ոսկի չուներ և կը խորհեր թե ի՛նչ հնարքով կարելի էր հասնիլ առաջադրած նպատակին։ Հանկարծ խորհուրդ մը հղացավ. այն է Բարիզ Մուրատյան[5] վարժարանին մեջ դաս տալ և բժշկական դպրոցին մեջ դաս առնել... Ճիշտ կրկնատոմարի դրությամբ։ 1848-ին Բարիզ ուղևորվեցավ և սկսավ գործադրել ինչ որ առաջադրված էր։ Տված դասերովը կապրեր, իսկ առած դասերովն օր մը ուրիշներն պիտի ապրեցուներ։

Քանի մը տարիան մեջ մեծ հառաջադիմություն ըրավ բժշկության մեջ. մանավանդ ջղային ճյուղին մեջ այնչափ հառաջ գնաց, որչափ դացին մեր... փոխառությունները։ Կատարյալ բժիշկ ըլլալեն ետքը դպրոցեն ելավ և, ինչպես որ սովորություն է, թեզ մը գրեց, որուն մեջ խոսեցավ ազգային միության վրա։ Վարժարանեն նոր ելած բժիշկի մը բերնեն առաջին անգամ ազգային միություն բառերը լսվելուն պես՝ շատերն զարմանքով իրարու հարցնել

սկսան թե՝ առողջարանութեան հետ ի՛նչ վերաբերութիւն ունի ազգային միութիւնը, սակայն վերջին համոզվեցան թե ազգերն ալ ապրելու համար միութեան դեղի պետք ունին։

Վկայականը ծոցը դնելուն պես եկավ Պոլիս եկավ 1853-ին։ Ոսմիկանութեան բժիշկ եղավ։ Ամեն օր մարդասպաններուն գտնված սենյակը կերթար, և անշուշտ քանի մը մարդ ալ ինքը կսպաններ... որովհետև ամեն հիվանդ չբժշկվիր. և ինչո՞ւ չսպաննե, քանի որ վկայական ունի։ Մեր ազգայիններն, որ ամեն օր լրագիրներու մեջ կը կարդային մարդասպան բյուրոներու ըրած սպանութիւններն՝ կըսեին իրենց մարին. ան, բշվառականներ, Շիշմանեանի պես մեկը ղրկելու է ձեզի։ Բայց Շիշմանյան, որ պատմագետ, գրագետ և առենարան էր՝ բնավ չէր փափաքեր բժշկական ասպարեզին մեջ փայլիլ, ինքը միայն իրարմե բաժնված եղբայրներն ինչ կերպով միացնելու վրա կը խորհեր։ Արդեն 1851-ին նամակ մը գրելով Հ. Գևոնդ վարդապետ Հովհաննյանցին, հայտնած էր այս բաժանումը վերցնելու համար իր կարծիքներն, զորս բառ առ բառ կը տառադրենք հոս.

«Նախ ազգին մեծ մասը պզտիկ մասին հետևցնել, այսինքն բոլոր հայ ազգը պապական ընել.

Երկրորդ՝ ազգին պզտիկ մասը մեծ մասին հետևցնել, այսինքն բոլոր հայ ազգը էջմիածնա կաթողիկոսի հնազանդեցնել»։

Այս երկու ճամբաները ցույց տալեն ետքը, ազգին մեծ մասը պզտիկին հետևցնելու համար անկարելիութիւն կը տեսներ. վասն զի, կըսեր, ազգին մեծ մասը ինքնիրեն մնալով ազդ մը կրնա ձևացնել, երբ պզտիկ մասը աննշան և անանուն ժողովուրդ մը կրնա մնալ և ոչ տապանագրի արժանի։ Այս տողերեն կուզեր հասկցնել Շիշմանյան, որ եթե ազգին պզտիկ մասը մեծ մասը ըլլար՝ առաջին ճամբան գործադրելի պիտի առաջարկեր, այսինքն բոլոր հայ ազգը տանիլ հանձնել Հռովմա աթոռին և դժբախտ բաժանման պատճառն վերցնելու համար, ամբողջ հայ ազգը վերցնել աշխարհեն... ազգը միացնելու համար։ Եվ որովհետև այս տեսակ միութիւնը շատերու ճաշակին դեմ էր, ծոզ տվավ առաջին ճամբան և փութաքեցավ, որ պզտիկ մասը առնե, վրան քիչ մը սոսինձ քսե և բարակ թելով մը մեծ մասին փակցունե, ինչպես կը փակցունեն հրեաները կոտրված հողե ամանները։ Կը վռնտեր ժամանակին և անոր պաշտոնն իր վրա առնել կուզեր, և երբ կրիա մնալ հարկ էր իրեն՝ նապաստակի պես կը վազեր։ Կը կարծեր, թե համոզումներն մարդերու պես են և թե քիչ մը նեղվելուն պես անմիջապես կրնան ամենը մեկեն մեկ կրոնքե ուրիշ կրոնք մը գաղթականութիւն ընել՝ ինչպես կընեն մարդեր մեկ քաղաքեն մյուսը, մինչդեռ ամեն օր կը տեսնենք, որ կաթիլ մը օղի չենք կրնար խմցունել այն մարդուն, որ Ռոնյահեն ճաթելու մոտ է և այնպես համոզված է՝

թե Ռոնյահով կրնա... արքայութիւն երթալ։ Ազգային միութեան համար ունեցած անհաղթ սերն էր, որ ատանկ կարծիքներու մեջ կառներ կը նետեր զինքը, և համարձակաբերյուն կուտար իրեն վատ անունը տալ Թղլյանի, որ հակասութեան մեջ գտնված ըլլալն լրագիրներու մեջ հրատարակելեն ետքը, կուգար հայ պատրիարքարանի իրավասութեանը ներքև կը մտներ։ Մինչև մոտ ատեններս կը հավատար, որ Հռովմա գահը, որ բողոքականութիւնը ծնած է, Շիշմանյանին ատենաբանութիւններն նկատողութեան առնելով պիտի հաճի տիեզերական ժողով գումարել և բարեփոխել յուր եկեղեցին՝ չկորուսնելու համար ափ մը ժողովուրդ, որուն անունը Վատիկանու մթերատետրին մեջ անգամ նշանակված չէ։ Որչափ ատեն որ բախտը ժպտեցավ և Հասունյանի վրա հաղթանակ տարավ, բոլոր հաղթութիւններն յուր կարծիքներուն տվգրեց. իսկ երբ բախտը քիչ մը ծամածռեց ներսը՝ ինքն ալ ստիպվեցավ հրաժարական տալ իր առժամանակյա կարծիքներուն—վասն զի վերջեն հասկցվեցավ, որ մշտնջենավոր կարծիքներ ալ ունի և ազգութիւնը շահելու համար բռնեց այն ճամբան, զոր Թղլյանը բացած էր վերջին տարիներս, և զգացուց իր ընկերներուն, որ պաշարումեն փախչիլը վատութիւն չէ։

1874-ին Միջագյուղի ս. Լուսավորիչ եկեղեցվույն վարժարանին մեջ տնօրենութեան պաշտոն ստանձնեց, զոր կանոնավոր կերպով շարունակեց քանի մը տարիներ։ Ջափազանց ճշմարտախոս ըլլալուն պատճառավ երբեմն կը վիրավորեր աշակերտները։ Աշակերտին մեկը, օր մը խելոք նստած չըլլալուն համար, վարժարանեն արտաքսեց և անոր հորն ալ նամակ մը գրեց գրեթե այս իմաստով.

«... աղա, դուք մարդ չըլլալու համար երդում ըրած եք, մեր վարժարանը հիմարանո՞ց կարծեցիք, հե... ձեր զավակը խենդին մեկն է, և կարծեմ՝ թե դուք ավելի խենդ ըլլալու եք, որ ձեր տղան չեք կրցած քիչ մը կրթել։ Այս օրե սկսելով վարժարանին դռները գոց են ձեր տղուն համար, ուստի կը խնդրեմ, որ զայն նորեն ղրկելու անկրթութիւնը չունենաք. հասկցա՞ք։

Ընդունեցեք, կաղաչեմ, խորին հարգանացս հավաստիքն, որով մնամ ձեր խոնարհ ծառա և այլն»։

Նամակն կատորագրե և ուսումնապետին կը հանձնե, որ տնտեսին հետ ղրկե։ Ուսումնապետը քովը կը պահե նամակը։ Հետևյալ երեկո Շիշմանյան կու գա և կը հարցունե ուսումնապետին.

— Նամակը ղրկեցի՞ր։

— Ոչ, կը պատասխանե ուսումնապետն։

— Շատ խոհեմությամբ վարված ես, վասն զի դրելես ետքը ես ալ զղջացի թեպետև վիրավորիչ խոսք մը չեմ ըսած մեջը, այնպես չէ՞։

— Այո՛...

— Մնաք բարով։

— Երթաք բարով։

Վարժարանի տնօրենութիւն ըրած ժամանակն ալ յուր ժամերուն մեծ մասը Հասունյան խնդրույն կը զոհեր։ Հակահասունյաններու[6] հրամանատարն ըլլալով՝ ամեն բան ինքը կը կարգադրեր և գլուխ քերելու ժամանակ չէր գըտներ։ Շատ անգամներ հիվանդները տունը կերթային և սպասավորեն հետևյալ պատասխանը կառնեին.

— Բժիշկը հոս է, բայց հիվանդ չկրնար ընդունիլ այսօր, վասն զի revերսուրուսի[7] դեմ հոգված շինելու զբաղած է։

Ետ կը դառնային հիվանդներն և իրարու կըսեին.

— Մինչև որ Հռովմա եկեղեցին չբարեկարգվի, այս մարդը հիվանդ նայելիք չունի։

Կը պատմվի, թե օր մը Հակահասունյան բժշկի մը հետ խորհրդակցութեյան կը հրավիրվի հիվանդի մը տունը։ Հիվանդը քննելեն ետքը՝ յուր ընկերին հետ ուրիշ սենյակ մը կը մտնե տրվելիք դեղին վրա խորհրդակցելու համար. նախ Շիշմանյան խոսք կառնե.

— Նստե նայինք։

— Շնորհակալ եմ։

— Ի՞նչ կարծիք ունիք։

— Նախ և առաջ հրամանքնիդ ըսեք։

— Ես կարծեմ թե ա՛լ չհաջողիր revերսուրուսը։

— Ես ալ այն կարծիքն ունիմ, բայց չեմ կարծեր որ...

Տան տիկինը ներս կը մտնե.

— Դեղագիրը գրեցի՞ք։

— Հանդիստ եղեք, տիկին, անոր վրա կը խորհրդակցինք, կը պատասխանե Շիշմանյան։

Տան տիկինը դուրս կելնե։

— Սակայն ինչ որ ալ ըլլա, կըսե մյուս բժիշկը, պարտավոր ենք Հասունյանի դեմ մինչև վերջը մաքառիլ։

— Այո՛, մինչև որ ամբողջ ժողովուրդը հասկնա անոր բռնած ընթացքը։

— Սիկար մը կը շինե՞ք։

— Շնորհակալ եմ, չեմ գործածեր կերակուրի վրա։

— Ճաշ ըրած ե՞ք։

— Այո՛, աղվոր պիֆթեք մը կերա...

Հիվանդին եղբայրը սենյակին դուռը զարնելով ներս կուգա.

— Դեղագիրը կուտա՞ք, գլխին ցավը նորեն բռնեց, կը չարչարվի... կաղաչեմ։

— Հիմա, հիմա, կը պատասխանեն երկու ընկերները։

Այստեղ չպիտի կրնանք խոսիլ, դեղագիր մը տանք ու երթանք։ Մատիսն և թուղթ հանեցեք, տեր բժիշկ, կըսե Շիշմանյան։

— Դուք գրեցեք, քանի որ հիվանդը ձերն է։

— Վնաս չունի, գրեցեք հրամանքնիդ։

— Ինձի չվայլեր։

— Կաղաչեմ։

— Ոտքդ պագնեմ։

— Չեմ ընդունիր։

— Կը բարկանամ։

— Անկարելի է։

Հիվանդին հայրը կը ներկայանա.

— Քիչ մը շուտ ըրեք, կաղաչեմ, ցավեն սիրտ մեռնի։

— Հիմա, հիմա, կը կրկնեն երկու բարեկամները։

— Տղայություն մի՛ ըներ, գրե, որ երթանք ուրիշ տեղ մը խոսինք։

Վերջապես ընկերը կը հավանի դեղագիրը տալու և երկուքը մեկեն դուրս կելնեն, նորեն սկսելով Հասունյանի վրա շարունակել իրենց խոսակցությունը։

Շիշմանյան զգալով, որ ազգային միության խնդիրը շատ գրաված է իր միտքը, կորոշե Պոլսեն քիչ մը հեռանալ և հանգիստ ընել։ 1875-ին Կիպրոս կը մեկնի, ուր տարի ու կես մնալեն վերջը Պոլիս կը դառնա, ուսկից Տփղիս կուղևորվի, նորեն Պոլիս կը դառնա, ուր քանի մը շաբաթ մնալեն ետքը դարձյալ ճամբա կելնե երթալու համար Տփղիս, ուր կը գտնվի հիմա։

Իբրև պատմագետ մեծ համբավ կը վայելե և որուն իրավամբ արժանի է։ Միայն թե պատմության կը դիմե երբեմն այնպիսի խնդիրներու մեջ, ուր պետք էր թվաբանության դուռն ալ առնել։ Երբ ջրավաճառն խաբե դինք և հատակ ու մաքուր ջուրի տեղ պղտոր ջուր տա, Շիշմանյան իսկույն Պատմությունը ձեռք առնելով՝ գավաթ մը ջուրի համար ջրհեղեղին պատմությունն ընել կը սկսի համոզելու համար ջրավաճառը՝ թե Նոյ նահապետին օրով ալ ջրավաճառներուն այսպես վարվելուն համար աստված ջուրին մեջ խղդեց գիրենք, թե եթե շարունակեն ասանկ պղտոր ջուր ծախել՝ անկարելի կըլլա ազգային միությունը, թե պղտոր ջուր ծախելը Հասունյանի հացին եղ քսել է։

Ոչ նվազ նշանավոր հանդիսացած է յուր աւենաբանություններովն, զորս արտասանած է Միջագյուղի լսարանին մեջ[8]։ Ամեն անգամ, որ աւենաբանությունը լմնցներ՝ լսարանին սպասավորը օթյակներուն դռները կը բանար և կարճնցներ անոնց մեջ գտնվող ունկնդիրներն, իմացնելով, թե աւենաբանությունն վերջացած է, թե ազատ են իրենց տուներն երթալու և անկողին

մտնելով հանդիսատ քնանալու։ Ունկնդիրներուն քնանալուն պատճառն այն էր, որ Շիշմանյան էֆենտին լակոնական ոճին վարժեցնել կը փափաքեին։

Ազգային թերթերու մեջ ալ երևցած է, և կերևի երբեմն բուն և երբեմն կեղծ ստորագրությամբ։ Լրագիրներն երկար տարիներե ի վեր մեկ մեկ պատրահանդեսներ դարձած են. հոն դիմակով ալ կընդունվին, առանց դիմակի ալ։ Իսկ ես կը զարմանամ, թե ճշմարտություն խոսելու համար ինչո՛ւ ամչնա մարդ և երեսը դիմակ անցունելու հարկադրվի։ Թե՛ հրապարակի, թե՛ լսարաններու և թե վեպերու մեջ Շիշմանյան էֆենտին աշխատած է և կաշխատի երիտասարդներու սրտին մեջ հայրենասիրություն արծարծել. ուստի յուր խոսքերն միշտ սիրով մտիկ ըլլվելու արժանի են։

Շիշմանյան էֆենտին որչափ ալ ծեր կարծե ինքզինքը՝ դեռ երիտասարդ է յուր զգացումներով, երիտասարդի պես կրակոտ, և երբ կետի մը վրա պնդե՝ քար կը կտրի, բնավ չկակուղնար և վայրկյան մը իրավունք կուտա մեզի հավատալ Տևկալիոնյան[9] ջրհեղեղեն ետքը մարդերու քարերե կազմակերպվելուն։ Ծերի հետ ծեր կըլլա, տղայի հետ տղա և կնոջ հետ կին։ Զվարճախոս է, ընկերություններու մեջ կախորժի կատակներ ընել, իսկ երբ մեկն իր մեկ արարքն հրապարակավ հեգնե՝ կրակ կը կտրի։

Քանի մը տարիներե ի վեր Շիշմանյան էֆենտիին գլուխն յուր արտաքին կարծիքը փոխած է. ֆեսի տեղ գլխարկ կը դնե։ Ասկից հետևցնելու չէ՝ թե ներիքնը փոխած չէ, քանի որ էջմիածնա գիրկը կը գտնվի այսօր։ Մազերն ուսերուն վրա կը ծածանին և բարերարի մը կսպասեն, որ սանտրվին։ Մտավորական աշխատություններն ստիպած են զինքը գլուխը ծռելու, որով միշտ գետինը կը նայի և բարձր նյութերու վրա կը խորհի։ Գրեթե միշտ ի ձեռին ունի հովանոց մը, զոր անձրևի ատեն չբանար, որպեսզի չթրջվի հովանոցը. արեւուն ալ չբանար, բայց երբ դիշեր ատեն լապտերով դուրս ելնե՝ կը բանա հովանոցն, որպեսզի լապտերին լույսն արգելե, որ վեր չելնե։ Թևին տակը միշտ ունի լրագիրներ, թուղթեր և գրքեր, զորս այնչափ տարիներե ի վեր կը կարդա և չկրնար լմնցնել։

Շիշմանյան էֆենտին միջին հասակով, ո՛չ ճերմակ և ո՛չ թուխ դեմքով մարդ մ'է։ Ձայնը հաստ է, եթե օբերայի թատրոնի մը մեջ պասոյի դեր կատարեր՝ հինգ հազար ֆրանկ ամսական կառներ։ Այնպիսի դեմք մը ունի, որ կարծես փոնգտալ կուզե և չկրնար։

ԿԱՐԱՊԵՏ Հ. ՓԱՆՈՍՅԱՆ

Կարապետ Հ. Փանոսյան, խմբագիր-տնօրեն Մանզումաի էֆքյար էսֆենկիզ լրագրո, տեր-տնօրեն Ազապյան տեհշերաթիզ վարժարանի[1], ծնած է

Կեսարիա 1836 թվականին։ Յուր անհամբեր և նեղսիրտ բնավորությունը գիտցողները կրնան գուշակել՝ թե ինն ամսվա մեջ որչափ չարչարած է յուր մայրը, արդյոք քանի քանի անգամներ փախչիլ փորձած է։ Եվ արդարև ինն ամիս արգանդի մեջ բանտարկվիլը մեծ ժամավաճառություն էր Փանոսյանի համար, որ ինը ժամվան մեջ ինը հարյուր փոխառություն և ինը հազար հայհոյություն կրնա ընել։ Ուստի բնավ թերահավատություն ընելու չեք, երբ ըսեմ ձեզ՝ թե Փանոսյան մորն արգանդին մեջ սկսավ խորհրդածել, թե ի՛նչ հնարքով կարելի է որ մարդ մը մորն արգանդին չհանդիպելով ուղղակի աշխարհ գա։ Ասոր վրա կը խորհեր և պատրաստված էր հոդված մ'ալ գրել, երբ մանկաբարձն իրեն իմացուց պայմանաժամին լրանալը։

Փանոսյան աշխարհ գալուն պես աչերը բացավ և պոռաց. ի՞նչ բանձր ոգիությամբ եմ մնացեր։ Բարեկարգության և ազատության ջերմ սիրահար ցույց տվավ ինքզինքն՝ ոտներն ու ձեռներն միշտ դուրս հանելով խանձարուրեն։ Դպրոցասեր ըլլալն ալ հասկցուց յուր մանկական հասակին մեջ։ Հազիվ չորս տարեկան կար, խաղի թուղթերեն դպրոցներ կը շիներ, դրացիներու տղաներեն զրամ, կարասիք և այլն կը ժողվեր ի նպաստ յուր շինած վարժարաններուն և գրպանը կը նետեր։ Հայրն ու մայրը նկատելով, որ իրենց զավակն փառավոր ապագա մը կը խոստանա—թեպետև վերջեն հասկցվեցավ, որ շատ հավատք ընծայելու չէ անոր խոստումներուն — կորոշեն Կ. Պոլիս ղրկել զինքն, որպեսզի երթա հոն դաստիարակություն առնե։

1846-ին Վոսփորեն ներս մտավ Փանոսյան։ Այս թվականին մեկ օրվան մեջ բարեկարգ վարժարան մը գտնելը խիստ դժվար ըլլալով՝ նախնական ուսմունքն առնելու համար ղրկվեցավ Խասգյուղ հացագործի մը խանութը։ Հոն սկսավ քարոզել հաց առնելու համար խանութն եկող գործավորներուն և արհեստավորներուն, որ իրենց գործերը թողուն և մարմնամարզությամբ պարապին, եթե կուզեն ազգին ծառայություն մատուցանել։ Իր քովն աշխատող գործավորները կը խրատեր դաշնակ և պար սորվիլ։ Յուր քարոզներն և խրատներն արդյունք մը չունեցան, և երբ օր մը առաջարկեց տիրոջն, որ խանութը փլցուննեն և դպրոց շինեն՝ տերը բարկացավ և պաշտոնն առավ վրայեն։

Քանի մը ժամանակ պարապ մնալեն ետքը, 1851-ին Պոլսո երկրագործական վարժարանն ընդունվեցավ բարերարի մը միջամտությամբ։ Այս ճյուղին մեջ մեծ հառաջդիմություն ըրավ։ Փորձ մը ընելու համար, օր մը հին կոշիկները տանը պարտեզին մեկ անկյունը տնկեց, առատ երեկո ջուր տալ սկսավ. բայց երբ տեսավ, որ կոշիկները չեն բուսնիր՝ անիծեց հողն ու բուսաբանությունը և ազգը մարդ ընելու համար պաշտոն մը փնտռելու ետևն եղավ։

1859-ին խմբագրության ասպարեզը նետվեցավ Մյուճատիի էրճիայսը[2] անուն լրագիրը հրատարակել սկսելով։ Ամիրան ու արհեստավորն, կաթողի-

կոսն ու փոքրավորն, հարուստն ու աղքատն ամենը բաժանորդ էր այս լրագրին հարձակումներուն, որոնք արդարացի ըլլալով՝ լավ ընդունելություն կը գտնեին ժողովուրդեն, որ մինչև այն ատեն կը կարծեր, թե ամիրայի մը թաշկինակին դեմ խոսիլը երկնից դեմ ապստամբիլ էր։ Այն ատենները Գերագույն ժողովո[3] մեջ անիրավությունն հշմարտության ներկայացուցիչն էր. բռնությունը գավազան ի ձեռին կը նախագահեր. արդարության սրոտին վրա ամիրաներու կամքը բազմած էր. իրավունքը ֆալախա կանվանվեր և Փանոսյան իբրև մունետիկ փողոցներու մեջ կը պոռար.

«Հայեր, երեկ հազար տարեկան հշմարտություն մը կորսվեցավ պատրիարքարանի մեջ»։

Ժողովուրդն այս կեսարացիին ընթացքին հավնելով՝ կը քաջալերեր զայն, որուն խմբագրատունն էր այն ատեն Վեզիր խանին մեջի սրճարանը, աթոռն էր տոպրակի մեջ լցված հարյուր տրամ խոտ, գրասեղանն էր սրճարանապետին դռան քով դրված սնդուկը և թաշկինակն էր յուր հագուստին ծնը։ Ընթերցասիրության նոր վարժվող ժողովրդյան մը քաջալերությունն այս աստիճանին մեջ կը պահեին գինքը, և հարուստներն, որք տաղանդին, ինչպես կըսեն Հոբնաղ, գովեստներեն ուրիշ բան չեն տար, միայն կը ծափահարեին Փանոսյանը։ 1853-ին երբ Զեյթունի կոտորածն սկսավ, Փանոսյան քաջ ախոյան հանդիսացավ այս խնդրույն մեջ, որ պատճառ եղավ յուր լրագրին խափանման և իրեն բանտարկության։

Եափանում, բանտարկություն բնավ նշանակություն չունեին յուր առջև, մանավանդ բանտն, որ իրեն համար առանց վարձու սենյակի մը մեջ նստիլ էր։ Բանտեն ելնելուն պես Թափառական Հրայրին տաճկերեն թարգմանությանը ձեռնարկեց։ Այս աննման վեպին թարգմանությամբը մեկ կողմեն նախապարտումները կսպաններ, մյուս կողմեն տաճկերեն լեզվին ջարդ կուտար, և ամեն օր սիրտը կը դողար, որ չըլլա թե էոժեն Սյու ելնե դատ բանա իրեն դեմ։ Այս ահ ու դողի մեջ անհնար ըլլալով թարգմանության շարունակությունը, կիսատ թողուց զայն, թեպետև բաժանորդներեն ամբողջ բաժանորդագիններն առավ։

1866-ին հաջողեցավ արտոնություն առնել Մանզումեի էֆէյար անուն լրագրի մը՝ որուն հրատարակությունը մինչև այսօր կը շարունակե։ Այս լրագրին մեջ սկսավ շարել յուր կարծիքները մարդերու հասկնալի կերպով. իսկ երբ 1869-ին Ագապյան վարժարանը բացավ և անոր դեմ դիտողություններ տեղի ունեցան, սկսավ էշերուն խոսիլ։ Առաջ յուր հոդվածներուն գլուխը հայե ր, հայե՛ր, կը գործածեր, վերջեն սկսավ ավանակներ, էշեր դնել։ Ագապյան վարժարանի կռվույն մեջ այնպիսի անդուռն բերանով հարձակվեցավ յուր մեկ պաշտոնակցին վրա, որ ստիպվեցավ դատի հրավիրվել 1872-ին։ Այս

դատն այնքան հետաքրքրություն շարժեց, որ Մուսաս Պառնասի գագաթեն իջնալով ներշնչեց ինձի և ես երգեցի այն դատը։

Ինչո՞ւ չերգեմ նաև այսօր այն պատերազմն դյուցազներու, որք, սագի փետուրով զինված, վեց ամիս իրարու դեմ կատաղաբար պատերազմեցան և դաշտի վրա հազարավոր ընթերցողներ վիրավորելեն ետքը՝ արյունով ներկեցին համեստ դեմքերը։ Ըսե՛ ինձ, ո՞վ Մուսա, ի՞նչպես եղավ, որ Օրագիր ոճրագործ բառին վրա սրտմտելով ասպարեզ կարդաց Մանզումեին, շո՛ւտ ըրե, եկո՛ւր և օգնե ինձ, որ այս վեցամսյա պատերազմն արձակ երգով մը կարող ըլլամ երգել։

Այն ինչ վարդամատն Արշալույս[4] արեգական դռները բանալու համար դարբին փնտռելու իջած էր Հեփեստոսի[5] բնակարանը, Օրագիր հանկարծ արթընցավ և or մաճու եվ կենաց գոչեց այնպիսի սրտառուչ ձայնով, ուսկից շարժեցավ մահճակալը։ Քանի մը վայրկյան ձեռն ի ծնոտ խորհելեն ետքը՝ դիմեց զենքերուն. առավ զանոնք և զրպանին մեջ դնելով՝ արիաբար հեծավ յուր կոշիկներուն վրա և սկսավ հառաջանալ դեպի հդն, ուր պիտի սպաններ Թշնամին։

Մյուս կողմեն Մանզումեն հապճեպով հագվեցավ յուր պատերազմական հագուստները, զգեցավ զրահն՝ ուսկից արևուն ճառագայթները չեն կրնար թափանցել, առավ յուր զենքերն, որ կը բաղկանային ավանակ, էշ, լիրբ, ոճրագործ, անամոթ բառերե և հետևյալ առենաբանությունն ըրավ. դողացեք ոտներուս տակ, ո՛վ զուլպաներս։ Այս առենաբանութենեն ետքը վերջին ողջույնը տվավ յուր սենյակին այնպիսի սրտաճմլիկ խոսքերով, որ լալ սկսան բարձերն ու բազմոցները։ Վերջին ողջույնը տալեն ետքը մտրակեց յուր կոշիկները և պատրաստվեցավ յուր ոսոխին դեմն ելնելու։ Հասավ վերջապես այն ժամն, որ դեմ առ դեմ պիտի բերեր այս երկու ըմբիշներն, որ իրարու երես տեսնել չէին ուզեր... սոսկալի վայրկյան... մուկ մը ասոնց մեջտեղեն անցավ. երկու դյուցազները զարհուրեցան, բայց քաջությամբ ետ ետ քաշվեցան։—Առաջ մոտեցիր, գոչեց Մանզումեն, երկու քայլ առնելով դեպի ետ։ Այս հրավերին վրա Օրագիր անզգուշությամբ Մանզումեին ոտքին վրա կոխեց,—ա՛յ թշվառական, ասանկ կատակ կըլլա՞, պոռաց Մանզումեն։ Օրագրին վրա հարձակեցավ, քաշեց մեջքեն գոտին և անանկ հարված մը տվավ ոճրագործով, որ վիրավորեց Օրագրին... ականջը։ Օրագիրն յուր ուժն ժողվելով Մանզումեին գլխուն իջեցուց Տրամաբանության ահեղ զենքը։ Ամպագուտակն Հայր Արամազդ[6] երկնքին բարձրեն սարսափով կը դիտեր այս արյունալի պատերազմը։ Աստվածներեն ոմանք միջամտել կուզեին, ոմանք չէզոքությունը նախամեծար կը համարեին, ոմանք զրահավոր ղրկել կորոշեին, ոմանք փոխադարձությունը դադրեցունել կը փափաքեին. վերջապես տարա-

ձայնութիւնն այնքան սկսաւ շփոթել աստվածներն, որ աստվածներու Հայրն շանթ ի ձեռին ոտք ելաւ և այսպես խոսեցաւ. «Անմահ մը չկրնար անխիթր մնալ մահկանացուներուն այս խեղճ վիճակին. ուստի, առանց ձեզմե խորհուրդ հարցնելու, որոշեցի Առաքինութիւնը ղրկել, որ երթա հաշտեցունէ զանոնք: Բայց որպեսզի Առաքինութիւնը կարենա յուր պաշտոնն կատարել, հարկ է, որ կնկան կերպարանքով երևի անոնց, որովհետև կիները իրենց փափուկ խոսքերովն կարող են քարե սրտերն անգամ կակուղցնել»: Աստվածներն թող տվին, որ Արամազդ յուր պատասխանատուութեանը ներքև գործե: Ուստի Առաքինութիւնն հանձն առաւ այս պաշտոնն և իսկույն գեղեցիկ աղջկան մը կերպարանափոխվելով, ժպիտով մը վար իջաւ և կանդնեցաւ մեր դյուցազներուն մեջտեղն, որոնց մին բանբալոնը կապելու զբաղած էր և մյուսը ֆեսն կը մաքրեր: Ո՞վ դյուցազներ, գոչեց Առաքինութիւնը, կը ճանաչե՞ք զիս,— Ամենեին չեմ ճանչնար զքեզ. պատասխանեց Մանգումեն.—բնաւ երբեք, այդ անունով բաժանորդ չունիմ, ըսաւ Օրագիր:—Ներեցե՛ք, մեր կյանքին մեջ բնաւ տեսած չունինք, պատասխանեցին երկուքը միաբերան.— Առաքինութիւն է անունս, ըսաւ:— Կարդա՞ծ եք, օրիորդ, հարցուց Օրագիր, որ կը պնդեր՝ թե Փանոսյան իրավունք չուներ վարժարանը պահպելու, քանի ամուրի էր:—Մարմնամարզութիւն գիտե՞ք, հարցուց Մանգումեն, որ մարմնամարզութենեն դուրս ամեն բան իբրև անօգուտ կը նկատեր: Այս հարցումներուն վրա Առաքինութիւնը ժպտեցաւ և կոտրտվելով Մանգումեին գիրկը նետվեցաւ. վերջը երկուքը մեկեն գրկելով, կնքել տվաւ պատվավոր հաշտութիւն մը, որ կես ժամեն ավելի չտևեց: Այս վայրկենական հաշտութենեն ետքը Առաքինութիւնը թռաւ ասոնց վրայեն: Երկու բարեկամներն քանի մը վայրկյան ապշած իրարու երես նայելեն ետքը բաժնվեցան իրարմե, յուրաքանչյուրն հետը տանելով մեյ մեկ պատվավոր հաշտութիւն: Արևն, որ ի նշան տրտմության ապարանքեն դուրս չէր ելած, այս հաշտութեան վրա յուր դեմքը ցույց տվավ և յուր լուսատիպ ճառագայթները տարածելով սկսաւ չորցնել երկու դյուցազներու վարտիքներն, որ թրջված էին... քրտինքով:

Այս կերպով վերջացավ ահա այն պատվավոր հաշտութիւնն, որ վերջեն Սամաթիո մեջ այնքան հուզում պատճառեց:

Փանոսյան այս պատվավոր հաշտութեան վրա չփոխեց լեզուն և ամեն անգամ, որ ժողովրդյան խոսելու կելներ, միշտ աճամոր, ստախոս, խարեբա ածականներե կառաջնորդվեր: Վարժարաններու վրա գրած հոդվածներեն ավելի ազդեցութիւն ըրավ այն հոդվածն, որ ճեմիշներու նվիրված էր: Հիշյալ հոդվածով, որուն վերնագիրն էր մեմշեճե ըսլաճաք՞, ո՛չ միայն ազգային, այլ միջազգային ճեմիշներու նկարագրութիւնն ընելով՝ անոնց բարեկարգութեանը վրա կը պնդեր, բայց Մալթայեն Պեշիքա բերելու համար զրահավոր չունենա-

լով յուր առաջարկութիւնն անընդունելի կը մնար: Ազգի մը հառաջադիմությունը, կըսեր, ոչ թե անոր լրագիրներեն, այլ ճեմիշներեն կը ճանչցվի, և իբրև փաստ Բարիզու ճեմիշները կը ներկայացներ յուր ընթերցողներուն այնպիսի գեղեցիկ դույներով, որ մերիններուն արժանապատվությունը կը վիրավորեր: Փանոսյան ամեն բանի մեջ միշտ առաջնութիւն փափաքելով՝ շատ անգամ սխալ քայլեր առած է, և յուր սխալն զգալեն ետքը շարունակած է զայն. թերևս կարծելով՝ թե մարդս երե հարատևե յուր սխալին մեջ, այդ սխալն ուղիղի կը կերպարանափոխվի: Սոսկալի համառ մ'է յուր սխալին մեջ: Հին իմաստասերներեն մեկուն հարցվեցավ օր մը՝ թե ի՞նչ պետք է մեկն դինեմոլութենե կարելու համար. գինով մը դրե՛ք առջին, պատասխանեց իմաստասերն, որ ուշի ուշով քննե զայն: Մենք ալ խրատ կուտանք համառ զավակ ունեցող հայրերուն, որ գոնե անգամ մը Փանոսյանը ներկայացնեն իրենց զավակներուն: Այս համառությամբ է, որ երկու տարիե ի վեր վայրկյան մը չկրցանցներ դեմ խոսելու այն ամեն որոշումներուն, զորս պատրիարքարանը կընե ի գործոն յուր ժողովրդյան վերքերուն: Չխղճար նաև վիրավորելու այն ազնիվ երիտասարդությունն, որ Հայաստանի մեջ ձրի ուսում ծավալելու համար անձնանվիրաբար կաշխատի. փոխանակ անոր թերությունները ցույց տալու և ուղղության հրավիրելու, փայտի կտոր մը կառնե և անոր գլուխը կիջեցունե: Թեպետև միշտ Արդոս կը ձևանա այն թերություններուն, որ իրեն չեն դպչիր, սակայն ես լավ գիտեմ, որ սիրամարդի պոչին վրա դնված աչերուն երկուքն յուր աչերն են. որ չեն տեսներ այն խարեբայությունները և թեթևություններն, որ ազգին պատվույն կը դպչին: Շատ անգամ թաղ կը շինե այնպիսի անձերու, որոնց ես մաղերը կը փեթռեմ. և երբ ինքն ուրիշներուն շողոքորթ, ստախոս կըսե, ես ալ իրավունք չունի՞մ իրեն հարցնել՝ թե բավական սուր աչեր ունի՞ ուրիշներուն կույր ըսելու համար: Այսուամենայնիվ պետք չէ կարծել, թե յուր հոդվածներուն մեջ ճշմարտություն չկա. սակայն ի՞նչ օգուտ, ճշմարտութենե ավելի հայհոյություն և այլն, և այլն, և այլն և այլն կա: Յուր թերթին էջերուն մեջ միշտ կիրքն ու դատողությունը մենամարտության կելնեն. կիրքը միշտ հաղթանակը կը տանի և ճշմարտությունը կը վիրավորվի: Չեմ հասկնար յուր ոճը, բայց կը խորհիմ, թե կարելի չէ՞ միթե համոզել մեկն, որ երկու անգամ երկու չորս կընե, առանց կնքահայրություն ընելու և ավանակ անունով մկրտելու զայն: Սակայն ես վեր կը դասեմ զինքն միշտ այն քանի մը խմբագիրներեն, որ միշտ երկու անգամ երկուքը նիհգ կը ներկայացնեն վսեմափայլ, բարբարապատիվ ածականներով, երբ մեկը հաճի կես կանգուն բազմիր նվիրել իրենց. վասն զի անվայել ոճով պաշտպանված ճշմարտությունը միշտ նախապատիվ է բաճկոնի մը զոհված ճշմարտութենեն:

Միայն խմբագրական ասպարեզին մեջ չէ, որ Փանոսյան ծառայած է ազ-

դին։ 1867-ին Ազգային Հիվանդանոցին ցավալի կացութիւնն նկատողութեան առնելով՝ ինքզինքը ընտրելի ներկայացուց անոր—ոչ իբրև խնդ, այլ իբրև տնօրեն—և տնօրեն անվանվեցաւ այդ շենքին, խոստանալով, որ կարճ ժամանակի մէջ պիտի բարեկարգե խնդերուն վիճակը։ Խնդերն անպատմելի ուրախութիւն ղգացին այս լրույն վրա։ Փանոսյան տնօրենութիւնը վրան առնելուն պես սկսաւ հիվանդանոցին պատերը բարեկարգել փլցունելով զանոնք և քաղաքակրթութեան պահանջումներուն համաձայն վերստին շինելով։ Հիվանդանոցը պարտքի տակ ճնշվիլ սկսաւ։ Հոգ չէ, կըսեր Փանոսյան, առանց դրամի բարեկարգութիւն անկարելի է, ժողովուրդը միայն ստակ տալու է և ուրիշ բանի բնաւ խառնվելու չէ։ Ջափին ավելի կաշխատեր, որ հիվանդներն ու խնդերը աղեկ ուտեն, խմեն և պառկին. այս աշխատութիւնն այնքան արդյունաւոր եղաւ, որ շատ մը անգործ մարդեր խնդ ձեռնադրվելով Փրկիչ մտան և հոն... պաշտոն վարեցին։ Պատրիարքարանն Փրկչին այս կացութիւնը տեսնելով՝ ստիպվեցաւ տնօրենութիւնն առնել Փանոսյանեն, որ խոշոր գումար մը պարտք թողլով ծառայից աղդին։

1866-ի աուեններն էր։ Նիկոմիդիո կողմերն սովն երևան ելաւ և մեր հարուստներն իրենց ալյուրի շտեմարաններուն և ոսկիի սնտուկներուն հարյուր փականք կախեցին։ Կեսարացի խմբագիրն ախոյան կանգնեցաւ սովին և առավոտ մինչև երեկո վաճառականներու և արհեստավորներու խանութները թափառելով ձեռները բացավ, ողորմութիւն մուրաց և հավաքած դրամովն ալյուր գնելով դրկեց սովալլուկ աղդայիններու, որք եթե Ազգային Ժողովին որոշման սպասեին՝ անդիի աշխարհին մեջ պիտի տեսնեին ալյուրի երեսը։

Որպեսզի աղջիկներն անուս մնալով ազգային դաստիարակութիւնը կաղ չքալե՝ 1869-ին վարժարան մը բացավ Սամաթիա Ագապյան անունով, որուն մեջ ազատ դաստիարակութիւն պիտի առնեին ազդին աղջիկները։ Ժողովուրդն յուր քաջալերութիւնը չէր պլանար, դիրք, դրասեղան, դրամ, դաշնակ, ամեն բան կը նվիրեր իրեն, բայց այսչափ նվերներով դարձյալ բավական չըլլալով վարժարանին ծախքերուն հասնիլ, Փանոսյան սկսաւ հառաջադեմ աշակերտներն յուր ծանոթներուն տունը տանելով, երգել և պարել տալով՝ նվեր հավաքել։ Այս ընթացքն ալ գոհացուցիչ արդյունք մը չբերավ և Փանոսյան սկսավ յուր հառաջադեմ աշակերտները Սարըյար[8] տանել, պարտեզի մը մեջ խաղցնել և մեկ ոսկի օսմանյան մուտք առնելով Ազգային Սահմանադրութեան տարեդարձը կատարել։ Ասով ալ չգատացավ և սկսավ ամեն տարի մեկ երկու անգամ Ռոնսեր տալ Թատրոններու մեջ։ Ժողովուրդն, որ այս տեսակ զարմանալի դաստիարակութիւն ո՛չ տեսած ուներ և ո՛չ լսած՝ դիտողութիւններ ըրավ իրեն։ Այս դիտողութիւնները Մանդումեի հատուկ լեզվով հերքվեցան. ժողովուրդը դադրեցուց յուր օգնութիւնները և Փանոսյան ստիպվեցավ մնալ

Ձրեք աշակերտով. զորս Ռոնսեռի կը հաներ ամեն անգամ որ ձեռքը գրպանը կը խոթեր և դրամ չէր գտներ հոն։ Այնչափ շատ գործ ուներ, որ ցերեկը աշխատելով չէր կրնար յուր գործերն ի գլուխ հանել, ուստի դիշերներն արթննալու համար Արիստոտելի պես հնարք մը գտած էր. այնչափ նեղ մահճակալի մը վրա կը պառկեր, որ դառնալուն պես գետին կիյնար և կարթննար. բայց եթե քեն հարկ չմնաց նեղ անկողնի մեջ պառկելու, երկու հոգվո անկողինի մեջ կը քնանար, բայց դիշերը քանի մը անգամ կարթննար. վասն զի հացագործն, նպարավաճառը և մսավաճառը կուգային կարթնցնեին զինքը իրենց առնելիքները պահանջելու համար։ Փանոսյան անվամբ վարժարան մ'ալ բացավ, որ մեկ տարվան մեջ քառասուն անգամ տեղ փոխեց։ Այս վարժարանն չկրցավ հարատևել, վասն զի խավարյալ, տգետ և բարբարոս ժողովուրդն արական աշակերտներուն ձայնեն չէր ուզեր ղգացվիլ, ուստի երկու տարվան մեջ գոցվեցավ Փանոսյան վարժարանը, քանի չափ աշակերտ հանելեն ետքը։

Փանոսյան պզտիկ մարդ չէ և ազգային ջոջերու մեջ աթոռ ունենալու իրավունք ունի։ Մեծ բարեկարգիչ մ'է, և եթե Պոլսո Թաղապետութիւնն այսօր իրեն հանձնվի՝ ամեն փողոցներու մեջ մեյմեկ սքանչելի ճեմիշ կը կառուցանե և փողոցին մեջ միզողներու վրա տուրք մը սահմանելով, կառավարութեան դրամական տագնապի առաջքը կառնե։ Յուր բառարանին մեջ վհատութիւն չկա։ Հանդուգն ձեռնարկու մ'է, քանկին մեջ առանց դրամ մ'ունենալու օդի մեջ շոգեկառք բանեցնելու արտոնութիւնը սիրով կընդունի, եթե իրեն առաջարկվի։ Հոգնութիւն բնավ չդիտեր, շաբաթ մը շարունակ կարող է քալել. լեզուն այս մասին ծունկերեն հառաջադեմ է։ Սովորութիւն ունի փողոցեն վազելով երթալ այնպես, որ հետը ծանոթութիւն չունեցողները կը կարծեն, թե պարտատերն ետևեն կուգա։ Յուր քանի մը պաշտոնակիցներեն շատ ավելի վեհանձն է, արժանապատվութիւնը միշտ կը պահե ծոցը, և տունե տուն չպտրտիր բաժանորդ գտնելու համար։ Փոխառութենն բնավ չվախնար և երբ անկարող գտնվի յուր պարտքը վճարելու՝ բնավ չկարմրիր. կարմրիլը, կըսե, նախապաշարում մ'է, զոր մեր նախնիք կը գործածելին և մենք, տասնիններորդ դարու զավակներ, պարտավոր չենք նախնյաց նախապաշարումներուն հետևիլ։ Լուսավորիչ մ'է, և եթե լեզուն և ընթացքը քիչ մը բարեփոխե՝ շատ ծառայութիւններ կարող է ընել ազդին, որ դժբախտաբար կավիճով պատի վրա կը գրե լրագրի մը բարիքները և օրացույցի մեջ կարճանագրե անոր թերութիւնները։

Փանոսյան բարեկազմ և արագաշարժ մարդ մ'է։ Ունի սև աչեր և ընքվիներ։ Գլուխն ոչ մեծ կը սեպվի և ոչ պզտիկ. այդ մեծութիւնամբ ոչխարի գլուխները երեք ու կես դահեկանի կրնան գնվիլ այսօր։ Լեզուն բավական մեծ է. բայց դժվարամարս ըլլալուն համար չուտվիր, և հետևապես բան մը չարժեր

այսօր։ Յուր դեմքին վրա գաղափար մը տալու համար կը հարկադրվինք հիշեցունել այն մարդն, որ լուր կառնե, թե վիճակահանութենեն հարյուր հազար ֆրանք շահած է, և երբ այդ գումարը պահանջելու համար յուր բաժնետոմսին թիվը կը ներկայացնե ընկերության, պատասխան կը տրվի իրեն.

– Պարոն, շահող թիվը այդ չէ. լրագիրները սխալ հրատարակած են։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՐԵՅԵՄ-ԳՈՒԼԻ

Հարություն Հեթում Մերեյեմ-Գուլի, հաշվագետ, ազգային երեսփոխան, ծնած է Ռասգյուղ, 1840 թվականին։ Լսած ըլլալով այն առածն, որ կըսե, թե կամաց բալղրը չհոգնիր, բնավ բաղել չէր ուզեր, բնավ չհոգնելու համար։ Երեք տարեկան եղած էր և դեռ ելնելու կայնելու ջանք մը ըրած չէր։ Հայրն ու մայրը կը հորդորեին զինքն, որ երթե բալե և շատ անգամ, անոր բարի նախանձը գրգռելու համար, կըսեին իրեն.

— Հարությո՛ւն, տե՛ս, ընկերներդ ի՛նչպես կը բալեն։

— Քալողն ես եմ, բայց ձեղի այնպես կը թվի՝ թե անոնք կը քալեն, կը պատասխաներ Հարությունը։

Մնողքն, իրենց զավակին բռնած այս ընթացքին վրա ցավելով, հնարք մը կը խորհեին, որով կարելի ըլլար զինքը քալեցունել։ Ավետարան, խաչահանդիստ, բժիշկ կարող չեղան ոտք հանել այս տղան, որ սենյակին մեկ անկյունը նստած կը խորհեր։

Բայց դիպվածն, որ շատ անգամ մեծ հիվանդություններ բուժած է, այնպես ուզեց, որ այս տղուն հայրը ստիպվի օր մը սենյակին մեջ ստակ համբել։ Արդ, երբ հայրն առավոտ մը քսակը գրպանեն հանելով ոսկիները կը համբեր՝ անզգուշությամբ անոնցմե հատ մը ձգեց գետինը։ Հարությունը ոսկիին գետինը իյնալը տեսնելուն պես՝ նստած տեղեն մեկեն ի մեկ կանգնեցավ։ Հրա՜շք, գոչեց հայրն և ոսկի մ'ալ նետեց գետինը։ Երկրորդ ոսկին տեսնելուն պես՝ քայլ մ'առավ տղան։ Երկու ոսկի նորեն նետեց հայրը, երկու քայլ նորեն առավ տղան։ Չորս ոսկի ալ. չորս քայլ ալ։ Հայրը քսակը նետեց սենյակին մեջտեղը և Հարություն սկսավ վազել։ Ահա այսպես դիպվածով քալել սորվեցավ Հարություն, և այս է ահա պատճառն այն խոսքին, որով կըսեն, թե Հարություն էֆենտի Մերեյեմ-Գուլի առանց ստակի քայլ մը չառներ, ո՛չ գրասենյակին մեջ և ո՛չ հրապարակին վրա։

Ոչ միայն հաշվագետ, այլ նաև տնտեսագետ ըլլալով՝ կը պատվիրեր ծնողացն, որ յուր վարտիքն ու շապիկն քիչ մը մեծ կտրեն ու ձևեն, որպեսզի

քանի մը տարիեն նեղ չի գան և կարենա զանոնք մեկ երկու տարի շարունակ հագնիլ։ Մարմինն համեմատորեն յուր խելքին խիստ ծանր մեծնալուն՝ հիշյալ ձերմակեղեններն հինգ տարի հաջողեցավ գործածել։ Այս բանը շատերուն զարմանք պատճառեց և մինչև անգամ կատակի համար իրարու ըսին.

— Դիտմամբ չմեծնար, որ նոր ձերմակեղեն շինելով՝ տնտեսագիտության գեմ վարված չըլլա։

1846-ին տրվեցավ իրեն քերական մը, զոր երկու ժամվա մեջ սորվեցավ։ Դասատուն անոր սրամտությունը տեսնելով՝ ընթերցանության դասին վրա թվաբանության դասն ալ ավելցուց։ Հարություն իրեն տրված բոլոր դասերուն մեջ ալ հառաջադեմ գտնվեցավ. չէր այն աշակերտներեն, որք թվաբանության մեջ արագոտն են և լեզվին մեջ կաղ։ Մնողքն երբեմն անհանգիստ կըլլային մտմտալով, որ եթե այս տղան մեծնա՝ ո՛ր ճյուղն ընտրելու է իրեն, փաստաբա՞ն ըլլալու է, թե վաճառական, համարակա՞լ, թե գործակալ, ատենախո՞ս, թե ժողովական. ամենն ալ, ամենն ալ կը պատասխաներ Հարություն և դասերուն կը պարապեր։ Շատ անգամ դաս տալու եղանակն կը սորվեցուներ դասատուին և երբեմն ալ անոր սխալները կուղղեր թվաբանության մեջ։ Ութը տարեկան էր՝ թաղին փերեզակին տետրակները կրկնատոմարի կը վերածեր։ Մինչև տասներկու տարեկան տունը դաս առնելեն ետքը 1852-ին Պեշիկթաշի վարժարանը գնաց. բայց գոհացուցիչ չգտնելով զայն, նավակ մը մտավ, և Իսկյուտար անցավ։ Հոն Նոր Թաղի վարժարանը[1] մտավ, որ մինչև այսօր ճեմարան անունը կը կրե, ինչպես ազգվական անունը կը կրե մեկն, որ յուր հորը բոլոր հարստությունը խաղի մեջ՝ առաքինությունը պարահանդեսներու մեջ մսխելով՝ յուր ազգատոհմին պատիվը կարատե։ Հոն ալ բավական սնունդ չգտնելով՝ Գում-Գարբու[2] Մայր եկեղեցիին ուսումնարանը մտավ. բայց հոն ալ բան մը չգտնելով՝ Պեպեքի[3] եղբիններու դպրոցն առավ յուր շունչն և հոն ավարտեց յուր ուսման շրջանը։

Այն թվականին Պոլսո բնակիչներն ինքզինքնին վիճակահանության տված էին։ Հարություն տեսնելով, որ ժողովուրդը շատ հարած է վայրկենի մը մեջ մարդերը հարուստ ընող վիճակահանության, առանց յուր պզտիկ խելքին նայելու, նստավ շաբաթ մը խորհեցավ, ինքնիրմե նոր տեսակ վիճակահանություն մը հնարեց, որուն մեջ ամեն թիվերն ալ պիտի շահեին, բոլոր աշխարհ մեկեն ի մեկ հարուստ պիտի ըլլար, աղքատությունն երկրիս վրայեն պիտի ջնջվեր, փոխառություն բառն բառարաններուն մեջեն պիտի քերթվեր։ Հաստատապես միտքը դրավ, որ գործի մարդ ըլլալուն պես յուր ծրագիրն ի գործ դնե, և ժողովուրդը հարստացնե գումարին մեծ մասն իրեն բաժին հանելով։ Ափսո՜ս... հազար ափսոս, որ ուշ մնացած ըլլալուն համար չկրցավ նպատակին հասնիլ, վասն զի Եվրոպայի վարպետորդի սեղանավորներն միևնույն բանն

իրմե առաջ մտածեցին և անոր ծրագիրն խանձարուրին մեջ խղդեցին։ Հարուստ բարկացավ և ծրագիրն ծալլելով դրասեղանին տակի գզրոցը թխմեց, որով հարուստ ըլլալե զրկեց զմեզ, և թողուց, որ խեղճ մահկանացուներս ապրելու համար հազար սուտ խոսինք և երկու հազար շողոքորթություն ընենք։

1858-ին վարժարանին ելավ և վաճառականի մը քով մտավ իբրև համարակալ։ Տետրակներն այնչափ կանոնավոր կերպով կը բռներ, որ յուր տերը, տեսնելով անոր հաջողությունն, վեց ամիսեն վաճառատան տնօրեն կարգեց զայն։ Աստիճանաբար, բայց հաստատապես առաջ երթալու հիմ դրած ըլլալով իրեն, մինչև որ փառին մեջ օդուտ և մեծության մեջ իրականություն չտեսնե՝ եռևեռն չերթար։ Պզտիկ հասակեն ի վեր մեկ ոտնը սանդուխին առաջին աստիճանին վրա լավ մը կոխած ըլլալուն չհամոզված՝ մյուս ոտնը երկրորդ աստիճանին վրա կոխած չէ և մինչև այսօր երեն Ղալաթիո կամուրջեն[4] անցնիլ հարկ ըլլա իրեն՝ նախ և առաջ երկու ճարտարապետ կը բերե և անոնց քննել կուտա կամուրջն, անոր հաստատությանը կը համոզվի և ետքը տասը փարա կուտա և վրայեն կանցնի։

1860-ին ազգային գործերուն մեջ նետվեցավ։ Սահմանադրության հաստատված ժամանակ Աւրիմ Հայկազունի[5] երդողներուն եռևեն կերթար և կը պաշտպաներ ժողովրդականությունն, որ մինչև այն ատեն պարզ ծունկի կապ մ՚էր և զոր Սահմանադրությունը վերցնելով պատվանշաններու կարգը բարձրացուց. այն թվականեն ի վեր է, որ ազգին մեծերն ուրիշի չեն տար այդ պատվանշանը։

Ազգին մեջ դաստիարակություն մտցունել աշխատողներուն միանալով արժանացավ հիմնադիրներեն մին ըլլալու այն շենքին, որ նախ Աբեվեյան Թատրոն[6], ետքը Թատրոն ձիերու, քիչ մը ետքը Գաղիական Թատրոն, քանի մը տարի ետքը Ալհազար կոչվելով տասը տարվա մեջ չորս անուն փոխեց գերապատիվ Խորեն Գալֆայանի պես։ Որչափ ատեն որ ընկերության մեջը մնաց՝ Թատրոնը կանոնավորությամբ շարունակեց յուր ներկայացումներն, զորս յուր ներկայությամբը կը քաջալերեր ժողովուրդն և իրենց բացակայությամբը կը ծափահարեին մեր հարուստներեն շատերը։ Իսկ երբ դիշեր մը դերասաններեն մեկը վարագույրեն դուրս ելնելով հայտարարեց թե՝ «չկրնար նույն դիշեր յուր դերը կատարել, եթե յուր ամսականը անմիջապես չվճարվի», Հարություն էֆենտին հիմնադիրներուն մեջ չէր, այլ Բերայի վարժարանին մեջ, որուն տնօրենությունը հանձն առած էր։ Այն ատեն փորձով հաստատեց, որ ինքն պայքարե չվախնար, բայց վատնդը նախատեսելուն պես անձն ու պատիվը մեկտեղ կազատե փախչելով։ Գրեթե այն դիշերեն քանի մը ամիս ետքը Աբեվելյան Թատրոնը թողուց հասարակությունը կրթելու պաշտոնը։ Եվրոպացի մը եկավ հոն և սկսավ դաստիարակել յուր ձիերն, որոնք ս. Երրորդության եկեղեցվույն բակը կը ճաշեին ցերեկները։ Քանի մը տարի ետքը Պ. Մանասֆրանսացի դերասաններ ու դերասանուհիներ բերելով՝ բարոյապես կրթեց ազգիս հարուստները։ Ասոր հաջորդեց ուրիշ մը, որ լեցուց այդ շենքն ֆրանսացի երգչուհիներով, որք բարոյալից երգերով ոչ նվազ բարոյականություն սորվեցուցին արդո հասարակության։ Բայց մենք դառնանք մեր պատմությանը։

Ինչպես վերը հիշեցինք, Հարություն էֆենտի Բերայի վարժարանին տեսչությունն ստանձնած էր։ Թեպետ և յուր տնօրենությանը ներքև վարժարանը քիչ մը բարեկարգվեցավ, սակայն հրաժարելուն պես բարեկարգությունն ալ հրաժարեցավ վարժարանեն։ Այն ատեն ոմանք ըսին՝ թե Հարություն էֆենտին յուր բարեկարգիչ ըլլալն աշխարհի ցույց տալու համար բարեկարգությունն հաշվով կըներ, որ ինքը պաշտոնեն ելնելուն պես՝ ըրած բարեկարգությունն ալ կը հատներ. կան նաև ըսողներ, թե ավելի կաշխատեր բարեկարգիչի համբավ առնել՝ քան գտնված պաշտոնին մեջ տևողական բարեկարգություններ ընել։

Քանի մը տարի ետքը Տնտեսական խորհրդո անդամ ընտրվեցավ և երկրորդ շրջանին մեջ ատենապետ։ Պաշտոնի մեջ խոսելեն ավելի գործելու միտում ունենալով՝ ատենապետ ընտրվելուն պես ատենադպիր ընտրել տվավ յուր ընկերներեն մին, որ շատ խոսելու ասպարեզին մեջ առաջին մրցանակն առած է։ Այս ճամբով յուր ընկերն շատ խոսելու իրավունքեն դրկելեն ետքը՝ սկսավ գործել։ Կը վկայեն, թե յուր ատենապետության շրջանին մեջ շնորհակալության դիր մ՚ուղղած են իրեն պատրիարքարանի ձիերն, որք շաբաթը մեկ անդամ դարի ուտելու սորված ըլլալով, յուր օրովը երեք օրն անդամ մը դարի կուտեին։ Պատրիարքարանի պաշտոնյաներն ամեն ամսու գլուխ իրենց ամսականները կընդունեին, մեկ ամիսը երեսուն օրե կը բաղկանար և ոչ թե յոթանասունհինգ օրե և հետևապես, պաշտոնյաները հիմակվան պես երկու ամիս ու կես չէին սպասեր ամսական մը առնելու համար։ Առանց մեկուն ակնարկություն մ՚ընելու կը զրուցենք, որ եթե ընտրություններու մեջ ազգը քիչ մը խոհեմություն բանեցուներ և երկաթագործն ժամագործության պաշտոնին չհրավիրեր, համարակալն բանաստեղծության ընտրելի չներկայացներ, այս անձը միշտ Տնտեսական խորհրդո մեջ պիտի մնար և թերևս ազգային սնուցվն, որուն շատ հարմար կուգա Սողոմոնի ուսայնություն ուսայնությանց, ամենայն ինչ ընդունայն է, քիչ մը դրամի երես պիտի տեսներ։

1870-ին Ազգային ժողովս Վերսիոխան ընտրվեցավ։ Այս պաշտոնին մեջ աշխատության հարած է դեմքով և ժողովրդականության դարձած է կարծիքով, բայց այնչափ վարպետ է, որ ներկայացված խնդիրները դեմքով ալ կարող է պաշտպանել, կարծիքով ալ։ Ոևէ խնդիր մը քննելու համար անոր

հիմ կը դնեն սկզբունքն և ոչ պարագաները։ Ավելորդ է ըսել, որ կան դատեր, զորս պարագաները կարգադարացնեն, բայց սկզբունքը կը դատապարտեն։ Հարութիւն էֆենտին ալ կը դատապարտե այդ դատն, որչափ ալ արդար ըլլար։ Ասոր օրինակ կրնանք բերել Տիգրանակերտի գերապատիվ Փիլիպպոս եպիսկոպոսին դատը։ Այս առաջնորդը յուր պաշտոնատեղիեն հոս կը բերվի Վարչութեան հրամանով, որ հոս դատվի։

Հարցուր երեսփոխանական ժողովո մեջ Հարութիւն էֆենտիին.

— Ի՞նչ է այս մարդուն հանցանքը։

— Այս մարդուն հանցանքն այն է, որ Ազգային Վարչութեան կողմե Տիգրանակերտ ղրկված քննիչն ղրեց պատրիարքարան, որ զինքը հոս բերենք ու դատենք։

— Բայց անմեղ է այս մարդը։

— Կրնա ըլլալ, որ սուրբ մ'ըլլա. ո՞վ կըսե թե մեղավոր է։

— Ժողովուրդը կը սիրե զինքը։

— Մենք ալ կը սիրենք։

— Եթե ժամ առաջ յուր պաշտոնատեղին չերթա՝ ժողովուրդը կրոնափոխութեան պիտի դիմե։

— Ազատ է դիմելու։

— Ժողովո պատասխանատու չը՞ մնար։

— Բնավ, ոչ ոք պատասխանատու կը մնա. եթե Փիլիպպոս եպիսկոպոսը արդարանա՝ քննիչը պատասխանատու կը մնա և կը պատժվի։

— Քննիչը անիրավութիւն ըրած է։

— Կարելի է. բայց այն անձին, զոր կեդրոնը քննիչ անվանեց, պարտավոր ենք դրածներուն հավատալ. եթե հավատալու չէինք՝ անօգուտ բան մը ըրած պիտի ըլլայինք Հայաստան քննիչ ղրկելով։

Այսպես կը պատասխանե ահա, ով որ ալ ըլլա յուր ընդդիմաբանը, էֆենտի, բեյ կամ փաշա։

Ուրիշ երեսփոխաններու պես ժամերով չխոսիր, ձյունին սպիտակ ըլլալը փաստաբանելու համար գույներու իմաստասիրութեան չմտներ, այլ համառոտիվ յուր կարծիքը կը հայտնե և տեղը կը նստի։ Բարձր ձայն չունենալուն համար շատ անգամ յուր խոսքերը չի կրնար լսելի ընել բառին երկու նշանակութեամբ ալ, վասն զի այն կարծիքներն միայն ուղիղ կը նկատվին, որոնք բարձր ձայնով և հատակ արտասանութեամբ հայտնված են, որով իրավունք կուտա յուր ընկերներուն, որ ըսեն.

— Ձայնդ չենք լսեր. բա՛րձր ըրուցե։

Եվ Հարութիւն էֆենտի կստիպվի յուր ատենաբանութիւնն երեք անգամ կրկնել։

Երիմյանի պատրիարքութեան օրով անգամ եղավ Ազգային պարտուց բարձման Հանձնաժողովո[7], որ բարձավ առանց ազգային պարտքը բառնալու։

Տարի մը եաբը Սովելոց Հանձնաժողովո ատենապետ ընտրվեցավ։ Աղոթք ընենք, որ ատենապետ չէր այս ժողովին, եթե ըլլար՝ Պարսկաստանի մեջ սովյալ չէր մնար, ամենն ալ անօթութենեն կը մեռնեին. վասն զի տարի մը շրջունակ խորհելեն, տրամաբանելեն և դատելեն վերջ որոշում պիտի տար և սովյալներն անօթութենեն մեռցնելեն եաբը պիտի ելներ անոնց ալյուր բաշխելու։ Պաղարյամբ գործելու այնչափ վարժված է, որ բոցերու մեջ եթե մարդ մը տեսնե՝ փոխանակ զայն բոցերեն դուրս քաշելու հնարքներուն վրա խորհելու, հրդեհին ի՛նչ բանե ծագում առած ըլլալն կը հարցունե և պատճառն իմանալուն պես՝ զայն վերցնելու ճամբան խորհելու համար անմիջապես կը մեկնի, մարդը բոցերու մեջ թողելով և կը կարծե, թե հրդեհին մեջ ձեռքեն եկած բարիքը ղացած չէ։

Եթե պաղարյուն չես՝ կը կարծես, թե այս մարդուն հետ վարվիլը շատ դժվար է։ Հետը ո՛րչափ ընդհարիս՝ այնչափ կը կարծրանա. չհիմնի անուշ՝ կը նմանի։ Եթե առանց համարակալության, հաշվո և տրամաբանության խոսիս՝ և ոչ մեկ ըսածիդ կը հավատա։

Ազգային ամեն ձեռնարկություններուն քաջալերիչ է, նույնիսկ այնպիսի ձեռնարկություններուն, որոնց հարատևությանը չվստահիր։ Այս կարգեն է այն քաջալերական նամակն, զոր քանի մը բարեկամներով ստորագրելով՝ ուղղեց կիներու ընկերության մը՝ որ նպատակ ունի պարզ հագնել սորվեցունել մեր ազգին տիկիններուն և օրիորդներուն։ Ինքը լավ գիտե թե՝

Ա. Ինչ որ դաստիարակության արդյունք է՝ չկրնար դաստիարակության պատճառ ըլլալ.

Բ. դաստիարակությունն մտքին և սրտին մեջեն կսկսի և ոչ թե հագուստեն.

Գ. Պարզասեր չսեպվիր այն կինն, որուն միայն հագուստն պարզ է, այլ սիրտն ու դեմքն բաղադրյալ.

Դ. Երբ պարզասիրությունը դաստիարակության արդյունք չէ՝ ճաշակի խնդիր է.

Ե. Ճաշակի խնդիրը տրամաբանության հետ գործ չունի։

Զ. Մեծ սխալ է պճնասիրությունն անոր համար հարվածել, որովհետև մեծ ծախքերու կարող է. պետք է զայն իբրև մոլություն հարվածել, վասն զի մոլություններ կան, որ ծախքերու կարողություն չունին և առանց ծախքի եղած մոլություններն առաքինություն չեն.

Է. Կիները համոզվելու են, թե պեղեցկությունը պարզության մեջ է, թե որ-

չափ վնասակար է, երբ կիները այնպես կարծեն՝ թե մեծ զոհողություն կրնեն պարզ հագվելով.

Ը. Դովելի են այն կիներն, որք ինքնաբերաբար զգացած են պարզության հարգն և առանց ուրիշներեն քաշվելու կամ իրենց ընկեր փնտռելու կրնան պարզ հագվիլ.

Թ. Եթե հագուստն ազդեցություն ունենար մարդուս սրտին վրա՝ փիլոնն մեզի սուրբեր հասցնելու տեղ շատ անգամ սատանաներ չպիտի ընծայեր.

Ժ. Առանց դաստիարկության ընդունված պարզ հագուստն իբրև նորաձևություն կընդունվի և այնչափ կը տևե, որչափ որ կը ներե հագուստին հյուսվածքը. պատռվելուն պես պարզասիրությունն շրջազգեստին հետ մեկտեղ կամ կը նետվի կամ աղքատի մը կը տրվի։

Այս ամենը գիտե, բայց քաջալերության վրա մեծ վստահություն ունենալով՝ կը կարծե թե ապառաժի վրա ինկած սերմերն քաջալերությամբ կրնան բուսանիլ և աճիլ։ Եթե նոր ձեռնարկության մը համար երթաս իրմե խորհուրդ հարցունես՝ կը քաջալերե զքեզ, միայն թե այդ ձեռնարկութենեն իրեն ալ շահ մը հանելու ես, վասն զի, ինչպես բսինք, առանց ստակի տեղն չշարժիր, թեպետ և ազգային կյանքին մեջ անշահախնդրության օրինակ մը կրնա համարվիլ։

Հարություն էֆենտին պարզ հագվելեն ավելի կը սիրե անկախ կյանք վարել և մաքուր ապրիլ։ Եթե մեկու մը բարև տալ հարկ ըլլա՝ երկու շաբաթ առաջ ժյուլ Սիմոնի Ազատությունը կը կարդա, որպեսզի չըլլա թե բարև տալու մեջ անկախությանը դպչող բան մը գտնվի։ Մաքրությունն այնքան կը սիրե, որ ձեռները չաղտոտելու համար ուրիշին մատներովը կը քերե գլուխը. բայց ամեն ատեն ուրիշին ձանձրություն չպատճառելու համար՝ յուր բթամատը միայն գործածել սկսած է վերջերս։ Եթե հարկ ըլլա ձեռները լվալ՝ դեղագործներեն գտված ջուր կը փնտռե։ Եթե այսչափ մաքրություն մարդս յուր սրտին մեջ ունենար՝ չէր կրնար այս դարուս մեջ ապրիլ. բայց քանի որ ձեռներուս մեջ է, վնաս չունի։

Հարություն էֆենտին թերություններու կողմեն այսչափ աղքատ ներկայացնելեն առաջ կսկսիմ խորհիլ և ինքնիրմե ըսել. այս մարդը կամ քիչ թերություն ունի և կամ ունեցած թերություններն տրամաբանության օրենքներուն համաձայնեցուցած է։ Օրինակի համար, ուրիշին բարություն ընելն աղեկ բան մ'է, բայց ուրիշին բարություն ընելու ատեն մեր շահն ալ խորհելը իբրև գեշ բան չեն դատապարտեր օրենքը, մանավանդ անդրիացիներուն քաղաքականությունն, որ կըսե, նախ իմ շահս և ապա ուրիշներունը։ Արդ, ինչ որ ներելի է կառավարության մը, ինչո՞ւ ներելի չըլլար նաև անհատներուն։

Հարություն էֆենտին ազգին օգտակար անձ մ'է, ամենուն սիրելի։ Քայ

հաշվագետ մ'է, ամենեն կնճռալի հաշիվներն երկու օրվան մեջ կը պարզե։ Յուր մենյակն խելքի խանութ է, ամեն մարդ կերթա անոր և իր դործին վրա խորհուրդ կը հարցունե։ Երբ կը տեսնեն գինքն, որ թուղթ մը առած կը պլորե՝ գիտցիր, որ դժվարալույծ խնդրո մը վրա կը խորհի, իսկ երբ պլորած թուղթը բանա և գրասեղանին վրա դնե՝ խնդիրը լուծած է։

Այս պնձը ո՛չ պճնասեր է և ո՛չ պարզասեր, այլ երկուքին մեջտեղն է։ Զմեռվան եղանակին մեջ երբեմն մինչև մեջքը գույդ մը կոշիկներու մեջ կը մտնե, բայց որչափ ալ ըսեն, թե այդ մեծ կոշիկներն արգելք կըլլան իրեն քալելու, մենք կը վկայենք, թե ժամանակով Բերայեն քարոզիչ մը հալածած է այդ ահագին կոշիկներով։ Միջին հասակ և բարակ կազմ մը ունի։ Մազերն սև են, եթե ճերմակ ըլլային՝ ավելի պիտի վայելեին, վասն զի միշտ իբրև ծեր կը խորհի, թեպետ և ետ չկենար իբրև երիտասարդ գործելե։

Փողոցի մեջ երբեմն ծանր կը քալե և երբեմն ալ կը վազե, ծանր քալած ժամանակը շահու վրա կը խորհի, իսկ երբ վազե՝ շահ մը գտած է։ Այս վերջին պարագային մեջ շուրջը չնայիր և չբարևեր յուր ծանոթներն, որոնց ամենը եթե բարևել հարկ ըլլար՝ մինչև երեկո չպիտի կրնար երթալիք տեղը հասնիլ։ Իսկ երբ դեմքն վեր առնե, կը ներկայացնե այն մարդուն դեմքն, որ կղզիի շոգենավուն հասնելու համար վազելեն ետքը՝ երբ մեկ ոտն շոգենավին մեջ պիտի դնե՝ շոգենավն սուլելով կը մեկնի։

ԱՆՏՈՆ ՀԱՍՈՒՆՅԱՆ

1810 թվականին ծնավ Անտոն Հասունյան, կաթողիկոս Հռոմեական այն հայերուն, որոնք նախապատիվ կը սեպեն իրենց ազգային իրավունքներն ս. պապին հողաթափներուն մեջ տեսնել, քան թե իրենց ձեռներուն մեջ։ Յուր ծննդյան դիշերն ամեն մարդ սկսավ իրարու հարցնել, թե ինչո՞ւ դիսաւոր աստղ չերևեցավ, վասն զի նախնիք դիսավորներն չարագուշակ նշան համարելով՝ կը հավատային, թե նախ դիսավորը կուգա և ապա փորձանքը։ Նույն դիշեր շատերը մեյմեկ դիտակ առած՝ երկնի երեսը կը դիտեին, տեսնելու համար դիսավորն, որ անպատճառ երևցած ըլլալու է, բայց մեզի անտեսանելի է, կըսեին։ Իրավունք ունեին։ Դիսավորն որոշած էր Հասունյանե երկու ամիս առաջ դալ. բայց Հասունյան, որ միշտ գաղտնի գործել կը սիրե, դիսավորին դիտավորությունն իմանալով՝ պոչեն բռնած էր և թող չէր տար, որ երթար։ Սարսափելի կռիվ մը ծագած էր արդեն այս երկուքին մեջտեղը. թեպետ և դիսավորն վերջապես հաջողած էր իր թշնամվույն ձեռքեն պրծիլ և երկնի երեսն երևիլ, սակայն պոչը Հասունյանի ձեռքը մնացած էր։ Այս էր պատճառ, որ

մինչև մոտ ատեններս հայերու ռամիկ մասը պոչը կտրած կը կոչեր Հռոմէական հայերը։ Գիտակորն, որ յուր հակառակորդին չափ հաստատամիտ էր, եւ դառնալով ուրիշ պոչ մը գտած էր և տարի մը ետքը, 1811 օգոստոս 11-ին երեցած էր ավելի մեծ պոչով մը. սակայն խեղճը չէր կրնար հասկցունել, թե այս անգամ փորձանքն իրմե առաջ եկած էր։ Երբ գիտակորն յուր երեսամբն Հասունյանի փորձանք ըլլալն կուզեր հայտնել աշխարհի, անշուշտ յուր պոչին մեծութեամբն ալ անոր մեծ փորձանք ըլլալն կը փափաքեր ծանուցանել։ Այս համառոտ, բայց կարևոր տեղեկութիւնը տալեն ետքը պետք է, անհրաժեշտ պետք է հոս հիշել, դոնե Հասունյանն ազգատյաց չկոչելու համար, երբ յուր կենսագրութիւնը կը կարդանք, որ այս կրոնավորն զավակ է Յաղուպ Իպն Յուսեֆ Հասո անուն բերիացի ասորիի մը և ոչ թե հայու զավակ, ինչպես կավանդեն անհավատարիմ պատմագիրներեն ոմանք։ Յուր գործերն բավական են ապացուցանել, թե հայու զավակ չէ. եթե ըլլար՝ անկարելի էր, որ իր ազգն սպաննելու աշխատեր, քանի որ ազգն սպաննողներու համար պատիժ մը սահմանված չէ։ Երբ հարցվեցավ Սողոնի, թե ինչո՛ւ օրենք մը չդրավ հայրասպաններու համար, չէի կարծեր, որ, պատասխանեց Աթենքի օրենսդիրն, պիտի գտնվին մարդիկ, որ համարձակին իրենց հայրն կամ մայրն սպաննելու։

Կը պատմեն թե ծննդենեն տասն օր ետքը եկեղեցի տարվեցավ կնքվելու համար։ Մկրտութեան ժամանակ իմացուց կերպով մը, որ երկար արարողութիւններե շատ չախորժիր, այնչափ շատ լացավ, որ մկրտող քահանան տխրվեցավ աղագրել... արարողութիւնը։ Փառատեր ըլլալն ալ հաստատեց նույն օրն. երբ կնքահայրն քահանային պատասխանելով կըսեր. թե Երախան հավատաւ, հույս եվ սեր կը խնդրե, մեկեն ի մեկ կնքահորը դիրկեն նետվելով՝ Երախան կաթողիկոսութիւն կը խնդրե, պոռաց։ Կնքահայրն յուր սանին սիրտը չկոտրելու համար՝ սերը վերցուց և տեղը կաթողիկոսութիւն դնելով՝ կրկնեց. Երախան հավատաւ, հույս և կաթողիկոսութիւն կը խնդրե։ Պատրիարքութիւն ալ կը խնդրեմ, կրկնեց տղան. կնքահայրն, որ վարժված էր զավակին տալ ինչ որ ուզեր, չհամարձակեցավ սանին խնդիրքը մերժել. ուստի հավատաւ բառին տեղ պատրիարքութիւն դնելով ըսավ՝ Երախան պատրիարքութիւն, հույս և կաթողիկոսութիւն կը խնդրե։

— Հապա՛ հավա՞տքը։

— Հիմակուհիմա թող մնա այն, պատասխանեց Երախան։

Այս պատմութիւնն ըստ մեզ, առասպել մ'է. բայց որովհետև առասպելներն շատ անգամ ճշմարտութեան այլաբանութիւններն են, կրնանք այս առասպելեն ալ այս ճշմարտութիւնը քաղել, որ Հասունյան յուր ամեն ուզածը ձեռք բերելու կարողացած է, նույնիսկ յուր ծննդյան օրերուն մեջ։

Մինչև տասնըհինգ տարեկան Կ. Պոլսո վարժարաններուն մեջ դաստիարակութիւն առնելե ետքը, 1825-ին թոլեճցի քահանաներու ձեռամբ դրկվեցավ Հռոմ, Բրոբականդայի դպրոցը[1], քահանա ըլլալու համար։ Նախ հիշյալ դպրոցին մեծավորներեն մերժվեցավ, բայց հետո Տուրսունյան Հ. Բարսեղ և Հովնանյան Հ. Կարապետ վարդապետներուն ջանքովն և աղաչանքովն ընդունվեցավ հոն, ուր քանի մը տարի կարդալեն ետքը քահանա ձեռնադրվեցավ։ Այս կետին մեջ Հասունյան անմեղ է և մեծ անիրավութիւն է Տուրսունյանի և Հովնանյանի հանցանքն անոր վրա բեռնավորելը։

1833-ին Պոլիս դարձավ և բնակեցավ Գալաթիա, Հիսուս Փրկիչ մայր եկեղեցվուն վանատան մեջ։ Այս ըվականին եկեղեցականներեն ոմանք իրենց նախապահին դեմ լարված ըլլալու համար, ամեն օր նորանոր խնդիրներ կը հարուցանեին, օրինակի համար, եթե նախապահն պատվեր տար, որ պատարագին մեջը խաչակնքեն՝ ատոնք փղոցը կելնեին և հոն կը խաչակնքեին։ Հիշյալ եկեղեցականներն հաջողեցան իրենց մեջ առնել նաև Հասունյանն, որ վանքեն նոր ելած՝ մաքուր աղավնի մը ըլլալով՝ խարխեցավ անոնցմե և խեղճը միամտութեամբ աթոռակալ անվանվեցավ քանի մը տարիեն։

1838-ին երբ Գալատիո հռոմէական հայերը կը կեղեքվեին քանի մը քահանաներե, որոնք Հասունյան կուսակցութիւնն թե և թիկունք առած կը գործեին, ինչ որ կուզեին, նախապահ Մարուշ պերապայծատն քննիչ մը դրկել կորոշե հոն՝ ժողովուրդը հանդարտեցնելու համար։ Հասունյան հոժարակամ ստանձնեց այս պաշտոնը, գնաց և ետ դարձավ երեք օրվան մեջ ժողովրդյան հուզումն... սաստկացնելեն ետքը։

Յուր անունը անմահացնելու համար կը փափաքեր հռոմէական հայերուն բարութիւն ընել, այնպես վարվելով անոնց հետ, ինչպես կը վարվի կոշկակար մը իր աշակերտին հետ։ Ժողով կը կազմեր Պելկրատի անատանեերուն մեջ, ուր թեպետև կերթար օդ փոխելու, բայց նախապահը փոխելու համար աշխատելե ետ չէր մնար։ Անատոլուին ժողովի մեջ որոշվեցավ օր մը և դրվեցավ Բրոբականատային թե Մարուշ նախապահը ծեր էր, տկար էր, անդամալույծ էր, անկար էր, և վերջապես էր ինչ որ կուզեր Հասունյան ընել զայն, և թե՝ օգնիչ եպիսկոպոսի մը կարոտ էր։ Արդարև նախապահը ծեր էր, բայց քանի որ յուր պաշտոնը վալս պարել չէր՝ յուր ծերութենեն վնաս մը չէր գար ազգային իրավունքներուն։ Բրոբականատան հավատք ընծայեց իրեն դրկված դրութեան և Հռոմի կանչեց Հասունյանը, որ 1842-ին հասավ հոն—առանց այս ուղևորութիւնն ազգին հաղորդելու և անոր հավանութիւնն առնելու—և օգնիչ եպիսկոպոս ձեռնադրվեցավ։

1842 սեպտեմբեր 21-ին Պոլիս դարձավ։ Հեղեղի պես արցունք կը վազեր յուր աչերեն, երբ կը տեսներ, որ կը շատնային Պատրիարքին վրա դանդատ-

ներն, որոնք յուր գործարանն կելնեին, սիրալ պատառ-պատառ կըլլար՝ երբ կը պիտեր, որ աղեկ չէին երթար աղդին գործերը, զորս ինքը կը խաուներ. կուլար, կողբար և կը հառաչեր, որ պատրիարքական իշխանութիւնը ձեռք անցուննե և ժողովրդյան վերքերը դարմանե։ Յուր ողրերը մինչև Արամազդա քթիը բարձրացան, փունգտաց աստվածներու հայրը. պատրիարքն յուր աթոռն վար գլորեցավ։ Հասունյան բարձրացավ պատրիարքական աթոռին վրա. հով, անձրև, կարկուտ, փոթորիկ անմիջապես հասան, շատ մը տուներու ապակիներն փշրվեցան. մեծ ծառեր արմատախիլ եղան. քանի մը տուներ կործանեցան։

1845-ին պատրիարքական աթոռին վրա ելնելեն ետքը, ուղեց, ազդին լավ ծառայելու համար, նախագահական իշխանութիւնն ալ յուր վրա առնել։ Ուստի սկսավ նախագահին դեմ գանգատներ բաղմապատկել և ըսել. նախագահը ցնդած է, անկարող է իշխանութիւնը գործածել։ Գեր. Մարուշն օգտիտխութեան համար Պիլեզիկճի Պողոս աղային տունը կը գտնվի օր մը։ Հասունյան իմանալուն պես ժողվեց իր մարդերը, հիշյալ տունը գնաց և նախագահը պաշարել տալով՝ ըսավ իրեն.

— Դուն ծեր ես, ցնդած ես, անկար ես, ուստի քեզի հանձնված հոգիներու փրկութեանը համար, եկեղեցիին շինութեանը համար, պայծառութեանը համար, անպատճառ հիմա նախագահութենեդ հրաժարելու ես։

Ահա առաջարկութեան ձև մը, որուն մեջեն, եթե նախազգուշութիւն բաներն տեղ իսակ բառը դնենք, ճիշտ այն ձևը կունենա, որով առաջարկութիւն կընեն մեզ քանի մը զինված մարդեր, երբ լեռներու մեջ հանդիպին մեզի։ Ծերուներն այս առաջարկութեան վրա անբարբառ անոնց երեսը նայեցավ և երբ դուրս ելավ՝ նավակ մը մտավ, նավակին մեջ կաթված իջավ և քանի մը օրեն վախճանեցավ...ի փրկութիւն հոգվո, ի շինութիւն և ի պայծառութիւն եկեղեցվո տյառն մերո Հասունյանի։ Հուղարկավորութեան հանդեսին օրը, երբ Հասունյան սուրբ պատարագ կը մատուցաներ և ահա սարկավագներն խորանի վրա Հասունյանը նախագահ կընտրեն և կը հռչակեն երգելով ևս առավել զարհիեպիսկոպոսն մեր զտեր Անտոն նախագահ և այլն։ Եվ որովհետև Բ. Դռնեն հրամանագիր ղրկված չէր սարկավագներուն հայտարարող, թե նախագահ ընտրելու իրավունքն սարկավագներու տրված է՝ եկեղեցական և աշխարհական կը հուղվին եկեղեցիին մեջ այս նոր ընտրութեան վրա և 1848 օգոստոս 6-ին Հիսուս Փրկիչ մայր եկեղեցվո մեջ ընդհանուր ժողով կը գումարվի։ Կը հարցվի ժողովո մեջ դեր. Հասունյանին, թե որո՞ւն ընտրութեամբն նախագահ եղած է, Հասունյան ձեռները շփելով կը հրամայե երկյուղածութեամբ, որ Հռոմեն իրեն տրված կոնդակը կարդացվի։ Կոնդակը կը կարդացվի լատիներեն լեզվով. ժողովականներն իրարու երես կը նային։

— Մենք լատիներեն չենք հասկնար, գերապայծառ, կըսեն ժողովականք։

— Վնաս չունի, կը պատասխանե Հասունյան, թող կարդացվի։

— Բան մ'ալ չենք հասկնար։

— Ավելի աղեկ... արդեն մարդս ամեն կարդացածը կամ լսածը հասկնալու պարտավոր չէ։

Կոնդակին լատիներեն ընթերցումը կը վերջանա և տաճկերենը կսկսի, վասն զի այն թվականին հայերեն լեզու չկար։ Կոնդակին իմաստն էր հետեվյալը.

« Հասունյա'ն, երբ որ Կ. Պոլսո նախագահը վախճանի՝ այն ատեն դուն Անարզաբա թեմը թողլով Կ. Պոլսո նախագահութիւնը ձեռք առ... եթե այդ իշխանութեանդ դեմ դնելու ըլլան՝ գորութեանդ ցցուր անոնց. եթե չկարենաս զսպել՝ մեզի իմաց տուր, որ պետք եղածը անօրինենք և անոնց գլուխը ջախջախենք...»։

Տխրութիւնը և լռութիւնը կը թագավորեն ժողովո մեջ. բայց ի'նչ օգուտ, արտաքին գործերու պաշտոնյան միշտ Հասունյան է։ Հասունյան, ինչպես հայտնի է, գովելի համբերութեամբ վարված է այս պարագային մեջ. վասն զի կարող էր դանակով զարնել սպաննել Մարուշը, քանի որ կոնդակին մեջ գրված էր, թե անոր մեռնելեն վերջը ինք նախագահ պիտի ըլլար։ Ժողովականները տեսնելով, որ իրենց ազգային իրավունքներն բռնաբարված են այս կոնդակով՝ զոր Հասունյան ձեռք անցուցած էր Հռոմեն օգնիչ-եպիսկոպոս ձեռնադրված ժամանակ և զոր գաղտնի պահած էր՝ կը գայրանան։ Հակոբ չելեպին կը հարցունե գեր. Հասունյանին.

— Տեր, ազդին իրավունքներն բռնաբարված են այս կոնդակով։

— Ինձի ալ այնպես կը թվի, կը պատասխանե Հասունյան ցավակցութիւն հայտնելով։

— Կընդունի՞ք, որ Հռոմ մեր ազգային իրավունքները հափշտակե։

— Քավ լիցի... կը պատասխանե, համբիչը հանելով ծոցեն։

— Երկու թուղթ գրենք, մեկը ս. պապին, մյուսը Բրոբականտային և մեր իրավունքները պաշտպանենք։

— Այո՛, գրենք, ոչ երկու, այլ երկու հազար թուղթ. ինչո՞ւ մեր իրավունքները պիտի հափշտակեն, կըսե և յուր ծիծաղը ծածկելու համար կսկսի վարի շուրթին տակը բուսած մազերը խաուել։

Ժողովո որոշմամբ կը գրվին, կատարագրվին և կը ղրկվին այս թուղթերն, որոնց պատասխանը մինչև այսօր եկած չէ։

Պատրիարքական և նախագահական իշխանութիւնները այսպես հագնելեն ետքը, սկսավ ինք իր գլխուն գործել, ամեն բան ինքը կորոշեր և կը տնօրիներ, ուրիշներուն ձանձրութիւն չէր տար։ Ժողովուրդը նկատելով, որ իր

Պատրիարքը առանձին կը գործե, ընդդէմ Հոգնութենեն ազատելու համար ուղեց տասներկու անձերե բաղկացյալ Ազգային ժողով մը կազմել։ Դեմ կեցավ Հասունյան, պնդելով՝ թե ինքը ազգին անձնանվեր պաշտոնյան է և թե ամեն գործերը վարելու պատրաստ ըլլալով՝ պարապ աշխատություն է տասներկու հոգիի ձանձրություն տալ։ Հակահասունյանք աղերսագիր կուտան Բ. Դռան և Ազգային ժողովո հաստատությունը կը խնդրեն, Հասունյանք ալ ուրիշ աղերսագրով մը Հակահասունյաններուն ուղածը չեն ուղեր, հայտնելով՝ թե իրենք շատ դոհ են. Հասունյանի բռնած ընթացքեն։ Երկու կողմեն մարդեր կը հրավիրվին Բ. Դուռը, ուր Հասունյանները լալով և ողբալով կաղաղարարեն, թե դժոխք կերթան, եթե այդ բարեկարգության հավանություն տան, մինչև որ Համազգյաց ընկերության[2] մարմինը մեջտեղեն չվերնա, առարկելով միանգամայն՝ թե հիշյալ ընկերությունն, որ հայերեն ու հռովմեական հայերեն կազմված էր ազգի մեջ դաստիարակություն ծավալելու նպատակով, հակառակ էր հռովմեական սուրբ եկեղեցվո քարոզությունները, թե երկրագործությունը ազգի մեջ ծաղկեցնելն Վատիկանու[3] օրենքներուն համաձայն չէր, թե հին դրամներ և ձեռագիրներ ժողովելն ավետարանին հակառակիլ էր, թե գյուղերու և քաղաքներու մեջ դպրոցներ հաստատելն Պետրոս առաքյալին ուսկանին մեջ քարեր ձգել էր, թե վերջապես հերետիկոս հայերու հետ միաբանիլն ու հաղորդակցություն ունենալն իրենց նախատինք էր Հռովմա գահուն առջև։ Հասունյան յուր արածած հոտին լուսավորությենեն մեծ օգուտներ քաղելով, հաջողեցավ քանդել Համազգյաց ընկերության հիմերն, որոնց վրա շինվեցավ հռովմեական սուրբ եկեղեցվո փառքը։ Բայց Հակահասունյան կուսակցությունը[4] Ազգային ժողովո հաստատությանը վրա պնդելով կը պնդեր։ Բ. Դուռն ա՛լ ձանձրացավ Հասունյանե և հրաման ղրկեց, որ Հակահասունյաններու աղերսագիրն գործադրվի։ Հասունյան այս անգամ չկրցավ Բ. Դռան հրամանին դիմադրելու և ստիպվեցավ պատրիարքական իշխանութենեն հրաժարիլ, պատճառելով, թե անձնական տկարություն ուներ, մինչդեռ օրը տասներկու անդամ կը ճաշեր և երկաթե մը ավելի քաջառողջ էր։

Մեծ սխալի մեջ իյնալ է կարծելը, թե Հասունյան պատրիարքութենեն հրաժարելուն պես գործե քաշվեցավ։ Վենետիկի միաբանությունն, որ Հասունյան քաղաքականության թշնամի նկատված էր, հաճեցավ յուր երեսին վրա ապատակ մը ընդունել Հասունյանե, որ իսալերեն պարսավագիրք հրատարակելով ամբաստանեց Վենետիկի միաբանությունն իբրև հերետիկոս և հերձվածող, պատճառելով՝ թե հիշյալ վանքին միաբաններն միշտ պաշտպան են հայերու։ Վենետիկի Միաբանությունը ինքզինքն արդարացնելու համար պարսավագիրքին պատասխան մը գրեց պարսավագիրքով մը, որուն մեջ հայտարարելե ետև, թե Հռովմա պապին ամեն հրամաններուն հպատակ էր, կը հարեր

նաև, թե հայ ազգն ու եկեղեցին հերձվածող և հերետիկոս էր։ Այս պատասխանին վրա Հասունյան ուրախությենեն ամիս մը խնդաց։

1853-ին գործերն այն աստիճանի եկան հասան, որ Հակահասունյաններն հայտնեցին վերջապես, թե իրենց անհնար է Հասունյաններու հետ միանալը։ Հասունյան, յուր վարպետության ղենքերուն վրա բարդեց նաև կրոնական զենքեր։ Բանադրեց այն ամեն անձերն, որոնցմե չէր ախորժեր։ Քանի մը օրեն յուր վարդապետները իրեն հրավիրելով՝ իշխանություն տվավ անոնց մինչև նոր կիրակի արձակել անուղղակի գործողները—ինքը բանադրելու զբաղած ըլլալով արձակելու ժամանակ չուներ,—իսկ ինք սառնձենց ուղղակի գործողներն արձակելու պաշտոնը դեր մինչև այսօր արժանի չեղավ վարելու։ Առավոտը արթնանալուն պես վարդապետներուն կըսեր, բանադրվելիք անձերու ցուցակը բերե՛ք ճայիմ, իսկ երբ վարդապետները կը պատասխանեին, թե բանադրվելու մարդ չմնաց՝ կսպասնար իրենց, որ մարդ գտնեն, որպեսզի բանադրե։ Ճաշեն առաջ կը բանադրեր, ճաշեն ետքը քիչ մը կը կախակայեր, քեպեռե երբեմն ալ կարձակեր, բայց շատ անգամ գիշերը կը քակեր և առավոտուն կը կապեր. եթե կապելու համար չվանի սվետք ունենար՝ չվանի վաճառականները մեծ գործ մը տեսած սիրտ ըլլային։ Հասունյան երբ տեսավ, որ բանադրելն, անիծելն ու կախակայելը մեծ արդյունք մը չունեցան, սկսավ ս. պապեն շրջաբերականներ բերել տալ, ամեն օր արևուն հետ մեկտեղ նոր շրջաբերական մը կելներ։ Հակահասունյաններն այդ շրջաբերականները կարդալով՝ հետևյալ կերպով կը պատասխանեին Հասունյանին.

«Տեր. Հասունյան,

Մեծապես մխիթարվեցանք կարդալով ս. Հոր Պիոսի Թ. քահանայապետին կոնդակը։

Մենք քու վրա վստահություն չունինք։

Ձեր բռնած ճամբան անհամաձայն է Քրիստոսական ոգվույն։

Ուստի ամենեին անվստահ ըլլալով ձեր վրա, զարձյալ հաստատությամբ կը նորոգենք մեր բողոքը աշխարհի առջև, որ ասկից ետքը մեկ կերպով մը չենք ճանչնար զձեզ մեզի հովիվ և առաջնորդ... դնա՛, մարդ աստուծո, թող տուր քիչ մը մեր օձիքը»։

Հասունյան այս պատասխանը կարդալով՝ աչերը վեր կը վերցուներ և կաղոթեր. Հա՛յր, թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն. աղոթքը լմնցնելուն պես ինքնիրեն կըսեր. դուք մի՛ ուզեք զիս, ես զձեզ կուզեմ։

1857-ին հոգևորական իշխանության համար տերությենեն պերաք ընդունեց, որով իրավունք ստացավ իր ձեռնադրած եպիսկոպոսներն ուղած տեղը ղրկել, առանց ազգային իշխանության հարցնելու։ Այս պերաքի խնդիրն ազգը տակնուվրա ըրավ։ Ամեն անիրավություն կըներ, կըսեին, և երբ Բ. Դուռը բա-

ցաւորություն պահանջեր՝ այդ գործը հոգևորական է, ինձի կը վերաբերի, կը պատասխաներ։

Հասունյան քան տարի վանականներու և ազգին դեմ մաքառելե ետքը, ուղեց որ Կիլիկիո Տան աթոռն[5] Պոլսո աթոռին քով դնե, միացնե զանոնք և երկու աթոռներուն վրա նարա մը դնելով յուր ժողովրդյան հետ խաղա և զվարճանա։ Կիլիկիո Տան կաթողիկոսն բանակցության մտավ Հասունյանի հետ, որ լսեց, երբ տեսավ՝ թե հակառակ սկզբունքներուն վրա պիտի հիմնվեր այս միությունը։

1865 դեկտեմբերի 23-ին հոդին կը փչե Կիլիկիո պատրիարք Գրիգոր կաթողիկոսը. 1865 դեկտեմբերի 28-ին նոր հոգի կառնե Կ. Պոլսո նախագահ Անտոն Հասունյան։ Վանականներն իրենց սահմանադրության համեմատ անմիջապես գաղտնի քվեարկությամբ տեղապահ կընտրեն Դավթյան Սերովբե վարդապետը։ Նախագահ արքեպիսկոպոս Գասպարյան Բարսեղ անպատվություն սեպելով իրեն վրա պարզ վարդապետի մը տեղապահ ընտրվիլը՝ անմիջապես պետք եղած տեղերը կը դիմե և Երուսաղեմա լատին պատրիարք Մոնթինյոր Վալերկայի ազդեցությամբ և մեկու մը ձեռամբ Դավթյան վարդապետը հսկողության ներքև կը բանտարկվի, սա հանցանքով, թե ինչո՞ւ միաբանները իրեն շատ քվե տված են։ Հասունյան ամեն ճիգը թափելով կաթողիկոս կընտրվի, միշտ կրկնելով՝ թե «եթե հանդուցյալ կաթողիկոսին իրավունքներեն Հռոմի փոքր փոփոխություն մը ընել ուզե, բնավ հանձն չեմ առներ կաթողիկոսությունը. աստված մի՛ արասցե, իմ նախագահությունս ինձի բավական է»։ Ասոր վրա կ'ելնե, Հռոմի կերթա յուր կաթողիկոսությունը հաստատել կուտա և ետ կը դառնա rեvերuտուսով մը, որ հռոմեական հայերը ամեն իրավունքներե կը զրկեր։

Դարձյալ կռիվ և վեճ։ Բ. Դուռը ա՛լ ձանձրանալով Հասունյանի ընթացքեն, ինչպես որ մենք ալ ձանձրացանք անոր ըրածներն պատմելեն, Մահմուտ Նեսիմ փաշային օրով կը վճռվի, որ այս բարի մարդը քիչ մը դուրս ելնե Օսմանյան հողեն։ Հասունյան բանադրելով իր... բախտը, Պոլիսեն կը մեկնի և Քյութեյյան պատրիարք կընտրվի կախակայալ և բանադրյալ հռոմեական հայերու։ Հասունյան պարապ չնստիր. կը համոզե Քյութեյյանը, որ ադարակի մը դատն վաստակած ըլլալով, Հասունյանի թշնամի ըլլալու պատճառ մը չուներ այլևս, որ պատրիարքութենե հրաժարվի։ Քյութեյյան զղջումի կուգա. ս. պապին առջև մեղա կը գոչե ազգին իրավունքներն քանի մը տարի պաշտպանելով մեծ մեղք գործելուն համար։ 1879-ին Հասունյան պատրիարք կընտրվի։

Հոս կը վերջանա ահա կենսագրությունն այն մարդուն, որուն դեմքն օր մը պզտիկ տղա մը տեսնելով վախցած է և մինչև այսօր կուլա։

ՍՏԵՓԱՆ ՓԱՓԱԶՅԱՆ

Ստեփան Պերճ Պողոս Փափազյան, դաստառու, ազգային երեսփոխան, այցելություն տալով աշխարհին այն ձևով, որով դարուս մեծ մարդերն իրարու կայցելեն. այսինքն կանխավ հարցուց աշխարհին, թե ժամանակ ունի՞ յուր այցելությունն ընդունելու։ Գինեմոլի մը քթեն ավելի կարմիր սահմանադրական, և ժողովրդյան իրավունքներուն տենդ մը ավելի ջերմ պաշտպան ըլլալով՝ նախապես հասկնալ ուզեց, թե մի գուցե իր աշխարհ գալն վնաս է ազգային շահերուն. ուստի մարն արդանդեն հարցում մը ներկայացուց հետևյալ իմաստով.

«Իմ աշխարհ գալս ժողովրդյան իրավունքներուն հակառա՞կ է, թե ոչ»։

Այս հարցումն կարծիքներու տարաձայնություն մը գոյացուց ազգին մեջ։ Մեկ մասն որ ամիրայական էր, Փափազյանի ծնունդն հակառակ դատելով ազգային շահերուն, անոր հարցման հետևյալ կերպով կը պատասխաներ.

«Եթե ձեր աշխարհ գալը քիչ մը երկարաձգեք՝ ազգին մեծ ծառայություն մը ըրած կըլլաք»։

Մյուս մասն, որ ժողովրդական էր և որուն մեջ սխալմամբ սպրդած էին քանի մը ամբաստանված կրոնավորներ, որոնք արդարանալու համար անհամբեր Փափազյանի գալստյան կսպասեին, անոր ծնունդը համաձայն կը կարծեին ազգային շահերուն և յուր հարցման այս պատասխանը կուտային.

«Կարելի եղածին չափ շուտ գալու աշխատեցեք»։

Այս վերջին մասը մեծամասնություն կը կազմե և կորոշե, որ Փափազյան ադատ է աշխարհ գալու։

Փափազյան, որ աշխարհ գալեն ավելի կը փափաքեր Ղալաթիո խորհրդարանը՝ գալ, որպեսզի հոն ամուր դիրք մը բռնելով՝ դյուրությամբ կարենար պաշտպանել ազգային շահերն, որոնց մեջ ինքն ալ խոշոր շահ մը ուներ, անշուշտ իբրև ժողովրդյան խոշոր մեկ անհատը, Փափազյան, կըսեմ, ջանաց առջի բերան քիչ մը բարեփոխել այս որոշումն. իսկ երբ համոզվեցավ, որ անկարելի էր՝ հավանեցավ խաստյուղ գալ 1839 թվականի նոյեմբեր ամսուն մեջ։

Այս տղան ծնելուն պես թմրության մեջ ինկավ. կենդանության նշան մը չէր երևար իր վրա և մանկաբարձն պատրաստվելու վրա էր վերջին բառն ըսելով հայտնելու, թե մեռած է, երբ հանկարծ կը տեսնե, որ անոր լեզուն կը շարժվի։ Այս լեզուն, որ քանի շարժեր կը մեծնար, երեք վայրկյանի մեջ մայր հկեղեցվո ավազերեցին հոդաթափին չափ մեծցավ։ Ներկա եղողներն ապշած իրարու երես կը նայեին, երբ զարմացմամբ տեսան, որ երախային լեզվեն գեղեցիկ տղա մը կը ծներ։ Մանկաբարձը նախ կը սոսկա, բայց հետո հիշե-

լով, որ Ադամա կողեն կին ստեղծող ամենակարողն չհարանար Փափազյանի լեզվեն ալ էակ մի լույս բերել, կը վանե սոսկումն, կը դրկե լեզվածին մանուկն և խանձարուրի մը մեջ կը փաթաթե զայն: Ավելորդ է ըսել, որ ժողովրդականություն էր այս լեզվածին և դրավիչ մանկան անունը, քանի որ ազգին մեջ առած դարձած է այն խոսքը՝ Թե ժողովրդականությունը Փափազյանե ծնունդ առած է: Չեմ կարծեր, որ գտնվի մեկն այսօր և ինձի հարցունե, Թե ինչո՞ւ Ադամա կողեն եվա և Փափազյանի լեզվեն ժողովրդականություն ծնավ. վասն զի ամենքս ալ գիտենք, որ մարդս ինք իր գլխուն սակար էակ մ'է և անպատճառ ընկերի պետք ունի: Ադամ կնկան մը պետքն ուներ, ստացավ զայն կողեն. Պրահմա[2] քահանայի, պատերազմողի և արհեստավորի պետքը կզգար, ստեղծեց զանոնք՝ իր գլխեն հանելով առաջինը, բազուկեն քաշելով երկրորդը, ոտնեն առնելով երրորդը. Փափազյան ժողովրդականության համար կը հառաչեր, ընդունեց զայն յուր լեզվեն: Մոռնալու չէ, որ ապրելու համար ամեն մարդ իրեն ընկեր մը ստեղծելու հարկին մեջ գտնված է. խմբագիրներն, որ ձմեռնան ածուխ գնելու համար Լուսինյան կատեղծեն[3]. երեսփոխաններ, որոնք իրենց շահուն համար ամեն օր նոր իրավունքներ կածեն, բանաստեղծներ, որ օր մը չեն կարող ապրիլ Եթե իրենց համար գովեստներ չքաշեն իրենց բարեկամներու բերնեն. դատավորներ, որոնք Արդարությունը չտեսնելու համար Կուրություն ի լույս կածեն. վաճառականներ, որ ժամվան մը մեջ Սառույցյան երկու հազար հավկիթ մեկեն կը ձգեն. դրավաճառներ, որ օրացույց մը ծախելու համար ճարտասանության ստեղծող կը հանդիսանան. խարեբաներ, որ խաբելու համար իրենց աչերեն այնչափ արտոսր կը թափեն, որուն վրա անդղիական Տեվասթեյլըն դրահավոր նավը կրնար ճամբորդություն ընել. երդիծաբաններ, որ ոչ թե ապրելու, այլ չմեռնելու համար յուր ընթերցողներուն ծիծաղին արարիչ կըլլան. դրագիտներ, որ կատր մը հացի համար ժամվան մը մեջ իրենց ըղեղեն խմբագիր, դասատու, մատենագիր, թարգմանիչ կը հանեն. ընթերցողներ, որ ձրիաբար լրագիր կարդալու համար լրագիր ունեցողի մը քով շուտով բարեկամություն կստեղծեն և անոր դրպանեն լրագիրը կը քաշեն ըսելով, չեմ կարծեր, որ մեջը նոր բան մը ըլլա. երիտասարդներ, որ պարի մեջ նոր կամուրջներ կստեղծեն օրիորդներուն ու տիկիններուն թևերուն տակեն անցնելու համար. ազահներ, որ այն աստեն իրենց զավակ կստեղծեն, երբ դիշերօթիկ վարժարանի մը անօրենեն խոսք առնեն, որ իրենց զավակն կես թոշակով պիտի ընդունի վարժարանին մեջ. պճնող, պչրող տիկիններ և օրիորդներ, որ իրենց դեմքին վրա ամեն օր նորանոր պատկերներ կստեղծեն. վերջապես այս ամենը չէ, որ ստեղծեց Ազգային ջոջերը: Արդ, ասոնք կարդալեն ետքը, ոչ ոք կը համարձակի բարկոծել Փափազյանը, Թե ինչո՞ւ ժողովրդականության ծնունդ տվավ և ոչ Թե

ուրիշ բանի մը. մանավանդ Թե ամեն մարդ գովելու պարտավոր է զինք այն նախատեսության համար, որով գուշակած է, Թե հայ ազգին մեջ ավելի կը վաստկի այն մարդը, որ աև ժողովուրդ. վաև ժողովուրդ կը պոռա, քան այն, որ ուղղական բան, սեռական բանի ըսած ժամանակը մյուս կողմեն բաժանորդներուն ոտները համբուրելով կազաչե, որ հաճին իրենց բաժանորդագիր վճարել: Իսկ գալով այն հարցման, Թե ժողովրդականությունը ինչո՞ւ անոր լեզվեն ծնավ և ոչ սրտեն, կը պատասխաննենք, որ մարմնակազմության տեղեկություն ունեցողներուն հայտնի է արդեն, որ լեզուն ատանկ բաներու ծնունդ տալու համար սրտեն շատ ավելի դյուրություններ ունենալով, ժողովրդականությունը չէր ուզած անոր սրտին նեղություն պատճառել: Փափազյան Թեպետև գիտեր, Թե ոչ ոք իրավունք պիտի ունենա զինքը քարկոծելու, բայց գիտնալով նաև Թե քարկոծելու համար անպատճառ իրավունք ունենալու չէ, Տրահանդ զրկեց կնքահորն, որ անունը Ստեփաննոս[4] դնե:

Փափազյանին հանճարը լեզվին վրա ամփոփված ըլլալով, չորս ամիսեն խոսիլ սկսած էր և Լազարի խմբագիրեն շատ աղեկ կը հասկցուներ յուր միտքը[5]:

Մանկության օրերը խոսելով անցունելեն ետքը, 1849-ին Խասգյուղի Թաղային վարժարանը մտավ, նայելու համար Թե... ո՛վ կա ներսը: Տարիի մը չափ հոն մնաց և սորվելեն ետքը, Թե բան մը սորված չէր՝ իրեն հարմար վարժարան մը փնտռելու համար դուրս եկավ: 1850-ին Ագգային հիվանդանոցը գնաց:— Երե Փանոսյանի անօրենության ժամանակ գացած ըլլար՝ անպատճառ խենդերու քովը պիտի դրվեր. վասն զի այս երկուքին կարծիքներն շատ հակառակ են իրարու:— Քիչ ժամանակի մեջ շատ առաջ գնաց մայրենի լեզվին մեջ: Այնչափ լավ սերտեց քերականությունն, որ շիտակ խոսիլ ու գրել սորվելեն ետքը, շիտակ չխոսիլ ալ սորվեցավ բավական: Այն ատենվան բոլոր քերականություններն աչքե անցունելեն ետքը՝ ինքը գրեց հատ մը և անկից դաս տալ սկսավ... իրեն: 1854-ին հողագործության դասախոսություն բացված ըլլալով հիշյալ վարժարանին մեջ՝ սկսավ մշակել նաև այս ճյուղը, զոր բավական ընդարձակեց: Հող ճանաչելու մասին իրեն հավասարող չկար. չէր քաղեր ինչ որ կը ցաներ, շատ անգամ ելակ կը տնկեր և կաղամբ կը քաղեր: Ենթադրելով, Թե հողն ապերախտ չգտնվիր իրեն՝ մենք կըսենք, որ ժողովրդյան շահերը պաշտպանելու կոչված մեկը դղումի կամ շողգամի իրավունքներու հետ զբաղելու ժամանակ չկրնար ունենալ:

1856-ին, դասատվության ճամբով ժողովրդականության հասնելու նպատակով, Իզմիրի Մեսրոպյան[6] վարժարանի հայկաբանության դասատու կարգվեցավ: Չորս գործողությունները միայն պարունակող համառոտ թվաբանություն մը հրատարակեց հոն: Ամեն անգամ, որ աշակերտներու մեջ թվաբա-

նական խնդրո մը վրա վիճաբանություն կըլլար՝ ինքն միշտ մեծամասնության կողմը կը գտնվեր... ժողովրդականություն վաստկելու համար։

Վարժարանին մեջ օր մը կռիվ կը ծագի երկու աշակերտներու մեջտեղը, որոնք իրարու դլուխ կը պատռեին։ Փափազյան կը տեսնե և անմիջապես անոնց քովը կերթա։

— Վարժապետ, առաջ ան ինձի զարկավ։

— Ինչո՞ւ զարկիր, պարոն։

— Վարժապետ, մեկ անգամ չորսը մեկ կընե՝ կըսե։

— Ան ալ կըսե, որ մեկ անգամ չորսը չորս կընե։

— Ասոր համար իրարու դլո՞ւխ պատռելու է։ Կարծիքներու տղաություն կը հարդելու եք։

— Բայց վարժապետ, կարելի՞ է, որ մեկ անգամ չորսը մեկ ընե։

— Կարելի է, որ ընե։

— Ի՞նչպես հասկնալու է։

— Քվեի դրեք, մեծամասնությունն ո՛ր կողմն որ գոյանա, ուղիղն ալ այն կողմն է։

Տասնի չափ աշակերտներ խնդիրը քվեի կը դնեն և մեծամասնությունը կորոշե, որ մեկ անգամ չորսը մեկ կընե։

Փափազյան ավելի ևս կը հաստատվի յուր համոզման մեջ, թե ուրէ խնդրույն մեջ հաղթանակը տանելու համար խելքեն ավելի մեծամասնություն ունենալու է մարդ մը։

Քանի մը տարի Իզմիր մնալեն ետքը 1859-ին Պոլիս դարձավ և դասատվության պաշտոնով նորեն Ազգային հիվանդանոցը մտավ։ Օրը երկու անգամ աշենաբանություն կըներ աշակերտներուն, ոչ թե անոնց բան մը խոսելու, այլ վարժվելու համար աշենախոսության, որով օր մը աջակողմյան երեսփոխաններու[7] գլուխը պիտի հաթեցուներ Ազգային ժողովո մեջ։ Ամենօրյա վարժություններու շնորհիվ այնքան հառաջդիմություն ըրավ խոսելու մեջ, որ եթե ունկնդիրներն երկաթյա ականջ ունենային՝ ամիս մը շարունակ կը խոսեր առանց ամենափոքր նեղություն մը զգալու։ Ճառին ուժգնություն տալու համար բան մը չէր խնայեր. եթե խոսքերը տկար գտնվեին՝ կը դիմեր ձեռներուն, որ խոսքերեն ավելի զորավոր էին, ձեռներովը կը զարներ առջևը դրված դրասեղանին և կը կոտրեր զայն։ Հերակղես[8] կը ձևանար, երբ լու մը սպաննել հարկ ըլլար։ Ունկնդիրներն արթնցնելու համար իշուն սավերին չէր դիմեր, այլ բոլոր ուժովը կը պոռար։ Սովորություն ուներ խոսած ժամանակ երբեմն քանի մը քայլ առնել դեպի ձախ և երբեմն դեպի աջ—վերջերս կարծիքներն ալ ոտներուն օրինակին հետևեցան, երեսփոխանական ժողովո

մեջ—չէր մոռնար նաև չորս քայլ դեպ առաջ գալեն ետքը չորս քայլ ետ երթալ. հոգեփոխության հավատացողները կըսեին. ահա Կիկերոն, որ բառերիլ կը խաղա։ Շատ մը կրոնավորներ կերթային անոր ատենաբանությունները մոխիկ ընելու և համոզել կաշխատեին դինքը, որ վարդապետ ձեռնադրվի. իսկ Փափազյան նորեն բեմ ելնելով ատենաբանությամբ մը կը մերժեր անոնց առաջարկությունը։ Բացի հիվանդանոցի վարժարանեն մայրաքաղաքիս դրեթե բոլոր վարժարաններուն մեջն ալ դասախոսություն ըրած և բավական աշակերտներ ընծայած է ազդին։ Երկար տարիներ դասախոսություն և տնօրենություն ըրած է Ղալաթիո վարժարանին[9] մեջ, զոր միշտ թաղային մյուս վարժարաններեն բարձր դիրքի մը մեջ պահելու հաջողած է և գործող մարդ ըլլալն անհերքելի կերպով հաստատած է։

1860-ին սկսավ դասագիրք հորինել յուր աշակերտներուն համար։ Հորինեց համառոտ Ազգային պատմություն մը, որուն մեջ թագավորներուն այցետոմսերը միայն գրված էին։ Աշակերտներն մարզպաններուն, պատրիկներուն, իշխաններուն և թագավորներուն անունները միայն կը սորվեին և կես ժամեն հետը կը մոռնային։ Տիկին Մարթա պատուհանին առջևը նստած՝ փողոցեն անցնող մեկու մը վրա ավելի կատարյալ տեղեկություն կրնա տալ, քան Փափազյան յուր հորինած ազգային պատմությամբը հայ դյուցազներուն վրա։ Ես հավատար, բացեք անոր պատմությունը, որպեսզի տեսնեք միայն հետևյալ հարցումները.

— Ո՞վ էր Հայկ.

— Բելն[10] որո՞ւ զավակ է.

— Սա մարդն Արամին[11] աներձագը չը՞ նմանիր.

— Արային[12] հայրը մորուք ունե՞ր.

— Տիգրանին քեռա՞յրն է սա։

Պետք է խոստովանիլ, որ հաճառոտության մեջ մինակ չէ Փափազյան, մրցողներ ունի յուր դեմ. և եթե այս մրցումը շարունակվի՝ քանի մը տարիեն տասը տողի մեջ պիտի կրնանք կարդալ մեր Ազգային պատմությունը։ Այդ պատմություններու մեջ, հաճառոտության համար, մորուքը ճերմկցած անձերն նորածին երեխաներ ներկայացված են, դարերը վայրկյանի մը մեջ անցած են։ Ծննդոց գիրքը բաղդատմամբ այն պատմություններուն՝ ընդարձակ գործ մը կրնա համարվիլ։ Հայկա անունը գիտնալն անոր վրա կատարյալ տեղեկություն առնել է, իսկ անոր բազկին վրա ծանոթություն ուզելն մեծ ժամավաճառություն է։ Հրատարակեց նաև Քերականության ձագ մը, որուն վրա՛լ խոսելու հարկ չենք տեսներ, քանի որ հաստատված ճշմարտություն մ՚է այսօր, թե լավագույն դասագիրքերն անոնք են, որ շատ վաստակ կը ձգեն

անոնց հեղինակներուն։ Փափազյան յուր հասուցած դասատուներովը Հայաստանի մեջ կը տարածեր յուր հորինած դասագիրքերը։

1862-ին յուր հեղահամբույր բնավորության շնորհիվ Ղալաթիո թաղական խորհրդո անդամ ընտրվեցավ, դի լցի բանն, թե նաթոռ Մովսեսի ճստաճ փարիսեցիմ։ Ղալաթիո խորհրդարանն, որ երբեմն Պռոպատիկե ավազան[13] և երբեմն ալ Ղալաթա օջախը[14] հորջորջված էր, ժողովրդականության կեդրոն համարված էր և այնչափ ազդեցություն ուներ, որ պատրիարքարանի հանցավոր դատածն անմեղ կը հրատարակեր։ Ամբաստանված կրոնավորները հոն մտնելուն պես կը սրբվեին, ինչպես նաև չամբաստանվածներն ալ կը պղծվեին։ Փափազյան՝ ժողովրդականություն վաստակելու նպատակով, միշտ ակարները կը պաշտպաներ, թեպետև ընդհանրապես կը պաշտպաններ կղերն, որուն ձեռամբ, շիտակը խոսելու համար, ազգային նվիրական իրավունքներն վտանգն ազատած է։ Բերայի գերեզմանատան խնդրույն[15] մեջ կղերական դասուն առաջնորդ եղած է։ Տասներկու տարի շարունակ թաղականության վարնց հակառակ սահմանադրության, որուն կետ առ կետ գործողության այնքան սիրահար էր և է մինչև հիմա, բայց որովհետև յուր պաշտոնավարության ժամանակ վնաս մը չէ հասցուցած եկեղեցվույն՝ սահմանադրությունն ալ մեղադրած չէ զինքը։ Եկեղեցվույն եկամուտներն ավելցուցած է և Ղալաթիո հրեղեն երբ մոխիր դարձան եկեղեցվույն կալվածները՝ Փափազյան անոնց փոխարենը կանխիկ առավ ազահովության ընկերությունները։ Այդ կալվածներուն գոյությունն, ինչպես նաև Կեդրոնական վարժարանին շինությունը մեծավ մասամբ յուր գործունեությանը պարտավոր է ազգը։ Ահա գործող մարդ մը, որ հարուստներ կարժե։ Ազգային շահերուն համար երբ հոգին տալ կը խոստանար՝ շատերը կզարմանային, թե ի՞նչպես կրնա ապրիլ մարդ մը, որ ինքզինքը բոլորովին ազգին նվիրած է և անոր գործերեն վայրկյան մը բաժնվիլ չուզեր. անոնք՝ որ գործի մարդ էին և տասնըհինգ օրը անգամ մը հազիվ կրնային ժողովո մը ներկա գտնվիլ՝ երբ կը տեսնեին Փափազյանն, որ առավոտե մինչև երեկո, երեկոյե մինչև առավոտ ազգային շահերը պաշտպանելու զբաղած է՝ կը հարցնեին իրարու, թե այս մարդն յուր շահերը ե՞րբ կը պաշտպանե։

1863-ին ժամանակ[16] անունով հանդես մը հրատարակեց և բավական առաջ, ինչպես որ սովորություն է առաջ տալ ամեն անոնց, որք հիմարություն կամ դժբախտություն կունենան թուղթի մը տակ խմբագիր ստորագրելու Փափազյան՝ ժամանակին վնասելուն պես ժամանակ հրատարակելու ժամանակը չէ, ըսելով, դադրեցավ ազգին ծառայելե խմբագրությամբ և ուխտ ըրավ, որ Ղալաթիո խորհրդարանեն դուրս չելնե և հոն, միայն հոն ծառայե ժողովրդյան։ Այս ուխտով կարծես հասկցնել ուզեց, թե պատրաստ է ազգին շահերուն պաշտպան կանգնիլ, որչափ առեն որ իրենները չվնասվին։

1870-ին ազգային ժողովո երեսփոխան ընտրվեցավ և ձախակողմյան կուսակցության[17] գլուխ եղավ։ Կը փափաքեր, որ ամեն օր ուրբաթ[18] ըլլար, որպեսզի ժողով գումարվեր և երթար յուր լեզվին հանճարը ցույց տար։ Շատ գիշերներ քնույն մեջ էվն, էվն կը պոռար այնպիսի ձայնով մը, որ դրացիներուն քունը կը խռովեր։ Գիշեր կամ ցերեկ ուր որ փոքր զանգակի մը ձայն լսեր՝ իսկույն երեսփոխանական ժողով կը վազեր։ Օր մը բացակա եղած չէ, միշտ որոշյալ ժամուն ներկա կը գտնվեր, և եթե ընկերներն եկած չըլլային՝ յուր աթոռը մեջքեն չվանով մը կապելով դուրս կելներ, որպեսզի ուրիշ մը չհափշտակե զայն։ Մեծամասնության գործած հրաշքներն հիշելով, երանի կը կարդար իր կատվին՝ որուն կըսեր.

«Կատու, դուն ինե զորավոր ես. եթե երեսփոխան ըլլայիր՝ չորս ձայն պիտի ունենայիր, մինչդեռ ես երկու ձայն ունիմ»։

Նախատեսած ըլլալով, որ հարյուր քսան երեսփոխաններու մեջ քանին կարծիքն իրենց գլխուն մեջ է, իսկ հարյուրին կարծիքն իրենց ձեռներուն մեջ՝ գլուխի տեղն ձեռն կը փնտռեր, և եթե բավական չգտներ, հիվանդանոցներ կերթար և բժիշկներուն կը պատվիրեր, որ եթե կտրվելու ձեռներ կան՝ չնետեն զանոնք, այլ իրեն ծախեն։ Իր նպատակին հասնելու համար ժողովրդականությունը կառներ բերանն և այնպես կը մտներ ժողովը։ Ժողովրդյան շահերն, ժողովրդյան իրավունքներն թե թևի տված կը շրջեին յուր ատենաբանություններուն մեջ, որոնք հաճախ կը ծափահարվեին ժողովրդեն և երբեմն ալ ժողովրդյան շահերեն։ Անուշ ապուրն առանց չամիչի եփելն ժողովրդյան շահերուն վնասակար կը համարեր և երբ երեսփոխան մը զինքն ընդմիջեր ժողովրդյան իրավունքներն օտարի կը մատնվեին։ Քանի մը տարիներ շարունակ կռվեցավ աջակողմյաններուն դեմ[19] այն եղանակավ, որ երեսփոխանական ժողովեն դուրս հակառակասիրություն կը նշանակեր։ Իր սկզբունքն էր, սպիտակ ըսել այն բանին, զոր սև կանվաներ աջակողմն, որուն մեջ կային նաև էֆենտիներ, որոնցմե յուր կուսակցության մեջ ալ կը գտնվեին։ Ինչ որ էֆենտիներուն հակառակ էր, ազգին շահերուն համաձայն էր. իսկ երբ հարկ եղավ վերջերս ազգային ժողովեն դուրս գործել, ձախակողմյաններուն քով պատիվը քիչ մը կտրեցավ, վասն զի աջակողմյան էֆենտիներուն հարեցավ և չհասկցվեցավ, թե առաջ բարի էր և էֆենտիներուն հարելով՝ չար եղավ, թե չար էր և էֆենտիներուն միանալով՝ բարի եղավ։ Զինքը սուրբերու քով դասող թերթերն չվանով մը սատանաներու բնակարանը իջեցուցին զինքը և անոնք, որ Մեփիստոփելի[20] ընկեր կը համարեին զինքը, երկինք բարձրացուցին զայն. իսկ մենք առանց այս կամ այն կողմ միտելու՝ աթոռ մը ավինք

իրեն, որ նստի սատանայի և սուրբի մեջտեղը և ինքն ալ ընդունելով մեր ընծայած աթոռն՝ գնաց նստավ Պերլին գացող երկու պատվիրակներու մեջտեղ[21]։

1872 թվականին անդամ ընտրվեցավ Քաղաքական ժողովո այն պատրարքին օրով, զոր ժամանակավ Հրեշտակ Հայաստանի կը հռչակեր աշխարհի[22]։ Յուր բոլոր ուժովը հալածեց և սոխպեց Հրեշտակն յուր հրաժարականը տալ։ Հրեշտակն տվավ իր հրաժարականը, Փափազյանինն առնելեն ետքը։

Այս անձն ազգային ժամանակակից կենդանի պատմություն մ'է, չկա դեպք մը, որ իրեն ծանոթ չըլլա։

Փափազյան դիրուկ և գեղեցիկ մարդ մ'է. եթե կին ըլլար՝ չորս կողմը բուրդ թխմելու պետք չպիտի ունենար։ Փորը ոչ նվազ մեծ է այն համբավեն, զոր կը վայելե իբրև գործող մարդ։ Գրպաններուն մեջ անպակաս են ծրագիրներ, կանոնագիրներ և ուրիշ շատ մը թուղթեր, զորս կը սրբագրե։ Յուր դեմքը տեսնողը կը կարծե, թե դրամական սաստիկ տագնապի մը մեջ գտնվելով՝ յուր ամենեն մտերիմ բարեկամներեն մեկուն դիմած է այն հույսով, որ մեկ խոսքով երկու հարյուր ոսկի պիտի կրնա առնել իրմե, և, երբ յուր առաջարկությունն ըրած է՝ հետևյալ պատասխանն ընդունած է իր բարեկամեն

— Եթե կուզեք որ մեր բարեկամությունը հաստատ մնա՝ կը խնդրեմ, որ ասանկ առաջարկություններ չընեք ինձի։

ԽՈՀԱՏԻՐ ՄԻՍԱԿՅԱՆ

Ինչո՞ւ կը քնանաք, ո՛վ պուետներ, որ երկու հանգ գտնելու համար Պառնասը կը շրջապատեք, որպեսզի Մուսայի մը թևեն քաշեք և ողորմություն խնդրեք իրմե, նման այն մուրացկաններուն, որ եկեղեցիներու շուրջը կը շարվին։ Ինչո՞ւ կը խորդաք, ո՛վ դրագետներ, որ ձեր հրաշագործ գրիչն երբ մարդու դպցունեք՝ կենդանիի կը փոխարկեք զայն և երբ անասունի զարնեք՝ մարդու կայլափոխեք։ Արթնցե՛ք, ի ծուռը իջեք, բացե՛ք ձեր գլուխներն, որպեսզի ամեն մարդ տեսնե անոնց ունայնությունը։ Միսաքյանի Ճամբուն վրա փռեցեք ձեր հագուստներն, խունկ վառեցեք, որպեսզի հաճի աշխարհ գալ ձեր Պետն, որ սովորություն ունի չմոռնելու երբեք այն մարդերու, որ բուրվառով չեն ներկայանար իրեն։ Ինչո՞ւ կամչնաք հիմա գինքը պաշտելու։ Ժամանակով մարդերն երկրպագություն ըրած են այնպիսի աստվածներու՝ զորս մենք այսօր կը մորթենք, կասկարայի վրա կը խորովենք, կուտենք և վրան պատվական գինի կը խմենք։ Օն անդր, պագե՛ք երկիրն, խունկ ծխեցեք յուր քթին, խնդրելով իրմե, որ աթոռ մը առնե և գա նստիլ Ազգային Ջոջերու քով, ուր խունկը հաղվագյուտ է։ Մի՛ վախնաք, ո՛վ բարեկամներ պուետիս, չպիտի մորթեմ գինքն, ոչ ալ մի սպի փետուրով պիտի հարվածեմ գինքն, այլ պարզապես պիտի պատմեմ յուր վարքը, պիտի գովեմ յուր տաղանդն, եթե ունի։ Մտիկ ըրեք ուրեմն, բայց մի՛ խնդաք, կը սրդողի։

1816 թվականին ծնած է Խաչատուր Միսաքյան, որ դասատու անվանված է շատերեն, ազգային երևսփոխան ընտրված չգիտեմ ո՛ր թաղեն, պուետ հորջորջված է տղաներեն և յուր պուետ ըլլալը հաստատելու համար վկա մը փնտռած է և չէ հաջողած գտնել մինչև այսօր։

Իննամսյա առանձնակեցությունն այնքան սիրեց, որ սենյակին մեջ կիներու բազմությունը տեսնելով կը դժկամակեր ի լույս գալ։ Ոչ միայն ընկերութենեն չախորժելուն համար, այլ յուր ճաշակին համեմատ բարձր դիրք ունեցող և ծովահայաց տուն մը գտնելու դժվարությունն զգացած ըլլալով, կը փափաքեր միշտ արցանդարնակ մնալ։ Սակայն նկատելով, որ Բնության օրենքներուն դեմ համառիլն անօգուտ էր, հաճեցավ ծնիլ։

Խաչիկ մարմնով այնքան շուտ կը մեծնար և կաճեր, որ երեք ամսու եղած ժամանակն անբավելի էր մեկ օրորոցի։ Կը խաբվեր մանուկն, կարծելով՝ թե մարդուս անունն ալ անոր մարմինին պես դյուրությամբ կրնա մեծնալ և եպիսկոպոսի[1] պես հիսունյոթ տարի քնանալով մեծ անունի տեր ըլլալ։ Մնողքն երկու օրորոց քովե քով դրին, որուն միոյն մեջն էր Խաչիկի գլուխն և մյուսին մեջ մարմինը։ Այս մեծ տղան խանձարուրի մեջ հասկցուց յուր մորն, թե բանաստեղծության կոչված է և թե ժամանակ չունի տրամաբանության երթալու։ Երբ մայրն օր մը ոտանավոր օրորով մը տղան քնացնելու կաշխատեր՝ Խաչիկ մեկեն ի մեկ մորն երեսն ի վեր պոռաց, թե ոտանավորեն վանկ մը կը պակսեր և չքնացավ մինչև որ մայրը համոզեց գինքը, թե երգած ոտանավորը կաղ էր։

Վեց տարեկան ըլլալուն պես Իսկյուտարու վարժարանը դրկվեցավ, ուր ինը տարի շարունակ աշխատելով կատարելապես սորվեցավ Քեռականն[2], Սաղմոսն ու Գործ Առաքելոցը[3]։ Զարմանալի էին այն ատենվան վարժարաններն՝ որոնց մեջ աշակերտ մը յուր գործերուն խելք չհասուցած՝ առաքյալներու գործերուն վրայոք տեղեկություն կառներ։ Միսաքյան վարժարանեն ելնելուն պես սկսավ տուներու մեջ այցելությամբ դասախոսություն ընել։

1839-ին դասատվության պաշտոնով Ճեմարան[4] մտավ։ Հոն շարունակ կը կարդար Հոմերոսն, Վիրգիլիոսն, Օվրատիոսն, Օվիտիոսն և այն ամեն քերթողներն, որոնց անուններն ոս կը վերջանային։ Առաջին անգամ հոն պուետ հորջորջվեցավ Միսաքյան։ Ես որ հասարակության կը խոսիմ և սուտ խոսելե կը վախնամ, կը հայտնեմ, թե Միսաքյան ինք վաստակած չէ պուետ անունը,

ուրիշե մը ժառանգած է զայն։ Հայտնի է արդեն, որ ամէնեն մեծ անիրավութիւնները ժառանգական խնդիրներու մէջ կը դործվին։ Հանճարն ոչ ազգութիւն ունի և ոչ կրոնք և իբրև ոսկի յուր արժեքը կը դտնե ամեն տեղ։ Հանճարի ծնունդ եղող բանաստեղծութիւն մը լավ ընդունելութիւն կը դտնե Անգղիայեն, որչափ ալ անոր հեղինակն ալավ ըլլա։ Իսկ մենք հանճարահանդեսի մը մեջ ի տես աշխարհի դնելու համար քանի՞ քերթված ունինք։ Մենք դժբախտաբար ոսկի կանվաննենք ինչ որ պղինձ է և որ սակայն ոսկիի պես կը հնչե ժողովրդյան ականջներուն։ Իմ կարծիքովս բանաստեղծութիւն մը, ոտանավոր կամ արձակ, կամ ընաիր ըլլալու է և կամ բնավ ըլլալու չէ։ Կը ճանաչեմ ներիտասարդներ, որ ինքզինքնին բանաստեղծ կանվանեն և հանդ մը դտնելու համար իրենց դրածն հազար անդամ կը սրբագրեն, նորեն կը դրեն, կը դծեն, հանդի մը համար հարյուր թերթ թուղթ կը պատռեն և երբ հաջողին իրենց փնտռածը դտնել և տողին վերջը տեղավորել՝ կը տեսնես որ այդ ոտանավորով ցամաքի վրա նավարկութիւն կընեն և ծովու վրա ձիարշավ։ Երբ մարդ մը գովել ուղեն և դիպվածն առաֆինի բառն դնե տողին վերջը, կակսին մտմտալ և տարի մը խորհելեն վերջը հիշյալ առաքինի մարդը դինեռուն դինեռուն կը պատցունեն և մեծ առաքինի դինեմոլ մը ներկայացնելու որոշում կուտան։ Ինչո՞ւ վասն զի ոտանավորն նույնահանդ ընելու համար առաֆինի մը գինիեն ավելի ի՞նչ բան կրնա հարմարիլ։

Բայց մարդը կյանքին մեջ դինի դրած չէ բերանը. որո՞ւ հոդ. առանց զրպարտելու ոտանավոր գրելը դյուրին բա՞ն է։ Իսկ վա՜յ ան մարդերուն, որոնց վրա գրված ոտանավորներուն մեջ վանկ մը կը պակսի, վատն առանց հրավերի կուգա այդ պակասը կը լեցունե։ Այսչափ չէ, սպանութեան ալ կը դիմեն. բառերն իրենց ձեռներուն մեջ այնքան արժեք ունին, որչափ լաթի մը կտոր դերձակներուն քով. դլխեն, մեջքեն կամ պոչեն կը կարեն զանոնք. մեր լեզվին բառերն անկարելի է ճանաչել անոնց ոտանավորներուն մեջ. ասելը սելի կը փոխվի. ևվերը երբ ոտանավորի մեջ ներկայանալ ուզե, գլուխ կը բանա և ուեր կը մտնե հոն։ Ավելի՛ն կա. երբ արևուն ծագումը ծանուցանել ուզեն ատոնք՝ ամենը մեկեն վարդամատն Արշալույսին կը դիմեն. որո՞ւ երթա խեղճը, հազար մատ ալ ունենար՝ չէր կրնար ամենը գոհ ընել։ Փափիկ, լուսիճ, սրինգ, մարգագետին, սոխակ, մանավանդ կուսիկ իրարու ձեռներե կը հափշտակվին և կերթան մտնել ամեն ոտանավորներու մեջ։ Երբ բանաստեղծութեան գիրք մը կարդալ ուզես՝ կը տեսնես, որ թուղթերն իրենք իրենցմե կը գառնան, վասն զի յուրաքանչյուր էջին մեջ գեփյուռը կը փչե, չմոռնանք ըսել, որ եթե առանց հովանոցի զանոնք կարդալու ելնես՝ եդիպտացի մը կը գառնաս, այնչափ կէրիս արևեն, որ յուր ճառագայթներն միշտ արձակած է հոն։ Փառք տուր աստուծո, եթե հոն փչած սյուրեն մսելով չհիվանդանաս։ Դեռ

քանի մը շարաթ առաջ մեկը Մասիսի մեջ ջրհեղեղ մը նկարագրած էր, որուն մեջ մազ էր մնացեր, որ նոյ նահապետն ալ խղդվեր. աստված իսկ ջուրերուն մեջ պիտի մնար, եթե առաջուց չփախչեր։ Երբ քննադատ մ'ելլավ և դիտողություն ըրավ, սա պատասխանն առավ, թե մի՞թե Ամենակարողն աստված կարող չէ ինքզինքն աղատել։ Եթե Պառնասա անօրենութիւնը երբեմն տպագրական սեսչության անդամ Պառնասյանի հանձնված ըլլար՝ այդ քերթողները կը պատժվեին Ապողոնն[5] այսչափ սաորնացուցած ըլլալնուն համար։ Ես որ նախապաշարմունք կը համարիմ ոսկի չունիմ ըսելը, քան կատր մը պղինձն իբրև ազգային ոսկի ներկայացնելն և ծաղու նշավակ ըլլալն, ես որ վերջապես չեմ կարող պղինձն ոսկի անվանել, ի՞նչպես հանդդնիմ այսօր Միսաքյանը պուհա հորջորջել, մանավանդ թե աստարեղի վրա ոտանավոր մը միայն ունի, որ ավելի անտրութենեն ներշնչված է, քան թե մուսաներե։

Այսպես, Միսաքյան գրական աստղարեզին վրա հարստահարիչ քյուրտի մը պես ուրիշներու աստղվածքն հափշտակելով, իբրև մի սաք պուհտի փեսուրներով զարդարվելեն վերջը, ճեմարանի աշակերտներուն դաս տալու տեղ սկսավ ապտակ տալ։ Բնավորություն ուներ ճաշեն առաջ աղա՞ մը ծեծել ամեն օր. և ամեն անդամ, որ տնտեսը վարեն մեղա վարժապետի ձայնն առներ՝ Միսաքյանի կերակուրը պատրաստեցեք, կըսեր։

Ճեմարանի դոցվելեն քանի մը տարի ետքը, քանի մը տղա տվին իրեն, ոչ թե զանոնք ծեծելու, այլ հետը Բարիզ տանելու և դպրոց դնելու համար։ Միսաքյան առավ զանոնք, Բարիզ տարավ և տեղավորեց. ինքն ալ սենյակի մը մեջ քաշվելով սկսավ աքնիլ։

1860-ին խնդիր ծագեցավ ազդին մեջ, թե Երուսաղեմա պատրիարքն ներսե՞ն ընտրվելու է թե դուրսեն[6]։ Միսաքյան, որ սենյակեն դուրս ելած չուներ՝ բնականաբար դուրսին վրա գաղափար չէր կրնար ունենալ. ուստի Երուսաղեմա պատրիարքության խնդիրն յուր սենյակին տեսակետով ըմբռնելով՝ կարծիք հայտնեց, թե ներսեն ընտրվելու է։

Նույն թվականին էր, որ Միրիքելամի[7] խնդիր մը եղավ բողոքականի մը հայերու գերեզմանատան մեջ թաղվելու խնդիրը։ Հիշյալ բողոքականին մարմինը Պալըգըլի գերեզմանատունեն[8] հանվելով բողոքականներու հատուկ գերեզմանի մեջ թաղվելեն երկու տարի ետքը՝ Միսաքյան Բարիզեն կարծիք հայտնեց, թե այդ մարդը հայ գերեզմանատան մեջ մտնելու իրավունք չունի, թե գերեզմանատունը եկեղեցի մ'է։ Այն տեն մեծ հարբալ հանեց այդ հոդվածն, որ համոզելու նպատակավ գրված էր անշուշտ և որուն մեջ ներկա էր նաև զվարճախոսություն, զոր անխտիր ամեն գրություններուն մեջ կը գրծածե այս գրագետն... Թերևս դամբանականներուն մեջ ալ. իսկ երբ այս տարի ամեն. Ներսես պատրիարքն բողոքականի մը մարմինն վանա մեջ թաղել

տալով անոր գերեզմանն արձանով մը պատվեց, անշուշտ լռելյայն հասկցուց մեզի, որ մենք ալ նույն պատիվն ընենք Միսաքյանի այն հոդվածին։

Ազգին մեջ մեծ անուն հանելու փառասիրությամբ արբշիռ՝ ուղեց Միսաքյան Ծաղկոցաձոր անունով հանդես մը հրատարակել Բարիզեն։ Նախ հայտարարություն մը հանեց, որ ուրիշ բան չէր, եթե ոչ ընտրված բառերու փունջ մը։ Այս հայտարարությամբ կը ծանուցաներ, որ հանդես մը պիտի հրատարակեր և յուր ընթերցողներուն լուսանկարության արվեստն պիտի ուսուցաներ։ Հաստարակությունն, որ Միսաքյանն լուսանկարության տեղ ուրիշ բան մը սորվիլ կը կարծեր, հարկ եղած ընդունելությունն ցլացավ անոր և հետևապես ծաղիկները ձորի մեջ նետվեցան, թառամեցան։ Բայց Միսաքյան չվհատեցավ, լուսանկարության արվեստն առաջ տարավ, որչափ որ կը ներեր յուր սենյակն, որու վերի հարկը կը բնակեին աստղերը։ Իրեն այցելություն ընող ամեն հյուրերուն օձիքեն կը քաշեր, աթոռի մը վրա կը բազմեցուներ և անոնց պատկերը կը հաներ։

Այն առենները էր, որ Հինձքի եղեռնագործությունը[9] տեղի ունեցավ։ Մասիս, Մեղու և Մանզումե ուժգնությամբ կարձակեին իրենց նետերն Մեճմուայի դեմ, որ եղեռնագործներն կը պաշտպաններ։ Միսաքյան ինքզինքը վիրավորված կարծեց, երբ տեսավ, որ առանց իրմե հրաման առնելու աղգային լրագիրներն արդարությունը կը պաշտպաններին. ուստի Բարիզեն պատգամ որոտաց, թե լռեն աղգային լրագիրները և թե ինքը պաշտպան պիտի կանգնի այդ դատին։ Մեղու հանդգնեցավ ծաղրել Միսաքյանի այս հրամանն և հետևյալ օրհնության կոնդակն ընդունեց յուր վարժապետեն.

«Եթե Մեղուի պես ուրիշ աշակերտներ ալ ունինք, կը փափաքինք, որ անոնք Կյուբեղեի առջինեկներուն և կամ Բեթղեհեմի զավակներուն[10] հետ մեկտեղ ծնած ըլլային»։

Այս կոնդակն, ինչպես հայտնի է, կը փափաքեր, որ Մեղուն և իր նմանները գետնին տակն անցնեին։

Այս աղոթքն ընելեն ետքը, առանց խնդիրն փաստաբանելու սկսավ Մեճմուայի դեմ պաշտպանել աղգային լրագիրներն, որոնք բնավ պետք չունեին յուր պաշտպանության։ Հիշյալ գրություններն Տճնուրյումբ Հայրենասիրի[11] տիտղոսով տետրակի մը մեջ ամփոփված են, և որոնք բարձրաձայն կաղաղակեն, թե Միսաքյան լոկ խոսքերու վարսավիրա մ'է, որ ասդիեն անդիեն խոսքեր հավաքելով՝ դանոնք կը սանարե, կը կոկե, անուշաբույր յուղերով կօծե և հրապարակ կը հանե, և երկու տողով հասկնալի բան մը յուր գրիչին տակ երկու էջի մեջ անհասկնալի կըլլա. և երբ վարսավիրա մը կը տեսնեմ, որ անմիտ երիտասարդի մը գլուխը բռնած ժամերով անոր վրա կը խաղա՝ կըսեմ. Միսաքյանը նոդված կը գրե. իսկ երբ այն երիտասարդին հետ խոսիմ

և գլխուն արտաքին զարդն և ներքին ունայնությունը տեսնեմ, կարելի չէ, որ հիշեմ Միսաքյանի գրած հոդվածները։

1870-ին որոշեց այս մարդը Պոլիս գալ։ Ի՞նչ նպատակավ։ Ահա յուր ծրագիրը.

«Ա. Էշ մը առնել և երբեմն երբեմն վրան հեծնելով Ալեմ Տաղի[12] երթալ.

Բ. Իսկյուտարու մեջ ծովահայաց տուն մը ուղել ազգեն.

Գ. Իրեն և իր իշուն ամսական մը պահանջել ազգեն.

Դ. Իր գործերը հրատարակելու համար քանի մը հարուստներե գրամ հավաքել.

Ե. Լրագիրներու մեջ հոդված գրել, եթե ազգն երթա յուր ոտները համբուրե.

Զ. Ուզած մարդերուն հայհոյելու արտոնություն պահանջե քաղաքավարութենեն»։

Այս ծրագիրը ծոցը դնելով ճամբա ելավ Բարիզեն և տասնօրյա ճամբորդութենե ետքը Պոլիս գալով՝ Ղալաթիո նկեղեցին իջավ և նույն երեկո հյուրընկալվեցավ յուր մեկ բարեկամեն, որուն վրա ետքեն կատաղաբար հարձակեցավ։ Աղգային մամուլը սիրալիր ընդունելությամբ բարևեց այս պուճուին գալուստը. ողջամիտներն ուրախացան, որ հանճարեղ գրիչ մը կարգ ու կանոն պիտի դներ ազգային դրական ասպարեզին, որ ասկե տասը տարի առաջ ալ հիմակվնե մեծ տարբերություն չուներ։ Բայց ի՞նչ օգուտ ունի սիրալիր ընդունելությունը մարդու մը, որ էշ մը կուզե։ Սիրալիր ընդունելության վրա չէր կրնար նստիլ և ոչ անով Ալեմ Տաղի երթալ։

1872-ին հարյուր ոսկվո հանգանակություն մը եղավ և գումարն իրեն տրվեցավ, որպեսզի խավարի մեջ մնացած հանճարն ի լույս հանե։ Միսաքյան առավ հիշյալ գումարն, որուն փոխարեն Գորտամկնամարտություն[13] մը կարդացուց մեզի Փունջին դեմ՝ Մասիսի բացած դատին առթիվ[14]։ Հոմերոսի Գորտամկնամարտությունը ավելի անհարմար տեղ չէր կրնար գտնել։ Եթե Միսաքյանին նպատակը փաստաբանել և համոզել էր, այդ խորագրին նպատակին դեմ էր, եթե զվարճացնել էր՝ գրության ձևն յուր խորագրին հակառակ էր։ Ի՞նչ էր ուրեմն նպատակը։ Մենք մինչև այսօր հասկցած չենք։ Ջմոռնանք հիշել, որ այդ հոդվածն ուրիշ երկու երեք անուններ ալ ուներ. տոն մը պակաս էր սպանիացի ըլլալու համար։ Գորտամկնամարտութենեն զատ քանի մը անդամ ևս գրելով Փունջի մեջ, վերջ ավավ յուր հոդվածներուն և մանավանդ այն ծիծաղներուն, զորս այնքան դյուրությամբ կը հրավիրեր յուր գրություններուն վրա։

Տարի մը ետքը երեսփոխան ընտրվեցավ, ուր մինչև այսօր կարծիք մը հայտնած չէ։

Քիչ մը ատեն դաստաւուքյան պաշտոն վարեց Իսկյուտարու Սելամիեի թաղին մեջ։ Աշակերտներն պարտաւոր էին ֆրանսերեն Դելեմաքն[15] դրարարի թարգմանելեն վերջը թե՛ ֆրանսերենն ու թե՛ հայերենը բերնուց սորվիլ և Հայր մերի տեղ բարձր ձայնով զրուցել ճաշեն առաջ։

Հոս կը լմնար աղգային պուետին հրապարակային կյանքը։

Մտնենք հիմա քիչ մ'ալ յուր սենյակը, որ գիրքերով և պատկերներով լեցված է։ Եթե Հորնաղ մտներ օր մը իր սենյակին, անշուշտ չպիտի վարաներ ըսելու.

«Ասորին տպետներ իրենց սենյակն գիտական Խրիսուպոսի մետաղիոնեերով կը լեցունեն. Արիստոտելին կամ Պիտակոսին մեկ պատկերն ծախու առնելն և կամ իրենց մատենադարանին մեջ Կղեանդոսի մեկ ձեռագիրն ի տես դնելն իրենց համար կատարելության հասնիլ է»։

Մատենադարանին առջև նստած է ահա Միսաքյան. եթե յուր կատուն կտոր մը փշրանք գտնելու համար կամացուկ մը դուռը բանա՝ ահուդողի մեջ կիյնա, որ չըլլա թե եկողը մարդ ըլլա։ Քանի մը վայրկյան վերջը մեկը ներս կը մտնե իր սենյակեն, և ահա Միսաքյան իսկույն բարկությամբ տեղեն կելնե և կերթա սենյակին սեմին վրա կը նստի՝ ինքնիրեն մրմռալով.

«Սա մարդերու ձեռքեն բնավ հանդստություն չկա. վայրկյան մը հանգիստ չեն թողուր, որ մարդս առանձին նստի և ընելիքին վրա խորհի, ազատություն չկա աշխարհիս վրա. կարծես բոլոր աշխարհ միացած է դիս նեղելու համար»։

Եթե հյուրն իրեն որպիսությունը հարցնելու համարձակի՝ հեակյալ պատասխանը կուտա.

«Ծանր հիվանդ եմ. մինչև առավոտ աչերս փակած չեմ. դուք չեկած քիչ մը աղեկ էի, բայց երբ դուք սենյակեն ներս մտաք, հիվանդությունս ավելի ծանրացավ»։

Եթե այս պատասխանին վրա հյուրը հանդգնի հարցնել, թե ի՞նչ է հիվանդությունը, մեկեն ի մեկ կը կանգնի և հյուրին երեսը ծուռ ծուռ նայելով՝ այսպես կը պատասխանե.

«Կարծեմ խոսելու ազատության հետ չխոսելու ազատությունն ալ հարգելու պարտավոր ենք, և դուք բնավ իրավունք չունիք դիս խոսել տալու. մանավանդ թե խոսելու ժամանակ ալ չունիմ, վասն զի հիվանդ եմ։ Բայց դիտեմ ես, մեկը դիտմամբ ղրկեց քեզի հոս, որ դիս բարկացնես, արյունս գլուխս ցատկե և մեռնիմ»։

Եվ ավելն առնելով կսկսի սենյակն ավլել և փոշիներու մեջ խղդել հյուրն, որ դուռը բանալուն պես կը փախչի։ Միսաքյան անմիջապես դուռը կը կղպե և քանի մը մեծ սնտուկներ կը դնե դռան ետին, որ չբացվի և կուգա տեղը կը նստի այնպիսի ուրախությամբ, որ կարծես մեծ շահ մը ըրած է։

Կես ժամեն դուռը կը զարնվի։

— Ո՞վ է ան, կը հարցնե ներսեն Միսաքյան։

— Ես եմ, Համբարձում...յան, զքեզ տեսնել կուզեի։

— Ձիս տեսնե՞լ կուզեք... դուռը կղպված է, բանալին քովս չէ, ձեր ըսելիքը կրնաք դուրսեն ալ ըսել։

Հյուրը կը բարկանա և առանց պատասխանելու կը մեկնի։ Միսաքյան կսկսի ծիծաղիլ այն իմաստասերին պես, որ օր մը սենյակին մեջ առանձնացած՝ խնդացած ժամանակն երբ կը հարցունեն իրեն, թե ինչո՞ւ կը խնդաս՝ քովդ մեկը չկա. կը պատասխանե, թե ճիշտ անոր համար կը խնդամ, որ քովս մարդ չկա։

Բայց այս ուրախությունը շատ չտևեր, դուռը նորեն կը զարնեն։

— Միսաքյանը հոս չէ. դուրս ելավ, երկու ամիսեն պիտի գա, կը պոռա ներսեն Միսաքյան։

Երբ գրության մը վրա յուր կարծիքը հարցվի՝ կը պատասխանե. տղայական բաներու վրա կարծիք հայտնելու ժամանակ չունիմ և դիմացինը կը սաստե։ Իսկ երբ ստիպեն ինքը, որ քանի մը խոսք ընե՝ կսկսի հետևյալ դիտողություններն ընել.

«Վեպն քաջ է, բայց ոճը վատ է. Պողոս առաքյալին մեկ խոսքը աս տողին մեջ շատ հարմար կուգար։ Գրողը պիտի կրնա դրել, բայց հմտություն չունի. հմտություն ունի, միտքը բացատրելու կերպը չգիտեր։ Ոճը ցամաք է, զարդարուն չէ. գրության մեջ ճարտասանության կանոն չկա. կապ չկա. ուժգնություն տալու համար զորավոր բառեր չէ կարողացած գտնել. եթե ասոնք ըլլային՝ թերևս ընդունելություն գտներ։ Իրմե՞։ Քավ լիցի։ Ժողովրդյան ռամիկ մասնն»։

Եթե պինքը քիչ մը շողոքորթես՝ կելնե սնտուկը կը բանա, կտոր մը թուղթ հանելով կսկսի կարդալ իր մեկ բանաստեղծությունն, նախապես հայտնելով, թե շատոնց ի վեր գրած է և վրայեն գոնե անդամ մը անցած չէ, թեպետև հազար անդամ սրբագրած է։ Յուր քերթվածը կարդացած ատեն զգուշացիր փոնգտալե կամ հազալե, վասն զի իրեն թշնամանք կը համարի և թուղթը կը ծալլե, ծոցը կը գնե։ Իսկ եթե մինչև վերջը արժանանա կարդալու յուր ոտանավորն՝ և առաջարկվի իրեն, որ հանդեսի մը մեջ հրատարակվի այն, պարապ աշխատություն է, կըսե, վասն զի իմ գրածս հասկնալու կարողություն ունեցող մարդ չկա։

Փողոցն ելած ժամանակը միայն չպատիր, շատ անգամ Օտյան էֆենտիի, Սահփան փաշայի, Յուսուֆյան էֆենտիի հետ կը պատի, ինչպես նաև գրական ասպարեզն ելած ատենն ալ մեկ թևը Հոմերոսին կուտա և մյուսը Օվիտիոսին։

Եթե կը փափաքիք Միսաքյանի դեմքին վրա ծանօթություն առնել, հիշեցեք դեմքերն այն մարդերուն, որոնք օր մը լսելով, որ Դիոգինես հրապարակի վրա մարդեր, մարդեր կը պոռար, անոր շուրջը խմբվեցան և հետևյալ պատասխանն առին.

«Ես մարդ կանչեցի. դուք ինչո՞ւ եկաք»։

ՍՈՒՔԻԱՍ ՔԱՂԱՆՃՅԱՆ

Ահա ջոջ մ'ալ, որու ծննդյան թվականը մեղի մութ է։

Եթե մեր քաղած տեղեկություններուն պետք է հավատք ընծայել՝ կան քսողներ թե Սուքիաս Քաղանճյան ծնած է Միջագյուղ, սատանայեն երկու օր առաջ, թեպետև կարծողներ ալ կան թե չորս օր ետքը ծնած է։ Լա՛վ. բայց սատանայի ծննդյան թվականը ո՞րն է։ Եթե Քաղանճյանին ծննդյան թվականը գտնաս, կըսե Հասունյան, գոնե մաքին, սատանայինն ալ գտած կըլլաս։ Մենք, մեր սովորության համեմատ, առանց ականջ կախելու ամեն գրույցներու՝ ամենեն հավանականն ընդունելով կը գրենք, որ Հասունյանի մորաքրոջը տղան ծնած է Միջագյուղ, 1820 թվականին, որ շատ կը հարմաբի յուր դեմքին, թեպետև քիչ կը վայլե իր եռանդին։ Եթե Անտիոքա արքեպիսկոպոսն չուզեր ընդունիլ այս թվականն՝ ուրիշ մը տալու համար ընդդիմություն չենք ըներ, բայց քանի որ դեմքին հարմարեցավ, կը կարծենք, որ այս թվականավ գոհ կըլլա։ Կը կարծենք, և կը կարծեք թե կարծելու փաստ չունի՞նք։ Չե՞նք տեսներ ամեն օր կիներ և օրիորդներ, որ երբ Բերա ելնեն իրենց գլխարկ մը առնելու, միշտ նախապատվություն կուտան այն գլխարկին, որ ավելի կը վայլե իրենց դեմքին։ Թվականներու հետ ալ այնպես վարվելու չե՞նք, ինչպես կը վարվի գեղեցիկ սեռը գլխարկներու հետ. վաթսուն տարեկան մարդու մը քառասուն տարին քիչ կուգա, երեսուն տարեկան մը հիսունը չի կարող տանիլ։ Գոհ եմ որ մարդու մը, մանավանդ ուսումնականի մը կուզեմ այս խոսքերը, եթե կնկան մը խոսեի՝ սոսկալի վեճ մը կը ծագեր և անեծքներու ներքև կը ճնշվեի։ Բայց թողունք այս խորհրդածություններն և գուշակություններն ու դառնանք մեր նյութին։

Որոշ չգիտցվիր թե ի՛նչ կյանք ունեցավ այս մարդն ծնելեն առաջ։ Այսչափ միայն կավանդին, թե մորն արգանդին մեջ բնավ հանգիստ չէր մնար. եթե օր մը աջ կողմը բնակեր՝ հետևյալ օրը ձախ կողմ անցնելու համար ճամբա կելներ. կարծես Պոլսեն Հռոմ, Հռոմեն Պոլիս կերթար։ Իսկ ծնելեն վերջը ունեցած վարքն ամենուն հայտնի է։ Ի բնե խիստ քաղաքավար ըլլա-

լով և ոչ մեկ օր մը լալով ուրիշներն անհանգիստ ըրած չէ։ Բարձր ձայնով կուլար դառնապես այն օրերն՝ ուր Հասունյան այցելության կերթար յուր մորաքրոջը տղուն։ Հասունյանի ներկայութենեն չէ՞ր ախորժեր. հավանական է. բայց հավանականապույնը սա է, որ Հասունյան երբ օրորոցին կը մոտենար և Օճճիկ, Օճճիկ ըսելով կը շոյեր Հովհաննեսն, այս է Քաղանճյանի մկրտության անունն, դաղտնապես կը կամքեր մանուկն։ Անոնք, որ Հասունյանը մոտեն ճանաչելու դժբախտությունն ունին՝ պիտի հաստատեն անշուշտ, թե զրպարտություն չենք ըներ։

Երբ ութը տարեկան եղավ՝ գյուղին վարժարանը դնաց և քանի մը տարիներ մնաց հոն՝ միշտ հառաջադեմ հանդիսանալով ամեն դասերու մեջ։

1835-ին դնաց Հռոմ, ուր Անատոլյաններու վանքը[1] մտավ. ինչպես կը մտնեն մարդ ճաշարան՝ երբ բարեկամներեն մեկն ըսե. եկուր ես քեզի պատվական ճաշ մը ընեմ տամ այսօր։ Հոն երեք տարի շարունակ աշխատելով՝ կատարելապես ձեռք բերավ աստվածաբանությունը, զոր շատ գործածելու առիթ չունեցավ։ Հռոմմա ուսումնարաններուն մեջ ալ քանի մը տարի կարդալեն ետքը, լրացուց յուր ուսման ընթացքը, որ ավելի կանոնավոր էր քան այն ընթացքն, զոր բռնած էր Հասունյանի խնդրույն մեջ։ Աշակերտության հրաժեշտ տալուն պես՝ միաբան գրվեցավ Անատոլյան ուխտին, որուն այսօր միաբան գրվելու համար մեկը գոնե շաբաթ մը անոթի մնալու վարժված ըլլալու է։

1842-ին Փափազյան Իղնատիոս եպիսկոպոսեն քահանա ձեռնադրվելով՝ Հովհաննես անունը թողուց և Սուքիաս առավ։ Թեպետ և այսօր եթե ետևեն երթաս և ճայր Հովհաննես կոչես՝ իսկույն ետևը կը դառնա։ Այն թվականեն սկսավ Հռոմմ, Անատոլյաններու վանքին մեջ դասատվություն ընել, աբեղանեբու և նորընծաներու վրա հսկել և ժամանակ ունենալ երբեմն երբեմն բրոքականաձի[2] ներկայանալով՝ փաստաբանորեն պաշտպանել այն դատերն, որ Լիբանանու կաթողիկոսներու դեմ կըլլային[3]։ Եթե այս պաշտոններուն վրա հարյուր պաշտոն ևս ավելցվեր՝ սիրով պիտի ընդուներ։

1853-ին եկավ Պոլիս։ Ինքզինքը ժողովրդյան սիրելի ցույց տալու արհեստն աստվածաբանությենե շատ աղեկ ուսած ըլլալով՝ քիչ ատենի մեջ ժողովրդյան համակրությունն իրեն գրավեց։ Նիկողայոս պատրիարքն կոչեց պինքն պատրիարքարանի ատենադպրության պաշտոնին, զոր քանի մը տարիներ վարեց միշտ Հասունյանի հետ գաղտնի մրցելով՝ պատրիարքին վերարկուին եռևը պահվըտած։

1860-ին երբ հիվանդ ինկավ Կակոնյան պատրիարքն՝ հայր Սուքիաս սկսավ անոր պաշտոնը վարել իբրև խորհրդական. քանի առաջ կերթար պատրիարքին հիվանդությունը, այնքան կը հառաջանար նաև հայր Սուքիասի փա-

ռասիրությունն։ Իսկ երբ 1861-ին Կակոնյան վախճանեցավ՝ ինքն ալ պատրիարքարանեն հեռացավ և առանձնության մեջ կանցուներ կյանքը։

1864-ին մշտնջենավոր աբբահայր ընտրվեցավ Անտոնյան Միաբանության և միանգամայն առաջնորդ Անտիոքա վիճակին։ Միաբանության սահմանադրությունը կը տրամադրեր, որ աբբահայրն ծայրագունության աստիճան ունենար, բայց Քաղանճյանի սահմանադրությունը արքեպիսկոպոսության աստիճան ուղելով հաղթանակը տարավ և երկու հարյուր տարվան Միաբանության մը կանոնադրությունը փոխելով՝ Անտիոքա արքեպիսկոպոս տիտղոսով Միաբանության գլուխը նստավ։ Ձեռնադրությունը Լիբանան կատարվեցավ։ Աբբահայրության աթոռին վրա բազմելուն պես՝ սկսավ օրը չորս վարդապետ ձեռնադրել։ Բանիբուն և ուսումնական երիտասարդները վարդապետ ձեռնադրած ժամանակը՝ չէր մոռնար նաև վեղար դնել այնպիսի գլուխներու, որոնց վրա նարոան ավելի աղեկ կը վայլեր։ Եթե երիտասարդին մեկն բավական ուսում և տարիքն առնելեն ետքը հրաժարիլ ուզեր կուսակրոնության մեջ մտնելե՝ աբբահայրն կը համոզեր զինքն և խալբախ մը կանցուներ գլուխը։ Վարդապետ ձեռնադրելու մեջ հաճույք կզգար և եթե օր մը վարդապետ ձեռնադրեր՝ նույն օրը տխուր կանցուներ և երեկոյան դեմ չորս կողմ մարդ կը ղրկեր, որ վարդապետցու մը գտնեն բերեն իրեն։

1865-ին Կ. Պոլիս վերադարձավ խոլերայի առեները։ Թեպետև Հասունյանի հետ բանակցելու կուզար Կ. Պոլսո և Լիբանանու աթոռներուն միավորությանը համար, բայց Հասունյան երբ տեսավ զինքն՝ մտքեն ըսավ. խոլերան հերիք չէր, հայր Սուխիասն ալ եկավ։

1866-ին Գրիգոր Պետրոս յոթներորդի մահն դադրեցուց այդ բանակցություններն. վասն զի Հասունյան կաթողիկոսությունը ձեռք ձգելու զբաղած ըլլալով՝ ժամանակ չուներ մտիկ ընել Քաղանճյանը՝ որ այն առեները, չգիտենք ի՛նչ պատճառավ, մտերմություն հաստատած էր Հասունյանի հետ։ Քաղանճյան բնավ չընդդիմացավ Հասունյանի կաթողիկոսության, և սեպտեմբերի մեջ Լիբանան կատարված ընտրության ժողովույն ներկա չդտնվեցավ. քուն քաշեց այնպիսի ժամուն, ուր աքնություն պետք էր, եթե կը փափաքեր, որ ժողովուրդն յուր բերնեն ելած խոսքերուն հավատք ընծայեր։

1867-ին Հասուն Հռոմ գնաց, ուր դաղտնի խմբագրվեցավ Ռեվերսուրսը։ Երբ Հուլիսին Պոլիս վերադարձավ Հասուն՝ Քաղանճյանն ալ յուր եկեղեցական զգեստներն եկեղեցի ղրկեց, որ հետևյալ օրը ներկա գտնվի օրհնության։ Հասունյան ետ դարձուց Քաղանճյանի պոխնան։ Ժողովուրդն սկսավ իրարու ըսել.

— Մըսըրլըին բաղնիքը տեղ մնացած չըլլալով՝ Քաղանճյանի պոխնան ետ ղրկվեցավ։

Իրա՞վ շատ մարդ կար բաղնիքին մեջ։ Եզրոսին հարցնելու է։

Հասունյանն ամբաստանված ըլլալով՝ 1868-ին կանչվեցավ Հռոմ, ուր գնաց և քանի մը շարթվան մեջ արդարացավ և նորեն Կ. Պոլիս դարձավ։ Դիտողության արժանի է, որ այսչափ ճամբորդության մեջ Լիբանանը բնավ միտքը չբերավ։

1869-ին եպիսկոպոսներու ժողով մ'եղավ, որու մեջ ի նպաստ ազգային իրավունքներու և շահերու խոսեցավ. իսկ երբ Վատիկանու այունհոդին ներկայացավ՝ Ռեվերսուրսին ընթերցումեն անմիջապես ետքը ոտք ելնելով գլուխը բացավ և խոստովանեցավ, թե Ռեվերսուրսն ազգային շահերուն շատ համաձայն էր, թե ատով ազգային իրավունքներն կը պաշտպանվեին, թե այդ թուղթը Հռոմեական հայերու համար նոր դարագլուխ մը կը բանար։ Այս լուրը հետևյալ օրը կայծակի արագությամբ կը հասնի Կ. Պոլիս։ Հակահասունյաններուն գլխավորներն իրար կանցնին և չեն գիտեր ի՛նչ բանի ընծայել Քաղանճյանին կարծիքներուն կրած այս փոփոխությունը։

Քաղանճյան ազգին շահերեն ավելի վանքին շահերուն պաշտպան կանգնելու նպատակավ էր անշուշտ, որ Ռեվերսուրսին այնչափ գովեստներ կարդաց. այդ գովեստներով կարծեց, թե սիրտ կրնա բրոբականտայի ազդեցությենեն ազատել վանքն. իսկ երբ 1870-ին տեսավ, որ Ռեվերսուրսն համբուրելե ետքն ալ կը հրավիրվի վանքին կանոնադրությունը բրոբականտային ներկայացնել և անոր տված հրահանգներուն համեմատ շարժիլ՝ բանտարկվելու վախով անմիջապես կանգուն մը կանաչ լաթ առավ և վրան մահիկ ու աստղ մը կարելով վանքին դրան վրա պարզելուն պես ելավ Պոլիս եկավ։

Կ. Պոլիս մտնելուն պես Հակահասունյան խնդիրը զորացուց։ Վատիկանու ժողովեն փախուցած երեք ծեր եպիսկոպոսներեն մին կաթողիկոս ձեռնադրել տվավ. ինքզինքն ալ աթոռակալ անվանեց և բռնեց ազգային իշխանության սանձերն, զորս ուզած տեեն կը քաշեր և ուզած տեեն թող կուտար։ Աթոռակալություն, պատրիարքություն, կաթողիկոսություն, ամեն բան ինքն կը տնօրիներ և չէր վարաներ մեծ պատրաստություններ տեսնել կաթողիկոսական հաջորդության համար։ Ազդեցությունը մեծ ըլլալուն պատճառավ՝ մեծ ծախքերու կարոտ էր.— հայտնի է, որ պզտիկ ծախքով մեծ ազդեցություն չըլլար — ուստի սկսած էր ամեն օր Միաբանության դիմել և ստակ խնդրել, կամ առանց խնդրելու առնել։ Միաբանությունն անոր մեծ ազդեցությենեն օգուտ քաղել չուզելով հրաժարեցուց զինքն մշտնջենավոր աբբահայրությենեն՝ ըսելով.

— Պզտիկ ազդեցություն ունեցող աբբահայր մը մեր գործին ավելի աղեկ կուգա։

Թեպետև ազգային գործերե քաշված կերևի, բայց ամեն թել յուր ձեռներուն մեջն էր։ Հասունյան մեծ կարևորություն կուտա իրեն և այս վերջին տա-

րիներս քանի մը անգամ փորձեց, բարձր աշխարհականներու ձեռամբ, դինքը վաստկիլ. բայց Քազանճյան չմոռեցավ, վասն զի վատահած չէ և դեռ կաշխատի Հասունյանը տապալել և իրեն հաջորդել. և եթե օր մը հաջողի յուր նպատակին հասնիլ, ազգը սարկավագ չպիտի տեսնե, ամենը վարդապետ-վարդապետ չպիտի տեսնե, բոլորը եպիսկոպոս և հատիկ հատիկ չէ, այլ տասնյակներով։

Պետք է դիտնալ, որ Քազանճյան, որչափ առանձնացած ըլլա, շատացած չէ այն բարություններով՝ զորս ըրած է ազգին, այլ խոստացած է ավելի մեծ գործերով յուր անունն անմահացնել՝ եթե հաջողի ձեռք անցունել չորս միլիոն անգղիական ոսկին, զորս պիտի ընդունի Հնդկաստանեն։ Հարյուր քառասուն տարվան ժառանգական խնդիր մ'է սա, որուն հոդի տված են վանքին մեջ գտնված հին նամակները։ Անցյալ տարի Անգղիո դեսպանատան մեջ կազմված քննիչ մասնաժողովն Հնդկաստանի կառավարության տեղեկագիր մը ղրկեց, որուն մեջ Քազանճյանի փաստերը զորավոր նկատված են։ Ամեն շաբաթ թղթատուն կը վազե, որպեսզի նամակն և չորս միլիոն ոսկիի փոխանակագիրն ընդունի և ամեն շաբաթ ունայն ետ կը դառնա։ Քազանճյան Հասունյանի ձեռքեն հափշտակած է այս գործն, սկզբնապատճառ այն հակառակության. որ կը տիրե մինչև այսօր երկուքին մեջ։ Մենք խեղճերս երբեմն այնպես կը հավատանք, որ այն կրոնավորներն, որ Հասունյանի հակառակ են՝ ազգին իրավունքները պաշտպանելու ազգասիրությենե առաջնորդված են. բայց երբ գործին քիչ մը խորը քննենք՝ կը տեսնենք, որ մեջեն կամ ադարակի խնդիր կելնե կամ ժառանգության դատ և կամ այնպիսի խնդիր մը, որ ուղղակի իրենց քսակին հետ վերաբերություն ունի, և ազգին շահերուն հետ բնավ գործ չունի։ Այսպիսի անձերուն եթե մեկ անիրավությունը տեսնես և իրենց ըսես՝ Ինվեբսուրուսը պաշտպանած կըլլաս. իսկ եթե հաշիվ հարցնելու ըլլաս՝ իրեն Հռոմա գործիք կամբաստանվիս։ Որո՞ւ պիտի հասկցունես իրավունքներդ։ Փութանք հայտնել, որ եթե Հայր Քազանճյան այդ դումարն ընդունի՝ անոր համար ըրած ծախքերն և նվերներն, այսինքն երկու միլիոնը, իրեն աշխատության վարձք հանելով՝ մնացածը հետևյալ կերպով ազգին պիտի նվիրե։

«Ա. Վարժարան մը պիտի կանգնե բոլորովին ազատ կղերական ազդեցութենեն։

Բ. Աղջիկներու համար ալ վարժարան մը պիտի բանա նույնպես ազատ մայրապետներու ազդեցութենեն։

Գ. Անոնց պիտի հատկացնե այնպիսի կալվածներ, որոնց մեջ քարեն ու կիրեն զատ նյութ չպիտի գտնվի, որպեսզի ոչ կրակեն վախնան և ոչ ջուրեն։

Դ. Պատրիարքարանին հաստատ եկամուտ մը պիտի կապե և ժողովուրդն ազատ պիտի ըլլա տուրք վճարելե։

Ե. Բավական գումար պիտի նվիրե ազգին՝ եթե ան ալ հաճի դինքը կաթողիկոս-պատրիարք ընտրելու»։

Իսկ եթե չկարենա այդ գումարն առնել, դարձյալ ետ չպիտի կենա ազդին համար աշխատելե և պիտի գործադրե այն դիտավորություններն, զորս մտքի մեջ ունի և որք են.

«Ա. Տասնական դահեկան առնել այն ամեն անձերեն, որ եկեղեցի չեն երթար — այս տուրքով տարին մեկ միլիոն ոսկի գոյացնել կը հուսա։

Բ. Շաբաթը մեկ դահեկան տուրք սահմանել տաճկերեն խոստղներուն։

Գ. Ամիսը մեծիտե մը տուգանք առնել Հասունյանի հետ խոստղներեն։

Դ. Մեկ ոսկի պահանջել այն ամեն անձերեն, որոնք կը հանդգնին կասկած հայտնել իր ազգասիրությանը։

Ե. Իրավունքե զրկել այն ամեն կրոնականներն, որ եկեղեցական արարողության առեն կը հազան։

Զ. Ասոնցմե գոյացած հասույթեն յուր աշխատության վարձքն հանել և մնացածը առատաձեռնությամբ ազգին նվիրել»։

Եթե այս ճամբով ալ չհաջողվի՝ պիտի դիմե այն հնարքներուն, զորս ազգասիրությունը կը ներշնչե իրեն։

Եկեղեցական արարողություններուն մեջ այնչափ խիստ է, որչափ մեղմ է Հասունյան։ Կը փափաքի, որ Հայր Մերը առնվազն մեկ ժամվան մեջ լմննա, որպեսզի շուտ կարդացվելով բառ դուրս չմնա։ Ոչ թե բառ, այլ եթե դիր մը պակաս հնչվի՝ կրակ կը թափե զայն կարդացողին գլխուն. եթե կետ մը անշան կերպով անցնի՝ նստած տեղեն կսկսի դիտողություններ ընել։ Օր մը Ոսկեբերանի եկեղեցին գացած էի և դիպվածն անանկ բերած էր, որ յուր եռանը կայնիմ։ Եպիսկոպոսին մեկն սկսավ Հայր մերն, որուն կետադրությունը Քազանճյանն ատանձնեց ատպես.

— Հայր մեր որ հերկինս ես։
— Կետ։
— Սուրբ եղիցի անուն քո։
— Վերջակետ։
— Եկեսցե արքայություն քո։
— Կետ։
— Եղիցին կամք քո որպես հերկինս և հերկիրի։
— Վերջակետ։
— Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։
— Վերջակետ։
— Եվ թող մեզ զպարտիս մեր։
— Ստորակետ։

— Որպես և մեք Թողումք մերոց պարտապանաց։
— Վերջակետ։
— Եվ մի՛։
— Շեշտ մին վրա։
— Տանիր զմեզ ՚ի։
— Ինին կռնակը մակակետ կա։
— Փորձություն։
— Միջակետ։
— Այլ փրկյա զմեզ ՚ի չարե։
— Վերջակետ (Մեկուսի) Հասունյանե։
— Զի քո է արքայություն և զորություն և փառք հավիտյանս։
— Միջակետ։
— Ամեն։
— Վերջակետ։

Հասունյանի հակառակ ըլլալո՞ւ համար այսպես կը վարվի եկեղեցական արարողություններուն մեջ. Թողլով ժամանակին պատասխանել այս հարցման՝ մենք միայն կըսենք, թե ինքը մարդ շահելու արհեստին մեջ այնքան վարպետ է, որ միտքը չէ կարող երևակայել. եթե մարդու տեղ դրամ դնեինք՝ Ռոչիլտ մը կունենայինք ազգին մեջ։ Գիտեինք, որ ժողովրդյան մեջ կա մաս մը, որ բութով ավելի փութով կորսացվի քան թե բառերով. չանդիտեր նաև թե ուրիշ մաս մ՚ալ կա, որուն բութն ալ ազգային շանճ է և վերջակետն ազգային իրավունք։ Ասոնք գիտնալով յուրաքանչյուրին մտային կարողությանը համեմատ կը շարժի, թեպետև եկեղեցիեն դուրս յուրաքանչյուրին ճաշակն ալ դոհացնել չմոռնար։ Օրինակի համար, երբ զավեշտական լրագրի մը խմբագրի մը հետ խոսակցի՝ կարծիք կը հայտնե, թե երգիծաբանությունն մեծ օգուտներ կրնծայե ազգին, թե շատ մը մոլություններ և պեղծումներ անով միայն կրնան անհետանալ, իսկ երբ գտնվի այնպիսի մարդու մը քով, որուն մեկ գործն հեգնված է՝ կսկսի նկարագրել այն վնասներն, զորս հասուցած է ազգին գլխուն հեգնաբանությունը. վահ, կըսե լալով, մինե զավեշտական թերթերը չե՞ն որ մեր Ռուբինյան թագավորությունը[4] կործանեցին։ Բայց ասե չէ յուր սիրող նկարագիրն. գինքը լավ ճանաչելու համար հարկ է գիտնալ, թե Քազանճյան այն մարդն է, որուն գլուխը եթե աշխարհիս բոլոր դափնիները թափես՝ այս ազգը ապերախտ է, կըսե, բարություն չճանաչեր։ Եթե լվացվելու համար բաղնիք մտնե՝ կը փափաքի, որ բաղնիքի մեջ գտնված բոլոր մարդերն իրեն թևը մտնեն և այնպես տանին ներս, բնավ չխորհելով, որ երկու թևը քառասուն հոգի չկրնար բռնել։ Եթե մլուկ մը ճզմե՝ Էնեաականի[5]

մեջ տեղ կը փնտռե, որ դյուցազներուն մեջ երթա նստի։ Գնա այցելություն մը տուր իրեն, թղթադրամով խահվե եփել կուտա։ Ճշմարտությունը վիրավորել է չխոստովանիլը, թե Քազանճյան ազգը կը սիրե, բայց արդարությունը սպաննել է չհայտնելը, թե փառքն ավելի կը սիրե. և եթե օր մը ազգին ու փառքին շահերը միևնույն տեղ մը հրավիրելու ըլլան՝ վերջնույն հրավերը կընդունի և առաջնույն կը պատասխանե, թե վաղը պիտի գա։

Քաղաքավար անձ մ՚է և հետն անդամ մը տեսակցիլը բավական է անոր իմաստուն խոսքերեն և քաղաքավար վարմունքեն հափշտակվելու համար։ Բացի մեկ երկու ամիրաներեն՝ ամենն ալ կը սիրեն գինքը, բայց միշտ վախնալով անոր փառասիրություներեն, զոր անցնելու համար շատ մը բժիշկներ բավական դեղեր առաջարկեցին, բայց ինքը մերժեց, հայտնելով, որ եթե այդ հիվանդություներեն բժշկվի՝ չկրնար ապրիլ։ Ճշմարիտ է, փառասիրությունը այնպիսի հիվանդություն մ՚է, որուն ենթակա եղողին հաճույք կը պատճառե և վնասն ուրիշներու կուտա. ո՞վ կուզե հաճույքի զրկվիլ։

Հայր Սուքիաս կարմիր այտերով և ճերմակ մորուքով պատկառելի մարդ մ՚է։ Եթե առաջարկե մեկուն, որ երթա ինքզինքը ծովը նետե՝ այդ անձը կը քաշվի անոր առաջարկությունն մերժելու և եթե ծովը չնետվի՝ մեկ մ՚ալ անոր երևնալու կամչնա։ Յուր դեմքին վրա գաղափար մը տալու համար պարտավոր ենք հիշել դեմքն այն մարդուն, որ աթոռի մը վրա նստելու պատրաստված ժամանակը ուշադրություն չընելով, որ սատանային մեկը աթոռը հանեն քաշած է՝ կռնակի վրա կիյնա։

ՎԱՀԱՆ ՊԱՐՏԻԶԱԿՑԻ

1850-ին Պաբահլակ ծնած է Վահան վարդապետ, երեսփոխան, թատերագիր, առակագրոս, այցելու և պատվիրակ Բարձր Հայաստանի։ Այնչափ բարի զավակ մ՚էր, որ իր ծննդենեն երկու ամիս առաջ հայրը մեռավ, յուր տղուն երեսը չտեսնելու համար. երկու ամիս ետքն ալ մայրը հոգին փչեց՝ յուր զավակին երեսը տեսած ըլլալուն համար։

Կնքահայրն, որ այսօրվան բոլոր կնքահայրերու պես յուր սանին երկու անուն դնելու մոլությունն ուներ, Իլի Կապե անվանեց զայն, որ ըսել է Խեո Կարապետ։ Եվ արդարև սանն յուր առաջին անվանը հավատարիմ մնալու համար բան մը չխնայեց. վեց տարեկան էր երբ թռչուններ, հավեր, սագեր ու բադեր կը զարներ նետով. երբեմն ալ ամբողջ օրերը խաղալով կանցուներ ջուներու հետ, որոնց աչերը կը հաներ։

Թաղական խորհրդո որոշմամբ 1858-ին Փրկիչ[1] կը զրկվի Կարապետ, բայց հոն ալ խելոք չնստիր. դասերը սորվելու տեղ ճանճ որսալու արհեստը կը մշակեր։ Կառավարիչն, անկարող այս աշակերտն ի կարգ բերելու, անառականոց կը դնե զայն, որպեսզի հոն սորվի յուր չդիտցած անառակութիւնները։ Երկար ատեն չկրնար մնալ այս հարկին մեջ, վասն զի 1862 թվականին երբ Փրկիչը բարեկարգելու համար բոլոր աշակերտները կը վռնտվին հիշյալ վարժարանեն, Կարապետ ալ Պարտիզակ կը դառնա։

Պարտիզակ դառնալուն պես Կարապետ կուզե թաղականներեն վրեժ լուծել. ուստի կսկսի անոնց եղներուն, էշերուն և գոմեշներուն պոչը կտրել։ Թաղական խորհուրդը կը տնօրինե, որ այս տղան նորեն Փրկիչ զրկվի և Կարապետ 1863-ին վերստին Փրկիչ կը մտնե։ Մեկ ու կես տարի կը մնա հոն և ամեն ոտամե ու գիտութենե մեկ երկու տրամ բան առնելով՝ 1865-ին Խոլերայի պատճառավ կստիպվի նորեն յուր քաղաքը դառնալ։

1866-ին վերստին Պոլիս կը դառնա և պայտավաճառի մը քով աշակերտ կըլլա։ Այն թվականին պայտավաճառները կոշկակարներեն շատ ավելի դրամ կը վաստկեին. վասն զի դրամական նեղութիւնն այն ատենները խիստ զգալի չըլլալով՝ ձիերն ու էշերն հիմակվան պես երկու ժամ չէին խորհեր, թե ո՛ւր կոխելու են, որպեսզի իրենց կոշիկները չհինանան և, հետևապես, չտիպվին բոկոտն քալելու։ Կարապետ կարծելով, թե այս ասպարեզին մեջ կրնա մեծ մարդ ըլլալ՝ ինքզինքն յուր տիրոջը սիրելի ընելու համար բոլոր աշխուժն ի գործ կը դներ։ Շատ ապրանք ծախելու համար ունեցած եռանդն ինքը ծայրահեղության կը մղեր. երբ կը տեսներ այնպիսի մարդեր, որոնք դիպվածով հարստանալով, դիպվածին արդյունքն իրենց խելքին կընծայեին, կը կանչեր ձիրենք ըսելով. «Հրամմեցեք, աղեկ կոշիկներ ունիմ ձեզի համար... Պարտիզակեն եկած...»։

Սակայն այսչափ աշխատութեան փոխարեն չհաջողիր իր նպատակին հասնելու։ Տերն, որ կերակուր ուտելեն վերջը չէր քալեր որպեսզի կերածը չմարսե և նորեն ուտելու համար ստակ չվճնե, դիշեր մը կը ճամբե Կարապետն, որ անկողինը կռնակը շալկելով դուրս կելնե խանութեն։ Չմոռնանք հոս հիշել, որ Կարապետ պարապո ժամերը կատարելագործելու կը զոհեր, ինչ որ սորվիլ սկսած էր անցյալին մեջ։

Այն, որ անկարող է յուր առաջադրած նպատակին երթալ, ականջները կը բանա բախտին և անոր կոչած տեղը կը սկսի վազել։ Կարապետ յուր աշխուժութեամբը կրնար թերևս առևտուրի մեջ մեծ մարդ ըլլալ, բախտը դինքը ուրիշ տեղ կը կանչե. կամ երթալու է և կամ անոթի մեռնելու է. Թորոս բեռնակրութեան կոչում ունի. կոչումը ձայն չունի, բախտը զայն սեղանավորութեյան կը հրավիրե։ Ես վիճաբանելու և դիմացինս համոզելու փափաք ունիմ-

բախտը կը հրամայե ինձ, որ անտառաբան ըլլամ. և համոզելու պաշտոնն այնպիսի մեկու մը կը հանձնե, որ յուր միտքը բացատրելու անկարող է։ Դու գիտութիւններու մեջ կը կարծես առաջ երթալ. բախտն զքեզ բանաստեղծ կընե, և բախտին շինած բանաստեղծին պես անճոռնի բան չկա աշխարհիս երեսը։ Արդ, այս բախտը, որ քիչ բացատրութեամբ միշտ կը հրավիրե զմեզ այնպիսի տեղեր, ուր չենք ուզեր երթալ, վարժապետութեյան կը կանչե Կարապետան, և որ 1867-ին իշխաններու ընկերակցութեյամբ Պոլիսեն կը մեկնի Զեյթուն երթալու համար։ Երբ Հալեպ կը հասնի՝ հիվանդ կիյնա։ Ընկերները դինքը հոն թողլով կը շարունակեն իրենց ճամբան։ Ամիս մը անկողնո մեջ մնալեն ետքը առողջութիւնը կը գտնե և էշ մը առնելով՝ վրան կը հեծնե ու ճամբա կելնե։ Կարապետ Զեյթուն կուզե երթալ, իսկ էշը հոն, ուր կանաչ խոտ կա։ Ուր որ իրարմե տարբեր շահեր կան՝ հոն միաբանութիւնն անկարելի է։ Կարապետ մարդագետնի հետ բնավ գործ չունի. էշն ալ Զեյթունեն բան չհասկնար, ոչ ալ հոն տրվելիք դաստիարակութենեն. ուստի անոթի ըլլալով ուղիղ ճամբան կը խոտորի և մարդագետնի մը վրա կը գտնե յուր Զեյթունը՝ ուր նստած էին քանի մը չերքեզներ։ Աստնք այս ինքնահրավեր ավանակին գալուստը սիրով կողջունեն և տիրոջն ալ կըսեն, թե «սա էշը մերն է, տես ի՞նչպես մեզի ճանչցավ ու եկավ»։ Իզուր կը ջանա Կարապետ զիրենք համոզելու համար վկաներու դիմել. քրիստոնեին վկայութիւնը ի՞նչ արժեք ունի, մանավանդ երբ էշն ալ համակրութիւն կը հայտնե չերքեզներու։ Արքատիր սոխակն[2] հոն պատվական ճաշ մը ընելեն ետքը, մարդագետնի վրա կերկնցնեն ոտներն ու գլուխը կը դարձունե Կարապետին, որ անոթի ետ կը դառնա մոտ գյուղ մը երթալով գլխուն ճարը փնտռելու համար։ Մոտակա գեղի մը մեջ ձի մը կը գտնե և անով վերստին կսկսի ուղևորիլ դեպի Զեյթուն, ուր կը հասնի քսան օրեն։ Տարի ու կես հոն դաստատվութեյան պաշտոն վարելեն ետքը 1870-ին Զեյթունեն կը մեկնի Եգիպտոս կերթա, Եգիպտոսեն ալ Կ. Պոլիս։

1871-ին Շահ Նազարյան վարժարանի աշակերտները ընկերութիւն մը ունեին, որ Զեյթունի մեջ վարժարան մը բացած էր։ Սույն ընկերութենեն կաղաչվի Կարապետ նորեն Զեյթուն դառնալ և հոն դաստատվութիւն ընել ընկերութեյան վարժարանին մեջ։ Կարապետ կընդունի այս առաջարկութիւնը և ճամբա կելնե, բայց երբ կիմանա Եգիպտոսի մեջ՝ թե զրպարտված էր Զեյթունի ժողովուրդը գրգռելու ամբաստանութեյամբ և պիտի ձերբակալվեր, իսկույն աշխարհականի հագուստը կը հանե և կրոնավորի զգեստներ հագնելով շունչը երուսաղեմ կառնե։

1871-ին սարկավագ կը ձեռնադրվի հոն և 1872-ին Գադիկ Բ. թաւրերգութիւնը կը գրե։ Այս թաւրերգութեյան անձերուն մեջ կին մ'ալ կար. վանական մամուլը չուզեց, որ կին գոնվի վանքի մեջ տպված թաւրերգութեյան

մեջ, ուստի կինը հաննց և տեղը մանչ դրավ։ Սարկավագ ձեռնադրվելուն պես վանքը բարեկարգելու կը ձեռնարկե։ Խնդիր կը հարուցանե, թե ս. պատրիարքն պարտավոր է հաշիվ տալ միաբաններուն, թե ընտրութիւններն քվեարկութեամբ կատարվին։

Երբ յուր առաջարկութիւնները կը մերժվին՝ բոլոր ուժովը կսկսի պոռալ, թե ուր խորութիւն կա՝ հոն արդարութիւն չկա, և ուր արդարութիւն չկա՝ հոն աստված չկա, և ուր աստված չկա՝ հոն աստուծո պաշտոնեի գործ չկա։ Ս. պատրիարքն, որուն ականջներն արդարութիւն և աստված բառերը լսելու վարժված չէին, անմիջապես Կարապետը կարգեն կը լուծե և պարոն Կարապետը Պոլիս կուգա և կսկսի հոն ֆեսով պտտիլ։ Ճարը հատնելով կը դիմե Ղալաթիո օճախին, որ նոր կազմակերպվելու վրա էր. անոր անդամ կը գրվի, մշեցիները Խրիմյանին դեմ կը գրգռե. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատյանին Եկեղեցական Պատմութիւնն[3] կը քննադատե իբրև մոլորական. Երուսաղեմա պատրիարքեն վրեժ լուծելու նպատակավ։ Այսպես, օճախին ծառայելեն եաքը, անոր պետին կը դիմե վարձատրվելու համար։ Օճախին գլուխը դիշեր մը Հասգյուղ ամեն. Ներսես Ս. պատրիարքին — այն առեն տեղապահ — տունը կերթա և հետևյալ անվանումները կառաջարկե. «Մամբրե եպիսկոպոսն Մշո սուրբ Կարապետի վանահայր անվանելու է. Իզմիրլյան Մատթեոս վարդապետն եպիսկոպոսութեան բարձարցնելու է. Կ. սարկավագը վարդապետ ձեռնադրելու է»։

Խառն ժողովը[4] հետևյալ օրը այս առաջարկութիւնները կընդունի և հաջորդ օրը Կարապետ սարկավագը կըլլա Վահան Վարդապետ։

1874-ին Մամբրե եպիսկոպոսին եաևեն Մուշ կը ղրկվի, որպեսզի վանահոր հետ աշխատելով վանքը բարեկարգե։ Քառասուն աշակերտի համար տարեկան տասն վարտիք և քսան շապիկ կորոշե. այս հաշվով չորս աշակերտ մեկ վարտիք պիտի հագնեին և երկու հոգի մեկ շապիկ։ Տնտեսագիտութեան մասին վանահոր որոշումն արդարև գովելի էր. բայց Վահան վարդապետ չուզեր համաձայնիլ այս որոշման, տեղեկագիր մը կը շինե Պոլիս կուգա։

1875-ին Բումելի Հեսարի[5] վարժարանին դասատու կանվանվի։ Տեղեկագիր մ'ալ հոն կը շինե։

1876-ին Իսկյուտար Սուրբ Խաչի վարժարանին տեսուչ կը կարգվի և ավագ հինգշաբթի օրը ժողովրդյան քարոզ մը կը խոսի սապես.

«Ժողովուրդ, գլորոցը գեշ վիճակի մեջ է. աղաները աղեկ չեն նայիր. քանի մը օրեն վարժարանը պիտի փլի, թաղականն անհոգ է»։

Այս քարոզին վրա ժողովուրդը խորհրդարանը խուժեց, աղաները վար առավ։ Նոր ընտրութիւն եղավ, նորեն տեսուչի պաշտոն առավ։ Դարձյալ

լուծվեցավ, նորեն ընտրվեցավ և հիշյալ թաղը քանի մը անգամ տակնուվրա ընելեն եաքը հեռացավ անկից։

Այս իրարանցումի մեջ ս. պատրիարքն այցելուներ ղրկել կուզեր Կարնո կողմերը։ Վարդապետին մեկն երկու հազար ոսկի կը պահանջեր այս պաշտոնն հանձն առնելու համար, եպիսկոպոս մը Պոլիսեն ճամբա ելնելու համար երեք հազար ոսկի ուղելեն եաքը, չորս ձի, երկու կառք և տասներկու շիշ լավանտա կը պահանջեր[6] Հայաստանի մեջ գաղթականութեան առաջքն առնելու համար։ Երբ պատրիարքն հուսահատած լապտեր ի ձեռին կրոնավոր կը փնտռեր՝ Վահան վարդապետ կընդունի այս պաշտոնն և իբրև փոխարինութիւն ուրիշ բան չպահանջեր, այլ միայն հրացան մը և տասներկու շիշ օղի։ Ահա հոս է Ազգային Ջոջերուն մեջ Վահան վարդապետին մտնելուն դաղտնիքը։ Անմիջապես ճամբա կելնե այս այցելուն հրացանն ուսեն կախված։ Ճամբան երբեմն որսորդութիւն ընելով, երբեմն երգելով, երբեմն խմելով Դերջան կը հասնի, ուր Սբբխալը սուրբ Թորոս[7] եկեղեցին կիջնե։ Հետևյալ օրը ծառի մը վրա կելնե և կը հորդորե ժողովուրդը, որ չգաղթե։ Կարին կը մտնե ճիշտ այն օրը, ուր իրմե ժամ առաջ մտած էր Հայկական խնդրույն անհաջողութեան լուրը[8]։ Կուզե հոն եկեղեցվույն մեջ կարդալ այն կոնդակն, որ պատրիարքարանե տրված էր իրեն և որ նպատակ ուներ ժողովուրդը հաղթել չգաղթելու համար[9]։ Հարութիւն եպիսկոպոս կընդդիմանա. այցելուն ձայն չհաներ, հրացան և օղիի շիշն առնելուն պես ճամբա կելնե դեպի Կարս։ Հոն կը ներկայանա Լազարեֆին, որ կը ղրկե զինք տեր Ղուկասոֆին, որ Տփղիսի ճամբան ցույց կուտա իրեն։ Ալաշկերտեն և Պայազիտեն լուր կուգա Տփղիսու Հանձնաժողովին հայտնելով, որ այն տեղի ժողովուրդն խմբովին Ռուսաստան պիտի գաղթե։ Վեհափառ կաթողիկոսը կը քննանա։ Այվազովսքին, Փորձի[10], Մշակի[11] և Մեղուի[12] խմբագիրներն կաղաչեն այցելուն, որ Ալաշկերտ և Պայազիտ երթա։ Կընդունի Վահան վարդապետ, բայց կոնդակին մեջ Ալաշկերտ և Պայազիտ հիշված չըլլալով՝ կորոշե նախ Բյուրական երթալ կաթողիկոսին և ապա յուր պաշտոնին։ Բյուրականն կերթա. կարթնցնեն կաթողիկոսը, որ ո՛վ է ան հարցնելեն եաքը ձախ կողմը կը դառնա և նորեն կը քնանա։ Քանի մը ժամեն նորեն կարթնցնեն նորին վեհափառութիւնն[13], որուն չկրնար ներկայանալ մեկն առանց քսանըհինգ օր դռան առջև սպասելու։ Վերջապես կարժանանա դեմն ելնել կաթողիկոսին, որ պարզապես կը հայտնե, թե ինքը չեզոքութիւն պահել որոշած է այս գաղթականութեան խնդրույն մեջ և այս հայտարարութիւնն ընելեն եաքը կսկսի սանտրել յուր մորուքն։

Վահան վարդապետ Պայազիտ կը վերադառնա այն օրերն, ուր Ռուսիո զորքերը Պայազիտեն քաշված էին և մեր զորքերը մտնելու կուշանային։ Ժո-

զովուրդը գաղթելու պատրաստված, կը փնտռեն իր բնիկները և քահանաները, զորս այցելուն վարպետությամբ մը վանքին մեջ բանտարկած էր։ Քանի մը գյուղեր միայն կը գաղթեն հակառակ ջանից Վահան վարդապետին, որ նորեն Բյուրական կերթա ու կաթողիկոսին կը ներկայանա ըսելով.

«Ձեր անհոգությամբը երկու երեք հազար տուն կորսվեցավ. հարյուր քսան վարդապետ և հարյուր քսան հազար ոսկի ունենալով չուզեցիր օգնության հասնիլ քանի մը գյուղերու, որք էջմիածնին տասներկու ժամ միայն հեռավորության ունին։ Անոնց արյունը ձեր պզուխն ըլլա»։

Կաթողիկոսը գլուխը քերեց։

Այս պաշտոնն ալ կատարելեն եաքը Փոթիի ճամբով Պոլիս եկավ և տեղեկագիր մը ներկայացուց ս. պատրիարքին։ Հիվանդություն մը եկավ վրան և Պարտիզակ երթալով վեց ամիս ցավով զբաղեցավ։

Պատրիարքարանն, գոհ անոր մատուցած ծառայություններեն, 1879-ին պատվիրակության պաշտոնով Կարին երթալ հրամայեց իրեն. հրամանն անմիջապես կատարեց շոգենավ մտնելով։ Հոն ընդհանուր ժողով գումարեց. հոն դրվեցավ հռչակավոր ծրագիրն, որ մատուցվեցավ կայսերական Ռուսիոեռեբուն։ Ասոնք ընդլեն եաքը բարեկարգություններուն ձեռնարկեց։ Երբ իմանար, որ գեղի մը մեջ հարստահարություն մը գործված էր՝ իսկույն նույն գեղին հնիյաներն ու քահանաները կանչել կուտար։

— Ձեր գեղին մեջ ոչխարներ գողցված են։

— Հրամմեր եք, հայր սուրբ։

— Ջյուրտերը գողցած են։

— Ծառա եմ, հայր սուրբ։

— Ինչո՞ւ ուշադրություն չեք ըներ և թող կուտաք, որ խեղճ ժողովուրդը կողոպտվի։

— Ծառա եմ, հայր սուրբ, շունները չհաչեցին, որ իմանայինք։

— Շունները ինչո՞ւ չպատժեցիք։

— Ծառա եմ, հայր սուրբ։

— Սա ֆալախան բերեք։

— Ծառա ենք, հայր սուրբ։

Եվ քանի մը հնիյաներ ու քահանաներ Ֆալախայի տակ երգել կուտար։ Պատրիարքարանը կիմանա և կը գրե իրեն, որ բարեկարգությունն առանց ֆալախայի ընե. կը պատասխանե, թե անկարելի է, վասն զի, կըսե, այս մարդերն իրենց ոտներեն ավելի շուտ խոսք կը հասկընան քան թե իրենց գլխեն։

Շատ իրավացի է այս պատասխանը։ Արիստիպպոս, զոր շուն արհունի կանվաներ Անտիոքենեսի աշակերտներեն անառակագույնը, յուր բարեկամներեն մեկուն համար երբ Դիոնեսիոսին[14] կաղաչեր և չէր հաջողեր յուր խընդիրքը լսելի ընելու համար՝ անոր ոտներուն փարեցավ։ Ներկա եղողներն երբ պիտղությունն ըրին իրեն այս վարմունքին՝ հանցանքն իմ չէ, պատասխանեց, այլ Դիոնեսիոսին, որուն ականջներն ոտներուն վրա են։

Զարմանալի է տեսնելն, որ այսօր ալ շատերուն ականջներն իրենց ոտներուն վրա են։ Այս ոտները համբույր կընդունին, եթե հզոր են, իսկ փայտ՝ եթե տկար են։ Մանավանդ վերջին տարիներս համբույրներն հարուստներու և պզտիկներուն տեր անձերու հողաթափի տեղ կը ծառայեն, ամեն օր կը կոխվին անոնց վրա. իսկ բուն ականջներն կը գործածվին իրրև զարդ և կամ բան մը լսելու համար։

Բնական էր, որ Վահան վարդապետին այս ընթացքն ապարդյուն չմնար, վանըզի ֆալախային տակեն ելնողներն առաջվան պես չէին կրնար անտարբերությամբ շարունակել իրենց պաշտոնը։ Այս քահանաներն ու հնիյաներն իրենց գյուղերը մտնելուն պես, կսկսին հորդորել ժողովուրդն, որ գողերու դեմ ինքզինքը պաշտպանե. ամեն տեղ անձնապաշտպանություն կը քարոզեն, որպեսզի գյուղերու հանցանքն իրենք չքավեն ֆալախային տակ։

Վահան ժամը մինչև տասներմեկ բարեկարգություն կըներ և տասներմեկեն եաքը օդի խմելու կերթար Հարություն եպիսկոպոսին քով, որ տասներմեկեն առաջ կսկսեր Բաքոսի արարողություններուն։ Գործող և կորով մարդ ըլլալն հայտնելու համար՝ Հարություն եպիսկոպոսին կատուն ղրկեց ազգային վարչության ձեռամբ բանտարկված վարժապետի մը, որ նամակ գրած էր աղաչելով, որ ազատեն բանտեն, վանըզի մուկերը պիտի ուտեն զինքը։ Երբ Հարություն Եպիսկոպոսն յուր կատուն հարցուց՝ Վահան վարդապետ պատասխանեց, թե կրթական գործի մը ծառայեցուցած էր զայն։

Յուր պաշտոնն ավարտած ըլլալու համար, ֆրանսերեն տեղեկագիր մը կը հրատարակե և Թրոթրին կուտա։ Այս տեղեկագրին մեջ հայերու վերքերուն վրա կը դնե յուր մատն՝ զոր ուրիշներն մատանիով կը պատվեն, և զոր մենք կը կարենք անոր համար, որ մատանի չունինք։

Քանի մը ամիսներ Պոլսո փողոցներուն մեջ թափառելեն եաքը՝ Գասը գեղի[15] քարոզչության պաշտոն կը տրվի իրեն։ Այս գեղին ազգայիններն ոչ թե միայն պատիվ չեն տար, այլ պատկելու համար սենյակ մ'ալ ցույց չեն տար, և ինքը կատիպվի, գիշեր մը քանի մը ժամ փողոցի մեջ մնալեն եաքը սենյակ մը ճարել և յուր գտած ընդունելության վրա մտմտալ։ Հետևյալ օրը կը հրաժարի այս պաշտոնեն, և երբ Գասը գեղի ազգայիններն կը հայտնեն իրեն, թե եթե սենյակ մ'ունենար սիրով պիտի ընդունեին զինքը՝ կը պատասխանե, թե կրիա քարոզիչ մը ընտրեցեք դուք, որ ինչպես կըսե չեմ հիշեր ով, ո՛ւր ալ երթա սենյակն հետը կը տանի։

Յուր սկզբունքներն են.

«Նախ համոզել, ապա հայհոյել, հետո սպառնալ և եթը զարնել։

Մարդերն ուրախ և զվարթ ըլլալու են ամեն պարագայի մեջ։

Մեղք չգործելն աստուծո հատուկ է, իսկ մեղանչելն ու ղջալը մարդու. հետևապես, այն մարդն, որ չմեղանչեր, մարդ չէ։

Իբրև փողոցի մարդ հաճախ կառաջարկե մեծ պաշտոնյաներուն, երբ տանիքներն ավելք՝ ապականությունները փողոց մի՛ թափեք. վասն զի, կըսե, փողոցի վարչությունն ալ ունի յուր ապականությունները։

Շատախոսության այն աստիճան թշնամի է, որ եթե իշխանություն ունենա, բոլոր շատախոս երեսփոխանները լեզուներեն կը կախե, որպեսզի ինքը միայն խոսի։

Վահան վարդապետ հիմակուհիմա փողոցները կը չափե և օրվան ամեն ժամերուն հատուկ տեղեր ունի, բայց կեդրոնատեղին է Գալաթիո օճախն, ուր ամեն օր կերթա կեսօրին։ Ձինքը ճանաչելու համար բնավ դժվարություն չկա, երբ կը տեսնեք փողոցի մեջ երիտասարդ վարդապետ մը, որ ձեր երեսը նայելով աճապարանոք կերթա, անմիջապես ձեր մտքեն պիտի ըսեք.

— Ես այն մարդուն բան մը ըրած չունիմ, ինչո՞ւ համար ինձի դեմ դատ բանալու կը վազե։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Գրիգոր Արծրունի, պատմագետ, թատրոնապետ, ինդուկտիվ խմբագիր դեդուկտիվ Մշակի, ծնած է Մոսկվա, 1845 թվականին։

Հայրն, աղա Երեմիա Արծրունի, իմանալուն պես, որ զավակ մ'ունեցած է, անմիջապես տուն վազեց և, Գրիգորին դեմքը դիտելեն եթը, դուրս ելավ յուր ծանոթներուն ըսելու.

«Եթե տղաս տեսնեք՝ ինձի ողորմիս պիտի հանեք»։

Մանկական հասակեն փորձով ցույց տված Արծրունին, որ խմբագրական ասպարեզին մեջ մեծ անուն պիտի հաներ օր մը, վասն զի նույն հասակին մեջ իսկ մեծ կոչում ուներ... չհամոզվելու։ Օրորոցին մեջ ժողովրդականություն կը քարոզեր. ամեն անգամ, որ աղնվապետական դասեն հյուր մը կը գտնվեր սենյակին մեջ, շորերը փոխելու կտիպեր մայրն այն նշաններով՝ զորս երախաներ կուտան նույնիսկ բարձրապատիվ անձերուն առջև։

Պատանեկության օրերը Մոսկվա անցունելեն եթը՝ Գերմանիա գնաց, ուր քանի մը տարիներ աշխատելով հսկայաքայլ հառաջադիմություններ ըրավ յուր դասերուն մեջ. ծայրագունության աստիճան առավ պատմության մեջ և եպիսկոպոսության աստիճանին բարձրացավ համառության մեջ։

1868-ին Վենետիկ գնաց, ուր մեկ ամսու մեջ հայերեն սորվելով Հայր Ղևոնդեն՝ հայկաբանության դաս տալ ուղեց հայր Արսեն Բագրատունվո։

Գրական ասպարեզը մտնելու համար գլխուն մեջ բավական պաշար ամբարելեն եթը՝ Տփղիս դարձավ։ Երբ տեսավ հոն, որ հայերու մեջ մեռած էր ամեն կյանք և ոգի, սաստիկ բարկացավ, և եթե դինվորական եղած ըլլար՝ տարակույս չկա, որ ամբակոծել կուտար այդ քաղաքը։ Քանի մը ամիսներ խորհելեն վերջը, թե ի՛նչ եղանակավ կրնա կենդանություն տալ ազգայիններուն՝ որոշեց լրագիր մը հրատարակել այն լեզվով, զոր չէր գիտեր։

Երբ դրաքննիչին ներկայացավ լրագրի մը արտոնություն խնդրելու համար՝ դրաքննիչն հարցուց իրեն.

— Լրագիր հրատարակելու չափ գիտե՞ք հայերեն լեզուն։

— Ես չեմ գիտեր, պատասխանեց Մշակին տերը, բայց ընթերցողները շատ աղեկ գիտեն... բարեկամներս ալ գիտեն։

Արտոնություն առնելուն պես տուն վազեց Արծրունին և հարյուր քառասուն նամակ գրեց հրավիրելով յուր ծանոթներն, որ հաճին Մշակի խմբագրությանը մասին նպաստել իրեն։ Բարեկամներն ընդունեցին այս հրավերն և 1872-ին ի լույս եկավ Մշակն, որ բաժանորդեն ավելի խմբագիր ուներ։ Խմբագրության կանոնադրությունը կը պահանջեր, որ ամեն հոդված ամբողջ խմբագրության համաձայնությամբը հրատարակվեր։ Այս կանոնադրությունը շատ նպաստավոր չէր Գրիգորին, որուն ամեն հոդվածները մեկի դեմ հարյուր երեսուն և ինը քվեով կը մերժվեին, և եթե երբեք լույս տեսնեին՝ մեծ փոփոխություն կը կրեին։ Այսպես, Մշակը, որուն ամասկանն ինքը կը վճարեր, փոխանակ իրեն ծառայելու՝ ուրիշներու կը հնազանդեր։ Այս կետն իրեն ծանր եկավ և օր մը ինքնիրեն ըսավ.

«Պետք է որ իմ Մշակս միայն ինձի ծառայե և ոչ ուրիշներու»։

Այս վճռույն վրա բարեկամները կամաց կամաց քաշվեցան խմբագրությունեն և Մշակն ալ սկսավ յուր տիրոջը միայն ծառայել։ Մշակն այս պարագային մեջ յուր պարտքը կը կատարեր, որովհետև Պ. Ամբակումին մշակն ալ չերթար Պ. Կիրակոսին սեղանը դնելու կամ կերակուրն եփելու։

Արծրունին յուր բարեկամներեն ազատվելուն պես՝ հարձակողական դիրք մը առավ։ Սկսավ հարվածել բոլոր այն անձերն, որոնք պատիվ չունեին Մշակի բաժանորդ ըլլալու. ձաղկել երիտասարդության անտարբերությունը, ազգային խեղճ մամուլն, որ ավելի խեղճ կացության մեջ ինկած էր Մշակին երեմանբը, կղերն, որ միայն որովայնին կը ծառայե և ազգասիրությունը միշտ յուր կոկորդին մեջ կը փնտռե, կղերն, որ շատ հեռավոր դարերե ի վեր

ակսած է արդելք դնել ամեն հառաջադիմության, հալածելով իմաստասեր մը, որ հանդգնած էր ըսելու թե արեգակը Պեղոպոնեսեն մեծ է։ Արծրունվո այս հարձակումները բոլորովին ապարդյուն չմնացին, ծնունդ տվին երիտասարդական կուսակցության մը, որ մեղվական խումբ անվանվեցավ։ Վիճաբանությունն սկսավ Մշակի և Մեղուի[1] մեջ։

Հայտնի է, որ մեր մեջ ոևէ խնդիր մը լուսաբանելու համար երբ վիճաբանություն մը բացվի՝ բանակռվո մեջ իրրև փաստ մեծ տեղ կը բռնեն վիճաբանողներու մորուքը, հասակը, հագուստը, ծնած քաղաքն և մինչև անգամ այդ քաղաքին բերքը։ Եթե կեսարացիի մի հետ վիճաբանության բռնվիս՝ ի՞նչ հարկ երկար բարակ տրամաբանել, պարզապես զրուցե իրեն. «բարեկամ, որովհետև կեսարիայեն պատվական ապուխտ կելնե և որովհետև ժամանակավ կեսարացի մը էշ մը ներկած է՝ ըսել է թե իրավունքը իմ քովս է»։ Ադրիանուպոլսեցիի մը հետ վեճդ, ասկե ավելի ի՞նչ դյուրին բան կա. հաղթանակը միշտ քուկդ է։ Ինչո՞ւ Հարցունելդ ավելորդ է, վասն զի Ադրիանուպոլսեն խաշեր (պանիր) կելնե, և խաշերեն ավելի ի՞նչ զորավոր փաստ կարող ես մեջ բերել դինքը համոզելու համար։ Վառնացի՞ է ընդդիմաբանդ, հավկիթի մեջ գնա փնտռել փաստերդ, անմիտ։ Իզմիրցի՞ է, չամիչով և թուզով կրնաս բերանը գոցել։ Եթե ասոնք բավական չեն, ադատ ես քթեն կտոր մը փաստ փրցունել. քիթը պզտի՞կ է. հասակին վրա ցասկե. Եթե հասակը բարձր է՝ հագուստեն բռնե. եթե հագուստ չունի՝ մերկությունը ծաղրե և վստահ եղիր, որ պիտի փառավորվիս անմիտներու առջև։ Քանի որ այս է մեր ազգային տրամաբանությունը՝ բնական է, որ Մեղու և Մշակ լրագիրներն ալ գոնե ազգասիրության համար ընդունին զայն, ինչպես որ ընդունեցին։ Ասոնց մեջ այնչափ տաքցավ վիճաբանությունն, որ եկավ անձնականության հանգեցավ։ Արծրունվո կազմը Տեմարթի մերոտեն ավելի զորավոր փաստ մ'էր Մեղուի խմբագրին գրչին ծայրը. Սիմեոնյանի ամուրիությունը ավելի արժեք ուներ քան Քաճքի մեկ վկայությունը։ Անհրաժեշտ հարկ էր, որ այս երկու պարոնները կամ իրենց լեզուն փոխեին և կամ իրենց կազմը, որպեսզի վիճաբանությունն օրինավոր ըլլար և չարժանանային ռուս լրագրի մը հանդիմանություններուն։ Արծրունին երեք չորս տարի շարունակ Մեղուի հետ հոգևորական վիճաբանություն ընելեն ետքը, ուխտ ըրավ, որ Մեղուի անունը բերանը չառնե և սկսավ հրատարակել այնպիսի հոդվածներ, որոնք բոլորովին հակառակ էին առաջին գրվածներուն։ Եթե երբեմն հոդված պակսեր, Մշակը լեցնելու համար՝ յուր բաժանորդներուն թիվը կը ծանուցաներ և պակասը կը լեցներ։ 1877-ին Մշակ սկսավ շաբաթը երկու անգամ հրատարակվիլ և Արծրունի ամեն օր գովել գերմանական ուսումը և դրոշակը։

1878-ին Արծրունվո թերթն ամեն օր կը հրատարակվեր այլանդակ

դաղափարներով։ Կը հանդիմաներ ս. պատրիարքն, թե ինչո՞ւ պատրիարքարանն ու երեսփոխանական ժողովն Կարին չփոխադրեր, որպեսզի ուժը հոն միանա։ Կը կարծեր, անշուշտ, թե Կարին նամակ ղրկելու չափ դյուրին բան է պատրիարքարանն ու երեսփոխանական ժողովն Հայաստան ղրկելն և թե՝ պատրիարքն այս մասին անտարբեր է։ Կ. Պոլսո աղգայիններն, որ Մշակի այս տեսակ կարծիքները կը կարդային, իրարու ականջն ի վար կը փսփսային.

— Մշակ վաղը պիտի առաջարկե, որ կամ Պոլիս Կարին փոխադրենք կամ Կարին Պոլիս։

Եվ Արծրունին պոլսեցիներուն այս անտարբերությանը վրա սրդողելով կը մկրտեր զանոնք թերև, կեղծ ազգասեր, շուներու և գողերու խառնուրդ և ուրիշ այնպիսի ածականներով, զորս լրագրի մը մեջ հրատարակելու համար մարդս անպատճառ գերմանական զրոշակ ունենալու է։

Վերջերս երբ ս. պատրիարքն հայերու Հայաստանի մեջ ունեցած մեծամասնությունը կը հաստատեր՝ Մշակ յուր սովորական լեզվովը կը խրատեր պատրիարքն, որ էշերու և կովերու վիճակագրությունն ալ ընե, եթե մեծամասնության վրա էր խնդիրը։ Մարդերու, կըսեր, մտավորական և բարոյական հանգամանքը նկատողության կառնվի և ոչ թե անոնց թիվը։ Բայց երբ Եվրոպան մեզմե թվաբանություն կը պահանջե, մենք չենք կարող իրեն փիլիսոփայություն ներկայացնել։ Ամեն մարդ կը փափաքի, որ Մշակի կարծիքն հաղթանակե, բայց ի՞նչ օգուտ, քաղաքագիտությունը դեռ տգետ ըլլալով՝ չէ կարող ըմբռնել պ. Արծրունվո բարձր դաղափարները։

Երբեմն այլանդակ կարծիքներ կը հայտնե այնպիսի այլանդակ լեզվով, որ ընթերցողն կը շվարի, կը մնա, թե երկու այլանդակություններուն որո՞ն վրա խնդա և որո՞ն վրա լա։ Ութը տարիներե հետե կուզղե յուր աշխարհաբարը, զոր ֆրանսացի մը ավելի շուտ կը հասկնա այսօր քան հայ մը։ Եվ որպեսզի զրպարտություն չհամարվի մեր ըսածը՝ հոս հեռագիր մը կը թարգմանենք իր լեզվով։

«Բնչնալ պատերազմական մինիստրին պախարակեց, որ խիստ մեծուրաներ չգործադրեց սենատորի մը դեմ, որ լեքիդիմական ցուցմունքներ առավ։ Կապիտեդը կամենում է դեմիթիոնե տալ։ Բյուդժեի սոմաները ընդունված են սենատից. եպիսկոպոսների կրեդիտը մերժեց և ժողովի սեսիան փակված է հայտնում։ Բյուլլըդենը կը ծանուցանե, թե կայսրուհին պլևրիտ ունի»։

Եվ երբ եվրոպական լեզվի մը ծանոթ չեղող մեկը կարդա այս տողերը ու բան մը չհասկնա՝ պ. Արծրունին կը սրամտի և հետևյալ օրը Մշակին մեջ շանթ և հուր կը թափե այն ամեն ընթերցողներուն գլխուն, որոնք յուր լեզուն չեն հասկնար։ Խնդիր մը իմաստասիրելու առեն որոշ ուղղություն մը չունի. ամառը պատճառեն արդյունք կերթա, իսկ ձմեռը արդյունքեն պատճառ. ինչ-

պես որ կաթողիկոսն ալ ամառը էջմիածնեն Բյուրական կերթա և ձմեռը Ետ կը դառնա։

Այս ընթացքով հաջողած է վերջապես իրականացնել յուր փափաքն, որ էր Մշակը կարևոր թերթ մը ընել և պինքն ալ կարևորություն ունեցող խմբագիր մը։ Տփղիսու մեջ կառավարությունը հայ լրագրապետներու խորհուրդ չէր հարցուներ, իսկ հիմա պ. Արծրունին կը հրավիրվի այն ժողովներուն, ուր քաղաքի մասին կարևոր որոշում մը պիտի տրվի։ Ռուս թերթերն երբեմն հատվածներ կը թարգմանեն Մշակեն։ Եվրոպայի թղթակիցներն «Հայաստանյայց եկեղեցվո հայ Հակինթոս կամ «Հայ մամլո էմիլ սը Ժիրարտեն» կը կոչեն պինքն և ինքն բնավ բողոք չբառնար այս դրպարտություններուն դեմ։

Տփղիսու մեջ առաջին անգամ ինքը հաստատեց լսարանն, որու մեջ ինք ըրավ առաջին ատենախոսությունը։ Թեպետև ատենախոսության նյութին «Հայաստանի տնտեսական դրությունն»[2] էր՝ բայց ատենախոսին ձևերեն և շարժումներեն սա կը հասկցվեր, թե մարդս ատենաբանելու ժամուն լայն թևնոցներ դնելու չէ, որպեսզի ատենախոսն ժամանակ ունենա յուր նյութովն զբաղելու և ոչ թե թևնոցներովը։

Ունկնդիրները կը սորվեին նաև, թե հազը ատենաբանության մեջ ատրաակետի տեղ կը ծառայե և թե ներելի է այնչափ հազալ, որչափ որ կը ներե ունկնդիրներուն երկայնամտությունը կամ ատենաբանին անդրդվությունը։ Իսկ երբ երկրորդ անգամ ժողովրդյան առջև ելնելու պատիվ ունեցավ, յուր հուզումները զսպեց և Ճարտասանի մը պես ատենախոսեց։

Ժողովուրդը կրթելու համար խմբագրությամբ և ատենախոսությամբ չշատացավ. յուր ծախքովը թատրոն մ'ալ հիմնեց[3], որպեսզի հոն ալ քիչ մը ծառայե ազգին։ Սակայն չհաջողեցավ այս ասպարեզին մեջ. վասն զի դնո մասին չկրնալով համաձայնիլ դերասաններուն հետ՝ հարկադրեց զանոնք, որ ուրիշ տեսարանի մը վրա ներկայացնեն իրենց խաղերը, մուկերու թողլով խաղալ իրենց դերն պ. Արծրունվո թատրոնին մեջ։ Մշակի խմբագիրն այս անհաջողության վրա սկսավ ձաղկել այս դերասաններն և ատոնց ներկայացումներն։

Քրիստոնյաներու անկախությանը համար օգնելն իրեն նվիրական պարտք մը համարելով՝ վիրավորյալները քաջալերելու համար բացավ անոնց յուր հյուրանոցները, որպեսզի աներկյուղ վիրավորվին և երթան հյուրանոցներու մեջ դարմանվին։ Այս ծառայությանը փոխարեն կայսրուհիեն շնորհակալության դիր ստացավ։

Պ. Արծրունին, ինչպես ըսինք, ժողովրդական մարդ է և այնչափ ատեն կը սիրե իր ծանոթներն, որչափ ատեն, որ ատոնք միջակ աստիճանի մեջ ըլլան. իսկ բարև տալը դադրեցուցած է այն անձերուն՝ որոնք ստորագրություն

չեն տված իրեն, թե իրմե ավելի հարուստ չպիտի ըլլան։ Յուր ծանոթներուն հետ — ծանոթ կըսենք, վասն զի մեզ տրված տեղեկություններուն նայելով՝ բարեկամ չունի — հեզ և բարեբարո է. զանոնք շողոքորթելու կը պիջանի երբեմն, բայց ազնվապետականներն և հարուստները միշտ կարհամարհե և այս է պատճառն, որ Տփղիսու ազնվապետականներու հետ չէ կրցած երկար հարաբերություն ունենալ։

Առատաձեռն է՝ երբ մեկը շողոքորթե պինքը. վարպետորդի մը երկու շլացուցիչ ածականներով կարող է անոր քսակն գրպանեն առնել։

Իբրև հայ՝ ազգասեր է, և իբրև խմբագիր՝ անխոնջ գրող և կռվող։ Արարատյան ընկերության[4] մատուցած ծառայություններն պինքը շատ սիրելի ըրած են ազգայիններուն, որոնք միշտ կըսեն, թե «եթե Տփղիսու մեջ Արծրունվո պես ուրիշ աշխատողներ ալ գտնվեին, Արարատյան ընկերությունն այսօր ավելի մեծ դրամագլուխի տեր կըլլար»։

Կրոնականներուն այն աստիճան հակառակ է, որ երբ փողոցի մը մեջ ասոնցմե մին տեսնե՝ ետ կը դառնա և ուրիշ փողոցե մը ճամբան կը շարունակե։ Յուր հորը թաղման ժամանակ, երբ կղերական դասը կուզե, որ ըստ ասվորության մեծ հանդիսիվ կատարե հուղարկավորությունը՝ պ. Արծրունին կը դառնա քահանաներուն և կըսե.

«Դուք գեշ մարդեր եք, ես ձեզի պետք չունիմ»։

Վերին աստիճան ուղիղ մարդ է, և ժողովուրդը վստահությամբ հազար ռուբլի կը հանձնե իրեն, որ ընկերության մը ղրկե։ Պոլսո մեջ չէ տեսնված մեկը, որ ռուբլի մը վստահի Պոլսո բոլոր խմբագիրներուն։

Վիճաբանության մեջ պնդագլուխ է։ Այնպես համոզված է, թե այն մարդն, որ վկայական մ'ունի ծոցը՝ ազատություն ունի հանուն գերմանական դաստիարակության՝ ծիծաղաշարժ կարծիքներն հայտնել և ստիպել ուրիշներն ընդունիլ յուր խոսքերը. իսկ երբ առանձին կը մնա՝ խելքի ու բանականության կը վերադառնա և կը համոզվի, թե այսօր մարդս ավելի յուր գործերեն կը դատվի քան թե յուր ծոցի վկայականեն։ «Ավելորդ է համարում, կըսե Հարո, խոսել արևելյան քաղաքականության վերաբերյալ Մշակի սխալ ու անտակտ հոդվածների մասին, որոնց համար իրավամբ հանդիմանեցին նորան տեղական լրագիրները և որոնցմով պ. Արծրունու օրգանը՝ չափազանց ջերմեռանդություն ցույց տալով, կարծես դիտմամբ ցանկանում էր ինքնակոչ կիսապաշտոնական լրագրի դեր խաղալ և նմանվել «ավելի թագավորական քան զթագավորն» կոչվածին։

— Ապստամբություն քարոզելով տաճկական Հայաստանի՝ հայերին (թեպետ երբեմն ասում էլ էր, որ Հայաստանում հայ չկա) բոլորովին մոռանում էր, չգիտեր, թե հաճե՞լի կը լինի այդ բանը այն կառավարությանը, որին ին-

քը իբր թե ծառայում է, համաձա՞յն կը լինի արդյոք այդպիսի երևույթը այն տերության հայացքների հետ։ Թյուրքիայի հայերը արդյո՞ք իրավ մի տերությունից միայն պիտի սպասեն իրենց փրկությունը, թե այդ ցնորք է, երևակայություն և այլն, և այլն — այսպիսի հիանալի, հրաշալի քաղաքականություն»։

Ընկերության մը մեջ երբ պ. Արծրունին չվիճաբանիր, զվարճալի խոսքեր կընե, փոքր վեպեր կը պատմե, և լսողները խնդալեն կը մարեցունե, սակայն իրեն հետ տեսնվողը միշտ զգուշանալու է հպարտ դիրք մը բռնելե, զվարթությունն իսկույն բարկության կայլափոխվի։

Գրեթե ամեն երեկո քաղաքին հրապարակին վրա կը ճեմե և օտարական մը տեսնելուն պես հետը կը տեսակցի, քանի մը կարծիքներ կը հափշտակե վարպետությամբ և հետևյալ օրը զանոնք ոսկեզօծելով կը հրատարակե առաջնորդող նոդվածի մեջ։

Երբ հրապարակի վրա ժուռ կուգա, միշտ պրաղված է շակելու յուր շապիկն, փողպատն, թիկնոցն, բաճկոնն և գլխարկն, որ առաջնորդող նոդվածներուն դլուխը դրված վերնագիրներեն շատ փոքր է։ Եթե շարադրությունը լաթերև շինվեր՝ Մշակի լեզուն այսօր բավական կոկիկ լեզու մը պիտի ըլլար, կոսընցնելով իրեն տգեղ և տձև կողմերը։ Քիչ մը ման դալեն ետքը կը նստի զրոսարանի մը մեջ, ուր քանի մը գավաթ միայն գարեջուր խմելով՝ հետևյալ ավուր հրապարակելիք հոդվածներուն վրա կսկսի խորհիլ։ Քաղաքին մեջ գրեթե միշտ կառքով կը շրջագայի, եթե սանդուխեն վեր կառք հանելը կարելի ըլլար՝ մինչև անկողինը կառքով պիտի երթար, այնքան կը սիրե չքալելը, թեպետև անկե նվազ չսիրեր գեղեցիկն, ինչպես նաև բարոյականություն քարոզելը։

Պ. Արծրունին, ի՛նչ որ ալ ըլլա, յուր թերություններովն ավելի ծառայած է ազգին քան յուր հմտություններովն։ Ժողովուրդ մը յուր թմրութենեն սթափեցնելու համար կծու հանդիմանություններն և խորհրդածություններն ուշիմ և խոհեմ դրություններեն շատ ավելի օգուտ կընեն. և ասոր քաջ համոզված ըլլալուն համար է, որ խրատելու տեղ կը նախատե և շոյելու տեղ կը խածնե։ Քանի որ նպատակս սուրբ է, կըսե պ. Արծրունին, միշտ իրավունք կունենամ հայերուն ծույլ, շուն, գող, անառակ, լիրբ, ավանակ և այլն ըսելու։ Թեև այս լեզուն հակառակ է մամլո ազատության, բայց համաձայն ըլլալով հայրենյաց ազատության, կը հրավիրենք մեր ազգայիններն չզայրանալ պ. Արծրունվո հանդիմանություններուն դեմ, որքան ալ անմարսելի ըլլան անոնք, վասնզի առանց հայհոյության չիք փրկություն։

Զինքն անձամբ ճանաչելու պատիվը չունենալով՝ չենք կարող անոր կազմությանը վրա գաղափար մը տալ մեր ընթերցողներուն. իսկ եթե հավատանք

մեզի տրված ծանոթություններուն՝ կը պարտավորինք ըսել, թե պ. Արծրունվո կազմը նույն ուղղությունն ունի, ինչ ուղղությունն ունի Մշակը, և անշուշտ փառք մ'է իրեն եթե ոչ Մշակին մեջ, գոնե յուր անձին վրա եղելոն ներկայացնելը։ Դարձյալ մեր քաղած տեղեկություններուն հենլով՝ պ. Արծրունին պետք է ունենա այն դեմքը, զոր կունենա մարդ, երբ սխալմամբ գավաթ մը կաղ խմե։

ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Այս ջոջին ալ ծննդյան թվականը հայտնի չէ յուր սկզբունքներուն պես։ Պատմագիրներեն ոմանք 1812-ին կը ղրկեն զայն և ոմանք 1820-ին. բայց ինքն ոչ մեկն կընդունի և ոչ մյուսն, 1826-են անդին չուզեր երթալ։ Եթե ամուսնանալու դիտավորություն ունեցած ըլլար՝ կը զգուշանայինք յուր ճիշտ տարիքն հրատարակելե. բայց քանի որ լսած ենք, թե մոտերս վարդապետ ձեռնադրվելու միտք ունի, հանդարտ խղճիվ կրնանք պնդել, որ Քրիստոստուր Ղազարոսյան, ազգային երիցագույն երեսփոխան, անձնանվեր դաստատու Անձնանվեր ընկերության՝,— կետ առ կետ գործադրիչ ազգային սահմանադրության, վարժապետ և ընկեր Ստեփան Փափազյանի, տնօրեն ազգային վարժարաններու, 1816-ին եկած է... Սամաթիա, վասն զի այն թվականին Ղալաթիո խորհրդարանը դեռ շինված չէր։

Յուր անունովն քիչ մը Քրիստոսին պատվույն դպած է, յուր սատանայությունն մոտեն տեսնողները կըսեին. «Եթե Քրիստոսին տուրքն այս է՝ պետք է որ քրիստոնեությունը թողունք»։

Մանկության առաջին հառաչանքն, կըսե բարոյագետ մը, ազատության համար է։ Քրիստոստուրին առաջին հառաչանքը արարողի համար եղավ, երկրորդ հառաչանքն երեսփոխանության համար և երրորդ հառաչանքն ազգային գործերեն բնավ չքաշվելու համար։

Երբ ճեմարանը 1843-ին փակվեցավ՝ Սամաթիո մեջ Սահակյան ընկերություն անունով ընկերություն մը կազմվեցավ թաղին վարժարանը հառաջացնելու համար։ Այս ընկերության մեջ գտնվեցավ Քրիստոստուր, ուր ոսկերիչ ընկերներուն հետ սկսավ աշխատիլ և յուր կարմիր թաշկինակն իբրև ժողովրդական դրոշ պարզել ամիրայության դեմ։ Հիշյալ վարժարանին ներքին բարեկարգություններուն ինքը կը հսկեր, Մինեճի Անդրանիկին թողլով արտաքին հարձակումներուն դեմ մաքառիլը։

1849-ին Փրկիչ դրին զինքը։ Հոն մտնելուն պես՝ շատ բարեկարգություն-

ներ ըրավ։ Նախ և առաջ խեղդերն ղգաստացնելու համար Թեսավրոսի բարոյական իմաստասիրությունն առավ և անոր մեջեն դաս տալ սկսավ իրենց։ Խեղդերն իրենց շղթաներն շարժելով կը խնդային — Քրիստոստուրին խնդությանը վրա անշուշտ — և Քրիստոստուր կուրախանար և ինքնիրեն կըսեր.

«Եթե չեն ղգաստանար՝ գոնե կը զվարճանան»։

Երկրորդ՝ հիվանդանոցին մեջ գտնված որբերը սրահի մեջ հավաքելով՝ Փրկչի որբանոցը[2] հաստատեց. դասատուներ կարգեց և աղգային մանկավուլն հառաջադիմությանը ամեն հոգ և խնամք տարավ, թեպետև յուր հառաջդիմության համար ալ գիշեր ցերեկ աշխատելեն ետ չէր կենար։

Երրորդ՝ Հիվանդանոցին տետրակները կարգադրելու ձեռնարկեց. սակայն տոմարակալության շատ հմուտ չըլլալուն պատճառավ՝ տետրակները խաղ խաղացին իրեն և սկսավ բամբասվիլ։ Շատերը կըսեին, թե Քրիստոստուրի կոկորդն ալ մայր-հաշիվ մ'է, հասկցնելու համար, որ շատ հաշիվներ փոխանակ տետրակներուն մեջ անցնելու Քրիստոստուրին կոկորդն անցած են, բայց ինք, որ օրինավորությենե քնավ չեղիր, կը պատասխաներ իրենց.

— Եթե ապօրինավորության կը տեսնաք տետրակներուն մեջ՝ բռնեցնեք և պատժեցնեք... տետրակները։

Չորրորդ՝ ճեմարանին կարասիքը և դույքը հիվանդանոց փոխադրել տվավ, ճեմարան անունն ալ հոն բերավ և Փրկչի դպրոցն ճեմարան անունն առավ։ Յուր անունը բարձրացնել ուզած ժամանակը՝ վարժարանին անվան բարձրացման համար ալ անհոգ չմնաց։ Բայց միթե վարժարանն այդ մեծ անվան համապատասխանող արդյունք մը ցույց տվա՞վ։ Այս կետը նկատողության չառավ, և առնելու ալ պարտավոր չէր. այսօրվան օրս ո՞ր բանն է այն, որ յուր անվան մեծությանն արժանի արդյունք մը ցույց տված ըլլա։ Մարդերն ավելի մեծ անուն վաստկելու մոլությունն ունին, քան թե մեծ մարդ ըլլալու առաքինությունն։ Տարեկան բաժանորդագինը չվճարող մեկը կելնեն լրագիրներու մեջ հրատարակել կուտա թե այսինչ վարժարանին լրագիր մը նվիրած է։ Զորս սիրական ունեցող օրիորդ մը՝ ուրիշներու խորհուրդ կը հարցունե, թե ո՞ր վանքը մտնե մայրապետ ըլլալու համար։ Գրավաճառի մը աչքեն անցիր և գիրքերու անուններ կարդա՛. ի՞նչ մեծ և շլացուցիչ անուններ, մարդս ինքզինքն անարժան կը դատե այնպիսի բարձրանուն գիրքերու ընթերցողն ըլլալ. կը վախնա գրավաճառին հարցունել անոր գինն, որպեսզի չըսվի իրեն՝ թե դու չես կարող ատոր հայտնած բարձր և վսեմ գաղափարներն ըմբռնել. բայց գիրքը, թղթատե զայն ու գոցե. Աղվեսագիրքն[3] անկե լավ կը խոսի։ Հարուստ մը կը փափաքի առատաձեռն անվամբ կոչվիլ, բայց անմիջապես կը հանե հագուստները, անկողնույն մեջ կը մտնե և հիվանդ կը ձևանա, երբ պատուհանեն տեսնե, որ Սովելոց Հանձնաժողովին[4]

մեկն յուր տունը կը հարցունե դրացվույն։ Ուրիշ մը կուզե մեկենաս ճանչցըվիլ և ժան գիրք գնելու համար փողոցը պատող հրեաներուն գամբյուղը կը խառնե։ Ո՞ր մեկը թվեմ և ինչո՞ւ ամբաստանեմ Քրիստոստուրն, միթե այսօր թաղային բոլոր զբոսարաններն թաղային վարժարան անունը չունի՞ն։

1853-ին հրաժարեցավ Փրկչի հոգաբարձությենեն, 1857-ին դարձյալ մտավ։ Ինչո՞ւ ելավ, ինչո՞ւ մտավ։ Քանի որ մեր մեջ քննություն չկա և միշտ պատվավոր հաշտություն կա, չենք կարող գիտնալ, թե ինչո՞ւ ելավ և ինչո՞ւ մտավ, միայն սա կրնանք վկայել, որ քանի մը տարի առքը Քրիստոստուր էֆենտին յուր խղճեն կը տանջվեր, անպատճառ հանցանք մը, մեղք մը գործած ըլլալու էր, որ Անձնանվեր ընկերության հարելով՝ ամեն կիրակի Ղալաթիա կերթար և պանդուխտներուն ձրի դասատվություն կընար։ Մինչև այսօր, բացի Զատկի կիրակին և սահմանադրության տարեդարձի[5] օրեն, ամեն կիրակի Ղալաթիա կերթա և պանդուխտ եղբայրներուն անձնանվիրությամբ դասախոսություն կընե։ Կուսուցանե յուր աշակերտներուն, թե մարդս ե՛րբ Սիսն պաշտպանելու է և էջմիածինը հարվածելու է և ե՛րբ վերջինը գովելով՝ առաջինը պարսավելու է։ Կը սորվեցնե նաև, թե ե՛րբ ծափահարելու են դինքն երեսփոխանական ժողովո մեջ և թե ե՛րբ ճնշում բանեցնելու են ժողովո վրա։ Եվ որովհետև այս գիտություններն ավելի դյուրավ կը սորվեին աշակերտներն՝ երեսփոխանական ժողով կուգային և իրենց վարժապետը խոսել սկսելուն պես կը ծափահարեին։ Փառասիրությունն եթե խեղդություն չէ, գոնե զմեզ երբեմն խեղդության կը մղե։ Ամեն դեպատան, կըսե, ժան ժաք Ռուսո, ծափահարվիլ կուզե, մեր երեսփոխաններն ինչո՞ւ չունենան այս փափաքն։ Ո՞րչափ երեսփոխաններ կը գտնվին, որ օրականով մարդ կը վարձեն ժողովո մեջ ծափահարելու համար զիրենք ե՛րբ խոսին, երեսփոխաններ, զորս այն ատեն պետք էր ծափահարել, երբ չեն խոսիր։ Որչափ շողոքորթություններ, քանի տակառ գինիներ կեցցեի մը համար։ Ի սկզբան կեցցե-ներն իրավ շատ սուղ կը ծախվեին, բայց հիմա, որ այս ապրանքն վաճառողները շատցած են՝ գավաթ մը օղի չորս կեցցե ծախու կառնվի։ Համրն իսկ գավաթ մը խահվեով պերճախոսության մրցանակ կառնե մեր երեսփոխանական ժողովո մեջ։ Ելնենք սակայն հիմա այս ժողովեն, ուր քիչ մը ետքը պիտի մտնենք։

Քրիստոստուր տնտեսագիտության դաս ալ կուտա յուր աշակերտներուն, սակավապետության կը հրավիրե զանոնք, հորդորելով՝ որ քիչ ծախք ընեն։ Հարուստները, կըսե, եթե տասը փարայով կանցնին կամուրջեն, դուք հինգով անցնելու եք, տասը վճարելն ձեզի համար շռայլություն կը համարվի։ Տնտեսագիտությենեն հետը բարոյականության վրա կը խոսի, այս դասեն ետքը կուգա աշխարհագրություն, որուն կը հաջորդե թվաբանություն։

Անձնանվիրության սահմանն ընդարձակելու կամ սահմանեն անդին անց-

նելու համար 1867-ին Սեբաստիա մեկնեցավ և շատ գյուղեր ու քաղաքներ շրջելեն ետքը՝ Պոլիս վերադարձավ։ Բոլոր շրջագայած քաղաքներու մեջ Անձնանվեր ընկերության նպատակն գործադրել աշխատեցավ, հետը տանելով գրքեր և թուղթեր, որոնցմե ամենուն կը բաշխեր և երբեմն ալ իր ձիուն կուտար, որ անոթութենեն չմարի։

1870-ին երեսփոխան ընտրվեցավ։ Մինչև այսօր բացակա եղած չէ և երեք օր մը ս. պատրիարքն ժողովն Այ-Սթեֆանոս[6] կամ Զաթալջա տանի՝ հոն ալ առավոտուն կանուխ կերթա և ներկա չգտնվողներուն վրա օրինաց խստությունը գործադրելու համար առաջարկություն մը կը ներկայացնեն։ Օրինաց մասին այնքան ճշտություն կը պահե, որ եթե երեսփոխանին մեկն քովեն յուր որպիսությունը հարցունե՝ ամեն հարցում, կըսե, պետք է գրավոր ըլլա և դիվանին ուղղվի։ Ամեն նիստի մեջ խոսք կուզե և կառնե. և յուր խոսքը չվերջացներ՝ առանց քվե առաջարկելու. քվեն յուր վերջաբանությունն է։ Շատ անգամ, որ աաենապետի սով կըլլա՝ իբրև երիցագույն երեսփոխան՝ աաենապետ կընտրվի։

Ավելորդ է ըսել, թե սովն քարերն դյուրամարս կերակուր կը շինե։ Աաենապետության աթոռին վրա բազմելուն պես՝ զանգակին կը դիմե։ Հայտնի է, որ զանգակին պաշտոնն է ընդհանրապես լսեցնելու հարկադրել այն երեսփոխանն, որ խնդիրեն կը շեղի և ի կարգ չդար. Քրիստոսատուր էֆենտին այնքան չարաչար կը գործածե զանգակն, որ կը հնչեցունե զայն երեսփոխանին ի կարգ գալեն ետքն ալ և կատիպե զմեզ ըսել, թե զանգակ մ'ալ պետք է աաենապետին զանգակն ի կարգ հրավիրելու համար։ Աաենապետության մեջ խոսք կուտա միայն անոնց, որոնք յուր կուսակցությենեն են, և այս եղանակավ վրեժ կը լուծե բոլոր այն երեսփոխաններեն, որոնք ժամանակով համարձակած են իրեն կարծյացը դեմ խոսելու։ Քվեի կը դիմե առանց սպասելու, որ խնդիրը լուսաբանվի, և իրավունք ալ ունի, քանի որ քվեն պիտի որոշե ամեն բան և քանի որ ձախակողմյան մը չդիջանիր հավանության քվե տալ աջակողմյանի մը մեկ առաջարկության, ի՞նչ հարկ կը մնա երկու ժամ շաաախոսություն ընելու։ Երեսփոխանության որչափ սիրահար ըլլալն ցույց տալու համար, բավական կը համարինք հոս հիշել, որ երբ երեսփոխանությենեն ելնել պետք եղավ՝ պարզապես հայտնեց, թե տեղեն չպիտի երերա, մինչև որ տեղն ուրիշ մը չգա։ Իսկ երբ տեսավ, որ անպատճառ ելնել հարկ է՝ բոլոր թաղերը պտտելով՝ ոմանց ոտները համբուրելով, ոմանց վերարկուն պագնելով, հաջողեցավ նորեն երեսփոխան ընտրվիլ։ Առաջվան պես շատ չխոսիր հիմա. նախ՝ անոր համար, որ աաենաբաններն բեմն երթալու են, հոն խոսելու են, և ինքն մեկ երկու ժամ ոտքի վրա կայնիլ չուզեր. եթե սովորություն ըլլար, որ երեսփոխաններն պահելով աաենաբաններին՝ բնավ չէր լսեր-

երկրորդ՝ անոր համար, որ կարծիքներն հասունցնելու համար այնքան պահած է զանոնք, որ կեսը փտեր է և կեսը միայն կրնա ուտվիլ, և ան ալ ծերերեն։

1872-ին Վարչության քաղաքական ժողովո[7] անդամ եղավ։ Իրեն պաշտած սահմանադրության ոգուն հակառակ՝ ներքին կանոնադրությամբ և յուր կիրքովն մեծ դեր խաղաց Սամաթիան տակնուվրա ընելով։ Քաղաքական ժողովն, որ տասնըչորս անդամներե բաղկացած էր՝ վեց իջած էր, որոնց մեջ կը գտնվեր նաև ինքն և մահկանացուներուս անծանոթ սահմանադրությամբ կը վարեր յուր պաշտոնը։ Այս մարդն այնչափ անդթաբար տանջեց Սամաթիացիներն, որոնք իրենց վարժարաններուն այս մարդուն շնորհիվ փճանալը տեսնելով, հատուցին իրենց համբերությունն, և օրինավորութենե հեռահատելով ապօրինավորության դիմելու ստիպվեցան, պատրիարքարանի վրա հարձակելով վար առին զինքն, որ մշեցիներ բերել տված էր նույն օրը սամաթիացիները ծեծել տալու համար։ Քաղաքական ժողովն իյնալուն պես յուր ընկերներովն Խրիմյանի տապալելու գործույն ձեռք զարկավ։ Այս խնդրույն մեջ Միհեճի Անդրանիկի ընկերն ծանոթացուց զինքն ազգին, որ շատ աղեկ հասկցավ, թե այս մարդն օրինավորություն ըսելով՝ իրեն ճարկիլեճ կը հասկընար։

1874-ին եկեմտական հոդաբարձու[8] եղավ, ինչպես որ պաշտոնի գլուխ անցան կամ բարձրացան, կամ սուրբ քաղաքին հաշիվները քննելու համար՝ երկու հարյուր ոսկի առին, կամ դողություն ըրած ըլլալու համար՝ վանահայր անվանվեցան բոլոր այն անձերն, որոնք մատ ունեին Խրիմյանը գահընկեց ընելու գործույն մեջ։— Կը ցավինք, որ առիթն միշտ կը ներկայանա և անաչառությունն միշտ կստիպե զմեզ այս ճշմարտությունը կրկնելու։— Յոթանասուն հազար դահեկան պարտք ուներ պատրիարքարանն այս թվականին— թեպետև չենք հիշեր թվական մը՝ ուր ազգային սնտուկն առնելիք ունենար։— Այս պաշտոնին գլուխ անցնելուն պես՝ սկսավ խորհիլ, թե ի՛նչ հնարք բանեցնելու է վճարել յոթանասուն հազար դահեկանի պարտքն, երբ սնտուկին մեջ յոթ լումա չկա։ Քանի մ'օր խորհելեն վերջը դտավ, որ այս պարտքերն ընդհանրապես կը վճարվին... չվճարվելով. ուստի հրաման տավ գանձապետին, որ եթե պարտատերները գան և դրամ պահանջեն՝ բան մը չխոսին, պատրիարքարանի պաշտոնյաներու ամսական չվճարեն, վերջապես սնտուկեն դրամ չհանեն դուրս։

Հայցադործը հետևյալ օրը կուգա գանձապետին.

— Բարի լույս։

Գանձապետը դրով կզբաղվի։

— Բարի լույս։

Գանձապետը մայր հաշիվն թուղթ մը կը դարձնէ։

— Բարի լույս։

Գանձապետն համր է։

—Բարի լույս, կը պոռա հացագործը։

— . . .

Մսավաճառը կուգա.

— Բարի լույս։

— . . .

Նպարավաճառը վաղելով կը հասնի.

— Ինձի ալ ստակ տվեք այսօր։

Գանձապետը կստիպվի հայտնելու, թե ինքն հրաման ընդունած է դրամի վերաբերյալ խոսքերու մեջ չմտնել։

Պարտատերերը քիչ մը կը պոռան։ Նեղելությունը կիմանան Քրիստոստուր էֆենտին, որ կը հայտնե իրենց, թե առանց ժողովո հրամանին, գանձապետը ստակ չկրնար տալ։

— Ժողովն ե՞րբ հրաման պիտի տա, որ վճարվի։

— Երբ որ գումարվի։

— Ե՞րբ կը գումարվի։

— Երբ գումարման պետքն զգացվի։

— Ե՞րբ կզգացվի այս պետքը։

— Երբ հրավեր ղրկվի։

— Ե՞րբ կը ղրկվի հրավերը։

— Երբ որ հրավիրագրերը գրվին։

— Ե՞րբ կը գրվին։

— Երբ զանոնք գրող պաշտոնյային ամսականը վճարվի։

— Ե՞րբ կը վճարվի։

— Երբ սնտուկին մեջ ստակ գտնվի։

Այս կտրուկ պատասխաններով պարտատերերուն պատկառանք ազդելեն ետքը զգաց՝ թե բնավ բան չվճարելն անկարելի է. ուստի սկսավ երբեմն փոքրիկ, երբեմն մեծ գումար մը ղեղչելով, երբեմն ալ բոլորովին ղեղչելով՝ զանոնք գոհացնել։ Մյուս կողմեն ավելորդ պաշտոնյաներուն, ինչպես նաև պատրիարքարանի ձիերուն, ճամբա տվավ։ Ահա այս էր ծրագիրն, որով յոթանասուն հազար դահեկան պարտքը վճարելեն ետքը՝ հաջորդներուն թողուց, որ նորեն երկու հարյուր ութսուն հազար դահեկան պարտք գոյացնեն, և 1877-ին նորեն ելմտական հոգաբարձության կոչվի այդ պարտքն ալ սրբելու համար։ Պետք է հոս հիշել, թե կենճռոտ հաշիվներու մեջ սրբած է շատ պարտքեր, որոնք հաջորդ ելմտականի օրով վճարված են։ Այսուամենայնիվ, յուր կարողությանը չափ ծառայած է ազգին այս ճյուղին մեջ, ուր հաջողելու համար մարդս ճարպիկություն ունենալու է պարտք չվճարելու։

Այս պաշտոնեն հրաժարելեն ետքը՝ Քրիստոստուր էֆենտի սկսավ արձակ համարձակ ազգին չարիք հասցունել, և չարիք հասցունելուն համար ալ ամսական առնել։ Նախ՝ Իսկյուտարու ս. Կարապետի վարժարանին մեջ տեսչության պաշտոն ստանձնեց, քիչ մը ետքը Սուրբ խաչի դպրոցին մեջ և ետքն ալ Իճիտիե, Կարակյոմրուկ[9] և այլն։ Այս հանցանքն մեծ էր, որովհետև հայտնապես կը գործեր և ամսականով։ Հիշյալ թաղերու թաղականներն իրմե ավելի հանցանք ունեին, գործելու ստիպելով զինքն այնպիսի պաշտոնի մը մեջ, որուն բոլորովին անծանոթ է։ Մարդս յուր սահմանեն դուրս անգիտությամբ ավելի վնաս կը հասցունե, քան յուր սահմանին մեջ՝ գիտությամբ։

Քրիստոստուր էֆենտին ազգին բարիք ալ ըրած է, չարիք ալ հասցուցած է իբրև սխալական մարդ։ Անձնանվեր ընկերության մեջ մեծ ծառայություն ըրած է մեր պանդուխտ եղբայրներուն դասախոսություն ընելով. բայց ասկե ավելի մեծ ծառայություն մ'ալ ըրած է, որ անուրանալի է, և որուն համար ազգն իրեն երախտապարտ է, և այս մեծ ծառայությունն ալ սա է, որ ամուսնացած չէ և զավակ չունի։ Աղնվապետության թշնամի է, թեպետ և ժողովրդյան ալ շատ բարեկամ չէ։ Յուր կիրքերն այնչափ ծայրահեղության կը տանին զինքն, որ մեկ անձե վրեժ լուծելու համար այն անձին բնակած քաղաքը կրակի կուտա, և յուր ճարկիլեին հարմար կրակ կը փնտռե այն տեղը։

Նիհար կազմով, միջին հասակով, ճերմակ մազերով մարդ մ'է Քրիստոստուր էֆենտին։ Մորուքը մաքին պես է, կարճ է։ Ջմեռն այնչափ զգեստ կը հագնի իրարու վրա, որ կասկած կուտա ծխախոտի վարչության պաշտոնյաներուն, որոնք իրեն ծոցը կը խուզարկեն ծխախոտ գտնելու համար, բայց Ընդհանուր ժողովո ատենագրություններեն ուրիշ բան չեն գտներ։ Ինքը պըճնասեր չէ և շատ անգամ այնչափ անկանոն կերպով կը հագվի, որ եթե արտի մը մեջ գտնվի՝ խրտվիլակ կը կարծվի։ Եթե կան փափաքողներ զինքը ճանաչելու, կը հրավիրվին հիշել դեմքն այն մարդուն, որ ստիպողական գործ մ'ունենալով իր երթալիք տեղը շուտ հասնելու համար՝ յուր չգիտցած մեկ փողոցին մեջ կը մտնե և հինգ հարյուր քայլ առնելեն ետքը կը տեսնե, որ այդ փողոցն անել է։

ԳՐԻԳՈՐ ԷՆՖԻԵՃԱՆ

Կավանդվի թե երկար տարիներն հետե վիճաբանություն մը բացված էր աստվածաբաններու մեջ Աստվածաշունչին այն խոսքին վրա, որ կըսե. «Սատըջացավ աստված որ արար զմարդն ի վերա երկրի»: Յուրաքանչյուր դպրոցին աշակերտներն իրենց ուղածին պես կը մեկնեին այդ պարբերությունն: Ոմանք ա բացատրությունը կուտային, թե աստված չէր գիտեր, որ մարդն մոլություններու մեջ պիտի խեղդվեր: Ուրիշները կը պնդեին, թե աստուծո խղճին դպած էր մարդու դոյություն տալով՝ անոր խեղճության պատճառ ըլլալն: Վիճաբանությունն երբ այսպես կը շարունակվեր, և ահա 1840-ին Գրիգոր Էնֆիեճյան կը ծներ Տիգրանակերտի մեջ: Երախային ծննդյան չորրորդ օրն մկրտության հանդեսը կը կատարվեր եկեղեցվո մեջ, ուր կը գտնվեին երկու վարդապետներ: Արարողությունն լմննալուն պես, այս վարդապետներեն մին յուր ընկերոջը դարձավ և հարցուց.

— Կրցա՞ր գուշակել, թե ինչո՛ւ ղրջաց աստված՝ մարդն ստեղծած ըլլալուն համար:

— Դժբախտաբար այո՛, պատասխանեց մյուսն, յուր կանխատեսությամբն աստված գիտեր անշուշտ, որ էնֆիեճյան մը պիտի գար աշխարհ:

Այն թվականեն ի վեր, կըսեն, լուծված է այս խնդիրն և հիմա բոլոր աստվածաբաններն իրավունք կուտան աստուծո: Եթե աստված զղջացած է մարդն ստեղծելու համար, որչափ ավելի ղղջացած է արդյոք դայն յուր պատկերին համեմատ ստեղծած ըլլալուն համար: Իսկ մենք, մեր սովորության համեմատ, աստվածաբաններու թողլով այս խնդիրներու լուծումն, կը դառնանք մեր նյութին:

Հետաքրքիր ընթերցողն կը փափաքի հարկավ գիտնալ, թե ի՛նչպես եկավ աշխարհ Գրիգոր էնֆիեճյան:

Փառք կուտանք աստուծո, որ 1840-ին կառք չկար Տիգրանակերտ. եթե ըլլար՝ աշխարհ գալուն պես պիտի ըսեր այս երախան.

— Մեկ ոսկի տվեք կառքի վարձք, հիմա Բարձրադույն Դռնեն եկա:

Այսպիսի խոսք մը ըրած չէ, ոչ ալ կառքի վարձք առած է աշխարհ գալու համար, վասն զի պատրիարքարանի հաշվետոմարներու մեջ ասանկ գումար մը նշանակված չէ:

Առանց Օլենտորֆ[1] կարդալու՝ վեց ամիսեն խոսիլ սկսավ. սաակ կուզեմ, ինձի աճուշ բերեք, կեռակուռ տվեք խոսքերն այնպես կը գործածեր, ինչպես մենք կը գործածենք բարի լույս, աստուծո բարին: Շատ անգամ կըսեր. հաց կուզեմ, ձիմա կուզեմ, և այս պահանջումը յուր ծնողացը կը հիշեցուներ. կնիկ կուզեմ, ձիմա կուզեմ:

Յուրաքանչյուր մարդ յուր վրա կունենա անդամ մը, որով սիրելի կըլլա ուրիշներուն: Մին յուր ձեռներովն, մյուսն յուր ականջներովն, ուրիշ մը յուր բերանովն, չորրորդ մը յուր ուղեղովն համակրություն կը գրավի: Էնֆիեճյանը սիրելի ընդ անդամն լեզուն էր, որուն շատերը սիրահարած էին:

1840-ին Տիգրանակերտի մեջ նոր սկսած էր բարեկենդանի առեն դիմակ անցունելով տունե տուն պտտիլը: Քանի մը երիտասարդներ կը փափաքին, որ դիմակ մ'անցունեն էնֆիեճյանին, որ դեռ մեկ տարեկան էր, և մնկտեղ պատին: Պզտիկ տղաներու համար դիմակ ուսի՞ց գտնելու է, սովորություն եղած չէ մինչև հիմա, որ պզտիկ տղաներն դիմակ կրեն:— Աղոթենք, որ գտնե այս սովորությունն տղաներու մեջ մուտ չգտնե, որպեսզի կարող ըլլանք անդիմակ դեմքեր տեսնելու:— Երիտասարդներն վերջապես կորոշեն, որ իրենք շինեն հատ մը և անմիջապես պզտիկ դիմակ մը կը շինեն և այս տղուն երեսը կանցունեն: Աղվո՛ր դիմակ, աղդասիրություն բուրող դիմակ մը: Կարավանը ճամբա կելնե և քանի մը փողոց դառնալեն ետքը պզտիկ դիմակավորին դիմակը կիյնա. դերձանը շատ բարակ ըլլալով բրդած էր: Նորեն կը կապեն, նորեն կը բրդեն: Փողոցի մեջ կայնած երբ այս երիտասարդներն կը խորհեին իրենց ընելիքին վրա, առաղձագործ մը՝ որ նույն գիշերը խանութին մեջ կաշխատեր, կարծելով թե գողերն կը խորհրդակցին փողոցը՝ խանութեն դուրս կը նետվի և կսկսի գանոնք դիտել: Երիտասարդներն առաղձագործին կը մոտենան և իրենց ցավն կը հայտնեն անոր, որ շուտ մը խանութը կը մտնե և քանի մը վայրկենեն դուրս կելնե պնակ մ'ի ձեռին: Դիմակը կառնե և ետևը առատորեն սոսինձ քսելեն ետքը՝ տղուն երեսը կը փակցունե և խոմբը կը ճամբե: Բավական կը ղվարճանան նույն գիշեր: Երբ իրենց տունները կը գառնան՝ ամենքն ալ, ինչպես օրենք է, իրենց դիմակներն վար կառնեն, բայց մանուկն էնֆիեճյան չկրնար իրենը հանել, վասն զի սոսինձով փակցված էր և անհնար էր քաշել հանելն առանց երեսը պատռելու: Բարեկամները խորհելով, որ դիմակը հանելու համար երեսը պատռելը դարմանն չար հան զախտն պիտի ըլլար՝ թող տվին, որ դիմակը մնա, հուսալով միանգամայն, որ տղուն դեմքը քանի մեծնա դիմակն ինքնիրեն կիյնա: Իսկ էնֆիեճյան, որ մանկական հասակին մեջ վարժված էր դիմակ կրելու, չհանեց և ստիպվեցավ կրել այն ազդասիրության դիմակն մինչև մոտ առեններս:

Հայտնի բան մ'էր, որ խելոք չնստող տղաները մեր մեջ ընդհանրապես ուրիշին տուները կը ղրկվին. հռոմեական ազգայիններու մեջ ալ սովորություն է, քիչ բացառությամբ, վանք ղրկել այն ամեն տղաները, որ տունը տակնուվրա կընեն, էնֆիեճյանի ծնողքն իրենց զավակին բարիք ընելու և

Եթե քիչ մը յուր տարիքն առնելով՝ էնֆիեճյան յուր եռանդն և կիրքը քիչ մը զսպե ու խելքով գործել սկսի, կարող է ազգին նվազ չարիք հասցունել և երախտապարտ կացուցանել զայն։ Կղերեն, քիչ բացառությամբ, ազգն արդեն բարիք չսպասեր, և եթե երբեմն կրոնական մը կը հարգե՝ պատճառն այն է, որ նվազ չարություն տեսած է անկե։

Թերևս հարցնողներ գտնվին՝ թե այս մարդն եթե այսչափ գործունյա է՝ հիմա ինչո՞ւ չգործե։ Կը պատասխաննենք իրենց, որ այս մարդը հիմա ալ կը գործե, միայն թե առաջ լեզվովը կը գործեր, իսկ հիմա ստամոքսովն։ Երբ աս վերջինն ալ գործելե դադրի՝ այն ատեն էնֆիեճյան զղջումի պիտի գա, ծունկ պիտի չոքի Հասունյանին առջև և Մեղա ձերկինս և առաջի fո ըսելով՝ աշը պիտի համբուրե Հասունյանին, որ ուրախութենե այլայլած պիտի պոռա.

— Կորսված էր անառակ որդիս և գտնվեցավ։

Հատակով երկար, կազմով բարեձև, դեմքով դեղեցիկ մարդ մ'է էնֆիեճյան։ Երբ տեղ մը նստած տեսնեն զինքն, այնպիսի դեմք մը կունենա, որ կարծես թե երկու օրե ի վեր բերանը բան մը դրած չըլլալով՝ տեղե մը ճաշի կը հրավիրվի, սեղանը կը նստի և կերակուրի կսպասե։ Իսկ անցուդարձը քիչ փողոցե մը անցած ատենդ եթե քովդ գտնվի տասնըչորը տարեկան աղջիկդ և էնֆիեճյան հանկարծ դեմդ ելնե՝ յուր ահարկու դեմքը հետևյալը կաղդե քեզ.

— Անդիի կողմը անցնինք, աղջիկս, սա մարդուն աչքերը չեմ հավնիր ես։

ՊՈՂՈՍ ՊՈՅՆՈՒԿՅՐԻՅԱՆ

Հեգնելու վարժված գրիչ մը երբ գովել սոիպվի՝ այն տպավորությունը կընե ընթերցողներուն վրա, ինչ տպավորություն որ կընե հանդիսականներուն վրա դերասան մը, որ Բուրսոնյաֆ[1] ներկայացնելու սորված ըլլալով՝ Մաքբեթի[2] դերը կատարելու կը հարկադրվի։

Պոյնուէյրիյանի կյանքը գրելու համար գովելու արհեստը գիտցող գրիչ մը պետք է։— Ութուճյանի գրիչն քանի մը վայրկենի համար փոխ առ, կըսեր ինձ, առանց խորհելու, որ Ութուճյան վայրկյան մը չէ կարող բաժնվիլ գրիչեն։ Բացի ասկից, անոր գրիչն ալ ծաղրելու վարժ է... և ի՞նչ են չափազանց գովեստներն։— Ես բնավ չգովելով և ան չափազանց գովելով կը հասատատենք Արիստոտելն, որ առաքինությունն երկու մոլություններուն մեջտեղը կը դնե։ Այս մոլություններեն մին կըսե, առաքինության պակասությունն է, իսկ

մյուսն՝ առաքինության չափազանցությունն։ Եվ այսպես առաքինությունն իմ գրչիս և Ութուճյանի գրչին միջևը կը գտնվի... ավելի մոտ չկրնար գալ։—

Ի՞նչ ընելու է-ուրեմն, թո՞ղ տալու է, որ բարի մարդերն առանց հիշատակի անցնին երթան, որովհետև իմ գրիչս գովել չգիտեր։ Բնա՛վ երբեք։ Այդ բարի մարդերն իմ գրչիս հարմարեցնելու համար անոնց վրա թերություննե՛ր ստեղծելու է։ Քավ լիցի։ Պառնասա օրենսդիրն[3] յուր ութերորդ երգիծանքին մեջ Աղեքսանդրին նիմար ըսած ըլլալուն համար՝ տեսեք ի՛նչպես կը հանդիմանե զինք Վովնարկ յուր Աղեքսանդր և Տերբեո վերնագրով գրած խոսակցության մեջ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Էհ ուրեմն, բարեկա՛մ, միշտ նույն ատելությունն ունի՞ս ինձի դեմ. երգիծանքներուդ մեջ նկարածիդ պես միշտ հիմա՞ր կերևամ քեզի։

ՏԵՐԲԵՈ

Բնավ երբեք, Տեր, զձեզ կը հարգեմ և ձեր առաքինությունները կը ճանաչեմ։ Բարօրություն ու շողոքորթություններն զձեզ ապականեցին, բայց աղնիվ սիրտ մը և բարձր հանճար մը ունեիք դուք։

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Ինչո՞ւ ուրեմն զիս հիմար և ավազակ ներկայացուցիր երգիծանքներուդ մեջ. ճշմարի՞տ է, արդյոք, որ դուք բանաստեղծներդ միմիայն առասպելներու մեջ կը հաչողիք։

ՏԵՐԲԵՈ

Բոլոր կյանքիս մեջ ասոր հակառակը պնդած եմ, և գրություններուս մեջ ցույց տված եմ, կարծեմ, որ ամեն սեռի մեջ ճշմարիտն է միայն գեղեցիկը։

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Կը խոստովանիս, ուրեմն, որ զիս այնքան կծու կերպով պարսավելու իրավունք չունեիր։

ՏԵՐԲԵՈ

Կուզեի հանճարեղ բաներ գրելով՝ մարդերու զարմացումը գրավել. կը փափաքեի մանավանդ շողոքորթել ուրիշ իշխան մը, որ յուր պաշտպանությա-

դորա խնդրած և ստացած ենք մեր բարեկամներու մեկեն, որ ճշմարտախոսության համբավ կը վայելեն։ «Պիտանալու է, կը պրծ մեզ մեր բարեկամը, որ այս մարդուն համար չկա կաթողիկոս, պատրիարք, սյունհոդ, աթոռակալ, վարչություն և երեսփոխանություն։ Ընկերությանց հակառակ է։ Երբ վարչությունն բարեկարգությանց կը ճգներ, Էնֆիեճյան յուր շռայլ ծախքերով կը ծանրանար վրան։ Երբ կղերը ազգօգուտ կանոնադրություններ կը սահմաներ, ասի մեկ երկու ամիրայից կոթնած կը տապալեր արմատեն ինչ որ շատ աշխատություններով շինված էր։ Վերջապես քիչ օդուտ և մեծ վնաս տված է Հակահասունյանց յուր անխոհեմ բնությամբն և վարուքը. և այսօր Բերա Ոսկեբերան եկեղեցվո մեծ ժողովրդապետն իրեն սեփականած՝ փառավորապես հանգիստը կը վայելե։ Այս անձին անունն մեծ հռչակվեցավ, բայց չունի գործատի գործ մը ամենեին...։ Յուր ազնիվ եղբարցը չնմանիր... յուր Միաբանությունը չսիրեր զինքը յուր կրթոտ բնավորությանը համար։ Խոհեմություն բառն իրեն համար նշանակություն չունի, ամեն գործերը դահավիժական են։ Խնդումն ու լացը մեկ վայրկյանի մեջ կը տեսնվի աչքերուն վրա... վերջապես յուր... գործողություններովն ազգին և ընդհանուր կղերին շատ վնասած է։

Այս ընթացքովն Հակահասունյաններուն վնասելեն ետքը փափաքեցավ ուրիշ գործի մը ձեռնարկել, վասն զի Էնֆիեճյան, գործունյա մարդ, վայրկյան մը չկրնար առանց գործի ապրիլ, միշտ զբաղած ըլլալու է։ Անատոլյան միաբանությունն յուր ճաշակին հակառակ էր, ուստի պետք էր ջնջել զայն, բայց ջնջելու համար ծրագիր մը պետք էր։ Էնֆիեճյան շինեց այդ ծրագիրն, որով կը հայտներ, թե բոլոր անմիաբանություններն Զմմարու մեջ միանալու էին։ Վեճ մը ծագեցավ երկու միաբանությունների մեջ։ Հակահասունյաններն իրենց մեջ երկուքի բաժնվեցան, կղերն իրարու դեմ ելավ և Հասունյան սկսավ զվարճանալ։ Այս խնդրույն մեջ է, որ Էնֆիեճյանի դիմակն վար առնվեցավ և երեսը քիչ մը պատռեցավ, բայց ինքը չկարմրեցավ, կարմիրի վրա գաղափար չունի. մանավանդ թե քաջ մարդ է. յուր գրածը, կըսե Շերենց, կուրանա առանց քաշվելու։

Միշտ կը խոստանա, և եթե այսօր երթաս և իրմե տեղեկություն խնդրես՝ կը պատասխանե.

— ...էֆենտին խոսք տված քանի մը օրեն Հասունի ձեռքեն առնել պատրիարքական հրամանագիրն և մեզի տալ։

Թեթևամիտները կըսեն.

— Ի՞նչ գործունյա մարդ։

Ողջամիտները կը մրմռան.

— Ի՞նչ գործունյա սուտ։

1877-ին Միհհատ փաշա Օսմանյան երեսփոխանական ժողով հրավիրեց

բոլոր հպատակ ազգերու պլուխներն, որ կարծիք հայտնեն պատերազմի՞ն թե ոչի վրա, Էնֆիեճյան խոսք առնելով ատենաբանություն մը ըրավ, որով հասկցուց թե ոչ միայն պետք էր պատերազմիլ, այլ նաև հարկ էր անպատճառ կուրծքեն զարնվիլ, կռնակեն զարնվիլն չընդունիր։— Շատ քաջալերական էր այս խոսքն, թեպետև ավելի աղեկ կըլլար եթե ըսեր, պետք է կուրծքեն զարնենք, և ոչ թե զարնվինք։ Այս վերջինը քիչ մը մութ էր. շատերն այնպես հասկցած էին, թե Էնֆիեճյան դիտեր թե մեր զորքերն անպատճառ պիտի զարնվեին և անոր համար ո՛ր կողմեն զարնվելու համար հրահանգ կուտար, թեպետև պետք չէ ուրանալ, որ Էնֆիեճյան վերջեն չբարկացավ այն դինվորներուն դեմ, որոնք թևեն կամ սրունքեն վիրավորված էին, և այս կերպով մատնեց զինքն ցույց տալով, որ կուրծքեն զարնվիլը պերճախոսության համար գործածած էր։ Իրավունք ալ չուներ, կարծենք, մեռնելու գնացող մարդերու պայման դնել և ստիպել դիրենք, որ իրենց կուրծքեն զարնվին։ Այս ատենաբանությունն շատ ծափահարություն վաստկեցավ և Էնֆիեճյան վարձն առավ սիրելի ընելով զինքն իրեն... անծանոթներուն։

Լեզուն՝ որուն պարտի յուր բոլոր համբավն, քիչ մնաց, որ Վատիկանու ժողովս մեջ փորձանք բերեր ղլխուն։ Կը պրուցվի, թե վերջին անգամ Հռովմեն ծպտյալ փախավ Կ. Պոլիս. եթե ձերբակալվեր՝ չպիտցվիր, թե ո՛ր վանքին մեջ պիտի առներ շունչը։

Իրրև խմբագիր ևս ոչ նվազ հաջողակություն ունի ուրիշներն հանիրավի ձագկելու մասին։

Շատ հոդվածներ գրած է Մեճմուայի մեջ, և շատ տեսրակներ հրատարակած է առանց ստորագրության։ Ինքն է, որ լրագիրներու մեջ հարձակեցավ Ապտուլլահ մեծ. Միքայել էֆենտիին վրա, զոր վիրավորեց, կըսեն, առանց իրավունք ունենալու։

Իրրև բանահյուս չենք կարծեր, որ մեծ արժեք ունենա։ Ոչ միայն չենք կարծեր, այլ կրնանք պնդել, որ տաղաչափություն ընելու անկարող է, վասն զի իրեն համար չափ, կշիռ, ոտք նշանակություն չունին։ Նույնահանգ ոտանավոր մ'ալ չկրնար գրել, վասն զի յուր գործերեն հաստատված է որ գործի մը վախճանը բնավ չխորհիր։ Արձակի մեջ միայն կը հաջողի։

Էնֆիեճյան, ինչպես ըսինք, գործող մարդ մ'է. և եթե աշխարհական մնար՝ ավելի օգտակար կրնար ըլլալ քանըհինգ երեսուն ազվորիկ զավակներ ընծայելով ազգին, վաճառականությունը ծաղկեցնելով, ուրիշներեն փոխառություն ընելու դյուրին ճամբան սորվեցունելով։ Չենք կարող ըսել՝ թե այս անձն բնավ ազգասիրություն չունի, բայց միայն կը խորհինք, թե կատուն մուկ բռնելու պատրաստված ժամանակը յուր տիրո՞ջն բարություն ընելու կը խորհի, թե յուր փորը կշտացնելու։

Եթե քիչ մը յուր տարիքն առնելով՝ էնֆիեճյան յուր եռանդն և կիրքը քիչ մը զսպե ու խելքով գործել սկսի, կարող է ազգին նվազ չարիք հասցունել և երախտապարտ կացուցանել զայն։ Կղերեն, քիչ բացառությամբ, ազգն արդեն բարիք չսպասեր, և եթե երբեմն կրոնական մը կը հարգե՝ պատճառն այն է, որ նվազ չարություն տեսած է անկե։

Թերևս հարցնողներ գտնվին՝ թե այս մարդն եթե այսչափ գործունյա է՝ հիմա ինչո՞ւ չգործեր։ Կը պատասխանենք իրենց, որ այս մարդը հիմա ալ կը գործե, միայն թե առաջ լեզվովը կը գործեր, իսկ հիմա ստամոքսովն։ Երբ աս վերջինն ալ գործելե դադրի՝ այն ատեն էնֆիեճյան ղազումի պիտի գա, ծունկ պիտի չոքի Հասունյանին առջև և Մեղա ձերկինս և առաջի Ֆո ըսելով՝ աջը պիտի համբուրե Հասունյանին, որ ուրախութենե այլայլած պիտի պոռա.

— Կորսված էր անառակ որդիս և գտնվեցավ։

Հասակով երկար, կազմով բարեձև, դեմքով գեղեցիկ մարդ մ'է էնֆիեճյան։ Երբ տեղ մը նստած տեսնեն զինքն, այնպիսի դեմք մը կունենա, որ կարծես թե երկու օրե ի վեր բերանը բան մը դրած չըլլալով՝ տեղե մը ճաշի կը հրավիրվի, սեղանը կը նստի և կերակուրի կսպասե։ Իսկ անցուդարձը քիչ փողոցե մը անցած առենդ եթե քովդ գտնվի տասնըչորը տարեկան աղջիկդ և էնֆիեճյան հանկարծ դեմդ ելնե՝ յուր ահարկու դեմքը հետևյալը կազդե քեզ.

— Անդիի կողմը անցնինք, աղջիկս, սա մարդուն աչքերը չեմ հավնիր ես։

ՊՈՂՈՍ ՊՈՅՆՈՒԷՅՐԻՅԱՆ

Հեգնելու վարժված գրիչ մը երբ գովել սոիպվի՝ այն տպավորությունը կընե ընթերցողներուն վրա, ինչ տպավորություն որ կընե հանդիսականներուն վրա դերասան մը, որ Բուրսոնյահ[1] ներկայացնելու սորված ըլլալով՝ Մաքբեթի[2] դերը կատարելու կը հարկադրվի։

Պոյնուէյրիյանի կյանքը գրելու համար գովելու արհեստը գիտցող գրիչ մը պետք է։— Ութուճյանի գրիչն քանի մը վայրկենի համար փոխ առ, կըսեր ինձ, առանց խորհելու, որ Ութուճյան վայրկյան մը չէ կարող բաժնվիլ գրիչեն։ Բացի ասկից, անոր գրիչն ալ ծաղրելու վարժ է... և ի՞նչ են չափազանց գովեստներն։— Ես բնավ չգովելով և ան չափազանց գովելով կը հաստատենք Արիստոտելն, որ առաքինությունն երկու մոլություններուն մեջտեղը կը դնե։ Այս մոլություններեն մին կըսե, առաքինության պակասությունն է, իսկ

մյուսն՝ առաքինության չափազանցությունն։ Եվ այսպես առաքինությունն իմ գրչիս և Ութուճյանի գրչին միջևը կը գտնվի... ավելի մոտ չկրնար գալ։—

Ի՞նչ ընելու է ուրեմն, թո՞ղ տալու է, որ բարի մարդերն առանց հիշատակի անցնին երթան, որովհետև իմ գրիչս գովել չգիտեր։ Բնա՛վ երբեք։ Այդ բարի մարդերն իմ գրչիս հարմարեցնելու համար անոնց վրա թերություննե՛ր ստեղծելու է։ Քավ լիցի։ Պառնասա օրենսդիրն[3] յուր ութերորդ երգիծանքին մեջ Աղեքսանդրին նիմար ըսած ըլլալուն համար՝ տեսեք ի՛նչպես կը հանդիմանե զինք Վովնարկ յուր Աղեքսանդր և Տերբեո վերնագրով գրած խոսակցության մեջ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Էհ ուրեմն, բարեկա՛մ, միշտ նույն ատելությունն ունի՞ս ինձի դեմ. երգիծանքներուդ մեջ նկարածիդ պես միշտ հիմա՞ր կերևամ քեզի։

ՏԵՐԲԵՈ

Բնավ երբեք, Տեր, զձեզ կը հարգեմ և ձեր առաքինությունները կը ճանաչեմ։ Բարօրությունն ու շողոքորթությունն զձեզ ապականեցին, բայց աղնիվ սիրտ մը և բարձր հանճար մը ունեիք դուք։

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Ինչո՞ւ ուրեմն զիս հիմար և ավազակ ներկայացուցիր երգիծանքներուդ մեջ. ճշմարի՞տ է, արդյոք, որ դուք բանաստեղծներդ միմիայն առասպելներու մեջ կը հաջողիք։

ՏԵՐԲԵՈ

Բոլոր կյանքիս մեջ ասոր հակառակը պնդած եմ, և գրություններուս մեջ ցույց տված եմ, կարծեմ, որ ամեն սեռի մեջ ճշմարիտն է միայն գեղեցիկը։

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Կը խոստովանիս, ուրեմն, որ զիս այնքան կծու կերպով պարսավելու իրավունք չունեիր։

ՏԵՐԲԵՈ

Կուզեի հանճարեղ բաներ գրելով՝ մարդերու զարմացումը գրավել. կը փափաքեի մանավանդ շողոքորթել ուրիշ իշխան մը, որ յուր պաշտպանությա-

նը տակ առած էր դիս։ Այսշափ դիտավորութիւններով, ինչպես հայտնի է, չէի կարող անկեղծ ըլլալ։

Ես որ ուրիշ մը շողոքորթելու ոչ պարտք ունիմ և ոչ իրավունք՝ ճշմարիտեն հեռանալու պատճառ մը չունիմ. և վստահ ըլլալով, որ ճշմարտութիւնն իշխանութիւն ունի կամքտող զրիչին շոյել ալ սորվեցունել՝ կը հանդգնիմ այս անձին կյանքը գրել։

Արդ, հայր Պողոս Պոյնուէյրիյան Միջագյուղ ծնած է 1805-ին։ Յուր ծննդյամբն հերքած է այդ խոսքն, որով շատերը կուզեն հաստատել, թե փառասիրութիւնն մարդուս հետը կը ծնի, կը մեծնա և կը մեռնի։ Մննդյան օրն երբ ներկա եղողներն գինքը շոյելով և գովելով կը հաղցունեին՝ ինքը, փոխանակ ուռենալու իրեն եղած հարգանքներեն, այնպես կը վարվեր, որ կարծես ըսել կուզեր.

— Եթե գիտնայի, որ ձեզի այսշափ աշխատութիւն պիտի պատճառեմ՝ քնավ չէի գար աշխարհ։

Միջագյուղ անցուց յուր մանկութեան և պատանեկութեան տարիներն։ 1820-ին Պեյրութ ուղևորեցավ Անտոնյան վանքն երթալու համար։ Սույն թվականին հույն ծովահենները ծովու վրա ասպատակութիւն կընեին և շատերը կը վախնային ծովեն ճամբորդութիւն ընելու։ Պոյնուէյրիյան իրեն հասակակից տասնևվեց ընկերներով սյուրյուճիի մը հանձնվեցավ ցամաքեն Լիբանան երթալու համար։ Իսկյուտարեն ճամբա ելան և վեց ժամու չափ ճամբա ընելեն ետքը հասան գյուղ մը, որուն խայմախամն զիրենք ձերբակալեւ տվավ, հասկնալու համար թե ո՛վ էին այս տղաներն, ուսկի՛ց կը գային և ո՛ւր կերթային, վասն զի ոչ ոք կրնար հավատալ, որ տասնք սյուրյուճիի մը հանձնվին Պեյրութ երթալու համար։ Խայմախամն գործն ստուգելեն ետքը, թող տավ զիրենք, որ նորեն ճամբա ելան՝ ուրիշ գեղի մը մեջ ձերբակալվելու համար։— Գավառական իշխանութիւններն դյուցազնական քաջութիւնամբ կը գործեն միշտ, երբ հարկ ըլլա ձերբակալել անմեղները։— Վերջապես տասնք մինչև Պեյրութ երթալու համար քանի օթևան որ իջևանեցան՝ ստիպվեցան իրենց վրա տեղեկութիւն տալ, որպեսզի կարենան իրենց ճամբան շարունակել։ Այսպես վեց ամիս ճամբորդութիւն ընելեն ետքը՝ ողջ առողջ հասան Անտոնյան վանքը։

Վանք մտնելուն պես ինքզինքն աշխատութեան տվավ, և քիչ ժամանակին մեջ ուսավ հայ, լատին և իտալերեն լեզուները։ Յուր բարի վարքն առած դարձած էր ընկերներուն մեջ, որոնցմե մին եթե բերնեն դեշ խոսք մը փախցուներ, Պոյնուէյրիյան դասը կը թողուր, եկեղեցի կիջնար, ծունկ կը չոքեր և կաղոթեր աստուծո, որ ներե ընկերոջը հանցանքին։ Վանքին մեջ յուր ուսումներն ավարտելով վարդապետ ձեռնադրվեցավ. սև հագուստներն, որ

շատ անգամ կապականեն մարդուս սիրտն ու միտքը, քնավ ազդեցություն չբերին և չփոխեցին ասոր ոչ միտքն և ոչ սիրտը։

Աբրահայրն հավնելով ասոր բարի վարուցն և ազդի համար ունեցած սերը տեսնելով, Պոլսո մեջ իրեն փոխանորդ կարգեց զայն, և հայր Պողոս 1836-ին տասնները Պոլիս եկավ։ Մեծ հաջողակութեամբ և անձնանվիրութեամբ կատարեց իրեն հանձնված սույն պաշտոնը. սխալ հասկացողության մը պատճառ չտալու համար, շատ անգամ ինքն անձամբ Պեյրութ կուղևորվեր և վանք երթալով Աբրահոր ականջը քանի մը խոսք փսփսալեն ետքը, հետևյալ օրը ճամբա կելներ Պոլիս դառնալու համար։ Հիսուն անգամ Պեյրութեն Պոլիս, Պոլիսեն Պեյրութ գնացած ու դարձած է։

1839-ին Միջագյուղի ս. Լուսավորչա եկեղեցվո շինութիւնը լմնցած էր։ Հոս կուգար շատ անգամ քարող խոսելու և ժողովուրդը կը վազեր մտիկ ընելու անոր խոսքերն։ Այնքան քաջ կը խոսեր ազգասիրության վրա, որ քարոզը մտիկ ընողներն դուրս ելնելուն պես կը փափաքեին քանի մը օտարազգի բռնել ու ծեծել։ Տղաներն իսկ կը սիրեին գինքը և ծնողք ասկից օգուտ քաղելով «Հայր Պողոսն այսօր ձեր դպրոցը պիտի գա» կըսեին իրենց զավակներուն, երբ ասոնք կուլային և չէին ուզեր դպրոց երթալ։

Ժամ է խոստովանելու, որ սա ինքն է ծնունդ տվող Հակահասունյան դատին։ Լավ կը ճանաչեր Հասունյան և անոր բաղամականերութիւնն և շատ աղեկ գիտեր ժողովուրդն անկե զգուշացնելու եղանակը։

Հասունյան ալ կը ճանաչեր գինքն և շատ անգամ օձի կերպարանքով կը ներկայանար իրեն և խնձոր կուտար ըսելով, որ եթե ասկե ուտես պապի պես անսխալ կըլլաս, բայց հայր Պողոսն ականջ չէր կախեր և իր առաջադրած նպատակին կը վազեր։ Եթե ուրիշներուն պես անուն հանած չէ՝ պատճառն այն է, որ ինքն ավելի գործել կը սիրե քան գործող երևիլ։ Ոչ պաշտոնապես ամենեն ավելի աշխատած է Հակահասունյան դատին մեջ և դեռ կաշխատի գաղտնապես։

Քյուրեյյան դեռ պատրիարք չընտրված, հայր Պողոսն Հակահասունյաններուն ներկայացուցիչն էր։ Բարձրաստիճան վյուէլաներու ծանոթ և սիրելի էր։ Ամեն օր Բ. Դուռը կերթար և ազգին ցավերը ներկայացնելով դարման կը փնտռեր։ Երբ հիվանդանոցն Հակահասունյաններուն ձեռքն անցավ՝ Հասունյան հիվանդանոցին Թայիննները չէր տար և հիվանդներն կսոխվելեին անոթի մնալու, որպեսզի ստամոքսնին լեցվելով հիվանդությունն չծանրանա։ Հայր Պողոս յուր գործունեությամբն հաջողեցավ այդ թայիններն Հասունյանեն առնելու։

1875-ին ժողովուրդեն երեք հազար ոսկվո դրամ մը հավաքելով՝ Ֆե-

բի-գյուղի[4] գերեզմանատան շուրջը պատ քաշել տալավ և ննջեցյալներուն ալ սիրտը գրավեց։

Ժողովուրդն երեք անգամեն ավելի ուզեց, որ հայր Պողոսն եպիսկոպոսության աստիճան բարձրանա, ինքը մերժեց. բնավ չսիրեր բարձրանալն — անշուշտ վերջեն չխոնարհելու համար — և եթե չմեծնալն ալ յուր կամքեն կախում ունենար, տասը տարեկանեն վեր չպիտի ուզեր ելնել։

Հայաստան աշխահին վերածնությանն ականատես ըլլալու փափաքն յուր սիրտը հալումաշ կընե։ Բնավ առիթ չփախցուներ, թե՛ բերանացի և թե գրով ազգայիններն միության և գործի հորդորելու։ 1878-ին Առաջին Եայլ բարվոման ազգիս հայոց ի Հայաստան աշխարհի վերնագրով տետրակ մը հրատարակեց, որով կը հորդորեր ազգայիններն երկրագործական վարժարաններ բանալ Հայաստանի մեջ։ Հետևյալ տողերը հիշյալ տետրակեն քաղելով կը հրատարակենք հոս ցույց տալու համար մեր ընթերցողներուն՝ թե այս ծերունին յուր ալևոր հասակին մեջ դեռ ազգյուն սիրտ մը կը կրե։

«Ի վերջ բանիցս նախ առ Ձեզ կը դիմեմ, պատկառելի պաշտոնյայք Հայաստանյայց Եկեղեցվո՝ առ հասարակ համենայն կարգե և աստիճանե։ Ի Ձեզ հավատացան ողորմելի ժողովրդյան ամեն հոգ և խնամքը։ Ձեզմե կախված է անոնց երջանկությունը։ Դուք միայն կարող եք զանոնք սփոփել, մխիթարել, և իրենց ըստ հոգվո և ըստ մարմնո երջանիկ ապրելու օգտակար ճանապարհներն ցուցանելով՝ անոնց առաջնորդել։ Պաշտոնակից եղբարք իմ սիրելցյալք, ի՞նչ է մեր կոչումը, բայց եթե ժողովրդյան հոգսը ըստ ամենայնի։ Ի՞նչ պիտի ըլլա մեր նպատակը, բայց եթե ժողովրդյան կատարյալ երջանկությունը։ Դուք, պաշտոնյայք եկեղեցվո, դուք ավելի ի մոտո կը ճանաչեք գավառաց մեջ գտնվող՝ ազգիս աղքատաց թշվառ վիճակը։ Այս աղքատ ժողովուրդը Ձեր բերնեն կսպասե լսել՝ թե ո՞րն է աստվածահաճո և հասարակաց բարվույն ազգօգուտ գործը, նպատակը և միջոցը։ Ձեր բաժինը ժողովուրդն է և ժողովրդյան նվիրված եք. ապա ժողովրդյան օգտին գործածեցեք Ձեր խոսքը, Ձեր ազդեցությունը, Ձեր միջնորդությունը և Ձեր օրինակը։ Եվ ինչ ավելի օգտակար գործ քան թե երկրագործության զարգացմամբ հարմատ բուժել ազգիս աղքատաց թշվառությունը»։

1879-ին հրատարակած է Գործ կա, գործող չկա անունով տետրակ մը։ Այս հրատարակության պատճառ տված են մայրաքաղաքիս մեջ պատող անգործ երիտասարդներն, որոնք ուր որ հանդիպեին այս ծերունիին՝ իրմե կամ գործ կուզեին կամ ողորմություն։ «Անհնար կըլլա ինձ, կըսե հիշյալ տետրակին մեջ, հանդարտ գլխով և խաղաղ սրտով քաղաքիս մեջ պտտիլ, ամեն կողմանե խեղճության տխուր կերպարանք հետզհետե դիմացս կելնեն։ Թող աղքատաց և մուրացկանաց բազմությունն, շատ մի ծանոթ անձինք ալ չորս

կողմս կը խռնին, ոմանք ողորմություն կը խնդրեն, հայտնելով իրենց վերջին աղքատությունը և զավակաց անոթությունը, ոմանք շահավոր գործ կը փընտռեն, ուրիշներն ալ ծանոթ էֆենտիից ձեռոք պաշտաման մի հասնիլ կը հայցեն»։

Եվ արդարև հրատարակություն ընելե ուրիշ ճամբա չկա խալսելու համար այն երիտասարդներեն, որոնք փողոցի մեջ, տան մեջ, ամեն օր, ամեն ժամ քովդ կուգան և կաղաչեն քեզի, որ քսան ոսկի ամսականով Ամերիկայի դեսպանատան մեջ գրագրության պաշտոն մը գտնես իրեն։ Ոմանք կը փափաքին եգիպտոսի թագուհի ըլլալ։ Ոմանք հինգ հազար ոսկի կը պահանջեն, որ դրամագլուխ դնեն և վաճառականության սկսին։ Շատերն ալ հարուստ վաճառականի մը աղջիկ կուզեն։ Հայր Պողոս ասոնց ամենուն մեկեն պատասխանելու համար կըսե իրենց. գործ կա, բայց գործող չկա։ Այս պատասխանն տալեն ետքը հետևյալ հարցումները կուղղե.

«Մեր ազգին մեջ քանի՞ հացագործ կա.

«Քանի՞ մսավաճառ կա.

«Քանի՞ նպարավաճառ, գինեպան, կոշկակար և այլն կա»։

Գրեթե չկա, և ըլլալիք ալ չունի. վասն զի կոշկակարությունն մեր պատվույն կը դպչի, մսավաճառությունն ամոթ է, նպարավաճառությունը պզտիկություն է. թեպետև սա ալ խոստովանելու պարտավոր ենք, որ այսօր անգործ պտտողներուն և ոչ մին կրնա մսավաճառ ըլլալ, ոչ ալ նպարավաճառ, թող որ դրամագլուխ չունին, այլ գրագրութենե մսավաճառության երթալը քիչ մը դժվար է. վասն զի ամեն գործ, որչափ ալ դյուրին երևնա դուրսեն, գաղտնիք մ'ունի յուր մեջ։

Հայր Պողոս այս տետրակը ձրի բաշխելով կը հորդորեր ազգայիններն, որ քիչ մ'ալ այս տեսակ գործերու աչք դարձունեն, գործեր, որովք օտարներն այսօր մեծ հարստություններ դիզած են և Բերայի մեջ հոյակապ տուներ կանգնած են։ Մեր զավակները պզտիկ հասակեն վարժեցնելու է այդ արվեստներու, վասն զի քառասուն տարի գրագրությամբ կամ ուրիշ պաշտոնով զբաղած մեկու մը խիստ դժվար է կոշիկի, գինիի և այլն արհեստը սորվիլը։

Բնավ հոգնիլ չգիտեր, առավոտե մինչև երեկո կը քալե։ Մեծությունը չսիրելուն պատճառավ մեծ փողոցներն ալ չսիրեր. եթե Բերա հանդիպես իրեն՝ կամ մեկ փողոցեն կը մտնե կամ ուրիշ փողոցե մը կելնե։ Բժիշկներն յուր մեկ ծուխին ապսպրած ըլլալով, որ երբեմն անտառներն երթա և մարմնամարզություն ընելու համար սղոցով ծառեր կտրե, ինքն ալ ծուխին հետ մեկտեղ շատ անգամ անտառները կերթա և ծառի մը վրա ելնելով կսկսի անոր ճյուղերը կտրել. բայց կզգուշանա կտրել այն ճյուղն, որու վրա կեցած է։ Պտտիլը շատ սիրելուն համար է, որ Բարիզի և Վոնտրայի ամեն արվեստա-

հանդեսներու ներկա գտնված է։ Եվրոպան ամբողջ պտտած է, օր մ'ալ անշուշտ Ամերիկա պիտի երթա։

Ուրիշ կրոնավորներու պես չէ, որ միշտ հարուստներուն տուները պտըտի և աղքատներն ոտնակոխ ընե։ Շատ անգամ աղքատին կարճիքը կը մտնե, որբերուն արցունքը կը սրբե և կը մխիթարե զանոնք. ինչպես ամիրաներուն՝ նույնպես ալ աղքատներուն սիրելի է։

Խոսակցությունն անուշ է, շատ անգամ զվարճախոս է, պզտիկ առակներ կը պատմե։ Եթե քաղաքավարությունն արգիլե դինքն երբեմն համարձակորեն խոսելու՝ առակի կը դիմե և անով կը բացատրե յուր միտքը։ Այս առակն մեծ դյուրություն կուտա երբեմն մեր կարծիքը հայտնելու։ Մեր դիմացինը կպնիլ, կամ կովու, կամ ավանակի նմանցնելով կրնանք համոզել առանց անոր անձնականության դպած ըլլալու, մինչդեռ եթե առանց առակի մեկուն կպնի ըսելու ըլլանք՝ անոր անձնականությունը վիրավորած կըլլանք։

Ներող է։ Հրացան մը պարպե վրան, և երբ ոստիկանությունը գա զքեզ ձերբակալելու՝ ինք առաջ կը նետվի և կըսե.

— Ձիս բռնեցեք։

Այս ըսելեն ետքը՝ խիղճը կը սկսի զինք տանջել, թե ինչո՞ւ աշխարհիս վրա գտնվի մարդ մը, որ իր վրա հրազեն պարպե։ Խիղճը հանդարտեցնելու համար գիշերանց անկողինեն կելնե, լապտերը կը վառե և այն մարդն կը գտնե, քովը կը նստեցունե և կսկսի խրատել զայն, որ ուրիշ անգամ ասանկ ոճիր մը չգործե։ Եթե քովը դրամ ունենա՝ կը հանե անոր կուտա, որ յուր տված խրատները գործադրե։

Կարծյաց ազատության հարգող է։ Գնա իրեն զրուցե, որ ածուխին դույնը ճերմակ է, բնավ չտրդողիր և թող կուտա, որ փաստերովդ չորս ժամ դլուխը ցավցունես։ Սկեպտիկյանի[5] մը պես վայրկյան մը կըսե մտքեն, «Թերևս ածուխը ճերմակ է և ինձի սև կերևա». իսկ երբ խոսքդ ավարտես՝ կսկսի պատասխանել և զքեզ համոզելու աշխատիլ։ Պնդե յուր առջևը, թե էնֆիեձյան առաքինի մեկն է. պաղարյամբ մտիկ կընե զքեզ և վերջը կը սկսի հերքել կարծիքդ. իսկ երբ կը տեսնե, որ կարծյացդ մեջ հաստատ ես՝ չտիպեր զքեզ կարծիքդ փոխելու, և «երկուքս ալ իրավունք ունինք» ըսելով՝ խոսքը կը վերջացունե։ Իրավունքը հիմա ճաշակի տեղ անցած է, ամեն մարդ ազատ է այսօր խնդրո մը վրա ամենեն այլանդակ կարծիքը հայտնել առանց կարմրելու, ինչպես որ թեթև երիտասարդ մը ազատ է ամենատգեղ դույնով տձև թիկնոց մը հագնելու, ինչպես որ ուրիշ մը ազատ է սոխով եփած միսը կամ միսով եփած սոխն ուրիշներու հանձնարարել։

Հոս կը դադրինք ա'լ համրելե այն բոլոր բարեմասնությունները, զորս ունի հայր Պողոս, որուն Ազգային ջոջերու մեջ գտնվիլն անշուշտ բերկրություն պիտի պատճառե մեր ընթերցողներուն, երբ պիտի տեսնեն ասոնք. ազգին մեջ կան այնպիսի կրոնավորներ, որ ամենուս սիրույն և հարգանացն արժանի են։ Թերևս շատերը հետաքրքիր ըլլան հասկնալ, թե ինչո՛ւ Լուսինյանն, Եուաշազործե[6] և Հասունյանն ետքը գրեցինք այս ծերունվույն կյանքը։ Դիտմամբ ետ թողուցինք, ապացուցանելու համար՝ թե լույսը խավաթեն ետքը կուգա։

Հայր Պողոս բարակ կազմով, ճերմակ մազերով և ճերմակ մորուքով ծերունի մ'է։ Հակառակ յուր ծերությանը առանց հոգնելու օրը քանի մը անգամ Բերայեն Բ. Դուռը կրնա քալելով երթալ գալ, ինչպես արդեն կուգա Հակահասունյաններուն գործին համար։ Յուր դեմքը զրավիչ է և կը հիշեցունե մեզ առաքյալին այն օրվան դեմքն, ուր յուր վարդապետին կըսեր.

— Ամբողջ գիշեր աշխատեցանք ու բան մը չկրցինք բռնել։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԻՓԵՓՃՅԱՆ

Այն օրն, ուր առաջադրեցի այս դաստիարակին կյանքը գրելու՝ ինքզինքիս հարցուցի.

— Իրա՞վ է թե աստված անպետ բան մը կամ էակ մը չստեղծեց աշխարհիս վրա։

Եթե իրավ է, պատասխանեցի ես ինձի, այս մարդն ի՞նչ գործ ունի աշխարհիս վրա։ Եթե իրավ չէ՝ ինչո՞ւ այս մարդն պիտանացու ըլլալու համար Թեոդոսիայեն Սիմֆերոբոլ կերթա, Սիմֆերոբոլեն Ռոսթով, Ռոսթովեն եքաթերինոսար, եքաթերինոսարեն Պոլիս, Պոլիսեն Պեշիկթաշ, Պեշիկթաշեն Սամաթիա, Սամաթիայեն Խասգյուղ, Խասգյուղեն Գերմանիա, Գերմանիայեն Պոլիս, Պոլիսեն Իզմիր, Իզմիրեն Իկյուտար կանցնի։

Քանի մը վայրկյան ճակատս շփելեն ետքը համոզվեցա, որ աստված արդարև անպետ բան կամ էակ չէ ստեղծած աշխարհիս վրա. յուրաքանչյուրն յուր գոյության պատճառն ունի։ Օրինակի համար՝ Խասգյուղի շոգենավերն ստեղծած է մահկանացուներս համբերության վարժեցունելու համար, թղթադրամն և պղինձը հանած է հասկցունելու համար մեզի, թե ինչ որ սկիզբ ունի՝ վերջ ալ ունի. անգործներն ստեղծած է, որպեսզի զբոսարաններու տերերն առուտուր ընեն և ստակ վաստկին. լուսինը ստեղծած է, որ Բերայի կզերն երբ մարին՝ փողոցները լուսավորե, որպեսզի գողերը մութին մեջ սխալ տուն չմտնեն. խմբագիրներ ստեղծած է, ցույց տալու համար՝ թե մարդս չէ կարող յուր ճակտին քրտինքովը ապրիլ. չափազանց անձնանվերներ ստեղ-

ծած է՝ գողերու վրա քեզի զգաստիար տալու համար. երկաթյա կամուրջ մը տված է, հասկցնելու համար՝ թե ներկա դարուս մեջ անհնար է երկու օձիքը մեկ տեղ բերել. դասատուներ ստեղծած է՝ բժիշկներու սորվեցնելու համար՝ թե մարդս քանի՛ ժամ կրնա անոթության դիմանալ: Այս ամենն աղեկ, կըսեք, բայց Իփեքճյանն ինչո՞ւ համար ստեղծած է: Անշուշտ շրջանակի մը մեջ անցունելով պատեն կախելու համար չէ: Ինչո՞ւ ուրեմն եկած է աշխարհ: Մի՛ բարկանաք, բարեկամ, աշխարհ ըսածդ վարժարան չէ, որ մեր գործին չես գար ըսենք ու ճամբենք: Համբերեցեք, հարկավ նպատակի մը համար եկած պիտի ըլլա: Ի՞նչ է նպատակը: Քանի մը վայրկյան ճակատ շփելն բավական է զմեզ համոզելու համար, որ աստված Իփեքճյանի կյանք տալով ուզած է հասկցունել զմեզ, որ դաստիարակության մասին մենք տակավին շատ ետ մնացած ենք. եթե այսպես չըլլար՝ թող չէինք տար անշուշտ, որ դաստիարակ մը աշխարհիս չորս կողմը պտտիլ ստիպվի ապրելու համար: Չափազանցություն չէ ըսածս, մտիկ ըրեք:

Առանց ուրիշի խորհուրդ հարցնելու՝ այս մարդն 1843-ին ելավ աշխարհ եկավ: Բարի եկավ, հազար բարի, սակայն մարդս քաղաք մը, դեղ մը երթալ ուզած ժամանակն անգամ նախ ծանոթություն կը հավաքե և վերջը կերթա, ո՛ւր մնաց աշխարհն, որու վրայոք հազիվ չորս հոգի կը գտնվի նպաստավոր տեղեկություն տվող: Իփեքճյան եթե այն ժամանակի դաստիարակներեն խորհուրդ խնդրեր՝ շատ հավանական էր, որ աշխարհ գալու նպատակեն հրաժարեր: Վասն զի այն ատենները դիշեր մը քանի մը ամիրաներ իրենց փորն կշտացնելեն ետքը կուզեն իմանալ, թե ենովք և եղիա՝ ի՞նչպես կապրին, ի՞նչ կուտեն երկինք: Ամիրային մեկը կըսե, թե կարկանդակ կուտեն, մյուսը այս կերակուրը հերքելով՝ հնդկահավ կուտեն, կըսե: Վիճաբանությունը կը սաստկանա և հարկ կըլլա դիշեր ատեն պատվելի մը կանչել և անոր կարծիքն առնել: Պատվելին կուգա և երբ իր կարծիքը կը հարցվի՝ կը պատասխանե.

— Ձեք հարցուներ, թե ձեր փողոցին մեջ նստող պատվելին ի՛նչպես կապրի, և կելնեք ենովք և եղիային ինչպես ապրիլը կուզեք իմանալ:

Ավելորդ է ըսել, որ նույն դիշերն անոթի պառկած էր պատվելին, և բնականաբար նպաստավոր պատասխան մը չպիտի տար Իփեքճյանի, եթե ան իրմե տեղեկություն ուզեր: Այս չըրավ և չընելեն ետքը հանձնարարական թուղթ մ'ալ չառավ: Վա՜յ այն պարկեշտ ուսումնականներուն, գործունյաներուն և աշխատասերներուն, որ հանձնարարող մը չունին, սողալով պիտի սողան գետնի վրա... երանի՜ այն տգետներուն, որ հանձնարարողներ ունին կամ երևելի շենքերու վարչության անօրեններ կըլլան, կամ առատ թոշակներ կընդունին ու խելացիները ծաղրելով պատվական կյանք կանցունեն... երանի մտոք աղքատաց, զի նոցա է արքայություն երկրիս...

Այս առաջին հանցանքները գործելեն ետքը, հանցանք մ'ալ գործեց՝ Թեոդոսիո մեջ աշխարհ գալով... որպես թե աշխարհիս վրա ուրիշ քաղաք մնացած չըլլար. թո՛ղ որ այդ քաղաքն յուր կարծիքներուն համաձայն ալ չէր: Մանկության օրերը հոն անցունելեն ետքը՝ 1852-ի ատենները Սիմֆերոբոլ գնաց և հոն վարժարան մտնելով փոխանակ ուսանելու՝ ուսուցանելու արհեստը սորվիլ կուզեր: Համոզեցին զինքն, որ առանց ուսանելու ուսուցանել անկարելի էր, և ասոր վրա սկսավ յուր դասերը պատրաստել և ընկերները գերազանցել:

1859-ին վարժարանեն ելավ և Թեոդոսիա դառնալով՝ ուզեց դասատվությամբ ապրիլ: Դասատվությամբ ապրի՜լ... հրաշքի դարերն անցած են... դասատվությամբ մեռնիլ, այս է իրականությունը:— Քաղաքագետներն մեծ գործ մը ըրած կըլլան՝ եթե կախվելու անձերն Թուրքիա ղրկեն դասատվություն ընելու:— Չկրցավ յուր փափաքն գործադրել և հարկ եղավ կտավի վաճառականի մը քով գրագրության պաշտոն վարել: Քանի մը ամիս կտավ վաճառելեն ետքը՝ հրաժեշտ տվավ այդ գործին և միտքը դրավ, որ անպատճառ դասատվությամբ ապրի:

1864-ին քանի մը ընկերներու հետ միանալով Ռոսթովի մեջ գպրոցի մը հիմնարկության աշխատեցավ և չհաջողեցավ:

1865-ին նթաթերինոտարի մեջ այցելությամբ դասախոսություն ընելու ձեռնարկեց: Այս ձեռնարկությունն ալ ի դերև ելավ, և Իփեքճյան ստիպվեցավ Ռուսաստան թողուլ և Թուրքիան դրկել: Եթե դասատվությունը թողուր և Ռուսաստանը գրկեր՝ անխոհեմ գործ մը ըրած չպիտի համարվեր:

1867-ին Կ. Պոլիս եկավ: Դասատուի մը աշխարհ գալն, ինչպես ըսինք, հանցանք մ'է արդեն, իսկ Պոլիս գալն՝ անանկ ծանր հանցանք մ'է, որ բնավ ներելի չէ: Իփեքճյան այս մահացու մեղքն ալ գործեց, և Ենի-Գաբուի վարժարանը մտավ՝ տեսչության պաշտոնով: Այս անձն պզտիկին վրա պզտիկ գաղափար ունի, կամ, լավ ևս, բնավ գաղափար չունի, կը փափաքի, որ ամեն բան մեծ, փառավոր և կատարյալ ըլլա: Գովելի փափաք մ'է այս, բայց տեղին, ժամանակին և պարագաներուն հարմարելն ալ քիչ մը պետք է: Եթե կոշկակար մը եղած ըլլար՝ նավակի մեծությամբ կոշիկներ պիտի կարեր, թե պետև պոլսեցիներուն մեծ ծառայության մը պիտի ըներ, վասն զի երբեմն փողոցներե անցնելու համար՝ նավակի պետքը զգալի կըլլա, ինչպես հոս կուրի պետքը կըլլային ծայրը: Ամիսը տասնըհինգ ոսկի եկամուտ ունեցող վարժարանի մը տնօրեն կարգե Իփեքճյան էֆենտին և աղաչե իրեն, որ ծրագիր մը պատրաստե: Հետևյալ օրը ծրագիր մը կը հանե ծոցեն և կսկսի կարդալ.

«Պատիվ ունեցեք մտիկ ընելու այն ծրագիրն, զոր պատրաստելու համար աղաչեցիք մեզի:

Ա. Նկատելով՝ որ դպրոցին շենքն ավելի ախոռի ձևով շինված է քան թե դաստիարակության շենքի մը ձևով, կը խնդրեմ, որ նախ այդ դպրոցը փլցուն-նենք և նորեն շինենք, այն ձևով՝ որուն օրինակը Գերմանիայեն բերել տված եմ։ Այդ շենքին մեջ անկարելի է տղա դաստիարակելը.

Բ. Ճեմիշները վերցունելու է դպրոցին քովեն և քաղաքեն դուրս տեղ մը դնելու է.

Գ. Նկատելով՝ որ կլիման վնասակար է, կը խնդրեմ, որ Հոգաբարձու-Ըյունդ արժանը տնօրինեն քաղաքիս կլիման փոխելու համար.

Դ. Վարժարանն ամիսը հարյուր ոսկվո պետք ունի և Հոգաբարձությունը կարող է, եթե ուզե, ժողովուրդեն հավաքել այդ դրամը.

Ե. Եթե այս առաջարկությունները կընդունիք՝ լավ, եթե ոչ՝ մնաք բարյավ»։

Այս տեսակ ծրագիրներով կը փափաքի Գերմանիայի վարժարաններու հավասար ընել այն վարժարանն, որ յուր տնօրինությանը տակ առած է։ Հայտնի է, թե այսպիսի ծրագիրներն ո՛րչափ ընդունելություն կը գտնեն անանկ ժողովրդե մը, որ տնօրենի մը տրված ամսականը ծովը նետված ստակ կը համարի։ Իփեքճյան չուզեր ծրագրին մեջ բյուն վերջավորված խել մը ուսումներ և դիտություններ շարելեն եաքը՝ զանոնք աշակերտներուն յսորվեցունել և, հետևապես, անոնց ծնողքը խաբած ըլլալ։ Ամեն բան առաջուց կիմացունե, որպեսզի ապագային մեջ պատասխանատվության տակ չմնա։ Նույնիսկ շարգևաբաշխության օրերն ալ՝ որք ծնողքներ խաբելու հատուկ օրեր են, բնավ սուտ չխոսիր. հայտնապես կըսե, թե Թորոսը տկար է, Կիրակոսը ծույլ է, մինչդեռ ժողովրդյան հաճելի ըլլալու համար պետք էր ըսել, որ, փառք աստուծո, վարժարանիս բոլոր աշակերտները հառաջադեմ են, և կը հուսամ, որ գալ տարի փիլիսոփաներու հորդ առատություն մը պիտի տեսնենք։ Վարժարանի տնօրենի մը համար քիչ մը ստախոսություն և քիչ մ'ալ շողոքորթություն անհրաժեշտ պետք է, և այն տնօրենն, որ այս երկու առաքինություններեն զուրկ է, անպատճառ օր մը հեռանալ պիտի ստիպվի այդ ասպարեզեն։ Ասկից զատ, Իփեքճյան հոգաբարձու էֆենտիներու հետ վարվելու եղանակն ալ չգիտեր։ Հոգաբարձու մը կուզե, որ տնօրենն յուր առջև բարև մը բռնե, պիկարայինն կրակ բերե. եթե փողոցի մեջ հանդիպի հոգաբարձուի մը, որ միս ի ձեռին կերթա, միսն ինք առնելու և տուն տանելու է։ Այսպես չվարվեցա՞վ... ա՛լ ականջները հոգաբարձուներուն բերանին մոտեցնելու է.

— Ի՞նչ ըսել է, էֆենտիմ, ան տիրացուին խո՞սքը պիտի ըլլա։

— Իրավունք ունիք, առջի օրը դպրոց մտա, տեղեն չերերաց, կարծես ան մեղի ամսական կուտա։

— Շատ ճշմարիտը խոսեցաք, աղդին ստակովը կապրին... և հոգաբարձուներուն հրամայել կուզեն։

— Վռնտելու է այդ մարդը, վռնտելու է։

— Այո՛, այո՛... ծո տնտես, գնա պատվելիին ըսե, որ մեյ մ'ալ դպրոց ոտք չկոխե։

Հարկ չմնար ա՛լ երկար բարակ բացատրելու, թե Իփեքճյան ինչո՛ւ երկար ատեն չկրցավ մնալ Պոլսո թաղային վարժարաններուն մեջ։

1871-ին Շահ-Նուպարյան վարժարանին Տեսչությունն ստանձնեց։ Հիշյալ վարժարանն, որ Իփեքճյանի փափաքներն իրականացնելու չափ եկամուտ ուներ, կանոնավոր կերպով շարունակեց և ուսյալ աշակերտներ ալ դուրս տվավ, որչափ ատեն որ եկամուտ ունեցավ։ Շատ մը դասատուներ, որոնք շաբաթն երեք անգամ գալու պարտավոր ըլլալով՝ մեկ անգամ կուգային վարժարան, թշնամի եղան Իփեքճյանի, որ ճշտություն պահելու թերություն ալ ուներ։ Իրեն համար օրակարգ մը պատրաստած էր և անոր համեմատ կը շարժեր. ելնելու, պառկելու, ճաշելու, խոսելու, խորհելու, լալու, խնդալու և փոնգտալու հատուկ ժամեր որոշած էր. և այս կարգապահությունն իրեն թշնամիներ կը հարուցաներ։

Այն ատեններն էր, որ դաստիարակության սահմանի կռիվ մը բացվեցավ լրագիրներու մեջ։ Մեկն ելավ և Մանգումեի էֆյարի մեջ հարցում մը ըրավ, թե ի՞նչ է դաստիարակության սահմանը։ Իփեքճյան խնդաց։ Այս հարցումը չափազանց բան մ'էր, վասն զի դաստիարակության սահմանը չգիտցող դաստիարակ մ'իսկ չկրնար դաստիարակ ըլլալե դադրիլ։ Այսչափ մարդ կա աշխարհիս վրա, միթե ամենն ալ մարդկության սահմանը գիտե՞ն, ո՛չ, բայց և ոչ մին մարդ ըլլալե դադրած է։

Այս հարցումը կը հիշեցունե մեզ Մոլիեռի «Քաղաքացին ազնվական»ի հետևյալ տողերը.

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Մտերմաբար բան մը պիտի հայտնեմ ձեզի։ Ազնվականի մը սիրահարած եմ և կը փափաքիմ, որ օգնեք ինձ գրելու սիրատոմս մը, զոր իրեն ուղարկելու տակը պիտի դնեմ։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Գլխուս վրա։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Բայց սքանչելի բան մը ըլլալու է։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Հայտնի է։ Ոտանավո՞ր կուզեք գրել։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Ոչ, ոչ, ոտանավոր չեմ ուզեր։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Լսել է, որ արձակ կուզեք։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Ոչ, ոչ, ոչ արձակ կուզեմ, ոչ ալ ոտանավոր։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Սակայն պետք է, որ կամ մին ըլլա կամ մյուսը։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Ինչո՞ւ համար։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Պատճառն սա է, որ մեր միտքը բացատրելու համար կամ արձակ գրելու է կամ ոտանավոր։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Արձակեն ու ոտանավորեն զատ բան չկա՞։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Ոչ, պարոն, այն որ արձակ չէ՝ ոտանավոր է, և այն որ ոտանավոր չէ՝ արձակ է։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Մեր խոսածն ի՞նչ է ուրեմն։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Արձակ է։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Ի՞նչ կըսեք. օրինակի համար՝ եթե ըսեմ, «Նիկոլ, սա մուճակներս և գիշերվան գդակս բեր», արձա՞կ է սա։

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒ

Արձակ է։

ՄՈՆՍԻՈ ԺՈՒՐՏԵՆ

Զըսե՞ս, որ քառասուն տարիե ի վեր արձակ կը խոսիմ եղեր և դեռ այսօր կիմանամ...։

Զարմանալու բան չկա. միթե այսօր չկա՞ն խմբագիրներ, որ սխալ կը գրեն, առանց զգալու իրենց սխալը։

Ըստ իս մարդ մշակելու և ըստ ուրիշներու մարդուս միտքը, սիրտն ու մարմինը մշակելու արհեստն Իփեքճյան էֆենտին քանի մը տարիներ Շահ-Նուպարյան վարժարանի մեջ գործադրելեն ետքը՝ հրաժարեցավ այդ շենքեն, որուն հասույթները ցամքիլ սկսած էին։ Մեկնեցավ Պոլսեն և Լոզան գնաց ու հոն հայտարարություն մը հանեց, որ հարմար գնով հանձնառու կըլլա Թուրքիայեն, և ոչ ուրիշ կողմերե, հոն ղրկվելիք տղաներու դաստիարակությանը։ Այս գործն ալ չկրցավ գլուխ հանել և ստիպվեցավ դառնալ Պոլիս, ուսկից Իզմիր գնաց և հոն ալ յուր հրաժարականը տալով՝ նորեն Պոլիս դարձավ և Իսկյուտար Սելամիեի միացյալ վարժարանին տնօրեն անվանվեցավ։

Իփեքճյան էֆենտին մանկավարժության մեջ գերմանական դրության կը սիրե այնպես՝ ինչպես կը սիրեմ ես սխտեռով միսը, և կը սիրես դուն ձեթով լուբիան։ Այս դրությունը շատ հարմար է տարվան մը մեջ թաղային վարժարան մը հազար հինգ հարյուր ոսկի պարտական ընելու։ Մեր ըսածը քանի մը տարիներ առաջ փորձով հաստատեց Իսկյուտարու Սելամիեի վարժարանն, որուն հոգաբարձությունն Իփեքճյան էֆենտիե ավելի գերմանասեր էր։ Այս դրությունը խիստ կարուկ է, վարժարանն կամ կը բարձրացունե կամ կը կործանե։ Իփեքճյան էֆենտին եթե քիչ մը խոնարհեր և թաղային վարժարաններն երկրորդական աստիճանի վերածելու դյուրություններ տվող ծրագիր մը պատրաստելու ջիջաներ, ազգին մեծ ծառայություն մը ըրած պիտի ըլլար։ Մենք կը կարծեինք, որ ժողովուրդը և վարժարաններուն եկամուտները քննելեն ետքը՝ գլուխը պիտի փոխեր. բայց մեծ եղավ մեր զարմանքը, երբ տեսանք, որ գլուխը փոխելու տեղ գլխարկը փոխած է։ «Պարապ բան է, բարեկամ, կըսե Իփեքճյան, ի՛նչ որ ալ ընես, այս ազգը գայրոցի համար դրամ չտար, կուզե որ յուր տղաները ձրի կարդան»։ Իրավունք ունի, սակայն քիչ մը զոհողություն ընելով՝ ժողովուրդը ծանոթացնելու է յուր պարտքերուն։

Իբրև երեսփոխան ալ ազգին ծառայած է. երկաթյա ականջ ունենալու է մեկը, որ դիմանա անոր ատենաբանություններուն։ Շատ խոսելու համար մրցումի կելներ ուրիշ երեսփոխաններու հետ, և շատ անգամ մրցանակն կը վաստակեր։ Յուր կարծիքներն երբեք ճնշման տակ չեն իյնար, կը խոսի ազատորեն, ինչ որ կը խորհի ազգին օգտին համար։ Անձնական շահն, որ շատ անգամ մեր երեսփոխաններեն մեկ քանիները կստիպեն լռել, բնավ ազդեցություն չկրնար ունենալ յուր վրա. ամենեն հարուստին մեկ անքաղաքավարությունն անոր երեսը զարնելե չհրաժարիր՝ մինչև անգամ չորս հազար ոսկիով աղջիկ մը տալ խոստանաս իրեն։ Շատերը կը կարծեն, թե կիրքով կը խոսի, ես կը հավատամ, որ կիրքով կը խորհի և պաղարյամբ կը խոսի։

Հրապարակի վրա ունի գրություններ, որոնք ողջմտություն կը բուրեն։ Ոճը խոնարհ բնավորություն մը չունի։ Անգամ մը իրավամբ հարձակեցավ

Մամբրե եպիսկոպոսին դեմ, որ պատասխանեց՝ թե կրոնավորի դեմ հարձակիլն կրոնի դեմ հարձակիլ է։— Աս ճշմարիտ է, և ասոր համար է, որ երբ Մամբրե եպիսկոպոս հարբուխ ըլլա՝ կրոնքին ալ քիթը կը վազե։—

Իփեքճյան էֆենտին, ինչպես տեսնվեցավ կենսագրությանս մեջ, ավելի գեղեցիկ՝ քան տգեղ կողմեր ունի. սակայն յուր դեմքը գեղեցկության մասին մյուս բոլոր հատկությունները կը գերազանցե։ Փողոցի մեջ այնպիսի սիգաճեմ քալվածք մ'ունի, որ մարդս կը վախնա անոր եաևեն երթալու, իրեն սպասավորն կարծվելու համար։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ

Հովհաննես Մյուհենտիսյան, ձուլիչ, փորագրիչ, ոսկերիչ, թղթադրամներու արարիչ, տպարանապետ, երեսփոխան, Սամաթիա ծնած է 1810 փետրվար 21-ին. այսինքն այն ամսուն՝ որու մեջ, կըսե չգիտեմ ո՛վ, կիները քիչ կը խոսին։

Հազիվ չորս տարեկան կար, երբ իմացուց ծնողաց, որ ինք այն մարդերեն է, զորս նախախնամությունը ստեղծած ժամանակը ստեղծող ոգիով մը կօժտե և վերջը թող կուտա, որ ուրիշներեն միշտ խարվին։ Այդ տարիքին մեջ էր Մյուհենտիսյան, և օր մը մեղրամոմե կանթեղ մը շինեց, և տեսավ Մյուհենտիսյան, որ բարի է։ Յուր հաջողակութենեն քաջալերված՝ կանթեղն ալ ըրեց և անոր տեղ պզտիկ կատու մը շինեց։ Օր մը եաքը կատվեն ընկուզենի մը շինեց, և հետևյալ օրն ալ ընկուզենին դդումի այլափոխեց։ Այս ամենուն մեջ կատարելապես հաջողելեն եաքն՝ ըսավ. մարդ մ'ալ շինենք — մեղրամոմե — և դդումն առնելուն պես՝ մարդու բարեփոխեց զայն, և յուր արարչագործությունն կատարյալ եղավ։

Հայրը տեսնելով, որ յուր տղուն ձեռները հանճար ունին, միշտ կը քաջալերեր զինքն, երբեմն նվեր տալով և միշտ խրատ։

Յոթներորդ տարվան մտնելուն պես թաղային վարժարանը ղրկվեցավ, որ նախնական ուսումներն առնե։ Արդեն այդ թվականին վարժարանները հիմակվաններուն պես նախնականեն ուրիշ բան չունեին տալու. երբեմն նախնականն իսկ կը պակսեր։ Մյուհենտիսյան շարունակ աշխատելով կատարելապես սորվեցավ Սաղմոսը, Կտակարանը և Նարեկը, որոնք ընթերցանության երրորդություն մը կը կազմեին այն ատեններուն։

Երեկոները տուն դառնալուն պես ծունկ կը չոքեր հորը առջև, որ իրեն զբոսանք բաներ կը սորվեցուներ իրեն. զոր օրինակ՝ դավաթ մը չափել և որ-

չափ ջուր առնելը գտնել, օքրան ըսված գործիքով իրիֆա առնել, ժամը քանի՛ ըլլալն գիտնալ և արևուն ծագումը գտնել։ Օ՛րթանը այսօր բնավ չգործածվիր, վասն զի ամեն մարդ յուր փորեն կարող է գուշակել ժամը քանի ըլլալը։

Երեկոյան աշխատութենեն ավելցած ժամերն ալ պարապ չէր անցուներ, ձայնագրության դաս կառներ նորաձի պապա Համբարձումեն, որուն կենացը վրայոր ոչինչ գիտենք այսօր։ Այնքան կը սիրեր ալյումբեհով խաղ կանչելն, որ ամեն մեկ երգին բանթալոն մը կը պատռեր, այնքան ուժով կը զարներ ծունկերուն. եթե ամբողջ ֆապ մը ալյումբեհով կարդալու ըլլար՝ տասներկու հատ բանթալոն պետք կըլլար։ Հայերեն ձայնագրության մեջ հսկայաքայլ հառաջ երթալենետը՝ եվրոպականն ալ սորվեցավ, ուսկից փափաք եկավ վրան դաշնակ զարնելու։ Եթե չենք սխալիր, ինք առաջինն եղավ ազգին մեջ դաշնակ զարնող։ Այն ատեններն դաշնակն շատերու անծանոթ նվագարան մը ըլլալով՝ անոր ձայնն առնողները փողոցին մեջ կը շարվեին և մտիկ կընեին։ Դաշնակ զարնելը բան մը չէ, աղեկ զարնելը բան մ'է, և Մյուհենտիսյանի մատներն այնքան վարժ էին, որ դաշնակին դպչելուն պես՝ անոր ձայնեն կը զմայլեին և թռչտելով կուգային տանիքներու վրա կիջնային ագռավներն, վասն զի այն ատեններն սոխակ չկար. միայն սոխակ մը կար դրացվույն տունը, որ յուր գեղգեղանքներովն կը պատասխաներ. բայց ափսոս, որ այն սոխակն ալ մեր բախտեն Արքատիի էր։ Այսուամենայնիվ Արքատիի սոխակն էր, որ Մյուհենտիսյանի փառքը կավելցուներ, ոչ թե անոր համար, որ ավանակին ձայնին քով դաշնակինը բարձր տեղ մը կը բռներ, այլ անոր համար, որ դաշնակով ավելի դժվար է իշու զգացումները արթնցնելը՝ քան թե սոխակի մը։ Միթե պերճախոսության արհեստին մեջ ալ այսպես չէ՞... Զգայուն սիրտ մը հուզելու համար Տեմոսթենես շատ է, իսկ անզգաները հուզելու համար՝ կիկերոններ քիչ են։ Կրակն միևնույն կերպով չներգործեր բամբակի և ապառաժի վրա։ Սովյալներու համար հրատարակված սրտաճմլիկ և աղեխարշ նամակներն այնչափ կաղդեն անզգա հարուստներու վրա, որչափ փոքրիկ կայծ մը՝ ապառաժի մը վրա։ Ա՛լ դյուրին է գուշակել, կարծենք, որ Մյուհենտիսյան քաջ դաշնակահար մ'էր։

Երաժշտական ճյուղին մեջ դաշնակահարությամբ չշատացավ. եվրոպացան ձայնագրութենե լուսավորվելով՝ հայկականին մեջ եղած թերություններն ուղղեց. ձայնագրության կանոնները պարունակող տետրակ մը շինեց և հետո, երբ տպարանապետ եղավ, նույն նորաներուն հայր և մայր գիրերը պատրաստեց, բայց պարագաները թող չտվին, որ այդ հայր և մայր գիրերն իրենց զավակներն ի լույս ընծայեին։ Ասոնցմե զատ ունի նաև շինած պզտիկ երգեհոն մը, որ էվիճը կը պարունակեր յուր բեշրեֆովն, պեսբեովն, շարֆիներովն և սեմայիովը։

Եվ որովհետև երգեհոնով էվիճի ֆասլը եղանակելն հաց չտար մարդուս, Մյուհենտիսյան ոսկերչի մը քովը մտավ։ Յուր բնատուր ձիրքովն քիչ ժամանակի մեջ հառաջ գնաց սատեֆյարության մեջ։ Ինչ որ մեղրամոմե կը շիներ պզտիկության մեջ՝ արծաթե և ոսկիե շինել սկսավ։ Ագգային բոլոր նշանավորներուն գործերն կը շիներ, և ամենուն սերն ու համակրությունը գրաված էր։

Ադամին գործած հանցանքը նկատողության առնելով՝ կըսեմ, թե արժանի էր, որ յուր ճակատին քրտինքովն ապրելու դատապարտվեր և ոչ թե շատ մը պեյերու կամ էֆենտիներու պես մեր ճակատին քրտինքովն ապրելով՝ Վոսփորի ծովափունքին վրա պալատի պես տուներու մեջ նվան քովն առներ և փափուկ բազմոցներու վրա նստեր։ Նույնպես օձին ալ խորամանկությունը տեսնելով, կընդունիմ՝ թե գետնի վրա սողալով քալելու պատժույն ենթարկվելու էր, և ոչ թե մեզի պես կանգնելով քալելու էր, ինչպես կը քալեր անշուշտ առաջ. բայց երբ Մյուհենտիսյանի բարի վարքը կը դիտեմ, հետաքրքիր կըլլամ հասկընալու, թե ի՞նչ մեղք գործած է արդյոք, որ տպարանապետ ըլլալու ծանր պատիժը կրելու դատապարտված է։ Գիտեք հարկավ, որ մեր ազգին մեջ տպարանապետ ըլլալն անանկ ծանր պատիժ մ'է, որ ոչ սողալով քալելու կը նմանի, ոչ ալ ճակատի քրտինքով ապրելու պատժույն, որուն այսօր ամենքս ալ կը փափաքինք և չենք կարող արժանի ըլլալ...— ինչ որ պատիժ էր Ադամ օրով՝ վարձատրություն կը համարվի այսօր Պոլսո մեջ։— Ադամ արդիլյալ ծառեն կերավ, եռևը բացվեցավ և վերջեն թզենիով գոցվեցավ. պատասխան ավելք ինձ, ո՛վ պատմագետներ, այս տպարանապետներն այդ արդիլյալ ծառն ամբո՞ղջ կլլեցին, որ իրենց եռևը միշտ բաց է և բնավ չգոցվիր... հապա դատաւորները, որ բան մը կերած չունին խեղճերը... հապա խմբագիրներն, որ միսի վրա գաղափար չունին, ինչպես կույրերը գույնին վրա։ Պատասխան չեք տար. ես ալ չեմ ուզեր, թող աս ալ Լույսի[1] բաժանորդագիններուն քովն երթա, երբ որ Լույսի շրջանն լրանա՝ այն ատեն կուտաք։ Մենք Մյուհենտիսյանի դառնանք։

1839-ին ազգը Արապյան տպարան մ'ուներ միայն, և Մանվելյան կը փափաքեր տպարան մը հաստատել Ճեմարանի մեջ, որ նոր բացված էր։ Մանվելյան յուր այս փափաքը կը հաղորդե Բադևոս Տիվիթճյանի, որ Բերա ելնելով հրեա փորագրիչ մը կը գտնե և հայերեն հայր գիրեր շինել կուտա անոր։ Տիվիթճյան կը տեսնե, որ այդ հրեին շինած գիրերը հայերեն չէին, այլ տարբեր ձևով ու ճաշակով խել մը նշաններ, որոնք անոնց գործին միայն կուգա, որ կը փափաքին նոր լեզու մը ստեղծել։ Տիվիթճյան կատիպվի հրաժարիլ այս ձեռնարկությունեն և Մյուհենտիսյան Խաչատուր Միսաքյանի թելադրությամբ և ընկերակցությամբ ծախու կառնե Տիվիթճյանի գիրերն, որոնք հրեին շինած

հայերուն և Տիվիթճյանի պատրաստած մայրերուն ծնունդն էին։ Մյուհենտիսյան այդ հայրերը և մայրերը կը կոկե և այնպիսի ձև մը կուտա անոնց, որ հաշակը կը հավնի։ Այս արհեստին մեջ մտնելուն պես հոգվով և մարմնով աշխատեցավ, որ տեսակ տեսակ գիրեր պատրաստե։ Մեկ երկու տարիեն զգալով, որ մինակ աշաց տեսությամբ շինելն շատ դժվար բան էր, գործիք մը հնարեց, որուն մեջ փորագրվելիք պղպատան անցընելով կրնար նույն պղպատին ծայրը բարակ և սրածայր պողպատով մը աղյուսակներ գծել գիրեր, սյուներուն և միջոցներուն հաստությանը, ծռությանը և բարձրությանը չափով, և այն գիծերուն համեմատ կը փորագրեր, որով եթե այբ մը շինել ուզեր՝ այբին երեք սյունը հավասար հաստությամբ, հավասար ծռությամբ և հավասար երկայնությամբ կըլլար։— Ինչպես կը տեսնվի, այբին ամեն կողմը հավասարություն կար, մինչդեռ Բուրքիո և ո՛չ մեկ կողմը կա այս հավասարությունը։ Այս գործիքը շինելեն ետքը՝ ուրիշ գործիք մ'ալ հնարեց, որով հայր գիրը պղինձին վրա մամուլի ճնշմամբ կը զարներ և ոչ թե կռանի հարվածով, ինչպես կընեին ուրիշները։

1840-ին Մյուհենտիսյանի շնորհիվ Պոլսո մեջ առաջին անգամ մաքուր Օրացույց տպվեցավ ի Ճեմ. սրբո Ներս. մինչև այն թվականը Վենետիկեն կուգային Օրացույցները... և շատ անգամ Օրացույցներուն գալն ուշանալով՝ պատրիարքարանն օրերը կը շփոթեր և վենետիկ հարցնելու կտիպվեր՝ թե վաղը շաբա՞թ է։ Արդյոք քանի քանի անգամներ Ծնունդի օրը խաչելության ավետարաններ կարդացված են. ով գիտե ի՛նչ քաշած է Որդի Մարդո մեր ազգին ձեռքեն... Մյուհենտիսյան կը փափաքեր տպարան մը բանալ և թողուլ Ճեմարանն, որ գոցվելու վրա էր, բայց ուրիշ տպարանապետ մը արգելք կըլլար և Աստուր պատրիարքին միջնորդությամբ թող չէր տար, որ տպարան բանար, ուստի Օրացույցեն զատ բան չէր կրնար տպել Ճեմարանի մեջ։ Ջուքուր Ջեշմե[2] խանը կը փոխադրե յուր գիրերն ու մամուլն։ Աստուր պատրիարք իմանալուն պես թարիր մը կը գրե Բ. Դուռը և կը պահանջե, որ գոցվի այդ տպարանն իրմե հրաման առած չըլլալուն համար։ Աղերսագիր կը մատուցանե Բ. Դուռն, որ պատրիարքարան կը ղրկե զինք, ըսելով, թե գնա՛, պատրիարքեն հրաման ա՛ռ։ Պատրիարքարան կերթա, և պատրիարքեն կը մերժվի։ Ամիրաները, որոնք կը ճանաչեին և կը սիրեին Մյուհենտիսյանը, դիշեր մը կը գտնվին տուն մը, ուր ներկա էր նաև պատրիարքը։ Խոսք կը բանան և կաղաչեն նորին սրբազնության, որ հաճի տպարանի արատնությունն շնորհել Մյուհենտիսյանի. պատրիարքը կը սրդողի և կսպառնա։ 1843-ին Բարիզեն Կրճիկյան Հակոբ էֆենտին կիմանա և յուր թուրք ծանոթներուն կը գրե հոս, որ աշխատին Մյուհենտիսյան տպարանի բացվելուն։ Ասոր վրա Բ. Դռնեն թաքրիր կը գրվի պատրիարքին, որ հրաման տա։ Պատրիարքը մեկդի կը նետե Բ.

Դռան բաւրիւն, ինչպես որ Բ. Դուռը կընե հիմա պատրիարքարանի բաւրիւներուն։ Այսչափ աշխատութեան ապարդիւն մնալուն վրա՝ բարեկամները կըսեն Մյուհենտիսյանի.

— Մինչև որ այս մարդը չմեռնի կամ չհրաժարի՝ դուն տպարան բանալիք չունիս։

— Երթե այս մարդը չմեռնի, ես անոթի՞ պիտի մնամ, կը պատասխանե Մյուհենտիսյան։

1844-ին կը հրաժարի Ասատուր պատրիարք, որուն կը հաջորդե Մատթեոս պատրիարք, որ վերջէն կաթողիկոս եղավ։ Ասոր օրովը բացվեցավ Մյուհենտիսյան տպարանն, որ մեծ անուն վաստկեցավ յուր տպած Օրացույցներով, Սաղմոսներով, Նարեկներով, և այլևայլ գիրքերով, Մեղուով, Ժամանակով, Մեճմուայը հավատիսով և այլն։ Գրաշարները պոչը կտրած գ, լ, ղ, շ, չ, ջ, վ, տառերը փնտռելու դժվարութենեն ազատելու համար ծոցագիրները շինեց։

Որչափ մեր ազգին՝ նույնչափ և թերևս ավելի ծառայություն մատուցած է Թուրք ազգին։ Թաալիֆ գիրը հորինեց, որով տպվեցավ տաճկերեն առաջին անգամ ռիսալիե իթիհատիյե[3] անուն տետրակը։ 1867-ին շինեց նեսիհ գիրն, որուն օրինակը տարավ մեծ եպարքոս Ալի փաշային, որ շնորհակալութեամբ ընդունելով այդ գիրերն, հայտնեց՝ թե ազգին երախտագիտությանը արժանի է։ Այս գիրով տպված է հիլյեեի հաբանի[4] անուն տետրակը։ Մյուհենտիսյան այս գիրերուն համար նվեր առավ կառավարութենե, ինչպես նաև ցմահ առնելու պայմանավ երկու հարյուր դահեկան ամսական կապվեցավ իրեն, բայց չմեռած կտրվեցավ այս թոշակն, որ չորս հինգ ամիս միայն տրվեցավ։

Գիր շինելեն, գիրք տպելեն ավելի թղթադրամի կաղապար շինած է, և թղթադրամ տպած է, և այս մասին ալ բնավ զոհողություն չէ խնայած հայրենյաց փառացը համար։ Առաջին անգամ թղթադրամը ձեռագիր էր, և ուրիշ կառավարություններու թղթադրամներուն քով շատ հարգ չուներ։ Մյուհենտիսյան ուզեց, որ մեր կառավարությունն ալ ունենա գեղեցիկ և ձևավոր թղթադրամ, ուստի 1843-ին կաղապար մը շինեց և կառավարության ներկայացուց։ Կառավարությունն առավ զայն, քննեց և հավանեցավ և հրաման տվավ, որ տպվի։ Թղթադրամները տպվիլ սկսան։ Քիչ մը ժամանակ անցնելեն ետքը հրաման տրվեցավ, որ նորեն տպվի. նորեն տպվեցավ։ Երրորդ անգամ տպվի։ Ինչո՞ւ չէ, տպվի։ Մյուհենտիսյան քաջալերվելով իրեն տրված խրախույսեն՝ ուզեց որ ավելի փառավոր թղթադրամ մը շինե։ Շաբաթ մը աշխատելեն ետքը, ուրիշ ձևով թղթադրամ մը շինեց և կառավարության ներկայացուց։

— Օ՜օո... ասոր խոսք չկա։

— Աս առաջինեն աղեկ է։

— Աս սքանչելի բան է, էֆենտի։

— Ի՞նչ կըսեք, պեյ, սըկե քիչ մը բան տպել տա՞նք։

— Հարցունելդ ավելորդ է, տպվի, էֆենտիմ, տպվի։

Նորեն կը տպվի և քանի մը ամիսեն Մյուհենտիսյան կը կանչվի։

— Սա ուրիշ ավելի աղվոր բան մը կրնա՞ս շինել։

— վաղը կը բերեմ, էֆենտի։

Հետևյալ օրն ուրիշ կաղապար մը կը տանի։

— Տեսա՞ր, իմ ուզածս ասանկ էր. սըկե տպեցեք և անունը ֆայրզըզ դրեք։

Արդատիպը կսկսի բանիլ, ամեն դառնալուն քաղաքը միլիոններու մեջ կը խղդե։

Տարի մը ետքը.

— Սա Մյուհենտիսյանը չկանչե՞ք։

— Հոս եմ, էֆենտի, հոս եմ։

— Ծուլլ մեկն ես դուն, ո՞ւր էր, մեզի նոր կաղապարներ պիտի բերեիր։

— Քովս ունիմ հատ մը... հրամմեցե՛ք, տեսե՛ք։

— Մինչև հիմա շինածներուդ ամենեն աղեկն աս է. տպեցեք ասկե անունը ֆայրզըզ դրեք։

— Շատ լավ։

Ֆայիզըզները կը տպագրվին ու քանի մը շաբաթեն ետքը, շրջաբերության կը հանվին։

Այս թուղթերեն զատ տպագրած է էսհամը ումումիեն, բահվիլաբը մյումթյազեն և ուրիշ շատ մը թղթադրամներ և արժեթուղթեր, որոնք հասարակութենե այն աստիճան սիրալիր ընդունելություն գտան, որ անոնցմե ոմանք տասներորդ և ոմանք քսաներորդ տպագրության արժանացան։ Եթե ասոնք գիրք ըլլային և օտար լեզուներու թարգմանվելին՝ մեծ վաստակ կը ձգևին։ Ձեր մտքեն ելած չէ, որ 1860-ին իյանեի ումումիե բանալով կառավարությունն ուզեց թղթադրամը վերցունել։ Օրին մեկը հայտարարություն մը հանելեն վերջը, թե կառավարությունն ա՛լ թղթադրամ չպիտի ընդունի՝ 1861-ին նոր և գեղատեսիլ թղթադրամներ հանեց։ Այս թղթադրամներն ալ Մյուհենտիսյանի գրչին արդյունքն են։ Համրելով անհնար է լմնցունել այս անձին թղթյա երկասիրություններն, որոնք այնչափ հարստացուցին և այնչափ աղքատացուցին երկիրը։ Ինքն ալ ոչ նվազ վնասվեցավ վաթսուն յոթանասուն գործավորի ամսական տալու համար, սեղանավորներեն տոկոսով դրամ վերցունելով։ Այս վնասու հետևանքն է տպարանին նախ երեսի վրա թողվիլն և ապա բոլորո-

վին գոցվիլը. թեպետև հիշյալ տպարանը, ինչպես բոլոր հայ տպարանները, չէր կարող յուր ծախքը գոցել հայերեն հրատարակություններ ի լույս ածելով... կեցցե՜ն ազգային զրականություն և անոթություն։

1874 ապրիլ 25-ին Գալաթիո մաքսատունը Վերագայի սահիմներին տպարանը մտավ փորագրության պաշտոնով, զոր մինչև այսօր կը շարունակե։

Ունի ուրիշ այլևայլ փորագրություններ, որոնց ամբողջությունն ամեն. Ա. Ներսես պատրիարքն իրմե ուզած և առած է պատրիարքարանի մեջ կախելու համար։

Երեսփոխան ընտրված ըլլալով՝ քանի մը տարիներ Ազգային ժողովներուն ներկա գտնվեցավ։ Ամեն անգամ, որ պատրիարքարանի սնտուկին վրա իրեն կարծիքը կը հարցվեր՝ կը պատասխաներ, թե թղթադրամ հանելեն ուրիշ հնարք չկա։

Այս անձը յոթանասուն տարու է այսօր, և եթե յուր արհեստը կատարելագործելու համար ունեցած փափաքին նայինք՝ դեռ յոթանասուն տարի ապրելու միտք ունի։ Տարիները երբեք չեն նվազեցուցած յուր ճարտարությունը, այսօր երեկե աղեկ կը փորե, վաղը այսօրե աղեկ պետի գծե։

Անգործ մնալե ուրիշ բանե մը չվախնար. միշտ կաշխատի և կը փափաքի, որ քանի մը ավուր մեջ Գալաթիո բոլոր տուները և խանութները գնե։

Զինքը խաբելու համար, ոչ օձի կերպարանք մտնել հարկ է, ոչ ալ աղավնիի, հանուն մարդկության կարող ես երկու տարի աշխատացունել ղինքը և չվճարել, պատրվակելով՝ թե առնելիքներ ունիմ և չեմ կարող առնել։ Այդ խոսքիդ ոչ թե միայն կը հավատա, այլ կը խղճա վրադ։ Չափազանց առատաձեռն ըլլալու թերություն ունի, և այս իսկ էր յուր նավուն ղեկը վարողը։

Եթե կուզե ոք ճանաչել այս մարդը փողոցի մեջ՝ թող աչացն առջև բերե այն մարդուն քալելն, որ տասնըհինգ տարիե ի վեր բացակա գտնվող եղբորը գալը կիմանա հանկարծ և զայն տեսնելու համար տանը ճամբան կը բռնե։ Այսչափը հերիք չէ, պիտի ըսես, պետք է որ դեմքին վրա տեղեկություն ունենաս։ Շատ լավ։ Պզտիկության ժամանակ հյուրի մը խահվե տված ատենդ չէ՞ հանդիպած երբեք, որ խահվեին գավաթը դիպվածով իյնա և խահվեն ալ հյուրին վրա թափվի։— Քանի մը անգամ հանդիպած է։— Այն ժամուն հայրդ բարկությամբ ծուռ ծուռ երեսդ չէ՞ նայածե։— Նայած է։— Ահա այն ժամուն ի՞նչ դեմք ունեցար դուն՝ նույնն ունի այսօր Հովհաննես էֆենտի Մյուհենտիսյան։

ՆԵՐՍԵՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

Պղտտարքե՛, քանի մը վայրկյանի համար գրիչդ փոխ կուտա՞ս ինձի գրելու համար կյանքն այն քաջ հովվին, որ յուր անձն յուր ոչխարներուն վրա դրած է։ Երևելի՛դ կենսագիր, դու Զուգակշիռներուդ մեջ անմահացար, և ես Ջոջերուս մեջ պիտի բաղվիմ պսակ հյուսել սորվեցունելով իմ անառակ գրիչիս, որ մոլորություններու առջև սրատես և հեռատես՝ իսկ առաքինություններու առջև կույր ըլլալու սովորություն ունի։ Բայց պիտի կրնա՞ս արդյոք այս փոխատվությունն ընել ինձ, թե պիտի ճամբես ինձ ըսելով.

— Ինչ որ Բնությունը չէ շնորհած քեզ՝ Պղտտարքոս չէ կարող փոխ տալ։

Դժբախտաբար այս վերջինը հավանական կը թվի ինձ, և ես իմ ձեռնեբովս իմ դերեզմանս փորել չուզենալով՝ ամենապատիվ սրբազան պատրիարք հոր կը դիմեմ, ծունր կը չոքիմ նորին սրբազնության առջև և կառաջարկեմ.

«Աշակերտիդ սիրույն համար, երգիծաբանության հառաջադիմության սիրույն համար քանի մը փոքր թերություններ ունեցեք, որ իմ գրիչիս սիրտն ալ չկոտրի»։

Նորին սրբազնությունն այս առաջարկությունս կընդունի, և ես ուրախ սրտով ետ կը դառնամ և կսկսիմ գրել։

Շնորհքն աստուծո և ընտրությամբ Երեսփոխանական ժողովո, Հիսուսի Քրիստոսի ծառա, ամենապատիվ Ներսես Պատրիարք Վարժապետյան ծնած է Խասգյուղ 1837 Հունվար 28-ին։ Հայրը պարկեշտ բյուլպենա վաճառող մ'էր։ Մեծ հայրն էր հռչակավոր տիրացու Պողոս ձայնավոր վարժապետ, ուսկից ժառանգած է Վարժապետյան մականունը։ Ոչ ոք ավելի լավ գործածած է յուր հորեն մնացած ժառանգությունը։ Ծննդենեն քանի մը օր ետքը կատարվեցավ մկրտության հանդեսը, և երախային անունը Պողոս դրվեցավ։

Հազիվ երկու տարեկան էր և սկսած էր վանկեր իրարու հետ կապելով բառեր արտասանել, երբ մեծ պահոց առաջին օրը եկեղեցի տարվեցավ։ Մանուկն երբ տեսավ, որ ժողովուրդը կռնակը խորանին տված գավիթը կը դիտե՝ սկսավ խնդալ։ Մայրն յուր զավակին բարձրաձայն խնդալն արգիլելու համար՝ մեծ նեղությամբ հասկցուց անոր, որ Հրաժարիմ կարդացված ատեն ժողովուրդն այդ դիրքին մեջ դտնվելու է։ Այս հրաժարիմ բառը լավ մը տպավորվեցավ մանկան մտքին մեջ և արձանագրվեցավ լեզվին վրա. տարին եթե հայրյուր անգամ եկեղեցի երթար՝ յոթանասուն ութ անգամ կռնակը խորանին կուտար և քսաներկու անգամ խորանին կը դարձուներ։

Նորին սրբազնությունն յուր առաջին ուսումն առավ Խասգյուղի Ներսեսյան վարժարանին մեջ, ուր յուր բարի վարքն, սրամտությունն և ժրաջանությունը հայտնող վկայականներով հարստացավ։

1855-ին մասնավոր դասախոսության պաշտոնով Ադրիանուպոլիս գնաց։ Քաղաքին ազգայինները վինքը սիրելով, հոն Արշակունյան մայր վարժարանին մեջ դասատվության հրավիրեցին։ Հրավերն ընդունվեցավ, և նորին սրբազնությունն հետևյալ օրը Արշակունյան վարժարանը մտավ և քննելու համար եկավ կայնեցավ առաջին կարգի աշակերտներուն առջև, որոնց մեջ կը գտնվեր նաև այս տողերը գրողը։ Մեծ փառք ու պատիվ է ինձի նորին սրբազնության պես դասատու մը ունեցած ըլլալս, սակայն չեմ կարծեր՝ թե սրբազան պատրիարք ալ իրեն պարծանք համարի ինձի պես աշակերտ մը ունեցած ըլլալը... մեծ մարդեր կրնար անոր փառքը կազմել։ Որչափ ատեն, որ մենց վարժարանին մեջ՝ անխոնջ ջանյուք աշխատեցավ և մեծ հոգ տարավ վարժարանի բարեկարգությանը։ Ապերախտություն ըրած կըլլամ՝ եթե հոս չհայտնեմ, որ վարժարանի մեջ շրջանս ավարտելն ետքը՝ նորին սրբազնությունն անձամբ տարավ զիս քաղաքին հունաց Մայր վարժարանը, ուր հույն լեզվին դժվարությունը միայն սորվելով՝ տարին մը դուրս ելա անկից։

1858-ին, օր մը, մեկեն ի մեկ ղրույց մը տարածվեցավ քաղաքին մեջ, որ Պողոս պատվելին հագուստը պիտի փոխե։ Եվ արդարև նորին սրբազնությունը դիմած էր քաղաքին առաջնորդ Արիստակես եպիսկոպոսին և խնդրած էր, որ զինքն անպատճառ և անմիջապես վարդապետ ձեռնադրե, սպառնալով, որ եթե յուր խնդիրքը չկատարվեր՝ քաղաքեն պիտի մեկներ։ Արիստակես եպիսկոպոսն, որ վերջեն տեղապահ եղավ, պալատի մեջ աղդին մեկ մեծ իրավունքը պաշտպանեց և վերջը խեղճության մեջ մեռավ, առանց պատրիարքարանեն հրաման խնդրելու և ընդունելու, ստիպվեցավ վարդապետ ձեռնադրել Պողոս պատվելին, որ եղավ Ներսես վարդապետ։

1860-ին Մատթեոս կաթողիկոսին հրամանավ Ռումանիո և Ավստրիո կողմերն այցելու գնաց, առանց յուր մականունը փոխելու, ոչ ալ Պոլսո լրագիրներուն իրեն համար գովաստանական նամակներ գրեց և զանոնք ուրիշներու ստորագրել տալով՝ խմբագիրներու ղրկեց։ Նույն տարվույն վերջերը Խասգյուղի քարոզիչ անվանվեցավ։

1861-ին Կրոնական ժողովո ատենապետ ընտրվեցավ, և ինչպես յուր պաշտոնը կը պահանջեր, պաշտպանեց կրոնքը Քրիստոսի եկեղեցվո հակառակորդներուն դեմ։

1862-ին քննության պաշտոնով Զեյթուն ղրկվեցավ, ուր Սսո կաթողիկոսեն եպիսկոպոս օծվելով Պոլիս դարձավ։

1865-ին Մկրտիչ եպիսկոպոսի, այժմյան Սսո կաթողիկոս, խնդրույն համար Եգիպտոս քննիչ գնաց, և հոն քանի մը կարևոր կտակներ կարգադրելեն ետքը՝ Պոլիս եկավ և Շահ Նազար-Նուսլարյան վարժարանը բացավ։ Նույն

տարին էր, որ սահմանադրության վերաքննության Մասնաժողովին անդամ եղավ։

1866-ին Նորատունկյան Հակոբ և Նալբուդյան Աբեթիկ էֆենտիներու հետ կաթողիկոսի ընտրության համար էջմիածին գնաց։ Վեհափառ Գևորգ կաթողիկոսն յուր բռնած ընթացքովն ազեկ համոզեց զմեզ, որ սրբազան պատրիարքն առաջին կարգի ընտրելի մ'է, բայց նորին սրբազնության գժվարը չգա, ընտրող չէ։

1867-ին երկրորդ անդամ ատենապետ ընտրվեցավ Կրոնական ժողովո։ Մաքուր խղճով վարեց այս պաշտոնն ալ, առանց դուրս ելնելու այն սահմանեն, զոր կրոնքը գծած է։

1868-ին ժողովուրդն որ մի քանի տարին անդամ մը պատրիարք փոխելու սովորություն ունի, եկեղեցիներուն մեջ սկսած էր պոռալ, որ Պողոս պատրիարքին անունը չհիշվի։ Խասգյուղի եկեղեցվույն մեջ ալ քանի մը անձեր չհիշվի ըսած ըլլալնուն համար՝ կառավարության կողմն կը բանտարկվին։ Գիշեր մը Խասգյուղի եկեղեցվույն զանգակը կը հնչե. ամբոխը նորին սրբազնության տունը կը խռնի և յուր քարոզիչն եկեղեցի տանելով՝ խորանին վրա կը հանե և կը ստիպե, որ այդ անձերը բանտարկել տվողին անունը հայտնե։

— Ձեմ գիտեր, կը պատասխանե նորին սրբազնությունը։

— Գիտեք, շատ ազեկ գիտեք և պետք է, որ բանտարկել տվողն մեզի հանչցունեք, կը պոռա ամբոխը։

— Մ'ի ստիպեք զիս, չեմ գիտեր։

— Եթե չեք գիտեր, պետք է որ գիտնաք և մեզի ըսեք։

— Կաղաչեմ...

— Գիտե՛ք, սրբազան, գիտեք...

— Եթե չեք գիտեր, երդում մը ըրեք չգիտնալուդ վրա։

Ամբոխը սկիհն յուր քարոզիչին կերկնցնե, որ առնե երդում ընե, և նորին սրբազնությունը սկիհն առնելով կերդնու, որ չհիշվի պոռացողներուն բանտարկված ըլլալեն բնավ տեղեկություն չունի։

— Շնորհակալ ենք, սկիհը մի՛ ձգեր. դեռ գործ ունինք...

— Ինչո՞ւ։

— Երդում մ'ալ ըրե, որ ասկե վերջը հոս հիշել չպիտի տաս Պողոս պատրիարքը։

Այս առաջարկության վրա նորին սրբազնությունը կը մարի և ամբոխը կը ցրվի։

1868-ին պատրիարք պիտի ըլլար, բայց Խորեն արքեպիսկոպոս Լուսինյան, այն ատեն Գալֆայան, քանի մը կրոնավորներ համոզելով անոնցմե ատրաղրություն առած ու էջմիածին հեռագրած էր, որ Սսո եպիսկոպոս մը պատ-

թիարքական աթոռին ընտրելի կը ներկայացվի։ Խորեն արքեպիսկոպոսին այս հեռագիրն երևան կելնե ու շատ մը վիճաբանություններու տեղի տալե ետև, վերջապես Խրիմյան կընտրվի պատրիարք, թեպետև մյուս կողմեն Վարժապետյանն ալ կը հայտներ, թե ինք սահմանադրության պահանջած տարիքն չուներ պատրիարքական աթոռին վրա բազմելու համար, և, կերպով մը, յուր հայրը կամբաստաներ՝ իբրև միակ պատճառ՝ որով ազգը կը զրկվեր նույն թվականին Վարժապետյանն իրեն պատրիարք ունենալե։

1869-ին երրորդ անգամ Կրոնական ժողովո ատենապետության կոչվեցավ, և այս բավական է ցույց տալ՝ թե նորին սրբազնությունն որչափ խոհականությամբ կը վարեր այս պաշտոնը։

1870-ին Նիկոմիդիո վիճակին առաջնորդ ընտրվեցավ և առանց դիտողություն ընելու, ընդունեց այս պաշտոնն և գնաց հովվել դինքը հրավիրող ժողովուրդը։ Շատ մը առաջնորդներ եթե տեղ մը երթան՝ կաշխատին հոն գտնված վարժարանները գոցել կամ եկեղեցվո բակը ավազաններ շինել տալով՝ վարժարաններու հասույթը ծառերու և ծաղիկներու հատկացնել։ Նորին սրբազնությունն իրեն պաշտոնատեղին երթալուն պես՝ ամեն տեղ վարժարաններ բանալու ետևե եղավ, ժողովրդյան վրա ծանրացած տուրքեն երկու հարյուր հազար դահեկան զեղչել տվավ Մահմուտ Նեսիմ փաշայի օրով, և այս անձնանվեր աշխատությամբն յուր ժողովրդյան ոչ միայն սիրույն, այլ նաև երախտագիտությանն ալ արժանացավ։ Շատ կրոնավորներ նովիվ բաշ դնե զանձն յուր ի վերա ոչխատաց յուրոցը սխալ հասկնալով կելնեն իրենց ժողովրդյան վրա կը նստին և անոնց անտանելի բեռ մը կըլլան. Վարժապետյան աշխատած է միշտ յուր արածած հոտին լուծը թեթևցնելու։

1872-ին՝ Գևորգ Կաթողիկոսը ճամբու ծախքը ղրկելով, էջմիածին հրավիրեց Վարժապետյան, որ առանց դիտողություն ընելու, ելավ գնաց։ Հոն էջմիածնա ուխտավրն ալ ստորագրեց և էջմիածնա եպիսկոպոս ճանչցվեցավ։ Այս թվականին, սահմանադրության պահանջած տարիքն ուներ պատրիարքության աթոռին վրա բազմելու համար, և յուր հակառակորդն բարկությամբ կը դիտեր բարձումն այն երկու պատճառներուն՝ որովք Ներսես զրկված էր քանի մը տարի առաջ պատրիարքության գահուն վրա բարձրանալե։

Խրիմյանի պատրիարքության վրա երեք չորս տարիներ անցան, և ժողովուրդը սկսավ անհանգիստ ըլլալ նոր պատրիարք մը չընտրելուն համար։ Փոթորիկ մը բրդավ։— Խրիմյանի անունը չհիշվի։— Ոչ, չհիշվի։— Չպիտի հիշվի։ Եվ Խրիմյան հրաժարեցավ։

1874 փետրվար ամսույն մեջ տեղապահ կարգվեցավ ամեն. Ներսես Վարժապետյան, և ապրիլի մեջ պատրիարք ընտրվեցավ։

Այն օրն, ուր սահմանադրության վրա ուխտ և երդում ընելու համար

երեսփոխանական ժողովույն ներկայացավ՝ թուղթ մը կարդաց, որուն մեջ կը հայտներ, թե ինքն տակավ և անկարող ըլլալով՝ չպիտի կրնար այս ծանր պաշտոնը վարել, և կը խնդրեր, որ կարող և պատրիարքության փափաքող մեկն ընտրեն պատրիարք։ Այս թուղթը կարդալեն ետքը, սահմանադրության պահանջած երդումն և ուխտն ընելով՝ պատրիարք եղավ։ Արդեն պատրիարք չեղած՝ նորին սրբազնության հակառակ թերթերն, որ ուրիշ ընտրելի մ'ունեին, կը հրատարակեին, թե Ներսես եպիսկոպոս լացած է երբ խնացած է իրեն պատրիարք ընտրվելիքը, և այս տողերը գրողը Թատրոնի մեջ, որուն խմբագիրոնօրհնն էր, կը պատասխաներ այն թերություն, ըսելով, որ Ներսես եպիսկոպոսին արտասուքը հարս ըլլող աղջիկներուն արտասուքին կը նմանին, որոնց պատճառավ բնավ հարսնիք մը ետ մնացած չէ։

Պատրիարքական աթոռին վրա նստելուն պես՝ նորին սրբազնության առաջին գործն եղավ հրաժարական տալ։ Քաջ համոզված ըլլալով, որ այս ժողովուրդն միշտ նոր պատրիարք ունենալու փառասիրություն — չըսեմ մոլություն — ունի, հոգ մի՛ ըներ, ըսավ մտքեն, ես ձեզի ամեն ամսու գլխուն նոր պատրիարք մը պիտի ընտրել տամ։ Այս ծրագիրն պատրաստելով՝ ամիսս մը ետքը բացավ յուր հրաժարականի խոշոր տոպրակն և հատ մը նետեց երեսփոխանության քթին բերնին։ Երկու շաբաթ անցավ, և երբ տեսավ նորին սրբազնությունն, որ աջակողմյան և ձախակողմյան երեսփոխաններուն մեջ կիրքն ու ատելությունը մարած չէր՝ հրաժարական մ'ալ տվավ, որ գործյալ չընդունվեցավ։ Իսկ երբ տեսավ, որ յուր հրաժարականներն չեն ընդունվիր և չպիտի ընդունվին՝ սկսավ շաբաթն անգամ մը հրաժարական տալ և ժողովուրդն, որ երկու տարին անգամ մը նոր պատրիարք կուզեր, գոհ եղավ այս հրաժարականներեն, որոնց շնորհիվ երկու օրը անգամ մը նոր պատրիարք ունենալու բախտը կը վայելեր։

Այդ հրաժարականներով շատ գործեր տեսավ երեսփոխանության մեջ. երկու կուսակցություններն վարժեցուց միայն ազգին շահերուն համար վիճաբանելու։ Ղալաթիո օճախը քանդեց, և երբեմն ալ այնպիսի պարագաներու մեջ տվավ հրաժարականներ, զորս ճշմարիտ, անձնանվեր և քաջ պատրիարքներ միայն կրնան տալ։ Եթե այդ հրաժարականները չըլլային՝ ազգն երկու երեք պատրիարք ևս ընտրելու հարկին մեջ պիտի գտնվեր, և, ո՛վ գիտե, ի՛նչ տապնապալից օրեր պիտի ունենար։ Զմոռնանք խոստովանիլ, որ այդ հրաժարականներեն մեկ քանին յուր անձնական տկարության արդյունքն էին, բայց երեսփոխանական ժողովն մերժեց զանոնք և միշտ պիտի մերժե, վասն զի ազգն այսօր Վարժապետյանի արժանավոր հաջորդ մեկը չունի այդ պաշտոնին համար։ Սա ինքն է, որ հայկական խնդիրն հարույց և մինչև այսօր անձնանվիրությամբ կաշխատի յուր ազգին կացությունը բարվոքելու համար։ Ասոր

օրովն է, որ պատրիարքարանն հարաբերութեան մէջ մտալ դեսպանատուններուն հետ, և թէ որ ամեն պատրիարքներ Ներսեսի պես աշխատած ըլլային՝ ազգն այսօր այսչափ տառապանաց մատնված տեսնելու դժբախտութեանն չէինք ունենար — թեպետև ժամանակն ալ բավական օգնեց իրեն։— Պատմութեանն մեր ազգին համար անմահացուցած է անոր անունը, և մենք հարմար չենք դատեր գրել այն ամեն գործերն, զորս գործած է և դեռ կը գործե։ Շատերը կը կարծեն, որ սահմանադրական տարեգլխուն՝ երեսփոխանական ժողովը բացման առթիվ խոսելիք ճառին մէջ չպիտի մոռնա հրաժարական տալ։ Այս շատերուն կարծիքը մեր հավատքն է։

Խիստ քիչ թերութիւններ ունի, և ան ալ իմ գրիչիս սիրտը չկոտրելու համար, հակառակ պատրիարքութեան պաշտոնին, ուր ամեն օր առիթ կը ներկայանա սխալներ գործելու։ Սրբազան պատրիարքն իրեն թշնամի կը նկատե այն ամեն թերթն, որուն խմբագիրն յուր մեկ արարքն կը քննադատե։ Այսպես իրեն թշնամի նկատելով դադրել տվավ Թատրոնն, որ հանդգնած էր նորին սրբազնութեան մեկ շրջաբերականը հարվածել. այսպես խափանել տվավ Ասիան, որ կրոնավորի մը անբարոյականութիւնը կը ձագկեր։ Սակայն մյուս կողմեն ալ իրեն դեմ խոսող դադրած լրագիրներուն հրատարակման կաշխատեր։ Եթէ բարկանա և մեկուն թերթ ապտակ մը զարնե՝ վայրկյան մը ետքը այդ անձին երեսը կը շոյե և բժիշկներ կանչել կուտա, որ դան այդ անձին երեսը քննեն և պետք եղած դեղերը անմիջապես տան։ Ներողամիտ և վեհանձն է, իրեն թշնամվուն անգամ բարիք ըրած ժամանակը մոռնել չանցուներ, որ ինձի ըրած թշնամութեան փոխարեն իրեն բարիք կընեմ։

Իբրև աւենաբան արժանի է այն համբավուն, զոր իրավամբ կը վայելե, մանավանդ դամբանականի մեջ, զոր շատ չեմ սիրեր ես։ Դամբանականի մասին մեր կարծիքն ուրիշի մը կենսագրության մեջ գրած ենք, և հոս նորեն կրկնելու հարկ չենք տեսներ։

Նորին սրբազնութեան խոսակցությունն անուշ է և իրեն ներկայացողներուն համակրությունը կը գրավե։ Խիստ խոնարհ է և ուրիշին բարիք ընելու համար չքաշվիր օրը հազար հանձնարարական գրելու և կամ բերնով մեկն ուրիշի հանձնարարելու։ Յուր սենյակին մեջ միշտ անկյունը կը նստի, առջև ունենալով փոքրիկ արկղ մը, որուն մեջ ժամանակավ պատրիարքներն ոսկի կը դնեին, և ուր նորին սրբազնութեանը դիվանագիտական թուղթեր կը պահե, զորս երբեմն կը հանե, կը կարդա և կը մխիթարվի։

Ամենապատիվ Ներսես պատրիարք վայելուչ և գեղեցիկ մարդ մ'է։ Յուր դեմքը՝ տեսնողն կը կարծե տեսնել Բենիամինն[1], որ կես ճամբեն ետ կը դառնա Եգիպտոս երթալու և իր անմեղությունն հայտնելու համար։

ԿԱՐԱՊԵՏ ՊԵՅ ԵՐԵՄՅԱՆ

Կարապետ պեյ Երամյան ծնած է 1830-ին։ Կազմով բարեձև, սև աչերով և սև ընքվիներով մարդ մ'է։

Մզկիթ մը շինել տված է։

ՍԱՐԳԻՍ ՊԵՅ ՊԱԼՅԱՆ

Ներելի՞ է արդյոք հեգնական գրիչի մը հանդգնիլ այսպիսի հանճարավոր և հռչակավոր անձի մը փառքը գրելու՝ զոր կը պատմեն արդեն երեսունեն ավելի հատորներ, որք մեր հրատարակած գիրքերուն պես թղթակազմ չեն, ոչ ալ լաթակազմ, այլ քարակազմ են։ Ա՛րդ, երբ քարերը կազդակեն, ի՞նչ հարկ կա, որ տակար փետուր մը այդ հոյակապ շենքերուն շուրջը տարուբերի։

Փետուրը, պիտի ըսեք, որչափ ալ տկար ըլլա, ժամանակին հոսանքին առջև քարե ավելի կը դիմանա, ուստի և պետք է, որ քարերը քիչ մը լռեն և գրիչը խոսի։ Կը հավանիմ, բայց իմ գրիչս այդ քարերուն պես պիտի կրնա՞ խոսիլ։ Այդ շենքերը խիստ բարձր են և իմ գրիչս, որուն մեկ թևին փետուրները կտրած եմ, չէ կարող այնչափ բարձր թռիչ առնուլ, և քանի անգամ, որ բարձրանալ փորձե՝ թավալգլոր գետինը պիտի իյնա՝ և թերևս մյուս թևն ալ պիտի կոտրե։

Ուրիշներու պես, ես ալ համոզված էի, որ խոսքը բառերե կը շինվի, իսկ երբ ակնարկ մը կընեմ այդ հոյակապ շենքերուն վրա, զորս բարձրացուցած է նորին վսեմությունը՝ կըսեմ. խոսքը բառերն կը շինվի։ Եվ ի՞նչ դրությամբ և արագությամբ...։ Ես ալ երբեմն բառեր կ'առնեմ, կը փոխեմ, կը տեղավորեմ, նորեն կը հանեմ, տեղը ուրիշ բառ մը կը դնեմ և երբ կը կարծեմ, թե գեղեցիկ խոսք մը շինած եմ՝ կը տեսնեմ, որ նորին վսեմության շինած մեկ հատիկ խոսքը իմ շինած խոսքես շատ ավելի գեղեցիկ և վսեմ է։ Սակայն իմ գրիչս որչափ ալ անզոր ըլլա՝ գոնե անկարող է նսեմացունել նորին վսեմության համբավն, որ, ինչպես կըսեն խմբագիր մը, քարե շինված է։ Եվ այս իսկ է, որ կը քաջալերե զիս, յուր կյանքը գրելու։

Սարգիս պեյ Պալյան Բեշիկթաշ ծնած է 1835 փետրվար 17-ին։ Բնությունն պինք օժտած էր տաղանդով, աղնվությամբ և գեղեցկությամբ։ Այնպիսի համակրական դեմք մը ուներ, որ համբույրներով կը լենար։ Զվարթ էր, և չէր այն մանուկներեն, որք ծնելուն պես կսկսին լալ, և զորս բնությունը կարծես չախելով աշխարհ ղրկած է։

1843-ին վերջերը, առաջին անգամ ըլլալով, Բարիզ դնաց և երկու տարվա չափ հոն մնալեն ետքը՝ Կ. Պոլիս վերադարձավ։

1847-ին երկրորդ անգամ գնաց Բարիզ, որ այն ատեն պաշարման վիճակի մեջ էր։ Հոն Սենտ Պառպի վարժարանը մտավ և յուր շրջանն հաջողությամբ լրացնելեն ետքը՝ էֆոլ Սանբրալ դրվեցավ, ուր յուր սրամտության շնորհիվ քիչ ժամանակի մեջ մեծ հառաջդիմություն ընելով՝ էֆոլ տե Պոզար մտավ ուր ամբողջացուց արհեստն ու գիտությունը։

1855-ին Պոլիս վերադարձավ, ուր յուր երջանկահիշատակ հորը քովը, սկսավ յուր հանճարը ցույց տալ արքունական շինություններու մեջ։

1866-ին Կարապետ Քալֆա վախճանեցավ, և դրախտաբնակ Սուլթան Ապտ-Յուլ-Ազիզ, որ ինչպես Կարապետ Քալֆային բարեմասնությունները, նույնպես ալ Սարգիս պեյին տաղանդը լավ կը ճանաչեր՝ կայսերական պալատին և շինություններու ճարտարապետ անվանեց նորին վսեմություն։

Այս բարձր պաշտոնին գլուխն անցնելուն պես, փորձով ցույց տվավ նորին վսեմություն, որ Սուլթան Ազիզ լավագույն ընտրություն մը չէր կրնար ընել։ Մենք փոխանակ նորին վսեմության երկար բարակ դովեստներ կարդալու՝ կը շատանանք անոր գործերը հոս թվելով.

Պեյլերպեյի նոր պալատը,
Զրաղանի նոր պալատը,
Պեյքոզ, Բոքաթի քյոշքը,
Հեքիմ Պաշի Զիֆթլիկի քյոշքը,
Ալեմ Տաղի քյոշքը,
Գալենտերին քյոշքը,
Յըլտըզի նոր քյոշքը,
Պեյքոզի էոժենի կայսրուհվույն համար շինված շենքը,
Քյաղըտխանեի պալատը,
Գանտիլլի, սուլթաններու պալատը,
Աք Սարայի մզկիթը,
Կյումյուշ Սույի գորանոցը,
Ղալաթա Սերայի գալրոցը,
Քյաղըտխանեի մզկիթը,
Վալիտե Պաղը քյոշքը,
Այազ Աղայի քյոշքը,
Պալ Մոմոի չիֆթլիկը,
Զատըր քյոշքը,
Զըրաղանի պահականոցը,
Թուփ Գարուի քյոշքը,

Քյուչուկ Չեքմեճեի քյոշքը,
Իզնիմիտ, սուլթանի ագարակին մեջ շինած գեղջկական չենքը,
Պեշիկթաշի գալրոցը,
Մաչքայի զինանոցը,
Մաչքայի գորանոցն և պահականոցը,
Ջինճիրլի Քույուի քյոշքը,
Պեշիկթաշի մեջ թաղ մը, կես փիլոմետրո երկայնության վրա[1]։

Այս և յուր շինած ուրիշ քանի մը շենքերն այնչափ արհեստով և գիտությամբ կառուցված են, որ զանոնք գիտողը կը հիանա և ինքն իրեն կը հարցունի՝ արդյոք Բարիզե՞ն բերել տրված են այս շենքերը, նման այն մարդուն, որ, չդիտեմ ո՛ւր, գեղեցիկ շենք մը տեսնելով՝ քովինները ուղարկած է, թե նվրոպայի մե՞ջ շինված է այս։

Առիթը կարծես միշտ դժվարություններ հարուցած է նորին վսեմության, որ յուր հանճարովն ամեն դժվարություններու հաղթած է։ Քյաղըտխանեի պալատն՝ որ երկու հարյուր կանդունի չափ երկայնություն և վաթսուն կանդունի չափ լայնություն ունի, ձմեռվան եղանակի մեջ ջուր կը կոխե. և նորին վսեմությունը առանց կարասիքը մեջեն հանելու պալատն մեկ մերթու բարձրությամբ վեր կառնե։ Արնավուտ գյուղի Սուլթան սերայի պատը ճեղքվելով դեպի ծով կը քալեր, նորին վսեմությունը թող չտվավ և պատը սոխվելեցավ հնազանդիլ։ Նմանապես Զրաղանի պալատին քյոշքը, որ դեպի ծով հառաջ կը քալեր՝ անոր հրամանավն սոխվելեցավ դառնալ առջի տեղը։ Արքայաբնակ Սուլթան Մեջիտի հետ երբ Սելանիկ գնաց, գիշերվան մը մեջ շինեց հոն մարմարիոնե ավազան մը, Պեշշրնար, ուր նորին վսեմությունն ընդունեց քաղաքի երևելիները։ Միայն մեր մեջ չէ, որ մեծ հմբավ կը վայելե այս հանճարն, Եվրոպայի մեջ իսկ կը ճանաչեն անոր հարգն։ Բարիզ հրատարակվող Լը մոնա իլյուսթրե անուն հանդեսն նորին վսեմության պատկերը հրատարակելով՝ հետևյալ տողերը կը գրե.

«Երևելի ճամբորդներ, որոնք դեռ նոր այցելած են Կ. Պոլսո քաղաքը՝ կը հայտնեն մեզ այն տպավորությունները, զորս իրենց վրա ներգործած են արհեստով և գիտությամբ բարձրացած այն հոյակապ շենքերն ու պալատները, որոնք Վոսփորի երկու ափերը կը զարդարեն։ Սքանչացած են իմանալով, որ այս հրաշալիքները սուլթանին հռչակավոր ճարտարապետ վսեմ. Սարգիս պեյ Պալյանի գործն են։

«Այս տաղանդավոր անձն ամենեն ավելի երևելի ընողն է այն անհավատալի արագությունն, որով հոյակապ շենքեր կը կանգնե։ Այսպես Պեյլերպեյի պալատն, որ մեր Նուվել օբեռային պես փառավոր և մեծ է, երկու տարվան մեջ շինվեցավ։ Յըլտըզի քյոշքը, որ կոփածո քարերե և մարմարիոնե շինված

գողտրիկ գործ մ'է, և որ մեր Փիլիորեմ նասիոնալի մեծութիւնն ունի, վեց ամիսեն քիչ ժամանակի մէջ շինվեցավ։

«Արագութեամբ գործելու հետ, նորին վսեմութիւնն ունի տեղական պահանջումներուն հարմար տնտեսագիտական և վարչական այնպիսի ձիրքեր, որոնց շնորհիվ բոլոր այս շենքերը մեկ երրորդով կանգնվեցան այն գումարեն, զոր մեր հասարակաց գանձը վճարած է նմանօրինակ շենքերու համար։

«Հետզհետե աստիճանե աստիճան բարձրանալով՝ այսօր կառավարութեյան աստիճաններեն բարձրագույնն ունի, և բոլոր վեհապետներն, որ Պոլիս գացած են, փութացած են պատվանշաններով զարդարել անոր լայն կուրծքը և առատորեն նվերներ ընել անոր։

«Քաղցր վարմունքն, աղնվութիւնը, մարդասիրութիւնն և ուրիշ բարեմասնութիւնները տաղանդին հետ միանալով՝ նորին վսեմութիւնը ճանչցողներուն համակրութիւնը կը գրավեն։ Յուր դիմաբարութիւնն և հյուրասիրութիւնն ոչ նվաստ գովեստներու արժանի են։

«Ամենի մեծ հաճութեյամբ կը հրատարակենք յուր պատկերն անոր համար, որ նորին վսեմութիւնը Ֆրանսիայի մէջ առած է առաջին ծանոթութիւններն արվեստին՝ զոր այնչափ բարձրացուցած է Թուրքիո մէջ»։

Ջանց կընենք հոս հիշատակելե քանի մը տարիներ առաջ մայրաքաղաքիս մէջ հրատարակված Ռըվյու ատ Քոնսթանթինոբլ անուն հանդեսին գրած տողերն, որոնք նորին վսեմութեյան տաղանդը կը հռչակեն. զանց կընենք, վասն զի յուր գործերն պետք չունին գովեստի։ Թվով խիստ քիչ են մեր ազգին մէջ այսպիսի մարդեր, որոնք իրավամբ իրենց ազգին փառքն ու պարծանքն են։ Արդարև շատ են, որ համբավ ունին, այլ քիչ են, որ անոր արժանի ըլլան։ Մարդս հարկ է, որ ինք ունենա համբավ. ուրիշե ծախու առնված համբավին պես անարգ բան չկա։ Մին ազգասեր մը ողորմութիւն տված ժամանակը կուզե, որ բոլոր աշխարհը տեսնե, և թերևս կը սրդողի, թե ինչո՛ւ Աժանս հավասի գործակալութիւնն հեռագիր չքաշեր Եվրոպա՝ հայտնելով, թե այսինչ մարդն մուրացկանի մը քան փարա տված այսօր։ Ուրիշ մը, որ բորբոսնած ոսկիներ ունի, կը հանե հինգ ոսկի միայն կուտա սովյալներու Հանձնաժողովին և կը պնդե, որ ազգին մէջ իրմե ավելի առատաձեռն մարդ չկա։ Սահմանափակ մտքի տեր մեկը հրատարակութիւն մը կընե, և կսկսի աղաչել յուր բարեկամներուն, որ պետք եղած գովեստը չզլանան յուր գրքին, որ ամեն բանի արժանի է, բացի գովեստե։ Ուրիշ մը սանդուխե մը առանց իյնալու իջած ըլլալուն համար, մարմնամարզութեյան դասատու ըլլալ կուզե։ Շատերը համբավույն եռևեն կը վազեն և այս պատճառավ կը փախցունեն համբավն, որ իր եռևեն վազողը չճանաչելով՝ կը վախնա ու կը փախչի։ Ունի՞ս հանճար կամ առաքինութիւն, համբավն եռևեդ կուգա, և որչափ վռնտես՝ այնչափ

քեզմե չբաժնվիր։ Վռնտեցեք ուրեմն սա համբավն քիչ մը առեն, և հետևեցեք այդ անձին, որու կյանքը կը կարդաք։

Միայն ճարտարապետութեյան ասպարեզին մէջ չէ, որ յուր գործերը հաջողութեյամբ պսակված են, ինքը որչափ ճարտարապետ, նույնչափ ալ մեքենագետ է. ինչպես քարերն յուր հրամանով շարվելով ամենուն հիացումը կը գրավեն, այնպես ալ երկաթներն իրարու մեջեն անցնելով՝ ոտի կառնեն և անուս մարդերու պարծենալով կըսեն. մենք ձեզմե ավելի օգտակար ենք աշխարհին։ Շինած ունի բամբակագործական մեքենա մը, որուն պատկերը հեղինակին անվան հետ տպված է Ամենկոյի մեջ, որ մեքենաներու և մեքենագետներու վրա խոսող հանդես մ'է։ Հիշյալ մեքենային համար արտոնագիր տրված է նորին վսեմութեյան։ Քանի մը տարեն ի վեր կաշխատի նոր կաթսա մը շինել, որ քիչ հանքածուխով կարենա տաքնալ։ Եթե այս գործն ի գլուխ ելնե, մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլա երկրիս շոգենավերու ընկերութիւններուն, մանավանդ ճամբորդներուն, որոնք երբեմն օրերով կսպասեն, որ նավապետն քաղաքե մը ածուխ գտնե և ճամբան շարունակե։ Արդյոք որչափ օրհնութիւններ պիտի առնե խոպյուղի շոգենավերն, որուն մեքենան ձմեռ առեն, օր մը հանկարծ կայնեցավ, և երբ պատճառը փնտռվեցավ՝ հասկցվեցավ, որ յուրտեն ջուրը սառած էր կաթսային մեջ։

Տան մեջ ունի աշխատարան մը, որ լի է բնագիտութեյան և տարրալուծական գործիքներով։ Շարունակ հոն կաշխատի երկու երեք տարիներե ի վեր և բնագիտական ու տարրալուծական փորձերուն կը պարապի։

Թողունք նորին վսեմութեյան աշխատիլ յուր սենյակին մեջ, և մենք քիչ մը դուրս ելնենք։ Կուզե՞ք քիչ մը դեպի Պառնաս քալել, ահա քնար ի ձեռին մեր դեմը կելնե այն անձը, զոր քիչ մը առաջ ճարտարապետ ճանչցանք, վերջը մեքենագետ, քիչ մը եռքը բնագետ և քիմիագետ։ Ի՞նչ գործ ունի Պառնասա ճամբուն վրա. արդյոք պալա՞տ մը շինելու համար կանչված է հոն։ Հավանական է։ Քնար մը ունի քովն, այդ որո՞ւն է, ուսկի՞ց առած է։ Ապողոնեն խնդրած և առած է, բարեկամ։ Պիտի զարմանաս անշուշտ երբ ըսեմ, որ Մայր Արաքսիին սրտառուչ եղանակն այդ քնարին պարտավոր ենք։ Ավելորդ է հոս երկարորեն գրել այն եղանակին վրա, որ այսօր ամեն հայու բերանն է. սակայն պետք է խոստովանիլ, որ ոտանավորին ոգվույն համապատասխանող եղանակ մը շինելու հաջողած է։ Ունինք ուրիշ երաժիշտներ ալ, որոնք միայն եղանակ շինելով կը կարծեն, թե կը հաջողին, և ասոր համար է, որ ազգային թատերդութիւններուն կամ երգերուն մեջ կը հանդիպինք այնպիսի եղանակներ, որոնք ոտանավորին հետ բնավ խնամութիւն չունին։ Օրինակի համար, երբ ոտանավորը կուլա՝ եղանակը խնդալեն կը ճաթի, և երբ եղանակը ննջեցյալ կը տանի՝ ոտանավորը գինի բերեմ կը պոռա։ Այս կերպով դերասան մը

երդին խոսքերովը կը լացունէ և եղանակովը կը խնդացունէ, կամ, լավ ևս, ոչ մին կընէ ոչ մյուսը։ Բացի ասկից չինած ունի Քրիսթոֆ Քոլոմպ անուն օբերայի մը եղանակն, որուն վրայոք շատ գովեստով կը խոսի։ Պարապ աշխատութիւն է կրկնելը, թե նորին վսեմութեան մատներն դաշնակի վրա ալ հրաշքներ կը գործեն։

Սարդիս պեյ Պալեան յուր ղբաղումներուն շատութեանը պատճառաւ՝ չէ կրցած ազգային ժողովներու մեջ մտնել, այսու ամենայնիվ ամեն բարեգործական և մարդասիրական ձեռնարկութիւններու մեջ կը փայլի յուր նվիրներովը։ Ավետարանը միայն չէ, որ կը պատվիրե իրեն ձախ ձեռին չտեսնել աջին տվածը, ուրիշ պատճառներ ալ կան, որ կատիպեն զինքը գաղտնապահ բարիք ընելու։

Քանի մը տարի առաջ՝ Ազգային Պարտուց բարձման համար նվիրեց հազար հինգ հարյուր ոսկի, գումար, որ իրեն ընկեր չգտավ նվիրատուներու ցանկին մեջ։ Շատ տարիներե ի վեր Վասպուրականի Մարմեր գյուղի մեջ դպրոց մը հիմնած է, և որուն ծախքն ինքը կը հոգա մինչև այսօր։

Կարելի չէ համրելով լմնցնել այն նամականերն, որոնք ամեն օր կուղղվին իրեն և որոնք վսեմափայլ տեռով կը սկսին ու Հաճեցեք ներփակյալ տոմսակներն ընդունելով կը վերջանան։ Նորին վսեմութենն բնավ եա չդարձուներ այս տեսակ տոմսակներն, որոնք կամ թատրոն կը հրավիրեն զինքն կամ պարահանդես, ուր դերասանի մը կամ ազգային հաստատութեան մը կամ ընկերութեան մը ի նպաստ ներկայացում կամ պար կը տրվի։ Եթե յուր տված դրամներուն ցանկն հրատարակվի՝ ակներև պիտի տեսնվի, որ այս անձը կարծվածեն ավելի առատաձեռն է։

Մինչև հիմա առատաձեռնութեան շատ փորձեր ցույց տված է, և կը հավատանք, որ ասկե վերջն ալ պիտի շարունակե յուր նվերներն ազգային մանկըտվույն դաստիարակութեանը համար։

Հակառա՛կ այն պատվանշաններուն, զորս յուր կուրծքեն կախած են Անգղիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Թուրքիայի, Ռուսիայի և այլն կառավարութիւններ՝ այսօր հայերեն կը խոսի և ազգին բնավ չարիք մը հասուցած չէ։ Այսչափ պատվանշաններով զարդարված մեկն յուր մայրենի լեզուն սիրե՞... Աս քիչ մը անհավատալի պիտի թվի ամեն անոնց, որ դժբախտութիւն ունեցած են տեսնվելու այնպիսի էֆենտիներու կամ պեյերու, որոնք եթե աստիճանե մը բարձրանան՝ հայերեն չխոսելու ուժտ կընեն. եթե պատվանշան մ'ալ առնեն՝ հայերեն խոսողն ականջն պատի մը վրա դամելու չափ հառաջ կերթան, և եթե քիչ մ'ալ բարձրանան՝ ազգային իրավունքներն աճուր-

դի կը հանեն, կարծելով, թե այս ընթացքով ավելի բարձր աստիճաններու կը հասնին։

• Պաշտպան և սիրող է գեղարվեստներու։

Երբ Այվազովսքին մայրաքաղաքս եկավ, նորին վսեմութենն հյուրընկալվեցավ։ Կը սիրե և կը քաջալերե ամեն գեղեցիկ գործերն՝ ինչ տեսե ալ որ ըլլան։

Գիտութեամբ և արհեստով օժտված ասանկ հռչակավոր մեկու մը միայն կը վայլեր քիչ մը հպարտութեան՝ եթե աս ներելի ըլլար, բայց կը տեսնենք, որ հպարտութեան նշույլն անգամ չունի յուր վրա։ Իրեն ներկայացվողն ի՛նչ աստիճանի ալ որ ըլլա, այնքան անուշութեամբ կընդունվի իրմե, որ կսկսի կարմրիլ և նեղվիլ։ Իրեն դեմն ելնելու համար ժամերով վարի սրահն սպասելու հարկ չկա, ոչ ալ պեյն այսօր ետյուր ընդունելու ժամանակ չունի, ուրիշ օր մը եկուր խոսքը կը լսես։ Այսպես ամենուն հետ քաղցրութեամբ կը վարվի, խակ երբ կը տեսնե, որ դիմացինը, ո՛վ որ ըլլա, յուր չափը չճանաչեր, այն ատեն փափկութեամբ կիմացունե հպարտութեան ծախողներուն, որ ուրիշ տեղ երթան իրենց ապրանքը ծախելու։

Որչափ ալ չուզենք, նորին վսեմութեան արժանապատվութիւնը չվիրավորելու համար, զուգակշռութեան մտնելով յուր առավելութիւնները հայտնելու՝ ամենօրյա դեպքերն կստիպեն զմեզ խոստովանիլ, որ մեր ազգին մեջ կան այնպիսի անձեր, որ հպարտութեան գագաթը բարձրացած են. և այս անձերն այնպիսի մարդեր են, որ բնավ իրավունք չունին... հպարտանալու։

Ասոնց համար ամենեն սովորական բան մ'է արհեստավորի մը հետ այնպես վարվիլ, ինչպես կը վարվի կռանն երկաթի հետ. դաստիարակի մը հետ խոսիլն ավանակի մը վրա հեծնելով ներսատեմ մտնել է իրենց համար. խմբագրի մը բարև տալն անոր պատվանշան տալու չափ արժեք ունի իրենց քովը։ Վսեմ Սարդիս պեյ Պալյան մինչև այսօր կը պահե ճարտարապետութեան պաշտոնն և ինչպես սուլթան Ազիզին, նույնպես ալ օգոստափառ սուլթան Համիտին հավատարմութեամբ ծառայելով՝ նորին վսեմութեան հովանավորութիւնը կը վայելե։

Նորին վսեմութենը միջին հասակով, սև աչերով և ընքվիներով, բարեկազմ և գեղեցիկ անձ մ'է։ Այնպիսի դեմք մը ունի, որ կարծես թե, եթե Մուսաս յուր խոսքը պահե և ես հաջողիմ երգիծաներես ավարտել՝ պիտի կրնամ անոր անձին վրա Մեկենասս գտնել։

ՄԿՐՏԻՉ ԷՍԱՅԱՆ

Իմ այսօրվան կարծիքս այն է, որ անհնար է մարդու մը նկարագրին վրա կատարյալ գաղափար ունենալ՝ առանց նախապես գիտնալու այդ անձին արհեստը։ Եվ որպեսզի չկարծվի, թե հառաջաբանս ծիծաղաշարժ ընելու համար այլանդակ կարծիքներ կը քարոզեմ, կը փութամ հայտնել, որ այս օրերս հանդիպեցա մարդու մը՝ որուն ուղեղը, յուր խոսքերեն դատելով, առաձգական է, այսինքն քաշելուդ պես կերկննա և թող տալուդ պես յուր առաջին չափին կը վերածվի. և երբ այս մարդուն արհեստն գիտնալ ուզեցի, սա պատասխանն առի.

— Լասթիկ կը ծախե։

Այս պատասխանը խիստ գոհացուցիչ գտա, և վերջապես համոզվեցա, որ ինչպես լեռնային վայրերը քաջ և պատերազմող կընեն իրենց բնակիչներն. այնպես ալ կատվի փափուկ կընեն այն մարդերն, որք կատվի առևտուրով կը զբաղին, մանավանդ թե փոփոխամիտ կընեն զանոնք, եթե նկատողության առնենք այսօրվան վաճառված կատվներն, որ ջուր տեսնելուն պես կը նետուին իրենց գույնը, թեև կան մարդեր ալ, որ առանց ջուր տեսնելու կը փոխեն իրենց կարծիքը։ Եթե չեք ճանճրանար՝ օրինակ մ'ալ կուտամ. ինչպես որ ծովեզերյա ժողովուրդները վաճառական կըլլան, այնպես ալ մեր Ընդհանուր ժողովին բնակիչները շատախոս կըլլան. և մենք, որ շատ անգամ իրարու կեղևներու վրա կը հիմնենք մեր դատողությունները, լեռան քաջությունը մարդու կը վերագրենք և ժողովին շատախոսությունը երեսփոխաններու վրա կը բեռցուննենք։

Արհեստներու մարդուս վրա ունեցած ազդեցություններն անհերքելի փաստերով ցույց տալես ետքը, կը մնա ինձ երկու խոսք ալ ընել երկաթի վրա, որով կզբաղի այն անձը, որու կենսագրությունն կընենք հոս։

Արդեն ամենուս ծանոթ են այն ծառայություններն, զորս այս մետաղը նվիրեց մարդկության, ինչպես նաև ավելի ծանոթ են այն չարիքներն, զորս հասուց աշխարհիս։ Դանակները, զենքերը, թնդանոթները, մեքենաները, կամուրջները, ղրահավորները բամբակե չեն, ամենն ալ իրենց գոյությունը երկաթի կը պարտավորին։ Ժամանակավ վարպետ օրենսդիրին մեկն, որ անշուշտ ոսկի չուներ, և թերևս փոխառություն ընելու ալ կամչնար, առանց կարմրելու երկաթյա դրամ կոխեց, որպեսզի դիմացկուն ըլլա և թղթյա դրամին պես՝ քանի մը օրվան մեջ չպատռվի.— Պատմությունը չհիշեր, թե այդ երկաթյա դրամ ի՛նչ ընդունելության գտավ, ո՛րչափ ատեն տևեց և վերջն ի՛նչպես վերջվեցավ հրապարակեն։— Այս մետաղն մեր ազգեն շնորհակալություն սպասելու բնավ իրավունք չունի, վասնզի մեզի հետ աղեկ վարված չէ, յուր օգուտներն

ուրիշներու տված է և վնասները մեզի, և եթե քանի մը վաճառականներ չհաթույցաներ մեր մեջը՝ յուր անունն մեր բերանին մեջ գործ չէր ունենար։

Ընթերցողն այս տողերը կարդալեն ետքը կը փափաքի գիտնալ՝ թե այս մետաղն ի՞նչ ազդեցություն ըրած է Մկրտիչ էֆենտի էսայանի վրա, թե Մկրտիչ էֆենտիի միտքը երկաթի պես հաստատ է, թե զրահավորն չվնասվիր։ Հասարակությունը շատ իրավունք ունի այս հարցումն ընելու, վասն զի քանի մը անգամներ յուր աչերովը տեսավ, և ոչ թե ուրիշներուն աչերով, երկաթյա կամուրջին զրահավորն վնասվիլը։ Հասարակությունն հետաքրքիր է նաև հասկընալու, թե մեկն այս անձին կարծիքները կրակին մեջ տաքցունելեն ետքը՝ կարո՞ղ է, թե չէ, անոնց յուր ուզած ձևը տալ։

Այս հարցումներուն կանոնավոր կերպով պատասխանելու համար, հարկ էր ինձ դիմել այնպիսի մեկու մը, որ էսայանը խիստ մոտեն ճանաչեր։ Այս ալ հերիք չէր, մոտեն ճանաչելն յուր արժեքը կը կորսնցնե՝ եթե իրեն ընկեր չունենա ճշմարիտ խոսիլը։ Գոհ եմ, որ ուզածս գտա,— այո՛, շատ գոհ եմ, վասն զի ճշմարտախոս մը գտնելն այսօր այնչափ դժվար է, որչափ որ դժվար է քաղաքային վարժարաններու մեջ կարդ ու կանոն գտնելը — և աղաչեցի զինքն, որ հաճի տեղեկություններ տալ ինձ այդ անձին վրա։ Բարեկամս սիրով ընդունեց խնդիրքս։ Քանի մը օրեն ետքը՝ տեղական թղթատունե նամակ մը առացա, որ կը պարունակեր ուզած տեղեկություններս, այնքան կանոնավոր գրված, որ ամենափոքր փոփոխություն մը անիրավություն համարելով՝ նույնությամբ կը հրատարակենք։

«Մկրտիչ Գևորգ էսայան, վաճառական, սեղանավոր, ազգային երեսփոխան, Հարաբերության դիվանի ատենապետ, հայ ավագանվո Մասնաժողովին անդամ, և բացի հանդերձյալ տիտղոսներեն, և այլն, և այլն, և այլն, կյանք առավ Կեսարիո մեջ 1843-ին, բայց հոն շատ կանդ չառավ, վասն զի ոչ այնքան սեր ունեցավ յուր մյուս հայրենակցաց նման կեսարացի կոչվելով միայն գոհ լինելու, որքան իղձ ու տենչ տածեց կեսարացվոց հատուկ գործունեությունն հինքյան անձնավորելու։

Մկրիկը ծնածին պես՝ էսայան մականունին ստուգաբանությունը խնդրեց և երբ իմացավ, որ ոսանց կարծածին պես էսայի անունեն ծագած չէր այն, այլ Հիսուս բառին պարսկական Իսա թարգմանության աղավաղումն էր, շատ սրտնեղեցավ, թե ինչո՞ւ յուր կարծիքը չէին առած, իրեն ընծայյալ մականվան համար։ Վասն զի Մկրիկ նախընտիր պիտի համարեր է՛ սա... մականունն ընդունել, և անոր բնության խնդիրը դնելն յուր չափահասության վերապահել։ Ուստի անմիջապես կտրուկ ծանուցագիր մը ուղղեց յուր ծնողաց, իմացնելու համար, թե նշանավոր մարդ մ'ըլլալու մտադիր է ինքն, և պատվիրելու համար, որ զինքն ըստ այնմ պատրաստեն։

Մնողքը վախնալով, որ այս կրակոտ տղան արյունը դյուխը չցատկե, խոսք ավին, որ սահմանափակ ասպարեզի մեջ չդներն զնա, և ներշնչեն նմա ի մանկութենեն այն սկզբունքներն, որք յուր ապագային անկյունաքարերը պիտի լիներին։

Մանկիկն Մկրիկ այս ապահովությունները ձեռք բերելուն վրա ուրախ՝ կերավ, խմեց, զարգացավ յուր մորը խնամոց ներքև կեսարիո օդը շնչելով։

Երբ Մկրիկ պատանեկության հասակը թևակոխեց, Կեսարիո հորիզոնը շատ նեղ եկավ իրեն. հաղիվ հայերեն ընթերցանություն ուսանելու միջոց դտավ հոն։ Ուստի՝ այն ինչ 14 տարեկան՝ ճամբա ինկավ Կեսարիայեն ի Կ. Պոլիս, ուղղակի Պալատու թաղը գնաց և տեղվույն ազգային վարժարանը մտավ։

Պատանին Մկրտիչ գործունեության առաջին փորձն այն տեղեն տալ ուզելով, բարձրագույն դասարանեն սկսյալ զտակական հավկիթի պես աստիճանաբար ակռային զարկավ զանոնք յուր կարողության հետ բաղդատելու համար, և նախակրթարանի ստորին դասուն մեջ գնաց դետեղեցավ, հսկայաքայլ բարձրագույնն ելնելու համար։

Տասնևչորս ամսո միջոցը բավական եղավ մեր աշխույժ Մկրտիչին՝ դպրոցին ամենեն հառաջադեմ աշակերտը դառնալով՝ առաջին մրցանակներն հաւիշտակելու, և քերականության դասերն ավարտելով՝ հայերենն ուսանելու այնչա՛փ, որչափ դիտեն այսօր մեր ազգային լրագրապետք, կամ ավելի ճիշտն ըսելու համար, որչափ չեն դիտեր այսօր մեծ մասն ազգային լրագրապետաց։

Միայն թե բայերը սորվելու համար խեղճ դասատուին հոգին բերանը բերավ, վասն զի Մկրտիչ անոնց կատարյալը միայն սորվիլ կուզեր և ամեն օր կռիվ կբներ դասատուին հետ, որ մյուս եղանակները վերցնե արտաքսե քերականության մեջեն. մանավանդ ներկան ու ապառնի անկատարը խոնարհելու շատ կը դժկամակեր։ Այս տպավորության գործնական հետևանքն պահած է մինչև այսօր, երբ յուր ուշադրությունը գրավող խնդրո կամ անձի մը վրա կը խորհի, կը խոսակցի, կառաջադրե և չդործեր, մեծ նեղություն կդդա սրտին մեջ, վասն զի մեջը բայի կատարյալ եղանակ չկա, և չարամիտք կրնան զայն սին մեծամտության և կեղծ քաղաքավարության վերագրել։

Խիստ գեղեցիկ է Մկրտիչ էֆենտիի այս հանդամանքն, և թերի կողմն այն է միայն, որ նորա արդի քերականության մեջ կատարյալին դասավորությունը մեր գիտցած դրութենեն կը տարբերի և երբեմն կարդն այնչափ ուշ կուգա, որ քրիստոնեավայել համբերություն չունեցողները կը վհատեցնե։

Դպրոցական ասպարեզեն առևտրական ասպարեզը ցատկեց Մկրտիչ էֆենտի, և մեկ կողմե դաղիերեն, անգղիերեն և տոմարակալություն ուսնելով, մյուս կողմե ստակ շահելու հետամտեցավ։

Յուր առևտրույն համար այնպիսի նյութ մ'ընտրել ուզեց, որ հաջողության ամեն պայմաններն ընծայեր, ուստի երկաթի վաճառականության ձեռնարկեց, որպես զի ո՛չ գողեն վախնա, ո՛չ հրդեհեն ստակա և ո՛չ ալ խոնավը հոգա։ Հետևաբար մեր Մկրտիչը երկաթ առավ, երկաթ ծախեց, բայց անոր ժանդն ոսկվո փոխարկեց, և անտուկին մեջ դիզելե ետև՝ վրան ելավ ու բարձրեն դիտեց երկաթի մյուս վաճառականներն, որք իրենց ծախած ապրանքին անշարժության հանդամանքով տոգորվեր և անոր հանքային բնության միայն ընդունակ եղեր էին։

Անոնք, որ Մկրտիչ էֆենտին բարեսիրտ մարդ կը ճանաչեն, կը կարծեն թե շատ ցավեցավ նա յուր արհեստակցաց այդ հետամնաց վիճակին վրա, իսկ անոնք, որ Մկրտիչ էֆենտիի քով հառաջադիմական բուռն իղձ մը կը տեսնեն, կենթադրեն թե կարի գոհ եղած լինի նա, մյուս զամենքը գերազանցած ըլլալուն վրա։ Իսկ մենք ո՛չ առաջիններուն հետ կը կարծենք և ո՛չ մյուսներուն հետ կ'ենթադրեմք, այլ պարզապես երկուքին ալ կը հավատամք։

Մկրտիչ էֆենտի 1859-ին դեռևս գպրոցական՝ ազգային կենաց մեջ նետվեցավ։ Հիշյալ թվականին Պալատու ժողովրդական ընկերությունը հիմնողներեն մեկն ալ ինքն եղավ, և անոր համարակալի պաշտոնն ստանձնելով, մինչև որ այդ ընկերությունը հազար ոսկվո արժողությամբ կալված չդոյացուց թաղին վարժարանաց համար, յուր պաշտոնը չթողուց, և ամեն տարեգլուխ հաշվեկշիռ հրատարակելով, ընկերության արդյանց հետ յուր հաջողակությունն ու հաշվադիտությունն ի հրապարակ հանեց։

1868-ին երբ զինքն Ընտրողական ժողովո՝ ատենապետ ընտրեցին Խ-կյուտարցիք, ինքն ալ զարմացավ, բայց երբ տեսավ որ թաղին կուսակցությունները չեղոք ատենապետ մը գտնելու և զայն իրենց դիմակ ընելով իրարու հետ կռվելու համար զինքը կարգեր են, խորհրդարանը թողուց, տուն քաշվեցավ։

1870-ին Տնտեսական խորհրդո անդամ եղավ և համարակալության ձյուղին հսկողությունն ստանձնելով՝ այնչափ հոգածությամբ հսկեց պատրիարքարանի տոմարներուն վրա, որ Տիգրանյան յուր աշխարհաճանոթ հրաշագործությամբ հաղիվ ուրեմն յուր ժապավինյալ հանդանակության տետրակը կրցավ դողնալ պատրիարքարանեն, առանց մտքեն անցընելու, որ Տնտեսական խորհուրդն անոնց ամփոփումն արձանագրած էր արդեն յուր ատենագրության մեջ, որով Տիգրանյանի հրաշքն ալ խայտառակվեցավ, ինքն ալ։

1873-ին, երեսուն տարեկան ըլլալուն պես, Պալատցիք զինքն ազգային երեսփոխան ընտրեցին, որպես զի իրենց թաղին սանն ուրիշները չհափշտակեն։ Մկրտիչ էֆենտի տեսնելով, որ երեսփոխանության մեջ շատ խոսելու է կենե

ժողովականներն իրենց պաշտոնին աղնվության բարձրացնելու միջոցին վրա կը խորհեր շատ անգամ, և երբ ինքզինքը խառն ժողովին մէջ դտներ, բոլորովին այս մտածմամբ կը պաշարվեր։ Հավատացողներ կան, թե Մկրտիչ էֆենտի այդ միջոցը պիտի կրնար գտնել, եթե այն միջոցին վանեցի Պետրոս վարդապետին և Խաչատուր կաթողիկոսի խնդիրները[2] վրա չգային, և Վարչության բոլոր անդամոց զանոնք արդարացնելու ճգանց դեմ միս մինակ խոսելն և մաքառելն առանն գտներ Մկրտիչ էֆենտին։

Օր մը Վարչության նախագահն Ամբրոսիոս վարդապետը վռնտեց ժողովեն, որ նույն միջոցին՝ յուր եղբոր կնոջ դատին[3] մէջ հաղթանակ կանգնելու համար՝ կրոնական ժողովին անդամ եղեր էր, իրեն պետք ունեցողներուն քվեովը։ Ամբրոսիոս բավական պինդ երես ունեցավ հաջորդ նիստին ժողովարան մտնելու, և ժողովականք ալ բավական սիրտ չունեցան ձայն հանելու։ Մկրտիչ էֆենտի զանի տեսածին պես, առնել քալել ուղեց, բայց դլխին ֆեսը չգտավ, վասն զի առենապետն ուսուլիկ մը առեր պահեր էր, որպես զի Մկրտիչ էֆենտի չկարենա ձգել երթալ։ Ժողովը վերջացածին պես Մկրտիչ էֆենտի շիտակ Դալաթիա անցավ և ֆեսը ծախեց, տեղը դլխարկ մ'առավ, զոր մինչև այսօր կը գործածե։ Այնուհետև ամեն անգամ, որ ժողովարան եկած առեն Ամբրոսիոսը հոն տեսներ, նախ բարապան մը ներս կը դրկեր, յուր աթոռին կռնակն անոր դարձնել կուտար, և հետո կանցներ կը նստեր, որպես զի զանի իրեն անդամակից չտեսնե։

Ազգային ժողովին մէջ Մկրտիչ էֆենտի ինք խոսելն ավելի կը փափաքի, որ երեսփոխանք աղեկ խոսին։ Երբ առենապետն ինք ըլլար՝ խոսիլ չդիտցող երեսփոխանները բեմն ելնելե պիտի արդիլեր։ Ոմանք կըսեն, թե Մկրտիչ էֆենտի երկու տարիե ի վեր ուխտած է լռիկ մնջիկ գործել ազգային խնդրոց մէջ, այն մեծ մարդոց նման, որք շատ բան կընեն, բայց իրենք բնավ չեն երևիր։ Այս ուխտին վերադրեցին, երբ Մկրտիչ էֆենտի խոստացավ Ազգային ժողովն Դալաթիա գումարելու համար ս. պատրիարքն համոզել ու չհամոզեց։

Մկրտիչ էֆենտի ի բուն ընկերական մարդ է, բայց յուր ծանոթներեն շատեր կան, որոնց ներկայութենեն կը նեղվի, մանավանդ երբ քառորդ ժամեն ավելի տևե ու ինքը մինակ մնա անոնց հետ։ Իսկ բարեկամաց տեսակցութենեն այնչափ կախորժի և կը զվարթանա, որ դեռ դիտցված չէ, թե բարեկա՞մք ավելի գոհ կըլլան յուր սիրաբուխ ընդունելութենեն, թե ինքն անոնց ներկայութենեն։ Պարագաներ կան, հորում սոխակին չափ քաղցրախոս կը կարի և Տելեմաքին պես սրտագրավ՝ քունն ու հանդիստը կը մոռնա և ժամացույցին կը պատվիրե, որ չբանի, կամ դիշերին կաղաչե որ չլուսնա։ Վասն զի Մկրտիչ էֆենտի բնավին չախորժիր առանձնութենեն, և ամեն գործի մեջ թեև առաջինը ըլլալուն նազ չըներ, բայց միայնակ մնալ չուզեր։ Ազգային գործոց

մէջ ասոր փորձն ստեպ կուտա. ուրիշներեն առաջ նետվելե և անոնցմե ավելի գոհողություն ընելե չքաշվիր, բայց երկու անփոփոխ պայման ունի. նախ՝ կուզե, որ իրեն հետևող ցույց տան, և երկրորդ՝ կը պահանջե, որ յուր մատուցած ծառայությունն ի վերա տանյաց չքարոզեն և միայն ականջե ականջ փսփսան։

Այսու ամենայնիվ ո՛չ յուր քսակը կը խնայե ազգին և ոչ յուր խելքը, և այսու կենդանի հանդիմանություն մը կը դառնա այն անձանց, որք իրենց քսակն ազգին դլխեն վեր կը բռնեն, և դրամական զոհողության կարգն եկած առեն՝ խնդրույն համակարծիք դառնալով՝ կը զրաբանեն, և կամ շատ նեղը մտած առեննին, նպաստի ձևով պարգև (prime) մը կը վճարեն իրենց վերընծայալ դասեն սրբվելու վտանգին դեմ, ինչպես որ սովոր են վճարել իրենց կալվածները հրդեհին դեմ ապահովելու համար։

Մկրտիչ էֆենտի միշտ բարիք ընել կը փափաքի, այլ ըստ որում ս. պատին անսխալականության ամբարշտությունը չունի, և գիտե, թե չարիքն ալ մարդու գործն է, զայն գործած ըլլալու համար՝ զավկներ գգված առեն կը կամքե, մոր դեմ երբեմն կամակորություն կ'ընե և յուր սիրելյաց բարեկամները խոսքով կը կճե, և այնչափ հառաջ կերթա երբեմն, որ իրավունք կուտա կասկածելու, թե մի գուցե յուր սիրվելուն աստիճանը փորձելու միջոց մըլլա յուր այս վարմունքը։

Մկրտիչ էֆենտի խիստ զգայուն է. զգայնությունն այն աստիճան նրբություն հասցուցած է, որ կըսեն, ամառը հովը փոխվելուն պես հագուստ կը փոխե, իսկ ձմռան մեջ տանն սենեկին հատուկ հագուստ ունի։ Կը սիրե, ինչ որ վսեմ է ծագմամբ, և անոր թերի կողմերուն հաշտ ակամբ կը նայի, կատե, ինչ որ նսեմ է սկզբմամբ, թեև հաճոյական հանգամանքներ ալ կրե նա, որոց թեպետ կը հափշտակվի ի սկզբան, բայց ամսե մը ավելի չխաբվիր։ Վայրկյաններ ունի, հորում արտառոց բաներ ընելե հաճույք կզգա, և գործելու նոր եղանակ մը հնարելով՝ զանոնք աղնվացնել կը ճգնի, բայց ուրիշներե առաջ ինք կը համոզվի չհաջողելուն և չհամարիր։ Զի ինքն, թե դյուրագրգիռ և թե լրջմիտ, կը թողու որ սույն հակոտնյա բնավորություններ ի պայքար ելնեն հանձինն, և մինչև որ լրջամտության հաղթանակ տանիլը չտեսնե, չհանդարտիր։

Ժողովրդականաց ազատամտության վրա կաքանչանա, աղնվապետականաց բարեկրթության վրա կը հիանա, և կը թվի, թե մինչև որ այս երկու հատկությանց հանձին յուրում ի մի ձուլմանը չհամոզվի, յուր արժանապատվությունը հագուրդ չպիտի գտնե։ Վասն զի Մկրտիչ էֆենտի գիտե, թե փայլուն աստղի մը տակ ծնած է, գիտե նաև թե դեպքերը շատ անգամ զոհանս կը բարձրացնեն և երբեմն ալ զայլս կը խոնարհեցնեն, ուստի և մեծ սիրտ մը կը

կրե, մեծագույն զազափարներ կը անուցանե և ամենամեծ նպատակներ կառաջադրե։

Մկրտիչ էֆենտի միջին հասակով, թուխ դույնով, սև աչքերով, խիտ մորուքով, երկար վիզույրով, զվարթագեմ, դիրուկ երիտասարդ մ'էր։ Երբ սույն նկարագիրն ունեցող մեկուն հանդիպիս ճամբան, որ աճապարողի մը պես կը քալե և ամեն քայլափոխին միտքը բան մ'ինկածի պես մեկ մի հաջ մեկ մի ձախ ետ դառնալու մտադիր կը թվի, դիտցի՛ր նա ինքն է՝ Մկրտիչ էֆենտի Էսայան։

ԲԱՐՈՒՆԱԿ ՄԱՆՎԵԼ ԼՒՈՒՃՅԱՆ

Բժիշկ, Ատենապետ-հիմնադիր Խնայողական ընկերության, խմբագիր-ընթերցող Կիլիկիա *հանդեսին*[1], *ծնած ըստ ոմանց 1830-ին և ըստ ոմանց՝ 1831-ին։*

Տնտեսագիտության և խնայողականության մեծ հարմարություն ունենալով՝ այն յոթն ամիսները, զանոնք մորն արգանդին մեջ անցուց, Ցրանքլինը կարդալով զբաղեցավ, և տնտեսագիտության ուսումն ավարտեց հոն, քննություն տվավ, վկայականն առավ և դպրոցեն դուրս ելնել ուզեց, երբ աղդարարեցին իրեն՝ թե դեռ երկու ամիս սպասել պետք էր։ Բարունակ մտիկ չըրավ, բժիշկ ըլլալով՝ իր ծննդյան մեջ ունեցած պակասությունը դոցելու եռանդ եղավ։ Բացի տնտեսագիտութենե բժշկության ալ կոչում ունենալը հայտնեց, տեսնելով որ բժշկին մեկը վերքի մը վրա սպեղանի կը քսեր, այդ վերքին կլոր ըլլալեն շուտ մը հասկցավ, որ ամեն կլոր վերք է, և երբ օր մը հայրն սիկարն վառելու առեն կրակը հագուստին վրա ձգելով կլոր ծակ մը բացավ հոն, Բարունակն՝ հայրիկիս հագուստը վերք հաննեց ըսելով՝ իսկույն դեղագործի մը խանութ վազեց և տուփ մը սպեղանի բերելով՝ հորը հագուստին վրա քսեց, և հետևյալ օրը յուր դեղին ինչ ազդեցություն ըրած ըլլալն իմանալու համար հորը բալթոյին թևին երակները քննեց։

Ծնողքն ուրախացան ու խնդացին, և վերջապես համոզվելով, թե Բարունակն այդ պզտիկ հասակին մեջ մեծ փափաք և կոչում ուներ բժշկելու... հագուստները, ինք թաղին դպրոցեն հանելով՝ մայրաքաղաքիս բժշկական վարժարանը ղրկեցին, որ հոն բժշկե և բժշկվի, որովհետև քիչ մը նիհար էր։

Բարունակ բժշկական վարժարանը մտավ չմտավ սկսավ հսկայաքայլ վա-

ղել յուր դասերուն և դասարաններուն մեջ, քիչ ժամանակն ընկերները գերազանցեց և իններորդ դաս մտնելուն պես՝ սկսավ բժշկական թերթ մը հրատարակել, որուն մեջ ազդային հոդվածներ կը գրեր, երբեմն ալ բժշկական։

Այս հրատարակությունը մեծ ծառայություն ըրավ այն ատեն ազգին, այնպես որ ընթերցողներուն մեծագույն մասը մեկ-երկու տարիեն մեյմեկ բժիշկ եղան։

Բարունակ տնտեսագետ ըլլալով՝ թերթին բոլոր գործերն ինքը կը տեսներ, ինքը կը խմբագրեր, ինքը կը կարդար, շռայլ չէր, քան Կիլիկիա տպել կուտար։ Տարեկան դինը հինգ ղուրուշ էր։

Բժիշկության արվեստը կատարելագործելու տենչը Բարիզ կը կանչեր զինք, բայց ղրկող չկար. բայց եռքեն ազգականներեն մեկուն ձեռքովն Բարիզ ղրկվեցավ, ուր յուր արվեստը կատարելագործեց և մայրաքաղաքս դարձավ։

Ազդասիրությունը չէր թողուր զինքն, որ խմբագրութենեն քաշվի, ուստի Կիլիկիան նորեն հրատարակել սկսավ։ Այն ատեն ըսվեցավ, թե սխալ թարգմանություններ կըներ, բայց ասիկա ճշնամական խոսք մ'էր. կերևի թե բնագիրն ալ սխալ գրված ըլլալով՝ Ութուճյան էֆենտին բնագրին հավատարիմ մնալուն համար, սխալ կը թարգմաներ։

Քիչ մը ատեն Կիլիկիան հրատարակելե եռքը՝ նորեն ետ քաշվեցավ, ինչպես որ շատ մը խմբագիրներ կընեն, և մոտերս «Խնայողական ընկերություն» անունով ընկերություն մը հիմնեց, կանոնագրություն մը խմբագրեց, որ Ցրանքլինի առածներով ու խրատներով լեցուն էր։

Կրավի՝ թե ընկալագիրներու վրան ալ Ցրանքլինեն մեյմեկ կտոր բան դրած էր։

Ընկերության բաժանորդներն օր մը ելան ստակին ուղեցին, Ութուճյան էֆենտին հայտնեց իրենց, թե ըրածնին Ցրանքլինին խրատներուն դեմ էր, բայց բաժանորդներն մտիկ չըրին ու զրպարտություններ ալ ըրին, այնպես որ եթե Ցրանքլինի խրատները չըլլային, Ութուճյան էֆենտին խաբեբայի մը անուն պիտի վաստկեր։

Հայ հասարակության տպիտության վրա ցաված՝ Ութուճյան էֆենտին նորեն սկսավ այս օրերս իր Կիլիկիան հրատարակել ավելի կանոնավոր կերպով։ Ութուճյան էֆենտին անանկ բնավորություն մը ունի, որ բնավ չլռեր, միշտ կը խոսի, եթե մտիկ ընող չգտնվի՝ սենյակի մը մեջ կը քաշվի ինքն իրեն կը խոսի։ Լսածնուս նայելով, հիմակվան Կիլիկիայի մեջ հրատարակվածները սենյակին մեջ ինքն իրեն ընկած խոսքերն են եղեր։ Բնավորություն մ'ալ ունի, որ ամեն բանի մեջ նախ յուր շահը կը փնտռե, եռքը դիմացինին, հիվանդի մը կանչվելու ըլլա նե՝ նախ յուր երակները կը քննե, վերջը հիվանդին։

ՕԳՍԵՆ ԽՈՃԱՍԱՐՅԱՆ

Օգսեն Խոճասարյան, մեծապատիվ խմբագիր-տնօրեն Օրագիր ազգօգուտ լրագրոյ, հրաժարյալ երեսփոխան Ազգ. ժողովո, փաստաբան ամուսնական գատերու, ծնաւ ի թվականին՝ զոր ոչ ոք կը հիշե այսօր։

Շատ մը պատմիչներու հարցուցինք, Պոլսո մեջ որչափ ստույգ աղբյուրներ կան նե՝ ամենուն ալ դիմեցինք, որպես զի յուր ծննդյան թվականը մեզ իմացունեն. բայց հակառակ մեր ջանից, չկրցինք ստույգ տեղեկություն մը առնել այս մասին, միայն թե ծերունիի մը հարցուցինք նե՝ սապես պատասխանեց. «Իրաւ որ յուր ծննդյան թվականը աղեկ մը չեմ հիշեր, սակայն սա աղեկ գիտեմ, որ Օգսենին ծնած օրերը աղգը շատ դժբախտ էր. և այսօրվան պես միտքս է, որ Օգսենին ծնած օրը Սամաթիո սրճարաններուն մեջ կըսեին, թե ազգին դժբախտությունները հերիք չէին, նոր փորձանք մ՝ալ ավելցավ»։

Այս տեղեկության մինչև ո՛ր աստիճան ստույգ ըլլալն ընթերցողաց կը թողունք դատել և կանցնինք իր կյանքը դրելու։

Օգսեն խիստ նիհար ծնած ըլլալով՝ ծնողքը կարծեցին, թե հիվանդ է, և վախնալով, որ չըլլա թե առանց կնունքի մեռնի, շուտ մը մկրտել տվին զինքը։ Ծնողացն այս երկյուղն պանական՝ էր, որովհետև երբ մկրտող քահանան կը հարցներ, թե երախան «ովի՞նչ խնդրե», և երբ կնքահայրն՝ «Հավատք, Հույս, Սեր» կը պատասխաներ, մեկեն ի մեկ Օգսեն նետվեցավ և ըսավ, թե երախան օղի ալ կը խնդրե։ Ասով Օգսենը կենդանության նշան տվավ և ներկա եղողներուն տրտմությունն ուրախության փոխեց։

Օգսեն յուր մանկական հասակին մեջ ցույց տվավ, որ ազգին մեջ նոր սկզբունքներ, նոր կարծիքներ տարածելու նպատակավ միայն եկած է աշխարհ, թեպետև չկարծվիր, թե այդ նպատակավ ղրկված ըլլա աշխարհ։ Օր մը օրանց խանձարուրքին մեջ հանգիստ չկեցավ, խանձարուրքին մեկ կողմեն մեկ ոտքը դուրս կը հաներ, մյուս կողմեն մեկալ ոտքը. մեկ կողմեն աջ ձեռքն և մյուս կողմեն ձախ ձեռքն. և երբ մայրը հարցուներ, թե, որդյակ, ինչո՞ւ ոտքերդ, ձեռքերդ ասանկ մեյմեկ կողմ գլուխ քաշեր են, Օգսեն իսկույն կը պատասխաներ, թե ոտքերը ու ձեռքերն ապակեդրոնացական են, և թե խանձարուրքին մեջ կեդրոնանալն կեդրոնացուցում է, և ազգին ալ վնասակար։

Չորս տարեկան էր Օգսեն և տունը տակնուվրա կըներ, բնավ խելոք չէր նատեր։ Երբեմն տունեն դուրս ելներ՝ թաղին մեջ իրեն հասակակից տղաք կը գտներ ու եկեք ընկույզ խաղանք ըսելով՝ ընկույզնին կը հափշտակեր ու տուն կը փախչեր։ Տղայք փղոցին մեջ կուլային։ Օգսեն պատուհանը նստած, հափշտակած ընկույզները կուտեր ու կը խնդար։

Մայրը կաղաչեր, որ տղոց ընկույզները տա, Օգսենը կըսեր. «Մայրիկ, կաթելի՞ է, որ ես անոնց ընկույզը առնեմ. անոնք չորս հոգի են, ես մեկ, կրնա՞մ անոնց դեմ դնել... Մայրիկ, ըսածնին տրամաբանության բոլորովին հակառակ է»։ Աս կըսեր և բերանը կը նետեր այն ընկույզները, որ տրամաբանության հակառակ ընկերներուն ձեռքեն առած էր։

Օգսեն վեց տարեկան ըլլալուն պես՝ դպրոց ղրկվեցավ։ Հոն մոտցավ յուր տղայական խաղերն ու սկսավ դասերուն աշխատիլ, այնպես որ քանի մը տարիեն հակալաբայլ առաջ դիմեց։ Բոլոր գիտությանց և ուսմանց «մնաք բարյավ» ըսելով՝ միայն տրամաբանության «բարի լույս» ըսավ, և անոր հարեցավ։ Քիչ ժամանակի մեջ տրամաբանության մեջ շատ փայլեցավ, այնպես որ ամեն խնդիր սկսավ տրամաբանությամբ լուծել, մինչև անգամ ալճեպրային խնդիրներն տրամաբանությամբ լուծեց ու վերջը չկրցավ կապել։

Տասնևյոթ տարեկան էր Օգսեն՝ երբ ս. Սահակյան վարժարանեն ելնելով՝ առիթ սպասեց, որ յուր տրամաբանական տաղանդեն օգուտ քաղե։ Առիթը չեկավ։

Վերջին Արևելյան պատերազմին ժամանակ անգղիացի զորապետի մը քով թարգման կարգեցավ։ Զորապետը Սևաստոպոլ գնաց, բայց Օգսենը հոն երթալու վախնալով Շումլա մնաց և հոնկե տիրոջը խոսքերը տաճկերենի կը թարգմաներ ու բոսթայով կը ղրկեր։ Քիչ մը ետքը տիրոջը քով գնաց և ամենայն հաջողակությամբ վարեց յուր պաշտոնը։ Օր մը տերն ըսավ իրեն, թե երկու օրեա պանիր ապսպրե. Օգսեն գնաց զույգ մը պորին ապսպրեց։ Անգղիերեն սորվելու աղեկ կոչում ուներ, բայց հասկնալու հարմարություն չուներ։

Օգսեն տեսնելով, որ այս պաշտոնն իրեն հարմար չէ, բաժնվեցավ անգղիացիեն և Պոլիս գալով՝ Հիվանդանոց մտավ դասախոսություն ընելու։ Հոն քանի մը կարծիքներ հայտնեց, որոնցմով ըսել կուզեր, թե դպրոցներու մեջ ուրիշ գիտություն, ուսում, դաս տալը անօգուտ բան է, թե բոլոր դասերն արուրիշ գիտություն, ուսում, դաս տալը անօգուտ բան է, թե բոլոր դասերն արտաքսելու և միմիայն տրամաբանության դաս տալու է։ Հոգաբարձությունը այս կարծիքներեն օգուտ քաղելով՝ մյուս դասերն արտաքսելու տեղ՝ բռնեց Օգսենն արտաքսեց։

Ասոր վրա Օգսեն քանի մը պաշտոն փոխելեն ետքը՝ Մանզումեի մեջ սկսավ խմբագրական հոդվածներ գրել։ Շատ հոդվածներ հրատարակեց հոն, որոնց ամենն ալ աղեկ ընդունելության գտան ժողովուրդեն։ Ամուսնության վրա ալ անանկ աղվոր հոդվածներ գրեց, որ քանի մը օր ետքը ամեն մարդ սկսավ կնիկն ձգել։ Այս օրվան պաշտպանած սկզբունքը հետևյալ օրը կհարվածեր, և վաղվան պաշտպանելիք սկզբունքը օր մը առաջ կը հարվածեր։ Սկզբունքները, կըսեր զավկի պես են, գրագետ մը պարտավոր է զանոնք երբեմն շոյել և երբեմն ապտակել։ Իր նպատակին հասնելու համար, միևնույն

խնդրույն մեջ այնչափ կարծիք կը փոխեր, որչափ որ կայարան կը փոխեն էտիրնեի շոգեկառքը Պոլիս հասնելու համար։

Տարի ու կեսի չափ Մանզումեի մեջ իր կարծիքներն քարոզելեն ետքը Շիլն Ա.վարայրի[2] լրագրույն անունը փոխելով Օրագիր ըրավ և ինք ալ անոր խմբագիր եղավ։ Օրագրո մեջ չկա սկզբունք մը, որ պաշտպանված չըլլա, չկա նաև սկզբունք մը, որ հարվածված չըլլա։ Այս թերթին մեջ Օգսենն այնքան շուտ սկսավ փոխել յուր կարծիքները, որ ընթերցողն ալ ետևեն չկրցավ հասնիլ։ Անոթի ըլլար նե՝ ժողովրդական էր, պատառ մը հաց ուտելուն պես՝ միապետական կը դառնար, վրան սուրճ մը կը խմեր նե՝ ապակեզրոնացականությունը կը պաշտպաներ. Այվազյանին դեմ բարկանար նե՝ կեդրոնացումը կը պաշտպաներ. օր մը Հասունյան կըլլար, օր մը Հակահասունյան, օր մ՚ալ երկուքը մեկեն կըլլար։ Երբ մեկն իրեն ըսեր թե այդ ընթացքն ազնիվ չէ, դուք դիտեք, մարդս քանի՛ կարծիք փոխե, այնքան կատարելության հասած կըլլա, կըսեր։

Օգսենի կարծյաց այս փոփոխությունը միայն խմբագրության մեջ չէ, այլ փաստաբանության մեջ ալ։ Սամաթիո Բագ. խորհրդո[3] կողմեն փոխանորդ կարգվեցավ, որ Փանոսյանի հետ դատվի. Օգսենը դատվելու գնաց և հաշվեցավ, ետ դարձավ ճիշտ այն տղոն պես, որ դերձան առնելու կը գրկվի ու շաքար առնելով ետ կը դառնա։ Սամաթիացիք սաստիկ զայրացան. Օգսեն հոդը չըրավ. իմ հաշտությունս պատվավոր է, երանի թե ամեն մարդ կռվեր ու ինձի պես պատվավոր կերպով հաշտվեր, ըսավ։

Օգսենի փաստաբանությունն ավելի ամուսնական դատերու ճյուղին մեջ փայլ ուներ, քան թե ուրիշ ճյուղերու մեջ։ Որչափ որ կնիկն ձգել ուզող ըլլար նե՝ շունչը Օրագրո դրասենյակը կառներ։ Օգսեն այնչափ վարպետությամբ կը փաստաբաներ, որ շատերը անոր փաստաբանությունը մտիկ ընելու փափաքով կնիկնին ձգել կուզեին... Օգսենի փաստաբանությամբ։

Օգսենի փաստաբանության միջոցին եթե շաբաթը երկու հարսանիք ըլլար՝ հարյուր կնաթողություն կըլլար. և եթե Դաստաստանական խորհուրդը փաստաբան չընդունելու դրությունն չընդուներ՝ այսօր կնիկն չբաժնված մարդ չի պիտի կրնային տեսնալ։

Օգսեն էֆենտի այս փաստաբանության ալ հրաժեշտ տալով՝ ըոլորովին տրամաբանության ապավինեցավ. բոլոր գործերն տրամաբանությամբ կնայի, տրամաբանությամբ ստակ կառնե, տրամաբանությամբ ստակ չտար և այլն։ Օրինակի համար, եթե թղթավաճառն վեց թուի թուղթ տալեն ետքը դա ստակն ուզելու, Օգսեն էֆենտին, մինչև որ տրամաբանական ձեռնարկությունը չընե, ստակ չտար, կրնա ըլլալ, որ կըսե, ստակ ուզելու իրավունք չունենա, այս ըսելեն ետքը կը դրե.

Այն, որ ապրանք մը կուտա, ապրանքին արժեքը կուզե։

Մոշոնը ինձի ապրանք տվավ։

Ասա ուրեմն Մոշոնը ապրանքին արժեքը կուզե։

Ասանկով կը համոզվի, որ Մոշոնը իրավունք ունի ստակ ուզելու. օրինակի համար, շուտ մը Մոշոնին կը դառնա և ըստ տրամաբանության ստակ ուզելու իրավունք ունենալը հայտնելեն ետքը կը պատվիրե, որ քանի մը օրեն դա, որ տրամաբանության մյուս ձևերն ալ ընելով համոզվի՝ թե քանիական դրուշն վճարելու է թուղթը։

Մոշոնը տարի մը կերթա կուգա (օրինակի համար) և այսօրվան օրս տրամաբանությունը լմնցուցած է մարդը։ Եթե հայերեն դիտնար, ապ. պլրոցներուն մեկուն մեջ տրամաբանության դասատու կընեին. բայց եկու տես, որ մինչև այսօր (օրինակի համար) ստակն առած չէ. տրամաբանության մեջ կա հարկավ անանկ օրենք մը, որով հրեան իրավունք չունենար կոր ստակ ուզելու, կամ խմբագիրն ստակ չունենար կոր տալու։

Ոմանք, այս բաները լսելով վայրաբար կը դրպարտեն գինքն ըսելով, թե Օգսեն մեծ հարմարություն ունի պարտքը չվճարելու, ատա է։ Մեծ հարմարություն ունի տրամաբանության։

Տրամաբանությենն դատ խոսքի տակ չմնալու ալ կոչում ունի։ Երբ ատեանպետն ըրևս. ժողովին մեջ «ի կարդ կը հրավիրեմ» ըսեր, Օգսեն էֆենտին կը պատասխաներ, ի կարդ հրավիրել կըսվի այնպիսի բանի մը որ...— խոսքեն շեղեցար, Օգսեն էֆենտի։— Խոսքեն շեղիլը այնպիսի պարագաներու մեջ կրնա հանդիպիլ, երբ... — Խոսք չունիս, Օգսեն էֆենտի։— Խոսք չունենալն ըստ տրամաբանության այն ատեն պետք է ըլլար... — Լռե՛ խոսքը, ուրիշին է։—Խոսքը ուրիշին տալու համար սահմանադրությունը անանկ օրենք մը ունի. որ և այլն ըսելով բերանը չդոցեր, մինչև որ իրմե ավելի բարձրաձայն երեսփոխան մը խոսի և անոր ձայնը խղդե։

Բայց Օգսեն էֆենտին քիչ մը ժամանակի համար երեսփոխանությենե հրաժարելով՝ «խնդրեն շեղելու» խնդիրեն ազատեցավ։

Հիմա Ռուսինյան էֆենտին կանոնագրությամբ կը զբաղվի, ամեն առտու Նարեկի պես մեյմեկ գլուխ կը կարդա, մեյմեկ գլուխ ալ իրիկունները կը կարդա, ցորեկներն ալ լրագրին մեջ կը գրե։

Ի՛նչ որոշում որ լսե կամ կարդա, այս որոշումը Ռուսինյան էֆենտիին կանոնագրության դեմ է, Աղթամարա խնդիրն[4] օրակարգին մեջ անցունելն Ռուսինյան էֆենտիին կանոնագրության դեմ է, ըսելով կը պոռա։ Եթե Վրթաս սինյան էֆենտիին կանոնագրության դեմ է, ըսելով կը պոռա։ Եթե Վրթաս իրեն բարի լույս մը ըսես, բարի լույս ըսելը Ռուսինյան էֆենտիի կանոնագրության դեմ է, կըսե։

Ատոնք Ռուսինյան էֆենտիին կանոնագրությունը իրեն պարգևե, խերը տեսնե։

Ցույց տալու համար, թե Օգսեն էֆենտին մինչև ո՛ր աստիճան օրինասեր է, բավական է ըսել, թե ծովու վրա խեղդվող մեկը տեսնե նե՝ ուրբաթ օրվան կսպասե, որ Ընդ. ժողով դումարվի և հոն առաջարկություն մը ընելով՝ այդ մարդուն վիճակը խնդրոց կարգին մեջ անցունել տա, որպես զի ուրիշ նիստի մը մեջ այդ խնդրույն վրա ժողովը վիճաբանի և խեղճը գտնված վտանգեն ազատի...:

Աղոթք ընենք, որ սահմանադրության մեջ սովի համար օրենք մը չկա, եթե ըլլար, քսանևհինգ հազար հոգին անոթութենեն կը մեռցունեինք:

ՀԱԿՈՐ ՎԱՐԴՈՎՅԱՆ

Հակոբ Վարդովյան, դերասան-տնօրեն Վարդովյան խումբին, ծնավ ի Պեշիկթաշ 1830 օգոստոս 18-ին: Մորն արգանդեն դերասանական անանկ ձևով մը դուրս նետվեցավ, որ կարծես Ֆուլիսեն տեսարան կուզար, անանկ սաստկությամբ դուրս հարձակեցավ, որ քիչ մնաց դայակին քիթը պիտի կոտրեր: Ներկա գտնվողներն դայակին սիրտն առին և երբ ստակը տալով ճամբելու վրա էին, Վարդովյան մեջերնին նետվեցավ և ըսավ, թե ըստ կանոնագրության ստակին կեսը ամսույն 15-ին տան, կեսն ալ ամսույն վերջը: 1846-ին դպրոց ղրկվեցավ, որպեսզի մտավորական սնունդ առնե, բայց անիկա ատանկ սնունդներու կարևորություն չտալով, դասարանին մեջ տղայոց շարժումներն ու ձևերն նկատողության կառներ: Բնավ դաս չէր սորվեր, դասախոսության միջոցին ընկերը քովեն կամացուկ մը կըսեր իրեն, և ասանկով դասերն աղեկ սորված կըլլար: Այս գյուտը շատ օգտակար եղավ իրեն, այնպես որ այսօր իր մասը չսորվի ալ նե՝ հուշարարեն շատ դյուրությամբ կրնա առնել: Իրիկունները տուն դառնալուն պես՝ թաղին պզտիկ տղաքները կը ժողվեր և սենյակին մեկ կողմը վարագույր մը քաշելով խեյալ կը խաղցուներ, Կարաֆյոզին սիրահարի մաս կուտար, նաևի էյվատին ալ ազնվական հոր մասը կը հանձներ և ինքն ալ վարագուրին ետևը պահվըտած զանոնք կը խաղցներ: 1848-ին դպրոցեն ելնելով՝ ըստ ոմանց նկարչության արվեստ և ըստ ոմանց սրվաճիություն սորվելու գնաց կըսվի. բայց որովհետև իր ասպարեզը ան չէր, անկից ելավ և դերասանության արվեստին ետևեն եղավ: Արևելյան թատրոնը չբացված՝ քանի մը ընկերներու հետ մեկ-երկու ներկայացումներ տվավ, վերջեն Արևելյան թատրոնը մտավ, ելավ, նորեն մտավ, դարձյալ ելավ, վերստին մտավ: Դերասանական կյանքն ու արվեստն այնչափ սիրեց, որ բոլոր բարեկամներն կըսափրեր, որ դերասան ըլլան ու աղգին զեղծումներն հարվածեն: 1866-ին Նաումի

թատրոնի՝ մեջ ներկայացուց Մահպերը ու կրից բորբոքման ժամանակն անանկ կանոնավոր քայլեր առավ, որ քովը աղջիկ մը ըլլար նե՝ աղվոր առիթ մը կըլլար: 1870-ին Թափառական հրեային մեջ Ռոտենի մասը կատարեց ամենայն հաջողակությամբ. ուրիշ շատ դերեր ալ խաղաց, բայց խոսելու, կեղծավորություն ընելու մասերուն մեջ երևելի հանդիսացավ: Դերասանական խումբն՝ որուն մեջ կը գտնվեր ինքն, քանի մը անգամ ներկայացումներն դադարեցնելով՝ երբ հուսահատության մեջ ինկած էր, Վարդովյան՝ ես թե՛ թատրոնն և թե՛ դերասաններն կարող եմ ապրեցնել ըսելով՝ դերասաններն ժողվեց յուր տնօրենության տակ ու անոնցմե խումբ մը կազմեց: Ճշմարտությունը խոսելով՝ Վարդովյանի անխոնջ և անվհատ աշխատության շնորհիվն է, որ ազգն այսօր թատրոն մը ունի: Խումբ կազմելուն պես՝ բարգմանիչներ բռնեց և օտար խաղերով սկսավ ազգին զեղծումներն հարվածել, ճիշտ այն մարդուն պես, որ ապտակն օտարին գլխուն իջեցնելով՝ տղան ծեծած ըլլալ կը կարծե: Այդ ընթացքը մինչև այսօր փոխած չէ, և յուր գրազմանցը պատճառավ ասկից վերջն ալ փոխելու ժամանակ չպիտի ունենա: Թատրոնը շարունակելու փափաքով փիղի չափ թերություններն իրեն ճանճի պես կերևան, և թե թատրոնին թերություններն մեկն իրեն ցույց տա՝ դանոնք ուղղելու հոգատար չէ, և կարծես լռելյայն կըսե. վերցուր այդ մոլորություններն թատրոնի մեջեն և ահա թատրոնն ալ կը վերնա: Ներքին կանոնադրության մը համեմատ դերասաններեն քիչ շատ տուգանք առնելով՝ ել ու մուտքը կը հավասարակշռե. որոշյալ ժամեն քառորդ մը ետքը եկող դերասանը կը տուժե. քառորդ մը առաջ եկողն ալ կը տուժե. գեր կատարած միջոցին հազացող դերասանին ալ ամսականեն քիչ մը բան կը կտրվի: Դերասաններն կառավարելու մեջ այնքան սիրտ հալեցուցած է ու դեռ կը մաշեցունե, որ քովը երթալուդ պես մազերը փեթռեելով կուգա, ու, ալ լմնցա, ալ չեմ կարող ապրիլ, բայց թատրոնը երեսի վրա չձգելու համար ակռաներս սխմած եմ, կըսե: Ջափաղանց կասկածոտ է, երկու հոգի խոսակցության մեջ տեսնելուն պես՝ իր չճանչցած մարդիկ ալ ըլլան նե՝ մեջքը ծռելով՝ ձեռքերը շփելով քովերնին կերթա, ու «Աղբարներս, թատրոնն իմս չէ, ազգինն է, ինչո՞ւ կաշխատիք զայն կործանել», կըսե: Ասոնց հետ մեկտեղ այսօրվան օրս իրեն արժանավայել հանգստությամբ կյանք կանցունե, ոտքով չքալեր, միշտ կառքով կերթա կուգա. թե որ տունը երթաս՝ և քիչ մը անդիի սենյակը երթանք ըսես՝ սրկն կառք մը ապսպրեցեք կըսե: Ջրույց կը պտտի, որ մոտերս ՀԱՅԿ պիտի խաղա եղեր կառքի մը մեջ նստած: Վեհանձնությունը կը սիրե, բայց չգործածեր, որովհետև կը դպչի իրեն. ինչպես որ շատերն օղին կը սիրեն ու չեն կրնար գործածել: Իր թատրոնին մեջ այսօր 100-ի մոտ ընտանիք կապրին.— հավանական է, որ թատրոնն իբր զատ թաղ նկատվելով՝ պատրիարքարանեն հրահանգ ղրկվի, որ թաղական խորհուրդ մը ընտրեն — անոնց օրհնու-

թյունները կառնե, ուրիշներեն առած անեծքներուն դիմացը դրելով՝ վերջին դատաստանին ներկայացվելիք հաշիվներն ալ հիմակվնե կը հավասարակշռե։

Վարդովյան էֆենտին հասակով բարձր, կազմով միջին, գույնով դեղին, դեմքով երկար, մորուքով կարճ, ուղեղով փոքր մարդ մ'է։ Դեմքին չարություն մը չերևար, բարություն ալ չդուշակվիր, վերջապես մարդ է, պարադաներուն համեմատ բարի կամ չար։ Աստված չար պարադաներեն ազատ պահեսցե։

Վարդովյան էֆենտին ամեն բանեն կուզե իրեն շահ հաննել. եթե իրեն «բնաթի լույս» ըսես՝ ասիկա շատ աղվոր նյութ մ'է, ասիկա կատակերգություն մը շինե տե՝ խաղանք, կըսե։

ԹԱԴԵՎՈՍ ՊԵԿՅԱՆ

Թաթևոս Պեկյան առևտրական ասպարեղին մեջ, Թ. Պեկ. լրագրական ասպարեղին մեջ, Փունջի փաստաբան, հրաժարյալ երեսփոխան, ծնավ 1835... տարիքը չհնծցունենք, թերևս մոտերս կըլլա... ծնավ 1850... չպզտիկցունենք, չպզտիկցունենք, որ երեսփոխան ընտրվելու իրավունքեն չզրկվի... ծնավ 1842 Հոկտեմբեր 5-ին ի Գարբալ։

Մնելուն պես աղմուկ մը վրդուց. ծնողքն ի՛նչ ըսել ուզելն չէին հասկնար. ծնողաց պես ինքն ալ չէր հասկնար, բայց որովհետև մարդս պոռալու համար ի՛նչ ըսել ուզելն հասկնալու պարտավոր չէր, շարունակ կը պոռար։ Դրացիք երախային ձայնը լսելով՝ իրարու կըսեին, թե այս աղջիկը մեծանա նե՝ գոռոզ աղջիկ մը պիտի ըլլա։ Ձայնին բարակ ըլլալուն պատճառավ, դրացիք աղջիկ կարծեր էին։ Մինչև որ երեք տարեկան եղավ նե՝ Թադիկին բերանը չդոցվեցավ, և ծնողքն ստիպվեցան պզտիկ տարիքին մեջ տունի վարպետ՝ ղրկել գինք, որ նախ լռել սորվի ու ետքը խոսիլ։ Վարպետ գացած օրն առաւոտն քերական մը տվավ ձեռքն ու Ա, Բ, Գ ճանչցունել ուզեց. Թադիկն մերժեց, առարկելով՝ թե Ա, Բ, Գ ին համար հոգնիլն պարապ բան է, և թե՝ իրեն նաբեկ կարդացնելու ըլլան նե՝ Ա, Բ, Գ ն ալ ճանչցած կըլլա։ Վարպետ առաւոտն շատ աշխատեցավ համոզել գինքն, թե սխալած է, օգուտ չըրավ, Թադիկն չհամոզվեցավ ու վարպետեն ելավ։ Քանի մը տարիներ անցնելեն ետքը՝ Բարիզ Մուրատյան վարժարանը մտավ, որ լեզու սորվի։ Չգիտցվիր, թե հոն ինչ ուսմունք և ի՛նչ լեզու սորվեցավ, միայն կը հավաստեն, թե Բարիզեն դարձած միջոցին իր լեզուն ալ կորսնցուցեր էր, ուրիշ լեզու ձեռք բերելու փափաքով ունեցած լեզվին վրայեն հսկողությունը վերուցած էր։ Պոլիս դառնալեն քանի մը տարի ետքը, Տնտեսական խորհրդո անդամ եղավ։ Տնտեսական խորհրդո

անդամ ըլլալեն երկու օր ետքն ալ համարակալն ամբաստանեց, անոր դեմ բողոքեց, լրագրաց մեջ հոդվածներ հրատարակեց, շատ մը օրինավոր փաստեր, ապացույցներ մեջ բերավ, վերջապես ամեն բան ըրավ, բացի հաստատելեն. կերևի թե հաստատելու շատ կարևորություն չտար ինքը։ Նույն միջոցին ծամանակ հանդեսն կրակ թափեց Պեկյանի գլխուն, և շատ աշխատեցավ, որ ըրածեն ամչցունե, բայց չհաջողեցավ, որովհետև Պեկյանը դեմ դրավ։ Այս թվականեն սկսյալ Պեկյան հրապարակախոս եղավ ու լրագրաց մեջ հետզհետե հոդվածներ հրատարակեց, միշտ դիմացինը համոզելու դիտավորությամբ, և չհամոզվելու համառությամբ։ Ամեն խնդրոց մեջ իր նպատակն ճշմարտությունը պաշտպանել էր, սակայն խեղճը ճշմարտությունն չէր կրնար գտնել։ Վերջերս դարձյալ ճշմարտության պահապան զինվոր գրվելով՝ Փունջի փաստաբան եղավ և կենդանի բառին բացատրությունը տալու համար[2] որչափ որ բառարան կա նե՝ ժողվեց, սայլի մը մեջ դրավ, ինքն ալ սայլին ետևեն երթալով գատարան մտավ, կենդանին հոս մարդ կը նշանակե, մրմռաց. այս չընդունվեցավ նե՝ ողջ կը նշանակե, բսավ. այս խոսքին մեջ ողջը չհարմարիր կոր, ըսին նե՝ մեռյալ թող նշանակե, էֆենտիմ, պատասխանեց. աս ալ չընդունվեցավ նե՝ թող ճիվաղ նշանակե, պոռաց. վերջապես այնչափ բան բսավ, որչափ որ պետք էր դիմացիններն խնդացունելու համար։ Պեկյան էֆենտին այս խնդրույն մեջ յուր զրպիտությյան մեծ վնաս կրնար բերել, բայց երթա թող ազոթք ընե, որ զրպիտություն չուներ։

Երեսփոխան եղած ժամանակ, երբ խոսելու կելներ, կը կարծվեր, թե իրեն մեծ չարիք մը ըրած են, այնչափ կիրքով խոսիլ կը կարծվեր. սակայն, ճշմարիտը խոսելու համար, սրտին մեջ կիրք չկա, ձայնին մեջ կա,— սիրտն յուր ձայնին հետ հակասության մեջ է, ինչպես Երեսփոխանական ժողովին մեջ տարի մը առաջ խոսածները տարի մը ետքը խոսածներուն հետ։ Քիչ խոսելու պրուիյունն ընդունած չէր և չէ։ Երեսփոխանական ժողովին մեջ օր մը օրանց ուրիշ առենաբանի մը կարծիքին համամիտ ըլլալն հայտնելու համար՝ կը կրկնեմ՝ ըսած չէ, ինչու որ պզտիկ բառ մ'է. ասոր հակառակ ուրիշի մը կարծիքին համամիտ ըլլալն հասկցնելու համար կրկնեմ բայն ամբողջ կը խոնարհե, կրկնեմ բային ո՛ր բային վրա խոնարհիլը կը բացատրե, բայերուն գործածության եղանակներն մի ըստ միոջե կը պատմե, բայերուն ի՛նչ զորություն ունենալուն վրա երկարորեն կը ճառե, առանց բայի խնդրոց ջուծվիլն կը փաստաբանե և վերջապես բայն քվեի դնել առաջարկելով՝ խոսքը կը վերջացունե։

Պեկյան էֆենտին երբ Ռուսինյան էֆենտիին հորինած կանոնագրության մեջ կարդաց այն հոդվածն, որ երեսփոխաններն չափով պիտի խոսին կըսեր,

այդ հոգվածին իրեն ակնարկություն ըլլալն հասկնալով աճապարանոք սենյակը վազեց ու հրաժարականը գրեց։

Պեկյան էֆենտին բարձր հասակով, թուխ գույնով, աղու աչքերով վայելուչ երիտասարդ մ'է, և քանի մը տարիներե ի վեր այն դեմքն ունի, ինչ դեմք որ կունենա երիտասարդ մը, երբ քանի մը տեղերե աղչիկ ուզե ու չտան։

ՍԻՄՈՆ Խ. ՅԱՂՃՅԱՆ

Սիմոն Խ. Յաղճյան, պատկերահան և դասատու գծագրության, ծնավ ի Սամաթիա 1851 սեպտեմբեր 18-ին։ Չորս տարու եղած միջոցին տունին մեջ ձեռքն անցածը կտրելով, թափելով նկարչության հարմարություն ունենալը հայտնեց։ 1865-ին Աղգ. հիվանդանոցի վարժարանը դրվեցավ, որպեսզի լեզու և գիտություն սորվի, բայց ինքն դպրոց մանելուն պես՝ մեկեն ի մեկ ցատկեց ու գծագրության ճյուղերուն փաթաթվեցավ։ Այն տեններն աղգ. վարժարանաց մեջ գծագրության ոչ ճյուղն կար, ոչ ալ տերևներն. Սիմոն ինք իրմե կաշխատեր և որովհետև գծագրության համար ծնած էր, քիչ ժամանակի մեջ ինքնօգնությամբ այնչափ հառաջ գնաց, որ դպրոցի մեջ գտնվող աշակերտաց ամենուն ալ պատկերները կը քաշեր, ոտքերն ու ձեռքերը շատ աղվոր կը նմանցուներ, դեմքերը միայն չէր կրնար նմանցունել։ Ծնողն նկատելով, որ զավակին դասերուն մեջ օրըստօրե կը տկարանա կոր, ինչպես այն տեղի կլիման դաս սորվելու չօդներ կոր, ըսին ու անկից հանելով Քուզկունճուխի՝ դպրոցը դրին, դժբախտաբար այս տեղի կլիման դաս սորվելու չօդներ կոր, ըսին, ու անկից հանելով, Սելամսըղլի[2] վարժարանը դրին։ Այս վարժարանին մեջ ալ Սիմոնիկն առավընե մինչև իրիկուն գծագրության կը պարապեր, ծառեր, անտառներ, առվակներ, ոչխարներ, հովիվներ, անուշ ջուրեր կը նկարեր. դասատուն հայերենի դաս հարցուցած միջոցին՝ գծագրած պատկերները կը ցցուներ։ 1867-ին վերջապես այս վարժարանեն ալ ելնելով՝ սեղանավորի մը քով գրագրության դրվեցավ, ուր կրկնատումարի դրությամբ բոլոր տետրակները պատկերներով լեցուց, սենյակին հետ հարաբերություն ունեցող անձանց անուններն գրելու տեղ՝ անոնց պատկերները կը գծեր, ճակատնուն աջ կողմը պարտի կը գրեր, ձախ կողմն ալ պահանջ է. աչքերուն մեջը թվականները կը գրեր, և քիմով ալ տետրակին երկու երեսի կը բաժներ։ Մեկ ականջին վրա մուտ և մյուս ականջին վրա ելք կը գրեր, մեկ խոսքով մարդոց դեմքն կրկնատումարի կը դարձուներ, կը ձգեր։

Տերն երբ տեսավ, որ հաշվո տետրակներն ալպումի կերպարանք առած

են, ավելի խնդաց քան թե վշտացավ, ապագրելով միանգամայն, որ տետրակներու մեջ ուրիշ անգամ պատկեր չնկարե. Սիմոնիկն պատասխանեց, թե ուրիշ դրությամբ տետրակ բռնել անհնար է իրեն, և այս պատասխանը տալեն ետքը սենյակեն առավ քալեց։ Տարի մը ամբողջ նորեն նկարչության եռանդն ինկավ, նկարչությունը կը փախչեր։ Սիմոնիկը եռանդն կը հալածեր, մինչև որ զայն ձերբակալեց նե՝ շատ հոգնեցավ, որովհետև գեղարվեստ մը ձեռք ձգելը ավազակապետ մը ձեռք ձգելու չափ դժվար է։ 1868-ին գծագրության դասատու եղավ նախ տուներու, և հետզհետե ազգ. վարժարաններու մեջ։ Յուր դաս տալու եղանակը շատ դյուրուսույց է, այնպես որ տասը տարվան մեջ ուզ մը գծել սորվողն այս դյուրուսույց եղանակին շնորհիվ հինգ տարվան մեջ կը սորվի։— Նվ որովհետև յուր կենսագրության այն կետին եկանք, ուր շահու խնդիրն կա, կը պարտավորինք լրջաբար խոսելով ըսել, թե Սիմոն էֆենտին ամեն ջանք կը թափե աշակերտները քիչ ժամանակին մեջ հառաջ մղելու. չե այն դասատուներեն, որոնք գիտցածնին ուրիշներու չզողցնելու համար երկաթյա սնտուկի մեջ և բանալիի ներքև կը պահեն։ Սիմոն էֆ. Յաղճյան առաջին կրնա համարվիլ ծաղրանկար գծելու մասին. ժամանակավ Մեղվի և երբեմն Թատրոնի մեջ տեսնված աղվոր ծաղրանկարներն անոր մատիտին արդյունքն են։

Սիմոն էֆենտի միջահասակ և պարկեշտ երիտասարդ մ'է։ Քիչ մը կրակոտ է, այնպես որ քիթին ծակերեն շունչ արտադրած ժամանակը կը կարծվի թե Շիրքեթի խայրիեի շոգենավներեն մեկուն ծխնելույզն է, որ կը ծխե։ Յուր դեմքը կը հիշեցունե այնպիսի մարդու մը դեմք՝ որուն տասը հազար ոսկիով աղչիկ մը կուտան և ինք կը մերժե։

ՍԻՄՈՆ ՖԵԼԵԿՅԱՆ

Սիմոն Հ. Ֆելեկյան, դասատու, տեննաբան, բանաստեղծ և տնօրեն Ֆելեկյան վարժարանի, ծնավ ի Չմշկածագ 1831 սեպտեմբեր 18-ին։

Մորն արգանդին մեջ ինն ամիս քնատ մնալուն պատճառավ աշխարհ եկած տեեն անանկ քուն մը կը քաշեր, ինչ քուն որ կը քաշե առջի դիշերվնե հարսնիք գացող մեկը։

Ծնողքն առջի բերան մեծ ցավ զգացին, տեսնալով՝ որ զավակնին արթընալու նշան մը չցցուներ, բայց երբ վեց ամիսեն ետքը արթնցավ, ծնողացն ցավն ուրախության փոխվեցավ։ Սիմոնիկն արթննալուն պես՝ յուր քիթը քննեց և ասկից հասկցավ, որ ապագային մեջ բանաստեղծ մը պիտի ըլլա — որով-

հետև ներկա դարուս մեջ մեկու մը բանաստեղծ ըլլալն անոր քիթեն կը հասկըցվի և ոչ գրութիւններեն։— Շնորհակալ եղավ յուր քիթեն, որ դինքը բանաստեղծութեան կոչած էր։ Մեկ ու կես տարեկան եղած միջոցին ոտանավոր խոսելու կը վարժվեր. վեց տարեկան ըլլալուն պես՝ արձակը առենաբանութեան համար պահելով՝ միայն ոտանավոր կը խոսեր։ Մայրն օր մը դինք նպարավաճառի մը խանութ դրկեց, որ հարյուր տրամ պանիր առնե։ Սիմոնիկը գնաց նպարավաճառին խանութը, անոր առջևը կանգնեցավ և սկսավ պանիրին վրա առենաբանութիւն մը ընել, որուն մեջ մեկիկ մեկիկ բացատրեց պանիրին օգուտներն և անկից ծագած վնասներն։ Պանիրին ի՛նչպես շինվելուն և ի՛նչպես ուտվելուն վրայոք ամենապարզ բացատրութիւններով ճառեց, և վերջապես պանիրին ազգային մանկտյաց դաստիարակութեան համար օգտակար ըլլալն հայտնելով՝ վերջացուց առենաբանութիւնն։ Այսպես վերջացունելուն պատճառն ալ պանիր աժան առնել ուզելն էր։ Երբ նպարավաճառն ապուշ-ապուշ երեսը կը նայեր, Սիմոնիկը գրպանեն քառասուն բարա հանեց և նպարավաճառին տալով ըսավ.

Նպարավաճառ, ոհ, հարյուր, ոհ, տրամ
Գընել կամեի ես պանիր ի քեն.
Եռ զքառասուն, ոհ, բարայս, զոր տամ,
Եվ տուր ինձ պանիր ի լավագունեն։

Նպարավաճառն թեպետև ոտանավոր չէր հասկնար, բայց քառասուն բարան արդեն տեսած ըլլալով՝ և հարյուր տրամ պանիր բառերն ալ լսելով՝ հասկցավ, որ հարյուր տրամ պանիր կուզե քառասուն բարայով և որովհետև այդ գնով չէր կրնար տալ Սիմոնիկին, ըսավ, որ հարյուր տրամ պանիրն վաթսուն բարա կըլլա։ Նպարավաճառին այս պատասխանին վրա Սիմոնիկն նորեն առենաբանութիւն մը ընել սկսավ, մեր ազգին առաջ չերթալուն պատճառներեն մեկն ալ ազգին աղեկութեան համար խոսողներն մտիկ չընելնիս է, ըսավ, և անհամաձայնութեան շատ վնասակար ըլլալը երկար բարակ մեկնութիւններով բացատրելեն ետքը առաջարկեց նպարավաճառին, որ խոսքն մտիկ ընե և պանիրն իր ուզած գնովն առ՝ ի սեր ազգային հառաջադիմութեան։ Հայ-անասեր ազուն այդ ազգասիրական եռանդն հաճո թվեցավ նպարավաճառին և ստակ մը չառնելով, պանիրն ավավ։ Այս դեպքին վրա Սիմոնիկն բանաստեղծութեան ավելի ուժ ավավ։ 1841-ին Պոլիս եկավ դաստիարակութիւն առնելու, և Հիվանդանոցի վարժարանը մտավ։— Մեկ-երկու տարվան մեջ հսկայի քայլով ճամբա առավ. ճաշակը կրթեց, ղազումաններն բխելով կը բխեին սրտին մեջ. ղազումաններն կողողեին հայրենասեր բանաստեղծին սիրտը, և վերջապես հորդելով մինչև Պառնասա գագաթը բարձրացան,

ուր Ապոլոն հաճեցավ քնար մը նվիրել իրեն։ Սիմոնիկը քնարն ձեռք առնելուն պես՝ աչքերը Հայաստանի ավերակաց վրա դարձուց, հայրենյաց սերն վառեցավ, արտասուքներն հոսեցան։ Սուգ արավ պանդխտին քնարն և անոր մեղմ, անուշ ու փափուկ թելերն տխրագին կեղերերգեին.

Ըե իմս հայրենյաց քնար սգավոր
Հնծե տխրագին՝ իմ սրտիկս է այն,
Ըե նորա բեկբեկ թելեր վշտավոր
Խոսին ողբաձայն՝ իմ ձայնիկս է այն,
. . . . . .
. . . . . .

Շատ քերթողներ արցունք թափեցին Հայաստանին համար, բայց այն արցունքը, զոր Ֆելեկյանը ցողեց Հայրենյաց ավերակաց վրա՝ ամենեն փափուկն և ամենեն սրտառուչն է։—

Զեռք առնենք, ընթերցող, կենսագրութեան երգիծական մասն, զոր հակառակից ստիպվեցանք պահ մը ընդմիջել Սիմոնիկին քնարին անիրավութիւն մը չընելուն համար։

Եվ ահա այսպես Սիմոնիկը Հայաստանը կողբար, թեպետև ինքն ալ Հայաստանեն ավելի աղեկ վիճակ մը չուներ։ 1855-ին Սիմոնիկը դաստավութեան սկսավ, դաստավութենեն ավելցած ժամերն ալ առենաբանութիւնով կը զբաղեր, բայց ոչ առաջնուն և ոչ ալ վերջնուն մեջ յուր բանաստեղծական անոթութեան հագուրդ չկրնալով տալ, Պոլսեն դուրս ելավ և շրջակա գեղերուն մեկուն մեջ ագարակ մը վարձեց բանաստեղծութիւն ընելու համար։ Հոն կերգեր բնութիւնն, ծառերն, առվակներն, հովիվն, սրինգն, կովերն, ձիերն, էշերն և սագերն, սոխ ու սխտորն ալ իր քնարեն չէին վրիպած, ինչ որ տեսներ՝ քնարովը կերգեր. բայց որովհետև ոտանավոր գրելով ագարակ մը չկառավարվիր, սիրվեցավ հոնկից հեռանալ՝ անիծելով մարդոց շահասիրութիւնն և բանաստեղծն մը ստակ պահանջելու հոռի գրութիւնը։ 1868-ին նորեն Պոլիս դառնալով՝ երկու տարի ամբողջ ագարակին մեջ իրեն եղած անիրավութիւնները իր բարեկամաց պատմելով գրաղեցավ։ Ագարակին պատմութիւնը լմընցրնելուն պես՝ վարժարան մը մտավ դաստավութեամբ։ Այս միջոցներն էր, որ Եվրատ[1] անունով բանաստեղծական հանդես մը հրատարակելու առաջնութիւն առավ, որուն մեջ քանի մը ոտանավորներ հրատարակելեն ետքը՝ սկսավ ոտանավոր գրել նաև ազգային հոդվածներն, որոնք քիչերուն հասկնալի ըլլալուն պատճառավ՝ շատերեն չէին կարդացվեր։

Սիմոնիկն սիրվեցավ դադրեցնել յուր հանդեսը. քանի մը ամիսեն վերահրատարակել սկսավ, նորեն դադրեցուց, դարձյալ հրատարակեց. կը

ցավինք, որ համրիչ չունեինք, որպեսզի քանի անգամ հրատարակվին ու դադրին ճիշտ դանայինք։ Վերջերը Եփրատը ուրիշներուն, ինչպես նաև այս տողերը գրողին խմբագրությանն ներքև ալ հրատարակեցավ, բայց վերջապես օր մը առանց հրամանի հրատարակած ըլլալուն համար իսպառ խափանեցավ։ Այս խափանման վրա Ֆելեկյան էֆենտին ոտանավոր գրելով շատացավ։ Քիչ մը ժամանակ անցնելեն ետքը՝ քանի մը դասատուներու հետ միանալով Իսկյուտար Սելամսըզ վարժարան մը բացավ, ուր երկու սեռե ալ աշակերտներ պիտի ընդուներ՝ եթե երթային։ Ժամանակը թող չտվավ, որ աշակերտ ընդուներ, որով վարժարանին դռները քաշեց, գոցեց, ինքն ալ դուրս ելավ։ Երկու տարի անցավ չանցավ, չորս աշակերտ գտավ ու դիշերօթիկ մեծ վարժարան մը բացավ Իճատիեի և Գուզկունճուքի մեջտեղ։ Քանի մը ամիսեն օդափոխության համար այս վարժարանն Գատըգյուղ փոխադրեց, անկից նորեն Իսկյուտար փոխադրելու միջոց կը խորհի կոր, բայց չկրնար կոր գտնալ։

Այսպես ուրեմն, բախտը թող չտվավ, որ Ֆելեկյանը խնդա. օր մը չըլլար, որ դժբախտություն մը չհանդիպի. օր մը Գում Գաբուի երթալու տեղ սխալմամբ Ֆերիգեղ կերթա. օր մը իրիկվան դեմ հելվաճիին հարյուր տրամ ճելվա առնելու կերթա ու հելվային տեղ հելվաճիին լապտերը կառնե տուն կը դառնա. օր մը փողոցեն գացած միջոցին կույրի մը կը զարնվի. կիյնա, ոտքը կը ցավցնե, որովհետև դիշերները մատաղջութենեն չկրնալով քնանալ՝ ցերեկները քալած տաեղը կը քնանա։

Ֆելեկյան էֆենտին պճնասեր չէ, ուրիշներուն պես հագվելու սպվելու փափաք չունի, խել մը երիտասարդներու պես առտուները ժամերով հայելիին առջևը անցնիլ ու մազերը սանտրելու ալ սովորություն չունի։ Չմշկածագեն հոս գալու համար ճամբա ելած օրը մայրն սանտրած էր մազերը. Ֆելեկյանն ալ այս հիշատակը անմոռաց պահելու համար՝ այն օրեն մինչև այսօր սանտր դպցուցած չէ մազերուն։

Ֆելեկյան էֆենտիին դեմքը այն մարդուն դեմքին նմանություն կը բերի, որ կամուրջին վրա կեցած՝ քովիններուն կը հարցունե, թե կամուրջը ո՞ւսկից կերթցվի։

ԹՈՎՄԱՍ ՖԱՍՈՒԼՅԱՃՅԱՆ

Թովմաս Ֆասուլյաճյան, երբեմն այլևայլ թատրոններու տնօրեն և վերատեսուչ, հիմա դերասան, թերևս քիչ ժամանակեն նորեն տնօրեն, նորեն դե-

րասան, ծնավ ի Ֆեներ՝ 1843 հուլիս 25-ին, ամառային այն տաք օրերուն մեջ, ուր մայրն երկու նեղություն միանգամայն ունեցավ, մին շնիկ աստղը և մյուսն երախան։

Թովմաս աշխարհ գալուն պես՝ առանց երկար հառաջաբանի երկու բառով բացատրեց, թե ինք կարող է ուրիշին, ասուն թե անասուն, ձայնը հանելու, շարժվածքն իր վրա ձևացնելու, որովհետև ծնելուն պես մլավ, մլավ աղաղակեց, ճիշտ այն կատվին պես, որ առներնին կը դանվեր և որուն մլավյունը Թովմաս մորն արդանդեն լսած ու անոր պես մլավելու վարժություն ըրած էր։

Հաղիվ թե չորս տարեկան եղած էր՝ բոլոր կենդանյաց ձայները կը հաներ, և եթե հարկ ըլլար՝ կրնար իրարու լեզուն չհասկցող կենդանիներու մեջ թարգմանի պաշտոն վարել։ Տեսած մարդուն քալվածքն, շարժվածքն, ձևերն իր պզտիկ հասակին վրա ձևացունելն բերնուց դեր սորվելեն շատ դյուրին էր իրեն։

Յոթ տարեկան էր՝ Ենի Մահալլեի[2] վարժարանը մտավ ուսումնք առնելու։ Քիչ մը առեն հոն մնալեն ետքը՝ Գում Գաբուի վարժարանը մտավ և այնչափ ուսումնք առավ, որչափ որ կուտային նույն թվականին վարժարանները։

Վարժարանեն ելավ ու մեկ երկու արվեստներ փոխելեն ետքը՝ թյուլպենթենիի մը քով մտավ, ոչ թե թյուլպենտ ծախելու համար, այլ խանութը եկող հաճախորդներեն ձև ու շարժվածքներ դողնալու համար։ Այս հատկություններն դերասանի էին, և Թովմասը չէր ուզեր, որ անոնք աննշան մնան, ուստի ըսավ, դերասան ըլլամ, և եղավ։

1861-ին Արևելյան թատրոնը մտավ ու սիրահարական մասերեն սկսավ յուր տաղանդը փայլեցունել։

Քիչ ժամանակ անցնելեն ետքը՝ Իզմիր գնաց, ուր ամենայն հաջողությամբ կատարեց Կույրին զավակը[3]։ Այնչափ բնական կույր ձևացուց, որ հանդիսականք բուռն ծափահարությամբ թատրոնը ընդացուցին։ Թովմասն այս ծափահարություններե քաջալերված՝ բավական ժամանակ կույր մնաց... յուր ուրիշ պակասությանց։ Իզմիրի մեջ յուր անունը սկսավ համբավ վաստկիլ, յուր տաղանդն պայծառացավ։ Ասոր վրա ինքն ալ պայծառացավ օրիորդ Պայծառին հետ ամուսնանալով։ 1864-ին վերջերը իր ամուսնույն հետ Տրապիզոն գնաց, ուր դպրոցին կառավարիչն, եկեղեցիին ժամկոչն, լուսարարն և քանի մը պատանիներ ժողվելով խումբ մը կազմեց և ազգային ներկայացումներ տալ սկսավ։ Այս մասին շատ դժվարություններ քաշեց, որովհետև կառավարիչն, որ առավոտեն մինչև իրիկուն «Ծո տղաք, սուս եղեք» ըսելու վարժված էր, օր մը ներկայացման միջոցին երբ հանդիսականներն Պ. Ֆասուլյաճյանը կը ծափահարեին, կառավարիչն որ Շապուհի դերը[4] կը կատարեր՝ հանդիսականներուն դառնալով՝ «ծո տղաք, սուս եղեք», պոռաց։ Կառավարիչը այնչափ

Հանցանք չուներ — որովհետև առավընե մինչև իրիկուն այդ խոսքը ընելու վարժված էր բերանը,— որչափ որ հանցանք չունին այն դերասանուհիներն, որ այսօրվան օրս տեսարանին վրա շարունակ կը խնդան: Ֆասուլյաճյան՝ 1865-ին վերջերը Թիֆլիս, և անկից ետքը տասնի չափ քաղաքներու մեջ, որոնց անուններն մի առ մի հիշել երկար կըլլա, ներկայացումներ տվավ, ոչ թե սառակ վաստակելու, այլ դերասանության արվեստը Ռուսաստանի մեջ տարածելու համար: 1870-ին Պոլիս եկավ և 18 հոգիե բաղկացյալ խումբ մը կազմելով՝ Նախիջևան տարավ: Հոն ներկայացուց Աբեդյան կզբոսնու[5]–ի մեջ Բրիպուլեի դերն, որուն մեջ, ըստ ականատես հանդիսականաց, չերմ ծափահարությամբ վարձատրվեր է: Բայց որովհետև այս չերմ ծափահարություններն բավական չեն թատրոնի մը ծախսը հոգալու, Պ. Ֆասուլյաճյանն հետը տարած խումբը կաոր կաոր ընելով հոս դրկեց, անոնց ետևեն ալ ինքը եկավ:

Հոս գալուն պես՝ Օրթագյուղի Բարեսեր ընկերության[6] վերատեսչությունն հանձն առավ և ամբողջ շրջան մը ներկայացումներ տվավ հոն, գեղացին պոհուիթյամբ ընդունեց դինը և պոհուիթյամբ բաժնվեցավ իրմե:

Տարի մը անցնելեն ետքը՝ Վարդովյանի խումբին դեմ մրցելու համար Իսկյուտարի Աղիզիե թատրոնն վարձու բռնեց ու ամիս մը ետքը Վարդովյանին՝ վարձու տվավ, ինքն ալ այն խումբին դերասան դրվեցավ և մինչև այսօր նույն խումբին մեջ կը դտնվի:

Պ. Ֆասուլյաճյան այս խումբին մեջ շատ դերեր կատարեց, որոնց մեջ նշանավոր հանդիսացավ: Մերուսի տասնապետին[7] մեջ այնքան ճարտարությամբ համր կը ձևանա, որ Վարդովյան էֆենտին դիշեր մը օթյակեն պոռաց. «Ո՛ւր էր թշվառականն միշտ տասնկ համր մնար ու դերասաններս չդըդըեր»: Նույնպես Լիոնի Սուրհանդակին[8] մեջ կը Զյուրքի և Տը Պոսքի մասերն, այսինքն անմեղության և շարագործության երկրորդության մը իր անձին վրա կատարյալ հաջողությամբ ներկայացուց:

Պ. Ֆասուլյաճյանին դեմքին վրա կատարյալ գաղափար մը տալու համար, պարտավոր էինք յուր պատկերն այնպես հրատարակել, որ յուր պեխերուն կեսը ածիլված և կեսը չածիլված ըլլար, որովհետև վեց ամիս պեխով կը պտըտի, վեց ամիս առանց պեխի: Ինք ընդհանրապես այն դեմքն ունի, ինչ դեմք որ կունենա տղա մը երբ խաղալիքն ձեռքեն կառնես:

Այս վիճակին մեջ յուր դեմքեն ավելի տղայություն կը հուսացվի քան թե չարություն. բայց խելոք տղու ալ չնմանիր, ասդին անդին վազող, ամեն տեսածն ուզող տղու մը կը նմանի. ըստ ոմանց՝ ուզածը չտրվի նե՝ ոտքերը գետինը կը զարնե եղեր, ըստ ոմանց՝ մասը չդիտնա նե՝ կը զարնե եղեր: Սատանան առնե մեղքը:

ԵՐԱՆՈՒՀԻ ԳԱՐԱԳԱՇՅԱՆ

Երանուհի Գարագաշյան, դերասանուհի, ծնավ Իզմիտեե, իր հաշվով՝ 1859-ին, իմ հաշվով՝ 1851 դեկտեմբեր 4-ին:

Երանուհին լույս ընծայվելուն պես, թաթիկներով սկսավ ձևեր ընել: Վեց-յոթ ամսու եղած չեղած, ոտքի ելավ և քալել սկսավ: Մեյ մը ասդին, մեյ մը անդին վազելովը, ձեռքն ինկածը կոտրելով թափելովը, բարձր ձայնով պոռալովը, իսկույն հայտնեց, թե դերասանության մեծ հարմարություն ունի:

1856-ին թաղին վարժարանը դրկվեցավ, ուր լմնցուց Երանուհին յուր քեռկականը, հեգարանը, Սաղմոսը, Գործ առաքելոցը ու Նարեկը, ու 1862-ին վարժարանեն ելավ:

1865-ին երբ Վարդովյան էֆենտին ոտքի ամանները ձեռքը բռնած փողոցե փողոց, թաղե թաղ կը վազեր դերասանուհի դտնելու համար — այն ատենները դերասանուհի մը գտնելը հիմա հայերեն ներկայացումներուն թատրոնի մեջ հանդիսական գտնելեն ավելի դժվար էր և — էմիլեր ալըրըմ պոռացող հրեաներու նման, ամեն դուռ կը զարներ ու «դերասանուհի մը ունի՞ք մի» կը հարցուներ, դիպվածով Գարագաշյանին դուռը զարկավ, ներս մտավ և իրեն հատուկ համոզելու եղանակը ձեռք առնելով համոզեց ծնողքը, թե աղջիկնին դերասանության տան, թե ասով ազդին մեծ ծառայություն պիտի ընեն, թե աղջիկներուն ապագան շատ աղեկ պիտի ըլլա, թե մեծ ապագա մը կսպասե աղջիկներուն և թե ապագան շատ չսպասեր, կերթա, և թե վերջապես Երանուհին պետք է դերասանուհի ըլլա:

Երանուհին դերասանուհի բառն լսելուն պես՝ նույնը ղպաց, ինչ որ կը զգա տղա մը, երբ իրեն ըսես, թե քեզի շաքար բերի, կամ ինչ որ կը զգա աղջիկ մը, երբ իրեն ըսես. ել, քեզի պալո տանիմ, բայց կըլլա՞ մը ըսելու քաշվելով՝ սա առարկությունն ըրավ — ես կամշնամ տեսարան ելնելու այնչափ բազմության առջև.— վնաս չունի, աղջիկս, պատասխանեց Վարդովյան էֆենտին (այն ատեն պարոն), առջի անգամուն քիչ մը կամշնաս, բայց կամաց կամաց կը վարժվիս. ես ալ առաջին անգամ տեսարան ելա նե՝ կամշնայի, բայց հիմա, փառք աստուծո ողորմության, ամենևին չեմ ամշնար, արձակ համարձակ կը խոսիմ:—

Այս խոսքերեն շաբաթ մը ետքը, Երանուհիին դերասանուհի ըլլալը որոշվեցավ:

Երկու ամիս ետքը՝ օրիորդ Գարագաշյան Արևելյան Թատրոնին մեջ ի տես ելավ Աշխենի[1] դերով և այնչափ ճարտարությամբ ներկայացուց, որ սիկին Արուսյակին նախանձը հուզեց քիչ մը: Հետզհետև տրված ներկայացումներուն մեջ միշտ սիրուհվո դեր կատարելով՝ քիչ ժամանակի մեջ մեծ հառաջդիմու-

թյուն ըրավ։ Տարի մը ետքը «Պողոս և Վիրգինիա»յի[2] մեջ Պողոսի մասն կատարեց, և սիրավառ պատանիի մը զղացմունքներն մանրամասնորեն ցցուց յուր վրա այնչափ վարպետությամբ, որ հանդիսականներեն ոմանք ըսին, թե եթե օրիորդ Գարագաշյան արական սեռին վերաբերեր՝ բոլոր աղջիկներուն սիրտն իրեն պիտի դրավեր։

Օրիորդ Գարագաշյան առանց խումբեն բաժնվելու՝ շարունակեց մինչև վերջը։ Իրեն տրված մասերը սիրով կընդունի և սիրով կը կատարե. մասն աղեկ կը սորվի և տեսարան ելնելուն պես՝ բերանը բանալով հուշարարին չսպասեր, որ մասը կարդա։

Այս վերջերս տեսնվեցավ, որ երաժշտության մասին ալ հարմարություն ունի, ձայնը բնավորության պես մեղմ է, և ունի այն ելևէջներն, որ երգիչի մը պետք են. «Գեղեցիկ Հեղինե»ի[3] մեջ Հեղինեի դերը կը կատարե, ունի Հեղինեին գեղեցկությունը, խոսվածքը, շարժվածքը ու բոլոր ձևերն, սակայն անոր զորավոր ձայնն կատարելապես չունի, և սակայն հուսալի է, որ այս մասին ալ քիչ մը ատեն վարժություն ընելով այդ պզտիկ թերությունն յուր ձայնին գեղգեղանքովը ծածկե։

Օրիորդ Գարագաշյանը դերասանուհվո մը բոլոր հանգամանքներն ունի. միջին ու վայելուչ հասակով, սև աչքերով ու սև ընքվիններով, երկար մազերով, ժպտալի և ձվաձև դեմքով աղջիկ մըն է. եթե դերասանական կյանքին մեջ պակասություն մը ունի՝ ան ալ սա է, որ տեսարան ելած ժամանակը միշտ այնպիսի դեմքով մը կելնե, որ կարծես թե հոգաբարձու մ'է, որ վարժարան կը մտնե, և կարծես, թե տեսարան ելած ժամանակը հանդիսականները ոտքի չելլալնուն համար սրդոդած է։

Ամեն հոգմե չշարժիր։ Թատրոնի բեմին չափ լայն սիրտ մը ունի. եթե մեռյալ մը տեսնե՝ սիրտը Թունդ չելներ, այլ ավելի կը մոտենա զայն քննելու, որպեսզի տեսարանին վրա մեռնիլ հարկ ըլլա նե՝ բնական մեռյալ մը ձևանա։ Նույնպես եթե մեկը բարկանա՝ դիտմամբ ավելի կը բարկացնև, որ բարկության ձևերն ու շարժվածքներն աղեկ սորվի։

Այս փափաքով է, որ այսչափ առաջ գնաց, ինչպես որ անով առաջ պիտի երթա նաև ասկից վերջը ի պարծանս հայ թատրոնին։

ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ



Ա.

Հազար ութը հարյուր յոթանասուն... չեմ հիշեր՝ քանիին, սեպտեմբեր-երեսունըմեկին — ներեցեք, երեսունին պիտի ըսեի, վասնզի սեպտեմբերն-երեսուն օր միայն ունի — երկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ փաթթոցված միջահասակ և գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի շոգենավեն նոր եկած էր, Գալաթիո նավամատույցին վրա կայնած՝ նավակ մը յուր սնտուկները հանել կաշխատեր։

Կը տեսնեք՝ որչափ պարզությամբ սկսա։ Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուգար, թե խառն բազմություն մը հետաքրքրությամբ դեպ՝ի Գալաթիո հրապարակը կը վազեր, թե ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն խոսքեր, որովք վիպասաններն կսկսին միշտ իրենց վեպերը։ Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն ոչ հով կար, ոչ անձրև, ոչ խառն բազմություն և ոչ ձերբակալված աղջիկ մը։

Արդ, առանց կասկածելու հավատացեք պատմությանս, որ ժամանակիից դեպք մ'է։

Այս ճամբորդն օժտված էր զույգ մը խոշոր և սև աչքերով, զույգ մը հաստ, սև և երկար հոնքերով, զույգ մը մեծ ականջներով և զույգ մը քիթով... չէ՛, չէ՛, մեկ քիթով, թեպետև բայց զույգ մը քիթերու տեղ կրնար ծառայել, ատոր մեծությունը սխալեցուց պիս։ Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե պ. Հ. Վարդովյան հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ Թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»։

Սնտուկներն և անկողինն, որ քուրջի մը մեջ ներփակված էր, նավակեն հանելուն պես ճամբորդն քաշեց քսակն և նավավարին իրավունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց։ Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն։ Տարակույս չկա, որ եթե հինգ կանչեր, քսան և հինգ պիտի ունենար յուր առջև մայրաքաղաքիս սովորությանը համեմատ։

— Ո՞ր կողմ պիտի երթաք, աղա, հարցուց բեռնակիրներեն մին՝ մեկ ուրքը անասուններեն միուչն վրա կոխելով։

— Բերա, Ծաղկի փողոց, ինչ 2 պիտի երթամ, պատասխանեց խոշոր մարդը։

— Շատ աղեկ, հասկցա, Բերա, Ծաղկի փողոց... պատվական փողոց մ'է, ըսավ հարցումն ընող բեռնակիրն և անասուկ մը շալկելով սկսավ երթալ։

— Ծաղկի փողոցն ես ալ գիտեմ, ըսավ երկրորդ բեռնակիրն և անասուկին մեկն ալ ինք առնելուն պես՝ Բերայի ճամբան բռնեց։

— Ես ամեն օր կերթամ Ծաղկի փողոցն, ըսավ երրորդն և մարդուն անկողինը գետնեն վերցնելն, կռնակին վրա առնելն ու վազելն մեկ ըրավ։

Այս գործողություններն այնքան արագությամբ կատարվեցան, որ մարդը շվարելով սկսավ չորս կողմը նայիլ՝ տեսնելու համար բեռնակիրներն, որ բազմության մեջ անհայտ եղած էին։

— Ի՞նչ խայտառակություն է աս, պոռաց վերջապես ոտները գետինը դարնելով, ո՞ւր տարին անկողինս և անասուկներս, ատոնք ի՞նչ իրավունք ունին իմ անկողնուս և անասուկներուս խառնվելու, ի՞նչ աներես մարդ են եղեր այս տեղաց մարդերը. ինչ որ կը տեսնեն, կառնեն, կը տանին։

— Ծաղկի փողոցը մենք ալ գիտենք, աղա՛, մեզի ալ բան մը տուր, որ տանինք, ըսին մյուս երկու բեռնակիրները։

— Ծաղկի փողոցն ալ գետնին տակն անցնի, դուք ալ, պատասխանեց մարդն, որուն այտերն նեղությենե կարմրիլ սկսած էին։

Երկու բեռնակիրները խնդալով հեռացան. և ճանրորդն ալ յուր սնտուկներուն հետեն երթալ կը պատրաստվեր, երբ բարձրահասակ, թխադեմ, փոքր աչերով մարդ մը ուսերը տնկած, ձեռները շփելով և բռնաբռոսյալ ժպիտով մը մոտեցավ անոր և քաղաքավարական ձևով մը ձեռները բռնելով հարցուց.

— Դո՞ւք եք Աբիսողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգենավով եկաք, ինչպես եք, ձեր եղբայրն ինչպես է, ազգային գործերն ինչպես են Տրապիզոն, հացին գինը քանի է հոն, անձրև եկա՞վ այս օրերս ձեր քաղաքը... վայ, Աբիսողոմ աղա, վայ...

— Ես եմ Աբիսողոմ աղա, հիմա եկա, տաճկի շոգենավով եկա, շատ աղեկ եմ, եղբայրս ալ աղեկ է, ազգային գործերն ալ աղեկ են Տրապիզոն, հացին գինը մեկ դահեկան է, անձրև չեկավ այս օրերս մեր քաղաքը, պատասխանեց փութով թիկնոցաբռնակն՝ առանց ճանաչելու այս անձն։

— Ներեցեք, թողութիւն ըրեք, որ չկրցի մինչև շոգենավ գալ ձեզ դիմավորելու համար։ Ինձի դրված էր Տրապիզոնեն, որ այս շաբթու անպատճառ հոս պիտի գաք...

— Ես ատանկ բաներու չեմ նայիր։



— Արդարև մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզի պես պատվական աղգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ մեկը...

— Սնտուկներս...

— Աղնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը...

— Բեռնա...

— Հայրենասեր անձ մը...

— Կիրները...

— Ապրասեր, ուսյալ, կրթյալ...

— Սնտուկ...

— Դաստիարակյալ...

— Ներս առին, տարին...

— Աղնվասիրտ, աղնվախոհ, անպնվագեմ մեկը իր մեջ ունենալուն համար:

— Սնտուկներուս մեջ ատանկ բաներ չկան, պատասխանեց Աբիսողոմ աղան քալել սկսելով՝ բեռնակիրները գտնելու համար:

— Թեպետև դուք զիս չեք ճանչնար, բայց ես ձեր դերդաստանը խիստ լավ կը ճանչնամ. ձեր լուսահոգի հայրն իմ լրագրույս բաժանորդ էր: Շատ բարի մարդ մ'էր, աղքատներուն ողորմություն կուտար, աղքատ աղջիկներ կը կարգեր և իրեն դիմողներուն բարություն կըներ: Ասանկ ողորմած մարդերը շատ սակրելու են, բայց, ի՞նչ օգուտ, անգութ մահը միշտ բարիները կառնե և թող կուտա չարերն, որ ազգին չարություն ընեն: Թողունք սակայն հինները և ուրիշ բանի վրա խոսինք: Շոգենավուն մեջ հանգի՞ստ էիք:

— Շատ հանգիստ էի, պատվականապես կերա, խմեցի և պառկեցա, պատասխանեց Աբիսողոմ աղան՝ քայլերն շուտ և մեծ առնել սկսելով:

— Եթե հանգիստ չըլլայիք, վաղվան լրագրույս մեջ պիտի գրեի և ընկերության ուշադրությունը պիտի հրավիրեի, ըսավ խմբագիրն եռեւեն վազելով:

— Շնորհակալ եմ:

— Կաղաչեմ, ըսեք ինձի, քանի տարեկան եք:

— Քառասուն:

— Վաճառական եք, կարծեմ:

— Այո... եթե անցագիր պիտի շինել տաք, հարկ չկա, վասն զի հատ մը ունիմ:

— Չէ, վաղվան թերթիս մեջ պիտի գրեմ, որ առաջի օրը Տրապիզոնեն մայրաքաղաքս եկավ մեծապատիվ Աբիսողոմ աղա երևելի վաճառականն, որ յուր լեզվագիտությամբ և վաճառականական հմտությամբն ծանոթ է մեր ազգայիններուն: Տաճկերեն գիտեք կարծեմ:

— Ո՛չ։
— Ֆրանսերե՞ն։
— Ոչ։
— Անգլիերե՞ն։
— Ոչ։
— Գերմաներե՞ն։
— Ոչ։

— Վնաս չունի, ես լեզվափոխ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր վրայօք դուխասով պիտի խոսիմ։

— Ամեն Պոլիս եկողներուն անունները ձեր թերթին մէջ կը դրե՞ք։

— Գրեթե ամենն ալ, եթե ձեզի պես պատուավոր ազգայիններ ըլլան։

— Պոլիսեն դացողնե՞րն ալ կը դրեք։

— Գրեթե կը դրենք, եթե պատուավոր ազգայիններ ըլլան։

— Շատ լավ, իմ անունս ալ դրեցե՛ք, ես ալ պատուավոր ազգային մ'եմ։ Մեր քաղքին մէջ արտերու, եղներու, կովերու և ագարակներու տեր եմ... Ատոնք ալ դրե, բայց այնպիսի դեմքով մը, որ կը հայտներ, թե մեծ շահ մ'ուներ այս խոսքերուն հրատարակութեանը մէջ։

— Հոգ մի՛ ընեք. խղճի և արդարութեան պարտք մը կատարելու համար անոնք ալ կը դրեմ։

— Երկու երեք հատ սպասավոր ալ ունիմ... անոնք ալ լրագրույդ մեկ կողմը կրնա՞ս անցունել։

— Ինչո՞ւ չէ։

— Ոսկիե ժամացույց և շղթա ալ ունիմ, բայց շոգենավուն մէջ չգողցնելու համար վրաս չառի. անոնք ալ դրել պե՞տք է, հարցուց Աբիսողոմ աղան, որ բոլորովին մոռցած էր սնտուկները։

— Ատոնք դրելու հարկ չկա։

— Շատ լավ, բայց մյուս ըսածներս լրագույդ մէջ ամենեն առաջ դիր, որ կարդան։

— Այնպես ընելու միտք ունիմ։

— Խոշոր գիրերով գրե։

— Հանգիստ եղեք. ամենեն խոշոր գիրերով։

— Միայն հարուստ մարդերուն գալն և երթալն կը դրեք... այնպես չէ՞։

— Այո։

— Եթե աղքատ մարդերն ալ կը դրեք, չեմ ուզեր, որ իմ անունս...

— Բնավ երբեք, ստակ չունեցողներուն անունները բնավ չենք գրեր, նույնիսկ եթե հազար ոսկի ալ աված ըլլան զպրոցի մը շինության համար։

— Ըսել է որ դուք ամեն իրիկուն հոս կպասեք Պոլիս եկող կամ անկից մեկնող հարուստները տեսնելու և անոնց անունները հրատարակելու համար, որպեսզի ժողովուրդն գիտնա, թե ո՛վ եկած է և ո՛վ գացած է... Տարակույս չկա, որ վաղը իրիկուն իմ անունս պիտի կարդամ ձեր լրագրին մէջ։

— Այո՛, ձեր հաստեն տվեք, որ տեղական թղթատարով դրկեմ լրագիրը։

— Բերա, Ծաղկի փողոց, թիվ 2։

— Շատ աղեկ, ըսավ խմբագիրն և գրպանեն թուղթ մը հանելով բաժանորդներուն ցուցակին մէջ անցուց Աբիսողոմ աղան։

— Վաղը առաու լույսը չձղրված դրկե, որ կարդամ իմ անունս լրագրին մէջ։

— Իրիկվան դեմ կը դրկեմ, վասն զի լրագիրս իրիկունները կը տպվի։

— Որչա՛փ ուրախ կըլլայի, թե ձեր վաղվան լրագիրն առաուն տպեիք... բայց վնաս չունի, իրիկվան ծող ըլլա, բավական է, որ անունս խոշոր գիրերով գրվի։

— Այդ մասին հանգիստ եղեք. վաղը իրիկուն անպատճառ կը դրկեմ լրագիրն ընկալագրով։

— Ընկալագրո՞վ... տեղական թղթատարով պիտի դրկեիք հապա... Ընկալագիրն ո՞վ է, տունս գիտե՞...

— Ընկալագիրն թուղթ մ'է, որուն մէջ կը գրեմ «Ընկալա մեծապատիվ Աբիսողոմ աղային... լրագրս տարեկան բաժանորդագին մեկ ու կես ոսկի» և այդ թուղթը ձեզի կը հանձնեմ, որով տարի մը իրավունք կունենաք իմ լրագիրս ընդունելու։

— Տարի մը շարունակ պիտի գրե՞ք իմ անունս։

— Չէ, բայց դուք բաժանորդ պիտի ըլլաք իմ լրագրույս՝ մեկ ու կես ոսկի վճարելով ինձի։

— Մեկ ու կես ոսկի՞՞... շատ է... երեք քառորդ ոսկի չը՞ բավեր։

— Խմբագիրները բաժանորդագնույն վրա սակարկութեան չեն ըներ...

— Շատ լավ. ղրկեցեք ձեր լրագիրն և այն թուղթը, բան մը կընենք։

— Սակայն չկարծեք, թե ես բաժանորդ գրելու նպատակով զձեզ տեսնելու եկա, քավ լիցի, այդ պզտիկութիւնը չեմ ընդունիր. բարեկամական պարտք մը կատարելու համար եկա զձեզ տեսնելու։

— Հայտնի բան է։

— Բնավ ձեր մտքեն չանցուցեք, թե այս մարդը մեկ ու կես ոսկի փրցնելու համար դիս տեսնելու եկավ։

— Չեմ անցուցեր։

— Վասն զի կան խել մը մուրացկան խմբագիրներ, որք Պոլիս եկողնե-

բը կողոպտելու համար անոնց քովը կերթան և բաժանորդ կը գրեն զանոնք։ Ես այդ բանը չեմ կարող ընել, վասն զի բնութեանս մեջ չկա... Ես իրրև պատուավոր մարդ կուզեմ ապրիլ։

— Հասկցա, իրրև պատուավոր մարդ կուզեք ապրիլ։

— Ինձ հետ ձեր ունեցած այս անախորժութեանն ալ ուրիշի մի՛ պրուցեք։ Վասն զի տեսակ մը բախտախնդիր, չվառական անձեր կան, որք բանդագուշական կենսագրութիւններ կը գրեն և իմ անձնականութիւնս կը խծբծեն։

— Կը հասկնամ, անձնականութիւնդ կը խծբծեն։

— Օրինակի համար սա պարագային մեջ հանցանք մ'ունի՞մ ես. ղձեղ դիմավորելու եկա և խոստացա ձեր անունը լրագրութեան մեջ հրատարակելդուք ալ իրրև ողջամիտ ազգային մը բաժանորդ գրվեցաք. կաղաչեմ, ըսեք ձեր կոկո՞րդը սեմեցի, որ ինձի բաժանորդ գրվիք։

— Ամենևին։

— Ատրճանա՞կ ցցուցի։

— Բնավ երբեք։

— Դանա՞կ քաշեցի։

— Ոչ. բայց ուրիշ տեղեր ատրճանակ կամ դանա՞կ ցցունելով բաժանորդ կը գրեն։

— Սա ըսել չեմ ուզեր, սա ըսել կուզեմ, որ դուք ձեր հոժար կամքով բաժանորդ գրվեցաք։

— Այո՛։

— Եվ ես վեհանձնաբար վարվեցա այս պարագային մեջ։

— Տարակույս չկա։

— Չվարվեցա այն խմբագիրներուն պես, որք օտարականի մը Պոլիս գալն իմանալնուն պես՝ վաղելով անոր տունը կերթան բաժանորդ գրելու համար։

— Այդ չվառականներն իրավունք չունին քու անձնականութիւնդ խըծբըծելու... դուն վատահ եղիր ինձի...

— Շնորհակալ եմ ձեզմե. մնաք բարով, Աբիսողոմ աղա. օր մը մեր խմբագրատունը հրամմեցեք խահվե մը խմելու։

— Շատ աղեկ. օր մը կուգամ։ Վաղվանին մեջ անցունելու չմոռնաք։

— Անհոգ եղեք։

Աբիսողոմ աղան և խմբագիրն բաժնվեցան իրարմե Բերայի քառուղվույն առջև, ուր հասած էին խոսելով։

Աբիսողոմ աղան առանձին մնալով սկսավ ճամբան շարունակել՝ ինքն իրեն հետևյալ խորհրդածութիւնները ընելով.

«Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կը կարծե այս

խմբագիրն. բայց հարկավ ան ինձմե աղեկ պիտի իմ որչափ մեծ ըլլալս, վասն զի խմբագիր մ'է և ուսումնական է...։ Վաղը լրագրի մեջ իմ անունս տեսնողները անշուշտ իրար պիտի անցնին և հետաքրքրութիւն պիտի ունենան ինձի հետ տեսնվելու. վաղը պետք է որ կիրակի օրվան հագուստներս հագնիմ և ոսկե ժամացույցս ու շղթաս ալ դնեմ. սպասավորներս ալ հետս բերելու էի. ո՞վ գիտեր...։ Ամեն մարդ պիտի իմանա վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս. ազնվատոհմ, ազնվասիրտ, լեզվագետ, ուսումնական, դաստիարակյալ, կրթյալ և այլն մեկը, և յուրաքանչյուր կնիկ պիտի ըսե իր էրկանը. «Մեր աղջիկը սա Աբիսողոմ աղային տանք»։ Էրիկն ալ պիտի պատասխանե կնկանը. «Նայինք՝ Աբիսողոմ աղան մեր աղջիկը կառնե՞, անիկա հարուստ տեղե մը աղջիկ առնել կուզե հարկավ»։ Այս պատասխանին վրա էրկան և կնկան մեջ վեճ մը պիտի ծագի և իրարու գլուխ պիտի պատռեն. որո՞ւ հոգ...։ Անուսիկ լրագրին մեջ անցնելն սա օգուտն պիտի ունենա, որ երկու օրվան մեջ հարուստ աղջիկ մը առնելով պիտի լմնցունեմ ամուսնութեան գործն, որու համար միայն եկած եմ հոս... այս ամուս...»։

Աղյուս բեռցված էշերու կարավանն էշ մը բախվելով Աբիսողոմ աղային դեմ՝ ընդմիջեց զայն իր խորհրդածութիւններու մեջ, ուր ընկղմած ըլլալով ուշադրութիւն չէր ըներ առջևեն եկող էշերուն, որովք լի է միշտ Բերայի մեծ փողոցը։

— Մեկդի կեցիր, ըսավ իշավար պարսիկն Աբիսողոմ աղային՝ արդարացնել ուզելով յուր էշը։

— Ատ խոսքը առաջ ըսելու էիր, որ զդուշանայի,— պատասխանեց Աբիսողոմ աղան և ճամբան շարունակեց։

Բ

Բեռնակիրներն ոչ լսած և ոչ ալ տեսած էին Ծաղկի փողոցն, բայց քաջալերվելով կարգ մը մարդերեն, որք պիտնալ կը ձևացունեն, ինչ որ չեն գիտեր, և որք խիստ բազմաթիվ են մեր ազգին մեջ, համարձակած էին ըսել Աբիսողոմ աղային, թե շատ աղեկ գիտեին Ծաղկի փողոցը։

Բեռնակիրներուն այս հանդգնութիւնն այնքան պարսավելի չէ, որչափ այն մարդերունն, որ խոհարարութիւն ուսած են և բանագատութիւն կընեն, կամ քիչ մը երկրաչափութեան պարապած ըլլալով՝ աստղերուն շարժումներուն վրայոք կը ճառեն, կամ երկու սագ և չորս կով մեծցուցած ըլլալով՝ դաստիարակութեան խնդիր կը հուզեն, կամ գավակ մ'ունեցած ըլլալով՝ առաջին մարդուն ո՛ր աշխարհի մեջ ծնած ըլլալուն վրա կատենաբանեն, կամ վեր-

չապես անանկ նյութի մը վրա կը խոսին, որ բոլորովին օտար է իրենց. այո՛, այս մարդերուն հանդգնությունն ավելի է, վասն զի բանադատությունն կամ աստղագիտությունն կամ մանկատածությունն և այլն Ծաղկի փողոց չէ, որ ուրիշներուն հարցնելով անմիջապես սորվի մարդ: Եվ արդարև բնեռակիրները, ամեն քայլափոխին, իրենց դեմն ելնողներուն հարցունելով՝ անմիջապես գտան Ծաղկի փողոցն և ինչ 2 տան դուռը զարկին. մինչդեռ ես շատ տաենաբաններ մտիկ ըրած եմ, որ յոթ-ութը ժամ շարունակ խոսելով՝ չեն կարողացած իրենց փնտռած փողոցը գտնել և ստիպված են ուրիշ փողոցներու մեջ թափառիլ և թափառեցնել իրենց ունկնդիրներն՝ անոնց քիթին բրտնելով:

Բեռնակիրները դուռը զարնելուն պես դուռը բացվեցավ և ներկայացավ իրենց թուխ և երկար դեմքով կին մը, որուն դեմքին վրա ժամանակն այնքան գծեր գծած էր զայն սրբապրելու համար, որքան որ կը գծե Մասիսի խմբագիրն յուր շորս տող մեկ ձեռագրին վրա, որ կամ մեկուն վախճանիլը կիմացունե և կամ ուրիշի մը կարգվիլը:

Բեռնակիրները դռնեն ներս մտնելով բեռները գետինը ձգեցին և սկսան իրենց քրտինքը սրբել:

— Աբիսողոմ աղային ըլլալու են ասոնք, այնպես չէ՞, հարցուց բեռնակիրներուն թխադեմ տիկինը:

— Անունը չըսավ մեզի, պատասխանեց բեռնակիրներեն մին՝ սև թաշկինակովն գլխուն քրտինքը սրբելը շարունակելով:

— Ի՞նչ տեսակ մարդ էր:

— Խոշոր թիկնոց մը հագած էր:

— Ի՞նչ գույնով էր, ճեմա՞կ թե թուխ:

— Ո՛չ, սև էր:

— Սև՞ էր:

— Այո, սև, բայց աղվոր, անոր փաթթոցը ճմռուը չմրսիր:

— Աս ի՞նչ խոսք է, փաթթոցին ի՞նչ պիտի ըլլա... ես քուկին գիտցած կնիկներեն չեմ, հասկցա՞ր, ըսավ տիկինը յուր խոսքերը շեշտելով:

— Վնասակար բան մը չըսի, փաթթոցվելով ի՞նչ կըլլա եղեր, պատասխաննց բեռնակիրն աթոռի մը վրա փռելով յուր թաշկինակն:

— Ատկե ավելի վնասակար ի՞նչ կրնա ըլլալ:

— Շատ բարակ բաներու մեր խելքը չպատկիր:

— Ես կը պատկեցունեմ... դուն դիս կը ճանչնա՞ս...:

— Փաթթոցվելեն ի՞նչ վնաս կուգա:

— Ես էրիկ ունիմ, ինչո՞ւ պիտի փաթթոցվիմ եղեր անոր:

— Էրիկ ունեցողներն ալ կը փաթթոցվին. էրիկն ուրիշ, աս ուրիշ. աս կը

տարցունե: Ըսենք, որ ճմռուը դիշեր մը դուրս ելար, փողոցին մեջ էրկանդ չես կրնար փաթթոցվիլ, բայց աս կռնակդ կառնես...:

— Աբիսողո՞մ աղան:

— Թիկնոցը, տիկին... Աբիսողոմ աղան կռնակի վրա կառնվի՞:

— Մինչև հիմա թիկնոցի՞ վրա կը խոսեիր:

— Խոսքերնիս թիկնոցի վրա չէ՞ր մի... հապա դուն ի՞նչ հասկցար:

— Ես հասկցա, որ Աբիսողոմ աղային փաթթոցվելու է, կըսես:

— Տեր ողորմյա, տեր ողորմյա, տեր աստված, ըսավ բեռնակիրն՝ թաշկինակը քաշելով աթոռեն:

Տիկինն բեռնակիրն տված բացատրութենեն գոհ ըլլալով՝ հրամայական եղանակով մ՚ ըսավ.

— Այս անկողինն և սնտուկները վե՛ր հանեցեք:

Բեռնակիրներն հնազանդելով բեռներն նորեն վերցուցին, և հազիվ թե սանդուղին առաջին աստիճանին վրա կոխած էին, տիկինն պոռաց.

— Լեռնե՞ն եկաք դուք:

— Ոչ, մեծ փողոցեն եկանք:

— Դիտեմ, որ մեծ փողոցեն եկաք. այդ ոտքի ամաններով վեր կելնըվի՞, տեսնք՝ ի՛նչ ըրիք տախտակներս, ես այսօր սրբեցի զանոնք, և հոգիս բերանս եկավ:

— Ի՞նչ ընենք, ուրիշ ոտքի ման չունինք:

— Ինչո՞ւ կայներ երեսս կը նայիք, չհանե՞ք տըվոնք:

— Մի՛ պոռար, տիկին, մի՛ պոռար, կը հանենք:

Սվ հանեցին իրենց ոտքի ամաններն, որք ավելի մաքուր էին, քան իրենց ոտներն:

— Ա՛յդ ոտքերով վեր պիտի ելնեք, կրկնեց տիկինն:

— Ուրիշ ոտք չունինք, այս ոտներով պիտի ելնենք, պատասխանեցին պանդուխտներն այնպիսի խղճուկ կերպով մը, որ կարծես թե իրենց աղքատության պատճառով երկու ոտքեն ավելի չէին կրցած ունենալ, և որպես թե հարուստներն չորս, հինգ կամ վեց ոտք ունեցած ըլլային:

— Վա՛ր իջեք, չեմ ուզեր, գետինը ձգեցե՛ք, ես կը տանիմ:

— Առանկ ավելի աղեկ կըլլա:

— Ա՛հ, ես ի՞նչ ըսեմ իմինիս, որ գործի չերթար, և առավոտեն մինչև իրիկուն սրճարանները կերթա, կը նստի, աղգային գործերու վրա կը խոսի, գիս առանկ խեղճ կը թողու, և ես ալ կստիպվիմ տունս մարդ դնելու, մրմռաց ինքնիրեն տիկինն և սանդուղին առջև դրված թայ լաթով մը սանդուղին առաջին աստիճանն սրբել սկսավ:

— Տիկին, մենք սպասե՞նք պիտի...

— Եթե խելքը գլուխը մեկն ըլլար, շարունակեց տիկինն ինքնիրեն, ես հիմա թագուհիի մը պես կյանք կանցունեի. զավակ չունիմ, բան չունիմ. բայց ի՛նչ ընեմ, որ խելքը միտքը թաղական ընտրելու և թաղական վար առնելու վրա է: Աստուածմե գտնան այն թաղականներն ալ, որ ամենուս խեղճությանը պատճառ կըլլան կոր: Ինչո՞ւդ պետք քուկին, տնա՛շեն, ուղողը նստի, չուղողը չնստի, դո՞ւն մնացիր այս աղգին գործերը շակոդ...

— Տիկին, մեր իրավունքը տուր, որ երթանք, պարապ տեղը չսպասենք հոս, ըսին բեռնակիրները:

— Վաղը եկեք, պատասխանեց տիկինն. և բեռնակիրներն, որք վաղը բառն ամեն օր լսելու վարժված էին, տիկնոջ պատասխանին վրա դռնեն դուրս ելան:

— Թաղականի մը եառեն է ինկեր, շարունակեց տիկինն դարձյալ, և բնավ չմտատար, որ ուտելու համար հաց պետք է, միս պետք է, եղ պետք է, բրինձ պետք է. զանոնք եփելու համար փայտ պետք է, ածուխ պետք է. ասոնք բնավ չհարցուներ, առտուն լույսը չճղքված կերթա և իրիկվան մութուն կուգա: Ահա հյուրերնիս այսօր եկած է և ժամե մը հոս պիտի դա. հարկավ անոթի է մարդն, առջևը բան մը հանելու է, որ ուտե, և մենք բան մը չունինք, վասն զի իրիկունները տուն եկած ժամանակը կտոր մը միս կամ ձուկ չբերներ, որ տունին մեջ կերակուր գտնվի... Թաղականեն ուրիշ բան չունինք տուներնուս մեջ, ամեն իրիկուն թաղական...

Տիկինն դեռ դիտողություններն լմնցուցած չէր, և ահա յոթանասունի մոտ մարդ մը, որ բանալիով բացած էր դուռն, ժպիտով ներս մտավ և բարևեց տիկինը: Այս մարդը տիկնոջ ամուսինն էր: Յուր խորշոմած կունտ ճակատն չափեն ավելի դուրս ցցված էր և այնպիսի դեմք մը ուներ, որ կարծես, թե մեկն զայն կը խտղտեր:

Այս մարդն հազիվ թե դռան սեմեն ներս ոտք կոխած էր, կինն առջևն ելնելով՝ հարցուց անոր.

— Ո՞ւր էիր մինչև հիմա, մարդ աստուծո:

— Չես ըսեր, կնի՛կ, թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան: Թորոս աղան ինձի քանի մը օղի խմցունելով եառես ինչ ձյավ, որ յուր ուզած մարդոցը քվե տամ, բայց ես իմ մարդոցս տվի, վասն զի իմ մարդիկս ինձի ամեն գիշեր օղի կը խմցունեն և շատ բարի և պատվավոր մարդիկ են, ուրիշներուն պես թաղին սնտուկեն ստակ չեն գողնար և դպրոցն ալ...

— Այս խոսքերուն ատենը չէ հիմա, շուտ մը գնա՛, կտոր մը միս ա՛ռ:

— Թորոս աղան քիչ մը սրդոզեցավ, և ասկից վերջը հետս սկսավ չպիտի խաղա. ի՛նչ չխաղա՛...:

— Ես քեզի ի՞նչ կըսեմ կոր... շուտ ըրե, գնա՛:

— Ես ալ տիրացու Մարտիրոսին հետ տակա կը խաղամ ասկից ետքը...

— Այդ խոսքերը վերջն ալ կընենք, Մանուկ աղա, գնա մսավաճառեն քիչ մը միս առ ու բեր:

— Տիրացու Մարտիրոսին գլխուն եկածը չես ըսեր, կնի՛կ. խեղճին կինն այս գիշեր մազ մնացեր է, որ մեռնի եղեր...

— Ինչո՞ւ:

— Մանչ մը բերեր է. բայց շատ դժվարությամբ. չորս գայակ և տատնվեց բժիշկ հազիվ կրցած են աղան առնել:

— Խեղճ կնիկ...

— Վաղը քիչ մը գնա՛, գինըը տե՛ս:

— Կերթամ, հիմա դուն գնա, սա մսին գործը լմնցուր:

— Այս գիշեր անպատճառ միս պե՞տք է:

— Հապա, Աբիսողոմ աղային անկողինն ու սնտուկները բերին, ինքն ալ հիմա կուգա:

— Իրա՞վ կըսես, կնի՛կ:

— Սուտ ինչո՞ւ պիտի խոսիմ:

— Շատ աղեկ ուրեմն. երթամ պատվական միս մ՚առնեմ ու գամ:

Մանուկ աղան անմիջապես տունեն դուրս ելավ և հազիվ թե քանի մը քայլ առած էր, կինը եառեն պոռալ սկսավ.

— Մա՛նուկ աղա, Մա՛նուկ աղա...

Մանուկ աղան ետ դարձավ.

— Միսն ի՞նչով պիտի եփենք, հարցուց կինը:

— Կուզես գետնախնձորով եփե, կուզես լուբիայով:

— Սա չէ իմ ըսածս. ածուխ չունինք, քիչ մ՚ալ ածուխ առնեիր:

— Շատ աղեկ, պատասխանեց Մանուկ աղան և սկսավ երթալ:

— Մանո՛ւկ աղա, Մանո՛ւկ աղա, կանչեց տիկինը նորեն:

Ետ դարձավ Մանուկ աղան:

— Աղեկ ա՛, մինակ միսով չըլլար, քիչ մ՚ալ բրինձ առ, որ ապուր մ՚ալ շինենք:

— Աղեկ ըսիր, կնի՛կ, քիչ մ՚ալ բրինձ առնենք:

Մանուկ աղան այս անգամ վազելով սկսավ երթալ. փողոցը դառնալու վրա էր, երբ կինն բոլոր ձայնովն եառեն զայն կանչեց.

— Մանո՛ւկ աղա, Մանո՛ւկ աղա... Ման...

Կանդ առավ էրիկն և վերստին ետ դարձավ՝ այս անգամ դեմքի զվարթության վրա քիչ մը զեղչ ընելով։

— Ի՞նչ կուզես...

— Մարդ ասուածո, շոգեկառքի պես կը վազես, ձայնս մարեցավ։ Սոխ չունինք, աղ ալ չունինք, քիչ մ'ալ կազ կամ ճրագ առնելու է, որ վառենք. մարդը մութո՞ւն պիտի նստեցունենք։

— Աղնիկ ա՛, ամենը մեկեն ըսե, որ նպարավաճառին երթամ և պետք եղածները առնեմ. հարյուր անգամ ետևես կանչեցիր։

— Ջուրի շիշ ալ չունինք... պլուխս կապելու բան մը չունիմ, ոտքս հագնելու կոշիկ չկա. այս վիճակին մեջ ի՞նչպես Արիսողոմ աղային դեմը ելնեմ։

— Հիմա ուտելիքը առնենք, վաղն ալ հագնելիքը կը մտմտանք, ըսավ Մանուկ աղան և դուռն ուժով մը քաշելով դուրս ելավ։

— Մանո՛ւկ աղա, Մանո՛ւկ աղա...

— Ուզածիդ չափ պոռա՛, ա՛լ ետ չեմ դառնար, մրմռաց Մանուկ աղան և ճամբան շարունակեց։

Մանուկ աղան քանի մը փողոց դարձած էր, երբ կնկան ձայն մը առավ, որ դինք կը կանչեր.

— Գործ չունիս նե, պոռալով ետևես վազե, ըսավ ինքն իրեն Մանուկ աղան՝ առանց դլուխն ետ դարձնելու՝ տեսնելու համար, թե ո՛վ էր դինք կանչողը։

— Մանո՛ւկ աղա, Մանո՛ւկ աղա, կրկնեց ձայնը, որ տիրացու Մարտիրոսին տասնամյա աղջկանն էր։

Մանուկ աղան շարունակեց յուր ճամբան. և տիրացու Մարտիրոսին աղջիկն՝ քայլերն փութացնելով՝ տասը քայլ հեռավորությամբ մոտեցավ անոր։ Եեղճին շունչը կտրած ըլլալով՝ անդամ մ'ալ կրցավ պոռալ.

— Մանո՛ւկ աղա։

Դարձյալ պատասխան չառավ և սիրտ ելեցավ քիչ մ'ալ քալելով Մանուկ աղային հագուստի ծայրեն քաշելու։

— Ո՛ղ տուր, կնի՛կ, ըսավ Մանուկ աղան՝ առանց ետևը նայելու։

— Բան մը պիտի ըսեմ։

— Մտիկ ընելու ժամանակ չունիմ. ըսածներդ արդեն չեմ կրնար միտքս բռնել, հիմա ելեր, ուրիշ բաներ ալ պիտի ըսես...

— Դայակին տունը պիտի հարցունեի...

Դայակ բառը լսելուն պես արթնցավ Մանուկ աղան և ետևը տիրացու Մարտիրոսին աղջիկն տեսնելով՝

— Աղավնի, դո՞ւն էիր ետևես վազողը, հարցուց անոր։

— Ա... յո... ես... պատասխանեց Աղավնին, որ հևալեն ա՛լ չէր կարող խոսիլ։

— Մայրդ ի՞նչպես է։

Աղավնին կը հևար։

— Ըսե՛ս, մայրդ ի՞նչպես է... դժրախտությո՞ւն մը պատահեցավ։

Աղավնիին բոլոր պատասխանը հևալ էր...

— Հետաքրքրությենես պիտի ճարիմ... ըսե՛ս, աղջիկ, հևալու ժամանա՞կ է հիմա, մայրդ ի՞նչպես եղավ։

— Մայ...րի...կս... ա...ղնկ է, բայց... տը...դան... ծիծ ը...բո...ներ... իր... դա...յա...կը... պի... տի...

— Շատ լավ, շատ լավ, աղջիկս, դուն տուն դնա, դայակն ես կը ղրկեմ։

Աղավնին բաժնվեցավ Մանուկ աղային, որ ճամբան փոխեց դայակին տունը փնտռելու համար։

Ջուզելով մեր ընթերցողին ճանձրույթ պատճառել՝ կը թողունք Մանուկ աղան, որ ամեն քայլափոխին բարեկամի մը կը հանդիպեր և անոր կծանուցաներ կամ թաղականին ընտրությունը կամ տիրացու Մարտիրոսին կնկան մանչ զավակ մը բերելն կամ Արիսողոմ աղային դալը։ Դառնանք հիմա Արիսողոմ աղային։

Գ

Բավական երկար տարիներե ի վեր սովորություն եղած է, որ շատերը ուսում առնելու համար Ֆրանսիա կամ Գերմանիա երթալեն ետքը մայրաքաղաքս կուգան կին առնելու համար, և ընթերցողն ալ գիտե արդեն, որ Արիսողոմ աղան ալ ուրիշ նպատակով եկած չէր Կ. Պոլիս։ Ընթերցողն չմոռցավ նաև, թե այս ամուսնության խնդիրն ո՛րչափ միտքը զրաված էր Արիսողոմ աղային, որ առջևեն եկող էշերը չտեսնելով՝ անոնց միույն դեմ բախվեցավ։ Թերևս հարցվի, թե Արիսողոմ աղային դեմ բախվող ավանա՞կն ալ ամուսնության վերաբերյալ գործ մ'ուներ, որ յուր առջևը չտեսավ Արիսողոմ աղային պես խոշոր մարդ մը։ Անոնք, որ պատմության քիչ կամ շատ ծանոթություն ունին, գիտեն, որ էշերը, որոնց նախահայրերեն մին ժամանակավ հրեշտակ տեսած է[2], բնավ կարևորություն չեն տար մահկանացուներուս և կուզեն, որ միշտ մենք ճամբա բանանք իրենց։ Արիսողոմ աղան եթե պատմության տեղյակ ըլլար, կամ կին առնելու խնդիրով միտքն չզբաղեցուներ, անշուշտ ճամբա պիտի բանար այդ արարածներուն, որք իրենց ականջներով Միդաս[3] թագավորին ներկայացուցիչներն ըլլալու պատիվն ալ կը վայլեին։

Արդ, Աբիսողոմ աղան էշերեն բաժնվելեն ետքը Ծաղկի փողոցը գտնելու համար անոր ասոր հարցումներ կուղղեր. վասնզի ինքն առաջին անգամ էր, որ Պոլիս կուգար, և Տրապիզոն բնակվող բարեկամներեն մին խորհուրդ տված էր իրեն, թե հանգիստ ուտելու և պառկելու համար հիշյալ փողոցը, հիշյալ թիվը կրող տունն իջնելու էր։ Այդ բարեկամն շաբաթ մը առաջ Մանուկ աղային ալ նամակով իմացուցած էր, որ Աբիսողոմ աղան իրեն տունը պիտի բնակեր։ Աբիսողոմ իրեն տրված տեղեկություններուն համեմատ մեկ փողոցեն կը մտներ, մյուսեն կելլեր, երբեմն ալ սխալմամբ անել փողոցները մեջ կը մտներ, կը բարկանար, ետ կը դառնար և մեկ կողմեն ալ կը կասկածեր, որ բեռնակիրներն իրեն անկողինն և սնտուկներն առնելով չփախչեին, թեպետև անոնց հավատարմություն շատերեն լսած էր։

Ժամու մը չափ Բերայի փողոցները չափելեն ետքը՝ Աբիսողոմ աղան հաջողեցավ վերջապես գտնել Ծաղկի փողոցն, զոր շփոթելու չէ նույն անունը կրող փողոցին հետ, որ Բերայի հրդեհեն մոխիր դարձած էր հազար ութը հարյուր յոթանասունը չեմ հիշեր քանիին։ Այս փողոցն Ծաղկի փողոց կանվանվեր սա պատճառով, որ հոն բոլոր տուներուն պատուհաններուն առջև միշտ ծաղիկներ կը դնովեին։

— Երկու թիվն ո՞րն է, հարցուց, առանց դիտնալու, Մանուկ աղային կնոջը, որ դռան առջև յուր էրկանը գալատյան կսպասեր։

— Աս է, հրամմե՛ցեք, Աբիսողոմ աղա, պատասխանեց տիկինը։

— Անկողինս և սնտուկներս բերի՞ն։

— Բերին, Աբիսողոմ աղա. վեր հրամմեցեք, Աբիսողոմ աղա, եթե կուզեք, քիչ մը հոգնություն առնելու համար սա պզտիկ սենյակը նստեցեք, ըսավ կինը գետնահարկի վրա պզտիկ խուց մը ցույց տալով։

— Շատ հոգնած եմ, քիչ մը հոս կը նստիմ։

— Ձեր կամքն ինչպես որ կուզե, այնպես ըրեք, Աբիսողոմ աղա, տունը ձերն է, Աբիսողոմ աղա. ձեր տունին պես հանգիստ ըրեք։

— Շնորհակալ եմ։

Աբիսողոմ աղան պզտիկ սենյակը մտավ առաջնորդությամբ տիկնոջ, որ ղամբար մը բռնած էր, որուն կազը հատնելու վրա էր։

— Ի՞նչպես եք, Աբիսողոմ աղա, տունեն ի՞նչպես են, աղե՞կ են։

— Աղեկ են։

— Թող աղեկ ըլլան, ձեր զավակներն ի՞նչպես են, Աբիսողոմ աղա, դպրոց կերթա՞ն։

— Զավակ չունիմ։

— Ձեր տիկինն ի՞նչ կընե, աղե՞կ է, Աբիսողոմ աղա։

— Տիկին չունիմ դեռ։

— Կարգված չե՞ք, Աբիսողոմ աղա։

— Չէ։

— Շատ լավ, հոս աղվորիկ աղջիկ մը գտնենք ու պոլսեցի ընենք քեզի, Աբիսողոմ աղա։

— Անանկ միտք մը ունինք, պատասխանեց Աբիսողոմ աղան. բայց ապչիկեն առաջ ես կերակուր կուզեմ, վասնզի առտվընե ի վեր բերանս բան դրած չեմ։

— Շատ աղեկ, Աբիսողոմ աղա, շատ աղեկ. հիմա կը բերեմ ձեր կերակուրն։

Տիկինը դուրս ելավ և դուռը բանալով սեմին վրա կայնեցավ՝ սպասելու համար Մանուկ աղային, որ, ինչպես կը հիշեն ընթերցողները, դայակ փընտռելու գացած էր։

Աբիսողոմ աղան սենյակին մեջ միակ մնալով՝ բարձի վրա դրված Ջեն Հոգևորն[4] առավ և թղթատել սկսավ զայն. բայց որովհետև մարդս անոթի եղած ժամանակ գիրք չկրնար կարդալ, ինչպես նաև չկրնար գիրք գրել, նորեն բարձին վրա դրավ Ջեն Հոգևորն, վասնզի փորն կիմացուներ իրեն, թե ղեն մարմնավորին պետք ուներ, և սկսավ սենյակին մեջ պտտելու։

— Կաղաչեմ, Աբիսողոմ աղա, որ ձեր տունին պես հանգիստ ընեք, ըսավ տիկինը՝ սենյակը մտնելով։

— Անհանգստության պատճառ մը չունիմ, միայն թե անոթի եմ և կերակուր ուտել կուզեմ։

— Կերակուրդ պատրաստվելու վրա է, հիմա պիտի բերեմ, ըսավ տիկինը և դուրս ելավ նորեն դռան առջև էրկանը սպասելու համար։

— Ի՞նչ տեսակ կնիկ է այս, ըսավ Աբիսողոմ աղան, երբ առանձին մնաց, դիս անոթի կը պահե և կը պատվիրե, որ հանգիստ ըլլամ. անոթի մարդը հանգիստ կրնա՞ ըլլալ…

— Սեպե՛ թե ես ալ քու քուրդ եմ կամ աղջիկդ եմ, ըսավ վաթսունամյա տիկինը դարձյալ ներս մտնելով, եթե բան մը կուզես, մի՛ քաշվիր, ըսե ինձի որ բերեմ։

— Շնորհակալ եմ։

— Ես կուզեմ, որ իմ տունս եկող հյուրերը չնեղվին։

— Կը հասկնամ. հիմակուհիմա կերակուրեն ուրիշ բան չեմ ուզեր։

— Կերակուրը պատրաստվելու վրա է, հոգ մի՛ ընեք…

Տիկինը դեռ պիտի շարունակեր յուր բանակցությունն, բայց դուռը զարնվելով՝ դուրս վազեց շուտով, որպեսզի դուռը բանա, էրիկը դիմավորե և բերած պաշարներն առնե ու կերակուր եփե։

— Ողջո՛ւյն, տիկին, ըսավ մեկը դուռը բացվելուն պես։

Հարկ չկա ըսելու, թե եկողը կրոնավոր մ'էր, ինչու որ անոնք միայն կը գործածեն ողջույնը:

— Օրհնյա՛ տեր, պատասխանեց տիկինը:

— Ի՞նչպես եք, աղե՞կ եք, տիկին:

— Փառք աստծո, տեր Հայր:

— Մանուկ աղան հիմա դեմս ելնելով իմացուց, որ հյուր մը եկած է ձեզի այսօր, ես ալ եկա, որ հետը տեսնվիմ:

— Շատ աղեկ ըրեր եք, ներս հրամմեցեք, տեր Հայր, ըսավ տիկինն՝ ցույց տալով խուցն, որուն մեջ Աբիսողոմ աղան յուր անոթությամբը կզբաղվեր:

Քահանայն ներս մտավ:

Աբիսողոմ աղան ոտք ելավ:

— Ողջո՛ւյն, Աբիսողոմ աղա:

— Օրհնյա՛, տեր Հայր:

— Մեղավորս ձեր բարեպաշտության գալն իմանալով՝ աճապարանոք եկա ձեր ջերմեռանդության պատվական որպիսությունը հարցնելու. ի՞նչպես եք, Աբիսողոմ աղա:

— Աղեկ ենք:

— Միշտ աղեկ ըլլաք, տեր աստված ձեր մեռելոց արքայություն և կենդանյաց ավուրս երկարս պարգևեսցե:

— Շնորհակալ եմ. դուք ի՞նչպես եք, տեր Հայր:

— Մեր աղեկությունը մի՛ հարցունեք... ժամանակիս աղեկությունը... Տեր աստված զձեզ համենայն փորձանաց և ի չարե ազատ պահեսցե. ժողովուրդն երբ աղեկ ըլլա, քահանաներուն ալ երեսը կը խնդա:

— Այնպես է, տեր Հայր, պատասխանեց Աբիսողոմ աղան՝ յուր աչերն չզատելով բնավ խուցին դռնեն, ուսկից կերակուր կը հուսար:

— Օրհնա՛ծ, ժամանակը շատ դեշ է. ժողովուրդը շատ նեղության կը քաշե, այս պատճառավ ջերմեռանդությունն ալ օրըստօրե պակսելու վրա է:

— Իրավ է:

— Բայց ի՞նչ պիտի ընենք, ի՞նչ կուդա մեր ձեռքեն՝ համբերելեն զատ... Սուրբ գիրքը կըսե. որ համբերեսցե, իսպառ նա կեցցե:

— Այնպես է:

— Եթե չհամբերենք, բարկանալ պետք է, և մարգարեն կըսե. բարկացեք և մի՛ մեղանչեք:

— Ճիշտ է, պատասխանեց Աբիսողոմ աղան, որուն ականջը բնավ չէր մտներ քահանային խոսքերը և որ քահանային ներկայությենեն նեղություն կի-

մանար. վասնզի, ինչպես գիտեն ընթերցողները, կերակուրեն ուրիշ բանի պետք չուներ:

— Չի ո՛չ հացիվ միայն կեցցե մարդ՝ այլ բանիվ յայտն՝:

Քահանան քթախոտի տուփը ծոցեն հանեց և երկու մատներովը քթախոտ լեցուց քթին ծակերուն մեջ և հետո, տուփը Աբիսողոմ աղային երկնցնելով՝

— Հրամմեցե՛ք, օրհնա՛ծ, ըսավ:

Աբիսողոմ աղան շնորհակալությամբ առավ տուփն և քիչ մը քթախոտ քաշեց:

— Քիչ քաշեցիք, Աբիսողոմ աղա, կաղաչեմ, անգամ մ'ալ քաշեցեք, քթախոտը վնասակար բան մը չէ:

Աբիսողոմ աղան անգամ մ'ալ քաշեց, որպեսզի խոսքը չերկարի ,և հյուրը մեկնի:

— Ինչո՞ւ աղեկ մը չեք քաշեր, Աբիսողոմ աղա, կրկնեց քահանայն, շատ կեկ քաշեցեք:

— Շնորհակալ եմ, տեր Հայր, սովորություն չունիմ:

— Կը խնդրեմ, մեղավորիս խոսքը մի՛ կոտրեք, քիչ մ'ալ քաշեցե՛ք:

— Ա՛լ չես քաշվիր, ըսավ Աբիսողոմ աղան մեկուսի և քիչ մ'ալ քաշեց:

— Դավիթ մարգարեն կըսե, որ՝ մարդս որպես խոտո են ավուրք յուր...

— Քթախոտին համա՞ր կըսես:

— Չէ՛, մեղի համար կըսե... և մենք ալ աշխատելու ենք, որ այս վաղանցուկ կյանքին մեջ ուրիշներուն բարիք ընենք, աղքատ տնանկները խնամենք և երբեմն ալ մեր ննջեցելոց հոգվույն համար աղոթենք:

— Այնպես է:

— Պատրաստ դտնվելու ենք, որ կանչվելնուս պես երթանք:

— Իրավ է:

— Մեղավորս պիտի համարձակիմ խնդիրք մը ընել ձեր բարեպաշտությանը և կը հուսամ, որ չեք մերժեր, վասնզի ձեր բարեպաշտությունը և ջերմեռանդությունը շատ աղեկ կը ճանչնամ մեղավորս:

— Հրամմեցե՛ք:

— Տեր աստված յուր անսպառ դանձը միշտ բաց պահե հրամանոցդ պես ջերմեռանդներուն:

— Շնորհակալ եմ:

— Մեկուն տեղ հազար տա, հազարին տեղ միլիոն տա ի շինություն սր. եկեղեցվո և ի փառս աղգին: Խնդիրքս սա է, որ առաջիկա կիրակի կուզեմ ձեր ննջեցելոց հոգվուն համար պատարագ մատուցանել: Ներեցե՛ք համարձակությանս, բայց իմ պարտքս է միշտ իմացունել, որ ննջեցյալները մոռնալու չէ:

— Իրավունք ունիս, տեր Հայր։

— Արդ, եթե կուզեր, ըսեք, որ ես ալ անոր համեմատ կարգադրություն մը ընեմ։ Չկարծեք, թե ծախքը մեկ մեծ բան մ'է. երկու ոսկիով կը լրմննա։ Նույն օրը հատկապես ծանուցում ալ կընենք եկեղեցվո մեջ, որ վասն հոգվոցն ննջեցելոց Աբիսողոմ աղայի է նույն ավուր սուրբ և անմահ պատարագը։

— Շնորհակալ կըլլամ։

— Բան մը չէ, մեր պարտքն է։

— Հրամմեցե՛ք, երկու ոսկին առեք, ըսավ Աբիսողոմ աղան՝ քսակեն երկու ոսկի տալով քահանային։

— Թող այսօր մնար... Ինչո՞ւ աճապարեցիք, պատասխանեց քահանան ձեռները բանալով։

— Չէ՛, առե՛ք։

— Որովհետև կսիպեք, ես ալ կառնեմ՝ սիրտդ չկոտրելու համար։ Օրհնյալ ըլլաք. տեր աստված ձեր տունը միշտ շեն պահե, ձեր քսակը միշտ լեցունե. ինչ որ ունիս սրտիդ մեջ, տեր աստված կատարե. գործերուդ հաջողություն տա և ամեն փորձանքներե ազատ պահե։

Քահանան բարեմաղթությունները լմնցնելուն պես մնաք բարյավ ըսելով դուրս ելավ։

— Վերջապես խալսեցա, ըսավ ինքնիրեն Աբիսողոմ աղան, սա մարդուն ձեռքեն. սա ի՞նչ փորձանքներ են, որ կուգան գլխուս այսօր՝ Պոլիս ոտք կոխելես ի վեր։ Շոգենավեն հազիվ դուրս ելած էի, խմբագիրին մեկը երկու ժամ գլուխս ցավցուց. անկից զատվեցա և մինչև որ տունը գտա, հաղար նեղություն քաշեցի։ Տուն եկա, որ քիչ մը շունչ առնեմ և կերակուր ուտեմ, տանտիկինը գիս անոթի կը պահե և միշտ ներս կուգա, կաղաչե ինձի, որ բան մը հոգ չընեմ և հանգստությանս նայիմ։ Աս ալ հերիք չէր, և ահա այս մարդը կուգա, բռնի քթախոտ քաշել կուտա ինձի և Դավիթ մարգարեեն խոսք բանալով՝ երկու ոսկի կառնե կերթա. երթա բարով։ Այս ամենը քաշեցինք անոթի փորանց. բայց սա կերակուրս ինչո՞ւ համար չեն բերեր. այս գիշեր անոթի՞ պիտի պահեն գիս... աս ի՞նչ խայտառակություն է...

Այս հարցումներն կուղղեր Աբիսողոմ աղան, և ահա կաղն, որ արդեն հատած ըլլալով տակը լույս մը կուտար, կը մարի և մութի մեջ կը ձգե հյուրը։

— Բայց քաշվելու բան չէ աս, կը շարունակե խոշոր մարդը, կամ ուրիշ տեղ մը երթալու է և կամ կինը կանչելով քանի մը խոսք ըսելու է։ Ես իմ քաղաքիս մեջ երկու սպասավոր ունեի, որ դեմս բարև կը բռնեին. սեղանը կանուխ կը պատրաստեին և իմ գործերս կը տեսնեին. սպասավորներով վարժված մարդ մը ինչո՞ւ այս նեղությունն քաշե հիմա։

— Աս ի՞նչ է, կաղը մարա՞ծ է... հարցուց տիկինը սենյակին դուռը բանալով։

— Այո՛, մարած է, պատասխանեց Աբիսողոմ աղան՝ զսպելով յուր զգացած նեղությունն, որ ավելնալու վրա էր։

— Դուն հանդիսատ եղիր, Աբիսողոմ աղա, այդ բաները նայիլը մեր գործն է։

— Այո՛, բայց ես անոթի եմ և սպասելու կարողություն չունիմ։

— Ես ի՞նչ ըսի քեզի, դուն սիրտ մի՛ հատցուներ. ամեն բան ինձի ձգե՛, ես կը հոգամ։

Տիկինը շուտ մը դրացվույն տունը վազեց և անոր կազն բերելով լուսավորեց Աբիսողոմ աղային խուցը։

Դ

Այս լուսավորության վրա կես ժամ չանցավ, և Աբիսողոմ աղային ներկայացավ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ, և վերջապես անանկ բանի մը կը նմաներ, որուն նմանը չկա։ Հազիվ երեսուներկու տարեկան կը թվեր։ Կապույտ աչերով, դեղին մազերով զարդարված ըլլալով՝ ուներ նաև երկու մատ մորուք, որ մայրաքաղաքիս մեջ կամ ազո նշան է և կամ չքավորության։ Հագուստներն այնքան հին էին, որ հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ դրամ մը կուտային։ Սակայն եթե հագուստի մասին վանողական էր, դեմքի մասին քաշողական զորություն ուներ այս անձը։

— Շատա եմ մեծապատվությանդ, մեծապատիվ տե՛ր, պոռաց այս երիտասարդն սենյակեն ներս մտնելով և մոտենալով Աբիսողոմ աղային։

— Ի՞նչ կա, ի՞նչ կուզեք, հարցուց Աբիսողոմ աղան վախնալով։

— Վսեմափայլ տե՛ր, ձեր գալուստն լսելով փութացի հոս գալ, իմ խորին մեծարանացս հավաստին ձեր ոտքերուն տակը դնել։

— Ոտքերո՞ւս տակը. շատ աղեկ, դի՛ր, ըսավ Աբիսողոմ աղան, որ կը կարծեր, թե մուճակ բերած էր իրեն։

— Շնորհակալ եմ, բարձրապատիվ տեր, ըսավ երիտասարդը, գլուխը բացավ և սեղանին վրա ելավ, կանգնեցավ։

Աբիսողոմ աղա այս տեսարանին առջև բոլորովին շվարած՝ անհամբեր տեսնել կուզեր, թե ի՞նչ պիտի ըներ այս պարոնը սեղանին վրա։

Երիտասարդն ծոցեն թուղթ մը հանեց և աչերն Աբիսողոմ ազային տնկե-
լով՝ բոլոր ձայնովը պոռաց.

— Տիարք և տիկնայք...

Աբիսողոմ ազա այս ահարկու ձայնեն վախնալով՝ նստած տեղեն երկու
կանգուն վեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել՝ պոռաց.

— Ո՞վ է այս մարդը, հիմարանոցեն փախած խե՞նդ է, թե հիմարանոց
երթալու հիմար:

— Հայ ազդն, շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնելով,
այսօր այնպիսի հանդես մը կը կատարե, որ մեր հայրենյաց ամենեն քաջ
դյուցազնին նվիրված է...

— Միտքդ ի՞նչ է, եղբա՛յր...

— Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, ապիտուԹյունը
գիտուԹյան դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին
դեմ, սուրը գրիչի դեմ, ատելուԹյունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը
բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցյալ
են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք ապեռ են, և մենք՝
գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելուԹյուն են, մենք՝ սեր,
անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վա-
րունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ. անցան, անցան այն
դարերը, ուր մարդկուԹյունը ապիտուԹյան օրորոցին մեջ մեյ մը ասդին, մեյ
մը անդին կերթար, կուգար...


— Միտքդ ի՞նչ է, եղբա՛յրս, ես քեզի բան մը չըրի, ի՛նչ կուզես ինձմե.
դնա քեզի բարկացնողին ըրուցե այդ խոսքերը...

— Այո՛, մարդկուԹյունը կը չարչարվեր, կը նախատվեր անգութ բոնա-
վորներու ձեռքեն և չէր գիտեր, որու երթալ և որու բողոքել:

— Տեր ողորմյա՛... տեր ողորմյա՛, ըսավ ինքնիրեն Աբիսողոմ ազա. քա-
շելիք ունինք եղեր... ես կրնամ հիմա զինքը սեղանեն վար առնել, բայց կը
վախնամ, որ ծոցեն ատրճանակ մը հանե և զարնե ինձի, վասն զի խիստ
բարկուԹյամբ կը խոսի:

— Իսկ երբ գիտուԹյունն եկավ, շարունակեց ատենաբանը, և վանեց
ապիտուԹյունն, ինչպես լույսն՝ խավարը, սերն՝ ատելուԹյունը, գրիչն՝ սուրը,
ապագան՝ անցյալը, այն ատեն, ա՜հ, այն ատեն... այո՛, այն ատեն, այո՛,
կըսեմ, այն ատեն միայն հասկցվեցավ, որ մարդկուԹյուն, ազգ և հայրենիք
բառերը բառարանները լեցնելու համար շինված բաներ չէին, այլ ամեն մար-
դու մտքին մեջ, սրտին, մեջ, հոգվույն մեջ երկաթյա տառերով և անջինջ կեր-
պով դրոշմելու բառեր էին...

— Երբա՛յր, կաղաչեմ, վար իջի՛ր և այնպես ըրուցե՛ ցավդ...



ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Ատենաբանը կայնած տեղը այնպես կը դողար, որ Արիստոդոմ ազային ափրտը կը հառներ, թե կազը գետինը պիտի իյնար։

Ուստի չուզելով այլ ևս համբերել՝ պոռաց ինքնակոչ ատենաբանին երեսն ի վեր.

— Վա՛ր իշիր սրկե։

— Կաղաչեմ, մի՛ սաստեր դիս։

— Վա՛ր իշիր, ապա թե ոչ...

— Մի՛ կտրեր իմ սիրտս, որ ազգին համար կը բաբախե։

— Ի՛նչ ըսելիք որ ունիս, եկուր քովս, մարդու պես նստեն և ըսե. հոն տեղվանքը՝ ելնել ի՛նչ պիտի ըլլա։

— Կաղաչեմ, թո՛ղ տուր վերջացնեմ, ա՜հ, չես գիտեր, թե որչա՛փ կը հուզվիմ, երբ ճառ կը կարդամ։

— Վա՛ր իշիր։

Ատենաբանը բեմեն կիջնա և կերթա աթոռի մը վրա կը նստի։

— Հիմա՛ զրուցե ինձի, միտքդ ի՛նչ է, կըսե Արիստոդոմ ազա բարկությամբ։

— Կաղաչեմ, մի բարկանար։

— Ինչ կուզես, զրուցե, շո՛ւտ, հիմա՛։

— Բարկությամբ մի՛ վարվիր հետս, ոտքդ պադնեմ, սիրտս լեցված է, հիմա կսկսիմ լալ։

Ով ատենաբանը կսկսի լալ։

— Լալու ի՛նչ կա, եղբայրս։

— Ծառադ կը փափաքի դրականությամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախտությամբ կը վարվի յուր զրադետներուն դեմ։

— Ատոր մեջ ես ի՛նչ հանցանք ունիմ։

— Դուք հանցանք չունիք և թերևս իրավունք ունիք... ոտանավորներ ունիմ գրած հայրենիքի վրա, սքանչելի կտորներ, պատվական տողեր, որոնց մեջ երեակայությունը, ավյունը, խանդն, հուրն ու բոցը սավառնաթև կը սլանան։

— Շատ աղեկ, ատոր համար լալո՞ւ է։

— Մեր ազգն անոնց հարգն ու պատիվը չճանչնար, զանոնք աղայական քաներ կը կարծե և թող կոտա, ըր չանոնք գրողը անոթի մնա։

— Ես ի՛նչ ընեմ։

— Կաղաչեմ, քաղցրությամբ վարվե՛ հետս։

— Ի՛նչ ըրած ունիմ քեզի։

— Ձեզի պիտի աղաչեի, որ...

— Ի՛նչ, շո՛ւտ ըսե...

— Մի՛ պոռար երեսս ի վար, հոգիդ սիրես, հիմա կսկսիմ լալ...

Նորեն սկսավ լալ գրագետը։

— Տեր աստված, դուն համբերություն տուր ինձի, ըսավ Աբիսողոմ աղան մեկուսի։

— Խնդիրքս սա էր, որ կուզեի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տո՛ւր, քու ձեռքեդ բռնող կա՞։

— Պիտի խնդրեի ձեր մեծապատվութենեն, որ տպագրության ստակը դուք տայիք։

— Ինչո՞ւ... ի՞նչ պատճառ կա, որ քու ճառիդ համար ես դրամ տամ։ Լավ՞ծ բան է, որ մեկը իրեն շահուն համար գիրք տպե, և ծախքն Աբիսողոմը տա...

— Կը խնդրեմ, սիրտս արդեն խոցված է, դուք ալ նոր վերք մը մի՛ բանաք հոս։

— Ինչո՞ւ վերք պիտի բանամ եղեր. գնա՛ բանդ, եղբա՛յր, փորձանք եղար գլխուս։

— Գիտե՞ք՝ որքան ծանր է գրագետի մը ասանկ խոսքեր լսելը...

— Չեմ գիտեր և գիտնալ չեմ ուզեր։

— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է, ամենաթեթև խոսքն մը կը վիրավորվի։ Այս նյութին վրա ոտանավոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրեք։

— Ոտանավոր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Կաղաչեմ, ոտանավորիս հետ խստությամբ մի՛ վարվիք. այն ոտանավորին համար, զոր դուք չեք ուզեր մտիկ ընել, երկու ամիս աշխատած եմ ես և երբ որ անոր նախաբանը տեսնեմ, արժանապատվությունս կը վիրավորվի։ Կաղաչեմ, ոտանավորիս համար դեղ մի՛ զրուցեք... կը խնդրեմ, թույլ տվեք ինձ կարդալ զայն անգամ մը...

— Ես ոտանավոր մտիկ ընելու չեկա հոս։

— Շատ լավ. ողբերգություն մը գրած եմ, անոր վրայեն անցնինք։

— Չեմ ուզեր. ես անոթի եմ հիմա, կերակուր պիտի ուտեմ։

— Շատ լավ, ուտելիքի վրա առենաբանություն մը ընեմ։

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու։

— Կաղաչեմ, այդ խոսքը ուրիշ անգամ մի՛ ըսեք, ասկե ավելի ծանր խոսք չկա հեղինակի մը համար, որ յուր մեկ աշխատասիրությունն ուրիշի կարդալու փափաք կը հայտնե։ Կը խնդրեմ, բարձրապատիվ տեր, քաղցրությամբ վարվեցեք հեղինակներու հետ։

— Գլխուս վրա՞ նստեցունեմ քեզի։

— Ոտքդ պահենմ, մի՛ ծաղրեք գիս, ինչո՞ւ ձեր գլխուն վրա նստեցունեք։

— Ի՞նչ ընեմ հապա, քսակս քեզի՞ տամ՝ հեղինակներու հետ քաղցրությամբ վարված ըլլալու համար։

— Ո՛չ, միայն ճառիս տպագրության ծախքը։

— Քանի՞ ոսկիով կը լմննա գործդ։

— Չորս ոսկիով կը լմննա, բան մը չէ, իմ Մինկենասս պիտի ըլլաս, հապա քու անունդ ոտանավորով մը գրքույկին ճակատը պիտի դնեմ։

— Ճակա՞տը դնես պիտի։

— Այո՛։

— Ինչո՞ւ համար։

— Որպեսզի ամեն մի մարդ գիտնա, թե ձեր աստվածը տպված է այն գիրքը։

— Շատ լավ, պատասխանեց Աբիսողոմ աղան և քսակեն չորս ոսկի հանեց, տվավ։ Հեղինակն հազար հարգանք մատուցանելով՝ դուրս ելավ։

Աբիսողոմ աղան եռևեն կանչեց գինքը և հարցուց.

— Չկրնա՞ր ըլլալ, որ գրքին ճակատը սպասավորներուս ալ անունները դնես և իմացունես ազգին, որ Աբիսողոմ աղան կովեր, ոչխարներ, էշեր և ագարակներ ունի յուր քաղաքին մեջ։

— Այդ ձեր ըսածները հովվերգության ճյուղին կը վերաբերին։

— Չեմ հասկնար։

— Ատոնց վրա ոտանավորներ կը գրվի. եթե փափաքիք, ոտանավոր մը շինեմ։

— Ի՞նչ ընեմ ոտանավորը։

— Լրագրի մը մեջ տպել կուտաք։

— Կը տպե՞ն։

— Ինչո՞ւ չպիտի տպեն. եթե կես ոսկի տալու ըլլաք, քառասուն անգամ կը տպեն։

— Շատ աղեկ. աղ ըսածդ գրե՛։

— Գլխուս վրա։

— Բայց աղվոր բան մը ըլլա։

— Շատ լավ։

— Այնպես, որ տեսնողը հավնի։

— Հարկա՛վ։

— Վաղը առաու կբերե՞ք։

— Վաղը առա՞ո... ի՞նչ կըսեք... մեկ ամիսեն հազիվ կրնամ պատրաստել։

— Մե՞կ ամիսեն։

— Հաղիվ. ոտանաւորը կարդալը դյուրին է, բայց գրելը՝ գժվար։ Դեղեցիկ ոտանաւորի մը համար քիչեն քիչ երկու ամիս պետք է։

— Ի՞նչ կըսեք...

— Այո՛, բայց ես կաշխատիմ ամիսե մը լմնցնել։

— Ատ ի՞նչ գժվար քան է եղեր։

— Ի՞նչ կարծեցիք հապա. երկու ամիս պիտի սպասեմ, որ մուսաս գա և ներշնչե ինձի, որպեսզի գրեմ. առանց մուսայի ոտանաւոր չգրվիր։

— Եթե այդ մուսան գալու չըլլա՞...։

— Անպատճառ կուգա։

— Չկրնա՞ր ըլլալ, որ նամակ գրես և աղաչես իրեն, որ շուտ մը գա, և գոն ալ երկու ամիս չսպասես։

— Անիկա ինքնիրեն կուգա, նամակի պետք չունի, մեծապատիվ տեր։

— Ո՞ւր կը նստի... շա՞տ հեռու է։

— Այո՛, շատ հեռու է, բայց կուգա։

— Յամաքե՞ն քե ծովեն։

— Չէ՛, մեծապատիվ տեր, չէ՛։

— Ո՞վ է ուրեմն սա գետնին տակն անցնելուն մարդը... ուսկի՞ց պիտի գա... ըսե, որ ճամբա մը մոմտանք ու բերել տանք...։ Եթե մեկ-երկու ոսկի տանք, այս շաբաթ կուգա՞։

— Այո՛, երկու ոսկի տալուդ պես գործը կդյուրանա, և մուսաս այս շաբաթ վաղելով կուգա, պատասխանեց անմուսա բանաստեղծը ոսկի բառը լսելուն պես։

— Գրե՛ ուրեմն իրեն, իմ կողմես ալ հատուկ բարևներ ըրե և ըսե՛, որ Աբիսողոմ աղան քեզ տեսնել կուզե։

— Գլխուս վրա։ Մնաք բարյավ, տեր, շնորհակալ եմ ձեզմե, ծառա եմ ձեր մեծապատվությանը և կաղաչեմ ընդունիք...

— Ո՛չ, ըսավ Աբիսողոմ աղա բարկությամբ, ա՛լ երկար ըրիր. ահա ինչ որ ըսիր, ընդունեցի և դեռ ի՞նչ կուզես, որ ընդունիմ...

— Խորին հարգանացս հավաստիքը, տեր... որով մնամ ձեր մեծապատվության ամենախոնարհ ծառա։

— Շատ աղեկ։

Մեկնեցավ բանաստեղծն՝ երկու ոսկիով բերել տալ խոստանալով մուսան, զոր ոմանք ավելի աժան դնով բերել կուտան։ Մուսայի մ'օրականն հյուսնի մ'օրականեն ավելի չէ այժմ։

Աբիսողոմ աղա, ինչպես դիտեցին ընթերցողներն, կը մոռնար յուր անօթությունն ամեն անգամ, որ մեկն անոր խոսք կուտար անունը լրագրի մեջ

անցունելու և կամ եկեղեցվո մեջ ծանուցում ընելու, ինչպես նաև յուր քաղկին բերանը կը բանար և դրամով կը վարձատրեր ամեն անոնք, որ իրեն կը խոստանային անունն ժողովրդյան մեջ տարածելու։ Փառասիրությունն ալ տեսակ մը անօթություն է, զոր դրամով կը կշտացունեն մարդերը։ Լրագիրներու մեջ գրվելու փառասիրությունն, զոր ոմանք մոլություն կը համարեն, և ոմանք առաքինության կարգը դասել կը փափաքին, և որ մեր ժողովրդյան ամեն դասերուն մեջ կը գտնվի այսօր, տիրած էր նաև Աբիսողոմ աղային վրա, որ բանաստեղծին մեկնելեն ետքը փոխանակ յուր անօթությանը վրա խորհելու՝ սկսավ ոտանավորին վրա միտք հոգնեցունել։

— Արդյոք, հարցուց ինքնիրեն, ոտանավորն ուզածին պես պիտի ըլլա՞. սա մարդու մուսան քանի մ'օրեն պիտի գա՞. և եթե չգա, անոր տեղն ուրի՞շ մը բերելու է...։

Այս հարցումներն կուղղեր իրեն, երբ տան տիկինը ներս մտնելով ըսավ.

— Կերակուրը պատրաստ է, հրամմեցե՛ք, Աբիսողոմ աղա։

Ըստ տաճկաց ժամը գիշերվան չորսը զարկած էր[6]։

Ե.

Այն խուցն, որուն մեջ Աբիսողոմ աղան ապաշխարանք քաշած էր, ուներ յուր դեմն սենյակ մը, որ խոհանոցի գովն էր և որ ճաշի հատկացված էր։ Այս սենյակը մտավ Աբիսողոմ աղան առաջնորդությամբ տիկնոջ, որ սեղանը պատրաստած էր վերջապես։

Աբիսողոմ աղան ճաշի սենյակը մտնելով բարևեց Մանուկ աղան, որ սեղանին շուրջը աթոռներ շարելու զբաղած էր։

— Սանկ հրամմեցե՛ք, Աբիսողոմ աղա, ըսավ Մանուկ աղա՝ սեղանին վերի կողմը ցույց տալով յուր հյուրին։

— Հրամանքնիդ նստեցե՛ք, ես ալ կը նստիմ, պատասխանեց հյուրն՝ նստելով իրեն ցույց տրված տեղը։

— Ներեցե՛ք կերակուրն այսչափ ուշացնելուս համար, ուրիշ իրիկուններ ձեր ուզած ժամուն կրնաք ուտել. այս գիշեր քանի մը պատճառներ թող չտվին, որ սեղանն ժամանակին պատրաստվեր. այս պատճառները վերջը կը պատմեմ ձեզի։ Ի՞նչպես եք, տեսնենք, Աբիսողոմ աղա, հանգի՞ստ եք, հարցուց Մանուկ աղան ձայնին աստիճանն իջեցունելով։

— Շատ հանգիստ եմ։

— Շնորհակալ ենք, մեր բարեկամն ի՞նչպես է Տրապիզոն։

— Աղեկ է, հատկապես բարև ըրավ ձեզի։

— Բերող տանողն ողջ ըլլա։ Եթե ձեզի գավաթ մը օղի տամ, կը տնկե՞ք. ախորժակ կը բանա։

— Գավաթ մը միայն կը խմեմ։

— Շատ լավ. հրամմեցե՛ք։

Մանուկ աղան երկնցուց գավաթն Աբիսողոմ աղային, որ ի մի ումպ կլլեց զայն, այսինքն օղին. գավաթը չհասկնաք։

— Անուշ ըլլա, Աբիսողոմ աղա։

— Շնորհակալ եմ։

— Ձեր կենդանութեանը։

— Ողջ եղեք։

Մանուկ աղան օղին ջրով բարեխառնելեն ետքը խմեց զայն ի չորս ումպ։

— Տիկինը մինչև որ կերակուրներն տաքցունեն և բերեն, մենք կրնանք խոսիլ և ժամանակ անցունել, այնպես չէ՞, Աբիսողոմ աղա։

— Այո, պատասխանեց հյուրն այնպիսի եղանակով մը, որ կը հասկցուներ, թե ավելի լավ էր նախ կերակուր ուտել և ապա խոսիլ։

— Մտիկ ըրեք ուրեմն այսօր մեր գլուխն եկածները։ Քանի մը շաբաթ ի վեր թաղականի մը ընտրության եռևե ինկած ենք։ Դուք հիմա ձեր մտքեն պիտի ըսեք, թե՝ մա՛րդ, թաղականը քուկին ինչո՞ւդ պետք։ Անանկ չէ՞, Աբիսողոմ աղա, ազգին գործը ես չնայիմ, դուն չնայիս, ան չնայի, ո՞վ նայի ուրեմն. ինչուս պետքը շատ գեշ բան է, անով ամեն մարդ մեկզի կը քաշվի, և ազգին գործերն ալ երեսի վրա կը մնան։ Իմ գիտցածս՝ ամեն մարդ ձեռքին եկածին չափ ազգին գործերուն ալ աշխատելու է։ Հատ մ՛ալ կը խմե՞ք, Աբիսողոմ աղա. ախորժակ կը բանա։

— Սովորություն չունիմ մեկ գավաթեն ավելի խմելու։

— Մեր գավաթներն պզտիկ են, մանավանդ թե Պոլսո օդն ալ կը վերցունե։

— Շատ լավ։

Երկու բարեկամներ մեյմեկ գավաթ ևս խմեցին իրարու կենդանութեանը, և Մանուկ աղան սկսավ առևնաբանության։

— Այս առտու, ըսավ, մեր թաղին ազգային զբոսարանը գացած ժամանակս, ձեզմե աղեկ չըլլա, մեր բարեկամներեն Մելքոն աղային հանդիպեցա։ Այս Մելքոն աղան նախ Բարթողիմեոս աղային աղջիկն առած էր։ Բարթողիմեոս աղան ալ ժամանակավ մատով կը ցցունեն եղեր, իբրև բարի մարդ, հյուրասեր մարդ, ազգասեր և բարեպաշտ մարդ, և շուկային մեջ շատ խանութներ ուներ, որոնցմե տարին բավական եկամուտ կառներ։ Քանի մը տարիեն Մելքոն աղային կինը մեռավ, և Մելքոն աղան համեստագործ Նիկողոսին աղջկանը հետ կարգվեցավ։ Այս աղջիկն քանի մը եղբայրներ ունի, որոնց մին

Ամբակում աղային քով դրագրություն կընե։ Այս Ամբակում աղան ալ տղա մը ուներ, որ Թուղթ խաղալով հորը շատ ստակը կերավ և վերջեն Ռուսաստան փախավ։ Այս տղան Մարգար եպիսկոպոսին քրոջ Թոռան եղբորորդին էր։ Մյուս եղբայրը շուկայի մեջ ոսկերիչ է. բարձր հասակով, սիրուն մարդ մ՛է։ Երրորդ եղբայրը առևնոր շատ պարապ պտըտեցավ, խեղճության մեջ ինկավ, անօթութենեն պիտի մեռներ, վերջեն թաղական անդամ ընտրվեցավ և մեկ երկու տարիեն ինքզինքը ժողվեց։ Չերկնցնեմ խոսքս, Մելքոն աղան Նիկողոս աղային աղջիկն առնելեն ետքը քանի մը տարիներ շատ հանգիստ կյանք վարեց, բայց վերջեն բախտը դարձավ, ձախորդություն ձախորդության վրա եկավ, և ունեցած չունեցածը բոլորովին կորսնցուց։ Օր մը առնեմ պինքը, հոս բերեմ, և տեսեք, թե ի՛նչ բարի մարդ է։ Եղբայր մ՛ալ ունի, որ վարպետ ժամագործ մ՛է, առևնոր Պոյուք Դերե՞ կը նստեր, վերջը քանի մը տարիներ Իսկյուտար նստավ, ետքեն Քում Քարուն երթալով՝ հոն ալ չկրցավ նստիլ, և հիմա չեմ գիտեր, ո՛ւր կը նստի։ Բայց շատ վարպետ ժամագործ է։ Թորոս աղան, որ և ոչ մեկ ժամագործի կը հանձնեն յուր ժամացույցն, անոր կուտա, որ մաքրե։ Այս Թորոս աղան կը ճանչնա՞ք. ուրիշ տեսակ մարդ է. անոր մեկ պատմությունը ընեմ քեզի և մտիկ ըրեք, որ տեսնես, թե աշխարհիս վրա ասանկ մարդ կը գտնվի եղեր, որ...

— Բերե՞մ ապուրը, հարցուց տիկինը սենյակին դռնեն ներս երկնցնելով գլուխը։

— Քիչ մը համբերե, տիկին, խոսքս լմնցունեմ, վերջը բեր։ Այնպես չէ՞ Աբիսողոմ աղա, խոսք պետք է յա՛։ Եթե մտիկ ընելու ժամանակ չունիք և գլուխնիդ կը ցավցունեմ կոր, ըսե՛ք։

— Ատ ի՞նչ խոսք է... բա...

Աբիսողոմ աղան չկրցավ շարունակել յուր խոսքը, զոր ընդմիջեց Մանուկ աղան Թորոս աղային պատմությունն սկսելով.

— Այս Թորոս աղան, շարունակեց, մուշտակագործ մ՛է, ականջը խոսի, և յուր ընտանիքովը հանդիստ կյանք մը կը վարե։ Յուր տանը պետք եղած պարենը, կարասիքն և հանդերձեղեն յուր ձեռքովը կառնե և իրմե զատ և ոչ մեկու մը վստահություն ունի, ականջը խոսի։ Մսավաճառեն միս կառնե, տուն երթալուն պես կը կշռե զայն և անպատճառ քանի մը տրամ պակաս կը գտնե միսը, մսավաճառին կերթա, հետը կռիվի կը բռնվի և քանի մը տրամ պակաս տրված միսը կառնե տուն կը դառնա։ Ասանկ տարօրինակ մարդ մ՛է. ականջը խոսի։ Օր մը այս Թորոս աղան, ականջը խոսի, ժամացույցին փոշիները մաքրել տալու համար ժամագործի մը կերթա և հետը սակարկության սկսելով՝ վերջապես տասնհինգ դահեկան կը հավանի տալ, այն պայմանավ, որ ժամագործն յուր առջևը մաքրե ժամացույցը, վասնզի Թորոս աղան,

ականջը խոսի, ինչպես ըսի, և ոչ մեկու մը վստահություն ունենալով՝ չէր ուզեր յուր ժամացույցն ժամագործին հանձնել և երթալ՝ վախնալով, որ ժամացույցին մեջեն բան մը կը դողցվի, կամ ժամագործը դիտմամբ կավրի ժամացույցն՝ մեծ ծախք մը բանալու համար, ինչպես որ կըլլան շատ մը ժամագործներ, երբ քանի մը օր անգործ մնան։ Ժամագործն յուր պատչույն գեմ անարդանք կը համարի Թորոս աղային առաջարկությունն և կը բարկանա։ Եթե դուն ըլլայիր ժամագործին տեղ չէի՞ր բարկանար։

— Կը բարկանայի, պատասխանեց Աբիսողոմ աղան, որ խելքն ու միտքը ապուրի ղրկած ըլլալով՝ բնավ ականջ չէր կախեր Մանուկ աղային ըրած պատմությանը։

— Թորոս աղան, ականջը խոսի, կրակ կը կտրի ժամագործին բարկանալուն վրա և քանի մը ծանր խոսքեր կընե իրեն, որ ընելու չէր. այնպես չէ՞։

— Այնպես է, պատասխանեց դարձյալ Աբիսողոմ աղան մեքենաբար՝ միշտ հավանության պատասխաններ տալով իրեն եղած հարցումներուն, որպեսզի խոսքը չերկարի, և կերակուրը բերեն։

— Ժամագործը կը վռնտե Թորոս աղան, ականջը խոսի. Թորոս աղան ալ, ականջը խոսի, խանութեն դուրս ելնել չուզեր՝ վռնտվիլն իրեն պզտիկություն համարելով. դուն ալ ըլլա՛ս, չես ելլար ա՛։

— Չեմ ելլար ա՛, պատասխանեց Աբիսողոմ աղան, որ չէր գիտեր, թե ուսկից չէր ելլար և ինչո՛ւ չէր ելլար. վանդի ինչպես ըսինք, Թորոս աղային ըրած պատմության և ոչ մեկ բառը յուր ականջը մտած էր. միայն հարցումներու կը պատասխաներ։

— Շեծկըվուքը կսկսի. ժամագործն ապտակ մը կը զարնե Թորոս աղային, ականջը խոսի, Թորոս աղան, ականջը խոսի, կից մը կուտա ժամագործին. կարծեմ, ով ալ ըլլար Թորոս աղային տեղը, ուրիշ կերպով չպիտի կրնար պատասխանել ժամագործին ապտակին։ Ոաքդ պագնեմ, Աբիսողոմ աղա, ըսե՛, այնպես չէ՞։

— Դո՞ւք ալ հոս դոմադեսո՞վ կը շինեք, հարցուց մեկեն ի մեկ Աբիսողոմ աղան։

— Դոմադեսո՞վ...

— Այո՛, ուրիշ տեղեր դոմադեսով կը շինեն եղեր։

— Ժամացո՞ւյցը։

— Ո՞ր ժամացույցը։

— Թորոս աղային ժամացույցը։

— Թորոս աղան ո՞վ է։

— Մտիկ չըրի՞ր ուրեմն ըրած պատմությունս։

— Ըրի, կատարյալ մտիկ ըրի, ըսավ Աբիսողոմ աղան, որ յուր դոմա-



դեսի հարցումովն հաստատեց, թե միտքն ապուրի, ապուրեն գոմադեսի, գոմադեսեն Պոլսո մեջ բրինձի ապուրին ինչպես շինվելուն գնացած էր, և բնավ ունկն չէր դրած Մանուկ աղային խոսքերուն։

Աբիսողոմ աղան շատ իրավունք ուներ յուր տան տիրոջը երկարաձիգ ճառն մտիկ չընելու, մանավանդ անոթի փորով։

Աշխարհիս վրա կան մարդեր, որք կը կարծեն, թե իրավունք ունին մեկու մը քիթեն բռնել և ժամերով անոր գլուխը ցավցունել։ Ուրիշներ ալ կան, որ իրենց խոսքերը մտիկ ընել տալու համար մարդ կը փնտռեն և եթե չգտնեն, պատրաստ են հոժարակամ օրական վարձ մ'ալ տալ. ոմանք ալ ամսականով ունկնդիր կը փնտռեն։ Շատ անգամ ինձի ալ պատահած է այս փորձանքը, և ես մտիկ ընել ձևացունելով՝ իմ գործիս վրա խորհած եմ. հավանության պատասխաններ տալով ինձի եղած հարցումներուն՝ այնպես է պատասխանած եմ, եթե այնպես չե՞ հարցվեր ինձի. արդարությունն ալ այս է պատասխան տված եմ, երբ արդարությունն ալ այս չէ՞ հարցումն ուղղվեր ինձի. իրավունք ունիս ըսած եմ, երբ իրավունք չունի՛մ հարցումն եղած է, որպեսզի խոսքը կարճ կապվի։ Դժբախտությունն հոն է, որ գլուխդ ցավցնողն երբեմն այնպիսի հարցում մը կընե, որուն պատասխանելը դժվար է, վասնզի վճիռ տալը քեզի կը թողու։ Օրինակի համար, լմնցնելեն ետքը ճառն, զոր դու բնավ մտիկ ըրած չես, կը հարցունե քեզի։

— Մարկոս աղա՞ն իրավունք ունի թե Կիրակոս աղան։

Ի՞նչ պատասխանելու է. գործին վրա բնավ տեղեկություն չունիս որո՞ւն տալու է իրավունքը. մանավանդ գիտնալու է, թե իրավունքն որու պետք է տալ, որպեսզի գլուխդ ցավցունողին սիրտը չցավի։ Ասոր ալ ես դյուրին ճամբան գտած եմ և հետևյալ պատասխանները կուտամ.

— Գործն անուշությամբ լմնցնելու է։

— Այո, բայց իրավունքը որո՞ւ քովն է։

— Ի՞նչ օգուտ... գեշ մարդու հետ գլուխ չելնվիր։

— Այո՛, բայց կպաշտեմ, ըսե՛, երկուքեն ո՞րն իրավունք ունի։

— Ինչո՞ւ կստիպես, որ ըսեմ, եղբայր, երկու անգամ երկու չորսի պես հայտնի է իրավունքին ուր ըլլալը։

Շատերն այս պատասխաններովս գոհացուցած եմ. բայց ոմանք ալ կան, որ կարծես գեղեզ ոստիկանության պիտի հանձնեն, եթե չըսես, թե Մարկոսն իրավունք ունի, իսկ Կիրակոսն անիրավ է։ Ասոնց ալ ձեռքեն խալսելու համար՝ ստիպողական գործ մ'ունիմ՝ ըսելով առեր քալեր եմ։ Իսկ վերջերս տեսնելով, թե այս ընթացքս կը քաջալերե շատախոսները, քաղաքավարությունը մեկդի դնելով՝ օր մը անոնցմե մեկուն ըսի.



— Պարոն, զքեզ երկու ժամ մտիկ ընելու համար երկու ոսկի կուզեմ. երկու ոսկիեն լումա մը պակաս եթե տաս, չեմ ընդունիր։

Մարդը կես ոսկի ավավ, իսկ ես չընդունեցի և օձիքս խալսեցի։ Այս օրերս կը լսեմ, որ այդ մարդը քառորդ ոսկիի երկու ունկնդիր ևս վարձած է։ Երանի «Մասիս»-ին, որ յուր ունկնդիրներուն ստակ տալու տեղ անոնցմե ստակ կառնե։

Աբիսողոմ աղան ինձի պես չվարվեցավ և, ինչպես հայտնի է, երբ դոմադեսի հարցապնդումով զբաղ տվավ ատենաբանին, թե յուր ճառն բնավ մտիկ ըրած չէր, յուր անքաղաքավարությունն անմիջապես դարմանելու համար ըսավ.

— Կատարյալ մտիկ ըրի։

Աղե՛կ ըրավ։ Հայտնի է, որ գեշ ըրավ. եթե ես յուր տեղն ըլլայի, պարզապես կըսեի Մանուկ աղային.

«Մանուկ աղա, ինձի նայե՛, եղբայրս, երբ որ մեկը խոսիլ կսկսի, խըղճմըտանքը մեկդի դնելու չէ։ Ուրեմն ժամն ի վեր անոթի եմ ես և բնավ պետք չունիմ գիտնալ, թե Մարտիրոս աղան որո՛ն տղան է, թե Գևորգ աղան որո՛ն հայրն է, թե ժամագործը Թորոս աղային ապտակ հաներ է, թե Թորոս աղան ալ ժամագործին կից տվեր է»։

Այսպես կը խոսեի բացե ի բաց, ոչ թե միայն ընկերության մը մեջ գլուխ ցավցնողին, այլ նույն իսկ այն վարդապետներուն, որ շատ խոսելու հպատակավ միայն չորս ժամ քարոզ կուտան և կը վիրավորվին, եթե ժողովըրդեն մեկը քարոզի ժամանակ եկեղեցիեն դուրս ելնե։ Եվ արդեն ըսած եմ օր մը եպիսկոպոսի մը, որ հինգ ժամ քարոզ խոսելեն ետքը եկեղեցիեն դուրս ելած էր և խուցը կերթար։

— Ո՞ւր կերթաք, սրբազան, հարցուցի։

— Շատ քրտնած ըլլալով խուցս պիտի երթամ և լաթ պիտի փոխեմ։

— Դուք ո՞ւր կերթաք, հարցուց ինձի։

— Ես ալ տուն կերթամ լաթ փոխելու համար, պատասխանեցի իրեն։

Եվ այն օրեն ի վեր եպիսկոպոսն կարճ կը խոսի քարոզի մեջ։

Աբիսողոմ աղան չունեցավ այս համարձակությունը և խրախուս տվավ Մանուկ աղային, որ շարունակե յուր ճառը դոմադեսական հարցման պատասխանելեն ետքը։

— Դոմադեսը հոս կը գործածենք ապուրի մեջ, բիլավի մեջ և ուրիշ մսեղեն քանի մը կերակուրներու մեջ, բայց բնավ երբեք ժամացույցի մեջ։

— Շնորհակալ եմ. ապուրի մեջ կը գործածվի ըսել է, ես ալ ատ գիտնալ կը փափաքեի։

— Ապուրը դոմադեսո՞վ կը սիրեք թե ոչ։

— Դոմադեսով կը սիրեմ։

— Շատ աղեկ։ Դառնանք հիմա մեր խոսքին... ո՞ւր մնացինք... հա՛, Թորոս աղային վրա էր։ Տարօրինակ մարդ մ'է ատ Թորոս աղան, ականջը խոսի, շատ պատմություններ ունի. ուրիշ գիշեր մ'ալ զանոնք կը պատմեմ, և ժամանակ կանցուցնենք։ Երկար չընենք, ատ առտու հանդիպեցա Մելքոն աղային...

— Բերի, որ տաք տաք ուտենք, ըսավ տիկինը ներս մտնելով և ապուրը բերելով։

— Այո՛, այո՛, ուտենք, վասնզի շատ անոթի եմ, ըսավ Աբիսողոմ աղան։

— Հրամմեցե՛ք...

— Շնորհակալ եմ, ըսավ Աբիսողոմ աղան և գդալը բերանը տանելու չմնաց, մեկեն ի մեկ վեր ցատկեց։

— Կարծեմ թե շատ տաք էր, ներեցե՛ք, Աբիսողոմ աղա, ըսավ տիկինը։

— Քիչ մը ջուր առ բերանդ, Աբիսողո՛մ աղա, ավելցուց Մանուկ աղան։

— Վնաս չունի, վնաս չունի...

— Տիկի՛ն, ինչո՞ւ համար ուշադրություն չեք ըներ կերակուրներու տաքությանը կամ պաղությանը. ըսավ էրիկն կնոջը։

— Ա՛լ այս գիշեր մեր պակասություններուն աչք դոցելու է, Աբիսողո՛մ աղա։

— Վնաս չունի, բան մը չէ։

— Ապուրը մինչև որ պաղի, այս օրվան դեպքը պատմեմ գոնե, ըսավ Մանուկ աղան։

— Մանո՛ւկ աղա, Աբիսողոմ աղային գլուխը մի՛ ցավցուներ այս գիշեր. թերևս չախորժիր։

— Ժամանակ անցունելու համար պիտի խոսեի, որ գրոսնու և չնեղվի։

— Ուրիշ գիշերվան թող. այս գիշեր հոգնած-հոգնած՝ կրնա՞ք քեզի մտիկ ընել։

— Կարծեմ թե Աբիսողոմ աղան սիրով մտիկ կընե աղգային գործերը և բնավ ձանձրություն չզգար։

— Այո՛, սիրով մտիկ կընեմ, պատասխանեց հյուրը, բայց տիկինին ըսածին պես վաղը գիշերվան թողունք, վասն զի այսօր շատ հոգնած եմ։

— Շատ լավ, շատ լավ, ինչպես որ կուզեք, այնպես ըլլա. բայց մեր թաղին թաղականին գործը շատ զվարճալի է։ Մելքոն աղան եթե հոս ըլլար և պատմեր, խնդալեն կը ճաթեինք։

— Ապուրը պաղեցավ, հրամմեցե՛ք, ըսավ տիկինը։

Աբիսողոմ աղան այս հրավերն առնելուն պես՝ գդալով ապուրին վրա հարձակեցավ։

— Օղի մ'ալ կը խմե՞ք, Աբիսողոմ աղա։

— Շնորհակալ եմ, չեմ ուզեր։

— Տիկին, Աբիսողոմ աղային դինի լեցուր։

— Մանուկ աղա, այս գիշեր այլանդակ խոսքեր կընես, ապուրի վրա գինի կը խմվի՞։

— Ինչո՞ւ չխմվիր, տեսնենք պիտի հավնի՞ մեր գինիին։

Տիկինը դուրս ելավ և խաշած միս բերելով սեղանին վրա դրավ։

Աբիսողոմ աղան այնպիսի ախորժակով մը կուտեր, որ մսի կտորները առանց ծամելու կը կլլեր։

— Փառք քեզ, աստվա՛ծ, այս գիշեր ալ կշտացանք, ըսավ Աբիսողոմ աղան փորն քահանայի մը պես լեցնելեն ետքը և երեսը խաչակնքելով ու ցած ձայնով հայր մեր ըսելով՝ սեղանեն ելավ և լվացվելու համար ջուր փնտռեց։

— Կերակուրեն վերջը կը լվացվի՞ք, հարցուց տիկինը հյուրին։

— Եթե ջուր ըլլար...

— Մենք սովորություն չունինք, բայց ձեղի քիչ մը ջուր բերեմ և լվացվեցեք։

Աբիսողոմ աղա լվացվեցավ և ձեռները չորցնելու ատեն հարցուց տիկինին, թե ո՛ր սենյակին մեջ պիտի պառկեր։

Տիկինը ձրագով երկրորդ հարկը սենյակ մը առաջնորդեց հյուրին և վար իջավ։

Այս պառկելու սենյակն փոքր էր, և անոր ճիշտ չափը տված կըլլանք, եթե ըսենք, որ Աբիսողոմ աղային հասակին երկայնություն ուներ։ Անկողինը շինված էր այն միակ պատուհանին առջև, որ փողոցի վրա բացված էր։ Աթոռ մը, քառակուսի պզտիկ սեղան մը, փոքրիկ հայելի մը, ջուրի շիշ մը և գավաթ մը, սանտր մը, վրձին մը այս սենյակին կարասիքը կը կազմեին։

Աբիսողոմ աղա սենյակեն ներս մտնելուն պես ձեռներն բացավ և նորեն փառք տվավ աստուծո, որ վերջապես խալսեցավ փորձանքներեն և առանձին մնաց։ Բանտեն արձակվող մը չէր կարող ավելի ուրախություն զգալ։ Փառաբանությունն ավարտելուն պես հանվեցավ և ինքզինքն անկողնո մեջ նետեց։

— Ասկեց ետքը ընելիքս գիտեմ, ըսավ անկողնո մեջ, և ոչ մեկու հետ պիտի տեսնվիմ, վասնզի ես այս պոլսեցիները շատ չսիրեցի, ատոնք կամ դրամդ առնելու կը նային կոր կամ երկու ժամ գլուխդ ցավցունելու։ Ինչո՞ւ պետք իմին. ես եկած եմ հոս կին մ'առնելու և երթալու. որո՛ւն աղջիկն որ սիրեմ՝ կուզեմ. եթե տան՝ կառնեմ, գործս կերթամ, և եթե չտան, եթե չտան... բայց ինչո՞ւ չտան... ինձմե աղեկի՞ն պիտի տան... Եթե վաղը սա լրագիրն իմ անունս ալ փառավորապես գրե, այն ատեն շատերն պիտի աղաչեն ինձի, որ իրենց աղջիկն առնեմ... Մեկեն ավելին ի՞նչ պիտի ընեմ... անոնց մեջեն պար-

կեշտ աղջիկ մը կը գտնեմ... խոսկապը կընեմ... նշան կուտամ... կը կարգվիմ...

Այս որոշումները տալով կը քնանա Աբրսողոմ աղան։

9

Աբիսողոմ աղան աղվոր քուն մը քաշեց նույն գիշերը, վասնզի շատ հոգնած էր և թերևս հետևյալ օրն ալ չէր բանար աչերն, եթե փողոցի վաճառականներն առավոտուն իրենց ահարկու ձայներովն չխռովեին անոր քունը, մահվան այդ կտրոնն, որ ոչ միայն հոգնած մարդերու հանգստարանն է, այլև շատ մշտնջենական ցավերու առժամանակյա դարմանն է։ Երանի՜ անոնց, որ կը քնանան և ուշ կարթննան կամ բնավ չեն արթննար, վասնզի անոնք բնավ չեն զգար կամ գոնե քիչ կզգան այն ցավերն, որք հալոտամաշ կընեն մարդս։ Բայց Պոլսո մեջ քնանալու ազատություն ալ չկա. գիշերները պահապաններն այնքան ուժով գետին կը զարնեն իրենց փայտերն, և առավոտուն փողոցի վաճառականներն այնքան բարձր ձայնով կիեղանակեն իրենց ապրանքներն, որ քունն կը շվարի, կը մնա, թե ո՛ր կողմը փախչի։ Եթե վերջին դատաստանին օրը Գաբրիել հրեշտակապետը չհաջողի յուր փողովն մեռյալներն արթնցնել, ես պիտի առաջարկեմ, որ այդ պաշտոնը Պոլսո փողոցի վաճառականներուն կամ գիշերային պահապաններուն հանձնվի։ Աբիսողոմ աղան ալ, որ փողոցի վրա սենյակի մը մեջ կը պառկեր, ստիպվեցավ կանուխ արթննալ։ Աչերը բանալուն պես անկողինեն ելավ, սնտուկը բացավ և ճերմակեղենները փոխեց, հետո լվացվեցավ և հագվեցավ։

Տան տիկինն, որ իմացած էր հյուրին ելած ըլլալն, վեր ելավ և զարդարուն սենյակ մը հրամցնելով դայն՝ իմաց ավավ, թե մեկն կսպասեր վարը և պինքը տեսնել կուզեր։

— Ո՛ղ հրամմե, ըսավ Աբիսողոմ աղան։

— Շատ լավ, կաղաչեմ, ըսե՛ք ինձի, խահվեն կաթո՞վ կը խմեք թե առանց կաթի։

— Կաթ կը խմեմ առանց խահվեի։

— Կաթ բերեմ ուրեմն։

— Այո՛, կաթ բերեք։

Տիկինը վար դնաց։

— Տեսնենք ո՞վ է աս մարդը, ըսավ ինքնիրեն խոշոր մարդը, թերևս աղջիկ ունի կարգելու և իմ Պոլիս գալս իմանալով՝ առավոտուն կանուխ հետս խոսելու եկած է։ Բայց ես մինչև որ չտեսնեմ աղջկան ի՛նչ բնության տեր

ըլլալը, խոսք չեմ տար. նախ ամեն բան հասկնալու եմ, աղջիկը քննելու եմ, վերջեն հորս հարցնելու եմ. վասնզի իմ սիրելս բավական չէ, պետք է որ հայրս ալ սիրե իմ կինս. ոչ թե միայն հայրս, այլ ամեն մարդ հավնելու է...

— Բարև, վսեմափայլ տեր, ըսավ երեսնամյա և վառվռուն երիտասարդ մը սենյակ մտնելով և արագաքայլ Աբիսողոմ աղային վազելով՝ անոր ձեռները սղմելու համար։

Աբիսողոմ աղան տեղեն ելավ և ձեռները հանձնեց այդ երիտասարդին, որ ուզածին պես սղմե և թոթվե զանոնք՝ հազար ու մեկ հարգանքներ մատուցանելով։

— Նստեցե՛ք, Աբիսողոմ աղա, կաղաչեմ, չվայլեր, որ ոտք եկնեք, ըսավ երիտասարդն՝ տիրոջը դարձնելով իրեն հանձնված ձեռներն և կոտրտվելով ետ ետ գնաց, թիկնաթոռի մը վրա նստավ։

Աբիսողոմ աղան բազմոցին վրա բազմեցավ։

— Արդարև մեր պարտքն էր երեկ գալ և ձեր գալուստը շնորհավորել, բայց ուշ իմացանք ձեր գալն. ասոր համար հատկապես ձեր ներողությունը կը խնդրենք, ըսավ երիտասարդն ձեռներն իրարու շփելով։

— Այսօր գալով պակասություն մ'ըրած չեք ըլլար, որ ներողություն խնդրեք։

— Ձեր քաղաքավարությունն է, որ այնպես խոսել կուտա ձեզի, բայց մենք մեր պակասությունը միշտ կը ճանչնանք։ Արդարև մեծ պակասություն մ'է մեր ըրածը. ձեզի պես երևելի մարդ մը մայրաքաղաքս գա, և պատկերահան մը անմիջապես բարի եկարի չերթա, պակասություններու պակասություն է, որ և ոչ մեկ կերպով մը կրնա պակասություն ըլլալե դադրիլ։

— Ամենևին պակասություն մը չէ, եթե բնավ չդայիք, դարձյալ պակասություն մը չէր համարվեր ինձի համար։

— Շատ վեհանձն եք։

— Ամենևին վեհանձն չեմ։

— Թող այնպես ըլլա, ատոր համար հիմա վիճաբանության մտնելու հարկ չեմ տեսներ. միայն ինքզինքս ձեր տրամադրության տակ կը դնեմ և ձեր հրամաններուն կսպասեմ. եթե կուզեք, հոս քաշվել տվեք, եթե կը փափաքիք, մեր դրասենյակը պատվել հաճեցեք, և հոն հանենք. ինձի համար միևնույն բանն է. դուք ի՛նչպես որ կախորժիք, այնպես ընելու պատրաստ եմ։

— Ի՞նչ պիտի քաշել տանք... իմ ակռաներս աղեկ են։

— Գիտեմ, որ ակռաներդ աղեկ են, ինչպես նաև դուք ալ աղեկ եք. ես կը փափաքիմ ձեր լուսանկար պատկերը քաշել։

— Ես մինչև հիմա պատկերս բնավ քաշել տված չունիմ և քաշել տալու

հարկ մ'ալ չեմ տեսներ, վասնզի ամեն օր հայելի կը նայիմ և ինքզինքս կը տեսնեմ։

— Երե ձեր պատկերը մեկու մը ղրկելու ուղեք, հայելին կրնա՞ք ղրկել, Աբիսողոմ աղա։

— Հայելին ինչո՞ւ ղրկեմ, ես կերթամ։

— Շատ աղեկ կը խոսիք, բայց ես մինչև որ ձեր պատկերը չհանեմ, չեմ կրնար հանդիստ ըլլալ. ինձի համար պզտիկություն մ'է ձեր պատկերը չհանելը, թո՛ղ որ ձեզի համար ալ այնպես է։

— Ինչո՞ւ։

— Լաված բա՞ն է, որ ձեզի պես երևելի մարդ մը Պոլիս գա և պատկերը քաշել չտա. աշխարհ արարատ ձեր վրա պիտի խնդացնե՞ք։

— Ինչո՞ւ։

— Պատճառը հայտնի է. մեծ մարդերը բնականաբար մեծ բարեկամներ կունենան. դուք մեծ մարդ մ'եք և այսօր կամ վաղը պիտի սկսիք մեծ մարդերու այցելություններն ընդունել։ Ասոնցմե շատերն իրենց պատկերներն մեկմեկ հատ պիտի նվիրեն ձեզի, և դուք ալ պիտի ստիպվիք ձերինեն մեկմեկ հատ տալ անոնց։

— Եվ եթե չտամ, կը խնդա՞ն իմ վրա։

— Խնդալն ալ խո՞սք է, ընկերություններու մեջ մատի վրա կառնեն քեզի։

— Զարմանալի բան...

— Լաված բա՞ն է, որ ձեզի պես ազնվական մը պատկերը հանել չտա. մեծ ամոթ է...

— Մե՞ծ ամոթ...

— Այո, շատ մեծ ամոթ է. անվարտիք պատիլն այնքան ամոթ չէ, որքան իրեն պատկերն չունենալը։

— Ես չէի գիտեր։

— Քաղաքակրթությունը և լուսավորությունը պարտք կը դնեն մեր ամենուս վրա, որ մեր պատկերներն ունենանք։

— Լրագիրները պիտի դրե՞ն, որ Աբիսողոմ աղան յուր պատկերը քաշել տված է։

— Լրագիրներու վերաբերյալ խնդիր մը չէ աս...

— Ըսել է թե եկեղեցիներու մեջ ծանուցում ալ չպիտի ըլլա։

— Ծանուցումի ի՞նչ հարկ կա, Աբիսողոմ աղա, կը ծաղրե՞ք զիս...

— Ծաղրե՞լ, ատոր շատ դեմ եմ ես... ի՞նչ իրավունք ունիմ ուրիշ մը ծաղրելու...

— Մի՛ բարկանաք...

— Չէ, կը բարկանամ, ես բնավորություն մը ունիմ, որ ամեն բան շիտակ կուզեմ։

— Շատ լավ. ի՞նչ դիրքով հանել կուզեք ձեր պատկերը։

— Միտք չունիմ պատկերս քաշել տալու, վասնզի անօգուտ բան մը կըլլա ինձի։

— Ի՞նչ կըսեք, ասկից ավելի օգտակար ի՞նչ կա. եթե ձեր բարեկամներեն մեկուն այցելություն մը տալ ուզեք և ժամանակ չունենաք, ձեր մեկ պատկերը կը ղրկեք, կը լմննա կերթա։ Եթե կարդված եք, ձեր ամուսնույն կը ղրկեք, որ ձեր բացակայությանն առեն անոր վրա նայելով կարոտը կառնե. եթե ամուսնացած չեք, շատ աղջիկներ ձեր պատկերը կը տեսնեն և ձեր ով ըլլալը կը հասկնան, որով ընկերություններու մեջ ձեր անունը կը խոսվի։ Լուսանկար պատկեր մը այս օրվան օրս հացեն ավելի պետք է մարդուս. կաղաչեմ, որ համոզվիք, և ժամ առաջ երթանք ձեր պատկերը քաշենք։

— Աղջիկներն ի՞նչպես և ո՞ւր պիտի տեսնեն իմ պատկերս...

— Չէ՞ որ ձեր բարեկամներուն պիտի տաք, անոնք ալ իրենց տունը պատկերներու հատուկ դիրքի մը մեջ պիտի անցունեն և ամենուն պիտի ցուցնեն։

— Ցուցնելով ի՞նչ պիտի ըլլա։

— Ի՞նչ կուզեք, որ ըլլա... միշտ կը հիշվիք...

— Եթե չհիշվիմ, ի՞նչ կը կորսնցնեմ. հոգս էր իմին, թե ինձ պիտի հիշեն. կուզեն՝ հիշեն, կուզեն՝ չհիշեն, ես անանկ դատարկ բաներու ստակ չեմ տար և քու խոսքերուդ ալ չեմ հավատար։

— Ասիկա պզտիկ էնսյուլթ մ'է։

— Էնսյուլթն ո՞վ է։

— Տեր, դիտեք որ արթիսթ մը վիրավորեցիք ծանրապես։

— Ե՞ս վիրավորեցի։

— Այո՛, դուք...

— Պատկերս քաշել չտալուս համար զրպարտության սկսա՞ր... ես մինչև հիմա մեկը վիրավորած չեմ։

— Այսօր ինձ վիրավորեցիք։

— Գնա՛ ոստիկանության իմաց տուր, պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Ոստիկանության երթալու հարկ չկա. կը խնդրեմ, որ ձեր բերնեն ելած խոսքը հաշտեցնեք ձեր քաղաքավարության հետ։

— Ես կռվի մեջ չեմ մտներ, գնա՛, դուն հաշտեցուր, եթե կռիվ ընողներ կան։

Մանուկ աղան Աբիսողոմ աղային նախաճաշը կը բերե և եռոտանի սեղանի վրա դնելեն վերջը՝

— Հրամմեցե՛ք, ձեր կաթը խմեցե՛ք, կըսե։

Աբիսողոմ աղան աթոռ մը կառնե, սեղանին առջև կը նստի և կսկսի կաթը խմելու։

— Ի՞նչ որոշեցիք նայինք, Աբիսողոմ աղային պատկերը կե՞ս մեջքեն պիտի քաշեք, թե ոտքի վրա, կը հարցունե Մանուկ աղան։

— Ոչ կես մեջքեն, ոչ ալ ոտքի վրա, կը պատասխանե Աբիսողոմ աղան։

— Աթոռի մը վրա նստած ամբո՞ղջ պիտի քաշեք։

— Ո՛չ։

— Պառկա՞ծ պիտի հանեք։

— Ոչ։

— Քովընտի՞։

— Ո՛չ։

— Ի՞նչպես որոշեցիք ուրեմն։

— Որոշեցինք, որ մեր պատկերը բնավ քաշել չտանք։

— Ատ չըլլար. ատիկա մեծ պզտիկություն է, Աբիսողոմ աղա. հիմա պզտիկներեն բռնե, մինչև մեծերը գնա, ամենն ալ տարին քանի մը անգամ պատկերնին քաշել կուտան, երկու ամսու տղաներն անգամ իրենց ունին, միայն իրենց մորը արգանդին մեջ գտնվողները չունին իրենց պատկերը. եթե անոր ալ դյուրին մեկ ճամբան գտնեն, անոնց ալ պիտի հանեն։

— Ես չկրցի համոզել Աբիսողոմ աղան, որ կարծեց, թե զինքը խաբելու համար եկած եմ հոս, ըսավ պատկերհանը։

— Չէ, չէ, մեր պատկերհանն անանկ մարդ չէ, ավելցուց Մանուկ աղան.

— Ըսի, թե Աբիսողոմ աղային պես մեծ և երևելի մարդ մը իրեն պատկերն անպատճառ ունենալու է։

— Այո՛, ունենալու է, և քանի մը տեսակ։ Օրինակի համար. տասներկու հատ պզտիկ, տասներկու հատ միջին, տասներկու հատ մեծ, տասներկու հատ ոտքի վրա, տասներկու հատ աթոռի մը վրա բազմած, տասներկու հատ քովընտի նստած, տասներկու հատ շիտակ նստած, տասներկու հատ ոտք ոտքի վրա դրած, տասներկու հատ ձեռք ձեռքի վրա, տասներկու հատ գլուխը ձեռքին կռնթած, տասներկու հատ ձեռքը սեղանի մը վրա դրած, տասներկու հատ պառկած, տասներկու հատ ձեռքը գավազան բռնած, տասներկու հատ խնդուտ-մերես, տասներկու հատ տխուր դեմքով, տասներկու հատ ալ ոչ խնդումերես և ոչ տխուր դեմքով։ Այո՛, Աբիսողոմ աղա՛, աս ըսածներես հատ մը եթե պակաս ըլլա, ձեր պատվույն վնաս կուգա։

— Իրա՞վ կըսեք, հարցուց Աբիսողոմ աղան։

— Սուտ խոսելու բնավ պարտականություն չունիմ. եթե ասոնք չունենաս, քու վրադ աղեկ աչքով չեն նայիր. բոլոր մեծ մարդերն ասոնք ունին։

— Մեծ մարդերն ունի՞ն. աղեկ դիտե՞ս։

— Այո, ունին։

— Պղտիկներն ալ ունին՝ ըսիր հապա։

— Պղտիկներն այնչափ չունին, անոնք կամ երեք հատ և կամ շատ շատ վեց հատ հանել կուտան։

— Բնավ մտքես չէր անցներ, որ պատկերին այնչափ կարևորություն կը տրվի հոս։

— Այո՛, կարևորությունը հիմա միայն պատկերներուն կտրվի, և որքան աղեկ քաշված ըլլան, այնքան ավելի կարևորություն կառնեն։

— Քանի որ ամեն մարդ յուր պատկերն ունի, իմ մեծ մարդ ըլլալս ինչե՞ն պիտի հասկցվի. միայն մեծ մարդերը քաշել տալու էին, որ այն ատեն...

— Բայց մեծ մարդերունը ուրիշ տեսակ է, խոշոր դիրքով և փայլուն թուղթի վրա կը հանեն։

— Չկրնա՞ր ըլլալ, որ սպասավորներս ալ առջևս բարև բռնած հանեն։

— Շատ աղեկ կըլլա։

— Իրա՞վ կըսեք։

— Այո՛։

— Օրինակի համար ես ագարակներ ալ ունիմ, որոնց մեջ շատ մը կովեր, ոչխարներ, ձիեր, սագեր, բադեր կան, անոնք ալ կարելի չէ՞ պատկերին մեկ կողմը դնել։

— Ասոնք կարելի չէ, բայց սպասավորներդ կրնաս առնել. այնպես չէ՞, պարոն Դերենիկ։

— Այո՛, այնպես է, պատասխանեց պատկերհանը։

— Չկրնա՞ր ըլլալ, որ, հարցուց նորեն Աբիսողոմ աղան, պատկերին տակը գրվի, որ այս մարդն ագարակներ, ձիեր, կովեր, էշեր ունի։

— Ատ չգրվիր. կրնա գրվիլ, բայց մինչև այսօր սովորություն եղած չէ։ Սակայն ի՞նչ հարկ կա զանոնք գրելու, արդեն ամեն մարդ շուտով կիմանա։

— Ձիու վրա նստած կրնա՞ք հանել։

— Այո՛, պատասխանեց Դերենիկը։

— Ձին վազցունելով սակայն։

— Այդ դժվար է։

— Շատ լավ, վաղը կը նայինք։

— Եթե կուզեք, մեքենան հոս բերեմ վաղը։

— Այո՛, այո՛, հոս բերեք, կրկնեց Մանուկ աղան, վասնզի չվայլեր

որ Աբիսողոմ աղան ձեր սենյակը գա։ Մեծ մարդերը միշտ իրենց տուներուն մեջ քաշել կուտան պատկերնին։

— Դիտուս վրա, բսավ Դերենիկն և ձեռները շփել սկսելով՝ ոտքի վրա ելավ և կոտրտվիլ սկսավ այնպես, որ խոսք մը ըսել կուզեր և կը քաշվեր։

Հայտնի է, թե այն մարդն, որ բան մը ըսել կուզե և կը քաշվի, անպատճառ ստակ պիտի ուզե։

— Վաղը մեքենան հոս բեր, ըսավ Աբիսողոմ աղան։

— Շատ լավ, պատասխանեց պատկերհանը միշտ կոտրտվելով և ձեռները շփելով։

— Վաղը մեքենան հոս բե՛ր՝ ըսինք ա՛, կրկնեց Աբիսողոմ աղան տեսնելով, որ պատկերհանը չերթար։

— Այո, հասկցա, մեքենան վաղը հոս պիտի բերենք, պատասխանեց Նորեն Դերենիկը, բայց սովորություն մը ունինք մենք, որ... ներեցե՛ք սակայն։

— Ըսե՛ք։

— Բայց կաղաչեմ, ծանր չդա ձեզի։

— Ծանր չգար ինձի։

— Սովորություն մը ունինք, որ եթե մեքենան մեկու մը տունը տանել հարկ ըլլա, կանխիկ գումար մը կառնենք... ոչ թե վստահություն չունենալուս համար, այլ սովորություն մը հարգելու համար։

— Ատ ի՛նչ գեշ սովորություն է...

— Վերջապես սովորություն մ՚է։

— Շատ լավ... երկու ոսկի կը բավե՞։

— Այո՛, կը բավե։

Աբիսողոմ աղան երկու ոսկի տվավ պատկերհանին, որ դուռը բանալն և աներևութանալն մեկ ըրավ։

Է

Կան մարդեր, որ ցցունել կուզեն, ինչ որ չունին. կան ալ, որ ցցունել չեն ուզեր, ինչ որ ունին. կան նաև, որ ցցունել կուզեն, ինչ որ ունին։ Աբիսողոմ աղան վերջիններեն էր. կը փափաքեր, որ բոլոր աշխարհ իմանա ագարակներ ունենալը, և յուր փափաքն իրացնելու համար ստակ ալ չէր խնայեր։ Այսպես, երբ ըսին իրեն, թե մեծ մարդերն իրենց պատկերներն ունին, հավանեցավ, որ ինքն ալ իրենն ունենա, բայց կասկածելով, թե խաբված ըլլա և պարապ տեղը ստակ ելլա, Դերենիկին մեկնելեն անմիջապես նամբը հարցուց Մանուկ աղային.

— Եթե պատկերս քաշել չտամ, դիս մարդու տեղ չե՞ն դներ։

— Քավ լիցի, բայց քանի որ ձեր աստիճանի մարդերը իրենց պատկերները հանել սված են, ձեղի ալ կը վայլէ, որ անոնց պես ընէք։ Երբ մեկն ձեր պատկերն ունենալ փափաքի, և դուք պատասխանէք, թե պատկերս քաշել սված չեմ...

— Ի՞նչ կըլլա։

— Բան մը չըլլար... բայց...

— Բայց ի՞նչ... ազարակներս կառնե՞ն ձեռքես...

— Սմենևին։

— Ոչխարներս, կովերս կը հափշտակե՞ն։

— Բնավ... բայց... խավարյալ մարդու տեղ կը դնեն ձեղի, չեն ըներ այն պատիվն, որ կուտան մեծ մարդու։

— Հասկցա, ի՞նչպես հանել տալու եմ ուրեմն պատկերս, որ տարակույս չմնա, թե պզտիկ մարդ չեմ, վասնզի ըսիք, թե պզտիկներն ալ իրենց պատկերներն կը հանեն։

— Ձեր պզտիկ մարդ չըլլալը հասկցնելու համար մեծ պատկեր հանելու եք, թիկնաթոռի մը վրա նստած։

— Նոր հագուստներս հագնելու եմ, այնպես չէ՞։

— Այո՛։

— Ժամացույցս ալ կախելու եմ հարկավ։

— Տարակույս չկա։

— Սանկ ծխափող քաշելով և երկու մարդ ալ դեմս բարև բռնելով և մեկն ալ ետևես ձիս բռնելով։

— Այո՛, այո՛։

— Դեռ ուրիշ ի՞նչ պետք է փառավոր երևնալու համար։

— Այսչափ բավական է։

— Կուզեի, որ սպասավորներես երկուքն ալ չախելով դիմացես վռնտեի, և անոնք ալ դուխին ծռած դուրս ելնեին. վերջապես սանկ բաներ չը՞կրնար ըլլալ... կամ թե մեկը ծեծեի... օրինակի համար, մեր ագարակներուն վերակացուին երեսն ի վեր պոռայի... «մա՛րդ, քեղի քանի՞ անգամներ հրամայեցի, որ մշակներու հետ քաղցրությամբ վարվիս, կովերուս հետ սիրով երթաս, վար ու ցանը ժամանակին ընես. քանի որ ասոնք չըրիր, ես ալ քեղի կը վռընտեմ»։ Վերակացուն ալ թաշկինակովն աչերը սրբելով՝ ոտներուս իյնա, աղաչե և պաղատե ըսելով. «զավակներուս սիրույն համար ներե՛ հանցանացս. այսչափ տարիներե հետե ձեր հացը կուտեմ, դուք իմ բարերարս եք, ես ձեղ գրկերուս մեջ անչափ գրկած ու պատցուցած եմ, երբ դեռ պզտիկ էիք»... վերջապես սըվոր նման բաներ չե՞նք կրնար դնել պատկերին մեջ։

— Ատոնց վրա վաղը կը խորհինք. մենք հիմա սկսինք մեր երեկվան պատմության, որ կիսատ մնաց։ Մելքոն աղան դիս տեսնելուն պես...

— Կամ թե սանկ կոնակի վրա պառկիմ, և սպասավորներս ալ բանթոնս քաշեն...

— Դիս տեսնելուն պես մոտեցավ ինձի և...

— Նարկիլեով ավելի փառավոր չըլլա՞ր...

— Մոտեցավ ինձի և ձեռքերս բռնելով ըսավ. «Թե այսօր չաշխատինք, մեր չուզած մարդերը թաղական պիտի ընտրվին»։

— Սանկ տասը կանգուն երկարությամբ մարբուճ մը...

— Անոնք վաղվան գործ են, Աբիսողոմ աղա, թող տվեք, որ սա պատմությունս լմնցնեմ։ Մելքոն աղան թևես բռնելուն պես քաշեց դիս ազգային ընթերցատունն, ուր երիտասարդները նստած թուղթ կը խաղային։

— Ես ալ կըսեմ, որ մարբուճը եթե կարճ ըլլա, ավելի ազվոր կերևա պատկերին մեջ։

Կյանքիս մեջ հարյուր անգամեն ավելի հանդիպած եմ այս տեսարանին, ուր երկու դերասաններ խոսքն իրարու բերնեն հափշտակելով՝ յուրաքանչյուրը կը փափաքի առաջ յուր խոսքը մտիկ ընել տալ։ Այո՛, հարյուր անգամ ներկա գտնված եմ. երկու անգամ ընկերություններու մեջ և իննսունըութը անգամ Ազգային Երեսփոխանական ժողովո մեջ։ Հարյուր մեկերորդ անգամն էր այս, և սատանան կը դրդեր զիս ըսելու այս երկուքեն մեկուն. «Թո՛ղ տուր դիմացինիդ լմնցնել յուր խոսքն և վերջը խոսե»։ Բայց որովհետև ուրիշ անգամներ այսպես խոսած ըլլալուս համար մեկուն կամ մեկալին սիրտը կոտրած եմ, որոշեցի չեզոքություն պահել, թող տալ իրենց՝ փոխասացություն ընել և սպասել տեսնելու համար, թե ի՛նչպես պիտի վերջանա այս տեսարանն, որ Ազգային Երեսփոխանական ժողովո մեջ գրեթե միշտ կռիվով կը վախճանի։

— Իրավունք ունիք, պատասխանեց Մանուկ աղան, կարճ մարբուճը շատ աղեկ կերևա պատկերին մեջ, բայց և այնպես մաքուր և շիտակ ըլլալու է թաղական ընտրվող մարդ մը։

— Դուք աղեկ կը ճանչնա՞ք։

— Իմ ճանչնալս մինակ օգուտ չըներ, քվեարկությամբ կընտրվի։

— Քվեարկությա՞մբ։

— Այո՛, ըստ սահմանադրության քվեարկությունը կընտրե։

— Ի՞նչ կըսեք, թաղեցին քվե՞ պիտի տա հիմա աղեկ մարբուճ մը ընտրելու համար։

— Թաղականի վրա է մեր խոսքը։

— Թաղական ո՞ւսկից հանեցիր. մարբուճի վրա է մեր խոսքը։

— Մի՛ բարկանաք, Աբիսողոմ աղա, այնպես ըլլա։

— Ինչո՞ւ բարկանամ պիտի... վաղը երթանք, հատ մը առնենք։

— Կառնենք։

Այս պահուն սենյակի դուռը բացվեցավ, և կնկան մը գլուխ երևցավ։

Այս կինը Շուշան կը կոչվեր, և յուր արհեստն ալ սիրո միջնորդություն էր. այրերուն կին կը գտներ, կիներուն այր կը մատակարարեր և զանոնք իրարու հետ ամուսնացնելով յուր աշխատության վարձքը կընդուներ։ Երբեմն ալ այրը կինեն կը զատեր և դարձյալ յուր աշխատության փոխարենը կառներ։ Տարիքն, եթե իրեն հարցունես, երեսունըվեց է, իսկ եթե հարցունես ինձի, որ միշտ սովորություն ունիմ կնկան մը խոստովանած տարիքին վրա տասն ավելցնել, քառասունըվեց է։ Ծաղկի հիվանդությունը յուր նշանները ձգած է անոր երեսը։ Սև և երկար դեմք մը, որուն կեսը կը կազմեր ծնոտը, և որուն մեջտեղը երկնցած էր քիթ մը, որ բարձր և ճոխ հանդ մ'ուներ, կը կրեր յուր վրա երկու փոքրիկ և սև աչեր, որ ամեն վայրկյանին չորս կողմը կը պտտեին։ Հազիվ երկու մատ լայնությամբ ճակատ մ'ուներ. ընքվինները հիվանդությենն թափած էին։

Տիկին Շուշան գլուխը դռնեն ներս խոթելեն առքը դուռը բացավ և ներս մտավ ըսելով.

— Եթե գաղտնի խոսք մը ունիք, դուրս ելնեմ։

— Ո՛չ, պատասխանեց Մանուկ աղան, թաղականի վրա կը խոսեինք։

— Գետնին տակը անցնի այն թաղականի խնդիրն, ըսավ տիկին Շուշան և ծանրությամբ գլուխն Աբիսողոմ աղային ծռելով՝ գնաց բաղմոցի մը վրա նստելու։

— Բարի եկաք, տիկին, ըսավ Մանուկ աղան։

— Բարի տեսանք։ Դուք ալ բարի եք եկեր, Աբիսողոմ աղա. քաղաքնիս ի՞նչպես գտաք, նայինք՝ հավնեցա՞ք։

— Հավնեցա, շատ աղեկ է։

— Այս կողմերը ի՞նչ գործ ունիք, հարցուց Մանուկ աղա, գարձյալ նշանո՞ւք մը կա, ի՞նչ կա։

— Հրամմեր եք, սա դիմացի տունը եկա, և անգամ մ'ալ ձեզի հանդիպիմ, ըսի։ Սա Անթառամին աղջիկը դիմացինիդ տղուն կուզեմ շինել. գործն ալ լմնցածի պես էր, բայց տիկին Մարթան յուր աղջիկը տալ ուզելուն համար Անթառամին աղջկանը վրայոք խել մը խոսքեր ըսած է մանչուն, ան ալ քիչ մը պաղած է։ Այսօր եկա, որ գինքը տեսնեմ և համոզեմ, բայց դուրս ելած ըլլալուն՝ վաղը պիտի գամ։

— Աղջիկ մ'ալ մեր Աբիսողոմ աղային չգտնա՞ս։

Աբիսողոմ աղան ժպտեցավ։

— Տիկինն արդեն իմացուց ինձի վարը, թե Աբիսողոմ աղան կարգված

չէ, և ես ալ շիտակը անոր համար վեր ելա, պատասխանեց տիկին Շուշան ճերմակ թաշկինակովն քիթը սրբելով։

— Անանկ միտք մը ունիմ, ըսավ Աբիսողոմ աղան տեղեն ելնելով և սիկար մը հրամցնելով տիկին Շուշանին։

— Եթե անանկ միտք մը ունիք, քեզի ալ կրնանք ձեր ուզածին պես աղջիկ մը գտնել. քսան տարիե ի վեր այս գործին մեջն եմ, ամենքն կը ճանչնամ։ Հրամանքնիդ ի՞նչպես աղջիկ կուզեք, անգամ մը ան հասկնալու եմ ես։

Մանուկ աղան տեսնելով, որ Աբիսողոմ աղան տիկին Շուշանի հետ խոսքի բռնվեցավ, դուրս ելավ՝ ուրիշ անգամի պահելով թաղականի պատմությունն, զոր չէր կրցած ավարտել։

— Աղվոր աղջիկ մը կուզեմ, պատասխանեց Աբիսողոմ աղան խնդալով։

— Գիտեմ, որ աղվոր աղջիկ կուզես. ուզած աղջիկդ հարո՞ստ ըլլալու է։

— Այո՛։

— Պարկեշտ։

— Հարկա՛վ։

— Տասնըվեց-տասնևութ տարեկան։

— Ճիշտ։

— Դաշնակ զարնել գիտնա։

— Գիտնալու է։

— Աղեկ պարե։

— Հրամմեր եք։

— Շատ լավ, ասանկ աղջիկ մը կա ձեռքիս տակը, բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տեսներ տունը. առտվընե մինչև իրիկուն ծունկ ծունկի վրա կը դնեն և կերգեն, կը պարեն և կամ բոլոր օր կը պտտին. հիմակվընե ըսեմ, վերջեն ինձի պատճառ չըռնես. աղեկներն ալ կան, բայց գտնելը շատ դժվար է։ Քու ըսած աղջիկներուդ մեջ անանկներ ալ կան, որ իրենց ուզած մեկը կը սիրեն և շատ անգամ անոր հետ գեղ մը կը փախչին, և դուն ալ կսպասես, որ կինդ գա։

— Ի՞նչ կըսեք։ Եթե այդպես է, չեմ ուզեր։

— Բայց կան ալ, որ վրադ կխենդենան։

— Եթե այսպես է, կուզեմ։

— Բայց կան ալ, որ ամիս մը իրենց սիրածին հետ կապրին և քու անունդ քնալ չեն տար։

— Եթե այնպես է, չեմ ուզեր։

— Բայց կան ալ, որ վայրկյան մը քովեդ չեն բաժնվիր։

— Եթե այսպես է, կուզեմ։

— Ասոնք ըսելուս համար ինձի բան մի՛ ըսեր. վասնզի կան անանկներ

ալ, որ Թոզ կուտան իրենց կինը ուրիշի մը հետ սիրահարություն ընել և աղջկան հորմեն քիչ մը դրամ առնելով աչք գոցել։

— Իրա՞վ կըսեք. անանկ էրիկ մարդ կը գտնվի՞ աշխարհիս վրա։

— Մազես շատ։

— Եվ այն տեսակ էրիկ մարդերու և կիներու երեսը ո՞վ կը նայի։

— Ամեն մարդ. կինը կարդարացնեն՝ ըսելով, Թե սատանայի խաբված է, էրիկն ալ կը սրբացնեն՝ ըսելով, Թե խեղճը չդիտեր յուր կնոջ բռնած ընթացքը։

— Է՛, հիմա կը ճաթիմ... չեմ ուզեր, չեմ ուզեր, Թող մնա՛, իմ քաղաքը կը կարգվիմ։

— Բայց և այնպես անանկներ ալ կան, որ քեզի համար իրենց հոգին անգամ կուտան։

— Անանկ մեկն եթե գտնեմ, կը կարգվիմ։

— Ես անանկ մեկը պիտի գտնեմ քեզի. իմ հարցունելս սա է, որ ձեր ի՛նչ տեսակ աղջիկ ուզելը հասկնամ։

Ես ալ իրավունք կուտամ տիկին Շուշանին. վասնզի ամեն օր այնպիսի ամուսնություններ կը տեսնենք, որք մարդուս զարմանք կուտան։ Ատեն մը հետաքրքրության համար կարգված մարդու մը սիրո կրկնատոմարը գրեցի և տարեգլխուն հաշվեկշիռը հանելով տեսա, որ մարդը սնանկացած էր բարոյականության մեջ։ Բարևս կտրեցի իրմե և սակայն մեծ զարմանքով տեսա, որ այդ մարդը մեծ պատիվ կը գտնե ընկերություններու մեջ և իբրև բարոյականի տեր անձ մը ամեն կողմե հարգանք կընդունի։ Հետաքրքրությունս ավելցավ. հաշվեկշիռս նորեն աչքե անցուցի և դիտեցի, որ կինն, զոր ես այդ մարդուն ընկեր նշանակած էի, մայր հաշվույն մեջ դրամագլուխի կողմ անցած է երկանը տեատրակին մեջ։ Երե օր մը սիրո տոմարակալություն մը հրատարակեմ, մեծ հուշմունք պիտի պատճառեմ հաշվագետներու մեջ. վասնզի ես շատ էրիկ մարդիկ գիտեմ, որոնք կինն իրենց սիրո հաշվույն մեջ ընդհանուր ծախսի կողմ կանցունեն, շատերը կարասիի հաշվույն տակ կը գրեն, ոմանք ընդհանուր ապրանքի կարգը կանցունեն, ոմանք վճարելի թուղթերու և ոմանք ընդունելի թուղթերու հաշվույն մեջ կը նշանակեն։ Խիստ քիչ են այն նախանձելի ամուսնություններն, որոնց մեջ կինը երկանը ընկեր կարձանագրվի սիրո տեատրակին մեջ։

— Կարգվիլը շատ անուշ բան է, հարեց սիրո միջնորդն, քեզի համար աղջիկ մը գտա՞ր, ամեն օր արքայության մեջ ես...

— Ես ալ ասոր համար է, որ կարգվիլ կուզեմ։

— Կինդ բնավորությանդ չհարմարեցա՞վ, ամեն օր դժոխքի մեջ ես, կրակներու մեջ կէրիս։

— Ես ալ ասոր համար է, որ կարգվելու կը վախնամ։



— Նայեցե՛ք, ձեզի բան մը ըսեմ, ազա՛, հրամանքնիդ հարկավ մեծ տեղ մը աղջիկ կուզեք առնել, վասնզի դուք ալ մեծ մարդ մ'եք։

— Այո՛, այո՛, մեծ տեղե կուզեմ։

— Ես ալ քեզի մեծ տեղե մը աղջիկ կը գտնեմ, բայց հրամանքնիդ ֆրանսերեն գիտե՞ք։

— Մեծ տեղե աղջիկ առնելու համար անպատճառ ֆրանսերե՞ն գիտնալու է։

— Այո՛, վասնզի մեծ տեղի աղջիկները ֆրանսերեն կը խոսին, և երբ կին մը յուր էրիկանը չգիտցած լեզվով ուրիշի մը հետ կը խոսի, տակեն նախանձ կելնե։

— Ես ալ կը սորվիմ ֆրանսերեն։

— Բացի ասկից, երջանկությունը շատ քիչ կը գտնվի այն ամուսնության մեջ, ուր կնիկն էրիկեն ավելի բան գիտե։

— Այնպես է, ես ալ այն կարծիքին եմ։

— Հրամանքնիդ եվրոպական եղանակներեն բան մը կը հասկնա՞ք։

— Ամենևին բան մը չեմ հասկնար և մանավանդ թե կը ձանձրանամ։

— Ի՞նչ պիտի ընես ուրեմն, եթե կինդ ժամերով դաշնակի առջեն անցնի և այդ նվագարանի վրա եվրոպական խաղեր զարնե։

— Թող չեմ տար, ես ձանձրույթ կիմանամ։

— Ան հաճույք կզգա։

— Կին մը ի՞նչ իրավունք ունի յուր էրկանը գլուխ ցավցունելու։

— Էրիկ մը ի՞նչ իրավունք ունի յուր կինն զվարճութենեն զրկելու։

— Եթե գործը մինչև աս տեղվանքը պիտի գա, չեմ կարգվիր։

— Չկարգվիլ չըլլար, միայն թե պիտի ստիպվիս կնկանդ ճաշակին հարմարելու համար դաշնակ սորվիլ։

— Ես կրնա՞մ սորվիլ։

— Ինչո՞ւ չէ, մանավանդ թե ավելի դյուրին է քեզի դաշնակ զարնել սորվիլ, քան թե կնկանդ դաշնակ զարնելը մոռնալը։

— Եթե այսպես է, ասոր ալ ճամբան գտանք ըսել է։

— Ասոնք ըսելուս պատճառն ան է, որ ես հոդիս անցունել չեմ ուզեր. ամեն բան առաջուց կըսեմ, որ վերջեն ինձի պատճառ չբռնեն։ Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ կա. բարձր դասեն, միջին դասեն և ստորին դասեն. այս երեք դասեն ալ ծախու ապրանք ունիմ. հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեցեք և ինձի ըսեք՝ սա դասեն կուզեմ։ Հայտնի է, որ բարձր դասը շատ սուղ է, միջինն՝ նվազ սուղ և ստորինն՝ աժան։

— Ես շատ աժան չե՛մ ուզեր։

— Շատ լավ. աղջիկը ձերմա՞կ գույն ունենա թե քիչ մը թուխ։

— Ձերմակ կուզեմ։

— Աչքերը սև՞ թե կապույտ։

— Եկու, տես, որ սևն ալ կը սիրեմ, կապույտն ալ...

— Կամ մին պիտի ըլլա, կամ մյուսը. վասնզի չիրնար ըլլալ անանկ աղջիկ մը, որուն մեկ աչքը կապույտ ըլլա, մյուսը՝ սև։

— Կապույտ ըլլա թո՛ղ։

— Շատ լավ։ Հասակն և մազերը...

— Երկար, երկար։

— Մեջքը...

— Մեջքը բարակ ըլլա, բայց տկար չեմ սիրեր. կուզեմ, որ քալած ժամանակը միսերը շարժին։

— Կը հասկնամ, այսչափը հերիք է. Ճիշտ ուզածիդ պես աղջիկ մը կա, որ շատ ալ պարկեշտ է և իրեն էրկանը համար հոգի տալ կերևա։

— Ես ալ անանկ մեկը կուզեմ։

— Թերևս վաղը քու անունդ իրեն ըսելուս պես վրադ սեր կապե։ Պատկերդ տուր, որ իրեն անգամ մը ցցունեմ։

— Պատկերս վաղը հանել պիտի տամ։

— Վաղը՞... վաղը հանել տալու որ ըլլաք, ումը օրեն կառնեք, և ուր օր սպասե՞նք։

— Ինչո՞ւ սպասենք, վաղը կերթանք. մեծ տեղե՞ն է աղջիկը։

— Այո՛։

— Հայրը հարո՞ստ է։

— Շատ հարուստ է, բայց հարստությունը չցցուներ։

— Շատ խանութներ ունի՞։

— Քանի չափ։

— Տո՞ւն։

— Քառասունի մոտ։

— Շատ աղեկ, վաղը չէ մյուս օր կերթանք այդ աղջիկը տեսնելու։

— Գլխուս վրա. ցերեկին կուգամ, և մեկտեղ կերթանք։ Մնաք բարով, Աբիսողոմ աղա, սիրտդ հանգիստ բռնե. ես քեղ չեմ խաբեր, ուրիշներու կրաչե շատիկ հաղցնողներե չեմ։ Կեցիք բարով, վաղը չէ, մյուս օր։

Տիկին Շուշանը կը մեկնի։

Ը

Մանուկ աղան, որ վարի սենյակն էր և խահվե կը խմեր, տիկին Շուշանին վար իջնալն տեսնելուն պես՝ խահվեի դավաթն ետղուց և Աբիսողոմ աղային քովը գնաց։

— Այսպես, ըսավ, Մելքոն աղան բևես քաշեց, և մեկտեղ ընթերցատունը մտանք։ Այդ ընթերցատունը ժամանակավ գինետուն էր։ Աստված ողորմի հոգուն, Կոմիկ տղան կը բռներ, աղեկ մարդ մ'էր. հիվանդություն մը եկավ վրան, շատ բժիշկներ նայեցան, ճար մը չկրցին գտնել, և խեղճը մեռավ...

Մանուկ աղային կինը լրագիր մը ի ձեռին ներս մտավ և լրագիրը Աբիսողոմ աղային տալով՝

— Մեծապատիվ էֆենտին հատկապես բարև ըրած է ձեզի, ըսավ և դուրս ելավ։

Աբիսողոմ աղա աճապարանոք բացավ լրագիրն և կարդաց.

«Վաննեն հետևյալը կը գրեն մեզ»։ Աս չէ, վարինը կարդանք, ըսավ և կարդաց. «Մեր բարեկամներեն մին Մուշեն հետևյալը գրած է մեզ ի հրատարակություն»։ Աս ալ չէ, մյուսը նայինք. «Քուրիե տ'Օրանի»[8] մեջ հետևյալ տողերը կը տեսնվին»։ Մյուս երեսն անցնինք. «Թայմզի թղթակիցը հետևյալը հեռագրած է հիշյալ լրագրին»։ Ասոնց մեջ իմ անունս չկա... սա կտորը նայինք... «Մայրաքաղաքիս աղնվական դասուն անդամ մ'ալ ավելցավ այս օրերս։ Երևելի վաճառական և բազում ագարակներու տեր, ազգասեր, լեզվագետ, աղնվասիրտ և վեհանձն Աբիսողոմ էֆենտի, որ մեր աղգայնոց ծանոթ է, երեկ Տրապիզոնի շոգենավով մայրաքաղաքս եկավ և ուղղակի Բերա ելավ Ծաղկի փողոց, թիվ 2 տունը։ Աբիսողոմ էֆենտիի պես մեկու մը մայրաքաղաքս գալն անշուշտ մեծ ուրախություն պիտի պատճառե մեր բարեմիտ ազգայնոց»։

Աբիսողոմ աղան Մանուկ աղային դառնալով՝ տես, ըսավ, ի՞նչ գրած է ինձի համար, և բարձր ձայնով անգամ մ'ալ կարդաց։

— Մեծապատիվ էֆենտին բարև կրնե եղեր, ըսավ տիկինը նորեն ներս մտնելով, բաժանորդագին պիտի տաք եղեր։

— Հիմա՛, ըսավ Աբիսողոմ աղան և տվավ բաժանորդագինը տիկնոջ, որ վազելով վար իջավ։

— Սա մարդը գեշ չգրեր կոր, հե՞, հարցուց Աբիսողոմ աղան։

— Այո՛, գեշ չգրեր։

— Պատվական լրագիր մ'է։

— Ավելի պատվականը կրնա ըլլալ։

Տիկինը դուռը բանալով Աբիսողոմ աղային նամակ մը, խոշոր ծրար մը հանձնեց ըսելով.

— Մեծապատիվ էֆենտին մասնավորապես կը բարևե զձեզ։

Աբիսողոմ աղան նամակը բացավ և հետևյալը կարդաց.

«Մեծապատի՛վ էֆենտի,

Ձեր մեծապատվության մայրաքաղաքս գալն իմանալով փութացի ձեր գալուստը շնորհավորելով՝ լրագրես տասն օրինակ ղրկել։ Քաջահույս եմ, որ պիտի հաճիք ձեր բաժանորդությամբը քաջալերել լրագիրս, որով պիտի խրախուսեք զիս, որ խմբագրական տաժանելի աստպարեզին մեջ ազգին ծառայություններ ընելու կոչված եմ։

Մնամ հարգանօք

խմբագիր-տնօրեն

....լրագրոն

(ստորագրություն)»

— Տասը հատն ի՞նչ ընեմ...

— Կշտանալով կը կարդանք...

Տիկինը նորեն ներկայացավ ծրարով մը և նամակ մ'ալ տվավ Աբիսողոմ աղային, որ բանալով սկսավ կարդալ.

«Մեծապատի՛վ էֆենտի,

Ձեր հանրածանոթ ազգասիրությունը քաջալերություն տվավ ինձ լրագրես տասնըհինգ օրինակ ղրկել ձեզ։ Քաղցր է ինձ հուսալ, որ պիտի բարեհաճիք զանոնք ընդունիլ և պաշտպան կանգնիլ լրագրության, որ մեր մեջ ընթերցասիրության չտարածվելուն պատճառովը դժբախտաբար դեղ վիճակի մը մեջ կը գտնվի։

Մնամ հարգանօք

խմբագիր-տնօրեն

....լրագրոն

(ստորագրություն)»

Աբիսողոմ աղան նամակը ծալլելու վրա էր, տիկինը ներս մտավ.

— Մեծապատիվ էֆենտին սիրո բարևներ կընե եղեր ձեզի, ըսավ և նամակով մը գիրքեր ներկայացուց Աբիսողոմ աղային, որ նամակը բացավ և սկսավ կարդալ.

«Մեծապատի՛վ էֆենտի,

Իմ մտքիս ծնունդն եղող քերթվածները հրատարակած ըլլալով՝ արժան դատեցի անոնցմե քառասուն օրինակ ձեզ ղրկել։ Կը հուսամ, որ շնորհ կընեք զանոնք ընդունելու և կերպով մը քաջալերություն տալու ինձ, որպեսզի մյուս քերթվածներս ալ քիչ օրեն հրատարակության տամ։

Խնդրելով, որ ընդունիք իմ խորին մեծարանացս հավաստիքը, մնամ ձերդ մեծապատվության խոնարհ ծառա։

(ստորագրություն)»

Աբիսողոմ աղան նամակը գոցեց և քովը դրավ։

Տիկինը դարձյալ ներս մտավ։

— Մեծապատիվ էֆենտին բարև՛ ըրած է դարձյալ,— հարցուց Աբիսողոմ աղան։

— Ո՛չ, բեռնակիրներեն մեկը եկած է և կրողները կուզե։

Աբիսողոմ աղան քսան դահեկան հանեց, տվավ։

Տիկինը դուրս ելավ, դուռը գոցեց։

— Ընթերցատան մեկ անկյունը քանի մը հոգի նստած ընտրելի թաղականներու ցուցակը կը պատարաստեին, ըսավ Մանուկ աղա՝ յուր պատմությանը թելն ձեռք առնելով։ Անոնք մեր կողմեն չէին և կաշխատեին, որ իրենց ուզած կաշառակեր մարդերը թաղական ընտրեն։

— Տղան մեկը եկավ սա գիրքերը ձգեց, գնաց, ըսավ տիկինը նորեն մտնելով. մեծապատիվ էֆենտին շատ բարև կընե եղեր և այսօր կամ վաղը պիտի դա եղեր զձեզ տեսնելու։

Տիկինը գրքերը սեղանի մը վրա դրավ։

— Ի՞նչ ընեմ այսչափ գիրքերը, գրավաճա՞ռ պիտի ըլլամ ես։ Ձեմ ուզեր, ա՛լ ասկից վերջը եթե բերող ըլլա, մի՛ ընդունիր, Աբիսողոմ աղան հոս չէ՝ ըսե՛ և ճամբե՛։

— Ատ ալ չըլլար, դուն խմբագիրները չես ճանչնար. անոնց մեջ կը գտնվին այնպիսիներ, որ երբ իմանան, թե իրենց ընկերներեն մեկուն լրագիրն առած ես և իրենցը չես առեր, վրադ կը հարձակին և չլսված խոսքեր կընեն։

— Եթե այնպես է, ընդունե որչափ լրագիր որ բերեն. ի՞նչ ընենք, բռնվեցանք անդամ մը. եթե գիրք բերեն, մի՛ ընդունիր։

Տիկինը գլուխ ծռելով դուրս ելավ։

— Թեպետև այդ մարդիկն իրենց ուզածները թաղական ընտրելու կաշխատեին, բայց իրենց մեջ ալ անմիաբանություն կար. ակնավաճառն յուր առաջին հաճախորդը կուզեր թաղական ընտրել, հացագործն կուզեր թաղական ընտրել այն մարդն, որուն տունը օրը տասը հաց կուտար. դերձակն թաղական տեսնել կը փափաքեր այն երիտասարդն, որուն վրա շաբաթը երկու անդամ հագուստ կը ձևեր և կը կարեր. համեստագործը քվե տալ կուզեր այն հարուստին, որուն մեկ-երկու համեստ կը շիներ տարին. խմբագիրն յուր բոլոր բաժանորդները թաղական խորհրդո մեջ տեսնել կուզեր. փաստաբանը իրեն շատ դատ հանձնողին քվե կուտար. բժիշկն յուր ամենեն ծանր հիվանդին. և դինեպանն ալ ամենեն շատ օղի և դինի խմողին կուզեր հանձնել թաղին գործերը։ Ահա այսպես իրենց մեջ...

Մանուկ աղան դարձյալ չկրցավ շարունակել յուր պատմությունը, վասնզի ուրիշ հյուր մը ներս մտնելով ընդհատեց անոր խոսքը։

Այս հյուրը մաքուր հագված երիտասարդ մ'էր. յուր կլոր և ճերմակ դեմքը շրջանակված էր դեղինով խառն սև մորուքե մը, որ շատ չէր վայլեր։ Պատկերներ կան, որ առանց շրջանակի ավելի դեղեցիկ կերևան. Թեպետև կան ալ, որ գեղեցիկ երևալու համար շրջանակի կը կարոտին։— Երև բնությունը չարդիլեր կիներու շրջանակի մեջ անցունել իրենց դեմքերն, այսօր ո՞րշափ կիներ մորուք պիտի ունենային։— Այս երիտասարդը ներս մտնելուն պես հանեց յուր սև և երկար գլխարկն և բարևեց սենյակին մեջ գտնվող երկու բարեկամները։

Մանուկ աղան անմիջապես դուրս ելավ բարկությամբ մրմռալով.

— Այս տարիքն եկած եմ, և ասանկ բան գլուխս եկած չէր. Թո՛ղ չեն տար, որ երկու խոսք ընեմ. հաղիվ Թե բերանս կը բանամ, մեկը կուգա, կսկսի խոսիլ, և իմ խոսքս բերնիս մեջ կը մնա։

— Աբիսողոմ աղա հրամանքնի՞դ եք, հարցուց հյուրն բազմոցի վրա նստելեն ետքը։

— Այո՛, ես եմ։

— Շնորհակալ եմ, որ Աբիսողոմ աղան դուք եք. ձեր գալուստը լրագրի մեջ կարդացի և շատ ուրախացա, որ աղգերնուս մեջ ձեղի պես աղնիվ սիրտ կրող աղգասերներ պակաս չեն, վասնզի այն աղգն, որ աղգասեր չունի յուր մեջ, աղդ չէ։

— Այո՛։

— Փոխադարձաբար այն աղգասերն ալ, որ աղդ չունի, աղգասեր չէ։

— Շիտակ է։

— Այս երկուքն իրարու հետ այնպիսի սերտ կապակցություն մ'ունին, որ իրարմե բաժնելուդ պես երկուքն ալ կը կորսվին։

— Այնպես է։

— Աղդ մը, որ յուր աշխատավորները չքաջալերեր, ավելցուց հյուրն միշտ ծանր և լրջադույն եղանակով մը, աղգերու կարգ անցնելու բնավ իրավունք չունի։

— Շատ աղեկ կը խոսիք։

— Նվ երբ աշխատավոր մը վարձքը չընդունիր յուր աղգեն, բնականաբար կը վհատի և երբեմն կը խորհի երթալ ինքզինքը ծովը նետել։

— Ատ տղայություն է։

— Ներեցե՛ք, Աբիսողոմ աղա, եթե մեր այս առաջին տեսությանը քիչ մը համարձակ կը խոսիմ ձեղի հետ։

— Հոգ չէ՛։

— Մառադ վեց տարի Եվրոպա մնացած եմ և բժշկություն սորված եմ։

— Աղեկ արվեստ։

— Դիշերները քունս ծախելով կարդացած ու գրած եմ, որպեսզի քաղաքս դառնամ և ազգիս ծառայություն ընեմ։

— Մարդ ալ յուր աղգին ծառայություն ընելու է։

— Երկու տարի է, որ հոս կը գտնվիմ, և մինչև այսօր հաղիվ չորս հիվանդ նայած եմ. հասկցիր, Թե ի՛նչպես կը քաջալերվին հոս բժիշկները։

— Ցավալի բա՜ն... այս տեղացիները հիվանդ ըլլալու սովորություն չունի՞ն...

— Ունին, բայց հոս հիվանդները ազգային գգացում չունին, Հայաստանի վրա գաղափար չունին։

— Ի՞նչ կըսեք։

— Այո՛, երբ հայ մը հիվանդ ըլլա, օտար աղդե բժիշկ մը կը բերե յուր տունը՝ առանց գիտնալու, Թե հայու ցավն հայը կարող է միայն բժշկել, առանց հմտոդվելու, Թե օտարը չէ կարող հայու ցավուն դարման ըլլալ։ Այսօրվան օրս երկու հազարեն ավելի հայ բժիշկ կա. ասոնց մեջեն հինգ-վեց հատը, մանավանդ երկու-երեք հատը պատվական կյանք կանցունե, և անդին մնացածը ամեն օր բերանը բաց կսպասե, որ հիվանդ մը ներկայանա իրեն և օտակ առնե։

— Գեղ վիճակ։

— Ի՞նչ ընեն աղգային բժիշկներն, երբ աղգային հիվանդներն օտարներու կը դիմեն... ո՛հ օտարասիրությո՛ւն, օտարասիրությո՛ւն, գոչեց բժիշկն աչերն երկինք վերցնելով, ե՞րբ պիտի երթաս մեր քովեն։

— Օտարասիրությունը աղեկ բան չէ։

— Մանավանդ Թե բժիշկները քաջալերելու չափ հիվանդություն ալ չկա մեր աղգին մեջ. և այն աղգին մեջ, որ հիվանդությունը տարածված չէ, պարապ բան է Եվրոպայի բժիշկներուն չափ ճարտար բժիշկներ հուսալ, ինչպես նաև այն աղգն, որու մեջ ընթերցասիրությունն տարածված չէ, իրավունք չունի տաղանդավոր և հանճարեղ հեղինակներ ունենալու. տաղանդն և հանճարն առանց քաջալերության կը մեռնի։

— Շատ իրավունք ունիք։

— Ձեք կարող երևակայել, Աբիսողոմ աղա՛, Թե որչափ հուսահատած եմ. հաղար անգամ զղջացած եմ, երկու հաղար անգամ անեծք կարդացած եմ բժիշկ ըլլալուս համար. ո՜ւր էր, Թե բժիշկ ըլլալու տեղ հիվանդ ըլլայի և... մեռնեի. մեր աղգին մեջ հիվանդությունը բժշկությենեն աղեկ է, վասնզի տգիտությունն գիտությենեն ավելի կը քաջալերվի... Թերևությունը ծանրությենեն ավելի հարդ կը գտնե, մոլիներն առաքինիներեն ավելի պատիվ կը վայելեն.

ճշմարիտ ասուած, ուխտ ըրած եմ, որ եթե օր մը երեւելի ազգայիններեն հիվանդ մը նայիմ, անոր անունը լրագիրներու մեջ բարձրացուցեմ։

Այս խոսքին վրա Աբիսողոմ աղա արթնցավ, այսինքն փառասիրությունն արթնցավ։ Ի՞նչ անուշ բան է թերություններ հավաքել միամիտ մարդերու վրայեն։ Խորամանկները երբեմն վարպետությամբ այնքան կը կեղծեն իրենց թերությունները, որ անոնց հավաքիչները կը շվարեցնեն. վասնզի անոնք երբեմն միամիտ և երբեմն խորամանկ կը ձևանան, ժամ մը՝ ագետ, ժամ մը՝ գիտուն, մերթ՝ անաչառ, մերթ՝ աչառու, մերթ՝ կեղծավոր, մերթ՝ անկեղծ, և երբ ազգային նշանավոր, հանճարեղ և հերանուշ Մերենցը ասոնցմե մին նկարագրելով անբնական անձ մը ներկայացնե, ամեն կողմն կը բասրվի, թե Մերենցն տակավին Մանուկենց[9] է անձեր ստեղծելու արհեստին մեջ, թե միևնույն անձին վրա Ադամն և Նեռն,[10] սատանան և հրեշտակն, Զոյիլն և Հոմերոսն, արականն և իգականն միանդամայն կներկայացնե։ Ի՞նչ հանցանք ունի ճերմակերես Մերենցն, երբ յուր ներկայացնելիք անձերն խորամանկ են։—Նեռեցե՛ք, Աբիսողոմ աղա և տեր բժիշկ, եթե ձեր խոսակցությունն ընդմիջեցի. ի բնե քիչ մը անհամբեր եմ. երբ խոսքին կարգը գա, չեմ կարող ինքզինքս բռնել, որչափ ալ այս բնավորությանս պատիժը կրած ըլլամ և կրեմ։— Այո՛, Մերենցն կը ներկայացնե անձերն ոչ թե ինչպես որ են, այլ ինչպես որ կերևին։ Մերենցն այս մասին որչափ ալ երկնցնե յուր մտքերն, իրավունք ունի, վասնզի ունինք հեղինակներ, որոնք Մերենցեն ավելի երկար մազ ունին և կը ներկայացնեն իրենց անձերն ոչ թե ինչպես որ են, այլ ինչպես որ կուզեն իրենք. որ ըլլան անոնք։ Ասոր համար է, որ կին-հեղինակներն երբ Հայկ կամ Վարդան կամ Արտաշես ներկայացնել ուզեն, Վիքթոր Հյուգոյի խոսքերը կամ Մոլտկեի կարծիքները կը դնեն անոնց բերնին մեջ։ Ասոնք կը կարծեն, թե երբ Ադամ յուր ժամանակին հատուկ պարզությանը մեջ ներկայացնեն, կը կորսնցուցնեն իրենց տաղանդն, եթե ունին, կամ կը վնասեն իրենց հանճարին, զոր ունենալ կը կարծեն, կամ վերջապես կը զրկվին այն համբավեն, զոր վաստկիլ կերազեն։ Ո՞վ ըսած է այս ողբերգակներուն, թե ավելի դժվար է մեկուն պատկերն ճշտությամբ նկարելն, քան թե երևակայությամբ անբնական պատկեր մը գծելն. ո՞վ պռոացած է ասոնց ականջն ի վար, թե նկարիչ մը պատկերներ ստեղծելու սկսելե առաջ՝ պատկերներ ընդօրինակելու է։— Ոչ ոք։ Եվ ո՞վ կը հանդգնի այս փափուկ ժամանակին մեջ ուրիշի մը գործն անաչառաբար քննադատելու։ Մեր քննադատները, քիչ բացառությամբ, ակնոց ակնոցի վրա կդնեն գործի մը մեջ զեղեցիկ կտորներ փնտռելու համար. փնտռելու համար և ոչ թե տեսնելու համար, վասնզի տեսնված բանը չփնտռվիր։ Ասոնք քնավ տարբերություն չունին գրաքննիչներեն, որք ոևէ հրատարակության մը մեջ միայն տգեղ կտորներ կը փնտռեն։ Չեմ տեսած քննադատ մը, որ տգեղ հրա-

տարակության մը կոկորդեն բռնե, սրմն և սպաննե զայն։ Սպաննելու չէ. գործ մը գեղեցկացնելու աշխատելու է, կըսե, անոր գեղեցիկ կողմերը ցույց տալով միշտ և տգեղ կետերը հեռվանց ցցունելով խիստ քիչ անգամ։ Ո՛չ, պարոն քննադատներ, ո՛չ, իրավունք չունիք, սպանեցեք տգեղ գործերն և վստահ եղեք, որ պիտի գեղեցկանան անոնք։ Մարդեր կան, որ կը գեղեցկանան, երբ մեռնին։ Ես, որ այսչափ խստությամբ կը խոսիմ ուրիշներու երկերուն վրա, կը կարծեք, թե քաղցրությա՞մբ կը վարվիմ «Մուրացկաններուս» անձերուն հետ, որոնց բերնեն ելած խոսքերն միայն բառ առ բառ կը գրեմ հոս, առանց իմ կողմես կետ մ'ավելցնելու հանդգնությունն ունենալու։ Բնավ երբեք, մանավանդ թե կզգամ, որ իմ անձերս ալ ունին շատ թերություններ, զորս օր մը պիտի հարվածեմ։ Նույնիսկ մեծ թերություն մ'է, որ պատմիչ մը յուր պատմության թելը կտրե և յուր ընթերցողներն երկու ժամ խնդիրեն դուրս խոսքերով զբաղեցնե։ Բայց ի՞նչ ընեմ, այս թերությունս իմ առավելությունս է, վասնզի այս թերությանս շնորհիվ է, որ կրցած եմ քանի մը ընթերցողներու տեր ըլլալ, թերություն, որ թերություններ ուղղելու պաշտոնն ունի։ Այսչափ բացատրություն ալ թերությանս համար։ Դառնանք ուրեմն մեր պատմության։

Աբիսողոմ աղան, ինչպես ըսինք, ականջները տնկեց, երբ իմացավ, որ բժիշկն եթե հիվանդ մը գտնե, անոր անունն լրագիրներու մեջ պիտի հրատարակե. ուստի անմիջապես տակարություն ունենալ ուզեց։

— Աղեկ եղավ, որ, ըսավ բժիշկին, այսօր հոս եկաք, վասնզի քանի մ'օրե ի վեր վրաս դեշություն մը կա։

— Ի՞նչ կզգաք, հարցուց բժիշկը։

— Գեշություն մը կզգամ։

— Ո՞ր կողմդ։

— Ո՞ր կողմս։

— Այո՛։

— Ամեն կողմս։

— Ախորժակդ ի՞նչպես է։

— Աղեկ է։

— Կերածդ շուտ մը կը մարսե՞ս։

— Կը մարսեմ։

— Գիշերները հանգիստ կը քնանա՞ս։

— Շատ հանգիստ, բայց վրաս դեշություն մը կզգամ։

— Գլուխդ երբեմն կը ցավի՞։

— Այո՛։

— Վրադ սանկ թուլության պես բան մը....

— Շիշտ։

— Երբեմն դողալ մը սանկ...

— Այո՛, այո՛, դողալ մը սանկ... (մեկուսի) կյանքիս մեջ դողացած չունիմ։

— Դողալեն վերջը տաքություն մը...

— Տաքություն մը։

— Տաքութենեն վերջը քրտինք մը...

— Քրտինք մը։

— Առտուները լեզուիդ վրա լեղիություն մը։

— Այո՛, լեզուիս վրա լեղիություն մը։

— Հասկցա, բան մը չէ, կանցնի, ինքդինքդ մսեցուցած ես։

— Ինձի ալ այնպես կուգա, որ ինքդինքս մսեցուցած եմ։

— Շատ բժիշկներ կան, որ այս հիվանդությունը չեն հասկնար, սխալ դեղեր կուտան, ուրիշ հիվանդություն կը հրավիրեն։

— Ուրախ եմ, որ դուք աղեկ հասկցաք, դեղ մը տվեք, որ շուտ մը անցնի։

Բժիշկը ծոցեն հանեց թերթակալը կամ տետրոնը — երկուքեն ո՛րն որ ուզեք, կրնաք գործածել. ազատ եք նաև ոչ մին գործածելու և ոչ մյուսն — թուղթ մը քաշեց անոր մեջեն և մատիտով քանի մը բառ գծելեն ետքը թուղթին վրա՝ Աբիսողոմ աղային տվավ զայն՝ ըսելով.

— Ասիկա կարմիր ջուր մ'է. ժամը մեկ անգամ կը խմեք անկից խահվեի գավաթով. թեպետ և քիչ մը լեղի է, բայց աղդու է։

— Շատ աղեկ։

— Մոռցա հարցնելու, թե քնությունդ ի՞նչպես է։

— Քնությունս... շիտակը, խարդախ մարդերեն չեմ ախորժիր, ամենուն հետ աղեկ կը վարվիմ...

— Ամեն առտու դուրս կելլա՞ք, հարցուց բժիշկն՝ խոսքին ձևը փոխելու ստիպվելով։

— Հոս գալես ի վեր երկու առտու դուրս չկրցի ելնել։

— Իրա՞վ կըսեք։

— Սուտ խոսելու ի՞նչ պարտք ունիմ։

— Ուրեմն դեղ մ'ալ գրեմ։

Բժիշկը դեղադիր մ'ալ գրեց և Աբիսողոմ աղային տվավ։

— Նախ այս դեղը պիտի առնես, ըսավ բժիշկն, որպեսզի վաղը առտուն դուրս ելնես և վերջը մյուս ջուրը պիտի խմես։

— Եթե այս դեղեն խմեմ, վաղը առտու անպատճառ դուրս կրնա՞մ ելնել։

— Այո՛, անպատճառ։

— Այս ի՞նչ աղվոր դեղ է... հապա թե որ դարձյալ հյուրեր գան և դիս խոսքի բռնե՞ն։

— Հյուրերդ ի՞նչ վնաս ունին։

— Ի՞նչպես վնաս չունին. երկու առտու է, որ դուրս ելնել կուզեմ և թող չեն տար. կուգան, երկու ժամ գլուխ կը ցավցոնեն։ Բայց վաղը առտու անպատճառ պիտի ելնեմ, վասնզի պատկերս քաշել պիտի տամ։

Բժիշկը դարձյալ հարցման ձևը փոխեց հալ ընելով.

— Փորդ ի՞նչպես է։

— Ամենուն փորին պես փոր է։

— Պի՞նդ է։

— Ո՞վ գիտե... իրավ որ օր մը օրանց հետաքրքրություն ունեցած չեմ հասկնալու համար, թե պի՞նդ է թե ոչ. ո՞վ պիտի նայի անանկ բաներու։

— Աբիսողոմ աղա, ամեն օր մեծ գործ կընե՞ս, հարցուց վերջապես բժիշկը ճարը հատնելով։

— Այո՛, այո՛, ամեն օր մեծ գործ կը տեսնեմ։

Ո՞վ մեծագործություն...

Ո՞վ մեծախոսություն...

— Շատ լավ, պատասխանեց բժիշկն, ես վաղն առտու նորեն կուգամ ձեզ տեսնելու։

— Կըլլա։

— Մնաք բարով, հոդ մի՛ ընեք, ձեր տկարությունը քանի մը դեղով կանցնի։

— Շնորհակալ եմ։

Բժիշկն գլխարկն առնելով մեկնելու վրա էր, երբ Աբիսողոմ աղան ըսավ անոր.

—Գրելիքդ չմոռնաս։

Բժիշկը խորհիլ սկսավ, թե ի՞նչ էր գրելիքը, և շուտ մը հիշելով՝ պատասխանեց.

— Այո՛, այո՛, միտքս է, լրագրի մը մեջ պիտի գրեմ ձեր անունը։ Մնաք բարով։

— Երթաք բարով։

Բժիշկը մեկնելուն պես Աբիսողոմ աղան ըսավ ինքնիրեն.

— Վախցա, որ բժիշկը կըսե, թե «դուն հիվանդություն մը չունիս» և ինծու հիվանդ ըլլալս հայտնի կըլլա. բայց պարապ տեղը վախցած եմ, վասնզի անիկա ոչ թե միայն չհասկցավ հիվանդ չըլլալս, այլ ըսավ նաև, թե քանի մը դեղով կանցնի հիվանդությունդ։ Է՛հ, պարոն բժիշկներ, դուք բան մ'ալ չեք հասկնար, և մամս իրավունք ուներ բնավ բժիշկ չհանչելուս ես բան մը չու-

նիմ, տեր բժիշկ, շարունակեց, անունս լրագրի մեջ գրել տալու համար հիվանդ եղա...

Այս վերջին խոստովանությունը քիչ մը խնդություն երևցավ Աբիսողոմ աղային, որ խղճմտանքը հանդարտեցնելու համար ըսավ ինքնիրեն.

— Խողն ալ պիտի կարծե, թե հիվանդ չեմ և շինծու հիվանդ եղած եմ. քանի մ'օրե ի վեր է, որ անհանգստություն մ'ունիմ, ոչ կրնամ ուտել և ոչ քնանալ, հազ մ'ալ ունիմ, որ գիշերները չքնացներ զիս։

Ո՜վ փառասիրություն, իրա՞վ է, որ դուն երբեմն խելացիները խենդ և խենդերը խելացի կընես...

Թ

Աբիսողոմ աղան բերանը քիչ մը բան դնելու համար վար իջավ, բայց երբ տեսավ, որ քանի մը հոգիներ նոր եկած էին պինքը տեսնելու, անոնց ձեռքեն խալսելու համար առանց դուրս ելավ. եթե այսպես չըներ և ամեն այցելություններն ընդունելու ըլլար, ժամանակ պիտի չունենար ոչ ուտելու, ոչ քնանալու և ոչ արթննալու։

Աբիսողոմ աղան գեռ Պոլիս չեկած՝ իմացած էր, թե Բերա գաղղիական ճաշարան մը կար և երևելի մարդերը հոն կերթային ճաշելու. ուստի առնեն դուրս ելնելուն պես միտքը դրավ հիշյալ ճաշարանն երթալու։

Հազիվ թե քանի մը քայլ առավ, հիասն տարեկան նիհար և պատռտած հագուստներով մեկը դեմն ելավ։

— Կարծեմ Աբիսողոմ աղա հրամանքնիդ եք։

— Այո՛, ես եմ։

— Քանի մը վայրկյան ձեզի հետ տեսնվիլ կը փափաքեի։

— Է։

— Նոր եղանակավ նոր դասագիրքեր հանած եմ, անոնցմե հարյուրի չափ ձեզի տալ կուզեի. ներեցե՛ք համարձակությանս, ի՞նչ ընենք, այս համարձակությունը մեզի ավողն ազգն է, որ չքաջալերեր յուր դասատուներուն և թող կուտա, որ անոնք խեղճ վիճակի մեջ ապրին։ Ա՜հ, եթե այսօր դասագիրքերը չկարենամ քշել, տպարանապետը բանտը պիտի դնե զիս. գեռ տպագրության և թուղթի ծախքը վճարած չեմ իրեն, և ամեն օր կսպառնա ինձի։

— Դասագիրքն ի՞նչ պիտի ընեմ ես։

— Ձեր բարեկամներուն կուտաք. կաղաչեմ, խնդիրքս մի՛ մերժեր. վեցական դահեկանեն վեց հարյուր դահեկան կընե, և այդ գումարն ալ ձեզի համար մեծ բան չէ։

— Գազղիական ճաշարանն ո՞ր կողմն կերթացվի։

— Ասկից կերթացվի, սիրով կառաջնորդեմ ձեզի հոն։

— Շնորհակալ կըլլամ։

— Կը քալենք և կը խոսինք։ Դասատուներն ազգին ծառաները համարված են և ամենուն երեսեն ինկած, մինչդեռ անոնք ազգին տերերն են։ Ազգ մը անոնցմով առաջ կերթա. բայց ի՞նչ օգուտ, մեր մեջ քաջալերություն չկա։ Դասատու մը այսօր դպրոցի մը պաշտոնի կը կոչվի և քանի մ'օրեն կը ճամբվի, վասնզի հոգարարձուներեն մեկուն գետնեն բարև չէ տվեր։ Եթե քանի մը ամիս պաշտոն վարե և ամսական ուզե, կը վռնտվի՝ ամսական ուզած ըլլալուն համար, և միշտ սա խոսքերը կը լսե. «Ազգին ստակովը կապրիք, ազգին վրա բեռ եղած եք. գացե՛ք, կորսվեցե՛ք»։ Ա՜հ, Աբիսողոմ աղա, չեք գիտեր, թե ի՛նչ կը քաշեն Պոլսո դասատուները. խեղճության զենիթը բարձրացած են. չեմ կարծեր, որ ասոնք իմանալեն ետքը դասագիրքերնես հարյուր օրինակ չառնեք։

— Այդ ճաշարանն ասկից շա՞տ հեռու է։

— Չէ՛, մոտեցանք։ Միայն դասատուները չեն, որ այս վիճակի մեջ են. խմբագիրները, հեղինակները, տպարանապետները, գրավաճառներն, վերջապես անոնք, որ դիրքով կզբաղին, իշվառությամբ կզբաղին։ Հառաջադիմություն կը պռոանք և ետ ետ կերթանք, լույս կը պռոանք և դեպի խավար կերթանք, աջ կը դշնանք և դեպի ձախ կերթանք, ապագա կըսենք և դեպի անցյալը կը վազենք։ Ո՜հ, մեծ մեծ խոսքեր, իսկ մեծ գո՞րծ...

Ո՜հ, մեծագործություն...

Ո՜հ, մեծախոսություն...

— Կերակուրներն ի՞նչպես են այն ճաշարանին։

— Աղեկ են։ Հարյուր դասագիրքը տունը պրկե՞մ, թե...

— Պատասխանը քանի մ'օրեն կուտամ...

Երկու բանակիցներն խոսելով հասան ճաշարանին առջև։

— Հրամմեցե՛ք, մտե՛ք, Աբիսողոմ աղա։

Աբիսողոմ աղա կը մտնե ճաշարան և չորս կողմը հայելիներն ուրիշ բան չտեսնելով՝

— Սխալ եկանք, կըսե, հոս հայելի կը ծախեն։

— Չէ՛, չէ՛։

Երկու բարեկամներն կը նստին սեղանի մ'առջև։

Մանչուկը կը բերե կերակուրներու ցուցակը։

Աբիսողոմ աղա թուղթը կառնե, վրան կը նայի, կը դարձունե, ետևի կողմն ալ կը նայի և սեղանին վրա կը դնե։

— Ի՞նչ պիտի ուտեք, կը հարցունե դասատուն։

— Միսով կերակուր կուտեմ ես։

Դատաւոն մանչուկը կը կանչէ և կերակուր կապսպրե թե՛ Աբիսողոմ աղային համար և թե՛ իրեն համար։

— Ահա այսպես, Աբիսողոմ աղա, դատաւոններուն այս վիճակը լսելով չե՞ս ցավիր։

— Ջցավիլն ալ խո՞սք է։

— Կը վայլե՞ աղգի մը այսպես մուրացկանի պես ապրեցնել յուր վարժապետները։

— Չվայլեր։

— Նթե կուզեք, դիրքերս այս դիշեր տունը ձգեմ։

— Հիմակուհիմա թո՛ղ մնա, ուրիշ օր մը կը խոսինք ասոր վրա։

Մանչուկը կերակուրները կը բերէ. Աբիսողոմ աղան երեսը խաչակնքելով՝ երկու պատառ կընե և կը կլլե իրեն բերված խորոված միսը. ետքը բարեկամին դառնալով կըսե.

— Կաոր մը միսով մա՞րդ կը կշտանա. զրուցե՛ սա անպիտանին, որ քիչ շատկեկ բերե։

Մանչուկ կը կանչվի, և բիլավ կապսպրվի։

Այս միջոցին միջահասակ և գիրուկ երիտասարդ մը կը մտնե ճաշարանը ի ձեռին ունենալով ծրար մը և ուղղակի Աբիսողոմ աղային առջև կուգա։

— Կարծեմ, կըսե, Աբիսողոմ աղան տեսնելու պատիվը կը վայլեմ։

Աբիսողոմ աղա բան մը չհասկնալով նոր եկողին երեսը կը նայի անբարբառ։ Քովի բարեկամն ալ ձայն չհաներ։

— Կարծեմ, կը կրկնե, այն մեծ մարդուն առջև դանվելու բարեբախտութիւնն ունիմ, որ մայրաքաղաքս եկած է մեկենաս անվանվելու համար։

Աբիսողոմ աղան, որ այս ձևերուն տեղյակ չէր, գդալը կառնե և կսկսի ուտել բիլավն, զոր նոր բերած էր մանչուկը։ Սեղանակիցն ալ նոր զրագետ մը գալն իր գործույն արգելք համարելով՝ չուզեր անոր պատասխանել։

— Կարծեմ, կ'երեքկնե, այդ աղնիվ անձին քովը դանվելու բախտը կը վայլեմ, որուն անունը քանի մը օր առաջ լրագրի մը մեջ կարդացի։

Աբիսողոմ աղան, որ բիլավով կզբաղեր, դարձյալ պատասխան չտար, և նոր եկողը կստիպվի պարզել յուր խոսքն ըսելով.

— Աբիսողոմ աղան հրամանքնիդ եք կարծեմ։

— Այո՛, ես եմ։

Նոր եկողն աթոռ մը կառնե և կը նստի։

Մանչուկը կուգա հարցնելու վերջեն եկողին, թե ի՞նչ կուզե ուտել։

— Նդի մեջ հավկիթ, կը պատասխանե՝ ձեռքի ծրարը քովի աթոռին վրա դնելով։

Աբիսողոմ աղան բիլավն ալ կը հատցունե և կասկարայի ձուկ կապսպրե։

— Է՛հ, Աբիսողոմ աղա, կըսե նորեկը, մեծ պատիվ, մեծ բախտ կը համարիմ ինձի ձեզի պես բարեսիրտ անձի մը սեղանակից դանվիլս։ Ծառագ՝ աղգային զրագետներուն ամենեն ետինն եմ, զրեթե քիչ մ'ալ բանասեղծ եմ. քանի մը ողբերգութիւն գրած եմ և կուզեմ, որ անոնց յուրաքանչյուրեն քանակաև օրինակ ձեզի նվեր ընեմ...

— Օ՜օօ, Աբիսողոմ աղա, կըսե երրորդ մը խնդում երեսով Աբիսողոմ աղային մոտենալով, բարի եկած եք։

— Բարի տեսանք։

— Ես աղգային փաստաբաններեն եմ և ձեր գալն լսելով փութացի իմ խոնարհ հարգանքներս ձեզի մատուցանել և միանգամայն հայտնել, թե ձեր գատերն ինձի հանձնեք։

— Ես գատ չունիմ։

— Նթե գատ չունիք, ինչո՞ւ ուրեմն եկաք հոս։

— Ուրիշ գործի մը համար։

— Անկարելի է, որ ձեզի պես մարդ մը գատ չունենա. ոչ միայն անկարելի է, այլ անպատվութիւն ալ է. ձեզի պես մեկը հարյուրներով գատեր ունենալու է, և ձեր շնորհիվ քանի մը փաստաբաններ ապրելու են։ Նթե դուք գատ չունենաք, անդին աղքա՞տը պիտի ունենա։

— Մեկու մը հետ գատ չունիմ։

— Զարմանալի բան. մեկու մը դեմ գատ բանալու ալ միտք չունի՞ք։

— Բնա՛վ, գատ բանալու պատճառ մը չունիմ։

— Գատ բանալու համար անպատճա՞ռ պատճառ մը ունենալու է. մեկու մը դեմ գատ կը բանաք, կը լմննա կերթա։

— Է, ի՞նչ կը շահիմ։

— Դուն չես շահիր, բայց փաստաբանդ կը շահի. քեզի համար աղոթք կընե։ Մեծ մարդերն հիմա այնպես կընեն. փաստաբաններն ապրեցնելու համար՝ իրենց դեմն ելնողներուն դեմ պատվո գատ կը բանան։

— Ես անանկ խայտառակութիւններ չեմ սիրեր։

— Ես կատակ ըրի, Աբիսողոմ աղա. բայց կատակը մեկդի դնենք և լրջորեն խոսինք, ըսավ փաստաբանը ծանր կերպարանք մ'առնելով. լսեցի, որ շոգենավուն մեջ մեկու մը հետ քիչ մը առեր տվեր եք, և այն մեկը ձեր պատվույն դեմ ծանր խոսքեր ըրեր է։

— Ամենևին։

— Թե դուք ալ անոր քանի մը խոսք ըրեր եք...

— Բնավ։

— Թե վերջը ծեծկըվուքի ելեր եք...

— Անանկ բան մը բնավ եղած չէ։

— Ին դուք անոր պէխուն զարկեր եք...
— Ստա է։
— Ին անիկա ալ ձեզի ատյտակ մը ուզեր է...
— Բոլորովին ստուա։
— Ին երրորդ մը մեջ մտեր է...
— Երկրորդ չկա, որ երրորդ ըլլա։
— Ին քու ինեդ քաշեր է...
— Սխալ։
— Ին անոր ալ ձեռքը բռներ է...
— Ստուա։
— Ին ատանկով գձեղ բաժներ է...
— Բնավ տեղ չկա։
— Ին դուք այս բաժանումեն գոհ ձըլլալով՝ դատ բանալ ուզեր եք։
— Որշա՞փ ստուա։
— Ին վարպետ փաստաբան մը փնտռեր եք...
— Ամենն ալ ստուա։
— Ին դիս կանչել տալ ուզեր եք...
— Ամենևին։
— Որպեսզի ձեր գատը պաշտպանեմ. և ես ալ ատոր համար եկա։
— Ատանկ բան մը չկա։

Այս խոսակցության միջոցին երկու երեք հոգի ևս կուգան՝ ամենն ալ Աբիսողոմ աղային կամ զիրք նվիրելու կամ լրագրի մը բաժանորդ դրելու պիտավորությամբ, և ամենը պատվական ճաշ մ'ալ կընեն՝ իրենց առաջարկությունները ներկայացնելով։

Աբիսողոմ աղան հազար անեծք կարդալով ճաշարանն եկած ըլլալուն վրա՝ մանչուկը կը կանչե և հաշիվը կուզե։

Մանչուկը անմիջապես կը բերե հաշիվն, որու դումարն էր քառասուն ֆրանք, զոր տաճկերեն զրամի կը թարգմանեն և կըսեն Աբիսողոմ աղային— Հարյուր յոթանասուն և վեց դահեկան։

— Հարյուր յոթանասուն և վեց դահեկա՜ն... ես այնչափ բան չկերա։

— Այո՛, դուք չկերաք, բայց ձեզի եկող հյուրերն ալ կերան, բավ փաստաբանն, որու կը վերաբերեր այս գատին պաշտպանությունը։

— Իրավ որ մեծ պզտիկություն եղավ, որ Աբիսողոմ աղան վճարե մեր ճաշը, բավ մին։

— Այո՛, ես շատ ամոթով մնացի, մեր պարտականությունն էր անոր կեբակուր հրամցնելն, կրկնեց երկրորդ մը։

— Ներեցեք մեր անբաղաքավարությանն, բավ չորրորդ մը, ուրիշ անգամ մենք ձեզի կը հրավիրենք ճաշի։

Աբիսողոմ աղան առանց պատասխանելու՝ ստակները համրեց և ճաշարանեն դուրս նետեց ինքզինքը՝ որոշելով, որ մեկ մ'ալ ճաշարան չմտնե։

ժ

Հետևինք ուրեմն Աբիսողոմ աղային, որմե վայրկյան մը չբաժնվեցանք մինչև հոս և բաժնվելիք ալ չունինք մինչև պատմության վախճանը։ Ազնիվ բնթերցողն մինչև հոս տեսնելով զրեթե միօրինակ տեսարաններ, որք բնավ չարաբերություն չունին իրարու հետ, քանի մը անգամ մտքեն անցուց անշուշտ, թե ինչո՞ւ միայն Աբիսողոմ աղային օձիքը բռներ կերթանք և մյուս անձերն, անգամ մը ներկայացնելեն հարը, բոլորովին կը մոռնանք։ Այս պակասությանը, եթե երբեք պակասություն է, մեր վրա զրելու չէ, այլ նյութին բնությանը։ Ամեն նյութ բնություն մ'ունի։ Նյութ կա, որուն բնությունն է լալ, նյութ կա, որուն բնությունն է խնդալ, նյութ կա, որուն բնությունն է համակել, նյութ կա, որուն բնությունն է հուզել, զարձյալ նյութ կա, որուն բնությունն է արձակ, ինչպես նաև կա, որուն բնությունն է ոտանավոր, վերջապես նյութ կա, որուն բնությունն է կրկնություն... Յուրաքանչյուր նյութ իրեն համակ ընդհանուր բնութիւնեն զատ ունի նաև մասնավոր բնութիւններ։ Եվ որովհետև մենք հոս հարուստանության զատ տալու պաշտոն չունինք, համառոտիվ մեր միտքը բացատրենք և անցնինք։ Մոլիեռի Միզանթրոբն[11] ալ կատակերգություն է, և Ֆաշեոն[12] ալ, բայց ատոնց յուրաքանչյուրն իրարմե այնքան տարբեր մասնավոր բնութիւններ ունին, որ Մոլիեռ չէր կարող և Ֆաշեոյի տեսարաններով Միզանթրոբ մը շինել, ոչ ալ Միզանթրոբի տեսարաններով և Ֆաշեոն գրել։ Կարծեմ կրկնություն է բսել, թե ես ալ ուրիշ վեպերու տեսարաններով չէի կարող գրել Մեծապատիվ մուրացկաններս, որոնց բնությունն է անևրևույթ ըլլալ Աբիսողոմ աղային անգամ մը ներկայանալեն հարը։ Կը խոստովանիմ, որ եթե սույն նյութը Օվրատիոս առներ, երգիծանք մը կը շիներ, և եթե Մոլիեռ ձեռք անցուներ, կատակերգություն մը կը հորիներ. բայց մենք, որ ապրելու պետք ունինք, ստիպված ենք ժամանակին հարմարիլ, շատ անգամ բանթալոնեն բաճկոն և երգիծանքեն վեպ շինելով։ Այս համառոտ բացատրութենեն ետքը գառնանք Աբիսողոմ աղային։

Աբիսողոմ աղան, ինչպես կը հիշե ընթերցողն, առեն զարձավ՝ շարունակելով յուր բարկությունն, զոր զգացած էր ճաշարանի մեջ ունեցած ինքնահրավեր սեղանակիցներուն վրա։ Տուն գառնալուն պես իմաց տրվեցավ, որ

քանի չափ նամակներ ղրկված էին իրեն։ Վեր եկավ, նամակները մեկիկ մեկիկ բացավ, կարդաց, պատռեց և գետինը նետեց։ Սենյակին մեջ քանի մը անգամ դառնալեն ետքը հանկարծ կանգ առավ և պոռաց.

— Ասոնք պիտ քիթիս բռնելով կողոպտե՞լ կուզեն։ Սա քաղաքը գալես ի վեր վայրկյան մը ինձ իր գլխուս չմնացի. հագիվ մեկը կերթա, մյուսը կուգա, ստակ կուզեն. ես աս տեղ ամենուն ստա՞կ տալու համար նկա։ Ի՞նչ անհթես մարդեր են... այսչափ աներեսություն ոչ լսված բան է, ոչ ալ տեսնված։ Եթե վռնտեմ ըսես, ո՞ր մեկը վռնտելու է, ո՞ր մեկուն հասնելու է. օրականով չորս հինգ հոգի վարձելու է, որ ուրիշ գործ չունենան, միայն նկոցները վռնտեն...։ Եթե վռնտելու ելնես, այն ատեն ալ բոլոր քաղաքին մեջ պիտի բամբասեն զիս՝ ըսելով, թե անքաղաքավար մարդ է, թե ստակ չունի։ Ջեմ ալ ուզեր, որ վրաս գեշ խոսվի... Աս ի՞նչ փորձանք եկավ գլխուս, տեր աստված... Բարով խերով ոտք չկոխեի սա քաղաքը։ Գլուխ ելնելու բան չէ, շուտով աղչիկ մը գտնելու է, շողենավ մտնելու և փախչելու է. ատոնք պիտի անանկացնեն մարդը... Քաշվելու բան չէ աս... Ճաթելու բան է։ Աշխատաս, արյուն քրտինք թափես, քիչ մը ստակ վաստակե՛ և հոս եկուր վարժապետանեղուն, քաներուն ցրվե. ո՞ւր լսված բան է աս...

— Կարծեմ այս իրիկուն բարկացած եք, ըսավ Մանուկ աղան ենյակին դուռն կամացուկ մը բանալով և ներս մտնելով։

— Բարկությունն ալ խո՞սք է. իմ տեղս եթե ուրիշ մը ըլլար, մինչև հիմա բարկությենն ճաթած էր։

— Ի՞նչ եղավ, հոգի՛ս։

— Ի՞նչ կուզես որ ըլլա. վայրկյան մը հանգիստ չեն թողուր. առն կը ետիմ, վրաս կը թափվին, ստակ կուզեն. փողոց կելնեմ, չորս կողմս կը պաշարեն, ստակ կուզեն. ճաշարան կերթամ, բոլորտիքս կը շարվին, ստակ կուզեն, և ես ատոնց ձեռքեն խալսելու համար տունեն փողոց, փողոցեն տուն կը վազեմ։ Կաղաչեմ, ատոնց ձեռքեն խալսելու համար ո՞ր ծակը մտնեմ, ըսե՛ ինձի։

— Իրավունք ունիս. ես չե՞մ հասկնար. ինձի ալ թող ավի՞ն, որ սա թաղականին գործը պատմեմ։

— Քանի նամակ դեռ հիմա պատռեցի։

— Ի՞նչ ըսած էին այդ նամակներուն մեջ։

— Ըսած էին, թե հետս գալ կուզեին տանս մեջ վարժապետություն ընելու համար, թե դիրք մը ինձի պիտի նվիրեն եղեր, և ատոր համար քանի ոսկի տալու եմ եղեր, թե լրագրի երկու բաժանորդ ղրվելու եմ եղեր, թե... ի՞նչ գիտնամ, ո՞ր մեկը համրեմ, ո՞ր մեկն ըսեմ, դիմանալու բան չէ։

— Անոնք ալ աղբատ են խեղճերն, ի՞նչ ընեն։

— Ապրելու համար թող ուրիշ գործ մը փնտռեն, արհեստ մը սորվին, վերջապես ընեն, ինչ որ կուզեն. ես ի՞նչ հանցանք ունիմ, որ կուգան գլուխս կը թափվին, եղբա՛յր. ունեցածս չունեցածս հանեմ, անո՞նց տամ։

— Ինչո՞ւ անոնց տաս։

— Մարդս քիչ մ'ալ ամչնալու է... չճանչած մարդուս երթամ և բարև, աստծու բարին, ինձի ստակ տուր, ըսեմ... դուն կրնա՞ս ըսել։

— Աստված ան օրը չցցունե։

Սենյակին դուռը նորեն բացվեցավ, և քանըհինգ տարեկանի մոտ միջահասակ պատանի մը դողդոջուն քայլերով ներս մտավ և նամակ մը հանձնեց Արիստոդոմ աղային, որ նամակը չբանալով հարցուց բարկությամբ.

— Ի՞նչ կուզես, մա՛րդ։

— Միջը գրված է, պատասխանեց պատանին թոթովելով։

— Դուրսը միջը քեզի ըլլա, ի՞նչ կուզես, ըսե՛։

— Վաղը իրիկուն ներկայացում մը պիտի տամ իմ հաշվույս համար, և ձեր ազնվության օթյակի մը տոմսակ բերի։

— Ես չեմ ուզեր, պատասխանեց Արիստոդոմ աղան՝ նամակն պատռվույն երեսը նետելով։

— Բռնությամբ գործ ալ չըլլար, ըսավ Մանուկ աղան։

— Տասը տարիե ի վեր, ըսավ պատանին, թատերական բեմին վրա կը քալեմ...

— Թո՛ղ նստեիր, պոռաց Արիստոդոմ աղան։

— Եվ աղին ծառայություն կընեմ։

— Ազատություն ընեիր թո՛ղ, ինչո՞ւս պետք իմին, ատոնք պարապ խոսքեր են։

— Իրավունք ունի, ատոնք պարապ խոսքեր են, կրկնեց Մանուկ աղան։

— Տասը տարիե ի վեր է, որ բարոյական դպրոցի մը մեջ աղին վարժապետություն կընեմ։

— Ի՞նչ փույթ ինձի։

— Ի՞նչ փույթ անոր, արձագանք տվավ Մանուկ աղան։

— Եվ իրավունք ունիմ, կարծեմ, ինձի համար արվելիք ներկայացման ձեզի պես աղնիվ մեկն ալ հրավիրել։

— Ես պետք չունիմ։

— Ան պետք չունի, կրկնեց Մանուկ աղան։

— Եթե դուք օթյակ մը չեք ընդունիր, որո՞ւ ուրեմն տամ օթյակի տոմսակներն։

— Ո՛ւր ուզես, հոն տար. սա իմ խառնվելու բանս չէ։

— Սա իր խառնվելու բանը չէ, տղա՛ս, ըսավ Մանուկ աղան։

— Կաղաչեմ, մի՛ մերժեք այս առմամակն. եթե մերժելու ըլլաք, դիս փողոցներու մեջ խայտառակ ընելու պատճառ պիտի տաք։

— Գնա՛ բանդ, ես ձանձրացա այդ տեսակ խոսքեր մտիկ ընելե։

— Ան ձանձրացավ այդ տեսակ խոսքեր մտիկ ընելե, հարեց Մանուկ աղան։

— Ա՛հ, եթե ասկից ձեռնունայն ետ դառնամ, իմ մահս պիտի տեսնեմ։

— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունի, բսավ Մանուկ աղան։

— Մեկ ոսկիի բան է, ընդունեցե՛ք զայն, կսպասեմ, մեծ հուսով եկած եմ հոս, պարապ ետ մի՛ դարձուներ դիս։

— Դուրս ե՛լ, գնա՛, աստվածդ սիրես, քե՛զ մտիկ պիտի ընենք հոս։

Սենյակին դուռը նորեն բացվեցավ, և մաղերու մեջ ձերմակ ինկած՝ հիսունը անցած մարդ մը ներս մտավ հանկարծ և յուր խոսքերն Աբիսողոմ աղային ուղղելով՝

— Չե՞ս խպնիր դուն, հարցուց։

— Ինչո՞ւ պիտի խպնիմ, պատասխանեց Աբիսողոմ աղան շվարելով։

— Ինչո՞ւ թեղմ աղան երկու ժամե ի վեր հոս կսպասցունես։

— Ո՞վ կսպասցունե, ո՞վ կուզե, որ սպասե, կը վռնտեմ, չերթար։

— Կը վռնտես, բայց առանց մի ոսկի պարտքդ տալու։

— Ո՞վ պարտք ունի անոր։

— Դուն ունիս. և եթե ան չըսեր ինձի, թե քեզմե առնելիքն այս իրիկուն պիտի առներ և ինձի պիտի տար, ես չէի տպեր այդ առմամակներն և ներկայացման աղդերը։ Երկու ժամ է, որ վարը դուան առջև կսպասեմ, որ իջնա և պարտքը տա, և դուն հոս կը խաղցունես խեղճը։

— Աս ի՞նչ է, ես անոր պարտք ունենա՞մ... ամենևին...

— Ամենևին, բսավ Մանուկ աղան։

— Ես անպատճառ առնելիք ունիմ չըսի քեզի, պարոն ապտրանապետ, բսավ դերասանը, այլ բսի, թե օթյակի առմամակ մը պիտի տամ, ոսկի մը պիտի առնեմ։

— Ինչո՞ւ ուրեմն խաբեցիր դիս, ստախո՛ս։

— Որպեսզի ծանուցումները ետ չմնան։

— Ես քու խաղալի՞ք եմ։

— Ան քու խաղալի՞ք է, բսավ Մանուկ աղան։

— Ինչո՞ւ խաղալիքս ըլլաս։

— Թշվառակա՛ն, խայտառա՛կ, անամո՛թ, աներե՛ս...

— Աոոնց ամենն ալ դու ես։

— Դո՛ւ ես։

— Ես չեմ, դու ես։

Ես չեմ, դու եսի վրա ծեծկըվուք մը կը ծագի դերասանին և ապտրանապետին միջեղ, Աբիսողոմ ու Մանուկ աղաները մեծ դժվարությամբ կը հաջողին զանոնք իրարմե բաժնել։

— Վա՛ր իջնք, պոռաց Աբիսողոմ աղան դանոնք զատելեն ետքը, վար իջնք և հոն կռվեցնք։

— Դուն մեր կռվույն խառնվելու ի՞նչ իրավունք ունիս. դուն դիս չես կրնար վռնտել. ես առնելիքս կուզեմ և ինձի պարտական եղողն ո՛ւր որ դանեմ, հոն կրնամ մտնել։

— Դուն վար իջիր, բսավ դերասանին Աբիսողոմ աղան։

— Ի՞նչպես իջնամ. տեսար, որ աչքիդ առջև ինչեր ըրավ։

— Մինչև որ ան չիջնա, ես քայլ մը չեմ առներ, կրկնեց ապտրանապետը։

— Մինչև որ ան չհեռանա, ես չեմ կրնար փողոց ելնել, բսավ դերասանը։

— Մենք իջնանք ուրեմն, Մանուկ աղա, բսավ Աբիսողոմ աղան։

Դերասանը Աբիսողոմ աղային ծունկերուն փաթթվելով աղաչեց, որ ոսկի մը փոխ տա դոնե Աբիսողոմ աղան շատ ընդդիմացավ, բայց հետո տեսնելով, որ անոնց ձեռքեն ուրիշ կերպով փրկվելու ճար չկա, ակռաները կրճտելով հանեց բարկությամբ, ոսկի մը ավավ ապտրանապետին, որ շնորհակալություն հայտնելով դուրս ելավ։ Դերասանն ալ ներսեն խնդրելով վար իջավ և գնաց։

— Ասոր ի՞նչ կըսես, Մանուկ աղա։

— Ըսելիք չմնաց, Աբիսողոմ աղա։

— Հրամանքդ վար իջիր, դուռն դոցե և ապսպրե, որ չբանան դուռն։

— Շատ լավ։

— Որպեսզի այս պիշերը դոնե հանդիստ անցունենք և մեր ինչ բնելիքին վրա խորհինք։

— Իրավունք ունիս։

— Շուտ ըրեք, վասնզի հիմա մեկիկ-մեկիկ կուգան։

— Հիմա կերթամ։

Մանուկ աղան վար գնաց իրեն տրված հրամանները կատարելու, և Աբիսողոմ աղան գլուխը բարձի մը վրա դրավ քիչ մը հանգստանալու համար։

Աբիսողոմ աղան քանի մը ժամ քնացավ բազմոցի վրա։ Սակայն դատեղով այն ձայներեն, զորս կը բառնար քունին մեջ, կը հասկցվեր, թե խմբագիրներն, բանաստեղծներն և դասատուներն քունի մեջ ալ հանդիստ չէին թողուր զինքն, որ կը պոռար մերթ ընդ մերթ. «գացեք կորսվեցե՛ք, ատակ չունիմ ա՛լ տալու»։ Երեք ժամու չափ այսպես հուղված մրափելեն ետքը մեկեն ի մեկ աչերը բացավ ա՛հ գոչելով։ Կարծես խմբագիր մը անոր կոկորդեն սդմելով խղդել կսպառնար զինքն, եթե չբարեհաճեր յուր թերթին բաժանորդ գրվելու։ «Տեր ողորմյա, տեր ողորմյա», պոռաց աչերը չփելով, «հանդիստ քուն մ՚ալ չունինք»։

Հետո ոտք ելնելով կազը վառեց և կանչեց Մանուկ աղան, որուն քիչ մը կերակուր ապսպրեց։ Քառորդ մը բերվեցավ կերակուրն, որուն հաջորդեց խահվեն, որուն ետեեն եկավ քունը։ Հանվեցավ Աբիսողոմ աղան և անկողինը մտավ քնանալու համար։ Հարկ չէ կրկնել, թե նույն գիշերն հանդարտ քուն մը չունեցավ։ Առավոտուն կանուխ ելավ անկողինեն, երեսը լվաց, հագվեցավ, տունեն դուրս եկավ և շիտակ պ. Դերենիկին գործատունը գնաց լուսանկար պատկերը քաշել տալու համար։ Գործատունը դեռ բացված չէր, և Աբիսողոմ աղան Բերայի փողոցներուն մեջ կը շրջեր, որպեսզի ժամանակ անցնի, և գործատունը բացվի։ Ժամը չորսին (ըստ տաճկաց) բացվեցավ գործատունը, և Աբիսողոմ աղան սանդուղե մը վեր ելնելով մտավ սենյակ մը, որ լուսանկար պատկերներով զարդարված էր և ուր պ. Դերենիկ նստած կը կարդար։

— Բարի եկաք, Աբիսողոմ աղա, սանկ հրամմեցեք, ըսավ պ. Դերենիկ՝ սեղանի վրա դնելով լրագիրն։

Եվ հետո գրագրին դառնալով նշանացի հրամայեց անոր, որ խահվե բերեն։

— Ժամ առաջ քաշենք սա պատկերս, որովհետև ստիպողական գործեր ունիմ, քանի մը մեծ մարդոց այցելություն պիտի ընեմ։

— Շատ լավ։

— Կուզեմ, որ պատկերս փառավոր կերպով քաշվի։ Կուզեմ թիկնաթոռի մը վրա նստիլ, առջևս ունենալ երկու սպասավոր, մեկ աղախին. այնպես ըրեք, որպես թե ագարակի մը մեջ ըլլամ, ասդին վարուցան, անդին կովերեն կաթ կթեն, ասդին ոչխարներն արածեն, ասդին ցանեն, անդին քաղեն, ասդին հերկեն. անդին մածուն շինեն, ասդին ձմերուկ վրցունեն, անդին կարագ շինեն, ասդին սագերը ծովու մեջ լողան, անդին անտառին մեջ փայտ կտրեն, ասդին սայլերով ցորյան փոխադրեն, անդին վերջապես ինչ որ կըլլա ագարակի մը մեջ, տեսնվի պատկերիս մեջ։

— Այդ ամենը կարելի չէ կատարել. միայն թե քանի մը սպասավորներ կրնամ կայնեցնել քովդ։

— Ինչո՞ւ չըլլար։

— Որովհետև անկարելի է։

— Մեծ մարդոց համար ինչպե՞ս կընեք։

— Անոնք աթոռի վրա նստած կամ ոտքի վրա քաշել կուտան իրենց կենդանագիրը։

— Ի՞նչպես ուրեմն կը հասկցվի անոնց մեծ մարդ ըլլալը։

— Պատկերը մեծակակ ու փայլուն կ՚ըլլա։

— Իմի՞նչ ալ անանկ պիտի ըլլա ուրեմն։

— Այո՛։

— Ոտքի՞ վրա, թե նստած։

— Ինչպես որ կուզեք։

— Դուք ի՞նչպես կուզեք. ի՞նչպես հանեմ նե, աղեկ կըլլա։

— Ձեզի համար ոտքի վրա կը վայլե։

— Շատ աղեկ. սպասավորներն ալ դեմս։

— Այո՛։

— Ես զանոնք չսխալելու պես կըլլամ, անոնք ալ առջևինին կը նային։

— Սքանչելի։

— Ծեծելու պես կըլլամ զանոնք, և վերջը բարկությունս իջած կըլլա։

— Աղեկ խորհած եք։

— Հագուստներս ի՞նչպես են։

— Ընտիր։

— Ուրիշ ժամացույց մ՚ալ ունիմ, անիկա ալ կրնա՞նք մեկ կողմերնիս կախել։

— Մեկ ժամացույցը բավական է, ավելին ավելորդ է։

— Այս հագուստներուս համար հիսուն ոսկի տված եմ. անոնց խառնվին աղեկ և ընտիր ըլլալն ի՞նչպես պիտի հասկցվի պատկերիս։

— Հոդ մի՛ ըներ, կը հասկցվի։

— Ինտո՞ր պիտի ցուցնես։

— Հանդիստ եղեք։

— Չկարծվի սակայն, թե երկու ոսկինոց հագուստ է հագածս։

— Այդ մասին անհոգ եղեք։

— Շատ լավ։

— Ես կերթամ անդիի սենյակին նախնական պատրաստություններս ընեմ, քանի մը վայրկենեն հրամանքնիդ ալ հրամմեցեք։

— Շատ աղեկ։

— Եթե կուզեք, մինչև որ անդիի սրահը մտնեք, սափրիչ մը կանչել տանք, որ գա մազերդ ու պեխերդ սանտրե, շտկե և շտկրտե։

— Աղեկ։

Գործարանի պաշտոնյաներեն մին վազելով կերթա սափրիչ մը բերելու։ Քանի մը վայրկենեն կուգա սափրիչն, որ գլուխն ծռելով և նա-նա երթալով հարդանքներ կը մատուցանե Արիստոմ աղային։

— Եկուր սա մազերս շտկե, նայինք, կըսե Արիստոմ աղան։

— Պարտքիրնիս է, կը պատասխանե սափրիչը։

— Աղեկ մը շտկե, որովհետև պատկերս հանել պիտի տամ։

— Գլխուս վրա՞։ Մ՚ը...

— Ես շատ կարևորություն կուտամ գլխուս։

— Ինչու չտաք, վսեմապատիվ տեր... Մ՚խ... ևրի գուք շատ, ո՚վ տա՞ Մ՚խ... երանի թե ես ալ ուրիշ մտմտուք չունենայի և...

— Շտկրտե նայինք։

— Գիտեմ, որ ես հանցավոր եմ ձեզի բարի եկամի չղալուս համար, բայց ի՚նչ ընեմ... պարագաները թող չտվին, որ կարենայի կատարել այդ պարտականությունս և այսօր երես ունենայի ազաչելու ձեր վսեմության, որ...

— Վերջը կը խոսինք, սա մազերս սանտրե... մարդը կսպասե ինձի։

— Վնաս չունի, անիկա կը սպասե։ Աղաչելու ձեր վսեմության, ևրի կարելի է, հիսուն վաթսուն ոսկի մը... ես ալ աղգային սափրիչ մ՚եմ։

— Ի՚նչ ըսել է՝ հիսուն վաթսուն ոսկի...

— Կը խնդրեմ, մի՚ բարկանաք,, հիսուն վաթսուն ոսկի փոխատվություն մ՚ընեիք ինձ, որպեսզի այդ դումարն Բարիզ դրկեի աղուս, որ այդ դումարով պարտքերը տար ու բժշկության վկայական առներ, գար ու քանի մը տարիեն վաստկեր ու տոկոսովն ձեզի հատուցաներ։ Բայց ի՚նչ օգուտ, որ այսօր երես չունիմ ասանկ առաջարկություն մը ձեզի ընելու, որովհետև բարի եկամի չեկա ձեզի։ Եթե բարի եկամի եկած ըլլայի ձեզի, համարձակություն կունենայի ձեզի աղաչելու, որ սա պղտիկ խնդիրքս կատարեիք, բայց քանի որ բարի եկամի չեկա ձեզի, դուք ալ իրավունք ունիք խնդիրքս մերժելու, ևև ազգային արհեստավոր մ՚ըլլամ։

— Հիմա ատանկ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ, ինչ որ պիտի ընես նե, ըրե... Աս ի՚նչ տարօրինակ քաղաք է. բարև, ատածու բարին բարև տուր... Մեկու մը բարև տալու չէ... Տեր ողորմյա... տեր ատաված, մեղա... Ամեն բան սահման մ՚ունի, էֆենտիմ... Հասկցա... ժամ առաջ փախչելու է այս քաղաքեն...

— Կերևի, ևե էֆենտին բարկացուցած են, ըսավ՝ ներս մտնելով տարիքը հիսունին և վաթսունին մեջ կորսված քահանա մը։

— Աս չըսաշվիր, տեր Հայր։

— Ողջույն, օրհնած. ևևպես գուք պիս չեք ճանչնար, բայց ես ձերին ով ըլլալն շատ աղեկ գիտեմ... ի՚նչպես է, պատվական քեֆերնիդ աղե՞կ է։

— Շիտակը՝ աղեկ չէ։

— Ատտված չրնե. ատտուծով քիչ ատենեն ավելի աղեկ կըլլա։ Ձեզի հետ քիչ մը առանձին մնալ կուզեի։ (Սափրիչին) Քիչ մը դուրս կելլա՞ք։ Ես քեզի համար ալ կը խոսիմ, էֆենտիեն կը հատկնամ խնդիրքդ և ես ալ կրարեխոսեմ, որ ի նպաստ քեզի բան մ՚ընե։ Էֆենտի, սափրիչիս ալ, գիտեք ա՚, ազգայիններեն է, անոր ալ երակներուն մեջ Հայկա արյունը կեռա, անանս ընելու չէ պանոնք ալ... (սափրիչը կերթա)։ Ձեզի հետ մասնավոր և առանձին տեսակցություն մ՚ընել ուզելուս պատճառն սա է, որ դրամանքնիդ կարգվիլ կուզեք եղեր... և ինչո՞ւ չկարգվիք։ Իմացա նե, շատ ուրախացա, և ինչո՞ւ չուրախանայի։ Ձեզիպեսներն կարգվելու են, որ ազգերնուս մեջ Հարուստ ազայք շատնան։ Աղվոր աղջիկ կը փնտռեք կոր եղեր... և ինչո՞ւ չփնտռեք. ես ալ ձեր տեղն ըլլայի նե ես ալ կը փնտռեի։ Ստակ ալ կուզեք կոր եղեր քիչ մը... ինչո՞ւ չուզեք, առանց ստակի կարգվիլն ալ, շիտակը, աղեկ բան մը չէ։ Արդ, ես իմ ձեռքիս տակն ունիմ անանկ աղջիկներ, որ ևե՚ աղվոր են և ևե՚ հարուստ։

— Շնորհակալ եմ, օր մը կը նայինք, աչքե կանցունենք զանոնք։ Եթե կուզեք, քիչ մը սպասեցեք, սա պատկերս քաշել տամ ու երթանք։ Շիտակը խոսելով՝ ես ուրիշ գործ չունիմ հոս, աղջիկ փնտռելու եկած եմ. քանի մ՚օր պիտի մնամ. եթե կրցի գտնել, կարգվիմ պիտի հետն ու առնեմ պիտի երթամ, եթե չգտնեմ, դարձյալ պիտի երթամ, որովհետև հոս հանդիստ չեն թողուր պիս վայրկյան մը. ա՚լ ձանձրացա։

— Իրավունք ունիք, ժամանակներն ալ գեշ են, էֆենտիս, դրամական տագնապ, տագնապ դրամական ամենուրեք կը տիրե, ազդին աղքատները շատ են։ Ինչ որ է, կսպասեմ ձեզի ու ի միասին կերթանք։

— Սա անպիտանն ալ մազերս շտկելու համար եկավ՝ ո՚...

Այս միջոցին պ. Դերենիկ ներս կմտնե ու

— Հրամմեցե՚ք, կըսե, սրահը։

— Բայց մազերս...

— Հոգ չէ, ես կը սանտրեմ։

— Բայց պեխերս...

— Վնաս չունի, ես կը շտկեմ։

Պ. Դերենիկ Արիստոմ աղային կառաջնորդե լուսանկարի սրահը։

Քահանայն առանձին կը մնա և կսկսի մտքովը հետևյալ խորհրդածություններն ընել։ Բայց ի՚նչպես կրնանք մտքով եղած խորհրդածություններն

դուշակել. դեմքին անշուշա. դեմքերը շատ անգամ կը խոսին. ինչպես հարուստներուն, նույնպես նաև աղքատներուն լեզուն շատ անգամ անոնց դեմքին վրա է։ Մեկու մը դեմքը նայելով կրնանք ըսել՝

— Այս մարդն ինձմե ստակ ուզելու եկած է, կամ այս մարդն ինձի ստակ տալու եկած է։

Քահանային դեմքն ալ կըսեր. «Ի՞նչ ճամբա բռնեմ, որ սա ձմեռվան ածուխիս ու փայտիս ստակն սա մարդեն փրցնեմ»։

Քահանայն այս խորհրդածությանց մեջ էր, երբ սափրիչն ներս մտավ նորեն ու քահանային ըսավ.

— Տեր հայր, գործս ավրեցիր. եթե ներս չմտնեիր, քանի մ՚ոսկի պիտի փրցնեի այս մարդեն. ավող է՝ կըսեն կոր, ավող. բոլոր խմբագիրներուն ու դասատուներուն ստակ տվեր է։

— Նըբայր, անոնք չե՞ն մի, որ պատճառ կըլլան կոր, որ մեզի պես ապրքատները չեն կրնար կոր օտարականներե ստակ փրցնել։ Հյուր մը եկա՞վ մի, բոլոր խմբագիրներն ու դասատուները վրան կը թափին կոր... անիծյալ գարշելիներ...

— Ի՞նչ պիտի ընենք հիմա։

— Ես քեզի համար կըարեխոսեմ, դուն ալ ինձի համար միջնորդե, գոնե մեյմեկ կաոր բան փրցնենք սա մարդեն։

— Շատ աղեկ։

— Հիմա հոս պիտի գա, ես անոր ականջն ի վար կըսեմ, որ այս սափրիչը գոհ ըրե, որովհետև շատ հարուստ տուներ կը մտնե, կելնե և կրնա, եթե ուզե, գործդ ավրել։

— Գործը ի՞նչ է։

— Հարուստ աղջիկ մը կը փնտռե կոր։

— Աղեկ։ Ես ալ կըսեմ, որ քահանային զատ մեկու մը մի՛ վստահիր։

— Շատ աղեկ։

— Սա աղեկ ճամբա է։

— Միամիտին մեկն է։

— Այո՛, դյուրահավան է, բայց կողոպտեր են մարդը, էֆենա՛մ, կողոպտեր են. մենք շատ ուշ հասանք։

Աբիսողոմ աղան զվարթ դեմքով կը դառնա սենյակն, ուր քահանայն սափրիչին հետ կը խոսեր։

— Ներեցե՛ք, Աբիսողոմ աղա, կըսե սափրիչն, ձեղի այդ խնդիրքն ընելու համար. սակայն ես կարծեցի, թե կրնայի իմ կողմես ես ալ ծառայություն մ՚ընել ձեզ։

— Աբիսողոմ աղա, պետք է գիտնալ, որ, կըսե, քահանայն, մեր սափրիչ

էֆենտին գրեթե մայրաքաղաքիս բոլոր հարուստ տուները կը մտնե. բոլոր աղջիկները կը ճանչնա։

— Ի՞նչ կըսեք։

— Այո՛, ինքն ալ բարի մարդ մ՚է, կատարեցեք խնդիրքը, մնաք է։

— Արժանապատիվ հորեն մի՛ զատվիք, եթե անանկ միտք մ՚ունիք. տեր հոր ձեռամբ կարգված երիտասարդներն միշտ գոհ մնացած են։ Ուրախ եմ, որ ձեր գործը տեր հոր պես բանիբուն և գործունյա քահանայի մը ձեռքն ինկած է. վստահ եղեք, որ երջանիկ պիտի ըլլաք ձեր ամուսնության մեջ։

— Բայց դուք պիտի օգնեք ինձի, տեր սափրիչ, կը հարե քահանայն։

— Ես ի՞նչ բանի կարող եմ...

— Ձեր աջակցությունն ալ պետք է...

— Կրնամ, ինչ որ կարող եմ ընել։

— Շնորհակալ եմ, Աբիսողոմ աղան օտարական չէ, ազգային է, կարգվելու համար եկած է հոս. մեր պարտքն է օգնել իրեն։

— Հարկավ։ Աբիսողոմ աղային հետ ատելություն մը չունիմ ես, մանավանդ թե ինքը շատ բարի ու առաքինի մարդ մ՚է։

— Երեսին խոսիլ չըլլա, ընտիր մարդ մ՚է։

— Պատվական մարդ է։

— Վրան նայիս նե, կըսես, որ քիպարությունը վրայեն կը վազե կոր։

— Ո՞վ կը պնդե հակառակը, ես անոր թշնամին չեմ։

— Այսինքն թե որ քեզի ալ հարցվի նե, բարի վկայություն տաս։

— Անշուշտ։

— Աբիսողոմ աղան չիյ մարդ չէ, քեզի կը վարձատրե վերջը։

— Գլխուս վրա, գլխուս վրա։ Ա՜խ, տղուս վկայականն առնվեր անգամ մը։

— Հինգ օրեն ետքը, Աբիսողոմ աղա, հինգ օրեն ետքը պատրաստ հն պատկերներդ, ըսավ պ. Դերենիկ ներս մտնելով։

— Շատ աղեկ, պատասխանեց Աբիսողոմ աղան ու դործարանեն վար իջավ ընկերակցությամբ քահանային ու սափրիչին։

ԺԲ

Տիկին Շուշան, զոր ընթերցողն մոռցած չէ անշուշտ, Աբիսողոմ աղային առունեն տեղեկացած էր, թե... քահանայն Աբիսողոմ աղան գտնելու համար պ. Դերենիկի գործատունն գացած էր։ Ուստի որպն քահանային հետիշտակել չտալու համար՝ հեռվով կը վազեր դեպի պ. Դերենիկի գործարանը, ուր կը

Հասներ ճիշտ այն վայրկենին, որում քահանայն սափրիչն վարպետութեամբ ձամբեւն հետո՝ Աբիսողոմ աղային կը բարեխոսե հետեւյալ կերպով. «Ներեցեք, որ քիչ մ'ուշացա ճշմարտութեանն ձեզի հայտնելու սափրիչի մասին։ Այս սափրիչը աներես մարդ մ'է, բոլոր Պոլիս եկողներուն օձիքեն կը բռնե և անոնցմե սահակ կորզելու կաշխատի։ Անպիտանին մեկն է։ Իմ պարտքս է, որպես խոստովանահայր, զգուշացնել զձեզ այս կարգի մարդկերեն, որք միմիայն քանի մը ոսկի հափշտակելու նպատակով կը մոտենան հարուստներուն։ Ո՞րքան կատմ այդ մարդկերը։

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենեն և մարդասիրութենեն։

— Երես մի՛ տար այդ մարդոց։

— Ո՛չ։

—Տեր պապա, դու ի՞նչ գործ ունիս Աբիսողոմ աղային հետ, կը հարցնե տիկին Շուշանն, որ, ինչպես լսինք, հետևյալ հասած էր։

— Պզտիկ գործ մը։

— Ոչ, քնավ գործ պիտի չունենաս դուն անոր հետ. դուք ձեր պարտքը կատարեցեք և թող ավեք, որ մենք ալ մերինը կատարենք, ալ խոսնեցե՛ք քիչ մը։ Երթանք, Աբիսողոմ աղա։

— Ո՛չ, դուք խոսնեցեք քիչ մը, մենք Աբիսողոմ աղային հետ պզտիկ գործ մ'ունինք. երթանք, Աբիսողո՛մ աղա։

Եվ քահանայն Աբիսողոմ աղային ձախ թևեն կը քաշե։

— Տեր պապայի մը շվայլեր ըրածդ։

— Լռե՛։

— Չպիտի լռեմ։

— Թո՛դ ավեք թևերս։

— Թո՛դ չեմ տար, կը պատասխանե տիկին Շուշան, իմ իրավունքս է։

— Ոչ, իմ իրավունքս է։

— Քանի մը հարյուր դահեկան առնելու համար կուզես, որ խեղճ մարդը խղճաո ընես. դուն աղջիկ չես ճանչնար։

— Մի՛ պոռար. պիտի Թողում, որ կողոպտեք այս աղնիվ մարդն, այնպես չէ՞։

— Ինչո՞ւ կոխվ կընեք, ամոթ չէ՞... Ես չեմ ուզեր աղջիկ։

— Զըլլար, կը պատասխանե տիկին Շուշան, մենք քեզի աղջիկ մը պիտի դանենք. բայց Թե որ տեր պապային ձեռքով աղջիկ փնտռես, գիտցած եղիր, որ պատիվդ մեկ սարկի կըլլա։

— Ընդհակառակն, քահանայի ձեռամբ աղջիկ փնտռողն է պատվավորը։ Երթանք, Աբիսողոմ աղա։

— Թող չեմ տար։

— Երթանք, Աբիսողոմ աղա։

— Թող չեմ տար, որ երթա. ես անոր աղջիկներ պատրաստած եմ, աղջիկտեսի պիտի երթանք։

Այս տեսարանը տեղի կունենար պ. Դերենիկի գործատան առջև, և անցնողներեն պզտիկ խումբ մը հանդիսականի պաշտոն կը վարեր անդ, երբ Մանուկ աղան ստիպված Աբիսողոմ աղան անպատճառ դռնելու՝ եկավ հոն, տեսավ Աբիսողոմ աղան, որուն մեկ թևեն քահանայն և մյուս թևեն տիկին Շուշան կը քաշեր, և մեկդի քաշելով զայն՝ քանի մը ծանր խոսքեր ուղղեց քահանային և տիկին Շուշանին և հեռացուց զանոնք։

— Ա՜հ, ըսավ Մանուկ աղան Աբիսողոմ աղայի դառնալով, հանցանքը ձերն է, ամենուն երես կուտաք. ասոնք միմիայն քեզմե օգտվելու համար կը մոտենան քովդ։

— Իրա՞վ կըսեք։

— Ինչո՞ւ սուտ պիտի ըրուցեմ։ Կարգվիլ կուզես, լավ. ես գտնեմ քեզի աղջիկներ, ընտրե և ուզածդ առ։

— Աղեկ ըսիր։

— Պատվավոր ընտանիքե աղջիկներ ցուցնել տամ քեզի։

— Ցուցո՛ւր։

— Միջնորդով աղջիկ փնտռելու ժամանակը անցած է հիմա։

— Այդպե՞ս է։

— Մինչև անդամ ամոթ է։

— Ամոթ է նե, չուզեր։

— Ես քեզի աղջիկ կը հավնեցնեմ։

— Շնորհակալ եմ։

— Տուր ինձի դուն սրկեց հիսուն ոսկի։

— Ատ ի՞նչ ըսել է։

— Տուր դուն ինձի հիսուն ոսկի։

— Ի՞նչու տամ։

— Ալլահ, ալլահ, տուր կըսեմ կոր նե, հարկավ բան մը գիտեմ կոր. տեր ողորմյա, պիտի առնեմ, չպիտի փախչիմ յա։

— Չպիտի փախչիս, բայց...

— Կը վախնա՞ս կոր ինձի հիսուն ոսկի տալու, արդեն այնքան գումար մը պահանջող եմ ես քեզմե, ձեզի համար այնքա՞ն ծախքեր ըրած եմ։

— Այնքան ծախքե՞ր... ի՞նչ ծախքեր են անոնք...

— Մեկիկ մեկիկ չպիտի գրենք ա՛, տիկինը գիտե։ Բայց Թողունք այս խնդիրը հիմա։

— Ո՛չ, չթողունք այս խնդիրը. հիսուն ոսկի... քա՞նի օր եղավ որ...

— Մեկու մը պարտք ունեի, այսօր եկավ, նեղը խոթեց դիս, և ևրն այդ գումարը չվճարեմ, տունեն պիտի հանեն մեզի։ Ասիկա ինձի համար ամոթ է, քեզի համար ալ պատվաբեր բան մը չէ։ Տուր սա հիսուն ոսկին, հաշիվը կը կարգադրենք վերջը։

— Ի՞նչ խայտառակություն է աս...

— Աղջիկ դանամ նե, միջնորդեք չպիտի ուզեմ ես քեզմե. տուր սա հիսուն ոսկին։

— Ինչո՞ւ տամ... ի՞նչ ըրի ես քեզի...

— Կը ցավիմ, որ խոսք չեք հասկնար կոր. քեզի ի՛նչ կըսեմ կոր նե, ան ըրե. ինչո՞ւ չես տար կոր սա հիսուն ոսկին։

— Չեմ տար, տունեդ ալ կելնեմ, կերթամ։

Եվ խոսելով դեպի տուն կը քալեին։

— Հիսուն ոսկին ալ մեծ բան մ՚ըլլար, որ չեք ուզեր կոր տալ։ Իրավ որ ես ձեզմե չէի հուսար։

— Հուսացե՛ք։

— Ձեր քիպարությանը չէի ձգեր, որ հիսուն ոսկիի խոսքն ընեք։

— Սնտուկներս կառնեմ, կերթամ ես։

— Կրնաք երթալ, բայց հիսուն ոսկին տալեն ետքը։

— Չեմ տար։

— Կուտաք։

Կհասնին Ծաղկի փողոց, ուր եկած էին նաև քահանայն, սափրիչն ու տիկին Շուշան։

— Գացե՛ք, մեկզի գացեք, երեսնիդ տեսնել չեմ ուզեր, պոռաց Աբիսողոմ աղան տեսնելով զանոնք։

Հետո դուռը զարկավ, ներս մտավ և սկսավ սնտուկները կապել ի զարմացումն տան տիկնոջ։

— Ինչո՞ւ կը ժողվըվիք կոր, Աբիսողոմ աղա, հարցուց տան տիկինը։

— Երթամ պիտի, պիտի երթամ։ Միտքս փոխեցի. չպիտի կարգվիմ։

— Բարկացուցի՞ն ձեզի։

— Ո՛չ։

— Ինչո՞ւ ուրեմն բարկացած եք։


— Բարկացած չեմ։

— Քուզում Աբիսողոմ աղա, Մանուկ աղան հիսուն ոսկի պիտի ուզեր քեզմե, ուզե՞ց։

— Ուզեց։

— Սխալմունք մ՚է եղեր։

— Սխալմո՞ւնք է եղեր։



— Այո՛, հիսուն ոսկի չպիտի ըլլա, այլ հարյուր հիսուն ոսկի։ Սա բարեբյուրն ըրե մեզի։ Դուն քիպար մարդ ես։ Մենք ալ քու սայեյեդ պարտքե կաղատինք։

Աբիսողոմ աղան անասուկները կապելն, փողոց ցատկելն, երեք բեռնակիր բերելն ու անասուկներն դուրս հանելն մեկ կընե։

Սափրիչը, քահանան, տիկին Շուշան և Մանուկ աղան կը հետևին իրեն մինչև... հյուրանոցին դուռը։ Ուակից կը մտնե Աբիսողոմ աղան, և կը հեռանան իրեն հետևողները, բացի Մանուկ աղայեն, որը կընկերանա Աբիսողոմ աղային հաշիվները կարգավորելու համար։

Այն օրեն ի վեր Աբիսողոմ աղան տեսնող չեղավ. միայն թե քանի մը շաբաթներ նույն հյուրանոցին դռան առջև կը տեսնվեին խմբագիրք, հեղինակք. բանաստեղծք՝ իրենց թևի տակը թղթյա ծրարներ ունենալով։

Այսպես ուրեմն, կարգվելու նպատակավ Պոլիս եկողն աղջիկ մ'իսկ տեսնելու ժամանակ չունեցավ և, ինչպես կըսեն, բուրդ ու բապուճ փախավ մայրաքաղաքես։ Բայց անջնջելի հիշատակ մը թողուց գրական մարդոց մտքին մեջ։

Երբ երկու-երեք հեղինակք մեկտեղին, «ինտոր փախուցինք սա Աբիսողոմ աղան» կըսեն ու կը խնդան քիչ մը։

Իսկ երբ դրամական տագնապի մեջ գտնվին, «աստված, Աբիսողոմ աղա մը ղրկե մեզի» կըսեն և իրենց մտքով ալ կը հավելուն. «խնդրեցեք գ'Աբիսողոմ աղան, և ամենայն ինչ հավելցի ձեզ»։

Մեծատուններն ալ կը հիշեն Աբիսողոմ աղան, երբ գրական մարդ մը անոնց մեկենասությունը խնդրե,

— Աբիսողոմ աղա չենք մենք, կըսեն։

Իսկ մենք, որ ներկայացած չենք Աբիսողոմ աղային, կը հրատարակենք սույն գործն՝ ոչ այնքան մեզադրելու նպատակավ ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլն, որքան ներկայացնելու համար ապագա սերնդյան՝ ժամանակիս գրական մարդոց ողբալի կացությունն և գրականության մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը։

ՀՈՍՀՈՍԻ ՁԵՌԱՏԵՏՐԸ

ԻՄ ՁԵՌԱՏԵՏՐՍ

Պարոններ, այս վերնագիրը կարդալով չկարծեք թե անանկացած վաճառական մ'եմ և կուգամ հաշիվներս հասարակության ներկայացնելու։ Պատիվ ունիմ հայտարարելու, որ կյանքիս մեջ վաճառական եղած չեմ երբեք և լինելու ալ տրամադրություն չունիմ, վասնզի խիղճս շներեր մեկ ու կես ոսկվո ուրիշի վաճառել այն ապրանքը, զոր ես մեկ ոսկվո գնած եմ։

Առանց վաճառական լինելու՝ որոշեցի սակայն ձեռատետր մ'ունենալ, անոր մեջ նշանակել օրվան դեպքեր և, երբեմն այս դեպքերուն առթիվ՝ մահկանացուներու թերություններու վրա ծիծաղիլ։ Թո՛ղ Հերակղիտի աչերեն հոսած արտասուքով՝ գետեր ձևանան, թո՛ղ ազգային բանաստեղծներ Նիկրատն ու Տիգրիան Հայաստանի երկու աչեր ներկայացնեն և լան, թո՛ղ պ. Չոփաճյանին ալ եղանակներ հորինել տան և եղանակով լան. ես, պարոններ, ես կը ծիծաղիմ և ծիծաղելու համար ո՛չ եղանակի կարոտություն ունիմ և ոչ դաշնակի։ Թերություններու վրա լալն թերություններու մեծագույնն է. խեղճության վրա արտասուք թափելն ապացուցանել է թե արյուն չունինք թափելու։ Արտասուքը մանուկներու և կիներու (մեծ մանուկներու) բաժին է. կաղաչեմ, մի՛ դպիք ատոնց բաժինին։

Եվ չեք կարող երևակայել, թե ո՛րչափ բերկրություն պիտի ղգամ՝ եթե հաջողիմ ձեզմե ծիծաղներ կթել այն դեպքերու, իրերու և անձերու վրա, որոնց պիտի հանդիպիք ձեռատետրիս մեջ։ Մոլություններու վրա ծիծաղիլն առաքինության ճամբուն մեջ գտնվիլ կենթադրե և, այս հաշվով, որչափ շատ ծիծաղ քաղեմ՝ այնքան նվազ մոլություն պիտի գտնեմ։ Պետք չէ մոռնալ սակայն այն դաս մը մարդերն, որք ուխտ և երդում ըրած են բնավ չխնդալու։ Այդպիսիներու հետ գործ չունիմ, վասն զի ատոնց երեսեն ժպիտ քաղելն ավելի դժվար է, քան թուրք կառավարությենե բարենորոգում հուսալն, մանավանդ երբ նկատողության առնեք, որ ճնշում բանեցնելու համար չունիմ ես ո՛չ ծանուցագիր, ո՛չ դեսպանաժողով և ո՛չ նավատորմիղ։

Անկողմնակալությանս վրա վստահացնելու համար կը հայտնեմ թե այն-

պիսի կացութիւն մ'ունիմ, որ չսիրեր դիս աշառութիւն ընելու։ Փառք նախախնամութեան, բարեկամ չունիմ, որ աշառութիւն ընեմ։ Բայց մի՛ կարծեք թե կիրքով պիտի խոսիմ, քա՜վ լիցի... Փառք սատանային, ինձնամի ալ չունիմ։ Մի՛ զարմանաք, պարոններ, աշխարհիս երեսը այնպես կապրիմ, ինչպես դուք կապրիք երբեմն թատրոնի մեջ. միայն հանդիսատես կը լինիմ ներկայացման առանց դերասաններու գործուն խառնվելու։ Ընկերութիւններէ ընդհանրապես հեռի կապրիմ, և այս է միակ պատճառ իմ երջանկութեանս։

Կ. Պոլիս, 1 հունիս 1880

Ո՜վ կըսե թե մեր ազգին մեջ միութիւն չկա։

Այսօր միացան Արարատեան, Դպրոցասիրաց, Արևելեան[2] և Կիլիկեան[3] ընկերութիւնները։ Այս միութիւնը չորս ամիս առաջ պիտի կատարվեր, բայց հարմար անուն մը գտնելու դժվարութիւնը չորս ամիս ուշացուց զայն։ Արդյոք հարմար դասատու մը գտնելու համար քանի՜ տարի պիտի աշխատի ընկերութիւնը... Միացյալ Ընկերութիւնը[4] տիտղոսին տակ այդ ընկերութիւններն երեք անձինք և մի բնութիւն կը կազմեն այսօր, պարզապես ընկերութեան երրորդութիւն մը, որու մեջ Հայր է Արարատեանը, Որդի է Դպրոցասիրացն և Հոգի է Կիլիկեանը։ Այսուհետև որևէ նվեր պիտի հավաքվի ոչ թե հանուն Արարատեանի, այլ հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո, ամեն։ Անհավատները չեն հավատար այս երրորդութեան, և միութիւնն, որ այսօր կատարված է... անվամբ՝ անկարելի կը կարծեն։ Ես տակավին չեմ կարող վճիռ արձակել և կը փափաքիմ կարծել, որ ամեն հավախոսին մեյմեկ դպրոց բանալու փառասիրութիւնը պիտի չունենա Միացյալ Ընկերութեան Գործադիր ժողովն։

Գործադիր ժողովո ատենապետ ընտրված է պ. Գևորգ Ապտուլլահ, չափազանց հայրենասեր, չափազանց աշխույժ և չափազանց եռանդոտ երիտասարդ։ Այս անձն մեծ փառք և պատիվ կստանար, եթե ատենապետ ընտրվեր այնպիսի գործադիր ժողովո մը, որուն պաշտոնն լիներ շենքեր կառուցանել... օդի մեջ։

(Վարժարանի մը մեջ)

— Վարժապետ, աստված դրախտը Հայաստանի մեջ չդրա՞վ։

— Այո՛, Հայաստանի մեջ դրավ։

— Բայց հիմա Հայաստանի մեջ ատանկ բան չկա... ի՞նչ է եղեր...

— Շատ հավանական է որ... որ...

Վարժապետը աշակերտին հարցման զոհացուցիչ պատասխան մը չկարենալով գտնել՝ մազ մնաց որ անոր առջև պիտի խայտառակվեր, եթե նույն պահուն դիպվածով այդ վարժարանը չերթայի և աշակերտին չըսեի.

— Շատ հավանական է, որ քյուրդերը ավրշտած լինին, տղաս։

Մայրաքաղաքիս մեջ գիշեր ատեն քիթով պտուիլը վտանգավոր է։ Այս գիշեր թուրք մը հրեայի մը վրա հարձակելով՝ կողոպտել ուզեց զայն, բայց խեղճին վրա փող չգտնելուն վրա թուրքը բարկացավ և աղեկ մը ծեծելեն ետքը խեղճ հրեային քիթը կտրեց ու փախավ։

Եղելությունն ոստիկանության իմաց տրվելուն պես մի ոստիկան չարադործը ձերբակալեց։

Քիթն յուր տիրոջն տրվեցավ։

Այս արդար դատաստանին ըսելիք ունի՞ք. եթե դողցվածն դրամ ըլլար՝ հրեան չէր կրնար դրամն վերստին ձեռք բերել։ Թող ազոթք ընե, որ քիթն էր դողցվածը։

2 հունիս

Ես ալ այսօր համոզվեցա, որ թատրոնը մեծ մարդերու դպրոց մ'է։

Բայց մեծ մարդիկ ի՞նչ կուսանին այդ դպրոցի մեջ։ Խնդիրը հոս է։

Թող ուրիշները պնդեն թե բարոյականություն կուսանին հոն, ես կը պնդեմ, և եթե հարկ լինի՝ երկու տաճիկ վկա ալ կը բերեմ — որովհետև քրիստոնեի վկայությունը ընդունելի չէ[5].— որ թեպետև բարոյականության դաս կը տրվի հոն, բայց աշակերտները մարմնակազմության դաս կառնեն, վասնզի հանդիսատեսները դերասանուհվո մը ավելի բևեռուն, պարանոցին, սրունքներուն կը դարձունեն իրենց ուշն, քան թե անոր արտասանած խոսքերուն. և եթե դերասանուհվո թևերն գեղեցիկ դտնեն՝ կըսեն.

— Շատ սքանչելի ներկայացում մ'էր։

Խեղճ հեղինակներ... կը կարծեն թե իրենց գործը կը ծափահարվի... մինչդեռ շատ անգամ դերասանուհվո հեղինակն է, որ կը ծափահարվի...

Խափանված «Լրագիր» օրագրո խմբագիրն այսօր Տպագրական տեսչության ներկայացավ և հրաման խնդրեց, որ թերթը վերստին հրատարակե։ Տեսուչն ադօթք ընելու գնացած էր։

Հունաստանի, Գարատաղի և Հայաստանի նկատմամբ վեց տերություններն տվին իրենց համիմատ ծանուցագիրն Բ. Դռան։

Մեր ազգայիններն իրենց խանութներն դոցած՝ արվելիք պատասխանին կսպասեն։

Ընդհանուր կարծիքն այն է, որ տերությունները կարելի եղածին չափ պիտի աշխատին Հայաստանը քյուրդերու ձեռքեն ազատելու։

Թուրքիո մեջ բան մը ընել անկարելի է... Թուրքիո մեջ ամեն բան կարելի է։

Վերահրատարակման հրաման տրվեցավ այսօր «Թերճեմանը Էֆքյար» օրագրին, որ բոլորովին խափանված էր՝ անդղիական լրագրե մը հայոց նպաստավոր հոդված մը քաղելով հրատարակած լինելուն համար։

— Հայրիկ, առջի օրը կըսեիր, թե կարմրնալն ամոթխածութեյան նշան է։

— Այո, երբ որ մեկն յուր ըրածին վրա կը խպնի և երեսը կը կարմրի, ըսել է թե պարկեշտ է։

— Ըսել է թե մայրիկս շատ պարկեշտ է։

— Ինչո՞ւ։

— Վասն զի ամեն առտու յուր երեսը կը կարմրցունե։

Ո՛վ գույներ, մի՞թե դուք ալ այսչափ կը փոխեք եղեր ձեր նշանակութեյունը։

3 հունիս

Բ. Դուռն բողոքել որոշեց Պերլինի դեսպանախորհրդո դեմ։

Քանի մը տարիներե հետե Բ. Դուռն այնչափ կը բողոքե, որ դիվանագիտութեյան մեջ կատարյալ բողոքական մը եղավ։

Պ. Մեղավորյան մանկավարժական սրահ մը հաստատեց, ուր պիտի երթան մանկավարժներն և ուսուցման եղանակներուն վրա պիտի խոսին։

Լավ կը լիներ, եթե պ. Սպանդարյան խոսեր ուսուցման այն եղանակի վրա, որով աշակերտ մը չկարողանար ոչինչ ուսանիլ։

Այս եղանակը գանվելուն պես՝ մյուս եղանակները փնտռելու հարկ չմնար։

Լեվաներ—Հերպլտ-ի տնօրեն՝ Տպագրական տեսչության ներկայացավ յուր խափանյալ թերթին նորեն հրատարակման հրամանն ուղելու։

Տեսուչը քննելու գնացած էր։

4 հունիս

Լրագիրները մեծ գովեստով խոսած էին ս. պատրիարքին երկու արձաններուն վրա, զոր երկու ազգային գեղարվեստագետ երիտասարդներ շինելով ի տես հասարակութեյան դրած են Ապտուլլահ եղբայրներու գործարանը։

Հետաքրքրութեյան համար այսօր գնացի այդ արձանները տեսա և բարկացա, վասնզի լրագիրներե խաբված ըլլաս անմիջապես զդացի։

Այս արձաններեն մին, որ Իտալիա ուսում առած երիտասարդի մը գործն է՝ բնավ չնմանիր պատրիարքին. նորին սրբազնութեյան եղբայրներուն ալ չնմանիր։

Չկրցի համբերել, մոտեցա արձանին և անոր ականջն ի վար փսփսացի.

Պարոն արձան, զվարթերես,
Համակրական և աղվոր ես.
Այլ ի՞նչ օգուտ, չունիս լեզու,
Որ ըսեիր ինձ ո՛վ ես դու։

Մյուսն, որ հոս ինքնիրմե ուսած երիտասարդի մը գլուխ գործոցն է՝ քիչ մը արձանի իսկականին նմանութեյունը կը բերե թեպետև, բայց այնչափ տձև կերպով շինված է որ,

Թե լրագիր մ'այսպես գծեր
Պատրիարքին ներքին պատկեր՝
Անմիջապես յուր խափանման
Կընդուներ նա Դռնեն հրաման։

Այսպես են մեր թատրոնի հեղինակներեն շատերն ալ, իրենց ուզածին պես կը ներկայացունեն անձերը և կարծես թե մեծ գործ տեսած են։ Արշակ

մը[6], Հայկ մը[7], Սանդուխտ մը[8] պետք է այնպես ներկայացվի՝ ինչպես որ է, և ոչ թե ինչպես որ կը փափաքին արդի հեղինակները։

Դեսպանախորհուրդն այսօր բացվեցավ Պերլին։ Այս դիշեր Պիսմարք իշխանին տունը գինի պիտի խմվի։

Թուրք կառավարությունն ալ անշուշտ այս երեկո հեռագրով աճուղ ճրամմեցիմ պիտի ըսե գինի խմողներուն, որք գինիին վրա պիտի կլլեն անշուշտ... Յանիան[9]։

5 նուենիս

Ինչպես Մեղու–ի[10], Մշակ-ի, Փորձ-ի արգիլված է Պոլիս մտնելն, նույնպես նաև արգիլված է Խոիվի Հարեմին։

Մի՞թե այս Հարեմն ալ թուրք քաղաքականության վնասակար հոգվածներ՝ի լույս ընծայած է, որ Պոլսո մուտքն արգիլված է իրեն։ Հայտնի չէ։ Խոիվի որդին կը մերժե իր մայրերը։ Բ. Դուռն չուզեր ընդունել զանոնք և կինեբով բեռնավորված նավը քաղաք մը կը փնտռե՝ ապրանքը դուրս հանելու համար։

Նկատողության արժանի է, որ այս Հարեմին Պեշիքթայի առջև սպասելը Հնդկաստանի ճամբու դիպած չէ. եթե դիպած լիներ՝ Անգղիո խորհրդարանի մեջ հարցումներն իրարու կը հաջորդեին.—

— Խոիվի Հարեմն Նաթալիեն ինչո՞ւ մեկնեցավ։

— Ինչո՞ւ համար Պեշիքթա գնաց։

— Իտալիո կառավարությունն ինչո՞ւ թող չտավ, որ այդ կիներն իր երկրին մեջ բնակին։ Իտալիո կառավարության այս ընթացքն անգղիո թագուհվույն աշխարհավարության վնաս մը չի՞ բերեր։

Եվ կառավարությունն այս հարցումներուն պատասխանելով՝ խնդրույն վրա լույս կը սփռեր և ամենուն հետաքրքրությունը կը փարատեր։

Իսկ մենք, որ ասանկ հարցումներ ընելու համարձակություն չունինք, կը շատանանք ըսելով, որ Խոիվի Հարեմն Անգղիո նավատորմիդեն ավելի իրաբանցում պատճառեց հոս։

Այսօր մայրաքաղաքս հասավ Պ. Արթար Հովհաննիսյանց, խմբագիր-տնօրեն **Փորձ** լրագրո և Լյութհենպուրկի օթևանն իջավ։

6 նուենիս

Մայրաքաղաքիս մեջ այսօր սպանություն տեղի չունեցավ. կը կարծվի թե ոստիկանության նախարարին պատվանշան մը տրվի վաղը։

Անունով Միացյալ Ընկերությունք դեռ զատ-զատ կը գործեն, յուրաքանչյուրն յուր սենյակին մեջ։

Մարդուն մեկը լրագրի մը հրաման առնելու համար Տպագրական տեսչության գրասենյակը գնաց։

Տեսուչը կերակուր ուտելու գնացած էր։

Մայրաքաղաքիս մեջ բժիշկներուն թիվն օրըստօրե ավելնալու վրա է. նույնիսկ այսօր մեկ մարդու երկու բժիշկ կիյնա։

Իրավ է, որ շատ ազբատներ առանց բժշկի կը մեռնին. բայց ո՞րչափ բժիշկներ ալ կան, որ առանց հիվանդի կը մեռնին։

7 նուենիս

Անատոլուի սովելոց համար մեծ վիճակահանություն մը պիտի լինի... պալ տարի։

Հիշյալ վիճակահանության Գործադիր ժողովն շրջաբերական պիտի ղրկե գավառները, հորդորելու համար սովյալները, որ համբերեն և անոթութենն չմեռնին մինչև որ իրենց հաց ղրկվի։

Կը հուսանք, որ մեր ազգայիններն կը համակերպին այս շրջաբերականին։ Քաջ գիտեն արդեն նոքա, որ այս սովն եթե Եվրոպա լիներ՝ շատ ավելի ղոհ կը տաներ յուր հետ. փառք տալու ենք, որ Թուրք բարեխնամ կառավարությունը շատ տարիներե հետե նախատեսած լինելով այս սովն՝ ազգու միջոցներ ձեռք առած էր յուր հավատարիմ հպատակներն անոթության վարժեցնելու։

Փունջ լրագիրն քանի մը ժամանակէ հետէ անասուններու հիվանդութիւններու վրա հոդուածներ հրատարակելով՝ ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրե։

Արդյոք Փունջի խմբագիրն յուր ընթերցողներն անասո՞ւն կը կարծե...

8 նուենիս

Զրույց կը պատի թե Տփղիսի ազգայիններն իրենց առաջնորդ սիրի ընտրեն գեր. Խորեն Արշակունյան —Լուսինյան —Բագրատունյան —Քանթարյան— Հայկազյանց— Գալֆայան— Ռուբինյան— Նարսես-Խորխոռունի[11] արքեպիսկոպոսը։

Սովյալներուն օգնելու համար Համբա մ'ալ ես կառաջարկեմ, այն է՝ սովյալ գավառներե հեռացնել այն մարդերը, որ շատ կուտեն։

Հետևապես կառաջարկեմ, որ վանահայրները Պոլիս կանչվին, մանավանդ Մամբրե եպիսկոպոսը, որ Մշո վանքը ամբողջ կերավ։

9 նուենիս

Տպագրության տեսուչը դեռ ճաշը չմնցուց։

Այսօր կը տեսնեմ որ կերակուրները մեծ ազդեցություն ունին մարդուս կարծիքներուն վրա։ Կը ճանաչեմ մեկին, որ տարի մը առաջ յուր կյանքը պանիր-հացով կանցուներ, և ամեն օր ազգային գործերուն վրա կը խոսեր, իսկ հիմա որ կովու միսով կապրի՝ ազգային խնդիրներու վրա խոսողները կը ծաղրե։

Վեց տերությունները կըսեն Բ. Դռան։

— Յանիան Հունաստանի տուր։

Բ. Դուռը կը պատասխանե հույներուն այն լեզվավ՝ որով ասոնք պատասխանեցին ժամանակավ Քսերքսեսին.

— Եկուր, աննամբ առ։

10 նուենիս

Լրագրի մը մեջ հետևյալը կարդացի.

«Նախընթաց օրն Իսկյուտարի Պուրչուրլու գյուղը տան մը վրա կայծակ իյնալով՝ մեջը գտնվող երկու կանանց ականջները խլացուց»։

Ինձ կը թվի թե կայծակ մ'ալ Ուսումնական խորհրդոց[12] սենյակին մեջ ինկած է, վասնզի աս ալ խլացած է և չլսեր Թաղային վարժարաններուն վիճակին վրա խոսված խոսքերը։

Այսօր առաղձագործ մը կանչեցի և փայտե գլուխ մը շինել տվի ինձ համար. եթե մունաճիրին[13] մեկը հանկարծ գլուխս կտրե, բնավ հոգ չեմ ըներ. անմիջապես փայտե գլուխը կանցունեմ։

Առանց գլուխի պտտելին շատ աղեկ է փայտյա գլուխ մ'ունենալ։

11 նուենիս

Սեմաֆոր լրագիրն կը ծանուցանե, թե յուր ցրվիչն օսմ. պանքային դուռմար մը առնելու ղրկված լինելով՝ հիշյալ պանքային գնացեր, դրամն առեր և անհայտ եղեր է. ուստի ով որ այս ցրվիչին ուր ըլլալը գիտե՝ թող Սեմաֆորին գրասենյակին իմացունե և վարձատրությունն ընդունի։

Մենք խրատ կուտանք Սեմաֆորին, որ գանձու պաշտոնեության մեջ անդամ մը փնտռել տա ցրվիչը...

Քահանային մեկը... եկեղեցվույն մեջ գանձանակեն մեճիտիե մը սխալմամբ դրպանը նետած պահուն ընկերը տեսավ։ Կես ժամ վիճաբանութենե ետքը մեճիտիեն իրենց մեջ բաժնեցին։

Միացյալ ընկերությունք դեռ ոչ-միացյալի պես կը գործեն. Հայրը Որդվույն և Հոգվույն հետ համաձայն չերևիր։

12 նուենիս

Պ. Խոսրով Տեմիրճիպաշյան անուն մեկը Մասիսի մեջ Վոլենի Ավերակը թարգմանելով կըսե.

«Նույն միջոցավ արդի անորոշ ու անկանոն աշխարհաբարի նկատմամբ՝ գրաբարին նման մի կանոնավոր ու կրթյալ լեզվի տիպար ներկայելով՝ հայ ժողովրդյան մի վսեմ ծառայություն մատուցանել...»:

Օրհնյալ է աստված, աշխարհաբարի խնդիրն ալ լուծվեցավ շնորհիվ պ. Ս. Տեմիրճիպաշյանի, որ բարեհաճեցավ կրթյալ լեզվի տիպար ներկայել:

Եվ արդարև, լեզուն բավական կրթյալ տեսանք, հնդինակին հետ բաղդատելով:

Օ՜ն անդր, հառաջ, պ. Խոսրով. կրթյալ լեզվիդ քերականությունը հրատարակե, որ տեսնենք:

Կեսօր: Պատրիարքարանի պաշտոնյաները հիմա պատրիարքարան եկան. խահվե խմելուն պես իրենց պաշտոնին գլուխը պիտի անցնին:

15 հունիս

Աշխարհիս վրա ժամանակն է, որ կրնե ամեն բան: Քսան տարի առաջ ժամանակն ուղեց, որ պ. Թերզյան Սանդուխտ կույս անվամբ ողբերգություն մը գրե ժողովրդյան, որ շատ բաներու կարող էր, բացի Սանդուխտեն: Քանի մը տարի ետքը այս ժամանակն ուղեց, որ Սանդուխտի հեղինակն ոտանավորներ գրե ժողովրդյան՝ որ արձակը դժվար կը հասկնար: Այսօր ժամանակն կուզե, որ Ապողոնի աշակերտն արհեստից և գիտությանց Ծաղկաքաղ[14] մը հրատարակե, բայց մեծ հոգ և խնամք տանի, որ լեզուն անհասկնալի լինի անոնց, որոնց համար կը հրատարակվին ընդհանրապես նմանօրինակ հանդեսներ: Շատ հավանական է, որ ժամանակը տարի մը ետքը ուզե, որ պ. Թումաս Թերզյան գրե միայն այն ճյուղին վրա, որ իրեն հատուկ լինել կը կարծվի:

Խնդիրն այսօր Ծաղկաքաղին վրա է:

Տեսա այս հանդեսին առաջին թիվն, որու մեջ կարդացի, ի մեջ այլոց, մանիշակագույն լուսո ազդեցությունն բույսերու և կենդանիներու վրա: Մոռցա ըսելու թե ոտանավոր խմբագրված չէ թերթը:— Փորձված է, կըսե Ծաղկաքաղն, որ փորձած չէ՝ որ մանիշակագույն ապակիներով ծածկված ջերմոցներու մեջ բույսերը շուտ կաճին և արդյունավոր կը լինին, ինչպես նաև կենդանիները շուտ կը մեծնան և կայտառ կը լինին:

Ծաղկաքաղին անկեղծությանը վստահ լինելով՝ կը հավատամ յուր խոս-

քին, և մինչև իսկ կը պաշտպանեմ յուր կարծիքն, հայտնելով որ մարդն ալ, իբրև բույս և կենդանի, եթե մանիշակագույն ապակիներով ծածկված սենյակներու մեջ պահվի՝ ավելի շուտ կը ծլի և կաճի. մեկ տարվան մեջ... տասը տարեկան կը լինի. նույնպես ալ կին մը տարին չորս անգամ զավակ կը բերե և յուր մաղերն և ըղունգներն մեկ ու կես քիլոմեթրս երկայնություն կունենան: Կարծեմ Ծաղկաքաղն գոհ պիտի լինի այս հետևութենեն: Արդեն այլևայլ գույներուն մարդուս վրա տարբեր ազդեցություններն ամենուս ծանոթ են. օրինակի համար, ո՞վ կարող է ուրանալ կապույտ գույնին ազդեցությունն երբ աղջկան մը աչերուն մեջ երևի այդ գույնը. ո՞վ չէ կրած այն ազդեցությունն, զոր կը ներգործե վարդն՝ երբ կուսի մը շրթներուն վրա բացվի, ո՞վ չեսներ երբեմն այնպիսի կիներ, որ երեք ամիսեն զավակ բերած են, անշուշտ մանիշակագույն ապակիներու տակ անված լինելուն պատճառավ: Այս ամենը լավ, բայց խնդիրը հոս չէ, տե՛ր խմբագրապետ:

Ի՞նչ հասկնա խեղճ զավառացին քո մանիշակագույն ապակիներեդ՝ երբ նա չերմոցի վրա դեռ գաղափար չունի. ի՞նչ պտուղ քաղե քու պտուղ չորցնելու համար տված քարոզեդ՝ երբ նա ծառերու մշակության վրա չէ կարդացած ոչինչ. ի՞նչ պարտականություն ունի չորս-հինգ տարի աշխատելու քու առողջապահական հոդվածդ հասկնալու համար: Կը փափաքեի որ Բոբովիչի Արհեստ երկայնակեցության[15] անուն գիրքին լեզուն և ոճն օրինակ ունենային իրենց այն անձերն, որ ժողովրդյան խոսելու կը պատրաստվին: Բայց այս ո՛չ Թերզյանի գործ է, ո՛չ Սազլյանի և ոչ Ապտուլահյանի, այլ այն անձերու գործն է, որք հմտություն և փորձառություն ունին այն գիտություններու և արհեստներու մեջ, որոնց վրա պիտի խոսին ժողովրդյան: Այս գործը դժվար է, խիստ դժվար է և վերջապես այնչափ դժվար է, որչափ դյուրին է ֆրանսերենեն արհեստական կամ գիտական հոդված մը թարգմանելով հրատարակելն, ինչպես որ կընե Ծաղկաքաղն: Երկրագործը կարող է գիտնալ, թե ի՛նչ պետք է մշակվիլ Վանա մեջ և ի՛նչ պետք չէ մշակվիլ Կարնո մեջ. այսպես իմացիր ամեն ճյուղերուն համար:

Եթե ոչ ողբալի՝ գոնե ծիծաղելի է տեսնել, որ ազգի մեջ գիտություն և արհեստ դիտցող քանի մարդ որ կա՝ ամենն ալ դուրս ձգված են այս Ծաղկաքաղեն, որու խմբագրապետն է մի բանաստեղծ: Բայց հուսալի է, որ պ. Թերզյան ուշադրության կառնե մեր անկեղծ դիտողություններն և ամեն ջանք ի գործ կը դնե յուր հաջորդ Ծաղկաքաղները մանիշակագույն ապակիներով ծածկված սենյակի մը մեջ խմբագրել տալու, որպեսզի քիչ ժամանակի մեջ աճին ու պաղատու լինին Հայաստանի մեջ:

Երեկ ըսած էի.

«Աշխարհիս վրա ժամանակն է, որ կրնե ամե՛ն բան»։

Այսօր կըսեմ.

«Աշխարհիս վրա մեր Ազգ. Վարչութիւնն է, որ բան մը չըներ»։

Դաստիարակութեան խնդիրն, անտուկի խնդիրը, վանորեից խնդիրը, ամենը հոն է՝ ուր որ էր քսան տարի առաջ և ուր պիտի լինի քսան տարի ետքը։

Ժամանակավ երբ իմաստասեր մը Դիոգինեսի հետ վիճաբանութիւն կրներ համոզելու համար շնականը, թե շարժում չկա՝ կարասաբնակն քայլել սկսավ և յուր ընդդիմաբանին ըսավ.

«Քու փաստերդ կը հերքեմ»։

Եթե Անտիսթենեսի անառակագույն աշակերտին պես ընդդիմախոս մ'ունենայի՝ Ազգային վարչութիւնը կը նետեի նորա առջև և կըսեի.

«Քու փաստերդ ալ ես կը հերքեմ»։

Դեսպանախորհուրդն յուր որոշումն տվավ Հունաստանի խնդրույն մասին։

Ոչ միայն որոշում տվավ, այլ Յանիան ալ տվավ Հունաստանի։

Հիմա Հունաստանի կը մնա առնել Յանիան, որ իրեն տրված է։

Եթե թուրք կառավարութիւնն հակառակի այս որոշման՝ վեց տերութիւնները պիտի օգնեն Հունաստանի։ Այո՛... ուրիշ դեսպանախորհուրդով մը...

Ես ալ այսօր իմ որոշումս տվի Հայաստանի նկատմամբ։

Ինքնօրինութիւն տվի Հայաստանին։

Գնա ա՛ռ, եթե կարող ես։

17 հունիս

Օտար լրագիրներե հոդվածներ քաղած լինելուն պատճառավ, Սրամպուլ լրագիրն տասնևհինգ օր դադարման հրաման ստացավ Տպագրական տեսչութենեն։

Ո՛րչափ լավ կը լիներ, եթե Տպագրական տեսչութիւնն ալ գոնե տասն օրվան համար դադարման հրաման առներ...

Այսօր տասը դողութիւն տեղի ունեցավ և մեկ ձերբակալութիւն տեղի չունեցավ, մինչդեռ ուրիշ օրեր քառասուն ձերբակալութիւն կը լինի և մեկ դողութիւն չլինիր։

Ընդհանրապես անոնք միայն կը պատժվին, որ դողութիւն չեն ըներ. վասն զի մայրաքաղաքիս մեջ մեծամասնութիւնը դողերու թովն է, և սահմանադրական կառավարութիւններն, ինչպես հայտնի է՝ մեծամասնութեամբ կորոշեն ամեն բան։

Սպարապետի օրենդիրն[16] այն դողերն միայն կը պատժեր, որոնք վարպետութեամբ չէին կատարեր իրենց արհեստը։ Այժմ նույն օրենքը մայրաքաղաքիս մեջ գործադրվելու վրա է... Երանի՜ անոնց, որ բան չունին տալու դողերու...

Հայաստանի խնդրույն նկատմամբ դեռ պատասխան չտվավ Բ. Դուռն վեց տերութիւններու համաձայնած ծանուցագրին։

Կերևի թե պատասխան չունի տալիք։

18 հունիս

Գավառական թղթակիցներն գեր. Մաղաքիա վարդապետ Օրմանյանի մեծ հանդեսով Թրապիզոն և անտի Կարին մտնելը կը նկարագրեն։ Այդ նկարագրութիւններուն մեջ ճարտասանական ամեն ձևեր գործածված են. ավանակ մը միայն կը պակսի հոն՝ Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի երուսաղեմ մտնելը[1] մեզի հիշեցնելու համար։

Ջափազանցութիւններե սիրտս կը խառնվի. այս մասին շատ փափուկ ստամոքս մ'ունիմ։

Հայր Օրմանյանն ես ալ կը սիրեմ և կը հարգեմ, վասն զի նորին գերապատվութիւնն վեց ատենաբանութիւն ըրավ ազգին հոգվույն և մարմնույն վրա. և այսուհետև ալ կարող է երկու հարյուր հիսուն ատենախոսութիւն ընել ազգին մարմնակազմութեան վրա. ուստի միշտ քաջալերութեան արժանի է, մանավանդ երբ առաջնորդութիւնն կը ստանձնե այնպիսի քաղաքի մը, ուր ընդարձակ ասպարեզ մը կը բացվի յուր առջև գործելու համար։ Սակայն երբ կը տեսնեմ, որ գավառացին չափազանցութեան կը դիմե՝ իմ նվիրական պարտքս է չափավորութեան հրավիրել զայն։

Նա, որ ինքզինքը մարդկութեան համար զոհեց, Օրմանյանե շատ մեծ է անշուշտ. արդ, երբ նա ավանակի վրա նստած կը մտնե երուսաղեմ, յուր

աշակերտը ի՞նչպես մտնելու էր Կարին։ Բայց որովհետև մեր եկեղեցականներն չունին իրենց Վարդապետին խոնարհությունն՝ գոնե պարզության մեջ մնալու ուխտ ընելու են։

Բայց Օրմանյան ի՞նչ հանցանք ունի, երբ յուր ժողովուրդն չափեն ավելի կը հարգե զայն։ Նորին գերապատվությունը զրուցելու է, թե ինք այնչափ հարգանաց արժանի չէ։

Նորին գերապատվությունը թող ներե մեզ այս տողերը գրելնուս համար, որովհետև կարնո թղթակիցին նամակը հոս հրատարակված օրն՝ շատերն ըսին.

«Կերևի որ կարնեցիները մարդ տեսած չունին մինչև հիմա»։

Ես չեմ ուզեր, որ կարնեցիները այսպես զրպարտվին...

19 հունիս

Միացյալ ընկերությունիմ անուն ընկերությունը իզուր աշխատեցավ չորս ամիս՝ իրեն հարմար անուն մը գտնելու համար. վասն զի հիմակվան անունն քնավ չհամապատասխաներ յուր բռնած ընթացքին։ Եթե իմ կարծիքս հարցըվեր՝ ես կառաջարկեի որ Ոչ–Միանալիք ընկերությունիմ անունով կնքվեր այդ ընկերությունը։

Մինչև այսօր պաշտոնական հայտարարությամբ չծանուցվեցավ հասարակության, որ Արարատյան, Դպրոցասիրաց—Արևելյան և Կիլիկյան ընկերությունները լուծված են։

Կը զրուցվի թե Հայրը դժբախտություններ կը հարուցանե և հաշիվները տալու կը դժկամակի, առարկելով թե անկաժըման ունի։ Եթե Որդին և Հոգին ալ անկաժըման ունին՝ ժողովուրդը յուր տված ոսկիներուն հաշիվն առնելիք չունի։

Դեռ ամիս մը առաջ Արարատյան ընկերության պատվականագույն անդամներեն մին անդամակցութենե կը հրաժարեր հետևյալ նամակը գրելով.

«...Կաղաչեմ ջնջեցեք իմ անունս Արարատյան ընկերության ցանկեն, որով դիս երախտապարտ կը կացուցանեք և այլն...»

Ի՞նչ պատիվ Արարատյան ընկերության... մարդս ավազակներու խումբե մը փրկված ժամանակ երախտագիտություն կը հայտնե. բայց ընկերութենե մը դուրս ելնելու համար աղաչել, և երախտապարտ մնալ՝ կարծեմ քիչ մը զարմանալի է...

Տասնհինգ օրվան համար դադարված Սթամբուլ լրագիրն յուր պայմանաժամն լրացնելով երկու օրվան մեջ՝ այսօր վերստին հրատարակվիլ սկսավ։

Արևելյան Բոմելիի ընդհանուր կառավարիչ Ալեքո փաշան յուր ամուսնույն հետ մայրաքաղաքս եկավ։ Կը զրուցվի թե Արևելյան Բումելի Պուլղարիո հետ պիտի միանա և Պուլղարիո իշխանը Ֆիլիպե պիտի փոխադրե յուր աթոռը։

Ազոթենք, որ այս միացումը մեր ընկերություններուն միացման պես դժվարություններու չհանդիպի...

20 հունիս

Լիխիտասիոն և Լիխիտասիոն։

Մայրաքաղաքիս մեջ չկա մի փողոց, ուր խանութի մը ճակատը ճերմակ լաթ մը քաշված չլինի և վրան Լիխիտասիոն գրված չլինի...

Ժամանակավ ճերմակ լաթերու վրա Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն[18] կը տեսնեինք, իսկ հիմա Լիխիտասիոն... ամեն մարդ գործը մաքրելու կաշխատի, 60% զեղչով ապրանքները ծախել խոստանալով. ոմանք 90% զեղչ կընեն, և եթե թվաբանական ճշմարտությունը խաբեության չափ դրած չլինեք՝ 110% զեղչ ալ պիտի ընեին մեզ մեր պատվավոր վաճառականները։

Եվ գիտե՞ք ի՛նչ են այս Լիխիտասիոնեներու պատճառները։

Կը ճանաչեմ մին, որ ճամբորդության պատճառավ Լիխիտասիոն կընի տասը տարիե ի վեր։

Ուրիշ մը գործեն քաշվելու միտք ունենալուն համար՝ յուր վաճառատան ճակատը Լիխիտասիոն գրած է քսան տարիե ի վեր։

Ուրիշներն ալ մեկմեկ պատճառ գտած են ժողովուրդը խաբելու։

Կարող եմ ըսել, թե միայն Բ. Դռան վրա Լիխիտասիոն չէ գրված։ Լավագույն չէ՞ր լիներ, եթե քաղաքապետությունն այդ լաթերը ժողվել տար և մի մեծ լաթ կարել տալով՝ նորա վրա ոսկեզօծ տառերով Լիխիտասիոն դներ և այդ լաթն իբրև դրոշակ մայրաքաղաքիս դռներուն վրա պարզեր։

Խոփվի խեղճ Հարեմն արտոնություն ստացավ թերթ մը հրատարակելու... արտոնություն բառը սխալեցուց զիս, ներեցեք... արտոնություն ստացավ... Ջմյուռնիա բնակելու։

Փորձ-ի խմբագիր պ. Աբգար Հովհաննիսյան այսօր մեկնեցավ մայրաքաղաքես Վառնայի շոգենավով։

21 հունիս

Վաճքը, կես պաշտոնական թուրք լրագիրն, կամ լավ ևս 1/16 պաշտոնական լրագիրն, մեծ ցավ կը հայտնե այսօր, ծանուցանելով թե պետությունները Հայաստանի համար հատուկ կանոնադրություն կը պահանջեն։

Թուրքերը մեծ ցավ կզդան՝ երբ հայերը հարստահարութենե փրկվին։

Խոսակցություն մը կիներու բաղանիքին մեջ

— Սա օրիորդը ո՞վ է, տիկին։

— Ջե՞ս ճանչնար, մեր դրացին է, Լուսիկն է։

— Լուսի՞կն է... սխալ է, տիկին. Լուսիկը ճերմակ է. այս սևի մոտ բան մ՚է...

— Բաղանիքեն ելնելուն պես դարձյալ կը ճերմկնա։

Դիտողություն.— Ամուսնական շատ մը կռիվներ կը վերնային՝ երբ խոսակապը բաղանիքի մեջ տրվեր։

22 հունիս

Կիրակի.— Պ. Նորայր Բյուզանդացի միշտ կաշխատի յուր գաղղիերեն-հայերեն բառարանին, որ մեծ առավելություններ ունի յուր նախորդներու վրա։

Ահա մարդ՝ որուն ամեն քաջալերություն արժանի է. ահա գործ՝ որուն ամեն բարի ընդունելություն կը վայլե։

Տասը հարուստ վաճառական այսօր միանալով ընկերություն մը կազմեցին՝ Նորայրի բառարանին մեկ բաժանորդ դրվելու համար...

23 հունիս

Հայաստանի խնդրույն նկատմամբ Բ. Դուռն այսօր պատասխան տված վեց տերություններու ծանուցագրին։

Հիշյալ պատասխանին մեջ Բ. Դուռը կըսե, թե շատ բարենորոգումներ ըրած է Հայաստանի մեջ, թե իրաց վիճակը քննելու համար քննիչներ ղրկած է—քննիչ ղրկելը մեծ բարենորոգում մ՚է մեզի համար — թե ժանտարմերի

կազմած է, և եթե ժանտարմերին չենք տեսներ այսօր՝ պատճառն այն է, որ Բ. Դուռը փառասեր չլինելով՝ միշտ գաղտնի բարիք կը գործե ըստ ավետարանին, թե աջ ձեռքին տվածը ձախը տեսնելու չէ, թե միշտ ունի հայաբնակ գավառները նահիճներու բաժնել և անոնց հայմամամ ընտրել այն մասեն, որ մեծամասնություն կը կազմե (Թույլ պիտի տա՞ն արդյոք, որ հայերը մեծամասնություն կազմեն). թե տուրքերու տասներորդ մասը նահիճներուն բարոյական և նյութական հառաջադիմությանը պիտի հատկացվի—խոստովանիմ և հավատամ—թե շարժուն դատական խորհուրդներ պիտի կազմվին՝ գլխավոր քաղաքներ երթալով անիրավ որոշումները վերաքննելու համար — անիրավ խորհուրդներուն անիրավություններն ո՞վ պիտի քննե։— Ասոնք ըսելեն հետո Բ. Դուռը հետևյալ վիճակագրությամբ կը կնքե յուր պատասխանը։

79% Մուսուլման

17% Հայ

4% այլևայլ հասարակություններ։

Եթե Վանա, Կարնո, Տիարպեքիրի և այլն կողմերու մեջ հայերը 17%-ը կը կազմեն՝ ըսել է թե 53%-ը վերջերս կամ բյուրդերեն սպանված են և կամ այդ վիճակագրությունն ընող պաշտոնյաներեն։

24 հունիս

Մինչև որ Զմյուռնիո մեջ բնակարան մը հաստատվի՝ խոփվի հարեմն նորըլի պիտի բնակի։

25 հունիս

Գարատաղի և Բ. Դռան միջև պաշտոնական հարաբերությունները խզվեցան։ Գարադաղի դեսպանը պիտի մեկնի։ Քոնսոլիտներն ինկան։ Եթե Հունաստանի դեսպանն ալ մեկնի՝ քոնսոլիտներն ալ ավելի պիտի իյնան։ Իսկ եթե քանի մը դեսպան մեկեն մեկնելու լինին՝ քոնսոլիտը բոլորովին կը վերնա...

Ապեհին փաշա առկախ մնացած խնդիրներու համար բանակցության մտավ Գարատաղի դեսպանին հետ, որ ետ ձգեց իր մեկնիլը։

Սյուրիո կուսակալ Միտհատ փաշա հիշյալ նահանգին համար բարենորոգմանց ծրագիր ղրկած է կայս. կառավարության։

Ամեն կողմն ծրագիր... Ապետին փաշա, ո՛ր կողմ որ դառնա՝ յուր դեմը ծրագիր մը կելնե. դիվանագիտության Բուրսոնյամ դարձավ։

— Ա՛ռ սա ծրագիրն, աղեկ է։

— Ա՛ռ աս ծրագիրն, շատ լավ է։

— Տո՛ւր սա Յանիան, որ քեզի շատ աղեկություններ պիտի բերե։

— Տո՛ւր սա Տուլչինիոն, որ խալսիս։

Մեզի ամեն կողմե խրատ, հորդոր և ծանուցագիր կը ղրկեն՝ մինչդեռ մենք զրամի միայն պետք ունինք։

26 հունիս

Պ. Կոշեն կայսեր հետ տեսակցություն մ'ունեցավ։

Մեծ կարևորություն կը տրվի այս տեսակցության։ Պաշտոնեից փոխանակության խոսքեր կը լսվին ականջե ականջ։

Յրլոզրի պալատեն[19] հարճ մը Անգլիո դեսպանատունը փախչելով՝ անոր պաշտպանությունը խնդրած է։ Ի՞նչ բանի. հայտնի չէ։ Արդյոք այս հա՞րճն ալ ինքնօրինություն կը պահանջե։

27 հունիս

Ամենակարևոր հայտարարություն մը...

Կրոնական պատկառելի ժողովն պաշտոնական հայտարարությամբ կը ծանուցանե բարեպաշտ ժողովրդյան՝ որ յուր և պատրիարքին միջև բնավ անհամաձայնություն չկա։

Մեր պաշտոնական շնորհակալությունները կը հայտնենք այս պաշտոնական հայտարարության։

28 հունիս

Պատերազմական դործոց նախարար Օսման փաշա, որ Պլևնայի մեջ քառասուն հազար զորքով ռուսաց ձեռքը գերի իյնալուն ի վարձատրություն այս պաշտոնին բարձրացած էր, պաշտոնե ինկավ, և նմա հաջորդեց Հյուսեին Հյուանի փաշան, որ ժողովրդյան ծանոթ է յուր անձնանորությամբը։

Կըսեն թե Օսման փաշան պատերազմ ուղելուն համար ինկավ. յուր հաջորդն ալ անշուշտ պատերազմ չուղելուն համար պիտի իյնա։

Մենք ալ շվարեցանք մնացինք, թե ի՞նչ ուզենք և ի՞նչ չուզենք։

29 հունիս

Այսօր կիրակի է և պաշտոնական կիրակի — շաբթվան մյուս օրերն ալ ժողովուրդը գործի չերթար, վասն զի Թուրքիո մեջ գործ չկա. սարսափելի տաք կընե, միայն թուրք լրագիրներն իրենց պաղ հոդվածներովն օդը կը բարեխառնեն։

Թերճեմանը հաֆիֆարն[20] ամենեն պաղն է։

Վիքտոր Հյուկոն, կըսե, քյուրդերեն դաս առնելու կարոտ է դեռ... քյուրդերն աշխարհիս ամենեն ավելի լուսավորյալ ազգերեն մին կը կազմեն եղեր։ Լա՞վ կամ թե վատ կամ։

Ջղային հիվանդության ենթակա մին՝ երե տուշ ընելու տեղ գլխեն վար քանի մը Թերճիման հաֆիֆարի թերթերեն թափե՝ կարծենք մեծ օգուտ կը գտնե։

30 հունիս

Քաղաքապետությունն թատերական ընկերություններե ամիսը հինգ ոսկի տուրք պիտի առնե։ Այդ ընկերությունները Թուրքիո մեջ ոչնչացնելու համար լավագույն ճամբա մը չէր կարող գտնել քաղաքապետությունը։

Տուրք մ'ալ թատրոն գնացողներեն առնելու է՝ որ թատրոն չերթան։

Գերմանական դեսպան Հացֆելտ կոմսն այսօր Բ. Դռան պիտի ներկայացնե դեսպանախորհրդին ծանուցագիրն։

Քաղաքապետությունն ծանուցագիրներուն վրա տուրք մը դնելու է՝ որ խալսինք անոնց ձեռքեն...

1 հուլիս

Անաքսագորաս կըսե, թե բնության մեջ դատարկություն չկա։

Ես կըսեմ, թե բնության մեջ դատարկություն կա։

Մի՛ կարծեք թե հակառակ խոսած ըլլալու համար Անաքսաքորասի կարծիքը չեմ ընդունիր. երեսփոխան չեմ, փառք աստծո։

Այո, պարոններ, Անաքսաքորասի կարծիքին չեմ... և Անաքսաքորաս ալ վշտանալու չէ. վասն զի Անաքսաքորաս գիտնալու է, թե Անաքսաքորասի դարն անցած է, թե Անաքսաքորասին մտիկ ընող չկա և թե ամեն մարդ Անաքսաքորասի պես իրավունք ունի յուր կարծիքը հայտնելու։ Կարծիքներն շատ աղատ են այժմ, և յուրաքանչյուր ոք իրավունք ունի այսօր առանց կարմրելու ևւին ճերմակ և ճերմակին սև ըսելու։ Ես ալ կը վայլեմ այդ իրավունքը, բայց խղճմտանքի տեր ըլլալով՝ կը կոչեմ անձերն և իրերն այնպես՝ ինչպես որ կերևին ինձ. և եթե այս անձերն և իրերն չեն երևիր ինձ այնպես ինչպես որ են՝ հանցանքն իմս չէ։

Ի՞նչ փաստ ունի Անաքսաքորասը պնդելու համար, թե բնության մեջ դաւարկություն չկա. ինչո՞ւ անգամ մը աչքե չէ անցուցած մեր երեսփոխանական ժողովո ատենագրություններն՝ համոզվելու համար թե բնության մեջ որչափ դատարկ խոսքեր կան։ Թողունք զայս։ Պ. Անաքսաքորաս կը հաճի՞ արդյոք քիչ մը գլուխն երկնցնել և մեր կառավարության գանձին մեջ նայել, տեսնելու համար թե բնության մեջ որչափ դատարկ սնտուկներ կան, սնտուկներ, մանավանդ որ լեցվելու նպատակով միայն շինված են։

Ձեմ կարծեր, թե Անաքսաքորաս յուր կարծիքն փոխե. բայց ես ալ կը հարցնեմ իրեն. եթե մեր կառավարության սնտուկը դատարկ չէր՝ ինչո՞ւ այսօր գերմանացի ելմտագետ մը եկավ Պերլինեն՝ մեր գանձին վիճակը կանոնավորելու համար։

Անուրանալի ճշմարտություն մ'է, որ մեր գանձն այսօր շատ խեղճ վիճակի մեջ է. անոթի ժողովուրդն անոր բարեկարգվելուն կը սպասե անհամբեր, որ շնորհակալության գիր մը գրելով հիշյալ ելմտագետին դիմե և ներկայացնե անոր յուր... զրպանները։

Սակայն կետ մը կա, որ իմ զարմանքս կը գրավե, և այն կետն ալ սա է, որ եթե այս գերմանացին դատարկ գանձերը լեցնելու մասին այնչափ վարպետ է՝ Գերմանիան ինչո՞ւ այդ գերմանացին իրեն գանձին համար չպահեր։

Բայց պ. Անաքսաքորաս միշտ կը պնդե կրկնելով.

«Բնության մեջ դատարկություն չկա, ամեն բան լի է»։

Այո, լի է... բայց դատարկությամբ...

Պոլսո մեջ մարդս կամ քիչ մը հավատք ունենալու է կամ քիչ մը դդում... Վա՛յ անոր, որ ո՛չ հավատք ունի և ո՛չ դդում. այնպիսին տգետ է, անպիտան է, աշխարհիս ծաղրն յուր վրա շարժելու համար ստեղծված էակ մ'է։

Ընթերցողը գուշակեց անշուշտ, որ ծովու լոգարաններու վրա պիտի խոսեմ։

Հին հույներու մեջ լողալն այնքան սովորական էր, որ մեկու մը տգետ ըլլալն հասկցնելու համար կըսեին. աճա մարդ մը, որ ոչ կարդալ գիտե և ոչ լողալ, ինչպես որ թուրքերն ալ այդ իմաստով հետևյալ առածը կը գործածեն. աճա պաշտոնյա մը, որ ոչ գրել գիտե և ոչ կաշառ ուտել. սակայն մտքես չէր անցներ բնավ, որ լուսավորյալ դարուս մեջ ալ լողալու արհեստը չգիտնալը մոլություն համարվեր և իբր այն ժողովրդյան ծաղու նշավակ ըլլար։

Դիպվածով գտնվեցա այսօր լոգարան մը՝ ուր բազմաթիվ հանդիսականներ ավազանին շուրջն աթոռակներու վրա բազմած՝ ավազանի մեջ նետվողները կը դիտեին։ Մեծն Վարդան ողբերգությունն[21] այսչափ հանդիսական տեսած չուներ։ Այս բազմությունը տեսնելով՝ ինքնիրենս կըսեի. «Մեր ազգային թատրոնի վարժեցնելու համար հարկ անհրաժեշտ է, որ թատերաբեմերու վրա լոգարաններ շինվին և դերասաններն ու դերասանուհիները լոգարաններու մեջ մտնեն և հոն կատարեն իրենց դերերը»։

Անոնք, որ Պետրոս Առաքյալի պես հավատք ունեին՝ մեծ հաջողությամբ կը սողային ջուրին վրա և բուռն ծափահարություններ կընդունեին. ինչպես նաև անոնք, որ դդում ունեին իրենց թևերուն վրա՝ ջուրին երեսը կմնային և հանդիսականներու կողմե կը քաջալերվեին. իսկ անոնք, որ ո՛չ հավատք ունեին և ո՛չ դդում՝ ջուրին տակը կերթային և մեծ դժվարությամբ դուրս կը հանեին և ո՛չ դդում՝ ջուրին տակը կերթային և մեծ դժվարությամբ դուրս կը հանեին իրենց գլուխն... հանդիսականներու քահքահաձայն ծաղու ունկնդիր ըլլալու համար...

Խղճիս դպավ այս տեսարանն և դուրս ելա. սակայն քանի քայլ առնելես ետքը համոզվեցա, թե միայն լոգարաններու մեջ տեղի չունենար այս ծաղրն և թե լոգարանեն դուրս ալ ամեն անհատ, ամեն անօրինություն, ամեն կառավարություն իրեն ասպարեզ ընտրած ծովու մեջ՝ ջուրին երեսը մնալու համար՝ դդումի պետք ունի։ Այս համոզումե մղված՝ որոշեցի դդում կապել.

Ա. Ապետին փաշայի թևերուն,
Բ. Մեր թաղային վարժարաններուն,
Գ. Միացյալ ընկերության գործադիր ժողովույն,
Դ. Մասիսի մեջ Վոլնեի Ավերակի թարգմանչին,
Ե. Երևանու Պսակին.[22]
Զ. Թուրքիո զրահավոր նավերուն,
Է. Մաղկաճաղ արհեստից և գիտությանց անուն հանդեսին։

Բայց ի՛նչ կընեմ ես. այսպես մի առ մի թվելով՝ տասը հատոր Փուռ կը լեցունեմ. համառոտեմ խոսքս և ըսեմ.

Մեր երկրին չորս կողմը դդումներ կապելու է, որ կարողանա ջուրին երե-

սը մնալ, օտարներու ծիծաղեն խալսիլ և ապրիլ յուր պարունակած այլևայլ ժողովուրդներով...

2 հուլիս

Մայրաքաղաքիս մեջ ամեն օր գողության դեպքեր կը պատահին։ Երեկ հույն մը և ոստիկան մը աճապարանոք ոստիկանության դռնեն ներս կը մտնեին։

Խուռն բազմություն մը կեցած էր դռան առջև. ամեն մարդ դիտեր, թե գողության դեպք մը տեղի ունեցած էր, բայց ոչ ոք դիտեր, թե ոստիկա՞նն ձերբակալած էր հույնն թե հույնը ձերբակալած էր ոստիկանը։

Այսօր առուզվեցավ, որ գողության հեղինակն ոստիկանն է եղեր... ի՞նչ փոփոխություն... առեն մը ոստիկանները կը ձերբակալեին գողերը, իսկ այժմ գողերը կը ձերբակալեն ոստիկանները։

3 հուլիս

Քյուրդերու պաշտոնական լրագիր Թերճեմանը Հաֆիֆաբ, որ յուր քաղաքական տասնևվեց բունթո հոդվածներով մեծ ծառայություն կը մատուցանե քյուրդերու՝ կը հայտնե թե Հայաստանի մեջ ըլլալիք բարենորոգումներն մեծ հուզում պատճառած են քյուրդերու և թե կառավարությունը հեռագրով անոնց սիրտը հանդարտեցուցած է։

Ապագա բարենորոգումներու դրույցն եթե այսչափ հուզում պատճառե՝ եթե բարենորոգումները գործադրվիլ սկսին՝ ո՞րչափ հուզում պիտի պատճառեն արդյոք։

Թերճեման քաշած հեռագրին պատճենը չհրատարակեր, որ մենք ալ կարդայինք, բայց հավանականաբար հետևյալն ըլլալու է.

«Քյուրդեր, հանգիստ եղեք, ազատ եք, ինչպես և երբ որ ուզեք՝ հայերու ստացվածքն, կյանքն և պատիվը բռնաբարելու, բարենորոգում չկիտի ըլլա հոս. եթե երբեմն երբեմն մեր բերնեն բարենորոգում բառը լսեք՝ մի՛ հավատաք. Եվրոպան խաբելու համար կը գործածենք զայն։ Դուք ձեր գործին նայեցեք և բնավ հոգ մի՛ ընեք. օսմանյան բարեխնամ կառավարությունը ղձեղ չզրկեր և ոչ մեկ բանե մը»։

Այս իմաստով հեռագիր մը միայն կարող է քյուրդերը հանդարտեցնել։

Բայց իրոք քյուրդերը հուզվա՞ծ են և կառավարությունը հեռագիր զարկա՞ծ է։

Մենք չենք հավատար. Թերճեմանը կատեղծն այս լուրերը, առանց սակայն խորհելու, թե երբ օսմ. կառավարությունն Պերլինի 61-րդ հոդվածն[23] ընդունեց՝ հարկ չտեսավ հոդված մ՛ալ քյուրդերու հուզմունքին համար ավելցընել։

Ջորս ամիսե ի վեր հանձնաժողով մը կա Պոլսո մեջ, որու պաշտոնն է Երուսաղեմի պարտքերը բառնալ։

Այս հանձնաժողովն չորս ամիսե ի վեր չորս գրագիր փոխեց. ահա այն միակ գործն, զոր տեսավ չորս ամսու մեջ. եթե ուր գրագիր փոխեր՝ ավելի մեծ գործ մը տեսած կըլլար։

Սույն հանձնաժողովու ատենապետն է այնպիսի մարդ մը, որ ո՛չ ինքզինքը կը ճանաչե և ո՛չ դիմացինը...

Կը կարծվի թե հանձնաժողով մ՛ալ պիտի կազմվի այժմ հիշյալ հանձնաժողովը բառնալու համար։

Իսկ մենք կառաջարկենք, որ հանձնաժողով մ՛ալ կազմվի Երուսաղեմի վանքը բառնալու համար. վասն զի քանի որ վանքը մնա, պարտքն ալ պիտի մնա, և աղքն ա՛լ ժամանակ չունի վանքերու պարտուց համար ահագին գումարներ վճարելու. երեսուն հազար ոսկիով ազգը մեծ գործեր կարող է տեսնել։

Միացյալ ընկերության գործադիր ժողովո անդամներու մեջ անհամաձայնություն երթալով կաճի։

Ընկերության աղվոր անուն մը դնելու համար այսչափ վեճ ըլլալիքն եթե առաջուց գիտնայինք, կառաջարկեինք, որ ընկերության անունն Աբա գեղեցիկ դրվեր...

4 հուլիս

Երբեմն այնպիսի պարագաներ կըլլան, ուր մարդս երանի կը կարդա անասուններուն։

Շատ մը խնդիրներ կան, որ անասուններու մեջ լուծված են և մարդերու մեջ դեռ վիճաբանության տակ են։

Հեզվի խնդիրը, օրինակի համար։

Ջպիտի քննեմ, թե ոչխարը գրաբար կը խոսի թե աշխարհաբար. թե դավառաբարբառներ ունի՝ թե ոչ, թե ոչխարի լեզուն Հնդեվրոպակա՛ն է թե ո՛չ. ասոնք քննելու բնավ պետք չունիմ. վասն զի Բաղեշի մեջ ծնած ոչխարին լեզուն շատ աղեկ կը հասկնա այն ոչխարը, որու հայրենիքն է Սպանիան. մինչդեռ Մշեցիի մը հայերենը չհասկնար Պոլսո հայն, որու լեզուն չհասկնար Վանեցի հայն, որու լեզուն չհասկնար և այլն և այլն և այլն:

Այս խառնաշփոթ լեզուներուն վրա ավելցո՛ւր նաև այն հայերեն լեզուներն, որք ամեն օր կը շինվին և ամեն օր կը կործանվին, այն ատեն դու ալ ինձի պես երջանիկ պիտի գտնես գրականությունն անասուններու, որոնց յուրաքանչյուր տեսակն յուր տեսակի լեզուն կը հասկնա:

Այս տողերուն պատճառ տվավ այն առիթն, զոր այսօր ունեցա Վանա գյուղերեն նոր եկած ճամբորդի մը հետ տեսնվելու: Սովու վրա տեղեկություն հարցուցի իրեն, և ան ալ պատասխանեց ինձի շատ մը բառերով, որոնց և ոչ մին հասկցա, բացի մաշլախ բառեն...

5 հուլիս

Առատ-առատ նորաններ, բայց մուզիֆայիճ ձայնը լսվեցավ դեռ... Դեսպաններն ամեն օր նորաներ կը խմբագրեն և Բ. Դուռն կը ղրկեն: Բ. պատուհանեն ալ այդ նորաներուն նորաներով կը պատասխանվի:

Բ. Դուռն այսօր դեսպաններուն նորա մ'ալ ղրկեց, որով կը ծանուցանե, թե անհնարին է իրեն Տուլչինիոն Գարատաղի հանձնել:

Վեց տերությունները կը սպասեն դմեզ, որ բոլոր սահմանակից տերություններուն կամ իշխանություններուն մեյմեկ կատր երկիր տանք: «Տվեք այդ երկիրներն, որ, կըսեն, Թուրքիո ամբողջությունը պահպանենք... ձեզի համար մեծ բարիք է, որ այդ երկիրները ձեռքե հանեք... Պերլինի դաշնադրության առջև մոմ վառելու եք, որ ձեր իրավունքները հղորապես պաշտպանեց»:

Կեցցե՜ն պաշտպանք Թուրքիո...

Դեսպաններն այսօր նոր ժողովք ըրին հայկական խնդրույն համար:

Անգլիո և Ֆրանսայի դեսպանները մեյմեկ ծրագիր պիտի պատրաստեն:

Ժողովրդյան մեջ ոմանք կը պնդեն, թե Ֆրանսայի դեսպանին ծրագիրն պիտի ընդունվի, ոմանք ալ կը պնդեն, թե Անգլիո դեսպանին ծրագիրը պիտի ընդունվի. ես կը պնդեմ, թե և ոչ մին պիտի ընդունվի: Հայ կուսակալ մը դնելու գրույցն երթալով հաստատություն կը դառնա:

6 հուլիս

Ամենապատիվ սրբազան պատրիարքն այսօր պատարագ ըրավ Դալաթիա, որու եկեղեցվույն տոնախմբության օրն էր:

Շատ մը գողեր ուխտավորներեն ստակ գողցան:

Գողերեն մին, որ հայ էր, ձերբակալվելնուն վրա՝ քանի մը ազգայիններ հարցուփորձ ըրին զինքն.

— Ուսկի՞ց առիր աս երկու մեճիտիեն:

— Գանձանակեն առի:

— Ինչո՞ւ առիր:

— Ի՞նչ կըլլա եղեր առնելով:

— Գողություն եղած կըլլա:

— Ես գող չեմ:

— Ինչո՞ւ առիր և գրպանդ դրիր:

— Նախորդ թաղական խորհրդո անդամներեն եմ ես:

— Սուտ կը խոսիս, դու բնավ թաղական խորհրդո անդամ եղած չես. բայց ենթադրելով թե եղած ես, ի՞նչ ըսել կուզես:

— Սա ըսել կուզեմ, որ թաղական խորհրդո անդամ մը կարող է այդպիսի բան մը ընել՝ առանց գող ըսվելու:

Պատասխանը գոհացուցիչ լինելով, մարդուն ճամբա տրվեցավ:

7 հուլիս

Ամեն մարդ հետաքրքիր է գիտնալ, թե տերություններն ի՞նչ ընթացք պիտի բռնեն, եթե Թուրք կառավարությունը դժկամակի Պերլինի դեսպանախորհրդո որոշումները գործադրելու:

Ժողովուրդն երբեմն խստապահանջ կըլլա և գիտնալ կուզե տերություններու բռնելիք ընթացքն, զոր տերություններն իսկ չեն գիտեր...

8 հուլիս

Եթե պատվանշանի վաճառականություն ընել սովորություն եղած ըլլար՝ ամեն ամեն ասեմ ձեզ՝ տարվան մը մեջ Ռոչիլտի չափ հարուստ կը լինեի:

Ի՞նչպես:

— Թուրքիայեն աժան գնով պատվանշան կառնեի, նավերով Եվրոպա կը ղրկեի, և միլիոնավոր ոսկիներ կը քաշեի։

Վերջին օրերս շատերը հոս պատվանշան առին և շատ աժան գիներով... կարծեմ շատ առնողին տերությունը պատրաստ է հարյուրին զեղչ մը ընել... ափսո՛ս որ մեր պատվանշաններն ալ մեր արժեթուղթերուն պես հարգ չունին Եվրոպիո մեջ...

Շաբթուս արտաքին բերքն ժեզվիքներ[24] են... շոգենավներն այս ապրանքեն կը բերեն մեզի առատությամբ։

Եթե մաքսատան տնօրեն ըլլայի՝ ծանր տուրք մը կառաջարկեի ատոնց, որ մեր երկիրը չմտնեն։

Բայց այս մարդերը դրամ կուտա՞ն... ապրանքին տեսակեն հարյուրին տասը առնելու իրավունք ունիս, կըսեն, և տաս-տասնըհինգ ժեզվիք կը թողուն մաքսատուն և կը հեռանան։

Մաքսատան տնօրենությունն որո՞ւ ծախե ատոնք. թաշկինակ, գուլպա կամ գավաթ չեն, որ վաճառականներու ծախե։

Ահա այնպիսի ապրանք մը, որ ոչ կառնվի և ոչ կը ծախվի... գոնե իրենց մականունը փոխեին թշվառականները... Հիսուսյան... ի՞նչ անպատվություն Հիսուսի...

9 հուլիս

Թնդանոթ նետեցեք...

Վերջապես ազգային երեսփոխանական ժողովո բացումը տեղի պիտի ունենա հառաջիկա ուրբաթ օրը, հուլիսի 11-ին։ Բոլոր երեսփոխաններն հրավիրված են, ինչպես որ սովորություն է, ներկա գտնվիլ, ունայն խոսքեր ընել և իրենց ազգասիրական պարտքը կատարել։

Ս. պատրիարքն պիտի բանա ժողովն և բացման առթիվ պիտի խոսի հայ քաղաքականության վրա։

Ազգայիններն անհամբեր հուլիս 11-ին կսպասեն՝ պատրիարքին բերնեն ավետիս առնելու համար։

Ես ալ սպասեմ ուրեմն։

10 հուլիս

Վերջին ռուս-թուրքական պատերազմը չհրատարակված՝ Միդհատ փաշան ընդհ. ժողով գումարեց հոս և ամեն ազգի գլուխները հրավիրելով՝ իրենց հարցուց.

— Ձեզ կուտա՞ք, որ մեր կառավարության անկախության վնասեն։

— Ձեզ չենք տար, ձեզ չենք տար, պատասխանեցին իրեն։

— Ռուսիո դեմ կուզե՞ք պատերազմիլ։

— Այո, պատերազմիլ կուզենք, կուրծքեն զարնվելով մեռնիլ կուզենք, քան թե մեր անկախությունը վնասված տեսնել... Օ՜, մեր անկախության մատ չենք պզցուներ, այդ չըլլար։

— Բայց մեծ զոհողություններ պետք է, կարո՞ղ եք դիմանալ։

— Կարող ենք, անոթի կը մնանք և կը պատերազմինք, առաջ աստված։

Այս պատասխանները տվին գրեթե բոլոր ազգին գլուխներն, որք ուրիշ կերպով չէին կարող պատասխանել. կը քարկոծվեր, եթե հանդգներ մեկն ըսել չպատերազմինք։

Այս օրերս գրույց կը պտըտեր, թե նմանօրինակ ընդհ. ժողով մը պիտի գումարվի և կարծիք պիտի հարցվի եղեր, թե Հունաստանի դեմ պատերազմելո՞ւ է թե չէ։

Եթե հաղթող ելնենք, ի՞նչ պիտի շահինք.

Խնդիրը հոս է։

Եվրոպան մեզի պիտի ըսե.

«Մեծ քաջությամբ կռվեցաք և Հունաստանին հաղթեցիք, ապրիք. բայց որովհետև Հունաստանը մեծ վնաս ըրավ՝ ուստի պետք է, որ դեսպանախորհրդո որոշած տեղերեն զատ ուրիշ քանի մը մեծ քաղաքներ ալ տանք խեղճին, որ վնասը գոցվի»։

Որչափ շատ հաղթենք՝ այնչափ շատ տեղ կը կորանցնենք և միշտ պատերազմիլ կուզենք...

11 հուլիս

Ազգային երեսփոխանական ժողովը բացվեցավ։

Ամեն. ս. պատրիարքը ներկա չէր։

Ո՞վ բացավ ուրեմն ժողովը։

— Ոչ ոք... ինքնիրմե բացվեցավ։

Ս. պատրիարքն նամակ մը գրելով Իզմիրլյանի հայտնած էր թե տկարու-

թյան պատճառավ չէր կարողացած ժողովուրդն ներկա գտնվիլ, թե ատոծո ղորմութիյամբը հայկական խնդիրքեն հուսահատ չէր, թե տկարութիյան պատճառավ ամիսե մի ի վեր պատրիարքարան գնացած չէր և ասկե ետքն ալ երթալու ժամանակ չուներ և վերջապես հրաժարական տալով կը կնքեր նամակն։

Իզմիրլյան այս նամակն կարդաց, և ատյանը... գոցվեցավ դիվանի ընտրութենեն ետքը։

Հայկական խնդրեն չհուսահատիլն ամենուն ուրախութիյուն պատճառեց, բայց աստուծո ողորմութիյունը քիչ մը տրամեցուց ժողովուրդը։

12 հուլիս

Կարնո մեջ անհամաձայնութիյուն երկու առաջնորդներու մեջտեղ։

Հռովմեական ազգայիններու առաջնորդ Մելքիսեդեկ գերապայծառ կը պնդե եղեր՝ տեղվույն կառավարութիյան ժողովներու մեջ գեր. Օրմանյանե վեր նստիլ և թուղթերն անկե առաջ ստորագրել։

Գեր. Մաղաքիա վարդապետ Օրմանյան կը բողոքե և ժողովեն դուրս կելնե առանց ստորագրելու։

Եթե ես Օրմանյանի տեղ ըլլայի, երբ կը տեսնեի, որ Մելքիսեդեկ իմ տեղս նստած է՝ ես ալ կելնեի անոր կռնակը կը նստեի... Նստելու վերաբերյալ խնդիրներն լուծելու կարճ ճամբան աս է։

Վանա Պողոս վարդապետը[25] եպիսկոպոսութիյան աստիճան բարձրանալ կը փափաքի եղեր, և պատրիարքարանը Խրիմյանի կը հարցունե, թե այդ մարդն արժանի՞ է եպիսկոպոսութիյան։ Հայտնի է, որ այս վարդապետին ինչ ըլլալը քսան տարիե ի վեր ազգին հասկցուցած է Խրիմյան, և այս պատճառավ հալածված է հիշյալ վարդապետեն և անոր արբանյակներեն. ա՛րդ ի՞նչ կը նշանակե ս. պատրիարքին այս մասին Խրիմյանե տեղեկութիյուն ուղեին։

Զարմանալի՜ բան... որպես թե բոլոր եպիսկոպոս ձեռնադրվածներն արժանի լինեին եպիսկոպոսութիյան...

13 հուլիս

Ստույգ վիճակագրութիյան մը նայելով՝ Պոլսո հայերն այսօր ունին երեք հազար չորս հարյուր գինեատուն, երեք գրավաճառի խանութ, հազար երկու

հարյուր պարի դասատու, հինգ հայկաբանութիյան դասատու, երկու հազար պրոսարան, երեք թանգարան, չորս հազար ծրար խաղի թուղթ, հինգ լրագիր։

Եվ այս վիճակագրութիյունը հերիք է Պոլսո հայերու բարոյական վիճակը ցույց տալու։

Տրապիզոնեն շարունակ գորք կուգա հոս... շատ ապացույցներ ունինք հավատալու, որ մեր կառավարութիյունն Հունաստանի դեմ պիտի պատերազմի։

Լրագիր մը կը ծանուցանե, որ Գարատաղի և ալպանիացիներու մեջտեղ պզտիկ կռիվներ տեղի ունեցած են։

Ուրիշ լրագիր մ'ալ կը ծանուցանե, թե Գարատաղի և ալպանիացիներու մեջտեղ կռիվներ տեղի ունեցած չեն։

Պոլսո մեջ լրագիր մը պետք է, որուն պաշտոնն ըլլար միայն սուտ լուրերը հերքել։

14 հուլիս

Այսօր Պոլիս եկավ պ. Սըր Ռիվըրս Ուիլսն, որ ասկե առաջ Եգիպտոսի եկմտական վիճակը բարվոքելու համար Անգղիայեն պատվիրակ գնացած էր Գահիրե։

Այլ և այլ մեկնութիյուններ կը տրվին այս անձին հոս գալուն վրա։

Եթե քանի մը օրեն մեկնի՝ նորեն մեկնութիյուններ պիտի տրվին։

Խմբագիրներն իրենց լրագիրները քշելու համար այն տեսակ լուրեր մեայն կուտան, զորս ժողովուրդը մեծ հաճութիյամբ կը կարդա։

Վեց տերութիյուններն նավային ցույց մը ընել որոշած են՝ իրենց որոշումներն Բ. Դռան գործադրել տալու համար։

Բ. Դուռն այս նավային ցույցին առաջքն առնելու ճամբա մը գտնելու նպատակավ, բոլոր նախարարներն ժողով հրավիրելով որոշեց՝ Մեքկենն վեց կախարդներ բերել տալ, որպեսզի կարդան, դևերը հրավիրեն և վեց տերութիյուններու մեջ անհամաձայնութիյուն գոյացունեն։

Առայժմ դևերու տեղ մարախներ թափվեցան մայրաքաղաքիս մեջ, որոնց մեկ մասը անոթութենե մեռավ և մյուս մասն ալ սնունդ չգտնելուն պատճառավ Ասիո կողմն անցավ։

Լրագրի մը մէջ հետեւեալը կը կարդամ.

«Բ. Դուռն պատերազմական նախարարին խնդրանոք հրաման զրկած է զաւառական իշխանութիւններուն, որ յուրաքանչիւր գաւառի մէջ գտնուած ձիերուն վիճակագրութիւնը շինելով Բ. Դռան զրկեն»։

Հապա պայտելու վիճակագրութի՞ւնը։

Վերջին պատերազմին դարձող ձիերուն մեծ մասը պայտ չունէին։

Ինչ որ գուշակած էի անցեալ ամսու առաջին օրը՝ այս ամսու տասնըհինգին կատարվեցաւ։

Ըսած էի պ. Ռ. Ասլտուլլահ վաւրուռն երիտասարդի համար կամ քառատասարդի համար, թէ չպիտի կարողանա Միացեալ ընկերութեան դործադիր ժողովո մէջ ատենապետութեան պաշտոն վարել և թէ ինքն արժանավորութիւն ունի ատենապետութիւն ընել այնպիսի ժողովո մը, որու պաշտոն լինի շենքեր կառուցանել օդին մէջ։

Մարդարեութիւնս կատարվեցաւ. քառասունհինգ օր շարունակ վիճաբանելեն ետք գործադիր ժողովո անդամներն հրաժարական տվին։ Իրենց հրաժարականն ընդունվեցաւ, և ուրիշ գործադիր ժողով մը ընտրվեցաւ։

Այժմյան գործադիր ժողովը պաշտոնեութեան ձևով կազմվեցաւ։ Պ. Հովհաննես Թորոսյանի հանձնվեցաւ, որ յուր ուզած անձերեն գործադիր ժողով մը կազմե, և այս անձն ալ կազմեց զայն այն անձերեն, զորս ուզելու հարկադրված էր... Արդո հասարակութիւնն համոզվեցաւ, թէ շահախնդրութիւնն էր և է անմիաբանութեան պատճառն, և միաբանութիւնն այն ատեն յուր դրոշը պիտի պարզե, երբ գործադիր ժողովո յուրաքանչյուր անդամն ընկերութենեն շահ մը հանե յուր անձին համար, և աս ալ հավանական չէ առայժմ։

Արդ՝ ցավելով կը ծանուցանենք թէ Միացեալ ընկերութիւնն յուր համակրութիւնը կորուսած է. զայն գանողին և տիրոջը զարձնողին մեծ վարձատրութիւն խոստացված է հոս։

16 հուլիս

Թերեմանը Հաֆիֆաթ այս օրերս, ինչպես կըսե ռամիկն, ածուխ է կերած և հուր կը ժայթքե բերնեն։

Ի՞նչ իրավունքով, կըսե այս լրագիրն, Ավստրիո կառավարութիւնն թերթիս Պոսնա և Հերսեք[26] մտնելը կարգելու... միթե այս քաղաքները օսմանյան բարեխնամ կառավարութեան չե՞ն։

Զդիտենք թէ այս հարցումն որո՛ւ կուղղե. եթե ինձի ուղղած ըլլար՝ ես հետևյալ պատասխանը կուտայի.

«Բարեկամ, Ավստրիո կառավարութիւնն քանի որ առժամանակյա կերպով տեր եղած է այդ քաղաքներուն՝ առժամանակյա կերպով կարգելու քու թերթիդ հոն մտնելը։ Սա ալ մոռնալու չէ, որ քաղաքագիտութեան մէջ առժամանակյան մշտնջենավոր կը նշանակե»։

Օրենքը մեծ խստութեամբ կը գործադրվի Պարսկաստանի մէջ։

Հիշյալ կառավարութեան ներքին գործերու պաշտոնյան՝ որոշված գնեն բարձր գնով ուտելիք ծախողներուն ականջը կտրած է։ Ականջը խոսի՞։

Այս պատիժն հոս ալ կարելի էր գործադրել՝ եթե ծախողները հարյուրական ականջ ունենային։ Եթե այսպես լիներ՝ օրն անոնց յուրաքանչյուրեն տասնական ականջ կը կտրեինք, տասն օրվա մէջ կարող կը լինեինք թերևս գանոնք ուղղության հրավիրել։ Մեր ծախողներն միշտ այնչափ բարձր գիներով կը ծախեն, որ այդ հաշվով իրենց երկու ականջը կես ժամվան մէջ կը կորսվին, վերջը ի՞նչ պատիժ տալու է։

Բայց նախ և առաջ քաղաքապետութեան ականջը կտրելու է, որ ժողովրդյան սովորականեն վեր գնով հաց գնել կուտա։

Բարեկամներ, եթե այդ պատիժը անաչառաբար գործադրվի Թուրքիո մէջ՝ քչերը արժանիք պիտի ունենան ականջ կրելու։

17 հուլիս

Հայկական խնդիրն Անգլիո խորհրդարանին մէջ միշտ վիճաբանության նյութ կըլլա. թեր ու դեմ խոսողները պակաս չեն։

Վերջին գումարման մը մէջ Սըր Վ. Լոսըն հետևյալ կերպով կը հանձնարարե մեր ազգը։

«Քիչ բան գիտեմ, կըսե, այս ազգին վրա, բայց մանկութենես ի վեր լսած եմ, թէ հայերն ամենամեծ խաբեբաներ են Եվրոպիո մէջ», չգիտցվիր թէ հայե՞րը փոխադրված են Եվրոպա թէ Եվրոպան փոխադրված է Ասիո կողմը։

Սըր Վ. Լոսընի Եվրոպիո մեջը խորհրդարանին ծիծաղը կը շարժե, և Սըր Վ. Լոսըն խոսքն ետ առնելով կըսե.

«Եվրոպիո մէջ չէ. աշխարհի մէջ»։

Սըր Վ. Լոսըն մեր ազգին նկատմամբ քիչ բան գիտնալով՝ ծագրելի չէ այսպես խոսելուն համար, վասն զի ուրիշներն առանց բանի մը վրա տեղե-

կութիւն ունենալու կարծիք կը հայտնեն. օրինակի համար Մոլիեռի Ագահին[27] հետևյալ կտորին մեջ Վալերը.

«Հարբակոն.— Վալեր, դրեց դատավոր կարգեցին մեր վրա, բան՝ ուրեմն ե՞ս իրավունք ունիմ քե ապչիկս։

Վալեր.— Հայտնի է որ դո՛ւք իրավունք ունիք։

Հարբակոն.— Բայց դիտե՞ք քե ինչ է իրավունքը։

Վալեր.— Ո՛չ, բայց դուք չեք կրնար իրավունք չունենալ. իրավունքը ձեր քովն է»։

Այսպես ալ Անգղիո խորհրդարանին Վալերը կըսե հայ ազգին.— չես կրնար խաբեբա չըլլալ, քեպեռև զրեղ ճանաչելու պատիվը չունիմ։

Ես կը կարծեմ, քե այս մարդը կտավի վաճառական մ'է և մեր ազգայիններեն մեկեն վնաս տեսած է առուտուրի մեջ. ուստի կտավին վրեժը հայկական իրավունքեն կը լուծե...

18 հուլիս

Այսօր նորեն գումարվեցավ ազգային երեսփոխանական ժողովն։

Այսօր նորեն բացակա դտնվեցավ ս. պատրիարք հայրը, սակրութեյան պատճառավ։ Երեսփոխաններեն շատերը ներկա չէին իրենց... քաջառողջութեյանը պատճառավ։ Անոնք միայն ներկա էին, որ քեքե հարբուխ ունեին։

Դիվանի նորընտիր անդամները միաբերան հրաժարական տվին. ս. պատրիարքին պիտի հանձնարարեն, որ դիվանին անդամներուն երթա և ազաչե, որ իրենց պաշտոնը ազգասիրաբար կատարեն։

Ազգային ժողովո մեջ պաշտոն հանձն առնելն ալ ձևեր ունի, ինչպես տուներու մեջ խահվե կամ քեյ խմելը։

— Հրամմեցե՛ք, առե՛ք ձեր քեյը։

— Շնորհակալ եմ, ես չեմ ուզեր։

— Կաղաչեմ, ընդունեցե՛ք։

— Դուք հրամմեցեք։

— Ես ալ պիտի առնեմ։

— Եքե Դուք առնեք՝ ես ալ կընդունեմ։

Եվ քեյը վերջապես կը խմվի...

Իմ կողմես հարցապնդում մը երեսփոխանական ժողովույն.

— Ծովուն տակը չերթալու համար շատերը դդում կը կապեն իրենց քեւեռն վրա. երկինք չհամբառնալու համար քեքեներն ինչո՞ւ համար կապար չեն կապեր իրենց ոտներուն, երբ ցամաքի վրա դտնվին։

19 հուլիս

Կարո՞ղ եք խորանեն թատերարեմ ցատկել։

Պատասխան ավեք համարձակութեյուն ունի՞ք «ի մեջ տանարիս և առաջի աստվածընկալ» և այլն բանել նաբը «լա դոննա է մորիլե ֆուալ բիում ալ վենրո»[28] երգել։

Եքե դուք կարող չեք՝ Թարգմանչան գերապատիվ Անտոն վարդապետն կարող է։

Այո, այս վարդապետն Ծորշանի մեջ եկեղեցականութեյունը թողլով՝ կացցի մեջ իտալական թատերաբեմին վրա դերասանութեյուն բնել սկսած է։

Յուր տարիքին նայելով՝ պետք է որ սիրահարի դերը կատարե։

Անկեղծաբար խոսելով, ուրախ ենք, որ հիշյալ վարդապետն այս քաջութեյունն ունեցած է և ազգին մեծ ծառայութեյուն մատուցած է. երանի քե ուրիշ կղերներն ալ Թարգմանչանի օրինակին հետևեին և մտնեին այն ասպարեզին մեջ, որ իրենց սիրելի է։

Ավելի ուրախ պիտի բլլայինք՝ եքե Թարգմանչան Վարդովյանի խումբը մտներ հոս, կամ Տիգրիս Երքար և ազգային ներկայացումներ տար։

Իգական սեռին ծովու բաղանիքին մեջ.

— Տիկին, չնայի՞ս, ո՞վ է սա կինն։

— Ի՞նչպես ճանաչեմ. գլուխը ծովուն մեջն է և ոտները միայն կերևին ջուրին վրա։

— Աղեկ ա՛, չվազե՞ս ազատելու... պիտի խղդվի...

— Կես ժամեն ավելի է, որ այդպես կեցած է. և ես ալ կը կարծեի, որ յուր պզտիկ ոտները ցցունելու համար այդ դիրքով կեցած էր...

20 հուլիս

Սաստիկ տաք...

Կնիկներն էրիկներե բաժնելու չափ տաք...

Այսօր քանի մը կնաթողութեյուններ տեղի ունեցան։

21 հուլիս

Ջերմաչափն այսօր շուքի մեջ քառասունմեկերորդ աստիճան կը ցցունե։

Այս տաքութիւնն կարծես հերիք չէր, և ահա կառավարութիւնն Պայազեդի հրապարակին[29] վրա դարձյալ մեծ քանակութեամբ թղթադրամ այրեց։

Ավելի լավ չէ՞ր լիներ, որ կառավարութիւնն ձմեռվան պահեր այրվելիք թղթադրամները, որպեսզի ձմեռվան ցուրտ օրերուն մեջ խեղճ և աղքատ ժողովուրդը քիչ մը տաքնար։

Մեկ կողմեն ալ կը խորհինք, որ կառավարութիւնն մեծ շռայլութիւն մը կընե այսպես մոխիր դարձունելով յուր թղթադրամները, որոնք կրնան վառարաններու մեջ գործածվիլ։

Ես, որ տարին յոթը ոսկի կուտամ փայտի և ածուխի համար, երկու միլիոն թղթադրամի համար սիրով կը վճարեմ չորս ոսկի, և այդ բանակութեամբ թղթադրամով տարի մը ինձ կը տաքնամ, ինձ կերակուրներս կեփեմ և ինձ լաթերս լվանալ կուտամ։ Ուրիշներն ալ ծախու կառնեն ինձի պես, և կառավարութիւնն ալ շահ մը կը գոյացնե։

Փառք նախախնամության, թղթադրամներն այնչափ առատ են, որ բան տարի կրնան դոհ ընել Պոլսո ժողովուրդը...

22 հուլիս

Մեծ անիրավությո՞ւն մը...

Սիկիլիո Քաթանա քաղաքին օսմանյան դեր-հյուպատոսն տեղվույն դատական իշխանության կողմե բանտարկված է։

Ինչո՞ւ։

Վասնզի այս դեր-հյուպատոսն մասնակցած է դաւության մը, որ ատկից առաջ տեղի ունեցավ Հռոմի ազգային բանմայի մեջ։

Մեր պաշտոնյաները շատ սրդոզած են այս բանտարկության դեմ, և կը զրուցվի թե այս օրերս բողոք մը պատրաստելու վրա են, հարցնելու համար, թե օտար կառավարություն մը ի՞նչ իրավունքով կը պատժե օսմանյան կառավարության պաշտոնյաներուն մեկ հնավանդ սովորությունը։

Մենք ալ կը ձայնակցինք իրենց և կը պռոնք։

Կրոնքի և սովորության աղաւաւթյուն...

Քաղաքական պարտամուրհակ մը...

Օսմանյան բարեխնամ կառավարությունն հետևյալը ստորագրեց այսօր.

«Ստորագրյալս Իվականես քանմեկ օր ետքը պարտավոր եմ ներկայս բերողին վճարել Տուլչինին, որ Գարատաղի պիտի հանձնվի»։

— Երե՞ չվճարե՞։

— Վեց տերություններն պիտի տան և մեր տերության հաշվույն պիտի անցունեն։

Արդ, Գարատաղի խնդիրն լուծված է... Թուղթի վրա։

23 հուլիս

Հունաստանի խնդիրն ալ դյուրությամբ կը վերջանար, երե անոր ալ ուզածը չափազանց չըլլար։

Սահման գծողներն ո՛ր քաղաքին մեջ որ հույն տեսած են՝ Հունաստանի տված են դայն... երե ստոնք Իզմիր երթալու պատիվն ունենային՝ այդ քաղաքն ալ Հունաստանի պիտի տային։

Մեր կառավարությունն որոշած է մինչև վերջին շունչն ընդդիմանալ ուզված տեղերը Հունաստանի չտալու համար։ Արյունով առնված են անոնք, կըսեն Թուրք լրագիրներն, և արյունով միայն կրնան տրվիլ. մինչդեռ հույն լրագիրները կը պնդեն, որ կարմիր մելանով տրվին անոնք։

Կլատսթընի տկարությանը վրա կուրախանան տեղվույս Թուրք լրագիրները. երե հեռագիրն վաղը լուր տա, թե Կլատսթընի հիվանդությունը ծանրացավ՝ մայրաքաղաքիս տաճիկ լրագիրները խնջույք մը ընելու միտք ունին։

Հայաստանի մեջ հարստահարությունները կը շարունակվին։ Մեր կառավարությունն երեսը հոն դարձունելու ոչ ժամանակ ունի և ոչ կամք։ Իրավունք ալ ունի. այն մարդն, որուն փորը կը ճեղքեն բժիշկներն՝ սանտր չուզեր անշուշտ մորուքը սանտրելու համար... Բայց մորուքը խառնաշփոթ վիճակի մեջ է եղեր, որո՞ւհոգ. երբ բռնկի՝ այն ատեն կարևորություն կը տրվի... մորուքին։

24 հուլիս

Սըր Ռ. Լոսըն վեհանձնությամբ հետս կը կոչե այն խոսքն, որով Իշնամանած էր մեր ազգը։

Մեծ ցավ զգացած է եղեր բերնեն այդպիսի խոսք մը փախուցած ըլլալուն համար. մեր աղդը պատվավոր աղդ մ'է եղեր և յուր մեջ, ուրիշ աղդերու հետ բաղդատմամբ, գեշերը սակավաթիվ են եղեր։

Երբ կը խոստովանի մեկն, թե այս ինչ խոսքը բերնես փախած է՝ պատասխանատվութենեն կազատի. մարդս յուր կամքովն յուր բերնեն դուրս ելած խոսքերուն միայն պետք է պատասխանատու նկատվիլ։

Բնությունն երբեմն այնպիսի խոսքեր կամ ձայներ հանել կուտա մեզի, որոնք անշուշտ հաճություն չեն պատճառեր լսողներու, բայց որովհետև անոնք մեր կամքեն կախում չունին՝ մեր ալ պատասխանատվությունը հրավիրելու իրավունք չունին։

Սըր Ռ. Լոսըն դատը վաստակած է։

25 Հուլիս

Ամերիկացի բժիշկ մը, դոքտոր Թաններ, բժշկական քննություն մը ընելու համար՝ քառասուն օր անոթի մնալու որոշում աված է։

Այս բժիշկն այժմ քսանյոթ օր է, որ անոթի կը մնա։ Ամերիկայի ինչպես նաև Եվրոպայի բոլոր լրագիրներն ահագին էջեր կը գոհեն այս մարդուն համար։

Զաթալճայի ամրությունները պահպանող օսմանյան զորքերն անցյալները երեսունհինգ օր անոթի մնացած էին, և տեղական լրագիրներեն ոչ մին հուժարեցավ երկու տող գրել. իսկ հիմա, որ Ամերիկացի բժիշկ մը ասանկ փորձի մը ձեռք կը զարնե՝ աշխարհիս բոլոր լրագիրները իրենց էջերը գովեստով կը լեցունեն, մինչդեռ այդ դյուտին փառքը Զաթալճայի զորքերուն կը վերաբերի, այն զորքերուն, որ երեսունհինգ օրեն ավելի չկարենալով դիմանալ՝ ձենքերը կը թողուն, հղելությունը կիմացունեն և Օսման փաշայի անկումը կը պատճառեն։

Զորքերն ալ մեկդի դնենք և գարձյալ պիտի տեսնենք, որ այս դյուտը նոր բան մը չէ. մեր գրագետներուն ամենեն հարուստը վարժված է տասն օր անոթի մնալու։

Մարդս կամչնա ասանկ սովորական մեկ բառը իբրև դյուտ լրագիրներու մեջ անցունելու...

Այսօր նորեն գումարվեցավ ազգային երեսփոխանական Ժողովը։ Ս. պատրիարքը բացակա էր հիվանդությանը պատճառավ։

վարչական կազմակերպության ծրագիրն նկատողության առնվելով՝ քվեի դրվեցավ հետևյալ իմաստով.

«Ով որ վարչության կազմակերպությանը սահպողականությունը կը ճանաչե և հաջորդ նիստին մեջ անոր վերջնական որոշումը կուզե՝ թող ձեռքը վեր վերցունե»։

Մեկ մասը վեր առավ յուր ձեռները։

Մեկ մասն ալ հայտնեց, թե վարչական կազմակերպության սահպողականությունը կը ճանաչե, բայց հաջորդ նիստին մեջ անոր հոդված առ հոդված քննվիլը կուզե, ո՛չ թե վերջնական որոշումը։

Վերջնական որոշումն ընդունվեցավ և որոշվեցավ, որ ժողովն երկու շաբաթեն գումարվի։

Ահա խումբ մը բժիշկներ, որ հիվանդի մը քով կերթան և անոր հիվանդությանը անմիջական դարմանի պետք ըլլալն զգալեն ետքը, որոշում կուտան, որ տասնհինգ օրեն ետքը միանան և հիվանդությանը վրա խորհրդակցին...

26 Հուլիս

Սերվիան ալ զինվորական պատրաստություններ կրնե. արդյոք սա՞ ալ յուր սահմաններեն գոհ չէ։

Գիտեք, որ սահմանեն գոհ չեղողը միշտ մեզի կը վազե. քանի մը տարիե ի վեր օտար կառավարություններուն սահմանները ուղղելեն ուրիշ գործ տեսած չունինք և մինչև որ ամեն մարդ յուր սահմանեն գոհ չլինի՝ հանգիստ քնանալիք չունինք։

Բ. Դուռը հարցուց Սերվիային, թե ի՛նչ կը նշանակեն այդ պատրաստությունները։ Սերվիան պատասխանեց, թե ոչինչ կը նշանակեն։

Անցյալ անգամ ալ այս պատասխանը տված էր Սերվիան, և մեր կառավարությունն ալ այդ պատասխանով գոհ եղած էր։

28 Հուլիս

Պատերազմական նախարար Հյուսեին Հյուանի փաշան քանի մը օրեն Ալպանիա պիտի երթա Տուլչինիոն Գարատաղի հանձնելու համար։

Արդյոք Յանիան ալ Հունաստանի հանձնելու համար առաջին նախարա՞րն պիտի երթա, թե ամենքս մեկանց պիտի երթանք։

29 հուլիս

Մարդասեր մեկը չկա, որ մեզի հիսուն հազար ոսկի փոխ տա...

Բամազանի[30] *առթիվ ամսական վճարելու համար ելմտական նախարարությունը քանի մ'օրև ի վեր Զալաթիո փողոցները պատնեշավ, որ սեպտեմվրներեն հիսուն հազար ոսկվո փոխառություն մը ընե, և չհաջողեցավ։*

Կերևի որ այս Բամազանին ամսականը զալ Բամազանին արվիլ պիտի որոշվի։

30 հուլիս

Սեմաֆոր լրագիրն վեց տերություններուն ընելիք նավային ցույցը կը ծաղրե, հրատարակելով Սիմուր ծովապետին արված հրահանգներու պատճենը, զոր որպես թե անգղիական լրագիրներն քաղած էր։

Հիշյալ հրահանգներու համեմատ՝ սույն նավային ցույցը խաղաղական հանգամանք պիտի ունենա. և եթե Պ. Սիմուր լոկ բարոյական ցույցով չհաջողի Գարատաղի և Հունաստանի տրվելիք հողերը ալպանացիներու և թուրքերու ձեռքեն առնել՝ ծանր պատասխանատվություն մը պիտի հրավիրե յուր վրա։ Եթե լեռներու վրա ալպանացիներ երևին՝ զրահավորները թշնամվույն եռանը պիտի շարվին. զրահավորներու մեջ զորքերը դինիի և սիրո երդեր պիտի երգեն, գերմանական և ֆրանսական զրահավորներն իրարմե հեռու պիտի մնան, որ իրարու չզարնեն, նույնպես իտալականն և ավստրիականն ալ ամենեն հեռու. զարատաղցիներուն կամքը կատարվելուն պես՝ զրահավորները Հունաստանի ջուրերը պիտի երթան. սլ. Սիմուր խնջույքներ պիտի տա մյուս հրամանատարներուն, բայց ծախքն Անգղիո կառավարության վրա չպիտի լինի։

31 հուլիս

Դեսպաններն հայկական խնդրույն վրա միշտ կը խորհրդակցին, բայց արդյունքը դեռ հայտնի չէ։

Եվ որովհետև նավային ցույցին զորությունն լոկ բարոյական է, կատաջարկեմ որ վեց տերությունները պարապ տեղը մեծ ծախքերու չենթարկվին՝

իրենց զրահավորները Թուրքիա զրկելով. հերիք է որ այդ զրահավորներուն պատկերները բաշել տան և շրջանակի մը մեջ անցունելով զրկեն մեզի, որ Բ. Դռան մեջ պատեն մը կախենք։

1 օգոստոս

Մարախներն որ անցյալ ամիս մայրաքաղաքիս մեջ թափվեցան և ուտելու բան չը գտնելով Ասիա անցան՝ Պիլեճիկի կողմերն գացած են և բոլոր հունձերն ավերշակած են հոն։

Այդ տեղի բնակիչները հետևին ծայր դժբախտության մեջ ինկած՝ գալթելու կը պատրաստվին։

Հրաշք չե՞ք համարիր, եթե իմացունեմ ձեզ, թե այդ կողմի հայերեն այս մասին հանրագրություն մը եկած չէ պատրիարքարան հետևյալ իմաստով։

«Մարախները մեր դյուղերուն վրա հարձակեցան և մեծ վնաս տվին հունձերուն. ստացվածքի ապահովություն չկա... Հակառակ Պերլինի դաշնագրույն 61-րդ հոդվածին։ Կաղաչենք, բարեխնամ կառավարության ուշադրությունն հրավիրեցեք այս գազանաբարո և կրոնամոլ մարախներուն վրա և անոնց պատժվիլը խնդրեցե՛ք։ Զարմանալին այն է, թե այս բարբարոս մարախներն կը համարձակին տեղույս վսեմ. կուսակալին առջև հասցունել մեզ այս չարիքներն. և վսեմ. կուսակալն բոլորովին անտարբեր՝ ոստիկան մ'աղեմ չըրկեց զանոնք ձերբակալելու համար։ Զրույց կա՝ թե կուսակալին թելադրությամբն է, որ մարախներն այսպես կը հարստահարեն զմեզ։ Անհապաղ օգնություն ղրկեցեք մեզ, ապա թե ոչ պիտի փոխենք մեր կրոնը»։

Անշուշտ իրրև հրաշք, այսինքն իրրև բնականեն դուրս իրողություն մը նկատելու է այս լուրյունն, զոր կը պահեն Պիլեճիկի հայերը մարախներու նկատմամբ, երբ խորհինք մի անգամ, որ գավառացի հայն ամեն օգնություն պատրիարքարանեն կսպասե։ Եթե քյուրդ մը կամ չերքեզ մը հափշտակվի անոր շորը՝ անմիջապես կը հեռագրե պատրիարքարան, որ շոր ղրկվի իրեն. սպառնալով միանգամայն, որ կրոնքը պիտի փոխե՝ եթե յուր խնդիրը մերժվի պատրիարքարանեն։

Վա՛յ այն մարդուն կրոնքին, որ շորեն կախում ունի...

Մենք ալ կը հավանինք ընդունելու, թե գավառացի հայն ունի բազում պատճառներ, որովք անհնար կը լինի իրեն ինքզինքը պաշտպանել քյուրդի կամ չերքեզի դեմ, և այս պատճառներն ալ այնքան ծանոթ են, որ զանոնք մի առ մի հոս նշանակելն անօգուտ աշխատություն մը հանձն առնել է. սակայն ժամ է, որ գավառացի հայն այդ պատճառներուն բարձմանը աշխատի՝ որչափ որ կա-

րող է ինքն, և այն ատեն միայն դիմե պատրիարքարան՝ երբ յուր ուժն անբավական է դիմադրել վտանգին։

Ա՛րդ, շնորհավորելով Պիլեճիկի հայերուն պահած լռութիւնն՝ կը խնդրեմ որ ընդունին խորին հարգանքներուս հավաստիքն, որով մնամ և այլն։

2 օգոստոս

Հայկական խնդրույն վրայօք առնված հաջող լուրերուն վրա մայրաքաղաքիս բոլոր ազգայինները կը պատրաստվին Հայաստանի կուսակալ ըլլալու։

Ամբակում աղան, որուն ճակատին վաթսունչորս ձմեռներ անցած են, քանի մը օրե ի վեր զինվորական վարժութիւններու կը պարապի այնպիսի փափաքով և եռանդով, որ ո՛չ սենյակը մտնողները կը տեսնե, ո՛չ ալ անոնց խոսքերուն կը պատասխանե։

Կինը կարծելով թե ամուսինն խելագարված է բժիշկը կանչել կուտա։

Երկու ժամեն ետքը կուգա բժիշկն, որ ըստ բժշկական սովորութեան կը հարցունե — «ո՞վ է հիվանդը»։

Գիտեք արդեն, որ Հիպոկրատի սանները այն ատեն կը ճանաչեն հիվանդներն՝ երբ ասոնք մատով ցուցվին իրենց։ Երկու քաջառողջ մարդերու քով հիվանդ մը դիր և հարցուր բժշկին։

— Ո՞վ է հիվանդը, տեր բժիշկ։

— Հայտնի է, որ այս է, պիտի պատասխանե քեզ, ցույց տալով այն մարդն, որ երկաթի պես քաջառողջ է։

Հիվանդութիւններն ալ այն ատեն կը ճանաչեն՝ երբ հիվանդը մեռնի։ Չկա մեդյալ մը՝ որուն ի՛նչ հիվանդութենե մեռած ըլլալն չհասկցվի, ինչպես որ չկա հիվանդ մը, որուն ինչ հիվանդութենե բռնված ըլլալը հասկցվի։ Շիշմանյան խղճահար ըլլալուն պատճառավ էր, որ հրաժեշտ տվավ բժշկական արհեստին և գրկեց գրականութիւնն, որ մարդ չմեռցուներ։

Մեր խնդիրեն քիչ մը հեռացանք. մոտենանք անոր։

Բժիշկը կառաջնորդվի Ամբակում աղային սենյակը։

— Բարև, Ամբակում աղա, կըսե բժիշկը։

— Մեկ, երկու, երեք, կը պատասխանե Ամբակում աղան, որ ավելի կոթ մը բռնած՝ վարժութիւն կընե։

— Ի՞նչպես եք, Ամբակում աղա։

— Մի ձախ, մի հաջ...

— Ձեզի խոսք մը ունեի ըս...

— Հապո՞ն հառաջ, կը գոչե Ամբակում աղան և այնպիսի արագութեամբ մը կանցնի բժշկին քովեն, որ Ասկղեպիոսին աշակերտը գետին կիյնա։

Բժիշկը վար կերթա և Ամբակում աղային տիկնոջը կըսե.

— Ամուսնույդ ուղեղը վնասված է։

— Խելագարա՞ծ է։

— Գրեթե։

— Ի՞նչ կըսեք. հիմա խելքս կը թռցունեմ... ասոր մեկ ձա՞րը։

— Ճա՞րը... կապելու և Փրկիչ տանելու է։

— Ըլլալու բան չէ... գոնե ազգային երեսփոխանական ժողովը տանինք...

— Երեսփոխանական ժողովը հիմարանո՞ց է։

— Ի՞նչ դիտնամ, երեկ քրոջս աղան կըսեր, որ ազգային երեսփոխանական ժողովո մեջ խենդ ու խելառ խոսքեր կընեն։ Բայց, տեր բժիշկ, իմ ամուսինս խելագարելու պատճառ մը չուներ։

— Բանի մը վրա շատ մտածե՞ց։

— Բնավ երբեք։

— Մեծ վիշտ մը կրե՞ց։

— Ոչ։

— Խմբագրություն կընե՞։

— Ամենևին։

— Ֆրանսերենե—հայերեն ընդարձակ բառարան մը կը հրատարակե՞։

— Ոչ, ոչ, ատանկ բաներ չըներ։

— Ջափազանց ուրախություն մը զգա՞ց մոտերս։

— Գրեթե քանի մը ատենն ի վեր միշտ ուրախ էր, ամեն օր կըսեր. «Հայաստանի կուսակալ պիտի ըլլամ»։

— Խե՜ղճ մարդ։

— Խղճալի՜ ամուսինս։

Բժիշկը դեղագիր մը կը գրե, այցելության վարձը կընդունի և կը մեկնի։

Ամբակում աղան վար կուգա և կը հրամայե, որ սեղան պատրաստվի։

Ամբակում աղային ուղեղը վնասված չէ. անոր հիվանդութիւնն է՝ կուսակալության համար չափազանց սեր։

Կարծեմ ավելորդ կը լինի ըսել թե, եթե Հայաստանի ինքնօրինություն տրվի, յուրաքանչյուր գյուղին ումը հարյուր կուսակալ պիտի իյնա. ամենքս ալ կառավարող պիտի լինինք և կառավարելու համար եվրոպայեն ժողովուրդներ բերել պիտի ստիպվինք։

3 օգոստոս

Նավային ցույցի համար զրույցներն երթալով կերթան և հաստատություն կը դառնան։

Վեց տերությունները հաստատապես որոշած են զրահավորներ ղրկել՝ Գարատաղի և Հունաստանի խնդիրներու լուծումը դյուրացնելու համար։

Անտարակուսելի է այսօր, որ տերությունները Հայաստանի խնդրուն համար ալ իրենց աղդեցությունը պիտի գործադրեն. բայց չգիտեմ թե Հայաստանի համար ի՛նչ ղրկել պիտի որոշեն։ Ես չեմ կարծեր, որ Հայաստանի համար ալ զրահավոր ղրկեն, վասն զի մեծ դժվարություններ կան՝ վեց տերություններուն ղրկելիք քանի զրահավորները...

Տերությունները թո՛ղ իրենց ուզածին պես վարվին. մենք միայն աղոթելու ենք, որ համաձայնություն կարճատև չլինի ատոնց մեջ։

Բնավ չպիտի մոռնամ այն պատասխանն, զոր այսօր տվավ զավառացի հայ մը պոլսեցի հայու մը, որու կնկան հավատարմությունը կասկածելի է։

— Դուք զավառացիներդ անդղա եք, ըսավ պոլսեցին։

— Ինչո՞։

— Սիրա չունիք։

— Ո՞վ ըսավ։

— Վատ եք։

— Ո՞ւր կարդացիք։

— Ջյուրդերը ձեր վրա կը հարձակին, և դուք տղու պես կուլաք։

— Պոլսեցին միշտ այդպես կըսե՝ առանց պատճառները հարցնելու։

— Շատ լավ։ Ուրիշ կետ մը կա, ատոր ի՞նչ պիտի ըսես։

— Ո՞ր կետն է այն։

— Ձեր կիներն ուրիշները կը հափշտակեն, և դուք ձայն չեք հաներ։

— Այդ կետը Պոլսո մեջ զավառներեն ավելի կա, բարեկամ. դուն այդ կետին քով վերջակետ մը դիր և փակագծի մեջ դոցե։

Պոլսեցին պեխերը կրծել սկսավ։

4 օգոստոս

Անգղիա վերջապես կուզե Հայաստանի ճիշտ վիճակագրությունն ունենալ ի ձեռին, որպեսզի ըստ այնմ գործե։

Ջյուրդերն իմացած ըլլալով Անգղիո կառավարության այս դիտավորությունն՝ Միություն մը կազմելու վրա են յուրյանց մեջ՝ հայերը ջարդելու նպատակավ։ Եթե բրդական Միությունն հաջողի գործադրել յուր նպատակն՝ մեծամասնությունն հարկավ թյուրդերու քովը կը մնա։

Ի՞նչ կտրուկ ճամբա մեծամասնություն ունենալու համար...

Ոստիկանության նախարարը մեծ գործ տեսավ այսօր. ձերբակալել տվավ...

— Հիսարուճ ոճրագո՞րծն։

— Ո՛չ։

— Ամերիկացին սպաննո՞ղը։

— Ջէ։

Ձերբակալել տվավ տասնևչորս տարեկան թրքուհի մը։

Այս մատաղ օրիորդն ոճիր մը գործած է, թող տալով յուր մազերուն, որ երևին։

Մուհամմետի կրոնքը կարգելու կիներուն ի տես աշխարհի դնել իրենց մազերը։

Մուհամմետ շատ խստությամբ վարված է մազերու հետ, մինչդեռ մարմնո մասին սահմանած օրենքները շատ թույլ են։

Օրիորդին հայրն, որ բարձրաստիճան պինվորական մ՚է, պիտի բողոքե եղեր ոստիկանության նախարարին դեմ, որ բոլոր թրքուհիներուն մազերը ածելել կուտար՝ եթե իշխանություն ունենար, այնչափ ջերմեռանդ դարձած է Բամազանի օրերուն մեջ։

5 օգոստոս

Ազգային հաստատություններուն մեկեն պաշտոնյա մը կը ճամբվի։

— Ինչո՞ւ ճամբեցին զքեզ, բարեկա՛մ, կը հարցուներ ծառներեն մին։

— Ես ալ չգիտեմ։

— Իմացա որ գողություն մը ըրած ես պաշտոնիդ մեջ։

— Ջրպարտություն է։

— Կըսեն թե ճշմարտություն է։

— Թո՛ղ ըսեն թե ի՛նչ գողցած եմ։ Եղբայր, ամեն օր խղճիս սա հարցուը կընեմ. «բան մը գողցա՞», և խիղճս ալ սա պատասխանը կուտա. «Տեր

ողորմյա, դուն անանկ մա՞րդ ես, դուն դողություն ընելու համար ստեղծված չես, դուն բան մ՚ալ դողցած չես»։

— Թերևս խիղճդ կամչնա և երեսը չբռներ ճշմարիտն քեզ ըսելուս

— Չէ, իմ խիղճս ամչնալ չունի, ճշմարտությունն համարձակ կը խոստովանի։

— Ատո՞ւդ է ըսածդ։

— Այո՛, որու որ կուզես հարցուր, թե այս ինչ մարդուն խիղճը ճշմարտախո՞ս է, ամենքն ալ պիտի պատասխանեն, թե պատվավոր և ճշմարտախոս խիղճ մ՚է։

— Եթե այդպես է՝ խղճիդ դաղտնի ըրած ես այդ դողությունը։

— Ժը մանժ, թյու մանժ, իլ մանժ, նու մանժոն, վու մանժե, իլ մանժ...

— Այդ ի՞նչ է, Կարապետ աղա, քառասունեն հաքը նոր բանե՞ր կը հանես։

— Ի՛նչ ընեմ, Հակոբ աղա, Հայաստանի մեջ բարենորոգումներ պիտի ըլլան եղեր. թերևս մենք ալ պաշտոն մը ձեռք անցունենք...

— Ի՞նչ կը սերտես։

— «Ուտեմ» բային ֆրանսերենը կը կարդամ...

— Ֆրանսերենի ե՞րբ սկսար։

— Ժամ մը առաջ։

— Մեկեն ի մեկ այդ բայն ի՞նչպես եկար հասար։

— Առաջին դասս է այս, Հակոբ աղա, ի՞նչ ընեմ, Թուրքիո մեջ պաշտոն վարողներն ամենեն առաջ այս բայը կը սորվին։

6 օգոստոս

Կարծո երիտասարդությունն դիտավորություն ունի Կարծո մեջ մամուլ մը հաստատել և լրագիր հրատարակել։

Կը գովենք Կարծո աշխույժ և վառվռուն երիտասարդության դիտավորությունն, որուն իրանալուն համար հաջողություն կը մաղթենք մեր բոլոր սրտեն, որ շատ լայն չէ դժբախտաբար։ Կը վախնանք, որ այս երիտասարդությունն իրեն հետևողներ ունենա, բայց չենք կարծեր, որ իրեն ընթերցողներ գտնե, վասնզի մեր մեջ լրագիր կարդալն դեռ իրրև ապաշխարանք կը նկատվի, իրրև մեծ պատիժ կը նկատվի, այնպես որ եթե մեկուն առաջարկես, որ կամ շաբաթ մը բանտարկվի և կամ լրագրի մը տարեկան բաժանորդ գրվի՝ առաջինը

կընդունի և երկրորդը կը մերժե։ Ուստի երիտասարդությունն ընկերություններ կազմելով աշխատելու է, որ ընթերցասիրությունն հասի մեր ազգին մեջ ալ մտնելու... և արեև մտած է քիչ մը՝ դուրս չհլնելու...

— Տղա՛ս, դուն քննություն չունի՞ր։

— Տվի, հայրիկ։

— Պարզևաբաշխության օրը դասատուդ գիրք մը նվեր չրա՞վ քեզի։

— Ոչ, հայրիկ։

— Ի՞նչու։

— Վասնզի կազանդին օրը դասատուիս ես ալ բան չի՛ր չտվի, հայրիկ։

7 օգոստոս

Ապահին փաշան երբ Սելանիկ էր՝ առժամյա ոստիկանություն մը կազմած էր։

Այժմ Սելանիկեն լուր կուտան, որ այդ առժամյա ոստիկանութենեն քառասուն հոգի իրենց պաշտոնը թողլով՝ մշանջենավոր ավազակներու հետ միացած են։

Իրավունք չունի՞նք հավատալու, որ մայրաքաղաքիս ոստիկաններեն շատերը գողերու հետ կը գործեն։

Կեցցե՛ բարենորոգում...

Մայրաքաղաքիս Թուրք մամուլն ալպանիացիներն կը խրատե, որ Գարատաղին ընդդիմություն չընեն և իրենց ույժն Հունաստանի դեմ պահեն։

Օր պիտի գա, ուր տաճիկ լրագիրներն պիտի հորդորեն ալպանիացիներն, որ Հունաստանին ընդդիմություն չընեն և իրենց բազուկներու ղորությունն կառավարության խոսքը մտիկ ընելու համար գործածեն։

Այս է Թուրք մամուլն սովորական ընթացքը. նախ գրգռել և ապա հանդարտեցնել...

8 օգոստոս

Հարստահարություններու վրա խոսող հեռագիրներ ամեն օր կուգան պատրիարքարան կանոնավոր կերպով — արդեն այդ հեռագիրներեն զատ ամեն օր

կանոնավոր կերպով պատրիարքարան եկող չկա. պաշտոնյաներեն ոմանք կեսօրին կուգան և ոմանք բնավ չեն գար։ Այդ հեռագիրներեն մին այնչափ երկար էր, որ անոր փոխադրությանը համար առան ոսկի օսմանյան վճարված էր հեռագրատան։

Հեռագրական տեսչությունը շատ գոհ է այն հարստահարություններեն, որք տեղի կունենան Հայաստանի մեջ, վասնզի անոնց շնորհիվ հեռագրական անտուկին մեջ բավական ոսկի կը մտնե։

Եվ կարճամիտ մարդերը կուզեն, որ կառավարությունն յուր եկամուտները պակսեցունե այն պահուն՝ ուր զանոնք ավելցնելու անհրաժեշտ պետք կա։

Թող ավելցունե, բայց ինչո՞ւ պյուտճեի մեջ չնշանակեր հարստահարություններե գոյացած հասույթը։

9 օգոստոս

Մեր բարեխնամ կառավարությունն ամեն օր կաղաչե վեց տերություններն, որ Պերլինի դեսպանախորհրդո մեջ որոշված հելլենական սահմանագիծը քիչ մը բարեփոխեն.

— Կաղաչեմ, պարոն Կոշեն, կըսե վեհափառ սուլթանը, սա սահմանագիծը քիչ մը փոխեցեք։

— Անկարելի է, վեհափառ տեր։

— Սահմանագիծ մը փոխել այսչափ դժվա՞ր գործ է, ես օրը երկու նախարար կը փոխեմ։

— Դուք կարող եք, վեհափառ տեր։

— Փոխե, փոխե սա սահմանագիծն. ես ալ կերակուրեն ետքը նախարարությունը կը փոխեմ։

— Չեմ կարող, վեհափառ տեր։

— Քանի մը պատվանշան կուտամ քեզի։

— Կարելի չէ վեհափառ տեր։ Դուք գիտեք, որ Թագուհվույն կառավարությունն ո՛րքան կը սիրե ձեր երկիրը, և ո՛րքան կաշխատի անոր բարվույն համար, ուստի շնորհ ըրեք անոր խորհուրդները մտիկ ընելու։ Վեհափառ տեր, Յանիան տվեք Հունաստանի, Տուլչինիոնի Գարատաղի թողեք, թո՛ղ տվեք Նովի Պազարն Ավստրիան դրավե. այն ատեն զանձը մեր տեսչության տակը կառնենք, բայց ձայն հանելու չէ՝ երբ արևելյան Րումելիին Պուլղարիո հետ միանա։ Երբ որ գործերն այսպես կարգադրվեին՝ Ներքին գործոց նախարարությունը մենք կը վարենք. Արտաքին գործոց նախարարությունն ալ Ռուսիո կը հանձնենք, և կը տեսնեք, թե երկիրն ո՛րչափ կը բարեկորոգվի։ Ձեր վեհափառության սիրան ալ հանգիստ կը լինի և փորձանքներե խալսելու համար Դարդա-

նելը մեզի կուտաք, Ան ծովու նեղուցն ալ վարպետությամբ մը Ռուսիո գլուխը կը փաթեթե և հանդիստ սրտով, մարդու խղճով ձեր վեհափառությունը ժամակ կանցունե յուր կախարդներովը։ Այդ երկու նեղուցներն ձեր գլխուն փորձանք են, ջանացեք ուրեմն այդ փորձանքները հեռացնելու։ Մյուս տերություններն, որք իրենց բաժինը պիտի ունենան այս փորձանքներուն մեջ՝ բնավ դիտողություն չեն ըներ, և դուք ալ մատատանջութենե կազատիք։ Ինչո՞ւ կը վախնաք, վեհափառ տեր, տերություններն ո՞չ ապաքեն ձեր ամբողջությունն ապահոված են Պերլինի դաշնագրով։

Ասոնք են գրեթե տերություններուն առաջարկությունները, զորս եթե չընդունենք՝ կըսեն, մեր վրա մեծ պատասխանատվություն պիտի հրավիրենք եղեր, իսկ եթե ընդունենք՝ օսմանյան կառավարության համար նոր դարգլուխ մը պիտի բացվի եղեր։

Գեղեցի՜կ առաջարկություններ, գեղեցկադո՜ւյն խրատներ, մարմինը քառասուն կտորի բաժնել և անոր երեսունևութը կտորն առնելով՝ օսմանյան կառավարությունն $^{2}/_{40}$-ի վերածել և անոր ըսել.

Ա՛լ անհոգ եղիր, քու ամբողջությունդ երաշխավորված է. Եվրոպացին մի՛ գաղվիր, որ փրկություն գտնես։

Ո՛վ ամբողջություն...

Ո՛վ փրկություն...

10 օգոստոս

Ավստրիական դեսպանն այսօր ս. պատրիարք հոր այցելություն ընելով երկարորեն տեսակցեցավ նորին սրբազնության հետ հայկական խնդրույն վրա։ Խոսքերն արդյոք ե՞րբ գործի պիտի փոխվին, աստված իմ։

Ալպանիացիներն կը պատրաստվին դեմ դնելու նավային ցույցին, որ տեղի պիտի չունենա, երեկվան հասած հեռագրի մը նայելով։

11 օգոստոս

— Կնիկ, սա օղերդ տուր։

— Ի՞նչ պիտի ընես։

— Ինչո՞ւ կը հարցնես։

— Ինչո՞ւ չհարցնեմ։

— Պիտի ծախեմ և դքեզ հետս առնելով Հայաստան պիտի երթամ։

— Ես սրկե հունա չեմ երթար։
— Հապա ամեն օր պիտուս միսը կուտեիր, որ Հայաստան երթանը։
— Բայց չէի ըսեր, որ օղերս ծախենք ու այնպես երթանը։
— Ըսել է թե օղերդ Հայաստանեն ավելի՞ կը սիրես։
— Այդ ի՞նչ խոսք է, Հայաստանը կրնա՞մ ականջներես կախել...
Բատ իս՝ ատանկ կիներու ականջները կարելու է...

Վաճրը կը ծանուցանե այսօր, որ օսմանյան կառավարությունն չպիտի մասնակցի նավային ցույցին։

Վաճրը չհաճիր հայտնելու՝ թե որո՛ւ դեմ պիտի ըլլա նավային ցույցն, որուն մասնակցիլ չուզեր եղեր օսմանյան կառավարությունը։

12 օգոստոս

Օսմանյան կառավարությունն երկար տարիներև ի վեր հայ կը նվիրեր ազգային հիվանդանոցին. այժմ այդ նվերը դադրած ըլլալով՝ հիվանդանոցի հոգաբարձությունը, կրանեն ազգային լրագիրներն, մեծ նեղության կը կրե։

Ես կը կարծեմ, թե հիվանդանոցին հիվանդներն հոգաբարձութենեն ավելի նեղության կրելու են այս պարագային մեջ։

Կառավարությունն յուր նվերը կարող է դադրեցունել, ինչպես որ կարող է լրագիր մը դադրեցունել, անոր բանիք չունինք. բայց կառավարությունն դոնե շնորհք ըներ և Հայաստանի մեջ բյուրդերե հավաքակված հացին փոխարեն տար ազգային հիվանդանոցին։

Եթե կառավարությունն այս շնորհքը գլանա՝ հոգաբարձությունը պիտի պարտավորի Բանների նոր դատ եղանակով, այսինքն քառասուն օր ջուր տալով ապրեցուցանել կամ մեռցունել հիվանդանոցին հիվանդները։

13 օգոստոս

Ճարոնի կառավարությունն արդեյած է բազմակնությունը։

Կոստանդնուպոլսո մեջ ալ պիտի արդիլվի այդ աթաղային օրենքը, եթե առևտուրներն այսպես շարունակին։

Քրիստոնյաներու մեջ արդեն կին մ'ունենալն անգամ արդիլված է, և շատ երիտասարդներ տնտեսագիտական պատճառներու համար ամուրի կը մնան։

Անոթի զորքեր և ռազմամթերք կը ղրկվին Հունաստանի սահմաններն ինչպես նաև Կրետե։

Հունաստան ալ մեծ պատրաստություններ կը տեսնե, բայց յուր թագավորը դեռ ետ չդառնար համբորդութենե։

14 օգոստոս

Պ. Նորայր Հարուստ ազգային մը թերթ մը կը ղրկե յուր Ֆրանսերենե հայերեն բառարանն, զոր մաս առ մաս կը հրատարակե։

— Սա ի՞նչ է, կը պոռա Հարուստ ազգայինը, այս բառարանն ի՞նչ ընեմ ես. ժամանա՞կ է հիմա ատանկ չնչին բաներու համար ատակ տալ, չեմ ուզեր, ետ դարձուցեք և ըսեք իրեն, որ մեյ մ'ալ ատանկ բաներ չղրկե ինձի։ Ահա, պարոն դրագիր. քեզի ալ հատկապես կը պատվիրեմ, որ եթե իմ բացակայությանս ինձի համար դիրք կամ լրագիր բերելու ըլլան՝ չընդունիք, ապա թե ոչ կը վռնտեմ զքեզ։

Ժամ մը կանցնի, ուրիշ մը կը մտնե՝ որսի շուն բերելով հետը։

— Ինձի՞ համար բերիք այդ շունը։
— Այո՛, տե՛ր։
— Ի՞նչպես է այդ շունն, աղե՞կ է։
— Շատ աղեկ ցեղեն է, ազնվական տոհմեն է։
— Ի՞նչ կուզեք ատոր համար։
— Չորս ոսկի։
— Երեք ոսկի տամ։ Պարոն դրագիր, սա շունն առ և տուն տար։

Եվ մեր դրագետները դեռ չեն ուզեր համոզվիլ, որ մեր Հարուստներն ամեն բանի ատակ կուտան բացի լրագիրներե և գիրքերե։ Բացառություններ կան, բայց այնչափ հազվադյուտ են, որ արվեստահանդեսի մը ղրկելու համար պահած եմ զանոնք։

15 օգոստոս

Ք. Դուսն նոր պայմանաժամ կը մուրա Տուլչինիոն Գարատաղի հանձնելու համար։

— Քանի մը օր պայմանաժամ։
— Ասված ողորմի։
— Ատակ մը չունիմ, քիչ մը պայմանաժամ ողորմեցեք։

— Բարի եկար։

— Տեր աստված զձեղ փորձութիւններե աղատ պահե. անորի եմ, կտոր մը պայմանաժամ։

— Մանրուք չկա։

Տերութիւններն չեն տար Թուրքիո այդ պայմանաժամն. իրավունք ունին. վասնզի Բ. Դուռն ալ չուզեր տալ Տուլչինիոն Գարատաղին։

Կայսերական պալատին մեջ ամեն օր ժողովներ կը դումարվին խորհելու համար այն հնարքներուն վրա, որովք կարելի լինի ոչ Տուլչինիոն Գարատաղի տալ, ո՛չ Յանիան Հունաստանի, ոչ ալ բարենորոգում Հայաստանին։

Զարմանալու չէ, Թուրք կառավարությունն միշտ առնելու վարժված ըլլալով՝ միշտ կը դժկամակի երբ իրմե բան մը խնդրվի։

16 օգոստոս

Կառավարությունը հրամայեց, որ մայրաքաղաքիս արու բնակիչներուն մարդահամարը պատրաստվի։

Մե՛ծ դժվարությո՞ւն... մարդեր կան որ կերպարանքով արու են թեպետև, սակայն էգեն բնավ տարբերություն չունին. ասոնք արուներու հետ պիտի հաշվին։

Դարձյալ մարդեր կան, որ հազիվ $^1/_8$ մարդ կարժեն. եթե ասոնց յուրաքանչյուրն մեկ մարդ պիտի համրվի՝ սխալ վիճակագրություն մը կունենանք։ Ուղիղ վիճակագրություն մը շինելու համար կառաջարկեմ.

$^1/_4$ մարդ հաշվել բոլոր Թուրք խմբագիրները.

1 մարդ հաշվել հարյուր Թուրք պաշտոնյան.

1 մարդ հաշվել հարյուր քսանհինգ Թուրք սպան։

1 մարդ հաշվել վաթսուն Թուրք կուսակալ։

Այս հաշվով միայն կարելի է ուղիղ վիճակագրություն մը երևան բերել։

17 օգոստոս

Պ. Թրոթըր, որ Հայաստանեն մայրաքաղաքս վերադարձած է, հայտնած է թե Հայաստանի մեջ մարդահամար ընելն անկարելի ըլլալով՝ ինքը տուները համրելով գլուխ հանած է այդ դժվարին դործե։ Պ. Թրոթըր յուրաքանչյուր հայու տունին տասը հոգի և յուրաքանչյուր քյուրդի տունին հինգ հոգի հաշ-

վելով ունեցած է այնպիսի Թիվ մը՝ որով հայերը մեծամասնություն կը կազմեն։ Այդ Թիվն կը հաստատե նաև այն վիճակագրական տեղեկությունները, որք անցյալները պատրիարքարանեն հաղորդվեցան տերություններուն։

— Կնի՛կ, Պոլսո մարդհամարը պիտի պատրաստեն եղեր։

— Ի՞նչ ընեմ։

— Քեզի ալ պիտի գրեն հարկավ։

— Ինչո՞ւ։

— Դուն ալ մարդ չե՞ս։

— Ինչո՞ւ ուրեմն կըսեն Թե «և եղիցին երկոքյան ի մարմին մի»[32]։

— Վիճակագրության համար չէ ան, նոնոշիկս։

18 օգոստոս

Հրդեհներուն առաջքն առնելու պաշտոնով մասնաժողով մը պիտի կազմվի։

Հանձնաժողով մ՝ալ պիտի հաստատվի հրդեհները մարելու համար։

Մենք հիմա ուրիշ գործ չունինք. ամեն օր մասնաժողով, հանձնաժողով. մասնախումբ, հանձնախումբ կազմելեն զատ գործ տեսած չունինք։

Հունաստանի Թագավորն չվերադարձավ տակավին յուր երկիրը։

Եվրոպական քանի մը լրագիրներ կը ծանուցանեն, Թե պ. Կլատըսթըն խորհուրդ տված է Գեորգ Թագավորին, որ ժամ առաջ Աթենք վերադառնա։

Գեորգ Թագավորը Ռուսիա ուղևորեցավ։

Եթե Կլատըսթընի խորհուրդները միշտ այսպես կը գործադրվին Հունաստանի կողմե՝ շատ հավանական է, որ քիչ ատենեն շփոթություն մը ծագի իրարու մեջ։

19 օգոստոս

Ավստրիական կառավարությունն հայտարարեց, որ եթե Օսմանյան կառավարությունն Հունաստանի հետ պատերազմիլ սկսի՝ ինքն ալ պիտի բարեհաճի Նովի—Պազարը գրավելու։

— Ինչո՞ւ։

— Ծուր սահմանները պահպանելու համար։ Հարկավ Անգղիան ալ պիտի ուզե ուրիշ կղզի մը դրավել՝ Հնդկաստանի ճամբան ապահովելու համար։

20 օգոստոս

Անգղիո դեսպանն այսօր Գանտիլլի[33] դնաց և ս. պատրիարք հոր հետ բանակցեցավ հայկական խնդրո վրա։

Ամենայն ինչ կատարյալ է...

Նավային ցույցը տեղի պիտի ունենա։

Անգղիական, գաղղիական և իտալական զրահավորները Փալերմո նավահանգիստին մեջ համախմբված են. ռուսական զրահավորները Ռակուզա են և գերմանական զրահավոր մ՚ալ Մալթայեն ճամբա ելած է։

Անգղիական, գաղղիական, իտալական, ռուսական և գերմանական զրահավորնե՞ր...

Կեցցե՛ հինգլեզվյան նավատորմիղը։

Աղոթենք, որ այս նավատորմիղին մեջ լեզուները չխառնվին, որպեսզի կարողանան աշտարակին կիսատ մնացած շինությունն ավարտել[34]։

Ես ալ Թովմաս առաքյալի[35] պես բնական Անգղիո կառավարության կողմ մտաս չեմ խոթած, այսուամենայնիվ հիմա կը հավատամ, որ տերություններն Ալպանական Միություն կամ երրորդություն մտիկ ընելու ժամանակ չունին և որոշած են անպատճառ կարգադրել Հունաստանի, Գարատաղի և Հայաստանի խնդիրները։

Տեր աստված անսասան պահե տերություններուն համաձայնությունը, համաձայնություն՝ որուն նմանը քերականություններու մեջ իսկ խիստ քիչ կը գտնվի։

21 օգոստոս

Կայսերական զորքերն այսօր մեծ ուրախության մեջ են։

Հունիսի ամսականն այսօր վճարվեցավ իրենց։

Թուրք լրագիրներն գոհությամբ կը հրատարակեն այս լուրն և չեն կարմըրիր։

Թերևս ատոնք կը կարծեն, թե ուրիշ տերություններն իրենց զորքերուն ամսականներն չորս ամիս ետը կը վճարեն։

Դեսպաններն նոր ծրագիր մը մատուցին Բ. Դռան՝ Հայաստանի խնդրույն նկատմամբ։

Լրագիր մը կը ծանուցանե թե Իրլանտիո մեկ քաղաքին մեջ մայր աստվածածին հրաշքով երևցած է երկու հարյուր տղաներու։

Անցյալներն հոս ալ այնպիսի բան մը երևցավ, ո՛չ տղաներու, այլ մեծ Բրիտանիո դեսպան Պ. Կոշենի. սակայն քանի մը չարամիտ անձեր ըսին, թե պալատեն փախած կին մ՚էր այն, որ Թագուհույն կառավարության[36] Պոլսո դեսպանին ծունկներուն փարելով աղաչություն խնդրած է։

23 օգոստոս

Տպագրական տեսչությունը Թող կուտա Թուրք լրագիրներուն, որ ամեն Բշնամանք և զրպարտություն ընեն հայ և հույն պատրիարքներուն, իսկ բնավ Թույլ չտար, որ քրիստոնյա մամուլն Թուրք մամլույն պատասխանե քաղաքավար լեզվավ։

Օսմանլի անուն լրագիրն Հիստւսի դեմ ալ հարձակվեցավ, և տպագրական տեսչությունն լռության պահեց։

Իսկ երբ Նեոլոդոս հույն լրագիրն Թևրեմաճեր Հաֆիֆարի դեմ հույն պատրիարքարանն պաշտպանել սկսավ՝ երկու ամսվան համար դադարեցավ տպագրական տեսչության կողմանե։

Ահա մամլո վերաբերությամբ հավատարությունն, զոր կը վայելենք Թուրքիո մեջ։

23 օգոստոս

Սամսոնեն կը գրեն, թե կին մը ամուսնո տասնհինգին զավակ մը բերած է, որուն կեսը մարդ և կեսը ձուկ է եղեր։

— Կեսը կտրելով տապակելու և ուտելու էին։

Այս հրեշը ծնանելեն քանի մը ժամ ետքը մեռած է։

Այս հրեշին ծնանելուն վրա չեմ զարմանար, բայց այնչափ վաղ մեռնելուն վրա կը խորհիմ։

Ինչո՞ւ։

Անոր համար, թե ի՞նչպես կապրի ուրեմն մեր աղգային երեսփոխանական ժողովն, որուն մեկ քառորդը մարդ և երեք քառորդը թութակ է։

Լոնտրայեն առնված հեռագրի մը նայելով Սըր Չարլզ Տիլք հարցման մը պատասխանելով ըսած է.

«Անգղիական կառավարութիւնն լուր առած է, որ Քրդական Միութիւն մը կազմելու ըրույց կա, բայց ինքն անոր նպատակը չգիտեր, ոչ իսկ տեղյակ է, թե այդ գաղափարը Բ. Դռնեն կը քաջալերվի։ Իսկ եթե Միութեան նպատակն քրիստոնյաներու դեմ թշնամական լինի՝ պ. Կոշեն պետք եղած դիտողութիւններն պիտի ընե Բ. Դռան»։

Կը խնդրենք պ. Կոշենեն, որ այդ Միութեան նպատակն քրիստոնյաներու դեմ թշնամական չեղած, պետք եղած դիտողութիւններն ընե Բ. Դռան։

Պայրամին առթիվ տրվելիք ամսականները վճարելու համար կառավարութիւնն օսմանյան պանքային հիսունհինգ հազար ոսկվա փոխառութիւն մը ըրավ, կիպրոսի եկամուտներն և քանի մը գավառներուն տասանորդներն երաշխավորութիւն տալով։

Եթե վաճառական մը յուր գրադիրներուն և գործակատարներուն ամսականները վճարելու համար յուր կալվածներն երաշխավորութիւն ցույց տար՝ անմիջապես յուր վարկը կը կորսուներ և սնանկացյալներու քով կերթար կը նստեր։

25 օգոստոս

Երկու ամսվան համար դադարված Նեոլոդոս լրագրույն ի նպաստ՝ ժայրաքաղաքիս հույներն երկու ավուր մեջ հազար ոսկի հանգանակեցին. այս հանգանակութիւնն ավելի պիտի դիրնա՝ երբ ուրիշ քաղաքներու հույներն ալ ղրկեն իրենց նվերները։

Եթե մեր Թուրքիո խմբագիրները գիտնան, որ իրենց համար այսպիսի

հանգանակութիւն մը պիտի ընեն՝ շարաթը անգամ մը կը գոցվին, և կամ մեկ մ՛ալ բնավ չհրատարակվելու համար կը խափանվին։

Այս քաջալերութիւնը չկա մեր ազգին մեջ, որ խմբագիրներն ալ քիչ մը տարբեր եղանակավ խմբագրեն իրենց թերթերը։

26 օգոստոս

Գարձյալ նախարարական փոփոխութեան ըրույցներ կը գրվին լրագիրներու մեջ։

Մինչև որ մեր գլուխները չփոխվին՝ նախարարական փոփոխութիւնները չպիտի վերջանան։

Եվ որովհետև անկարելի է մեզ մեր գլուխները փոխել՝ պիտի ստիպվինք որ մը մեր գլխարկները փոխել։ Այս է հիմակվան ընթացքը, գլուխը չփոխելին՝ գլխարկը կը փոխեն, եթե չես հավատար՝ Պուլղարիա գնա և տես։

27 օգոստոս

Մայրաքաղաքիս մեջ արծաթ մեճիտիեին կեղծը կը շինեն հղեր քանի մը ընկերներ։

Այս խեղճերը ձերբակալվեցան այս օրերս, մինչդեռ պատվանշան տրվելու էր իրենց, վասնզի արծաթ մենիտիե չմնաց հրապարակի վրա. հասարակութիւնը ի՞նչ դրամ գործածե։

28 օգոստոս

Հեռագիրն այսօր բերավ մեզ համառոտութիւն ճառին, զոր Անգղիո թագուհին խոսած է խորհրդարանական նիստերուն շրջանին փակման առթիվ։

Այս ճառին մեջ թագուհին հիշելով, թե Հայաստանի հատուկ բարենորոգումներուն համար տերութիւններն իրենց դիտավորութիւններն հաղորդած են Բ. Դռան, կը հուսա որ առաջադրված նպատակին պիտի հասնին։

Ամեն անգամ որ մեր ազգային լրագիրներն այս իմաստով հոդվածներ կը հրատարակեն՝ Մանզումե լրագիրը կը պռոա. «այդ լրագիրները ստախոս են, ժողովուրդը խաբելով ստակ շահելու համար կը հրատարակեն այդպիսի հոդվածներ»։

Ժամ է արդ հարցունել Մանդուման, թե Անգղիո թագուհի՞ն ալ հայերը սին հույսերով քնացնելու և անկե ստակ քաշելու համար ըրած է այդ հայտարարությունն յուր ճառին մեջ։

Պետք է խոստովանիլ թե հայկական խնդրույն եվրոպական լրագիրներուն և մանավանդ Անգղիո խորհրդարանին մեջ մուտքն արդյունք է այն անխոնջ ջանքերու, զորս ի գործ դրած են պատրիարքը, հայ պրագհանների և Լոնդրայի ազգայինները։ Թող Մանդուման այդպես հավատա, թե հայկական խնդիրն ինքն իրմե ծագեցավ, ինքնիրմե մտավ եվրոպական լրագիրներու և Անգղիո խորհրդարանին մեջ։ Իսկ եթե իրմե զատ ուրիշ հավատացող մը գտնե՝ թող բարեհաճի զայն ցույց տալ մեզ։

29 օգոստոս

Չեմ հիշեր, Հայաստանի ո՛ր կողմը քայմաքամ մը յուր պաշտոնատեղին դնացած ժամանակը ավազակներե կողոպտվեր է։

Ավազակներն իրենց պաշտոնակիցը մերկացնելով բսած են անոր.

Մեզի դեմ միշտ զանգատներ կը դրվին Կ. Պոլիս, իսկ քեզի համար շնորհակալության նամակներ. մինչդեռ դու և մենք միևնույն արհեստը կը գործածենք տարբեր եղանակներով։

Քայմաքամը խոսք տալով, որ անոնց ալ ֆայմահամություն մը տրվելուն համար պիտի աշխատի՝ օձիքը կազատե։

30 օգոստոս

Ալպանիացիները որոշած են դիմադրություն ընել նավային ցույցին, որ այսօր կամ վաղը տեղի պիտի ունենա։

31 օգոստոս

Նավային ցույցը չգործադրվեցավ այսօր։

Առավոտ. առաջին նախաբար անվանվեցավ նախորդ առաջին նախաբար Սայիտ փաշան, որ նշանավոր է հակակրությամբը, զոր ունի մեր ազգին դեմ։

Կեսօր. ժամե ժամ նոր փոփոխություններու կսպասենք։ Սայիտ փաշան դեռ պաշտոնանկ չեղավ։

Երեկո. Սայիտ փաշան դեռ կը վարե յուր պաշտոնը։

Կը զրուցվի, թե անցյալ ամսու մեջ պ. Կոշևնի երևցած աստվածածինը Ֆերաճե հագած և երեսն ալ յաշմախով ծածկած է եղեր։

1 սեպտեմբեր

Մասիսի խմբագիրը քանի մը ժամանակե ի վեր ինքզինքը բոլորովին քահանայության տված է. ամեն անգամ, որ ձեռքս կառնեմ այս թերթը՝ մեջը ուրիշ բան չեմ գտներ, բայց միայն նշանտուք, կամ հարսնիք, կամ ննջեցյալ, և շատ անգամ ալ երեքը մեկեն։

Հարուստ մը նշանվելու պես՝ Մասիս յուր բերանը կը բանա և կսկսի այսպես խոսիլ.

«Բերկրությամբ սրտի խմացանք, որ վսեմափայլ այս ինչին ազգասեր բարեսիրտ, գթասիրտ և ազնվական որդին — Մասիսի գոյականներն իսկ կը շողոքորթե անոնց, յուրաքանչյուրին երբեմն չորս ածական տալով — Մեծապատիվ այս ինչին նազելաշուք աղջնակը նշանված է և հարսանյաց հանդեսն ալ մոտերս պիտի կատարվի։ Ավելորդ է ըսել, թե այս միությունն ո՛րչափ բերկրություն պիտի պատճառե ողջամիտ ազգայիններու, վասնզի այս միությենեն պիտի ծնանին այնպիսի զավակներ, որ Մասիսի բաժանորդ պիտի գրվին, մեծամեծ ծառայություններ պիտի մատուցանեն ազգին. այնպիսի զավակներ՝ որոնց փայլուն ապագան այսօր իսկ կարող ենք շնորհավորել»։

Իսկ երբ հարուստ մը վախճանի՝ Մասիսի խմբագիր Տեր Ուրուճյան քահանան ննջեցյալին տղուն հարցնել կուտա ուրիշի մը բերնով՝ թե պիտի շարունակե՞ Մասիսի բաժանորդագրությունն. եթե բացասական պատասխան տրվի՝ Մասիս լուռ կը մնա. իսկ եթե հաստատական՝ շուրջառը կը հագնի և կսկսի պոռալ.

«Ցավոք սրտի կը ծանուցանենք, որ մեծապատիվ այս ինչը երեկ գիշեր յուր մահկանացուն կնքեց ծաղիկ հասակին մեջ.— հարյուր քսան տարեկան—ի խոր սուգ ընկղմելով յուր ազգականներն, զրացիները բարեկամները—հապա յուր պարտատերնե՞րը.— եթե մխիթարվելու բան մը ունին՝ այն ալ սա է, որ հանգուցյալն կը թողու բարեկիրթ զավակ մը, որ — խոսք տված է Մասի-

ան բաժանորդագրությունը շարունակել — ամենուն համակրությունն առ ինքն գրաված ունի և այլն։

Երբ միշտ այսպիսի լուրերու կը հանդիպիմ Մասիսի մեջ՝ ինքն իրենս կըսեմ.

«Եթե հարուստ մը չամուսնանա կամ չվախճանի՝ Մասիսի ելմտացույցը շատ խեղճության մեջ պիտի իյնա։

Սույն դիտողությունն ընելես ետքը կը հարցունեմ ես ինձի, թե Մասիսի խմբագիրն ինչո՞ւ կնունքներն ալ չհրատարակեր և կամ վերջապես ինչո՞ւ քահանա չձեռնադրվիր...

2 սեպտեմբեր

Թրքական մամուլն կրակ ու բոց կը ժայթքե մեր ազգին մորուքին որ չբռնկիր։ Թերեմանը հաճիբաթ կեղծ նամակ մը կը հրատարակե այսօր Դանիել Պաղդասարոֆ ստորագրությամբ։ Այս Դանիելն՝ որ նույնիսկ Թերեմաներ հաճիբաթին խմբագիր Միտհադն է, կըսե, թե եթե Թուրք կառավարությունն Հայաստանի ինքնօրինությունն չտա՝ Եվրոպա պիտի տա զայն. և եթե Եվրոպան ալ չտա՝ քանի մը տարիեն Ռուսիա նավեր պիտի երևան Սև ծովու մեջ։ Հայտնի է, որ Միտհադ շինծու նամակներով քյուրդերը զրգռել կուզե հայերու դեմ. սակայն քյուրդերը պիտի զրգռվի՞ն... Արդյոք ատոնք գո՞հ են թրքական կառավարութենեն, որուն պաշտոնյաները մեկմեկ ավազակ լինելով՝ շատ անգամ կը հափշտակեն՝ ինչ որ քյուրդերը պիտի հափշտակեին...

3 սեպտեմբեր

Փոքրիկ կատակերգություն մը.

Գիտեք արդեն, որ աղջիկ-տեսի սովորությունն բոլորովին վերցված չէ մայրաքաղաքիս մեջ։ Երիտասարդներեն շատերն երբ կին մը առնել ուզեն՝ այնպես կը վարվին, ինչպես կը վարվիմ ես՝ երբ կով մը կամ ձի մը առնել ուզեմ. աղջիկն իրենց աղգականներուն աչերով կը տեսնեն և, եթե հավնին, սակարկության կսկսին, իսկ եթե չհավնին՝ ուրիշ աղջիկ մը տեսնելու կերթան։ Ժամանակավ սովորություն կա եղեր աղջիկներն բաղանիքի մեջ ալ քննել տալ, համոզվելու համար թե մարմինը թերություններ չունի։ Ա՛հ, ո՛րչափ մարմնապաշտ են մարդերն ամուսնության մեջ. ո՛վ մարդեր, դուք մարդ չպիտի ըլլաք։ Հոգվույն բաղանիքն ալ քավարանն է. բայց ոչ ոք քավարան կերթա յուր առ-

նելիք աղջկան հոգվույն թերությունները տեսնելու համար... միայն այն էրիկներն, որ ապեղ կիներ ունին՝ քավարան զրկել կուզեն իրենց կիները... Մարդերն ավելի նյութապաշտ են քան հոգեպաշտ։ Ի զուր կը պոռան ատավածբաններն, թե հոգին մեծ է քան զմարմին. այո՛, կըսեն, հոգին մեծ է քան զմարմին, բայց մարմին գեղեցիկ է քան զհոգի, և ամուսնության մեջ, կըսեն, մեզի ավելի գեղեցկություն պետք է, քան թե մեծություն։ Ո՛վ հիմարություն...

Ներեցեք, նյութես քիչ մը շեղեցա։

Տիկին Թ...-ին լուր կը տրվի, թե սեպտեմբեր երեքին յուր աղջիկը տեսնելու համար քանի մը տիկիններ աղջիկատեսի պիտի գան։

Տիկին Թ... իրար կանցնի և անմիջապես աղջիկը կը կանչե։

Աղջիկը վազելով կուգա։

— Քեզ տեսնեմ, աղջիկս, կըսե տիկին Թ... աղվորիկ մը հագվե՛, սգվե՛։

— Ի՞նչ կա, մայրիկ։

— Քանի մը հյուրեր պիտի գան այսօր. ան ոնց աղջիկը շատ մի խնդար, որ քաշել տված ակռաներուդ տեղերը չերևան։

— Մայրիկ, դուն ալ միշտ ակռաներս երեսս կը զարնես. չորս ակռա քաշելով ի՞նչ կըլլա եղեր։

— Ջէ, որդի, քունին բարվույդ համար կը խոսիմ կոր. իներուդ մեջ մեյմեկ կաղը բամբակ բխմեն, որ դեր երևաս։

— Իմին կաղմս ի՞նչ ունի որ... տձև՞ եմ...

Դուռը կը զարնեն։

— Եկան, եկան, կը պոռա մայրն և դուռը բանալու կը վազե, աղջիկն ալ հագվելու։

— Ա՞ս է տունը, կը հարցունեն հյուրերը դռան առջև։

— Աս է, աս, կը պատասխանե տիկին Թ... ներս հրամմեցեք։

— Սխալմամբ ուրիշ տուն մը չմտնենք։

— Ջէ, չէ, հոս պիտի գաք։

Հյուրերն, որք երեք տիկիններն կը բաղկանային՝ ներս կը մտնեն։

Պետք է գիտնալ, որ այս հյուրերն ընկերության մը անդամներ էին, որք տունե տուն պտտելով տիկիններն դրամական նվեր կը հավաքեին իգական սեռին դաստիարակության համար։

— Բարի եկաք, մադամներ, կըսե տիկին Թ...

— Բարի տեսանք, կը պատասխանեն երեք հյուրերն, որոնց մինն քիչ մը կը սրդոլի մադամ բառին վրա, կերևի որ դրմուազել էր։

— Ի՞նչպես եք, աղե՞կ եք։

— Փառք աստուծո. ձեզի տեսանք ավելի աղեկ եղանք։

— Ողջ եղեք, ատիկա ձեր աղնվությունն է։

— Ի՞նչպես ժամանակ կանցունեք դիշերները։

— Շիտակը, կանուխ կը պառկինք. մեծավորս լուտիլ չսիրեր, հիմակվան պրոսանքներուն ալ շատ չախորժիր։

— Աղեկ կընեք։

Աղջիկն որ աճապարանոք հագված էր՝ սենյակեն ներս կը մտնե և հյուրերու ձեռները կը թոթվե։

— Աղջիկս, ձեռք չպադնե՞ս։

— Տեր ողորմյա, այդ սովորությունը չկա հիմա, կը պատասխանեն հյուրերը։

— Ինչո՞ւ չկա, թո՛ղ տվեք որ պադնե, կաղաչեմ։

— Թող չենք տար։

— Իրավ որ կը սրդողիմ, հայրն ալ իմանա նե՝ կը բարկանա ինձի, կաղաչեմ թող տվեք, որ ամենուդ ալ ձեռները զատ-զատ պադնե. մեղա՛, բերանը չմաշիր ա՛...

— Շատ լավ։

— Մենք մեր մեծերեն ինչ տեսեր ենք նե՝ անանկ կընենք։ Ձեռքս եկածին չափ աշխատեցա, որ աղջիկս կրթիմ, ֆրանսերեն ալ սորվեցուցի. (աղջկանը դառնալով) աղջիկս, քիչ մը ֆրանսերեն խոսքեր չընե՛ս մադամներուն հետ։

Հյուրերեն մին մադամ բառին վրա կես կանգուն վեր կը ցատկե նստած տեղեն։

— Բավական ձեռագործ ալ սորվեցուցի, կը շարունակե տիկին Բ... պարել ալ դիտե, եթե կուզեք պարեցեք հետը քիչ մը։

— Թող մնա այսօր, կը պատասխանեն հյուրերեն մին և դրպանեն անդորրագիր մը կը քաշե, մատիտ մ'ալ հանելով ծոցեն։

— Եթե ուզեք՝ քիչ մը ֆրանսերեն խոսի...

— Շնորհակալ ենք, խերը տեսնեք, մենք ալ անոր ուսումնականությանը վստահելով հոս եկանք, և շատ ուրախ ենք, որ մեր հուսացածեն ավելի կրթված և պարկեշտ տեսանք զինքը։

Տիկին Բ... կուրախանա այս հայտարարության վրա, որ իրեն համար կը նշանակեր, թե խոս-կապը հետևյալ օրը պիտի ղրկվի։

— Քանի՞ դահեկան դրենք, կը հարցնե հյուրերեն մին, մատիտն և անդորրագիրն ձեռքին մեջ բռնելով։

— Քանի՞ դահեկան։

— Այո՛, ձեր կարողությանը համեմատ բան մը ըսե՛ք։

— Աստոր խոսքը հորը հետ պիտի ըլլվի։

— Հայրը ո՞ւր դանենք. դուք գիտեք հարկավ թե ինչ կրնաք տալ. ասիկա անանկ բան մ'է, որ ամսե ամիս պիտի առնվի։

— Ամսե ամիս ինչո՞ւ առնվի. ասանկ գործի մը ելնողը հարկավ առաջուց պատրաստած է յուր տալիք ստակը։ Բայց ես ալ ձեզի բան մը հարցունեմ։

— Հարցուցեք։

— Այս ստակն որու որ պիտի տանք նե՝ ան ալ գոնե դրամագլուխ մը ունի՞։

— Ի՛նչ կըսեք, տիկին, հազար ոսկիի մոտ դրամագլուխ ունի այսօր։

— Հազա՞ր ոսկի։

— Այո։

— Իմ լսածս հազիվ հարյուր ոսկի ունի եղեր։

— Սխալ է տիկինն։

— Քանի՞ տարեկան բան է աս, որ հազար ոսկի ունենա։

— Հազիվ երկու տարվան կա, տիկին։

— Ջիս կը ծաղրե՞ք կոր, մադամներ։

— Ծաղրելու ի՞նչ կա, տիկին։

— Վնաս չունի. բայց ինձի ըսին, թե քառասունի մոտ է եղեր, և մորուքին մեջ ճերմակ ալ ինկեր է։

— Ի՞նչ... մորուք... մեր ընկերությունը մորուք ալ ունի եղեր...

— Ձեր ընկերությո՞ւնը...

— Ապա դուք որո՞ւ համար կը խոսեիք։

— Մեր փեսացուին համար չէի՞ք խոսիր։

— Ներեցեք, տիկին, սխալմամբ հոս եկած ենք... Պ. Ի...յանի տունն ո՞ւր է։

Մեր քովի տունն է։

— Թողություն կընենք, մենք ընկերության մը համար դրամ հավաքելու եկած ենք այսօր։

— Դուք ալ ներեցեք, ես ալ աղջիկ-տեսի համար հյուրերու կսպասեի այսօր։

Հյուրերը կը բաժնվին տիկին Բ... և, որ պատուհանին առջևը կանցնի կը նստի յուր բոլն հյուրերը սպասելու։

4 սեպտեմբեր

Եթե Հայաստանի մեջ բարենորոգում լինի՝ նմանը չտեսնված արյունհեղություն մը տեղի պիտի ունենա հոն։ Քյուրդերը վախ չունենալով ո՛չ Ռու-

սիայեն և ո՛չ Եվրոպայեն՝ հավու պես պիտի մորթեն և պիտի ուտեն եղեր հայերը։

Այսպես կը խոսի տաճկական մամուլն, որպեսզի Եվրոպան փոխե յուր ընթացքը, զոր որոշած է բռնել արևելյան առկախ խնդիրներուն լուծմանը համար...

6 սեպտեմբեր

Նոր ղազարուհի մը[37]։

Հայ կին մը, որ ժամանակ մ՚ի վեր հիվանդ էր՝ առջի օրը թաղվելու տարված ժամանակ դագաղին մեջ կը նստի և խմելու ջուր կուզե։

Մասիս այս դեպքը հիշելով կըսե.

«Տասնիններորդ դարուս մեջ կը վայլե՞, որ կենդանի մը մեռյալ կարծըվի»։

Ես ալ կըսեմ.

«Ինչո՞ւ ուրեմն տասնիններորդ դարուս մեջ կենդանի կարծվի Մասիսն, որ մեռյալ է»։

7 սեպտեմբեր

Մաքսատան պաշտոնյաները մեծ խնամքով կը քննեն մայրաքաղաքս մտած գիրքերն, որպեսզի կառավարության քաղաքականության դպչող կետեր չպարունակեն անոնք։

Այսպես, Վիկտորյեն կամ Վենետիկեն ղրկված քերականներն ալ մեկ ծայրեն մյուս ծայրը կը կարդացվին, որ Տուլչինիոյի կամ Հունաստանի կամ Հայաստանի վրա բան մը գրված չըլլա անոնց մեջ։

Այսուհետև բառարաններն ալ խիստ քննության պիտի ենթարկվին։

8 սեպտեմբեր

Հայկական խնդիրն յուր կարգին կսպասե, որ լուծվի։ Նախ՝ Գարաստաղի խնդիրն պիտի լուծվի, ետքը Հունաստանի խնդիրն և վերջը Հայաստանինը։

Պղտիկության առակ մը կարդացած եմ՝ չդիտեմ ո՛ւր։ Այս առակն կը պատմե, թե վարժապետին մեկը տղու մը ձեռքը քերական մը տալով՝ կը հրա-

մայն անոր, որ այլ բան։ Տղան այլ չըսեր։ Վարժապետը՝ երկու շաբաթ շարունակ կաշխատի աշակերտին այլ մը բան տալու և չհաջողիր։ Երբ պատճառը կը հարցվի տղուն՝ սա պատասխանը կը տրվի, թե երբ այրն բան՝ եռանեն բենն, գիմն, դան և մինչև և. օ. ֆ բան տալ սիտի տար ինձի, ուստի անոր համար այրը չեմ բաներ, որ մյուս գիրերն ալ բանելու չստիպվիմ։

Մեր կառավարությունն ալ չուզեր Գարաստաղի խնդիրը լուծել, որպեսզի, մյուսներն ալ լուծելու չստիպվի։

Թեպետև վերոհիշյալ առակն քաղվելիք խրատը չեմ հիշեր, բայց լավ կը հիշեմ, որ վարժապետը հաստատամտությամբ մինչև և. օ. ֆ բան տված է տղուն։

Եվ կլատրոթքընը, որ այդ վարժապետեն ավելի հաստատամիտ է, ոչ թե միայն մինչև օ ֆ-ն, այլ ընթերցարան իսկ պիտի կարդացնե Թուրք կառավարության, Թուրք կառավարության շահուն համար։

9 սեպտեմբեր

Վա՜յ անոնց, որ կը հանդգնին Հայաստան բառը արտասանել...

Դատական նախարարության կողմեն ծանուցագիր մը ղրկվեցավ պատրիարքարան, խստիվ պատվիրելով ս. պատրիարքին, որ այսուհետև չգործածե Հայաստան բառը։

Բացի այս պատվերեն՝ ծանուցագիրն կարգիչն ս. պատրիարքին՝ Բ. Դռան թարիր գրել այն խնդիրներու համար, որք կրոնականին հետ բնավ վերաբերություն չունին։ Կրոնական խնդիրներու համար ս. պատրիարքը պիտի վայելե թարիր գրելու շնորհը, իսկ երբ մեր ինչքն, կյանքն ու պատիվը բռնաբարվին՝ ս. պատրիարքը լռություն պահելու է ձեղր։

Դատական նախարարությունն ծանուցագիր մ՚ալ քյուրդերուն ղրկելու է, ծանուցանելով իրենց՝ որ այսուհետև մեր ընչից, կենաց և պատվույն խնայեն և մեր կրոնքը միայն բռնաբարեն...

10 սեպտեմբեր

Քարաքաշյանի աշխարհագրությունը հրատարակվեցավ այս օրերս։

Պ. Քարաքաշյան Մուշ և Վան քաղաքները Քյուրդստանի մեջ դնել բարեհաճած է այս անգամ, մինչդեռ 1866-ի աշխարհագրությանը մեջ՝ Հայաստանի մեջ շինած էր այդ քաղաքները։

Ի՞նչ նպատակով արդյոք այդ քաղաքները Հայաստանեն Քյուրդստան փոխադրված են... ո՞ր աշխարհագրութենեն քաշած է յուր տեղեկություններն Պ. Քարաքաշյան...— Լորդ Բիկոնսֆիլդի աշխարհագրութենեն անշուշտ...

11 սեպտեմբեր

Վարչական կազմակերպության ծրագիրն քվեարկությամբ ընդունվեցավ երեսփոխանական ժողովեն, և պատրիարքին հանձնվեցավ ի գործադրություն։

Մինչև հիմա վարչական դրության վրա կը բեռցուներինք այն բոլոր սխալները, զորս կը գործեինք վարչության մեջ. տեսանենք այսուհետև ո՛վ պատասխանատու պիտի ըլլա մեր սխալ քայլերուն... արդյոք մեկ երկու տարիեն ետքը, այս նոր դրությունն ալ չպիտի՞ բամբասենք։

12 սեպտեմբեր

Ազգային նոր հանդես մ՚ալ ավելցավ։

Պ. Գ. Մսերյանի աշխատասիրությամբ Մեսեռոբ[38] անվամբ Իզմիրի մեջ ի լույս ընծայվեցավ այս հանդեսն։

Նույն բարեմաղթությունը կընենք այս հանդեսին՝ ինչ բարեմաղթություն որ կըլլան բարեկամներու՝ նոր տարվա առթիվ։

Մեսեռոբ, երջանիկ օրեր, հաջողություն, առատ բաժանորդներ և հարատևություն կը մաղթեմ քեզի։

Պ. Մսերյան, քեզի ալ լայն սիրտ և ընդարձակ քսակ կը մաղթեմ, որ կարենաս վնասու կուրծք տալ և շարունակել ինչ որ սկսած ես։

13 սեպտեմբեր

Բ. Դուռն որոշած է Տուլչինին հանձնել՝ եթե Հունաստանի և Հայաստանի խնդիրներուն համար նավային ցույց չինի։

Ես կաղոթեմ, որ Տուլչինին չհանձնվի, որպեսզի Հայաստանի համար ալ նավային ցույց մը լինի։

14 սեպտեմբեր

Բարձր Հայոց անգղիական հյուպատոս Պ. Թրոթըր խիստ բարի վկայություններ կուտա Հայաստանի հայերուն համար։

Պ. Թրոթըրի վկայությանը նայելով՝ Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներուն մեջ հայերը վարժարաններուն մեծ հոգ կը տանին, սակայն գյուղերու մեջ պետք եղածին չափ վարժարաններ չկան դեռ։ Անգղիական հյուպատոսն համոզված է, որ Հայաստանի մեջ ապագան հայերունն է, որք միշտ օգնություններ կընդունին կեղրոնեն— մայրաքաղաքեն—, մինչդեռ քյուրդերն ոչինչ ունին գովեստից արժանի։ Ժամ է, որ Միացյալ ընկերություններն և արհեստասիրաց ընկերությունն բազմապատկեն իրենց ջանքերն, Հայաստանի մեջ լույս տարածելու։

15 սեպտեմբեր

Ս. պատրիարքը պատասխանեց դատական նախարարության կողմեն առինքն ղրկված ծանուցագրույն։

Ներսես պատրիարքն կըսե, թե ինքը չէ ստեղծած Հայաստան բառն, որ կը գտնվի նույնիսկ թուրք կառավարության շինել տված աշխարհացույցներուն մեջ։

Ամենապատիվ պատրիարքն կը հայտնե հետո, թե ինքը բնավ հաճույք չզգար հարատահարություններու համար բարիր գրելով, թե կառավարությունը պարտավոր է բառնալ այդ հարատահարություններն, որպեսզի հարկ չմնար բարիր գրելու։

Եթե թուրք կառավարությունն՝ Հայաստանն և Թարիրը բառնալու տեղ հարատահարություններն բառնալու ջանար՝ ավելի մեծ ծառայություններ մատուցած կը լիներ յուր երկրին։ Սակայն մեր հավատքն այն է, որ հարատահարությունները չեն վերնար, մինչև որ չվերնան... քյուրդերը...

16 սեպտեմբեր

Արհեստասիրաց ընկերությունն Մշո ս. Առաքելոց վանուց մեջ երկրագործական վարժարան մը պիտի բանա մոտերս։

Քիչ բացառությամբ վանքերն մինչև այսօր մեկմեկ ծուլարաններ են, ուր ապրժանապատիվ միաբանները կուտեն, կը խմեն և կը պառկին, որպես թե ավետարանն ըսած լիներ իրենց գնացե՛ք այսուհետև կերե՛ք, խմեցե՛ք և պառկեցե՛ք։

Ուրախ ենք, որ Արհեստասիրաց ընկերությունն՝ այս վանքերեն մին առնելով՝ բարենպատակ գործի մը պիտի հատկացնե զայն։ Ո՛ւր էր թե վանո-

Ի՞նչ նպատակով արդյոք այդ քաղաքները Հայաստանեն Քյուրդստան փոխադրված են... ո՞ր աշխարհագրութենեն քաղած է յուր տեղեկություններն Պ. Քարաքաշյան...— Լորդ Բիկոնսֆիլդի աշխարհագրութենեն անշուշտ...

11 սեպտեմբեր

Վարչական կազմակերպության ծրագիրն քվեարկությամբ ընդունվեցավ երեսփոխանական ժողովեն, և պատրիարքին հանձնվեցավ ի գործադրություն։

Մինչև հիմա վարչական դրության վրա կը բեցոյնեինք այն բոլոր սխալները, զորս կը գործեինք վարչության մեջ. տեսնենք այսուհետև ո՛վ պատասխանատու պիտի ըլլա մեր սխալ քայլերուն... արդյոք մեկ երկու տարիեն հաքը, այս նոր դրությունն ալ չպիտի՞ բամբասենք։

12 սեպտեմբեր

Ազգային նոր հանդես մ՛ալ ավելցավ։

Պ. Գ. Մահրյանի աշխատասիրությամբ Մեսեռրա[38] անվամբ Իզմիրի մեջ ի լույս ընծայվեցավ այս հանդեսն։

Նույն բարեմաղթությունը կընենք այս հանդեսին՝ ինչ բարեմաղթություն որ կըլլան բարեկամներու՝ նոր տարվո առթիվ։

Մեսեռրա, երջանիկ օրեր, հաջողություն, առատ բաժանորդներ և հարատևություն կը մաղթեմ քեզի։

Պ. Մահրյան, քեզի ալ լայն սիրտ և ընդարձակ քսակ կը մաղթեմ, որ կարենաս վնասու կուրծք տալ և շարունակել ինչ որ սկսած ես։

13 սեպտեմբեր

Բ. Դուռն որոշած է Տուլչինին հանձնել՝ եթե Հունաստանի և Հայաստանի խնդիրներուն համար նավային ցույց չինի։

Ես կաղոթեմ, որ Տուլչինին չհանձնվի, որպեսզի Հայաստանի համար ալ նավային ցույց մը լինի։

14 սեպտեմբեր

Բարձր Հայոց անդղիական հյուպատոս Պ. Թրոթըր խիստ բարի վկայություններ կուտա Հայաստանի հայերուն համար։

Պ. Թրոթըրի վկայությանը նայելով՝ Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներուն մեջ հայերը վարժարաններուն մեծ հոգ կը տանին, սակայն գյուղերու մեջ պետք եղածին չափ վարժարաններ չկան դեռ։ Անգղիական հյուպատոսն համոզված է, որ Հայաստանի մեջ ապագան հայերունն է, որք միշտ օգնություններ կընդունին կենդրոնեն— մայրաքաղաքես—, մինչդեռ քյուրդերն ոչինչ ունին զուկեսեից արժանի։ Ժամ է, որ Միացյալ ընկերություններն և արհեստասիրաց ընկերությունն բազմապատկեն իրենց ջանքերն, Հայաստանի մեջ լույս տարածելու։

15 սեպտեմբեր

Ս. պատրիարքը պատասխանեց դատական նախարարության կողմե առինքն զրկված ծանուցագրույն։

Ներսես պատրիարքն կըսե, թե ինքը չէ ստեղծած Հայաստան բառն, որ կը գտնվի նույնիսկ թուրք կառավարության շինել տված աշխարհացույցներուն մեջ։

Ամենապատիվ պատրիարքն կը հայտնե հետո, թե ինքը բնավ հաճույք չզգար հարստահարություններու համար բարիր գրելով, թե կառավարությունը պարտավոր է բառնալ այդ հարստահարություններն, որպեսզի հարկ չմնար բարիր գրելու։

Եթե թուրք կառավարությունն՝ Հայաստանեն և Բարիրը բառնալու տեղ հարստահարություններն բառնալու ջանար՝ ավելի մեծ ծառայություններ մատուցած կը լիներ յուր երկրին։ Սակայն մեր հավատքն այն է, որ հարստահարությունները չեն վերնար, մինչև որ չվերնան... քյուրդերը...

16 սեպտեմբեր

Արհեստասիրաց ընկերությունն Մշո ս. Առաքելոց վանուց մեջ երկրագործական վարժարան մը պիտի բանա մոտերս։

Քիչ բացառությամբ վանքերն մինչև այսօր մեկմեկ ծուլարաններ են, ուր ապրժանապատիվ միաբանները կուտեն, կը խմեն և կը պառկին, որպես թե ավետարանն բան չլիներ իրենց գնացե՛ք այսուհետև կերե՛ք, խմեցե՛ք և պառկեցե՛ք։

Ուրախ ենք, որ Արհեստասիրաց ընկերությունն՝ այս վանքերեն մին առնելով՝ բարենպատակ գործի մը պիտի հատկացնե զայն։ Ո՞ւր էր թե վանո-

ինից խարհուրդն մյուս վանքերն ալ միաբաններուն ձեռքեն առներ և աշխարհականներուն վարձու տար, որպեսզի այդ վանքերեն ալ քիչ մը օգուտ բաղեր ազգը։

Միաբաններուն գալով՝ անոնց համար անկկյանոց մը շինելու է տեղ մը, որ երթան մեջը պառկին և բնավ չելնեն։ Հերիք է, այսչափ տարիներև ի վեր ազգին ծառայեցին, քիչ մ'ալ հանգիստ քնեն...

17 սեպտեմբեր

«Հեղինակին մյուս գործերը»։

Գիտե՞ք որոնք են հեղինակին մյուս գործերը։

Համրերեցեք, որ ըսեմ։

Քանի մը տասնե ի վեր սովորություն դարձած է մայրաքաղաքիս մեջ, որ տասնվեց երեսներե բաղկացյալ տետրակ մը հրատարակողն՝ տետրակին անունը տետրակին թե՛ ճակատին վրա կը գրե և թե՛ հաևեի կողմը. որով մեկ աշխատասիրություն մը երկու աշխատասիրություն եղած կըլլա։ Կարգացողը կուզե գիտնալ, թե հեղինակին մյուս գործերն ո՞րոնք են, և շուտ մը կը համոզվի թե հեղինակին մյուս գործն այն հրատարակությունն է, որը կը կարդա։

Ոմանք ալ հեղինակին մյուս գործերն ըսելով՝ հրատարակվելիք դիրքերու անուններ կը շարեն։ Ասիկա պարզապես ինքդինքը հայր անվանել է այն գավակներուն, զորս ապագային մեջ ունենալ կը կարծե կամ կը փափաքի որ։

Ալ ասկից կարող եք գուշակել, թե ո՛րչափ փառամոլ գրիչներ ունինք։

Գիրք հրատարակելն տեսակ մը մոլություն դարձած է Կ. Պոլսո մեջ։ Մին յուր բարեկամին նամակ մը կը գրե և հետևյալ օրը զայն առանձին տետրակով մը կը հրատարակե։ Ուրիշ մը տան մը մեջ նյութի մը վրա քիչ մը շատախոսություն ըրած է, հետևյալ օրը մասնավոր տետրակով մը ի լույս կընծայե յուր խոսքերը, ծանուցանելով միանգամայն, թե բարեկամներն աղաչած են գինքն, որ տպե ու հրատարակե յուր շատախոսությունը։ Եթե այս մոլությունն այսպես շարունակվի՝ քիչ ատենեն Պոլսո հայ երիտասարդներն տետրակներով պիտի խոսին իրարու հետ, որով թե՛ առատ հեղինակներ ունեցած պիտի ըլլանք և թե տպարանի պետերը ստակ պիտի վաստակին։

19 սեպտեմբեր

Անգղիո ազգ. երեսփոխանական ժողովույն անդամ պ. Ճեյմս Պրայս այսօր մեր ազգային ժողովույն ներկա գտնվեցավ։ Այցանն վերնալեն խոքը

երեսփոխաններն Զալաթիո եկեղեցվույն թաղարանին մեջ ընդունելության բրին հիշյալ ազատական երեսփոխանին, որ հայտնեց, թե ազատականներն ամեն ճիզ պիտի բաիեն Հայաստանի խնդրույն լուծմանը համար. թե հայերը մեծ բաներ պահանջելու չեն և շատանալու են Լիբանանու կամ Արևելյան Ռումելիի վարչության նման վարչությամբ մը, որ իրենց պիտի տրվի։

Ազատական երեսփոխանի մը այսպիսի հուսադրիչ խոսքերեն երեսփոխանները ուրախությամբ լցվելով՝ մեկնեցան։

Եվ սակայն Բ. Դուռն մինչև այսօր այլ չըսավ...

20 սեպտեմբեր

Տերության շահերուն վնասակար լուրեր տվող լրագիրներն պիտի խափանվին։

Այս է տպագրական տեսչության նոր պատվերը։

Տպագրական տեսչության այս պատվերը տերության շահերուն վնասակար չէ՞...

21 սեպտեմբեր

Ամեն օր նոր ծանուցագիրները կը փոխանակվին Բ. Դռան և դեսպաններու միջև։

Բ. Դռան գրածները դեսպաններուն չեն ընդունվիր, ոչ ալ դեսպաններուն գրածները Բ. Դռանն։

Դեսպանները գործերն ավելի փութով հառաջ տանելու համար լավ կընեն, եթե Բ. Դռան մեջ հաստատեն իրենց բնակություններն և արտաքին գործոց պաշտոնեին հետ առատորեն ծանուցագիրներ փոխանակեն։

Կարծենք մինչև այսօր Գարատաղի խնդրույն համար հազար ծրագիր առաջարկվեցավ և մերժվեցավ. արդյոք Հայաստանի խնդրույն համար քանի՞ հազար ծրագիր պիտի խմբագրվի։

22 սեպտեմբեր

Դուռը կը խոստանա Հայաստանի մեջ բարենորոգումները գործադրել, միայն թե երեք ամիս պայմանաժամ կը խնդրե։ Եթե երեք ամսվան մեջ այդ

բարենորոգումները չգործադրվին՝ Բ. Դուռն իրավունք կուտա տերություններուն որ դարձյալ... աղդարարություններ ընեն իրեն։

Ի՜նչ գեղեցիկ առաջարկություն։

Եթե աղդարարություններն դարձյալ օգուտ չբնեն՝ տերություններն դարձյալ իրավունք կունենան ազդարարություն ընելու։

Աղդարարություն՝ ընեն որչափ որ ուզեն, իսկ ընդունիր։

23 սեպտեմբեր

Բ. Դուռը ծրագիր մ՚ալ առաջարկած է Հայաստանի բարենորոգումներու նկատմամբ։

Սույն ծրագրույն համեմատ՝ հասույթին հարյուրին տասը տեղական պիտույքներու համար պիտի գործածվի և հարյուրին իննսունը Պոլիս պիտի ղրկվի։

Ա՞յս էր ապակեղրոնացման վրա հիմնված բարեկարգությունը... Դեսպաններն մերժած են Բ. Դռան այս ծրագիրն ալ, և Բ. Դուռն երկրորդ մը խմբագրելու վրա է։ Ընդհանրապես, կը կարծվի, թե մինչև 1881 ծրագիրներով պիտի ղբաղի Բ. Դուռը։

24 սեպտեմբեր

Գերմանիայեն պաշտոնյա մ՚ալ պիտի գա, արտաքին գործոց նախարարության խորհրդականի պաշտոն վարելու համար։

Եվմտականի համար Գերմանիայեն եկած մյուս պաշտոնյան առավոտեն մինչև երեկո Պանք Օթոմանի մեջ ռոնսոլիտներու կարոնները կը համրե, և կըսվի թե հաղիվ երկու տարվան մեջ կարող է ավարտել այս պաշտոնը... Անշուշտ մյուս դալիք պաշտոնյային ալ ծրագիրներ համրել պիտի տա Բ. Դուռը...

Փոխանակ այսպես պաշտոնյաներ բերելու Գերմանիայեն, ավելի լավ չլինի՞ր, որ մեր բոլոր գործերը Բիսմարք իշխանին հանձնենք...

28 սեպտեմբեր

Սովելոց Մասնաժողովո անդամներն մեծ անձնանվիրությամբ և զոհողությամբ կաշխատին Հայաստանի սովյալներուն վիճակն՝ ձմեռվան եղանակին մեջ ալ ապահովելու համար։

Մեծ շնորհակալության և գովեստից արժանի են հիշյալ Մասնաժողովո բոլոր անդամներն, որոնց մին թեպետև միշտ գրաբար կը գրե Մասնաժողովո հայտարարությունները։

Այս սովին գրաբար լեզուն բավական օգուտ քաղեց. եթե շատ մը մարդեր սովեն մեռան՝ մեռյալ մ՚ալ սովեն հարություն առավ գոնե, լրագիրներու մեջ բանի մը օրվան համար։

29 սեպտեմբեր

Բ. Դուռն վերջապես որոշեց Տուլչինեն Գարատաղի հանձնել և այս խընդիրն լմնցնել։

Բայց տեսնենք, որոշումը պիտի գործադրե՞. խնդրույն ամենեն կարևոր կետն ասե է։

30 սեպտեմբեր

— Հայրիկ, քերականությունն ուղիղ խոսիլ չը՞սովրեցներ։

— Այո՛, տղաս։

— Ինչո՞ւ ուրեմն լրագիրներեն ոմանք ուղիղ չեն խոսիր...

— Հայրիկ, ի՞նչ է ամուսնություն։

— Տղա՛ս, սիրո մեջ բարդ բառ մ՚է, որ երկու բառե կը բարդվի։

— Հապա սիրական ի՞նչ ըսել է...

— Դերանուն մ՚է, տղաս, որ ամուսնույն տեղ կը դրվի անհավատարիմ ամուսնության մեջ։

1 հոկտեմբեր

Թո՛ղ տվեք ինձ, պարոննե՛ր, որ այս ամսու հիշատակարանիս առաջին օրը կիներու չիղերուն նվիրեմ։

Ամեն օր կը կարդաք լրագիրներու մեջ արյունային հոդվածներ, մաղձային գրություններ. այսօր ալ իմ ջղային քանի մը տողերս կարդալ հաճեցե՛ք։

Քանի մը ժամանակե ի վեր մայրաքաղաքիս մեջ ջղային հիվանդություն մը երևան եկած է, և քիչ կնիկ կա, որ այդ ախտին ենթակա չլինի։

Դեռ անցյալ շաբաթ էր, որ փողոցի մը անցած աուենս ստիպվեցա մեկին ի մեկ կանգ առնել՝ առնան մը հետևյալ խոսքերը լսելով.

— Շո՛ւտ բրեք, ջուր բերեք։

— Կարապետ, դուն բժշկին վազե։

— Քացախը բերեք։

— Լիմոնը բերնին մեջը սեղմեցեք։

— Թորո՛ս, դեղադործին վազե։

— Մարկոս, ինչո՞ւ կայներ ես, քահանային գնա՛։

Վախենալով, որ պիտ հոն տեսնելով ժամկոչին վազցնել կուտան՝ բիչ մը հեռացա և փողոցին ծայրը սպասեցի սա գործին վախճանը տեսնելու համար։

Քանի մը վարկյաններ, երկար դլխարկով բժիշկ մը հիշյալ տունը մտավ։ Զայները դադրեցան։ Երեք վարկյան ևս անցավ, և ահա տան սպասավորն առնելով՝ ձեռքն ունենալով թուղթ մը, որ հավանականաբար բժշկին տված դեղագիրն էր։ Դեղադործության քիչ մը ծանոթություն ունենալով՝ սպասավորին մոտեցա և աղաչեցի, որ դեղագիրն տեսնեմ։ Այս ձամբով, ըսի ինքնիրենս, հիվանդին անսաը կը հասկնամ և հետաքրքրություն կը փարատեմ։ Սպասավորն հաճեցավ և թող տվավ, որ կարդամ դեղագրին մեջ... ահա կարդացածս.

«Ճերմակ դլխարկ մը,
Աջ կողմը սև փետուրներով զարդարված,
Ձախ կողմը պզտիկ թռչուն մը,
Առջևի կողմը ծաղիկ մը,
Ետևի կողմը խնձոր մը»։

(Ստորագրություն) թժ. Գ. Ք.

Կյանքիս մեջ բնավ այսպիսի դեղագիր մը կարդացած չըլլալով՝ հետաքրքրություն փարատելու տեղ ավելցավ։ Հետաքրքրություն իրավունք ուներ ավելնալու, վասնզի դլխարկ մը, մանավանդ այդ տեսակ դլխարկ մը, որ պարտեզ մը բնավ տարբերություն չունի, ո՛չ դեղահատի պես կը կլլվեր, ոչ վերեն կը խմվեր և ոչ վարեն, ուստի սպասեցի բժշկին, որ դուրս ելնելուն պես՝ մոտեցա իրեն և ներումն խնդրելով քաղաքավարությամբ հարցուցի.

— Արդյոք կրնա՞մ հարցունել, թե ո՛վ էր հիվանդը։

— Քսանամյա տիկին մը։

— Վտանգավո՞ր է հիվանդությունը։

— Ո՛չ... չնչին բան մը... ջղային տկարություն մը... արյունային զորություն մը... սանկ...

— Դեղ մը տվի՞ր։

— Այո՛... Բայց ներեցեք, ավելի երկար չեմ կարող խոսիլ, վասնզի հիվանդներ ունիմ նայելու, ըսավ և մեկնեցավ բժիշկը։

Նույն իրիկունը գործը կատուգեմ և կիմանամ, որ այդ հիվանդ կինն օր մը առաջ յուր ամուսինեն դլխարկ կուզե և երբ կը տեսնե, որ ուզածը չէ առնված՝ կորոշե, որ ջղային հիվանդություն ունենա։

Քանի մը օր առաջ, ուրիշ կին մ'ալ մազ մնաց, որ պիտի մեռներ, եթե բժիշկը ժամանակին չդար։ Այս հիվանդուհին ալ պարահանդես մը հրավիրված էր, բայց պարահանդեսի շրջազդեստ չունենալով՝ յուր էրիկեն ուզած էր զայն։ Էրիկը ժամանակ չուներ, (այսինքն՝ դրամ չուներ, վասնզի անգործ ըլլալով՝ շատ ժամանակ ուներ) յուր կնկան խնդիրքը կատարելու։ Կինն ամոթ կը համարեր սովորական շրջազդեստով պարահանդես երթալն և իրավունք ալ ուներ, վասնզի շատ անբաղաքավար է, խավարյալ է այն կինն, որ պարահանդես կերթա և յուր թևերն ու կուրծքը ցույց չտար արդո հասարակության։ Եթե կիներն երեսփոխանական ժողով մ'ունենային՝ սովորական հագուստով պարահանդես գացող կիներուն պարսավանաց քվե կուտային. եթե նախարարություն մ'ունենային՝ նախարարութենն վար կառնեին այդ կուրծքը և թևերը ծածկված կիներն, անվստահության քվե տալով անոնց և իրեն վնասակար քաղաքականության հետևող ամբաստանելով զանոնք։

Արդ, այս կինն կորոշե, որ ջղային հիվանդություն ունենա. յուր որոշումը կը գործադրե, բժիշկը կուգա և դեղագրին մեջ պարահանդեսի շրջազդեստ մը գրելով կը մեկնի։

Ահա, բարեկամներ, կիներու ջղային հիվանդությունը, զոր բուժելու համար կամ կոշիկ, կամ գլխարկ, կամ շրջազդեստ և կամ վերջապես հագուստ մը պետք է։ Կրնայի բյուրավոր դեպքեր պատմել այս հիվանդության վերաբերյալ, բայց գլխու ցավ չպատճառելու համար այս չափով կը շատանամ։

Ե՛րբ պիտի հրաժարիք այս պճնասիրությենն, ո՛վ կիներ։ Ատված, կըսե Ս. Գիրքը, կինը մարդու կողեն հաննց, այո՛, բայց նորաձևությունն ալ զայն մարդուն գլուխը դրավ։

2 հոկտեմբեր

Միայն կիները չեն, որ միշտ նոր ձևով հագվիլ կուզեն. հրապարակի վրա ալ կը գտնվին քննադատներ, որ նոր ձևով խոսիլ կուզեն։

Կը ներկայացնեմ ձեղ պ. Գրասեր Առումն[29], որ Մասիսի մեջ նոր կամ հին հրատարակություններ քննադատելու պաշտոն կը վարե։ Ճաշակը կիրք է, և քննադատի մը հարկ եղած դրամագլուխն ունի, բայց շատ անգամ գիրք մը քննադատած միջոցին կսկսի յուր ցավերը մեզի պատմել։ Երբեմն ալ ինքը

խոսած աեեն՝ Լիբբեն ալ խոսքի մեջ կը նեռվի։ Սա խոսքը շմնցուցած՝ վիքտոր Հյուկո, Վոլթեռ, Լամարթին և ուրիշ հարյուրավոր հեղինակներ կուգան, խոսքին մեջ կը խառնվին, այնպես որ ընթերցողն կատիպվի ըսել.

— Կա՛մ ամենքդ ալ լռեցեք, կամ մեկիկ մեկիկ խոսեցե՛ք, որ հասկնանք։

Քանի՜-քանի անգամներ ըսած եմ պ. Գրասեր Աստմին. «Պ. Աստմ, թող տուր սա մարդերուն օձիքն և դու խոսելիքդ ըսե»։

Օրինակի համար, ես կըսեմ.

«Արշալույսին արթնցա, հագուստներս հագա և քիչ մը հաց կերա»։

Տուր այս տողը պ. Աստմին և հետևյալ օրը քեզի պիտի ըսե.

«Արթնցա արշալույսին, զոր վարդամատն կանվանեն դասականք, և հագա հագուստներս, որք ածևությունն ծածկելու միայն ծառայելու են, կըսե ժան-ժաք Ռուսո, և կերա քիչ մը հաց, ինպետև Ավետարանը կըսե, թե «Ոչ միայն հացիվ կեցցե մարդ, այլ բանիվ Տյառն»։

Ինչո՞ւ համար մարին ուղղությանը դեմ ապստամբիլ և ընթերցողներդ չարշարել, օ՛ Աստմս, շիտակ ճամբադ գնա, ի՞նչ հարկ կա ամեն քայլափոխիդ մեյ-մեկ հեղինակի դուռն ալ առնելու։

3 հոկտեմբեր

Լրագրի մը մեջ կարդացի հետևյալ տողերը.

«Եթե կղերին թերությունները գրել հարկ ըլլա՝ հատորներ կը լինին»։

Իրավունք տվի այս մարդուն. ես ալ փորձած եմ, որ եթե կղերին առավելություններն գրել հարկ ըլլա՝ երկու տող չեմ կրնար լեցունել։

Մայրաքաղաքիս մեջ գտնվող վարդապետներն, որք միշտ հայրենիք, հայրենիք կը պոռան՝ հիվանդություն կունենան, երբ Հայաստանի մեկ գավառեն առաջնորդ ընտրվին։

Կը հրաժարվիմ հակառև հանուն զանոնք հոս հիշել։

Աստնք միշտ հոս մնալ կուզեն. վոսփորին երկու եղերքուն վրա կը փափաքին ծառայել Հայաստանին։

Ափսո՛ս, քիչ հայ կղեր ունինք, որ Նոսրալժի ունենա...

4 հոկտեմբեր

Վաճառականի մը պարկերուն մեջեն հակ մը Մշակ լրագիր գտնված և մաքսատունեն արդիլված է, որովհետև Օսմ. կառավարության բարենորոգումներուն վրա կծու հոդվածներ կը պարունակե եղեր։

Հոս մտնել ուզող լրագիրները բարենորոգման վրա խոսելու չեն, վասնզի շատ դժվար է Թուրքիայի մեջ բարենորոգում մուծանելը. մաքսատունեն անմիջապես կարդիլվի իբրև վնասակար ապրանք։

5 հոկտեմբեր

Ազգային ընկերություններն, առանց բացառության, աշխուժիվ և եռանդմամբ կը գործեն։

Միացյալ ընկերությունն, Արհեստասիրաց ընկերությունը, Ազգանվեր Հայուհյաց[40] և Դպրոցասեր Հայուհյաց[41] և վերջապես բոլոր ընկերություններն իրարու հետ կը մրցին։

Այս ընկերություններեն մեկ քանին նվիրատոմսեր ևս հանած ըլլալով, բայց ժանորդագրն զատ նվեր ալ կը հավաքե ժողովրդեն, որ յուր լման չզլանար ազգօգուտ ձեռնարկություններու։

Ցավալի է սակայն, որ ժողովուրդն ընթերցասիրության մասին այնչափ եռանդ ցույց չտար... Պ. Նորայր, որ անհոգդոգդ հաստատամտությամբ կը շարունակե յուր բառարանին հրատարակությունը, այնչափ նեղություն չէր քաշեր, եթե նվիրատոմսեր հաներ կամ եկեղեցվո մեջ դանձանակ պտտցուներ ի նպաստ յուր բառարանին։

Կամչնանք խոստովանելու, բայց պետք է ըսել թե, որ եթե Վենետիկի կամ Վիեննայի միաբանությունները չլինեին՝ ազգն այսօր ոչ թե գաղղիներն—հայերեն, այլ միայն հայերեն մ'իսկ պիտի չունենար...

Կեցցե՜ սահմանադրություն...

6 հոկտեմբեր

Հայկական խնդիրն դեռ կսպասե, որ Գարատաղի և Հունաստանի խնդիրները լուծվին, որպեսզի կարգն իրեն գա։

Սույն խնդիրները գորդյան հանգույց[42] դարձած ըլլալով՝ կը կարծվի թե դանակը միայն պիտի կրնա զանոնք լուծել։

Վեց տերություններուն ղրկած նավատորմիղն մինչև այսօր օգուտ մը չունեցավ... Տուլչինիոն դեռ Գարատաղի չհանձնվեցավ, թեպետ և Թուրք լրագիրներն ամեն օր կը պոռան, թե քանի մ'օրեն Տուլչինիոն կը հանձնվի։

Ո՞վ չգիտեր, թե Թուրքերուն մեկ օրը ամիս մ'է, ամիսը տարի և տարին՝ դար։ Երբ Թուրքիան երեք տարի պայմանաժամ խնդրն բարենորոգման հա-

մար՝ երեք դարու մեջ հաղիվ կրնա բարենորոգման օգտակար ըլլալուն համոզվիլ։

7 հոկտեմբեր

Քյուրդերուն պարսից հողը մտնելը մտատանջություն կը պատճառե մեր աղգայիններուն, որք կը վախնան, թե քյուրդերն երբ պարսից սահմաններեն հալածվին՝ չարիք չգործեն դարձյալ Հայաստանի ժողովրդյան վրա։

Արդեն լուր կուտան, թե պարսից հողին վրա բավական հայեր ջարդված են քյուրդերե։

8 հոկտեմբեր

Թուրք կառավարությունն Լուսինյան վեցերորդ Լևոն թագավորին լուսանկար պատկերներն ժողվել տվավ հայ դրավաճառներու խանութներեն։

Կըսվի թե զանոնք հրացանի պիտի բռնել տա...

Բ. Դուռն յուր խորին քաղաքագիտությամբը համոզված է, թե այդ պատկերներն են հայկական խնդիրն հուզողները։

9 հոկտեմբեր

Թուրք լրագիրներն պարծանոք կը հրատարակեն, թե Պայրամի առթիվ պաշտոնյաներուն ամսական պիտի տրվի։

Մարդս ինքնիրեն հարցունելու կսիրվի, թե երե ատոնք Պայրամ չունենային՝ պաշտոնյաները բնավ ամսական չպիտի՞ առնեին...

Ցավալին այն է, որ տարին մեկ-երկու Պայրամ ունին. մյուս ամիսներն ի՞նչ կուտեն պաշտոնյաները։

— Կաշա՞ռք... մանավանդ Հայաստանի մեջ...

10 հոկտեմբեր

Սովը նորեն սկսավ Հայաստանի մեջ երևիլ։

Սովելոց մասնաժողովն այս մասին տխուր լուրեր հրատարակելով՝ աղգային օգնությունը կը խնդրե։

Դժբախտաբար մեր շատ մը հարուստ աղգայիններուն սրտին մեջ ալ գթություն սակ կա. և երբ այս երկու սակերը իրարու հանդիպին՝ հետևանքը գուշակելը շատ դյուրին է։

Այն հարուստներն, որք կարող են սովյալներուն հօգուտ երկու հազար ոսկի տալ՝ հաղիվ տասը կամ քսան ոսկի կուտան։ Կերևի թե ատոնք միջին աստիճանի մարդկանն շատ չեն ախորժիր և անոնց վերնալը կը փափաքին աշխարհիս վրայեն, որպեսզի իրենք միայն մնան և հանդիստ պտտին։ Ուրիշ ի՞նչ կերպով մեկնելու է այս տեսակ հարուստներուն անհոգությունը...

Հանկարծահաս դժբախտություններն անմիջական օգնություններու կը կարոտին, և ատ ալ հարուստներու գործն և պարտքն է. ժողովուրդն չկրնար բսել սովյալներուն. սպասեցե՛ք, մի՛ մեռնիք, մինչև որ մենք մեր մեջ դրամ հավաքենք և ձեզի ղրկենք։

Այս ճշմարտության չեն ուզեր համոզվիլ մեր հարուստներեն ոմանք։

11 հոկտեմբեր

Այսօր սրբազան պատրիարքին անվան առնախմբություն ըլլալով՝ նորին սրբազնությունը բազմաթիվ այցելություններ ընդունեց պատրիարքարան։ Վարչության անդամները, երեսփոխանները, շատ մը քահանաներ, վարդապետներ, եպիսկոպոսներ փութացին այցելություն տալ նորին սրբազնության, որ թեպետև տակաւ՝ ամենքն ընդունեց և երեկոյին ուշ ատեն հաղիվ կրցավ պատրիարքարանեն ելնել։

12 հոկտեմբեր

Լրագրի մը մեջ կը կարդամ.

«Խորեն եպիսկոպոսը[43] հանքային ջուրերը գնացեր է յուր առողջությունը դարմանելու համար»։

Առողջությունեն վնա՞ս տեսած է արդյոք, որ զայն դարմանելու համար հանքային ջուրերը գնացած է։

Գիտեինք որ առողջություն ձեռք բերելու համար հանքային ջուրեր կերթան, բայց զայն դարմանելու համար ջուրեր երթալն առաջին անգամն է, որ կը լսեմ։

13 հոկտեմբեր

Արմաշու վանքին վանահայրը հիշյալ վանքին մեջ երկրագործական վարժարան մը հիմնել կը փափաքի։

Կը շնորհավորենք գերապատիվ վանահոր այս փափաքն և անոր իրագործման համար արդեն երկու մոմ վառեցինք այսօր։

Նորին գերապատվությունը շատ փափաքներ ուներ ժամանակավ հիշյալ վանքին վրա, որ վերջապես կործանման վիճակին հասավ։ Կը փափաքինք, որ այս անգամ ալ երկրագործական վարժարան բանալու փափաքով ախորժ չվերածե զայն։

14 հոկտեմբեր

Անտոն վարդապետ Թարգմանյան, որ Հռոմեական եկեղեցիեն լուսավորչական եկեղեցին ցատկած էր մեծ. տոքտոր Շիշմանյանի հորդորանոքն, և որ վերջերս նորեն լուսավորչի եկեղեցիեն Հռոմեական եկեղեցին անցած էր, և որ հայտնի չէ թե քանի մը օրեն ո՛ր կրոնքը պիտի ընդունի, նամակ մը հրատարակելով կը հերքե այն լուրը՝ թե դերասանություն ընել սկսած է։ Միայն թե Բրանսիլվանիո մեջ գտնվելով՝ այն տեղի սովորության համեմատ մորուքն ածիլած է եղեր, և մորուքը պատճառ տված է եղեր լուր վրա հրատարակված անտեղի զրույցներուն։

Ուրախ ենք, որ Անտոն վարդապետ յուր մորուքն ածիլած է. եթե հոս գտնվեր՝ պատրիարքարանն պիտի կատարեր այդ մորուքին արարողությունը։

15 հոկտեմբեր

Դեսպանի մը հորաքույրը մեր եկեղեցվո արարողության շատ հավնած լինելով՝ խնդրած է, որ օր մը ներկա գտնվի։ Լրագիրներեն ոմանք այս լուրը հրատարակելով կը ծանուցանեն, թե ս. պատրիարքն օր մը Բերայի եկեղեցվույն մեջ հատկապես պատարագ պիտի մատուցանե։

Մենք հավատք չենք ընծայեր այս լուրին։ Թատերական ներկայացման համար մեկը կարող է ըսել. «այս-ինչ խաղը շատ սիրեցի, անգամ մ'ալ ներկայացուցեք որ տեսնեմ». բայց եկեղեցական արարողության համար չենք կարծեր, որ ասանկ առաջարկություն մը եղած լինի։

16 հոկտեմբեր

Ամսյա նոր հանդես մ'ալ հրատարակվիլ սկսավ Վայելք[44] անունով և պ. Գալենտերյանի տնօրինությամբ։

Այս հանդեսը հատկապես գեղեցիկ սեռին համար կը հրատարակվի և այդ սեռին վերաբերյալ հոդուստներն ձևելու արհեստը կը սորվեցունե։

Առաջին թիվը տեսնելու և աչքե անցնելու պատիվն ունեցանք, բայց մենք բան մը չկրցինք հասկնալ. եթե մինչև ամսու դլուխ բան մը հասկնամք՝ կիմացունեմք։

17 հոկտեմբեր

Երեսփոխանական ժողովը սրբազան պատրիարքին տղերք մը ուղեց իպատասխանի այն ճառին, զոր նորին սրբազնությունն երեսփոխանական ժողովի բացման առթիվ ղրկած էր հիշյալ ժողովին։

Երեսփ. ժողովն կը հայտնե, թե հայկական խնդրույն համար վստահ է, թե՛ աստուծո ողորմությանը, թե՛ կառավարության արդարասիրությանը և թե՛ ս. պատրիարքին հայրենասիրությանը։ Ուղերձը կը վերջանա դարձյալ ս. պատրիարքին հանձնելով հայկական խնդրույն շարունակությունը։

Ուղերձին լեզուն ես այնպես հասկցա, որ երեսփ. ժողովն ավելի ս. պատրիարքին հայրենասիրությանը վստահ է, քան թե... քան թե...: կառավարության արդարասիրությանը... ըսենք լմննա։

18 հոկտեմբեր

Բնավ դասագիրք մ'այնչափ քննադատության նյութ եղած չէր, որչափ որ կըլլա Եղիշե վարդապետ Դուրյանի հրատարակած «Ընթացք ի դրոց քարբառը»։

Երկու ամիս է, որ մեկ կողմեն ամեն օր սխալներ կը գտնեն այդ դասագրքին մեջ, և մյուս կողմեն արժ. վարդապետը յուր գրքեն սխալ քաղողներուն սխալները կը գտնե։ Որչափ ալ հայր Եղիշե համոզվիլ չուզե և ուզած կերպով մեկնե քերականական կանոնները՝ հայտնի է թե յուր դասագիրքը ունի սխալներ և թերություններ։ Սակայն մենք յուր ընդդիմախոսներուն պես չենք ուզեր յուր դասագրքին պատիվը կոտրել և զայն բոլորովին անօգուտ համարել. յուր դասագիրքն ամեն դպրոցներու մեջ կրնա աշակերտներուն տրվիլ իբրև վար-

ժուքյան պիրք. և ուսանողները բերականության կանոններուն համեմատ անոր մեջ դանված սխալները կուղղեն։ Արդեն բերականության շատ հեղինակներ այս գրութեան կը հետևին, դիտմամբ սխալ կը գրեն, որպեսզի աշակերտներն կանոններուն համաձայն զանոնք ուղղեն։ Հայր Նղիշեի դասագիրքը մեծ հարմարութեան ունի այս մասին... Իրար անցնելու ի՞նչ կա։

Աշխատելու հաճեմ վայելչեն բան մը հատկնալ, բայց կարելի չէ. նեղ չուր հանդեսին բառարանն ալ մեկտեղ հրատարակած բլլար՝ այսչափ դժվարութիւն չէի քաշեր։

19 հոկտեմբեր

Ս. Երուսաղեմի վանուց մեկ նոր կանոնագիրը կը հրատարակեն ապգային լրագիրները։

Այս կանոնը վսեմ. Ստեփան փաշա Ալանեյան խմբագրած էր, երբ հիշյալ վանքին հաշիվները քննելու համար քննիչ ղրկված է Երուսաղեմ։

Նորին վեհութիւնը երկու հարյուր ոսկի առավ ի վարձատրութիւն յուր ըրած քննութեան, որուն արդյունքը դեռ ոչ ոք գիտե։

Ահա վանք մը, որ երեսուն հազար ոսկվո պարտք կը դիզե, և մենք իրեն կանոն կը շինենք, առանց հարցնելու, թե ի՞նչպես գոյացավ այդ պարտքը. Երուսաղեմի պատրիարքն է պատասխանատուն թե միաբանութիւնը. ի՞նչ Լրաշխավորութիւն կա, որ ուրիշ անգամ վերստին պարտական չդիտե մնա այդ վանքը. կանոնի չգոյութեա՞ն պատճառով գոյացավ այդ ճարտասանարիչ պարտքը. ո՞վ էր պատճառ միաբանական ուխտին կանոն չունենալուն։ Առանց այս հարցումներուն դոհացուցիչ պատասխաններն առնելու՝ խեղճ ժողովրդյան դիմել և ատակ ուզելն ուրիշ բան չնշանակեր, եթե ոչ հաստատել սա ճշմարտութիւնը, թե կրոնավորները վանքերու մեջ պիտի նստին, պիտի ուտեն, պիտի խմեն, պիտի պառկին և ժողովուրդն ալ անոնց ծախքը պիտի հոգա վասն երկնային փառաց։

20 հոկտեմբեր

Անգղիական լրագիրները կը ծանուցանեն, որ Տուլչինիոյի հանձնումեն ետքը եթե Անգղիա առանձին մնա՝ ավելի առաջ չդիտի երթա։

— Ե՞տ պիտ երթա։

— Աս ալ չենք հուսար։

Անգղիական լրագիրներուն այս գուշակութիւններն տխուր ազդեցութիւն մը ունեցան անոնց վրա, որք իրենց հույսը միայն Անգղիո վրա դրած էին։ Եվ արդարև, Անգղիո ազատական կուսակցութիւնը շատ նպաստավոր կերպով խոսեցավ Հայկական խնդրույն համար, նույնիսկ թագուհին յուր խոսած ճառին մեջ հայոց խնդիրն ալ հիշած էր։ Սակայն մոռնալու չէ, որ երբ շահը խոսի՝ հիշողութիւնը կը տկարանա և մարդս չիրնար յուր ըրած խոսումը հիշելու։

21 հոկտեմբեր

Միացյալ ընկերութիւնը Վանա վարժարանացին մեջ բնական գիտութիւններու դասախոսութիւնն ալ ավելցուց։ Հիշյալ ընկերութիւնն Կիլիկիո մեջ ալ գործել սկսավ, Ատանայի և Հալեպի դպրոցներն յուր տեսչութեանները առնելով։

Քաղցր է մեզ հավատալ, որ սույն ընկերութեան Գործադիր ժողովո անդամներն հաջողած են բառնալ այն անհամաձայնութիւնն, որ ի սկզբան կար իրեր իրենց մեջ։

22 հոկտեմբեր

Զրույց կը պատի, թե Սսո Կաթողիկոսն Ք. Պոյաճեան հրամանով Պերք վարդապետներու հետ Կ. Պոլիս կը բերվի հսկողութեան տակ։

Լրագիրներուն ամեն խոսքին հավատալո՞ւ է...

Այսօր ալ չկրցի բան մը հատկնալ վայելչեն...

23 հոկտեմբեր

Լրագիրները կը ծանուցանեն, թե Կարնո և Վանա գավառներու մեջ ըլլալիք բարենորոգումներուն երկրորդ կոմիսեր Աղաբեկյան Սարգիս էֆենտին Պոլիս եկած է։

Աս ալ սուտ լուրերուն կարդն անցունելու է։

Եթե եկած լիներ՝ եղած բարենորոգումներուն վրա կրնայինք լուրեր առնել։

24 հոկտեմբեր

Այսօր երեսփոխանական ժողովն դադարվեցավ Դալաթիա։

Երեսփոխանները բավական խոսեցան իրարու հետ, բայց մեծամասնություն գոյացած չըլլալով՝ որոշումները հաջորդ նիստին թողվեցան։

— Ինչո՞ւ խոսեցան ուրեմն, քանի որ որոշելու համար մեծամասնություն չունեին։

— Ժամանակ անցունելու համար...

25 հոկտեմբեր

Կայսերական կառավարությունը խուրպան պայրամին[46] ծախքերուն համար չորս-հինգ հազար ոսկվո փոխառություն մը ընել կը փափաքի Դալաթիո սեղանավորներեն։

Եթե այս փոխառությունը չհաջողի՝ պայրամն քանի մը շաբաթ ետ պիտի ձգվի կըսեն։

Այն կառավարությունն, որ պայրամի համար փոխառություն ընելու կըստիպվի՝ ի՞նչպես կարող է բարենորոգում մտցունել Հայաստանի մեջ. բարենորոգումն պայրամներուն ամենեն մեծն է և, հետևապես, մեծ ծախքերու կարոտ է, մինչդեռ մենք մեծ աղբատությենե ուրիշ բան չունինք։

26 հոկտեմբեր

Կը ցավիմ, որ Վայելֆին վրայոք տեղեկություն չպիտի կրնամ տալ. վասն զի մինչև այս ժամս պարապ տեղը կը հոգնիմ զայն հասկնալու համար։

Զգիտեմ թե օրիորդները և տիկիններն ի՞նչպես պիտի կարողանան զայն հասկնալ և հազուստ ձևիլ։

Աստված կարողություն տա իրենց։

27 հոկտեմբեր

Հայկական խնդիրը կը քնանա, և անկարելի է, որ Գարատաղի խնդրույն լուծվելեն առաջ արթննա։

Տեղվույս ազգայիններն՝ Կլատբաթրնի բերանեն ելած խոսքերուն մեջ հայ-

կական խնդիր դտնելու համար ամեն օր Եվրոպայեն եկած հեռագիրները կը կարդան։

Հայ լրագիրներեն մին կըսե, թե Եվրոպայեն բարիք հուսալը պարապ բան է, և թե անցյալին մեջ ալ մեր ազգը անկե բարիք տեսած չէ։

Շատ լավ, բայց այդ լրագիրն յուր այդ կարծիքն երկու տարի առաջ հայտնելու էր, որ ազգն ալ ըստ այնմ վարվեր... այսինքն Եվրոպայեն օգնություն չխնդրեր բնավ. որովհետև անցյալին մեջ անոր մեկ բարիքը վայելած չէ եղեր...

Արդյոք այդ թերթին խմբագիրն բաժանորդ չգրե՞ր այն անձերն, որոնք անցելույն մեջ իրեն բաժանորդ գրված չեն։

28 հոկտեմբեր

Սովելոց Հանձնաժողովը հետևյալը կը հրատարակե.

«Ի պաշտոնե վշտից գուժաբեր՝ ցավ է մեզ, զի այսօր գուժոց ամենահավորն կը պարտավորիմք հաղորդել։

«Ըստ հեռագրո՝ սովամահ երևցավ.
Արմտյաց գինն գրեթե կրկնապատկեցավ.
Փոխառության չափն իսկ լրացավ»։

29 հոկտեմբեր

Օսմանյան կառավարությունն ազգային հիվանդանոցին բազում տարիներե հետե հատկացուցած միսն ալ դադրեցուց այս օրերս։

Հիվանդանոցին պատվարժան հոգաբարձությունը ժողովրդյան դիմելով՝ հացին և մսին դադարումեն պատճառած կորուստը դարմանել կաշխատի։

30 հոկտեմբեր

Սովելոց Հանձնաժողովն այսօր ալ հետևյալը կը հրատարակե.

«Ինչպես կը նախագուշակեինք՝ ահա արմտյաց գինն օր ըստ օրե կը բարձրանա. սովյալ գյուղորեից բնակիչք ի քաղաք կը խռնին. նոթելոց տխուր թափորք ընթանալ կսկսին. հին նոթության աղաղակն, զոր գարուն պահ մի գադարեցույց՝ վերստին կը վերադառնա։

Եթե կը վախնաք, որ ձեր հեղինակութիւնները հարդ և պատիվ չեն գտներ՝ կը սխալիք. քաջալերվեցե՛ք, ո՛վ վախկոտ հեղինակներ. գեղեցիկ դերասանուհի մը կը ծածկէ ձեր թատերգութիւններուն տգեղութիւնները. օն անդր, սիրտ առեք և ջանացեք սիրուն դերասանուհիներով փայլեցնել ձեր հնացյալ հեղինակութիւնները...

5 նոյեմբեր

Շնորհավոր նոր վարչություն և բարի սահմանադրություն: Նոր վարչությունն, որ չորս ամիսներե ի վեր կազմվելու վրա էր՝ վերջապես կազմվեցավ շնորհիվ աստուծո:

Տար աստված, որ թղթակազմ չըլլար և քանի մ'օրեն չպատռվիր:

Հայրենիք[48] հետևյալ կերպով կը շարե նոր վարչության անձերը.

Գերապատիվ Տ. Մաթեոս եպսիկոպոս՝ կրոնական գործոց խորհրդական.
Մեծ. Միքայել էֆ. Մոմճյան՝ հարաբերական գործոց խորհրդական.
Մեծ. Տիգրան էֆ. Յուսուֆյան՝ ներքին գործոց խորհրդ.
» Միքայել » Մամիկոնյան՝ կրթական գործոց խորհրդ.
» Գարեգին » Մելիքյան՝ տնտեսական գործոց խորհրդ.
» Սերոբե » Ազնավուրյան՝ զաւակական գործոց խորհրդ.

Ահա այս մեծապատիվ անձերուն ձեռներուն մեջն է այժմ ազգին սանձերը:

Մաղթենք, որ սույն նոր վարչությունը հինը փնտռել չտա մեզ:

7 նոյեմբեր

Պիլեճիկի առաջնորդ տեր Ղևոնդ եպիսկոպոս նամակավ մը կիմացունե ամեն. ս. պատրիարքը հոր, որ պաշտոնեն պիտի հրաժարի, վասնզի Պիլեճիկի մեջ ո՛չ մարդ կա եղեր, ո՛չ դրամ և ո՛չ զգացում:

Պիլեճիկի դեր. առաջնորդը հրաժարելու տեղ առաջարկելու էր ս. պատրիարքին, որ մայրաքաղաքես քիչ մը մարդ, կաթ մը զգացում և բավական քանակությամբ դրամ ղրկվեր իրեն, որպեսզի կարենար յուր պաշտոնը շարունակել:

Այս երեք հազվագյուտ բաներն անշուշտ անհրաժեշտ պետք են նորին գերապատվության, որ, ինչպես կերևի՝ ինքն ալ չունի յուր վրա, ո՛չ դրամ, ո՛չ զգացում և ո՛չ մարդ. եթե ինքն ունեցած ըլլար հարկավ յուր ժողովրդյան ալ փորրիկ մաս մը կը հաներ:

8 նոյեմբեր

Նոր վարչությունն[49] նիստ ըրավ պատրիարքարանի մեջ և դիվանատան պաշտոնյաներու փոփոխության վրա խորհեցավ, խոսեցավ և մեկնեցավ:

Վարչությունն՝ ազգային ժողովո[50] ասկից առաջ քվեարկած ելմտացույցով չէ կարող յուր պաշտոնն անթերի կատարելու:

Ես կը կարծեմ, որ ազգային ժողովն կա՛մ ելեմտացույցը պիտի փոխե, կա՛մ այն հրահանգներն, զորս տված է վարչության: Եթե ոչ մին փոխե և ոչ մյուսն՝ վարչությունն պիտի անդամալուծվի և պիտի սպասե, որ մեկը գա և դինքը Պրոպատիկի ավազանին մեջ նետե:

9 նոյեմբեր

Նոր խնդիր մ'ալ պիտի ծագի մոտերս:

Սատ կաթողիկոսն Պոլիս գալու համար ճամբա ելած է:

Ի՞նչու կուգա Պոլիս:

Չհարցուցի, վասնզի քանի մը տարիներ առաջ հարցուցած էի, թե ինչո՞ւ Սիս կերթա, և պատասխան առած էի, թե Սատ աթոռն ու թեմն բարեկարգելու կերթա: Քանի մը ամիս ետքն, երբ իմացա, որ զիս խաբած են՝ ուխտ ըրի, որ մեյ մ'ալ չհարցունեմ, թե ինչո՞ւ Պոլիս կուգա և ինչո՞ւ Պոլսեն կերթա...

10 նոյեմբեր

Ուրիշ հրաժարական մ'ալ:

Երզնկայի առաջնորդն ալ հրաժարելու միտք ունի եղեր:

Հոն ալ չկա մարդ, զգացում և դրամ:

Երզնկայի կլիման անհարմար կուգա եղեր նորին սրբազնությանն:

Այս առաջնորդին ալ կլիմա մը փնտռելու, գտնելու և ղրկելու է:

*Հուսանք սակայն, որ Երզնկայի առաջնորդը անիրավ հարձակումներե առանց վշտանալու հառաջ կտանի այն գործերն, զորս այնքան սիրով և եռանդյամբ սկսավ: Եթե կլիման իրեն չհարմարվի՝ նորին գերապատվությունն պետք է դինքն կլիմային հարմարցունել, դի մի լցցի բանն, թե վարդապետելու և դինքն կլիմային հարմարցունել, դի մի լցցի բանն, թե վարդապետելու է պ

11 նոյեմբեր

Տեսարանն է Բերայի թատրոնի մը օթյակներեն մեկուն մեջ։

Պատավաղ մարդու մը անպատիվ կինն Հույնի մը հետ սիրս բանակցություն կընէր։

— Տե՛ս, ըսավ քովի օթյակի մեջ նստող մեկն յուր ընկերին, կը վայլե՞, որ անանկ պատավաղ մարդու մը կինն անհամատարիմ գտնվի յուր էրկանը։

— Իրավունք ունիս. օտարասիրությունը չէ՞, որ մեր ազգին տունը կը փլցնե, պատասխանեց ընկերը։

12 նոյեմբեր

— Ամբակո՛մ ապա, վաղը չէ մյուս օր վան պիտի երթամ։

— Բարի ճանապարհ կը մաղթեմ։

— Նամակ գրելու չմոռնաս։

— Անհոգ եղիր. ատանհինգ օրն անգամ մը կը գրեմ և լուրեր կուտամ քեզի։

— Ուրեմն հասցեն ատամ քեզի, որ նամակներս սխալմամբ ուրիշին ձեռքը չանցնին։

— Հարկ չկա. Մասիսի կը հանձնեմ նամակները։

— Այդ ի՞նչ ըսել է. Մասիսը նամակներու տո՞ւփ է։

— Հիմա ամեն մարդ յուր մեկ բարեկամին գրած նամակն Մասիսի կուտա և պատասխանն ալ անոր մեջ կը կարդա։ Անցյալները չգիտեմ, ո՛ր ընկերության առնեցգրիր տիկինն... ս. պատրիարքին նամակ մը գրած էր Մասիսին մեջ և պատասխանը քանի մը օր եաթը հիշյալ թերթին մեջ առած էր։ Գարձյալ ուրիշ մեկն յուր մեկ բարեկամին գրած մտերմական մեկ նամակն Մասիսի միջոցավ հրատարակած ու պատասխանն նույն լրագրին մեջ կարդացած էր։ Ո՞ր մեկը համրեմ...

— Շատ աղեկ. Մասիսի միջոցավ գրե նամակներդ և պատասխանները հոս կարդա։

— Ասանկով թղթատարի ծախքին ալ կը խալսինք։

— Մանավանդ թե մեր նամակները չեն կորսվիր։

Կեցցե՛ թղթատար Մասիսն... և տակավին բաղդներ ալ կան, թե Մասիս հասարակության օգտակար ծառայություններ չմատուցաներ...

13 նոյեմբեր

Ուրախատիպ լուր մը...

Պեշիքթաշի մեջ խումբ մը երիտասարդներ ընկերություն մը կազմած են իրենց մեջ. նպատակ ունենալով մեկ դահեկան տուգանք վճարել ամեն անգամ՝ որ իրենց խոսակցությանը մեջ օտար բառ խառնեն։

Այս տուգանքեն դոյանալիք հասույթն ազգօգուտ ընկերություններեն մեկուն պիտի նվիրեն։

Հապա ի՞նչ տուգանք առնելու է այն հայերեն, որք իրենց խոսակցության մեջ երբեմն հայերեն բառեր կը խառնեն և շատ անգամ հայերեն բառ բնավ չեն խառներ։

Այս միջոցն շատ լավ է ազգային լեզուն կոկելու համար, և եթե այսպիսի ընկերություն մ'ալ ազգային խմբագիրները կազմեն՝ ընկերություններն բավական օգուտ կը քաղեն ոուսահայոց լրագիրներեն, նամանավանդ «Մշակեն»։

14 նոյեմբեր

Կրոնական գործոց խորհրդականն եկեղեցվո և եկեղեցականներուն բարեկարգությանը վերաբերյալ կանոնագիր մը խմբագրելու վրա է։

Կրթական գործոց խորհրդականն ալ վարժարաններու բարեկարգության վերաբերյալ ծրագիր մը պատրաստելու զբաղած է։

Տնտեսական գործոց խորհրդականն ալ ազգային սնտուկը բարեկարգելու համար ծրագիր մը փնտռելու եռևի է։

Ինչպես հայտնի կը տեսնվի՝ հոսից ցգլուխ բարեկարգության պետք ունինք, սակայն անուրանալի ճշմարտություն մ'է, որ բարեկարգութենեն ավելի գրամի պետք ունինք։

Խնդրենք գրամն, և ամենայն ինչ հավելցի ձեզ...

Սեբաստիայեն հետևյալ հեռագիրն եկավ.

«Կուսակալն ազգային դավառական ընդհ. ժողովո անդամները բանտարկեց»։

15 նոյեմբեր

Ալեքսակ Հայաստանի[51] կառավարության կողմեն ամեն օր կը փնտռվին, ինչպես նաև այն ամեն գիրքերն, որոնց մեջ Հայաստան բառն կը գտնվի։

Ամեն օր կը ձերբակալվին և կը բանտարկվին Հայկա և Վարդանա պատկերներն։

Երեկ մաքսատունեն արգիլվեցավ 1881-ի օրացույցներեն հիսուն օրինակ, որ Տրապիզոնի շոգենավը կը տարվեր...

Սեբաստիայեն հետևյալ հեռագիրն ընդունվեցավ այսօր.

«Կուսակալն քաղաքական ժողովո անդամներն ալ բանտարկեց»։

16 նոյեմբեր

Սեբաստիայեն հետևյալ հեռագիրը գրկած են.

«Կուսակալն ազգ. վարժարանիս աշակերտներեն քսանևհինգ հոգի բանտարկեց»։

Ինչո՞ւ համար այս բանտարկություններ։

Վասնզի քանի մ՚օր առաջ կուսակալին ռոնաֆին առջևը հայու գլխակ մը գտնված է, և երկրորդ գիշերն կուսակալին ռոնաֆը քարկոծված է։

Ասպա ուրեմն քարկոծողներն բանտարկյալներն են։

Քննություն եղա՞ծ է։

Բնավ երբեք. քանի որ կուսակալին ռոնաֆը քարկոծված է՝ հայտնի է. որ հայերը հանցավոր են։

Այս խնդիրն Բ. Դռան և պատրիարքարանի մեջտեղ բանակցության նյութ եղած է. տեսնենք վերջն ո՛ւր պիտի երթա...

17 նոյեմբեր

Բարեբախտաբար բանտարկության լուր չեկավ այսօր Սեբաստիայեն։

Ես կը կարծեմ, թե կուսակալն Սեբաստիո բոլոր հայերը բանտարկած է և, հետևապես, դուրսը մարդ չէ մնացած, որ անոնց բանտարկվիլն հեռագրով իմացունեն մեզ։

Տաճկաստանի մեջ բա՜նտ... Բանտի մեջ բանտ...

18 նոյեմբեր

Ի՞նչ եղավ հայկական խնդիրը։

Բան մ՚ալ եղած չէ. նույն վիճակին մեջ է՝ ուր որ էր երկու ամիս առաջ։

Տուչինիոն Սև լեռան հանձնվեցավ երկու օր առաջ։ Հունաստան ալ յուր գործը լմնցնելու է, որ կարգը մեր խնդրույն դա։

Անգղիո կառավարությունն այժմ ուրիշ խնդիրներով զբաղած ըլլալով՝ հայկական խնդիրը քիչ մը մոռցած ըլլալ կը թվի. սակայն անգղիասեր հայերը կը հուսան, թե Անգղիո կառավարությունն վերստին ձեռք պիտի առնե Հայաստանի բարեկարգության խնդիրն, զոր այնչափ հռանդով պաշտպանեց։

Խնդիրներ կան, որ պատմներու կը նմանին—պահվելով կը հասունանան, թեպետև կան ալ, որ պահվելով կը փտին։

Աղոթենք, որ մեր խնդիրն վերջիններեն չըլլա։

20 նոյեմբեր

Կրոնական գործոց խորհրդականն մայրաքաղաքիս թաղական խորհուրդներուն պիտի հարցունե, թե կրոնագիտությունն ի՞նչ վիճակի մեջ է դպրոցներու մեջ։

Զարմանալի չէ, գոյություն չունեցող բանի մը վիճակն հարցունելն։

Ով թաղային վարժարաններու մեջ ի՞նչ ունինք, որ կրոնագիտություն ունենանք։ Սակայն ես գիտնալ կը փափաքեի, թե կրոնագիտությունն ի՞նչ վիճակի մեջ է այն կրոնականներուն քով՝ որք դավառներու մեջ առաջնորդության պաշտոն մերժելով՝ մայրաքաղաքիս բաժնվիլ չեն ուզեր։

21 նոյեմբեր

Վանա ընդհանուր դատախազն հիշյալ քաղաքին մեջ տեղի ունեցած հարստահարությունները հերքող տեղեկագիր մը գրկած էր Բ. Դռան։

Գերապատիվ Խրիմյան սրբազանն ալ վերոհիշյալ տեղեկագիրը հերքող տեղեկագիր մը գրկած է այս օրերս։

Արդեն ինչ որ հաստատե Հայրիկն՝ կը ժխտվի Բ. Դռնեն, և ինչ որ հաստատել փորձե Բ. Դուռն՝ կը հերքվի Հայրիկեն։ Երբ այս վերջինն դիակ մը ներկայացնե կառավարության և անոր ժամ մը առաջ քյուրդ մը սպանվիլն հաստատե՝ կառավարությունն անմիջապես կը հերքե ըսելով. ատիկա մեռած չէ այլ կը ննջե. եթե Հայրիկն քիչ մ՚ալ պնդե՝ ընդհանուր դատախազն կը պատասխանե. մեռած չէ այլ ծնած է. և տեղեկագիր մ՚ալ կը գրկե Բ. Դռան հայտնելով, թե այս օրերս Վանա մեջ երեսուն տարու տղա մը ծնավ... մեռած...

22 նոյեմբեր

Պ. Տուպչին անուն երեկոյի ըմբիշն, որ քանի մը շաբաթեն ի վեր Բերա Քոնթորտայի թատրոնին մեջ մայրաքաղաքիս ըմբիշներուն ասպարեզ կը կարդար և հաղթանակ կը տաներ՝ այս օրերս հաղթվեցավ Սիմոն անուն բեռնակրէ մը:

Հայ ըմբիշն գայն ձեռներուն վրա բռնելով՝ հանդիսականներուն կը հարցնեն, թե ո՞ւր նետեմ այդ բեռն...

Պ. Տուպչին, զոր առանձինները որդ դարու Աքիլլես կը կոչեն՝ պարտությունն չընդունիր, առարկելով, թե ինք օտար է առճակատի ըմբշամարտության: Հայ բեռնակիրն կը հավանի գաղղիական ըմբշամարտությամբ անոր դեմն նստելու և երկրորդ անգամ կը գետնե գայն:

Պ. Տուպչինն դրամ կը խոստանա Պ. Սիմոնին, որ անգամ մ'ալ ան հաղթվի, որպեսզի յուր վաստակած համբավն չարատի: Պ. Սիմոն կը մերժե այս դրամական ըմբշամարտությունն: Այժմ մեր ազգայիններեն ոմանք հանդանակություն մը կրնան իրենց մեջ՝ հայ ըմբիշին նվեր մը ընելու նպատակավ:

23 նոյեմբեր

Կըսեն թե միությունն ազնիկ բան է:

Իմ կարծիքով՝ միությունն մեր ազգին համար ազնիկ չէ:

Տարի մը առաջ Իսկյուտարի երեք դպրոցներն իրարու հետ միացան և նաբը ավելի խեղճ ըլլալով՝ իրարմե բաժնվեցան:

Քանի մը ամիս կա, որ Արարատյան, Կիլիկյան և Պերոցասիրաց—Ասիվեցյան ընկերությունները միանալով՝ Միացյալ ընկերությունը եղան, և այսօր հիշյալ Միացյալ ընկերությունը չունին այն նախանձելի վիճակին, զոր ունեին ասկե առաջ:

Կրնա՞ք ուրանալ՝ թե անմիաբանությունն ալ ունի յուր օգուտները:

25 նոյեմբեր

Թուրքիո կառավարությունն յուր պաշտոնյաներուն ամսականները ամեն ամսու ղլխուն վճարելու համար նոր միջոց մը սլիտի գտնե եղեր:

Պիտի որոշե եղեր, որ մեկ ամիսն հարյուր ութսուն օրերե բաղկանա:

26 նոյեմբեր

Իզմիրի փողոցներուն պատերուն վրա հետևյալ ազդարարությունը կախված է տեղույն դողերուն կողմեն.

«Դիշերներն դուրս ելլողներն առնվազն իրենց քսակին մեջ երեք մեճիտիե ունենալու են. ապա թե ոչ իրենց կյանքը վտանգի մեջ պիտի ըլլա»:

Ահավասիկ միջոց մը, որ կը հարկադրե Իզմիրի բնակիչներն՝ միշտ երեք մեճիտիե ունենալ իրենց վրա:

Կեցցե՜ Իզմիրի ոստիկանությունն...

Իսկ անոնք, որ հիշյալ գումարը չունին՝ պիտի ստիպվին դիշերներն իրենց տուներեն դուրս չելնելու:

Այս քիչ մը առողջապահական է, վասնզի հիշյալ քաղաքին օդն խոնավ ըլլալով՝ դիշերներն դուրս ելնողներն հարբուխ կը բռնվին:

Կեցցե՜ն Իզմիրի գողերը...

27 նոյեմբեր

Սուտ Մկրտիչ կաթողիկոսն մայրաքաղաքս հասած է: Հակաթոռության խնդիրն քիչ օրեն երևան կելնե:

Աղթամարա կաթողիկոսն աթոռի խնդիրը չհարուցաներ, վասնզի նստած չունի, որ աթոռի վրա խորհի. ամեն օր կուտե, կը պառկի և կը քնանա:

30 նոյեմբեր

Երբ որ բան մը ի բեն գեղեցիկ է՝ անոր որչափ ալ զարդ տրվի՝ կը վայլե:

Օրինակի համար, Ահեկյան Մամլո թղթակցին Շահնուրի լեզուն, որ գեղեցիկ է և պճնասեր:

Ես ալ օր մը փորձեցի լեզուս պճնել, բայց վերջեն հուսահատեցա, տեսնելով տգեղ կին մը՝ զոր զարդերն ավելի տգեղցուցած էին:

Ինչո՞ւ համար խել մը տգեղ լեզուներ պարզությունը կը թողուն և պճնասիրության մեջ կերթան զիրենք զղվելի ընելու...

Ե՞րբ պիտի դադրինք լրագիրներու մեջ կարդալե այնպիսի հոդվածներ, որոնց մեջ խոսք չկա և միայն զարդ կա:

Խմբագիրներուն ուշադրությունը կը հրավիրեմ այս կետին վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՄԵՂՈՒ»

«Քվեարկությամբ թվաբանություն»

1. Սահմանադրություն.— Այսպես էր կոչվում 1860 թ. թյուրքական կառավարության կողմից հաստատված այն ներքին կանոնադրությունը, որը սահմանում էր արևմտահայերի ազգային, կրթական և կրոնական իրավունքները։

Թյուրքական կառավարության նպատակն էր «Ազգային սահմանադրության» հաշակումով խաբել հայ ժողովրդին և հատկապես հետու պահել նրան քաղաքական պայքարից։ Պարոնյանը իր ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում մերկացրել է սահմանադրության հետ կապված պատրանքների կեղծիքը։

«Թատրոն Ազիզիե»

1. «Թատրոն Ազիզիե».— Պոլսի Ազիզիե քաղամասի թատրոնը, ուր իր ներկայացումներն էր տալիս Հ. Վարդովյանի խումբը։

2. «Մեղու».—Արևմտահայ դեմոկրատիայի օրգան, բարոյական, բանասիրական «զվարճալի գիտելյաց» կիսամսյա հանդես. 1856—1872 թ. լույս էր տեսնում Հ. Սվաճյանի խմբագրությամբ, իսկ 1872—1874 թ. Հ. Պարոնյանի։

3. «Թատրոն».— Երգիծական շաբաթաթերթ. լույս է տեսել 1874—1877 թ. Հ. Պարոնյանի խմբագրությամբ։

«Մեղու առ վսեմ. Հակոբ Կյոշեյան»

1. «Մամուլ»,— «Հանդես զավեշտական», պատկերազարդ շաբաթաթերթ, լույս է տեսել 1869—1882 թ. Գ. Այվազյանի խմբագրությամբ։

2. «Օրագիր».— Քաղաքական, ազգային և առևտրական օրաթերթ. լույս է տեսել 1869—1878 թ. Ո. Խոճասարյանի խմբագրությամբ։

«Թե ինչու Կյոշեյան էֆենտի մեղուեն ավելի բարեկամ ուճի»

1. «Աբևելյան Մամուլ».— Ազգային գրական և քաղաքական հանդես. լույս է տեսել 1871—1901 թ. Մաթ. Մամուրյանի խմբագրությամբ։

2. «Մասիս».— Արևմտահայ ամենաժողովրդական և երկար կյանք ունեցող պարբերականներից մեկը. ազգային, քաղաքական, տնտեսական և բանասիրական լրագիր։ Լույս է

տեսնել 1852 թ. Կ. Ուիուէյանի խմբագրությամբ, սկզբում որպես շաբաթաթերթ, ապա օրաթերթ։ Հայտնի դարձավ հատկապես Ար. Արփիարյանի (1886—1889) և Դ. Զոհրապի (1892—1893) կողմից խմբագրվելու տարիներին։ «Մասիսը» մերթ որպես շաբաթաթերթ, մերթ որպես ամսաթերթ կամ օրաթերթ իր գոյությունը պահեց մինչև 1908 թվականը։

«Խնդրոց մեոյալն ի տեսլյանն Մեղուի»

1. Իճատիե.— *Իճատիևի դպրոցը գտնվում էր Պոլսի Սկյուտար թաղամասի Իճատիե փողոցում։*

2. Բեռա.— *Պոլսի թաղերից մեկը (տես «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» «Բևրա»)։*

3. «Գետիզմանե՞ն ալ պիտի ափսոսվիճ».— *Ակնարկը վերաբերում է Պոլսի կենտրոնում՝ Բևրայի մեջ գտնվող հայոց գերեզմանատանը։ Թյուրքական կառավարությունը տարիներ շարունակ ձգտում էր վերացնել այն և վերածել հասարակական պարտեզի, բայց միշտ հայերի կողմից հանդիպում էր ուժեղ դիմադրության։ Այս խնդրին Պարոնյանը անդրադառնում է բազմաթիվ առիթներով՝ որպես ժամանակի ամենահուզող հարցերից մեկին։*

4. «...լրագրական տեսչություն շըլլալուն».— *Այսինքն՝ դրաքննության բացակայության պատճառով։*

«Խայթվածք»

1. «Մանզումե».— *«Մանզումեի էֆքյար» հայատառ թյուրքերեն թերթ. լույս է տեսել 1866—1896 թ., Կ. Փանոսյանի խմբագրությամբ։*

2. «Ասիա».— *Ազգային, բաղաքական, բանասիրական հանդես. լույս է տեսել 1872—1875 թ. նախ Դ. Բոյիջյանի խմբագրությամբ, վերջը Հ. Ասանճյանի և ապա Մ. Փորթուգալյանի։*

3. Պատրիարքարան.— *Արևմտահայերի կրոնական ազգային, և քաղաքական կյանքը վարող բարձրագույն հոգևոր իշխանություն, որը հաստատվեց 1461 թ. Պոլսում սուլթան Մուհամեդ 2-րդ-ի օրով։*

4. «Իզմիրցոց Ղորեն եպիսկոպոսին վրա ունեցած նամարումը».— *Պարոնյանը ծաղրում է Ղորեն եպիսկոպոս Գալֆայանի (տես «Ազգային ջոջեր») Իզմիր գնալու առաջարկության հարցը, որը բազմաթիվ անգամներ հետաձգվում էր Գալֆայանի քմահաճ ցանկություններով պատճառով։*

5. Քաղաքական ժողով.— *Երեսփոխանական ժողովի կողմից ընտրված աշխարհականների ժողովը, որն զբաղվում էր գերազանցապես աշխարհիկ հարցերով։*

6. Երեսփոխանական ժողով.— *Ազգային երեսփոխանական ժողով կամ ընդհանուր ժողով. այսպես էր կոչվում արևմտահայերի ներքին խնդիրները վարող օրենսդրական այն ժողովը, որը կազմված էր Պոլսի և գավառների հայության ներկայացուցիչներից ու հոգևորականներից. ընդամենը 140 ներկայացուցիչ, որից միայն քսանն էր գավառներից։*

7. «Ուր ես, տեր Երեմիա».— *Պոլսի Խասգյուղ թաղամասի քահանան, որին հանձնված էր այդ ժամանակվա օրացույցների խմբագրությունը։*

8. Վարդանանց զորավորաց.— *Վարդան Մամիկոնյանի և ընկերների հավատամարտում սպանության օրը՝ 451 թ. հունիսի 2. համարվում էր ազգային սուգի օր և նշվում էր դպրոցներում։*

9. Դանիել.— *Ըստ կրոնական ավանդության հրեաների մարգարեն, որ մանուկ հասակից գերի բերվեց Բաբելոն։*

10. «... եկեղեցին կոխեր է».— *Այսինքն՝ ներխուժել է։*

11. «Ավետարեր».— *Կրոնական, ուսումնական, ընտանեկան և քաղաքական շաբաթաթերթ. թաղոթական քարոզիչների օրգան. լույս է տեսել 1855—1915 թ. խմբագրությամբ Ճ. Կրիճեի և ապա Մաթալըմի։*

«Խիկարի հետ»

«Մեր խիկարն ալ ալաֆրանկա է եղեր»

1. «Պոնժուր, պոնժուր մոնսիյո...».— *Բարև, բարև, պարոն, ինչպես եք, ինչպե՞ս է ձեր առողջությունը։*

2. Խիկար.— *Միջնադարյան հայ աշխարհիկ գրականության մեջ «Խիկար» հատուկ անունը հոմանիշ էր իմաստության և խելքի։ Խիկարը Պարոնյանի մոտ բազմաթիվ առիթներով հանդես է գալիս իր խայթող, հեգնոտ և մերկացնող ճշմարտությամբ։ Նա նույնանում է հեղինակի հետ՝ հանդիսանալով նրա մտքերի արտահայտիչը։*

3. «Էյն լոնեռ տը բաուլե...».— *Պատիվ ունեցեք խոսելու ֆրանսերեն, պարոն, ֆրանսերեն, ֆրանսերեն, հասկանում եք, ո՛չ ֆրանսացին, ո՛չ ֆրանսուհին։*

4. «Ժը նը վու Ֆոմբրաե...».— *Ես ձեզ չեմ հասկանում, պարոն, ինձ հասկացա՞ք դուք։*

5. «Իլ ֆո-բարլե...».— *Պետք է խոսել ֆրանսերեն, սիրելիս, ահ սիրելիս, լսիր սիրելիս, տուր ինձ երկու մեճիտիե, սիրելիս։*

6. «Թանթիսմ աև ֆրանսե...».— *Մինչդեռ ֆրանսերեն՝ տուր ինձ երկու մեճիտիե։*

7. «Աև մոն շեռ...».— *Ահ իմ սիրելիս, ահ իմ սիրելիս, սա մի վայրենի է, սա մի մեծ անասուն է։*

8. «Մոն շեռ պեն էֆէյար...».— *Սիրելիս, ես մտքի ազատություն եմ սիրում, մարդ պետք է ազատ մտածի և ազատ խոսի, այս տեսակետից Խիկարը էշ մարդ է, քաղաքակրթությունից անտեղյակ, առաջադիմությունից զուրկ, եզան նման մի արարած, որ սայլին լծվելուց զատ՝ այլ բանի չի հարմարիր։*

Համարձակությանս ներեցեք, Խիկար, ես էլ ճշմարտախոս մի մարդ եմ, բացի դրանից, եթե հիվանդությունը ծածկենք դարմանը չենք գտնի, սրա համար, եթե քո վիճակը քեզնից թաքցնենք, այդ ժամանակ կմնաս, այո, դու մի ավանակ. սակայն խնդրում եմ չնեղանաս։ Մեր տունն ես եկել, քեզ հարգանք մատուցանելը մեր պարտքն է. կարծում ենք, որ մեր հարգանքի մեջ թերություն չունենք, մենք հյուրասեր մարդիկ ենք, ուրեմն՝ դու անկիրթ, տխմար, վայրենի, աշխարհից անտեղյակ արարած ես, սակայն՝ ներողություն, մի նեղանաք, ցավը չհայտնված՝ դարմանը չի գտնվում. ես քեզ սիրելուս համար է, որ խոսում եմ, այս մասին հարգանքը ձեռից բաց չեմ թողնում, այո՛, մարդու կարգ դասվել կուզես, կերպարանդ փոխելով, սեթրի պանթալոն հագնելով՝ ակնոց, ձեռնափայտ պետք է գործածեք, հայերեն բնավ պետք չէ խոսիլ, ահա այն ժամանակ ընտանիքների մեջ կմտնես, օրիորդների հետ կխոսես, ման կուգաս, կդնաս, կգաս։

9. «Վուալա մոն շեռ».— *Ահավասիկ, սիրելիս։*

10. «Աև մոն շեռ, բիեն մոն շեռ...».— *Ահ, սիրելիս, լսիր, սիրելիս, տուր ինձ երկու մեճիտիե, սիրելիս, ցտեսություն, սիրելիս, ձեզ ողջունում եմ, սիրելիս, պատիվ ունիմ ձեզ ողջունելու, սիրելիս, դուք պատիվ ունիք ողջունելու, սիրելիս, ա՜հ, սիրելիս, տվեք ինձ երկու մեճիտիե, սիրելիս։*

«Ազգային երեսփոխանական ժողով»

1. Ընդհանուր ժողով.— *Տես «Խայթվածք». ծանոթ. № 6։*
2. Զախակողմյան.— *Տես «Ազգային ջոջեր»՝ «Մահիսան Փափազյան». ծանոթ № 14.*
3. Աջակողմյան.— *Տես «Ազգային ջոջեր»՝ «Մահիսան Փափազյան». ծանոթ. № 7*

«Կանոնավորներուն անկանոնությունը»

1. «Սոկրատը ծաղրող կատակերգուն».— *Ակնարկում է Արիստոֆանին, որն իր «Ամպեր» կատակերգության մեջ ծաղրել է Սոկրատին։*
2. Վիստ.— *Թղթախաղի տեսակ։*

«Խիկարին Երազը»

1. Թոփեանե.— *Պոլսի թաղերից մեկը։*

«Խիկարն կրոնավոր»

1. Կրոնական ժողով.— *Ազգային հոգևոր-խորհրդական ժողովի (տես «Հայրենիք», ամսագ. № 6) կողմից ընտրված՝ հոգևորականների մի մարմին, որն զբաղվում էր կրոնական, եկեղեցական հարցերով։*

«Մեղուի բարեկամությունը»

1. Քաղվածքներ.— *«Քաղվածքներ» ընդհանուր վերնագրով Պարոնյանը յուր թերթերի էջերում հրապարակում էր փոքրիկ աֆորմիզմներ, սրամտություններ, զանազան դիալոգներ, որոնց մեջ սուր երգիծանքով ծաղրվում էր հատկապես կանանց քաղքենիական կենցաղը։*

«Սրկե նրկե»

1. «Միմոս».— *Հայերեն-թյուրքերեն երգիծական եռօրյա թերթ. լույս է տեսել 1875—1877 թ. խմբագրությամբ Հ. Մ. Հ-ի։*
2. Դալաթիա.— *Պոլսի կենտրոնական թաղամասերից մեկը։*
3. Օրբեոսի դժոխք իջնելը.— *«Օրբեոս դժոխքի մեջ». Օֆենբախի օպերետներից, Պոլսի հայկական բեմերում հաճախ ներկայացված։*

«ԹԱՏՐՈՆ»

«Ապրի կատուն, որ իր փորի համար մուկ է բռնում»

1. «Ապրի կատուն, որ իր փորի համար մուկ է բռնում».— *Վերցված է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ հանապարհ» աշխատությունից։*
2. Թաղական.— *Այսպես էին կոչվում Թաղական խորհրդի անդամները (տես «Կամիքներ» ծանոթ. № 37)։*

«Ուղեռն առ Բայսերի Ահմետ բաշա կուսակալ Զմյուռնիո»

1. Կուսակալ.— *Նահանգապետ։*

«Բարեխնամ կառավարության ուշադրությունը»

1. Եպարքոս.— *Օսմանյան կառավարության վարչապետները կոչվում էին եպարքոսներ։*

«Պաշտոնական ծանուցում»

1. «Թատրոն նամ էմնեիեն...».— *Թատրոն անունով հայերեն թերթը ամփոփելով Մուշից ստացված ընտանական բովանդակությամբ նամակի մի մասը, հրատարակել է իր անցյալ շաբաթ օրվա թվի մեջ և շրջապատել է այն վշտի ու սուգի նշանով։ Հիմնվելով հիշյալ նամակի մեջ արձանագրված հերյուրանքների և չափազանցությունների վրա, հոդվածի ներքևում էլ ավելացրած լինելուն չափազանցված խորհրդածություններ, հայատարարության թվականից սկսած դադարեցվում է մի ամիս պայմանաժամով (1875 թ. նոյ. 24)։*
2. «Կյոզ կյոբայիլիեմեն գարգար».— *Աչքը տեսածից է վախենում։*

«Հանգիստ մշեցի պարոն Մկրտի»

1. Ազգային ճիվանդանոց.— *Նամ Փրկիչի հիվանդանոց։ Այսպես է կոչվում 1834 թ. հիմնադրված Պոլսի հայերի հիվանդանոցը, որն ունի նաև անկեւանոց և հոգեբուժարան։*
2. Արևելյան պատերազմ.— *1854 թ. Ղրիմի պատերազմը։*
3. Տոլմապաճճեի կազճաճե.— *Եվրոպական ակցիոներական ընկերության օդային գազի գործարան, որը գտնվում էր Պոլսի Տոլմապահճե թաղում։*

«Բառերու նոր սահմաններ»

1. «Ինչ է Այվազը».— *«Մամուլի» խմբագիր Գ. Այվազյանի ազգանվան կրճատ ձևը։ Այսպես է անվանել Պարոնյանը նրան օգտագործելով «այվազ» բառի թյուրքական իմաստը՝ և նույնացրել այս հասկացողությունը առորաբար հաճոյակատարության ու կամազրկության հետ, հատկանիշներ, որոնք վերագրել է կենդանիներին։*

«Երկու ամսվա հարսը»

1. Աստղիկ.— *Ըստ հայկական դիցաբանության սիրո և գեղեցկության աստվածուհին։*
2. «...Հասունիսր է եղեր».— *Օգտագործելով Ա. Հասունյանի (տես «Ազգային ջոջեր» «Անտոն Հասունյան») ազգանվան իմաստը՝ «հասուն» կատարված է բառախաղ, ակնարկելով ամուսնու հասունացած, այսինքն՝ ծերացած տարիքը։*

«Փունջին անկողինը»

1. «Փունջ».— *Քաղաքական, գրական և ազգային շաբաթաթերթ, լույս է տեսել 1860—1907 թ., Հ. Ալամճյանի խմբագրությամբ։*

2. Երեսփոխան.— *Այսպես է կոչվել ազգային երեսփոխանական ժողովի անդամը։*

3. «Իրենց վիճակին նեռու գտնվող առաջնորդներ».— *Ակնարկը վերաբերում է հոգևոր առաջնորդներին։*

«Լուսնին մոտերը ճամբորդություն մը»

1. Աբգոս.— *Պարոնյանի ծածկանուններից։ Ըստ հունական դիցաբանության Արգոսը հարյուր աչքերով այն հրեշն էր, որի աչքերի կեսը փակ էին, իսկ կեսը բաց. նա մարմնացումն էր աշալրջության։*

«Իմ փափաքներս»

1. Խասգյուղ.— *Կամ Հաս գյուղ Պոլսի թաղերից մեկը։*

2. «...Դպրոցներու տեօրեն ըլլալու».— *Ակնարկում է կովկասահայ մանկավարժ Դավիթ Քալանթարյանցին, որը երկար տարիներ եղել է ուսուցիչ և դպրոցների վարիչ Պուրսայում և Պոլսում։*

3. «Բուգնամե».— *Հայերեն նշանակում է օրագիր, ակնարկը վերաբերում է «Օրագիր» թերթին (տես «Մեղու առ վսեմափայլ Հակոբ Լիփնեան Կյոչեյան», ծանոթ. № 2)։*

4. «Պուենու պաճա սեն սին վերեն».— *Այս ինձ ավազը դու ես։*

5. Նարեկ.— *Կամ «Նարեկ աղոթից». այսպես է կոչել ժողովուրդը վերածնության շրջանի խոշորագույն բանաստեղծ Գրիգոր Նարեկացու (951—1003) «Մատյան ողբերգության» հայտնի աշխատությունը, որն անցյալում համարվել է սուրբ գիրք և դպրոցներում գործածվել է իբրև դասագիրք։*

«Մեծ մարդիկ»

1. Ադամ.— *Ըստ ավանդության մարդկության նախահայրը, որը Եվայի հետ միասին վտարվեց արքայությունից արդյված պատուր ուտելու համար։*

2. Կայենը.— *Ըստ ավանդության Ադամի և Եվայի որդին. սպանեց իր եղբոր Աբելին, որի պատճառով նրա անունը դարձավ հոմանիշ՝ չարության և նախանձի։*

3. Եռովբ.— *Տես «Ազգային ջոջեր» «Համբարձում Իփեքյան». ծանոթ № 1։*

4. Հովար.— *Ըստ կրոնական ավանդության իսրայելացիների Դավիթ թագավորի բանակի սպարապետը։*

5. Աբիսողոմ.— *Դավիթ թագավորի որդին, սպստամբից հոր դեմ և կռվի ժամանակ սպանվեց Հովաբի կողմից։*

6. Պեադոխ.— *Դանիելի սրված ազջկա անունը, որին նա երգել է յուր ստեղծագործությունների՝ «Նոր կյանք» սոնետներում և «Աստվածային կատակերգություն» պոեմի մեջ։*

7. Պարոն Հ. Կ.— *Հակոբ Կյոչեյան։*

8. «Թերթի մը մեջ...».— *Ակնարկում է «Մամուլ երգիծական շարաթաթերթը։ «Նամակը» ենթագրում ենք թե գրված պետք է լինի Հ. Պարոնյանի և Հ. Կյոչեյանի մեջ ծագած վեճի առթիվ։ Վեճի դրդապատճառը Հ. Կյոչեյանի ազգին տված չնչին նվիրատվությունն էր, որի պատճառով «Մամուլը» Կյոչեյանին հռչակեց ազգային մեծ բարերար։ Պարոնյանը Կյոչեյանի*

այդ քայլը որակեց փառասիրություն, իսկ «Մամուլի» բռնած դիրքը՝ ստորաքարշություն մեծահարուստի առաջ։

9. Ազգային ժողով.— *Տես «Հայթվածք» ծանոթ. № 6։*

10. «...Իսրայելացիները փարավոնենու ձեռքեն».— *Իսրայելացիները Եգիպտոսում փարավոնների (եգիպտական թագավորներ) գերիներն էին։*

11. Սաղմոս.— *Հին Հրեաների հոգևոր երգերը, որոնք կրոնական հիմներ են տաղերեր էպոխաներին։ Ըստ ավանդության Սաղմոսների հեղինակը համարվել է Հրեաների լեգենդար թագավոր Դավիթ մարգարեն։*

«Պարկեշտություն»

1. Ամազոն.— *Ըստ հնագույն ավանդության ամազոնները մի ժողովուրդ էին՝ կազմված բացառապես կանանցից, որոնք հայտնի պատերազմողներ էին, քաջ ռազմիկներ։*

2. Թելիլաե և Սամփսոն.— *Ըստ կրոնական ավանդության Սամսոնը իսրայելացիների այն հսկան էր, որի ուժը իր մազերն էին։ Նրա սիրուհին՝ Դալիլան դավաճանությամբ կտրեց այդ մազերը, ուժասպառության մատնեց Սամսոնին և հանձնեց թշնամիների ձեռքը։*

«Նամակ թատրոնի»

1. Թատրոն.— *Տես «Թատրոն Ազիզիե», ծանոթ. № 3։*

«Ա. Տ. Լֆենտի է.»

1. «Ա. Տ. Լֆենտի է.».— *Անհայտ է։*

«Քաղաքական»

1. «Լրագիր».— *Օրաթերթ. լույս է տեսել 1875—1880 թ. Ն. Թյուլպենտճյանի խմբագրությամբ։*

2. «Մենմուա».— «Մենմուայը Հավատիս», հայատառ թյուրքերեն թերթ, լույս է տեսել 1852 թ. Հ. Վարդանյանի խմբագրությամբ։

3. Պեյոզ.— *Պոլսի թաղերից մեկը, ուր գտնվել են Աբրահամ փաշա Երևանցու կալվածները։*

4. «Թայմըզ.— *Անգլիական օրաթերթ, հիմնադրված 1875 թ. Լոնդոնում, Ջոն Ուոլաերի կողմից։*

5. Քալֆաս.— *Օֆենբախի «Գեղեցիկն Հեղինեի» օպերետայի հերոսներից։*

6. Յաննս.— *Տե՛ս «Ազգային ջոջեր»՝ «Մտ. Ասլանյան». ծանոթ. № 2։*

7. Մեծ կղզի.— *Կամ Փրինքիփո. Պոլսի մոտ, Մարմարա ծովում գտնվող չորս կղզիներից ամենամեծի անունը։*

8. Պոռտոյի գինի.— *Ֆրանսիական հայտնի գինի Բորդո քաղաքի անունով։*

9. Հավաս և Պոռտեաննո.— *Հնուագրական գործակալություններ. առաջինը հիմնադրված է Փարիզում 1830 թ. Շարլ Հավասի կողմից, իսկ երկրորդը՝ անհայտ է։*

«ԿՍՄԻՔՆԵՐ»

«Կսմիր»

1. Պատաստանական խորհուրդ.— *Հատն ժողովի (տես «Ազգային ջոջեր»՝ «Քրիստոսատուր Ղազարոսյան», ծանոթ. № 7) կողմից ընտրված չորս աշխարհականից և չորս հոգևորականից բաղկացած խորհուրդ, որն զբաղվում էր ամուսնական հարցերով։*

2. «...Չերքեսներու Ասիա փոխադրվելու դեմ...»— *Ակնարկը վերաբերում է 1876—1877 թ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ Կովկասից Թյուրքիա գաղթած չերքեզներին։*

3. «Լևրնր».— *«Լևրնի Հերլտա», անգլիական լրագիր։*

4. Բ. Դուռ.— *Բարձրագույն Դուռ. Թյուրքերեն՝ Պապը Ալի, այսպես է կոչվել օսմանյան կառավարությունը։ Պարոնյանը հաճախ կրճատ ձևով կոչում է միայն «Դուռ»։*

5. Քատրիլ.— *Եվրոպական խմբային պար։*

6. «Տոսբլուլ ֆանթարլան, ալբշվերիշ մրսմալլան».— *Բարեկամությունը կշտորով, առևտուրը մսխալով։*

7. Լակոնական.— *Ոճի ամենատեմ ձևը, որը ստեղծեցին Լակոնիայի (Սպարտա) հեռատները ի հակադրություն աթենական հռետորների ճոխ և զարդարուն լեզվի։*

8. «Որդի իմ կորուսյալ էր և գտավ».— *Ըստ կրոնական ավանդության այս խոսքերով դիմավորից Հայրը տուն վերադարձած իր անառակ որդուն։*

9. «...56-ի դաշնագրությունը».— *Ղրիմի պատերազմի ավարտումից հետո 1856 թ. մարտի 18-ին Փարիզում կնքված դաշնագրությունը։*

10. «Պասյերեր».— *Թյուրքական լրագիր։*

11. Վաքրը».— *Թյուրքական լրագիր։*

12. «Լա թյուրքի».— *Պոլսում լույս տեսնող ֆրանսերեն լրագիր։*

13. Պողոս առաքյալ.— *Ըստ կրոնական ավանդության քրիստոնեության գլխավոր քարոզիչներից։ Պողոս առաքյալի հետևորդներից էր Տիմոթեոսը, որին նա գրել է «Թուղթ» քրիստոնեության զանազան հարցերի մասին։ Նույն սկզբունքներին նվիրված մի այլ «Թուղթ» էլ ուղղված է Հռոմայեցիներին։*

«Կսմիրներ»

1. «...Թատրոնին վարագույրը գոցվեցավ».— *Ակնարկում է իր «Թատրոն» (տես՝ «Թատրոն Ազիզիե», ծանոթ. № 3) երգիծական հանդեսի 1877 թ. խափանումը գրաքննչական մարմինների կողմից։*

2. «...Մասիսի ստորոր կիջնամ այսօր...».— *Այսինքն՝ հանդես եմ գալիս «Մասիս» թերթի մեջ, աշխատակցում եմ նրան։*

3. «...կնիված գինադաղարին պես».— *Ակնարկում է 1878 թ. ռուս-թյուրքական զինադադարի կնքումը։*

4. «...Քրիստոնյաներեն գինվոր առնելու...».— *Օսմանյան տերության քրիստոնյա հպատակները ազատված էին զինվորագրությունից, որի փոխարեն կառավարությանը հարկ էին վճարում։ Այս օրենքը վերացավ միայն 1908 թ., թյուրքական սահմանադրության հռչակումից հետո։*

5. «Տեր, եթե զշրուսս իմ բանաս».— *Սաղ. Ծ. 17։*

6. «...Սլավուրյան ճակառակ ըլլալով».— *Պարոնյանը յուրահատուկ այլաբանությամբ*

նկարագրել է դրվագներ 1877 թ. ռուս-թյուրքական պատերազմից, թե ինչպես Ռուսաստանի հառաջանալով փախուստի դիմած թյուրքերը թալանել են քրիստոնյաների եկեղեցիները, նրանց ապասները և ոսկերչատունը։

7. Սիրինի.— *Սիրբեձիի կայարան և Սիրբեձիի նավահանգիստ (Սիրբեձի իսկելեսի). Պոլսի կարևոր կենտրոններից մեկը Մարմարայի ափին. այստեղից է կատարվում նաև անասունների տեղափոխումը։*

8. «Քանենոց բաղր».— *Այսինքն՝ բան դուրուշնոց բղթադրամ։*

9. Նիկողոս մարգարե.— *Նման անունով մարգարե գոյություն չունի. ակնարկում է մեզ անհայտ իր ժամանակակիցներից մեկին։*

10. «...Քան տարին անգամ մը կը պատահի».— *Ակնարկը վերաբերում է օսմանյան տերության 19-րդ դարում վարած պատերազմներին, որոնք տեղի ունեցան մոտավորապես տան տարին մի անգամ. 1815 թ. Հունական ազատագրական պայքարը. 1832—39 թ. Եգիպտոսի փոխարքա Մահմեդ Ալի փաշայի ապստամբությունը. 1854—56 թ. Ղրիմի, իսկ 1877—78 թ. ռուս-թյուրքական պատերազմները։*

11. «...Իմճնօրինություն, անկախություն...».— *Ակնարկը վերաբերում է ազատագրված ժողովուրդներին՝ հույներին, բուլղարներին, ռումիններին և այլն։*

12. «...նկավ Զորլուեն».— *Պարոնյանը այլաբանորեն հրեշտակներ է անվանում ռուս-թյուրքական պատերազմի հաշտության ռուս մասնակիցներին, որոնք գալու էին Զորլուից (Պոլսի մոտակա շրջան) և պատերազմական տուգանք գանձելու Թյուրքիայից։*

13. Թեոսիաճե.— *Պոլսի թաղերից մեկը, ուր գտնվում էր օսմանյան տերության նավահինարանը։*

14. «...Քրիստոնեականներուն պես նախանական...».— *Մաղրում է Հորեն Գալֆայանի 1872 թ. Պոլսում լույս տեսած «Քրիստոնեական» աշխատությունը, որը կոչվում էր «նախնական» ձեռնարկ։*

15. «...Չերեզներն ունիմ...».— *Տես «Կսմիք», ծանոթ № 2։*

16. Օսմանյան երեսփոխանական ժողով.— *1878 թ. Համիդյան ռեակցիան ցրեց օսմանյան երեսփոխանական այս ժողովը և Համիդը իրրև միահեծան բռնակալ երկրի գլխավարությունը վերցրեց իր ձեռքը։ Միայն 1908 թ. Թյուրքիան հռչակեց սահմանադրություն։*

17. Դրամանիշ.— *Այսինքն՝ բղթադրամ։*

18. Թաթավլա.— *Պոլսի թաղերից մեկը։*

19. Շիրխեթի.— *Շիրքեթի նավթին. այսպես էին կոչվում թյուրքական նավային ընկերության շոգենավերը, որոնք ամենօրյա երթևեկություն էին կատարում Վոսփորի վրա։*

20. Առաքյալ.— *Ակնարկում է Պողոս առաքյալին։*

21. «...Բեքոյին ճետ ձեռ ձեռի տված կը պարեն».— *Նկարագրված է բուլղարների խրախճանքը իրենց ազգային ազատագրության առթիվ և թյուրքերի տխրությունը այդ կապակցությամբ։*

22. Կզզիներ.— *Ակնարկում է Պոլսի մոտ, Մարմարա ծովում գտնվող չորս կղզիները։*

23. Էմին-Էոնյու.— *Պոլսի թաղամասերից մեկը։*

24. Պեյօղլու.— *Կամ Բերա։*

25. «...ամպերուն վրայեն անցած է...».— *Տես «Կանոնավորներուն անկանոնությունը». ծանոթ. № 1։*

26. Սրեբսիաա.— *«Ամպեր» կատակերգության հերոսներից մեկը։*

27. Մալիյե.— *Այսպես է կոչվել օսմանյան կառավարության ֆինանսների մինիստրությունը։*

28. Դեսպանախոսնուեղ.— *Ակնարկը վերաբերվում է 1878 թ. Բեռլինում վեց տերու-*

Թյուններէ՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրիայի և Թյուրքիայի մասնակցությամբ կայացած վեհաժողովին։

29. Քրիստոնեական.— Տես ծանոթ № 14։

30. Այ Ստեֆանո.— Կամ Սան Ստեֆանո. Պոլսի մոտակա այն վայրը, ուր 1878 թ. կնքվեց ռուս-թյուրքական դաշնադիրը։

31. Քարթալ.— Պոլսի թաղամասերից մեկը։

32. Մհանաբել.— Մոլիեռի կատակերգություններէ հերոսներից։

33. Փարիզի դաշնադրություն.— 1856 թ. կայացած դաշնադրություն։

34. Օրթագյուղ.— Կամ Միջադյուղ, Պոլսի հայաշատ թաղերից մեկը։ Այստեղ Մ. Պեշիկթաշլյանի նախաձեռնությամբ հիմնվեց «Բարեսիրաց թատերական ընկերությունը»։ Միջագյուղի թատրոնը 1856 թ. ուներ արդեն դերասանական խումբ, հանդես էր գալիս պարբերական ներկայացումներով և վայելում մեծ ժողովրդականություն։

35. «Քաթեռին Հովարա».— Ալեքսանդր Դյումայի (Հայր) դրամաներից։

36. Բրինձա.— Թղթախաղի անուն։

37. Թաղական խորհուրդ.— Տվյալ թաղկրինների կողմից ընտրված յոթ անձերի խորհուրդը, որը գլուխ էր թաղի գործոնների խնդրով և նյութական օժանդակություններով։

«ՊՏՈՒՅՏ ՄԸ ՊՈԼՍՈ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԵՋ»

«Բերա»

1. «Մատ գիտության բարվո և չարի».— Ըստ կրոնական ավանդության դրախտի այն երկու ծառերը, որոնց պտուղը արգելված էր ուտելու Ադամին և Եվային։

2. Թազսիմ.— Բերայի կենտրոնական մասերից մեկի անունը։

3. Գալաթիո Սեռայ.— Կամ Գալաթա Սերայ. այս անունով է կոչվում Բերայում գտնվող թյուրքական միջնակարգ վարժարանը։

4. Նեի Գարու.— Պոլսո թաղերից մեկը։

5. Ամիրա.— Ամիրաները սուլթանա-ֆեոդալական կարգերի սոցիալական այն վերնախավի ներկայացուցիչներն էին, որոնց հանձնված էր օսմանյան տերության տնտեսական ապարատը՝ հատկապես հարկային սիստեմը։

6. Նոյ.— Ըստ կրոնական ավանդության մարդկության նախահայրը, որը ապաստանեց ջրհեղեղից Մասիսի գլխին, տապանի մեջ։

7. Ռոշիլտ.— Մեծահարուստ բանկիրների տոհմ։

8. Հասունյան խնդիր.— Հայ կաթոլիկների պատրիարք Անտոն Հասունյանի գործունեության հետ կապված խնդիրները (տես «Ագգային ջոջեր»՝ «Անտոն Հասունյան»)։

9. «...առանց ջուրի անցուկնել... յուր օդին».— Թյուրքիայում տարածված «մաատիկա» արագի տեսակը խմվում է ջրի խառնուրդով։

«Սամաթիա»

1. Հայկ.— Ըստ ազգային ավանդության հայերի նախահայրը։

2. Տյուզ.— Կամ Տյուզիկո. արագի ուժեղ տեսակը։

3. «Պինի վար».— Հազարներ կան։

4. «Սենին կիպի մանիճիլեր տեվրեիմետե... պինի վար».— Քեզ նման խուլիգաններ իմ տեսրակում... հազարը կան։ (Մահիճի բառացի նշանակում է ձկնորս, որը համազոր է թյուրքերեն պալըգճի՝ անարգական բառին և գործածվում է խուլիգանի իմաստով)։

5. «...Յեր պենի».— Ինձ կուտի։

6. «Պիր կյուզելի մայել օլտուտ չեր պենի».— Մի գեղեցիկով սրանչացա, ինձ ուտում է։

7. «Յեր պենի... իշերիմե պիր ֆուտա...».— «Ուտում է ինձ... ներսս (սրտիս մեջ) մի բուռ է բռնել գիշեր ցերեկ...»։

8. «Պիզ վերելիմ բաալարը...».— «Մենք տանք դրամները, քաղաքը քոզ ուտե»։

9. «Վայ կեչմիշի էրթալը».— Հայհոյանք. բառացի նշանակում է անցյալը հինացած, նեղված, արատավորված։

10. «Պարզասիրաց ընկերություն».— Պենսասիրության դեմ պայքարող ընկերություն։

«ԱՉԳԱՅԻՆ ՋՈՋԵՐ»

«Հատաջարան»

1. Աֆիլես.— Ըստ հունական ավանդության հույների հերոսը, որը մասնակցեց Տրոյայի դեմ մղված մարտերին և սպանվեց Պարիսի նետից։ Աքիլլևսը ծովերի աստվածուհի Թետիսի և Պելեյի որդին էր, մարմնացումը ուժի, գեղեցկության և թռչության։

«Խորեն Պալֆայան»

1. Սամաթիա.— Պոլսի թաղերից (տես «Պատույտ մը Պոլսո թաղերուն մեջ»՝ «Սամաթիա»)։

2. Սրճավուտ գեղ. Ախրգարու և Գասըմբաշա.— Պոլսի տարբեր թաղերի անուններ։

3. «...Իր այդ աթոռը պատրիարքական բլլար, ճոգին կուտար»։— Տես «Հայլիվաժը», ծանոթ. № 3։

4. Վենետիկի վանք.— 1702 թ. Մխիթար Սեբաստացու կողմից հիմնադրվեց Մխիթարյան կաթոլիկ միաբանությունը, որը 1717 թ. հաստատվեց Վենետիկի սուրբ Ղազար կղզում։ Միաբանությունն ուներ և իր դպրոցը։

5. «...Խորեն էչմիածնա եպատակեցավ».— Ակնարկում է Խորեն Նար-Պեյի դավանափոխությունը՝ կաթոլիկությունից լուսավորչական դառնալը։

6. «...Գերութենե ազատություն դարձած երեմ վարդապետներս...».— Վենետիկի Մխիթարյան միաբանության երեք անդամներ՝ Սարգիս Թեոդորյան, Գաբրիել Այվազովսկի և Ամբրոսիոս Գալֆայան։

7. Պառնաս.— Լեռ Հունաստանում, ուր, համաձայն հունական դիցաբանության բնակում էին Ապոլոնը և մուսաները։ Պառնասի ստորոտում մինչև այժմ պահպանվել են ավերակները Դելֆյան հայտնի տաճարի։

8. Մուսաներ.— Ըստ հունական դիցարանության այսպես էին կոչվում աստվածների հայր Զևսի ինը աղջիկները, որոնք ներկայացնում էին արվեստի տարբեր ճյուղերը։

9. Ժամանակագրություն Եւսեբի աճցից.— Այս վերնագրի տակ էին դրվում հին օրագրությունների մեջ պատմական հայտնի դեպքերի թվականները։

10. Խալիպյան ուսումնարան.— Հայտնի վաճառական-կալվածատեր Հարություն Խալիպյանի ծախքով Թեոդոսիայում 1858 թ. հիմնադրված վարժարան։

11. Մասյաց աղավնի.— Խ. Գալֆայանի (Նար-Պեյ) և Գ. Այվազովսկու խմբագրությամբ Փարիզում 1855 թ. լույս տեսնող կղերա-պահպանողական ամսաթերթ, որը հետագայում՝ 1859 թ., հրատարակվում էր Թեոդոսիայում. խմբագիր և ցենզոր Գ. Այվազովսկի։

12. Պոլսո աղավնի.— Նման անունով թերթ գոյություն չի ունեցել. ծաղրված է Նար-Պեյը, անվանվելով «Պոլսո աղավնի»։

13. «1867-ին եկեղեցական պատգամավոր ընտրվելով վենետիկ Գևորգ Կաթողիկոսին

ճուղարկավորությանը գնաց...»— Ակնարկը վերաբերում է Գևորգ 4-րդ-ին, որը վախճանվել է 1882 թ., իսկ կաթողիկոս է ընտրվել 1866-ին (1867 թ. պարզապես տպագրական վրիպակ է). պարզ է, որ Պարոնյանը Գևորգ 4-րդ-ի գործունեությունը ոչնչացնելու և ծաղրելու համար է նրա կաթողիկոսական ընտրությունը անվանել հուղարկավորություն:

14. Պեշիկրաշ.— Պոլսի թաղերից մեկը:

15. «Մասիս».— Տես «Ին ինչու Կյուչյան էֆենաի Մեղուն ավելի բարեկամ ունի», ծանոթ. № 2:

16. «...Նար-Պեյ Լուսինյանն սեռած է».— Լուսինյան էր կոչվում իշխանական այն տոհմը, որը թագավորեց Կիլիկյան Հայաստանում: Գալֆայան եղբայրները իրենց համարում էին շառավիղ Լուսինյանների:

17. «Ինեենմաճը-էֆիար».— Հայ կաթոլիկների օրգանը. լույս է տեսել 1878—1884 թ. Տիգրան Ճիվելեկյանի խմբագրությամբ:

18. Գևրիլի ավազաժողով.— Տես 2-րդ հատոր. «Միծադ»՝ «Մրջյուններուն բողոքագիրը». ծանոթ. № 1:

19. «Ալաֆրանկա».— Ե. Գալֆայանի կատակերգության անունը. լույս է տեսել 1862 թ. Թեոդոսիայում:

20. «Վարդենիճ».— Ե. Գալֆայանի բանաստեղծությունների ժողովածուի վերնագիրը. լույս է տեսել 1863 թ. Թեոդոսիայում:

21. «Դաշնակիճ».— Համարթինի «Harmonies» վերնագրով բանաստեղծությունների ժողովածուն. Ե. Գալֆայանի թարգմանությամբ լույս է տեսել 1859 թ. Փարիզում:

22. «Նախակրթարան ֆրանսերեն լեզվի».— «Նախակրթարան ֆրանսերեն լեզվի ի պետս ազգային դպրոցաց». Ե. Գալֆայանի կազմած դասագրքի վերնագիրը. լույս է տեսել 1875 թ. Պոլսում:

23. «Սովերճ հայկականճ».— Ե. Գալֆայանի բանաստեղծությունների ժողովածուն. լույս է տեսել 1874 թ. Պոլսում:

24. Չնայրենյաց ասա մեզ բան».— Այս տողերով է սկսում Ե. Գալֆայանի «Քնար պանդուխտին» բանաստեղծությունների ժողովածուի առաջին ոտանավորը:

25. Անդրլեռնականներ.— Լատ. Ultra montes, այսինքն՝ լեռներից այն կողմը, Ալպերի Հռոմում գտնվող Հռոմը: Այսպես էին կոչվում ծայրահեղ կաթոլիկության ներկայացուցիչները, որոնք ձգտում էին պապի գերիշխանության ծավալմանը ոչ միայն հոգևոր այլ և աշխարհիկ հարցերի մեջ:

«Տիգրան Յուսուֆյան»

1. «Վիկտորգոսի օրով ծնած ըլլար՝ աճպատճառ ջուրը ձգված պիտի ըլլաը».— Ըստ Վիկտորգոսի նրան Սպարտայում հիվանդ երեխա էր ծնվում՝ ոչնչացնում էին նրան ջուրը նետելով:

2. Բախտ.— Fortuna (բախտ) ըստ հռոմեական դիցարանության Ֆորտունան երջանկության, հաջողության և ճակատագրի աստվածուհին էր:

3. Շահ-Նազար և Նուպարյան վարժարան.— Կարապետ Շահնազարյանի կտակով և Նուպար փաշայի դրամական աշակցությամբ 1865 թ. Պոլսում՝ Ներսես Վարժապետյանի կողմից հիմնադրված արական վարժարան:

4. Տնտեսական խորհուրդ.— Յոթ աշխարհականներից ընտրված խորհուրդ, որը զբաղվում էր Պոլսի հայկական ձեռնարկություններով, ինչպես և նրանց կալվածների տնտեսական մասի հսկողությամբ:

5. Ողիմպիական խաղեր.— Այսպես էին կոչվում հին հունական համաժողովրդական տոնակատարությունները, որոնք կատարվում էին օլիմպիայում չորս տարին մի անգամ: Օլիմպիական խաղերը բաժանվում էին երկու մասի. առաջինը Զևսին և մյուս աստվածներին նվիրված կրոնական ծիսակատարություններ էին՝ զոհաբերություններ, իսկ երկրորդը՝ մարզանքներ և զանազան մրցություններ:

6. Քյոսե Ինեյա.— Տիգրան Չուխաճյանի օպերետաներից մեկի անունը: Համաձայն եղած տեղեկությունների լիբրետոն, որը թյուրքերեն է, մշակված է ըստ Գոգոլի «Ռևիզորի», հարմարեցված՝ ժամանակի միջավայրին:

«Ստեփան Ասլանյան»

1. Ճեմարան.— Սկյուտարի ճեմարան կամ վարժարան. Պոլսի հայտնի դպրոցներից, որը մինչև 1848 թ. ենթարկվում էր ամիրաների հսկողությանը, իսկ 1848 թ. հետո դպրոցի տնօրենությունը անցավ Խնաֆների ձեռքը: Այս դպրոցում աշակերտել է Գ. Դուրյանը:

2. Յանոսի տանճար.— Յանոսը Հռոմեական գլխավոր աստվածներից մեկն էր, որն ուներ երկու դեմք, մեկով նայում էր դեպի անցյալը, իսկ մյուսով՝ գալիք ապագան: Հռոմում Յանոսի անվան կար տաճար, այն բացվում էր կռվի ժամանակ որպես նշան աստծո հովանավորության:

3. Մովսես.— Տես «Մկրտիչ Տիգրանյան», ծանոթ. № 2:

4. Պրոտեոս.— Համաձայն հունական դիցարանության Պրոտեոսը ծովերի աստվածն էր, իմաստուն ծերունի, որը կարող էր ընդունել տարբեր կենդանիների և գազանների կերպարանք և այս պատճառով գրականության մեջ Պրոտեոսը հիշվում է որպես փոփոխական նկարագրի հոմանիշ:

«Հովհաննես Տերոյենց»

1. Պետրոս առաքյալ.— Ըստ կրոնական ավանդության Քրիստոսի աշակերտը, որին կաթոլիկ եկեղեցին համարել է քրիստոնեական եկեղեցու հիմնաքարը՝ վեմը:

2. «Ծիրանակ».— Կրոնական, ուսումնական, բանասիրական կիսամսյա տետրակ. արևմտահայ ռեակցիայի օրգանը, որը պայքարել է իր էջերից առաջավոր մտքի և հատկապես Մ. Նալբանդյանի դեմ:

3. «...Հճարավանի փոխեց».— Ե. Մխաբյանը հայերեն էր թարգմանել Պոլսի մի շարք թաղերի անունները ի թիվս որոց և Իճատիեն թարգմանել էր Հնարավան:

4. «Հայաստան».— Քաղաքական ազգային, բանասիրական և առևտրական շաբաթաթերթ, լույս է տեսել 1846—1852 թ. Տերոյենց պատվելիի և Մ. Ազաթոնի խմբագրությամբ:

5. Բուրկաթորթում.— Հայերեն թավարան, որն ըստ կաթոլիկ եկեղեցու ուսմունքի դժոխքի և արքայության միջև ընկած այն վայրն է, ուր գեռևս ոչ ամբողջությամբ մեղքի մեջ ընկղմված հոգիները թավում են իրենց հանցանքը նախքան արքայություն գնալը:

6. Դոնամիչյան Եւետիկոս.— Այսպես է անվանել Տերոյենցը իր հակառակորդ խմբին, որոնց հավաքատեղին Պոլսի Մեծ Նոր խանի երկու դռների մեջն էր «վերին դռան սենյակում»: Այս խումբը Մ. Նալբանդյանի Պոլիս եղած ժամանակ (առաջին անգամ 1861 թ., իսկ երկրորդ անգամ 1862 թ.) հարեց նրան և որովհետև Նալբանդյանը մեծ բանավեճի բռնվեց պատվելիի հետ, հերթից դևերի գոյությունը, ապա ընկերության բոլոր անդամները, ինչպես և Նալբանդյանը, պատվելիի կողմից անվանվեցին դոնամիչյան հերետիկոսներ:

7. «Անդրլեռնական.— *Տես «Ծաղրն Դալֆյան». ծանոթ. № 25։*

8. «Ջոճալ».— *Հայատառ թյուրքերեն անակդոն շարաթաթերթ. լույս է տեսել 1855—1857 թ. Հ. Տերոյենց Չամուռճյանի խմբագրությամբ։*

9. «Ծաղրական տնտեսագիտություն».— *«Տնտեսության (քաղաքական) սկզբունք». Հեղինակ՝ Կառնիե Ժոզեֆ։ Կ. Ալթունճյանի թարգմանությամբ լույս է տեսել 1873 թ. Պոլսում։*

10. «...Հանձն առած է Պալարիա ասլվոյ լրագիր մը կրկնու».— *Անհայտ է, թե որ թերթն է նկատի առված։*

«Կիրակոս Տիգրանյան»

1. Ընդհանուր ժողով.— *Տես «Ծաղրվածք», ծանոթ. № 6։*

2. Պալատ.— *Պոլսի թաղերից մեկը։*

3. Ապակիդրոնացականություն.— *70-ական թվականներին արևմտահայ գավառներում առաջացած շարժում, որը ձգտում էր ստանալ արտոնություններ, տեղական բնույթ ունեցող որոշ հարցերը լուծելու ինքնուրույն կերպով, անկախ ազգային կրևսիսխանական ժողովից։*

4. «...Յուր Բեռականության մեջ...». *Կ. Ալթունճյան բնականության դասագիրքը չունի։ Պարոնյանը ծաղրում է նրա լեզվական սխալ հայացքները։*

5. Ծերակույտ.— *Լատ. Senatus, Հին Հռոմում կառավարական ամենաբարձր մարմիններից մեկը, որը կազմված էր ծերերի խորհրդից։*

6. «Քաղաքական եռեակ».— *Ֆրանսիացի վիպասան Էժեն Սյուիի վեպը Կ. Ալթունճյանի թարգմանությամբ լույս է տեսել 1867—1869 թ. Պոլսում։*

7. «Դաղտնիք հավատարմության».— *Հեղինակ ֆրանսիացի գրող Մ. վ. ու Ֆերալ։ Կ. Ալթունճյանի թարգմանությամբ լույս է տեսել 1874 թ. Պոլսում։*

8. «Վեֆֆիլտի եռեցն».— *Անգլիացի վիպասան Օլիվըր Կոլդսմիդի վեպը. Կ. Ալթունճյանի թարգմանությամբ լույս է տեսել Պոլսում։*

9. «Քաղաքական տնտեսագիտություն».— *«Տնտեսության (քաղաքական) սկզբունք». Հեղինակ՝ Կառնիե Ժոզեֆ։ Կ. Ալթունճյանի թարգմանությամբ լույս է տեսել 1873 թ. Պոլսում։*

10. «...Հանձն առած է Պալարիա ասլվոյ լրագիր մը կրկնու».— *Անհայտ է, թե որ թերթն է նկատի առված։*

«Միքայել Տիգրանյան»

1. Փարավոն.— *Այսպես էին կոչվում հին եգիպտական թագավորները։*

2. Մովսես և Ահարոն.— *Ըստ կրոնական ավանդության Մովսեսը և Ահարոնը երկու եղբայրներ էին, որոնք Հրեաներին ազատագրեցին եգիպտական սարկավությունից և առաջնորդեցին Սրուսաղեմ։ Մովսեսը Հրեաների հայրն ու մարգարեն էր, օրենսդիրը և հիմնադիրը Մովսիսականության. նա համարվել է հեղինակը Հնգամատյանի, այսինքն Հին կտակների առաջին հինգ գրքերի։*

3. «Հայելի գործոց».— *«Հայելի գործոց և աշխատության Տիգրանյան Միքայել վարդապետի և առաջնորդի Քյութահիայեցու». լույս է տեսել Պոլսում 1864 թ.։*

4. Տոն Քիշոտ.— *Բոլանացի Հայանի գրած Միքայել Սերվանտեսի «Դոն Քիշոտ Լամանշեցի» վեպի հերոսը։*

5. Փրկիչ.— *Կամ ազգային հիմնադրամ. տես «Հանդիստ Մշեցի պարոն Մկրտի», ծանոթ. № 1։*

6. Վարսուհիից շինի աստղ.— *Ծնիկ համաստեղություն, որի ամենափայլուն աստղը Սիրիուսն է։ Հնում տարիները հաշվել են Սիրիուսի հայտնությամբ. այս նույն ձևով էլ Պարոնյանը երգիծանքի համար հաշվել է Տիգրանյանի տարիքը։*

«Հովսեփ Շիշմանյան»

1. Արբայան վարդապետներ.— *Ակնարկում է Վենետիկի Մխիթարյաններին և նրանց դավանափոխ միաբաններին, տես «Ա. Չալֆյան». ծանոթ. № 4, 6։*

2. Քոլենյաններ.— *Ակնարկում է Վիենայի Մխիթարյաններին, որոնք 1828 թ. անջատվել էին վենետիկցիներից և հաստատվել Վիեննայում։*

3. «Հասունյանի գռնված տեղը ես գոռ չունիմ».— *Տես «Անտոն Հասունյան»։*

4. Անեմամ.— *Այլաբուժության (allopathie), բժշկականության այն սխտեմը, որը հիվանդությունը ստացվող պատճառները բուժում է հակազդող դեղերի միջոցով։*

5. Մուրատյան վարժարան.— *Վենետիկի Մխիթարյանների վարժարանը։*

6. Հակաճասուցյաններ.— *Տես՝ «Անտոն Հասունյան», ծանոթ. № 4։*

7. Բևեռուրուս.— Reversurus *«Մինչև, դարձյալ», այսպես է սկսվել Պետ 9-րդ պապի 1867 թ. հուլիս 12-ի կոնդակը, որով պապը Պիլիպիայի և Պոլսի հայ կաթոլիկ պատրիարքությունների քեմները միացնում էր իրար և իբրև ատմանափակում հայ կաթոլիկների մինչ այդ ունեցած որոշ արտոնություններ։ Բացի այս, համաձայն նույն կոնդակի կրճատվեն, անտեսական և հոգևոր կյանքի ամբողջ անօրինությունը հանձնում էր կաթոլիկ պատրիարքին, այսինքն՝ Հասունյանին։*

8. «Միջազգյուղի լսարանին մեջ».— *1846 թ. Պոլսի Միջազգյուղ թաղամասում հիմնվեց «Համազգյաց ընկերություն», ընկերության նպատակն էր զարկ տալ կրթությանը և հատկապես պայքարել հռոմեական եկեղեցու ոտնձգությունների դեմ, որոնց սերմանողն ու հրահրողը պապականության գործակալ Անտոն Հասունյանն էր։ Ընկերության լսարանի մեջ զանազան հատվածով հանդես էին գալիս Հասունյանի քաղաքականության դեմ ակտիվ պայքարող, ժամանակի առաջավոր մտավորականության ներկայացուցիչները, որոնց թվումն էր և Մ. Պեշիկթաշլյանը։ Մեծ դեր ուներ Համազգյաց ընկերությունը կարգազրված պահպանել իր գոյությունը և իր վերջը այն փակվեց Անտոն Հասունյանի քաղաքական գործերի պատճառով։*

9. Տևկալիոն.— *Ըստ հունական դիցաբանության Դևկալիոնը և նրա կինը Պիրան մեռան էին, որ ջրհեղեղից ազատվեցին, և երբ նրանք շատ դուրս եկան, քարեր նետեցին գետարի աշխարհում մարդկային կյանքը վերականգնանացնելու համար։ Դևկալիոնի նետած քարերից առաջացան ազամարդիկ, իսկ Պիրայի՝ կանայք։*

«Կարապետ Հ. Փանոսյան»

1. Ազատյան վարժարան.— *1869 թ. Կ. Փանոսյանը Պոլսում հիմնադրեց Ազատյան իգական վարժարանը։ Պարոնյանը բազմիցս սուր քննադատության է ենթարկել վարժարանի ընդհանուր միջակը և հատկապես նրա հոնմախակի կուսմակերեսած համերգները, որոնք Կ. Փանոսյանի համար գործել էին շատ ապրյուր, առևտրաբերով աշակերտուհիների բարոյականությունը։*

2. «Մյունատիի էրճիայաս».— *Հայատառ թուրքերեն թերթ. լույս է տեսել 1859—1864 թ.*

Կ. Փանոսյանի խմբագրությամբ, և Հ. Սվաճյանի «Մեղվի» հետ մրսասին պայքարել է ժամանակի ռեակցիայի դեմ։

3. Ներագույն ժողով.— 1847 թ. ամիրաներից, վաճառականներից և արհեստավորներից գումարված ժողով, որը դրաղվում էր արևմտահայերի կրթական և բարեգործական հաստատությունների հոգատարությամբ։

4. «Վարդամատն Աբշալույս».— Ըստ հունական դիցարանության արեւածագի աստվածուհին, որն առավոտները լույսով էր ողողում տիեզերքը. նրա մակդիրներից էր «վարդամատն»։

5. Հեփեստոս.— Համաձայն հունական դիցարանության կրակի և մետաղյա իրերի աստվածը, հայտնի դարբին, որը պատրաստեց Աքիլլեսի վահանը։

6. Աբաժազդ.— Ըստ հունական դիցաբանության աստվածների հայրը (Զևս)։

7. «Մեմշենե բալաներ».— «Արտաքինոցական բարեկարգություն». Կ. Փանոսյանի հայատառ թյուրքերեն հոդվածի վերնագիրը։

8. Սարըյար.— Պոլսի թաղերից մեկը։

«Հարություն Մերեմ-գուլի»

1. Նոր թաղի վարժարան.— Տես «Ստեփան Ասլանյան» ծանոթ. № 1։

2. Գում-Քաբու.— Պոլսի թաղերից մեկը, ուր գտնվում է ազգային պատրիարքարանը, Մայր եկեղեցին և նրա անվան ուսումնարանը։

3. Պեպեհ.— Պոլսի թաղերից մեկը։

4. Ղալաթիո կամուրջ.— Պոլսում Ոսկեղջյուրի վրա գտնվող կամուրջը (կոչվում է Ղալաթիո կամուրջ, մեկ ծայրը Ղալաթիա գտնվելու պատճառով), որից անցնելու համար պարտադիր էր դրամ վճարել։

5. «Աբիհ Հայկազունի».— Ազգային սահմանադրության երդը. հեղինակ՝ Հ. Սվաճյան։

6. Աբեղյան թատրոն, Պէֆազար.— 1858 թ. Պոլսի Բերա թաղամասում հիմնվեց Արևելյան թատրոնը, ուր հանդես են եկել ժամանակի արևմտահայ հայտնի դերասանները։ Այս թատրոնը կոչվում էր և Պէյօղլար, որովհետև շենքը նախկինում եղել էր սրճարան նույն անվամբ։

7. Ազգային պատուոյ բարձման հանձնաժողով.— Քաղաքական ժողովի (տես «Հայթվածք». ծանոթ. № 5) կողմից նշանակված, ազգային պարտքը վերացնելու համար միջոցներ հայթայթող հանձնաժողով։

8. Չևիրմեի անուշ.— Քաղցրավենիքի տեսակ, որը պատրաստում են եփած շաքարից։

«Անտոն Հասունյան»

1. Բոթրականատյի դպրոց.— 1622 թ. Հռոմում Գրիգորիս 15-րդ պապի կողմից հիմնադրված դպրոց, որի նպատակն էր տարածել կաթոլիկությունը հերձանոների մեջ և ուշնյացնել հերետիկոսությունը։

2. Համազգյաց ընկերություն.— Տես «Հովսեփ Շիշմանյան». ծանոթ. № 8։

3. Վատիկան.— Վատիկանը Հռոմի պապերի ամրոցանիստան է, պալատի անունը, իսկ ընդհանուր հասկացողությամբ նրանց կառավարությունը՝ համաշխարհային ռեակցիայի օջախներից մեկը։

4. Հակաճասունյան կուսակցություն.— Անտոն Հասունյանի ռեակցիոն գործունեության շնորհիվ առաջացավ հակահասունյան հոսանք, որը պայքարում էր հայ ժողովրդի մեջ կաթոլիկ եկեղեցու ազդեցության դեմ։

5. «Կիլիկիո Տան արոտն Պոլսո արոտին հավ դնեն».— Տես «Հովսեփ Շիշմանյան». ծանոթ. № 7։

«Ստեփան Փափազյան»

1. Ղալաթիո խորհրդարան.— Այն շենքը, ուր տեղի էին ունենում ազգային երեսփոխանական ժողովները։ Այսպես է կոչվել Պոլսի Ղալաթիո թաղամասում գտնվելու պատճառով։

2. Պրահմա.— Բրահմա. ըստ հնդկական սրբազան գրքի բրահման տիեզերքի մեջ ամենից առաջ է ծնվել և սկիզբ առել. նա ստեղծիչն է գոյությունների։

3. Լուսինյան կատեդեն.— Պարոնյանը ծաղրում է Պոլսի ժամանակակից այն թերթերը («Մասիս», «Բրագիլ», «Թերճեմանը-էֆքյար»), որոնք իրենց էջերից ձայնակցեցին Գալֆայան ընտանիքին, հռչակելով նրանց Լուսինյան արքայական ընտանիքի սերունդը։

4. Ստեփաննոս.— Ըստ եկեղեցական ավանդության Ստեփաննոսը քրիստոնեության առաջին բարոզիչներից էր, որը նահատակվեց քարերով։ Պարոնյանը պարզապես ծաղրել է Փափազյանին, օգտագործելով անունների նմանությունը։

5. «Լրագրի խմբագիրեն շատ աղեկ կհասկուցուներ յուր միտքը».— Մաղրում է «Լրագրի» (տես «Քաղաքական». ծանոթ. № 1) խմբագիր Ն. Բյուլպենտճյանին։

6. Մեսրոպյան վարժարան.— Մեսրոպ Մաշտոցի անվան ազգային արական վարժարան։

7. Աչակողմյան երեսփոխաններ.— Այսպես էին կոչվում ամիրաների և կղերա-պահպանողական հոսանքի ներկայացուցիչները, որոնց գլխավորում էր Ջամուրճյանը։

8. Հերակլես.— Հերակլես, հունական դիցաբանության ամենահայտնի դեմքերից մեկը, որը հռչակվեց իր կատարած 12 քաջագործություններով։ Դեռ օրորոցում Հերակլեսը խեղդեց Հերայի ուղարկած երկու օձերին, սպանեց Նեմեյան առյուծը, հաղթեց ամազոններին, նվաճեց Կրետեի ցուլին, մաքրեց Ավգյան ախոռները և կատարեց այլ քաջագործություններ, վախճանվեց ողբերգական մահով. հագավ իր գավազիր կնոջ կողմից ուղարկված թունավոր շապիկը, որը նրան անլուր ցավեր պատճառեց և ինքն իրեն այրեց էնոա լեռան վրա։

9. Ղալաթիո վարժարան.— Կամ ամենափրկչյան կեդրոնական գավառական վարժարան, գտնվում է Պոլսի Ղալաթիա թաղամասում. 1884 թ. վերակազմվեց և կոչվեց «Կեդրոնական վարժարան»։ Այս դպրոցում են սովորել արևմտահայ ինտելիգենցիայի հայտնի ներկայացուցիչների մեծագույն մասը։

10. Բել.— Ըստ ազգային ավանդության ասորական հսկա. որպես բռնակալ սպանվեց Հայկի ազեղից։

11. Աբամ.— Ըստ ազգային ավանդության հայերի նախահայրերից։

12. Աբա.— Արա գեղեցիկ. ըստ ազգային ավանդության հայերի նախահայրերից։ Նրա գեղեցկությանը սիրահարվեց ասորական թագուհի Շամիրամը։ Արային տիրանալու հույսով պատերազմ հայտարարեց Շամիրամը, որի զորքերից և սպանվեց Արան։

13. Պրոպատիկե ավազան.— Համաձայն կրոնական ավանդության այս ավազանը մտնող անդամալույծները բուժվում էին։

14. Ղալաթա օջախ.— Ղալաթիո օջախի հարողները (այսպես էին կոչում իրենց նիստերը Ղալաթիո եկեղեցու բակում գումարվելու համար) իրենց համարում էին ժողովրդական ձախակողմյան. նրանք պայքարում էին ամիրայության ու կղեռա-պահպանողական հոսանքի դեմ, սակայն նրանց պայքարի սլաքը ուղղված էր և դեմոկրատիայի դեմ՝ ինչպես Հ. Սվաճյանի և Հ. Պարոնյանի։

15. Բեայի գերեզմանատան խնդիր.— Տես «Ինդրոց մեռյալն ի տեսլեանն Մեղուէ». ծանոթ. № 3։

16. Ժամանակ.— *Կիսամսյա հանդես. լույս է տեսել 1863—1888 թ. Ստ. Փափազյանի խմբագրությամբ։ «Ժամանակի» դեմ պայքար են վարել Հ. Սվաճյանը և Արմենակ Հայկունին։*

17. Ձախակողմյան կուսակցության գլուխ եղավ.— *Տես ծանոթ. № 14։*

18. «...ամեն օր ուրբաթ ըլլար».— *Ուրբաթը մահմեդականների հանգստյան օրն էր, որի պատճառով Թյուրքական կառավարության հայ պաշտոնյաները ազատ էին և կարող էին նյութական ժողովներ գումարել միայն այդ օրերը։*

19. «...կովեցավ աջակողմյաններուն դեմ...».— *Տես ծանոթ. № 7։*

20. Մեփիստոփել.— *Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության մեջ գործող սատանայի անունը։*

21. «...նստավ Պերլին գացող երկու պատվիրակներու մեջտեղը».— *Տես 2-րդ հատոր, «Միծադ»— «Մրջյուններուն բողոքարկիրը». ծանոթ. № 9։*

22. «...այն պատրիարքին օրով, զոր ժամանակակից Հրեշտակ Հայաստանի կը ճոչակեր աշխարհի».— *1872 թ. Պոլսում պատրիարք էր Մ. Խրիմյանը, որին «ժամանակակից», այսինքն՝ Ստ. Փափազյանի «Ժամանակ» թերթն է Հրեշտակ Հայաստանի հռչակել։*

«Խաչատուր Միսաքյան»

1. Էպիմենիդես.— *(7-րդ դ. մ. Ք. ա.) Կիսալեգենդար կրետացի մոգ, ասույածների սիրելին, որը մեկնում էր անհայտ անցյալը։ Ըստ ավանդության Էպիմենիդեսը պատանի հասակում քնել կսխարդված թարայրի մեջ 57 տարի։*

2. Քեռական.— *Աչխարհում է Մ. Չամչյանի «Քերականություն հայկական լեզվի» հայտնի դասագիրքը, որն առաջին անգամ լույս տեսավ 1779 թ. և այնուհետև ունեցավ բազմաթիվ հրատարակություններ։*

3. Գործ առաքելոց.— *Կրոնական գիրք, «Նոր կտակարանի» մի մասը, նվիրված Պողոս և Պետրոս առաքյալների գործունեությանը։ Ըստ կրոնական ավանդության «Գործք Առաքելոց» հեղինակը Ղուկաս ավետարանիչն է։*

4. Ճեմարան.— *Կամ Սկյուտարի վարժարան. տես «Սահփան Ասլանյան». ծանոթ. № 11։*

5. Ապոդոն.— *Ապոլոն, ըստ հունական դիցարանության պարի, երաժշտության և բանաստեղծության աստվածը, առաջնորդը մուսաների։*

6. «Երուսաղեմա պատրիարքն ճերան՞ ընտրելու է, թե՞ դուրսեն».— *Երուսաղեմի միաբանությունը պահանջում էր, որ իրենց պատրիարքը ընտրվեր նեռից՝ այսինքն միաբանության անդամներից, հակառակ այն հոսանքի, որ պնդում էր, թե պետք է ընտրել դրսից, այսինքն՝ ոչ միաբանության անդամներից։ Այս հարցը ժամանակի ազգային կյանքը հուզող խնդիրներից մեկն էր։*

7. «Միրիհլեամի խնդիր».— *Անունն է այն բողոքականի, որին ցանկացել են թաղել հայոց գերեզմանատանը, բայց հայերը ընդդիմացել են և առաջացել է մեծ ազմուկ։*

8. Պալըգլըի գերեզմանատուն.— *Պալըգլըն Պոլսի թաղամասերից մեկն է, ուր գտնվում է հայերի ամենահին գերեզմանատներից մեկը։*

9. Հնձի եղեռնագործությունը:— *Հնձրում (Էրզրումի մոտակա հայ կաթոլիկարնակ գյուղերից մեկը) կաթոլիկ հոգևորականների թելադրանքով ու մասնակցությամբ իրենց հավատակիցների կողմից զազանաբար սպանվեցին լուսավորչական և կաթոլիկ երիտասարդներ իրենց ամուսնության առաջին իսկ օրը։*

10. Կյուրեղեի առջինեկներուն և կամ Բերդենեմի զավակներուն...».— *Մեզ առայժմ չհաջողվեց պարզել, թե ովքեր էին «Կյուրեղեի առջինեկները», իսկ «Բերդենեմի զավակները» պատմիչ Բերդենեմ բաղաքի այն երեխաներն էին, որոնք ըստ կրոնական ավանդության Հերովդես թագավորի հրամանով մի գիշերվա մեջ սպանվեցին։*

11. «Տիրությունք Հայրենասերի».— *«Տիրություն և սիրախոս հայրենասերի». լույս է տեսել 1860 թ. Փարիզում։*

12. Ալեմ Տաղի.— *Պոլսի ամառանոցային հայտնի վայրերից մեկը։*

13. Գորտամկնամարտություն.— Batrachomiomachia, *հին հունական պոեմ, Հոմերոսի Իլիոսի պարոդիան։ Ռեմի գլխավոր հերոսներն են կատուներն ու մկները, նկարագրված է առավոտից մինչև երեկո տևող նրանց կռիվը, որին մասնակցում են և աստվածները։* Batrachomiomachia-*ն ֆյուրիմացարար վերագրվել է Հոմերոսին, սակայն ենթադրվում է, որ հեղինակը պետք է լինի Պիգրետը, որն ապրել է 5 դ. սկզբներին մ. թ. առաջ։*

14. «Փունջին դեմ Մասիսի բացած դատին առիվ».— *Տես «Կարապետ Ալթունյան»։*

15. Դելիմահ.— *«Դելիմահի արկածները». ֆրանսիացի գրող Ֆենելոնի վեպը։ Հայերեն լույս է տեսել մի քանի թարգմանություններով, իսկ առաջին անգամ 1826 թ. Մ. Չախչախյանի թարգմանությամբ։*

«Սուրիաս Քազանճյան»

1. Անտոնյաններու վանք.— *Կաթոլիկ միաբանություն, հալածված Վատիկանի կողմից։*

2. Բոթրականդա.— *Տես «Անտոն Հասունյան». ծանոթ. № 1։*

3. Լիբանեանու կաթողիկոսներու դեմ կրկլային.— *Լիբանանի Զմմարի վանքում էր գտնվում հայ կաթոլիկների Անտոնյան միաբանության կաթողիկոսությունը։*

4. Ռուբինյան թագավորություն.— *Միջերկրական ծովի ափին, Կիլիկիայում ստեղծված թագավորություն, որը տևեց 11—14-րդ դարի վերջերը։*

5. Էնեական.— *Հռոմեացի հայտնի գրող Վիրգիլիոսի պոեմը։*

«Վահան Պարոիզակցի»

1. Փրկիչ.— *Ամենափրկչյան կեդրոնական գավառական վարժարան. (տես «Ստ. Փափազյան. ծանոթ. № 9)։*

2. Աբեաթի Սոխակը.— *Արկադիան Հռոմեաստանի հռչակված վայրերից էր իր խաշնարածությամբ ու հովվական կյանքով, որի պատճառով նրա բնակիչները կոչվում էին Արկաձիի սոխակներ։ Պարոնյանը այստեղ այլաբանորեն իշուն անվանել է Արկադիի սոխակ։*

3. եկեղեցական պատմություն.— *«Եկեղեցական պատմություն Հայաստանյայց սուրբ եկեղեցվո», լույս է տեսել 1872 թ. Երուսաղեմում։*

4. Խառն ժողով.— *Տես «Քրիստոսասուր Ղազարոսյան». ծանոթ. № 7։*

5. Բումելի Հիսար.— *Պոլսի թաղամասերից մեկը եվրոպական ափին. կա և Անատոլի Հիսար՝ ասիական ափին։*

6. «...Տասներկու շիշ լավաճուա կպաճաճչեր».— *Ակնարկում է Խորեն Նար-Պեյին, որի փառասիրությունը և պճնասիրությունը Պարոնյանը ծաղրել է բազմաթիվ առիթներով։*

7. Սրբիլը սուրբ Թարոս.— *Նման անունով եկեղեցի գոյություն չունի, այստեղ գործածված է ծեծի փոխարեն, որովհետև «սրբրբա» բյուրթերեն նշանակում է մահակ, ցուպ։*

8. «Հայկական խնդություն անհաչողության լուրը».— *Ակնարկը վերաբերում է 1878 թ. Բեռլինի վեհաժողովում (տես 2-րդ հատ. «Միծադ»՝ «Մրջյուններուն բողոքարկիրն». ծանոթ. № 1) քննարկված հայկական հարցի լուծման անհաջող արդյունքներին։*

9. «...Նպատակ ուներ ժողովուրդը համոզել չզպրելու համար».— *Համաձայն 1878 թ.*

փետրվար 21-ին. Սան Ստեֆանոյում կնքված ռուս-թյուրքական դաշնագրի, Ռուսաստանին չէր հանձնվում Կարնո նահանգը, որի պատճառով տեղի հայ բնակչությունը ցանկանում էր գաղթել Ռուսաստան։

10. «Փորձ».— Ազգային գրական միամսյա հանդես. լույս է տեսել 1876—1881 թ. Ա. Հովհաննիսյանի խմբագրությամբ։

11. «Մշակ».— Գրական, քաղաքական լրագիր. հրատարակվել է նախ որպես շաբաթաթերթ և ապա եռօրյա և ամենօրյա թերթ. լույս է տեսել 1872—1892 թ. Գ. Արծրունու խմբագրությամբ, որից հետո հրատարակությունը շարունակվել է մինչև 1920 թ.։

12. «Մեղու».— «Մեղու Հայաստանի». տես 2-րդ հատ. «Միծաղ»՝ «Մեղուի հորելյանը». ծանոթ. № 2։

13. Նորին վեհափառությունն.— Ակնարկում է Գևորգ 4-րդ կաթողիկոսին։

14. Գիոնեսիոս.— Գիոնիսիոս, քան հունական դիցաբանության գինու և խաղողագործության աստվածը, հռոմեացիների Բաքոսը։

15. Գատը գեղ.— Կամ Գատը քյոյ. Պոլսի թաղամասերից մեկը։

«Գրիգոր Արծրունի»

1. «Մեղու».— «Մեղու Հայաստանի». տես 2-րդ հատ. «Միծաղ»՝ «Մեղուի հորելյանը», ծանոթ. № 2։

2. «Հայաստանի տնտեսական դրությունն».— Պարոնյանը ակնարկում է 1879 թ. Արծրունու տված հրապարակային զեկուցումը՝ «Թյուրքաց հայերի տնտեսական դրությունը» վերնագրով։

3. «...Յուր ծախսովը թատրոն մ'ալ հիմնեց».— 1878 թ. Բիթլիսում Արծրունին իրենց սեփական բարվանսարայում կառուցեց թատրոն, ուր ներկայացումներ էր տալիս հայկական դերասանական խումբը։

4. Աբարատյան ընկերություն.— Պոլսում՝ կրթական նպատակների համար 1878 թ. հիմնադրված ընկերություն։

«Քրիստոսատուր Ղազարոսյան»

1. Անձնաճվեր ընկերություն.— Պոլսում 60-ական թվականներին հիմնադրված ընկերություն, պանդուխտ հայերի մեջ դրպիտություն տարածելու համար։

2. Փրկչի ոբրանոց.— Փրկչի հիվանդանոցին կից գոյություն է ունեցել և Փրկչի որբանոց։

3. Աղվեսագիրք.— Վարդան Այգեկցու առակների ժողովուծուներից մեկի վերնագիրը. լույս է տեսել 1668 թ. Ամստերդամում։

4. «Սովելոց Հանճնաժողով».— Պոլսում կազմակերպված հանձնաժողով վասպուրականի սովի առթիվ։

5. Սահմանադրության տարեդարձ.— Սահմանադրության տարեդարձը կատարվում էր ամեն տարի մայիսի 24-ին Պոլսի Հյուսներ Խսկելեսի կոչված վայրում։

6. Ալ Սրճեֆանոս.— Տես «Կամիթներ». ծանոթ. № 30։

7. Վարչության ֆաղաքական ժողով.— Կրոնական և քաղաքական ժողովները միասին կոչվում էին Ազգային վարչություն, իսկ նրանց միացյալ ժողովը՝ խառն ժողով։

8. Եվմատական նոգաբարձու.— Եվմատական հոգաբարձությունը ընտրվում էր քաղաքական ժողովի կողմից և հսկում ազգային անդուկի եվմատական հաշիվներին։

9. Կարակյոմրուկ.— Պոլսի թաղերից մեկը։

«Գրիգոր Էնֆիեճյան»

1. Օլենտոֆ.— Ֆրանսերեն լեզվի դասագիրք, հեղինակի անունով։

«Պողոս Պոյճուէյրիյան»

1. Բուրսոնյակ.— Պուրսոնյակ. Մոլիեռի բալետ-կատակերգություններից մեկի անունը։

2. «Մակբեթ».— Մարպեթ. Շեքսպիրի համանուն ողբերգության հերոսը։

3. Պառնասա օրենսդիր.— Այսինքն՝ բանաստեղծության քննադատ (Պառնաս տես «Ն Գալֆայան». ծանոթ. № 7). ակնարկը վերաբերում է Բուալու Դեսպրոյին։

4. Ֆեր գյուղ.— Պոլսի թաղերից մեկը։

5. Սկեպտիկյան.— Հետևորդ սկեպտիկյան փիլիսոփայական դպրոցի, որը հերքում էր օբյեկտիվ ճշմարտության ճանաչողության հնարավորությունը։

6. Հրաշագործ.— Ակնարկում է Մկրտիչ Տիգրանյանին։

«Համբարձում Իփեճյան»

1. Ենովք և Եղիա.— Ըստ կրոնական ավանդության երկու մարգարեներ էին, որոնք երկինք համբարձան։

«Հովհաննես Մյունենտիսյան»

1. «Լույս».— Կրոնական, ազգային, բարոյական և ընտանեկան հանդես. լույս է տեսել 1874—1880 թ. Հ. Ծ. վ. Դիմաքսյանի խմբագրությամբ, 1880—1885 թ. Մ. Գափամաճյանի իսկ 1885-ից Բ. Պոզաճյանի։

2. Ջուխուր Ջեշմե.— Պոլսի թաղերից մեկը։

3. Բիսալիե իբիֆաիե.— Բառացի՝ «Թուղթ երկյուղածության»։

4. Հիլյեի ճաճանի.— Բառացի՝ «Աստվածային խորհրդավանդք»։

«Ներսես Վարժապետյան»

1. Բենիամին.— Ըստ կրոնական ավանդության Հակոբ Նահապետի կրտսեր որդին։

«Սարգիս պեյ Պալյան»

1. Թվարկված բոլոր շենքերը գտնվում են Պոլսի տարբեր թաղամասերում, բացառությամբ Իզմիտից։

«Մկրտիչ Խանյան»

1. Ընտրողական ժողով.— Պոլսում և գավառներում ընտրվելիք երեսփոխանների ցուցակը կազմող հանձնաժողով։

2. «Վանեցի Պողոս վարդապետին և եաչատուր կաթողիկոսի խնդիրները».— Վանեցի Պողոս վարդապետը (Միրայելյան) Վանի առաջնորդն էր, որը տարիներ շարունակ դաժան հարստահարման ու կողոպուտի էր ենթարկել տեղի հայ ազգաբնակչությանը։ Նրա քրեական արարքների շուրջը բարձրացավ մեծ աղմուկ, կազմվեցին թեր և դեմ խումբեր՝ Պողոսյաններ

է Ասպղոսյաններ (Մ. Խրիմյան, Գ. Սրվանձտյան և ուրիշներ)։ Մ. Նալբանդյանը նույնպես մասնակցեց այդ պայքարին և իր «Երկու տողի» մեջ սուր քննադատության ենթարկեց վանեցի Պողոսին։

Խաչատուր սրբազանը Աղթամարի միաբաններից էր, կաթողիկոսական աթոռին տիրանալու համար սպանել տվեց Պետրոս կաթողիկոսին և ինքը փոխարինեց նրան։ Այս ոճրի կապակցությամբ նա բերվեց Պոլիս, բայց արդարացավ։ Պարոնյանը մեկն էր այն դեմքերից, որը յուրահատուկ կրքոտությամբ անարգանքի այտնին գամեց Խաչատուր սրբազանին համարելով նրան մարդասպան, իսկ դատավարությունը՝ խարեբայություն։

3. «Ամբոսիոս վարդապետը վոնտվեց ժողովեն, որ նույն միջոցին՝ յուր եղբոր կնոջ դատին մեջ...» Պարոնյանը տարբեր առիթներով ծաղրել ու մերկացրել է Գալֆայան ընտանիքի բարոյական նկարագիրը և հատկապես Ամբրոսիոս Գալֆայանի, որը գաղտնի կապերով կապված էր իր եղբոր կնոջ հետ։ Այս դեպքը ժամանակին դիտվեց որպես խիստ զայրացուցիչ փաստ, Գալֆայանը ենթարկվեց հասարակական պարսավանքի, դատվեց, բայց կարողացավ արդարանալ։

«Բարունակ Մանվել Ութուճյան»

1. «Կիլիկիա».— «Առողջական» և ուսումնական կիսամսյա հանդես. լույս է տեսել 1861—1875 թ. Մանուել Բարունակ Ութուճյանի խմբագրությամբ։

«Օգսեն Խոնասարյան»

1. Պանական.— Ըստ Հունական դիցաբանության Պանը անտառների աստվածն էր, հովվանավորը կենդանիների հոտի։ Նա ուներ այծի եղջյուրներ և այծի ոտքեր։ Նրա այս սարսափելի կերպարանքը կոչվել է պանական, կամ պանիբական, այսինքն՝ խուճապական, ահաբեկու։

2. Միլն Ավարայրի.— Գրական-բանասիրական հանդես. լույս է տեսել 1866—1867 թ. Մ. Աղաբեկյանի խմբագրությամբ։

3. Պատաստանական խոհուրդ.— Տես «Կոմիթ». ծանոթ. № 1։

4. Աղթամարա խնդիր.— Աղթամարա կաթողիկոսությունը վերացնելու, թե պահպանելու խնդիրը։

«Հակոբ Վարդովյան»

1. Նաումի թատրոն.— Բերայի թատրոններից, ուր 1860 թ. Ս. Հերիմյանի նախաձեռնությամբ հանդես եկավ հայկական թատերական խումբը Մոնտեի «Արիստոտել» ողբերգության դրաբար թարգմանությամբ։ Այս առաջին քայլն էր, երբ հայ լեզվով ներկայացումները դուրս եկան ընտանեկան ակմբային սահմաններից և փոխադրվեցին մի մեծ թատրոն։ Նաումի թատրոնը այրվեց 1870 թ. Բերայի մեծ հրդեհի ժամանակ։

2. «Հայկ պիտի խաղա».— Այսինքն՝ Հայկ դյուցազնի դերը։

«Թադեոս Պեկյան»

1. Տունի վարպետ.— Կամ վարպետ տուտու, յուրաքանչյուր թաղում մասնավոր կանանց կողմից պահվող նախակրթարան՝ մասամբ մանկապարտեզի և մասամբ դպրոցի փոխարինող։

2. Փունջի փաստաբան եղավ և կենդանի բառին բացատրություններ տալու համար...».— Տես «Կարապետ Ութուճյան»։

«Սիմոն Խ. Յազրճյան»

1. Քուզկունճուխ.— Սկյուտարի մի թաղը։

2. Սելամսըզ.— Սկյուտարի մի թաղը։

«Սիմոն Ջելեկյան»

1. «Եփրատ».— Բանասիրական առևտրական կիսաշաբաթաթերթ. լույս է տեսել 1859—1872 թ.։ 1871 թ. նոյեմբերից մինչև 1872 թ. հունիս ամիսները տպագրվել է Հ. Պարոնյանի խմբագրությամբ։

«Թովմաս Թասուլյանյան»

1. Ֆեներ.— Պոլսի թաղերից մեկը։

2. Եմի մաճալե.— Սկյուտարի մի թաղը։

3. «Կույրին զավակը».— Կամ «Խելագար կին», դրամա. հեղինակ Ջալբոնը։

4. Շապուճի դերը.— Պարսից թագավոր Շապուհ 2-րդը. Խ. Գալֆայանի «Արշակ Բ.» պատմական ողբերգության հերոսներից։

5. «Աբհայն կզրոսնու».— Վիկտոր Հյուգոյի պատմական ողբերգությունը։

6. Բաբևսեր ընկերություն.— Ակնարկում է Օրթագյուղի թատերական բարեսիրաց ընկերությունը. (տես «Կոմիթներ». ծանոթ. № 34)։

7. Մեռուճի տասնապետ.— Թարգմանություն ֆրանսերենից. հեղինակն անհայտ։

8. Լիոնի Սաուճաղակ».— Կամ «Կողոպտված փոստ». դրամա, հեղինակները՝ Է. Մորս, Միրոդեն և Ալֆրետ դ'Ալկուրի։

«Երանուհի Գարագաշյան»

1. Աշխեն.— Սրապիոն Հերիմյանի «Հարմակ և Աշխեն» պատմական ողբերգության հերոսուհին։

2. «Պողոս և Վերգինիա».— Ֆրանսիացի վիպասան Բերնարտեն տը Սենտ Պիերի սիրային վեպը, որը մի քանի թարգմանություններով լույս է տեսել հայերեն։

3. «Գեղեցիկն Հեղինե».— Օֆենբախի օպերետներից, հաճախ ներկայացվում էր Պոլսի հայկական բեմերի վրա։

«ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐ»

1. Սմամպիլ.— Թղթախաղի տեսակ։

2. «...հեշտակ տեսած է.».— Ըստ կրոնական առասպելի Բազասամ հայտնի կախարդ էր, որը մի անգամ իր իրու վրա նստած ճամբորդելիս՝ հանկարծ էշը տեսնում է հրեշտակին, վախեցած նրա տեսքից սկսում է խոսել և խրտնելով պատեպատ բախում, Բազասամին վայր ձգում ու սորը միրավորում։

3. Միդաս.— Միֆական թագավոր հին Փռյուգիայի։ Ըստ ավանդության Միդասը լինելով դատավոր Ապոլոնի և Պանի համերգներին, նախապատվությունը տալիս է Պանի նվագին, որի համար Ապոլոնը քաշում է նրա ականջներից և նրանց դարձնում էշի ականջներ։

4. «Ջեն Հոգևոր».— «Գիրք կոչեցյալ Ջեն Հոգևոր». երեք մասից կազմված կրոնական բովանդակությամբ աշխատություն, որի մի մասը գրված է հայատառ թյուրքերեն, հեղինակն է Հ. պատրիարք Նարլյանը, լույս է տեսել 1757 թ. Պոլսում։

5. «Ոչ ճացիվ միայն կեցցի մարդ...»— Բ. օրենք. Ղ. 3։

6. «Ըստ տանկաց ժամը...»— Տանկաց ժամացույցը ելակետ է ունեցել արևի մայրամուտը, որը երեկոյան ժամը 12-ն է համարվում։

7. Պոյում Տեռն.— Պոլսո թաղամասերից մեկը։

8. «Քուրիե տ'Օրիան».—«Կուրիե դ'Օրիան» («Արևելքի Սուրհանդակ»), Պոլսում լույս տեսնող ֆրանսիական թերթ։

9. Մանկունց.— Բառախաղ Մերենց կնոջ անվան հետ։

10. Նեռ.— Ըստ քրիստոնեական հավատալիքի Նեռը մարմնացումն էր չարի, որը հայտնվելու էր աշխարհի վերջին իբրև խորտակիչ ուժ և կռվելու Քրիստոսի դեմ։

11. «Միգաներոր».— «Մարդատյաց». Մոլիեռի համաշխարհային համբավ ստացած կատակերգություններ։

12. «Լե ֆաշեռ».— «Անհանգիստները». Մոլիեռի կատակերգություններից, որը երգիծական անհամեմատ թույլ գործ է, բան նախորդը։ Հիմք ընդունելով բովանդակությունը՝ հեղինակը այստեղ ծանրացել է ձևի վրա մեծ տեղ տալով երաժշտությանն ու պարին։ Պարոնյանը հաճատելով Մոլիեռի երկերը, ցանկացել է ցույց տալ ձևի և բովանդակության միասնության անհրաժեշտությունը, թե ինչպես ձևը պայմանավորված է բովանդակությամբ, և յուրաքանչյուր ստեղծագործության մեջ ձևը պետք է համապատասխանի բովանդակությանը։

«ՀՈՍՀՈՍԻ ՁԵՌԱՏԵՏՐԸ»

1. «...Հերակղիտի աչերեն հոսած աւուռասուռով...».— Ակնարկում է Հերակլեսի ողբերգական վախճանը (տես «Ազգային ջոջեր»՝ «Սահեան Փափազյան». ծանոթ. № 8)։

2. Պարոցասիրաց աբևելյան.— Կրթություն ծավալելու համար Պոլսում հաստատված ընկերություն։

3. Կիլիկյան.—Կիլիկիայի մեջ կրթություն ծավալելու համար հիմնադրված ընկերություն։

4. Միացյալ ընկերություն.— Անցյալ դարում Պոլսի մեջ գործող ամենամեծ կրթական դեր կատարող ընկերություններից մեկը, որը արևելյան հայաբնակ վայրերում հիմնեց դպրոցներ և նպաստեց մտավոր կյանքի զարգացմանը։

5. «Քրիստոնեի վկայությունը ընդունելի չէ».— Մինչև 1854 թ. համաձայն թյուրքական դատավարության օրենսդրության քրիստոնյաների վկայությունները դատական մարմիններին ընդունելի չէին։

6. «Աւշակ մը».— Ակնարկը վերաբերվում է ժամանակի այն դրամատուրգներին՝ Մ. Պեշիկթաշլյան, Բ. Բերզյան, Ս. Գալֆայան և ուրիշներ, որոնք պատմական ողբերգություններ են գրել նվիրված Աւշակ 2-րդ-ին։

7. «Հայկ մը».— Ակնարկում է Հայկ նահապետին նվիրված ողբերգությունների հեղինակներին՝ Ռ. Սեռեֆճյան և Գ. Լճեցի Շարպենտյան։

8. «Սանդուխտ մը».— Ակնարկում է Բ. Բերզյանի «Սանդուխտ կույս» պատմական ողբերգությունը։

9. Յանիա.— Կամ Յաննինա. Մակեդոնիայի քաղաքներից, այժմ պատկանում է Հունաստանին։ Պարոնյանը հումորով ակնարկում է, որ Յանիան Բյուրքիայի ձեռքից վերցվելու է։

10. «Մեղու».— «Մեղու Հայաստանի». տես՝ 2-րդ հատ. «Ծիծաղ»՝ «Մեղուի հոբելյանը». ծանոթ. № 2։

11. «...Խորեն Աբշակունյան...».— Խորեն Գալֆայանը իրեն համարում էր Լուսինյան թագավորական տոհմի շառավիղներից և կոչվում էր միաժամանակ Լուսինյան. այս պատճառով Պարոնյանը ծաղրել է Գալֆայանի փառասիրությունը՝ ավելացնելով նրա ազգանվանը հայկական զանազան նախարարական տոհմերի անուններ։

12. Ուսումնական խորհուրդ.— Կամ ուսումնական հոգաբարձություն. ընտրվում էր քաղաքական ժողովի կողմից և զբաղվում էր կրթական հարցերով։

13. Մուհաճիր.— Ակնարկում է Թյուրքիա գաղթած չերքեզներին (Թյուրքերեն՝ մուհաճիր նշանակում է գաղթական)։

14. «Մաղկամաղ».— Շաբաթական հանդես. լույս է տեսել 1880 թ. Ք. Թերզյանի խմբագրությամբ։

15. «Աբենատ երկայնակեցության».— «Որ է առողջ, երկայն ու երջանիկ ապրելու արվեստը». Սուշավայի բժիշկ Անդրեաս Փոփովիչի աշխատասիրությունը. լույս է տեսել 1850 թ. Պոլսում։

16. «Սպարտայի օրենսդիր».— Ակնարկում է Լիկուրգոսին. տես անձնանունների բառարան։

17. «...Քրիստոսի Սուսապեմ մտնելը...».— Ըստ կրոնական ավանդության Քրիստոս Երուսաղեմ մտավ ավանակի վրա նստած, իբր նշան համեստության։

18. Ազատություն, հավասարություն, եղբայրություն.— Ֆրանսիական բուրժուական revolյուցիայի նշանաբանը։

19. Սըլտըզի պալատ.— (Սըլտըզ-սարդ.). Պոլսի այն պալատը, ուր բնակում էր Սուլթան Համիտը։

20. «Թերենմանը ճաֆիթար».— Թյուրքական թերթ։

21. «Մեծն Վարդան ողբերգություն».—Այսպես էին կոչվում տարբեր հեղինակների՝ Խ. Նարպեյի, Ռ. Սեռեֆճյանի. Տ. Ամիրճանյանի, Գ. Չափրաստճյանի և ուրիշների ողբերգությունները՝ նվիրված Վ. Մամիկոնյանին։

22. «Պսակ».— Գրական, պատմական և մանկավարժական շաբաթաթերթ. լույս է տեսել 1880—1884 թ. Պապաջանյանցի խմբագրությամբ։

23. «Պերլինի 61-րդ հոդվածն».— 61-րդ հոդվածը Թյուրքահայաստանի քաղաքական ինքնուրույնություն ստանալու հարցին նվիրված այն կետն էր, որը քննարկվեց առանց որևէ դրական արդյունքի 1878 թ. կայացած Բեռլինի վեհաժողովում։

24. Ժեզվիթներ.— Կամ Հիսուսյաններ. Իգնատիոս Լայոլայի կողմից 1534 թ. հիմնադրված հոգևոր կարգ, որի գլխավոր նպատակն էր հաստատել կաթոլիկ եկեղեցու և պապի բացարձակ գերիշխանությունը։

25. «Վանա Պողոս վարդապետը...».— Տես «Ազգային ջոջեր»՝ «Մկրտիչ Էսայան». ծանոթ. № 2։

26. Պոսնա-Հերսեֆ.— Բոսնինա-Հերցեկովինա. 1878 թ. Բեռլինի վեհաժողովի որոշման համաձայն Թյուրքիայից վերցվեց և հանձնվեց Ավստրո-Հունգարիային։

27. «Ագաճը»,— Մոլիեռի կատակերգության անունը։

28. «Լա դոննա է մոբիլե...».— Վերդիի «Ռիգոլետտո» օպերայից. հերցոգի հայտնի արիայի առաջը։

29. Պայազետի եռապարակ.— Սուլթան Բայազետ մզկիթի հրապարակը Պոլսում։

30. Բամազան.— Մահմեդականների ծոմապահության և աղոթքի ամիսը։

31. Հիսար.— Տես «Ազգային ջոջեր»՝ «Վահան Պարտիզակցի». ծանոթ. № 5։

32. «Եղիցին երկոքյան ի մարմին մի».— Մատ. ժ. Ը. 1։

33. Գանտիլլի.— Պոլսի թաղամասերից մեկը։

34. «...ԵՒգուներ չխառնվին...».— Ըստ կրոնական ավանդության ջրհեղեղից հետո մարդիկ Բաբելոնում կառուցում են մի հսկա աշտարակ ջրհեղեղից պաշտպանվելու համար։ Աստված պայթանալով մարդկային այդ հանդուգն ձեռնարկության վրա, խառնում է նրանց լեզուները, առաջացնելով մեծ խառնաշփոթություն և այսպիսով թերի է մնում աշտարակի շինությունը։

35. Բովմաս առաքյալ.— Ըստ կրոնական ավանդության Թովմաս Քրիստոսի աշակերտներից էր, որը առանց ապացույցի չհավատաց Քրիստոսի հայտնությանը, այլ մատով շոշափեց նրա մարմնի նիզակով ծակված մասը և համոզվեց, որ նա Քրիստոսն է։

36. «Քագուհիվույն կառավարությանն...».— Այսինքն՝ Վիկտորիա Թագուհու (1837—1901) կառավարությունը։

37. Նոր Զազարոսի մր.— Ըստ քրիստոնեական ավանդության մեռած Ղազարոսին հարություն տվեց Քրիստոսը։

38. «Մեհեռուա».— Գիտական, ազգային և գրական տարեգիրք. լույս է տեսել 1880—1882 թ. Գր. Մանրյանի խմբագրությամբ։

39. Գեասեր Աստմ.— Եղիա Տեմիրճիպաշյանի կեղծանունը։

40. Ազգանվեր Հայուհյաց.— Թյուրքիայի հայաշատ գավառներում աղջիկների վարժարաններ պահելու բնկերություն։

41. Պարոցասեր Հայուհյաց.— Կամ Պարոցասեր տիկնանց բնկերություն, մեծ ժողովրդականության և երկարամյա կյանք ունեցող բնկերություններից մեկը, որը Պոլսում ուներ աղջիկների միջնակարգ վարժարան և իր գոյությունը կարողացավ պահպանել մինչև 30-ական թվականների վերջը Փարիզում։

42. Գորյան հանգույց.— Ըստ հունական ավանդության փռյուգիական թագավոր Գորդին հիմնեց Գորդիում քաղաքը և Զևսի տաճարին նվիրաբերեց իր կառքը, որի լուծը և առեղը կապեց անլուծելի հանգույցով։ Համաձայն մարդ գուշակության ով որ կարողանար քանդել այդ հանգույցը, նա էր լինելու Ասիայի տիրակալը։ Ալեքսանդր Մակեդոնացին իր սրով վերջ տվեց առեղծվածին, կարճ գորդյան հանգույցը։ Այստեղից է ծագել բարդ, կնճռոտ և դժվարին հարցերի համարձակ վճռումը համեմատել գորդյան հանգույցի լուծման հետ։

43. Խորեն եպիսկոպոս.— Ականավոր է նորին Նար-Պեյին. տես «Ազգային ջոջեր»՝ «Նորին Գարֆայան»)։

44. «Վայելք».— Կանանց նորաձևություններին ամսագիր. լույս է տեսել 1880—1881 թ. Մ. Գալենտերի խմբագրությամբ։

45. Սսո կաթողիկոսություն.— 1441 թ. հաստատվեց այս կաթողիկոսությունը Կիլիկիայի Սիս քաղաքում. համաշխարհային պատերազմից հետո կաթողիկոսությունը Սսից փոխադրվեց Սիրիա և հիմնվեց Բեյրութում։

46. Խուրպան պայրամ.— Մահմեդականների զոհարերության տոնը։

47. «Նեյլի աշտարակ».— Ալեքսանդր Տյումայի պրևան. թարգմանիչ Ստ. Ալթունյուրի։

48. «Հայրենիք».— Քաղաքական, ազգային և առևտրական օրաթերթ. 1870—1891 թ. լույս է տեսել Մ. Գամամաճյանի խմբագրությամբ, որից հետո Ա. Արփիարյանի։

49. Նոր վարչություն.— Այսինքն՝ ազգային վարչություն։

50. Ազգային ժողով.— Այսինքն՝ երևափոխանական ժողով։

51. «Ավետիք Հայաստանի».— Հայաստանի ավետիքներին նվիրված ալբոմ։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հակոբ Պարոնյան — Գ. Ստեփանյան	5
Մեղու	37
Թատրոն	87
Կամքիներ	129
Պատյար մը Պոլսո թաղերուն մեջ	173
Ազգային ջոջեր	189
Մեծապատիվ մուրացկաններ	375
Հոսհոսի ձեռատետրը	453
Մանոթագրություններ	549


Խմբագիր՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գեղ. խմբագիր՝ Ա.Ն. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տեխն. խմբագիր՝ Ե. ԱԱՄՎԵԼՅԱՆ
Վերատեսուչ արվագրիչ՝ Վ. ԳԱՔԵՍՅԱՆ

Վ.Ֆ 14158։ Պատվեր 653։ Տիրաժ 10000։

Հանձնված է արտադրության 8/V 1954 թ.։
Ստորագրված է տպագրության 22/XII 1954 թ.։
Թուղթ 70×92 1/16։ Հրատ. 34,0 մամուլ, տպագր. 36,0 մամուլ + 7 ներդ.։
Գինը՝ 11 ռ., կազմը 2 ռ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության I տպարան, Աբովյանի փ. № 65, Երևան, 1954 թ.։



<< Ազգային գրադարան
NL0353370

50023